



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ Ր Ա Ջ Ի Կ Ս Ի Մ Ո Ն Յ Ա Ն

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ

Գ Ի Ր Ք

V

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2013

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ս 504



FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

**Գրքի տպագրական ծախսերը հոգացել է
ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼ ՊԵՆԿՅԱՆ**
Հիմնարկության Հայկական բաժանմունքը:
Հեղինակը երախտագիտություն է հայտնում
Հայկական մշակույթի անխոնջ նվիրյալ դոկտոր
ԶԱՎԵՆ ԵԿԱՎՅԱՆԻՆ՝
մեզ ընդառաջելու համար:

Միմոնյան Հրաչիկ
Ս 504 ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ / Հ. Միմոնյան.
գիրք V. - Եր.: ԵՊՀ հրատ., 2013, 1296 էջ:

Գրքում ներկայացված է Հայկական հարցի վերաբացման
պատմությունը (1912 թ. հոկտեմբեր - 1914 թ. օգոստոս):

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-5-8084-1712-0

© Միմոնյան Հր., 2013
© ԵՊՀ հրատարակչություն, 2013

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ
ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ**

**ՊԱՏԵՐԱԶՄ ԲԱԼԿԱՆՆԵՐՈՒՄ:
ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

1912 թ. սեպտեմբերի 25-ին (հոկտեմբերի 8-ին) Փոքր
Չերնոգորիան պատերազմ հայտարարեց Թուրքիային: Մի քանի
օր անց նրան միացան Բուլղարիան, Սերբիան և Հունաստանը:
Նշված չորս դաշնակից երկրների նպատակն էր. օգտվելով
խտալա-թուրքական պատերազմում Թուրքիայի կրած պար-
տությունից և իրենց համար ստեղծված ռազմաքաղաքական
նպաստավոր իրավիճակից՝ Բալկանյան թերակղզին զենքի
ուժով վերջնականապես ազատագրել օսմանյան դարավոր
բռնակալությունից և իրենց պատմական հողերը միավորել մայր
երկրներին:

Պատերազմն արյունալի բնույթ ընդունեց, որի ընթացքում
թուրքերը կրեցին ջախջախիչ պարտություններ: Արդեն իր
առաջին շրջանում պատերազմը Թուրքիային ավելի ծանր կո-
րուստներ պատճառեց, քան նա ստացել էր իտալա-թուրքական
պատերազմի ողջ ընթացքում:

Կռիվներն է՛լ ավելի արյունահեղ եղան հոկտեմբերի երկրորդ
կեսին և նոյեմբերի առաջին երկու շաբաթներին: Այդ ժամանա-
կահատվածում դաշնակիցները բոլոր ռազմաճակատներում
ջախջախեցին թուրքերի հիմնական ուժերը: Սպառնալիքը կախ-
վեց օսմանյան կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսի
վրա:

Եվրոպական պետությունների կառավարությունները,

որոնք մինչև բալկանյան դաշնակիցների հաղթանակները հանդես էին գալիս Թուրքիայի տարածքային ամբողջականության պահպանման օգտին, այժմ, սակայն, ստիպված էին համակերպվել նոր իրողություններին՝ պատերազմող կողմերին կոչ անելով զինադադար հայտարարել և ձեռնամուխ լինել հաշտության պայմանագրի նախապատրաստմանը: Դա միանգամայն օրինաչափ էր. ամեն բան սկիզբ և վերջ ունի, նաև՝ պատերազմը:

1912 թ. նոյեմբերի 20-ին պատերազմող կողմերի միջև 10 օրով կնքվեց զինադադար, և պայմանավորվածություն ձեռք բերվեց դեկտեմբերի 14-ին Լոնդոնում սկսել հաշտության բանակցություններ:

Իթիթիլաֆի իշխանության կարճատև ժամանակաշրջանը (1912 թ. հուլիս-1913 թ. հունվար) լի էր ներքին ու արտաքին բուռն իրադարձություններով: Այդ շրջանում դույզն անգամ դեպի լավը չփոխվեց հայության անտանելի դրությունը, թեև հայ ազգային հասարակական-քաղաքական կազմակերպություններն ու գործիչները շարունակում էին ուժից վեր աշխատանք տանել ազգը գեհնային վիճակից դուրս բերելու համար:

Երբ թուրքական զորքերը ռազմաճակատում խոշոր պարտություններ էին կրում, թուրքահայերն ստիպված էին առժամանակ (սեպտեմբերի վերջ – հոկտեմբերի առաջին կես) լռել, քանի որ արտաքին վտանգ էր ծագել երկրի համար, և ամեն մի չմտածված քայլ կարող էր իշխանություններին նոր կոտորածների առիթ տալ հենց մայրաքաղաքում: Մյուս կողմից պատերազմի անակնկալ հետևանքներն ակամայից մղում էին Հայկական հարցի վերարժարժմանը:

Հարցի օրակարգ մտնելու առաջին դրդապատճառը վանի կողմերում շարունակվող սպանությունների ու ուժգնացող խժոժությունների մասին Կ. Պոլիս հասնող լուրերն էին: Հայկական հարցի վերարժարժման երկրորդ՝ հոգեբանական, պատճառն այն ընդհանուր մթնոլորտն էր, որ ստեղծվել էր Թուրքիայի շուրջ բալկանյան պատերազմի նախօրյակին և օրերին:

Մինչև բալկանյան պատերազմը Եվրոպան չէր հետաքրքրվում հայերի հարցով, որովհետև նրա ուշադրությունը

կենտրոնացած էր Մակեդոնիայի վրա: Մակեդոնացիների հարցը մշտապես, առանց ընդհատումների է զբաղեցրել Եվրոպային: Բեռլինի դաշնագրից (1878 թ.) ի վեր՝ նա ամեն ջանք գործադրում էր պահպանելու խաղաղությունը Մակեդոնիայի շուրջ՝ կանխելու համար համաեվրոպական պատերազմի վտանգը:

Այժմ հայերը նախագագացում ունեին, որ դարավոր թշնամին ուր որ է մատնվելու է քայքայիչ տազնապսներին: Մինչ բալկանյան ուժերը թուրքերին վռնդում էին դեպի Մարմարա ծովի ափերը, հայերից շատերը գտան, որ վրա է հասել հարմար ժամանակը բարձրացնելու իրենց ձայնը, որը խեղդված էր սահմանադրական ռեժիմի բերած նոր դժբախտությունների մեջ: Նրանք կարծում էին, որ ինչ ելք էլ ունենա այդ պատերազմը՝ այս կամ այն կողմի հաղթությունը թե պարտությունը, Բեռլինի 1878 թ. դաշնագիրը ստորագրած եվրոպական մեծ պետությունները հավաքվելու են քննարկելու և, եթե հնարավոր լինի, նաև լուծելու կովի պատճառ հանդիսացող հարցերը:

Եվ իսկապես. պատերազմն սկսվելուց անմիջապես հետո Անգլիան հանդես եկավ պետությունների կոնֆերանս հրավիրելու առաջարկով, ուր քննարկվելու էին մակեդոնական, ալբանական, բուլղարական, սերբական և այլ հարցեր: Ենթադրվում էր, որ կարող է քննարկվել նաև Հայկական հարցը:

Հայկական մամուլի մեծ մասը գտնում էր, որ եթե այս անգամ էլ չքննարկվի ու չլուծվի հայոց հարցը, եթե այս պատմական պահին կրկին անուշադրություն մատնվի այն, այդ դեպքում մեկընդմիջտ պետք է սպառված համարել Թուրքահայաստանի հայերի դրությունը երբևիցե բարեփոխված տեսնելու հույսը: Հետևապես ամեն ինչ պետք է անել, որպեսզի երիցս չարչրկված այդ հարցը պաշտոնապես առաջ քաշվի, մտցվի նախատեսվող կոնֆերանսի օրակարգ և ազդու կերպով պաշտպանվի:

Իսկ ո՞վ կամ ովքե՞ր պետք է սկսեին այդ գործը: Հարցը ծանրակշիռ էր և գերազույն լրջություն պահանջող:

Բոլորի ուշադրությունը սկզբում բևեռվեց թուրքահայոց նախկին պատրիարք Մաղաթիա արքեպ. Օրմանյանի վրա: Կ. Պոլսի «Բյուզանդիոնը» և «Արևելքը», Թիֆլիսի «Մշակը» գրում,

ընդգծում էին, որ ստեղծված բախտորոշ պահին ավելի քան երբեք ակնառու է դառնում, թե 1908-ին հայ հեղափոխական կուսակցություններն ինչ մեծ ու անդարմանելի դանցանք են գործել՝ սաղարանքների միջոցով նրան հեռացնելով պատրիարքական աթոռից, և եթե այժմ նա իր պաշտոնին լինեք, ազգը մեծապես չահած կլինեք: Պատահական չէր, որ այս ու այն կողմից, հայոց քաղաքական կյանքի աջից թե կենտրոնից առաջարկում, պահանջում էին որքան հնարավոր է սեղմ ժամկետում վերանայ ամեն տեսակ կուսակցական չահախնդրություններից, նորից հրապարակ բերել հմուտ դիվանագետին ու եղակի ձեռնհաս անձին՝ Օրմանյան արքեպիսկոպոսին, և նրան օժտել ամբողջ ազգի անունից միջազգային քաղաքական բեմահարթակներում հանդես գալու մեծ լիազորություններով:

Ծագում էր մի շատ կարևոր հանգամանք ևս. հնչակյանները, Իթիլիաֆի ջերմ կողմնակիցներ լինելով, միաժամանակ շարունակում էին «հեղափոխական» պայքար մղել երիտթուրքերի դեմ, իսկ Դաշնակցությունը վերջիններից «զատվելուց» հետո սկսել էր խստորեն քննադատել նրանց և առաջվանից ավելի ուժգին՝ Իթիլիաֆին:

Հայ քաղաքական դաշտի այս տարրնթացությունն պայմաններում ավելի սթափ մտածող գործիչները՝ մշակականները կովկասում և ընդհանրապես բոլոր ազատականներն ու պահպանողականները թուրքահայաստանում թե Ռուսահայաստանում հայոց հարցի հաջող լուծման գրավականներից մեկը համարում էին հայ հեղափոխական կուսակցությունների մեկուսացումը ներկա դիվանագիտական գործընթացներից, նրանց միջամտության բացառումը: Նրանք հայ հեղափոխականներին և մանավանդ դաշնակցականներին հորդորում էին, հանուն թուրքիայի բազմաչարչար հայ ժողովրդի փրկության, ձեռնպահ մնալ բողոքի միջոցառումներ կազմակերպելուց, այլ թողնել, որ հայ ժողովուրդն ինքը հանդես գա իր համաժողովրդական և ոչ թե կուսակցական բողոքներով, որպեսզի դրանք չհամարվեն հեղափոխականների քարոզչության արդյունք: Այդ մտավախությունը տեղին էր, քանի որ դառը փորձը ցույց էր տվել, որ թե՛ պետությունները և թե՛ եվրոպական հասարակական կարծիքն

անցյալում ամեն անգամ զլանում էին ուշադրություն դարձնել հայոց հարցի վրա՝ նկատելով, որ հայերի բողոքները հետևանք են ոչ թե ժողովրդական շարժման, այլ կուսակցական ագիտացիայի:

Կար մի ուրիշ խոչընդոտ նույնպես: Իթիլիաֆի հետ բարեկամ լինելու մասին դաշնակցական պրոպագանդով և խոստումներով խաբված հայերը կարծում էին, թե, իսկապես, այժմ փրկողակ է միջազգային դաշնագրերով իրենց տրված եվրոպական հովանավորությունից մեկընդմիջտ հրաժարվելը, և որ իրենց համար միանգամայն բավարար է քրդի ու թուրքի սրից չկոտորվելը:

Այդ խղճուկ պահանջի առաջադրումը սկզբում առաջ էր բերել եվրոպական դիվանագետների տարակուսանքն ու դարմանքը, բայց հետո այն խոր համոզմունքն էր ձևավորել նրանց մոտ, թե հայերն ինքնավարության որևէ պահանջ այլևս չունեն, ոչ էլ հակված են քիչ թե շատ դեր խաղալու կայսրությունից քաղաքական կյանքում, բավարարված են միայն այն բանով, որ երկրի տնտեսությունից մեջ, հատկապես առևտրում, պահպանում են նկատելի դիրքեր:

Հենց դա էր պատճառը, որ երբ եվրոպական քաղաքական շրջաններում կամ մամուլի էջերում խոսք էր գնում ապագայում թուրքիայի բաժանման կամ վարչական վերակազմության մասին, շեշտավորվում էր Ալբանիային, Մակեդոնիային, Արաբիային լայն ինքնավարություն տալու անհրաժեշտությունը, բայց չէր հիշատակվում կամ համարյա չէր հիշատակվում Հայաստանի անունը: Լավագույն դեպքում միայն պահանջ էր առաջադրվում թուրքերին և հայերին հավասար իրավունքներ տալ: Ավելին, հայության նշանակությունը եվրոպայի աչքում այնքան էր ընկել, որ երբ խոսք էր լինում թուրքերին այնտեղից վերջնականապես վոնդելու մասին և այն մասին, թե դրանից հետո նրանք որտեղ պետք է շարունակեն պահպանել իրենց գոյությունը, մեծ տերությունների դիվանագետները մատնացույց էին անում հենց Հայաստանը: Պարզ էր, որ այդ դեպքում հայ ժողովուրդը կենթարկվեր ամենամեծ աղետի՝ նրա լիակատար բնաջնջումը թուրքիայում:

Ուրեմն, հայ գործիչները պետք է կարողանային մեծ տերու-
թյուններին համոզել, որ թուրքահայությունը սահմանադրու-
թյան վերահաստատումից հետո էլ չի դադարեցրել իր պայքարը
ազատություն ձեռք բերելու համար, որ իր ազգային շահերին ու
նպատակներին չեն համապատասխանում ո՛չ Իթթիհադի կո-
միտեի կամքին ենթարկվելու Դաշնակցության վարած քաղա-
քականությունը և ո՛չ էլ Իթթիլաֆի հետ համակերպվելու ու
նրան միանալու Հնչակի թափած ջանքերը:

Հիրավի, ազգերի պատմության զանազան շրջանների վրա
հետադարձ ակնարկ նետելիս ակնառու է մի ընդհանուր
երևույթ. ամեն ազգ կամ համայնք, եթե սպառնացող վտանգնե-
րի դիմաց ներքնապես պառակտված է, չի կարող դիմակայել
դրսի վտանգին: Ընդհակառակը, վտանգված ազգի կամ ցեղի
միաձայն լինելու դեպքում նույնիսկ ամենազորեղ արտաքին
հարձակումների ժամանակ գրեթե միշտ հնարավոր են դարձրել
նրանց փրկվելը և գոյություն պահպանումը: Դրանից հետևում
է, որ ազգերի ճակատագիրը վճռող հանգամանքը միշտ եղել է ոչ
թե արտաքին պատճառը, այլ ներքին վիճակը: Այլ խոսքով՝ հա-
մայնքների, ազգերի, պետությունների գլխավոր թշնամին միշտ
եղել է նրանց պառակտվածությունն ու անհամաձայնություն-
ները:

Բարեբախտաբար ամեն ինչից երևում էր, որ, վերջապես,
հայերի համար ևս հասունանում է այն պահը, որից սկսած՝
նրանց ներքին բոլոր արատները մնալու են անցյալում, կուսակ-
ցությունները գուցե ժամանակավորապես մի կողմ են դնելու
իրենց դավանաբանական հարցերը, և եթե հարկ լինի, իրա-
կանությունը դեմ հանդիման նույնիսկ հրաժարվելու են իրենց
անհատական գոյությունից և միավորվելով ձեռնարկելու են
ինքնապաշտպանական գործի կազմակերպումը, որը պատմա-
կան տվյալ ընդհանրապես ազգի գոյության տեսակետից հրամայական
կենսական պահանջ էր: Ամբողջ ազգը, անցյալի փորձություննե-
րից դասեր առած, ընդհանուր առմամբ օտարների դիվանագի-
տական խաղերն արդեն ըմբռնած, մի հոգի ու մի մարմին դար-
ձած, պետք է գնար միևնույն ուղիով:

Այն, ինչ այդ օրերին կատարվում էր Թուրքիայում՝

խորհրդավոր, ցավազին դեպքեր, ազդանշան էր այն բանի, թե
միգուցե մոտալուտ է կայսրության բռնադատված ազգերի
ազատագրությունը: Այդ աղոտ հույսը գնալով ամրապնդվում
էր մասնավորապես ի տես այդ շրջանում Կրետե կղզու շուրջ
տեղի ունեցող իրադարձությունների:

1877 թ. ռուս-թուրքական պատերազմը սկսվելուց ի վեր
քանի՜-քանի՜ անգամ թուրքահայոց մեջ թափանցեցին հույսի ու
լավատեսություն չողեր, բայց այդպես էլ մնացին նրանց հոգու
խորքում՝ թողնելով լուկ հուսախաբություն: Հույսի մի առկայ-
ծում եղավ նաև 1906-ի գարնանը:

Կրետե կղզու հույն բնակչությունը, որը բացարձակ մեծա-
մասնություն էր այնտեղ, ապստամբել էր թուրքական տիրա-
պետության դեմ, իսկ թուրք կառավարությունը, իր ավանդա-
կան սովորություններ, ձեռնամուխ էր եղել արյան մեջ այն խեղ-
դելու: Բայց Հունաստանը կարողացավ հասնել այն բանին, որ
եվրոպական չորս մեծ պետությունները՝ Ռուսաստանը,
Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան, զորախմբեր մտցրին Կրետե
և արգելք եղան թուրքերի մտադրությունը:

Երկու տարի Կրետեում մնալուց հետո՝ 1908 թ., միջազգային
այդ ուժերը դուրս եկան կղզուց՝ նախապես պայմաններ ստեղ-
ծելով, որ այն կարողանա միավորվել մայր երկրի՝ Հունաստանի
հետ:

Մինչև հեռանալը հովանավոր պետությունները Թուրքիային
ստիպել էին իր գործերը հանել կղզուց և այնտեղ գեներալ-
նահանգապետ էին նշանակել հույն արքայազներից մեկին, որի
դեկավարությունը տեղի էին ունեցել ընտրություններ, և ձևա-
վորվել էր ազգային ժողով: Վերջինս, իր հերթին, կազմել էր կա-
ռավարություն, որի վրա էր դրվել կղզին մայր հայրենիքին միա-
վորելու գործընթացի կազմակերպումը: Այդ գործընթացը շա-
րունակվում էր հետագա տարիներին, և արդեն 1912 թ. կեսերից
դրվեց կղզին նույն թվականին Հունաստանին միավորելու
հարցը:

Կրետեի հարցի լուծման ուղղությամբ ընթացող զարգա-
ցումները մեծ ոգևորություն էին առաջացրել հայկական շրջա-
նակներում: Ծատերը այն համարում էին արևելյան հարցի

մասնակի լուծում, իսկ ընդհանուր կարծիքն այն էր, որ Կրետեի հարցի լուծմամբ անխուսափելիորեն հերթը հասնելու է Հայկական հարցին, որի հանգուցայուծումը նույնպես տեղի է ունենալու եվրոպական մեծ պետությունների աջակցությամբ:

Ահա այս նոր պայմաններում էր, որ զարգացող իրադարձությունները դիմագրավելու համար հրամայական անհրաժեշտություն ատաջացավ ի մի բերել հայության հնարավորությունները: Բախտորոշ այդ պահին էջմիածնին էր վիճակված ստանձնելու հայ ժողովրդի պատմության մեջ սկսվող դիվանագիտական բացառիկ գործընթացի ղեկավարությունը:

Առաջինը շարժվեց Թուրքիայի և արտասահմանի հայ մամուլը: Ապա հայ գաղութներում սկսվեցին բողոքի ցույցեր, եղան դժգոհանքի արտահայտություններ, Հայկական հարցին եվրոպական պետությունների կողմից միջամտելու առաջարկություններ ու խնդրանքներ: Ամենքը թուրքաբնակ իրենց եղբայրների ազատ ու հանգիստ ապրելն էին ուզում:

4. Պոլսի հայոց պատրիարքության հասցեով տեղում էր հեռագրերի, նամակների, հանրագրերի անկասելի հոսք, որի հեղինակները պատրիարքից պահանջում էին դիմել Ամենայն հայոց կաթողիկոսին և խնդրել, որ նա ստանձնի Հայկական հարցի վերաբացման պատասխանատվությունն ու գլխավոր հարցի լուծման համար սկսվելիք գործընթացը: Նրանք սրբազանին հիշեցնում էին, որ 1878 թ. Բեռլինի դաշնագիրը միջազգային մեծ ակտ է, որ կնքվել է եվրոպական մեծ պետությունների ու Թուրքիայի միջև ու պարունակում է բազմաթիվ հոգվածներ, որոնցից մեկը՝ 23-րդը, վերաբերում էր Մակեդոնիային, իսկ 61-րդ հոգվածը՝ Հայաստանին: Այդ հոգվածներով Բ. Դոան առջև խնդիր էր դրվել անհրաժեշտ բարենորոգումներ կատարել Մակեդոնիայում և Հայաստանում մեծ պետությունների հսկողության ներքո: Դա նշանակում էր, որ այդ երկու հոգվածների գործությամբ մակեդոնական և հայկական հարցերն ստացել էին միջազգային նշանակություն, այսինքն՝ դադարել էին գուտ օսմանյան ներքին հարցեր լինելուց: Իսկ դա նաև նշանակում էր, որ այդ հոգվածների գործությամբ եվրոպական մեծ պետություն-

ներն այժմ էլ իրավունք ունեին հսկելու մտցվելիք բարենորոգումները և պահանջելու դրանց գործադրումը:

Բայց հայ հասարակություն մի մասը հակված չէր կարծելու, թե Հայկական հարցի նոր հասունացումը կարող է դրական ավարտ ունենալ: Այդպես մտածողներից ոմանք, չմերժելով սկսվող գործընթացը, միաժամանակ զգաստություն էին կոչում հայկական խնդիրներով զբաղվողներին: Նրանք գտնում էին, որ այդ պատասխանատու պահին զգացական գործունեությունը միայն կարող է վնաս բերել գործին: Համակողմանիորեն չլիզադատված ամեն մի քայլ կարող է աղետաբեր լինել ողջ ծրագրի համար: Քանի որ հայկական խնդրի լուծումը բացարձակապես կախում չունի մեզանից, քանի որ սեփական ուժերով մենք ի վիճակի չենք խնդրին լուծում տալու մեր ուզածի պես, ուրեմն պարտավոր ենք հետևել որոշակի գիտակցված քաղաքականության՝ առանց զգացական փութկոտություններով կացություն ավելի կնճոտելու: Իսկ դրա համար անհրաժեշտ է պահի լրջությունն ըմբռնել կատարյալ պատասխանատվությամբ:

Սկսվող գործընթացների դեմ հանդես եկող գործիչների մյուս մասը ավելի արմատական էր տրամադրված՝ գտնելով, որ անընդունելի է կրկին եվրոպային ներկայանալ աղաչանք-պաղատանքներով: Սրանք գտնում էին, որ Կաթողիկոսին դիմելն ավելորդ զբաղմունք է: «Կաթողիկոսը ոչ նաւատորմ ունի եւ ոչ ալ բանակներ. ան ալ մեզի պէս պիտի բողոքէ»¹, - ասում էր Հարություն ճանկուլյանը և առաջարկում դրա փոխարեն զինվել և ինքնապաշտպանության դիմել: Վարդգեսը նույնպես սխալ գտնելով եվրոպային դիմելը, որպես բողոքի արտահայտություն առաջարկում էր փակել կայսրության ողջ տարածքի հայկական եկեղեցիները, հրաժարվել կառավարությանը տուրք վճարելուց և ընդհանրապես չմասնակցել նրա գործերին²:

Բայց այդպիսի հանդուգն առաջարկները տվյալ պահին

¹ «Աւետաբեր», № 39, 28 սեպտեմբերի 1912 թ.:

² Տե՛ս նույն տեղում:

արդեն անիրագործելի էին և ոչ լուրջ: Միանգամայն տեղին համարելով ինքնապաշտպանության առաջարկը՝ «Աւետարեբեր» գրում էր. «Ամէնէն առաջ երբեք մոռնալու չէ սա պարագան թէ ամէն ժողովուրդ, որ գոյութեան պայքար կը մղէ, պարտաւոր է ամէնէն առաջ ինքնապաշտպանութեան միջոցներու մասին լրջօրէն մտածել եւ ամէն գոհողութիւններ ընելով միշտ կազմ ու պատրաստ գտնուիլ»¹: Թերթը միաժամանակ շեշտում էր, որ ներկայումս «ամէնէն լուրջ մտածելիք խնդիրը մեր ինքնապաշտպանութեան համար ունեցած նախապատրաստութիւնն է: (Ընդգծումը մերն է:– Հ. Ս.): Ինքնապաշտպանութիւն կը նշանակէ կոխ ոչ միայն քուրդ բռնակալներուն եւ անոնց արբանեակներուն, այլ նաեւ ի հարկին շատ աւելի հօգոր ոյժերու դէմ, եթէ ի վերջոյ դարձեալ մասսայական կոտորածներու չենք ուզեր ենթարկուիլ ոչխարներու պէս: Երանի՜ թէ երեսփոխան մը (նկատի ունեն էր Գ. Պոլսի Հայոց ազգային ժողովի երեսփոխաններին:– Հ. Ս.) կարենար ձեռքը խղճին վրայ դրած մեզ վստահացնել թէ այս կոռուին համար մեր ժողովուրդը բաւարար չափով պատրաստուած է. ուրեմն նախ նախապատրաստութիւն պէտք է եւ ան ալ ժամանակի եւ դրամի կը կարոտի»²:

Նույն միտքը լիովին պաշտպանում էր Նիկոլ Աղբալյանը: «Հորիզոնի» 1912 թ. № 249-ում նա գրում էր, որ իրական վտանգը ամեն մի բնական էակի մեջ արթնացնում է ինքնապաշտպանութեան առողջ բնազդը: Հողվածագիրը վճռականապէս մերժում էր «լրջախոհութեան» ու «խոհեմութեան» կոչերը և վտանգված ժողովրդի փրկութեան միակ ելքը տեսնում էր գոյութեան համար զինված պայքարի մեջ: Նա վշտացած էր, որ ազգի կենսունակ մտավոր ուժերը մշտապէս խուսափում են ինքնապաշտպանական գործը կազմակերպելուց: «Մենք հավատացած ենք,– գրում էր նա,– որ հայ ժողովրդի միջից դուրս կգան մարդիկ, որոնք իրենց առողջ բնազդների շնորհիվ... դիպլոմատիկական խաղերի ու քայլերի ստվերի տակից դուրս

¹ Տե՛ս «Աւետարեբ», № 38, 21 սեպտեմբերի 1912 թ.:

² Տե՛ս նույն տեղում

կհանեն ինքնապաշտպանութեան գործը և անձնվիրաբար առաջ կտանեն այն»:

Իսկ Թիֆլիսի «Հովիտը» տվյալ աննպաստ պահին զինվելու առաջարկին, ինչպէս միշտ արձագանքում էր անդիջում հակազդեցութեամբ: Շեշտելով, որ զինվորն այդ մասին չափտի բարձրաձայնի, գրում էր. «Այն բարձրաձայն կոչերը, թե զենքով պետք է պաշտպանենք մեզ եւ ձեռք բերենք մեր ազատութիւնը,– կոչեր՝ որ արտասանուեց վերջի ժամանակներս Կ. Պոլսի Ազգային ժողովի ամբիոնից և հայ մամուլի մի մասի էջերից,– կամ տգետի խոսքեր են, կամ հայութեանը օտար եղողների կողմից վարձուած պրօվակատորների խոսքեր: Մեզ՝ հայերիս համար միանգամայն անհասկանալի մնաց մի ճշմարտութիւն, այդ այն է՝ թե զենքով իրեն պաշտպանողը կամ իր ազատութիւնը ձեռք բերել ուզողը երբեք բարձրաձայն չի աղաղակիլ զենքի համար, չի սպառնալ զենքով:

Քիւրդերը ո՛չ [Ազգային] ժողով ունեն և ոչ ամբիոն, որտեղից զինելու սպառնալիք ուղարկեն. ո՛չ մամուլ ունեն, որի միջոցով յորդոր կարդան զինուելու, և այնուամենայնիւ քիւրդերը բոլորեքեան զինուած են»¹:

«Հովիտը» և հայ պահպանողական մամուլի մյուս օրգանները շեշտում էին, որ նույնիսկ այն ժամանակ, երբ հայերի ձեռքին քիչումիչ զենք կար, և հայ փոքրաթիվ քաջագունները կոխ էին մղում թուրքական բռնապետութեան դեմ, նույնիսկ այդ ժամանակ սթափ մտածող հայերը չէին ակնկալում դրական հետևանքներ, իսկ առավել ևս այժմ՝ 1912 թ., զինվելու մասին խոսակցութիւնը դատարկ զբաղմունք է:

Հիրավի, հրապուրված Բուլղարիայի ու բալկանյան մյուս ժողովուրդների ազատագրական պայքարի հաջողութիւններով և խաբված եվրոպականագետների ինտրիգներով, ինչպէս նաև առանց հիմնավոր նախապատրաստութեան, թուրքահայութեան առավել ոռոմանտիկ նոր սերունդը ծառայալ բռնակալութեան դեմ:

Հայ հեղափոխական շարժումն իր ծագման իսկ օրից անխու-

¹ «Հովիտ», № 37, 23 սեպտեմբերի 1912 թ.:

սափելիորեն դատապարտված էր պարտության: Դա ցիրուցան ու տկար մի ժողովրդի մեկուսացած օրհասական կոիվն էր իրենից անչափ հզոր մի իշխանության դեմ և չէր կարող հաղթանակով պսակվել: Առավելագույնը, ինչ կարող էր անել ժողովուրդը, ամուր ինքնապաշտպանություն ունենալն էր: Ինքնապաշտպանություն՝ զենքով: Դա իր հերթին ենթադրում էր ազգի ողջ ուժերի զորահավաք, իսկ դրա համար անհրաժեշտ էր կազմակերպչական անդուլ աշխատանք, որը հնարավոր էր միայն համազգային համերաշխության դեպքում: Ավանդ, դա մնաց որպես լուկ բարի ցանկություն՝ ազգի ներսում ներքաղաքական չդադարող զգվուտոցի և որպես դրա հետևանք՝ քաղաքական դաշտի անկատարելության պատճառով:

Ինչ վերաբերում էր եկեղեցիները փակելուն և կառավարությունը տուրք չտալուն, «Աւետաբերն» այդ առաջարկները համարում էր դատարկ կրակոցներ: «Եկեղեցիների փակելը, - գրում էր թերթը, - դարձեալ ցոյց մըն է Եւրոպայի հանդէպ. եթէ ընդունինք թէ կառավարութիւնը բացարձակապէս բարի կամեցողութիւն չունի բան մը ընելու: Տուրքը բռնի միջոցներով կ'առնեն չտուողներէն եւ այս պարագային կառավարութեան ընդդիմանալ պէտք է. եթէ Ալպանացիներու չափ ոյժ ունինք մեր խօսքը զէնքով քայլեցնելու՝ լաւ, հակառակ պարագային ի՞նչ դրական օգուտ կարելի է ակնկալել»¹:

Ահա մտքերի այս տարրնթացություն պայմաններում Կ. Պոլսի հայոց պատրիարք Արչարունի սրբազանին այլ ելք չէր մնում, եթե ոչ՝ հեռագրերով ու գրություններով իրար հետևից բողոքներ հղել էջմիածին և Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ին խնդրել ուժերը ներածին չափով միջոցներ ձեռնարկել:

Որպես լուսավորչական բոլոր հայերի կրոնական առաջնորդ՝ Կաթողիկոսը չէր կարող անտարբեր դիտել, թե ինչ տանջանքների ու արհավիրքների են ենթարկվում իր եկեղեցու հավատացյալները թուրքիայում: Ուստի նորանոր հեռագրերով նա խստիվ հանձնարարականներ էր տալիս Արչարունի պատրիարքին՝ չդադարեցնել Բ. Դոանը բողոքներ հղելը: Միաժա-

¹ «Աւետաբեր», № 39, 28 սեպտեմբերի 1912 թ.:

մանակ նա վերջինից և Վանի առաջնորդ Սարաջյան եպիսկոպոսից պահանջում էր մանրամասն տեղեկություններ հաղորդել իրեն:

Պատրիարքը բարեխղճությամբ անում էր ամեն բան Կաթողիկոսի պատվերը կատարելու համար, բայց որևէ խնդիր լուծելու նրա հնարավորությունները նվազագույն էին:

«Հորիզոնը» գրում էր. «Վստահութեամբ կարող ենք ասել, որ Թիֆլիսի հայություն լավագույն ու կարող անդամները նեցուկ կդառնան նրա (Կաթողիկոսի: - Ն. Ս.) ջանքերին եւ խօսքով ու գործով կը նպաստեն նրան՝ գլուխ հանելու իր պատմական առաքելութիւնը: Պատմական այսպիսի օրերում, երբ պիտի լուծեն ամէն քէն ու հակամարտութիւն, անհրաժեշտ է որ մի ոգի եւ մի կամք իշխեն ոուսահայ ժողովրդի մէջ»¹:

Թիֆլիսի հայություն տրամադրություններն արագորեն փոխանցվում էին Կովկասի այլ քաղաքների ու գավառների հայությունը:

1912 թ. սեպտեմբերի 26-ին Ալեքսանդրապոլում տեղի ունեցած համաքաղաքային ժողովը դիմեց Կաթողիկոսին և խնդրեց միջնորդել ոուսաց կայսրի առաջ՝ օգնության ձեռք մեկնելու թուրքահայերին («Հորիզոն», № 213):

Նման մեծ ժողով տեղի ունեցավ Բաքվում: Անդրադառնալով այդ ժողովին՝ «Մշակը» հաղորդում էր. «Կ[ոնստանտին] Ոստիսեանի նախաձեռնութեամբ գումարուեց հայերի խորհրդակցութիւն, որոշելու համար այն հարցը թէ ինչպէս արձագանք տալ Բալկանեան դէպքերին: Նախաձեռնողն առաջարկեց դիմել Թագաւոր կայսրին ամենահպատակօրէն միջնորդութեամբ պաշտպանել քրիստոնեաներին. ուրիշները առաջարկեցին սպասել կոնգրէսի կամ կոնֆերենցիայի գումարման. այլք՝ խորհուրդ էին

¹ «Հորիզոն», № 206, 21 սեպտեմբերի 1912 թ.:

* Դավիթ Անանունը գրել է, թէ «այլք»-ի տակ «Մշակը» նկատի ունի խորհրդակցությունը ներկա երկու մարքսիստներին՝ իրեն և Նարիման Տեր-Ղալարյանին (տե՛ս Գ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հատոր երրորդ (1901-1918), Վենետիկ, տպ. Ս. Ղազարու, 1926, էջ 521-ի սողատակ):

տալիս չխառնել այդ դէպքերին: Ընտրուեց 10 հոգուց բաղկացած մի մասնաժողով՝ խնդրի քննութեան համար: Սորհրդակցութիւնը գումարած էր քաղաքապետի թոյլտուութեամբ»¹:

Այն բանից հետո, երբ հայտնի դարձավ, որ Կ. Պոլսի պատրիարքարանը հայկական հարցի վերարծարծման խնդիրն ամբողջովին վստահել է էջմիածնին, ամեն օր աշխարհի տարբեր ծայրերից այնտեղ էին հասնում Գևորգ V կաթողիկոսին ուղղված տասնյակ հեռագրեր ու նամակներ՝ շուտափույթ գործի գլուխ անցնելու խնդրանքով ու պահանջով:

Մինչ կաթողիկոսը խորհում էր իր հոտի ապահովութեան ու փրկութեան համար ձեռնարկվելիք առաջին անելիքների մասին, Ռուսաստանի այլ վայրերի հայութիւնը նույնպես սկսեց այլեկոծվել ու շարժվել:

Բարձրացած ալիքին ամեն կերպ տոն էր տալիս Կովկասի և Ռուսաստանի հայ մտավորականութիւնը: Կազմակերպվում էին ժողովներ ու բազմամարդ հավաքներ, քննարկվում էին զանազան առաջարկներ և հղվում էջմիածին: Իր դերն էր կատարում կովկասահայ մամուլը, որը ռուսահայութեանը կոչ էր անում մեջտեղ բերել բոլոր հնարավորութիւնները՝ թուրքահայ տառապյալ ժողովրդին աջակից լինելու համար:

ԵՐԵՎԱԿՎՈՒՄ ԷՐ ՆԱԽԱՀԱՅՐԵՐԻ ԳԾԱԾ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Թուրքահայ ժողովրդի կյանքը բոլոր տանջալից դրսևորումներով շարունակում էր իր սովորական ընթացքը:

1912 թ. երիտթուրքերին իշխանութիւնից զրկած և կառավարութեան գլուխ եկած Իթթիլաֆ կուսակցութիւնը ոչինչ չփոխեց: Հայկական նահանգներում անպատիժ շարունակվում էին հայերի սպանութիւններն ու հարստահարումները, իսկ կառավարութեան «գործողութիւնները» սահմանափակվում էին լոկ խոստումներով:

¹ «Մշակ», № 230, 17 հոկտեմբերի 1912 թ.:

Ալեքսանդր Մյասնիկյանն իր հողվածներից մեկում նշել էր, որ առանց դրսի օգնութեան թուրքահայերն ի վիճակի չեն դուրս պրծնելու օսմանյան բռնապետութեան ճիրաններից: «Թուրքահայ շարժումը միշտ առաջ է տարվել դրսի ուժերով, - գրում էր նա: - Թուրքահայերը չեն կարողացել իրենց դատն իրենք մղել: Ժողովուրդը եղել է անճար. թուրքական դժնդակ կարգերը թույլ չեն տվել նրան իր դատի համար աշխատելու, իսկ թուրքահայ ինտելիգենցիան, որ, կարելի է ասել, պոլսահայ ինտելիգենցիան է, եղել է ամուլ: Շարժման կորիզն առաջ է եկել ու զարգացել է կովկասահայերի մեջ, գործիչները (ռուսահայ: - Հ. Ս.) նստած են եղել արտասահմանում, խմբերն անցել են Կովկասից»²:

Թուրքահայերի մի մասի մեջ նորից արթնանում էր Եվրոպայի միջամտութեամբ իրենց կյանքը տանելի դարձնելու հույսը:

Հայ հասարակութեան այլևայլ հատվածների՝ Եվրոպայում գտնվող ներկայացուցիչներից ոմանք, կովկասահայ առանձին գործիչներ տարբեր ուղիներով շարունակում էին դիմումներ հղել Բեռլինի դաշնագիրը ստորագրած պետութիւններին և Միացյալ Նահանգներին:

Վիեննայի Մխիթարյան միաբանութիւնից Հ. Գովրիկյանը և Գ. Մենևիչյանը 1912 թ. սեպտեմբերի սկզբին ներկայացել էին Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարար կոմս Բերտհոլդին և նկարագրել հայաբնակ նահանգների դժնդակ կացութիւնը²:

Հայկական հարցը Գալիցիայի խորհրդարանում բարձրացնելու համար հայազգի պատգամավոր Թեոդորով եպիսկոպոսը պատվիրել և Կ. Պոլսից ստացել էր մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ Պոլսում վեց տերութիւնների ղեսպանների կողմից Բ. Դոանը մատուցած 1895 թ. մայիսի 11-ի բարենորոգումների ծրագիրը և դրանք 1912 թ. սեպտեմբերի կեսերին ներկայացրել էր իրենց խորհրդարանի քննարկմանը, որը, սակայն, հետաձգվել էր տարբեր պատճառաբանութիւններով³:

¹ «Մշակ», № 3, 9 հունվարի 1914 թ.:

² «Աւետարներ», № 39, 28 սեպտեմբերի 1912 թ.:

³ Նույն տեղում:

Հայ գործիչներից ստացած բազմաթիվ դիմումների հիման վրա Կ. Պոլսում Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի դեսպանները 1912 թ. օգոստոս-սեպտեմբերին Հայաբնակ նահանգների իրենց հյուպատոսներին պատվիրել էին մանրամասն տեղեկություններ հաղորդել հայերի շուրջը տիրող վիճակի մասին:

Բայց Հայկական հարցում եվրոպական մեծերի մոտ 1912 թ. օգոստոս-սեպտեմբերին նկատվող որոշ աշխուժացումը առանձին ոգևորություն չէր առաջացրել հայ պահպանողական և ազատական շրջաններում, մանավանդ կովկասահայ իրականություն մեջ:

Արտահայտելով կովկասահայ պահպանողական շերտերի տրամադրությունները՝ «Հովիտը» գրում էր.

«Այժմ բոլորն էլ համաձայն են, որ թիւրքահայերի դրութիւնը պետք է բարւոքել այլևս. բոլորն էլ դժգոհ են թիւրք կառավարութեան ապիկար վարչական կարողութիւնից. բոլորն էլ խոստովանում են, որ հայերը իրաւունք ունեն իրենց դրութիւնից դժգոհ լինելու եւ լավ օրերի յոյսով նոր միջոցներ, նոր ճանապարհներ որոնելու»¹:

Բայց օտարների մասնակցությունը այդ բախտորոշ գործին «Հովիտը» համարում էր «չատ կասկածելի» և խիստ վտանգավոր. «Տառապող ժողովուրդը ինքը պէտք է մեծ զգուշութեամբ վերաբերուի իր դատին, հակառակ դէպքում անյաջողութեան բոլոր արհաւիրքը դարձեալ պիտի ծանրանայ իրա՝ մարտիրոս ազգի վրայ, իսկ այսօրուայ նրանց համախոհները առանց որեւէ կորուստ ունենալու՝ երես պիտի դարձնեն իրենց այսօրուայ կարեկցութեան առարկայ եղող տարաբաղդներից»²:

Թերթը շեշտում էր, որ հայկական խնդրին պետք է մոտենալ գերազույն լրջությամբ, որպեսզի անհաջողություն չեկրկնվեն մոտիկ անցյալի հայկական ջարդերը: «Հովիտը» երկրորդ պայման էր համարում այն, որ ազգն իր դատը հանձնի այնպիսի կարող, հեռատես և դիվանագետ անձանց, որոնք նկատի կունենան միայն տառապող ժողովրդի շահերը: Վերջապես,

¹ «Հովիտ», № 37, 23 սեպտեմբերի 1912 թ.:

² Տե՛ս նույն տեղում:

երրորդ՝ չխաբվել արտաքին կեղծ համակրությունից, չահասերների համախոհությունից, օտար դիվանագետների անհոգի սաղրանքներից¹:

Ելնելով այդ ամենից՝ թերթը շեշտում էր, որ այնտեղ, որտեղ առկա են եվրոպացիները, այնտեղ նոր դժբախտություններ են նյութված հայերի համար: Ինչպիսի՞ն է եղել եվրոպայի հասարակական կարծիքը ժամանակին կատարված հայկական անօրինակ ջարդերի նկատմամբ, հարց էր տալիս «Հովիտը» և պատասխանում. «Հասարակական կարծիքի թարգմանը եղող մամուլի այն մասը, որ աւելի լավատեղեակ էր գործերին, անամօթաբար յայտարարում էր, թէ «մոծակների կծելուց սարսափահար հայերը փախչում են օտար երկիրներ... այդ երկիրների բնակիչներին հարստահարելու համար»: Ուրիշները գրում էին. «Հայերը ապստամբել են իրենց կառավարութեան դէմ, կառավարութիւնն էլ իր պարտքն է կատարում, երբ զէնքի զօրութեամբ նուաճում է իր ապստամբ հպատակներին»: Մի երրորդը ասում էր. «Հայերը ո՛չ մեզ կրօնակից են եւ ո՛չ ազգակից, այդ պատճառով նրանց բաղդով պէտք չէ որ մենք հետաքրքրուենք»²:

Թերթը շեշտում էր՝ այսօր էլ հայերը որևէ պատճառ չունեն հավատալու, թե եվրոպական պետությունները անկեղծորեն ուզում են օգնություն ձեռք մեկնել իրենց: Վերջիններս, ինչպես նախկինում, հիմա էլ շահագրգռված չեն անկեղծորեն օգնելու հայերին: Նրանց շարժիչ ուժը եղել և մնում է շահը: «Պատմութիւնը կրկնում է, եւ վա՛յ նրան, ով չէ սովորել պատմութեան դասերից օգուտ քաղել: Այսօր հայ ազգը կանգնած է պատմական մի մեծ ճգնաժամի առաջ: Նախախնամութիւնը կամենում է, կարծես թէ, մի անգամ եւս փորձել հայ ազգի խելահասութիւնը՝ համոզուելու համար թէ՛ արժէ՞ արդեօք որ այս ազգը ապագայ ունենայ, թէ՛ նա պէտք է ջնջուի, լուծուի եւ դադարի գոյութիւն ունենալուց: Հայ ազգի մօտիկ անցեալին եւ ներկային ծանօթ ու ականատես անհատը միանգամից բացասական

¹ «Հովիտ», № 37, 23 սեպտեմբերի 1912 թ.:

² Տե՛ս նույն տեղում:

պատասխան կը տար այս հարցին, բայց նախախնամութիւնը երկայնամիտ է: Նա կամենում է այս ազգի խելքը մի անգամ եւս չափել իմանալու համար, թէ որքա՞ն է օգտուել պատմութեան դասերից:

Յիշենք պատմութիւնը:...

Արդեօք տառապեալ ժողովուրդը նոյն սխալը չէ՞ գործելու՝ իր բաղդի տնօրինութիւնը յանձնելով անկարողին, օտարին, թշնամուն...»¹:

Հայերի ընդհանուր կարծիքն այն էր, որ եթէ վեց տերութիւնների թվում չգտնվի գոնե մեկը, որն իր շահերի բերումով կանոնավորապես, ուժգնորեն ու տևականորեն զբաղվի Հայկական հարցով, ապա այն երբեք լուծում չի ստանա: Եվ նրանց մեծամասնությունը մտքում, որպես աջակից, առաջինը հայտնվում էր Ռուսաստանը: Նրանք համոզված էին, որ հենց Ռուսաստանն է, որ իր ճակատագրում պետք է ունենա գերակշիռ դեր:

Եղան ժամանակներ, երբ Թուրքիայի քրիստոնյա ճնշված ժողովուրդները կարծում էին, թե եվրոպական պետությունները, հատկապես Ռուսաստանը, լի են հոգածությունը դեպի իրենց հավատակիցները: Բայց 20-րդ դարի սկզբներին արդեն մարել էին քաղաքական իդեալիզմի նկատումներն ընդհանրապես և հայերի մեջ՝ հատկապես: Արդեն նրանց համար ակնհայտ էր, որ Հայաստանի նկատմամբ ոչ մի մեծ տերություն հայերի շահերից բխող որևէ սկզբունքային պարտականություն չի ստանձնի այն բանի համար միայն, որ նրանք քրիստոնյա ազգ են:

Ռուսաստանը, անկասկած, թե՛ քաղաքականապես և թե՛ տնտեսապես շահագրգռված էր, որ իր հարավային սահմանների մոտ տեսնի իրեն համակրող քրիստոնեական եթե ոչ պետություն, գոնե վարչական մի տարածք՝ քաղաքական-իրավական կարգերով: Այդպիսի իրավիճակ տեսնելու Պետերբուրգի ցանկությունը քաղաքական մոտիվները հիմնականում հանգում էին ուսու և հայ ժողովուրդների դարավոր շփումների ու ստեղծված համակրանքի վրա:

Չնայած այն բարյացակամությունը, որ ժամանակի զանազան փուլերում ուսաց կառավարությունն ունեցել էր դեպի թուրքահայերը, բայց Հայաստանում ռեֆորմներ (բարենորոգումներ) մտցնելու հարցին նա միշտ վերաբերվել էր խիստ զգուշությամբ: Ռուսաց կառավարական շրջաններում պակաս չեն եղել կարծիքներն այն մասին, որ պետք է բարձրացնել Հայաստանում ռեֆորմներ անցկացնելու հարցը, որովհետև դա կարող է սաստկացնել անջատողական ձգտումները ուսական Հայաստանում և սպառնալ Կովկասի անվտանգությունը:

Մոտավորապես 1911 թ. վերջերից սկսած՝ ուսական կառավարությունն տեսակետն աստիճանաբար սկսեց փոխվել: Պետերբուրգում հետզհետե համոզվում էին, որ նախկին երկյուղները հիմնավորված չեն: Մտքերի այդ փոփոխությունը մեծապես նպաստում էին Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաչկովի ղեկուցադրերը կենտրոնական կառավարությունը: Փոխարքան կարողացել էր ապացուցել, որ ուսահայերը կատարելապես չեզոք, ավելին՝ կայսրության համար չափազանց հուսալի տարր են:

Դեռևս 1912 թ. գարնանը, երբ էջմիածնի նորընտիր կաթողիկոս Գևորգ V Սուրենյանցը մեկնել էր Պետերբուրգ և ավանդական այցելություն կատարել ցար Նիկոլայ II-ին, պալատում նրան ակնարկել էին, թե արքունիքն անտարբեր չէ հայերի ճակատագրի հանդեպ: Միաժամանակ նրան խորհուրդ էին տվել, որ եթե առաջիկայում մեծ տերությունները ստիպված լինեն կրկին վերադառնալ Հայկական հարցին, ապա ճիշտ կլիներ՝ այդ խնդրի լուծման գլխավոր դերակատարությունը ստանձնել Ռուսաստանը:

Պետերբուրգում կաթողիկոսի ջերմ ընդունելությունը և այդ ընթացքում Հայոց Հայրապետի արած հավաստիացումները, թե ուսահայ ժողովուրդն անհունորեն նվիրված է Ռոմանովների գահին, է՛լ ավելի խորացրեցին հայության նկատմամբ ցարական իշխանությունների՝ 1906 թ. սկիզբ դրված համակրական քաղաքականությունը:

Թիֆլիս, Լեոյին ուղղած 12.02.1912 թվակիր նամակով

¹ Տե՛ս «Հովիտ», № 37, 23 սեպտեմբերի 1912 թ.:

Արչակ Չոպանյանը Փարիզից նրան տեղեկացնում էր, որ արտասահմանյան հայալեզու մի շարք օրգաններում «ի ուրախութիւն հայերի» տպագրվել է Թուրքահայաստանում ոուս հյուպատոսների համատեղ հայտարարությունն այն մասին, որ եթե Թուրքերը մեկ անգամ էլ փորձեն հայերին ջարդի ենթարկել, ապա իրենք անմիջապես կստանան նրանց պաշտպանությունը: Նամակագիրը դա համարում էր «չափազանց ոգևորիչ» և գտնում, թե պետք է հասնել այն բանին, որ նույնպիսի հայտարարություններ անեն նաև Թուրքահայաստանում ֆրանսիացի և անգլիացի հյուպատոսները: «Հայկական հարցի լավագույն լուծում մը կլինե՞ր Հայկական Լիբանան մը Ռուսիոյ հովանաւորութեան ներքոյ»¹, - ավելացնում էր Չոպանյանը:

Հայերի նկատմամբ ոուսական կառավարության քաղաքականությունն ակնհայտ փոփոխությունը կրկին արթնացրել էր Ռուսաստանի ազատագրական միսիայի մասին նրանց հոգում անթեղված հույսը: Թեև «Եվրոպայից քչել Թուրքերին և վերականգնել հունական թագավորությունը» Ռուսաստանի ավանդական քաղաքականությունը գտնվում էր հիվանդագին ձևախեղման մեջ, բայց հայերից շատերը համոզված էին, որ այդ երկիրը դեռ իր վերջնական խոսքը չի ասել արևելյան քաղաքականության մեջ: Ծեշտադրելով, թե Հայկական հարցն այս անգամ վերարժարծվելու է ավելի նպաստավոր պայմաններում, նրանք համոզված էին, որ Ռուսաստանը, նորից ստանձնելով Արևելքի քրիստոնյաների նկատմամբ իր ավանդական պատմական դերը, դրանով իսկ ուզում է սրբագրել անցյալում Փոքր Ասիայում հայերի նկատմամբ գործած սխալները:

Հայություն հանդեպ ոուսական քաղաքականությունն հետագա է՛լ ավելի դրական փոփոխությունների ակնկալիքով էր տոգորվել Կ. Պոլսի հայոց պատրիարք Հովհաննես Արչարունին: 1912 թ. ապրիլի 17-ին Ամենայն Հայոց կաթողիկոսը ստացել էր նրա հերթական նամակը, որով սրբազանը խնդրում էր դիմել

¹ Գրականության և արվեստի թանգարան (այսուհետ՝ ԳԱԹ), Արչակ Չոպանյանի ֆոնդ, թղթ. 38¹-38³, թղթ. 1-4:

ոուսաց կառավարությունը՝ Թուրքահայերին «տանջանքներից փրկելու համար»: Պատրիարքը նշում էր, որ հայությունն ակամամբ Պետերբուրգի ջերմացումը իրեն թույլ է տալիս մտածելու, որ ոուսներն, ի վերջո, դեմքով չըջվելու են դեպի Թուրքահայաստան:

Կաթողիկոսի և պատրիարքի միջև նամակների և հեռագրերի փոխանակումը գնալով ավելի ու ավելի հաճախակի էր դառնում: Դրանց բովանդակությունը նույնն էր՝ ինչպես ելք գտնել թեթևացնելու Թուրքահայության անտանելի դրությունը:

1912 թ. օգոստոսին Վանի շրջակայքում և այլուր լայն ծավալ ստացած ոճիրների կապակցությամբ Գևորգ V կաթողիկոսը, դեռ հայրապետական օժովից մեկ ամիս չանցած, օգոստոսի 28-ին Հովհաննես Արչարունի պատրիարքին ուղղել էր հետևյալ հեռագիրը. «Պոլիս: Հայոց Ամենապատիվ պատրիարքին: Ցաւալի լուրեր ենք լսում Վանի շրջակայքի հայերի դրություն մասին: Ծուտով հեռագրով յայտնեցէք, եւ մանրամասն, նամակով»²:

Կարելի է ասել, որ կաթողիկոսի այս հեռագիրը Հայկական հարցի նոր շրջանի վաղորդայնի առաջին նշմարակն էր: Եթե նախկիններում հայոց կաթողիկոսները միայն ի գիտություն էին ընդունում Կ. Պոլսի պատրիարքարանից ստացած դժբախտություններ գուժող նամակներն ու հեռագրերը, ապա այս հեռագրով Գևորգ V-ը պատրիարքից պահանջում էր կատարված չարաղետ դեպքերի մասին իրեն տեղեկացնել հանգամանորեն: Անշուշտ, կաթողիկոսն արդեն զգում էր Պետերբուրգի շնչառությունը:

Անդրադառնալով հայ-ոուսական հարաբերությունների ջերմացման իրողությունը՝ Արչակ Չոպանյանը նկատում էր, որ հայ ցեղը միշտ պետք է ունեցնէր ոուսին, իսկ ոուսը՝ հային: Եկել է ժամանակը, որ նրանք վերագտնեն հին օրերի բարի ավան-

² Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 110, թթ. 1-2:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 3:

դույթներն ու տրամադրությունները: Նա գրում էր.

«Ինչ ալ ըլլայ ներկա պատմական արտասովոր վայրկյանին վախճանը հայոց համար, նոյն իսկ եթէ – ինչ որ չեմ կարծեր – հայկական հարցը այս անգամ ևս չգտնե իր վճռական լուծումը, թուրքահայերը պետք է միշտ ոուսական զորութիւնը իրենց բարեկամ պահել ջանան, նեղ օրերուն անոր դիմեն՝ սպասելով ապագայ լավագոյն պատեհ առիթի մը՝ միևնոյն ճամբով իրենց հարցին վերջնական լուծում մը ստանալ կարենալու համար»: Նկատի ունենալով գոլիցիոյան ժամանակների մղձավանջը՝ Չոպանյանն այնուհետև շարունակում էր. «Ռուսին և հայուն միջև ցրտութիւնը, որ գոյութիւն ունեւ վերջին շրջանին մէջ, թուրքին հացին յուղ քսեց և թուրքահայուն մեծագոյն դժբախտութեանց գլխավոր պատճառը եղավ: Այժմ դարմանուած է անցեալին սխալը. հայ ցեղը կը մտնե այն հին ուղիղ ճամբուն մէջ, զոր իր նախահայրերը բացին: Այդ ճամբան արդեն իսկ օգուտ բերած է մեր ցեղին մէկ մասին: Ան, ներկա պայմաններուն մեջ, կրնայ մեզի ավելի կարևոր արդյունքներու առաջնորդիլ»¹:

1912 թ. սեպտեմբերի 15-ին փարիզաբնակ բանասեր Կարապետ Բասմաջյանը բաց նամակ է ուղարկում Կ. Պոլիս, պատրիարք Արչարունի արքեպիսկոպոսին, ուր ասված էր, որ այս ճակատագրական օրերին հայութիւնը կարող է հույսը դնել միայն ու միայն մի երկրի՝ Ռուսաստանի վրա: «Հայկական նոր կոտորածներու սպառնալիքին տակ կը գտնուինք, – գրում էր նա: – Թուրք կառավարութիւնը մինչև այսօր մեր բոլոր օրինավոր դիմումներուն հանդէպ սուտ խոստումներով խաբած օրօրած է մեզի, իսկ շահամոլ Եվրոպա իր անամոթ անտարբերութեամբ կը շարունակե քաջալերել պաշտոնական ոճրագործները: Արդ՝ այս իրողութիւններու առջև ելք մը միայն կը մնայ մեզ հայ ազգն ազատելու համար թուրքերու հայաջինջ քաղաքականութեան ձեռքէն. – Ազգովին դիմել ոուս կառավարութեան և ընդունիլ

¹ «Մշակ», № 3, 6 Հունվարի 1912 թ.:

անոր հպատակութիւնը: Չէ՞ մի օր ուչ կամ կանուխ, ոուսը պիտի գրավե Թուրքահայաստանը: Գոնե մենք մեր այս քայլով միլիոն մը հայերու կեանքը խնայած կըլլանք: Ո՛չ պատրիարքարանի փակումը, ո՛չ զանազան հրաժարումներ թուրք կառավարութեան վրայ որևէ ազդեցութիւն չեն ընէր: Ասոնք շատ անգամներ փորձուած են ապարդիւն կերպով»¹:

Հայերը ոգևորված էին իրենց ազգային հարցի նկատմամբ ոուսական հասարակութեան մեջ գնալով թափ առնող դրական վերաբերմունքից: Նրանք գտնում էին, որ եթե թուրքն ու քուրդը հայի թիկունքում տեսնեն ոուսին, ապա նրա հետ կվարվեն ավելի զգույշ, կհաշտվեն այն մտքի հետ, որ Թուրքահայաստանում քաղաքակիրթ ոեժիմի հաստատումը անպայման բարիք կլինի նաև իրենց համար, և ժամանակի ընթացքում կթողնեն արյունոտ լուրջ բարքերը և կբարեփոխվեն: Դրա հետևանքով դժբախտ երկրամասը կհանդարտվի, կհարստանա և կզառնա խաղաղ ու բարգավաճ միջնաշխարհ ոուսական և թուրքական պետութիւնների միջև:

Շատերը համոզված էին, որ Ռուսաստանի միջամտութիւնը Հայկական հարցին, հսկայական նշանակութիւն ունենալով թուրքահայութեան դատի տեսակետից, նաև մեծապես կնպաստի ոուսահայերի շահերի առաջնորդմանը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ ՄՏՆՈՒՄ Է ՌՈՒՍԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏ

Երբ բալկանյան փոքր երկրների ժողովուրդները գենքով էին լուծում իրենց խնդիրները, այդ նույն ժամանակ թուրքահայ ժողովուրդը վիզը ծռած մուրացիկի պես, աղերսագիրը ձեռքին, լալահառաչ ու պաղատագին ազատութեան ողորմութիւն էր խնդրում աշխարհի երջանիկներից: Այդպես էր եղել միշտ, այդ–

¹ «Մշակ», № 253, 13 նոյեմբերի 1912 թ.:

պես էր նաև Բալկանյան պատերազմի սկզբին, երբ թուրքահայոց պատրիարք Արչարունին, նորանոր ահագնացող լուրեր ստանալով թուրքահայաստանից, դիմեց Կ. Պոլսի անգլիական դեսպանին և նրան խնդրեց քրդերի հարձակումներից պաշտպանություն ցույց տալ հայերին, այն է՝ գործադրել Բեռլինի կոնգրեսի դաշնագրի 61-րդ հոդվածը: Դեսպանը չէր ընդունել պատրիարքին և նրա դիմումը թողել էր անպատասխան¹:

Հովհաննես Արչարունին համոզվել էր, որ պարապ զբաղմունք կլինի եվրոպացիներին դիմելու նոր փորձերը: Այդ օրերին Վահան Մալեգյանին հղած իր մի նամակում պատրիարքը շեշտում էր, որ ինքը վերջնականապես համոզվել է, որ հայերը կարող են վստահել միայն ռուսական դիվանագիտությունը²:

Ելնելով իր այդ համոզումից՝ Արչարունի սրբազանը գրավոր դիմել էր Կ. Պոլսի ռուսաց դեսպան Միխայիլ Նիկոլաևիչ Գիրսին, ապա անձամբ հանդիպել նրան: Հանդիպման ընթացքում առանց դիվանագիտական նրբությունների պատրիարքը նշել էր, որ հայերը երազում են ռուսական բանակը տեսնել Հայաստանում: Դեսպանը պատասխանել էր, որ Հայաստանն ու Քուրդիստանը գրավելու համար Ռուսաստանը նախապես պետք է ստանա մեծ պետությունների մանդատը: Միաժամանակ դեսպանը պատրիարքին խորհուրդ էր տվել ուղղակի դիմել Պետերբուրգ՝ նրան նաև հուսադրելով, որ Ռուսաստանն այդ մասին կհայտնի մեծ պետություններին³:

Պատրիարքի հետ իր հանդիպման մասին Գիրսը հաղորդում է Պետերբուրգ: Հետևում է արտգործնախարար Սերգեյ Դմիտրևիչ Սազոնովի նամակը Նիկոլայ II-ին, ուր ասված էր. «Հողային նվաճումները չեն մտնում մեր անմիջական շահերի մեջ: Մեր ներքին զարգացման պահանջները ստիպում են մեզ

մտահոգությունների առաջին շարքում դնել խաղաղության պահպանումը»¹:

Ռուսական դեսպանի հետ ունեցած գրույցից հետո Արչարունի պատրիարքը հանդիպում է նաև Կ. Պոլսի անգլիական դեսպանին և նրան ևս թողնում գրավոր դիմում:

Իր այդ երկու հանդիպումների մասին պատրիարքը հեռագրով հաղորդում է Ամենայն հայոց կաթողիկոսին²:

Մի փոքր հաջողությունն անգամ, ինչպիսին էր Գիրսի կողմից Արչարունու դիմումը չմերժելը, մեծ ոգևորություն էր առաջացրել պատրիարքարանում և ազգային ժողովում: Հայ քաղաքական կուսակցությունները չկարողացան ըմբռնել, որ քանի դեռ թուրքահայ ժողովուրդը խեղճ ու կրակի կերպարանքով է մոտենում շահախնդիր դիվանագետների դռանը, նա կտրուկ մերժման կարժանանա կամ լավագույն դեպքում ճոխ սեղանից կստանա մի չնչին պատառ միայն: Դա է դիվանագիտության բարոյականությունը:

Ահա հայկական կյանքի այդ պայմաններում էր, որ ժողովուրդն ինքնաբերաբար հայ քաղաքական ուժերին թելադրեց բռնել դիվանագիտական հստակ ուղղություն, այն է՝ շարժվել ռուսական քաղաքականությանը համընթաց:

Այդ շրջանում հայկական մամուլը լի էր Ալբանիայում մղվող հակաթուրքական ազատագրական կռիվի մասին նյութերով. այն շարունակվում էր ոգեշնչման աղբյուր մնալ հայ իրականության մեջ:

1912 թ. աշնանը Ալբանիայում ծավալվում էր նույն թվականի գարնանը ծագած հաղթական ապստամբությունը: Այժմ, երբ Բալկանյան պատերազմում թուրքերը մեկը մյուսի հետևից տանուլ էին տալիս արյունահեղ ճակատամարտերը, իրերի հանկարծակի բերումով իր ողջ սրությունը կանգնել էր ալբանացիների անկախության խնդիրը:

Ի՞նչ էր իրենից ներկայացնում Ալբանիան 1912 թվին: Դա

¹ Տե՛ս «Кавказ», 7 ноября 1912 г., «Մշակ», 250, 9 նոյեմբերի 1915 թ.:

² ԳԱԹ, Վ. Մալեգյանի ֆոնդ, ց. 1, թղթ. 165, № 165՝ նամակ:

³ Տե՛ս «Մշակ», № 250, 9 նոյեմբերի 1912 թ.:

¹ Տե՛ս «Վէմ», Գ. տարի, № 1, հունվար-ապրիլ, 1935, էջ 6:

² Տե՛ս «Մշակ», № 250, 9 նոյեմբերի 1912 թ.:

մի երկիր էր, որի ժողովուրդը թեև ապրում էր Եվրոպայի կենտրոնում, բայց շատ հեռու էր քաղաքակրթությունից: Այբանը ազգային ձևակերպված դատ չունեի և ոչ էլ իր իրավունքները երաշխավորող միջազգային որևէ փաստաթուղթ, ինչպիսիք ունեին հայերն ու մակեդոնացիները:

Եվ ահա այժմ թուրքերի դեմ այբանացիների համառ ապստամբությունը տերություններին տազնապի էր մատնել և նրանց ստիպել մի ելք գտնել՝ բավարարություն տալու ապստամբ երկրին: Նրանք մտադրվել էին երիտթուրքական կառավարությանը ստիպել կարճ ժամանակում արմատական փոփոխություններ կատարել Այբանիայում, իսկ եթե դա չարվեր, գնալ վճռական քայլերի և նույնիսկ դնել նրա անկախություն հարցը:

Այբանիան մեծ առումով ընկել էր հատկապես տերություններից մեկի՝ Ավստրիայի հետաքրքրությունների ու շահերի ոլորտ: Վերջինս դարձել էր Այբանիայի պաշտպանը, ամուր կանգնել նրա թիկունքին: Այդ տարօրինակ երևույթը տեղի էր ունեցել գլխավորապես երկու պատճառով. 1) Ավստրա-սերը հակընդդեմ շահերը խորանալով ուղի էին հարթել այբանական ինքնավարության համար: 2) Դրան նպաստել էր նաև ավստրա-իտալական շահերի մրցակցությունը:

Այդ իրողությունը, հայ գործիչների կարծիքով, պիտի նպաստավոր ազդեցություն ունենար հայկական հարցի վրա, ամրապնդել ու դյուրացնել թուրքահայաստանում ինքնավարության հաստատման գաղափարը: Նրանք գտնում էին, որ եթե այբանական ինքնավարության գաղափարը իր բնաշրջությունն է կատարում Ավստրիայի և Իտալիայի աջակցությամբ, ապա ինչու չի կարելի մտածել, որ հայերի ինքնավար ապրելու գաղափարը կարող է կյանքի կոչվել ռուսական հովանավորությամբ:

Ավստրիան առաջինն էր, որ պահանջեց իրականացնել այբանական ինքնավարությունը, իսկ Եռյակ համաձայնությունը (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան) զիջման գնաց և հավանություն տվեց Եռյակ զինակցության անդամներից մեկի պահանջին: Ելնելով դրանից՝ հայ գործիչները գտնում էին, որ եթե Ռուսաստանն իր հերթին առաջարկի թուրքահայաստանում

հաստատել ինքնավար ոեժիմ, ապա ավելի քան հավանական է, որ այս անգամ Եռյակ նիզակակցությունը փոխադարձ զիջման գնա և ընդառաջի Ռուսաստանի պահանջին: Նրանք, իհարկե, խորհում էին, որ թերևս կլինեն դեմ արտահայտվողներ, որոնք կպատճառաբանեն, թե Հայաստանում այլազան ցեղեր կան, և այնտեղ միայն հայերը չեն բնակվում: Բայց չէ՞ որ նույն երևույթն առկա է նաև Այբանիայում, ուր այբանացիների հետ ապրում են սերբեր, հույներ, բուլղարներ, ռումիներ և այլ ազգային փոքրամասնություններ: Բայց այբանական ինքնավարության ծրագիրը հաջողվեց, որովհետև դա վճռականապես ցանկացավ հզոր պետություններից մեկը: Ուրեմն, եթե մյուս հզոր պետությունը՝ Ռուսաստանը, նույնքան որոշակիորեն ու վճռականորեն կամենա թուրքահայաստանի ինքնավարությունը, ապա Բալկանյան պատերազմում թուրքերի կրած ջախջախիչ պարտությունների հետևանքով ստեղծված պայմաններում կարող է հաջողացնել այդ ծրագիրը:

Նկատի առնելով, որ դիվանագիտական հարաբերությունների ծավալման հարմարագույն կենտրոնը կարող էր միայն թուրքիայից դուրս որևէ տեղ լինել, ենթադրվում էր, որ Ամենայն հայոց կաթողիկոսի ղեկավարությամբ թուրքահայ և հայաբնակ զանազան վայրերի գործիչներից կկազմվեր մի ներկայացուցչական մարմին, որը կոչված կլիներ այդ կենտրոնից վարելու դիվանագիտական հարաբերություններ՝ հենված բոլոր հայերի ձգտումների ու ցանկությունների վրա:

Բայց դա, ցավոք, հնարավոր չեղավ գլուխ բերել, դրա փոխարեն դիվանագիտական նպատակների համար զանազան վայրերում կազմվեցին մասնախմբեր:

Կ. Պոլսի պատրիարքարանը և զանազան գաղութները, ինչպես նաև քաղաքական կուսակցություններն ու կազմակերպությունները ուղղակի կամ անուղղակի հրապարակ հանեցին իրենց առաջարկությունները և թերթերի միջոցով սկսեցին քարոզել զանազան տեսակետներ, որոնք փոխանցվում էին եվրոպական տարբեր ուղղությունների մամուլի օրգաններ: Վերջիններս հաճախ շեղվում էին հայկական իղձերի պաշտպանությունից և հարցը քննարկում ըստ այս կամ այն պետության

չահերի նպատակահարմարություն:

Նման ցաքուցրիվ միջոցառումները չէին կարող դրական արդյունք ունենալ: Ուստի առաջինը ձայն բարձրացրին արտասահմանյան հայերը՝ պահանջելով, այնուամենայնիվ, ստեղծել մի ղեկավար կենտրոն: Նրանց հետևեցին Թուրքիայի հայերը: Տեղի ունեցավ առաջարկությունների մի ուժգին պոթ-կում:

Դրան նպաստում էր երկու կարևոր սփոփիչ հանգամանք:

Նախ, սահմանադրական նոր ռեժիմի հաստատումից հետո եվրոպական մեծ պետությունները, ամբողջությամբ վերցրած եվրոպան, դեռ չէին փոխել իրենց վերաբերմունքը օսմանյան կայսրության նկատմամբ: Նրանք շարունակում էին Թուրքիան համարել «հիվանդ մարդ», որովհետև ի վերջո տեսան ու համոզվեցին, որ երիտթուրքերի վարչախումբը ոչ մի բանով չի գանազանվում նախկին Թուրքերի՝ Աբդուլ Համիդի վարչությունից: Ինքը՝ «հիվանդ մարդն» էր ցույց տվել, որ բնավ մտադիր չէ առողջանալու: Այն ամենը, ինչ կարող էր առողջացնել նրան՝ վարչական, դատաստանական, ազդարային, արդյունաբերական բարեփոխումներ, նա զանց էր առել՝ դրանց գործադրության համար չձեռնարկելով ոչ մի միջոց: Դարձյալ նույն հարստահարումները, նույն կեղեքումներն ու խաբեբայական խոստումները: Այդ էր պատճառը, որ Հայկական հարցը կրկին սկսել էր զբաղեցնել եվրոպական մամուլը և եվրոպական քաղաքական, դիվանագիտական միտքն ընդհանրապես¹:

Երկրորդ, Պետերբուրգի կառավարությունը, ինչպես վերը նշվեց, փոխել էր իր վերաբերմունքը դեպի հայոց հարցը, և ուսաց ղեկավար շրջաններում այդ հարցի նկատմամբ առաջ էր եկել բարյացակամ վերաբերմունք: Նույնպիսի շրջադարձ էր կատարվել նաև պահպանողական-աջակողմյան և ազգայնական խավերի շրջանում: Դա արտացոլում էր գտնում ոռու աջակողմյան մամուլում, որի էջերում համակրանք էր արտահայտվում դեպի հայ ժողովրդի բաղձանքը: Նույնիսկ այնպիսի պար-

¹ Տե՛ս «Անտաբեր» (Կ. Պոլիս), № 50, 14 դեկտեմբերի 1912 թ.:

բերականներ, ինչպիսիք նախկինում հայաստացույթյան զգացումներով տոգորված “Новое Время” կամ “Голос Кавказа” թերթերն էին, այժմ սկսել էին տպագրել Հայկական հարցի համար նպաստավոր հոդվածներ: Իսկ ոռու առաջավոր մտավորականության և հասարակության վերաբերմունքը դեպի հայ ժողովուրդը և Հայկական հարցը միշտ եղել էր համակրական:

Երրորդ, այլեկոծվում էր Թուրքահայ հասարակությունը: Կտրուկ էր դարձել Հայկական նահանգներում կարգ ու կանոն մտցնելու պահանջը: Հուզված էր արտասահմանյան հայությունը Թուրքիայում իր ազգակիցների թշվառություն և շարունակվող սպանությունների համար: Անտարբերության թմբիրից արթնանում էր նաև Ռուսաստանի հայությունը, այդ թվում ազգային արմատներից կտրված նրա մտավորական շերտը:

Այս վերին աստիճանի կարևոր հանգամանքները ցույց էին տալիս, որ հայոց հարցը, որը բոլորովին մեռած էին կարծում, իրականում մեծ տերությունների պաշտոնական շրջաններում չէր մարել, ավելին՝ վերակենդանանում էր, կարծես թևակոխում մի նոր հանգրվան և մտնելով նպաստավոր թվացող փուլ՝ դառնում օրվա հարց:

Ստեղծված նոր իրողությունների պայմաններում՝ 1) Ծանր ու թեթև անելով ռազմաճակատում Թուրքական բանակների ջախջախիչ պարտություն փաստը, 2) Վերլուծելով աշխարհի բոլոր հայաբնակ վայրերից էջմիածին հասած հեռագրերը, գրությունները, բանաձևերն ու տեղեկագրերը, որոնցով գաղութահայերը հաղորդում էին, որ իրենք այլևս անկարող են անտարբեր դիտել, թե Թուրքիայի իրենց ազգակիցներն ինչպիսի տանջանքների են ենթարկվում, միաժամանակ վախենում են մահանգրական մոլեռանդություն նոր բռնկումներից ու հայերի նոր կոտորածներից, 3) Հաշվի առնելով, որ քաղաքական առումով այլևս չկա հայկական խնդիր, այսինքն՝ հայերը քաղաքական պահանջներ չեն առաջադրում Թուրքական կառավարությանը, հրաժարվել են նախորդ սուլթաններից տրված առանձնաշնորհումներից և բավարարված կլինեն, եթե համահավասար իրավունքներ ունենան Թուրքիայի մյուս այլազգիների հետ, որ նրանք միայն պահանջում են իրենց տնտեսական

վիճակի բարվոքում և մանավանդ ավագակույթյան վերացում, այլ խոսքով՝ ուզում են իրենց սեփականություն, հողի, դրամի, պատվի ու կյանքի տերը լինել, 4) Կ. Պոլսի Հայոց պատրիարք Արշարունուց ստացած դիմումներն այն մասին, որ Հայաստանը բարեկարգելու և հայերի անվերջ հարստահարումներին վերջ տալու նպատակով անձամբ իր և Թուրքահայոց Ազգային ժողովի կողմից Բ. Դուանն ուղղած աղիոգորմ բոլոր խնդրանքները մերժվել են¹, և այդ իսկ պատճառով ինքը էջմիածինն է հանձնում խնդրի վարումը, 5) Համոզված լինելով, որ Հայոց հարցի լուծումն ինչպես նախկինում, այնպես էլ տվյալ ճակատագրական պահին գերազանցապես կախված է Ռուսաստանից, որից հետո միայն՝ Բեռլինի դաշնագիրը ստորագրած եվրոպական մեծ տերություններից, 6) Հավատալով, որ Ռուսաստանի և եվրոպական մեծերի միջև հակասությունները զգալի չափով մեղմացած են, Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V Սուրենյանցը մտադրվում է դիմել ռուսաց կառավարությանը՝ խնդրելով հանձն առնել նախաձեռնություն՝ Թուրքահայոց նվազագույնի հասցված հարցը կարգավորելու համար²:

Կաթողիկոսի այդ վճիռը բնական էր, որովհետև Բեռլինի դաշնագիրը ստորագրած (1878 թ.) վեց պետությունների ներկայացուցիչների՝ Լոնդոնում հավատարմագրված ղեսպանների առաջիկայում հրավիրվելիք կոնֆերանսում քննվելու էին բալկանյան խնդիրների կարգավորման, հատկապես Ալբանիային ու Մակեդոնիային անկախություն տալու հարցերը: Թուրքիան պարտավորվել էր Մակեդոնիայում անցկացնել բարենորոգումներ, որը չէր արել: Եվ ահա այժմ՝ շուրջ երեք ու կես տասնամյակ հետո, Մակեդոնիան այլևս Թուրքերից բարենորոգումներ սպասելու կարիք չէր ունենալու, որովհետև նա արդեն փաստորեն դուրս էր եկել նրանց տիրապետության տակից և ձգտում էր քաղաքական գոյություն ամենաբարձր աստիճանի՝ անկախու-

¹ Տե՛ս «Արօր» (Թիֆլիս), № 9-10, սեպտեմբեր-հոկտեմբեր, 1912, էջ 129-130:

² Տե՛ս «Հայրենիք», № 8 (354), օգոստոս, 1954, էջ 87:

թյան, որը պետք է իրավական ձևակերպում ստանար հենց Լոնդոնի կոնֆերանսում:

Բոլոր ժողովուրդները միչտ լիակատար ազատություն են ձգտել, բայց Թուրքահայությունը երազել անգամ չէր կարող այդ մասին: Նրա համար դա անհասանելի բարձունք էր, անիրականանալի երազ: Նրա գերագույն նպատակը եղել էր իր կյանքի ինքնավար կազմակերպումը, որը նույնպես նախորդ տասնամյակներին անհասանելի էր: Այժմ՝ 34 երկար ու ձիգ տարիներ հետո, նա իր հույսը կապում էր նոր պատեհության՝ Լոնդոնի ղեսպանաժողովի հետ:

Հայկական մամուլն արդեն վերլուծում և կանխատեսումներ էր անում, թե ղեսպանաժողովն իր իրավասությունների շրջանակներում Թուրքահայոց համար ինչպիսի վճիռներ կարող է կայացնել: Օրինակ՝ «Արօրը» (Թիֆլիս) երեք տարբերակ էր տեսնում: 1) Եվրոպական մեծ պետությունները մանդատ-լիազորություններ կտան Ռուսաստանին՝ զրավել Թուրքաց Հայաստանը և այնտեղ կարգ ու կանոն մտցնել, 2) Ռուսաստանն ինքը կզրավի այդ երկիրը՝ իբրև փոխհատուցում մյուս պետությունների գրավումների, 3) Եվրոպան ինքը կստանձնի վերին հսկողություն՝ ռեֆորմներ մտցնելու համար: «Որ եղանակն էլ գործադրուի,- գրում էր Թերթը,- հայ ժողովուրդը Թուրքիայում գոհ կը մնայ, որովհետև... նրան հարկաւոր է միայն ապահովութիւն կուլտուրական եւ քաղաքացիական ազատ զարգացման համար»¹:

Նախապես խորհրդակցելով հայ ժողովրդի ազնիվ բարեկամ փոխարքա Վորոնցով-Գաչկովի հետ՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Սուրենյանը 1912 թ. հոկտեմբերի 2-ին ստորագրում է նրան ուղղված նամակ, որով խնդրում էր՝ հաշվի առնելով Թուրքահայ ժողովրդի կյանքի անտանելի պայմանները՝ ստանձնել Ռուսաստանի կայսրին Հայկական հարցը քննելու և լուծելու նախաձեռնություն²:

¹ «Արօր», № 9-10, սեպտեմբեր-հոկտեմբեր, 1912, էջ 130:

² Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», № 1-2, 1993, էջ 168-169:

Կովկասի փոխարքային ուղղված հայոց կաթողիկոսի այդ դիմումով, փաստորեն, սկիզբ դրվեց Հայկական հարցի վերաբերյալ:

Միաժամանակ, այդ պատմական պահից սկսած՝ Թուրքահայությանը հուզող խնդիրների բեռը ծանրացավ Ամենայն հայոց կաթողիկոսի ուսերին:

Կաթողիկոսի դիմումը ստանալուց հետո Վորոնցով-Գաշկովը նրան խնդրում է պատրաստել ոուսաց միապետին ուղարկվելիք բազմակողմանի հիմնավորված դիմում: Դիմումի տեսքատ կազմելու աշխատանքներին մասնակցել էին Թիֆլիսի մի շարք նշանավոր ազգայիններ, այդ թվում՝ քաղաքագուլիս Ալեքսանդր Սատիսյանը: «...Կարող եմ ըսել, - հետագայում վերհիշել է նա, - որ այդ դիմումը համապատասխան էր հայ ժողովրդի, մտաւորականութեան եւ կուսակցական շրջանակներու ձգտումներուն»¹:

1877-1878 թթ. ոուս-թուրքական պատերազմի ծագումից ի վեր առաջին անգամ էր Ամենայն հայոց կաթողիկոսը պաշտոնական միջնորդություն անում Ռուսաստանին: Այդ պատերազմը, կարևոր լինելով Անդրկովկասում ոուսական տիրապետության ամրապնդման տեսակետից, միաժամանակ սկիզբ էր դրել հայ ժողովրդի պատմական բախտի նոր հանգրվանին՝ առաջ բերելով «Հայկական հարցը» իր բոլոր աղետալի հետևանքներով:

Բայց այն ժամանակվա Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ IV-ը հրաժարվել էր միջնորդություն հարուցել հաղթական Ռուսաստանի և եվրոպական պետությունների առաջ: Միջնորդությունը ներկայացվեց միայն մի քանի անձանց կողմից՝ Գրիգոր Արծրունու գլխավորությամբ՝ Կովկասի փոխարքային մատուցելով հայտնի պետիցիան:

Քանի որ Գևորգ IV-ը չէր դիմել Ռուսաստանին և մյուս մեծ պետություններին՝ չցանկանալով նրանց միջամտությունը Թուրքիայի ներքին գործերին, ուստի ոմանք նրան անվանում

էին Թուրքասեր (բայց ոչ երբեք Թուրքամոլ): Իրականում Կաթողիկոսի այդ վարմունքի պատճառը նրա երկյուղն էր, թե հնարավոր է, որ Ռուսաստանը չկարողանա իր ձեռքում պահել պատերազմի ընթացքում նվաճած երկրները, այդ թվում՝ Թուրքահայաստանը, և հաշտություն կնքելուց հետո գրաված տարածքներից հետ կքաշի իր զորքերը: Նա մտածում էր, որ այդպիսի իրավիճակ ստեղծվելու դեպքում հայերը լքված ու դեմ առ դեմ կմնան Թուրքական հսկա կայսրության առջև, որի իշխանությունները չեն զլանա վրեժխնդիր լինել:

Հենց այդպես էլ եղավ. եվրոպական մեծ պետությունները, գլխավորապես Գերմանիան և Անգլիան, արգելք հանդիսացան, որ Ռուսաստանն իր ձեռքում պահի Հայաստանը, և նրան ստիպեցին զորքերը հանել հայերի երկրից:

Ճիշտ է, ոուսաց զորքերի հեռանալուց անմիջապես հետո հայերի զանգվածային կոտորած տեղի չունեցավ, բայց սուլթան Համիդն իր հոգում պահեց ռիսկ և հետագայում, օգտագործելով պատերազմի ժամանակ Թուրքահայաստան մտած ոուսական զորքերին հայերի ցույց տված համակրական ընդունելությունը, ինչպես նաև Գր. Արծրունու գլխավորած մի խումբ մտավորականների ներկայացրած պետիցիան, նա 1895-1896 թթ. հայերի գլխին թափեց իր սոսկալի վրեժխնդրության ամբողջ թույնը: Դա էր պատճառը, որ Գևորգ IV-ը չէր ցանկացել իր ազգի և պատմության առաջ ստանձնել նման մեծ պատասխանատվություն:

Կար նաև այն տեսակետը, որ եթե Գևորգ IV կաթողիկոսը միջնորդության հարցում նախանձախնդիր լիներ Ռուսաստանի և եվրոպայի առաջ, գուցե հայկական հարցը այն ողորմելի «լուծումը» չստանար, որպիսին Բեռլինի 61-րդ հոդվածն էր, և գուցե հայ ազգը այդ 34 տարիների ընթացքում չէր տա սոսկալի զոհեր, փոխանակ նվազելու՝ թվապես զգալի չափով աճած կլիներ, կունենար զարգացած տնտեսություն և մշակույթ: Բայց անցածն անցած էր:

Գևորգ IV-ից հետո էջմիածնի կաթողիկոսներից ոչ մեկը նույնպես եվրոպական պետություններին որևէ դիմում չի հղել: Ինչ վերաբերում է Թուրքահայոց պատրիարքներին, ապա

¹ «Հայրենիք», № 7 (79), մայիս, 1929, էջ 95-97:

նրանք տարբեր առիթներով և տարբեր հարցերով դիմել էին միայն մեծ պետությունների Կ. Պոլսի ղեկավարներին:

Իհարկե, 1912 թ. Հայկական Հարցը բարձրացնելիս Գևորգ V Սուրենյանց կաթողիկոսը նույնպես մեծ մտավախություն ուներ. նա մտածում էր, թե Թուրքահայաստանը կարող է իր ներկա ողբալի կացությունից ավելի վատթար վիճակի մեջ հայտնվել: Երկար մտորումներից հետո, այնուամենայնիվ, նա գնաց այդ համարձակ ու մեծ վտանգներ պարունակող քայլին, որովհետև ուրիշ ելք չկար, ինչպես ասում են՝ դանակը հասել էր ոսկորին:

Հոկտեմբերի 2-ին կաթողիկոսը նաև կոնդակ է ստորագրում, որով նշանավոր կրոնական և հասարակական գործիչ, էջմիածնի Մինոզի անդամ, Գևորգյան ճեմարանի դասախոս, ականավոր հայազետ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանին հրահանգում է շտապ մեկնել Պետերբուրգ և, իր հերթին, ռուսական իշխանություններին համոզել հովանավոր լինել Հայերին:

Մեսրոպ եպիսկոպոսն իր հետ մայրաքաղաք է տանում Նիկոլայ II-ին ուղղված Վեհափառ Հայրապետի նամակը և Հայկական Հարցը բարձրացնելու խնդրանքով Կ. Պոլսի հայոց Արչարունի պատրիարքի գրությունը, որոնք պետք է հանձնվեին այդ օրերին Պետերբուրգում գտնվող Վորոնցով-Դաշկովին:

Հոկտեմբերի 9-ին հասնելով Պետերբուրգ՝ Մեսրոպ եպիսկոպոսը նույն օրն իսկ հանդիպում է փոխարքային և նրան փոխանցում վերոհիշյալ երկու գրությունների ծրարները: Վորոնցով-Դաշկովը դրանք անմիջապես փոխանցում է մինիստրների խորհրդի նախագահ Կոկովցևին, որը հաջորդ օրը տեսակցություն պետք է ունենար կայսեր հետ և պետք է վերջինիս հանձներ նաև էջմիածնից ստացած գրությունները: Բայց հանգամանքների բերումով Կոկովցևի հանդիպումը կայսրի հետ հետաձգվում է¹:

¹ Տե՛ս «Պատմա-բանասիրական Հանդես», № 1-2, 1993, էջ 1-2:

Ի հատուցումն այդ անհաջողության՝ փոխարքան Մեսրոպ եպիսկոպոսին խորհուրդ է տալիս ժամանակ չկորցնելու համար փորձել հանդիպում ունենալ արտգործնախարար Սերգեյ Սազոնովի հետ:

Անհանգստացած և հայերին անպայման օգնելու մտքով համակված Վորոնցով-Դաշկովն ուրիշ միջոցներ է փնտրում և ի վերջո անհրաժեշտ է համարում Հայկական Հարցի վերաբերյալ իր տեսակետը անձամբ հայտնել Նիկոլայ II-ին: Հոկտեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը նա հայօգուտ նամակ է գրում և հոկտեմբերի 10 թվով ուղարկում ցարին: Ամբողջովին Հայկական Հարցին և հայությանը նվիրված այդ նշանավոր նամակով փոխարքան ցարին տեղեկացնում է, որ վարչապետի մոտ ծանոթացել է Ամենայն հայոց կաթողիկոսի նամակին, և որ ինքը ենթադրում է, որ կաթողիկոսը նպատակ ունի ժամանելու Պետերբուրգ և իր հոտի անունից «անձամբ ամենահպատակորեն միջնորդելու Ձերդ Կայսերական Մեծությունը՝ Թուրքահայերին պաշտպանություն տակ առնելու քրդերի մշտական հարձակումներից»¹:

Նշելով, որ ինքը համարձակվել է վարչապետին խորհուրդ տալ չմերժել Կաթողիկոսի դիմումը, փոխարքան միաժամանակ անհրաժեշտ է համարում ինքնակալի ուշադրությունը ներկայացնել իր մի քանի նկատումները էջմիածնի միջնորդության առթիվ:

«Ձերդ Մեծությունը հայտնի է,- գրում էր Վորոնցով-Դաշկովը,- որ Կովկասի վերաբերյալ Թուրքիայի հետ ունեցած մեր հարաբերությունների պատմության ամբողջ ընթացքում ... ռուսական քաղաքականությունը, Պետրոս Մեծից սկսած, անդադար հիմնվել է դեպի հայերն ունեցած բարյացակամ վերաբերմունքի վրա, որին և վարձահատույց են եղել հայերը, մեր զորքերին ուժերը ներածին չափ օգնություն ցույց տալով պատերազմական գործողությունների ժամանակ: Միացնելով մեր տիրապետություններին, այսպես կոչված, Հայկական Շրջանը,

¹ Архив внешней политики Российской Империи (այսուհետ՝ АВПРИ), ф. «Политархив», гг. 1909-1912, д. 3459, л. 1.

որտեղ գտնվում է էջմիածինը՝ հայ լուսավորչականության այդ օրրանը, կայսր Նիկոլայ Պավլովիչը քիչ ջանք չգործադրեց, որպեսզի էջմիածնի պատրիարքը միաժամանակ հանդես գա որպես հոգաբարձու թուրքական և պարսկական հայերի համար՝ իրավացիորեն ենթադրելով դրանով ձեռք բերել Ռուսաստանի համար օգտակար մի ազդեցություն Փոքր Ասիայի քրիստոնյա ազգաբնակչության վրա, այն երկրամասի ազգաբնակչության, որտեղով անցնում է մեր վաղեմի առաջխաղացման ճանապարհը դեպի հարավային ծովերը»¹:

Այնուհետև փոխարքան անդրադառնում է այն ջանքերին, որ 19-րդ դարում Ռուսաստանը գործադրում էր իրեն հավատարիմ ժողովրդի վիճակը թեթևացնելու համար:

«Հովանավորություն ցույց տալով հայերին, - նշում էր նա, - մենք ձեռք էինք բերում հավատարիմ դաշնակիցներ, որոնք միշտ ցույց են տվել մեզ շատ մեծ ծառայություններ: Եթե պատահել է, որ այդ քաղաքականությունը երբեմն էլ մեզ չի հաջողվել՝ Թուրքիայի հակառակության պատճառով, որ ցանկացել է Կոստանդինուպոլսի պատրիարքի ձեռքում կենտրոնացնել հոգևոր ազդեցությունը թուրքահայերի վրա, բայց, համենայնդեպս, այդ քաղաքականությունն առաջ է տարվել անչեղ և հետևողական կերպով, համարյա մեկուկես դար շարունակ: Վերջին անգամ այն իր հստակ արտահայտությունն է գտել Սան-Ստեֆանոյի դաշնագրի մեջ, որի 16-րդ հոդվածի համաձայն՝ Բ. Դուռը պարտավորվել է՝ ուսուցողքները Հայաստանում թողնելու սպառնալիքի տակ՝ անհապաղ իրագործել տեղական պահանջներից բխող բարենորոգումներ ու բարեկարգություններ այն նահանգներում, որոնք բնակեցված են հայերով, ապահովել նրանց կյանքը հարևան քրդերից: Բարձր Դուռն այդ պարտավորությունը հետագայում հաստատվեց Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով, բայց արդեն առանց ուսական զենքի սպառնալիքի, որը բաց թողնվեց դաշնագրում մեծ պետությունների համաձայնություններ և Ռուսաստանի ցանկությունը հակառակ»²:

¹ АВПРИ, ф. “Политархив”, гз. 1909-1912, д. 3459, л. 1.

² Նույն տեղում, թ. 2:

Շարունակելով իր մտորումները՝ Վորոնցով-Դաշկովը ափսոսանք էր հայտնում, որ անցյալում հայության հետ ուսական իշխանությունների ունեցած ջերմագին հարաբերությունները դարավերջից սկսած խաթարվեցին, և դրա պատճառը նա համարում էր ուսական իշխանությունների անհեռատես շեղումը պետության ավանդական քաղաքականությունից: Նա գրում էր. «Միայն անցած դարի 90-ական թվականներին հայերի հանդեպ Ռուսաստանի վաղեմի քաղաքականությունը կտրուկ փոխվեց Սասունի կոտորածի ժամանակ, երբ նրանք Ռուսաստանին խնդրել էին միջամտել և Թուրքիային ստիպել դադարեցնելու կոտորածները, բայց իշխան Լոբանով-Ռոստովսկուց* ստացել էին կտրուկ մերժում: Ձերդ Մեծությունը շատ լավ հայտնի է, թե որպիսի ողբալի հետևանքների բերեց մեր քաղաքականության այդ փոփոխությունը՝ Ռուսաստանի ներսում հայ եկեղեցու նկատմամբ ձեռնարկած անհաջող քայլերի հետևանքով ստեղծելով հակառուս տրամադրություններ առհասարակ բոլոր հայերի, և այդ թվում նաև ուսահայատակների մեջ, որոնք հենց այդ պատճառով մղվեցին ուսու կառավարության թշնամի հեղափոխական շարժումների գիրկը»¹:

Ապա Դաշկովը Նիկոլայ II-ին տեղեկացնում էր, թե ինքը Կովկասի փոխարքայի պաշտոնը ստանձնելուց հետո ինչպես է փորձել վերականգնել հայերի երբեմնի վստահությունը Ռուսաստանի նկատմամբ և դա արել է իր իսկ ցարի աջակցությամբ: «Ես այժմ բախտավոր եմ զեկուցելու Ձեզ, Տեր Արքա, որ Ձերդ Մեծությունն այժմ ունի ոչ միայն հավատարիմ հպատակներ հանձինս ուսական հայերի, այլև դեպի Ձեզ են ուղղվում թուրքահայերի հայացքները, որոնք խոր կերպով գիտակցում են, թե միայն Ռուսաստանից և նրա Գերագույն Առաջնորդից իրենք կարող են ստանալ իրենց կյանքի, պատվի և գույքի

* Լոբանով-Ռոստովսկի Ա. Բ. (1824-1896), ուսու դիվանագետ, 1878-1879 թթ. Ռուսաստանի դեսպան Կ. Պոլսում, 1895-1896 թթ. արտաքին գործերի նախարար:

¹ АВПРИ, ф. “Политархив”, гз. 1909-1912, д. 3459, л. 3.

իրական պաշտպանությունը՝ հանդեպ քրդական չղաղարող գաղանուծությունների»¹:

Այս խոսքերին հետևում էին ցարին ուղղված Վորոնցով-Դաչկովի կոնկրետ առաջարկությունները: Նա գրում էր.

«Ես կարծում եմ, Տեր Արքա, որ այժմ հասել է ժամանակը դիմելու թուրքահայերին հովանավորելու ուսական վաղեմի քաղաքականությանը, և հարկավոր է միայն փնտրել այն ձևերը, որ պետք է ընդունի այդ հովանավորությունը ներկա պայմաններում: Իմ համեստ կարծիքով, մենք պետք է կտրուկ հայտարարություն անենք Բարձր Դռանը՝ հենվելով հայերի ապահովությունը քրդերից երաշխավորելու մասին Բեռլինի դաշնագրի վրա: Ըստ իս՝ Տօգուտ հայերի միջամտություններ անելու նախաձեռնությունը չի կարելի բաց թողնել մեր ձեռքից, մինչդեռ լրագրերում արդեն կա, գուցե և սխալ, տեղեկություն այն մասին, թե քաղաքականություն խաղացող մի քանի հայ քաղաքականներ դիմել են կոմս Բերտոլդին*, խնդրելով Ավստրիայի միջամտությունը: Եթե մենք այդ ուղղությամբ չանենք առաջին քայլը, և մեծ պետություններից մի ուրիշը կատարի, դրանով իսկ անուղղելի վնաս կհասցվի Փոքր Ասիայի քրիստոնյաների մեջ մեր ունեցած վարկին: Իսկ մեր լուծությունը հայ ժողովրդի պաղատանքների հանդեպ ներկա վայրկյանում թերևս նրա կողմից մեկնաբանվի այնպես, որ մենք նրան առաջարկում ենք ընդմիջտ թողնել այն հույսերը, որ նա դրել էր մինչ օրս իր միակ թագակիր հովանավորի՝ ուս ցարի վրա և ապագայում պաշտպանություն փնտրել Ռուսաստանից դուրս»²:

Փոխարքան գտնում էր, որ այդպիսի մի կտրուկ միջամտություն անելով՝ միաժամանակ չպետք է մոռանալ, որ թուրքահայ զանգվածների վերաբերմունքը մեծապես ազդելու է թուրքիայի դեմ գալիքում մղվելիք պատերազմական գործողությունների վրա: Նա նաև գտնում էր, որ թուրքահայերի պաշտպանության

նպատակով արվելիք միջամտությունը պետք է զուգորդվի ուսական կառավարության հայտարարության հետ առ այն, որ ուսները նպատակ չունեն հողային նվաճումներ կատարելու թուրքիայում: «Իրականում այսպես կոչված թուրքական Հայաստանի գրավումը, որի բնակչությունը արդեն կազմված է առավելապես վայրենի քրդերից, ներկա ժամանակում կարող է միայն վնասակար լինել մեզ համար՝ ստեղծելով մեծ հոգսեր այդ խայտաբղետ, միմյանց թշնամի և մոլեռանդ ազգաբնակչությամբ լցված երկիրը կառավարելու գործում»³:

Կովկասի փոխարքան ցարին հղած իր նամակը եզրափակում է այսպիսի խոսքերով. «Վերջում չեմ կարող թագցնել Ձերդ Կայսերական Մեծությունից, որ թուրքահայերի պաշտպանության համար իմ ծրագրած դիվանագիտական միջամտությունը կլցնի նրանց ուսաստանյան ցեղակիցների (ուսահայերի: Ն. Ս.) սրտերը հավատարիմ հպատակության սիրո և անձնվիրության զգացումներով հանդեպ իրենց Միապետի, ում հովանու ներքո իրենք անկեղծորեն կցանկանային ողջ հայության բարօրությունը»²:

Հոկտեմբերի 17-ին էջմիածնի պատվիրակը վերջապես հանդիպում է արտգործնախարար Սերգեյ Սազոնովին: Զրույցի ընթացքում նախարարն ասում է, որ ինքն անձամբ համակրում է հայերին և հնարավոր է գտնում ապագա կոնֆերանսում պաշտպանել նրանց դատը: Միաժամանակ նա խորհուրդ է տալիս այդ հարցով դիմել նաև մյուս պետություններին, ինչպես նաև հասնել նրան, որ կոնֆերանսի ժամանակ հայերն այնտեղ պատգամավորություն ունենան³: Զրույցի ավարտին Սազոնովը հայ եպիսկոպոսին խորհուրդ է տալիս անպայման տեսակցել նախարարների խորհրդի նախագահ Կոկովցեին:

¹ АВПРИ, ф. «Политархив», гз. 1909-1912, д. 3459, л. 4.

² Նույն տեղում: Հարկ է նշել, որ Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաչկովն ընդհանրապես առիթը բաց չէր թողնում տոն տալու ուս-հայ քաղաքական հարաբերությունների ջերմացման միտումներին, որն առավել ցայտուն արտահայտվում էր ուսական վարչապետների և կառավարության ազդեցիկ անդամների հետ նրա ունեցած հանդիպումների ժամանակ:

³ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», № 1-2, 1993, էջ 1-2:

¹ АВПРИ, ф. «Политархив», гз. 1909-1912, д. 3459, л. 3.

* Բերտոլդ Ֆրիլա (1866-1934), Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրության գլխավոր քարտուղար:

² АВПРИ, ф. «Политархив», гз. 1909-1912, д. 3459, л. 3.

Վարչապետի հետ էջմիածնի պատվիրակի հանդիպումը տեղի է ունենում հոկտեմբերի 25-ին: Սոսակցություն ժամանակ եպիսկոպոսը բարձրացնում է Ռուսաստանի օգնությունը թուրքական լծից հայերի ազատագրության հարցը՝ ասելով, որ ստեղծված միջազգային նպաստավոր պայմաններում, երբ «բարբարոս տաճկական տերությունը գետնատարած է դարձել բալկանյան փոքրիկ պետությունների ուժեղ հարվածների տակ», Ռուսաստանը մարդասիրաբար կարող է օգնել տաճկահայերին՝ նրանց խնդիրն առաջ քաշելով առաջիկայում սպասվելիք խաղաղության կոնֆերանսում¹:

Ամենայն ուշադրությամբ լսելով Մեսրոպ եպիսկոպոսի փաստարկները՝ Կոկովցերը հայերին աջակցելու խոստումներ է տալիս: Նա էջմիածնի պատվիրակին տեղեկացնում է, որ Հայկական հարցով հանդիպման ժամանակ կայսրն իրեն ասել է, որ ինքը հավասարապես մտածում է իր բոլոր հպատակների մասին, հետևապես չի կարող անտարբեր մնալ նաև հայերի խնդրի նկատմամբ: Վարչապետը նաև փոխանցում է կայսրի հետևյալ խոսքերը. «Թեև տաճկահայերի ծանր կացությունը մասին ներկայացրած թղթերում (խոսքը կաթողիկոս Գևորգ V-ի և Կ. Պոլսի հայոց պատրիարք Արչարունի պատրիարքի՝ Նիկոլայ II-ին ուղարկած գրությունների մասին է:՝ Ն. Ս.) հիշատակած փաստերն այնքան համոզիչ չեն, բայց ընդհանրապես հայտնի է թուրքիայում ապրող քրիստոնյաների վիճակը»: Նախարարը նաև տեղեկացնում է, որ Նիկոլայ II-ը կողմ է արտահայտվել, որ տեղի ունենալիք կոնֆերանսում Ռուսաստանը հանդես գա հայերի դատի պաշտպանությամբ, և թեև հայերի համար լավագույնն է, եթե ռուսները միայնակ ստանձնեն այդ դատի պաշտպանությունը, բայց խորհուրդ է տալիս աջակցության խնդրանքով դիմել նաև եվրոպական տերություններին²:

Վարչապետը նույնպես խորհուրդ է տալիս, որ Հայկական հարցը պաշտպանելու խնդրանքով հայոց կաթողիկոսը դիմի նաև մյուս մեծ պետություններին, ինչպես նաև հատուկ

¹ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», № 1-2, 1993, էջ 1-2:

² Տե՛ս նույն տեղում, էջ 2:

պատգամավորություն ուղարկի Լոնդոն:

Բուլչևիկյան հեղափոխությունից հետո արտասահման անցած Ռուսաստանի նախկին արտգործնախարար Սերգեյ Սազոնովը 1927 թ. Փարիզում հրատարակել էր իր «Հուշերը», որի 5-րդ գլուխը նվիրված է թուրքահայաստանի նահանգների բարենորոգումների խնդրին: Նա գրում էր, որ Ռուսաստանը վճռեց նման քայլ անել, որովհետև շահագրգռված էր թուրքահայերի վիճակի բարվոքումով: «Ուրիշ ոչ մի պետություն, - նշել է նա, - չէր կամենա վտանգի ենթարկել իր բարի հարաբերությունները թուրքիայի հետ՝ հարուցելով Բ. Դոան համար խիստ անախորժ մի խնդիր՝ հայկական բարենորոգումների իրականացման հարցը, որ արդեն մի քանի անգամ առաջ էր քաշվել: Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով Բ. Դուռը բոլոր մեծ պետությունների հանդեպ պարտավորություններ էր ստանձնել, բայց այդպես էլ երբեք չէր իրագործել՝ ըստ թուրք յուրաքանչյուր կառավարության արմատացած սովորության»¹:

Կոկովցի հետ հանդիպումից հետո Մեսրոպ եպիսկոպոսն անմիջապես հանդիպում է Վորոնցով-Դաչկովին և նրան տեղեկացնում վարչապետի հետ ունեցած զրույցի մանրամասներին: Փոխարքան իր հերթին եպիսկոպոսին հայտնում է, որ ինքը չուտով մեկնելու է Թիֆլիս, ուր նախատեսվում է ստանալ Ռուսական կառավարության պաշտոնական պատասխանը, որն անձամբ ինքը կուղարկի էջմիածին՝ Գևորգ V Վեհափառին:

Պետերբուրգում եղած ժամանակ Մեսրոպ եպիսկոպոսը հանդիպումներ է ունենում նաև ռուս ուրիշ պետական ու հասարակական գործիչների հետ, նրանց ներչնչում այն համոզումը, որ Հայկական հարցի դրական լուծումը մեծապես ձեռնտու է նաև ռուսական կայսրությանը², հարցազրույցներ էր տալիս Պետերբուրգի մամուլի օրգաններին:

“Новое Время” թերթի թղթակիցը, հանդիպելով եպիսկոպոսին, նրան հարցնում է Հայաստանի հայ բնակչության վիճակի

¹ С. Д. Сазонов, Воспоминания, Москва, 1993, стр. 168-169.

² Տե՛ս «Ժամանակ», № 1262, 30 հոկտեմբերի (12 նոյեմբերի) 1912 թ.:

մասին: Հետևել էր պատասխանը, թե թուրքերն ու քրդերը չեն դադարեցնում գազանությունները հայերի նկատմամբ: Չնայած էրզրումի, Բիթլիսի և Վանի վիլայեթներում դեռ երկու միլիոնից ավելի հայ կա, բայց իրենք ի վիճակի չեն հակադարձելու նրանց չղաղարող ոճիրներին, որովհետև անզեն են, հետևապես՝ անպաշտպան: Հայ բնակչությունը շարունակում է քարշ տալ իր ողորմելի գոյությունը և միշտ վախի մեջ է, թե կարող են կրկնվել համատարած ջարդերը: Բայց նույնիսկ այդ անելանի վիճակում նրանք չեն կորցրել հույսը, որ Ռուսաստանն իրենց չի մոռացել, որ նա անպայման տերությունների Լոնդոնի կոնֆերանսում կբարձրացնի հայության վիճակի և նրանից դուրս գալու հնարավորությունների հարցը:

Թղթակցի այն հարցին, թե Թուրքիայի արևելյան նահանգների բարեկարգման հարցը բարձրացնելուց հետո ո՞րն է լինելու Ամենայն հայոց կաթողիկոսի հերթական քայլը, Մեսրոպ եպիսկոպոսը պատասխանել էր. «Թե ի՞նչ պիտի ընէ կաթողիկոսը առայժմ դժար է ըսել, բայց ամեն պարագայի տակ իմ Պետերբուրգ գտնուած ատենս պետական մարդոց հետ ունեցած խոսակցութիւններու մէջ առիթ ունեցայ շոշափել Թուրքիոյ հայոց կացութեան խնդիրը: Ես կը կարծեմ թէ կաթողիկոսը պէտք է սպառէ իրեն տրամադրելի բոլոր միջոցները եւ շուտով առանձին պատվիրակութիւն մը պիտի դրկե՝ խնդրելով կրօնակիցներու պաշտպանումը: Բոլորս ալ խորապէս համօղւած ենք, թէ Ռուսիան արձագանգ պիտի տայ մեր եկեղեցու պետի դիմումին եւ թէ Թուրքիոյ հայոց խնդիրը մօտիկ ապագայի մեջ պիտի քննի շահագրգռուած պետութիւններու կողմէ»¹:

Բ. Դուռը ուշիուշով հետևում էր ոռուսաց մայրաքաղաքում էջմիածնի պատվիրակի հանդիպումներին և Հայոց կաթողիկոսի դիմումին ոռուսական կառավարության արձագանքներին:

Հարցազրույցը լույս տեսավ «Новое Время»-ի № 13156-ում: Նյութի վերջում խմբագրությունն արել էր հետևյալ լրացումը.

¹ «Новое Время»-ում Մեսրոպ եպիսկոպոսի հարցազրույցի մի մասի թարգմանությունը տե՛ս «Աշխատանք» (Վան), № 5 (99), 17 նոյեմբերի 1912 թ.:

«Պետերբուրգում եղած ժամանակ Մեսրոպ եպիսկոպոսը տեսակցել է պետական և հասարակական մի շարք գործիչների հետ և այն տպավորությունն է ստացել, որ հայերին հետաքրքրող խնդիրը ջերմորեն զբաղեցնում է մեր կառավարող շրջաններին, որոնք, ինչպես երևում է, մտադիր են այդ խնդիրն առաջ քաշել մոտ ապագայում»:

Հարցազրույցից հետո նույն օրը Մեսրոպ եպիսկոպոսը ճանապարհվել էր էջմիածին:

Պետերբուրգում հավատարմագրված Թուրքիայի դեսպան Թուրխան փաշան իր կառավարությանը հետագրով հասցրել էր հայտնել, որ հայոց կաթողիկոս Գևորգ V-ը ոռուսաց կառավարությանը խնդրել է Բալկաններում տեղի ունեցող ղեպքերի հարակցությամբ ստանձնել հայկական հարցը բարձրացնելու պատասխանատվությունը: Դեսպանը հաղորդել էր, որ ոռուսաց արտաքին գործերի նախարար Սազոնովը բարյացակամորեն է վերաբերվել կաթողիկոսի միջնորդությանը և ասել, թե Կ. Պոլսի պատրիարքն ու ազգային ժողովն իրենց խնդիրը Պետերբուրգ պիտի ներկայացնեն պաշտոնապես, որպեսզի Ռուսաստանը հնարավորություն ստանա խնդիրը հանձնել մեծ պետությունների քննությանը: Թուրխան փաշան չէր մոռացել նաև հայտնել, որ կաթողիկոսի միջնորդության հաջողությանը նպաստել է Կ. Պոլսի ոռուսաց դեսպան Գիրսը՝ Փոքր Ասիայի դրություն մասին Պետերբուրգ ուղարկած իր ընդարձակ ղեկուցագրով, ուր հանգամանորեն գրել է նաև Վանում, Ադանայում, Դիարբեքիրում և այլուր հայերի նոր սպանությունների մասին: Նա նաև իր կառավարությանը տեղեկացրել էր, որ, վերադառնալով էջմիածին, Մեսրոպ եպիսկոպոսը «Հայտարարություն» վերտառությամբ մի հաշվետվություն է ներկայացրել Ամենայն հայոց կաթողիկոսին, ուր տեղ են գտել կարևոր մանրամասներ Հայկական հարցի վերաբերյալ Պետերբուրգում ոռուս միապետի, ցարական կառավարության ղեկավար գործիչների, բարձրաստիճան այլ պաշտոնյաների արտահայտած տեսակետներից¹:

¹ Գ.Ա.Թ, Արշակ Չոպանյանի ֆոնդ, թղթ. 38, թ. 3:

**ՌՌԻՍԱՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻԿ
ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄՆԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ**

Հայոց նկատմամբ ցարական իշխանությունների վերաբերմունքի փոփոխությունից հետևանքով կովկասահայությունը չընդունում աշխուժացավ քաղաքական կյանքը: Հայ ազգային-քաղաքական կուսակցությունները և այլազան կազմակերպությունները գործելու նպաստավոր պայմաններ ստացան:

Բախտորոշ այդ ժամանակաշրջանում, երբ ամեն օր Հայաստանից մտահոգիչ լուրեր էին հասնում Անդրկովկաս, երկրամասի Հայ քաղաքական և մտավորական ուժերը միջոցներ էին փնտրում գորահավաքի ենթարկելու ռուսահայոց հնարավորությունները՝ թուրքահայ ժողովրդին աջակից լինելու համար: Հասարակական այդ պահանջն առաջ բերեց ռուսահայոց աշխարհիկ ղեկավար մարմին ստեղծելու գաղափարը, մանավանդ որ հույս էր ծագել, թե Հայոց հարցը կարող է նորից դիվանագիտական աշխարհի լուրջ ուշադրություն առարկա դառնալ, իսկ ռուսաց կառավարությունը ամենայն հավանականությամբ նպաստավոր դիրք կըռնի Հայ գործիչների նախաձեռնություն նկատմամբ:

Մինչ Թիֆլիսում մտորում էին այդ մարմնի ստեղծման համար կառավարությունից թույլտվություն խնդրել, Բաքվի Հայ մտավորական ուժերն արդեն հոկտեմբերի կեսերին հրավերներ էին ուղարկել երկրամասի և Ռուսաստանի հայաշատ քաղաքներ՝ առաջարկելով պատվիրակներ ուղարկել Թիֆլիս՝ մի ընդհանուր համաժողով գումարելու համար:

Այդ նույն ժամանակ Թիֆլիսի և Մոսկվայի Հայ մտավորականությունների կազմակերպիչներն արդեն դիմել էին կովկասյան փոխարքային՝ խնդրելով թույլատրել համաժողովի հրավերումը: Փոխարքա Վորոնցով-Դաչկովն իսկույն տվել էր համաձայնություն: Պետերբուրգի կառավարությունը իր հերթին ոչ միայն որևէ արգելք չէր հարուցել գաղափարը մարմնավորելու ճանապարհին, այլև խրախուսել էր նախաձեռնությունը:

Վերջապես 1912 թ. հոկտեմբերի 30-ին (նոյեմբերի 12-ին) Թիֆլիսում գումարվեց ռուսահայ մտավորականների կազմված

առաջին բազմամարդ խորհրդակցական ժողովը (համաժողով): Պատվիրակների մեծ մասը Թիֆլիսից էր, բայց եկել էին նաև Բաքվից, Երևանից, Ախալցխայից, Նոր Նախիջևանից, Արմավիրից, Բաթումից և այլ տեղերից:

Համաժողովն ունեցավ երկու նիստ:

Առաջին հարցը, որին անդրադարձան պատվիրակները, համաժողովի իրավասություն խնդրին էր: Ելույթ ունեցողները գտնում էին, թե քանի որ համաժողովը թերի ներկայացուցչական է, ուստի անհրաժեշտ է առաջիկայում կովկասի և Ռուսաստանի բոլոր հայաբնակ քաղաքներից որոշ համամասնությամբ ընտրել պատվիրակներ և հրավիրել նոր համաժողով՝ լիազորված ողջ ռուսահայության կողմից, որը կընտրի մի գործադիր մարմին՝ Հայոց հարցն առաջ մղելու համար¹:

Այնուհետև քննարկվեց այն հարցը, թե Բալկանյան պատերազմի ստեղծած բարենպաստ պայմաններում Հայկական հարցը բարձրացնելիս ռուսահայությունն ինչպիսի աջակցություն կարող է ցույց տալ Ամենայն հայոց կաթողիկոսին²: Որոշում ընդունվեց՝ դիմել Կաթողիկոսին և խնդրել, որ նա ողջ հայության անունից դիմում հղի Ն. Մ. Կայսրին՝ օգնության ձեռք մեկնելու տառապյալ թուրքահայությունը: Մշակվեց ու քվեարկվեց մի բանաձև, որտեղ ասված էր, որ ռուսահայ քաղաքական և հասարակական կազմակերպությունների խնդրին է սերտ կապեր հաստատել արտասահմանյան ազգային մարմինների հետ, ամեն կերպ նպաստել Հայաստան պրոպագանդայի ծավալմանը թե՛ Ռուսաստանում և թե՛ արտասահմանում: Մերձավոր խնդրի համարվեց Կ. Պոլսի ռուսաց դեսպան Մ. Ն. Գիրսի հետ սերտ կապերի հաստատումը: Ժողովն ընտրեց երկու պատգամավոր՝ Սամսոն Հարությունյան և Համբարձում Առաքելյան, որոնք պետք է մեկնեին Ս. էջմիածին և ժողովի բանաձևն անձամբ հանձնեին Կաթողիկոսին³:

¹ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 222, ց. 1, գ. 24, թ. 25:

² Տե՛ս «Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.)»: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1920 թ., էջ 3:

³ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24¹, թ. 25 և չրջ.:

Առաջարկ եղավ քննությունն առնել նաև թուրքահայերի ինքնապաշտպանությունից հարցը, բայց մեծամասնությունը որոշեց սահմանափակվել դիվանագիտական դիմումներով:

Վերջում համաժողովն ընտրեց 7 հոգուց բաղկացած **Ժամանակավոր բյուրո՝ Սամսոն Հարությունյան, Ալեքսանդր Սատիսյան, Հովհաննես Թումանյան, Կոնստանտին Սատիսյան, Ալեքսանդր Քալանթարյան, Համբարձում Առաքելյան, Ավետիս Պողոսյան, Նիկոլ Աղբալյան** կազմով: Շատ չանցած՝ Ժամանակավոր բյուրոն անվանվելու էր Ազգային բյուրո: Բյուրոն վարելու էր ընթացիկ գործերը և նախապատրաստելու էր նոր խորհրդակցական ժողովի (համագումարի) հրավիրումը՝ նվիրված տաճկահայոց դատին ուսահայոց օժանդակություն հարցերին¹:

Համաժողովից հետո Ս. Հարությունյանը և Համբ. Առաքելյանը մեկնեցին Էջմիածին՝ Կաթողիկոսին տանելով նրա մասնակիցների իղձն ու խնդրանքն արտահայտող նամակ²:

Ճիշտ է, Ժամանակավոր (Ազգային) բյուրոն չէր ճանաչված կառավարության կողմից, բայց իշխանությունները քաջատեղյակ էին նրա գործունեությունից, իրազեկ էին, թե նա ինչով է զբաղվում, և արգելքներ չէին հարուցում նրա առջև*:

Ժամանակավոր (Ազգային) բյուրոյի օրինակով շուտով նման մարմիններ ստեղծվեցին նաև Կովկասի ուրիշ հայաչափ վայրերում, որոնք կապերի մեջ էին միմյանց հետ և բոլորը ենթակա էին Թիֆլիսի բյուրոյի հրահանգներին:

¹ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24¹, թ. 25-ի շրջ.:

² Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 247⁶, վավ. 9, թթ. 7-8:

* Երբ Թուրքիան 1914 թ. աչնանը մտավ պատերազմի մեջ, և սկսվեց ուսթուրքական նոր պատերազմը, և երբ հրապարակ բերվեց հայ կամավորական խմբերի ստեղծման հարցը, Ազգային բյուրոն իր ճյուղերով ու գործակալներով անցավ կամավորական շարժման գլուխ: Կառավարությունը գործելու լիակատար ազատություն տվեց Ազգային բյուրոյին, որը և դարձավ լեզավ մարմին: Նա իշխանությունների հետ հաստատեց սերտ կապեր, նրա ղեկավարությունը էր տեղի ունենում հայոց ռազմական ուժերի համախմբումը: Բյուրոն գոյություն ունեցավ ընդհուպ մինչև հայ կամավորական խմբերի կազմավորումը և վերածումը ուսահայկական զնդերի: Նույնիսկ մինչև 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը Թիֆլիսի Ազգային բյուրոն դեռ շարունակում էր գործել՝ թեև խիստ սահմանափակ իրավունքներով ու լիազորություններով:

ՄՏՔԵՐԻ ՓՈՒՍԱՆԱԿՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Հայերին օգնություն ձեռք մեկնելու տրամադրությունն արդեն 1912 թ. հոկտեմբերի երրորդ տասնօրյակում թափանցել էր ռուսական իշխանական ամենաբարձր ոլորտները: Դրա ակնհայտ վկայություններից մեկը Ռուսաստանի նախարարների խորհրդի նախագահ Կոկովցևի հոկտեմբերի 31-ի № 6125 գաղտնի նամակն էր արտգործնախարար Սերգեյ Սազոնովին:

Վարչապետը արտգործնախարարին տեղեկացնում էր, որ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաչկովը հոկտեմբերի 19-ի թվով նամակ է հղել Նիկոլայ II կայսրին, որում նշել է, որ խնդրագիր է ստացել Ամենայն հայոց կաթողիկոսից, որով նա կրկին բարձրացրել է քրդերի հարձակումներից թուրքահայերին պաշտպանելու հարցը: Փոխարքան միապետին գրել էր, որ ինքը հավանություն է տվել կաթողիկոսի միջնորդությանը, նաև շեշտել էր, որ հայոց հոգևոր առաջնորդի դիմումին դրական պատասխան տալը «հարիր կլիներ թուրքահայերի պաշտպանության ռուսական վաղեմի քաղաքականությունը», և որ մեծ սխալ կլիներ «մեր ձեռքից բաց թողնել նրանց պաշտպանելու նախաձեռնությունը»: Այնուհետև Վորոնցով-Դաչկովն ավելացրել էր. «Անհրաժեշտ է Բ. Դոանը կտրուկ հայտարարություն անել՝ հղում կատարելով նրա կողմից հայերին քրդերից պաշտպանելու պարտավորության մասին Բեուլինի 1878 թ. տրակտատը»¹:

Սազոնովին հղած նամակով վարչապետ Կոկովցևը նրան այնուհետև տեղյակ էր պահում, որ «կայսրը, ծանոթանալով փոխարքայի վերոհիշյալ նամակին և լսելով իմ զեկույցն այս առթիվ, հաճեցավ կարեկցանքով վերաբերվել կուսակալի դիմումին թուրքահայերին պաշտպանելու ցանկության մասին և, միաժամանակ, լիովին հավանություն տվեց [Վորոնցով-Դաչկովի] առաջարկությունը, թե [հայերի] պաշտպանության

¹ АВПРИ, ֆ. "Политархив", ց. 1909-1912, Ծ. 3459, л. 33.

առաջին նախաձեռնությունը պետք է լինի ուսական կառավարություն կողմից»։ Վարչապետը միաժամանակ տեղեկացնում էր, որ կայսրը նաև մատնանշել է, որ այն վիճակի պարագայում, որի մեջ այժմ գտնվում է իր հակառակորդների հաղթական բանակների կողմից նեղվող ու իր ներքին կառավարման գործում կատարելապես ուժասպառ եղած Օսմանյան կայսրությունը, [այդ պայմաններում] Ռուսաստանի հայտարարությունը հօգուտ հայերի դժվար թե պատեհաժամ կլիներ, և ամեն դեպքում չէր կարող տվյալ պահին ակնկալել նրանց համար որևէ գործնականորեն օգտակար արդյունքներ։ Միաժամանակ, միայն մեր կողմից արված այդօրինակ հայտարարությունը չէր համապատասխանի եվրոպական տերությունների կողմից ընդունված մտադրությունը, որով որոշված է թուրք-բալկանյան հակամարտության ու դրան առնչված բարդացումների նկատմամբ գործել իրար միջև նախապես համաձայնեցված համատեղ ջանքերով։ «Ուստի, հավանաբար, ավելի ճիշտ կլիներ, առայժմ ձեռնպահ մնալով Պորտայի (Բ. Գոան) առջև որևէ միակողմանի գործողությունից, պարզաբանված հարցը հարմարեցնել այն ժամկետին, երբ, շահագրգիռ տերությունների համաձայնությամբ, կձեռնարկվի ներկայիս պատերազմի հետևանքների վերացումը և վերջինովս պայմանավորված՝ նոր իրավիճակի ստույգ հաստատմանը։ Ռուսական Կառավարություն՝ ներկայումս քննարկվող հայտարարությունը, անշուշտ, կարող էր ակնկալել ավելի մեծ հաջողություն, քան՝ այժմյանը, ընդ որում՝ թուրքահայերի օգտին գործողությունը, ինչպես ճիշտ նշել է Կուսակալը, ցանկալի կլիներ պահել Ռուսաստանի ձեռքում։ Այդ դեպքում մեր գործողության համար մենք կունենայինք առավել շատ հիմքեր, որ, չհաշված անգամ Կուսակալի նամակում նշված մեր ներքին հայկական քաղաքականության նկատառումները, հնարավոր կլիներ բավականաչափ վստահություն ակնկալել մյուս տերությունների աջակցությունը այս գործում մեր նախաձեռնության հանդեպ՝ չբացառելով, անգամ, Գերմանիան, որն իհարկե շահագրգիռ է հայ բնակչությանը խաղաղեցնելու հարցում թուրքիայի փոքրասիական գավառներում, որոնք կտրվում-հատվում են, մեծավ մասամբ, Գերմանիայի միջոցներով

կառուցվող Բաղդադի երկաթուղիով»¹։

Այնուհետև Կոկովցևը Սազոնովին գրում էր. «Վերոհիշյալ նկատառումների մասին Նորին Կայսերական Մեծությունը կարգադրել է ինձ հայտնել Ձերդ Գերազանցությունը և խնդրել Ձեզ փութացնել ինձ Ձեր եզրակացությունը ներկայիս գործով՝ նույնը Նորին Մեծությունը ղեկուցելու և Ռուսական կառավարության՝ սույն վերջնական գործելակերպը սահմանելու համար, որի մասին ես չեմ հապաղի, այդուհետ, տեղեկացնել նաև Կովկասի Կուսակալին։ Ընդ սույնին ուղարկում եմ Գեներալ-Ադյուտանտ Կոմս Վորոնցով-Դաշկովի նամակի պատճենը ու դրան կից՝ Կաթողիկոսի նամակը 3 հավելվածներով՝ խոնարհաբար խնդրելով, կարիքի պարագայում, վերադարձնել ինձ 5 հավելյալ փաստաթղթերը»²։

Նույնմբերի 5-ի № 755 գրությունը արտգործնախարար Ս. Սազոնովը Կ. Պոլսի ուսաց դեսպան Գիրսին է ուղարկում թուրքահայերի պաշտպանության հարցով նախարարների խորհրդի նախագահ Կոկովցևի 1912 թ. հոկտեմբերի 31-ի № 6125 նամակը՝ հինգ հավելվածով և խնդրում է այդ հարցով տալ եզրակացություն³։

Իր № 117 գաղտնի պատասխան հեռագրով դեսպանն արտգործնախարարին հայտնում է, որ ինքը «հավանություն է տալիս հայոց կաթողիկոսի նախաձեռնությունը, որը դիմել է Ռուսաստանին՝ իբրև Արևելքի քրիստոնյա ժողովուրդների վաղեմի պաշտպանի, իր հովանու տակ առնելու թուրքահայաստանում ապրող բազմաչարքար հայ ժողովրդին»⁴։

Գիրսը նշում էր, որ Կաթողիկոսի այդ խոստովանությունը միանգամայն ճիշտ է արտահայտում թուրքահայաստանի հայ բնակչության արդի տրամադրությունը Ռուսաստանի հանդեպ։ Հայ ժողովրդի հոգևոր առաջնորդի կողմից պաշտոնապես հարուցված հարցը Ռուսաստանի համար առաջնակարգ պետական

¹ АВПРИ, ф. “Политархив”, гз. 1909-1912, д. 3459, л. 33 (об.)-34.

² Նույն տեղում, л. 34-34 (об.)

³ Նույն տեղում, л. 40:

⁴ АВПРИ, ф. “Политархив”, гз. 1909-1912, д. 3459, л. 48.

կարևորություն ունի, որը համակողմանի մշակում է պահանջում, և որին էլ ինքը «մտադիր է ձեռնամուխ լինել ամենամոտ ապագայում՝ հայոց պատրիարքությունից ու մեր Թուրքահայաստանի ուսաց հյուպատոսներից իր պահանջած տեղեկությունները դեսպանություն հասնելուն պես»: Այնուհետև Գիրսն իր պարտքն է համարում սույն գործով արտահայտել ավելի ընդհանուր բնույթի մի քանի նկատառումներ:

Սագոնովին ուղղված Նախարարների խորհրդի նախագահ Կոկովցևի նամակից նա նկատել էր, որ Նիկոլայ II կայսրը կարեկցանքով է վերաբերվել Թուրքահայերին պաշտպանելու ցանկալիության մասին Կովկասի փոխարքայի դիմումներին և միանշանակ հավանություն է տվել այն առաջարկությանը, որ այդ պաշտոնական նախաձեռնությունը ելնի Ռուսական Կառավարությունից: Կայսրը միաժամանակ մատնանշել էր, որ ավելի ճիշտ կլիներ ձեռնպահ մնալ Բ. Դոան հանդեպ որևէ միակողմանի գործողությունից, հարցը հարմարեցնել այն ժամկետին, երբ շահագրգիռ տերությունների համաձայնությամբ կնախաձեռնվի ներկայիս պատերազմի հետևանքների վերացումը և վերջինովս պայմանավորված՝ իրերի նոր կարգի ստույգ սահմանմանը:

Իր կողմից ողջունելով Թուրքահայերին պաշտպանելու Ռուսաստանի վաղեմի քաղաքականությունը և միանգամայն համակվելով հայությունն օգնություն ցուցաբերելու անհողողող կամքով, Գիրսը գտնում էր, որ ոչ մի դեպքում չպետք է ձեռքից բաց թողնել այդ պաշտպանության նախաձեռնությունը: Միաժամանակ նա իր պարտքն էր համարում հրավիրել արտգործնախարարի ուղարկությունը Թուրքիայի հայկական գավառներում ծայրահեղ անկայուն վիճակի վրա, ուր ամեն օր կարող են բռնկվել լուրջ հուզումներ ու անկարգություններ: Հնարավոր չէ երաշխավորել այն, հեռագրում նշում էր նա, որ հայերի նկատմամբ որևէ զանգվածային արյունոտ հաշվհարդարի դեպքում այդ ազգի քաղաքական գործիչները, անվստահ լինելով ուսական կողմի աջակցության հարցում, չեն դիմի 1895-1897 թվականներին բարեփոխումների վրա աշխատած բոլոր երեք տերություններին՝ Ռուսաստանին, Ֆրանսիային և Անգլիային,

գուցե նաև Բեռլինյան տրակտատի բոլոր մասնակից մեծ պետություններին: «Ինչպես ինձ հայտնի է,- հաղորդում էր Գիրսը,- տեղի հայերի շրջանում արդեն կազմվում է մի ուղերձ, որը պետք է ներկայացվի մեծ տերություններին առաջիկա հաշտության խորհրդաժողովում: Սակայն իրադարձությունները կարող են ստիպել հեղինակներին այդ ուղերձը ներկայացնել նախքան կոնֆերանսի գումարումը: Այդ դեպքում նախաձեռնությունը կթռչի մեր ձեռքից»¹:

Ուստի Գիրսը կարծում էր, որ անհրաժեշտ է վստահեցնել ինչպես Կաթողիկոսին, այնպես էլ Կոստանդնուպոլսի պատրիարքին, թե կայսերական կառավարությունն անսուս է հայ ժողովրդի խնդրանքին և անհրաժեշտության դեպքում նրան կցուցաբերի հնարավոր հովանավորությունը: Այդպիսի «թեկուզ և ամենաընդհանրական բանաձևված խոստումը նոր կոտորածների ու ջարդերի դեպքում Թուրքահայերին հույս կտար [հենվելու] մեր օգնության վրա և կարող էր նրանց զերծ պահել տերություններին անմիջապես դիմելու [քայլից]: Մեր կողմից այդպիսի ընդհանուր խոստում տալու դեպքում մենք կարող էինք հայերին հասկացնել, որ ներկայիս պահը մենք հարմար չենք համարում ընդհանուր գործողությունների համար»:

Այնուհետև անցնելով գործելու այն ձևերին, որոնց կարող էր հանգել Պետերբուրգի ենթադրյալ հովանավորությունը Թուրքահայերի նկատմամբ, Գիրսը չեչտում էր, որ «հայկական վիլայեթների գրավումը մեր կողմից, որի մասին երազում են շատ հայեր, ներկայիս պահին ինձ վաղաժամ է թվում»²: Բայց նա միաժամանակ ավելացնում էր, որ Թուրքական կայսրության սահմաններում բարեփոխումների ճամփան բռնելիս պետք չէ մոռանալ 1895 թ. հայկական բարեփոխումների մասին օրենքի տխուր ճակատագիրը, և հարկավոր է ստեղծել ամուր երաշխիքներ հայկական գավառներում ենթադրվող բարեփոխումների համար՝ դրանք դնելով ուսական և եվրոպական գործակալների իրական հսկողության տակ: Սակայն մեծ կասկած ունենալով

¹ АВПРИ, ф. “Политархив”, зс. 1909-1912, д. 3459, л. 50.

² Նույն տեղում:

Հայկական հարցում եվրոպական տերութունների համերաշխ գործակցություն մասին, Գիրսն իր մտածումներն ամփոփում էր հետևյալ տողերում. «Ընդամին, պետք է նաև հաշվի առնել այն հավանականությունը, որ Թուրքիայում այժմ տիրող անարխիայի պարագայում բարեփոխումները չեն բերի ակնկալվող հանդարտեցումը, և պետք է պատրաստ լինել այն բանին, որ մեր գորքերի մուտքը այդ նահանգներ գուցե և դառնա անհրաժեշտ»¹:

ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՌՈՒՍԱՑ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ

Դեսպան Միխայիլ Նիկոլաևիչ Գիրսը նոր էր պատրաստվում Հայոց կաթողիկոսի բարձրացրած հարցի մասին իր կարծիքը շարադրել Ս. Սազոնովին ուղարկելիք նամակում, երբ նրան դիմում են երկու նշանավոր հայ գործիչներ՝ խնդրելով ունկնդրություն: Դրանք էին Թուրքական խորհրդարանի նախկին պատգամավոր Գրիգոր Զոհրապը և Հայկական պատրիարքության Սառը ժողովի անդամ Մարտիկյանը:

Հանդիպման սկզբում վերոհիշյալ անձինք դեսպանին ասում են, որ իրենք ներկայացնում են Հայոց պատրիարքությունը, հետևապես նաև՝ ողջ Թուրքահայությունը, ապա պարզում են, որ եկել են պատմելու Հայաստանի ծայրաստիճան անտանելի վիճակի մասին, որն օր օրի վատթարանում է Թուրքական կայսրությունում ծավալվող անարխիայի պատճառով:

Գիրսի այն հարցին, թե որո՞նք են Հայերի պահանջները, Զոհրապն ու Մարտիկյանը պատասխանում են, թե դրանք «չատ համեստ են» և շարադրում են իրենց ժողովրդի տարրական իրավունքները, այն է՝ անձի ու գույքի անձեռնմխելիության ապահովում, այսինքն՝ կյանքի իրավունք օրենքի սահմաններում: Բայց հենց այդ իրավունքն է, ասում են նրանք, որ Թուրքական

¹ АВПРИ, ф. “Политархив”, гг. 1909-1912, д. 3459, л. 50 (об.).

կառավարությունը չի ուզում կամ չի կարողանում հայության համար ապահովել:

Զոհրապն ասում է, որ երբ Թուրքիայում հռչակվեց սահմանադրությունը, Հայերն անկեղծորեն ողջունեցին այն՝ կարծելով, թե վերջապես վերջ է դրվելու իրենց դարավոր տառապանքներին: Անգամ 1909 թվականի Ադանայի սոսկալի ջարդը ներկեց Թուրքերին և մեղսագրվեց հին վարչակարգին: Բայց հետագա հանգամանքները ստիպեցին Հայերին դառնություններ գրջալ իրենց դուրահավատության համար: Քրդերը առաջվա պես թալանում, բռնաբարում և սպանում են անպաշտպան Հայ բնակչությանը, իսկ Թուրքական երեսպաշտ վարչությունը, ինչպես միշտ ականատես լինելով այս բոլոր սարսափներին, որևէ միջոց չի ձեռնարկում դրանք դադարեցնելու համար: Քրդերի կողմից զավթված հողերը չեն վերադարձվում իրենց տերերին: Իսկ վերջերս չարագույժ լուրեր են ծավալվում նախապատրաստվող նոր ջարդերի մասին: «Այս բոլոր փաստերը լիակատար հուսալքություն են հասցրել Թուրքահայերին», - բացատրում էր Զոհրապը¹:

Անցնելով իրենց այցի բուն նպատակին՝ Հայ գործիչները կտրականապես հայտարարեցին, թե Հայ ժողովուրդն այժմ չի տեսնում որևէ այլ ելք, քան Ռուսաստանին դիմելը, որը միակն է, ով կարող է փրկել իրեն այդ սոսկալի վիճակից: Ընդամին, նրանք մատնանշեցին, որ Հայ ժողովուրդն այլևս ոչ մի հավատ չունի ցանկացած Թուրքական բարեփոխման իսկություն հանդեպ, անգամ թեկուզ՝ եվրոպական հսկողության ներքո: Նրանց կարծիքով, Մակեդոնիայում «կատարված բարեփոխումները» վկայում են Հայաստանում Թուրքական հոռի վարչությունը պահպանելու պարագայում Հայ բնակչության համար չոչափելի որևէ արդյունքի հասնելու անհնարինություն մասին: Ուստի Զոհրապը և Մարտիկյանը գտնում էին, որ Հայ ժողովրդին կարելի է փրկել միայն արմատական գործողությունների միջոցով, այսինքն՝ հայկական վիլայեթները ուսանների գրավմամբ, ընդ

¹ АВПРИ, ф. “Политархив”, гг. 1909-1912, д. 3459, л. 48.

որում՝ ոչ թե ժամանակավոր, այլ մշտական գրավմամբ, որը կկրի 1908 թվականին Բոսնիան Ավստրիային կցելու բնույթը: «Ռուսական գրավումը ցանկանալու հարցում միասնական են բոլոր Հայկական կուսակցությունները, անգամ՝ դաշնակցականները»¹, - դեսպանին վստահեցնում էր Մարտիկյանը:

Պատգամաբեր Հայ գործիչների հետ ունեցած իր հանդիպման մասին Գիրսը № 177 գաղտնի հեռագրով հաղորդում արեց արտգործնախարար Սազոնովին: Նա նշում էր, որ «ամենևին մեր շահերից չէ Հայերին մեզնից վանելը: Ես իմ զրուցակիցներին պատասխանեցի, որ Ռուսական կառավարությունը, հետևելով դարավոր ավանդույթներին, խոր կարեկցանքով է վերաբերվում Հայ ժողովրդի տառապանքներին: Իսկ նրանց կոնկրետ առաջարկություններին ես հարկ համարեցի վերաբերվել մեծագույն զսպությունը՝ խոստանալով միայն դրանց մասին տեղյակ դարձնել Կայսերական կառավարությանը և մատնանշելով, որ ներկա պահին, երբ դեռ չի վերջացել Բալկանյան պատերազմը, հարմար չէ այդ հարցով որևէ գործողություն ձեռնարկելը»²:

Այն, որ Ջոհրապը և Մարտիկյանը իրապես արտահայտում էին թուրքահայերի հայացքներն ու հույսերը, ըստ երևույթին տարակուսելու հիմք չէին թողնում ոուսաց դեսպանին, որը դրանից կարճ ժամանակ անց հանդիպել էր պատրիարք Արչարունուն: Վերջինս կրկնել էր Ջոհրապի և Մարտիկյանի արտահայտած բոլոր տրտունջները՝ ջերմորեն խնդրելով ոուսաց կայսրի պաշտպանությունը անբախտ Հայ ժողովրդին:

Օգտվելով առիթից՝ Գիրսը հարմար է համարել Սազոնովին թուուցիկ հիշեցնել նախորդ տասնամյակներին Հայերի կրած տանջանքների մասին: Վկայակոչելով Փոքր Ասիայում և հենց Կոստադնուպոլսում 1894-1896 թվականներին Հայերի զանգվածային կոտորածները՝ դեսպանը չեչտում էր, որ դրանք, սակայն, Հայկական տառապանքների վերջը չեղան: Նա վկայակոչում էր հոֆմայստեր Չարիկովի 1909 թ. սեպտեմբերի 12 (25)-ի, նույն թվի հոկտեմբերի 3 (16)-ի, 1911 թ. դեկտեմբերի 17-30-ի,

¹ АВПРИ, ф. “Политархив”, г.г. 1909-1912, д. 3459, л. 48 (об.).

² Նույն տեղում, л. 48 (об.)-49:

ինչպես նաև իր իսկ 1912 թ. հունիսի 16-ի (№ 18) զեկուցագիրը Հայերի սոսկալի վիճակի մասին: Հայերի դրուժյունը հիմա էլ ոչնչով չի փոխվել, հաղորդում էր դեսպանը և ավելացնում, որ այսօր վիճակը շատ ավելի վատ է, քան եղել է երբևիցե. ազրաբային հարցը օրըստօրե շարունակում է սրվել, քրդերը նրանց հողերի մեծ մասը զավթել են և շարունակում են զավթել, իսկ իշխանությունները ո՛չ միայն չեն խոչընդոտում, այլև անգամ հովանավորում ու աջակցում են անօրեններին: Մեր հյուպատոսները միաբերան վկայում են քրդերի կատարած թալանների ու կողոպուտների, հայերի սպանությունների և Հայ կանանց բռնի մահամեղականացման մասին: Ընդ որում, վայրագությունների հեղինակներին գրեթե երբեք չեն ենթարկում պատասխանատվության¹:

Դեսպանը նկատում է, որ այդ ամենի հետևանքով ուժեղանում է Հայկական զանգվածների ձգտումը դեպի Ռուսաստան, որ այդ ձգտումը թափանցել է նաև Հայ բուրժուազիայի և մտավորականության շարքերը, որոնց շրջանում հեղափոխական կուսակցությունները սկսում են կորցնել իրենց հեղինակությունը, և կազմակերպվում են նոր կուսակցություններ՝ պահպանողական ծրագրերով:

Գիրսի հեռագրի տեքստը ավարտվում է հետևյալ խոսքերով. «Օրերս իմ կողմից հարցված մեր հյուպատոսները վանում, Բայազետում, Բիթլիսում, էրզրումում և Տրապիզոնում միաձայն վկայում են, որ բոլոր Հայերը, կուսակցականությունից անկախ, Ռուսաստանի կողմն են»²: Իսկ ոուսական փոխհյուպատոսը վանում նոյեմբերի 21-ին իր հերթին հեռագրել էր, որ «բոլոր Հայերն անկեղծորեն ցանկանում են մեր զորքերի գալը, որպեսզի բարեփոխումներն իրականացվեն միայն Ռուսաստանի հսկողության տակ»³: Իսկ Բայազետում ոուս փոխհյուպատոսը նույն օրը Ռուսաստանի արտգործնախարարության առաջին դեպարտամենտին հղած իր գաղտնի (№ 230) զեկուցագրով հայտնում

¹ АВПРИ, ф. “Политархив”, г.г. 1909-1912, д. 3459, л. 49.

² Նույն տեղում, թ. 49-ի չրջ.:

³ Նույն տեղում:

էր, որ քրդերը շարունակում են սոսկալի ավերներ գործել հայկական բնակավայրերում, ուստի նրանց վարքն ինչ-որ չափով մեղմելու համար հարկ է փորձել բարեփոխել նրանց ապրելակերպը: Նա գրում էր. «Հայ ազգությունն արմատախիլ անելու և համատարած քրդական բնակչություն ստեղծելու համար հայերի դեմ քրդերին գրգռելու քաղաքականություն կիրարկող Թուրքիան երբեք չի մտահոգվել նրանց կարիքներով, նա չի կարողացել օգտվել այնպիսի գորեղ գործոնից, ինչպիսին է կրոնական ընդհանրությունը՝ քրդական ցեղերը միավորելու համար, չի մտահոգվել իր քրդերի տնտեսական և մշակութային մակարդակի բարձրացմամբ»: Կաշառակերությունը ու բռնությունը աչքի ընկնող ապաշնորհ թուրքական վարչությունը չէր կարող չհարուցել քրդերի դժգոհությունը, ուստի և զարմանալի չէ, որ սրանց հավատարմությունը Թուրքիայի նկատմամբ չնչին էր, և, ընդհակառակը, նկատել էր ձգտումը դեպի Ռուսաստան»¹:

Փոխհյուպատոսը գրում էր, որ «ներկայումս, երբ սլավոնների հաղթանակների շնորհիվ Թուրքիայի նկատմամբ քրդերի հավատարմությունն էլ ավելի է թուլանում, երբ ծագում է թուրքահայերի հանդեպ մեր հովանավորության հարցը, մեզ իրավ անհրաժեշտ է առանձնապես հոգ տանել թուրքերից քրդերին հեռացնելու և նրանց մեջ մեր ազդեցությունն ուժեղացնելու մասին, որին մեզ՝ Կովկասում պատկառելի թվով քրդեր ունեցողներին, ըստ իս, դժվար չէ հասնել, եթե մենք ավելի մեծ ուշադրություն դարձնենք մեր քրդերի տնտեսական և մշակութային մակարդակի բարձրացմանը»²:

Փոխհյուպատոսը գտնում էր, որ, որպես այդ ուղղությամբ կատարվելիք առաջին քայլերից մեկը, Կովկասում պետք է կազմել առայժմ թեկուզ երկու քրդական գունդ, որը, նրա կարծիքով, «կհարուցեր Թուրքիայի քրդական բեկերի ձգտումը մեր հանդեպ», հատկապես նրանց, ովքեր աչիրեթական գնդերում (համիդիե: - Հ. Ս.) ունեն սպայական պաշտոններ, հետևապես

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1909-1912, д. 3459, л. 49 (об.).

² Նույն տեղում, թ. 50:

վայելում են պատվավոր դիրքեր¹: Նա առաջարկում էր նաև օգտվել քրդական գիլյան ցեղի* առաջնորդ, հեծելազնդի լեյքավարդիայի գնդապետ Ալի Աչրաֆ բեյ Շամաղինովի ազդեցությունից և քրդերին նույնպես կողմնորոշել դեպի Ռուսաստան:

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԱԽԱՋԵՌՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ի դիմումը ուսաց կառավարությունը և վերջինիս միջոցով այն եվրոպական կառավարություններին հասցնելը առաջին պաշտոնական փորձն էին՝ կանոնավորելու հայոց հարցը Թուրքիայում: Դա պատմական խոշոր իրողություն էր:

Կովկասի հայ գործիչները և մամուլը հանգամանորեն քննարկում էին հայոց կաթողիկոսի նախաձեռնությունը հնարավոր հետևանքների հարցը: Ոմանք երկյուղում էին, որ էջմիածնից Պետերբուրգ հղած դիմումը և հայոց մեջ սկսված շարժումը անպայման գրգռելու են թուրքական կառավարությանն ու թուրք ժողովրդին, և եթե դրանք չպսակվեն հաջողությամբ, ապա նոր աղետների պատճառ կդառնան թուրքահայության համար:

Կովկասահայերի մեծամասնությունը կարծիքը հակառակն էր, այն է՝ նման երկյուղները միանգամայն անհիմն են, քանի որ Կաթողիկոսի միջնորդությունը Թուրքիայի համար իր մեջ որևէ վիրավորական կամ սպառնական բան չի պարունակում: Չէ՞ որ նա հայերի համար չի պահանջում առանձին արտոնյալ վիճակ,

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1909-1912, д. 3459, л. 51:

* Զիլյան ցեղը երկու ցեղերից մեկն էր, որոնց պատկանում էին բոլոր քրդերը: Ժողովրդագրական պատկերի արագ փոփոխության հետևանքով Բայազետի միայն նշված մեկ օկրուգում 1912 թ. 156 հազար բնակչից 125 հազարը քրդեր էին, հայերը՝ 15.200, թուրքերը՝ 5000, թաթարները՝ 8800 և պարսիկները՝ 2000 հոգի:

այլ միայն առաջ է քաշել միանգամայն պարզ ու մի շատ տարրական արդար պահանջ կամ խնդիրք. «Աղաչում եմ, ստեղծեցե՛ք մի այնպիսի դրուժյուն, որ իմ հոտը, հայ ժողովուրդն ունենա կյանքի, գույքի, պատվի իրավունք և քաղաքացիական ու կուլտուրական ազատ զարգացման ապահովություն»: Դրան հակառակ չէ և ինքը՝ թուրքական կառավարությունը, որ շարունակ խոստացել, բայց անկարող է եղել կատարելու այդ պահանջը:

Թե եվրոպական մեծ պետությունները ինչպես և ինչ եղանակով թուրքահայաստանում կստեղծեն կյանքի համար տանելի պայմաններ, դա, իհարկե, այդ պետությունների անելիքն էր: Բայց մի բան պարզ էր. եթե իրագործվեին բարենորոգումները, դրանից կօգտվեին ամենից առաջ ինքը՝ թուրքիան, թուրք ժողովուրդը. այս էր կովկասահայություն ընդհանուր կարծիքը:

Առաջ էր գալիս մի ուրիշ հարց ևս. արդյո՞ք հայկական հարցը եվրոպական մեծ պետությունների և Ռուսաստանի առջև պետք է բարձրացնի միայն էջմիածնի կաթողիկոսը, թե՞ նաև՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքը՝ որպես թուրքահայոց անմիջական կրոնական առաջնորդ: Ոմանք, հատկապես Կ. Պոլսում, գտնում էին, որ պատրիարքը ոչ միայն պետք է, այլև պարտավոր է հանդես գալ տերությունների կառավարություններին ուղղված դիմումներով, և եթե այդպես չարվի, ապա դա միանգամայն անհասկանալի կլինի թուրքահայերի համար: Դրանով էր բացատրվում, որ դեռևս Գևորգ V կաթողիկոսի կողմից Պետերբուրգ դիմելուց մի քանի օր առաջ Կ. Պոլսի պատրիարքական խորհուրդն իր արտակարգ նիստում պատգամավորական մի կազմ էր ընտրել, որը պետք է մեծ տերությունների Կ. Պոլսի դեսպաններին խնդրեր՝ չուտափույթ միջոցներ ձեռնարկել հայերին պաշտպանելու նպատակով¹:

Մեծ տերություններին դիմելու համար Կ. Պոլսի պատրիարքության կողմից առանձին պատվիրակություն ստեղծելու տեսակետի օգտին բերված պատճառաբանությունները համոզիչ

չեղան հայ քաղաքական գործիչների համար, հատկապես՝ Կովկասում: Մեծամասնությունը կողմնակից էր, որ Ամենայն հայոց կաթողիկոսի դիմումն արդեն սպառում է այդ հարցը, որովհետև նա՝ իբրև հայ ժողովրդի գերագույն հոգևոր պետ և նրա գլխավոր ներկայացուցիչ, իրավասու է խոսելու իր ողջ ժողովրդի, այդ թվում թուրքահայերի և նրա պատրիարքի անունից:

Թուրքահայաստանում ենթադրյալ բարենորոգումների մասին այլ կերպ էր մտածում կովկասահայ մտավորականների զգալի մասը: Օրինակ՝ Նիկոլ Աղբալյանը կարծում էր, որ թուրքահայ ժողովուրդը կարող է իր նպատակներին հասնել միայն ու միայն ազատագրական հաջող պայքար մղելու միջոցով: Հայրենապաշտ մտավորականը կարծում էր, որ պետք է «դրամ հայթայթել, զենք հասցնել Տաճկահայաստան, այստեղ համապատասխան կազմակերպություններ առաջ բերել, ի հարկին նաև կուրծք տալ վայրենի խուժանի գրոհին...»¹: Համոզված, որ ներկա գործող հայ քաղաքական ուժերն ի վիճակի չեն այդ գործն առաջ մղելու, քանի որ սպառել են իրենց, Աղբալյանը հավատ ուներ, որ «Հայ ժողովրդի միջից դուրս կգան մարդիկ, որոնք իրենց առողջ բնազդների շնորհիվ... դիպլոմատիկական խաղերի ու քայլերի ստվերի տակից դուրս կհանեն ինքնապաշտպանության գործը և անձնվիրաբար առաջ կտանեն այն»²: Իր մի ուրիշ հոդվածում Աղբալյանը ինքնապաշտպանության համար զինվելը կրկին համարում էր հայության փրկության միակ միջոցը: «Միայն զենքով նա (թուրքահայությունը:՝ Հ. Ս.) կարող է պատշաճ հեռավորության վրա պահել վարանոտ խուժանին և դիմադրել ավելի վճռական հոսանքներին»³:

Չնայած դեռ ձեռք չէր բերվել իրական ոչ մի արդյունք, բայց նույնների սկզբներից արդեն բորբոքվել էր թուրքահայության զանգվածների երևակայությունը ոչ հեռու գալիքի երջանիկ հեռանկարով: Դրանից զերծ չէին նաև թուրքահայ մամուլի շատ օրգաններ:

¹ Տե՛ս «Մշակ», № 253, 13 նոյեմբերի 1912 թ.:

¹ «Հորիզոն», № 249, 1912 թ.:

² Նույն տեղում, № 261, 1912 թ.:

³ Նույն տեղում:

Օրինակ՝ Կ. Պոլսի «Ժամանակը» գրում էր. «Վանը, Մուշը, էրզրումը, Կիլիկիան, որոնք մինչև այսօր ուրիշ տեսարան չեն պարզած, եթէ ոչ՝ աւեր ու կոտորած, այն ատեն (բարենորոգումներից հետո:– Հ. Ս.) պիտի կրնային ուժեղ ու անկեղծ վարչութեան մը շնորհիւ դառնալ վայրեր՝ ուր բարբարոս, տգէտ խուժաններուն տեղ՝ շուտով պիտի կրնայինք ողջունել նորագարթ, ազնիւ նկարագիրով օժտուած, հանդարտ ու աշխատանքի նուիրուած ժողովուրդներ, ուր աւերի եւ կոտորածի տեղ պիտի տեսնէինք շինարար աշխատանքի լուրջ արդիւնքներ, եւ հրդեհուած գիւղերու մուխին ու բոցին տեղ՝ աշխատասէր գիւղացիի թոնիրին մուխը միայն որ հանդարտիկ վեր կը բարձրանայ անոր ծխնելոյգէն... Եվ շուտով մենք պիտի կրնանք տեսնել, կանոնաւոր ճամբաներու կողքին՝ ջրանցքներ՝ որոնց շնորհիւ ընդարձակ ճախճախուտներ բարեբեր դաշտերու պիտի վերածուին, եւ եզներէ, գոմէշներէ քչած նահապետական կառքերու տեղ շոգեկառքի արագ վազքն է որ պիտի ողջունուի»¹:

Ո՞վ կարող էր հային մեղադրել այդ ազնիվ միամտութեան համար, երբ այնքան իրական էր թվում երազած բարենորոգումների «հաջող մեկնարկը»:

Ժամանակին հայութեանը զատելով կայսրութեան մյուս ժողովուրդներից՝ նրան համարում էին օսմանյան հայրենիքի «հավատարիմ ժողովուրդ», բայց Հայկական հարցի հրապարակ գալուց և այդ հարցը լուծելու համար հայ հեղափոխական կուսակցություններ ստեղծելուց հետո հայութեան վիճակը փոխվեց դեպի վատը և վատթարագույնը: Հարցն այդպես դնողները ոչ միայն ավելորդ, այլև վնասակար ու աղետաբեր էին համարում 61-րդ հոդվածը հրապարակ բերողների այն մեծ ջանքերը, որ ժամանակին թափել էին ներսես Վարժապետյանը, Մկրտիչ Խրիմյանը, Նար-Պեյը, Մինաս Չերազը և Հայաստանի ազատագրութեան համար մտահոգ մյուս հայ նշանավոր գործիչները:

Ճիշտ էին արդյոք այսպես մտածողները: Անշուշտ, ճիշտ էին, եթե նկատի ունենանք հայկական հարցի վերջաբանը, երբ

այդ հարցը դադարեց գոյություն ունենալուց 1915 թ. հայոց ցեղասպանությունից հետևանքով: Այդ պայմաններում նշված գործիչների կատարածը կարող է, իսկապես, դիտարկվել որպես վնասակար գործ: Բայց մարդկայնորեն կարելի է հասկանալ իրենց ժողովրդի ազատագրության գաղափարի նվիրյալներին, ինչպես նաև նույն ճանապարհն անցած կուսակցություններին ու քաղաքական այլազան կազմակերպություններին, որոնք հայ ժողովրդի փրկության համար տվյալ ժամանակաշրջանում մի ուրիշ միջոց չէին տեսնում, բացի 61-րդ հոդվածի իրագործման համար զինված պայքարը, որը եղավ արյունալի և վերջին հաշվով կործանարար հայրենիքի և ժողովրդի համար: Ավելի քան համեստ ու արդարացի պահանջի դիմաց հայ ազգը տվեց հարյուրհազարավոր զոհեր, նրա լավագույն զավակների արյունով ներկվեց Հայաստանը:

Հոռետեսների թիվը նվազելու միտում չունեն: Նրանք չէին հավատում, թե թուրքերը կփոխեն իրենց վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ և որևէ դիման կգնան բարենորոգումների հարցում: Այդպես էին մտածում շատերը նույնիսկ էջմիածնի միաբանության մեջ:

Պատասխանի էր սպասում մի ուրիշ հարց նույնպես: Իսկ գաղութահայությունը: Նա կողմնակից է հայկական հարցի վերաբացմանը, ո՞րն է նրա գնահատականը, և ո՞րն է լինելու նրա անելիքը հարցն առաջ մղելու գործում: Կարծիքները տարբեր էին, տրամազծորեն հակառակ, բայց թերևս մեծամասնություն էին կազմում լավատեսները:

Արտասահմանյան տարբեր երկրներում գործող հայկական կազմակերպություններ ու հայ գործիչներ հեռագրերով ու գրություններով ողջունում էին Կաթողիկոսի նախաձեռնությունը, նրան ներկայացնում տարբեր առաջարկներ, խնդրում հայտնել, թե իր հայափրկիչ դերում Վեհն ինչպիսի աջակցություն կարող է ակնկալել իրենցից:

Այս կամ այն գաղութից Հովհ. արքեպ. Արչարունի պատրիարքին առաջարկություններ էին արվում Հայկական հարցը բարձրացնել նաև անմիջականորեն իրենց ապրած երկրների կառավարությունների առաջ՝ անկախ այն բանից, թե արդյո՞ք

¹ «Ժամանակ», № 1280, 17 (30) նոյեմբերի 1912 թ.:

այդ երկրները լծակներ ունեն նպաստելու հարցի լուծմանը:

1912 թ. նոյեմբերի կեսերին բուլղարահայերը հավաքական մի նամակ ուղարկեցին թուրքահայոց պատրիարքին՝ խնդրելով, որ սրբազանը ավելի ակտիվ դիմումներ ներկայացնի Կ. Պոլսի եվրոպական դեսպաններին՝ հայկական խնդիրը լուծելու համար: Միաժամանակ նրան խորհուրդ էին տալիս աջակցություն համար դիմել նաև Բուլղարիայի Ֆերդինանդ թագավորին:

1912 թ. նոյեմբերի 12-ին Ռուսական Դումայի անդամ Միքայել Պապաջանյանին գրած նամակում Արչակ Չոպանյանը նշում էր. «Պատմական ամենամեծ բռնության մեջ ենք: Ամեն ջանք պատրաստ ենք թափել, որպեսզի մեր ազգային դատին համար օգուտ մը, արդիւնք մը քաղենք այս բռնությունը»¹: Նա չեչտում էր, որ Եվրոպան, դժբախտաբար, ձգտում է բավարարվել բալկանյան հարցի լուծումով և չանդրադառնալ Թուրքիայի արևելյան նահանգների խնդրին, հրաժարվում է մեջտեղ բերել հայերի հարցը և այն հարակցել բալկանյանին: Իսկ դա նշանակում է, որ պարտված թուրքն ու քուրդը ավելի կատաղորեն կչարունակեն հալածել հային: Ահա թե ինչու հայ գործիչները պետք է բազմապատկեն իրենց ջանքերը, որպեսզի Բալկանյան հարցի հետ Եվրոպան նկատի առնի նաև ասիական Թուրքիայի քրիստոնյաների, մասնավորապես՝ հայերի հարցը:

Չոպանյանը գտնում էր, որ այդ նպատակին հասնելու համար պետք է չահել բալկանյան չորս ազգերի, մասնավորապես Բուլղարիայի և Հունաստանի կառավարությունների համակրությունը, որպեսզի նրանք պատրաստակամ լինեն Հայկական հարցը բարձրացնելու առաջիկայում հրավիրվելիք խաղաղություն համաժողովում: Այդ նպատակով նա առաջարկում էր հայոց մեջ անցկացնել զաղտնի հանգանակություն՝ ի նպաստ բուլղար և հույն վիրավորների, որոնց՝ հայերի հաշվին բուժելը Սոֆիային և Աթենքին կմղի բարձրացնելու Հայկական հարցը:

¹ ԳԱԹ, Գրիգոր Զոհրապի ֆոնդ, թղթ. 483/IV, թ. 1 (Մ. Պապաջանյանին ուղղված Ա. Չոպանյանի նամակը սխալմամբ տեղադրված է Գ. Զոհրապի ֆոնդում):

Այս անիրատեսական առաջարկությունն անելուց հետո Չոպանյանը հարկ էր համարում նշել, որ, իհարկե, է՛լ ավելի արդյունավետ կլինի, եթե հայերը, որքան հնարավոր է, կարողանան չահել Ռուսաստանի ուժգին համակրությունը՝ ի նպաստ թուրքահայոց դատի: «Եթե ոուար հակառակի, ոչինչ կարելի է ընել թուրքահայոց ի նպաստ,- գրում էր նա:- Ուրախութեամբ տեսա, Թիֆլիսի լրագիրներէն, որ ոուսահայք այս ճշմարտութիւնը ըմբռնեք, եւ լուրջ ջանքեր ըրեք եւ եւ կրնեն ոուս կառավարութեանը մղելու համար որ գործէ ի նպաստ թրքահայոց, բայց դեռ շատ բան կա ընելու: Եվ դուք կարող եք մեծ գործ տեսնել այդ ուղղութեամբ»¹:

Ավելի զուսպ էին հոռետեսները: Նրանք գտնում էին, թե Բեռլինի 1878 թ. կոնգրեսի ընդունած 61-րդ հոդվածն էր, որ վերջին ավելի քան երեք տասնամյակների ընթացքում Թուրքիայում հայերի զանգվածային կոտորածների պատճառ դարձավ:

«Ժամանակը» (Կ. Պոլիս) արտատպել էր «Հայրենիք» (Բոստոն) թերթի համարներից մեկի խմբագրականը, որում ասված էր.

«Մենք՝ հայերս մեր քաղաքական ակնկալություններուն մէջ յաճախ՝ յառած մեր հայեացքը դէպի եւրոպական մեծ պետությունները՝ հոնկէ կ'սպասենք մեզի համար լոյս ու ջերմութիւն: Եւ ամէն անգամ, երբ տազնապի մէջ կ'իյնանք, ճգնաժամային ամէն վայրկեաններուն կը ճամբորդենք դէպի դիւանագիտական հնադարանները ու հոն, փոշիին մէջէն կը հանենք պատմական վաւերաթղթեր, որպէս զի ներկայացնենք մեծ պետութիւններուն ու մեզի համար կեանքի կարելիութիւն մուրանք: Եւ միչտալ Եւրոպան մեզի համար կենսաբաշխ արեւ ըլլալէ առաջ եղած է արհեստական լապտեր մը, որ իր պաղ լոյսով խաբած է մեր աչքերը եւ ձեռնունայն թողած մեզ:... Եվրոպական պետութիւնները երբեք չահ չունեին Հայաստանին օգնելու: Մարդասիրական զգացումները երբեք գոյութիւն չեն ունեցած պետութեանց

¹ Արչակ Չոպանյան, Նամականի, Երևան, 1980, էջ 112:

համար»։ «Ուստի,- շարունակում էր խորհրդածել «Հայրենիքը», - պէտք է իսկապես ճշգրտեմք մեր դիրքը ընդհանուր քաղաքականություններու հանդէպ, պէտք է ինքզինքնիս հասկանանք թէ իրական ի՞նչ արժեք ունին դիւանագիտական քայլերը, մանավանդ, երբ այդ քայլերը մուրացկանութեան ձեւով կը գործուին»¹։

«Արարատ» (Էջմիածին) հանդեսի հոդվածագիրը համոզված էր, որ «Պատմութեան մէջ հրաչքներ չեն կատարում եւ թուրք ցեղը երէկուանից մինչեւ այսօր չի կարող միանգամից կերպարանափոխութեան ենթարկուիլ։ Հինգ վեց հարիւր տարուայ ընթացքում շատ քիչ բան է փոխուել Արեւելքում, յատկապէս այդ թուրք ցեղի մէջ եւ ոչինչ չկայ այսօր մեզ համոզելու, որ դրութիւնը Տաճկաստանում վաղը կը բարենորոգուի։ Ինքը տաճիկը երբէք իրանից չի անի այդ քայլը, չի անի, որովհետեւ դա հակառակ է նրա բոլոր տրադիցիաներին, նրա կրօնին, համոզմունքներին, նրա զգացմունքներին ու մոլեռանդութեանը»²։

Հայաստանում տիրող անտանելի դրութեան և Հայկական հարցի մասին եվրոպական այս կամ այն երկրում կազմակերպվում էին միտինգներ, ժողովներ, դասախոսություններ, ընդունվում էին բանաձևեր ու կառավարություններին ուղղված կոչեր։

Դեռևս 1912 թ. սեպտեմբերի 9 (22)-ին Ժնևի համալսարանի դահլիճում բացվել էր խաղաղութեան համաշխարհային 19-րդ կոնգրեսը, որի նպատակն էր կռիվ հայտարարել պատերազմների դեմ, համերաշխություն հաստատել բոլոր ազգերի միջև, նրանց կառավարություններին ստիպել, որ փոխադարձ վեճերն ու միմյանց նկատմամբ ունեցած պահանջները լուծեն ոչ թե զենքի, այլ իրավունքի և արդարության գործով։

Կոնգրեսի օրակարգում դրված էին խիստ կարևոր հարցեր, որոնց մեջ առաջին տեղում էր Բերնի միջազգային բյուրոյի զեկուցագիրը տարվա այն դեպքերի մասին, որոնք կապ ունենին

¹ «Ժամանակ», № 1271, 8 (22) նոյեմբերի 1912 թ.։

² «Արարատ», № 9, սեպտեմբեր, 1912, էջ 796։

խաղաղութեան և պատերազմի հետ։ Հիմնականում քննութեան պիտի առնվեին թուրք-խտալական պատերազմի, մակեդոնական, ալբանական և հայկական կոտորածների հարցերը։

Այնպիսի մարտիկ-խաղաղասերներ, ինչպես սենատոր Լա-Ֆոնտեն, էմիլ Արնոն, Ա. Ֆրիդը, Գաստոն Մոխը, Լեոն Բուլաքը, որոնք ինչպես նախորդ բոլոր կոնգրեսներում, այստեղ նույնպես իրենց ձայնը բարձրացրին հօգուտ հայոց հարցի արդար լուծման¹։

1912 թ. նոյեմբերի 12-ին Ժնևում՝ քաղաքի ամենաընդարձակ Réformation սրահում, տեղի ունեցավ ժողովրդական մեծ միտինգ, որը կազմակերպել էր Շվեյցարիայի հայտնի հայասեր և հատկապես թուրքահայերին բազմիցս աջակից եղած Լեոպոլդ Ֆավրը։

Միտինգը բացեց Ֆավրը, ապա զեկուցումով հանդես եկավ Journal de Genève-ի խմբագիրը։ Մոտ մեկ ժամ տևած զեկուցման մեջ մանրամասնորեն նկարագրելով հայկական տանջանքները՝ նա պահանջեց, որ եվրոպական երկրների կառավարությունները, վերջապես, տեր կանգնեն իրենց իսկ կողմից ստորագրած դաշնագրերին։

Այնուհետև հանդես եկան բազմաթիվ ճառախոսներ և միացան զեկուցողի առաջ քաշած պահանջին։ Վերջում միտինգը միաձայն ընդունեց բանաձև, որն ուղարկվեց Շվեյցարիայի Ֆեդերալ կառավարություն²։

Այդ օրերին Հայկական հարցը մինչ այդ չտեսնված ուժգնութեամբ արժարժվում էր եվրոպական մամուլում։

1912 թ. նոյեմբերին Փարիզում սկսվել էր հրատարակվել արևելյան հարցի համար նախատեսված “Pour les Peuples d’Orient” անունով երկչաբաթիվը, որը «Պրո Արմենիայի» հաջորդն էր և ուներ նաև անգլերեն բաժին։ Պարբերականի խմբագրապետն էր մեծ հայասեր Ֆրանսիս դը Պրեսանսեն, որը թերթում հիմնականում զետեղում էր Հայաստանի նոր կացությունն

¹ Տե՛ս «Մշակ», № 205, 16 սեպտեմբերի 1912 թ.։

² Տե՛ս «Մշակ», № 257, 17 նոյեմբերի 1912 թ.։

արտացոլող հողվածներ, անդրադառնում այն չարագործություններին, որոնք կատարվում էին հայերի նկատմամբ¹:

Հայասիրական այդ պարբերականում տպագրած հողվածում Վիկտոր Բերարը գրում էր. «Եթե Եվրոպան կամենում է կանգուն պահել ասիական Թուրքիան, նա պետք է այժմվանից իսկ ձեռնարկե նրա փրկութեան, իսկ այդ փրկութեան առաջին գործիքն է հայկական ռեֆորմը»²:

Ֆրանսիական սոցիալիստների օրգան «Յուճանիտե» թերթը տպագրել էր «Հայաստանի համար» վերտառությամբ մի հողված, որում մասնավորապես ասված էր. «Բալկանյան պատերազմի հետևանքով Արևելքում առաջ եկած նոր կացությունը խորապես զբաղեցնում է Հայաստանի բոլոր բարեկամներին, բոլոր նրանց, ովքեր տասնհինգ տարի ի վեր նվիրված են այդ մարտիրոս ժողովրդի պաշտպանությանը: Թեև այդ ժողովուրդն այժմ գտնվում է բնաջնջման սպառնալիքի տակ, բայց հենց նա է, որ այնտեղ շարունակում է պաշտպանել քաղաքակրթության դատը և արդի ժողովրդավարական գաղափարները»³:

Բարձր գնահատելով իրենց ժողովրդին աջակցելու ուղղությամբ եվրոպական հայասերների և ընդհանրապես եվրոպական առաջադեմ մտավորականության թափած ջանքերը՝ միաժամանակ հայ գործիչներից շատերը դրանք համարում էին ոչ բավարար և ձիշտ էին գտնում, որ պետք է ուժերը կենտրոնացնել եվրոպական տարբեր երկրների գործադիր մարմինների հետ շփումներն ուժեղացնելուն:

Վերադառնալով Կաթողիկոսի նախաձեռնությունը՝ պետք է ասել, որ այն ջերմ արձագանք գտավ նաև Ռուսաստանի առաջադեմ հասարակայնության շրջանում և մասնովի օրգանների գերակշիռ մասի էջերում: Հայոց հանդեպ խորանում էր համակրանքը ռուսական հասարակության լայն շերտերում:

Բալկանյան պատերազմը սկսվելուն պես 1912 թ. սեպտեմ-

¹ Տե՛ս «Ժամանակ», № 1298, 5 (18) դեկտեմբերի 1912 թ.:

² Հողվածի թարգմանությունը տե՛ս «Դրօշակ», № 1, հունվար, 1913, էջ 2:

³ «Յուճանիտե» սույն հողվածի թարգմանությունը տե՛ս «Բուլթանիա», № 1096, 25 դեկտեմբերի 1912 թ.:

բերի վերջերին Պետերբուրգի ռուս առաջադեմ մտավորականությունից միջավայրում հիմնադրվեց «Ռուս պրոգրեսիստների կուսակցություն» (P.I.I.I) անունով մի նոր կազմակերպություն, որն իր առջև խնդիր էր դրել՝ պրոպագանդիստական լայն գործունեություն ծավալելու միջոցով նպաստել թուրքական լծից սլավոնական ազգերի ազատագրությանը: Ռուս պրոգրեսիստների շարքերում ընդգրկված էին հիմնականում մայրաքաղաքի բարձր մտավորականության լավագույն ներկայացուցիչները:

Հոկտեմբերի կեսերին տեղի ունեցավ կուսակցության առաջին համագումարը, որն ազդարարեց կազմակերպության պատկերմը և ընդունեց մի շարք որոշումներ:

Կուսակցության ղեկավար Կուզմին Կարավանի առաջարկությամբ համագումարն ընդունեց նաև բանաձև թուրքահայոց հարցի մասին: Այնտեղ ասված էր, որ բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարն իր վրա է բեռնել բովանդակ աշխարհի ուշադրությունը, և դրանով կարծես մոռացության է մատնվել ոչ պակաս կարևոր Հայկական հարցը: Համագումարը մտահոգություն էր հայտնում, որ ավելի է ուժեղացել թուրքերի և քրդերի թշնամական վերաբերմունքը հայերի նկատմամբ, ուստի բացառված չէ, որ Հայաստանը նորից դառնա կոտորածների ասպարեզ: Ելնելով դրանից՝ համագումարն իր բանաձևով դիմում էր ռուսական կառավարությանը, որպեսզի նա անհապաղ օգնության ձեռք մեկնի հայ ժողովրդին՝ ձեռնարկելով զանազան կանխարգելիչ միջոցներ: Նման քայլերը, նշված էր բանաձևում, կարժանանա տերությունների հավանությանը, մասնավորապես Անգլիայի աջակցությանը, որը բավական ժամանակ է, ինչ հանձն էր առել թուրքահայերի ազգային իրավունքների պաշտպանությունը: Եթե ռուսական կառավարությունն անտարբեր գտնվի հայությանը սպասվելիք հնարավոր նոր սարսափների հանդեպ, ասված էր համագումարի բանաձևում, ապա դա ցավազին արձագանք կունենա ոչ միայն հայազգի, այլև ռուս քաղաքացիների սրտերում¹:

¹ Տե՛ս «Մշակ», № 262, 24 նոյեմբերի 1912 թ.:

Թուրքահայության նկատմամբ ոուս պրոգրեսիստների ջերմ վերաբերմունքն իր դրսևորումն ունեցավ նաև հիմնադիր համագումարից հետո: Նոյեմբերի կեսերին գիտություն տարբեր ոլորտների նշանավոր ներկայացուցիչներից, համալսարանական պրոֆեսորներից և մշակույթի հայտնի գործիչներից բաղկացած պրոգրեսիստների մի մեծ խումբ խորհրդակցություն հավաքվեց հայտնի գիտնական և հասարակական գործիչ Մ. Բրյանչանինի տանը: Հավաքն ուներ մի նպատակ՝ քննարկել Թուրքահայաստանի կացություն շուրջ ծավալվող զարգացումները:

“Русское Слово” թերթը տպագրել է խորհրդակցություն ընդունած որոշումը, ուր նշված էր, որ Արևելքում քրիստոնեություն պատվար հանդիսացող Հայաստանի ցավը համակել է նաև ոուսական հասարակության մտավորական շերտերին, որոնք համոզված են, որ Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների հովանավոր Ռուսաստանը չի հապաղի օգնություն ձեռք մեկնելու տառապյալ Թուրքահայությունը նրա պատմության այս բախտորոշ հանգրվանին¹:

Այդ օրերին ոուսական առաջադեմ թերթերը հաճախ էին անդրադառնում Հայ ժողովրդի անցյալին, հատկապես 1877-1878 թթ. ոուս-թուրքական պատերազմից հետո Հայկական հարցի հրապարակ գալու հանգամանքներին, նրա հետագա ընթացքի անհաջողություններին, շեշտում էին այն մեծ աջակցությունը, որ հայերը ցուցաբերել են Կովկասում և ընդհանրապես Արևելքում Ռուսաստանի վարած քաղաքականությունը:

Կային նաև տրամագծորեն հակառակ տեսակետ պաշտպանողներ, որոնք ընդհանրապես բարոյական չէին համարում Հայկական հարցի բարձրացումը: Այդպիսիք պակաս չէին ոուս սեհարյուրակայինների, կովկասյան թաթարների թուրքամոլ պարագլուխների, վրաց ազգայնամոլների շրջանում:

Հայոց ազատագրական պայքարի պատմությունը լավա-

¹ “Русское Слово”, 20 ноября 1912 г. Սույն որոշումը թարգմանաբար արտատպված է «Ժամանակ» (Կ. Պոլիս) թերթի 1912 թ. դեկտեմբերի 6 (19) համարում (№ 1299):

տեղյակ ոուս քաղաքագետներից մեկը, չոչափելով հայերի նկատմամբ թուրք քաղաքական շրջանների անվստահությունները, արել էր ուշագրավ դատողություններ, որոնցից մեկն առնչվում էր հայերի կատարած դիվանագիտական նոր դիմումներին՝ դրանք համարելով «տակտից զուրկ»:

Քաղաքագետը կարծում էր, որ հայերը բոլորովին անզգույշ գտնվեցին՝ իրենց պահանջները բարձրացնելով այն պահին, երբ Թուրքիան գտնվում էր պատերազմի մեջ և ծանր օրեր ապրում: Դա է՛լ ավելի սրեց հայերի նկատմամբ թուրքերի թշնամությունը: Նա հայերի դիվանագիտական դիմումներն ավելորդ ու աննպատակ էր համարում, քանի որ ապագա բարենորոգումները և Թուրքիայի ճակատագիրն ամենևին կախված չեն այն բանից, թե ինչ են ուզում հայերը և ինչի մասին են նրանք խնդրանքներ ներկայացնում Ռուսաստանին կամ մյուս մեծ պետություններին: Կասկածից դուրս է, ասում էր նա, որ Փոքր Ասիայի ճակատագիրը պայմանավորված չէ բալկանյան պատերազմի հետևանքներով, այդ պատերազմում Թուրքիային հակառակորդ պետությունների հաղթանակներով: Գեթ մոտիկ ապագայում կարելի չէ սպասել բարենորոգումներ թուրքահայերի համար, իսկ Օսմանյան կայսրության բաժանումը իրատեսական չէ, քանզի նրա բոլոր ասիական նահանգները թուրքերի ձեռքին մնալը հավասարապես ձեռնտու է եվրոպական բոլոր պետություններին: Քաղաքագետը գտնում էր, որ եթե պատմության ընթացքը փոխի Թուրքիայի ճակատագիրը, ապա դա կկատարվի առանց հայերի ջանքերի և անկախ նրանց ձգտումների: Թուրքիայի բախտը կվճռվի անկախ այն բանից, թե ինչ են մտածում և պահանջում հայերը: Մեծ պետություններից ոչ մեկը, այդ թվում Ռուսաստանը, որևէ քայլ անի հօգուտ հայերի, եթե դա չհամընկնի իրենց կենսական շահերին: Եվ եթե դա այդպես է, ապա, ուրեմն, ավելի լավ չէ՞, որ հայերն իրենք մտածեն Թուրքիայի հետ ունեցած իրենց հարաբերությունները բարելավելու մասին, եզրակացնում էր նա¹:

¹ Տե՛ս «Ժամանակ», № 1425, 12 (25) ապրիլի 1913 թ.:

Թուրքական իշխանությունները խիստ անհանգստացած էին և մտածում էին հակաքայլերի մասին: Հայկական նահանգներում ռուսական ազդեցությունը նրանց համար դառնում էր կենաց ու մահու խնդիր: Թուրքերի ապագան կայսրության արևելյան նահանգներում տեսնող երիտթուրք պարագլուխները պատրաստ էին զրկվելու նորանոր տարածքներից, բայց ոչ երբեք՝ Հայաստանից: Պատահական չէ, որ երբ Մեսրոպ եպիսկոպոսը դեռ Պետերբուրգում էր, Բ. Դուռը այնտեղի իր դեսպան Թուրխան փաշային պատվիրել էր խնդրել ռուսաց կառավարությունը, որ նա Լոնդոնի դեսպանախորհրդում չհարուցի հայոց խնդիրը՝ խոստանալով դրա փոխարեն Սև ծովի թուրքական ափերում ռուսական կողմին տալ ամեն տեսակ արտոնություններ, այդ թվում՝ կոնցեսիաներ¹: Ավելին՝ ընդամենը օրեր անց Կ. Պոլսից Թուրխան փաշային առաջարկել էին Պետերբուրգի կառավարությունը հայտնել, որ Թուրքիան պատրաստ է Ռուսաստանին բավականաչափ զիջումներ անել պարսից սահմանին հարող իր տարածքներից, եթե նա ինքնավարություն չպահանջի հայոց համար²:

Ինչ վերաբերում է թուրք հասարակությանը և մամուլի մեծ մասին, ապա հայերի «նոր խաղը» նրանք դիտում էին որպես հերթական թշնամական արտահայտություն իրենց պետության հանդեպ, միաժամանակ համոզված էին, որ նրանց նկատմամբ Ռուսաստանի ցուցաբերած հերթական հոգատարությունը շուտով չքանալու է, ինչպես եղել է նախկիններում:

«Միլլի Մէշրութիեթ» կուսակցության օրգան «Իֆհամ» թերթը, որը մոտիկ հարաբերությունների մեջ էր իթթիլաֆական կառավարության հետ, անտեղի համարելով հայերի ջանքերը, գրում էր. «Հակառակ Կովկասի հայերի դիմումների և օսմանյան որոշ շրջանակներից արված ակնարկների, այսօր գոյություն չունի Արևելյան Անատոլիայի (Հայաստանի:– Յ. Ս.) խնդիր: Անատոլիայի հարցը, աստված մի արասցե, այն ժամա-

¹ Տե՛ս «Կովկասի լրագրեր», № 1, 1 հունվարի 1913 թ.:

² Տե՛ս նույն տեղում, № 2, 3 հունվարի 1913 թ.:

նակ միայն մեջտեղ կգա, եթե այն դառնա [Լոնդոնի] դեսպանախորհրդի քննության առարկա: Իսկ դա բացարձակապես անհնարին է»¹:

Բայց առանձին թուրքեր համոզված էին, որ հայերն ի վերջո հաջողության են հասնելու իրենց ձգտումներում:

Արչակ Չոպանյանի արխիվում պահպանվող մի թուրք սպայի անտիպ հոդվածում նրա հեղինակը մոլորություն էր համարում այն տեսակետը, թե հայերն ի վերջո կհոգնեն երկարատև պայքարներից և կհրաժարվեն ինքնավարության, անկախության և ընդհանրապես ազգային ազատ գոյատևման գաղափարներից: Այդ բանը չի լինի, ասում էր նա, քանի որ նրանք խորապես համոզված են, որ վաղ թե ուշ հասնելու են իրենց նպատակին: Նրանց պայքարի կամքն ու կորովը անկոտրում է...²:

Ինչպես տեսնում ենք, Հայկական հարցի բարձրացման ուղղությամբ հայոց Կաթողիկոսի նախաձեռնությունը չէր գտել միանշանակ դրական արձագանք: Տեսակետները բազմազան էին ու տարաբնույթ: Բայց գործն արդեն սկսված էր, և նահանջի ճանապարհ չկար:

Հարցի լուծման ուղղությամբ տարվելիք աշխատանքների հիմնական ծանրությունն ընկած էր մի կողմից Կովկասի հայ եղբայրների վրա՝ գլուխ ունենալով Ամենայն հայոց հայրապետին, մյուս կողմից՝ արտասահմանի հայերի: Նրանք գտնում էին՝ պետք չունեն դիմելու թուրք կառավարությանը կամ բանակցելու նրա հետ: Նրանց դերը մեկն էր՝ գործ ունենալ միայն ու միայն մեծ տերությունների հետ, հայկական հարցով ջանալ չահագրգռել նրանց հանրային կարծիքը, դիմել քաղաքական անձանց ու կառավարություններին և, այդպիսով, աջակցել հայկական կողմի նույն ուղղությամբ կատարելիք գործին:

¹ «Իֆհամի» սույն հոդվածի թարգմանությունը տե՛ս «Ժամանակ», № 1272, 9 (23) նոյեմբերի 1912 թ.:

² Տե՛ս Գ.Ա.Թ., Արչակ Չոպանյանի ֆոնդ, թղթ. 550, բաժին X (տասը), թ. 8:

Կովկասի և արտասահմանի հայոց գործունեությունների հիմնական սկզբունքներն էին լինելու. 1) ոչ մի վստահություն չտածել թուրք կառավարության խոստումներին և այդ մասին հայտարարել տերությունների կառավարություններին, 2) թուրք կառավարության հետ չմտնել որևէ բանակցության մեջ, 3) Հայոց հարցն ամբողջովին հանձնել տերությունների տնօրինությանը և խնդրել, որ նրանք թուրք կառավարության հետ բանակցեն ուղղակի, նրան պարտադրեն բարենորոգումների լուրջ ծրագիր, և իրենք իսկ մասնակցեն ու հսկեն այդ ծրագրի անմիջական ու ամբողջական գործադրությունը:

Դարձյալ օտարին դիմելու խոտոր ճանապարհը... Բայց տվյալ պահին թուրքահայ ժողովուրդն այլ ելք չուներ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏԵՂՇՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Հայաստանի բարենորոգումների առաջխաղացմանը նպաստելու համար իր կատարած լայնածավալ աշխատանքներով առանձնանում էր Ռուսաստանի մայրաքաղաքում կյանքի կոչված կազմակերպությունը:

Պետերբուրգի մի խումբ նշանավոր հայ գործիչներ 1912 թ. նոյեմբերի սկզբներից աշխատանքներ էին տանում՝ ձևավորելու մի մարմին, որի նպատակը պետք է լիներ աջակցել Ամենայն հայոց կաթողիկոսին: Նորաստեղծ մարմինը ստացավ «Պետերբուրգի հայկական խմբակ» («С. Петербургский армянский кружок») անունը: Իր կատարած գործերի մասին խմբակն անմիջականորեն հաշվետու էր լինելու Կաթողիկոսին և նրանից էլ ստանալու էր համապատասխան հանձնարարականներ*:

* Շնորհակալություն ենք հայտնում բազմավաստակ պատմաբան, պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանին՝ Պետերբուրգի հայկական խմբակի գործունեության մասին մեզ արժեքավոր նյութեր տրամադրելու համար: - Հեղ.:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Հայաստանի բարենորոգումների խնդրով զբաղվող հայկական չորս կենտրոններին (էջմիածնի Մայր Աթոռ, Կ. Պոլսի հայոց պատրիարքարան, Թիֆլիսի Ազգային բյուրո, Փարիզի Ազգային պատվիրակություն) ավելանում էր հինգերորդը՝ Պետերբուրգի հայկական խմբակը:

Սկզբնական շրջանում խմբակում ընդգրկվել էին 8-10 հոգի, հետագայում նրանց թիվը հասավ 29-ի:

Խմբակի առաջին (հիմնադիր) նիստը տեղի ունեցավ 1912 թ. նոյեմբերի 16-ին, որին մասնակցում էին 9 հոգի՝ Պ. Ղուկասովը, Ն. Ադոնցը, Մ. Աճեմովը, Գ. Բոգդանյանը, Ա. Ասրիբեկովը, Ս. Տիգրանյանը, Գ. Գյանջումցեղը, Ս. Բուդաղովը, Գ. Տիգրանովը: Վերջինս էլ ընտրվեց նիստի նախագահ և այդպես էլ մնաց որպես նախագահ Պետերբուրգի հայկական խմբակի*:

Աստիճանաբար խմբակի անդամներ դարձան նաև Մ. Պապաջանովը, Հ. Սաղաթեյանը, է. Ի. Բաբայանը, Վ. Ի. Վարդանովը, Գ. Գ. Եվանգուլովը, Պ. Ս. Սուլթան-Շահը, Ի. Օ. Տիգրանովը, Ն. Ի. Ամատունին, Ս. Ի. Ֆրանգուլովը, Ն. Ի. Գարագաչը, Ի. Խ. Զավրիևը, Ս. Խ. Քալանթարովը և ուրիշներ:

Խմբակի անդամներից ոմանք՝ Մ. Պապաջանովը, Մ. Աճեմովը, Հ. Սաղաթեյանը, Պետական դոմայի անդամներ էին:

Հայկական խմբակի նիստերը տեղի էին ունենում պարբերաբար, համենայնդեպս՝ միայն 1912 թ. նոյեմբեր-դեկտեմբերին այն ունեցել է 6 նիստ:

Առաջին մի քանի նիստերում խմբակի անդամները բազմակողմանի ուսումնասիրում էին Հայկական հարցը, նրա պատմու-

¹ «Протоколы заседаний С. Петербургского армянского кружка по Армянскому вопросу в Турции» (այսուհետ՝ ПЗПАК), том I, с. 3: Նշենք, որ Պետերբուրգի հայկական խմբակի (ՊՀԽ) արձանագրություններն առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ: Հաշվի առնելով սույն հանգամանքը՝ մենք նպատակահարմար ենք գտել ՊՀԽ առանձին կարևոր նիստերի արձանագրություններից որոշ հատվածներ ընթերցողներին ներկայացնել առանց էական փոփոխությունների:

թյունը և լուծման հնարավորությունները: Եվ միայն դրանից հետո նրանք ձեռնամուխ եղան Թուրքահայաստանի ցանկալի ու հնարավոր բարենորոգումների ծրագրի տարբեր հատվածները մշակելու, այն միջոցները ու քայլերը որոշելու գործին, որ անհրաժեշտ էր հարցի նպաստավոր լուծման համար:

Այդ հանդիպումների ընթացքում, կամենալով պարզել Եվրոպայի և Ռուսաստանի տեսակետները Հայկական հարցի ներկա ընթացքի վերաբերյալ, խմբակի անդամները մի քանի անգամ քննություն ատան այն հարցը, թե նրանցից յուրաքանչյուրն ինչ շահեր ունի Ասիական Թուրքիայում: Ի վերջո այն համոզումը գոյացավ, որ Հայկական խնդրում ամենից ավելի շահագրգռված պետությունը Ռուսաստանն է, առանց որի անկարելի է Հայոց դատի լուծումը:

Հետագա նիստերի ընթացքում բազմակողմանի քննարկումներով ձևակերպվում էին ծրագրային դրույթներ, որոշվում էին այն միջոցներն ու քայլերը, որոնք անհրաժեշտ էին հարցի բարեհաջող լուծումը գլուխ բերելու համար, լավում էին խմբակի անդամների հաշվետվություններ իրենց կատարած աշխատանքների մասին, կազմվում էին հետագա գործունեության ծրագրեր և այլն: Խմբակի անդամներն ընդգրկված էին տարբեր սեկցիաներում, որոնց ելույթներն արձանագրվում էին:

Ընդառաջելով Կաթողիկոսի ցանկությունը՝ Խմբակը պարբերաբար նրան տեղեկացնում էր այն բոլոր իրողություններին ու ձեռնարկումներին, որոնք կատարվել ու կատարվելու էին հօգուտ Հայկական հարցի:

“Приазиятский край” թերթի թղթակիցը հետաքրքրվել էր Պետերբուրգի հայկական խմբակով և լուսաբանել նրա գործունեությունը: «Շնորհի այն հանգամանքի, որ ոուս կառուարությունը համակրություններ վերաբերեց Կաթողիկոսի միջնորդությունը՝ գրել էր նա, - յիշեալ խմբակի նիստերը ժամանակի ընթացքում մշտական, պարբերաբար գումարուղ ժողովների բնոյթ առան եւ Կաթողիկոսի պաշտօնապէս արած քայլից յետոյ ընդարձակեցին իրենց գործունէութեան շրջանակը՝ Հայկական խնդիրը միջազգային հողի վրայ դնելու եւ թէ պարզելու համար

խնդրի հետ կապ ունեցող քաղաքական իրադարձությունները»¹:

Հայկական խմբակը կապ էր հաստատել ոուսական հասարակական ու քաղաքական բազմաթիվ նշանավոր գործիչների հետ՝ նրանց ընդգրկելով Հայկական հարցի առաջխաղացմանն ուղղված աշխատանքների մեջ:

Խմբակի առաջնային խնդիրներից մեկը Հայաստանի բարենորոգումների հարցով ոուսական կառավարության հետ գործուն շփումներ հաստատելն էր:

1912 թ. դեկտեմբերի կեսերին Խմբակի հրավերով նրան միացավ Հովհաննես Սաղաթեյանը, որը Թիֆլիսի հայ բնակչության կողմից ընտրված Բյուրոյից լիազորություն էր ստացել Հայկական հարցի վերաբերյալ դիմումներ կատարելու ոուսական կառավարությանը:

1912 թ. դեկտեմբերի 9-ին Խմբակը որոշեց պատվիրակություն ուղարկել նախարարապետ Վլադիմիր Նիկոլանիչ Կոկովցևի և արտգործնախարար Սերգեյ Սազոնովի մոտ՝ իմանալու կառավարության տեսակետը Հայկական հարցի վերաբերյալ, հարցը լուծելու նրա պատրաստակամության աստիճանը, ինչպես նաև պարզելու, թե կառավարությունն արդյո՞ք պատրաստ է պաշտպանելու թուրքահայությունը հնարավոր նոր վտանգներից, որոնք այնքան հաճախ տեղի էին ունեցել անցյալում: Որպես վարչապետի ու արտգործնախարարի մոտ գնացող պատվիրակների՝ Խմբակն իր անդամներից երաշխավորեց երկուսին՝ Պ. Ղուկասյանին ու Հ. Սաղաթեյանին:

Միաժամանակ որոշվեց մի ուրիշ պատվիրակություն ուղարկել Կ. Պոլիս, որի խնդիրը պետք է լիներ հանգամանորեն ծանոթանալ հայկական հարցի վերաբերման նկատմամբ տեղի հայության տեսակետներին և այդ ուղղությամբ հայ քաղաքական ուժերի կողմից ծավալված գործունեությանը: Այս երկրորդ պատգամավորությունը նույնպես կազմվեց երկու հոգուց՝ Ն. Ադոնց և Ա. Տիգրանյան²:

¹ Թերթի սույն հոդվածը թարգմանաբար լույս է տեսել «Հորիզոնի» 1913 թ. օգոստոսի 1-ի համարում:

² ПЗПАК, том I, сmp. 42-43.

Բացի այդ, Խմբակը Լոնդոնում բնակվող Ա. Ղուկասյանին ընտրեց իբրև իր լիազոր ներկայացուցիչ՝ բանակցելու տեղի ուսական դեսպանի հետ և հարաբերություններ հաստատել Հայկական հարցով չահագրգիռ անգլիացի պետական ու հասարակական գործիչների հետ:

Գեկտեմբերի 15-ին Հ. Սաղաթեյանը և Պ. Ղուկասյանը ներկայանում են վարչապետ Կոկովցևին և նրա մոտ պարզաբանում այն կարևորությունը, որ հայությունը Մերձավոր Արևելքում ունի ուս կայսրության շահերին բնական դաշնակից տարր, որն իր քաղաքական ու մշակութային առաջադիմությունները երբեք խոչընդոտ չի դառնալու ուսական կայսրության առաջխաղացման ճանապարհին դեպի Միջերկրական ծով, այլ ինչպես միշտ՝ լինելու է նրան աջակից ու դաշնակից: Եվ այժմ, երբ ցավալի թյուրիմացությունները պարզվել են ուսական իշխանությունների և հայ հեղափոխական կուսակցությունների միջև, երբ հայ ազգի քաղաքական դիմագիծը լիովին պարզվել է ուսական կայսրության շահերի տեսակետից, այս պայմաններում հայ ազգն ամբողջովին լցված է հույսով, որ ներկա նշանավոր պատմական պահին իր բնական պաշտպան Ռուսաստանը Թուրքահայաստանի բարենորոգումների գործը կառնի իր հովանու ներքո թե՛ նախաձեռնության և թե՛ իրագործման տեսակետից, մանավանդ թուրքահայ ժողովուրդին կպաշտպանի մահմեդական բնակչության հնարավոր ցասումից:

Պատասխանելով հայ գործիչների հարցադրումներին՝ վարչապետը նախ անդրադարձավ այն հարաբերություններին, որ ստեղծվել են հայոց Կաթողիկոսի և ուսական կառավարության միջև, ապա հայտնեց, որ թագավոր-կայսր Նիկոլայ II-ը իր սրտին շատ մոտ է ընդունում թուրքահայության անտանելի վիճակը, և որ նոր կոտորածի առաջն առնելու համար կայսրն արդեն լուրջ նախազգուշացում է արել օսմանյան կառավարությանը: Իսկ ինչ վերաբերում է Թուրքահայաստանում անհրաժեշտ բարենորոգումներ կատարելուն, ապա ուս կառավարությունը վճռական է այդ հարցը դնելու և առաջին հերթին համաձայնության գալու Եոյակ դաշինքի մյուս երկու պետությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի հետ: Միաժամանակ նա հայ պատ-

վիրակներին տեղեկացրեց, որ Կ. Պոլսի ուսական դեսպան Գիրսին արդեն հանձնարարություն է տրված՝ պարզելու այն հնարավորությունները, որոնք պիտի ծառայեն Հայաստանի բարենորոգումների առաջընթացին՝ դրանք դնելով համաձայնական պետությունների կառավարությունների առջև: Վարչապետը նաև շեշտեց, որ իր կառավարությունը ամենայն լրջությամբ հաշվի կառնի դեսպան Գիրսի առաջարկներն ու դիտարկումները:

Ապա Կոկովցևը զրուցակիցներին խորհուրդ տվեց որքան հնարավոր է ազգակիցներին համոզել աղմուկ չհանել ցույցերով ու գրգռիչ հոդվածներով, գաղտնի պահել ուս կառավարության հետ կատարվող բանակցությունները, աշխատել, որ Փրանսիական և անգլիական մամուլը, մանավանդ վերջինս, սկսեն նախապատրաստել հասարակական կարծիքը, որից մեծ կախում ունեն տեղական կառավարությունները:

Տեսակցության վերջում հայ պատգամավորները վարչապետին հարցրին, թե նա խորհուրդ կտա՞ արդյոք, որ իրենք Հայկական հարցով տեսակցեն նաև արտգործնախարարի հետ: Նախարարապետը խրախուսեց այդ մտադրությունը և նպաստավոր գտավ բանակցությունները նրա հետ՝ հավելելով, որ հայերի հարցի վերաբերյալ Սազոնովը լիովին համախոհ է իր հետ՝:

Կոկովցևի հետ հանդիպումից մեկ շաբաթ հետո Պ. Ղուկասյանը և Հ. Սաղաթեյանը տեսակցություն են ունենում նաև արտաքին գործոց նախարար Սերգեյ Սազոնովի հետ: Զրույցի ընթացքում հայ պատվիրակները նախարարի հետ ունենում են մոտավորապես նույն բացատրությունները, ինչ նախարարապետի հետ: Սազոնովը նույնպես շեշտում է ուս կառավարության բարյացակամ վերաբերմունքը թուրքահայերի նկատմամբ և պատրաստակամություն հայտնում հարուցելու Հայկական հարցը և նպաստելու դրա լուծմանը Եռապետական դաշինքի պետությունների աջակցությամբ: Միայն հայ պատվիրակների

¹ ПЗПАК, том I, стр. 70-84.

համար հույժ կարևոր և նոր էր նախարարի հայտնած տեսակետը խնդրի հարուցման ժամանակի մասին: Նա ասաց, որ ոուս կառավարությունը Հայկական հարցը կհարուցի Բալկանյան պետությունների և Օսմանյան կայսրության միջև խաղաղության դաշնագրի վավերացումից հետո:

Հայ պատվիրակների համար միանգամայն նորություն էր Սազոնովի այն հաղորդումը, որ ոուս կառավարությունը մտադիր է նաև բարեկամական հարաբերություններ սկսել քրդերի հետ՝ հանձինս նրանց ցեղապետերի՝ զրավելով նրանց չքանչաններով և այլ պարզեններով:

Ինչ խոսք, դա ցավալի էր ոչ միայն Հայկական հարցի առաջնորդն, այլև վնասակար էր հենց ոուս պետության շահերի տեսակետից:

Հայություն համար ոուսական կողմի այդ մոտեցումը ամբողջովին հիմնված էր այն թյուրիմացության վրա, որ քրդերը երբևիցե կարող են Ռուսաստանը գերադասել թուրքիայից, ուր նրանք, համարյա չկրելով պետական պարտավորություններ, օգտվում էին գողություն ու ավազակության ազատությամբ աշխատավոր հողագործ ազգաբնակչության նկատմամբ: Հայ պատվիրակները գերադասեցին չառարկել Սազոնովին քրդերի հանդեպ վարվելիք ոչ իրատեսական քաղաքականության դեմ, թեև դա վնասակար էր ոուսական պետական շահերի տեսակետից:

ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Ի կատարումն ոուսահայոց առաջին համաժողովի որոշման՝ 1912 թ. նոյեմբերի 25-ին Թիֆլիսում տեղի ունեցավ ոուսահայության երկրորդ համագումարը:

Առաջին համաժողովում ընտրված ժամանակավոր բյուրոն նախապես հրավերներ էր ուղարկել հարկ եղած տեղերը՝ Թիֆլիս հրավիրելով հայաբնակ գլխավոր քաղաքների պատվիրակ-

ներին: Համագումար էին եկել Թիֆլիսից, Բաքվից, Բաթումից, Նոր Բայազետից, Հին Նախիջևանից, Շուշիից, Աստրախանից և այլ տեղերից, Թիֆլիսի կաթոլիկ Հայ համայնքից, «Մշակ» և «Հորիզոն» թերթերի խմբագրություններից¹:

Ժամանակավոր բյուրոյի ներկայացրած զեկուցումից հետո քննության դրվեցին էջմիածնի ձեռնարկած դիվանագիտական գործընթացին աջակցելու և Թուրքահայաստանում ինքնապաշտպանություն կազմակերպելու հարցերը:

Օրակարգային առաջին հարցի քննարկման արդյունքում համագումարը ընդունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղված նամակի տեքստը, որում նաև ասված էր, որ համագումարը, չկարողանալով այլևս լուրջան ու անկարեկցաբար լսել Թուրքիայի հայերի դեմ գործող գազանությունների մասին, թախանձագին խնդրում է կրկին դիմել Թագավոր-Կայսր Նիկոլայ II-ին՝ պաշտպանելու Հայ ժողովուրդին տանջանքներից և իրավազրկումից: Համագումարի մասնակիցները համոզմունք էին հայտնում, որ իբրև Արևելքում քրիստոնյաների ավանդական հովանավոր, և նույնպես իբրև մի մեծ պետություն, որ Բեռլինի դաշնագրի հիման վրա ստանձնել է Թուրքիայի հայաբնակ վիլայեթներում անհրաժեշտ ունեփորմներ մտցնելու հոգսը, անուշադիր չի թողնի Վեհափառի կողմից արվելիք խնդրանքը և իր հզոր հովանավորությամբ ու միջամտությամբ վերջ կդնի դժբախտ թուրքահայության տանջանքներին»²:

Գալով ինքնապաշտպանության խնդրին՝ ժողովն անվերապահորեն ընդունեց դրա կարևորությունը և անհրաժեշտությունը, բայց խնդրի վերաբերյալ չկայացրեց Բյուրոյին պարտավորեցնող որոշումներ, դրա փոխարեն հանձն առավ անհրա-

¹ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24¹, թ. 25-ի չրջ.:

² Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 247^բ, վավ. 19, թթ. 18-19:

ժեշտություն ղեկավարում ինքնապաշտպանական նպատակներով անհապաղ նյութական օժանդակություն հասցնել դիմադրողական ուժերին:

Ժողովը հավանություն տվեց Հայկական հարցի պատմությունը քաջատեղյակ մի անձնավորություն կողմից կազմած և Բյուրոյի հավանությունն արժանացած հուշագիր-ծրագրին, որը կաթողիկոսի կողմից պետք է ներկայացվեր եվրոպական մեծ պետություններին: Փաստաթուղթը ենթարկելով մի քանի հավելումների և փոփոխությունների՝ ժողովը վերջնական տեսքի բերեց այն, ապա հանձնարարեց Բյուրոյին՝ այն անմիջապես ներկայացնել Գևորգ V-ին:

Ժողովի ընդունած հուշագրի երկրորդ օրինակը պետք է ներկայացվեր վեց մեծ պետություններին, իսկ Ռուսաստանին ներկայացվելիք օրինակում փոփոխության պիտի ենթարկվեին փաստաթղթի սկիզբն ու վերջնամասը՝ էականը թողնելով նույնը: Հուշագրի երրորդ օրինակը, դարձյալ որոշակի փոփոխություններով, պետք է ներկայացվեր մեծ պետությունների կողմից գումարվելիք կոնֆերանսին կամ կոնգրեսին¹:

Հուշագիրը՝ ուղեկցող գրությունը, որի տակ ստորագրել էին Բյուրոյի անդամներ Ս. Հարությունյանը, Ա. Քալանթարյանը, Հ. Առաքելյանը, Ն. Աղբալյանը, Կ. Ստեփանյանը և Ալ. Սատիսյանը, նույնմբերի 27 թվով ուղարկվեց էջմիածին՝ Ամենայն հայոց կաթողիկոսին²:

Համագումարն ընդլայնեց ժամանակավոր բյուրոյի կազմը՝ այն համալրելով երկու գործիչով՝ բժ. Կ. Ստեփանյան և Ա. Զամալյան: Դրանից հետո ժամանակավոր բյուրոն վերանվանվեց Ազգային բյուրո կամ ուղղակի՝ **Բյուրո**^{*}: Նպատակահարմար հա-

¹ «Համահայկական խորհրդակցություններ: Փաստաթղթեր և նյութեր», էջ 11:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, թ. 12:

^{*} Ազգային Բյուրոն անկուսակցական համագալին մարմին էր, որին անդամակցում էին քաղաքական տարբեր ուղղությունների պատկանող կամ անկուսակցական ականավոր դեմքեր: Նախագահը Թիֆլիսի թեմի առաջնորդ

մարվեց Բյուրոյի նիստերը հրավիրել շաբաթական մեկ անգամ:

Բյուրոն իր գործունեությունը պիտի ուղղեր հետևյալ հիմնական խնդիրների կատարմանը. 1) Օժանդակել Գևորգ V կաթողիկոսին՝ Հայկական հարցի բարձրացման ուղղությամբ նրա ձեռնարկումներում, 2) Հարկ եղած դեպքում հրավիրել նոր համագումար, ինչպես նաև իր նիստերին հրավիրել Հայկական հարցին գիտակ անձանց³, 3) Կապեր հաստատել Կ. Պոլսի, Փարիզի և ուրիշ վայրերի հայ մարմինների հետ, որոնք նպատակ ունեն աշխատելու Հայոց հարցի համար, 4) Պրոպագանդայի միջոցով ուսու հասարակություն մեջ և վարիչ շրջանակներում ստեղծել նպաստավոր տրամադրություն ղեպի թուրքահայերը⁴:

Հետայսու որևէ լուրջ գործ ձեռնարկելուց առաջ Գևորգ V կաթողիկոսը պետք է դիմեր Բյուրոյին: Վերջինս իր կողմից կոչված էր սերտ հարաբերություններ պահպանել էջմիածին հետ և բազմակողմանի օժանդակություն ցույց տալ Վեհափառին:

Բյուրոն ձգտում էր համերաշխության ներդաշնակ մթնոլորտ ստեղծել հայկական քաղաքական դաշտում գործող բոլոր կողմերի հետ⁵: Նա սերտ կապեր էր հաստատել ոչ միայն էջ-

Մեսրոպ եպիսկ. Տեր-Մովսիսյանն էր, փոխնախագահներն էին՝ Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Սատիսյանն ու Ներսիսյան դպրոցի տեսուչ Հ. Սունունցը, անդամներն էին Հովհ. Թումանյանը, Լեոն, փաստաբան Սպենդիարյանը, բժ. Կ. Ստեփանյանը, Նիկոլ Աղբալյանը, Ռաչ. Կարճիկյանը, հայտնի վաճառականներ Սեր. Գյուլպենկյանը, Տ. Աֆրիկյանը, Սամսոն Հարությունյանը և ուրիշներ: Փոխարքա Վորոնցով-Դաշկովի և Կովկասի գինվորական իշխանությունների հետ Ազգային բյուրոյի հարաբերությունների պահպանման պարտականությունները դրված էին Մեսրոպ եպիսկոպոսի, Ալեքսանդր Սատիսյանի և Հակոբ Զավրյանի վրա: Ազգային բյուրոն անվիճելի ղեկավարն էր Կովկասի հայոց ազգային կյանքի: (Տե՛ս Ս. Վրացեան, Հին թղթեր նոր պատմութեան համար, Բեյրութ, 1962, էջ 13):

^{*} Օգտվելով իր այդ վերջին իրավունքից՝ հետագայում Բյուրոն հաճախ էր իր նիստերին հրավիրում պատմաբան Լեոյին, գրականագետ Նիկոլ Աղբալյանին և ուրիշների, իսկ առանձին դեպքերում՝ նաև հայ ունևոր դասից տարբեր անձանց, երբ կարիք էր զգացվում նյութական և այլ կարգի աջակցության:

¹ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, թ. 26-27:

² Նույն տեղում, թ. 27-28:

միաձնի Մայր Աթոռի և Կ. Պոլսի պատրիարքարանի, այլև Փարիզի ու Պետերբուրգի ազգային մարմինների հետ: Պատրիարքարանը շարունակաբար Բյուրոյին էր ուղարկում իր հրատարակությունները, իսկ էջմիածնից ստանում էր կարևոր գրությունների պատճենները, տարբեր տեղերում կենսական հարցերի շուրջ կազմակերպում էր խորհրդակցական ժողովներ: Օրինակ՝ Բյուրոյի նախագահ Ս. Հարությունյանը Կաթողիկոսի խնդրանքով Հայկական Հարցի շուրջ շատ կարևոր խորհրդակցություն էր կազմակերպել էջմիածնում, այդ նույն Հարցով խորհրդակցություն կազմակերպելու նպատակով Պետերբուրգ էր մեկնել Բյուրոյի անդամ Ալ. Քալանթարը:

Բյուրոն սերտ կապի մեջ էր ուսական Պետական դումայի պատգամավոր Միքայել Պապաջանյանի հետ: Օրինակ՝ վերջինս Բյուրոյին Հայտնել էր, որ 1913 թ. մայիսի վերջին ինքը Դումայում ելույթ է ունենալու Հայկական Հարցի մասին և հարցրել էր նրա կարծիքը: Առանց ուշացնելու Բյուրոն կազմել էր Մ. Պապաջանյանին օժանդակող խումբ, որն անմիջապես ձեռնարկել էր հեղինակելու հարցերի այն շրջանակը, որի վրա ուշադրություն պետք է դարձներ Դումայի պատգամավորը¹:

Բյուրոյի ակտիվ միջամտությունների շնորհիվ Հայկական Հարցով զբաղվող Հայոց տարբեր մարմինների գործունեության մեջ համարյա չէին պատահում մեծ տարաձայնություններ, և երբ, այնուամենայնիվ, երևակվում էին այդ մարմինների ինքնազուլս գործունեության դեպքեր, ապա Բյուրոն իր գրություններով ու բանավոր հորդորներով անմիջապես չեչտում էր ներդաշնակ գործելու անհրաժեշտությունը: Իր ժողովներին Բյուրոն հաճախ էր հրավիրում Թուրքիայից Կովկաս եկած և Հայաստանի բարենորոգումների հարցի ընթացքին հետևող հայերի, որոնք տեղեկություններ էին տալիս Երկրի կացությունից և վարիչ մարմինների տրամադրությունների մասին: Բյուրոյի գործունեությունը մշտապես համընթաց էր ուսական կառավարության քաղաքականությանը:

¹ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24¹, թ. 28 և շրջ.:

Այդ նպատակով Բյուրոն ընտրել էր մի հատուկ մասնախումբ, որի նպատակը պետք է լիներ. ա) Կազմակերպել ուսական մամուլի օրգաններում թուրքահայության բռնաճշումների մասին տպագրված հոդվածների ու նյութերի թարգմանություն և հրատարակում հայերեն ու եվրոպական լեզուներով, կապեր հաստատել հատկապես “Русское Слово”, “Русские Ведомости”, “Речь” և “День” հայամետ թերթերի խմբագրությունների հետ, բ) Ռուսական հասարակության լայն շրջաններին թուրքահայության կենսական հարցի բուն էությունը ծանոթացնելու համար ուսներեն հրատարակել գրքեր ու գրքույկներ՝ այդ գործի մեջ ներգրավելով Լեոյին, Ա. Քալանթարյանին, Հ. Առաքելյանին և Հայկական Հարցին քաջատեղյակ ուրիշ անձանց, ինչպես նաև առանձին գրքույկներով լույս ընծայել Թուրքահայաստանում եղած ուսների և օտարերկրացիների ճանապարհորդական տպավորությունները, գ) Միջոցներ ձեռնարկել Թուրքիայից հեռագրական թարմ լուրեր ստանալու համար և այդ նպատակով հատկացնել դրամական միջոցներ¹:

Բյուրոն առաջարկ էր ստացել դրամով օժանդակելու մի Հայանպաստ գերմաներեն թերթ հրատարակելու համար, բայց նկատի առնելով, որ խմբագրական կազմի և Բյուրոյի տեսակետների միջև աններդաշնակություն կարող է լինել, գոհացում չտրվեց այդ հարցին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ: ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱՆ ԳՈՐԾԻ ԳԼՈՒՆ

Հայաստանում շարունակվում էին հայերի սպանություններն ու կողոպուտները:

“Русские Ведомости” թերթը գրում էր. «Հայերն այժմ այնպիսի դրության մեջ են, որ եթե թողնվեն թուրքերի իշխանության տակ, նշանակում է նրանց դատապարտել բնաջնջման:

¹ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24¹, թթ. 27 շրջ. և 28:

Նրանք կարող են ազատվել միայն մի կերպ՝ [հայկական] հինգ վիլայեթներում (Վան, Բիթլիս, Դիարբեքիր, էրզրում, Ադանա. երևի այստեղ պետք է ավելացնել նաև Անգորայի մի մասը) հիմնել քրիստոնեական իշխանություն»¹:

Անսալով հայկական և ուսական առաջադեմ հասարակական կարծիքին՝ Ամենայն հայոց կաթողիկոսը և հայ քաղաքական շրջանները, ականջալուր լինելով Պետերբուրգից եկած խորհրդին, թե բավական չէ միայն խնդրագիր ներկայացնել կայսրին, այլ պետք է նաև դիմել եվրոպական այն պետություններին, որոնք նույնպես Բալկանյան պատերազմից հետո մասնակցելու էին գումարվելիք ժողովներին, ձեռնարկեցին անհետաձգելի միջոցներ: Ամենից առաջ անհրաժեշտություն ծագեց եվրոպայում ունենալ էջմիածնի ներկայացուցչություն (պատգամավորություն), որը տեական ժամանակ պիտի մնար այնտեղ և խաղաղության կոնֆերանսին ներկայացնեի հայության պահանջները, մանավանդ որ այդ խնդիրը կաթողիկոսին հարուցել էր նաև Կ. Պոլսի Արչարունի պատրիարքը:

Կ. Պոլսի պատրիարքարանը ինչո՞ւ էր էջմիածնին խնդրում դիմել մեծ տերություններին և նրանց ուշադրությունը սևեռել Հայաստանի վրա: Որովհետև ինքը չէր կարող այդ բանն անել առանց Բ. Դոան հետ համաձայնեցնելու: Նման քայլը թուրք կառավարությունը կդիտեր որպես անջատողականության դրսևորում՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Անխուսափելիորեն առաջ էր եկել պատվիրակության ղեկավարի ընտրության դժվարին խնդիրը: Ո՞վ ի վիճակի կլինի ստանձնելու Հայկական հարցն առաջ մղելու ճակատագրական պատասխանատվությունը:

Հանրահայտ է, որ որևէ գործի հաջողությունը պայմանավորված է այն կատարողի բանիմացությամբ ու ողջամտությամբ: Ազատագրական պայքարի ճանապարհին հայերին միշտ խանգարել է իրենց իդեալապաշտ և երագուն խառնվածքը:

¹ Թերթի սույն տողերի կտրոնը, որի վրա չկա ամսաթիվ, տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, Թղթ. 239^ա, վավ. 19, թ. 6:

Հայոց ազգային պետերը ի վիճակի չեն եղել հաշվարկել ժողովրդի ուժերն ու հնարավորությունները և հենց այդ հիման վրա ընտրել ազգային պայքարի ճշգրիտ ուղի: Հատկապես հայ հեղափոխական կուսակցությունների գործունեությունը նախընթաց չուրջ քառորդ դարի ընթացքում ցույց էր տվել, որ թուրքական պետության հետ հարաբերվելիս նրանք անկարող են եղել հետապնդելու և իրագործելու քաղաքական լուրջ նպատակներ: Միայն քաղաքականությամբ զբաղվելու ձգտումը, այդ ճանապարհին ցուցաբերվող բարի կամքը և անկեղծությունը, ինչպես և համարձակությունն ու անձնագոհությունը դեռ բավական չեն ազգի ճակատագիրը վարելու համար: Եթե հայ հեղափոխականները միաժամանակ լինեին նաև քաղաքագետներ ու դիվանագետներ, ապա Հայկական հարցի բարձրացման օրերից (1878 թ.) սկսած՝ հայոց ազգը բոլորովին տարբեր վիճակում կլինեի. չէին լինի զանգվածային կոտորածներ, ահռելի կորուստներ: «Աւետաբերը» (Կ. Պոլիս) գրում էր, որ տասնյակ տարիների դառը փորձությունը ցույց տվեց, որ հենց այդ պատճառով նրանք երբեք չհասան իրենց սնուցած նպատակներին: «Այսօր ալ,- շարունակում էր թերթը,- մեր ազգին համար բարեփոխութեան կենսական խնդիրը յարուցուցուցաւ: Այսպիսի պարագաներու մէջ ազգին բոլոր կարող, փորձառու, հմուտ անձերը միացնելու պէտքը չհասկնալը կատարեալ տխմարութիւն մը պիտի ըլլար: Ազգային կեանքի հետ այսքան սերտ առնչութիւն ունեցող խնդիր մը կուսակցական խնդրի մը վերածելը ոճրագործութիւն մը պիտի ըլլար, ինչպէս նաև զայն յօգուտ ո եւ է կուսակցութեան մը շահագործելը ազգային շահերու դէմ ամէնէն մեծ դուր պիտի սեպուէր: Ազգային ցաւին հանդէպ պէտք է լուեն բոլոր կուսակցական և անձնական հաշիւները և միմիայն այս բազմադարեան ցաւատանջ ժողովուրդին բարօրութեան գաղափարը պէտք է գերիշխող դառնայ: Այս ըմբռնումը պէտք է անկեղծօրէն ամէն շրջանակներու մէջ տիրապետող տեսակետը դառնայ»¹:

¹ «Աւետաբեր» № 1, 4 հունվարի 1913 թ.:

Պատասխանատվությունն այս անգամ իրենց վրա վերցրին հայ եկեղեցին, հայ պահպանողական ուժերը:

Ազգային բյուրոն (Թիֆլիս) կազմել էր ականավոր հայերի մի անվանացանկ, որոնք իր կարծիքով կարող էին Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատվիրակները դառնալ Եվրոպայում: Այդ ցուցակում էր նաև եգիպտահայ նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ, ազգային բարերար Պողոս Նուբար փաշայի անունը: Անկախ այդ առաջարկից՝ Գևորգ V-ը նույնպես մտքում ունեցել էր նույն թեկնածությունը: Եվ երբ Բյուրոյի հանձնարարությունը նրա անդամներ համբարձում Առաքելյանը և Նիկոլ Աղբալյանը Կաթողիկոսին ներկայացրին ցանկը, կարճատև մտորումից հետո Վեհր կանգ առավ Նուբար փաշայի թեկնածության վրա:

1912 թ. նոյեմբերի 10-ի № 1482 կոնդակով Կաթողիկոսը նրան նշանակում է ներկայացուցիչ Եվրոպայում:

Կաթողիկոսական կոնդակը Նուբար փաշան ստանում է 1912 թ. դեկտեմբերի 2-ին Փարիզում, ուր նա գտնվում էր ընտանիքով:

Գևորգ V Հայրապետի կոնդակը ստանալու առիթով Պողոս Նուբարը Վահան Մալեգյանին գրում էր. «Ընդունեա (Կաթողիկոսի առաջարկը: - Հ. Ս.), որովհետև իրավունք չունեի մերժելու, շատ ծանր պաշտօն մը, դժուարություններով ցցուած, բայց զոր պարտականութիւնն ունիմ հետապնդելու, ցորքան պիտի կարենանք յուսալ յաջողութիւնը: Ասիկա մենէ միայն կախում չունի, այլ Պետութեանց շահերէն եւ բարի կամեցողութենէն, ինչպէս նաեւ հանգամանքներէն, որ ներկայիս դժբախտաբար փափաքուածին պէս նպաստաւոր չեն: Այս վերջին պարագան կրնայ փոխուիլ մէկ օրէն միւսը, եթէ, ինչպէս կը յուսանք, դադրին պատերազմի վտանգները, որ մտահոգութիւն կը պատճառեն բոլոր դահլիճներուն»¹:

Ավելի ուշ Պողոս Նուբարն ասել էր. «էջմիածնայ մեր Կաթողիկոսը... վճռեց դիմել պետություններին հայցելու նրանց միջամտությունը եւ կեանքի կոչեց, այս գործի առթիւ, մի

¹ Վ. Մալեգեան, ճամբուս վրայ (Յուշաբաղ), էջ 304-305:

պատուիրակութիւն, որի նախագահութիւնն առաջարկուեց ինձ: Ես ինձ թոյլ չ'տուի խուսափել այդպիսի մի յանձնարարությունից, որն իմ պարտականությունս եմ համարում, բայց այնուամենայնիւ ես ցանկացայ հաւաստիանալ նախ քան համաձայնելս, թէ մեր ծրագիրը պէտք է հիմնի Բերլինի Դաշ. 61 յօդուածի վրայ եւ սահմանափակուի, օրինակի համար, բարենորոգութեանց գործադրման խնդրով, մերժելով ո եւ է անջատողական գաղափար եւ ո եւ է ինքնավարութեան ցանկութիւն, որն ես համարում եմ մի իսկական ուտոպիա»¹:

Պողոս Նուբարի կողմից գերպատասխանատու պաշտոնը ստանձնելուց հետո տաճկահայկական հարցի շուրջ մղվող դիվանագիտական ուժգին պայքարների կենտրոններ դարձան Կ. Պոլիսն ու Փարիզը:

Պողոս Նուբար փաշան, անշուշտ, արևմտահայության ամենամեծ քաղաքական դեմքն էր, մի ձեռնհաս, հմուտ ու հեղինակավոր անձնավորություն: Նա որդին էր հայ նշանավոր դիվանագետ, Եգիպտոսի հայտնի քաղաքական գործիչ Նուբար փաշայի*, որը նույնպես ժամանակին ջանքեր էր թափել Հայկական հարցի լուծման համար:

Պողոս Նուբարը կրթված ու բազմակողմանի զարգացած մարդ էր**, գերազանց տիրապետում էր ֆրանսերենին, անգլե-

¹ «Արարատ», № 1, հունվար, 1914, էջ 47:

* Տիրան Նաղարյանը «Տարազի» 1918 թ. հունվարի համարում հաղորդել է, որ Նուբար փաշայի նախնիները արցախ-գանգեղուրցիներ են եղել, հայտնի են եղել որպես Հայ Առաքելական եկեղեցու նվիրյալներ, որպես Դավիթ Բեկի զինակիցներ մեծամեծ քաջագործություններ են կատարել Սյունիքում հատկապես իրենց հայրենի Տաթևը պաշտպանելիս: Պողոս Նուբար փաշայի հոր՝ Նուբար փաշայի կյանքի և գործունեության մասին մանրամասն տե՛ս Էմիլ Պերդրան, Նուբար փաշա. 1825-1899: Նիշք և տպարությունը, թարգմանեց Մեսրոպ Նուպարեան, Կ. Պոլիս, 1910, 86 էջ:

** Պողոս Նուբարի կենսագրության մանրամասներ տե՛ս Էդուարդ Մելքոնյանի «Հայկական բարեգործական ընդհանուր միություն պատմություն» (Երևան, 2005), Սամուել Պողոսեանի «Պողոս Նուբար փաշա. ազգային գործիչը» (Երևան, 2004) արժեքավոր աշխատություններում և բազմաթիվ ուրիշ հրատարակումների մեջ:

րենին ու արաբերենին, գիտեր նաև հաղորդակցվել թուրքերենով ու գերմաներենով: Նա մեծ հարգանք ուներ եվրոպական քաղաքական բարձր դասի շրջանում¹, անձնական լայն կապեր ուներ եվրոպական մի շարք երկրների նշանավոր հասարակական-քաղաքական գործիչների հետ²: Վահան Մալեգյանը վկայում է, որ Պողոս Նուբարը «գրեթե հայերէն չէր գիտեր, միայն իր կնոջը հետ ուսուցանում էր հայերէն մը կը խօսեր»: Նա ուներ պատկանելի հարստություն, որից բաժին հանեց Ազգային պատվիրակությանը՝ հոգալով նրա գործունեության հետ կապված բոլոր ծախսերը: Հրաչյա Աճառյանը գրում էր. «Այս պատկանելի անձնաւորութիւնը Հայկական Դատի յաջողութեան ի սպաս դրաւ իր հարստութիւնը, իր ազդեցութիւնը, իր հանձարը, իր լեզուն և իր գրիչը»³: Հակառակ իր դիրքին ու հարուստ գիտելիքներին, նշել է Երվանդ Օտյանը, Պողոս փաշան շատ համեստ մարդ էր, միաժամանակ՝ շատ դուրահաղորդ⁴:

Մինչ այդ Նուբարն իրեն հեռու էր պահել քաղաքականությունից և չէր պատկանում կամ հարում հայկական որևէ կուսակցության, քաղաքական որևէ հոսանքի, թեև, Վահան Մալեգյանի վկայությամբ, նա «սկզբունքով կը բաժնէր Ռամկավար Ազատական Կուսակցութեան դաւանանքը եւ գործելակերպը, եւ ատոր ապացոյց է համակրանքը եւ վստահութիւնը զոր ցոյց կուտար Ռամկավարներուն, իր անմիջական շրջապատին մէջ ընդունելով անոնք եւ անձնապէս օժանդակելով անոնց թերթերուն»⁵:

Նուբարի նշանակումը ջերմորեն ընդունվեց հայ ազգային-քաղաքական շրջաններում՝ բացառությամբ Պետերբուրգի հայկական խմբակի անդամների, որոնք թերահավատությամբ էին ընդունել այդ նշանակումը: Կաթողիկոսի նշանակումը

¹ Տե՛ս «Էջմիածին», № 1, փետրվար-մարտ-ապրիլ, 1965, էջ 166:

² Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», № 3 (179), 2008, էջ 49:

³ Հ. Աճառեան, Տաճկահայոց հարցի պատմութիւնը (Սկզբից մինչև 1915 թ.), Նոր-Նախիջևան, 1915, էջ 75:

⁴ Երուանդ Օտեան, Պողոս փաշա Նուբար, Կ. Պոլիս, 1913, էջ 26:

⁵ Տե՛ս Վահան Մալեգեան, Ճամբուս ծայրը, հատ. Բ, Փարիզ, 1955, էջ 294:

անվերապահ հավանություն արժանացավ նաև ուսական կառավարության կողմից: Եվ նա արդարացրեց բոլորի հույսերը՝ մեծ հմտությամբ կատարելով իրեն վստահված գործը:

Հայկական հարցի բարձրացման պատիվը ինչո՞ւ բաժին ընկավ հենց Պողոս Նուբար փաշային և նրա համախոհներին: Այդ ճակատագրական օրերին ինչո՞ւ հայ ազգային հեղափոխական կուսակցություններն իրենց դուրս թողեցին ազգի համար բախտորոշ խնդրի լուծման գործընթացից:

Սկսենք նրանից, որ նախկինում Հայկական հարցի բարձրացման և եվրոպայում նրա պրոպագանդման մենաշնորհը պատկանում էր հայ ազգային հեղափոխական կուսակցություններին: Նախասահմանադրական Թուրքիայում համիդյան բռնակալության կողմից նրանք ենթարկվում էին ամենաբիրտ հալածանքների, քանի որ հանդիսանում էին հայ ազգաբնակչության կացության, նրա ազատագրական իդեալների արտահայտիչներ:

Իրենց ձեռքն առնելով երկրի ղեկը՝ երիտասարդ թուրքերն աշխատեցին ճնշված ազգերի անհնազանդ կուսակցություններին մոտեցնել իրենց, նրանց ազգերին «չնորհել» եվրոպական իրավակարգի բարիքները՝ խոսքի, մամուլի, ժողովների, կրթական գործունեության ազատություններ, որպեսզի այդ միջոցով երկրի քաղաքական դաշտից բեկանեն ու օտարեն ոչ թուրք կուսակցությունների վաղեմի ըմբոստ տրամադրությունները:

Այդ ճարպիկ քաղաքականությունից հոհեցրեց հայ իրականության մեջ եղան բոլոր երեք ազգային-հեղափոխական կուսակցությունները՝ Հնչակը, Վերակազմյալ Հնչակը և Դաշնակցությունը: Առաջինը Իթիթիլաֆի հետ էր, վերջին երկուսը՝ Իթիթի-հադի: Եվ դա նույնիսկ կիրիկիահայության զանգվածային ջարդերից հետո:

Հայկական կուսակցությունների անհեռատես քաղաքականության հետևանքով թուրքահայ ժողովրդի կյանքում ստեղծվեց մի ողբերգական երկվություն: Եթե «նախասահմանադրական» շրջանում հայկական շարժման և հայ քաղաքական ուժերի գործունեության հիմնական դաշտը Թուրքահայաստանն էր, ապա այժմ՝ «սահմանադրական» շրջանում, խախտվեց այդ հարաբերակցությունը: Կծկվելով ու լճանալով լեզալ իրավունքների

չրջանակներում՝ հայ կուսակցությունները, հետևելով թուրք իշխանական ուժերի թելադրանքին, եթե չասենք՝ ամբողջովին թողեցին հեղափոխական գործունեությունը բուն երկրում՝ Թուրքահայաստանում, ապա կարող ենք արձանագրել, որ նրանց կողմից այնտեղ տարվելիք աշխատանքը փաստորեն մղվել էր երկրորդ գծի վրա:

Երբ հայ ժողովուրդն իր հայրենի հողի վրա շարունակում էր կրել ստրկական իրավազրկության ծանր լուծը՝ չունենալով անգամ կյանքի, գույքի և ընտանեկան պատվի ապահովություն, Կ. Պոլսում կենտրոնացավ հայ կուսակցությունների՝ նախկինում Թուրքահայաստանում գործող գործիչների մեծ մասը: Նրանք Եվրոպայի հարևանությամբ ազատ ըմբռնում էին ոչ միայն սոսկ մարդկային վայելքներ, այլև օգտվում էին քաղաքացիական-մշակութային իրավունքներից (խոսքի, մամուլի, ժողովների ազատություն և այլն):

Ահա իրերի այդպիսի բերումով է, որ խախտվեց հայ ժողովրդի և նրա կուսակցությունների միջև եղած քաղաքական վիճակների համամասնությունը, և խոր անջրպետ ստեղծվեց բուն երկրի հայ ազգաբնակչության և պետության կենտրոններում խմբված հայ ազգային կուսակցությունների վիճակների միջև:

Դրան ավելանում էր հետևյալը. նախասահմանադրական շրջանում և՛ Հնչակը, և՛ Դաշնակցությունը, հատկապես վերջինս, հօգուտ հայկական բարենորոգումների մեծ եռանդով Եվրոպայում մղում էին քաղաքական լայն պրոպագանդ, բայց «սահմանադրական» շրջանում վերջ տվեցին գործունեության այդ ուղղությանը:

Այլ խոսքով՝ հայկական հարցի ավանդական ներկայացուցիչներ հայ հեղափոխական կուսակցություններն ըստ էության դադարեցին թուրքահայ ժողովրդի իղձերի արտահայտիչները լինելուց:

Ահա պատասխանն այն հարցի, թե ինչու Բալկանյան պատերազմի օրերին՝ Թուրքիայի համար ստեղծված խոշոր ճգնաժամի հարմարագույն պահին, երբ հայ ժողովրդի վիճակի բարեփոխման տեսակետից գուցե հնարավոր լիներ որոշ արդյունքի

հասնել, նրա հեղափոխական կուսակցություններն իրենց իսկ որդեգրած սխալ քաղաքականության հետևանքով այնքան էին չեղոքացվել Հայկական հարցից և քաղաքականապես այնքան էին նշանազուրկ եղել, որ իրերի բերումով համարյա մի կողմ քաշված՝ դիտում էին, թե ինչպես է ընթանում բարենորոգումների հարցի արծարծման գործընթացը՝ հարցի լուծումը ամբողջովին թողնելով հայ պահպանողականներին, ազատականներին ու հոգևորականությանը՝ հանձինս Նուբար փաշայի և նրա գլխավորած հայրենասեր մտավորականության մի կոհորտայի:

Հայ հեղափոխականներն արդեն իրենք իսկ գիտակցում էին, որ եվրոպական կառավարություններին, կուսակցական կամ մտավորական ընտրախավին նախկինում արված բոլոր միջնորդությունները զուր են անցել, որ մարդասիրության սկզբունքները հարգելու կոչերը կամ քրիստոնեական քաղաքակրթության նկատմամբ հայ ժողովրդի հավատարմության մասին երդում-հավատները ոչ մի դրական արդյունքի չեն հասցրել: Հեղափոխական երկու հայկական կուսակցությունները՝ Դաշնակցությունը և Հնչակը, շարունակում էին հույսեր փայփայել, որ գոնե եվրոպական սոցիալիստական կուսակցությունները, վերջապես, երեսները կշրջեն Թուրքահայաստանի կողմը և նրա հոգսերի ու անագորույն վիճակի մասին կբարձրաձայնեն ամենուր: Բայց այդ հույսերը նույնպես ի դերև էին ելել: Սոցիալիստական II ինտերնացիոնալը, որի մեջ միավորված էին սոցիալիստական կուսակցությունները, որոնց թվում՝ նաև ՀՅ դաշնակցությունը, չէր ճանաչում Հայկական հարցի առանձին գոյությունը և գտնում էր, որ հայերի հետ կապված բոլոր խնդիրները կարող են լուծվել միայն ու միայն Օսմանյան կայսրության մյուս բոլոր ժողովուրդների, այդ թվում՝ թուրք ժողովրդի տնտեսական ու սոցիալական խնդիրների հետ փոխկապակցված: Ինչպես պաշտոնական Եվրոպան, այնպես էլ այնտեղի սոցիալիստական կուսակցությունները ոչ միայն վճռականապես դեմ էին Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը խախտելուն, այլ նաև նրա բնակչության որևէ մասի համար առանձին միջոցառումներ կիրառելուն:

Ոմանք դեռ հիշում էին օսմանյան հեղափոխությունից առաջ

Եվրոպայի սոցիալիստական շարժման վետերաններ Ավգուստ Բերելի և Վիլհելմ Լիբկներխտի հետ Լայպցիգի «Հայ ուսանողական ընկերություն» երեք անդամների թուուցիկ հանդիպման և կայացած սակավատև հարց ու պատասխանի մասին, որ տարիներ առաջ տեղի էր ունեցել քաղաքի “Dorotheen Hof” հյուրանոցում: Դեպքի մասին այսպես է վերհիշել այդ երեք հայ ուսանողներից մեկը՝ Ա. Աթանասյանը:

«Հանդիպման հենց սկզբում Բերելը զգուշացրեց, որ իր ժամանակը չատ սուղ է, քանի որ կես ժամից հետո ինքը ճառով պետք է հանդես գա «Կրիստալ-պալատում» կազմակերպված միտինգում: Մենք յայտնեցինք, որ մեր ասելիքը կարճ է լինելու:

Նա իսկույն գնաց դիմացի դուռը, կիսաբաց նայեց, ինչ որ բան հարցրեց և դառնալով մեզ, խնդրեց ներս մտնել: Մենք մտանք մի այլ սենեակ: Այդտեղ տեսանք մի ուրիշ ծանօթ դէմք: Անկասկած Լիբկներխտն էր: Մենք իսկույն ճանաչեցինք նրան իր մեծ յաղթանդամ մարմնով, լայն դէմքով, երկճիւղ ալեզարդ միրուքով: Նա ժիլետը հագած, առանց սիրտուկի, հայելու առաջ իր փողկապն էր ուղղում:

Բերելը մեզ ներկայացրեց: Նա ժպտադէմ գլուխ տւեց մեզ և շարունակեց իր գործը: Մենք նստեցինք: Սենեակը դրանց ննջարանն էր:

- Ի՞նչ ունէք ասելու, - դիմեց մեզ Բերելը, առաջարկելով ծխել:

- Ձեզ, երևի, յայտնի կը լինեն լրագրներից այն սարսափները, որ այժմ կատարւում են Թիւրքիայում հայերի վերաբերմամբ, սկսեց ընկերներիցս մէկը. մենք եկել ենք խնդրելու Ձեզ և Ձեր յարգելի ընկերոջը, պ. Լիբկներխտին, որ դուք հարցապնդէք ձեր կառավարութիւնը, Թիւրքիայում կատարւած սարսափների առիթով և ձեր միջամտութեամբ թեթևացնէք հայ ժողովրդի զարհուրելի պայմանները:

Բերելը նայեց Լիբկներխտին: Սա իր սիրտուկն էր հագնում, և ապա դարձաւ մեզ:

- Ես հասկանում եմ ձեզ: Նոյնանման դիմում մենք ստացանք մի ամիս առաջ նաև Բերլինի հայ ուսանողութիւնից: Ձեզ ասելու եմ այն՝ ինչ նրանց. հայ ժողովրդի բազմը անբաժանելիօրէն

կապւած է համայն Թիւրքիայի ժողովուրդների բազմի հետ: Միապետական ընթացի պայմանները միանման սոսկալի են ողջ Թիւրքիայի համար, ուստի և հայերի դրութիւնը կը բարելաւի այն ժամանակ, երբ կը բարելաւի ամբողջ Թիւրքիայի ժողովուրդների բազմը: Իսկ բոլորիդ հարցը կը լուծի, երբ կը տապալի սուլթանական ոէժիմը:

- Իսկ ե՞րբ կը տապալի սուլթանական ոէժիմը, - հարցրի ես:

- Ե՞րբ, երբ որ Թիւրքիայում նոյնանման պայմանների տակ ապրող բոլոր ազգութիւնները և մնաւանդ նրանց ամենից շատ տանջւած տարրերը կը միանան, փչրելու գոյութիւն ունեցող կարգերը:

- Բայց չէ՞ որ թիւրքերը մահմեդական են և երբէք քրիստոնեաների հետ չեն միանայ, - նկատեց ընկերս:

- Հալածւածներն ու ճնշւածները կրօն ու ազգութիւն չեն ճանաչում: Փորձեցէ՛ք դուք հայերդ այդ ուղղութեամբ գործել թիւրք ժողովրդի հետ և երբէք հայկական առանձին հարց չբարձրացնել: Հակառակ դէպքում դուք միայն հեռացնում էք ձեզանից բողոքող միւսուլման տարրերին և հարստահարւածների դատը դարձնում՝ ազգային-հայկական դատ, մի բան, որ բնականաբար գրգռում է միւսուլման ժողովրդին...

Այդ ժամանակ դուռը ծեծեցին: Բերելը նայեց ժամացույցին և տեղից բարձրացաւ:

- Ներեցէք ինձ, ես գնալու եմ, տասը ըրպէ է միայն մնում: Եկէք ինձ մօտ, եթէ ցանկանում եք, վաղը առաւօտեան ժամ 10-11-ին: Ես այդ առիթով ձեզ հետ աւելի մանրամասն կը խօսեմ: Թիւրքիայի դրութիւնը քաղաքական մեծ հարց է և նա չէ կարող չհետաքրքրել մեզ: Ներեցէ՛ք:

Մենք վեր կացանք մեր տեղից:

Բերելը մեզ ճանապարհեց մինչև դուռը: Սենեակը լիքն էր տասնեակ մարդկանցով:

Մենք դուրս եկանք, և այդ երեկոյ մի քանի հայ ուսանողների հետ ունեցանք երկար ու տաք վիճարանութիւն: Մեր մէջ ծագեցին գծաութիւններ: Ընկերներիցս մի քանիսը հայհոյում էին Բերելին:

Միև օրը, չնորհիւ այդ գժտուիթիւնների, մենք վճռեցինք չգնալ Բեքելի մօտ»¹:

Ուրեմն հիմա նույնպես՝ սոցիալիստներից պետք էր ձեռք քաշել:

Որքան էլ Նուբար փաշան տաղանդավոր ու բանիմաց անձնավորութիւն էր, բայց նա միայնակ ի վիճակի չէր կատարելու իր վրա դրված գերպատասխանատու խնդիրը: Նրան անհրաժեշտ էին աջակից գործընկերներ: Եվ առաջ եկավ հատուկ պատվիրակութիւն ունենալու պահանջը:

Պատվիրակութիւն մեջ պետք է ընդգրկվեին հայկական հասարակութեանը քաջածանոթ, հեղինակութիւն վայելող, միաժամանակ պետութիւնների դիվանագիտական գործելակերպին ծանոթ ինչպես աշխարհիկ, այնպես էլ կրօնական հայ գործիչներ:

Ծագել էր պատվիրակութիւն անդամների խիստ ընտրութիւն անհրաժեշտութիւնը, քանի որ տարբեր ժամանակներում Եվրոպայում Հայկական հարցով զբաղվել են հիմնականում գործից միանգամայն անտեղյակ, դիվանագիտութիւն մասին գաղափար անգամ չունեցող, քաղաքականութիւնից բոբիկ, սահմանափակ գիտելիքներ ունեցող մարդիկ*:

¹¹⁴ «Երկրի ձայնը», № 25, 13 նոյեմբերի 1907 թ.:

* Հնչակյան Հայտնի գործիչ Սանազատը վերհիշել է այսպիսի մի դեպք. 1904 թ. Սասունի երկրորդ ապստամբութեան պարտութիւնից հետո Ամենայն Հայոց կաթողիկոս Մ. Խրիմյանը, ՀՅ դաշնակցութեան դրոմամբ, կազմել էր մի պատվիրակութիւն, որը պետք է մեկնէր Եվրոպա և փորձէր ապստամբութեան հետևանքով Թուրքահայաստանում սպասվելիք կոտորածների առաջն առնել: Պատվիրակութեան կազմն ընտրել էր կաթողիկոսը՝ նրա մեջ ներառելով երեք հոգու՝ Սարաճյան և Այվատյան եպիսկոպոսներին, որոնք չգիտեին եվրոպական ոչ մի լեզու և Հայտնի դաշնակցական բժիշկ Հովհաննես Լորիս-Մելիքյանին, որը պետք է հանդես գար որպես երկու բարձրաստիճան եկեղեցականների թարգման՝ չիմանալով եվրոպական կարևոր լեզուներից մեկը՝ անգլերեն: Պատվիրակութիւնը եղել էր եվրոպական մի շարք երկրներում և ամենուրեք դիվանագետների դռները փակ էր գտել իր առջև: Հասնելով Լոնդոն՝ նրանք փորձել էին ներկայանալ թագավորին, բայց կտրուկ մերժում էին ստացել: Արտաքին գործերի նախարարը նույնպես չէր բարեհաճել նրանց ընդունել:

Սկզբում Ամենայն Հայոց կաթողիկոսը ուզում էր պատվիրակութիւնն ինքը ձևավորել՝ Պողոս Նուբար փաշա, Մաղաքիա Օրմանյան, Մինաս Չերազ, Համբարձում Առաքելյան, Սամսոն

Վերջապես պատվիրակները հազիվ կարողացել էին ստանալ Քենտրբերի արքեպիսկոպոսի ունկնդրութիւնը, ինչպես նաև ընդունվել էին «Թայմս» թերթի խմբագրատանը: Քանի որ բժ. Լորիս-Մելիքյանը անգլերեն չգիտեր, ուստի պատվիրակները Լոնդոնում իրենց հետ վերցրել էին Բաֆֆու ալպագ որդուն՝ Արամին: Նրանց վերոհիշյալ այցելութիւնների մասին Արամը մանրամասներ էր պատմել այդ օրերին Լոնդոնի հնչակյան կուսակցութեան կենտրոնում գտնվող Ռուբեն Սանազատին, որը և հետագայում (1919 թ.) հանձնել էր տպագրութեան: Արամը պատմել էր. «Պատվիրակները միանգամայն անպատրաստ էին իրենց պատուիրակութեան թէ՛ նպատակի և թէ՛ հայկական հարցին վերաբերող խնդիրների վերաբերեալ: Կենտրոնի արքեպիսկոպոսը, ինչպես և «Թայմզ»ի արտաքին քաղաքականութեան բաժնի վարիչը մի շարք խիստ էական հարցումներ էին տալիս, իսկ մեր պատուիրակները, փոխանակ անմիջական ու կտրուկ պատասխաններ տալու տրուած հարցերին, սկսում էին նախ միմեանց հետ խորհրդակցել և մինչև իսկ վէճի բռնուել այն մասին, թէ ի՞նչ պատասխան պետք է տալ: Ծատ անյարմար ու յիմար կացութիւն էր ստեղծուած: Վերջ ի վերջոյ պարզուած էր, որ Կենտրոնի արքեպիսկոպոսն ու անգլիական թերթի խմբագիրը շատ աւելի լաւ են ճանաչում Հայաստանը և աւելի են տեղեակ հայկական հարցի բոլոր ելեւէջներին ու թիրքիայում տեղի ունեցող անցուղարձերին, քան մեր եպիսկոպոսներն ու յեղափոխական գործիչը: Այսպէս օրինակ՝ պատուիրակները, ի միջի այլոց, խնդրեցին, որ Հայաստանի բոլոր քաղաքներում անգլիական հիւպատոսներ նշանակուեն, որպէսզի կարողանան հսկել թիրք կառավարութեան վայրագութիւնների վրայ:

- Ասացէք, խնդրեմ,- հարցնում են,- այդ ո՞ր քաղաքումն է, որ մենք հիւպատոս չունենք:
- Մուշում, օրինակի համար,- պատասխանում են:
- Բայց չէ՞ որ Մուշը գաւառական քաղաք է,- ասում են,- իսկ հիւպատոսներ պահուած են միմիայն նահանգական քաղաքներում: Մուշի նահանգական քաղաքը Բիթլիսն է, որտեղ մենք միշտ հիւպատոս ունեցել ենք:
- Երբ բազմակողմանի լաւատեղեակ Կենտրոնի արքեպիսկոպոսի մօտից դուրս եկանք,- շարունակեց պատմել Արամ Բաֆֆին,- Այվատեան եպիսկոպոսը իր գեղջկական պարզութեամբ դիմեց Սարաճեան եպիսկոպոսին բացականչելով. «Տեսա՞ր եպիսկոպոսը, Սրբազան, եպիսկոպոսն ըշտէ ատանկ ըլլալու է, չէ թէ մեզի պէս աւանակ» («Հայրենիք», № 5 (77), մարտ, 1929, էջ 113-114):

Հարուժյունյան կազմով: Բայց հետո նպատակահարմար գտավ ընտրությունը թողնել Պողոս Նուբարին, իսկ ինքը հաստատելու կամ մերժելու էր ներկայացրած անձանց¹:

Սրտառուչ այդ կոնդակով Գևորգ V-ը նախ հարկ էր համարել Պողոս փաշա Նուբարին հիշեցնել, թե ինչպիսի թշվառ վիճակում է գտնվում թուրքահայությունը, և թե հիմա ինչ ահռելի ծանրություն է ընկած նրա ուսերին: Նա գրում էր.

«Քաջացոյց է վսեմափայլութեան Ձերում, զի քան զամենայն ի թշուառացեալ յերկիրս և յազգս հայրենի աշխարհն մեր Մայր Հայաստան ստրկացեալ յընթացս դարուց և ժամանակաց և ենթարկեալ տիրապետութեան և հալածանաց մահմեդական վայրագ ազգաց, մեծագոյն մասն հեծէ տակաւին ընդ տանջանօք հանդերձ որդուց իւրովք, որք հալածականք եղեալ ի մայրենի ծոցոյ և ի հայրենի յարկէն վտարանդեալ ի սփիւռս աշխարհի:

Գիտեք զի ի պատճառս յոռի կառավարութեան Տաճկաց և վայրագութեանց հրոսակայ քրդաց, հազարաւոր ընտանիք ի հայոց դժբախտացեալ, ի սուր ոսոխի մաշեցաւ, թողլով զանթիւ որբոս և զայրիս անխնամս: Զարդ քո ևս հոգևոր որդիք մեր ի նմին յողբալի և յանօգնական վիճակուն, զրկեալ ի մարդկային իրաւանց, յապահովութենէ անձին գոյից և որդւոյ իւրեանց: Իսկ յետ պատերազմին, որ ընդ մէջ Օսմանեան Պետութեան և Բալկանեան քրիստոնեայ ազգաց, թուի թէ առաւել ևս սոսկալի լիցէ կացութիւն Տաճկահայոց: Ուստի ի նկատ առեալ, ոյր զի յետ պատերազմին լինելոց է համաժողով (կոնֆերանս) ի ներկայացուցչուց Եւրոպական Պետութեանց, վասն կանոնաւորելոյ զքաղաքական գործս և որոշելոյ զիրաւունս և զսահմանս պատերազմողաց, անհրաժեշտ համարիմք բացայայտել և ներկայացուցանել զդառնագին վիճակ հօտին իմոյ, որ ի սահմանս Օսմանեան Պետութեան, վասն բարենորոգելոյ զհայաբնակ գաւառս Անտիօք, ի ձեռն որոյ մաղթէ մեզ յաջողացուցանել և ի գլուխ հանել զայսպիսի ծանր քաղաքական-դիվանագիտական գործ, եթէ ոչ ի ձեռն հեռատես, խոհուն և ազգանվէր անձանց:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 20, թթ. 13-14:

Եւ այժմ, հասեալ է ժամ, զի Դուք, Վսեմափայլ Տէր, Պողոս Փաշայ, իմաստութեամբ, հեռատեսութեամբ և բարոյական ազդեցութեամբ Ձերով օգնեող եք փրկել զտաճկահայ զավակունս մեր ի տանջանաց և յողբալի կացութենէն²»:

Կաթողիկոսը հույս էր հայտնում, որ Նուբար փաշան ամեն ինչ անելու է հաջողությամբ պսակելու իր պատմական առաքելությունը: «Հաւատալով, եթէ փրկութիւն եւ երջանկութիւն հոգևոր զաւակաց մերոյ մերձ է սրտի Ձերում, ոյր վասն և ո՛չ մերժեողիք զանմիջական օգնութիւն Ձեր, անք, որպէս Ծայրագոյն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց և Հայաստանեաց Ս. Եկեղեցւոց, կարծիմք զՁեր Վսեմափայլութիւն ներկայացուցիչ ունէ ընդ այլ հոգևորական և աշխարհական անձանց, և խնդրիմք ի Ձեզ՝ յանձն առնուլ երթալ ի Վեհաժողով (կոնֆերանս) և առաջի առնել պատգամաւորաց Եւրոպական Պետութեանց զխնդիր Հայոց և զտեղեկագիր մեր, հայցելով զմիջնորդում նոցա սա ողբալի կացութենէ հայ ժողովրդեան Տաճկահայաստանի, թերևս մարդասէր և հզոր միջնորդութեամբ և հովանաւորութեամբ նոցա վերուցին կամայականութիւնք, աւերք և հաստատեսցին խաղաղութիւն և բարենորուգումն յատուցանել վիճակի զաւակաց մերոց:

Օրհնելով զՁեզ և զամենայն Գերպատուական Վսեմափայլութեանդ, մաղթէմք ի Տեառնէ շնորհիլ Ձեզ զքաջառողջութիւն և զյուշողութիւն ամենայն բարի և ազգօգուտ գործոց ձեռաց Ձերոյ:

Ողջ լէրուք, զօրացեալ ի Տէր և օրհնեալ յաւէտ, ամէն:
10 նոյեմբերին
թ. 1482
Ի. Ս. էջմիածին»²:

Օրմանյանի կողմից իր խնդրանքի մերժումը Պողոս Նուբարը համարեց մեծ կորուստ ստեղծվելիք պատվիրակության համար: Նա Վահան Մալեղյանին հանձնարարեց իր հերթին նույնպես

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 27, թ. 1 և շրջ.:

² Նույն տեղում, թ. 2 և շրջ.:

փորձել համոզել սրբազանին: Օրմանյանը մերժեց նաև վերջինիս խնդրանքը՝ նոյեմբերի 20 թիվը կրող ընդարձակ մի նամակով մանրամասն բացատրելով, թե ինչու ինքը չի կարող ստանձնել պատվիրակությունն անդամի պարտականությունը: Նա գրում էր, որ Ազգային պատվիրակության կազմում ընդգրկվելու իրեն արված առաջարկությունն ինքը համարում է «կարեւոր, պատուաւոր, պատուաբեր», մանավանդ որ «ցաւ մը ունիմ, այն է որ օգտակար տարիներ և ժամեր արդեն ի դուր վատնուած են ...»: Ապա հետևում է առաջարկությունից հրաժարվելու պատճառաբանությունը. ինքն իրեն զգում է պարսավված և իր վրա կրելով այդ բիծը՝ համոզված է, որ չունի բարոյական իրավունք մասնակից լինելու մի գործի, որը կարող է ձակատագրական լինել իր ազգի համար: Նամակում սրբազանն այսպես էր պատճառաբանում իր որոշումը.

«Ազգին ապագային հետ դբադող, եւ անոր մէջ գործնական դեր ստանձնող անձը, պէտք է որ կամ ինքն պաշտօնական դիրք մը վայելէ, եւ կամ պաշտօնական կերպով յանձնարարութիւն ունենայ:

Պէտք չէ մոռնաք, որ իմ դիրքս տակաւին ամբաստանելի եւ դատապարտութեան ենթարկելի մը դիրքն է. ազգին վստահութեան անարժան կամ վստահութենէ զրկուած, չորս տարիներէ ի վեր յամառ անտարբերութեամբ մոռացութեան տրուած, եւ կամայական մտադրութեամբ գործէ եւ գործելէ հեռու պահուած, շատ մը խումբերու հակառակութեան ենթարկուած, մէկ խօսքով անձնապէս գործելու ալ իրաւունքէ զրկուած, մինչեւ իսկ պաշտօնապէս հրատարակուած «ընդհանուր եկեղեցականաց» ցուցակէն անունը դուրս ձգուած:

Արդ ի՞նչպէս կրնայ այսպիսի անձ մը ազգը ներկայացնելու յաւակնութիւնն ունենալ, յանուն ազգի գործի միջամտել: Ո՞չ ապաքէն ինքզինքը վտանգի կ'ենթարկէ, որ պաշտօնական կամ անպաշտօն, կուսակցական կամ անհատական ձայն մը ետեւէն հասնի, թէ «ո՞վ ձեզի պաշտօն տուաւ», կամ թէ հրատարակութիւն մը, թէ «նա ազգին վստահութենէն զրկուած մէկն է»: Ահա հիմնական, եւ կարծեմ շատ իրաւացի, պատճառ մը՝ որ զիս ստիպած է ամէն գործերէ քաշուած ու հեռու ապրիլ, եւ այսօր ալ կը

ստիպէ տակաւին զիս նոյն ճամբէն չչեղիլ»¹:

Օրմանյանի մերժողական գիրն ստանալուն պես Վ. Մալեգյանն անմիջապէս հայտնում է Պողոս Նուբարին, որը նույնպէս, այս անգամ նամակով, դիմում է սրբազանին և նույնպէս մերժում ստանում: Պատվիրակության ղեկավարը Վահան Մալեգյանին երկտողով տեղեկացնում է. «Պատրիարքը ինձի գրած է որ յոյս դնելու չեմ անոր վրայ...»²:

Տեղյակ չլինելով, որ Կաթողիկոսը և Պողոս փաշան Օրմանյանի հետ վարում են դժվարին բանակցություններ, Հայկական մամուլի որոշ օրգաններ իրականությունը չհամապատասխանող եզրակացություններ էին անում: Նրանք թյուրիմացաբար այն միտքն էին արծարծում, թե Կաթողիկոսն է արգելք եղել Օրմանյանին պատվիրակության կազմի մեջ ընդգրկելուն:

«Մարտ» (Մոսկվա) թերթն իր խմբագրականում գրում էր. «Դիցուկ կաթողիկոսը ինչ-ինչ շարժառիթներից դրդուած Օրմանեանին չի նշանակում այդ մասնաժողովի անդամ. ինչո՞ւ այդ մասին չեն հասկացնում նրան, որ այդպիսի դեպքում գէթ յանուն համերաշխութեան, իսկ ուղիղը՝ ի սեր գործի, Օրմանեանն է հարկավոր: Վերջապէս Հայկական խնդիրը համազգային խնդիր է: Մայր Հայաստանի ինչպէս ուրախութիւնն ու բախտաւորութիւնը նոյնպէս եւ լացն ու արտասուքը ընդհանուր հայերինն է, հետևաբար և այս խնդրին պիտի նուիրուի ամեն մի հայ առանց կրօնի եւ դասակարգի խտրութեան»³: Թերթի խմբագրականի հեղինակը հավանաբար տեղյակ չէր, որ Օրմանյան սրբազանն ինքն է հրաժարվել Պատվիրակության կազմում լինելուց:

Երբ Պողոս Նուբար փաշան, ինչպէս նաև Ամենայն Հայոց կաթողիկոսն Օրմանյանին ժամ առաջ էին ուզում տեսնել ստեղծվելիք Պատվիրակության կազմում, այդ նույն ժամանակ վերջինիս թեկնածուության դեմ իրենց մամուլով ու բեմով հանդես էին գալիս Հայ հեղափոխական կուսակցությունները: Դեմ էին

¹ Վ. Մալեգյան, ճամբուս վրայ, էջ 299-300:

² Նույն տեղում, էջ 309:

³ «Մարտ», № 2, 15 փետրվարի 1913 թ.:

արտահայտվում Հայոց ազգային ժողովը և Արչարունի պատ-
րիարքը: Բայց ոչ բոլորը: Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովի վար-
չության ատենապետ Ստեփան Գարայանը, այցելելով Օրման-
յանին, նրա հետ երկար զրույց է ունենում՝ աշխատելով համո-
զել, որ նա Եվրոպա չմեկնի, իբրև պատճառաբանություն առաջ
բերելով այն առարկությունը, որ թուրք կառավարությունը դա
կդիտի ոչ թե որպես Ամենայն Հայոց կաթողիկոսի, այլ թուրքա-
հայոց ազգային ժողովի ազգային վարչության նախաձեռնու-
թյուն և, օգտագործելով այդ փաստը, թշնամական նոր քայլեր
կկատարի վարչության անդամների դեմ¹:

Օրմանյանի կողմից մերժում ստանալուց հետո Պողոս Նու-
բար փաշան ձեռնարկեց Պատվիրակության կազմի ձևավորմա-
նը: Կաթողիկոսին հղած հեռագրով Պողոս Նուբարը գրում էր.
«Համաձայն Ձերդ Սրբութեան հրահանգներին, ես մտադիր եմ
կազմել պատգամավորությունը բացառապես գիտակ հայերից»²:
Իբրև Պատվիրակության անդամներ առաջարկվում էին մի քանի
թեկնածուներ՝ Մինաս Չերազ, Արթին փաշա Յաղուբ, Հա-
րություն Մոստիչյան, Արչակ Չոպանյան, Հայր Գ. Մենևիչյան,
Լորիս Մելիքյան, Համբարձում Առաքելյան: Վերջին երկուսը
ոուսահայեր էին:

1912 թ. դեկտեմբերի 7-ին Գևորգ V կաթողիկոսի խորհրդով
Փարիզ էր մեկնել «Մշակ» թերթի մեկնաբան, հասարակական
նշանավոր գործիչ Համբարձում Առաքելյանը: Նա իր հետ
վերցրել էր Հայկական հարցի վերաբերյալ էջմիածնում պահվող
փաստաթղթերն ու տեղեկությունները, ինչպես նաև Ազգային
Բյուրոյի կողմից պատրաստված նյութերը՝ Պողոս Նուբարին
հանձնելու համար: Դեկտեմբերի 12-ին հասնելով Փարիզ՝ նա
անմիջապես մեծագույն ջանասիրությամբ խորամուխ է լինում
այդ փաստաթղթերի ու նյութերի մեջ, ամենայն մանրամասնու-
թյամբ ուսումնասիրում դրանք, քանի որ հանձնարարություն
ունենր ոչ միայն աջակցելու պատվիրակության ղեկավարին, այլև

¹ Տե՛ս «Լուսարձակ» (Կ. Պոլիս), 1 հունվարի 1913 թ.:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 17 չրջ.:

միաժամանակ Հայոց հարցի ընթացքի մասին պարբերաբար
հոդվածներ ուղարկելու իր թերթին:

«Պարիզյան նամականի» խորագրի տակ «Մշակը» պարբե-
րաբար տպագրում էր Համբարձում Առաքելյանի նամակ-հոդ-
վածները, որոնցում նա օր առ օր ցույց էր տալիս, թե ինչպես
են ընթանում գործերը Փարիզում: Հոդվածաչարի երրորդ նա-
մակով նա պատմում էր, թե Հայոց հարցը Լոնդոնի կոնֆերան-
սին ներկայացնելու ուղղությամբ վերը նշված խումբը ինչպես է
առավոտից մինչև երեկո նախապատրաստական մեծ աշխա-
տանք տանում:

Բայց տարբեր առաջարկներ լսելուց հետո և մանավանդ Կ.
Պոլսի Հայոց պատրիարքարանից ստացված գրությունների
հիման վրա Նուբար փաշան հանգեց այն համոզման, որ ավելի
նպատակահարմար է պատվիրակությունը կազմել միմիայն
թուրքահայերից:

Պողոս Նուբարը կաթողիկոսին տեղեկացնում էր, թե ինչու
երկար մտածելուց հետո ինքը նպատակահարմար է գտել պատ-
գամավորության կազմի մեջ ընդգրկել բացառապես օսմանյան
հպատակություն ունեցող անձանց: «Եւ իրօք, մենք համո-
զուեցինք, որ օսմանեան հպատակութիւնից զատ օտար հպա-
տակութեան պատկանող հայերի ներկայութիւնը կարող էր
ենթադրել տալ ոմանց կառավարութեանց, որոնց ընտրութիւ-
նից վնասէինք, թէ պատգամաւորութիւնը ներչնչուած է ոուս
կառավարութիւնից, կամ այլ օտար կառավարութիւնից: Պետու-
թիւնների կողմից ունեցած այդ երկիւղը բաւական է յարուցա-
նելու դժուարութիւններ, որոնք վնասակար կը լինէին և կը
խանգարէին Թուրքիայի Հայոց Դատի յաջողութեանը»¹:

Պողոս Նուբարն իր ընտրությամբ ձևավորեց պատվիրակու-
թյան կազմը, որի մեջ մտան Եվրոպայի Հայոց առաջնորդ, Ման-
չեստրի եպիսկոպոս Գևորգ Ութուջյանը, եգիպտահայ հայտնի
ազգային գործիչ, տեղի հայ կաթողիկ համայնքի ղեկավար, Հայ-
կական բարեգործական ընդհանուր միության փոխնախագահ

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 11:

Արթին Յաղուբ փաշան, որը բնակվում էր Փարիզում, նշանավոր մանկավարժ, Իզմիրլյան պատրիարքի նախկին քարտուղար Հարություն Մոստիչյանը, հայկական հարցի քաջատեղյակ Մինաս Չերազը¹: Պատվիրակության փոխնախագահ ընտրվեց ամիրայական ակնառու դեմք, բազմահմուտ մտավորական Յաղուբ Արթին փաշան², իսկ ընդհանուր քարտուղար նշանակվեց ՀԲԼՄ կենտրոնական վարչության ժողովի ատենադպիր Վահան Մալեզյանը³: Այսպիսով Պողոս փաշայի կողմից ձևավորված պատվիրակությունը՝ նրա նախագահի հետ միասին, կազմված էր յոթ հոգուց*:

Արխիվային մի փաստաթղթից երևում է, որ Կաթողիկոսը, հավանաբար, առանձնապես բարձր կարծիք չի ունեցել Մոստիչյանի մասին, բայց Նուբարը կարողացել էր նրան համոզել: Իր նամակներից մեկում նա Վեհին գրում էր. «Ձերդ Սրբազանությունը նկատած կը լինի, որ ես Յարուլթին եպիսկոպոսին առաջարկում եմ իբրև եկեղեցականի: ... Այս րօպեին չը կարողանալով ունենալ Սրբազան Օրմանիանի աջակցությունը, ես աւելի լավ ընտրություն չէի կարող ունենալ, քան Յարուլթինեան սրբազանին ընտրելով, որովհետև նա միակն է օսմանեան հպատակներից, որ գտնվում է այժմ Եւրոպայում և կարող է,

¹ Արշակ Ալաոյաճեան, Մինաս Չերազ: Իր կեանքը եւ գործը. իր 60 ամեայ յորելեանի առթիւ, Գահիրե, 1927, էջ 347:

² Տե՛ս Վ. Մալեզեան, ճամբուս վրայ (Յուշաբաղ), Բարիդ, 1950, էջ 304-305:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 81:

* Յաղուբ Արթին փաշան և Հարություն Մոստիչյանը Հայերի մեջ առանձին ժողովրդականություն չվայելող անձնավորություններ էին: Նույնը կարելի է ասել Ութուջյան եպիսկոպոսի մասին: Պատվիրակության կազմում միակը, որը լայն ժողովրդականություն էր վայելում Հայության շրջանում և իսկապես քաջատեղյակ էր թե՛ Հայկական խնդրին և թե՛ այդ խնդրի շուրջը ստեղծված դիվանագիտական պայքարի ողջ ընթացքին, Մինաս Չերազն էր: Հայ կաթողիկոսների կողմից դժգոհություններ էին առաջացել, որ պատվիրակության կազմում չկա ոչ մի կաթողիկ Հայ գործիչ, այն դեպքում, երբ Վենետիկի և Վիեննայի մխիթարյան կաթողիկ վեղարավորների մեջ կան բարձր մտքի տեր ոչ քիչ թվով անձինք:

հետևաբար, անուանվել, առանց Բ. Դոանը դժուարություններ չարուցանելու»¹:

Քանի որ Կաթողիկոսը պատգամավորություն անդամների մի մասին անձամբ չէր ճանաչում, ուստի Պողոս Նուբարը Գևորգ V-ին խնդրում էր «ընդունել վերոյիշեալ անձանց, որովհետև անհրաժեշտ է, որ պատգամավորությունը կարողանայ այլևս առանց ուշացնելու սկսել աշխատություն և ձեռնարկել պաշտօնական բանակցությունների պատրաստելու համար հող, սպասելով Բալկանեան հարցի վերջնական կանոնաւորման»²:

Պատվիրակության կազմում ընդգրկվել էին բացառապես պահպանողական և մեկ ազատական (Վ. Մալեզյան) գործիչներ, իսկ Հայ հեղափոխական գործիչներից՝ ոչ ոք:

Ինչպես տեսնում ենք, Ազգային պատվիրակության կազմում չէր ընդգրկվել նաև թուրքահայ այնպիսի խոշոր գործիչ, ինչպիսին Արշակ Չոպանյանն էր, որն ապրում և գործում էր հենց Փարիզում: Դրա հիմնական պատճառը ծայրահեղ պահպանողական Պ. Նուբարի և ազատական Ա. Չոպանյանի հայացքների միջև եղած տարբերություններն էին:

Պողոս Նուբարը գտնում էր, որ Հայկական հեղափոխական շարժումներում Հայերի ցուցաբերած աննկուն քաջությունը, գերմարդկային ճիգերը, վսեմ ու սրտառուչ անձնազոհություն անթիվ օրինակները դրական ոչ մի արդյունքի չեն հասցրել: Դրա պատճառները տարբեր են եղել. կովի անպատրաստ լինելը, շարժումները գլխավորող ուժերի շրջահայացության և զգուշավորության պակասը, կացությունը ճիշտ գնահատելու անկարողությունը, փոքր հաջողության դեպքում խանդավառության մեջ նետվելը և անհաջողության դեպքում մեղքն ուրիշների վրա բարդելը և այլն³:

Եվս մի հանգամանք:

Ոմանք չէին ողջունում, որ Հայոց կաթողիկոսն անձամբ է հանձն առել չարատանջ Հայկական հարցը բարձրացնողի դերը: Նրանք կասկած էին հայտնում, թե արդյո՞ք նա կկարողանա մի

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 17-ի շրջերես:

² Նույն տեղում, թթ. 18-19:

³ Տե՛ս «Ազգ» (Բոստոն), № 36, 25 փետրվարի 1914 թ.:

քանի պատվավոր հայերի աջակցությունը հաջողություններ հանգրվանի հասցնել լրջագույն ու արտակարգ նուրբ խնդիրը: Այսպես մտածողները կարծում էին, թե Ամենայն հայոց կաթողիկոսն իրավունք չունի զբաղվելու դիվանագիտական գործերով, որ գոնե նախորդ կաթողիկոսներն այդպիսի արտոնություն չեն ունեցել: Գևորգ V-ը «Ամենայն հայոց եկեղեցու գլուխն է, այլ ոչ թե ազգի քաղաքական ղեկավար», - գրում էր Մոսկվայի «Մարտ» թերթը, - ավելացնելով, թե «սխալ է, երբ կաթողիկոսի կողմից է ստեղծվել պատվիրակությունը, որը ինքնըստինքյան աշխարհիկ, քաղաքական գործ է»¹: Թերթի խմբագրությունն կարծիքն այն է, որ այդպիսի գերպատասխանատու գործի ձեռնարկման արտոնություն ստանալու համար կաթողիկոսը նախ պարտավոր էր էջմիածնում մի ընդհանուր ժողով կազմակերպել, հրավիրել ժողովրդի կողմից ընտրված մարդկանց, գիտություն և գրականության ներկայացուցիչների և ընդհանուր խորհրդածություններ մի եզրակացություն առաջացնել ու ապա այն ուղարկել արտասահմանի հայերին, որոնք էլ, իրենց հերթին, Փարիզում կամ Շվեյցարիայի քաղաքներից մեկում ընդհանուր ժողով կկազմեին՝ հրավիրելով բոլոր դասակարգերի ներկայացուցիչների, Եվրոպայում արդեն մեծ թիվ կազմող հայ գիտնականների, գրականների և այլոց, որոնք քննելով խնդիրը՝ կհաստատեին, թե ոչ, պատրիարքության կազմը²:

Իհարկե, այդ առաջարկը մի ուրիշ պայմաններում գուցե ինչ-որ տեղ ընդունելի էր, բայց խնդիրն այն էր, որ իրավիճակը հապաղում չէր հանդուրժում, ժամանակը թանկ էր: Ծանր երկունքի մեջ գտնվող խնդիրն էր մեջտեղ: Բացի այդ, հայերն արդեն ամեն տեղ խոսում էին Ազգային պատվիրակության մասին: «Բարենորոգումների խնդիրը, - գրում էր Վահան Մինախոբյանը, - հիմնական խոսակցության նյութն էր: Նույն հարցն էր քննարկվում տանը, եկեղեցու բակում, ակումբում, չուկայի հայ վաճառականների գրասենյակներում...»³:

¹ Տե՛ս «Մարտ», № 2, 15 փետրվարի 1913 թ.:

² Տե՛ս նույն տեղում:

³ Վահան Մինախոբյան, 1915 թվականը: Արհավիրքի օրեր, Թեհրան, 2006, էջ 27:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՐԵՎՈՐ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ: ՕՐՄԱՆՅԱՆ ՍՐԲԱԶԱՆԸ՝ ԱՆՊԱՐՏ

Երկար ընդմիջումից հետո թուրքահայոց Ազգային ժողովը 1912 թ. դեկտեմբերի 21-ին (1913 թ. հունվարի 3-ին)^{*} ուրբաթ օրը^{*}, հավաքվեց արտակարգ դոնիակ նիստի՝ պատրիարք Հովհաննես Արչարունու նախագահությամբ և 64 պատգամավորների ներկայությամբ քննարկելու հայկական նահանգների բարեկարգության հետ առնչվող հարցերը¹: ՀՅԴ Կ. Պոլսի օրգան «Առաջամարտը» գտնում էր, որ Ազգային ժողովի դեկտեմբերի 21-ի նիստն իր ընթացքով և արդյունքներով նախորդներից առանձնանում էր, որ այն, «իսկապես պատմական նշանակություն ունեցավ (ընդգծումը թերթինն է: - Հ. Ս.) հայ ազգին համար ընդհանրապես և այդ ժողովին տարեգրություն համար մասնատրապես»², քանի որ ազդարարում էր, որ ստանձնում է ազգի ճակատագրի ղեկը:

Քանի որ Ազգային ժողովի նիստը տեղի էր ունենում արտակարգ բարդ, պատասխանատու ու վտանգավոր ժամանակ, ուստի հենց սկզբից նրա մասնակիցներին նախազգուշացվեց, որ ամեն մի անզգույշ նախադասություն կամ անտեղի խոսք կարող է ծանր հետևանքներ ունենալ այն հարցի համար, որի լուծմանն այնքան փափագում են բոլոր հայերը: Ծեշտվեց նաև, որ օտար պետություններին ուղարկած դիմումների տակ պետք է բացառել թուրքահայատակ որևէ հայ գործչի ստորագրություն, քանի որ այդ դեպքում հայության համար «կրնան մեծամեծ վտանգներ եւ ջարդեր յառաջ գալ»³:

Ազգային ժողովում քննարկելիք առաջին հարցը նվիրված էր Հայկական հարցի բարձրագույն պայմաններում **Ազգային կենտ-**

^{*} Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովի նիստերը տեղի էին ունենում ուրբաթ օրերը (տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 95, թ. 2):

¹ Վ. Մալեզեան, Ճամբուս վրայ, էջ 300-301:

² Նույն տեղում:

³ «Առաջամարտ», № 1093, 22 դեկտեմբերի 1912 թ. (4 հունվարի 1913 թ.):

րոնական վարչության* անելիքներին: Լսելով Ազգային վարչության ղեկուցումը Հայաստանում բարենորոգումների հարցն առաջ մղելու ուղղությամբ ձեռնարկած քայլերի և առաջիկա ծրագրերի մասին՝ Ազգային ժողովը հավանություն տվեց կատարած աշխատանքներին և արտահայտեց կատարյալ վստահություն՝: Այնուհետև հանդես եկավ Վարչության նախագահ Ստեփան Գարանյանը, որը հայտարարեց. «Վարչութիւնը իր ամբողջ զօրութեամբ պիտի պնդէ որ այդ բարեկարգութեանց գործադրութիւնը անխախտ կերպով ապահովուի, որպէս զի ո՛չ մեկ կերպով՝ ո՛չ առժամապէս և ո՛չ մշտապէս՝ դադրի կիրարկուելէ ո՛չ մէկ ատեն, ո՛չ մեկ մարմինէ կամ կառավարութենէ»:

Վարչության նախագահը վարչության բոնեիք ուղղությունը ամփոփեց հետևյալ երկու կետերի մեջ. 1) «Ազգային վարչութիւնը միշտ իր օրինական դիրքին վրայ մնալով պիտի պահէ իր յարաբերութիւնը Օսմանեան կառավարութեան հետ, շարունակելով պնդել իր պահանջներուն վրայ, 2) Կենսական, մշակեալ ու նպատակայարմար բարենորոգումներու գործադրութիւնը անխախտ կերպով պիտի ապահովէ հաստատ երաշխիքներով»:

Այդ լավատես խոստումները կկատարվեին, թե ոչ, ցույց կտար ժամանակը: Ի՞նչ ուժերի վրա էր հույսը դրել Ազգային վարչության ատենապետ Գարանյանը՝ հայտնի չէր: Բայց մի բան պարզ էր. ազգային դժվարին ճգնաժամի միջոցին Վարչությունը գիտակցում էր, որ ստանձնել է ծանր պատասխանատվություն:

Երբ սկսվեց մտքերի փոխանակումը, պատգամավոր Դավիթ

* Ազգային կենտրոնական վարչության անդամներ էին Ոսկան Մարտիկյանը, Լևոն Տեմիրճիրաչյանը, Մուրատ Պոյաճյանը (Մեծն Մուրատ), զոկ. Կ. Փաշայանը, Վահան Փափազյանը, զոկ. Տ. Երկանյանը, Եղիշե արքեպ. Դուրյանը, Գր. վարդ. Պալաքյանը և ուրիշներ (տե՛ս «Վէճ», № 1, սեպտեմբեր-հոկտեմբեր, 1933, էջ 92-ի տողատակ):

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 95, թ. 3-4 (Ազգային ժողովի 1912 թ. դեկտեմբերի 21-ի նիստում տված հաշվետվությունը տպագրված է «Առաջամարտ» թերթի 1912 թ. դեկտեմբերի 22-ի համարում):

Տեր-Մովսիսյանն առաջարկեց հետաձգել հարցի քննարկումը, քանի որ Վարչության ներկայացրած փաստաթղթին առանձին-առանձին չեն կցված հայկական հարցի լուծման ուղղությամբ Ազգային ժողովի, նրա Վարչության և պատրիարքարանի անելիքների մասին նախանշումներ: Նրա առաջարկը պաշտպանեց միայն պատգամավոր Արչակ Ալպոյաճյանը:

Ի դարմանս ներկաների, դաշնակցական պատգամավորները, որոնք, որպես կանոն, մշտապես հանդես էին գալիս Վարչության կողմից ներկայացվող համարյա բոլոր առաջարկների դեմ, այս անգամ ջերմորեն պաշտպանեցին քննության դրված փաստաթուղթը:

Վարդգեսը անտեղի համարեց նշված երկու պատգամավորների «բծախնդրութիւնը այս հանդիսաւոր եւ ծանրակշիռ ռոպեիս»: Նրանից հետո հանդես եկած մյուս դաշնակցական պատգամավոր Հարություն Շահրիկյանը թե՛ Վարդգեսին և թե՛ Դ. Տեր-Մովսիսյանին ու Ա. Ալպոյաճյանին հորդորեց չլարել միջնորդը և հանգիստ պայմաններում քննության առնել վարչության նախագահի ներկայացրած փաստաթուղթը:

Դրանից հետո Շահրիկյանը Դաշնակցության անունից հանդիսավոր շեշտերով հայտարարեց, որ իր կուսակցությունը, թողնելով տեսաբանական խնդիրները, հետևում է օրվա պահանջներին, որպեսզի պահպանի հայ ժողովրդի միաբանությունը Հայաստանի նահանգների բարենորոգումների շատ կենսական հարցում: Ահա այդ անսպասելի հայտարարությունն վերջավորությունը. «Եւ ես, իբր մէկ անդամը Քաղաքական Կուսակցութեան մը, անոր (Չ. Յ. Դաշնակցութեան:- Չ. Ս.) անունով կը յայտարարեմ թէ, մենք այ կը թողունք մեր տեսական ձգտումները եւ օրուան ձգտումներուն, ընդհանուր հայութեան պահանջներուն կը միանանք: Այսօր մեր սեփական քաղաքական դերին մէջ չենք այլեւս, մեր բոլոր ուժերը Ազգին ծառայութեան ու տրամադրութեան տակ կը դնենք, որպէսզի հասկցուի թէ ամբողջ հայ ազգը մէկ ձայն ունի»¹:

¹ «Առաջամարտ», № 1093, 22 դեկտեմբերի 1912 թ. (4 հունվարի 1913 թ.):

Դահլիճի տարբեր հատվածներից լավեցին ձայներ՝ «Պրավո»:

Բերացի եպիսկոպոս Դիմաքսյանը հարցումով դիմեց Ազգային Ժողովի Սառը Ժողովի ներկայացուցիչներին՝ նրանց հրավիրելով իրենց կարծիքը հայտնել «կառավարություն միանգամայն անբավարար նախագծի առթիվ» և տեղեկացնել, թե բարենորոգումների հարցի ձգձգման պատճառները որոնք են, և Ազգային Ժողովը ինչպիսի քայլեր է մտադիր ձեռնարկել Հայաստանում բարեփոխումների ներմուծումն ապահովելու և այնտեղ կարգուկանոն հաստատելու նպատակով¹:

Սառը Ժողովի անունից պատասխանելով Դիմաքսյանին՝ Ստեփան Էֆենդի Կարայանը հիշեցրեց, որ Հայաստանում բարեփոխումների հարցը ձգձգվում է արդեն կես դար, բազմիցս կազմվել են բարեփոխումների նախագծեր, որոնք մշտապես մնացել են թղթի վրա, սակայն այս անգամ Ազգային Ժողովը նախագծերով չի բավարարվելու և գործադրելու է բոլոր ջանքերը, որպեսզի անվերապահորեն ու մեկընդմիջտ կենսագործվի բարեփոխումների անցկացումը Հայաստանում, այնպես որ ոչ մի նախարարություն կամ իշխանություն որևէ այլ օղակ երբևէ ու որևէ մեկի միջոցով չկարողանա անգամ ժամանակավոր դադարեցնել բարեփոխումների կիրարկումը: Ուստի Սառը Ժողովը պահանջեց գործողությունների իր ծրագրի նկատմամբ վստահություն՝ այն հանգեցնելով երկու գլխավոր պահանջի. 1) Ժողովը չարունակելու է իր հարաբերությունները թուրքական կառավարության հետ՝ միաժամանակ հետևողական լինելով իր համոզմունքների ու պահանջների հարցում, 2) Պատկանելի երաշխիքների միջոցով ձգտելու է ապահովել կենսական ու մանրազնին մտածված բարեփոխումների անշեղ կիրարկում²:

Սառը Ժողովի հայտարարություններն ընդունվեցին աչխույժ հավանությամբ: Որոշ պատգամավորներ միայն ցանկու-

թյուն հայտնեցին իմանալ բարեփոխումների երաշխիքների մանրամասները: Այդ պահանջն անտեղի համարելով՝ Վ. Փափաղյանը միայն մատնանչեց, թե ազգային շահերի պաշտպանություն ընթացքում հայերը պետք է հենվեն Օսմանյան կառավարության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների վրա³:

Դրվեց Ազգային վարչությունը վստահություն հայտնելու հարցը: Ազգային Ժողովի բոլոր անդամներն անխտիր, այդ թվում՝ բոլոր դաշնակցական պատգամավորները, միաձայն քվեարկեցին Վարչությունը վստահություն հայտնելու օգտին: Ժողովը, առանց միջկուսակցական տարաձայնությունների, թուրքահայ ողջ ժողովրդի անունից արտահայտեց Հայկական հարցի լուծմանն իր նվիրվածությունն ու միակամությունը՝ դրանով իսկ հանդիսանալով նաև Կովկասի ու արտասահմանի ողջ հայության, ինչպես նաև Հայ Դատին համակիր բոլոր օտարազգիների ցանկությունների թարգմանը⁴:

Ազգային Ժողովի օրակարգային մյուս հարցը հատուկ մի հանձնաժողովի ստեղծումն էր, որը կոչված պիտի լիներ ուղղություն տալու Հայկական հարցի հետ առնչվող բոլոր խնդիրներին: Քննությունն առնելով հարցը՝ երեսփոխանները որոշեցին.

1) Ազգային վարչությանն առընթեր ստեղծել 8 հոգուց կազմված մի հատուկ մարմին՝ «Ապահովության հանձնաժողով» անվամբ⁵, 2) հանձնաժողովի նիստերը տեղի էին ունենալու պատրիարք Արչարունու նախագահությամբ, 3) Այն գործելու էր Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ համաձայնեցված, նրան աջակցելու էր՝ Հայկական հարցի լուծման օգտին ձեռք բերելու անհրաժեշտ նյութեր ու վկայություններ, 4) Հանձնաժողովի աշխատանքները տարվելու էին խիստ գաղտնի (դա կարևոր էր այն առումով, որ Բ. Դուռը պնդում էր, թե Պողոս փաշան Եվրոպայում հայերին ի նպաստ գործունեություն է ծավալել Կ. Պոլսի հայոց պատրիարքի անմիջական հրահանգներով: Պատրիար-

¹ «Առաջամարտ», № 1093, 22 դեկտեմբերի 1912 թ. (4 հունվարի 1913 թ.):

² АВПРИ, ф. «Политархив», гз. 1909-1912, д. 3457, л. 88.

³ Նույն տեղում:

¹ АВПРИ, ф. «Политархив», гз. 1909-1912, д. 3457, л. 88.

² Տե՛ս «Աւետարներ», № 2, 11 հունվարի 1913 թ.:

³ Տե՛ս «Վէճ», № Բ, նոյեմբեր-դեկտեմբեր, 1933, էջ 84:

քարանը ստիպված հայտարարել էր, թե հայկական պատվիրակության ղեկավարը գործում է միայն ու միայն Ս. Էջմիածնի կաթողիկոսի տված լիազորությունների սահմաններում և առնչություն չունի իր հետ)։

Ընդհանուր համաձայնությամբ Ապահովության (կամ Անվտանգության) հանձնաժողովի մեջ մտան պատրիարք Հովհաննես Արչարունին (նախագահ), որը վարելու էր հանձնաժողովի նիստը, նախկին պատրիարք Եղիշե Դուրյանը, վարդապետ Գրիգորիս Պալաքյանը, վարդապետ Գնել Գալամբեյանը, Ազգային վարչության նախագահ Ստեփան Գարայանը, վարչության անդամներ՝ անցյալում Թուրքիայի ֆինանսների նախարարության գլխավոր հրահանգիչ Օսկան Մարտիկյանը (որը շատ չանցած՝ երիտթուրքական հեղաշրջումից հետո, դառնալու էր Մահմուդ Շեվքեթ փաշայի կառավարության փոստի և հեռագրի նախարար), Վահան Փափաղյանը, պրոֆ. Տեր-Հակոբյանը¹։

Նշենք, որ առաջին իսկ նիստում Ապահովության հանձնաժողովն իր խորհրդականներ նշանակեց Մարատ Պոյաճյանին (Մեծն Մուրատ), Հարություն Շահրիկյանին և Գրիգոր Զոհրապին²։ Վերջինս ամենայն եռանդով ձեռնամուխ եղավ իր պարտականությունների կատարմանը։

Հանձնաժողովի աշխատանքը և հենց նրա գոյությունը առայժմ պետք է հնարավորինս գաղտնի լինեն։ Այն բանից հետո, երբ ողջ հայերի հոգևոր առաջնորդ Էջմիածնի կաթողիկոսը, դիմելով ռուսական կառավարությանը, պաշտոնապես կբարձրացներ Հայկական հարցը և կստանձներ այն վարելու պատասխանատվությունը, այդ պարագայում նա լիովին կգաղտնազերծեր իր գոյությունն ու գործունեությունը։

Ապահովության հանձնաժողովը պետք է մշակեր ենթադրյալ բարենորոգումների նախագիծ, ինչպես նաև Կոստանդնուպոլսում հարաբերություններ ու բանակցություններ սկսեր եվրոպական տերությունների և գլխավորապես ռուսական կառավարության հետ։ Բացի դրանից՝ հանձնաժողովն իր

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 95, թ. 4։

² Տե՛ս Հովհաննես արքհ. Հաճեան, Հայոց ճամբաներով, Ա հատոր, Թեհրան, 1965, էջ 329։

հրատարակած նյութերն ու տեղեկությունները տարածելու էր համապատասխան ոլորտներում՝ նպատակ ունենալով ներկայացնել իրերի փաստական դրությունը Հայաստանում, պարզաբանել թուրքահայերի կարիքները և դրանց բավարարման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցները¹։

Այդ օրերին Եգիպտոսից Կ. Պոլսով Փարիզ մեկնող Վահան Մալեգյանը պատրիարք Արչարունու հետ հանդիպման ժամանակ գոհունակություն էր հայտնել Ազգային ժողովի բռնած ճշմարիտ կեցվածքի և հատկապես Ապահովության հանձնաժողով ստեղծելու համար։

Ապահովության հանձնաժողովն աննկատ, բայց բուռն գործունեություն ծավալեց։ Առաջին իսկ քայլերից նա համոզվում է, որ եթե ինքը Թուրքիայի մայրաքաղաքում փորձի կապեր հաստատել պետությունների ներկայացուցիչների հետ, ապա սկզբից ևեթ կարող է իր գործը ձախողել և հայությունը մատնել նոր վտանգների։ Այդ իսկ պատճառով որոշում է գործի պաշտոնական տերը համարել միայն ու միայն Ամենայն հայոց կաթողիկոսին, մանավանդ որ նա գտնվում է Հայկական հարցի լուծմամբ առավել շահագրգիռ Ռուսական պետության սահմաններում։ Միաժամանակ Ապահովության խորհուրդը էջմիածնին հիշեցնում էր, որ թուրքահայության ներկայացուցիչը պատրիարքարանն է, և նա էլ մնում է իր ժողովրդի դատի իրական ղեկավարը։

Գտնվելով Օսմանյան կայսրության մայրաքաղաքի հենց կենտրոնում և մշտապես հաղորդակցվելով պետությունների, հատկապես Ռուսաստանի դեսպանությունների հետ, ականատես լինելով Կ. Պոլսում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, որոնք որոշում էին Հայկական հարցի ճակատագիրը, Անվտանգության հանձնաժողովը համոզված էր, որ հայոց կաթողիկոսը և Պողոս փաշայի գլխավորած պատվիրակությունը հօգուտ ընդհանուր նպատակի պարտավոր են կանոնավոր հաղորդակցվել իր հետ, տեղեկացնել իրենց գործողությունների մասին, ինչպես նաև իրենց կողմից տարվող աշխատանքներում

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 95, թ. 4-5։

վրա, որպեսզի նա չուտափույթ վերականգնի սրբազանի իրավունքները:

Վահան Մալեգյանն իր հուշերում գրում է, որ «այդ մեծարժեք եկեղեցականին վարկն ու պատիւը» վերահաստատելու համար Հայկական հարցով մտահոգ գործիչները գործադրում էին ամեն ջանք¹:

Օրմանյանի հարցը անձի խնդիր չէր լուրջ: Բազմաթիվ հայ եպիսկոպոսներ կային, որոնց գոյությունը ո՛չ միայն պատմություն, այլև ժամանակիցների համար «անհիշատակելի զանցառություններ» էին: Բայց Օրմանյանը հասարակական վիթխարի դեմք էր, առաջնորդ թուրքահայ հասարակական կյանքի մի որոշակի մտայնություն պատկանող մարդկանց²: Նա նաև որոշակի բարոյական արժեքների մարմնացում էր: «Եւ հետեւաբար անոր անհատականությունը նոյնանալով իր ներկայացուցած բարոյականին ու մտայնությունն՝ ըստ այնմ ալ կ'ենթարկուի հասարակությունն եւ պատմությունն դատաստանին»³, - կարդում ենք մի հրատարակության մեջ:

Եվ ահա Ազգային ժողովը երրորդ անգամ էր անդրադառնում Օրմանյանի խնդրին: Կասկած չկար, որ «Օրմանյանի գործի» քննության ժամանակ անարդարացի ամբաստանվածը իր խոսքում ասելու էր այն, ինչ տարբեր առիթներով ասել ու կրկնել էր անցած տարիների ընթացքում և պահանջելու էր (այլ ոչ թե խնդրելու) վերականգնել արդարությունը:

Եթե նախորդ երկու հարցերի քննարկման ժամանակ դաշնակցական պատգամավորները մյուսների հետ համերաշխ էին, ապա Օրմանյանի հարցում առաջվա պես հանդես բերեցին անդիջում վերաբերմունք: Նիստում ծավալված վիճաբանությունների ընթացքում նրանք վճռականապես դեմ արտահայտվեցին սրբազանի արդարացմանը և նախքան քվեարկությունն

սկսելը հեռացան նիստից: Իրենց քայլը նրանք պատճառաբանում էին նրանով, որ նախկին պատրիարքի նկատմամբ ժամանակին հարուցված մեղադրանքը միանգամայն ճիշտ է եղել:

Քվեարկության է դրվում որոշման հետևյալ նախագիծը. «Ժողովը խղճի կատարեալ հանդարտութեամբ և իր պատասխանատվութեան բարձրութեան գիտակցութեամբ՝ կորոշե մերժել եղած բոլոր ամբաստանությունները և բոլորովին անպարտ կը նկատե Պոլսոյ նախկին պատրիարք Օրմանեան Մաղաքիա արքեպիսկոպոսը իր մասին եղած հակասահմանադրական և ապօրեն արարքներէն»:

Մեծամասնության կողմ քվեներով նախագիծն ընդունվում է: Զնջված էին Օրմանյան սրբազանին բարդած մեղքերը, վերականգնված էր նրա պատիվը: Այդ վճիռը շատերի համար անակնկալ էր: Արդարացի որոշումով, գրում էր Վ. Մալեգյանը, «խապառ կը ջնջուէր անոր պատուական անունին փակցուած արատը՝ որ մեր ժամանակակից պատմութեան մէջ սեւ էջ մը աւելցուց հեղինակներուն սխրագործութեանց վրայ»¹:

Ազգային ժողովի կողմից Օրմանյանին անպարտ ճանաչելուց հետո Պողոս Նուբարը Վ. Մալեգյանին պատվիրում է անմիջապես հանդիպել նրան և կրկին խնդրել մաս կազմելու Ազգային պատվիրակության: Մալեգյանը կատարում է այդ հանձնարարականը: Սրբազանը նպատակահարմար է գտնում շոչափել Ազգային ժողովի նախագահ Հայկ Սոջասարյանի տրամադրությունը: 1913 թ. հունվարի 8-ին նա Վահան Մալեգյանին գրում է. «Այսօր տեսակցութիւն ունեցայ Ազգային ժողովոյ ատենապետ Հայկ Սոջասարեանի եւ ազդեցիկ երեւոյթիս Գարգեւ Փափազեանի հետ: Երկուքն ալ բացարձակապես դէմ են Վարչութեան ատենապետ Գարանեան Ստեփան էֆենտիի ուղղութեան², եւ կո'ւզեն որ հարկաւ Փարիզ երթամ»³:

¹ Վահան Մալեգյան, ճամբուս վրայ (Յուշաբաղ), էջ 316:

² Տե՛ս «Օրմանեան հանրային խղճին և դատաստանին առջև», Կ. Պոլիս, 1913, էջ 4:

³ Նույն տեղում, էջ 5:

¹ Վ. Մալեգյան, ճամբուս ծայրը, հատ. Բ, Փարիզ, 1955, էջ 316:

² Նշենք, որ Ստեփան Գարանյանը և նրա կողմնակիցները շարունակում էին դեմ արտահայտվել Օրմանյանին Ազգային պատվիրակության կազմում ընդգրկելուն:

³ Վ. Մալեգյան, ճամբուս ծայրը (Յուշաբաղ), էջ 302:

Բայց Օրմանյանը, այնուամենայնիվ, վերջնականապես որոշում է չմեկնել Փարիզ: Նա դրա համար ուներ մի շարք փաստարկներ. 1) էջմիածնի կաթողիկոսը չի ցուցաբերում շահագրգռություն իրեն տեսնելու Ազգային պատվիրակության կազմում, 2) Իր՝ Փարիզ մեկնելուն վճռականապես դեմ է Ազգային վարչության անդամների մեծ մասը, 3) Առողջական վիճակի վատթարացման պատճառով կարիք ունի բուժման¹:

Դեռ մինչև իրեն անպարտ ճանաչելու մասին Ազգային ժողովի որոշումը Օրմանյանի բարձր հեղինակությունն առաջվա պես անսասան էր մնացել ոչ միայն ազգային իշխանությունների և թուրքական կառավարության, այլև Կ. Պոլսի դիվանագիտական շրջաններում: Իսկ հիմա նրա հետ հաշվի էին նստում բոլորը: Պատահական չէ, որ դեկտեմբերի 28-ին* Կ. Պոլսի անգլիական և ֆրանսիական դեսպանները այցելեցին նախկին պատրիարքին և նրա հետ երկար զրույց ունեցան տարբեր հարցերի շուրջ, հատկապես «Հայաբնակ զավառներում ստեղծված դրուժեան մասին»²:

Ազգային ժողովի դեկտեմբերի 21-ի նշանավոր նիստը հետաքրքրություն էր առաջացրել դիվանագիտության շրջաններում:

Դեկտեմբերի 27-ին արտգործնախարար Սազոնովին հղած № 136 հեռագրով դեսպան Միխայիլ Նիկոլաևիչ Գիրսը նշում էր, որ այդ պատմական նիստը «լուրջ նախազգուշացում է կառավարության համար... Եպիսկոպոս, Դիմաքսյանը չքաչվեց անգամ ասել, թե Օտոմանյան կառավարությունն, անշուշտ, ոչինչ չի անելու Հայերի համար, որոնց ստրուկներ է համարում, այլ ոչ թե հպատակներ»³: Նա հաղորդում էր, որ նիստը նշանավոր դարձավ նաև նրանով, որ «վերականգնեց Օրմանյանի բարի անունն ու պատիվը՝ ճանաչելով նրան բարդած մեղադրանք-

ների անհիմն լինելը»: Մյուս հանգամանքը, որի վրա արտգործնախարարի ուշադրությունը հրավիրում էր Գիրսը, դաշնակցականների բռնած դիրքն էր ժողովում, որոնք «միշտ եղել են Օրմանյանի ամենակատաղի հակառակորդները»: Ապա՝ «այժմ էլ նրանք չկամեցան մասնակցել նախկին պատրիարքի ռեաբիլիտացիային, բայց որոշեցին չխանգարել դրան՝ Հայտարարելով, որ «պատմական պահ» պահանջում է դադարեցնել ներքին պառակտումները և, որ այդ պատճառով իրենք ձեռնպահ կմնան քվեարկելուց»: Այդ ամենից դեսպանը ենթադրում էր, որ իրենց ոխերիմ թշնամու՝ «խելացի ու տաղանդավոր Օրմանյանի նկատմամբ դաշնակցականների այդօրինակ հաշտվողական վարքը թելադրված է «համազգային գործում թեկուզև ժամանակավոր դաշնակից ձեռք բերելու մտահոգությամբ»: Այսպիսով, հայտնում էր նա, «հայ կուսակցությունների միջև տեղի ունեցավ եթե ոչ հաշտություն, ապա զինադադար... ներկայումս Հայերը հանդես են բերում ազգային հողի վրա միավորվելու աներկբա միտումներ, որոնց դեմ Բ. Դուան համար դժվար կլինի պայքարել»¹:

Ազգային ժողովի կարևորագույն նիստից հետո Ապահովական հանձնաժողովը, կատարելով նրա հանձնարարականը, անմիջապես ձեռնարկեց Հայաստանի բարենորոգումների ծրագրի (հիմնական դրույթներ) նախագծի պատրաստումը և մի քանի օր տևած լարված աշխատանքից հետո ավարտեց փաստաթղթի տեքստը: 1878 թ. ի վեր՝ Բեռլինի կոնգրեսից հետո, սա երրորդ դեպքն էր, որ Հայաստանի բարենորոգումների ծրագիրը կազմում էին իրենք՝ Հայերը²: Նախագծում հիմնականում ներառված

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1909-1912, д. 3457, л. 88 об.-89.

² Մկրտիչ Խրիմյանը և Խորեն Նար-Պեյը 1878 թ. հունիսի 25-ին Բեռլինի կոնգրեսին ներկայացրել էին «Օսմանյան Հայաստանի կազմակերպական կանոնագիր» ծրագիրը: Այդ փաստաթղթի համաձայն՝ Հայաստանը պետք է ունենար երկրի բարձր կառավարիչ՝ վարչապետ, որին պետք է իրավունք վերապահվեր նշանակել, հսկել և արձակել անխտիր բոլոր պաշտոնյաներին: Փաստաթղթում ներկայացված էին օրենսդրական մարմնի՝ ընդհանուր ժողովի դերը, կազմը և այն ընտրելու եղանակը: Դատարանները լինելու էին երկու տեսակի՝ շերի և հասարակ: Օրենսգրքի մշակումը հիմնված էր լինելու

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 95, թ. 16:

* Մի այլ աղբյուրում՝ դեկտեմբերի 27-ին (տե՛ս «Կովկասի լրագրեր», № 2, 3 հունվարի 1913 թ.):

² «Կովկասի լրագրեր», № 2, 3 հունվարի 1913 թ.:

³ АВПРИ, ф. "Политархив", г. 1909-1912, д. 3457, л. 88.

էին ՀՅ դաշնակցութեան Կ. Պոլսի Կ. Կոմիտեի կողմից ներկայացված առաջարկները:

1913 թ. հունվարի սկզբին Ապահովութեան հանձնաժողովի կազմած նախագիծն իր հավելվածներով հանձնվել էր պատրիարք Հովհաննես Արշարունուն:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔ

1912 թ. նոյեմբերի կեսերից Հայաստանի բարենորոգումների խնդիրների շուրջ Կ. Պոլսում սկսվում է տեսակցությունների մի երկար շարք հայոց պատրիարքարանի ներկայացուցիչների և Թուրքիայում օտարերկրյա դիվանագիտական ծառայությունների պատասխանատուների միջև, որը տևում է մինչև 1913 թ. նոյեմբերի վերջերը: Այդ տեսակցությունները տեղի են ունեցել ղեկավարներում, հայոց պատրիարքարանում, պատրիարքի տանը: Բոլոր այդ հանդիպումները նկարագրված են ամենայն մանրամասնությամբ և շատ անգամ հարց ու պատասխանի ձևով: Դրանք ցույց են տալիս, թե Թուրքահայություն համար այդ ճակատագրական պահին Կ. Պոլսի պատրիարքարանը ինչ-

եվրոպական իրավագիտություն սկզբունքների վրա: Այդ ամենից հետո նախատեսվում էր եվրոպական վերահսկիչ մարմնի ստեղծում՝ ծրագրի իրականացման ուղղությամբ տարվելիք աշխատանքները վերահսկելու համար: Խրիմյանի և Նար-Պեյի հեղինակած ծրագրին զուգահեռ՝ Բեռլինի կոնգրեսին ներկայացվել էր նաև եգիպտական նշանավոր պետական ու հասարակական գործիչ Նուբար փաշայի կազմած Հայաստանի բարենորոգումների նախագիծը, որը զգալիորեն տարբերվում էր առաջինից: Այստեղ բարենորոգումների խնդիրը դրված էր ավելի իրական հողի վրա: Նուբար փաշան մոնոսթերայության պատանհաններ էր քաշել պետական կյանքի երեք խոշոր գործառույթների միջև և դրանց հատկացնում էր բավականին չոչափելի դեր: Ծրագիրը նախատեսում էր արմատապես փոխել Թուրքահայաստանում տիրող հարկային կարգը՝ առաջարկելով եկամտահարկ՝ կալվածատոմարի կամ այսպես կոչված cadastre-ային կարգով, որը ձեռնառու նորություն կլիներ հնարարյան հարկային ձևեր կիրառող Թուրքական պետության համար:

պիսի գերլարված դիվանագիտական աշխատանքի էր լծված*:

1912 թ. նոյեմբերի 13 (26)-ին պատրիարք Արշարունին հայտնի հասարակական գործիչ, նշանավոր իրավաբան և գրող, Թուրքական խորհրդարանի նախկին պատգամավոր Գրիգոր Զոհրապի և Թուրքիայի ֆինանսների նախարարության գլխավոր հրահանգիչ ու հայոց ազգային ժողովի խառնակազմ խորհրդի անդամ Օսկան Մարտիկյանի ընկերակցությամբ այցելում է Թուրքիայում ոռոսական ղեկավար Միխայիլ Նիկոլաևիչ Գիրսին՝ պարզելու համար, թե Թուրքահայերը հույս ունենա՞ն, որ Ռուսաստանը իրենց կօգնի:

Դեպքում ուշադրություն ուղղելով Թուրքիայի արևելյան նահանգներում հայ ժողովրդի տագնապալի վիճակին՝ պատրիարքը խնդրեց դիմել իր կառավարությանը, որպեսզի նա,

* Ձանազան առիթներով տեղի ունեցած այդ տեսակցություններին հայոց պատրիարքարանի կողմից մասնակցել են Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Հովհաննես արքեպիսկոպոս Արշարունին, Հմայակ եպիսկոպոս Դիմաքսյանը, Գրիգոր Զոհրապը, Համբարձում Պոյաճյանը (Մուրադ), Նշան Գալբաճյանը, Գարայանը, Սիմոն Զավարյանը, բժիշկ Զավրիևը և այլ անձինք: Նրանք տեսակցել են Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Գ. Սազոնովի, նույն մինիստրության արևելյան գործերի տնօրեն իշխան Տրուբեցկոյի, Պոլսի ոռոսական ղեկավար Դր Գիրսի, ղեկավարատան առաջին թարգման Ա. Մանդելշտամի, խորհրդական Գուլկևիչի, Պոլսի գերմանական ղեկավար Վանդենհայմի, ղեկավարատան առաջին թարգման կոմս Քանիցի, այլ թարգման դոկտ. Շյոնբերգի, գերմանացի հայասեր դոկտ. Լեփսիուսի, Պոլսի անգլիական ղեկավար սըր Զերալդ Լոուիթերի, ղեկավարատան առաջին թարգման միստեր Ֆիցմորիսի, Պոլսի ֆրանսիական ղեկավար Մորիս Բոմպար, ղեկավարատան առաջին թարգման Լըդուի, Պոլսի ավստրիական ղեկավար մարկիզ Պալլավիչինի, ղեկավարատան խորհրդական էդուարդ Օտտոյի հետ: Հայոց Պատրիարքարանի ներկայացուցիչները տեսակցություններ են ունեցել նաև Պոլսի իտալական ղեկավարատան գործերի հավատարմատար կոմս Նանի Մոչենիգոյի, Թուրքիայի ներքին գործերի մինիստր Թալեսթ բեյի, իթիհատական Նալի բեյի և մի քանի այլ անձանց հետ: (Տե՛ս «Էջմիածին» հանդեսի 1965 թ. փետրվար-մարտ-ապրիլ և մայիս-հունիս-հուլիս երկու համարներում լույս տեսած տեսակցությունների արձանագրությունները և դրանց առաջաբանը՝ Ն. Միքայելյանի հեղինակությամբ):

հաշվի առնելով Բալկանյան պատերազմով առաջ եկած նոր կացությունը, նպաստի թուրքահայությունը վիճակի փոփոխությունը: Դեռ պահանջը, որի կողքին էր դեռ պահանջության առաջին թարգման (դրագոման) Ա. Մանդելշտամը, պատրիարքին հարցրեց, թե արդյոք չի՞ բարելավվել հայերի դրությունը համեմատած երկու տարի առաջվա հետ: «Վիճակն ավելի է վատթարացել», - պատասխանում է պատրիարքը¹:

Դեռ պահանջ անկեղծանալով ասում է, որ որպես թուրքիայում իր կառավարությունների ներկայացուցիչ պարտավոր է բարիդրացիական հարաբերություններ մշակել օսմանյան կառավարության հետ, ուստի ստիպված է խոսել շատ վերապահ: Այնուամենայնիվ նա նշում է. «Ես շատ կսիրեմ հայ ժողովուրդը, որուն համար մեծ համակրանք ունիմ: Նույն համակրանքը ունի նաև իմ կառավարությունս, ու ասոր ապացույցն է հայոց գոհացուցիչ վիճակը Կովկասի մեջ, ուր Ձեր Կաթողիկոսությունը այնքան հարգված է մեզմէ: Արդ, այժմ հաճեցեք ըսել, թե ի՞նչ դարման կառաջարկեք հայոցդ աննախանձելի վիճակին հիմնական բարվորման համար»²:

Պատրիարքը պատասխանում է, որ թուրքահայաստանի բարեկարգման հարցը տասնամյակներ շարունակ դրված է դիվանագիտական սեղաններին, բայց որևէ գոհացուցիչ ելք չի ունեցել, որի պատճառը եվրոպական պետությունների և օսմանյան կառավարության անտարբերությունն է: Ներկա պարագաներում, ասում էր պատրիարքը, իրենց միայն մի բան է մնացել՝ «խնդրել եվրոպական պետութեան մը թեւարկութիւնը թրքահայաստանի վրայ: Ռուս պետութիւնը, իբրև մերձաւոր դրացի հզօր պետութիւն, կրնայ իր թեւարկութիւնը եւ պաշտպանութիւնը ընծայել մեզ, ինչպես Ավստրիան պաշտպանեց ու բարեկարգեց Հերցեգովինան»³:

Այնուհետև խոսք են առնում Ջոհրապն ու Մարտիկյանը: Նրանք դեռ պահանջն ասում են, որ հայ ժողովուրդը, որի դրու-

թյունը թուրքիայում վատթարանում է օրեցօր, իր սարսափելի վիճակից դուրս գալու այլ ելք չի տեսնում, քան Ռուսաստանին դիմելը: Ջոհրապը շեշտում է, որ հայ ժողովուրդը կորցրել է իր բոլոր հույսերը նույնիսկ եվրոպական վերահսկողությամբ թուրքական ինչ-ինչ բարենորոգումների նկատմամբ: Մարտիկյանը կարծիք է հայտնում, որ մակեդոնական բարենորոգումների անհաջող արդյունքը վկայում է, որ հնարավոր չէ հասնել բնակչության համար որևէ շոշափելի արդյունքի՝ պահպանելով թուրքական վարչարարությունը: Ի վերջո Ջոհրապն ու Մարտիկյանը գտնում են, որ հայ ժողովրդին կարող են ազատագրել միայն առավել արմատական միջոցներ, այսինքն՝ ոռուսները տվյալ իրադրության մեջ պետք է դիմեն վճռական գործողությունների՝ ընդհուպ մինչև հայկական վիլայեթների գրավումը: Ըստ որում, այդ վիլայեթները ոռուսական զորքերը պետք է գրավեն ոչ թե ժամանակավորապես, այլ մշտական: Տվյալ հարցում, շարունակում են նրանք, միասնական են թուրքահայաստանի բուն բնակչությունը և հայկական բոլոր քաղաքական կազմակերպությունները:

Դեռ պահանջ կարեկցանքով նկատում է, որ մինչև չվերջանա Բալկանյան պատերազմը, հազիվ թե կարելի կլինի պետությունների առջև ամբողջ ծավալով բարձրացնել հայերին հուզող հարցերը: Ապա նա շեշտում է, որ պատերազմի հետևանքները վերացելու համար նախատեսվում է տերությունների ներկայացուցիչների կոնֆերանս, որտեղ հնարավոր կլինի քննարկել նաև հայկական հարցը:

Մ. Ն. Գիրսը ցանկանում է իմանալ, թե արդյո՞ք հայկական խնդրի լուծման շուրջ համախմբված են բոլոր հայերը, թե՞ նրանց միջև կան տարաձայնություններ: Նրան հատկապես հետաքրքրում էր Դաշնակցության բռնած դիրքը, ուստի միջնորդելով իր խոսքը ասում է, որ ինքը համոզված չէ, թե այդ կուսակցությունը կհամերաշխվի հայկական մյուս ուժերի հետ: «Կցաւիմ, որ դաշնակցական կուսակցութեան ընթացքը ազգին համար վնասակար եղած է: [Բայց չէ՞ որ] ազգին ուժը իր ամ-

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 95, թ. 5:

² «Էջմիածին», փետրվար-մարտ-ապրիլ, 1965, էջ 157:

³ Նույն տեղում:

¹ «Էջմիածին», փետրվար-մարտ-ապրիլ, 1965, էջ 158:

բողջութեան մեջ է»¹: Ապա նա ավելացնում է, որ թեև հիշյալ կուսակցությունը տևական ժամանակ հանդես էր գալիս Ռուսաստանի դեմ, բայց հայ ազգը պետք է վստահ լինի, որ իր երկիրն ու կառավարությունը մեծ համակրանք ունեն հայ ժողովրդի նկատմամբ:

Վերջում ղեսպանը տեղեկացնում է, որ ռուսական կառավարությունը թուրքական կառավարությանը զգուշացրել է, որ նա Ռուսիանիայից գաղթող մուհաջիրներին չվերաբնակեցնի Ռուսաստանի սահմանին մոտիկ վիլայեթներում: Հրաժեշտի ժամանակ Գիրսը խրախուսանքով ասում է, որ հայկական մամուլն իրեն պատշաճ ու խելամտորեն է դրսևորում այդ քաղաքական պահին¹:

Հայկական պատվիրակության հեռանալուց հետո ղեսպան Գիրսը մի քանի օր անց զեկուցագիր է ներկայացնում իր արտաքին գործերի նախարար Սերգեյ Սազոնովին, ուր նաև ասված էր. «Հաշվի առնելով, որ մեր հետաքրքրություններից շատ հեռու է հայերին մեզնից վանելը, ես իմ զրուցակիցներին պատասխանեցի, որ ռուսական կառավարությունը, հետևելով դարավոր ավանդույթներին, խոր կարեկցանքով է վերաբերվում հայ ժողովրդի տառապանքներին... բայց ներկա պահը, երբ դեռ չի լուծարվել բալկանյան պատերազմը, հարմար չէ հանդես գալ տվյալ հարցով»²:

Իր ճեպագրի եզրափակիչ մասում Գիրսն ընդգծում էր, որ Գ. Զոհրապը և Մարտիկյանը ճշմարտապես են արտացոլում թուրքահայերի մեծամասնության հայացքներն ու հույսերը: «Զրույցը, - շարունակում էր Գիրսը, - որ ես օրերս ունեցա պատրիարք Արշարունու հետ, հենց նույն Մարտիկյանի ներկայությամբ, միանգամայն համոզեց ինձ դրանում: Պայծառափայլը, կրկնելով հայ պատգամավորների բոլոր գանգատները, ջերմորեն խնդրեց, որ Ռուսաստանը պաշտպանի ղեբախտ հայ ժողովրդին»³:

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 95, թ. 6:

² АВПРИ, ф. "Политархив", д. 3459, л. 87-89. Делегация посла в Константинополе Гирса министру иностранных дел от 26 ноября 1912 г., № 117.

³ Նույն տեղում:

* * *

1912 թ. նոյմբերի 21-ին պատրիարքարանի Ապահովական հանձնաժողովի հանձնարարությամբ Գրիգոր Զոհրապը հանդիպում է ունենում Կ. Պոլսում Գերմանիայի ղեսպան Վանգենհայմի հետ: Պատրիարք Արշարունու պատվիրակը դիվանագետին հիշեցնում է, որ գերմանական կառավարությունը միշտ համակիր է եղել հայերի արյունը գետերի պես հեղած համիդյան իշխանություններին: Բայց այժմ, ելնելով Կիլիկիայում իրենց նկատմամբ գերմանացիների հանդուրժողական դրսևորումների փաստից, հայերը մտածում են, թե միգուցե Բեռլինը փոխել է իր հայատյաց վերաբերմունքը՝ անշուշտ հետապնդելով սեփական շահերը, գիտակցելով, որ այդ ժողովրդի ժրջան աշխատասիրությունը կարող է ծառայեցնել իր նպատակների իրագործմանը: Սուսքի վերջում նա ղեսպանին խնդրում է իր պետության պաշտպանության տակ առնել անհուն ղեբախտություններ կրած կիլիկիահայությունը:

Գեսպանը պատասխանում է, որ Կիլիկիայում գերմանացիները չեն կարող միակողմանի պաշտպանության տակ առնել որևէ ազգության, որ իրենց նպատակը Կիլիկիայում ընդհանուր հանգստություն ապահովելն է, քանի որ երկրամասի անդորրության խանգարումը մեծ կորուստ է գերմանական շահերին:

Պատրիարքի պատվիրակի խնդրանքի վրա ղեսպանը խոստանում է հրահանգել Ադանայի հյուպատոսին, որ նա ավելի սերտ հարաբերություններ մշակի տեղի հայոց առաջնորդի հետ, որպեսզի կարողանա նրանցից տեղեկանալ երկրի իրական կացությամբ¹:

* * *

Սրբազան պատրիարքի և Ազգային կենտրոնական վարչության կողմից լիազորված պատվիրակ, Ապահովության հանձնաժողովի անդամ պրոֆ. Տեր-Հակոբյանը Կ. Պոլսի անգլիական ղեսպանությունում ղեկտեսներին 24-ին տեսակցություն է

¹ Տե՛ս «Էջմիածին», փետրվար-մարտ-ապրիլ, 1965, էջ 158-159:

ունենում դեսպան Զերալդ Լոութերի հետ: Ընդունելությունը սիրալիրներից չէր:

«- Ի՞նչ են ուզում հայերը,- տարակուսանքով հարցրել էր դեսպանը այցելուին:

- Հայերի վիճակը նախկինի պես մնում է անմխիթարելի, - պատասխանել էր Տեր-Հակոբյանը: - Սպանությունները, կողոպուտները և ամեն տեսակ բռնությունները մթազնում են խաղաղ բնակչության առօրյան, որին չի պաշտպանում կառավարությունը բռնադատներից:

- Մեր հյուպատոսները նման բաներ չեն հաղորդում մեզ: Ըստ մեր տեղեկությունների սպանություններ տեղի են ունեցել միայն Սղերդի շրջանում:

- Սպանությունները սովորական երևույթ են բոլոր նահանգներում և դառնում են անխուսափելի այն պատճառով, որ հայերն անզեն են, իսկ քրդերը՝ զինված, որովհետև հայերից խլում են զենքը, իսկ քրդերին՝ զինում: Ահա թե ինչու հայերից ոչ մեկը վստահ չէ և չի կարող վստահ լինել վաղվա օրվա նկատմամբ:

- Քրդությունն իրականում խաղաղ և հյու-հնազանդ ժողովուրդ է, ո՞նց թե նրանք վայրագություն են անում,- հակաճառեց անգլիական դեսպանը:

- Մեր երկրի դժբախտությունն այն է, որ չկա օրենքի վրահենվող իշխանություն: Թուրքերը մշակում և հրատարակում են օրենքներ, բայց անփույթ ու անուժ են դրանք կյանքում կիրառելու, որը վայրի ցեղերին լայն հնարավորություն է տալիս չվայտ կյանք վարելու, իսկ տգետ պաշտոնյաներին՝ կամայականություններ անելու:

- Ուրեմն, ի՞նչ են պահանջում հայերը,- հարցնում էր դեսպանը:

- Կյանքի, պատվի և գույքի ապահովում,- ահա մեր միակ ցանկությունը:

- Ինչպես Անգլիայում է,- խայթիչ հեզանքով ընդհատում էր դեսպանը:

- Օ, ո՛չ, մենք դեռ հեռու ենք Անգլիայից: Մեր ամենալավ ցանկությունները հանգեցնում են այն տարրական հասկացու-

թյուններին, որոնք կազմում են ամենավերջին անգլիացու անբաժանելի սեփականությունը:

- Դժբախտաբար, անգլիական դատավորները չեն կարող լողալով հասնել Վան ու Մուշ,- ասաց դեսպանը,- այդ պատճառով էլ ի՞նչ նշանակություն կարող են ունենալ բոլոր խոսակցությունները բարենորոգումների մասին, երաշխիքների մասին և այլն...

Այստեղ դեսպանության երկու անդամներից մեկը, որ մասնակից էր խոսակցությանը, դեսպանի դիտողության դեմ առարկում է՝ ասելով, որ եթե Եվրոպան հայերից հրաժարվի և չկարգավորի նրանց դրությունը, ապա Թուրքիայում նրանց վիճակը անտանելի կդառնա, և նրանք ստիպված կլինեն ձեռք մեկնել իրենց հարևան Ռուսաստանին:

- Դա կնշանակեր,- միջամտեց դեսպանը,- կրակից ազատվելուց հետո բոցն ընկնել:

- Ավելի լավ չի՞ լինի,- առարկում է նույն դիվանագետը,- խեղդվել ծովում, քան տանջվել սատանայի ձեռքում»¹:

Այդ ժամանակ Տեր-Հակոբյանը ոտքի է կանգնում և հայտարարում է, որ իր այցելության նպատակն է դեսպանի միջոցով անգլիական կառավարությանը հայտնել հայոց պատրիարքի խնդրանքը՝ աջակցելու Հայկական հարցի լուծմանը: Ըստ Տեր-Հակոբյանի պատմածի՝ նրա այդ խոսքերից դեսպանը նկատելիորեն շփոթվել էր և բոլորովին այլ, առավել քաղաքավարի տոնով ասել էր, որ պատրիարքի խնդրանքը անպայման կհասցնի անգլիական կառավարությանը:

Երբ Տեր-Հակոբյանը դուրս է գալիս դեսպանի մոտից, նրան մոտենում է գրույցին ներկա գտնվող դեսպանատան առաջին թարգմանը՝ էրզրումի նախկին հյուպատոս Ֆիցմորիսը, և փորձում հանգստացնել հուզված հայ գործչին՝ հավատացնելով, որ դեսպանի հայացքները չեն համապատասխանում անգլիական կառավարության մտադրություններին, որը շատ բարյացակամ է տրամադրված հայերի և նրանց հարցի նկատմամբ²:

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 95, թ. 7-8:

² Տե՛ս նույն տեղում:

Դեկտեմբերի 28-ին տեղի ունեցավ Կենտրոնական վարչության Ապահովության Հանձնաժողովի անդամ Օսկան Մարտիկյանի Հանդիպումը ռուսական դեսպանության առաջին թարգման Անդրե Մանդելշտամի հետ:

Խոսակցության սկզբում Ա. Մանդելշտամը ցանկանում է իմանալ, թե որն է Նուբար փաշայի գլխավորած Հայկական պատվիրակության առաքելությունը Փարիզում: Մարտիկյան էֆենդին բացատրում է, թե ինչ պայմաններում է ծագել պատվիրակություն ունենալու միտքը. այն արդյունք է ռուսական կառավարությանը կաթողիկոսի հղած դիմումի և այն բանակցությունների, որ Պետերբուրգում վարել է եպիսկոպոս Մեսրոպը կաթողիկոսի անունից: Նա նշում է նաև, որ Պատվիրակությունն առայժմ որևէ ակտիվություն չի նախաձեռնել, միայն հանդիպել է Ֆրանսիայի վարչապետ և արտաքին գործերի նախարար պարոն Ռայմոն Պուանկարեի հետ և նախապես ստացել է ֆրանսիական կառավարության աջակցությունը:

Ապա խոսվում է Հայկական բարենորոգումների մասին, և թարգմանը Մարտիկյանին հարցնում է, թե պատրիարքարանն ունի՞ արդյոք պատրաստի նախագիծ, և ի՞նչ է այն իրենից ներկայացնում:

Հայ պատվիրակը պատասխանում է, որ նախագծի մասին մտածելուց առաջ իրենց անհրաժեշտ է իմանալ ռուսական կառավարության տեսակետը: «Նախագիծը կազմելիս, - ասում է նա, - մենք կցանկանայինք հենվել դեսպանատան տված հրահանգների վրա, որպեսզի կարողանանք հաշվի առնել հնարավորության սահմանները և հաստատորեն կանգնել իրականանալի ձգտումների հողի վրա: Այն, ինչ մենք կարող ենք և ունենք ձեզ այժմ հայտնելու, անկախ ձեր հրահանգների, բարենորոգումների գործի վրա եվրոպական վերահսկողության անխուսափելիության գիտակցումն է: Ահա ամեն տեսակ բարեփոխումների միակ և անհրաժեշտ պայմանը մեր իրավիճակում:

Ուրեմն, ցանկալի չէ, որ ընդհանուր կառավարիչը լինի թուրք», - եզրափակում է պարոն Մանդելշտամը:

«- Ոչ մի դեպքում: Փորձը ցույց է տալիս, որ թուրքերն իրենց

էությունը պիտանի չեն մեր կյանքում բարեփոխումներ անելու: Մեզ հարկավոր է այնպիսի վերահսկողություն, ինչպիսին կատարվում է Մակեդոնիայում:

- Արդյո՞ք բոլոր հայկական կուսակցություններն են այդպես մտածում, - հարցրեց Անդրե Մանդելշտամը:

- Եթե խոսքը Դաշնակցություն կուսակցության մասին է, ապա այն հայկական հարցում միակարծիք է Ազգային ժողովի հետ: Մեր միջև տարաձայնություններ չկան»:

Վերջում Մանդելշտամը, անդրադառնալով Վանում Գափամաջանի սպանությանը, ուզում էր իմանալ, թե արդյո՞ք դա դաշնակցականների գործը չէ: Մարտիկյանից լսելով, որ հանցագործության մեղավորների մասին տարածված լուրերի առիթով դաշնակցական մամուլը հայտարարել է, թե կուսակցությունը վաղուց հրաժարվել է ահաբեկչական գործողություններից, Մանդելշտամը շեշտում է, որ դա շատ կարևոր է, քանի որ ռուսական կառավարությունը չափազանց բացասական վերաբերմունք ունի ահաբեկչությունների նկատմամբ:

Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 29-ին, Մանդելշտամն իր մոտ է հրավիրում Մարտիկյանին և նրան խնդրում դեսպանությանը հանձնել այն հարցերը, որոնց լուծումը ցանկալի է պատրիարքարանին: Օգտվելով առիթից՝ Մարտիկյանը բանավոր հաղորդում է Անվտանգության Հանձնաժողովի կազմած բարենորոգումների նախագծի հիմնական կետերը: Մանդելշտամը հայտնում է, որ ռուսաց դեսպանությունը կարծում է՝ նախագիծը պետք է կազմվի մոտավորապես 1895 թ. մայիսյան արձանագրության ծավալով և հանգամանորեն մշակվի:

Դեկտեմբերի 30-ին Մանդելշտամը կրկին Մարտիկյանին խնդրում է գալ դեսպանատուն՝ իր մոտ: Նա տարակուսանք է հայտնում իր լսած տեղեկության առիթով, թե Նուբար փաշան մեկնում է Լոնդոն՝ Հայկական հարցը կոնֆերանսին ներկայացնելու համար: Դա, դեսպանի խոսքերով, չի համապատասխանում ռուսական կառավարության մտադրություններին, միաժամանակ անօգուտ է և աննպատակահարմար՝ ելնելով բուն խնդրի շահերից: Այդ խոսքերը Մանդելշտամն ասել էր այնքան հուզված, որ նույնիսկ Մարտիկյանն անհրաժեշտ էր համարել

հանգստացնել նրան՝ հայտարարելով, որ այդ լուրերն արժանի չեն վստահության¹:

Նույն օրը՝ դեկտեմբերի 30-ին, ռուսական դեսպանատանը Մանդելշտամի հետ հանդիպում է բժ. Յակով Խ. Ջավրիևը: Նա Կոստանդնուպոլսի հայերի շրջանում ռուսասիրական քաղաքականության ամենացայտուն ներկայացուցիչն էր, և նրան էր պատկանում Կ. Պոլսի ռուսական դեսպանության հետ հարաբերությունների նախաձեռնությունը դեռևս դեսպան Ջարիկովի ժամանակ:

* * *

Դեկտեմբերի 31-ին տեղի ունեցավ Յակով Ջավրիևի հանդիպումը ֆրանսիական դեսպանի հետ: Վերջինս չեչտեց, որ Հայկական հարցի վերաբերյալ արդեն գոյություն ունի լիակատար միաբանություն Եոչակ համաձայնության տերությունների միջև: Նշելով, որ եթե Անգլիան և Ռուսաստանը միասնական չլինեն, ապա կտուժի Հայկական հարցը, ուստի դեսպանը հայերին խորհուրդ տվեց հավասարապես բարի հարաբերություններ հաստատել երկու տերությունների հետ: Ծանոթանալով Անվտանգության հանձնաժողովի կազմած նախագծի գլխավոր կետերին՝ Ֆրանսիայի դեսպանը դրանք ընդհանուր առմամբ համարեց իրագործելի: Նա հետաքրքրվում է, թե արդյո՞ք Ռուսաստանը չէ այն տերությունը, որին պետք է հանձնարարվի բարենորոգումների իրականացումը: Ջավրիևը պատասխանում է, որ նախագիծ կազմողները նկատի չեն ունեցել միայն Ռուսաստանին, այլ շահագրգիռ պետություններից յուրաքանչյուրին, ով ցանկանում է մյուս պետությունների հետ իր վրա վերցնել Հայկական խնդրի առաջնությունը²:

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, [Թղթ. 238, վավ. 95, թ. 8:

² Նույն տեղում, թ. 9:

* * *

Ապահովական հանձնաժողովը որոշեց իմանալ նաև Գերմանիայի տեսակետը Հայկական հարցի մասին, ուստի Գրիգոր Զոհրապին հանձնարարեց հանդիպում ունենալ Կոնստանդնուպոլսում գերմանական դեսպանի հետ: Տեսակցությունը դեռ չէր սկսվել, երբ հայտնի դարձավ, որ հայերի և Հայկական հարցի վերաբերյալ Գերմանիայի դիրքորոշման մեջ դրական տեղաշարժեր են կատարվում: Հետաքրքիր տեղեկություններ կային Կիլիկիայից, ուր գերմանական հյուպատոսն իր նախաձեռնությամբ և պատրաստակամորեն այցելել էր Կիլիկիո հայոց կաթողիկոսին, հարց ու փորձ արել հայերի կարիքների ու ցանկությունների մասին և հայտարարել, որ գերմանական կառավարությունը պատրաստ է աջակցելու Հայաստանի բարենորոգումների գործին:

* * *

Ինչ վերաբերում է Ավստրո-Հունգարիային, ապա այդ երկրի արտաքին գործերի նախարար Բերտհոլդի հետ բանակցելու նախաձեռնությունն իրենց վրա վերցրին Հունգարական մխիթարյանները: Նրանց քահանան վանահայր Կալեմկարյանի հետ եղավ նախարարի մոտ և միամտորեն նրան պատմեց այն ամենը, ինչ իրենց հայտնի էր հայոց Կաթողիկոսի և ռուսական կառավարության բանակցությունների մասին: Այդ ամենից հետո նրանք խնդրեցին ավստրիական կառավարության աջակցությունը Հայկական հարցում: Նախարարը նրանց հայտնում է, որ Հայկական հարցը Լոնդոնի կոնֆերանսի դեսպանների հետաքրքրությունների շրջանակից դուրս է, և եթե, այսպես թե այնպես, հարցը հաջողվի ներառել կոնֆերանսի օրակարգ, ապա տերությունների մասնակից ներկայացուցիչները պետք է այդ մասին զեկուցեն իրենց կառավարություններին և ստանան համապատասխան հրահանգ: Ապա նախարարը հարցուփորձ է անում Թուրքիայում հայերի իրական վիճակի մասին, թե շարունակվո՞ւմ են արդյոք սպանություններն ու բռնությունները, և որքանո՞վ է այնտեղ կյանքը անվտանգ: Վանահայրը նրան ներկայացնում է Կոնստանդնուպոլսի պատրիարքարանի 1908-1912 թվականներին հայերի դրության մասին ֆրանսերենով փաստաթղթի օրինակը: Թեև նախարարը կրկին չեչտում է, թե

չնայած կոնֆերանսը լիազորված չէ զբաղվելու Հայկական հարցով, այնուամենայնիվ խորհուրդ տվեց դիմել տերութուններին՝ ակնկալիքով, որ գուցե նրանք կցանկանան Լոնդոնում բարձրացնել նաև այդ հարցը:

* * *

Ապահովական հանձնաժողովն իր հերթին հարկ համարեց իր անդամներից մեկին՝ վարդապետ Գնել Գալամքերյանին, առանձին ուղարկել հունգարացի նախարար-նախագահ Լուկաչի մոտ:

Իմանալով Լուկաչի հայկական ծագման մասին՝ հանձնաժողովն ուզում էր ծանոթանալ նրա հայացքներին և օգտվել նրա խորհուրդներից (ոչ թե խնդրել օգնություն): Լուկաչը գրկաբաց է ընդունում վարդապետին և մեծ ուշադրությամբ լսում նրան: Բայց երբ Գնելը նրան դիմում հայերեն, ապա նա, ներողություն խնդրելով, ասում է, որ չնայած ինքը հայ է, բայց հայերեն մի խոսք անգամ չգիտի: Լսելով պատվիրակի հաղորդումը Հայկական հարցի վիճակի մասին՝ Լուկաչն ասում է, որ շատ բան կախված է Անգլիայից, ուստի պետք է լրջորեն աշխատել նրա դիվանագետների հետ:

* * *

Հունգարիայից վերադառնալիս Գնել վարդապետը, համաձայն իրեն տրված հանձնարարության, կանգ է առնում Սոֆիայում և ներկայանում Բուլղարիայի թագավոր Ֆերդինանդին: Թագավորը շատ երկար և համարյա մտերմիկ պայմաններում զրուցում է նրա հետ՝ հատուկ շեշտելով այն բարեսիրտ վերաբերմունքը, որ հայերը դրսևորել էին Փոքր Ասիայի խորքեր աքսորված բուլղարների հանդեպ: «Բուլղարները և անձամբ ես, - ասում է նա, - պարտավոր ենք փոխհատուցել հայերին ինչ-որ բանով»: Բայց գիտակցելով, որ ինքն անզոր է վճռական ազդեցություն գործելու Հայկական հարցի լուծման վրա, խորհուրդ է տալիս դիմել մեծ Ռուսաստանի կայսրին¹:

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 95, թ. 11-13:

Այսպիսին էին պաշտոնական բանակցություններն ու համաձայնությունները, որ եվրոպական տերությունների հետ պատրիարքի անունից վարում էր Ապահովական հանձնաժողովը:

ԹՈՒՐԳԱԿԱՆ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Հայկական հարցի վերարժարծումը ջղաձգություն էր առաջացրել ինչպես Թուրքիայի կառավարական շրջաններում, այնպես էլ նրանց մամուլի էջերում:

Բարենորոգումների դեմ կատաղի պայքար էր սկսել «Միլլի մեշրութիեթ» թուրք ազգայնական կուսակցության օրգան «Իֆհամ» թերթը, որին ձայնակցում էր հայտնի հայատյաց «Ալեմդար» պարբերականը: «Թո'ղ չկատաղեցնեն», - սպառնացել էր վերջինիս առաջնորդողի հեղինակը:

«Իֆհամի» խմբագիրը հարցազրույց էր ունեցել ներքին գործերի նախարարի հետ՝ կայսրության Արևելյան նահանգներում բարենորոգումներ անցկացնելու եվրոպական տերությունների մտադրության մասին:

Նախարարն ասել էր. «Այսօր հիմնապէս Արևելեան նահանգներու խնդիր մը չկայ, նոյնպէս Արևելեան նահանգներու կացութեան մէջ այսօր բնաւ արտակարգ վիճակ մը չի զգացուիր: Երկրին անդորրութիւնը կատարեալ է եւ հատուկտոր դէպքեր միայն տեղի կ'ունենան: Այդ նահանգներուն մէջ ընդհանուր յուզումի մը առիթ տուող ոեւէ պատճառ տեսած ու գիտցած չունիմ»: Նրա կարծիքով այդ ամեն իրարանցման մեղավորը հայերն են, նրանց մամուլը, որն անտեղի աղմուկ է բարձրացնում աշխարհով մեկ:

Այն հարցին, թե հնարավո՞ր է, որ դեսպանաժողովը քննություն առնի Արևելյան նահանգների հարցը, նախարարը պատասխանել էր. «Քանի որ օսմանյան դեսպանը դեսպանաժողովին (Լոնդոնի- շ. Ս.) չի մասնակցիր կոր, հետեւաբար դեսպանախորհուրդը մեզի համար գոյություն չունի ըսել է... Դիցուք թէ խորհրդակցութիւններ կատարուեցան, կարծիքներու փո-

խանակութիւններ տեղի ունեցան, մենք այս խորհրդակցութիւնները չեղեալ կը համարենք, ինչ ձեւով ու եղանակով ալ եղած ըլլան անոնք: Գոյացած գաղափարը կամ որոշումը մեր վրայ ռելէ ազդեցութիւն չի կրնար ունենալ: Այս եւ ասոր նման մեր ներքին խնդիրներուն համար, թէ՛ մեր օսմանեան պատուիրակներուն եւ թէ՛ դեսպաններուն վճռական հրահանգներ տրուած են: Օտարներուն ոչ թէ մեր ներքին գործերուն միջամտելուն, այլ եւ անոնց նկատմամբ դիտողութիւն ընելուն անգամ չենք կրնար հանդուրժել:

Արեւելեան նահանգներու խնդիր չկա»¹, - եզրափակել էր նախարարը:

«ԻՖհամի» ու «Ալեմդարի» չղաղարող սաղրանքները խիստ անհանգստացրել էին Հայ Հասարակութեանը: Հայոց Ազգային ժողովի Նաոն ժողովը, քննութեան առնելով այդ թերթերի սաղրանքների հարցը, ընդունեց բողոք-որոշում, որը, որպէս թագրիր, Հովհաննէս Արշարունի սրբազանը տարավ ու ներկայացրեց ներքին գործոց նախարարին: Հանդիպման ընթացքում նա ցավ հայտնեց, որ Հայերն ամեն օր կարող են նաև թուրքական այլ թերթերի՝ իրենց դեմ ուղղված զրպարտութիւններ: Զրույցի ժամանակ նա նաև նախարարին մատնացույց արեց այն վտանգը, որը կարող է առաջ գալ մանավանդ Հայաբնակ նահանգներում: Այդ վտանգը, ասել էր սրբազանը, կարող է անչափ աղետաբեր լինել Հայերի համար, բայց միաժամանակ՝ վնասակար երկրի շահերին: «Ժամանակ» թերթի հաղորդման համաձայն նախարարը ցավ էր հայտնել կատարվածի համար և խոստացել հիշյալ թերթերի պատասխանատուներին հրավիրել իր մոտ, խստորեն հանդիմանել, իսկ կրկնվելու դեպքում նրանց նկատմամբ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ: Արշարունի սրբազանը հույսով էր վերադարձել պատրիարքարան, բայց օրերն անցնում էին, և օրն իր հետ բերում էր հիշյալ թերթերի նորանոր սաղրանքներ²:

Հակահայ մոլուցքով տարված մամուլը հաճախ էր գրում, թե

¹⁶ «Ժամանակ», № 1296, 3 (16) դեկտեմբերի 1912 թ.:

¹⁷ «Ժամանակ» (Կ. Պոլիս), № 1298, 5 (18) դեկտեմբերի 1912 թ.:

բարենորոգումների պահանջով աշխարհով մեկ աղմուկ բարձրացնելով, հայերն իրականում գաղտնի փայփայում են Օսմանյան կայսրութիւնից անջատվելու և անկախութեան հասնելու իղձը: Նման նենգ ու հրահրիչ մեղադրանքը չափազանց վտանգավոր էր և կարող էր մեծ դժբախտութիւնների դուռ բացել հայերի համար: Դա էր պատճառը, որ ինչպէս Թուրքիայի, այնպէս էլ Կովկասի ու արտասահմանի հայկական մամուլի շատ օրգանների էջերում հաճախակի հայտնվում էին սաղրիչ մեղադրանքները ժխտող հողվածներ, որոնցում ցույց էր տրվում, որ հայերը չեն դնում ոչ միայն անկախութեան, այլև ինքնավարութեան հարցեր: Բաքվում լույս տեսնող «սպեցիֆիկյան» «Շոանդ» թերթը գրում էր. «Թերևս ոչ ոք այնպիսի ցնծութեամբ չի ողջունել երիտասարդ թիւրքերի 1908-ի փորձը՝ Տաճկաստանի մէջ որեւէ իրաւակարգ մտցնելու, ինչպէս Հայ աշխատաւորութիւնը: Թիւրքերի մէջ ապրող ո՛չ մի ժողովրդական տարր այնպիսի անկեղծութեամբ չի ցնորել թիւրքերի հետ եւ Թիւրքիայի մէջ ազատ ապրելու մասին, ինչպէս Հայ աշխատաւոր ժողովուրդը Տաճկաստանում: Ո՛չ մի հասարակական խաւ այնքան չի ըղձացել տեսնելու Տաճկաստանը անկախ, ազատ ու զօրաւոր, որքան Հայ դեմօկրատիան»¹:

Արտահայտելով կառավարական շրջանների տրամադրութիւնները՝ թուրքական մամուլի օրգանների մեծ մասը խիստ քննադատութեան էր ենթարկում Ռուսաստանի բռնած Հայօգուտ դիրքորոշումը:

Իթիհիհադի օրգան «ժեոն թուրքը» գրում էր. «Արդարեւ ոչ մեկուն համար գաղտնիք է, թե տէրութիւն մը, որ Արեւելեան Անատոլիոյի նահանգները ձեռք անցրնելու դիտումը ունի, վայրկեանը հասած կը նկատէ պղտոր ջուրի մէջ ձուկ որսալու եւ այդ նահանգներու գործերուն միջամտելու կամէութիւններ ցոյց կուտայ»²:

¹ «Շոանդ» (Բաքու), № 2, 18 նոյեմբերի 1912 թ.:

² «ժեոն թուրքի» հողվածի թարգմանութիւնը տե՛ս «Ժամանակ» օրաթերթի 1912 թ. դեկտեմբերի 6 (19)-ի համարում (№ 1299):

«Ժենոն թուրքը» գտնուած էր, որ Պետերբուրգի կառավարութեան մտադրութիւնը լիովին արտահայտուած է ռուսական մամուլի համարյա բոլոր օրգաններում, որոնք «չարունակաբար եւ սխալեմամբ կը զբաղին այդ նահանգներուն (Հայաստանի:– Հ. Ս.) կացութեամբ եւ հոն բնակող Հայ ժողովուրդին ճակատագրով: Դիտմամբ Արեւելեան Անատոլիոյ կացութիւնը կը նկարագրէ իբրեւ խիստ տխուր եւ վրդովիչ ու կը խօսի գործադրութեանը վրայ այն պաշտօնին, զոր «Քրիստոնեայ Ռուսիա ունի հանդէպ այդ նահանգներու քրիստոնեայ ժողովուրդներուն»¹:

Իթիժհաղի օրգանը պատահական չէր համարուած, որ «ռուս թերթերը, որոնք միշտ ատելութիւն քարոզած են հայերու դեմ (sic) այսօր գորովալից խօսքեր կ'ուղղեն անոնց հասցէին եւ ամէն օր կոկորդիլոսի արցունք կը թափեն թրքահայոց տառապանքներուն վրայ: Մեր հայ հայրենակիցներուն ի նպաստ առաջ եկած շահախնդրական շարժումը միայն մամուլին մէջ չէ որ կը սահմանափակուի: Քաղաքական խմբակցութիւններուն մէջ ալ տարածուած է այդ շարժումը»²:

Հայտնի թուրք մեկնաբան Սուլեյման Նազիֆը, իր մի հոդվածում անդրադառնալով թուրքահայերի նկատմամբ Պետերբուրգի «կեղծ դրական վերաբերմունքին», գրել էր, թե պատմութեան մեջ ռուսները ոչ մի դրական դեր չեն ունեցել հայերի կյանքում, իսկ այժմ փորձում են նրանց օգտագործել՝ քայքայելու համար օսմանյան կայսրութիւնը: Նա ճգնում էր ցույց տալ, թե ռուսները հայերի հանդէպ միշտ լցված են եղել թշնամութեամբ Կովկասում վերջիններիս խառնակութիւնների համար և միշտ զարհուրելի ջարդերի են ենթարկել նրանց³: Եվ սա ասում էր մեկը, որը լավ գիտեր, որ հայերը պարբերաբար զանգվածային կոտորածների են ենթարկվել հենց թուրքերի ձեռքով:

Կ. Պոլսի հայկական թերթերն առանց բացառութեան անհամաձայնութիւն հայտնեցին ռուսահայերի ճակատագրում Ռուսաստանի խաղաղած մեծ դերը նսեմացնելու Սուլեյման Նա-

զիֆի փորձերին: Նրանք գրում էին, որ Ռուսաստանը Մերձավոր Արեւելքում միշտ հայոց բնական պաշտպանն է եղել, նա միակ պետութիւնն է, որ ձգտել է ազատագրել Օսմանյան կայսրութեան բոլոր քրիստոնեայ ճնշված ժողովուրդներին: Ռուսաստանի ավանդական այդ քաղաքականութիւնը, որքան էլ մի պահ խաթարվի, միևնույնն է, անխուսափելի է նրա շրջադարձը դեպի իր ավանդույթներն ու իր պատմական դերը, որ նրան ճակատագրված է կատարել Արեւելքում քրիստոնեական քաղաքակրթութեան վերականգնման գործում:

Ի պատասխան երիտթուրքերի՝ Ռուսաստանի հասցեին հնչեցրած մեղադրանքների՝ Պետերբուրգի “Новое Время”-ն առաջնորդող հոդվածում գրում էր. «Թէ որտեղ է վերջանում Անատոլիան եւ որտեղից է սկսում Հայաստանը,– ոչ ոք ճշտիչ չգիտէ: Այնինչ Ռուսիան անտարակոյս էական շահեր ունի հենց հայաբնակ վայրերում: Այդ շահերը հողային բնոյթ չունին. բայց քրիստոնեայ մի պետութիւն, որ իր հպատակների թիւում ունի մեծ քանակութեամբ հայ-լուսաւորչական դաւանութեան պատկանող անձեր,– ինքն ըստ ինքեան հասկանալի է,– չի կարող թոյլ տալ, որ թուրքերը հայերի վերաբերմամբ շարունակեն այն քաղաքականութիւնը, որին հետեւել են ցարը»¹:

Հայկական թերթերը ցավով նշում էին, որ հայերը մի պահ չեղվել էին իրենց ավանդական ռուսամետ քաղաքականութիւնից և սկսել էին Ռուսաստանից դուրս ուրիշ ուժեր փնտրել, բայց հետո զգացին իրենց կոպիտ սխալը և կրկին երեսով շրջվեցին դեպի Պետերբուրգ, որը աշխարհում բազմաչարջար հայութեան միակ պաշտպանն է²:

Ճշմարտութիւնը պահանջում է ասել, որ թուրքական մամուլում, ճիշտ է՝ հազվադեպ, բայց հանդիպում էին նաև հայերի և նրանց բարձրացրած հարցի նկատմամբ չեզոք հաստատումներով կամ նույնիսկ դրական գնահատականներով հոդվածներ:

¹ «Ժամանակ», № 1299, 6 (19) դեկտեմբերի 1912 թ.:

² Նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում:

¹ “Новое Время”-ի առաջնորդող հոդվածի թարգմանութիւնը տե՛ս «Կովկասի լրագրերի» (Թիֆլիս) 1913 թ. հունվարի 27-ի համարում (№ 22):

² Տե՛ս «Մշակ» № 137, 26 հունիսի 1912 թ.:

Թուրքերից շատերն էին հասկանում, որ հայերը ուրիշ ոչինչ չեն ուզում, քան ունենալ հանգիստ արարելու պայմաններ:

1912 թ դեկտեմբերի 4 (17)-ին «Իկդամ» թերթում տպագրված հոդվածի թուրք հեղինակը՝ Համդուլլա Սուբհի բեյը, գրում էր. «Արդարութեան երկիւղը կը պարտաւորէ մեզ խոստովանիլ որ եթէ չըլլային մեր վարչական տկարութիւնները, անոնք (հայերը:– Ն. Ս.) այդ համեմատութեամբ շատոնց կը յաջողէին, իրենց հողերը շէն ու մշակեալ երկրի մը կը վերածէին: Ո՛չ միայն անոնց յառաջադիմական քայլերուն առջեւ մշտակայ արգելքներ դրինք, այլ իբրեւ թէ չէր բաւեր այսքանը, ուրիշ պատճառներով ալ անոնց վնաս հասցուցինք: Ու ասիկա յանցանքներուն ամէնէն մեծը եւ մեր ճշմարիտ բարեկամներն ու մեր օգուտ ճանչնալու մէջ մեր ունեցած տկարութեան յայտնի մէկ ապացոյցն էր»¹:

Ահա մի ուրիշ նշանավոր թուրքի՝ բանաստեղծ ու հրապարակագիր Թևֆիկ Ֆիքրեթ բեյի կարծիքը. «Չենք գիտեր, չենք հասկնար որ անոնց (հայերի:– Ն. Ս.) գլխուն իջած ամէն մէկ հարուած, իրականութեան մէջ մեր գլխուն կ'իջնէ, անոնց տուած մեր ամէն վնասները, անոնցմէ աւելի մենք կը կրենք, մենք մեր ձեռքով ոչնչացնելու ելանք ցեղ մը՝ որ երկիրը կը սնուցանէ»²:

Նույն Համդուլլա Սուբհի բեյը, վերհիշելով իր ուսանողական տարիները, գրում էր, որ բացի մուսուլմաններից՝ իր հետ սովորում էին նաև հույն, բուլղար, սերբ և հայ տղաներ, և որ նրանցից միայն հայ ուսանողներն էին ամենաջերմ հարաբերություններ պահպանում թուրք ուսանողների հետ: Իրենց միջև կար հոգեկան խոր կապ, ջերմ մտերմություն, «գոր չէինք կրնար զգալ ուրիշներու հանդեպ»: Ապա. «Անոնք լոկի աշխատող, իրենց գործին մէջ շիտակ, ամէնուն վստահութիւն ներշնչող մաքուր երիտասարդներ եւ մեր սիրելի բարեկամներն էին: Այս պատանիներուն մէկ տարուան մէջ ցոյց տուած յառաջդիմութիւնը կը

¹ Հոդվածի թարգմանությունը տե՛ս «Ժամանակ», № 1298, 5 (18) դեկտեմբերի 1912 թ.:

² «Ժամանակ», № 1298, 5 (18) դեկտեմբերի 1912 թ.:

բաւէ տեսնել՝ հասկնալու համար թէ անոնցմով ինչե՛ր կրնան պատրաստուիլ: Անոնք մէկ երկու տարուան մէջ կրնան թուրքերէն ամէնէն գեղեցիկ պատմութեանքները եւ բանաստեղծութիւնները գրել արուեստագէտի մը պէս: Գեղարուեստի մէջ անոնց ցոյց տուած յաջողակութեան վրայ կարելի չէ չզարմանալ: Անոնց բարի վարքը եւ ամէն կերպով անթերի բնութիւնն է որ մեզ ամէնէն աւելի իրենց կը քաշեն: Մեր աչքով կը տեսնենք անոնց ուշիմութիւնը, մաքուր սիրտերը եւ չենք կրնար չցաւիլ անցեալին սխալներուն վրայ»¹:

Տալով իր հայ ընկերների և ընդհանրապես հայերի ընդհանուր բնութագիրը՝ Սուբհի բեյը արձանագրում էր. «Սահմանադրութեան առաջին բարեգուշակ օրերէն ի վեր միայն հայերն էին որ հոս հազար խոովութիւններու մէջ իրենց լրջութիւնը չարեցին եւ յառաջդիմութեան օգտին կապուած մնացին: ... Հայերը այն ազգն են որ ամէնէն աւելի հաւատարիմ մնացած են օսմանցիութեան երազին: Մինչդեռ իրենց սպասած ամէնէն նախնական իրաւունքները չի կրցան ձեռք բերել եւ անոնց ի վնաս կը շարունակուին կարգ մը չարիքներ...»:

Մերժելով թուրք հակահայ մամուլի աննախադեպ հարձակումները՝ Սուբհի բեյը հարց էր տալիս. «Արդե՞օք կառավարութիւնն իր ձեռքին մէջ չունի այնպիսի ազդեցիկ միջոցներ, որոնցմով կարելի ըլլայ հայոց մասին ճիշդ խօսքը ըսել ժողովուրդին»²:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔԵԱՄԻԼ ՓԱՇԱՅԻ ՄՈՏ

Մի կողմից՝ հայերի գրգռված մտքերը հանգստացնելու, մյուս կողմից՝ հայոց կաթողիկոսի պատվիրակ Պողոս Նուբար փաշայի գործունեությունը արգելափակելու, և եթե հնարավոր լինի՝ խափանելու համար, Բ. Դուռը դիմեց խաբեություն իր հերթական մեթոդին՝ ինչ-որ կերպ սիրաշահել հայերին,

¹ «Ժամանակ», № 1298, 5 (18) դեկտեմբերի 1912 թ.:

² Նույն տեղում:

մանավանդ որ թուրքական որոշ թերթեր սկսել էին տպագրել Բալկանյան պատերազմում օսմանյան բանակի հայ զինվորների ցուցաբերած քաջութիւնը, թուրքիայի հանդեպ նրանց նվիրվածութիւնը դրվատող հոդվածներ:

Թուրքական կառավարութեանն այդ մտքին էր հանգեցրել Կ. Պոլսի գերման դեսպանութիւնը՝ նրան հուշելով հայաբնակ նահանգներին տալ երևութական բավարարութիւն (իհարկե՛ թուրքերի ու գերմանացիների ուղած ձևով)՝ հետապնդելով հայկական հարցից Ռուսաստանին հեռացնելու նպատակ:

Ահա այդ դիտավորութեամբ վարչապետ Քեամիլ փաշան, որ հայտնի էր իր արտակարգ խորամանկութեամբ, և որը հոկտեմբերի 17-ին պաշտոնը ստանձնելուց հետո հայերին խոստացել էր բարիքների մի ամբողջ բույլ, որոշեց եվրոպական միջամտութիւնը կանխելու համար իր ձեռքը վերցնել նախաձեռնութիւնը և հայտարարեց, թե կառավարութիւնն ինքն է տնօրինելու Արևելյան Անատոլիայի (Հայաստանի) բարենորոգումների գործը: Միաժամանակ նա հանձնարարեց ներքին գործերի նախարարութեանը (նախարար՝ Ռեշիդ փաշա) կազմել մի ծրագիր, որի գործադրութեամբ առաջին հերթին պետք է «կարգավորվեն» հայ-քրդական հարաբերութիւնները: Վարչապետը միաժամանակ հայտարարեց, թե նշանակում է մի հանձնախումբ, որը պետք է մեկնի Արևելյան Անատոլիա և այնտեղ աշխատանքներ տանի բարենորոգումների ծրագիրը որքան հնարավոր է շուտ կյանքի կոչելու համար: Ըստ որում, նա տեղեկացրեց, որ ինքը որոշել է հանձնախմբի մեջ ամենից առաջ ներգրավել Օրմանյան սրբազանին: Դրա նպատակը հզոր ինտելեկտով օժտված նախկին պատրիարքին եվրոպա մեկնելուն արգելք հարուցելն էր:

Իր իրական մտադրութիւնը թաքցնելու համար Քեամիլ փաշան նաև բարձրաձայնեց (հավանաբար Գաբրիել Նորատունկյանի խորհրդով), թե ծրագիրը կազմելու համար հրավիրելու է նաև մի քանի ուրիշ նշանավոր հայերի: Հանձնախմբի անդամները պետք է ազատ լինեին որևէ ուրիշ պարտականութիւնից, քանի որ նրանք, իբր, պիտի կատարեին պատմական դժվարին առաքելութիւն:

Այս խոստումների արժեքը վաղուց և լավ ծանոթ լինելով հայերին՝ նրանց մեծ մասը այլևս չէր հավատում, թե կառավարութիւնն ինքը հոժարակամ կձեռնարկի կատարել բարենորոգումներ:

Բայց Կ. Պոլսի նշանավոր հայերից ոմանք սրտանց ողջունեցին Քեամիլ փաշայի ծրագիրը: Դրանց թվում էր թուրքիայի արտաքին գործերի նախարար Նորատունկյան Էֆենդին՝ Օրմանյան սրբազանի մեծ բարեկամը, որն Ազգային ժողովի վարչութեանը խորհուրդ էր տվել չդիմել եվրոպային, այլ թուրք կառավարութեան հետ համատեղ ձեռնարկել հարցի լուծումը: Հայ մեծահարուստների գերակշիռ մասը նույնպես այն կարծիքին էր, որ հայկական հարցի նկատմամբ կառավարութեան քաղաքականութեան մեջ շատ բան է փոխվել, ուստի նրա մեկնած ձեռքը պետք է սեղմել, գլուխ գլխի տալ և հայոց համար մի բարենպաստ վճիռ կայացնել: Այս տեսակետի ակտիվ պրոպագանդիստներ էին պոլսահայ «Լուսարձակ» և «Ժամանակ» թերթերը:

Այդպես մտածողները հաշվի չէին առնում, թե ինչու Բ. Դուռը, որ դեռ մի քանի ամիս առաջ չէր ընդունում հայկական հարցի գոյութիւնն իսկ և հայաբնակ նահանգներում կատարվող խժոժութիւնների մասին հայերի դիմում-գանգատները նկատում էր որպես հայկական հարցը արհեստականորեն վերակենդանացնելու փորձ, հանկարծ ինքն էր սկսել խոսել այն մասին, որ այդ հարցը գոյութիւն ունի: Նա մեծ իրարանցումով սկսեց բարձրաձայնել, թե տարիներ տևած հարցն այժմ հրատապ լուծում է պահանջում: Թուրք կառավարութեան այս հանկարծակի «հայասիրական» բորբոքումը նորից ապացուցում էր, որ հայկական հարցը անկասելիորեն ուղի է հարթում եվրոպայում:

Այս պայմաններում Կ. Պոլսի հայոց պատրիարքը և Ազգային ժողովի վարչութիւնը, որոնց ազգասիրութիւնն ու լրջամտութիւնը դժվար էր կասկածի տակ առնել, չէին կարող մերժել Բ. Դուռն «մարդասիրական», «հայանպաստ» առաջարկը և ստիպված եղան համագործակցել նրա հետ:

Այստեղ էր, որ կրկին փայլատակեց Օրմանյան սրբազանի քաղաքագիտական տաղանդը: Նա հուշեց, որ Քեամիլ փաշայի

մոգոնած ծրագիրը նպատակ ունի կոտրել պատրիարքի ու ազգային վարչությունների վարկը, կաթողիկոսական պատվիրակությունը հակադրել այսպես կոչված «արևելաանատոլիական հանձնախումբ» և, այդպիսով, երկպառակություն առաջ բերել հայության մեջ, նրան պառակտված ցույց տալ նաև եվրոպայի առաջ: Նա չեչտում էր, որ պատրիարքը և ազգային իշխանությունները, չհրաժարվելով Բ. Դոան առաջարկից, գերակայությունը, սակայն, պետք է տան եվրոպական ուղղությունը՝ նկատի առնելով, որ հայկական հարցը միջազգայնացված է, հետևապես գլխավոր հույսը պետք է կապել մեծ տերությունների դիվանագիտական գործունեության հետ: Առանց եվրոպական աջակցության, թուրք կառավարության հետ առանձին բանակցություններով հնարավոր չէ հանգել համաձայնության և համատեղ լուծել հայկական հարցը:

Ներքին գործոց նախարար Ռեչիդ բեյի ստորագրությամբ հրավեր ստանալով՝ չորս հայ երևելիներ՝ նախկին պատրիարք Օրմանյան սրբազանը, «Սապահ» թերթի խմբագրապետ Տիրան էֆ. Քելեկյանը, վաճառական Պատրիկ էֆ. Կյուլպենկյանը, օսմանյան խորհրդարանի նախկին պատգամավոր ղոկտոր Նազարեթ էֆ. Տաղավարյանը², դեկտեմբերի 8 (21)–ին այցելեցին վարչապետ Քեամիլ փաշային՝ խորհրդակցելու հայաբնակ նահանգների բարեկարգման մասին Բ. Դոան պատրաստած ծրագրի շուրջ³: Հանդիպմանը ներկա էին նաև արտաքին գործերի հայազն նախարար Գաբրիել Նորատունկյանը, ներքին գործերի նախարար Ռեչիդ բեյը և Ֆինանսների ու կրթության նախարարները⁴:

Ներքին գործերի նախարարը ներկաներին ներկայացրեց բարենորոգումների 21 հոդվածից բաղկացած իր կազմած ծրագիրը,

¹ Քեամիլ փաշայի «բարենորոգումների» ծրագրի խարուսիկ լինելու մասին տե՛ս «Ազգ» թերթի (Բոստոն) 1913 թ. հունվարի 29-ի (№ 33) խմբագրական առաջնորդողը:

² «Հայրենիք», № 12, հոկտեմբեր, 1924:

³ Տե՛ս «Աւետարներ», № 51, 21 դեկտեմբերի 1912 թ.:

⁴ Տե՛ս «Ազգ» (Բոստոն), № 31, 15 հունվարի 1913 թ.:

գիրը, որը նախքան խորհրդարանի կողմից վավերացումը պիտի գործադրվեր իբրև առժամյա օրենք՝ միայն Վանի, Բիթլիսի, Հարփութի (Նարբեբդի) ու Դիարբեքի կուսակալություններում, որոնք նկատված էին որպես առավելապես հայ և քուրդ բնակչություն ունեցող տարածքներ: Նախատեսված էր կայսրությունից քաղաքացիական, դատական ու ֆինանսական բոլոր օրենքները հետևողականորեն գործադրել այդ նահանգներում¹: Օրենքի գործադրության պատասխանատուն, իբր, պետք է լիներ հատուկ հանձնախումբը: Նախօրոք Քեամիլ փաշայի խոստացած մի քանի հայերի փոխարեն այժմ միայն 2 հայ պիտի մասնակցեին 6 հոգուց բաղկացած հանձնախմբին, որի մյուս անդամները լինելու էին 1 քաղղեացի և 3 իսլամ: Նրանք բոլորը, իբր, պետք է ունենային հավասար իրավունքներ: Հանձնախմբի անդամների լիազորությունները որոշվեց հինգ տարով: Հանձնախումբը գլխավորելու էր ընդհանուր քննիչը՝ իրեն օգնական ունենալով մի եվրոպացի: Հանձնախումբը պետք է հարաբերություններ պահպաներ անմիջապես նախարարների խորհրդի հետ: Տեղում դրությունը մանրակրկիտ ուսումնասիրելուց հետո հանձնախումբը նշված ծրագիրը վերջնական խմբագրմամբ պիտի ներկայացներ խորհրդարանի վավերացմանը²:

Տարիներ ի վեր թուրք վարիչները պնդում էին, թե հայերի տրտունջները, կրոնական առաջնորդների հայտնած տեղեկությունները, Կ. Պոլսի պատրիարքարանի բողոքները որևէ հիմք չունեն, թե ամեն ինչ չափազանցված է, և թե հայաբնակ նահանգների վիճակը եթե ոչ եղեմական է, ապա շատ էլ չի տարբերվում եվրոպական որևէ պետության գավառների դրությունից:

Եվ հիմա նախարար Ռեչիդ բեյը պաշտոնապես ընդունում էր, որ նշված չորս հայկական նահանգները ոչ միայն դրախտ չեն, այլև շատ ավելի հոռի վիճակում են, քան դրացի ասիական մյուս նահանգները:

¹ Տե՛ս «Առաջամարտ», № 1082, 22 դեկտեմբերի 1912 թ.:

² Տե՛ս «Մշակ», № 280, 16 դեկտեմբերի 1912 թ.: «Ժամանակ», № 1305, 12 (25) դեկտեմբերի 1912 թ.:

Քեամիլ փաշայի հրավիրած խորհրդակցությունն անցավ երկու նիստով: Հայ գործիչները նշեցին, թե քանի որ կառավարությունը դիմել է իրենց խորհրդին, ապա իրենք օսմանյան հայրենասերի պարտականությունն են նկատում՝ ամեն ինչ խոսել բաց, առանց վերապահությունից:

Ծանոթանալով թուրքական նախագծի տեքստին՝ հայ հրավիրյալները ցույց տվեցին բազմաթիվ էական թերություններ, արտահայտեցին իրենց բացասական եզրակացությունը: Նրանք խիստ դժգոհություն հայտնեցին, որ Բ. Դուռը հայկական է համարում վեց վիլայեթներից միայն չորսը: Հայտարարելով, որ թուրքական կառավարությունը կորցրել է իր նկատմամբ ողջ թուրքահայության վստահությունը, հայ հրավիրյալները հայտարարեցին, թե թուրքահայությունը շարունակելու է պայքարել իր ազգային իրավունքների համար¹:

Օրմանյան սրբազանը ասում էր, թե «այս կարգի ծրագրեր ու հանձնախմբեր իր պատրիարքության օրով, դրանից առաջ և հետո, շատ անգամներ կազմվել են, բայց որևէ շոշափելի արդյունք չեն ունեցել»: Քյամիլ փաշան սրբազանին պատասխանել էր, թե իր գլխավորած կառավարությունն այժմ շատ վճռական է տրամադրված, և ծրագրված բոլոր կետերը անպայման կկատարվեն²: Եվ որպես այդ բանի ապացույց՝ նա մատնանշեց, թե Վանի վիլայեթի հայերի համար ատելի քուրդ կուսակալ Իզզեթ բեյն արդեն պաշտոնազրկված է*:

Տիրան էֆ. Քելեկյանը խիստ համարձակ ու հիմնավորված

¹ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 95, թ. 14-15:

² Տե՛ս «Ազգ» (Բոստոն), № 31, 15 հունվարի 1913 թ.:

* Իզզեթ բեյը պաշտոնազրկվել էր դրանից երկու ամիս առաջ, բայց դրանից հետո էլ վիլայեթում ոչինչ չէր փոխվել: Իզզեթի պաշտոնազրկումի օրերին Վանի «Աշխատանք» թերթը գրել էր. «Մեր պաշտօնեաներու փոփոխությունը տարբեր հետևանքի մը չի բերեր: Ապիկա՞ր է պաշտօնեան, զեղծո՞ւմ գործեց, անմիջապէս կը հեռացուի ուրիշ վայր մը, ուր «նոր» մարդ է ինքը, անօր տեղը կը բերւի այնտեղի հինը, իբրեւ նոր: Ու կը կարծեն թէ կարեւոր գործ մը ըրած եղան ատով: Բայց անցնինք. չափազանց ծանօթ իրողութիւն է» («Աշխատանք», № 2-98, 10 նոյեմբերի 1912 թ.):

ելույթով պարզեց իր տեսակետը կառավարությունն կողմից բարենորոգումներ անցկացնելու խոստումների մասին: Նա ասում էր, որ ինքը հաստատ համոզված է, որ եթե չլինի եվրոպական պաշտոնյաների հսկողությունը, ապա հանձնախումբը չի իրականացնելու ոչ մի բարենորոգում, ինչպես նախկինում չեն իրականացրել բազմաթիվ հանձնախմբերը:

Միջամտելով Քելեկյանի ասածին՝ Օրմանյան սրբազանն ավելացրեց, թե կառավարությունները երկրում շատ հաճախ են փոխվում, տեական չեն լինում, հետևաբար բարենորոգումների մասին խոսակցությունները վստահություն չեն ներշնչում, քանի որ դրանք անկեղծ չեն լինում: Եթե որևէ ծրագիր ապահով հիմքերի վրա չէ և չունի իշխանությունների իրական երաշխիքները, ապա այն չի կարող կենսագործման հեռանկար ունենալ¹:

Հայ գործիչները առաջարկեցին ծրագրում հիշատակված հայկական չորս նահանգներին ավելացնել հայկական մյուս երկու նահանգները ևս՝ Կարինն ու Սեբաստիան²:

Ներկաներից մեկն առաջարկեց նշված վեց նահանգներից ստեղծել մի էլայեթ, որը կկրի «Մեմալիքի էրմենիան» անունը: Ներքին գործոց նախարար Ռեշիդ բեյը պատասխանել էր, թե ծրագրի նպատակը «Հայաստան ստեղծելը չէ, այլ նշված նահանգների բարենորոգումը»:

Նազարեթ էֆ. Տաղավարյանը հարց էր բարձրացրել գավառներում թուրքերենին հավասար գործածել նաև հայերենն ու քրդերենը: Ներքին գործոց նախարարը պատասխանել էր, թե հայերենը կատարյալ լեզու է, և կարելի է նրանով վճռագիր խմբագրել և ցանկացած իրավական փաստաթուղթ ստեղծել, բայց նույն բանն անկարելի է քրդերենով, հետևաբար պետք է մի միջին գիծ գտնել:

Կրճատելով հայաբնակ նահանգների թիվը երկուսով՝ Բ. Դուռը միաժամանակ ավելացրել էր գայմազամությունների թիվը: Նմանապես որոշվել էր բարեփոխել տուրքերի դրույթունը, վերացնել հաֆիրությունը, ինչպես նաև նահանգներում

¹ Տե՛ս «Ազգ» (Բոստոն), № 31, 15 հունվարի 1913 թ.:

² Տե՛ս «Առաջամարտ», № 1082, 22 դեկտեմբերի 1912 թ.:

ստացված հասույթին օգտագործել տեղերում:

Նորհրդակցության ժամանակ շոշափվել էր «Հայաստան» բառի գործածության հարցը: Հայ ներկայացուցիչները նշում էին, որ այդ անունը ենթարկված է անիմաստ դատապարտման, բայց այն պիտի ապրի, եթե նույնիսկ Հայ ազգը դադարի գոյություն ունենալուց¹: Այդ առթիվ Օրմանյան սրբազանը մասնավորաբար շեշտել էր, թե հայերը երբեք անջատողական ձգտումներ չեն ունեցել և չունեն, որ նրանց պահանջը միայն բարենորոգությունն է, և «Հայաստան» անվան գործածությունը բնավ չի նշանակում անջատողական տրամադրությունների արտահայտություն: Միաժամանակ նա ընդգծել էր, որ այս հանդիպման մասնակիցների արտահայտած կարծիքներն ու մտքերը իրենց անհատական տեսակետներն են, որ իրենք իրավունք չունեն ազգի անունից բանակցելու, քանի որ այդ իրավունքով օժտված են թուրքահայությունը ներկայացնող պաշտոնական մարմինները՝ Կ. Պոլսի պատրիարքարանը՝ հանձին պատրիարքի, և Հայոց ազգային ժողովը՝ հանձին ազգային վարչություն: Հետևապես ազգի պահանջների մասին իմանալու համար թուրքական կառավարությունը պետք է դիմի նրանց: Այսինքն՝ դեմ դեմի պիտի մնան Բ. Դուռը և թուրքահայության միակ ու իրավասու ներկայացուցիչը՝ հայոց պատրիարքարանը:

Օրմանյան սրբազանի այդ հայտարարությունը միացան խորհրդակցության մյուս հայ մասնակիցները:

Իհարկե, լավագույնը կլիներ, եթե նրանք չբավարարվեին միայն հայտարարություն անելով, այլ, որպես անպաշտոն անձինք, Քեամիլ փաշային նաև ասեին, որ իրենց այս հանդիպումը չպետք է դիտել որպես բանակցություններ, այլ որպես հանդիպում, որի ընթացքում վարչապետը հայերի մի խմբի ներկայացրել է բարեկարգության ծրագրի դրույթները, որ թուրք կառավարությունը պետք է պաշտոնական բանակցություններ վարի միայն ու միայն պատրիարքի և ազգային վարչության հետ:

Նորհրդակցության վերջում Քեամիլ փաշան նշել էր, որ երբ բարեկարգության ծրագիրը վերջնական տեսք ստանա, պիտի քննվի ու վավերացվի նախարարների խորհրդի լիազուստ նիստերից մեկում¹:

Չորս հայ երևելիների հետ վարչապետ Քեամիլ փաշայի խորհրդակցությունից հետո Բ. Դուռը ցանկություն հայտնեց նույն հարցի մասին խորհրդակցել նաև Հայոց ազգային ժողովի վարչության հետ: Որքան էլ զարմանալի է, վերջինս պատասխանեց, թե մի նոր բանակցության կարիքը չկա, և որ կառավարությունը կարող է բարենորոգումների ծրագիր մշակել՝ օգտվելով Հայաստանի վիճակի մասին մինչև այժմ պատրիարքարանից ստացած բազմաթիվ թագրիրներից²:

Բայց գործը դրանով չվերջացավ: Ընդդիմադիր դաշտում գտնվող Իթիհազը նույնպես այդ օրերին անդրադարձավ Հայաստանի բարենորոգումների խնդրին, իհարկե՝ այն վերջնականապես տապալելու համար:

Ձևանալով, թե իշխանություն գլուխ կանգնած իթիիլաֆականներից իրենք պակաս չահագրգռված չեն արևելյան նահանգների ճակատագրով, իթիհազական պարագլուխները մի կողմից Գրիգոր Զոհրապի, մյուս կողմից Իթիհազի գործուն անդամներից Հալաճյանի միջնորդությամբ ձեռնարկեցին իրենցից հեռացած Դաչնակցության հետ մերձեցում ստեղծել՝ «համատեղ լուծելու հայերին հետաքրքրող հարցերը»: Այդ նպատակով Դաչնակցության ներկայացուցիչները՝ Ակնունին (Ուաչատուր Մալումյան), Արմեն Գարոն (Գաբրիել Փաստրմաջյան), Վարդգեսը (Հովհաննես Սերենգյուլյան), մի քանի հանդիպումներ ունեցան Նալիլի, Միդհատ Շյուքրիի և Թալեաթի հետ: Իթիհազականները հայ գործիչներին առաջարկեցին. ա) Հայերը չպիտի օգտվեն Բալկանյան պատերազմի պատճառով թուրքերի համար ստեղծված նեղ դրությունից, բ) նրանք չպետք է դիմեն արտաքին ուժերին և հատկապես օսմանյան երկրին թշնամի ուսաններին, գ) իրենք պատրաստ են համաձայ-

¹ Տե՛ս «Ազգ» (Բոստոն), № 31,15 հունվարի 1913 թ.:

¹ Տե՛ս «Ազգ» (Բոստոն), № 31,15 հունվարի 1913 թ.:

² Տե՛ս «Կովկասի լրագրեր», № 9, 13 հունվարի 1913 թ.:

նության գալու Դաշնակցության հետ և նրա միջոցով անմիջական չփումների մեջ մտնել Հայոց պատրիարքարանի և ստեղծվելիք Ազգային պատվիրակության հետ՝ միասին ու անադմուկ առաջ տանելու բարենորոգումների գործը, դ) Այս պայմաններով հենց այժմ հայերը պետք է մերժեն օտար պետությունների միջամտությունը «ներքին ընտանեկան վեճերին»¹:

Ավելացնենք, որ հանդիպումներից մեկի ժամանակ Թալեթն իր սաղայելական ժպիտով իբրև խորհուրդ ասել էր. «Եթե այս անգամ էլ չլսեք մեզ և շարունակեք ճնշում գործադրել օտար ուժերով, միևնույն է, ոչ մի իրական արդյունքի չեք հասնելու»²:

Ջրույցների ընթացքում հայ գործիչները մշտապես անդրադառնում էին Բալկանյան պատերազմի հետևանքով Հայաստանի նահանգներ տեղափոխված թուրքերին (մուհաջիրներ), որոնք զավթում էին հայ գյուղացիների հողերը և բռնություններ տեղավորվում հայկական գյուղերում, իսկ իշխանությունները ոչինչ չէին ձեռնարկում չափավորելու նրանց գործողությունները*:

Իթիհհհհհհհհհհ և դաշնակցական գործիչների հանդիպումները գործնական արդյունք չտվեցին: Վերջիններիս հավատը սպառված էր:

Ինչպես տեսնում ենք, և՛ իթիհհհհհհհհհհ կառավարության և՛ իթիհհհհհհ կոմիտեի հիմնական մտահոգությունը վերաբե-

¹ Տե՛ս Հովհաննես աւ. քհ. Հաճեան, Հայոց տաժանքի ճամբաներով, Ա Հատոր, Թեհրան, 1965, էջ 332:

² Տե՛ս նույն տեղում, էջ 332-333:

* Մի քանի օր անց՝ դեկտեմբերի 13-ին, Ս. Սաղոնովը Լոնդոնի և Փարիզի ուսաց դեսպաններին գրում էր. «Ի խուսափումն նոր բարդացումների՝ կապված եվրոպական Թուրքիայից Փոքր Ասիա մահմեդականների անկասկած տեղի ունենալիք զանգվածային գաղթի հետ, արդյոք կառավարությունը, որին առընթեր Դուք հավատարմագրված եք, հնարավոր չի՞ համարում հանձնարարել Կոստանդնուպոլսում իր դեսպանին սատարելու վերաբնակեցման գործն ուղղորդելու և կարգավորելու համար ամեն միջոց ձեռնարկելու մասին մեր դեսպանի կողմից արդեն արված դեկույցները» (АВІРІ, փ. «Политархус», зз. 1909-1912, օ. 3459, лл. 91 об.-92):

րում էր բարենորոգումների ընթացքի վրա եվրոպական վերահսկողություն հաստատելուն: Նրանք վճռականապես դեմ էին այդ վերահսկողությունը՝ այն համարելով որպես թուրքերի արժանապատվության ոտնահարում, բայց իրականում նրանց մտահոգությունն այն էր, որ եվրոպայի կողմից իրական վերահսկողության պայմաններում իրենք չէին կարող առաջվա պես զանազան պատճառաբանություններով խուսափել հայկական նահանգներում բարելավումներ իրականացնելուց:

Պողոս Նուբարը այդ հարցի առթիվ Փարիզից Վահան Մալեգյանին գրում էր. «Արդէն տեղեակ պահուած էի Բարձրագոյն Դոան Բարենորոգմանց յանձնաժողովի նիստերուն, Քէլեկեանի կողմանէ, որ հիանալի կերպով խօսած է եւ յայտարարած որ առանց միջազգային քոնթրոլի ոչինչ կրնայ ըլլայ:

Ճշտիւ նոյն բանը յայտնած էի հոս Բիֆաթ փաշային, երբ ինծի հարցուց թէ կարելի պիտի չըլլա՞ր Բարենորոգումները իրագործել մեր մէջը, առանց ատոր խառնելու օտար պետութիւնները: Երբ պատասխանեցի որ յանձն առած եմ զբաղուիլ մեր հայրենակիցներուն պահանջներով, այն պայմանաւ որ անոնք կոթնած ըլլան հաստատուն հիմի մը վրայ, անհարուածելի իրաւունքներու վրայ որ ձեռք բերուած են յանձնառութիւններով, ոչ միայն Թուրքիոյ կողմէ, այլ նաեւ եւ միեւնոյն ատեն պետութեանց կողմէ, աւելցնելով թէ այդ յանձնառութիւնները կը գտնուին միջազգային վաւերագրի մը մէջ, Պերլինի Դաշինքը, որուն 61րդ յօդուածը կը կապէ ստորագրող պետութիւնները, որ յանձն առած են հսկողութիւն կատարել, ինչպէս նաեւ Թուրքիան, որ յանձն առած է գործադրութեան դնել Բարենորոգումները Հայաստանի մէջ: Պայմանադիր կողմերէն մին՝ Թուրքիան, այսօր ի՞նչպէս պիտի կարենար մերժել պետութեանց հսկողութեան իրաւունքը»¹:

Քեամիլ փաշայի հետ հայ գործիչները հանդիպումից հետո Բ. Դուռը և թուրք մամուլն ի լուր աշխարհի հայտարարում էին, թե մշակված է Անատոլիայի արևելյան նահանգների համար

¹ Վ. Մալեգեան, Ճամբուս վրայ (Յուշաբաղ), էջ 305-306:

բարենորոգումների մի ծրագիր, որն այնպիսի հետևողականությամբ պիտի իրագործվի, որպեսզի գոհ լինեն այդ նահանգների բոլոր բնակիչները: Այսինքն՝ իբր գործն այնպես էր առաջ մղվելու, որ կեղեքիչ թուրքը և մարդասպան քուրդը շոյվեին, միաժամանակ գոհ լինե՞ր նրանց անգթություններին ենթակա հայր:

Մյուս կողմից՝ Բ. Դուռը հեռագրով Պետերբուրգում թուրքական դեսպան թուրխան փաշային հրահանգ էր տալիս ուսական կառավարությունը խնդրել, որ նա հայկական խնդիրը չներկայացնի դեսպանաժողովին՝ դրա փոխարեն կրկին խոստանալով թուրք-պարսիկ սահմանագլխային վիճելի տարածքներում զիջումներ անել Ռուսաստանին, ինչպես նաև Սև ծովի օսմանյան ջրերում ուսական վաճառականներին մասնավոր առանձնաչնորհումներ տալ¹:

Շատ քչերն էին, իհարկե, հավատում, թե խորամանկ վարչապետը լրջորեն մտածում է բարվոքել հայերի դրությունը: Դեռ դրանից ուղիղ երեք շաբաթ առաջ «Աշխատանք» թերթը գրել էր. «Ոսքե՛ր ու բառե՛ր, խոստումնե՛ր ու ճառե՛ր... Տաղտուկ պատճառելու աստիճան անվերջ ու անվերջանալի... Եւ մենք կըսենք. քանի կը շարունակւի թիւրք պաշտօնէութեան այդ մտայնութիւնը, վերէն մինչեւ վար բոլոր ասպարէզներուն վրայ..., պէտք է յուսահատել ո՛րեւէ բարեկարգութենէ այս գաւառներուն մէջ»²:

Հայերն ինչպե՞ս կարող էին հավատ տածել հայկական նահանգներում կարգ ու կանոն հաստատելու մասին իշխանությունների խոստումներին, եթե սրանք հենց մայրաքաղաքում շարունակում էին իրենց ոտնձգությունները հայոց ազգային կալվածքների նկատմամբ: Նշված խորհրդակցության հենց նախօրյակին կառավարությունը Կ. Պոլսի Ազգային հիվանդանոցից խլել էր նրա սեփականությունը հանդիսացող Հաստախանե խանը, որը ժամանակին գնվել էր հայերի հավաքած գու-

¹ «Ժամանակ», № 1327, 3 (16) հունվարի 1913 թ.:

² «Աշխատանք», № 98, 10 նոյեմբերի 1912 թ.:

մարներով, և որը հայթայթում էր 1000-ից ավելի ծերերի, հիվանդների, որբերի հացազինը¹:

Հայր Գաբրիել ծ. վ. Մենեիչյանը Վահան Մալեղյանին Վիեննայից գրում էր. «Այսօր մերը՝ գոյութեան կոխ է, եւ կոխ մը գոյութեան անհաւասար թշնամոյն հետ. անհաւասար է մեզի նկատմամբ թշնամին, վասնզի գիտէ խաբել խոստումներով, վասնզի գիտէ գործել նենգամտութեամբ ու լուութեամբ, վասնզի ունի ոյժ, ոյժ մը բիրտ՝ որ կը զրկէ զմեզ իրեն դիմադրելու հնարաւորութենէն: Այս երեք պատճառներուն համար յաջողած է ցարդ մեր թշնամին եւ միշտ պիտի յաջողի զրկել հայութիւնն իւր գոյութենէն»²:

Կ. Պոլսի «Ժամանակ» օրաթերթը “Русское Слово” թերթից արտատպել էր այդ խորհրդակցությանը նվիրված հոդված, ուր մասնավորապես ասված էր. «Ռուսիա երբէք չպիտի վաւերացնէ Հայաստանի համար Բ. Դուռն այս պահուս գրի առած բարենորոգումներու օրինագիծը, եթէ անոր մէջ հայ ազգին բոլոր պետքերն ու շահերը լիովին ապահովուած չըլլան»³:

Ռուսական մամուլի ուրիշ օրգաններ նույնպես իրենց կառավարության ուշադրությունը հրավիրում էին Բ. Դուռն նոր խորամանկությունները չեզոքացնելու համար գործնական քայլեր կատարելու անհրաժեշտության վրա:

Ռուսական կառավարությունը, սակայն, դեռ չէր որոշել հայկական հարցում իր հետագա անելիքները, քանի որ վստահություն չունե՞ր, թե գոնե Անտանտի իր դաշնակիցներն աջակից կլինեն իրեն՝ առաջ տանելու Հայաստանի բարենորոգումների հարցը՝ գաղափարից այն վերածելով իրականի:

Այդ անորոշությունը միանում էր նաև Հայաստանի մասին ոչ լրիվ տեղեկացվածությունը, թեև բոլոր կողմերից ուսաց կայսերական կառավարությունը հայ ժողովրդի տարբեր ներկայացուցիչներից ու հոգևորականությունից շարունակում էր

¹ «Առաջամարտ», № 1093, 22 դեկտեմբերի 1912 թ. (4 հունվարի 1913 թ.):

² Վահան Մալեղեան, Ճամբուս վրայ..., էջ 311:

³ «Ժամանակ», № 1318, 25 դեկտեմբերի 1912 թ. (7 հունվարի 1913 թ.):

ստանալ մեծաթիվ դիմումներ Փոքր Ասիայի հայերին պաշտպան կանգնելու և, անգամ, հայկական նահանգները ուսական ուղղման ուժով գրավելու մասին խնդրանքներով:

Այդ հարցով իրեն լուրջ մտահոգություններ ներշնչող ուսական կառավարությունը քանիցս ստիպված էր զուսպ ու խաղաղ միջամտություններով Բ. Դոան ուղղորդությունը հրավիրել Հայաստանում նոր բարդացումների առաջացման հնարավորությունը չեզոքացնելու անհրաժեշտության վրա: Իսկ հայերի դիմումներին տրվող պատասխաններում ուսական կողմը, միշտ հաստատելով թուրքահայության նկատմամբ իր բարեհաճ վերաբերմունքը, միաժամանակ մատնանշում էր այն հանգամանքը, որ հայկական հարցի բորբոքումը այդ պահին, երբ դեռ չի ավարտվել բալկանյան ճգնաժամը, ինքը համարում է տարածած հենց հայերի շահերի առումով, որ հարցի միջազգային քննարկման պարագայում դժվար թե հնարավոր լինի ակնկալել տերությունների լիակատար համերաչխությունը, մինչդեռ ցանկացած տարածայնության ի հայտ գալը վարպետորեն կօգտագործվեր Թուրքիայի կողմից¹:

Ահա թե ինչու նախքան հայկական հարցում գործնական քայլեր կատարելը Ռուսական կառավարությունը ցանկանում էր իմանալ, թե տվյալ պահին արդյո՞ք կա իր դաշնակիցներ Անգլիայի և Ֆրանսիայի հետ համերաչխ գործակցության հնարավորություն:

Դեկտեմբերի 13-ի 898 թվակիր գաղտնի նամակով արտգործնախարար Սազոնովը Լոնդոնի և Փարիզի ուսաց դեսպաններին գրում էր.

«Բնավ չթաքցնելով Հայկական հարցի ողջ բարդությունն ու դժվարությունը՝ մենք, այդուհանդերձ, կարծում ենք, որ հարկավոր է հենց հիմա ձեռնամուխ լինել Փարիզյան և Լոնդոնյան կաբինետների հետ կարծիքների անհետաձգելի փոխանակմանը՝ ընդհանուր կարծիքներ ու համատեղ գործողություններ հաստատելու համար»²: Ապա արտգործնախարարն ավելացնում էր.

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1909-1912, д. 3459, л. 91 об.

² Նույն տեղում:

«Չկանխորոշելով այն միջոցառումները, որոնց մշակումը, մեր կարծիքով, ամենից լավ կարելի էր հանձնարարել Կոստանդնուպոլսում երեք Տերությունների դեսպաններին, մենք կարծում ենք, որ հենց այժմ ցանկալի կլիներ քննարկել, թե արդյոք չի՞ պահանջում Բեռլինի Տրակտատի 61-րդ հոդվածով նախատեսված այս հարցի լուծման համար Պորտայի ինքնուրույն նախաձեռնության վրա որոշակի երաշխիքների և եվրոպական հասկացության սահմանում»¹:

Նամակի վերջում Սազոնովը դեսպաններին ցուցում էր տալիս. «Մնդրում եմ Ձեզ մտերմաբար բացատրվել նշված իմաստով արտաքին գործոց նախարարների հետ և հետագայի մասին տեղեկացնել [մեր] նախարարությունը հնարավորինս կարճ ժամկետում»²:

Այսպիսով, պոլսահայ քաղաքական միտքը մինչև 1912 թ. վերջը բաժանված էր երկու մասի: Հայ գործիչների փոքրամասնությունը Հայկական հարցի լուծումն առաջվա պես կապում էր թուրք կառավարության բարյացակամության, նրա կողմից Հայաստանում իրականացվելիք բարենորոգումների հետ*:

Հայ գործիչների մեծ մասը, սակայն, ուրիշ կերպ էր մտածում. հայկական հարցի լուծումը նա կապում էր միայն ու միայն Ռուսաստանի և Եվրոպայի հետ: Այդ մտածումը կարճ ժամանակում՝ 1912 թ. վերջավորության և 1913 թ. սկզբի օրերի ու շաբաթների ընթացքում, դարձավ ամբողջ Հայության տեսակետը: Այդ պատմական պահին հայ ժողովուրդն արդեն համերաչխ էր: Դա մի բացառիկ պահ էր: Հայությունն ուներ մի ծրագիր, մի ուղղություն և մեծ տերություններին ու թուրքին ներկայանում էր գաղափարական ցանկալի միասնությամբ: Նա վերջնականապես ամեն հույս կտրել էր օսմանյան կառավարությունից: Գործի հաջող ընթացքը հրամայաբար պահանջում էր ամեն

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1909-1912, д. 3459, л. 91 об.

² Նույն տեղում, լ. 92.

* Գոնե Ադանայի կոտորածից և դրանից հետո եկած չորս տարիների փորձից այդ գործիչները պետք է եզրահանգեին, որ սխալ է իրենց որդեգրած ուղին:

ջանք թափել՝ պոլսահայության մեջ ստեղծված համերաշխությունը լինի տևական: Եթե ամուր լինելը իրենց թիկունքը, ապա հայոց պատրիարքարանը և ազգային վարչությունը՝ որպես ամբողջ թուրքահայության պաշտոնական ներկայացուցչություն, զգալով հայ ժողովրդի վստահությունը և համախոհությունը, թուրքի ու Եվրոպայի հետ կխոսեին համարձակ ու արժանապատվորեն:

ՀԱՄԱԲՆՈՒՅԹ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Պետերբուրգի հայկական խմբակի (клубок) 1912 թ. նոյեմբերի 16-ի առաջին (հիմնադիր) նիստի հանձնարարականի համաձայն՝ ղեկավարների 9-ի հերթական նիստը որոշում ընդունեց իր անդամներից երկուսին ուղարկել Օսմանյան մայրաքաղաք՝ ծանոթանալու տեղի իրավիճակին, հավաքելու նորագույն տեղեկություններ ու նյութեր, որոնք անհրաժեշտ կլինեին հետագա աշխատանքների համար: Հենց նույն նիստը հաստատեց Կ. Պոլիս գնացողների անունները՝ Նիկողայոս Ադոնց և Սիրական Տիգրանյան: Միաժամանակ նիստի անդամներ անձնական գործերով շուտով Լոնդոն մեկնելու պատրաստություն տեսնող Ա. Ղուկասովին խնդրեցին այնտեղ հավաքել անհրաժեշտ տեղեկություններ Բրիտանիայի մայրաքաղաքի հասարակական-քաղաքական ոլորտներում հայկական հարցի հանդեպ տիրող տրամադրությունների մասին և ստացած տպավորությունները փոխանցել խմբակի նախագահ Գ. Տիգրանյանին: Դեկտեմբերի 28-ին խմբակի անդամներն արդեն Թուրքիայի մայրաքաղաքում էին:

Պետերբուրգյան հայկական խմբակի անդամները Կ. Պոլսում հանդիպումներ ունեցան միայն հայ պահպանողական շրջանների մի քանի առավել ազդեցիկ ներկայացուցիչների հետ, լսեցին նրանց տեսակետները:

Մաղաքիա Օրմանյանի տեսակետը: - Սրբազանի հետ հանդիպման ժամանակ նա ասել էր, որ ուսմանը չեն կարող հաշտվել այն բանի հետ, եթե բեռլինյան վեհաժողովի (1878 թ.) տե-

րությունները փորձեն բռնատիրել Սան-Ստեֆանոյում իրենց ձեռք բերած իրավունքները: Եվ շատ բնական կլինեի, եթե ուսական դիվանագիտությունը գործեր միայն Սան-Ստեֆանոյի նախնական պայմանագրի ոգով՝ արհամարհելով բեռլինյան վեհաժողովի որոշումները, այսինքն՝ ձգտեր տերությունների կողմից Հայկական հարցի ուղղել իր և իր այսօրվա դաշնակիցների ազդեցության ոլորտ: Իսկ դա նշանակում է, որ Հայկական հարցը պետք է քննարկվի ոչ թե բոլոր վեց տերությունների դեսպանների կոնֆերանսում, այլ միայն Ռուսաստանի իրավունքների ոլորտում, որոնք նա ձեռք էր բերել Սան-Ստեֆանոյում: Եթե մյուս մեծ տերությունները, եզրակացնում էր Օրմանյանը, փորձեն Սան-Ստեֆանոյում ընդունած որոշումը renversement* անել, այդ դեպքում ուսական դիվանագիտության խնդիրը պետք է լինի ձգտել այն ենթարկել re-renversement-ի** , այսինքն՝ վերադառնալ Սան-Ստեֆանոյին:

Ինչ վերաբերում էր բարենորոգումների էությունը, ապա Օրմանյանը գտնում էր, որ լավագույնը կլինեի հայկական վիլայեթներից ստեղծել Լիբանանի նման մի բան, եթե, իհարկե, դա ցանկալի է Եռյակ համաձայնությունը: Բայց եթե դա հնարավոր չլինեի, ապա Եվրոպայի կամ նույնիսկ Թուրքիայի նախագծած յուրաքանչյուր բարեփոխում հայերին կբավարարեր, միայն եթե դա իրականացվեր: Բայց քանի որ ցանկալի իրականացում հնարավոր չէ սպասել Թուրքիայից, ուստի մնում է Ռուսաստանի կողմից նրա վրա ճնշում գործադրելը՝ սպառնալիքներով ու պահանջներ ներկայացնելով՝:

Գաբրիել Նորատունկյանի տեսակետը:- Տեղեկացված լինելով, որ Թուրքիայի արտգործնախարար Գաբրիել Նորատունկյանի հետ Մաղաքիա Օրմանյանը բարեկամական շատ սերտ հարաբերություններ ունի, Պետերբուրգի հայկական խմբակի անդամները վերջինիս խնդրում են կազմակերպել իրենց հան-

* Renversement – տապալել, հեղաբեկել:

** Re-renversement – վերականգնման ենթարկել:

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 95, թ. 18-19:

դիպուհը նրա հետ՝ ակնկալելով, որ զրույցը կկրի ոչ թե պաշտոնական ու դիվանագիտորեն, այլ մտերմիկ ու անկեղծ բնույթ:

Նորատունկյանի հետ տեսակցությունը տեղի է ունենում նրա տանը 1913 թ. հունվարի 1-ի առավոտյան: Հենց սկզբից նախարարն իր ձեռքը վերցրեց զրույցի թելը և սկսեց հարցուփորձը: Նմբակի անդամների՝ օրեր հետո գրած գեկուցագրում կարդում ենք. «Այս ամբողջ ժամանակի ընթացքում նախարարին էին բերում նամակներ ու թղթեր, այցետոմսեր, գեկուցում էին այս կամ այն անձնավորության Կ. Պոլիս գալու մասին: Վերջապես մենք չուռ տվեցինք զրույցը և նրան բացատրեցինք Կոնստանդնուպոլիս մեր գալու և հատկապես իրեն այցելելու նպատակը: Երևի անքաղաքավարի և անչնորհքություն է, ասացինք մենք, դիմել արտաքին քաղաքականության նախարարին և Թուրքիայի նախարարների կաբինետի անդամին Հայկական հարցով: Բայց մեզ՝ Հայերիս, ավելի աններելի կլիներ, եթե նման պատմական պահին մենք անտեսեինք իրեն և արհամարհեինք նրա խորհուրդները ամբողջ հայության համար այդքան կենսական հարցի վերաբերյալ, որում նա առավել գիտակ, երևի, միակ իրազեկ հայն է: Ահա թե ինչու ոչ միայն Պետերբուրգի հայերը, այլ նաև ընդհանրապես ամենուրեք բոլոր հայերն իրենց պարտքն են համարում իմանալ նրա հայեցակետը մեզ հուզող հարցի վերաբերյալ և նրա կարծիքը դրա լուծման հնարավորություն մասին»¹:

Նորատունկյանը պատասխանում է, որ ինքը ուրախ է և պատրաստ ամենայն անկեղծությամբ արտահայտվել տվյալ հարցի մասին, քանի որ չի ցանկանում և անհրաժեշտ չի համարում թաքցնել իր հայացքները: Ինքը լրիվ ազատ է դրանք արտահայտելու նաև նախարարների խորհրդում, որտեղ իր պաշտոնակիցները բարյացակամորեն են տրամադրված հայերի կարիքների նկատմամբ: Կտա՞ն արդյոք հայերին բարենորոգումներ: Նորատունկյանի կարծիքով, դա կախված էր այն բանից, թե կբարենորոգվի՞ Թուրքիան ընդհանրապես: Եթե Թուրքիա-

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 95, թ. 18-19:

յում հաստատվի լավագույն կարգուկանոն, ապա հայերը, որոնք առավել մշակութային և աշխատունակ են ուրիշներից, հետևապես՝ ուրիշներից էլ չուտ կօգտագործեն այդ բարելավված իրադրությունը: Բայց նախարարը չպատասխանեց, թե կա՞ն արդյոք Թուրքիայում կարգուկանոնի բարելավման, ներկայիս կառավարության հաստատակամության ու բարի ցանկությունների հաստատունության ինչ-որ երաշխիքներ: Հայկական վիլայեթների բարենորոգումների մասին Նորատունկյանն ասաց, որ դրանք այժմ անցկացվելու են վեց (և ոչ թե չորս) վիլայեթներում, որոնք բաժանվում են երկու գոտու, և որոնք տարբեր չափով են ենթարկվելու բարենորոգման: Նուսափողական այդ պատասխանից հետո նախարարը խորհուրդ տվեց բարձրացված հարցի մասին մանրամասն իմանալ Օրմանյանից:

Գ. Նորատունկյանի հետ պետերբուրգյան հայ պատվիրակների տեսակցությունը տևեց ավելի քան 40 րոպե, բայց վերջիններս մնացին չբավարարված: Կարելի՞ էր արդյոք հուսալ, որ հասկանալով իր պետության իրական կարիքներն ու օգուտները՝ Թուրքական կառավարությունը սեփական նախաձեռնությամբ հայերին կտա անհրաժեշտ բարենորոգումներ: Ուղղակի պատասխան նրանք չստացան: Հայերի հույսերը Նորատունկյանը կապեց ոչ թե Հայաստանի տեղական վերակառուցման, այլ ամբողջ Թուրքիայի բարենորոգումների հետ, որն անիրական էր¹:

Հանդիպում Պետրոս Հալաջյանի հետ: – Սաիդ փաշայի երիտթուրքական կառավարության նախկին նախարար այս երիտասարդ գործչի հետ հանդիպումն առանձնապես արդյունավետ չէր եղել, եթե չհաշվենք այն արժեքավոր տեղեկությունը, որ նա հաղորդել էր քրդական ինքնավարության մասին: Հալաջյանն ասել էր, թե Թուրքերը, հատկապես երիտթուրքերը ոչ մի դեպքում չեն համաձայնի քրդերի կողմից բարձրացրած ինքնավարության պահանջի հետ, քանի որ դա հակասում է Իթ-Թիհադի հետապնդած Թուրքացման խնդիրներին: Հալաջյանը

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 95, թ. 20-21:

կարծիք էր հայտնել, որ երիտթուրքերն ավելի շուտ հայերին կտան ինքնորոշում, քան քրդերին, չնայած սրանց ամեն կերպ կշարունակեն հրապուրել ու փայփայել՝ միշտ իրենց կողմում պահելու համար¹:

Գրիգոր Զոհրապի մտորումները: – Իմանալով պետերբուրգյան պատվիրակների այցելության նպատակի մասին՝ Գրիգոր Զոհրապը հաճույքով ընդունեց նրանց:

Գրող ու փաստաբան, հասարակական գործիչ, թուրքական խորհրդարանի անդամ Զոհրապը պայծառ ուղեղով և պերճախոս լեզվով ուշադրություն էր գրավում ոչ միայն հայկական միջավայրում:

Նրա կողմից հյուրընկալվածների հիմնական հարցն էր՝ արդյոք Հնարավոր է, որ Հայկական հարցը դրվի դեսպանների՝ Լոնդոնի կոնֆերանսի քննարկմանը:

Զոհրապը պատասխանեց, որ իր կարծիքով Լոնդոնի կոնֆերանսը չի անդրադառնա Հայկական հարցին, քանի որ նա ունի հստակ որոշված ծրագիր: Բաղձալի բարենորոգումների էությունն այն է, որ նշանակվի գերագույն կոմիսար (վելիազում) տերությունների հովանավորությամբ: Մնացյալը ոչ մի էական նշանակություն չունի, և կարելի է հաշտվել թուրքիայում առկա սահմանակարգերի հետ: Կարելի է թողնել նաև ներկա վարչական բաժանումները: Մի խոսքով, այն ամենը, ինչը փոփոխության ենթարկվելու դեպքում անցնելու է օրենսդրական հաստատությունով, պետք է թողնել նախկինը՝ բարդություններից խուսափելու համար: Հայկական նահանգների բարենորոգումները պետք է իրավաբանորեն այնպես կազմակերպել, որ Հնարավորության սահմաններում չհատվեն կայսերական գործող օրենքների ու կանոնների հետ:

Անդրադառնալով քրդերի նկատմամբ Ռուսաստանի վարած քաղաքականությունը՝ Զոհրապն ասում է, որ այդ հարցն ինքը բարձրացրել է Կ. Պոլսի ռուսական դեսպանությունում, որտեղ իրեն բացատրել են, որ Ռուսաստանը դեմ չէ օգտագործել

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 95, թ. 21-22:

քրդերին, բայց երբեք նրանց չի օգնի կամ չի աջակցի ընդդեմ հայերի¹:

Տեսակցություն Տիրան Քելեկյանի հետ: – Քելեկյանը թուրքական կառավարական կիսապաշտոնական օրգան «Սաբահ» թերթի խմբագիրն էր, Կոստանդնուպոլսի թուրքական համալսարանում միջազգային իրավունքի դասախոս: Նա ազատ մուտք ուներ կառավարական բարձրագույն դեմքերի, ներառյալ սաղրազամի մոտ: Թուրքական կառավարական շրջանակներում Քելեկյանը վայելում էր լիակատար վստահություն և ընդունվում որպես իրենց մարդ: Որպես կիսապաշտոնական օրգանի խմբագիր, նա այցելում էր նախարարներին և որոշ ազդեցություն ուներ նրանց վրա: Պետերբուրգյան պատվիրակների այցելության նախորդ օրը նրան ընդունել էր սուլթանը, և այդ մասին նա մանրամասը նկարագրել էր իր թերթում:

Ռուսաստանից ժամանած հայ գործիչների հետ հանդիպմանը Քելեկյանը սկսեց նրանից, որ ինքն իրեն համարում է կիսով չափ հայ, հավատարմորեն ծառայում է թուրքիային և նրա կառավարությանը, բայց հետաքրքրվում է այն ամենով, ինչ վերաբերում է հայերին, հետևում է հայ մամուլին ու գրականությանը, բայց միայն ազատ ժամերին:

Անդրադառնալով Հայկական հարցի վիճակին՝ Քելեկյանն ասաց, թե «ներկա պահին այն գոյություն չունի», ավելի ճիշտ՝ այն միայն գոյություն ունի ինչպես, օրինակ, լեհական կամ ֆինլանդական հարցերը: Բայց միաժամանակ չեչտեց, թե «դա ժամանակի հարց է, Հայկական հարցը վաղ թե ուշ կլուծվի», քանի որ Ռուսաստանի առաջընթացը դեպի հարավ անխուսափելի է: Այնուհետև նա խոր համոզմունք հայտնեց, որ թուրքիան ու թուրքերը, որոնք ընդհանրապես ընդունակ չեն ծավալելու քաղաքական ստեղծագործ գործունեություն, չեն դադարեցնում իրենց կործանարար գործողություններն ու ոճրագործությունները: Հայերը բարենորոգումների առումով ոչինչ լավ բան չպիտի սպասեն թուրքիայից, քանի որ նա հակված չէ ստեղծագործ

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 95, թ. 23-25:

ծական որևէ գործունեություն: Միայն ինքնավարությունը կարող է փրկել Հայաստանը, այն էլ ինքնավարություն Ռուսական իշխանությունից տակ: Դժբախտաբար իր ճակատագրին վերաբերող հարցերում որոշողը Հայությունը չէ, այլ հզոր տերությունների կամքը: Ուստի Հայկական հարցը կլուծվի այն ժամանակ և այնպես, ինչպես կցանկանան տերությունները:

Քելեկյանի գրուցակիցների այն հարցին, թե ինչ կարծիք ունի պատրիարքարանի գործունեության մասին, նա պատասխանել էր, թե ինքը Իզմիրյան պատրիարքի պաշտոնավարության տարիներին եղել է Ազգային վարչության քարտուղար, և այն ժամանակվա ու ներկայիս պատրիարքարանի միջև ոչ մի նմանություն չկա: Անբարենպաստ կարծիք հայտնելով պատրիարքարանի, առկա Ազգային ժողովի անձնակազմի և նրա մարմինների, ընդհանրապես թուրքահայ քաղաքական գործիչների մասին՝ նա իր խոսքը այսպես էր վերջացրել. «Ես բոլորին կկախեի: Նրանք ոչինչ չեն անում, միայն դատարկաբանում են, աղմկում և վնաս հասցնում ազգին: Ես դեմ չեմ ժողովրդական ինքնավարությունը (Այս բառակապակցությունից չի երևում, թե նա նկատի ուներ Ազգային սահմանադրությամբ հայերին տրված իրավունքները, թե՞ վարչական ինքնավարություն կայսրության կազմում: - Հ. Ս.), այլ դեմ եմ նման ձևերին ու անձնավորություններին»¹:

Բյուզանդ Քեչեյանի մտածումները: - Սա պատրիարքարանի ոչ պաշտոնական օրգան «Բիւզանդիոն» թերթի խմբագիրն էր, խոշոր հրատարակիչ և հրապարակախոս: Զրույցը հիմնականում ընթացել էր միայն մի հարցի շուրջ. առանց հայկական վիլայեթների ճակատագրին Ռուսաստանի միջամտության հայությունը ապագա ունի՞, թե՞ ոչ: Բյուզանդ Քեչեյանը կտրակա-նապես ասել էր, թե չունի²:

Հանդիպում Նազարեթ Տաղավարյանի հետ: - Ծագումով Սվազից այս գործիչը առաջին գումարման Օսմանյան խորհրդա-

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 95, թ. 25-26:

² Նույն տեղում, թ. 27-28:

րանի անդամ էր եղել, կայսրության գավառական կյանքի հիանալի գիտակ էր:

Դեռ նախորդ տարվա ամռանը Տաղավարյանը ճանապարհորդել էր Հայաստանում, չըջել հայկական բոլոր վիլայեթներում, ծանոթացել երկրի վիճակին, բնակչության կազմին ու կենցաղին: Նա պետերբուրգյան պատվիրակներին պատմեց, որ իր դիտարկումները ցույց են տվել հետևյալ իրողությունը. Հայաստանում կան ամբողջական շրջաններ՝ բնակեցված մուսուլմանացված հայերով: Էրզրումը և Էրզինջանը շրջապատող մուսուլմանական գոտին եթե ոչ ամբողջությամբ, ապա նկատելի մասով հայկական ծագում ունի: Չնայած Թորթոմի, Բայբուրդի, Էրզինջանի ծայրամասերի բնակիչներն իրենց անվանում են մուսուլմաններ և խոսում են թուրքերեն, բայց նրանց արտաքինը, կենցաղի շատ առանձնահատկություններ, որոշ սովորույթներ ու ծիսակատարություններ խոսում են նախկինում նրանց քրիստոնյաներ լինելու մասին: Նույնիսկ որոշ շրջաններում, օրինակ՝ Թորթոմում, պահպանվել են ավանդապատումներ քրիստոնյաներին մուսուլման դարձնելու ժամանակի և պայմանների մասին:

Ինչպես վերը թվարկած դեմքերի, այնպես էլ գրական, քաղաքական ու հասարակական մի քանի ուրիշ գործիչների հետ Կ. Պոլսում ունեցած հանդիպումների ու զրույցների արդյունքում պետերբուրգյան հայ պատվիրակները եկել էին այն համոզման, որ տվյալ ժամանակափուլում թուրքահայության հիմնական հատվածների մտքում հաստատագրված է երկու գաղափար. ա) թուրքական պետությունն ընդունակ չէ բարեփոխվելու և երկրում ինչ-որ բան բարենորոգելու, բ) Հայաստանի բարենորոգումների համար պետք է հենարան ու հիմքեր փնտրել դրսում և ամենից առաջ Ռուսաստանում:

Վերադառնալով Պետերբուրգ՝ նրանք գրում են հաշվետվություն և ներկայացնում տեղի հայկական խմբակին:

“Триазуатский край” թերթը գրում էր, որ Կ. Պոլսից Պետերբուրգ վերադառնալուց հետո պատվիրակները մի զեկույց են ներկայացնելու Նմբակին, որից պարզ է դառնալու, որ Հայկական հարցի ծանրության կենտրոնը գտնվում է Պոլսում, որովհետև այստեղ հայ պաշտոնական շրջանակներն անմիջական

հարաբերությունների մեջ են եվրոպական պետությունների ներկայացուցիչների հետ¹:

Պետերբուրգի հայկական խմբակի կողմից լիազորված նրա անդամներ Պ. Ղուկասյանը և Հ. Սաղաթեյանը 1913 թ. փետրվարի 1-ին կաթողիկոսին գրած նամակով հայտնում էին, որ հունվարի կեսերին Պոլսից վերադարձած Նիկողայոս Ադոնցը և Սիրական Տիգրանյանն իրենց հետ բերել են բազմակողմանի տեղեկություններ Թուրքիայում հայերի վիճակի և տեղի հայ գործիչների կողմից հայկական հարցի հարուցման ուղղությամբ կատարված աշխատանքների մասին: Նրանք ավելացնում էին, որ հայկական խմբակի հանձնարարության համաձայն՝ Կ. Պոլիս այցելած երկու գործիչներն այնտեղ կատարած աշխատանքների մասին մանրամասն տեղեկանք կուղարկեն էջմիածին:

**ԺԱՄԱՆԱԿԱՎՐԵՊ ԴԻՄՈՒՄ ԴԵՍՊԱՆԱՆՈՐՀՐԴԻՆ:
ԱՆՈՐՈՇ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ ՌՈՒՍԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԻՅ**

Սկզբում կարծում էին, թե մոտ ապագայում Լոնդոնում տեղի է ունենալու Բեռլինի 1878 թ. դաշնագիրը ստորագրող եվրոպական վեց մեծ տերությունների ղեկավարների կոնֆերանս կամ կոնգրես, և որ Հայոց հարցի լուծման համար հենց այդ կոնֆերանսին պետք է դիմեր կաթողիկոսական պատվիրակությունը: Բայց շուտով լուր տարածվեց, թե այդ ակնկալյալ կոնֆերանսը լիազորություն չի ունենալու, բացի Բալկաններից, զբաղվելու այլ հարցերով ևս:

Պողոս Նուբարը դիմումներ հղեց այդ ղեսպանախորհրդին՝ առաջարկելով ընդունել հայկական պատվիրակությունը, լսել Թուրքահայերի վիճակի մասին նրա հաղորդումը և միջոցներ փնտրել, թե ինչպես ազդել Թուրք կառավարության վրա,

¹ Ռուսական թերթի սույն հոդվածի թարգմանությունը տե՛ս «Հորիզոն», 1 օգոստոսի 1913 թ.:

որպեսզի նա քայլեր անի Հայաստանում բարենորոգումներ կատարելու ուղղությամբ:

Լոնդոնի ղեսպանախորհուրդը*, սակայն, հակված չէր բավարարելու Նուբարի դիմումը՝ պատճառաբանելով, թե բալկանյան ճգնաժամին վերաբերող հարցերից դուրս ինքը որևէ իրավասություն չունի զբաղվելու նաև ուրիշ հարցերով: Այս հանգամանքը հատուկ հաստատեցին ոչ միայն վեց պետությունների ղեսպանները, այլև Անգլիայի, Ֆրանսիայի և Ավստրիայի արտաքին գործերի նախարարները:

Հայտնի դարձավ նաև, որ ղեսպանաժողովը, որ կազմված է տերությունների՝ Լոնդոնում հավատարմագրված մեծ ղեսպաններից, վճռական ոչ մի ձայն չունի, այլ մի ժամանակավոր ու զուտ խորհրդակցական մարմին է, հետևապես նա այն գերագույն ատյանը չէ, որին հայերը պետք է դիմեին իրենց դատի քննություն և լուծման համար:

Օրեր առաջ, երբ դեռ Հայտնի չէր, թե ինչպիսի լիազորություններ ունի ղեսպանաժողովը, Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V-ը դիմել էր ռուսաց կառավարությանը՝ նպատակ ունենալով պարզել, թե նա ինչպես է տեսնում հայկական հարցի ապագան և արդյո՞ք տրամադիր է այդ ուղղությամբ գործուն աջակցություն ցուցաբերել Հայերին:

Որոշ ժամանակ անց Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով-Դաչկովի միջոցով էջմիածնում ստացվում է Կաթողիկոսի դիմումին ռուսաց կառավարության պատասխանը:

Ահա այդ պատասխանի համառոտ բովանդակությունը.

«Հետևելով իր դարավոր ավանդությանը և համակված խորին համակրությամբ ղեպի հայ ժողովրդի տանջանքները, կայսերական կառավարությունը մտադիր է ապագայում ևս ամենաբարեհաճ դիրք բռնել Թուրքիայի հարստահարյալ հայ ժողովրդի կարիքների վերաբերյալ և գործադրել իր բոլոր ջանքերը, որպեսզի ջնջվի տա այժմ գոյություն ունեցող զեղծումները և իրագործել տա անհրաժեշտ ռեֆորմները: Սակայն կայսերական կառավարությունը կարծում է, որ հենց իրենց՝ հայերի շահերի

* Կամ ղեսպանաժողովը:

տեսակետից ներկա ռուսներն հարմար չէ արծարծելու հայկական հարցն իր ամբողջ ծավալով: Այդ կարևոր և սուր հարցը օրակարգի մեջ կմտցվի իսկույն (ընդգծումը մերն է:), երբ պատերազմը կվերջանա և քաղաքական վիճակը կորցրած կլինի իր լարվածությունը: Բայց բալկանյան ճգնաժամը դեռ չի վերջացած, հայկական հարցը բարձրացնելը կարող է երկպառակություններ և ընդդիմադրություն առաջ բերել որոշ մեծ պետությունների կողմից, և այդ անհամաձայնությունը կարող է վնասել գործին»¹:

Ամենայն հայոց կաթողիկոսին ուսաց կառավարություն հղած պատասխան գրությունից դեռ անտեղյակ, Պողոս Նուբար փաշան իր հերթին դիմել էր Փարիզում ուսաց դեսպան Իզվոլսկուն և խնդրել, որպեսզի վերջինս պարզաբանում տա, թե հայկական հարցի մասին ինչպիսին է իր կառավարության պաշտոնական դիրքը:

Գեսպան Իզվոլսկին ընդունում է Պողոս Նուբարին և նրան հանձնում Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ին ուղղված իր կառավարության պատասխան գրության համառոտ պատճենը: Միաժամանակ դեսպանը ցանկություն է հայտնում, որ Պետերբուրգից ստացված գրության լրիվ բովանդակությունը՝ որպես տվյալ ժամանակաշրջանում հայոց հարցի մասին Ռուսաստանի ունեցած պաշտոնական տեսակետ, տեղյակ պահվի հայ հասարակությանը²:

Թիֆլիսում կայացած Ազգային բյուրոյի անդամների և Վեհափառ կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչների համատեղ ժողովը մտքերի լայն փոխանակումից հետո ընդունեց որոշում, որի իմաստն էր՝ Պետերբուրգի կառավարությունը դրդել ավելի որոշ արտահայտվելու հայոց հարցի հանդեպ ուսաց քաղաքականության մասին:

Ռուսաց կառավարությունը նոր գրություն է ուղարկում հայոց կաթողիկոսին (որն առաջին անգամ տպագրվել էր Փա-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, թ. 20:

² «Մշակ», № 3, 6 Հունվարի 1913 թ.:

րիզի “Temps” թերթի 1913 թ. Հունվարի 4-ի համարում): Փաստաթղթի բովանդակությունը Ֆրանսիայի և եվրոպական մյուս երկրների ղեկավար շրջաններում ընդունվեց որպես Ռուսաստանի կիսապաշտոնական տեսակետ¹:

Նույն “Temps”-ը «Ռուսաստանը և Հայաստանը» (“La Russie et L’Armenie”) վերնագրի տակ տպագրել էր Պետերբուրգից իր թղթակցից ստացած հետևյալ հեռագիրը. «Ես Ձեզ կարող եմ հավաստիորեն հայտնել, ուսական դիվանագիտական շրջանները հակված են մտածելու, որ հայոց հարցը չպետք է ենթարկվի Լոնդոնի դեսպանախորհրդին»²:

Ռուսաստանի պատասխանը թուրքական կառավարության համար հուսադրող չէր եղել: Երբ դեկտեմբերի 27-ին կառավա-

¹ Տե՛ս «Մշակ», № 3, 6 Հունվարի 1913 թ.:

² Տե՛ս նույն տեղում: Որքան էլ տարօրինակ էր, սվյալ պահին դա բխում էր ինչպես հայերի, այնպես էլ Թուրքիայի հակադիր շահերից: Անցած չորս տասնամյակներին դա բացառիկ դեպքերից մեկն էր, երբ պատմական մի որոշակի հատվածում դրանք չէին հակադրվում: Ելնելով հատկապես 1877-1878 թթ. փորձից, երբ Ռուսաստանը Սան-Ստեֆանոյում ձգտել էր միայնակ լուծել հայկական խնդիրը, որը շատ ձեռնտու էր հայությանը, բայց որը, ցավոք, այլ ընթացք ունեցավ. խնդրի լուծումը հանձնվեց մեծ պետություններին՝ իր ողջ բացասական հետևանքներով: 1912 թ. վերջերին նույնպես հայերն ուզում էին, որ Ռուսաստանը միայնակ ստանձնի իրենց ազգային հարցի լուծումը:

Իսկ թուրքերը հայկական հարցը չէին ցանկանում եվրոպական հրապարակ դուրս բերել միանգամայն այլ պատճառով: Մամուլը նշում էր, որ եվրոպական հասարակական կարծիքն այս անգամ թեքված է հայերի կողմը, և որ պետությունների դեսպանաժողովը, որը հայտարարում էր, թե բացի բալկանյան ճգնաժամից դուրս գալու ուղիներ փնտրելուց՝ ինքը լիազորված չէ որևէ ուրիշ խնդրով զբաղվելու, բացառված չէ, որ Հայաստանի հարցում թուրքերի հետ խոսի վերջնագրի լեզվով: Հենց դա է պատճառը, տեղեկացնում էին թերթերը, որ Բ. Դուռը 1912 թ. դեկտեմբերի վերջերին Պետերբուրգի իր դեսպան Թուրխան փաշային հանձնարարել է խնդրել ուսաց կառավարությանը, որ նա դեսպանների վեհաժողովում չհարուցի հայկական հարցը՝ խոստանալով դրա փոխարեն Սև ծովի թուրքական մասում Ռուսաստանին տալ ամեն տեսակ արտոնություններ ու առանձնաչորհույժներ, սրամաղրել զանազան կոնցեսիաներ:

րուծյան նիստը քննարկում էր երկրի արտաքին հարցերը, նույն պահին Կ. Պոլսում Պետերբուրգից ստացվեց Թուրքիան փաշայի հեռագիրը, որով հայտնում էր, թե Ռուսաստանը Թուրքիայի լուրջ ուշադրությունն է հրավիրում Անատոլիայի կացութայան վրա և բացահայտ սպառնում, որ եթե Բ. Դուռը մերժի հետևել իր պահանջին, ապա ինքը գործնական քայլեր կձեռնարկի քրիստոնյաների պաշտպանության համար:

Հայկական հարցով առայժմ լրջորեն զբաղվելու վերին իշխանությունների պատճառաբանությունները չէին համոզում ո՛չ էջմիածնին, ո՛չ Թիֆլիսի Ազգային բյուրոյին և ո՛չ հայկական մամուլի օրգաններին՝ պատճառ դառնալով խոր անհանգստություն հայկական բոլոր շրջանակներում*:

«Կովկասի լրաբերը» գրում էր. «եղավ մի պահ, որ կարծում էինք, թե հայերի երազը պիտի իրականանա, որ տխրութեան ծանր օրերը պիտի վերջանան, բայց յետոյ, միջազգային բարդութիւնների պատճառով, հասկացրին, թէ ժամանակը չէ հայոց խնդրի մասին խօսելու, թէ անհրաժեշտ է այդ խնդիրը յետաձգել: Հասկանալի է, որ այսքան կարեւոր գործի այդ յապաղումը հայ ժողովրդին վախ եւ անհանգստութիւն պատճառեց...»¹:

Թե՛ ռուսական կառավարության կողմից կաթողիկոսին տված պատասխանը և թե՛ պաշտոնական աղբյուրից քաղած

* Նշենք, որ Հայաստանի բարենորոգումների խնդրում ռուսական կառավարության թվացյալ ընկրկումը հայ կրոնական ու քաղաքական առանձին գործիչների մեջ առաջ էր բերել ինքնագործունեության ձգտումներ: Այսպես, Բեսարաբիայի հայոց թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոսը, առանց ստանալու էջմիածնի կամ Թիֆլիսի Ազգային բյուրոյի համաձայնությունը, մեկնել էր Պետերբուրգ՝ հանդիպելու կառավարության բարձրագույն պաշտոնյաների հետ և նույնիսկ Նիկոլայ II կայսրի հետ հանդիպելու թույլատվություն էր ստացել: «Новое Время» թերթի թղթակցի հետ գրույցի ընթացքում արքեպիսկոպոսն ասել էր. «Վաղը ես բազմ կունենամ մի քանի օր և ապա կարճ ժամանակով կը մեկնեմ Մոսկվա» (Տե՛ս «Կովկասի լրաբեր», № 45 (99), 27 փետրվարի 1913 թ.): Մեզ հայտնի չէ, թե Ներսես արքեպիսկոպոսն արժանացել էր կայսրի ընդունելությանը, թե՞ ոչ:

¹ Տե՛ս «Կովկասի լրաբեր», № 45 (99), 27 փետրվարի 1913 թ.:

«Temps»-ի համանման տեղեկությունները այլևս ոչ մի կասկած չէին թողնում, որ կաթողիկոսական պատգամավորությունը առայժմ պետք է հետաձգի իր պաշտոնական դիմումները, մինչև որ ռուսաց կառավարությունը պահը հարմար կգտնի հայկական հարցը դնել եվրոպական պետությունների սեղանի վրա: Պետք էր սպասել, ինչպես թելադրում էր ռուսական կառավարությունը, քանի որ հայերի հարցի հաջող լուծումը կախված էր բացառապես Ռուսաստանի բարեհաճ աջակցությունից, ինչպես այդ մասին հայտնել էին նաև մյուս պետությունների դիվանագիտական ներկայացուցիչները:

Հայկական հարցի նկատմամբ Ռուսաստանի այդ դիրքը ժամանակավոր էր, մինչև որ դիվանագիտական խողովակներով կարողանար ձեռք բերել մյուս հինգ մեծ պետությունների հավանությունը: Դա լավ էին ըմբռնում նաև Կ. Պոլսում: Ուստի Բ. Դուռը պատրաստ էր նոր դիմումներ անել Պետերբուրգին:

Այս նոր իրադրության մեջ, երբ ռուսական կառավարությունը որոշել էր մի կարճ ժամանակ վերապահ մնալ հայոց հարցի պաշտոնական արձարծումից, հայկական շրջանները անհամբեր սպասում էին, թե որքան երկար կտևի այդ «լուծությունը»: Բայց հայ գործիչները չարունակում էին իրենց անդադրում աշխատանքը:

Թիֆլիսի Ազգային բյուրոն որոշում ընդունեց մի նոր պատգամավորություն ուղարկել Պետերբուրգ՝ փորձելով այս անգամ պարզել իշխանության ավելի ցածր օղակներում հայությունը հուզող հարցի նկատմամբ գոյություն ունեցող տրամադրությունները, ինչպես նաև աշխատանք տանել ռուսական մամուլի առաջադեմ օրգանների հրապարակագիրների հետ:

Պատգամավորությունը պետք է բաղկացած լիներ երկու հոգևորական և երկու աշխարհական անձերից: Վերջիններիս պետք է ընտրեր Բյուրոն էջմիածնից նախապես հավանություն ստանալուց հետո: Նախատեսվեց, որ պատգամավորներին տրվելիք հանձնարարական նամակներն այս կամ այն կառավարական գործչին Կաթողիկոսը պետք է ուղարկի Բյուրոյի քննությունը: Ժողովից հետո պատգամավորներից ոմանք հանդես եկան առաջարկությամբ՝ Պետերբուրգ ուղարկել ոչ թե

չորս, այլ երկու պատգամավոր՝ մեկ աշխարհական և մեկ հեզևերական¹: Բայց շատ չանցած՝ Բյուրոյում տրամադրություն առաջացավ առայժմ հրաժարվել Պետերբուրգ մարդ ուղարկելու մտադրությունից, դրա փոխարեն հաճախակի նամակներ հղել մայրաքաղաք, հատկապես ուս լրագրողների հասցեներով²:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՓՈՆԱՐՔԱՅԻ ՀԵՏ

Իշխանությունների մոտ առայժմ ներկայացուցիչներ չուղարկելու Ազգային բյուրոյի որոշումը էջմիածնում ընդունվեց տարակուսանքով: Թե՛ Կաթողիկոսը և թե՛ Սինոդը գտնում էին, որ բախտորոշ այդ ժամին դարձյալ անփոխարինելի էին մնում անձնական շփումները իշխանությունների բարձրագույն պաշտոնյաների հետ: Եվ Գևորգ Վեհափառը նրանց հետ գործակցելու նորանոր ուղիներ էր փնտրում: Ի վերջո նա եզրակացություն էր հանգել այդ պահին դարձյալ դիմել Կովկասի փոխարքային:

Այդ նպատակով Գևորգ V Կաթողիկոսը կազմեց մի պատգամավորություն՝ փոխարքային ներկայանալու համար: Պատվիրակության մեջ էին էջմիածնի Սինոդի անդամ Մեսրոպ եպիսկոպոսը, Բագրատ վարդապետը, Ալեքսանդր Սատիսյանը և Սամսոն Հարությունյանը:

Դեկտեմբերի 25-ի առավոտյան պատգամավորության 3 անդամները էջմիածնից հասան Թիֆլիս, որտեղ նրանց միացավ քաղաքապետ Ալեքսանդր Սատիսյանը: Նույն օրը Մեսրոպ եպիսկոպոսը նամակով հայտնեց փոխարքային վեհափառ կաթողիկոսի կողմից նշանակված պատգամավորության մասին՝ միաժամանակ խնդրելով Նիկոլայ 2-րդ կայսրի անունով էջմիածնում կազմած մեմորանդումը հանձնելու համար նշանակել ընդունելություն:

Դեկտեմբերի 26-ի առավոտյան պատգամավորությունը լրիվ կազմով ներկայանում է փոխարքային և նրան հանձնում

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, թ. 31:

² Նույն տեղում, թ. 32:

կաթողիկոսի նամակն ու մեմորանդումը: Նամակում ողջ հայ ազգի անունից ոուսաց վեհապետին խնդրվում էր օգնության ձեռք մեկնել թուրք-քրդական հարստահարումների տակ հեծող հայությունը:

Ծանոթանալով կաթողիկոսի նամակին՝ փոխարքան ասում է, որ այնտեղ բացակայում է ամենակարևորը՝ այն, թե ինչ միջոցներով պետք է հասնել այդ նպատակի իրագործմանը:

Պատվիրակության անդամները պատասխանում են, որ նպատակը թուրքահայոց կյանքի, պատվի, գույքի ապահովումն է, իսկ դրա իրագործման միջոցների մասին ավելի լավ գիտեն դիվանագետները:

Փոխարքան ասում է, որ Ռուսաստանը ներկայումս չի կարող մտնել թուրքիա, քանի որ պայմանները խիստ աննպաստ են:

Ըստ պայմանավորվածության հաջորդ օրը՝ դեկտեմբերի 26-ի առավոտյան ժամը 10-ին, պատգամավորությունը կրկին հանդիպում է փոխարքային:

Հայ գործիչները Վորոնցով-Դաշկովին ասում են, որ հայերի հույսն ու սպասելիքն այն է, թե այս անգամ ոուսական կառավարությունը լուրջ ուշադրություն կդարձնի թուրքահայաստանի վրա, ուր կյանքը միանգամայն անտանելի է: Շեշտվում է, որ իրենք չեն հուսահատվում, որովհետև նախարարապետ Կոկովցևը և արտգործնախարար Սազոնովը, որքան իրենց հայտնի է, բարյացակամ են տրամադրված Հայկական հարցի նկատմամբ: Վորոնցով-Դաշկովն ասում է, որ թուրքահայաստանի հայաբնակ գավառների թուրք պաշտոնյաները վերջերս շարունակ երկյուղ են արտահայտում, թե միգուցե ոուսաց զորքը մտնի թուրքիա՝ հայերի նկատմամբ գործադրվող քրդական և թուրքական բռնությունների առաջն առնելու համար: Այդ պատճառով վալիներն առայժմ նախազգուշացնում են քրդերին, որ սրանք Ռուսաստանին առիթ չտան միջամտելու թուրքահայաստանի գործերին և ձեռնպահ մնան հայերին ճնշելուց:

Հայ պատգամավորները պատասխանում են, որ բնական է վալիների երկյուղը, բայց խնդիրն այն է, որ այն ժամանակավոր կլինի և կանցնի՝ հենց որ իմանան, որ Ռուսաց կառավարու-

Թյունը ձեռնպահ է և ոչ մի քայլ չի անելու հայերի պատվի, անձի և գույքի ապահովության համար:

Ոստք եղավ Պետերբուրգ՝ նախարարապետ Կոկովցևի և արտգործնախարար Սազոնովի մոտ պատգամավորություն ուղարկելու մասին: Փոխարքան շեշտեց, թե ինքը դրական է վերաբերվում այդ գաղափարին, և որ դա հատկապես նպատակահարմար կլինի գործի հաջողության տեսանկյունից:

Դեկտեմբերի 27-ի առավոտյան ժամը 10-ին պատգամավորությունը կրկին ներկայացավ փոխարքային: Վորոնցով-Դաշկովն ասաց, որ ինքը պատրաստել է կաթողիկոսին ուղարկելիք նամակը, և որ դրա ամբողջական տեքստն արդեն հաղորդել է Պետերբուրգ, որտեղի հաճությունը ստանալուց հետո միայն նամակը կուղարկվի էջմիածին:

Նամակի բովանդակությունը փոխարքան կարգաց ներկաներին, ինչը տեղիք տվեց նրանց դժգոհությունը: Վերջիններս իրենց անհամաձայնությունը հայտնեցին հատկապես 2 աննպաստ կետերի վերաբերյալ.

1. Հայկական հարցն այժմ չի կարող Լոնդոնի դեսպանաժողովի խորհրդակցությունների նյութ դառնալ,

2. Այդ խնդրով կաթողիկոսը չպիտի դիմի եվրոպական մյուս պետություններին:

Պատվիրակության անդամներն ամենայն մանրամասնությամբ փոխարքային բացատրեցին, որ նրա նամակը խիստ բացասական տպավորություն կթողնի հայության, հատկապես թուրքահայության վրա, և դա այն ժամանակ, երբ բոլոր հայերն առանց բացառության համոզված են, որ Ռուսաստանն անպատճառ կմիջամտի գործին, իր հովանավորության տակ կառնի թուրքահայերին, խիստ վերահսկողության ներքո թուրքերին կստիպի իրագործել անհրաժեշտ բարեփոխումներ: Շեշտվեց և այն, որ եթե թուրքական կառավարությունը, մանավանդ հայաբնակ վիլայեթների թուրք պաշտոնյաները իմանան, թե Ռուսաստանն այժմ ձեռնպահ է մնում և չի կամենում միջամտել թուրքահայաստանի գործերին, այն ժամանակ հայերի վիճակն ավելի անտանելի կդառնա և մինչև իսկ կարող է սոսկալի հետևանքներ ունենալ: Ի պատասխան՝ փոխարքան մի քանի

անգամ կրկնեց, որ Ռուսաստանը միայն ներկա աննպաստ պայմաններում է զգուշանում գործնական քայլեր անելուց, և դա երբեք չի նշանակում, թե նա դադարում է միջամտելուց թուրքահայերի դժվարին կյանքին և շարունակելու է դիվանագիտական ազդարարությունները: Այս խոսակցությունից հետո փոխարքան, գրիչը վերցնելով, ինքը սկսեց ձևակերպել այն գլխավոր կետերը, որոնց մասին մանրամասն բացատրություններ էր ստացել հայ պատվիրակներից: Վերջիններս խնդրեցին նրան, որ Ռուսաց կառավարության առջև հարց բարձրացնի Կ. Պոլսի իր դեսպանի և Թուրքահայաստանի իր հյուպատոսների միջոցով վերահսկողություն սահմանելու հայոց վրա, որպեսզի այնտեղ դրությունն ավելի չսրվի: Բացատրվեց, որ նախարարապետ Կոկովցևի և արտգործնախարար Սազոնովի տված խորհրդի համաձայն և բոլոր կողմերի հայերի ցանկությունները հաշվի առնելով՝ եվրոպական պետությունների ներկայացուցիչների՝ Լոնդոնի կոնֆերանսում աշխատելու համար կաթողիկոսն իր կողմից առաջադրել է Պողոս փաշա Նուբարին, որը Թուրքահայաստանի բարենորոգումների հարցով աշխատելու է ռուսական վերահսկողության տակ: Նրանք հավելեցին, որ Կաթողիկոսը դեռ հրահանգ չի տվել փաշային՝ սպասելով Ռուսաց կառավարության պատասխանին, որից հետո միայն Նուբար փաշան, ի նպաստ բերելով իր անհատական հեղինակավոր դիրքը, կկատարի մասնավոր դիմումներ, իսկ պաշտոնական դիմումներ անելու համար սպասել և հեռագրով կաթողիկոսին խնդրել է ստանալ ռուսական կառավարության համաձայնությունը: Հայկական բախտորոշ խնդրում գլխավոր դերը խաղալու է Ռուսաստանը. համոզմունք էին հայտնում Կաթողիկոսի ներկայացուցիչները:

Փոխարքան նշեց, որ Պողոս Նուբար փաշան, ձեռնարկելով իր գործը, պետք է աշխատի ռուսական կառավարության վերահսկողության ներքո, եթե վերջինս հանձն առնի Թուրքահայաստանի բարենորոգումների ղեկավար դերը: Միաժամանակ նա նշեց, որ Թուրքիայի ներքին գործոց նախարար Ռեչիդ բեյի հրահանգով օրերս Կ. Պոլսում կազմվել է 4 հոգուց կազմված մի մասնախումբ, որը պիտի զբաղվի բարենորոգումների խնդրով,

իսկ դա նշանակում է, որ թուլանում է Թուրքահայաստանի հարցերին Ռուսաստանի միջամտության անհրաժեշտությունը: Պատվիրակները, իրողությունը պարզելով, ասացին, որ Ռեչիդ բեյի կազմած մասնախումբը ոչ մի վստահություն չի վայելում հայերի շրջանում, քանի որ նրանք քաջ գիտակցում են, որ դրանով թուրքական կառավարությունը ցանկանում է ռուսների միջամտության առաջն առնել: Նրանք կրկին շեշտեցին, որ բոլոր հայերն առանց կուսակցական խտրության համաձայն են, որ ոչ միայն Թուրքահայաստանի բարենորոգումների նախաձեռնողը լինի Ռուսաստանը, այլև որ եվրոպական պետությունների համաձայնությամբ բարենորոգումների իրագործման վրա վերահսկողության իրավունքը պատկանի Ռուսաստանին:

Փոխարքան խոստացավ տեղի ունեցած հանդիպման ընթացքի մասին հեռագրով մանրամասն հայտնել Պետերբուրգ, խոստացավ նաև աջակցել, որ պատասխանը շուտով ստացվի:

Վերջում Մեսրոպ եպիսկոպոսը պատվիրակության կողմից փոխարքային շնորհակալություն հայտնեց իր բարյացակամ վերաբերմունքի համար: Վորոնցով-Դաշկովը պատասխանեց, որ ինքը ընդհանրապես չատ լավ է տրամադրված հայերի հանդեպ, բայց այս դեպքում ինքը հանդես է գալիս որպես ռուս պետական այր, և որ արդեն անդառնալիորեն անցել են հայերի հանդեպ Լորանով-Ռոստովսկու վարած սխալ քաղաքականության ժամանակները: Նա ուրախություն հայտնեց, որ Հայաստանի բարենորոգումների կարևորագույն խնդրում ռուսական և հայկական շահերը սերտորեն հանգուցված են:

Հանդիպումը տևել էր 2 ժամ:

Նույն օրվա երկրորդ կեսին տեղի ունեցավ Վեհափառի կողմից Թիֆլիս ուղարկված պատգամավորների և Ազգային բյուրոյի անդամների միացյալ ժողով, որն ընդունեց հետևյալ կարևոր որոշումները. 1) Պատրաստել Պետերբուրգ ուղարկվելիք նամակի տեքստ, որում ճշգրիտ ձևակերպել, թե հայերն ինչ են ուզում կառավարությունից, 2) Դրդել կառավարությանը, որ պետք է նա ավելի որոշակի արտահայտի իր տեսակետը Հայոց հարցի մասին, 3) Գլուխ բերել Պողոս փաշայի և փոխարքա Վորոնցով-Դաշկովի տեսակցությունը, 4) Խորհուրդ տալ Պողոս

Նուբարին, որ նա շարունակի իր մասնավոր դիմումները դիվանագիտական ներկայացուցչություններին, իսկ պաշտոնական դիմումների համար էջմիածնից սպասի նոր կարգադրությունների, 5) Նկատի ունենալով փոխարքա Վորոնցով-Դաշկովի ակնհայտ դրական վերաբերմունքը հայկական բարենորոգումների նկատմամբ, փորձել ստանալ նրա համաձայնությունը Պետերբուրգ ուղարկելու Կաթողիկոսի կողմից մի պատգամավորություն, որը պետք է բաղկացած լինի երկու հոգևորական և երկու աշխարհական անձնավորություններից: Աշխարհական պատգամավորներին կառաջադրի Ազգային բյուրոն, երբ դրա մասին կարգադրություն կլինի էջմիածնից:

Որոշվեց նաև խնդրել Վեհափառին, որ իր կողմից պատգամավորներին տրվելիք հանձնարարական նամակները նախապես ուղարկի Թիֆլիս՝ Ազգային բյուրոյի քննությունը¹:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԱՍՏԻՃԱՆԱԲԱՐ ՕՐԱԿԱՐԳ Է ՄՏՆՈՒՄ ԵՎՐՈՊԱՑՈՒՄ

Հայերի համար պարզից պարզ էր, որ չնայած Ռուսաստանի զգուշավորությունը՝ հենց նրա ջանքերով է հայոց հարցը մտնելու նպաստավոր փուլ:

Պետերբուրգի հայկական խմբակին հայտնի էր դարձել, որ Թուրքիան Ռուսաստանին խոստացել էր Պարսկաստանին հարող իր տարածքների մի մասը զիջել նրան, միայն թե չբարձրացնի Հայաստանի ինքնավարության խնդիրը: Դրան ի պատասխան՝ Ռուսաստանը Թուրքիային հայտնել էր, թե քանի որ սպառվել է իր համբերությունը, Անատոլիայի քրիստոնյաներին պաշտպանելու համար ինքը պատրաստ է դիմելու կտրուկ միջոցների:

Հայերը գիտակցաբար համակերպվում էին Ռուսաստանի մտադրությունը, թեև չէին կարող կանխատեսել, թե որքան

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, թ. 31 և շրջ.:

կտևեն նրա ջանքերը՝ եվրոպական հինգ մեծերին համոզելու՝ Թուրքահայաստանում անհապաղ բարենորոգումներ սկսելու համար:

Դեռևս 1912 թ. դեկտեմբերի 14-ին դեսպան Գիրսը հաղորդել էր արտգործնախարար Սազունովին, որ Դաշնակցության նշանավոր գործիչ Հ. Զավրիյանը այցելել է իրեն և նկարագրելով հայերի անտանելի վիճակը գավառներում՝ միաժամանակ իրեն խնդրել է ցուցումներ տալ, թե քաղաքական ինչ ընթացք պետք է բռնեն իրենք: Զավրիյանը հայտնել էր, որ բոլոր հայերը համոզված են, որ իրենց ճակատագիրը Ռուսաստանի ձեռքումն է¹:

Անդրադառնալով Գիրսի հետ Զավրիևի հանդիպմանը՝ «Новое Время» թերթի Կ. Պոլսի թղթակիցը գրում էր, որ դրանից հետո Պողոս փաշա Նուբարը «Մէկից ավելի խորհրդակցութիւններ է ունեցել Պարիզի մեր դեսպան հոֆմէյստեր Ա. Պ. Իզվոլսկու հետ: Վերջինս, ինչպէս ասում են հայկական շրջաններում, յայտարարել է նրան, որ հայկական խնդիրը պէտք է առժամանակ յետաձգել բարձր կարգի պատճառներով»: Թղթակիցը միաժամանակ նշում էր, որ չնայած վերջին շրջանում հայկական հարցում ռուսական դիվանագիտության բռնած կրավորական դիրքին, այնուամենայնիվ հայերը կարծում են, որ 1912 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Պետերբուրգի ջանքերը առաջ են բերել մի քանի լուրջ հետևանքներ: «Ամենակարեւորը նրանք այն են համարում, որ Կաթողիկոսի անմիջական դիմումը ռուս կառավարութեան ներկայացուցիչներին՝ քննութեան առարկայ է դարձել եւ ուշադրութիւն է գրաւել իր վրայ: Կաթողիկոսը մտադիր է առաջին իսկ հնար եղած դէպքում պատշաճ դիմում անել նորից: Ֆրանսիական ղեկավար շրջանները նոյնպէս սկսել են զբաղւել հայերի վիճակով: Այս բոլորը յոյս է տալիս, որ գործը միայն յետաձգւած է եւ կնորոգւի հէնց որ հնարաւորութիւն հանդիսանայ»²:

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1914, д. 3469, л. 12.

² «Новое Время»-ի հոդվածի թարգմանությունը տե՛ս «Կովկասի լրաբեր», № 45 (99), 27 փետրվարի 1913 թ.:

«Հայկական հարցը,- գրում էր Հովհաննես Թումանյանը,- վայրենի կոտորածների և կեղեքումների հարց է, հալածանքների ու գաղթականությունների հարց է, նա գերազանցորեն ֆիզիկական գոյություն խնդիր է: Եվ նրա հաջողությունը միշտ կապված է եղել Ռուսաստանի հաջողության հետ: Ով վեր է կացել Ռուսաստանի հաջողության դեմ, վեր է կացել Հայկական հարցի հաջողության դեմ, և ով Ռուսաստանի դեմ պաշտպանել է Տաճկաստանին, նա մեղսակից է տաճկական գաղանություններին ու հայկական սարսափներին»¹:

Մեր ազգը, խոր համոզմունքով գրում էր «Կովկասի լրաբերը», «առաջւայ պէս տանելով բոլոր սարսափներն ու անարդարութիւնները, հաւատում է, որ Ռուսիան հարկաւոր ըրալէին իր խօսքը կասէ եւ ամէն բան կը փոխուի դէպի լաւը: Կրկնում եմ, մեր միակ յոյսն ու ապաւէնը Ռուսիան է: Մենք, հայերս, միշտ նայել ենք դէպի Ռուսիան եւ նրա մէջ ենք որոնել արդարութիւնն ու մեր ցաւերի դարմանը»²:

Դարավոր դառը փորձություններից իմաստնացած հայությունը բնազդական ճշգրտությամբ ըմբռնում էր, որ իր ցավագին դատի լուծումն անհնար է առանց Ռուսաստանի համակրության ու աջակցության:

Իսկ Ռուսաստանում արդեն առկա էին և՛ մեկը, և՛ մյուսը: Վկա՝ ռուսաց ոչ պաշտոնական մամուլում սկսված անկեղծ համակրական լայն շարժումը՝ ի նպաստ թուրքահայոց դատի: Արդեն գաղտնիք չէր նաև, որ ռուսական կառավարությունն ինքն էր տոն տալիս երկրի հասարակական շրջանների, կուսակցությունների և քաղաքական ոլորտի ազդեցիկ անձանց հայանպաստ գործողություններին:

“Русское Слово” թերթը տպագրել էր հայ ժողովրդի նկատմամբ ռուսական պետության ավանդական հովանավորության

¹ Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, Հատոր յոթերորդ, Քննադատություն և հրապարակախոսություն, 1913-1922, Երևան, 1995, էջ 15:

² «Կովկասի լրաբեր», № 45 (99), 27 փետրվարի 1913 թ.:

մասին բարձր հեղինակություն ունեցող մի ոուս դիվանագետի արտահայտած հետևյալ տեսակետը, որն արտատպել էր Կ. Պոլսի «Ժամանակը»: «Հայ ազգի ճակատագիրը,- ասել էր նա,- միշտ և անդրդվելի կը շահագրգռէ Ռուսիան: Ռուս կառավարութիւն մեծ ուշադրութեամբ կը հետեւի թուրքահայոց պէտքերուն եւ կ'ուզէ անոնց կեանքի եւ ինչքի ապահովութիւնը երաշխաւորել: Հակառակ Բ. Դոան, հայ ազգին մասին Ռուսիոյ հոգածութիւնը երբէք կ'ասկածի տակ չիյնար: Այս կարելոր հարցը կարելի է ձեռք առնել մօտաւոր ապագայի մեջ, պալքանեան պատերազմին աւարտելէն ետքը»¹:

Իր հերթին Փարիզի ոուսական դիվանագիտական ներկայացուցչությունը Պողոս Նուբարին խորհուրդ էր տալիս՝ անկախ Ռուսաստանի դիվանագիտության որոշ հապաղման, շարունակել ակտիվ շփումները եվրոպական կառավարությունների հետ, արթուն պահել եվրոպական հասարակական բարենպաստ կարծիքը, լայն պրոպագանդ սկսել մամուլի միջոցով և այլն:

Բայց հատկապես լայն գործունեություն էին ծավալել արտասահմանի հայ գաղութների աչքի ընկնող անձինք, որոնք 1912 թ. վերջին ամսին արեցին այն ամենը, ինչ կարող էին, որ Ֆրանսիայի և Անգլիայի կառավարություններն աջակցեն Ռուսաստանին և համատեղ շուտափույթ ու արմատական լուծում տան հայերի բխստորոշ հարցին:

1912 թ. դեկտեմբերի 12-ին Փարիզից Թիֆլիս Լեոյին գրած նամակում Արչակ Չոպանյանը տեղեկացնում էր, որ այնտեղ հայերը լարված աշխատանք են տանում, որ Ֆրանսիական կառավարությունը միջոցներ ձեռք առնի Հայաստանում նոր կոտորածների առաջն առնելու համար, և այդ ջանքերն արդեն տվել են առաջին պտուղները. Պուանկարեն անձամբ Փարիզի թուրք դեսպան Ռիֆաթ փաշային և Պոլսո Ֆրանսիական դեսպան Բոմպարի միջոցով Քեամիլ փաշային խստիվ հայտարարել է, թե Ֆրանսիան Արևելքի քրիստոնյաների պաշտպան է և թույլ չի տա, որ նոր ջարդեր տեղի ունենան: Միաժամանակ Մեր-

¹ «Ժամանակ», № 1318, 25 դեկտեմբերի 1912 (7 հունվարի 1913 թ.):

սինում գտնվող Ֆրանսիական “Jules Ferry” մարտանավի սպաները հրաման են ստացել գնալ Ադանա՝ դրանով իսկ ցույց տալով, որ Ֆրանսիան ջարդերի երկյուղ ունեցող հայերի կողքին է:

«Հոս,- շարունակում էր նամակագիրը,- մենք տեսակցութիւններ ունեցանք շատ մը կարևոր քաղաքական անձնավորութեանց հետ, որոնք խոստացան աշխատիլ մեր դատին համար. խնդրեցին մանրամասն նոթեր մեր հարցի մասին, զոր խմբագրեցինք և հանձնեցինք: Լրագիրներու մեջ մեզ ի նպաստ հոգվածներ գրել տալու մասին կշարունակենք աշխատիլ»¹:

Չոպանյանը Լեոյին նաև հաղորդում էր, որ Լոնդոնի հայերը նույնպես շատ լավ են աշխատում: Միաժամանակ կազմվել է Անգլիայի ազդեցիկ անձերից բաղկացած մի կոմիտե, որի քարտուղարությունը ստանձնել է Բալկանյան կոմիտեի քարտուղար Symonds-ը: «Բոլորը հարկ եղած դիմումները կընեն»²:

Լոնդոնում իր աշխատանքները սկսած տերությունների խաղաղության կոնֆերանսը, իբր, պիտի տար Բալկանյան պատերազմի հետևանքով ծագած բոլոր հարցերի պատասխանները: Իրականում այնտեղ հավաքվել էին արդարության ու մարդասիրության մասին շաղակրատող գիշատիչներ: Թեև մարդիկ հավատ չէին ընծայում մեծ պետությունների շիտակությանը, բայց, այնուամենայնիվ, փայփայում էին լավատեսության հույսեր:

Պողոս Նուբարը որոշում է մեկնել Լոնդոն և այնտեղ ներկայացնել հայությանը հուզող հարցերը:

Բայց մինչև Լոնդոն մեկնելը նա էջմիածնի միջոցով պարզում է, որ ոուսական կառավարությունը տվյալ պահին նպատակահարմար չի համարում Հայկական հարցը բարձրացնել խաղաղության կոնֆերանսում՝ պատճառաբանելով, որ այն կոչված է լուծելու միայն Բալկաններին վերաբերվող խնդիրները: Հայկական հարցն այդ կոնֆերանսի քննությանը ներկայացնելուն

¹ Արչակ Չոպանյան, Նամականի, Երևան, 1980, էջ 115:

² Նույն տեղում:

վճռականապես դեմ էին նաև եվրոպական մեծ պետությունները, որոնց մտավախությունն այն էր, թե հայերի պահանջները կարող են նպաստել օսմանյան կայսրություն ամբողջականությունը հեմ հանդես եկող ուժերի ծրագրերին: Եվ Նուբարը հետ է կանգնում Լոնդոն մեկնելու մտադրությունից:

Վահան Մալեղյանին գրած նամակում Պողոս Նուբարը նրան տեղեկացնում էր, որ կրկին տեսակցություն է ունեցել Փարիզում Ռուսաստանի դեսպան Իզվոլսկու հետ, որն «այնքան ալ նպաստաւոր չեղաւ, ինչպէս կ'ակնկալեի»: Իզվոլսկին նրան ասել էր, որ «Ռուսիան, ինչպէս եւ միւս պետութիւնները, այս միջոցիս պիտի չուզեն յարուցանել տարակարծութեանց կամ դժուարութեանց տեղի տուող հարցեր,- բացի անոնցմէ զոր առաջացուցած է Պալքանեան պատերազմը եւ որոնց լուծումին կ'աշխատին այժմ Մեծ պետութիւնները իրենց բոլոր ուժովը»¹: Այդ է պատճառը, Պողոս Նուբարին ասել էր Իզվոլսկին, որ «ատոր ժամը չէ եկած տակաւին», քանի որ ներկայումս «Եւրոպա կը բանակցի Պալկանեան խնդիրներու մասին, որ խաղաղութեան համար շատ փափուկ են եւ վտանգաւոր, կը վախնայ թէ այդ հարցը յարուցուելուն պիտի հանդիպի ընդդիմութիւններու ու կրնան վտանգել յաջողութիւնը»²: Պետք է խոստովանել, այնուհետև նամակում նշում էր Պողոս Նուբարը, որ Իզվոլսկու «կողմէն չի գտայ ոեւէ չարակամութիւն, միայն կը խորհի թէ վայրկեանը գեշ ընտրուած է»³:

Նույնպիսի պատասխան էին ստացել Վիեննայի Մխիթարյանների արքահայր Գովրիկյանը և հայր Գալեմքերյանը Ավստրիայի արտգործնախարար Մ. Բերխտոլդի հետ ունեցած գրույցի ընթացքում: Վերջինս արքահայրն ասել էր, թե ինքը հայերի նկատմամբ ունի բարի տրամադրություն, «բայց Հայկական հարցը չի կրնար ենթարկուիլ Լոնտոնի դեսպանախորհուրդին, որուն օրակարգը կանխորոշուած եւ սահմանափակուած է Պալքանեան պատերազմի հետ ուղղակի կապ ունեցող խնդիրներուն

¹ Վահան Մալեղեան, ճամբուս վրայ (Յուշաբար), էջ 308:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 309:

եւ եթէ հոն ներկայանանք, անձեռնհասութեան պատասխանի մը առջեւ պիտի գտնուինք: Թելադրած է որ դիմենք դահլիճներուն»¹:

Ինչո՞ւ ոռուսական կառավարությունը դիմեց այդ քայլին, և ինչո՞ւ այդ հարցում նրան լիովին պաշտպանում էին բոլոր 6 պետությունները: Դրա պատճառն այն էր, որ նրանք չէին ուզում Հայկական հարցի քննությունը կապել բալկանյան խնդրի հետ, քանի դեռ պատերազմող երկու կողմերի միջև կնքված չէր հաշտության պայմանագիր, և ոչ ոք համոզված չէր, թե հայտարարված զինադադարն ինչով կարող էր վերջանալ: Ինչպես շուտով պարզվեց, Պետերբուրգում արդեն կարծիք էր ձևավորվել, որ ճիշտ կլինի, եթե Հայկական հարցը մեծ տերությունների կողմից քննության առնվի առանձին: Ըստ որում, ոռուսները հակված էին կարծելու, որ այդ հարցի քննարկման վայր Լոնդոնից ավելի հարմար է ընտրել Կ. Պոլիսը, քանի որ պետությունների այնտեղի դեսպաններն ավելի լավ են տեղեկացված՝ կապի մեջ լինելով և՛ Բ. Դոան, և՛ հայերի հետ, ուստի և նրանք լավագույնս կարող են կատարել իրենց վրա դրված առաջադրանքը:

Հայերը քաջ գիտակցում էին, որ որքան էլ Ռուսաստանը կոչված լինի վճռական դեր խաղալու թուրքահայ դատի լուծման մեջ, բայց չի կարող այդ դերը միայնակ կատարել: Հայկական հարցը միջազգային հարց էր, և այն կարող էր լուծվել միայն վեց պետությունների համաձայնությամբ², մասնավորապես դրանցից երեքի՝ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի, որոնք 1895 թ. միասնաբար քննիչ հանձնախումբ էին ուղարկել Հայաստան, կազմել Մայիսյան ծրագիրը և այն առաջարկել սուլթանին:

Այժմ էլ՝ Մայիսյան ծրագիրը կազմելուց ավելի քան 17 տարի հետո, հայերի մեջ չէին մարում հաջողության հույսերը: Հատկապես անհետևանք չմնացին արտասահմանյան հայերի խնդրագրերն ու կոչերը: Դեսպանների մակարդակով բանակ-

¹ Վահան Մալեղեան, ճամբուս վրայ (Յուշաբար), էջ 309, 313:

² А. Джишвелозов, Будущее Турецкой Армении, Москва, 1913, стр. 42.

ցուծյուններ սկսվեցին նշված երեք կառավարությունների միջև: Ռուսական մամուլի օրինակով ֆրանսիական ու անգլիական լրագրերում նույնպես երևացին հայանպաստ հոդվածներ:

Կիսապաշտոնական օրգան «Թանը» տպագրեց Փարիզի հայ գաղութի կողմից հանրապետության նախագահին ուղղված խնդրագիրը, ուր հույս էր հայտնվում, որ ֆրանսիական կառավարությունն այս անգամ էլ կկատարի իր մարդասիրական միսիան և օգնության ձեռք կմեկնի Հայաստանի ժողովրդին: Նույն թերթը մի քանի օր հետո տպագրեց մի շատ հայանպաստ խմբագրական¹:

Այսպիսով, տվյալ պահին՝ 1912 թ. վերջավորությունը և 1913 թ. սկզբներին, Եռյակ համաձայնության (Անտանտ) բոլոր երկրներում իրական համաձայնություն կար հայոց հարցի նկատմամբ և դրան լուծում տալու անկեղծ տրամադրություն: Դրանցից երկուսը՝ Անգլիան և Ֆրանսիան, իրենց կիսապաշտոնական համաձայնությունն էին տվել Ռուսաստանի առաջարկին, միաժամանակ նորից չեչտել էին, որ հայոց կաթողիկոսական պատվիրակությունը պետք է հետաձգի պաշտոնական դիմումները մեծ պետություններին մինչև բալկանյան ճգնաժամի ավարտը:

Պետք էր չահել նաև Բելգիայի դաշնագիրը ստորագրած մյուս երեք պետությունների՝ Գերմանիայի, Ավստրիայի և Իտալիայի համակրությունն ու աջակցությունը: Իսկ դրա համար անհրաժեշտ էր մեծ աշխատանք տանելին, մի կողմից, Ռուսաստանը, Ֆրանսիան ու Անգլիան և, մյուս կողմից, հայերը՝ իրենց ունեցած բոլոր միջոցներով:

Համեմատաբար քիչ ջանքեր կպահանջվեին, որ Իտալիայի կառավարությունը միանար հայանպաստ աշխատանքներին: Դա պատահական չէր, քանզի այդ երկրի ժողովուրդը վաղնջական ժամանակներից գիտեր Հայաստանի և նրա ժողովրդի մասին, հայության տառապանքները նրան հասկանալի էին, քանի որ ինքը նույնպես երկար ժամանակ գտնվել էր

¹ Տե՛ս «Մշակ», № 3, 6 հունվարի 1913 թ.:

օտարների ծանր լծի տակ, որը թոթափելու համար նրանից պահանջվել էր երկարատև ազատագրական պայքար: Հայկական հարցի ծագման սկզբից՝ 1878 թվականից, Իտալիան միշտ համակիր էր եղել հայ ժողովրդին, նրա արդարացի դատին: 1895-1896 թթ.՝ Թուրքիայում հայերի զանգվածային կոտորածների օրերին և դրանից հետո, երկրում ծավալված հայանպաստ շարժմանը մասնակից էին եղել իտալական հասարակության ամենաբազմազան շերտերը: Նույնը տեղի ունեցավ 1904 թ. Սասունի հայտնի ապստամբության և ապստամբների նկատմամբ թուրք բարբարոսների կատարած արյունալի հաշվեհարդարի օրերին: Հայ-իտալական փոխադարձ համակրանքի համար պակաս կարևոր նշանակություն չէին ունեցել միջնադարում հայ վաճառականների թողած բարի հիշատակները Իտալիայում, հատկապես Վենետիկում, որը նաև եղել էր հայ մշակույթի կարևոր օջախներից մեկը, իսկ քաղաքի դիմաց գտնվող սուրբ Ղազար կղզում հիմնավորված Մխիթարյան միաբանության մշակույթային-լուսավորական և գիտական բեղմնավոր գործունեությունը հայտնի էր ամբողջ երկրում և նրա սահմաններից դուրս: Իտալիան հովանավորում էր հայկական հինավուրց մշակույթի այդ նշանավոր օջախի գործունեությունը, իսկ հայությունը երախտագիտություն էր լցված հանդեպ ասպետական Իտալիան:

Մյուս երկիրը՝ Ավստրիան, նույնպես գիտեր հայերին, որոնք հատկապես գիտական շրջաններում հայտնի էին որպես յուրօրինակ հնագույն մշակույթի տեր ժողովուրդ, որն օտարների դաժան լծի տակ կարողացել էր պահպանել իր ազգային նկարագիրը, որդեգրած քրիստոնեական արժեքները: Ավստրիացիները, հատկապես նրա մայրաքաղաքի բնակիչները, առիթ ունեին հայերի մասին պատկերացում կազմելու նաև այնտեղ ներկայացված Մխիթարյան միաբանության ծավալած մշակույթային-գիտական գործունեության շնորհիվ: Հավելենք, որ դեպի հայերը խոր հարգանք ուներ Ավստրիայի կայսրը, և այդ մասին լավ գիտեին երկրի քաղաքական և հասարակական շրջաններում: Այնպես որ հայ գործիչները համոզված էին, որ թեև ոչ քիչ դժվարությունների հաղթահարման գնով, բայց, ի վերջո, հնա-

րավոր կլինի Ավստրիային մասնակից դարձնել Հայկական Հարցի լուծմանը կամ գոնե նրան մղել չեզոքության:

Գժվարագույնը, անշուշտ, լինելու էր Գերմանիայի հետ բանակցությունների մեջ մտնելը:

Կար ժամանակ, երբ Գերմանիան չատ հետու էր արևելյան քաղաքականություն վարելուց: Դա այն ժամանակն էր, երբ դեռ չկար միացյալ Գերմանիա: Դրանք այն օրերն էին, երբ Շիլլերն ասում էր, թե Անգլիան արդեն տիրել է ծովերը, Ֆրանսիան՝ ցամաքը, իսկ Գերմանիային մնացել է փրկափայտությունն ու երաժշտությունը: Բայց ժամանակները փոխվեցին. գերմանական իշխանությունների միավորումից հետո Միացյալ Գերմանիան հենց սկզբից վտանգ հանդիսացավ Հարևանների համար: 1870 թ. գերմանա-ֆրանսիական պատերազմից հետո ֆրանսիացիները չէին ներում Նապոլեոն Բոնապարտին այն բանի համար, որ հենց տասնամյակներ առաջ նրա օրոք էր սկսվել գերմանական իշխանությունների միավորման գործընթացը, և որին կամա թե ակամա նպաստել էր ինքը՝ կայսրը՝ դրանով իսկ Ֆրանսիայի համար ստեղծելով մշտական սպառնալիքի աղբյուր:

19-րդ դարի 70-ական թվականների կեսերից սկսած՝ եվրոպական քաղաքականությունը գուգահեռ Գերմանիան սկսեց զբաղվել նաև արևելյան քաղաքականությամբ: Իրար հաջորդող գերմանական կառավարությունները, Բեռլինի կոնգրեսից (1878 թ.) սկսած, Հայ-թուրքական հարաբերություններում միշտ պաշտպանել էին արդուհամիդյան ուժերը, եղել հակակիր Հայոց դատին, իսկ հետո՝ աջակից իթթիհաղական իշխանություններին: Բայց գերման ժողովրդի մեջ կային շերտեր, որոնք համակրանք ունեին Հայ ժողովրդի նկատմամբ: Ռուսահայ մեծ թվով երիտասարդներ բարձրագույն կրթություն էին ստանում գերմանական համալսարաններում, Հայկական մշակույթի յուրատեսակ դեսպաններ էին, որոնց միջոցով գերմանացի ուսանողները ծանոթանում էին Հայության անցյալին ու ներկային: Այդ ամենը հույս էր ներշնչում, որ կարելի կլինի գերմանական կառավարությունը համոզել, որ այս անգամ Հայ-թուրքական հարաբերությունների հարցում գոնե չեզոք դիրք բռնի:

Հայաստանի և նրա բնիկ ժողովրդի հետ գերմանացիներին

ծանոթացնելու ուղղությունը կարևոր դեր էին կատարում բարեգործական հաստատություններն ու բարեգործ անհատները:

Օրինակ՝ Հայաստանում ու Կիլիկիայում 1896 թվականից գործող «Հայերին օժանդակող ընկերությունը» մարդասիրական նշանակալի աշխատանք էր կատարում Հայ զանգվածների մեջ: Հայաստանում և Կիլիկիայում ընկերությունը բացել էր հինգ որբանոց, որոնցում 42 գերմանացիներ խնամում էին 2000-ի չափի Հայ որբերի: Մարաշում ընկերությունն ուներ մի մեծ հիվանդանոց՝ գերմանացի բժիշկ Մյուլերի ղեկավարությամբ: Հատկապես նշանակալից էր Հայերի շրջանում գերմանացիների ծավալած կրթական գործունեությունը: Նրանց բացած ուսումնարաններում 1912 թ. աշխատում էր 72 Հայ դասատու: Նշված հիմնարկությունների պահպանման համար ընկերությունը 1911 թ. ծախսել էր 55.000 մարկ (մոտ 250.000 ռուբլի)¹:

Ընկերությունը, որի կենտրոնը գտնվում էր Մայնի Ֆրանկֆուրտում, հրատարակում էր «Արևածագ» անունով մի ամսաթերթ, որի էջերում պարբերաբար տպագրվում էին Հայաստանում և Կիլիկիայում Հայերի շրջանում տարվող բարեգործական աշխատանքների մասին հաշվետվություններ, զեկուցագրեր և զանազան տեղեկություններ: Ամսաթերթում տպագրված նյութերի զգալի մասը նվիրված էր նրանց պատմությանը, ներկա ծանր վիճակին, կենցաղին, սովորույթներին և այլն: Այդ նյութերի մի մասն անցնում էր գերմանական այլ պարբերականների էջեր և ավելի մատչելի դառնում հանրությանը: Բացի դրանից, ընկերության ֆրանկֆուրտյան կենտրոնը տարեկան մի քանի անգամ հրատարակում և ցրում էր թոուցիկ նյութեր, որպեսզի գերմանացիները ճիշտ պատկերացում կազմեն Հայ ժողովրդի, նրա ծանր վիճակի մասին: Ծատ կարևոր էր փոխել գերմանացիների մի մասի մեջ Հայերի՝ որպես առևտրական ու վաճառու ազգի մասին ստեղծված սխալ կարծիքը: «Արևածագում» և գերմանալեզու պարբերական-

¹ АВПРИ, ф. "Политархив", гз. 1909-1912, д. 3465, л. 21.

ներում տպագրված նյութերն անշուշտ կատարում էին իրենց կարևոր դրական դերը:

Չնայած դրան՝ մեծ պետություններից Գերմանիան իր թուրքասիրությունը և թուրքական շահերը պաշտպանելու պատրաստակամությունն ի հայտ էր բերում ամեն քայլափոխի: Գերմանական մամուլն ու հանրային կարծիքը խիստ անհանգստացած էին Հայկական հարցում Պետերբուրգի ակտիվացման փաստով: Նոյեմբեր-դեկտեմբերի ողջ ընթացքում Ռայխստագի պատգամավորները վրդովմունքի աղաղակներ էին բարձրացնում, թե ուսներն աչք են դրել թուրքիայի «ասիական հողամասերի» վրա: Սոցիալիստ պատգամավորներից մեկն ասել էր. «Ռուս գործակալներ կը վիստան Հայաստանի մէջ հայերը ազատագրելու պատրուակով: Ասիկա ամէնէն գարշելի հեզնութիւնն է, զոր կարելի ըլլայ երեւակայել, վասն զի Ձարը եւ իր պաշտօնատարները դատապարտելի գործունէութիւն մը ցոյց կուտան նոյն իսկ իրենց սեփական երկրին մէջ: Ռուսական այդպիսի քաղաքականութիւն մը Անգլիոյ եւ Գերմանիոյ մրցակցութեան շնորհիւ միայն կրնայ իրագործուիլ»: Կենտրոնի խմբակցությունը պատկանող մի ուրիշ պատգամավոր Ռայխստագում արտասանած ճառում ընդգծել էր. «Մեծ տէրութիւնները պէտք է թուրքիոյ ուշադրութիւնը հրաւիրեն մասնաւորապէս երկարատենէ ի վեր խոստացուած բարենորոգումներու գործադրութեան վրայ Հայաստանի մէջ: Հակառակ պարագային, թերեւս ուրիշ տէրութիւններ պիտի ուզեն գործադրել փափաքուած բարենորոգումները: Չեմ ուզեր մասնաւորապէս դիտել տալ թէ Ռուսիա Հայաստանի մէջ իբրեւ ազատարար գործելու մասնաւոր շահեր ունի»¹:

Կ. Պոլսում գերմանական դեսպան բարոն Վանգենհայմն այդ օրերին Վիլհելմ կայսրի ծննդյան տարեդարձի առթիվ կազմակերպած ճաշկերույթի ժամանակ արտասանած ճառում չեչտել էր. «Անատոլիայի անձեռնմխելիութիւնը գերմանական քաղաքականութեան հիմնաքարն է»²:

¹ «Ժամանակ», № 1299, 6 (19) դեկտեմբերի 1912 թ.:

² «Կովկասի լրագրեր», № 22, 27 հունվարի 1913 թ.:

Չնայած ազգային-քաղաքական բոլոր վայրիվերումներին, այնուամենայնիվ մի բան հաստատ էր. Հայկական հարցը, որ թվում էր, թե երիտթուրքերի բացահայտ թշնամանքի պատճառով վերջնականապես թաղված է, կրկին զբաղեցնում էր պետությունների դիվանագետներին:

ՔՐԴԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌՈՒՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՄԲԱԿՈՒՄ

1912 թ. դեկտեմբերի 21-ին Պետերբուրգի հայկական խմբակի անդամներ Պ. Ղուկասովը և Հովհ. Սաղաթեյանը, նախնական պայմանավորվածություն համաձայն, այցելել էին Ռուսաստանի արտգործնախարար, հոֆմայստեր Ս. Դ. Սազոնովին և երկարատև զրույց ունեցել նրա հետ:

Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 22-ին, Պետերբուրգի հայկական խմբակի մասնավոր նիստը՝ նախագահություն մը Գ. Տիգրանովի, քննություն առավ Սերգեյ Սազոնովի հետ խմբակի նշված երկու անդամների հանդիպման արդյունքները:

Գ. Տիգրանյանն առաջինը ձայն տվեց Պ. Ղուկասովին: Սա հաղորդեց, որ Ս. Սազոնովի հետ Հայկական հարցը տարբեր կողմերից քննելուց հետո իրենք այնուհետև անդրադարձել են քրդական հարցին:

Հարցը քննելու խնդիր էր առաջացել, երբ Ս. Սազոնովը հայտարարել էր, թե անհրաժեշտ է Փոքր Ասիայում ձևավորել քրդերից բաղկացած մի ինքնավար բուֆեր, որի միջոցով հնարավոր կլինի իրականացնել խնամակալություն թուրքահայաստանի նկատմամբ: Արտգործնախարարի այդ հաղորդումն առաջ էր բերել հայ գործիչների զարմանքը, որոնք այդ տեսակետը համարել էին անընդունելի¹:

Արտգործնախարարի հետ հանդիպման արդյունքների մասին Պ. Ղուկասովը և Հովհ. Սաղաթեյանը մանրամասն հաղոր-

¹ ИЗВІАК, сmp. III.

դում արեցին Հայկական խմբակի նիստում, որից հետո տեղի ունեցավ մտքերի ու կարծիքների աշխույժ փոխանակում:

Իլխան Կ. Մ. Արղութինսկի-Դուզորուկովը իր ելույթում հայտարարեց, որ քրդական բուֆերի գաղափարը կատարելապես անհիմն է, և որ որքան հնարավոր է, պետք է արագ փոխել տալ արտգործնախարարի այդ սխալ կարծիքը և նրան հուշել, որ այդ բուֆեր կոչվածը շատ հեշտ կարող է շրջվել Ռուսաստանի դեմ:

Վ. Ի. Վարդանովն իր խոսքում շեշտեց, որ ինքը զարմացած է, թե ինչպես մի մեծ տերության արտգործնախարարը, որը բազմիցս խոստովանել է, թե հայ ժողովուրդն ամենաքաղաքակիրթն է Փոքր Ասիայում, և որ բոլորին է հայտնի քրդերի ու հայերի դարավոր թշնամիներ լինելը, և ահա այդ թշնամու միջոցով է ուսական կառավարությունը ցանկանում կարգ հաստատել Թուրքահայաստանում: Եվ նման միտք արտաբերվել է այն պահին, երբ հայ պատվիրակները եկել են իր մոտ խնդրելու, որպեսզի ուսաց տերությունը Թուրքահայությունը պաշտպանի հենց քրդերի ոճրագործություններից: «Նման պայմաններում մենք պետք է ինքներս մտածենք մեր մասին, դառնանք հզոր թե՛ մշակույթով և թե՛ ֆիզիկապես, որպեսզի մեզ հետ հաշվի նստեն: Այդ մասին մենք պիտի մտածենք ո՛չ միայն մեր կյանքի լարված ժամանակներում, այլ՝ մշտապես»¹:

Իր ելույթում, **Հովհ. Սաղաթեյանը** հայտարարեց, որ շատ կարևոր է, որ կարողանանք ուսական մամուլում լուսաբանել Ռուսաստանի իսկական շահերը Մերձավոր Արևելքի հարցերում, այլապես ուսական քաղաքականությունը կարող է շեղվել ճիշտ ուղուց և փնտրել հենարան այլ տեղերում: Հայերը, ցավով նշեց նա, ուսաների պաշտպանությունն են խնդրում քրդերից, իսկ նրանք, որպես պատասխան, մեզ սպառնացող բան են առաջարկում: Նախկինում քրդերին սիրաչահում էին Թուրքերը, իսկ հիմա նրանց սկսում են սիրաչահել ուսաները: Աննպատակ է արդարության կոչ անելը: Ուղղակի պետք է և

¹ ПЗПАК, сmp. 112.

հնարավոր է ապացուցել ուսաներին, որ սխալ են քրդերի վրա հույս դնելու հաշվարկները, որ նրանք երբեք Ռուսաստանի համար թշնամուց դաշնակցի չեն վերածվի: Լինելով թունդ մահամեղականներ՝ քրդերը Թուրքիայում մեծ մասամբ ոչ միայն որևէ պետական պարտավորություն չեն կրում, այլև այդ պետության սահմաններում օգտվում են գործողությունների լիակատար առատությունից: Ուստի ոչ մի նկատառումով նրանց համար չահավետ չէ ձգտել դեպի Ռուսաստան: Նրանց որոշ առաջնորդների կողմից ուսական կառավարության հետ հարաբերություններ ծավալելուն, այն էլ շորթումներ անելու նպատակով, Ռուսաստանում սխալ մեկնաբանումներ են տալիս: Քրդական առաջնորդների սիլիբիլիները Ռուսաստանի հետ տեղի են ունեցել Փոքր Ասիայում բոլոր պատերազմների ժամանակ, և դրանք որևէ արդյունք չեն տվել: Եվ Հովհ. Սաղաթեյանը բերում էր Ռուսաստանի հանդեպ քրդերի վերաբերմունքի մի կարևոր, հատկանշական փաստ: 1877 թվականի ուս-թուրքական պատերազմի ժամանակ Հայդարանյան ցեղախմբի առաջնորդի դեկավարությունը ուսաստանյան քրդերից կազմավորվել էր աշխարհազոր, որը վճռորոշ պահին ամբողջ կազմով անցել էր Թուրքերի կողմը:

Հովհ. Սաղաթեյանը գտնում էր, որ քրդական ինքնավարություն ստեղծելու տեսակետը խմորվել է արտգործնախարարության տարբեր օղակներում, և որին տուրք է տալիս նաև Ռուսաստանի դիվանագիտության ղեկավարը: Դա չափազանց վտանգավոր է փոքրասիական ուղղությամբ կայսրության ձգտումների համար, ասում էր նա: Ելույթ ունեցողի համար այնպես էլ անհասկանալի էր մնում, թե ինչու կառավարությունը հարմար է գտել Հայկական հարցն առայժմ չառաջարկել Լոնդոնի կոնֆերանսի քննարկմանը, բայց դրա փոխարեն փորձում է քայլեր ձեռնարկել քրդերի հետ մերձենալու համար:

Ռուսաստանի արտգործնախարարության ավանդական քաղաքական կուրուլյունը ցույց տալու համար Պ. Ղուկասովը ներկաներին տեղեկացրեց, որ երբ ինքը Սաղոնովին նախագրուչացրել է, թե Ռուսաստանի համար զնալով ուժեղանում է պան-

իսլամիզմի վտանգը, նա ոչ մի ուշադրություն չի դարձրել իր փաստարկներին:

Իր ելույթի ընթացքում **Գ. Գ. Եվանգուլովը** նկատեց, որ այն ինչ Հայ պատգամավորներին ասել է արտգործնախարարությունից ղեկավար Սաղոնովը, նույն բանը 10-15 տարի առաջ ասել են կառավարության մի ուրիշ ստորաբաժանման՝ ռազմական գերատեսչության ղեկավարներ Մաևակին, Տոմիրովը և ուրիշներ, որոնք ներբողներ էին հյուսում քրդերի հասցեին, գովերգում նրանց ռազմաչունչ ոգին¹:

Ս. Ս. Քալանթարովը նիստի մասնակիցների ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ Սերգեյ Սաղոնովի հետ Հայ գործիչների հանդիպումը վկայում է, թե ռուսական կառավարությունն իրոք սիրատածում է քրդերի հետ, ուստի այս պայմաններում խմբակի անդամների համար խիստ կարևոր է պարզել, թե քրդերի հանդեպ ռուսական կառավարության այդօրինակ խաղերն արդյո՞ք նշանակում են, որ Ռուսաստանը մտադիր է հայության շահերը գոհաբերել քրդերի շահերին:

Մոտավորապես նույն պահանջով հանդես եկավ նաև **Մ. Ս. Աճեմովը**:

Նախընթաց ելույթ ունեցողների երկյուղներին միացավ նաև **Սիրական Տիգրանյանը**՝ ասելով, որ քրդերի հանդեպ ռուսական կառավարության քաղաքականությունը սխալ չէ Ռուսաստանի շահերի տեսակետից, որ նրա համար այլազգիները նույնն են, կարևորը նրանց տարածքներն են: Ուստի, այս իրողությունից մեկնելով, կարող ենք ասել, թե բացառված չէ, որ Ռուսաստանի դաշնակիցներ համարվեն հենց քրդերը և ոչ թե հայերը, թեև առաջինները չեն կարող լինել վստահելի բարեկամներ: Նա ասում էր, որ դրան մեծապես նպաստում է հայկական որոշ շրջանների սխալ մարտավարությունը, ովքեր գրեթե խուճապահար այնքան շատ են խոսում «ռազմաչունչ» քրդերի գործության մասին, նույնքան լայիս են հայության կեղեքվածության ու անօգնականության մասին, և դրանով իսկ ակամայից հայերից

¹ ПЗПАК, сmp. 113-115.

վանում են ռուսական հասարակության աջ տարրերին, որոնք մեծ թիվ են կազմում կառավարական մարմիններում: Հայերի մեծ մասի նման վարմունքը համարելով «խորապես սխալ»՝ ելույթ ունեցողը առաջարկում էր դադարեցնել լաց ու կոծը, որը նվաստացում լինելով ազգի համար, միաժամանակ մեծ վնաս է հասցնում իր ողբալի վիճակից դուրս գալու նրա ճիգերին: «Քաղաքականության մեջ, - ասում էր նա, - կեղեքվածներին ու թույլերին ոչ միայն քամահարում են, այլև՝ պարզապես արհամարհում: Պատմությունը, որպես կանոն, անուշադրության է մատնում թույլերին, չրջանցում նրանց»: Ահա թե ինչու, ասում էր Ս. Տիգրանյանը, անհրաժեշտ է պարզել Թուրքահայաստանում հայության առկա հնարավորությունները և փնտրել նրանց ուժեղացնելու միջոցներ:

Այնուհետև ելույթ ունեցողն առաջ է բերում այն միտքը, որ ռուսական կառավարության կողմից քրդերին հովանավորելը բնավ չի նշանակում, թե այդ կառավարությունը երես է չրջում հայերից: Նրա քաղաքականության նպատակն է հայերից բացի Փոքր Ասիայում ձեռք բերել նաև մի ուրիշ ուժ՝ հանձինս քրդերի, թեպետև այդ ուժն ուղղված է հայերի դեմ: Այս պայմաններում, իհարկե, հայերն այլևս չեն կարող ակնկալել Ռուսաստանի անվերապահ աջակցությունը: Պարզ է, իհարկե, որ հայ-թուրքական հակասություններում նա կրճի հայերի կողմը, իսկ ահա հայ-քրդական հարցերում լավագույն դեպքում կլինի չեզոք: Դա ուսմանը հնարավորություն է տալիս Թուրքահայաստանում պահպանել միմյանց դեմ կովող երկու ազգությունների հավասարակշռությունը և թույլ չի տալիս դրանցից մեկին չափից ավելի թուլացնել կամ կոտորել մյուսի ուժերը: Իսկ դա նշանակում է, որ հայերը դժվար թե վնաս կրեն¹:

Ապա հանդես է գալիս **Գ. Բ. Բոգդանյանը**: Նա ասում է, որ ներկայումս խմբակի անդամների գլխավոր խնդիրը պետք է լինի բազմակողմանի աշխատանքներ տանել Արտաքին գործերի նախարարության և հատկապես նախարարության Մերձավոր

¹ ПЗПАК, сmp. 120-127.

Արևելքի գործերի բաժանմունքի պետ իշխան Ե. Ն. Տրուբեցկոյի հետ, որը արգարամիտ ու անաչառ մարդ է: Նա ասում էր, որ հարկավոր է բոլոր ուժերը լարել այդ բաժանմունքի բոլոր աշխատակիցներին համոզելու, որ քրդերի նկատմամբ վարվելիք տատանողական քաղաքականությունն ապագայում կարող է մեծ անախորժություններ պատճառել Ռուսաստանին՝ հատկապես Թուրքիայում ծավալվող պանիսլամական խմորումների պատճառով:

Ապա հատուկ կարծիք ներկայացրեց **Գ. Գ. Եվանգուլովը**: Նա խիստ վնասակար համարեց, որ Հայկական շրջաններում առաջ է քաշվում Թուրքահայաստանի ինքնավարության խնդիրը, երբ այնտեղ հայերը այլևս բացարձակ մեծամասնություն չեն կազմում: Եթե տերությունները Հայաստանին տային ինքնավարություն, ապա հայերը առաջինը պիտի հանդես գային դրա դեմ: **Չէ՞ որ ինքնավարությունը շնորհվում է ոչ թե բնակչության այս կամ այն խմբին, այլ որոշակի տարածքին, և այդ տարածքի հանդեպ պատմական իրավունքները գործնական նշանակություն չունեն:**

Եվանգուլովը հիշեցնում էր, որ Հայաստանի քաղաքական վերածննդի մասին իրավունքն անցյալում անչափ շատ արյուն է լայել հայերից, որպեսզի հնարավոր լինի նորից տրվել այդօրինակ երևակայությունների: Հայկական հարցը, ասում էր նա, կարելի է արմատապես լուծել Անատոլիան Ռուսաստանին միացնելու կամ Թուրքիան արդիական եվրոպական պետություն դարձնելու միջոցով: Երրորդ ուղի գոյություն չունի՝:

Եվանգուլովը համոզված էր, որ Թուրքահայերի վիճակը որոշ չափով լուծելու կիսամիջոց կարող էին լինել տերությունների կողմից 1895 թ. մշակված և Սուլթանի կողմից ընդունված բարեփոխումները, ուրիշ ոչինչ: Հենց Ռուսաց կառավարությունից միայն այդ բանը պետք է խնդրել: Դրան պետք է նախապատրաստել նաև եվրոպական հասարակական կարծիքը: Ընդ որում, իրենք՝ հայերը, հատկապես Թուրքահայերը, չպետք է կտրուկ

¹ ПЗПАК, сmp. 131-133.

ելույթներ ունենան Թուրքիայի դեմ, որպեսզի չարեն իրենց հարաբերությունները մահմեդական աշխարհի հետ:

Վերջում նիստի մասնակիցներին իր նկատառումներն է ներկայացնում Խմբակի անդամ **Ն. Ի. Ամատունին**:

Նա նշում էր, որ ինքը համոզված է, որ հոֆմայստեր Սազոնովն անբավարար չափով է իրազեկված Ասիական Թուրքիայի հետ սահմանային գործերի մասին, որոնք վերաբերում են Ռուսաստանի շահերին: Պարսկաստանի և Թուրքիայի՝ Ռուսաստանին սահմանակից քոչվոր քրդերով կազմած բուֆեր ձևավորելու, իսկ Թուրքական վիլայեթներում Թուրքահայերից և քրդերից կազմված նույնպիսի բուֆերի ստեղծումը ոչ այլ ինչ է, քան հայերի հանդեպ ռուսական քաղաքականության անփառունակ թյուրիմացություն հետևանք: Նրա կարծիքով, Հայկական հարցում ռուսական կառավարությունը հիմնվում է միայն արտասահմանյան իր գործակալների զեկուցագրերի վրա: Այդպիսիք են, օրինակ՝ Թավրիզում ռուսական գլխավոր հյուպատոս եղած Միլլերը, որն այժմ Պետերբուրգում է, և, հավանաբար, նրան մեծ տեղ է հատկացվում Արտաքին գործերի նախարարությունում Հայկական հարցի լուսաբանման տեսակետից: Միլլերից հետ չի մնում նույն Թավրիզում գլխավոր հյուպատոսության քարտուղար եղած Բեյյանը, որը նույնպես Հայկական հարցը ամեն կերպ միտումնավոր լուսաբանում է հոգուտ քրդերի: Ցավոք, այս վերջինը նույնպես կարևոր դեմք է արտգործնախարարությունում, որի կարծիքն այնտեղ հաշվի է առնվում անվերապահորեն: Հետևապես, ասում էր Ամատունին, կարծում է, որ Սազոնովի շուրթերով արտաբերված խոսքերը, որոնք իրականում Միլլերի խոսքերն են, բավականին ուռճացված են՝ ի վնաս ռուսական և հայկական շահերի, որոնք օրգանապես համընկնում են, այլ ոչ թե իրարից հեռանում: Մի՞թե հենց հայերը չեն ռուսական մշակույթի տարածողները Թուրքիայում, մի՞թե նրանք չեն, որ ռուսական ապրանքները հասցնում են օսմանյան կայսրության ամենահեռավոր ծայրամասերը: Հայ և ռուս ժողովուրդներին ամուր կապում են նաև ընդհանուր քրիստոնեական արժեքներն ու շահերը: Ռուսաստանը, ի դեմս Թուրքահայություն, այլ ոչ թե ի դեմս քրդերի, կարող է ունենալ ամենալուրջ

և հավատարիմ դաշնակից Թուրքիայում:

Վերջում Ամատունին հարկ է համարում հավելել, որ Թուրքիայի դեմ Ռուսաստանի պատերազմներում ռուսական բանակների շարքերում հայերը կռվել են քաջաբար: Ուստի հիմա էլ բավական է զինել թուրքահայերին, և նրանք կռվի հավասար պայմաններում կոչնչացնեն քուրդ վայրենի ելուզակներին: Դրա լավագույն օրինակներից մեկը Անդրկովկասում հայ-թաթարական ընդհարումներն էին, երբ փոքրաթիվ հայ զինյալները ջախջախիչ հարվածներ էին հասցնում բազմաքանակ թուրք-թաթարական ուժակներին¹:

Ի մի բերելով քրդական հարցի քննարկման արդյունքները՝ Պետերբուրգի հայկական խմբակի նիստը նախագահող Գ. Տիգրանովը բոլոր մասնակիցներին կոչ արեց՝ առաջիկա մի քանի օրերին խորապես ուսումնասիրել խնդրո առարկա հարցի վերաբերյալ եղած գրականությունը, մամուլի նյութերը, արխիվային փաստաթղթերը և հաջորդ նիստին ներկայացնել եզրակացություններ՝ խնդիրը կրկին, ավելի հանգամանորեն քննարկելու և որոշում ընդունելու համար:

ՔՐԴԵՐԸ ՈՏՔԻ ՎՐԱ

Հայաստանի թուրքերը, առավելաբար քրդերը, հենց սկզբից վճռականապես դեմ արտահայտվեցին այնտեղ բարենորոգումներ մտցնելուն: Հատկապես քրդերի կարծիքով այդ քայլը կնշանակեր արտոնություններ և հավելյալ իրավունքներ տալ հայերին, որ նրանք չեն ունեցել և չպիտի ունենան:

Հայաստանում հնարավոր փոփոխությունների նկատմամբ թուրքերի ու քրդերի բացարձակ թշնամական վերաբերմունքը թելադրված էր հայերի վրա իրենց ունեցած «իրավունքների» սահմանափակման երկյուղով, որն իր հերթին արդյունք էր բնակչության այդ երեք ազգային մեծ խմբերի զբաղմունքների

¹ ПЗПАК, сmp. 135-141.

միանգամայն տարբեր տեսակների, այսինքն՝ արտադրողական ուժերի և արտադրահարաբերությունների խիստ տարբերությունների:

Հայը երկրագործ էր, արհեստավոր ու վաճառական: Հենց դա էր պատճառը, որ ամենից շատ հայն էր պահանջ զգում կանոնավոր վարչություն, քաղաքացիական ազատություն, քաղաքական իրավունքների: Հայաստանի բարեկարգումը պետք էր հայ վաճառականին, որ նա իր ապրանքն ապահով տեղ հասցներ, ավելացներ իր գնորդների թիվը: Բարենորոգումը պետք էր նաև հայ արհեստավորին, որպեսզի կարողանար զարգացնել իր փոքրիկ տնտեսությունը և, եթե հաջողությունն իրեն ուղեկցեր, ձեռք գարկեր արդյունաբերական մեծ ձեռնարկների: Բարենորոգումն անհրաժեշտ էր հայ գյուղացուն, որ կարողանար ապահով մշակել իր հողը, դատարանում պաշտպաներ իր անկապտելի իրավունքները, աներկյուղ բողոքեր սանձարձակ ու դրամաշորթ պաշտոնյաների, հարստահարիչ հարկահանների, վայրասեր հարևանների, ընչաքաղց կալվածատերերի անօրեն գործողությունների դեմ: Ահա թե ինչու Հայաստանում բարենորոգումներ պահանջում էին միայն հայերը, որովհետև դրանց կարիքն ամենից շատ նրանք էին զգում:

Թուրքը մեծ մասամբ զինվորական էր և պաշտոնյա, ուստի բավարարված էր իր վիճակով և բարենորոգումների կարիքը չուներ: Նրա մի ստվար մասն ապրում էր հպատակ հայության թափած քրտինքի հաշվին, հետևապես չէր կարող թույլ տալ, որ Հայաստանի զինվորական և վարչական պաշտոնների կեսը անցներ հայերին:

Քուրդը խաչնարած էր: Քրդերի մեծ մասը՝ մոտ 850 հազարից մինչև մեկ միլիոն, ապրում էր Թուրքիայում՝ սկսած Վանա ծովակի ափերից մինչև Բաղդադի զուգահեռականները, կես միլիոնը Պարսկաստանում էր, իսկ մոտ 200 հազարը՝ Անդրկովկասում՝ Երևանի նահանգում և Կարսի մարզում: Նրանք թափառական, վաչկատուն կյանք էին վարում, խաչնարածությունից բացի ունեին երկրորդ «մասնագիտությունը»՝ ավարառությունը, խոսում էին տարբեր, հաճախ միմյանց համար անհասկանալի բարբառներով, չունեին ո՛չ ցեղային և ո՛չ լեզվի միու-

թյուն, գաղափար չունենին հայրենիքի ու հայրենասիրության մասին, քանի որ ամենահին ժամանակներից վարելով աստանդական կյանք՝ ոչ մի տեղ հաստատուն բնակություն վայր չէին ունեցել: Այդ ամենի պատճառով քրդերը, բնականաբար, անկարող եղան ստեղծելու քիչ թե շատ արժեքավոր մշակույթ՝ գրականություն, պատմություն, գեղարվեստ, հոգևոր-բարոյական-մտավոր կյանք, հետևապես չէին կարող երբևիցե կազմել քաղաքական կամ մշակութային միություն:

Թեև քրդերի մի մասը արդեն նստակյաց էր դարձել, բայց նույնիսկ այդ վիճակով նրանք իրենց մեջ դեռ կրում էին վաշկատուն կենցաղի բարքերն ու հակումները: Եթե թուրքը Հայաստանի հայությունը շահագործում ու հյուծում էր տնտեսապես և դա անում էր տևականորեն, տիրողի իրավունքով ու «օրինական» ճանապարհով, ապա քուրդը հային դիտում էր որպես իր ապրուստի առատ աղբյուրի՝ դիմելով ասպատակության, թալանի, առևանգումների ու սպանությունների: Հայ գյուղացին խաֆիրական տուրք պիտի տար քուրդ բեկերին և աղալարներին: Օրենքի ուժ էին ստացել հին ճորտատիրության մի քանի հարազատ մնացուկներ. գյուղացին պարտավոր էր ամեն տարի գարնանը և աշնանը որոշակի թվով կաթնատու և մսացու ոչխար, որոշակի չափով յուղ, չորթան, բուրդ, գդալ, անդրավարտիք և ուրիշ այդպիսի բաներ տալ քուրդ բեկին: Բացի դրանից՝ հայ գյուղացին իրավունք չունեց իր աղջկան ամուսնացնելու առանց բեկի համաձայնության և առանց նրան տուրք տալու: Պանդուխտ հայը, վերադառնալով հայրենիք, նույնպես պիտի տուրք տար բեկին՝ չխոսելով արդեն կոռ ու բեգառի մասին, որ հայ գյուղացին պարտավոր էր կատարել բեկի տանը և դաշտում...¹:

Քուրդ ցեղապետներն իրար մեջ բաժանել էին Հայաստանի և Քուրդիստանի բոլոր շրջանները: Յուրաքանչյուր շրջանում հայկական գյուղերը պատկանում էին այսինչ բեկին կամ այնինչ աղային: Բայց ոչ միայն նրանց: Սովորական բան էր դարձել, երբ

¹ Տե՛ս «Ղարաբաղ» (Շուշի), № 51, 15 Հուլիսի 1912 թ.:

ամենահետին քուրդը կատարում էր անհավատալի արարքներ: Բազմաթիվ էին դեպքերը, երբ սպառազեն ձիավոր քուրդը գալիս կանգնում էր գենքազուրկ ու ահաբեկ «գյավուր» հայի դռներ և սպառնազին հայտարարում, թե «Այս տունն իմն է»՝ տանտիրոջը հրամայելով ընտանիքն առնել-հեռանալ «Չհանդամը»:

Երբ 1908-ին տեղի էր ունեցել օսմանյան հեղափոխությունը, հայերից շատերը հավատում էին, թե արմատապես փոխվելու է քրդերի և թուրքերի վերաբերմունքը հայերի նկատմամբ: Բայց հենց այն ժամանակներում կային թերահավատներ, որոնք գլուխները թափահարում էին ու կրկնում. թուրքի ու քրդի ոգուն անհարիր է սահմանադրությունը: Իհարկե, այդպես մտածողները մարգարեններ չէին: Նրանք լավատեսներից տարբերվում էին միայն նրանով, որ թուրք ցեղին ավելի լավ էին ճանաչում. թափանցել էին նրա էություն մեջ, ավելի լավ էին ուսումնասիրել քրդերի բնազդները: Ու զարմանալու չէր, որ սրանք իրենց կրոնով ու մոլեռանդությամբ, տգիտությամբ ու մտավոր խավարով մնացել էին նույնը թե՛ Աբդուլ Համիդի և թե՛ «սահմանադրական կարգերի» ժամանակ: Հավանաբար քիչ բան կփոխվեր նաև վաղը: «Արարատ» (Էջմիածին) հանդեսը գրում էր. «Մենք բացարձակ սխալ ենք համարում մտածողութեան այն եղանակը, որ այսօրուայ հատուկտոր կոտորածներն ու մասսայական արհաւիրքները այս կամ այն կառավարութեան փոփոխութեան հետ է կապում: ... Ասացեք խնդրեմ, ե՞րբ չկար Տաճկաստանում կոտորած, ե՞րբ է թուրք ցեղը համբերատար ու հանդուրժող ոգով նայել դէպի այլ կրօնները. ե՞րբ է նա փոքր ի շատէ տանելի վերաբերմունք ցոյց տուել դէպի իւր հպատակները: Նրա հպատակները եղել են միշտ արհամարհելի մի տարր, ոայս, եղել են եւ այսօր էլ նոյնն են մնում: Քրիստոնեայ ցեղերը ինչէր են քաչել այդ վայրագ ու մոլեռանդ ազգի ձեռքից: Յատկապես հայերը ինչպէս արիւնաքամ են եղել թուրք, թաթար ու տաճիկ ցեղերից, որոնք 11-րդ դարից սկսած մինչեւ այսօր շարունակում են իրանց արիւնարբութիւնը»¹:

¹ Տե՛ս «Արարատ», № 9, սեպտեմբեր, 1912, էջ 796:

Նիկոլ Աղբալյանը գրում էր («Հորիզոն», № 226, 1912 թ.), որ հիմա էլ «Թուրքիայի հայերը գիշերն անկողին են մտնում նոր ջարդերի սարսափով և առավոտյան արթնանում են տագնապալից օրվան համար»:

Քալկանյան չորս ազգերի բանակները հասել էին Կ. Պոլսի դռների առջև, մի քայլ էր մնացել Քեաղաթխաններից դեպի Շիշլի, Պանկալթի, Թաքսիմ, Բերա, բայց Հայաստանում առաջվա պես շարունակվում էին ջարդերն ու սպանությունները: Կարծես Համիդի ժամանակները վերադարձել էին:

Ռուսական «Церковный Вестник» թերթը 1912 թ. № 41-ում նշում էր, որ եթե որևէ մեկին հաջողվում է սրտագին, անկեղծ գրույց ունենալ Թուրքիայի որևէ քրիստոնյայի հետ, ապա նա «ձեր առջև բացում է անհատական կյանքի, ընտանիքի և համայնքի մի այնպիսի ողբերգություն, որ մարդ ապշում է մի կողմից մահանդականների վայրենություն, մյուս կողմից քրիստոնյաների հավատքի, համբերություն և արիություն վրա: ... Հավատալ, թե թուրքերը և քրդերը կամավոր կապահովեն քրիստոնյաների համար ազատ կյանքի պայմաններ՝ բոլորովին անկարելի է: ... Եվ այժմ շատ բնական է,- շարունակում էր թերթը,- որ թուրքական ռեժիմի այս անտանելի վիճակի դեմ ծառայել են բուլղարն ու սերբեր, մակեդոնացին ու չեռնոգորցին, հույներն ու կուրդ-վալախները, նույնիսկ այբանացին, այսինքն՝ ոչ միայն քրիստոնյաները, այլև մահանդականները»:

Իսկ կոտորված, թշվառ թուրքահայ ժողովուրդը շարունակում էր տանջվել անարգ լծի տակ:

Կ. Պոլսի հայ լրագրերն ամեն օր տպագրում էին Հայաստանի գավառային առաջնորդներից և ազգային վարչություններից Կ. Պոլիս հասած բողոքներն ու մերկացումները, որոնցով օգնություն ու դարմանում էին աղերսում պատրիարքարանից ու ազգային ժողովից՝ մի հնար գտնել վերջ դնելու քրդերի ավերներին ու նրանց կողմից կատարվող հայերի սպանություններին, կաշառակեր պաշտոնյաների կեղեքումներին ու հարստահարումներին:

Ներսես եպիսկոպոս Դանիելյանը ցավով գրում էր, որ այդ խիզախ, բայց տգետ ու անկիրթ ցեղի հետ Հայաստանի հայերը

կարող էին հաշտ ու խաղաղ ապրել, եթե ի վիճակի լինեին կրթել նրանց կամ հակառակ պարագային՝ զինվել: Բայց հայերը չկարողացան անել ոչ մեկը և ոչ էլ մյուսը, որի դառը հետևանքները քաղում են այսօր¹:

Հայաստանում մեծ հուզում առաջ բերեց 1912 թ. հոկտեմբերի 11-ին ուսուցիչ Ռաֆայել Երիցյանի և Սպարկեսի քահանա Մարտիրոսի եղերական մահը:

Ռաֆայելը Սպարկեսից անցել էր հայկական Կարկառ, ուր տեղի դպրոցի գործերը ստուգելուց հետո ճանապարհ էր ընկել Աղթամար՝ իր հետ ունենալով մի քանի գյուղական վարժապետներ, ինչպես նաև Մարտիրոս քահանային և Եղեգիս գյուղի ռեսին: Ճանապարհին խումբը հարձակման է ենթարկվում դարձյալ Կարկառ անունը կրող քրդաբնակ գյուղի և հարևան Ծոկու գյուղի՝ նախապես այնտեղ հավաքված բազմաթիվ քրդերի կողմից: Ռաֆայելը ստիպված գնաքի է դիմում և ցրում խուժանը: Խումբը շարժվում է առաջ, բայց արդեն Կարկառի մոտ դարան մտած տեղի քրդերը, որոնց միացել էին Ծոկու գյուղի բազմաթիվ բնակիչներ, հարձակվում են հայերի վրա, խողխողում Մարտիրոս քահանային, իսկ Ռաչո անունով քրդի տնից արձակված գնդակից սպանվում է Ռաֆայելը: Խմբի մյուս անդամները կարողանում են փախչելով ազատվել:

Այդ սպանությունների մասին Վասպուրականի առաջնորդարանը կազմել և պատրիարքարան էր ուղարկել հոկտեմբերի 18 թիվը կրող տեղեկագիր, ուր նկարագրված էր դեպքը՝ բոլոր մանրամասներով: Նշված տեղեկագրում կարդում ենք. «Քիւրտերը ապա կը յարձակին Ռաֆայելի դիակին վրայ, կը կողոպտեն զինքը, դաշոյնով քիթն ու բերանը եւ երեսները կը բզքտեն, ատամները փշրելով, այտերուն վրայ կը զարնեն, լեզուն կը կտրեն՝ տանելու ներկայացնելու շէյխ Սայիտ Ալիին, իսկ մարմինը քաշքշելով կը տանին կը նետեն գիւղին մօտէն վազող գետին մէջ: Այս ոճրին մասնակցեր է քրտական ամբողջ խումբանը,

¹ Տե՛ս Ներսես եպսկ. Դանիելյան, Կաթիլ մը ջուր այրած սրտերու, Կ. Պոլիս, 1912, էջ 24:

որուն մէջ կարելոր դէմքերն են՝ Հաճի Եաղուպ, Մուլլօ Մու-
հէտտին, ծոկուեցի մօլլա Եուսուֆ, մօլլա Պէքիր, մօլլա Ազամ,
Ֆաքի Զէրչիչ եւ այլօք»¹:

Տեր-Մարտիրոսի դին Հուղարկավորվում է Սպարկետում,
Ռաֆայելի մարմինը տարվում է Կավաչ, իսկ այնտեղից՝ Վան:
Հոկտեմբերի 21-ին նշանակված էր թաղումը: Վանի «Աչ-
խատանքը» նկարագրել էր այդ օրը քաղաքում տեղի ունեցածը.
«Յուզւած է ամբողջ Հայ Հասարակութիւնը իր բոլոր խաւերուն
մէջ: Յուզւած են նաեւ սակաւաթիւ օտարները, որոնք
տարիներէ ի վեր աւանատես են մեր դժնդակ մարտիրո-
սութեանը, մեր անվկանդ ջանքերուն՝ քաղաքացիական տանելի
կեանք մը ստեղծելու հայրենի հողին վրայ: Յուզւած է նաեւ օս-
մանեան զինուորականութիւնը որու կողմէ կարելոր պատիրա-
կութիւն մը ներկայ կը գտնուի թաղման այնքան համակիր կա-
րեկցութեամբ մը: Ոճիրներու նոր շարքը որ սկսած էր Կարճկանի
Խումս գիւղէն (Սեպտ. 29ին) կուգար կը յանգէր Ռաֆայել
Երիցեանի եւ Տէր Մարտիրոսի Սէյիդ Ալիական ոճրին, հոկտ.
11ին: Հինգ գաւառներ հետիոտն, օրեր շարունակ քայլելով, եկած
թափած էին Վան, «Արղարութիւն» փնտռելու համար մեծա-
ղղորդ խոստումներով Պոլսէն հոս ճամբու դրւած կուսակալին
քով: Տառապանքի կենդանի ծովն էր որ կը ծփար այն օրը հոկտ.
21ի կիրակին: Նորաչէնէն մինչեւ Արարք - երաշխաւորութիւն
պահանջելով մարդասպաններու վճարման մը դէմ դատ»²:

Բայց ի՞նչ արդարություն և ի՞նչ դատ այդ անօրեն երկրում:
Ոչ մի քայլ չարվեց ոճրագործներին պատժելու: «Աչխատանքը»
չարունակում էր. «Աւազակ աւատապետներու հետ ճաչ ուտող,
անոնց ձեռքը սղմող կուսակալ մը՝ կարեկցութեան եւ քաջայե-
րանքի բառ մը իսկ չունեցաւ՝ այդ օրը՝ աւազակներուն դարելոր
զոհը եղած ժողովուրդի մը, որ Վան վազած էր՝ դատաւոր
գտնելու յոյսով... Պատմութիւնը ուրիշ կերպ կը հասկնար մեր
պաշտօնէութիւնը: Թաղման այդ օրը երբ հայ սուզը կը հաս-

¹ «Ժամանակ», № 1272, 9 (23) նոյեմբերի 1912 թ.:

² «Աչխատանք», № 2 (98), 10 նոյեմբերի 1912 թ.:

տատուիլ... արար աշխարհին, նոյն օրը Վանեն «Իկղամին» կը
հեռագրուի թէ «անդորրութիւնը ու խաղաղութիւնը ... կակաին
հաստատուիլ»^{*}: Իսկ Կարկառի անուր ոճիրի մասին, իսկ ժո-
ղովրդային հսկայ ցասում - բողոքի մասին եւ ոչ մէկ խօսք:
Արդեօք այդ հեռագիրը տուողին համար «Ուղաղութեան»
սկզբնաւորութիւն մըն էր այդ այլանդակ դէպքը, երբ երկու
գիւղեր՝ Կարկառ ու Ծոկու կը միաբանին, հայ ուսուցիչ մը եւ
հայ քահանայ մը մահացնելու եւ գլուխները ծայրատելու հա-
մար... Առեղծւածը նոր կը բացատրուի՝ կուսակալին կողմէ
ներքին գործերու նախարարութեան տրւած տեղեկութիւննե-
րով: «Այս խնդրին չափազանցութեան մեջ շահ ունեցողներ
կան» եղեր»: «Կովկասի լրագրերը», հղում կատարելով «Русское
Слово» թերթին, նշում էր, որ Վանի նահանգապետ Իզգեթ բեյը
«բացարձակապես իր համակրանքն է հայտնում ջարդարարնե-
րին»²: «...Ժողովուրդը վերջին ծայր յուսահատութեան ու յու-
սախարութեան մատնուած է», - արձանագրում էր «Ժամանա-
կը»³: Դա պատահական չէր, քանզի հենց բուն Վան քաղաքում
նոր թափ էին առել հայերի սպանութիւնները⁴:

«Առաջամարտ» թերթը «Ողիմցիները թշուառութեան ճի-
րանին մեջ» հոդվածում անդրադարձել էր հոկտեմբերի 29-ին

* Աչքակապության համար իշխանութիւնները ձերբակալեցին 23 հոգու:
Ռաֆայելի և Մարտիրոսի սպանության գործը քննելով՝ դատարանը գտավ,
որ մեծ թվով մարդկանց ձերբակալութիւնն անհնարին է և հանցագործներին
երկու օր պահելուց հետո նրանց ազատ արձակեց (տե՛ս «Աչխատանք», №
36, 20 հուլիսի 1913 թ.): Թերթը գրում էր. «Ահա թե ինչպիսի արդարութիւն է,
որ կը գործադրե մեր կառավարութիւնը» (նույն տեղում):

¹ «Աչխատանք», № 2 (98), 10 նոյեմբերի 1912 թ.:

² «Կովկասի լրագրեր», № 22, 23 նոյեմբերի 1912 թ.: Սահմանադրության
հոչակումից հետո (1908 թ.) չորս տարվա ընթացքում միայն Վանի վիլայեթի
ունեցել էր ութ կուսակալ: Յոթերորդը Իզգեթ բեյն էր, որին շուտով
փոխարինելու էր Իսմայիլ Հակկը բեյը: Բացառութեամբ մեկի, մյուս բոլորը
կատաղի հայատյացներ էին (տե՛ս «Աչխատանք», № 38-91, 1 սեպտեմբերի
1912 թ.):

³ «Ժամանակ», № 1272, 9 (23) նոյեմբերի 1912 թ.:

⁴ Տե՛ս նույն տեղում, № 1277, 14 (27) նոյեմբերի 1912 թ.:

Սղերդից պատրիարքարան ուղարկված հետևյալ նամակին. «Ցանքերը կարելի չեղաւ ամբարել. արտերուն ջուրերը կտրուեցան, ոչխարները արդէն յափշտակուած են. գիւղը երեք ամիսէ ի վեր պաշարման տակ գտնուելով՝ ժողովուրդը առ ահի դուրս չի կրնար ելլել: Այս պատճառներով հազարէ աւելի անձեր կարօտ մնացած են չոր հացի: Եթէ այս վիճակը քիչ մը աւելի շարունակէ, ամէնքն ալ ոչնչանալու կը դատապարտուին: Ժողովուրդը լալագին՝ պէտք եղած տեղերը դիմած է: Կը խնդրենք որ ոգեպահիկի մը համար անմիջապէս դրամական նպաստ հասցնէք»:

Մուշից հոկտեմբերի 30-ին պատրիարքարան ուղարկած հեռագիրը գուժել էր նոր դեպքի մասին. ճապաղջուրի մերձակայքում քրդերը կողոպտել, ապա սպանել էին Սեղրակ անունով մի ուրիշ ուսուցչի²:

Որքան առաջ էին գնում խոսակցութիւնները Հայաստանում բարենորոգումներ մտցնելու հնարավորութեան և տարվող աշխատանքների մասին, այնքան ավելի լայն ծավալներ էր ընդունում քրդերի անհանդուրժողականութիւնը: Հայկական լրագրերը պարբերաբար հրապարակում էին Հայաստանում գործած գազանութիւնների նոր լուրերը:

Տագնապ էր հայտնում նաև ուսական մամուլը: “Новое Время”-ն գրում էր. «Նոյեմբերի 13-ին ավագակ Մահմեդը հարձակվել է հայկական Կարգուլ գյուղի վրա և կոտորել բոլորին՝ մեծից փոքրը: Քրդերը նույնը կատարել են Բիթլիսի նահանգի Կորվու գյուղի նկատմամբ: Մենք կարող ենք անվերջ շարունակել այս ցուցակը: Եզրակացութիւնը մեկն է՝ քուրդը առանց որևէ պատժի կարող է սպանել ցանկացած հայի»³:

Արյան աշխարհից ստորև բերվող մի քանի օրինակները պարզ վկայութիւններ են ամեն օր տեղի ունեցող կողոպուտների, առևանգումների, սպանութիւնների:

¹ Տե՛ս «Առաջամարտ», № 4 (1051), 6 (19) նոյեմբերի 1912 թ.:

² Տե՛ս «Ժամանակ», № 1265, 2 (15) նոյեմբերի 1912 թ.:

³ “Новое Время”-ի հոդվածի թարգմանութիւնը տե՛ս «Կովկասի լրագրեր», № 22, 27 հունվարի 1913 թ.:

Դեկտեմբերի 3:- Տիգրանակերտի վիլայեթի Պչերիկ սանջակի հայ-քուրդ խառը բնակչութիւնն ունեցող Կրեսիրան գյուղում քրդերը 1912 թ. դեկտեմբերի սկզբին հարձակվում են իրենց հայ հարևանների թաղի վրա: Հայերը ստիպված դիմում են ինքնապաշտպանութեան: Տեղի ունեցած փոխադարձ հրացանաձուլութեան ժամանակ վիրավորվում է վեց քուրդ և երեք հայ, որոնցից մեկը՝ Հրանուշ Շամունյանը, մահանում է դեպքից երկու օր հետո («Բուլթանիա», № 1095, 25 դեկտեմբերի):

Դեկտեմբերի 6:- Ավագակ Սայիդի գլխավորութեամբ քրդերը հարձակվում են Վանի վիլայեթի Մանդան գյուղի վրա, բայց հայ պահակները նրանց հետ են մղում: Եվ ահա կուսակալը, փոխանակ միջոցներ ձեռնարկելու ավագակներին ձերբակալելու համար, կանգնում է նրանց պաշտպանութեան կողմ և մեղադրում հայերին, զրպարտում Վանի դաշնակցական գործիչներին, որոնք իբր գինված խմբերով Մանդանից մինչև Գավաշ հարձակումներ են գործում «խեղճ» քրդերի վրա («Առաջամարտ», № 1082, 22 դեկտեմբերի):

Դեկտեմբերի 10:- Բիթլիսի Բեզազի շուկայում զարհուրելի իրարանցում առաջ բերելուց հետո քրդերը և թուրքերը հարձակվում են հայերի վրա՝ սպանելով մի քանի հոգու («Церковный Вестник», 1912 թ., № 41):

Դեկտեմբերի 14:- Օրդայում երեք հայեր, սարսափելի ծեծվելով, սպանվում են: Մարդասպանները որևէ պատիժ չեն ստանում («Կովկասի լրագրեր», № 22, 27 հունվարի 1913 թ.):

Դեկտեմբերի 15-17:- Նարբերդի վիլայեթում իշխանութիւնները և հարկահավաքները ժանդարմների ուղեկցութեամբ շրջում են հայկական գյուղերով և տանջում տուրքերը վճարելու միջոց չունեցող գյուղացիներին: Ժանդարմները խլում են ուտեստի մթերքները և թանկագին իրեղենները: Թուրքերը և քրդերը պղծում են եկեղեցական անոթները՝ աղաղակելով՝ «Թող ուսները գան և ձեզ փրկեն մեր ձեռքից» («Կովկասի լրագրեր», № 22, 27 հունվարի 1913 թ.):

Դեկտեմբերի 18-19:- Բաբերդի հայ ազգաբնակչութիւնն ամեն գիշեր ենթակա էր հրացանաձուլութեան, քրդերը ամեն տեսակ հայհոյանքներ էին թափում նրա գլխին: Միայն երկու օրում

գավառի տարբեր վայրերում նրանք սպանում են 8 հայ և սպառնում են բոլորին կոտորել գլխովին («Церковный Вестник», № 41, 1912 շ.):

Դեկտեմբերի 20.– Կարայաղուրի (Յոզկաթ) թուրքերը և քրդերը Շարան օղլի Մեհմեդի ղրղումով հարձակվում են ջրի ճանապարհ փորող երկու տասնյակ հայերի վրա, սրերով, կացիններով և այլ գործիքներով տապալում նրանց՝ ջարդելով գլուխները (նույն տեղում):

Դեկտեմբերի 21.– Սղերդում Մեհմեդ էմինը, փախցնելով պատերազմի դաշտում գտնվող Երանոսի կնոջը, Փերոյին, նրան տարել ու իսլամացրել էր հակառակ օրենքի, որն արգելում էր իսլամացնել այն կանանց, որոնց ամուսինները գտնվում էին ղինվորական ծառայություն մեջ (նույն տեղում):

Դեկտեմբերի 24.– Սպանվեց Վանի քաղաքապետ Պետրոս բեյ Գափամաճյանը: Դաշնակցությունն այդ ոճրի կազմակերպումը վերագրել էր քուրդ նահանգապետ Իզգերթ բեյին, իսկ իշխանությունները մեղադրում էին Դաշնակցությանը:

«Կովկասի լրագրերը» թարգմանաբար տպագրել էր «Թայմզ» թերթի Կ. Պոլսի թղթակցի հաղորդումը, որում ասված էր. «Հայերի դեմ գործ դրած բռնությունները վերջին ժամանակներս անասելի մեծ ծավալներ են ընդունել: Հայերը յուզւած են առանձնապէս այն բանից, որ հայ ղինւորների բազմաթիւ կանանց բռնութեամբ տանում եւ իսլամացնում են: Իշխանութիւնը ոչ մի ուշադրութիւն չի դարձնում քրդերի գործողութիւնների վրա, իսկ հաճախ էլ ուղղակի խրախուսում է նրանց» («Կովկասի լրագրեր», № 3, 4 հունվարի 1913 թ.):

1913 թ. հունվարի 2-ին Ձեյթունի և Մարաշի հայերը հեռագրում էին Բ. Դուռ. «Անդադրում թալաններն ու սպանությունները մեր կեանքն անտանելի են դարձրել: Իշխանությունների անտարբերությունը խրախուսում է քիւրդերին»¹:

«Առաջամարտը» գրում էր, որ վերջին ժամանակում միայն Վանի վիլայեթում սպանվել է 60 հայ, իսկ 200 հոգի վիրավորվել

է: Երբ հայոց պատրիարքն այդ ամենի մասին գրավոր բողոք էր ներկայացրել ներքին գործոց նախարարին, սա պատասխան գրությամբ նրան «հանգստացրել» էր. «Առանձին ոչինչ կը տեսնեմ ներկայ դէպքերուն մէջ: Սովորական սպանութիւններ են անոնք: Եթէ այս տեսակ սպանութիւններ չըլլային, այն ատեն ինչո՞ւ համար գոյութիւն պիտի ունենար կառավարութիւնը...»¹: Նման ցինիկ պատասխանն անսպասելի չէր, քանզի թուրքական կառավարությունը ահա վեց տասնամյակ շարունակ հայ ազգաբնակչության վրա նայում են որպէս ներքին թշնամու, որի դեմ թույլատրելի էին բոլոր գործողությունները:

Ըստ որում, հայ-քրդական հարաբերություններին «չմիջամտելու» իրենց գործելաոճը արդարացնելու համար իշխանությունները մոգոնել էին նախկինում երբեք հրապարակ չբերած մի առասպել, որի համաձայն՝ քրդերի ու հայերի քաղաքակրթական մակարդակների միջև ըստ էության չկան տարբերություններ. երկուսն էլ տգետ ու անկիրթ ժողովուրդներ են, որոնք զուրկ են մշակութային ժառանգությունից և նոր-նոր են փորձում թափանցել թուրքերի ստեղծած օսմանյան բարձր մշակույթի ոլորտ:

Ի պատասխան այդ չարանենգ առասպելի՝ «Դրօշակը» գրում էր. «Եւ ճարեց մի թիւրք կօմիկ, որ առանց ժպտալու, եկաւ աշխարհին յայտարարելու, թէ հայկական քաղաքակրթութիւն չկայ ու չի եղել, այլ կայ միայն քրդական քաղաքակրթութիւն, որ հայերը հին քրդեր են, ապա ուրեմն չկայ խորենացի, չկայ Եզնիկ, չկայ Եղիշէ, այլ կայ միայն լօլօ լօլօ, նիզակ ու լօլօ, վրան ու լօլօ... Իրաւունք ունի, լօլօի դարումն ենք ապրում»²:

Թուուցիկ անդրադառնալով դարերի ընթացքում օսմանյան կայսրության տնտեսական և մշակութային կյանքում հայերի կատարած խոշոր ներմուծումներին՝ «Աւետարեթ» թերթի քաղաքական մեկնաբան Հ. Մամիկոնյանը գրում էր. «Մենք չենք զարմանար մեր այլազգի հայրենակիցներէն այսպիսի անհեթեթ

¹ Տե՛ս «Կովկասի լրագրեր», № 6 (60), 9 հունվարի 1913 թ.:

¹ «Առաջամարտ», № 1092, 21 դեկտեմբերի 1912 թ. (9 հունվարի 1913 թ.):

² «Դրօշակ», № 5, մայիս, 1913, էջ 76:

խօսքեր լսելով, քանի որ անոնք դժբախտաբար մեր անցեալին նկատմամբ երբեմն անյատուկ տգիտութիւն մը կը ցուցադրեն որ դարմանալի ըլլալն աւելի ցաւալի է»¹:

Քրդերի և Հայերի՝ որպէս քաղաքակրթութիւնից զուրկ ու տգետ ժողովուրդների մասին թուրքական մամուլի արտահայտած կարծիքը թափանցում էր այլ երկրների թերթերի էջեր և նույնիսկ առանձին դեպքերում պաշտպանութիւն գտնում: Այսպէս, ռումինական «էնտեփանտանս Ռումեն» թերթը, 1912 թ. նոյեմբերի սկզբի իր համարներից մեկում հիշատակելով ժամանակին Ադանայի մասին Եվրոպայում շրջանառվող լուրերը, դրանք համարում էր շինծու, որպէս Եվրոպայի ուշադրութիւնն իրենց վրա հրավիրելու հայերի ջանքերի արդյունք: Եվ հիմա էլ հետևելով նույն ուղեգծին, գրում էր թերթը, նրանք Եվրոպան ողողում են իրենց բողոքներով, որ, իբր, Թուրքիայի արևելյան նահանգներում տեղի են ունենում արյունալի դեպքեր:

Ռումինական թերթի հոդվածի առիթով «Ժամանակը» գրում էր. «Յիշեալ թերթին եւ անոր մտայնութիւնը ունեցողներուն աւելորդ անգամ մըն ալ պէտք կը զգանք յիշեցնելու թէ Հայերը ոչ մէկ շահ չունին սուտ լուրեր դարբնելու եւ խնդիրները չափազանցելու մէջ, որովհետեւ առանց այդ տեսակ միջոցներու ալ ոչ միայն Եւրոպան այլ արար աշխարհ գիտէ Հայոց կրած զրկանքներն ու տառապանքները: Այո՛, Հայերը պէտք չունին ստելու, որովհետեւ լաւ գիտեն թէ այդպիսի պարզայի մը դարձեալ իրենք են որ տուժողը պիտի ըլլան: Թուրքիոյ գրեթէ բոլոր նահանգներուն մէջ եւրոպական պետութիւնները ունին իրենց հիւպատոսները, որոնք օրը օրին կը տեղեկագրեն անցածն ու դարձածը»²:

Իսկ Հայկական մամուլի էջերը շարունակում էին լցվել Հայաստանի Հայերի ողբերգութիւնների ցնցող նկարագրութիւններով: Սպանութիւնների ու բռնութիւնների այն չարագուշակ ու համառ լուրերը, որ ամեն օր գալիս էին Հայկական նահանգ-

¹ «Աւետարներ», № 50, 14 դեկտեմբերի 1912 թ.:

² «Ժամանակ», № 1272, 9 (23) նոյեմբերի 1912 թ.:

ներից, գուժում էին լայնածավալ նոր ջարդերի հավանականութիւն մասին¹:

Համատարած սարսափը, հուսակտուր խուճապը, լքված ու անձար կացութիւնը Հայերի մտտ առաջ էին բերում անարգ ու խելակորույս փախուստ երկրից: «Հայերը փախչում են. քրդական ոճիրներից: Թուրքահայաստանի ահաբեկ Հայութիւնը վերածվել էր կամքից ու պայքարի ոգուց լիակատար ձերբազատված մի անդեմ զանգվածի»: «Դրօշակն» իր առաջնորդող հոդվածում երկրի Հայութիւնը համեմատում էր մի հոտի, մի նախրի հետ, «որ գիտէ միայն տրորել ու բառաչել, ազատութեան օրերում անփոյթ որոճալ, իսկ վտանգի օրերում՝ ողբալ ու աղերսել...»²: Այդ ամենն այլևս քաղաքակիրթ աշխարհում կարեկցանք չեն առաջացնում, այլ «սոսկ միայն արգահատանք ու արհամարհանք»³:

Վկայակոչելով Փրանսիացի գրող Պիեռ Լոտիին, որ Հայաստանի Հային իր վախկոտութիւն համար համեմատել էր ճագարի հետ, «Դրօշակը» իր հերթին բերում էր հետևյալ կոնկրետ օրինակը.

«Ահա մարդկային նախիրը Հայաշատ Վասպուրականում: Քրդական գրոհի ուրականը երեւալուն պէս՝ նա փախչում է գահավէժ իր բարձունքներից, դիմում է հազարաւոր բազմութեամբ դէպի քաղաք եւ «ցոյց» է անում՝ կառավարութեան ներկայացուցչին, վալիին...

«Տւէ՛ք մեզ ապահովութիւն, ապա թէ մեզ կը մնայ ծովը նետուիլ»:

Նախիրը ցոյց է անում, սպառնալով... ծովը նետուիլ...

Վալին, հարկաւ, ազդուում է սպառնալիքից եւ խոստանում է չարագործներին պատժելու համար՝ ամեն բան անել, այսինքն

¹ Տե՛ս «Առաջամարտ» (Կ. Պոլիս), № 1092, 21 դեկտեմբերի 1912 թ. (3 հունվարի 1913 թ.), «Բուլթանիա» (Կ. Պոլիս), № 1095, 25 դեկտեմբերի 1912 թ. (7 հունվարի 1913 թ.), «Աւետարներ», № 50, 14 դեկտեմբերի 1912 թ., «Կովկասի լրագրեր», № 2, 3 հունվարի 1913 թ. և այլն:

² «Դրօշակ», № 10, հոկտեմբեր, 1912, էջ 249:

³ Նույն տեղում:

ոչինչ չ'անել: Եւ վերջանում է այդպիսով հայկական եղբերակա-տակը: Եւ հազար ու մէկերորդ անգամը յուսադրուած ու խաբ-ւած՝ կը ցրւի երամը... Եւ դարձեալ կ'ապաւինէ իր ինքնու կրա-ւորականութեան, իր անմիտ, զաւեշտական սպառնալիքներին:

«Մենք ծո'վը կը թափուինք, մենք կը դառնանք օրթօղօքս, մենք կը նետուինք Ռուսիոյ գիրկը»:

Օ՛, յաւիտենական, անբուժելի լալկան, ի՞նչ էիր անում չորս տարի շարունակ (ընդգծումը մերն է: - Հ. Ս.), երբ ազատութեան ուժեղման հնարաւորութիւն էր տալիս քեզ՝ զինելու, գէթ այն չա-փով, որ չափով անհրաժեշտ է ինքզինքդ պաշտպանելու հա-մար»¹:

Բայց մի՞թե «Դրօշակի» կողմից այդպես անողոր ճաղկվող հայութիւնը նույն ժողովուրդը չէր, որ ազատագրական գոռ պայքարի տարիներին իր ծոցից սերել էր զենքին եղբայրացած անթիվ-անհամար հերոսներ, որոնք զեպի մահ էին գնում հանուն համիդյան արյունալի բռնակալութիւնից իրենց ժո-ղովրդի փրկութեան: Այդ հերոսների մեծ մասը կոփվել էր հենց Դաշնակցութեան շարքերում, թրծվել նրա գաղափարական քուրայում: Բայց 1907 թ. դեկտեմբերին երիտթուրք-Դաշնակ-ցութիւն «եղբայրութեամբ ու հոգակումով» սահմանագիծ էր քաշվել անցյալի ու ներկայի միջև: Իսկ այդ չարաղետ պահից հետո եկած չորս տարիներին ի՞նչ էր անում պաշտոնաթերթի կողմից «հավիտենական անբուժելի լալկան» որակված հայու-թիւնը: Նա կարգում էր իր իսկ՝ «Դրօշակի» հոգվածներն ու առաջնորդողները, որոնցում անդադրում քարոզվում էր օսման-յան միասնական և անբաժան հայրենիքին հայերի հավատար-մութեան գաղափարը, գովաբանվում էր երիտթուրքերի հետ կնքած դաշինքը, փնտրվում էին ոչ դաշնակցական այն գործիչ-ները, ովքեր զենքին ապավինելու կոչեր էին անում: Այնպես որ, «Դրօշակը» գուր էր այսպանում ազգը և փորձում գործած մեղքերը բարդել նրա վրա՝ ասելով, թե «Ուրտե՞ղ է տեսնուած այդքան մեղկ անտարբերութիւն դէպի սեփական գոյութեան

¹ «Դրօշակ», № 10, հոկտեմբեր, 1912, էջ 249:

հարցը, այդքան թուլամորթ երկչոտութիւն զենքի առաջ...»: Իթիհհհհհհհհհհ հետ դաշնակցութեան չարաղետ «եղբայրացումը» ճակատագրական էր եղել հայութեան համար, և հիմա Դաշնակ-ցութիւնը նույնպէս քաղում էր այդ «եղբայրութեան» դառը պտուղները:

Բայց հայութեան մասին Պիեռ Լոտիի մարդատյաց տեսակե-տը իր լկտիութեամբ բացառիկներից մեկն էր եվրոպական մտավորականների միջավայրում:

Փրանսիացի հայտնի հրապարակախոս Հանրի Ռոչֆորը 1913 թ. հունվարի սկզբներին «La Patria» թերթում գրում էր. «Կարելի է կարծել, թէ բոլոր հայերը ծնւած են տանջանքների եւ ջարդի սարսափների համար: Հայոց կոտորածների մասին խօսում են այնպէս, որ կարծես թէ գործը վերաբերում է օպե-րայի: Այն բոլոր գազանութիւնները, որոնք ամեն օր կատարուում են Ասիական Թիւրքիայում, դարձել են մի տեսակ առօրեայ դրամա, եւ լրագիրները կարողանում են միայն արձանագրել այդ գազանութիւնները, իբրեւ բոլորովին աննշան անցքեր: Հաղոր-դում են, եւ այն էլ առանց բացատրութիւնների, թէ ինչպէս քիւրդերն առանց որեւէ պատճառի, առանց մի աննշան առիթ անգամ ունենալու, գանակոծել են երկու քահանայի եւ կտրել են նրանց լեզուն: Խմբագրութեանս մէջ մենք հեռագիրներ ենք ստացել, որ ջահէլ աղջիկներ բռնաբարուած են եւ ապա ցցի հանուած: Եւ տարօրինակ երեւոյթ է, որ ոչ ոք զարմանք չի յայտնում այս առթիւ ամենեւին»¹:

Փրանսիացի մտավորականը համոզված էր, որ բալկանյան չորս պետութիւնները շուտով տոնելու են իրենց ցեղակիցներին օսմանյան լծից ազատագրելու հաղթանակը, բայց Հայաստանն առաջվա պէս շարունակելու է մնալ թուրք-քրդական սարսափ-ների տակ: Միաժամանակ նա ցավով նշում էր, որ թուրքերի հետ բանակցութիւնների ընթացքում բալկանյան պատվիրակ-ները ոչ միայն որեւէ խոսք չեն ասում օսմանյան լծի տակ տա-

¹ Հանրի Ռոչֆորի սույն հոգվածի հայերեն արտատիպը տես՝ «Կովկասի լրագրեր», № 33, 9 փետրվարի 1913 թ.:

ուսարող ասիական քրիստոնյաների վիճակը գոնե թեթևացնելու անհրաժեշտություն մասին, այլև քար անտարբերություն են հանդես բերում Հայ ժողովրդի շարունակվող տանջանքների նկատմամբ: Հողվածի հեղինակը մեջբերում է Լոնդոնի խորհրդաժողովում թուրքական պատվիրակությանն ուղղված բալկանյան պատվիրակներից մեկի հետևյալ խոսքերը. «Մենք խլում ենք ձեզանից այն երկիրները, որոնք պատկանում էին մեզ: Փոխարենը մենք ձեզ թողնում ենք Հայաստանը, որին որքան ուզում էք՝ կարող էք ծաղրել եւ ուր ինչ խստություն ուզում էք՝ կարող էք գործել»¹:

Անմարդկային համարելով հայերի նկատմամբ այս անտարբերությունը՝ հողվածագիրը շարունակում էր. «Բայց մի՞թե բալկանեան քաջ ազգերը, որոնց հերոսությունը գարմացնում է ամբողջ աշխարհին, չեն արժանացնի կարեկցություններից զգացմունքի իրենց եղբայրներին: Կովկասի տէրը, Ռուսիան, վաղուց պէտք է իր իշխանությունը տարածէր Հայաստանի վրայ, և այն ժամանակ տեղի չէին ունենալ այդ բոլոր սարսափները:

Հայերի արիւնը Թուրքիայում հոսում է, ինչպէս եւ միշտ, Արդու-Համիդի ռեժիմը խորտակելուց յետոյ էլ: Թրքական նոր կառավարությունը միայն խրախուսում է ջարդարարներին»²:

Հայկական նահանգների փրկության միակ հույսը մնացել էր մեկը՝ բարենորոգումը: Դիմելով կաթողիկոս Գևորգ V-ին՝ Արշարունի պատրիարքը գրում էր, որ «...քիւրդ հարստահարիչներու գազանություններուն վերջ մը դնելու համար հայերը յոյս կը տածեն, որ այս պատմական պահուն իրենք չպիտի մոռցնին եւ թէ առաջիկա դեսպանախորհուրդին ատեն շահակից պետությունները հարց կը բարձրացնեն իրենց վիճակի մասին եւս»³: Իսկ «Աւետարներ» թերթի մեկնաբանը նույնիսկ համոզված էր, որ եվրոպական մեծերի կամքով անցկացվելիք բարենորոգումների արդյունքում ամուր խաղաղություն կհաստատվի Հայաստանում: «Պետք է հիշել,- նշում էր թերթը,- թե տակաւին

երկար ժամանակ թուրք, քիւրտ և հայ միասին պիտի բնակինք այս երկրին մէջ: Մենք չենք կրնար եւ չենք ուզեր մեր այլազգի դրացիները վտարել ասկէ, իսկ անոնք ալ կարող չեն մեզ վտարել կամ առանց մեզի ապրիլ: Ազգ մը բնաջիջ ընելու համիտեան փորձը շատ փայլուն յաջողութիւն մը չեղաւ կը կարծենք: Ելլալով երբեմնի բնակիչներն իսկ թերեւս պատրաստ են հիմա ընդունելու թէ ճշմարտութիւն մը կայ անգլիական առածին մէջ - «Սալն է որ կը ծեծուի, մուրճն է որ կը մաշի»: Մեզի կը մնայ խաղաղօրէն միասին ապրելու միջոցները գտնել եւ կիրարկել»¹:

Թուրքահայաստանում լայն թափ առած քրդական խժոժությունները լրացվում էին քուրդ նորածիլ քաղաքական գործիչների և նոսրաթիվ մտավորականների լարված, փութաջան աշխատանքով, որի նպատակն էր խափանել հայկական նահանգներում բարենորոգումներ կատարելու ուղղությամբ սկսված շարժումը:

Սակայն 19-րդ դարի վերջերից քուրդ ժողովրդի մեջ, թեև շատ հեղզ ու տկար, սկսել էին զարթնել ազգայնական ձգտումներ: Մի քանի նշանավոր քրդական տոհմերից սերված երիտասարդներ կարողացել էին եվրոպական կրթություն ստանալ և վերադառնալով իրենց բնակության վայրերը՝ հղացել էին քրդական ցեղերը միավորելու, միասնական ազգություն ձևավորելու և այդ հիման վրա Հայաստանի տարածքում ինքնավար Քուրդիստան ստեղծելու գաղափարը:

Արդեն բալկանյան պատերազմի նախօրյակին քուրդ նորածագ սակավաթիվ մտավորականները, հատկապես կրթյալ ցեղապետերը խորհում էին, թե օսմանյան կայսրության ազգերից ամեն մեկը մտածում է թուրք պաշտոնյաների հարստահարումից ազատվելու մասին, ձգտում է ինքնուրույնություն և «միայն մենք ենք, քրդերս, որ ապրում ենք միմյանց դեմ կովելով և փորձում մեր բոլոր հարցերը լուծել վարչականներին տրվելիք կաշառքի միջոցով: Այլևս հնարավոր չէ այսպես ապրել: Քուրդիստանը նախնիներից ստացած ժառանգություն է, այն պատ-

¹ «Կովկասի լրագրեր», № 33, 9 փետրվարի 1913 թ.:

² Նույն տեղում:

³ «Աշխատանք», № 5 (99), 17 նոյեմբերի 1912 թ.:

¹ «Աւետարներ», № 52, 28 դեկտեմբերի 1912 թ.:

կանում է մեզ, այլ ոչ թե թուրքերին, որոնց բոլորին պետք է արտաքսենք, այդ թվում՝ բոլոր թուրք ասկյարներին ու զափթիկներին, կազմենք քրդական բեյություն (կուրմանջի-բեյլիկի) ինքնավար Քուրդիստան»:

Ինչպես աշխատության նախորդ գրքում նշել ենք, Թուրքիան խոստացել էր Պարսկաստանին հարող իր տարածքների մի մասը զիջել Ռուսաստանին, միայն թե վերջինս չբարձրացներ Հայաստանի ինքնավարության խնդիրը:

Այդ տարածքները, որոնց մասին Բ. Դուռը ակնարկել էր Պետերբուրգին, հիմնականում քրդաբնակ էին: Երկուդ կրելով, որ Թուրքիայում իրենց ցեղակիցների թվապես փոքրանալուց հետո Թուրքահայաստանի հարցը կարող է լուծվել հօգուտ Հայերի, քուրդ գործիչները սկսեցին մեծապես անհանգստանալ: Նրանք լավ էին հասկանում, որ Հայաստանի ինքնավարության պայմաններում իրենց ցեղի մարդիկ այլևս անկարող կլինեն անպատիժ հարստահարել Հայերին, շարունակել իրենց ելուզակային կյանքը: Ուստի դիմեցին վճռական հակաքայլերի:

Բիթլիսի քուրդ ցեղապետերի ժողովը 1912 թ. նոյեմբերի վերջերին որոշում ընդունեց Թուրքիայի կառավարությունից պահանջել քուրդ ժողովրդին ինքնավարություն տալ հայկական նահանգների տարածքների վրա:

Հանդիպելով Թալեաթ բեյին՝ քուրդ առաջնորդներից Աբդուլ Կադրը գրույցի ընթացքում ասել էր, թե իրենք ոչ մի դեպքում թույլ չեն տա որևէ բարենորոգում: Իր հերթին Թալեաթը նշել էր, որ Հայերին ինքնավարություն տալը կնշանակեր քրդերի իրավունքների ոչնչացում, որին երբեք չի գնա կառավարությունը: Այնուհետև քուրդ գործիչն անզուշաբար հայտնել էր, որ հենց այդ պատճառով քրդերն իրենք են ինքնավարություն ուզում Հայաստանի ողջ տարածքի վրա: Այդ հանդուգն առաջարկը հավասարակշռությունից հանել էր Թալեաթին, որը կտրուկ կանխել էր գրուցակցին և սպառնացել քրդերին զանազան հնարավոր պատիժներով:

Այդ կտրուկ սպառնալիքը սառը ջրի ազդեցություն էր գործել քրդերի առաջնորդների վրա և սթափեցրել նրանց: Ուստի սրանք ստիպված եղան չեղոքացնելու իրենց անզուշաբար պահանջները:

հանջների արդյունքում կառավարության մոտ ստեղծված տհաճ տպավորությունը: Նրանք հիմա հայտարարում էին, թե քրդերը չեն կամենում իրենց բախտը կապել Թուրքիայի որևէ քաղաքական կուսակցություն հետ, բայց պատրաստ են իրենց արյունը թափել Թուրքական ցանկացած կառավարության համար, որն ուշադրության կառնի քուրդ ժողովրդի օրինական շահերը:

1912 թ. դեկտեմբերի 8-ին Կ. Պոլիս եկան քրդերի պարագլուխները, որոնք նույն օրը եղան կառավարությունում և հայտնեցին, թե, օգտվելով բալկանյան պատերազմում Թուրքիայի պարտությունից, Հայերն, իբր, լրջորեն պատրաստվում են բարձրացնել ապստամբություն՝ ինքնավարության պահանջով: Նրանք միաժամանակ հայտարարեցին, որ եթե Բ. Դուռը միջոցներ չձեռնարկի Հայերի ապստամբությունը կանխելու համար, այն ժամանակ քրդերն իրենք միայնակ կպաշտպանեն օսմանյան երկրի միասնականությունը և իրենց իրավունքներն ու շահերը: Քուրդ ղեկավարներն այդ սաղրանքին էին դիմում, որպեսզի անպատիժ նոր ավազակություններ կատարեն Թուրքահայաստանում:

Տեղեկանալով այդ մասին՝ Հայոց պատրիարքությունից պատվիրակությունը եղավ Ռեչիդ փաշայի մոտ և գրավոր բողոք ներկայացրեց քուրդ պարագլուխների հերթական կեղծիքի դեմ: Հայերը միաժամանակ կառավարության ուշադրությունը հրավիրեցին քրդերի նորանոր խժժությունների վրա, որոնց մասին պատրիարքարանն ամեն օր տասնյակ տեղեկություններ էր ստանում Թուրքահայաստանից:

Ջրույցի ընթացքում Ռեչիդ փաշան Հայերի դրությունն անբավարար համարեց, բայց միաժամանակ գտնում էր, որ քրդերի ավազակություններն ու կողոպուտները քաղաքական բնույթ չեն կրում, քանի որ նրանց գործողություններից տուժում են նաև մահմեդականներ:

Հայ պատրիարքարանի պատվիրակության կողմից ներկայացված բոլոր պահանջների մերժման մասին Բ. Դուռը անմիջապես տեղյակ պահեց քրդերի ղեկավարներին: Որպեսզի սրանք կասկած չունենային, որ իրենց շահերը գերադաս են ճանաչվելու նաև ապագայում, կառավարությունը շտապեց նրանց

Հանգստացնել ու հավաստիացումներ տալ, թե ոչինչ չի փոխվելու Հայաստանում: Միաժամանակ քուրդ առաջնորդների պահանջով բանտերից ազատ արձակվեցին քուրդ ոճրագործների պարագլուխներից շատերը: Իշխանությունները անգամ փորձ չէին անում ձերբակալելու մի քանի հարյուր կիսավայրենի արյունակղակ ավազակների: Ավելին, նրանց սկսել էին զինել նորագույն զենքերով այն դեպքում, երբ հայերն ամբողջովին զինաթափ էին: «Աւետարեբը» գրում էր. «Միթե այս իրողությունները արեւի լոյսի չափ պարզ չե՞ն ցուցնել այն ճշմարտությունը թէ կառավարութիւնը հայաջինջ քաղաքականութեան մը կը հետեւի պարզապէս եւ հայու պէս աննշան մէկ տարրի համար չուզեր նույնիսկ ամէնէն սովորական քուրդ ոճրագործներու քէյֆին դպչիլ: Բարեացակամութիւն չենք կրնար սպասել երբեք այսպիսի կառավարութիւններէ, որքան ալ անոնց չէֆերը մեր կարգ մը չէֆերուն հետ անձնական բարեկամութիւն կազմեն...»¹: Այդ ամենը վկայում էր, որ քրդերը թույլտվություն են ստացել «արևելյան նահանգներում» նոր թևեր առնելու և դիմելու նոր խժոժությունների:

1912 թ. դեկտեմբերի 15-ին քուրդ պարագլուխները հեռագիր հղեցին սուլթանին և խնդրեցին թույլ չտալ ոչ մի բարեկարգում «արևելյան գավառներում», քանի որ, հակառակ դեպքում, դա սկիզբ կդնի կայսրությունից դրանց անջատման գործընթացին: Սուլթանն անմիջապես պատասխան հեռագրով նրանց հանգստացրեց և, ի նշան ողորմածության, ներում չնորհեց նաև քուրդ ավազակախմբերի ձերբակալված հայտնի արյունարբու պարագլուխներ Սայիդ Խախին և Աբդուլ Ռեզակին:

Դրանից մի քանի օր հետո Բ. Դուռը լրջորեն զբաղվեց քրդերի պարագլուխների՝ Աբդուլ Կադրի ներկայացրած նախագծի քննությունը, որով առաջարկվել էր Քուրդիստանին տալ ինքնավարություն: Վարչական այդ միավորման մեջ պետք է ներառվեին նաև Վանի, Բիթլիսի, Տիգրանակերտի հայկական նահանգները: Նպատակը նորից մեկն էր՝ արգելք լինել Հայաստանին:

¹ «Աւետարեբ», № 37, 14 սեպտեմբերի 1912 թ.:

տանին հնարավոր ինքնավարություն տալուն:

«Հայաստա՞ն թե Քուրդիստան» անվանումը աստիճանաբար թերթում էր վերջինիս կողմը՝ դառնալով նաև թուրք մամուլի մի մասի զբաղմունքը¹:

Նույն օրերին Կ. Պոլիս եկան մի խումբ քուրդ բեկեր, որոնք կառավարությունում արժանացան ջերմ ընդունելության և նույնպես հարց դրեցին հայերի հողերի վրա քրդերի ինքնավարություն հռչակելու հարցը: Վարչապետ Քեամիլ փաշան հուսադրեց բեկերին ու խնդրեց իր խորին չնորհակալությունը փոխանցել քուրդ համայնքին՝ «օսմանյան հայրենիքին հավատարիմ լինելու համար»:

Հայկական նահանգները Քուրդիստանի մաս ներկայացնելու համար և հայկական հարցի վերաբերման դեմ մեծ ջանքեր էր գործադրում 1912 թ. վերջերին Կ. Պոլսում հիմնված առաջին քրդերեն լրագիրը²: Վարչապետ Քեամիլ փաշան այս անգամ քրդերին հորդորել էր չդիմադրել Հայաստանում բարենորոգումներ մտցնելու գործին, այլապես Ռուսաստանը կգրավի Քուրդիստանը: Բայց այդ հորդորները ոչ մի ազդեցություն չգործեցին քրդերի վրա, որոնք վճռել էին պատրաստվել կռիվ մղելու, որպեսզի մնան դրություն տերը Հայաստանում: Քրդական թերթն իր էջերը լցրել էր քուրդ ղեկավարների հողվածներով, նրանց հետ հարցազրույցներով, խմբագրության մեկնաբանություններով և այլ նյութերով, որոնց գլխավոր նպատակը ապացուցելն էր, թե հայոց պատմական տարածքները քրդական են:

Հայ քաղաքական գործիչներից շատերը կարծում էին, որ հազիվ թե հնարավոր լինի հաղթահարել բարենորոգումների ճանապարհին ընկած քրդական խոչընդոտը, որը նախորդ տասնամյակներին նույնպես եղել է թուրքահայ ժողովրդի ազատագրական ճանապարհը փակող հիմնական արգելքը:

«Աւետարեբ» թերթի առաջնորդող հողվածի հեղինակ վեր.

¹ Տե՛ս «Աւետարեբ», № 3, 18 հունվարի 1913 թ.:

² Տե՛ս «Կովկասի լրագր», № 48, 23 դեկտեմբերի 1912 թ.:

Ա. Ծնավոնյանը համոզված էր, որ հայկական նահանգների բարեկարգության հարցի ապագան մշուշների մեջ է: «Մեր նախնիք,- գրում էր նա,- ժամանակին յուսախար եղան, որովհետեւ «լեռն ահագին ծնաւ մուկ չնչին»: Իսկ մենք չենք գիտեր թէ դահլիճներու եւ պետութիւններու եւ դեսպանական ժողովներու այսքան երկունքէն յետոյ գոնէ մկնակ մը պիտի ծնի՞»¹ Թէ ոչ: Ուրիշ բան չենք կրնար ընել բայց սպասել: Սպասելը աւելի դիւրին ըլլար թերեւս, եթէ աւազակներ, առեւանգիչներ եւ կիններու հաւատափոխութեան մասնագէտներ ալ մեզի պէս սպասողական դիրք բռնած ըլլային այս տազնապի օրերուն մէջ»²:

Հայերի ողիսականը շարունակվում էր ոչ միայն հայկական նահանգներում, այլև դրանցից դուրս՝ կայսրության մյուս տարածքներում, նույնիսկ մայրաքաղաքում և նրա մերձակայքում:

“Русское Слово” թերթի թղթակիցը Կ. Պոլսից հեռագրել էր, որ հայոց պատրիարքը Գելիբոլուից ստացել է մի գրություն, որով հայտնված է, թե այնտեղի բաշիբոզուկները, միացած թուրք հրոսակների հետ, հարձակվել են շրջանի քրիստոնյա բնակիչների տների վրա, որոնց մեծ մասը պատկանել են հայերին, թալանել իրենց ձեռքն ընկած ամեն բան և դրանք բոլորը էժան գներով վաճառել Գելիբոլուի հրեաներին: Հրոսակախմբերի հարձակումների հետևանքով փաստորեն բնաջնջվել էր 16 գյուղ՝ դատարկվելով բնակչությունից: Իմանալով այդ մասին՝ Կ. Պոլսի ֆրանսիական դեսպանը Գելիբոլու էր ուղարկել «Վիկտոր Հյուգո» հաճանավր: Անգլիական մի զրահանավ նույնպես պատրաստվել էր մեկնել այնտեղ: Թղթակիցը ամսոսանքով ավելացնում էր. «Ռուսական դեսպանությունը, սակայն, Պետերբուրգից հրաման չստանալու հետևանքով, քրիստոնյաներին պաշտպանելու համար ոչինչ չի արել, հակառակ նրա, որ իր տրամադրության տակ ուներ չորս մարտանավ»²:

Բռնությունները շարունակվում էին նույնիսկ մայրաքաղաքում՝ եվրոպական դիվանագետների աչքի առաջ:

¹ «Աւետարներ», № 3, 18 Հունվարի 1913 թ.:

² “Русское Слово” թերթի սույն հոդվածի թարգմանությունը տե՛ս «Ժամանակ», № 1298, 5 (18) դեկտեմբերի 1912 թ.:

Գեկտեմբերի վերջերին Կ. Պոլսի Ղալաթիա թաղում բռնությունները առեւանգված 16 տարեկան հայ աղջկան իշխանությունները մերժել էին վերադարձնել իր ծնողներին՝ պատճառաբանելով, թե շարիաթի համաձայն՝ այդ տարիքի պարմանուհին չափահաս է համարվում, ուստի նրան վերադարձնելը բացառվում է: Ավելին, արդարադատության նախարարը հայոց պատրիարքին առաջարկել էր քահանա ուղարկել՝ ներկա լինելու աղջկա իսլամացման պաշտոնական արարողությանը¹:

Թուրքական բռնությունները շարունակվում էին նաև կայսրության մյուս քրիստոնյաների նկատմամբ:

Իսկ Հայաստանի հայությունը շարունակում էր տվայտել անհուն տառապանքների մեջ:

Ռուսական “Церковный Вестник” թերթը 1912 թ. № 41-ում նշում էր, որ եթե որևէ մեկին հաջողվում է սրտագին, անկեղծ գրույց ունենալ Թուրքիայի որևէ քրիստոնյայի հետ, ապա «նա ձեր առջև բացում է անհատական կյանքի, ընտանիքի և համայնքի մի այնպիսի ողբերգություն, որ մարդ ապշում է մի կողմից մահամեղականների վայրենություն, մյուս կողմից քրիստոնյաների հավատքի, համբերության և արիության վրա: ... Հավատալ, թե թուրքերը կամավոր կապահովեն քրիստոնյաների համար ազատ կյանքի պայմաններ՝ բոլորովին անկարելի է: ... Եվ այժմ շատ բնական է,- շարունակում էր թերթը,- որ թուրքական ռեժիմի այս անտանելի վիճակի դեմ ծառայել են բուլղարն ու սերբեր, մակեդոնացին ու չերնոգորցին, հույներն ու կուցո-վալախները, նույնիսկ այբանացին, այսինքն՝ ոչ միայն քրիստոնյաները, այլև մահամեղականները»: Իսկ կոտորակված, թշվառ թուրքահայ ժողովուրդը շարունակում էր խողխողվել անարգ լծի տակ:

Հայկական բնակավայրերի վրա քրդերի շարունակվող ասպատակությունները, հայ բնակչության նկատմամբ նրանց վայրագությունները ռուսական դիվանագիտությունը համարում էր Հայաստանում հնարավոր բարենորոգումներ կատարե-

¹ Տե՛ս «Կովկասի լրագրեր», № 22, 27 Հունվարի 1913 թ.:

լու դեմ ուղղված ամենալուրջ խոչընդոտներից մեկը: Քաղաքակրթության հետ քրդերի գործելակերպի անհարիր լինելը ուս դիվանագետները և մամուլը բացատրում էին նրանց տնտեսական ու մշակութային ծայրահեղ հետամնացությամբ:

Բայազետում ուսական փոխհյուպատոսն այդ օրերին արտգործնախարարության առաջին դեպարտամենտին հղած իր № 230 գաղտնի հեռագրում նշում էր, որ քրդերի հետամնացությունը հետևանք է նրանց նկատմամբ թուրքական կառավարության կողմից վարվող քաղաքականության: Նա հիշեցնում էր, որ «Հայ ազգությունը արմատախիլ անելու և Քուրդիստանում համատարած քրդական բնակչություն ստեղծելու համար հայերի դեմ քրդերին գրգռելու քաղաքականություն կիրարկող թուրքիան երբեք չի մտահոգվել նրանց կարիքներով, չի կարողացել օգտվել այնպիսի գորեղ գործոնից, ինչպիսին է կրոնական ընդհանրությունը՝ քրդական ցեղերը միավորելու համար, որի նպատակով նրան նախևառաջ հարկավոր էր մտահոգվել իր քրդերի չըջանում տնտեսական և մշակութային մակարդակի բարձրացմամբ: Կաշառակերությունը ու բռնությունը աչքի ընկնող ապաշնորհ թուրքական վարչությունը, չէր կարող չհարուցել քրդերի դժգոհությունը, ուստի և զարմանալի չէ, որ սրանց հավատարմությունը թուրքիայի նկատմամբ չնչին է, և որոնց մեջ նկատելի է ձգտումը դեպի Ռուսաստանը»¹: Ուստի տվյալ պահին փոխհյուպատոսը կարևորագույն խնդիր էր համարում քրդերին ուսական ազդեցության ոլորտ ընդգրկելը: Նա գրում էր, որ ներկայումս, երբ Բալկանյան ռազմաճակատներում սլավոնների տարած հաղթանակների հետևանքով թուրքիայի նկատմամբ քրդերի հավատարմությունն է՛լ ավելի է թուլանում, երբ ծագում է թուրքահայերի հանդեպ իրենց հովանավորության հարցը, անհրաժեշտ է առանձնապես հոգ տանել թուրքիայից քրդերի մեջ ուսական ազդեցությունն ուժեղացնելու մասին: Այդ նպատակին հասնելու համար դիվանագետը գործնական առաջարկներ էր անում. 1) Ավելի մեծ ուշադրություն

¹ АВПРИ, ф. “Политархив”, гг. 1909-1912, д. 3459, л. 43-43 (об.).

դարձնել Կովկասում պատկառելի թիվ կազմող ուսաստանակ քրդերի տնտեսական և մշակութային մակարդակի բարձրացմանը՝ որպես օրինակ թուրքիայի քրդերի համար, 2) Անդրկովկասում կազմել թեկուզ երկու քրդական գունդ, որը կհարուցեր թուրքիայի քրդական բեկերի ձգտումը Ռուսաստանի հանդեպ, հատկապես նրանց, ովքեր աշիրեթական գնդերում ունեն սպայական պաշտոններ, ուստի և պատվավոր դիրքեր են վայելում, 3) Ամեն կերպ ուսական կողմ գրավել Բայազետի գիլան ցեղի առաջնորդ Ալի Աչրաֆ բեյ Շամչեղինովին, որն անառարկելի ազդեցություն ունի 225 հազար մարդ կազմող իր ցեղի վրա՝:

Իսկ Բալկանյան ռազմաճակատներում շարունակվում էր պատերազմի կատաղի ընթացքը՝ մարդկային հսկայաթիվ կորուստներով:

¹ АВПРИ, ф. “Политархив”, гг. 1909-1912, д. 3459, л. 43 (об.)-44:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆ ՀԻՆ ԳԵՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԴԺՎԱՐԻՆ ՎԵՐԸՆԹԱՑԸ

ԱՐՅՈՒՆԱՀԵՂՈՒԹՅՈՒՆ ԲԱԲԸ ԱԼԻՈՒՄ

1913 թ. առաջին կեսը Հայերի ազգային կյանքում առատ էր խոչոր դեպքերով:

Ինչպես ասվեց, 1912 թ. դեկտեմբերին կնքվել էր թուրք-բուլղարական զինադադար, իսկ երկու շաբաթ անց սկսվել էր վեց տերությունների՝ Լոնդոնում հավատարմագրված դեսպանների կոնֆերանսը:

Տերությունների լոնդոնյան դեսպանների կոնֆերանսին զուգահեռ բացվել էր նաև պատերազմող կողմերի ներկայացուցիչների կոնֆերանս:

1913 թ. սկզբներից սուր տարաձայնություններ էին սկսվել Հատկապես պատերազմող կողմերի ներկայացուցիչների կոնֆերանսում: Այստեղ հաղթողները թուրքիայից պահանջել էին հին սահմանը հաստատել Ռոդոսի Միդիա գծով և հրաժարվել էգեյան ծովի կղզիներից: Վարչապետ Քեամիլ փաշայի գլխավորած թուրք պատվիրակությունը, մերժելով այդ պահանջը, վերադարձել էր Կ. Պոլիս¹:

Ավ. Իսահակյանը 1913 թ. հունվարի 5-ին ժնկից Ս. Վրացյանին գրում էր. «... Հայկական հարցը զարթնել է: Ո՞վ կարող է ուրիշ բանով զբաղվել: Ես հույսեր ունեմ. ինչո՞ւ, ի՞նչ հիման

¹ Տե՛ս Գ. 3. Алиев, Турция в период правления младотурок (1908-1918 гг.), էջ 226:

վրա - չեմ կարող ասել. միայն հույս ունեմ...»¹:

Իսկ չորս օր անց՝ 1913 թ. հունվարի 9-ին, բանաստեղծը Փարիզում գտնվող Ավետիս Ահարոնյանին գրած նամակում, արտահայտելով իր տազնապները, նշում էր, որ ինքն անձնական կյանք չունի, որ իր կյանքը նման է իսկական դժոխքի, և որ «սիրտս ու հոգիս հայկական չարաբախտ հարցի շուրջն է դառնում»: Նա իր գրչակցին խնդրում էր իրեն տեղեկություններ հաղորդել Հայկական հարցի զարգացումներից, քանզի ուզում է շատ բան իմանալ. «Ի՞նչ եք անում, ի՞նչ յոյսեր կան, Ռուսիան արդարե՞ւ պիտի պաշտպանէ հարցը, [այն] հաստատպէ՞ս դրուելու է դեսպանաժողովի առաջ, եւայլն, եւայլն: Խնդրեմ, որքան հնարաւոր է, գրի՛ր: Եթէ յուսատու բաներ լինին, տրամադրութիւնս շատ կը բարձրանայ»:

Հայկական հարցի՝ անսպասելի բարձրացումը չփոթի էր մատնել իր ժողովրդի ցավերով տառապող բանաստեղծին: «...Միշտ մի սեւ եւ մեծ կասկած թագնուած է յոյսերիս յետեւը: Թւում է, որ ամէն բան կը լինի ի վնաս հայի: Շատ բան պարզ էր ինձ համար հայկական հարցի նկատմամբ. միայն երկու բան աւելի եւս պարզուեց,- մէկ՝ որ թիւրքը ամէն դրութեան մէջ էլ, ամէն պետական կազմի մէջ էլ, միշտ եւ հանապազ, երէկ, այսօր եւ յաւիտեան՝ ռիսերիմ թշնամի է հայի: Նա շան ու գիլու ազատութիւն կը տայ, միայն թէ հայը ոչնչանայ, միայն թէ հային ջարդէ:

Երկրորդ՝ որ եւրոպական պետութիւններին եւ մասնաւորապէս Ռուսիային միշտ բարեկամ մնանք, չպէտք է զրգոենք. վերջ ի վերջոյ նրանք են մեզ փրկողները:

Թիւրքիան – մեր թշնամին է.

Եւրոպան – մեր բարեկամը:

Այդ պէտք է լինի մեր ղեկավարող աստղը, մեր կեանքի բոլոր ալեկոծումների ժամանակ. որքան էլ Եւրոպան մեզ լքէ, բայց վերջը կը հասնի. պատմական ընթացքը այդ է:

¹ Սիմոն Վրացեան, Հին թղթեր նոր պատմութեան համար, Բեյրութ, 1962, էջ 340:

Ներողութիւն, որ վատ գրեցի. սաստիկ գլխացաւ ունիմ, եւ ձախ աչքս ցաւից պայթում է:

Գրի՛ր, մէկ տեսնենք ե՞րբ է բացվելու դեսպան[ական] ժողովը, ո՞վքեր են պատվիրակները: Մի խոսքով՝ ինչ կարող ես, գրիր»¹:

Եվս մի քանի օր, և 1913 թ. Հունվարի 13-ին Իսահակյանը Թուրքիայի ապագայի և սպասվող մեծ աղետների մասին կրկին իր մտածումներն է հաղորդում Ահարոնյանին: Նա գրում էր.

«Սիրելի Աւետիս,

Վաղուց է ստացել եմ նամակդ: Մենք ապրում ենք՝ օր օրի վրայ՝ մոխիր ցանելով մեր վառուած յոյսերի վրայ: Հայոց հարցի վրայ է խօսքս: Դէպքերը այնպէս են անակնկալներով զահավիժում իրար յետեւից, որ հայկական հարցի մասին խօսք չի լինի. ահագին մի պետութիւն է փլչում, եւ մնում ենք տակը: Ո՞վ գիտի՝ ե՞րբ ենք երես ելնելու»²:

Հայութունը 1913 թվական էր թևակոխել ծանր մտորումներով: Արդյոք թուրքահայության համար բախտորոշ հարցը առաջ մղելու որևէ հույս կա՞, թե՞ ձեռնարկված գործն ունենալու է անհույս վերջավորութուն՝ ինչպես նախկիններում: Առայժմ ոչ ոք չէր կարող խելամիտ պատասխան տալ, մանավանդ այն պատճառով, որ հայ-թուրքական և հայ-քրդական սրված թշնամանքի պայմաններում բուն թուրքական հասարակության մեջ զագաթնակետին էին հասել ներքաղաքական հակասութունները, որոնք առաջ էին բերել համազգային ճգնաժամ:

Բալկանյան ռազմաճակատներում Թուրքիայի կրած պարտութունները և Լոնդոնի «խաղաղության» կոնֆերանսի ընթացքը ընդդիմության մեջ գտնվող երիտթուրքերին տալիս էին հակաիթիլաֆական պայքարի ուժեղացման մեծ հնարավորութուն:

¹ «Հայրենիք», № 4 (279), ապրիլ, 1949, էջ 44:

² Նույն տեղում:

Իթիլաֆ և Իթիհհադ կուսակցութունների միջև դրու-
թյունն ավելի սրվեց այն բանից հետո, երբ 1913 թ. Հունվարի 4
(17)-ին վեց տերութունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաս-
տանի, Գերմանիայի, Իտալիայի և Ավստրո-Հունգարիայի Կ. Պոլ-
սի դեսպանները Թուրքիայի արտգործնախարար Հայազն Գաբ-
րիել Նորատունկյանին ներկայացրին հավաքական մի վերջնա-
գիր՝ համառորեն նրան խորհուրդ տալով Բուլղարիային զիջել
չրջապատման մեջ գտնվող Ադրիանուպոլիսը (Էդիրնե)¹:

Այդ առաջարկութունը ցույց էր տալիս, որ նոր ստեղծված
իրավիճակում օսմանյան պետութունից տարածքային զիջում-
ներ են ուզում ոչ միայն բալկանյան զինակիցները, այլ նաև
եվրոպական կառավարութունները: Վերջնագիրը նոր ծիրի մեջ
էր մտցնում արևելյան խնդիրը և ըստ էության առաջ էր բերում
նոր երևույթ:

Վերջնագիրը կազմելու ժամանակ Բ. Դուռը մոտավորապես
տեղեկացել էր նրա բովանդակության մասին, բայց հույս էր
ունեցել, որ փաստաթուղթը կազմվելու է մեղմ տոնով: Ավելին,
կառավարության մեջ նույնիսկ ենթադրութուն կար, որ երկ-
պառակութուններ կառաջանան մեծ պետութունների միջև, որի
հետևանքով Գերմանիան ի վերջո կհրաժարվի ստորագրել
վերջնագրի տակ, որով և կվիժվի տերութունների հավաքական
միջամտութունը:

Բայց վերջին պահին Բեռլինից Կ. Պոլսի գերմանական դես-
պանատանը տրված ցուցումի համաձայն՝ դեսպան Վանզեն-
հայմը նույնպես ստորագրեց փաստաթղթի տակ, և Թուրքիայի
հույսերն ի դերև ելան:

Ահա այդ կարևոր վավերագրի բովանդակութունը.

«Ստորագրյալներս՝ Ավստրիայի, Անգլիայի, Ֆրանսիայի,
Ռուսաստանի, Գերմանիայի և Իտալիայի դեսպաններս, մեր կա-
ռավարութունների անունից արտոնված ենք հետևյալ ծանու-

¹ Տե՛ս Անտրէ Մանտէլսթամ, Օսմանեան կայսրութեան ճակատագիրը:
Առաջին մաս. Երիտասարդ թուրքերը պատերազմէն առաջ, Թարգմ. Միքայել
Շամտանճեան, Կ. Պոլիս, 1919, էջ 85:

ցազիրը հաղորդելու օսմանյան Վեհ. կայսեր արտաքին գործոց նախարարին:

Թշնամությունների վերսկսման առաջն առնելու փափագով պետություններն իրենց պարտականությունն էին համարում օսմանյան կառավարությունն ու շաղկապում հանձնել այն աղետավոր պատասխանատվությունը, որ իր վրա կծանրանա, երբ իրեն տրված խորհուրդներին հակառակելով, արգելք կլինի խաղաղության հաստատմանը: Եթե պատերազմը (բալկանյան: - Չ. Ս.) երկարի, բացառված չէ, որ հարցականի տակ կզրվի նաև մայրաքաղաքի բախտը, իսկ Ասիական Թուրքիայում թշնամությունները կտարածվեն նոր ուժով: Այս պարագայում պետությունները չեն կարող հուսալ, թե կարող են առաջն առնել այն վտանգների, որոնցից զգուշանալու են հրավիրում օսմանյան կառավարությանը, և այսօր իսկ չեն ցանկանա, որ [նա] ենթարկվի նոր փորձությունների:

Ամեն պարագայում օսմանյան կառավարությունը հաշտության կնքումից հետո կունենա մեծ պետությունների բարոյական ու նյութական աջակցության կարիքը՝ պատերազմի վնասները դարմանելու, Պոլսում իր դիրքերն ամրապնդելու և իր ամենաիրական ուժը կազմելու կոչված ասիական ընդարձակ հողերը շենացնելու, առաջադիմելու և շահագործելու համար: Այս նպատակին ձեռնարկելու և նրա իրագործման ուղղությամբ աշխատելու համար օսմանյան կառավարությունը միայն այն ժամանակ կարող է արժանանալ մեծ պետությունների բարյացակամ աջակցությանը, երբ օսմանյան շահերը պաշտպանելու նպատակով իրեն հայտնված խորհուրդները բարյացակամորեն ընդունի:

Արդ, մեծ պետություններն իրենց պարտականությունն են համարում հավաքաբար դարձյալ խորհուրդ տալ Բ. Դոանը, որ էզիրենն ձգի դաշնակիցներին և էգեյան կղզիների վերջնական կարգադրությունը հանձնի իրենց: Այս գիշումների փոխարեն մեծ պետությունները պիտի օգնեն ապահովելու էզիրենի իսլամական կրոնական շահերը և այս քաղաքի մեջ գտնվող մզկիթների և կրոնական շենքերի ու կալվածքների նկատմամբ հարգանքը: Նույնպես, կղզիների խնդիրը այնպես պետք է լուծվի,

որ որևէ կերպ չվնասվի օսմանյան երկրների ամբողջությունը և ապահովությունը:

Յոհան Ֆոն Պալապիչինի, Ջերրիդ Լոուիթըր, Մ. Բոմպար, Գիրս, Վանգենհայմ, Կամիլո Գարոնի»¹:

Վերջնագիրը շանթահարիչ տպավորություն թողեց Բ. Դոան վրա: Առաջ եկավ իսկական իրարանցում: Կառավարությունը մշտական խորհրդակցությունների մեջ էր՝ չվարած նոր կացություն առաջ:

Ստեղծված վիճակը քննելու համար 1913 թ. հունվարի 9(22)-ին Քեամիլ փաշան խորհրդակցության է հրավիրում կառավարության համարյա բոլոր բարձր պաշտոնյաներին: Մտքերի փոխանակումից հետո խորհրդակցությունն արտահայտվում է վեց տերությունների առաջարկությունն ընդունելու օգտին²:

Ազրիանուպոլիսը հանձնելու կառավարության որոշման մասին լուրն անմիջապես տարածվում է ոչ միայն մայրաքաղաքում, այլև երկրով մեկ³:

Հանրային կարծիքը սկսեց փոթորկվել: «Իթիհհադ վե Թերաքիի» ղեկավարության համար վրա հասավ պետական հեղաշրջում կատարելու և վեց ամիս առաջ կորցրած իշխանությունը վերադարձնելու պահը:

Ի դեպ, այն օրերին, երբ տեղի էին ունենում բանակցություններ Լոնդոնում, և նույնիսկ այն ժամանակ, երբ Բ. Դոանն էր ներկայացվել վեց տերությունների վերջնագիրը, Իթիհհադի ղեկավարներից Սաիդ Հալիմ փաշան, Թալեաթ բեյը և Հաջի Ադիլ բեյը բանակցություններ էին սկսել Իթիհիլաֆի հետ՝ բաժանելու համար իշխանությունը: Բայց ինչպես Իթիհիլաֆի կոմիտեն, այնպես էլ անձամբ վարչապետ Քեամիլ փաշան չէին ընդառաջել երիտթուրք կենտրոնական կոմիտեին: Միայն դրանից հետո Իթիհհադը որոշում էր ընդունել պետական հեղաշրջում կատարել:

¹ «Մշակ», № 13, 19 հունվարի 1913 թ.:

² Տե՛ս Դ. Յ. Ալևե, *Турция в период правления младотурок (1908-1918 гг.)*, էջ 226:

³ Տե՛ս նույն տեղում:

Եվ ահա առիթը ներկայացել էր: Ադրիանուպոլիսը բուլղար-ներին հանձնելու մասին տերությունների պահանջը կատարելու Իթիթիլաֆի խոստումը համարելով հայրենիքի դավաճանություն՝ երիտթուրքերն ամեն տեղ սկսեցին ուժգին պրոպագանդ մղել՝ հանրությունը համոզելու համար, թե Չաթալջայում գտնվող օսմանյան բանակը բացարձակապես անպարտելի է, և թե պատերազմը շարունակելու դեպքում ապահովված է թուրքական զենքի հաջողությունը:

Ինչ վերաբերում է Իթիթիլաֆի կառավարությանը, ապա նա առիթը բաց չէր թողնում մերկացնելու երիտթուրքերի պրոպագանդի իսկական նպատակը, միաժամանակ ցույց էր տալիս, որ պատերազմը շարունակելու դեպքում սպասվում են նոր պարտություններ, և, ամենազլխավորը, անխուսափելի կլինի եվրոպական պետությունների զինված միջամտությունը հօգուտ բալկանյան դաշնակիցների, ինչպես նաև ռուսական հարձակումը Ասիական Թուրքիայի վրա: Հետևապես, այս ամենը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է ժամ առաջ հաշտություն կնքել:

Կառավարության այս տեսակետներն արտացոլված էին նաև Քեամիլ փաշայի կառավարության պաշտոնաթերթ «Իկդամում», որն իր 1913 թ. հունվարի 7-ի և 8-ի խմբագրականներով առաջ էր տանում հաշտություն կնքելու տեսակետը՝ միաժամանակ փորձելով չոչափել հանրային կարծիքը և նրան պատրաստել Ադրիանուպոլսի զոհողությանը:

Թերթը շեշտում էր, որ մեծ տերությունների ծանուցագիրը մերժելու և դրա հետևանքով պատերազմը վերսկսելու պարագայում կվտանգվի Պոլիսը, և ռազմական գործողությունները կտարածվեն Անատոլիայում (նկատի ունենալով հայաստանում: - Հ. Ս.): Թուրքիան չի կարող նոր պարտություններ չկրել չորս պետությունների հետ պատերազմում, որոնց կողքին վճռականորեն կանգնել է Եվրոպան:

Հունվարի 8-ի համարում «Իկդամը» «Վտանգավոր շրջան» արհավիրալից խմբագրականում շեշտում էր, որ «Բարեկամ չունենք ոչ միայն կովի դաշտում, այլև դիվանագիտության մեջ: ... Բոլոր մեծ պետությունները չեն ուզում, որ պատերազմը շարունակվի: Անատոլիայում նույնպես իրական է դառնում մեծ

վտանգը: ... Այս վտանգավոր պահին մենք պետք է հարկ եղած տոկունություն և համբերություն ցույց տանք մեր պետության գոյությունն ու անկախությունը փրկելու համար: Ստիպված ենք պետությունների պահանջները կարելի եղածի չափ ընդունել»¹:

Հանրային կարծիքը ճշտելուն ուղղված «Իկդամի» խմբագրականները անբավարար համարելով՝ Քեամիլ փաշայի կառավարությունը մի պահ նույնիսկ մտադիր էր հրաժարական տալ՝ պատմական պատասխանատվությունից խուսափելու համար:

Սուլթանը վճռականապես մերժեց Քեամիլ փաշայի հրաժարականը և կառավարությունը պատասխանատվությունից ազատելու համար նրան խորհուրդ տվեց հարցը դնել խորհրդարանի քննարկման: Վարչապետը պատասխանեց, որ անհնար է գումարել խորհրդարան, քանի որ այն լուծարված է, բայց սուլթանը կարող է երկրի մեծամեծերից և ավագներից բաղկացած արտակարգ ժողով գումարել, ինչպես իր ժամանակ գումարել է Միդհատ փաշան:

Սուլթանը հավանություն է տալիս Քեամիլ փաշայի առաջարկությանը, և հունվարի 9-ին կայսերական պալատում գումարվում է արտակարգ ժողով՝ բաղկացած ծերակուտականներից, ուլեմներից, բարձրաստիճան սպաներից և քաղաքային պաշտոնատարներից: Կառավարության կողմից մասնակցում էին վարչապետ Քեամիլ փաշան, ռազմական նախարար Նազրեմը, արտգործնախարար Նորատունկյանը և Փինանսների նախարար Աբդուրրահման բեյը: Ժողովին ներկա էին նաև կայսերական իշխանների կողմից գահաժառանգ ճանաչված իշխան Յուսուֆ Իզզեդինը, իշխաններ Վահիդեդդինը և Մեջլիդը²:

Ժողովում հաղորդվում հանդես եկավ վարչապետ Քեամիլ փաշան և ծանրացավ այն վտանգների վրա, որոնք սպառնում էին նաև օսմանյան երկրի մյուս մասերի գոյությունը:

Ապա հայտարարություններով հանդես եկան ռազմական,

¹ «Մշակ», № 14, 20 հունվարի 1913 թ.:

² Տե՛ս նույն տեղում:

ներքին գործերի, ֆինանսների և արտաքին գործերի նախարարները:

Ռազմական նախարար Նազրմ փաշան, բանակի վիճակը Չաթալջայում փայլուն համարելով, ասաց, որ այն ոչ միայն ի վիճակի է պաշտպանելու ունեցած դիրքերը, այլև առաջ շարժվելու: Միաժամանակ նա շեշտեց, որ եթե երկրի մյուս մասերի վրա հարձակում սկսվի, ապա անկարելի կլինի պաշտպանվել:

Արտգործնախարար Գաբրիել Նորատունկյանը պարզեց այն բոլոր պատճառները, որոնք Թուրքիային համակերպություն են պարտադրում: Նա մասնավորապես շեշտեց, որ օսմանյան կառավարության հանդեպ առավել սպառնական դիրք են բռնել Ռուսաստանը և Ֆրանսիան:

Կառավարության դիրքի պաշտպանությունը հանդես եկան նաև ժողովի ուրիշ մասնակիցները: Միակ անձը, որը դեմ դուրս եկավ կառավարության անդամների տեսակետներին, ընդհանուր դատախազ Իսմայիլ Հակկը բեյն էր: Նա հավաքվածներին տեղեկացրեց, որ Անդրիանուպոլսի զինվորական պարետը հեռագիր է հղել վարչապետին և սպառնացել, որ եթե Թուրքիան հրաժարվի Ադրիանուպոլսից, այն ժամանակ ինքը հրաման կտա հօդա ցնդեցնել քաղաքի բոլոր պաշտպանական ամրությունները և գործի գլուխն անցած՝ կշարժվի Կ. Պոլսի վրա:

Ի վերջո ժողովը քվեարկեց մի բանաձև, որով իր կատարյալ համերաշխությունն էր հայտնում կառավարության բռնած դիրքի հանդեպ¹:

Ժողովից հետո Գաբրիել Նորատունկյանը կազմեց Ադրիանուպոլիսը հանձնելու մասին վեց տերությունների կողմից Կ. Պոլսին հղած նոտայի պատասխան-համաձայնության տեքստը, որի տակ իրենց ստորագրությունները դրեցին Քեամիլ փաշայի կառավարության բոլոր նախարարները, բացի փաստաթղթի հեղինակից՝ արտգործնախարար Նորատունկյանից:

Եվ այսպես, Իթիհահադին ներկայացել էր մի նոր առիթ նույնպես: Ադրիանուպոլիսը բուլղարներին հանձնելու մասին տե-

¹ Տե՛ս «Մշակ», № 15, 22 Հունվարի 1913 թ.:

րությունների պահանջը կատարելու Իթիհաֆի խոստումը համարելով հայրենիքի դավաճանություն՝ երիտթուրքերն ամեն տեղ սկսեցին ուժգին պրոպագանդ:

Իսկ Իթիհաֆի շարքերում տիրում էր չպատճառաբանված ընդհանուր լավատեսություն: Հաշտությունը թվում էր մոտիկ, Ադրիանուպոլիսի զիջումը՝ վճռված: Բայց իրադարձությունները զարգացան գահավեժ արագությունով: Անսպասելի կերպով կատարվեց պետական հեղաշրջում, և Քեամիլ փաշայի Իթիհաֆական կառավարությունը բռնությունը հեռացվեց իշխանությունից:

* * *

1913 թ. Հունվարի 10 (23)-ին, օրը ցերեկով, երիտասարդ սպաների մի խումբ՝ բաղկացած մոտ 200 հոգուց, էնվեր բեյի և Թալեաթ փաշայի գլխավորությամբ շրջապատում են Բաբը Ալին (Բ. Դուռը)¹ և ըրպեններ անց խուժում ներս: Կ. Պոլսի «Ժամանակ» թերթը, որը նկարագրել էր հեղաշրջման պահը, գրում էր, որ շենքը պաշտպանող ժանդարմները փորձեցին փակել էնվեր բեյի ճանապարհը, բայց նա նրանց հետ մղեց, որոնք դրանից հետո այլևս չհամարձակվեցին արգելք լինել²: Մուտք գործելով շենքից ներս՝ էնվերն իր մարդկանցով ուղղակի գնում է նախարարական խորհրդակցությունների սրահը: Ռազմական նախարար Նազրմ փաշան և նրա երկու թիկնապահները, որոնք դուրս էին եկել հեղաշրջման մասնակիցների հետ խոսելու, տեղնուտեղը սպանվում են³: էնվեր բեյը, շրջապատված հավատա-

¹ Տե՛ս В. А. Жебокрицкий, Болгария во время балканских войн 1912-1913 гг., Изд. Киевского университета, 1961, էջ 95-96:

² Տե՛ս «Ժամանակ», № 1337, 15 (28) Հունվարի 1913 թ.:

³ Ժամանակի մամուլում (օրինակ՝ «Մշակ», № 14, 1913 թ.) այդ պահի երկու նկարագրություն կա: Առաջին մեկնաբանություն. - Դահլիճ մտնելուն պես էնվեր բեյը ատրճանակով կրակում և սպանում է ռազմական նախարար Նազրմ փաշային, որը, կանգնելով վարչապետ Քեամիլ փաշայի առջև, իր մարմնով պաշտպանում էր նրան: Միաժամանակ զինվորները սկսում են ուժգին գանակոծել բրիտանացի երկու նախարարներին՝ Նորատունկյան և Ֆեն-

րիմ իթթիհհհհհհհհհհհ, խուժում է նախարարական խորհրդակցությունների սրահ, ուր Քեամիլ փաշայի կառավարության բոլոր անդամները քննարկում էին տերությունների հավաքական ծանուցագրի առիթով Գաբրիել Նորատունկյանի գրած պատասխան-տեքստը: Նախարարները, նորեկի ներս մտնելուց սարսափած, ոտքի են ցատկում, իսկ էնվերը ուղղակի գնում է դեպի ծերունի Քեամիլ փաշան և հայտնում, թե ուզում է հետը խոսել: Վարչապետը մերժում է: էնվերը պահանջում է անմիջապես հրաժարական տալ՝ այլպես սպառնալով անհապաղ կալանավորել նրան և բոլոր նախարարներին¹: Պահանջը կատարվում է առանց հակառակության: Վարչապետը հենց տեղում գրում և ստորագրում է հրաժարականը: Ապա, բռնելով փաշայի օձիքից, էնվերը հրամայում է՝ իր հետ անմիջապես գնալ կայսերական պալատ և գրված հրաժարականը ներկայացնել սուլթանին²:

էնվերը կաբինետի անդամներին հրամայում է տեղից չչարժվել երկու ժամ շարունակ, իսկ ինքն ավտոմոբիլով դիմում է սուլթանի պալատը: Հազարավոր ամբոխն ուղեկցում էր նրան՝ «Կեցցե՛ պատերազմը» բացականչություններով:

էնվեր բեյի խոսակցությունը սուլթանի հետ հակիրճ էր: Հեղաշրջման հերոսը սուլթանին առաջարկում է ստորագրել վարչապետի և նրա կաբինետի հրաժարականը և Մահմուդ Շեքեթ փաշային մեծ վեզիր նշանակելու մասին արձանագրությունը:

դուն և հույն Մուսուրիս բեյին: Երկրորդ մեկնարանություն.- Երբ նախասենյակում արդեն ազմուկ էր, Քեամիլ փաշան դադարեցնում է նիստը և Նազրմ փաշային խնդրում է դուրս գալ ու տեսնել, թե ինչու՞մն է բանը: Դուռն շեղված տեսնելով սպանված պահապան զինվորին՝ նա, «չներ, սրիկաներ» աղաղակելով, հանում է ատրճանակը և ուղղում էնվեր բեյի վրա: Այդ ժամանակ Մուստաֆա Նեջիրը վայրկենաբար կանգնում է էնվերի առջև, և գնդակը խոցում է նրան: Մահացու վիրավոր Մուստաֆան հավաքում է վերջին ուժերը, կրակում Նազրմի վրա և սպանում:

¹ Տե՛ս Անտրե Մանտէլսթամ, Օսմանեան կայսրութեան ճակատագիրը: Առաջին մաս, երիտասարդ թուրքերը պատերազմէն առաջ, էջ 85:

² Տե՛ս «Ժամանակ», № 1337, 15 (28) հունվարի 1913 թ.:

Սուլթանը հարցնում է, թե՛ «իսկապես ի՞նչ է պատահել»: էնվերը պատասխանում է, թե ամեն ինչի մասին իրազեկ կլինի հետո, որ այժմ ժամանակ չկա խոսելու, որովհետև հայրենիքը գտնվում է մահացու վտանգի մեջ:

Երեկոյան ժամը 8-ի կողմերը երիտթուրքերը վերջնականապես տիրում են Բ. Դուռն շենքը¹:

Առաջինն իր պաշտոնից արձակվում է արտաքին գործերի նախարար Գաբրիել Նորատունկյանը: Ապա պաշտոնազուրկ են լինում շեյխ ուլ-իսլամ Ջեմալեդդինը, ներքին գործերի նախարար Ռաշիդ բեյը և ֆինանսների նախարար Աբդուրրահման բեյը: Հետևում են մյուս բոլոր նախարարների հրաժարականի դիմումները², որոնց գործողություններից դժգոհ էր երիտթուրքերի կենտրոնական կոմիտեն³:

Դրանից հետո անմիջապես էնվեր և Թալեաթ բեյերի ձեռքն է անցնում տերությունների ծանուցագրի պատասխանը, որի տակ, ինչպես ասվեց, դրված էին բոլոր նախարարների ստորագրությունները՝ բացի Նորատունկյանի ստորագրությունից: Երբ էնվեր բեյը նրան հարցրեց պատճառը, նախկին արտգործնախարարը պատասխանեց, որ լինելով քրիստոնյա՝ ինքը հրաժարվել է ստորագրել մի փաստաթուղթ, որով քրիստոնյաներին է հանձնվում Ադրիանուպոլիսը, այլպես դա առիթ կդառնար, որ թուրք ժողովուրդն իրեն մեղադրեր դավաճանության մեջ: Լսելով այդպիսի պատասխան՝ էնվեր բեյը Գաբրիել Նորատունկյանին թաքցնում է հարևան սենյակում՝ զինակիցներին ասելով, որ նրան վերցնում է իր պաշտպանության տակ⁴:

Այդպիսով, տերությունների՝ Կ. Պոլսի ղեսպաններին ուղարկվելիք պատասխանը, որը կազմված էր չափավոր տոնով,

¹ Տե՛ս А. Н. Манделштам, Младотурецкая держава, историко-политический очерк, Москва, 1915, էջ 30:

² Տե՛ս Г. З. Алиев, Турция в период правления младотурок (1908-1918 гг.), էջ 227:

³ Տե՛ս Յու. Պետրոսյան, Հինավուրց քաղաքը Բոսֆորի ափին, Երևան, «Հայաստան», 1989, էջ 269:

⁴ Տե՛ս «Կովկասի լրագրեր», № 9, 13 հունվարի 1913 թ.:

Քեամիլ փաշայի կաբինետը չհասցրեց հանձնել հասցեատերերին:

Իթիթիլաֆի կառավարություն հրաժարականից հետո նրա անդամները փախան տարբեր ուղղություններով: Կազմվեց Իթիթիհադի նոր կառավարություն: Նույն օրվա երեկոյան Իթիթիհադի կոմիտեի կողմից վարչապետ նշանակվեց նախկին ռազմական նախարար Մահմուդ Շեքեթ փաշան¹, իսկ պետական խորհրդի նախագահ՝ իշխան Սայիդ Հալիմ փաշան²: Նոր կառավարության մեջ ներքին գործոց նախարար նշանակվեց Թալեաթ բեյը, արտաքին գործոց՝ նախկին մեծ վեզիր Հակկը փաշան, ռազմական՝ Իզզեթ փաշան, ծովային՝ Ջյուրյուքսուլու Մահմուդ փաշան, ֆինանսների՝ Ռիֆաթ բեյը, դատական՝ Իբրահիմ բեյը, հանրօգուտ աշխատանքների՝ Բչարա էֆենդին, էվկաֆի՝ Խայրի բեյը, առևտրի և երկրագործության՝ Ջելալ բեյը, հեռագրական ու թղթատարության՝ Ոսկան էֆ. Մարտիկյանը, կրթական՝ Շյուքրի բեյը: Նոր շեյխ ուլ-խլամ նշանակվեց Մեհմեդ էսադ էֆենդին: Էնվեր բեյը ստացավ Կ. Պոլսի բերդապետի պաշտոնը: Բոլոր նախարարներն իթիթիհադականներն էին: Կառավարությունը կոչվեց՝ ազգային պաշտպանություն³:

Վարչապետ նշանակված Շեքեթ փաշան նաև ստացավ գեներալիսիմուսի աստիճան: Նրա բացակայության դեպքում կառավարության ղեկավարի փոխանորդ նշանակվեց Սայիդ փաշան:

Կազմվեց նաև 20 հոգուց բաղկացած Ազգային պաշտպանության կոմիտե, որի մեջ մտան սենատորներ, պատգամավորներ, նաև էնվեր բեյի հայրը՝ Հաջի Ալին³:

Նախքան Հակկը փաշային արտաքին գործերի նախարար

¹ Տե՛ս Անտրէ Մանտէլսթամ, Օսմանեան կայսրութեան ձակատագիրը: Առաջին մաս, Երիտասարդ թուրքերը պատերազմէն առաջ, էջ 85:

² Սայիդ փաշան Համիդի գահընկեցությունից հետո Օսմանյան պառլամենտի սենատի նախագահն էր:

³ Տե՛ս «Մշակ», № 14, 20 հունվարի 1913 թ.:

³ Տե՛ս «Կովկասի լրագրեր», № 17, 22 հունվարի 1913 թ.:

նշանակելը Շեքեթ փաշան շատ աշխատեց, որ աթոռից զրկված Գաբրիել Նորատունկյանին համոզի նոր կառավարության մեջ մնալ իր պաշտոնում, բայց նա կտրականապես հրաժարվեց՝ խուսափողական պատասխաններ տալով: Իթիթիհադականները ձեռնարկել էին զգուշության բոլոր միջոցները, որպեսզի նրա կյանքը վտանգի չենթարկվի: Թալեաթն անձամբ էր հսկում նրա կյանքի անվտանգությունը, որովհետև մտածում էր, որ նրա իմացությունն ու դիվանագիտական հմտությունը դեռ պետք են զալու իրենց կառավարությանը¹:

Երկրորդ անգամ անցնելով իշխանության գլուխ՝ Իթիթիհադը չեղյալ հայտարարեց իթիթիլաֆական նախորդ երկու կառավարությունների կարգադրությունները և հայտարարեց, որ վերականգնանքնելու է այն վիճակը, որ գոյություն ուներ 1912 թ. հուլիսից առաջ՝ Սայիդ փաշայի կաբինետ պաշտոնավարության ժամանակ:

Իշխանությունը զավթելուց հետո երիտթուրքերն անմիջապես հայտարարեցին, որ մերժում են Բալկանյան Միության տերիտորիալ պահանջները Լոնդոնյան բանակցություններում²:

«Ռեյտեր» գործակալություն թղթակցի հետ ունեցած զրույցի ժամանակ Թալեաթ բեյը հայտարարել էր. «Ներկայ շարժումը նշանակում է, որ մենք վճռել ենք փրկել ազգի պատիւը կամ կործանել: Մենք չենք ուզում, որ պատերազմը շարունակի, բայց հաստատապես վճռած ենք պահպանել Ադրիանուպոլիսը: Սա *conditio sine qua non*-ն է»³:

Երիտթուրքական հեղաշրջումից երկու օր անց Ավ. Իսահակյանը Ավետիս Ահարոնյանին նամակով գրում էր. «Այդ ինչ վերիվարումների երկիր է Թուրքիան: Բայց պետք է հասկանալ այդ մարդկանց. իրենց աչքերի առջև փչրում է հայրենիքը, պետությունը, ի հարկէ կը խենթանան թուրքերն ու կը կատա-

¹ Տե՛ս «Մշակ», № 14, 20 հունվարի 1913 թ.:

² Տե՛ս А. М. Шнитман, Большевицкая газета “Правда” и болгарское рабочее движение (1912-1914 гг.), Мурманск, 1962, էջ 10:

³ «Կովկասի լրագրեր», № 9, 13 հունվարի 1913 թ.:

ղեն, կը խելոհն, կը գազազեն: Ես էլ որ թիւրք լինէի, ինձ կ'ուտէի: Մի՞թէ ժէօն-թիւրքերը կարող են սառնասիրտ մնալ... Մեղադրել չի լինի:

Բայց եւ այնպէս, ափսոս Նազըմ փաշան՝ միակ թիւրքն է, որի վրայ ցաւացել եմ ողջ կեանքիս մէջ. չգիտեմ ինչո՞ւ: Այդ անիծեալ թալէաթն է, որ իսկապէս տղամարդ է, մեծ թիւրք է: Բայց ի՞նչ կարող են անել, ընկած են կորստեան ճահիճը. քանի փորձ անեն ազատուելու, այնքան աւելի խորը խրուելու են: Անդամահատութեան սոսկալի զգացումներն են, որ որքան աւելի խիստ, այնքան մահաբեր: Եւրոպան՝ Թիւրքիայի բարեկամ թէ թշնամի՝ որ համարժէք են, բնութեան անբեկանելի օրէնքի պէս վճռել են Թիւրքիան ուտել՝ ու թէ շուտ: Վէճը կտորի մեծ ու պստիկի վրայ է, եւ պիտի ուտեն, մինչեւ տակը. մահմեդական կրօնի բոլոր երկիրները ուտում են եւ պիտի ուտեն – Ալժիր, Մարօք, Թունիս, Տրիպոլիս, Եգիպտոս, Հնդկաստանի մի մասը, Բելուճիստան, Աֆղանիստան, Բուխարիա, Խիվա, Պարսկաստան են., են.: Ճակատագիր է, ի՞նչ պիտի անես: Հիմա հարցը նա է՝ թէ մենք՝ պէտք է ուտե՞նք թէ ուտուենք: Ապրենք, կը տեսնենք»¹:

Երիտթուրքական նոր կառավարություն կազմելը շատերի համար նշանակում էր օսմանյան զորքերի անպայման հաջողություն ռազմաճակատում, որը հնարավորություն կտար նպաստավոր հաշտություն կնքել: Մյուս կողմից լրագրերը հաղորդում էին, որ հունվարի 12-ին Գաբրիել Նորատունկյանը հայտարարել է, որ եթե առաջիկա հաշտության բանակցություններում Թուրքիան համառություն դրսևորի, այդ դեպքում Ռուսաստանը կարող է կոչտ միջամտել իրադարձությունների ընթացքին և զորքեր մտցնել Հայաստան²:

Սկզբիցին «Միություն և առաջադիմություն» կոմիտեին թշնամի անձանց ձերբակալություններ³, կալանավորվեց 200-ից ավելի մարդ, իսկ այն երիտթուրքերը, ովքեր բանտարկված

էին իթիլաֆի իշխանություն ղեմ ակտիվ գործունեություն ծավալելու ամբաստանություններ, ազատ արձակվեցին: Բանտերից ազատվածների թվում էր նաև 1912 թ. վերջերին իթիլաֆական իշխանության կողմից ձերբակալված Վարդգեսը¹: Փակվեցին բոլոր ընդդիմադիր օրգանների խմբագրությունները, հաստատվեց խիստ գրաքննություն, հեռագրերը բաց էին թողնում՝ դաժան ընտրություն անելով: Կոմիտեի անդամները խիստ սպառնալիքների տակ հարուստ բնակիչներից տուրքեր էին առնում՝ իբր «պատերազմը շարունակելու համար»:

Այդ ամենին լուրջ դիմադրություն չկար, իսկ առանձին բացառությունները չէին փոխում ընդհանուր պատկերը: Բացառություններից մեկը, թերևս, Կ. Պոլսի գինավորական դպրոցում արյունալի ընդհարումն էր իթիլահաղականների համակրող և հակաթիթիհաղական Զինվորական միությունը հավատարիմ մնացած ուսանողների միջև²:

Ինչպես և ենթադրելի էր, որս սկսվեց հայ, հատկապես հնչակյան այն գործիչների դեմ, ովքեր կապ էին ունեցել իթիլաֆի հետ: Երիտթուրքերի բռնաճնշումների ալիքը տարածվեց նաև Հայաստանում: Բանտերը լցվել էին հայ քաղաքական բանտարկյալներով: Հայերը հալածվում էին, կալանավորվում, սպանվում: Այդընում հայ բնակիչները եկեղեցում փակվել էին ժանդարմների ահից, որոնք պատրաստվում էին վրեժ լուծել «Երկիրը ուսաներին ծախելու մտադրության համար»:

Իշխանությունը պահելու համար ամեն տեսակ բռնությունների ու խարդավանքների դիմած նոր կառավարության գործողությունները հիշեցնում էին արդուհամիդյան ժամանակները: Լրտեսությունն իր լայն ցանցերը տարածել էր ամենուր: Նախկին պաշտոնյաները և լրագրողները ամենափոքր կասկածի դեպքում իսկ աքսորվում էին Անատոլիա:

Այսպիսով, այն պահին, երբ Լոնդոնում գումարված հաշտության պատվիրակային ժողովը և դեսպանախորհուրդն արդեն մոտեցել էին հաշտություն կնքելու հնարավորությանը, երբ

¹ «Հայրենիք», № 4 (279), ապրիլ, 1949, էջ 45:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս «Կովկասի լրագրեր», № 25, 31 հունվարի 1913 թ.:

¹ Տե՛ս «Հայրենիք», № 12, հոկտեմբեր, 1924, էջ 120-121:

² Տե՛ս «Կովկասի լրագրեր», № 14, 18 հունվարի 1913 թ.:

Քեամիլ փաշայի կաբինետը, կամենալով փրկել Թուրքիան վերջնական անկումից, որոշել էր զիջումների գնալ բալկանյան պետություններին, երիտթուրք կուսակցությունը, իր ձեռքն առնելով իշխանությունը, քանդեց ու ոչնչացրեց Լոնդոնի բանակցությունների արդյունքը:

Իթիթիլաֆի կառավարությունն անակնկալ անկման և երիտթուրքերի ձեռքով իշխանությունը հափշտակելու մասին Կ. Պոլսից ստացված տեղեկությունները ծանր տպավորություն էին թողել Լոնդոնի բանակցությունների մասնակիցների վրա, քանի որ դա ձգձգելու էր հաշտության հարցի լուծումը:

Եվրոպայի հասարակական կարծիքը մեծ դժգոհություններ արթնացրեց երիտթուրքական հեղաշրջմանը: Մամուլը միահամուռ դատապարտում էր երիտթուրքերի հակաօրինական գործողությունը՝ արդարացիորեն նկատելով, որ դրա հիմնական պատճառներից եղել են Թուրք ժողովրդի ֆանատիկոսական և շովինիստական զգացումները: Եվրոպան միաժամանակ համոզված էր, որ նոր կառավարությունն անկարող է լինելու շարունակել պատերազմը և ստիպված գնալու է զիջումների (ինչը և ուզում էր անել Քեամիլ փաշայի կաբինետը)՝ գուցե պետության համար ավելի ծանր հետևանքներով:

Կ. Պոլսի եվրոպական դեսպանները նոր կառավարությունից պահանջեցին երաշխավորել մայրաքաղաքի քրիստոնյաների ապահովությունը:

Հենց որ հեռագիրը լուր բերեց Կ. Պոլսի նոր հեղաշրջման մասին, ուսաց կառավարությունն իր դեսպան Գիրսին անմիջապես պատվիրեց վճռականորեն նախազգուշացնել Բ. Դոանը, որ պատերազմի վերսկսումը շատ ավելի ծանր հետևանքներ կունենա Թուրքիայի համար: Այդ մասին հաղորդելով Բ. Դոանը՝ Գիրսը միաժամանակ հայտարարեց, թե պատերազմի վերսկսման դեպքում իր երկիրը կմնա չեզոք դիրքում:

Իսկ Կ. Պոլսի մահաճակատական բնակչությունը իշխանությունն փոփոխությունն ընդունեց մեծ ոգևորությամբ: Փողոցները լեփլեցուն էին ժողովրդով: Բ. Դոան շինությունն առաջ ցույցերը չէին դադարում: Մահմուդ Շեքեթ փաշան պատշգամբից ճառով դիմեց ամբոխին՝ վերջացնելով հետևյալ խոսքերով. «Աղբիա-

նուպոլի'ս կամ մահ»: Ճառն ուղեկցվում էր «Կեցցե՛ պատերազմը», «Մա՛հ բուլղար չներին» և այլ չղաղարող բացականչություններով:

Բայց այդ ոգևորությունը հիմնականում մայրաքաղաքում էր, իսկ ամբողջ երկրի մասշտաբով երիտթուրքերի իշխանությունն զայր տարբեր զգացմունքներ էր առաջացրել և զանազան մեկնաբանությունների տեղիք տվել: Սանդավառվածների թիվը մեծապես զիջում էր դժգոհների թվին:

Այդ էր պատճառը, որ նոր կառավարությունն սկսեց ճնշումներ գործադրել մամուլի ոչ իթիթիլաֆական օրգանների վրա և նրանց ստիպել հողվածներով հանդես գալ հեղաշրջման օգտին, գովերգել գործողությունն իրականացրած ղեկավար անձանց: «Մաբա՛հ» թերթի խմբագիր Հայազգի Քելեքյանը անուշադրություն էր մատնել այդ ցուցումը, որի պատճառով նրան սպառնացել էին թերթը փակել: Սմբագիրը ստիպված սկսել էր հողվածներով ներբողել հեղաշրջումը:

Բայց այդպիսի քայլերով հնարավոր չէր շահել լայն զանգվածների համակրանքը:

Իթիթիլաֆը կրկին իշխանություն էր եկել ոչ թե օրինական ճանապարհով, այլ մահվան սպառնալիքներով և ոճրային գործողություններով: Ուստի օսմանյան պատմությունն մեջ 1913 թ. հունվարի 10 (23)-ը սահմանված է մնալու ոչ թե որպես մեծություն և դյուցազնություն օր, այլ իբրև ելուզակային մի ձեռնարկ, որն արագացնում էր քայքայման դատապարտված կայսրության օրհասը:

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԸ ՏԱՐԱԾՈՒՄ ԵՆ ԿԵՂԾ ԼՈՒՐԵՐ

1913 թ. հունվարի սկզբներին փոխարքա Վորոնցով-Դաշկովին էր ներկայացել հայկական մի պատվիրակություն և Գևորգ V կաթողիկոսի անունից նրան էր հանձնել Նիկոլայ II կայսրին հասցեագրված նամակ՝ գրված 1912 թ. դեկտեմբերի 24-ին: Ռուսաց կայսրին կաթողիկոսի հղած խնդրանքը նույնն

էր՝ գործուն միջոցներ ձեռնարկել թուրքահայութեանը փրկելու համար:

Կովկասի փոխարքան կաթողիկոսի նամակն ուղարկել էր նախարարների խորհրդի նախագահ Կոկովցեին՝ հանձնելու կայսրին, միաժամանակ տեղեկացնելով, որ հայոց կաթողիկոսը ձգտում է ունկնդրություն ձեռք բերել Նորին Մեծութեան մոտ:

Ավելի ուշ մի ուրիշ նամակով՝ ուղղված Ս. Սազոնովին, Վոռոնցով-Դաշկովը նրան պարզում է տվյալ պահին Հայկական հարցի վիճակի մասին իր տպավորությունները՝ դրանք ամփոփելով հետևյալ կետերում.

1) Թուրքական կառավարության կողմից հաստատված Հայկական գործերի հանձնաժողովը, որի նախագահն է ներքին գործերի թուրք նախարար Ռեչիդ փաշան, հայ ժողովրդին չի ներչնչում ոչ մի վստահություն և դիտվում է իբրև աչքակապություն ու նաև Ռուսաստանի միանձնյա հսկողությունը բացառելու փորձ: Թուրքերը երկյուղ ունեն, որ Ռուսաստանը կարող է վերհիշել իր իրավունքը Սան-Ստեֆանոյի նախնական պայմանագրի 16-րդ հոդվածի համաձայն, ինչպես նաև բոլոր մյուս տերությունների հսկողության իրավունքը, որը բխում է Բեռլինյան տրակտատի 61-րդ հոդվածից, 2) Ներկայումս բոլոր հայերի շրջանում դիտվում է կատարյալ համերաշխություն այն հարցում, որ ինչպես Թուրքիայի կողմից բարեփոխումներ ձեռնարկելու նախաձեռնությունը, այնպես էլ դրանց կատարման հսկողությունը (կոնտրոլ) պետք է բխեն բացառապես Ռուսաստանի կողմից, 3) Բոլոր հայերն անսասան ու միասնական են այն հարցում, որ եվրոպական տերությունները պետք է լիազորեն Ռուսաստանին՝ թուրքական կառավարությանը ներկայացնելու հայկական անհետաձգելի բարեփոխումներն անցկացնելու պահանջը՝ Բեռլինյան տրակտատի 61-րդ հոդվածի համաձայն, ինչպես նաև նրան վերապահվի դրանց կատարման հսկողությունը: Ընդ որում հայերի շրջանում տարածված է այն կարծիքը, թե հենց իրենց քաղաքական գործիչները պետք է եվրոպական դիվանագիտական ոլորտներում քարոզչություն կատարեն Ռուսաստանի կողմից Հայաստանի գործերին միջամտելու օգտին, 4) Կաթողիկոսը, արտահայտելով հայ հասարակական-

քաղաքական շրջանների ցանկությունը, հույժ համբավվոր հայ գործիչ, հայկական հարցով բազում վեհաժողովներում ու համագումարներում իր փայլուն ելույթներով հայտնի Պողոս Նուբար փաշայի վրա է դրել բալկանյան գործերով խորհրդածոդովում հանդես գալու պատասխանատու գործը և նրանից պահանջել է հասնել այն բանին, որ Հայաստանում բարենորոգումներ կատարելու գործի հսկողությունը հանձնվի Ռուսաստանին¹:

Փոխարքան Սազոնովին տեղեկացնում էր նաև, որ հայություն հակառակորդները լուրեր են տարածում, թե ռուսական կառավարությունն առհասարակ, իբր, իր օրակարգից հանել է հայկական հարցով զբաղվելու մտադրությունը, այնինչ Թուրքահայաստանում ստեղծված ժամանակավոր «խաղաղություն» համար իրենք իսկ հայերը վերագրում են Կ. Պոլսի ռուսաց դեսպանի ներգործությանը և տեղի հյուպատոսների ազդեցությունը Բ. Դոան վրա՝ միաժամանակ խնդրելով շարունակել այդօրինակ ներգործությունը:

«Իրադրության այդպիսի պարագայում, - այնուհետև գրում էր Վորոնցով-Դաշկովը, - ես խիստ ցանկալի կհամարեի Կոստանդնուպոլսի մեր դեսպանի միջոցով թուրքահայերի համար անհրաժեշտ բարեփոխումների ուղղությամբ Բ. Դոան վրա ներգործելու իմաստով նոր քայլեր ձեռնարկել և դիվանագիտական փոխհամաձայնությունների արդյունքների մասին իրազեկել ինձ, ինչի մասին հարկ է լինելու տեղեկացնել Կաթողիկոսին, քանզի ես կանխատեսում եմ նրա հարցմունքներն այս առթիվ և անհնար եմ համարում բավարարվել ընդհանուր գծերով պաշտպանության սոսկ խոստումներ տալով՝ առանց մատնանշելու բանակցությունների միջոցով ձեռք բերվող արդյունքները»²:

Նամակի վերջում փոխարքան խնդրում էր իրեն մշտապես տեղյակ պահել Հայկական հարցով առաջիկայում անցկացվելիք միջոցառումների մասին:

¹ АВПРИ, ф. «Политархив», г. 1913, д. 3460, лл. 8 (об.)-9.

² Նույն տեղում, л. 9:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Այդ օրերին Հայ նշանավոր կրոնական, քաղաքական ու մշակութային գործիչներից շատերը հոռետես էին, որ Հայաստանի բարենորոգումների համար սկսված գործընթացը Հաջողություն կունենա: Նրանք հույսեր չէին կապում նաև Ազգային պատվիրակության հետ:

Հայր Գաբրիել ծ. վ. Վ. Մենեխյանը Վիեննայից 1913 թ. հունվարի 4-ի թվով Վահան Մալեգյանին գրած նամակում բարենորոգումների սկսած գործընթացի վերաբերյալ գրում էր. «... Մեր տառապեալ Հայ ազգին՝ - մի՛ սարսափիք - այս անգամ ալ ոսկեզօծ ապագայ մը չի խոստանար: Ես կը կարծեմ թէ երեք պատճառներու համար այս անգամ ալ պիտի յուսախաբուինք, 1878ին, Հայ Պատուիրակութեան Բերլինէն ի դարձին, Հայ ազգին պատճառած յուսախաբուիթենէն ոչինչ ընդհատ»¹: Նա մատնանշում էր թուրքահայոց հարցի լուծման ճանապարհին երեք հիմնական արգելք: Առաջին, «Որովհետեւ այլ եւ այլ տէրութեանց վրայ յոյս կը դրուի»: Հայերի բնական պաշտպանը համարելով Ռուսաստանը՝ նա գտնում էր, որ եթե միշտ ամուր կանգնած լինեինք Ռուսաստանի կողքին, ապա «կը հասնէինք օր մը պաշտպանութեան մը, որուն հասած են այսօր այբանացիք, չնորհիվ իրենց բնական պաշտպանի՝ Ավստրիոյ»²: Երկրորդ, «որովհետեւ մենք ալ չգիտենք մեր ուզածը, որոչ ծրագիր չունինք: ... Ի՞նչ է ազգին ուզածը. Անկախութի՞ւն, ինքնավարութի՞ւն, պաշտպանութի՞ւն, ո՞րն է ասոնցմէ մեր խնդրածը: Ի՞նչ ծրագրով կը ներկայանանք կամ պիտի ներկայանանք՝ եսասէր մեծերու, որոնք զիրա՛ր կլլելու կը նային, ո՛ւր մնաց մեզի պէս փոքրերը: Մէկը «ինքնավարութիւն», կ'ըսէ, միւսը՝ «անկախութիւն» Լիբանանի դրութեամբ, երրորդը՝ կեանքի, ինչքի, պատուի «պաշտպանութիւն» բաւական կը համարի, ո՞րն է ընդհանուրին, համայն ազգին գիտակցօրէն պատրաստած ծրա-

¹ Վ. Մալեգեան, Ճամբուս վրայ (Յուշաբաղ), Բարիդ, 1950, էջ 310:

² Նույն տեղում, էջ 310

գիրը»³: Երրորդ, Եվրոպական տերություններն առաջվա պես ոչ մի շահագրգռություն չունեն լուծելու հայկական հարցը²:

Բայց Հայ գործիչների բացարձակ մեծամասնությունը հակված չէր այս տեսակետին:

Ազգային պատվիրակությանն աջակցելու 1913 թ. հունվարի 14-ին կազմվեց նրան առընթեր նպատակով Բյուրո, որի անդամներ Պողոս Նուբարի կողմից նշանակվեցին Ա. Չոպանյանը, Համբ. Առաքելյանը, Պ. Էսմերյանը, Գ. Սարգսյանը, Հ. Թնկրյանը³:

Բյուրոյի և ընդհանրապես Ազգային պատվիրակության շուրջ համախմբվել էին մի շարք տեղացի գործիչներ՝ Բարեգործականի սյուներից Երվանդ Աղաթոն բեյը և ուրիշներ: Բյուրոյի պարտականությունն էր՝ եվրոպական մամուլում կազմակերպել Հայանպաստ պրոպագանդ, պատվիրակության կողմից տարվող աշխատանքների մասին իրազեկել զանազան երկրների Հայ գաղութներին, զորահավաքի ենթարկել նրանց մտավոր ուժերն ու հնարավորությունները և դրանք ուղղել Հայկական հարցի լուծմանը: Բյուրոյի հետ սերտորեն համագործակցում էր Փրանսիացի մարդասեր Վիկտոր Բերարը, որն իր առաջարկություններով, դիվանագիտական տեքստերի նուրբ ձևակերպումների իմացությամբ, խմբագրական հմուտ աշխատանքով մեծ աջակցություն էր ցուցաբերում Պողոս Նուբարին: Վերջինս Վահան Մալեգյանին գրում էր, որ Հայկական հարցի առաջնդման ուղղությամբ «աշխատանքը կը կատարենք հիմայ հոս աջակցութեամբը Մ. Վիքթօր Պէնարի, որ ուրիշ ոեւէ մէկէ մը աւելի լաւ գիտէ այս խնդիրները եւ որ մեզի շատ թանկագին օժանդակութիւն մը կ'ընծայէ»⁴:

Բացի այդ, Արչակ Չոպանյանի նախաձեռնությամբ և Պողոս Նուբարի ֆինանսական աջակցությամբ Փարիզում հիմնա-

¹ Վ. Մալեգեան, Ճամբուս վրայ (Յուշաբաղ), Բարիդ, 1950, էջ 312:

² Նույն տեղում, էջ 312-314:

³ Տե՛ս «Մշակ», № 9, 15 հունվարի 1913 թ.:

⁴ Վ. Մալեգեան, Ճամբուս վրայ (Յուշաբաղ), Բարիդ, 1950, էջ 307:

դրվում է «Հայկական միություն» անվամբ պրոպագանդայի հանձնախումբը, որը գլխավորում էր Չոպանյանը: Այդ կազմակերպության անդամները պետք է լայն պրոպագանդ տանենին՝ ի նպաստ Հայկական հարցի: Շուտով «Հայկական միության» մասնաճյուղեր բացվեցին Ֆրանսիայի մի քանի հայաչատ վայրերում¹:

Իր նամակներից մեկում անդրադառնալով այդ կազմակերպության գործունեությանը՝ Ա. Չոպանյանը գտնում էր, որ Հայկական տարբեր գաղութների հայ ազատագրական ուժերը պետք է միմյանց հետ շարունակական կապի մեջ լինեն, քանի որ նրանց բոլորին միավորում է մի ընդհանուր նպատակ²:

Ազգային պատվիրակության գործունեության կենտրոնատեղին Փարիզն էր, կոնկրետ՝ քաղաքի Տրոկադերո պողոտայի վրա գտնվող Նուբար փաշայի բնակարանը, ուր տեղի էին ունենում պատվիրակության անդամների հանդիպումները, պատվիրակության ժողովները:

Հենց այստեղ հարկ է նշել, որ ազգային պատվիրակության աշխատանքներին խանգարում էր այն հանգամանքը, որ նրա անդամներն ապրում էին եվրոպական տարբեր երկրներում և միչտ է, որ կարողանում էին հավաքվել լրիվ կազմով: Հ. Մուստիչյանն ու Գ. Ութուջյանը բնակվում էին Անգլիայում, Յազուր Արթին փաշան՝ Եգիպտոսում, Մ. Չերազը՝ Փարիզում: Վերջինս ընդհանրապես հեռու էր քաչվել գործերից*։ Այնպես որ, աշխատանքի ողջ ծանրությունն ընկած էր Պողոս Նուբարի ուսերին**:

¹ Այդ մասին տե՛ս ԳԱԹ, Արչակ Չոպանյանի ֆոնդ, թղթ. 430-430^ա, թթ. 1-8, թղթ. 150, թթ. 1-4:

² ԳԱԹ, Արչակ Չոպանյանի ֆոնդ, թղթ. 619^ա, բաժին IV, թ. 2:

* Մինաս Չերազը Հիվանդության պատճառով 1913 թ. մայիսին գրավոր հրաժարական էր ուղարկել Ամենայն հայոց կաթողիկոսին և Փարիզից հեռացել էր՝ դարձանելու առողջությունը:

** Ազգային պատվիրակության ղեկավարի ընտրությունը Ամենայն հայոց կաթողիկոսը շատ հաջող էր կատարել: Սկզբում, նույնիսկ գործի կեսում, դաշնակցական շրջանները հակառակ դիրք էին բռնել Պողոս Նուբարի նկատմամբ, նույնիսկ ջանքեր թափեցին նրան հեռացնել տալու իր պաշտոնից:

Հայոց պատրիարքարանն իր հերթին աշխուժացրեց կապերը Կ. Պոլսի ուսական ղեսպանություն հետ: Արդյունքում կազմվեց մի Հիշատակագիր, որը Արչարունի սրբազանը Գրիգոր Զոհրապի և Ազգային վարչության նախագահ Ստեփան Գաբայանի ուղեկցությամբ անձամբ ներկայացրեց ուսաց ղեսպանին:

Օրեր հետո թուրքահայոց Արչարունի պատրիարքը՝ իբրև Ամենայն հայոց հայրապետի ներկայացուցիչ Թուրքիայում, անձամբ մասնակցեց Կ. Պոլսում ուսաց ղեսպանատանը տեղի ունեցած արարողությանը՝ նվիրված Ռոմանովների տան 300-ամյակին:

Դրանից որոշ ժամանակ անց՝ փետրվարի 21-ին, պատրիարք Արչարունին մայր եկեղեցում Վարդանանց տոնի առթիվ քարոզ կարդալուց հետո մեկնում է ուսական ղեսպանատուն՝ իր հետ ունենալով Մաղաքիա եպիսկոպոսին, Վահան և Սմբատ ծ. վարդապետներին, աշխարհականներ Հարություն Զեքի և Տիրան Երկանյան էֆենդիներին, հայոց ազգային ժողովի պատգամավորներից Պեյազճյան էֆենդուն:

Դեսպանատան սրահում պատրիարքին ընդունում է առաջին թարգման Անդրե Մանդելշտամը և պատգամավորության մյուս անդամների հետ առաջնորդում ղեսպանության տարածքում գտնվող մատուռ, ուր արդեն գտնվում էին բուլղարացիների էկզարխը և հունաց պատրիարքի տեղապահը՝ աղոթելով Ռոմանովների տան համար:

Արարողությունների ավարտից հետո պատրիարքը վերադառնում է ղեսպանության սրահը, ուր ղեսպան Մ. դը Գիրսին ազգի անունից հայտնում է իր չնորհակալությունները: Դեսպա-

Նման առաջարկով Թիֆլիսից նրանք բազմաթիվ դիմումներ էին հղել ինչպես Կ. Պոլսի հայոց պատրիարքին, այնպես էլ կաթողիկոս Գևորգ V-ին, բայց վերջինս անուշադիր էր թողել այդ դիմումները: Լավ էր, սակայն, որ դաշնակցականները չուտով համոզվեցին, որ իրենք սխալ են և սկսեցին աջակցել Նուբար փաշային, ճանաչել նրա մատուցած ծառայությունների կարևոր արժեքը (տե՛ս «Մշակ», № 19, 28 հունվարի 1914 թ.):

նը պատասխանում է, թե թուրքահայոց կողմից եղած այս հարգանքի արտահայտություններից ինքը խորապես զգացված է և այդ մասին կտեղեկացնի իր կառավարությունը:

Կ. Պոլսի ռուսական դեսպանությունը գործում էր զգույշ և հավասարակշռված, բայց միաժամանակ հաստատակամորեն ձգտում էր Հայկական հարցի վերաբացման նախաձեռնությունը ձեռքից բաց չթողնել:

Ստանալով արտաքին գործերի նախարար Սերգեյ Սազոնովի հավանությունը՝ Գիրսը սկսեց դիմումներ հղել տերություններին՝ Կ. Պոլսում հավատարմագրված դեսպաններին՝ հայկական նահանգներում հայերի անապահովության, նրանց անտանելի դրություն մասին:

Դեսպան Գիրսը խորհուրդ էր տալիս, որ պատրիարքարանը կենդանի կապ ստեղծի ոչ միայն Թիֆլիսի, այլև Պետերբուրգի ու Մոսկվայի հայ ճանաչված քաղաքական գործիչների՝ Ա. Ասրիբեկյանի, Ա. Սարուխանի, պրոֆ. Ն. Ադոնցի, Ս. Տիգրանյանի, Մ. Պապաջանյանի և այլոց (Պետերբուրգ), Ստ. Մամիկոնյանի, պրոֆ. Զիվելեգյանի և այլոց (Մոսկվա) հետ: Նրանք բոլորը լծվել էին եռուն ու ոգեշունչ աշխատանքի: Ավյունալից քաղաքական-քարոզչական և դիվանագիտական աշխատանքներ էին ծավալել նաև ազգային հեղինակավոր հանրային դեմքերը Լոնդոնում, Բեռլինում, Հռոմում և այլուր:

Հետագայում Պողոս Նուբարը մի առիթով շեշտել է, որ հասկանալի պատճառներով Հայկական հարցի առաջխաղացմանն ամենից շատ նպաստել են ոչ միայն էջմիածնի Մայր աթոռը և Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, այլև Թիֆլիսի Ազգային բյուրոն, որի հետ մշտական կապի մեջ է եղել Ազգային պատվիրակությունը: Նա նշել էր, որ Բյուրոյի նախագահ Սամսոն Հարությունյանը մշտապես իրեն տեղյակ էր պահում կատարված աշխատանքների և ծրագրերի մասին, ստանում համապատասխան խորհուրդներ¹:

Մի նամակով Ս. Հարությունյանը Ազգային պատվիրակու-

թյան ղեկավար Պողոս Նուբարին հաղորդում էր. «Բիւրօն վերջերս զբաղված է հայանպաստ պրոպագանտի գործը կազմակերպելով ռուս ազդեցիկ մամուլի շրջանակներում: Ընտրած է մի յատուկ մարմին, որը պարբերաբար տեղեկութիւններ է հաղորդում մայրաքաղաքի ռուս թերթերուն եւ շուտով կապեր կստեղծի Երկրի հետ՝ հեռագրով լուրեր ստանալու եւ անմիջապէս ռուս թերթերուն փոխանցելու համար»²:

Այդ օրերին Թիֆլիսի թեմի առաջնորդի պաշտոնը ստանձնած Մեսրոպ սրբազանը, 1913 թ. մարտի 10-ին Կաթողիկոսին գրած նամակում անդրադառնալով Ազգային բյուրոյի գործունեությանը, գրում էր, որ այն շարունակում է իր նիստերը, պարբերաբար հրավիրում է ժողովներ հասարակության մասնակցությանը: Հիրավի, Ազգային բյուրոյի ձեռնհաս անդամները կազմում էին այն բոլոր պաշտոնական թղթերը, որոնք Բյուրոյում նախապես բազմակողմանի քննարկումներ անցնելուց և հավանության արժանանալուց հետո ներկայացվում էին Հայոց կաթողիկոսին, որն իր հերթին դրանք ուղարկում էր Պողոս Նուբարին, ռուսական կառավարությանը կամ Կովկասի փոխարքային: Բյուրոն, հանձինս իր անդամների, տեսակցություններ էր ունենում փոխարքայի և փոխարքայության նշանավոր պաշտոնյաների հետ, ռուսական և եվրոպական մամուլում կազմակերպում էր Հայկական հարցին վերաբերող հոդվածների տպագրություն, հավաքում այդ մամուլում նախկիններում լույս տեսած հոդվածներ ու նյութեր և դրանք տրամադրում Հայկական պատվիրակությանը և այլն²:

Բյուրոյի նախագահ Սամսոն Հարությունյանը Արշակ Չոպանյանին հղած նամակով գրում էր. «Ցանկանալով Ձեր ջանքերին հաջողություն, յուսով ենք, թե պիտի շարունակենք ձեր կապը Բիւրօյիս հետ՝ յաճախակի գրելով մեզ, թէ ձեր եւ թէ պատւիրակութեան արած քայլերի մասին»: Նա կարծիք էր հայտնում, որ «դեսպանախորհրդի (Լոնդոնի:– Ն. Ս.) որեւէ

¹ ՀԱԱ, ֆ. 211, ց. 1, գ. 4, թ. 3:

¹ ՀԱԱ, ֆ. 211, ց. 1, գ. 4, թ. 2:

² Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապ. 238, վավ. 165, թ. 4:

պետութիւն պետք է պաշտպան կանգնի մեր պահանջներին, անհրաժեշտ է, որ այդ պետութիւնը լինի Ռուսաստանը, որովհետեւ եթե նա դեմ եղաւ մեր ծրագրին, մենք կհանդիպենք անհաջողութեան»¹:

ԴԺԳՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ

1913 թ. Հունվարի 24-ին Պետերբուրգի հայկական խմբակը հավաքվել էր նիստի՝ քննարկելու համար այն հարցը, թե արդյո՞ք Պողոս Նուբար փաշան և ամբողջութեամբ վերցրած Ազգային պատվիրակութիւնը համապատասխանում են այն բախտորոշ դերին, որ ստանձնել են իրենք, արդյո՞ք նրանք ի վիճակի են կրելու այն ծանր բեռը, որը բաժին է ընկել իրենց:

Հարցի մասին զեկուցումով հանդես եկավ Նիկողայոս Ադոնցի Հետ Կ. Պոլիս գնացած և վերադարձած Սիրական Տիգրանյանը: Իր խոսքը նա սկսեց նրանով, որ Պոլսում ինքը և Ադոնցը բազմիցս տեղի հայ գործիչներից դժգոհութիւն են լսել, թե Կաթողիկոսը սխալ ընտրութիւն է կատարել: Դիմելով Նմբակի անդամներին՝ նա ասաց. «Ինձ թույլ կտամ ձեր ուշադրութեանը ներկայացնել մի քանի հետևութիւններ և ենթադրութիւններ, որոնք ըստ իս, պահանջում են անհետաձգելի լուծում և մեր կողմից, նիստի կողմից որոշակի քայլեր ու գործողութիւններ»²:

Զեկուցողը պարտադիր համարեց կաթողիկոսի կողմից նշանակված և Պողոս փաշայի գլխավորած Ազգային պատվիրակութեան վերակազմավորումը և նոր՝ ավելի բանիմաց և ավելի պատկառելի Պատվիրակութեան ստեղծումը:

Իր կոնդակով, ասում էր Ս. Տիգրանյանը, Կաթողիկոսը հանձնարարել է Պողոս փաշային ինքնուրույն, այսինքն՝ սեփա-

¹ ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 4, թ. 3:

² ПЗПАК, том I, стр. 143-157.

կան ընտրութեամբ, կազմել Պատվիրակութիւնը: «Բայց, ըստ երևույթին, Պողոս փաշան չունի բավարար չափով գործութիւն, հնայք ու գիտելիքներ՝ այդօրինակ ինքնուրույն և կազմակերպչական ջիղ ունեցող ղեկավար դերի համար: Գործնականում այդ Պատվիրակութիւնը ինչ-որ խառնիխուռն ու ճապաղ մի բան է:

Անորոշ է, թե որտե՞ղ է ավարտվում դրա պատասխանատու անդամների կազմը և որտեղ է սկսվում պատվիրակութեանը սպասարկող աշխատակիցների և թղթակիցների ցուցակը»³: Եվ որպէս այդ վիճակի տրամաբանական հետևանք՝ Ս. Տիգրանյանը համարում էր այն, որ Պատվիրակութեան չուրջը սկսել են թեժանալ կուսակցական, խմբակային և անձնական կրքերն ու մրցակցութիւնը: «Նրա գործողութիւններում շատ է իրարանցումն ու աղմուկը, քիչ է գործնականութիւնը»²: Փարիզի իր նստավայրում Պատվիրակութիւնը չի ստանում անհրաժեշտ տեղեկութիւններ ու հրահանգներ ո՛չ Կ. Պոլսից, ո՛չ Թիֆլիս-էջմիածնից, ո՛չ էլ Պետերբուրգից, ուր գտնվում են Հայկական Հարցի որոշիչ գործոնները: Ի հաստատումն իր ասածի՝ զեկուցողը շեշտում էր, թե Կոստանդնուպոլսում դժգոհում են Պատվիրակութեան որոշ քայլերից և երկյուղ ունեն, թե իր գործողութիւններով նա կարող է շեղվել պատշաճ ուղուց³:

Ս. Տիգրանյանը գտնում էր, որ Ազգային պատվիրակութիւնը պետք է օժտված լինի միայն ներկայացուցչական և իրազեկումների գործառույթներով, բայց իր ներկայիս ձևով չի բավարարում ո՛չ մեկի և ո՛չ էլ մյուսի պահանջները: Հատկապէս հարկավոր է մտածել ու հոգալ երկրորդի մասին: Նա բերում էր դեսպանների լոնդոնյան խորհրդաժողովում Ավստրիայի դեսպանի օրինակը: Սա այլբանական հարցով ունեն փորձագետների մի խումբ, որը նրան էր տրամադրում վիճակագրական, ազգագրական, տնտեսական անհրաժեշտ տեղեկութիւններ ու նյութեր, և դրանով էլ ավարտում էր իր խնդիրը: Նա համոզված

¹ ПЗПАК, том I, стр. 148.

² Նույն տեղում, էջ 149:

³ Նույն տեղում, էջ 151:

էր, որ ընդհանրապես միջազգային ասպարեզներում հայկական տարբեր պատվիրակությունների դերը պետք է լինի անհրաժեշտ նյութեր տրամադրել տերությունների այն ներկայացուցիչներին, ովքեր սատարում են Հայկական հարցին:

Հայաստանի բարենորոգումների հարցով միջազգային քննարկումների ընթացքում Հայկական կողմի և առաջին հերթին Ազգային պատվիրակության դերը նվազագույնի հասցնելուն էր ուղղված Ս. Տիգրանյանի առաջարկը՝ Պետերբուրգ հրավիրել Պողոս փաշային իր ողջ Պատվիրակության հետ, միաժամանակ հրավիրել ներկայացուցիչներ Թիֆլիսից ու Բաքվից և այստեղ միասին համաձայնության գալ և համատեղ կարգավորել ու հարթել բոլոր հարցերը: Ձեկուցողը վերջում անհրաժեշտ համարեց «առանց ուշացնելու այդ ամենի մասին իրազեկել Կաթողիկոսին»:

Սիրական Տիգրանյանի հաղորդումից հետո քննարկվող հարցի շուրջ ելույթներ են ունենում Ն. Աղոնցը, Գ. Տիգրանովը, Պ. Ղուկասովը, Մ. Պապաջանովը, Հ. Սաղաթեյանը, Ս. Ֆրանգուլովը, Գ. Կյանջունցը, Ա. Ասրիբեկյանը: Նրանք բոլորը նույնպես անբավականություն են հայտնում Փարիզի Ազգային պատվիրակության և նրա ղեկավարի նկատմամբ:

Հատկապես խիստ քննադատական էր Աղոնցի ելույթը: Նա բացատրեց, որ Կաթողիկոսը կոնդակով դիմել է Պողոս փաշային դեռևս այն ժամանակ, երբ Պոլսո Ազգային ժողովը նույնիսկ չէր մտածում այդ հարցի մասին: Եթե թուրքահայերը գոհ չեն Պատվիրակությունից, որն ըստ էության Հայկական հարցի մարմնավորումն է եվրոպացիների առաջ, ապա դրա պատճառը բացառապես նրա ոչ բավարար կազմն է: Սկզբից ենթադրվում էր, ասում էր Աղոնցը, որ «Թերիրազեկված» Պողոս փաշայից բացի Պատվիրակության կազմի մեջ մտնելու են նաև Մաղաքիա Օրմանյանը, Համբարձում Առաքեյանը և Հայկական հարցով շատ լավ իրազեկված ուրիշ գործիչներ, բայց, ցավոք, այդպես չեղավ: «Եվ քանի որ արդեն կանգնած ենք կատարված փաստի առջև, գոնե Պատվիրակությանն առընթեր Հայկական հարցին քաջատեղյակ անձանցից պետք է ստեղծել մի մարմին, որն ըն-

դունակ լինի կարճ ժամանակում հավաքել ու մշակել անհրաժեշտ նյութեր՝ դրանք Պատվիրակության տրամադրության տակ դնելու համար»:

Իր ելույթում Մ. Պապաջանովը մատնանչեց, որ Ազգային պատվիրակության բնույթն ու կառուցվածքն անպայման պիտի բավարարեն բոլորին, իսկ դրա համար նրա կազմից պետք է հանվեն գործից անտեղյակ մարդիկ:

Միանգամայն համախոհ նախորդ ելույթ ունեցողին՝ Հ. Սաղաթեյանը առաջարկեց Կաթողիկոսին համոզել Պատգամավորության ղեկավարումը հանձնել իր տաղանդով ու փորձառությունով ողջ Եվրոպային հայտնի, ականավոր դիվանագետ Գարրիել Էֆենդի Նորատունկյանին կամ բարձր հեղինակություն ու վստահություն վայելող մեկ ուրիշ գործչի:

Ձեկուցողի և ելույթ ունեցողների հիմնական միտքն այն էր, որ եթե Հայաստանի բարենորոգումների հարցով մեծ տերություններից ամենից շատ շահագրգռված է Ռուսաստանը, և որ միայն նրա աջակցությամբ կարելի է դրական որևէ արդյունքի հասնել, ապա տրամաբանական է, որ Ազգային Պատվիրակությունը ստեղծվի հենց Ս. Պետերբուրգում:

Ձեկուցման և ծավալված մտքերի փոխանակման մասին նա՝ մակով տեղյակ պահվեց Կաթողիկոսին:

Ինչպես տեսնում ենք, Պետերբուրգի հայկական խմբակի 1913 թ. հունվարի 24-ի նիստում նրա բոլոր մասնակիցները միակարծիք էին Ազգային պատվիրակության և նրա նախագահի մասին: Ելույթ ունեցողները ճիշտ էին նկատել, որ Պատվիրակության պաշտոնական անդամների ընտրությունը ընդհանուր առմամբ սխալ է կատարվել, քանզի նրանք իրենց գիտելիքներով ու փորձառությամբ իրոք որ չէին համապատասխանում այն մեծ պահանջներին, որ առաջադրել էին ժամանակի քաղաքական իրադարձությունները: Վերհիշենք, որ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը նույնպես հենց սկզբից առարկություններ էր ունեցել Պատվիրակության կազմի վերաբերյալ: Բայց նրա ղեկավար Պողոս Նուբար փաշայի մասին խմբակի անդամների դատողությունները իրականությունից խիստ հեռու էին: Շատ

չանցած նրանք պիտի համոզվեն, որ այդ բախտորոշ պահին Գևորգ V կաթողիկոսն իմաստուն որոշում է ընդունել:

Հունվարի 24-ի նիստում Ն. Ադոնցի և Ս. Տիգրանյանի հաղորդումներից և Նմբակի անդամների ելույթներից պարզ էր դարձել, որ Հայաստանի բարենորոգումների գործի մեջ ընդգրկված բոլոր հայ կազմակերպությունների և անհատ գործիչների գործողությունների միաբանումը պետք է ելակետ ծառայի ամբողջ հայությանը հուզող հարցի հաջողության համար: Դրա համար անհրաժեշտ էր տարբեր քաղաքներում գործող կազմակերպությունների համատեղ ջանադիր աշխատանք, որի ծրագրած կատարումը պահանջում էր՝ հավաքել Հայկական հարցին առնչվող բոլոր տեղեկությունները, կենդանի հարաբերություններ ձևավորել էջմիածնի, Կոստանդնուպոլսի, Փարիզի, Թիֆլիսի և այլ քաղաքների միջև: Իսկ քանի որ դա կպահանջեր հատուկ գործավարություն, որին Նմբակի անդամները դժվար թե ի վիճակի լինեին ժամանակ ու աշխատանք տրամադրել, ուստի պարզ դարձավ, որ այդ կարևոր գործով պետք է զբաղվի մի առանձին օղակ: Եվ առաջարկ եղավ Նմբակի շրջանակում ստեղծել Բյուրո, որը կդառնար նրա գործադիր մարմինը: Բյուրոյի ղեկավարությունը պետք է վստահվեր խիստ իրազեկված անձի, որը տիրապետում էր ռուսերենին, հայերենին և կարելի չափ՝ նաև եվրոպական լեզուներին: Բյուրոյի պարտականությունների մեջ պետք է մտնեին Նմբակի նիստերի արձանագրությունների կազմումը, գրություններ և ամենատարբեր տեղեկանքներ հեղինակելը, նամակագրության վարումը, նյութերի հավաքումը, մշակումն ու պահպանումը: Որոշում ընդունվեց Բյուրոն կազմել Նմբակի հաջորդ նիստերից մեկում:

Նմբակի փետրվարի 14-ի նիստում ձևավորվեց Բյուրոյի կազմը: Անդամներ ընտրվեցին Պ. Ղուկասովը, Գ. Տիգրանովը, Մ. Պապաջանովը և Ն. Ադոնցը¹:

Բայց Բյուրոն գործնականում ի վիճակի չէր զբաղվելու մեծածավալ գրագրություններ, անհրաժեշտ փաստերի հավաքումով,

¹ ПЗПАК, том I, стр. 196.

մշակումով ու կարգաբերմամբ. այդ ամենը պահանջում էր ծանր «սև» աշխատանք և շատ ժամանակ: Դա կարող էր կատարել Հայկական հարցի պատմություն մեջ խորացած և նրա ներկա ընթացքին քաջատեղյակ անձնավորություն: Եվ նպատակահարմար համարվեց, որ Բյուրոն ունենա քարտուղար՝ համապատասխան վարձատրությամբ: Որոշվեց Պետերբուրգի հայ եկեղեցիների կառավարման խորհրդի կողմից Նմբակին տրամադրած 3000 ռուբլուց ամսական 150 ռուբլի վճարել քարտուղարին: Նմբակի մարտի 7-ի նիստի մասնակիցները խնդրեցին Ն. Գ. Ադոնցին՝ հանձն առնել քարտուղարի պարտականությունները, որին նա տվեց իր համաձայնությունը¹:

ԼՐՋԱՆՈՂՈՒԹՅԱՆ ԿՈՉԵՐ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ: ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆ

Բալկանյան ռազմաճակատներում Թուրքիայի կրած խոշոր անհաջողությունները դեռ չէին նշանակում նրա պարտությունը: Հաշվի առնելով Թուրքերի կենաց ու մահու դիմադրությունը՝ դժվար էր կանխատեսել պատերազմի հետագա ընթացքը, մանավանդ եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ բալկանյան դաշնակիցների շարքերում խմորվում էին հակասություններ տեսանելի ապագայում տարածքային ավարի բաժանման հարցում:

Ստեղծված նոր պայմաններում մեծ տերությունները գերագույն զգուշություն էին հանդես բերում՝ չներքաշվելու համար անմիջական առձակատումների դաշտ: Ռուսաստանը առաջվա պես ակտիվ աջակցում էր որոնց նկատմամբ շարունակվում էր Ավստրիայի և նրա դաշնակից Գերմանիայի թշնամական կեցվածքը: Հունաստանի տարածքային հավակնությունների հովանավորներ էին Անգլիան ու Ֆրանսիան, իսկ Ռուսաստանի

¹ ПЗПАК, том I, стр. 230.

ավանդական պաշտպանությունը վայելող Բուլղարիայի համար գնալով ստեղծվում էր անորոշ վիճակ: Ավստրո-գերմանական բլոկին հաջողվել էր սառնություն առաջ բերել Բալկանյան դաշինքի երկու գլխավոր անդամների՝ Բուլղարիայի և Սերբիայի միջև, որ շատ շուտով վերածվելու էր բացահայտ առճակատման: Ավելին, Պետերբուրգի համար արդեն նկատելի էր, որ Բուլղարիան քայլեր է անում՝ մոտենալու սլավոնական աշխարհի ավանդական թշնամիներին՝ Գերմանիային ու Ավստրիային:

Գլուխ բարձրացրած այս վտանգների պայմաններում ուսական դիվանագիտության գլխավոր խնդիրը դարձավ տերությունների միջև հակասությունների հետագա խորացմանը ու հնարավոր առճակատմանը ամեն կերպ արգելք լինել*։ Ռուսաստանը պատրաստ չէր համանվիրոպական պատերազմի: Այստեղից էլ այն ժամանակավոր անտարբերությունը, որ 1913 թ. ձմռան վերջին և գարնան առաջին երկու ամիսներին Հայկական հարցի նկատմամբ ցուցաբերում էր Պետերբուրգը:

Պետերբուրգի կառավարությունը հրահանգով դեռևս 1912 թ. դեկտեմբերի 22-ին Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը մի պաշտոնագրով հետևյալն էր հաղորդել էջմիածին՝ կաթողիկոսին.

«Կայսերական կառավարությունը առաջարկություն է արել թուրք կառավարությանը ... այժմ իսկ թուրքաց Հայաստանում լրջորեն զբաղվել բարենորոգումներով: ... Հետևելով դարավոր ավանդույթներով և խոր զգացում տածելով Հայ ժողովրդի տանջանքների նկատմամբ, կայսերական կառավարությունն այսուհետև նույնպես մտադիր է ամենաբարյացակամ կերպով

* Ռուսաստանը շարունակում էր ամեն կերպ խուսափել թուրքիայի հետ վտանգավոր բարդություններ ստեղծելուց: Երկու երկրների միջև որևէ զինված ընդհարում կարող էր վերածվել ռազմական լայնամասշտաբ գործողությունների, իսկ դա հղի էր համանվիրոպական պատերազմի բռնկումով, որին ինքը դեռ պատրաստ չէր: Ճապոնիայի դեմ մղած պատերազմում կրած պարտությունից հետո Ռուսաստանի զինված ուժերի, մանավանդ ռազմական նավատորմի, հզորությունը դեռ չէր հասել նախապատերազմական մակարդակին:

վերաբերվել թուրքիայում հարստահարվող Հայ ժողովրդի կարիքներին ... Կառավարությունը, սակայն, գտնում է, որ հայերի շահերին անհամապատասխան է Հայկական հարցի քննությունը պետությունների՝ բալկանյան տազնապը կարգավորելուն միտված առաջիկա խորհրդաժողովում, որովհետև հիմք ունի կասկածելու, թե հայերի համար կենսական հարցի լուծման ժամանակ եվրոպական պետությունները միակամ կլինեն: Եվ, սակայն, պետությունների այսպիսի միակամությունն անհամարժեցությունը ..., ինչպես ապացուցել է պատմական տխուր փորձը, պիտի ստեղծի նպաստավոր պարագաներ, որպեսզի թուրք վարչությունը խուսափողական վերաբերմունք ցույց տա դեպի հայերի դրությունը բարվոքման գործը: ... Ես առանձնապես կարևոր կհամարեի, որ ներկա վճռական վայրկյանին հայերը ցույց տային առանձին չրջահայացություն ... և հավաքական անժամանակ դիմումներով չբարդացնեին կայսերական կառավարության գործը՝ թուրքիայի հայոց դրությունը լավացման խնդրում»:

Իր հերթին դեսպան Գիրսն արդեն Սազոնովի և իր անունից Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին խորհուրդ էր տալիս այդ պատասխանատու պահին ցուցաբերել արտակարգ լրջախոհություն, խուսափել ծայրահեղ արտահայտություններից, պատրիարքին մշտապես հիշեցնում էր, որ դժվարին գործ է Հայկական հարցում ձեռք բերել բոլոր վեց պետությունների համաձայնությունը՝ նրանց միջև գոյություն ունեցող խոր հակասությունների պատճառով, ինչպես նաև այն պատճառով, որ Հայկական հարցում Ռուսաստանի գնալով ակտիվացող շահագրգռությունները լուրջ անհանգստություն էին առաջացրել պետությունների, այդ թվում նրա դաշնակից Ֆրանսիայի և Անգլիայի դիվանագիտական շրջաններում:

Արտգործնախարար Սազոնովը 1913 թ. հունվարի 17-ին հղած հեռագրով Փարիզի ռուսական դեսպանին տեղեկացնում էր, որ երեկ իրեն այցելել է Պետերբուրգում ֆրանսիական դես-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 25:

պանը և տրտունջներ հայտնել, թե առանց դաշնակից Ֆրանսիային տեղյակ պահելու Ռուսաստանը միակողմանի եռանդուն գործունեություն է ծավալում Հայկական հարցի ուղղությամբ՝ նույնիսկ պատերազմական սպառնալիքներ կատարելով Թուրքիայի նկատմամբ: Նա նաև հավելել էր, որ այն սպառնալիքները, որ Ռուսաստանը միանձնյա անում է Բ. Դոան հանդեպ, և եթե իսկապես դրա անհրաժեշտությունը կա, ապա պետք է դա կատարվի կոլեկտիվ ձևով, այսինքն՝ դաշնակիցների հետ համաձայնեցված:

Պետերբուրգը ստիպված էր գոնե ժամանակավորապես չափավոր մոտեցում ցուցաբերել հայոց պահանջների հանդեպ:

Սազոնովը Ֆրանսիական դեսպանին պատասխանել էր, որ Ռուսաստանը չի ձեռնարկում և այսուհետ նույնպես չի ձեռնարկի որևէ ծանրակշիռ քայլ՝ նախօրոք չխորհրդակցելով դաշնակից Ֆրանսիայի կառավարության հետ: Միաժամանակ նա նշել էր, որ ռուսական կողմը հիմք ունի կարծելու, որ իր միանձնյա նախազգուշացումները շատ ավելի ուժգին ազդեցություն են գործում Կոստանդնուպոլսում, քան կոլեկտիվ ծանուցումները: «Ինչ վերաբերում է Փոքր Ասիայում ուղղման գործողություններ սկսելու մեզ վերագրվող մտադրությանը, - ասել էր Սազոնովը, - ապա մենք ջանքեր ենք գործադրում ներկայումս Հայկական հարցի սրմանն ուղղված առիթների վերացման համար, և սակայն, եթե մեր սահմանի հարևանությունը սկսվելու լինի արյունահեղություն, մենք չենք կարողանա դրա հանդեպ անտարբեր մնալ՝ ունենալով մեր սահմաններում այսչափ շոշափելի հայ բնակչություն»¹:

Ռուսական կողմի տրամադրությունների փոփոխությունն անմիջապես նկատել էին ինչպես Կ. Պոլսի հայոց պատրիարքարանում, այնպես էլ Փարիզի Ազգային պատվիրակությունում:

Սակայն տվյալ պահին ռուսական դիվանագիտության նկատելի հետնահանջը չէր կարող տևական լինել, քանզի Ռուսաս-

տանն էր երաշխավորը Հայկական հարցի առաջխաղացման, և դա լավ էին հասկանում Եվրոպայում: Մյուս կողմից՝ Հայկական հարցում Ռուսաստանի գործողությունների նկատմամբ եվրոպական տերությունների կառավարությունների, նույնիսկ Անտանտի այլանսի դաշնակիցների ակնհայտ դժգոհությունը չէր նշանակում, թե էջմիածինը և Կ. Պոլսի հայոց պատրիարքը պետք է ձեռքերը ծալած սպասեին իրադարձությունների հետագա աննպաստ զարգացմանը: Ընդհակառակը՝ դեսպան Գիրսը խորհուրդ էր տալիս շարունակել տերությունների՝ Կ. Պոլսի դեսպաններին ներկայացնել հուշագրեր, հիշատակագրեր ու խնդրագրեր: Հետևելով ռուսաց դեսպանի խորհրդին՝ պատրիարքարանը Ազգային ժողովի եռանդուն պատգամավորներից կազմեց մի խումբ՝ անհրաժեշտ փաստաթղթեր պատրաստելու համար: Այդ գործում անգնահատելի դեր էր վերապահված Գր. Զոհրապին, որի՝ կուռ տրամաբանությունը գրված փաստաթղթերից շատերը ներկայացվում էին անձամբ դեսպաններին նրանց հետ տեսակցությունների ժամանակ:

Փարիզում աշխատանքը տարվում էր երկու ուղղությամբ: Նախ կազմվում են մեծ պետություններին ներկայացվելիք զանազան փաստաթղթեր¹: Երկրորդ, հենվելով Լիբանանի ինքնավարության կանոնադրության և 1895 թ. մայիսյան բարենորոգումների ծրագրի* վրա՝ մշակվում ու խմբագրվում էր Թուրքահայաստանի վեց նահանգներում և Կիլիկիայում իրական բարենորոգումներ կատարելու մի նոր ծրագիր՝ հարմարեցված

¹ Տե՛ս «Կովկասի լրագրեր», № 44, 19 դեկտեմբերի 1912 թ.:

* Սասունի հայերի 1894 թ. ապստամբությունը ճնշելուց հետո օսմանյան կառավարությունն արյունալի հաշվահարդար տեսավ խաղաղ բնակչության նկատմամբ, որն առաջ բերեց եվրոպական և ռուսաստանյան հասարակայնության բուռն բողոքները: Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսիայի Կ. Պոլսի դեսպանները 1895 թ. մայիսի 11-ին մի ծրագիր ներկայացրին Բ. Դոանը, որը նախատեսում էր բարենորոգումներ անցկացնել Հայաստանում՝ Վանի, Բիթլիսի, Դիարբեքի, Նարբեքի, Կարինի ու Սեբաստիայի նահանգներում: Ծրագիրը, որը թուրք կառավարության համար ընդամենը խորհրդատվական նշանակություն ուներ, այնպես էլ մնաց թղթի վրա, անհետևանք:

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1913, д. 3460, л. 26.

ժամանակաշրջանի պահանջներին¹: Նոր ծրագիրը պետք է կցվեր հիշատակագրին²: Ծրագրի պահանջները հետևյալներն էին. 1) Հայկական նահանգների հավաքում մի ընդհանուր վարչական միավորի մեջ, 2) Այդ նահանգները ներառած Հայաստանին տրվում է այնպիսի ինքնավարություն, ինչպիսին ունեն Վրաստանը և Սամոս կղզին, ինչպիսին ժամանակին պիտի տրվեին Մակեդոնիային և Ալբանիային, 3) Ինքնապաշտպանություն համար հայերը ստանում են զենք կրելու իրավունք, 4) «Հայաստան» ինքնավար միավորը զրվում է եվրոպացիների հսկողության տակ:

Ահա թե ինչ էին պահանջում բոլոր հայերը Թուրքահայաստանի իրենց եղբայրների համար:

Ռուսական արտգործնախարարությունը Փարիզի ուսաց ղեսպան Իզվոլսկուն պաշտոնապես հանձնարարել էր տեղեկացնել հայ գործիչներին, որ այժմ թուրքերն անպաստ է նման արմատական պահանջներով Լոնդոնի ղեսպանախորհրդին դիմելու համար, և որ ռուսական կառավարությունն իր մշտական ուշադրության կենտրոնում է պահում հայկական բարենորոգումների հարցը՝ միաժամանակ կատարելով իրավիճակի բազմակողմանի վերլուծություն:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո ավելի հաճախակի էին դարձել հեռագրերի ու նամակների փոխանակումը էջմիածնի և Փարիզի միջև:

Իմանալով ռուսական կողմի դիրքորոշման մասին՝ կաթողիկոսը Պողոս փաշա Նուբարին հղած հեռագրում շեշտում էր, թե «հարկ է ունկնդրել Պետերբուրգից եկած խորհրդին»³:

Ի պատասխան կաթողիկոսի անհանգստությունից՝ հունվարի 14 (27)-ին Պողոս Նուբարը № 252 հեռագրով Փարիզից Վեհին գրում էր, որ ինքը չուտով տեսակցելու է տեղի ռուսական ղես-

¹ Տե՛ս «Մշակ», № 9, 15 հունվարի 1913 թ.:

² Տե՛ս նույն տեղում, № 2, 4 հունվարի 1913 թ.:

³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 22:

պան Մ. Իզվոլսկու հետ՝ բացատրություն ստանալու այժմ ղեսպանախորհրդին չդիմելու հորդորների մասին, և եթե պարզվի, որ այդ արվելու է տևական ժամանակով, ապա դա «վհատեցուցիչ պիտի ըլլայ»¹:

Իզվոլսկու հետ հանդիպման մասին Նուբարը կաթողիկոսին տեղեկացնում էր հունվարի 22-ի կարճառոտ նամակով: Նա ցավով էր նշում, որ հանդիպումն անցել է լարված մթնոլորտում, որ ղեսպանը հուսադրող խոսք չի ասել կամ անորոշ պատասխաններ է տվել, երբ խնդիրը վերաբերել է Ազգային պատվիրակության կողմից Լոնդոնի խորհրդաժողովին դիմում կատարելուն:

1913 թ. հունվարի 26-ին Կաթողիկոսը Պողոս Նուբարին գրում էր. «Ռուսաց բարեխնամ կառավարութիւնը թեեւ այժմեւս թուրքերն աննպաստ է համարում դիմում անելու Լոնդոնի Գեսպանախորհրդին, բայց միաժամանակ յոյս է ներշնչում, որ մեր տաճկահայ բազմութիւնը լայնորեն կլուսաբանեն ռեֆորմների հարցը, որ զբաղեցնում է ուսաց կառավարութեանը: Հասկանալի է, որ ուսաց նշուած ուղղութեամբ պիտի ընթանանք»²: Վեհը միաժամանակ տեղեկացնում էր, որ Ռուսաստանի նախարարապետ Կոկովցեւը, արտաքին գործոց նախարար Սազոնովը և Կովկասի փոխարքան օգտակար խորհուրդ են տվել՝ որքան կարելի է հողվածներ տպագրել եվրոպական ազդեցիկ թերթերում, որ տեղական մասնախմբերի միջոցով անհրաժեշտ է աշխատել եվրոպական երկրների պաշտոնական անձերի հետ՝ գլխավորաբար Գերմանիայում և Ավստրիայում, որոնք հակառակ են հայկական հարցը պետությունների երաշխիքներով հաջող լուծելուն: «Ձեզ շատ լաւ յայտնի է, թե ինչ տեսակետով կ'մօտենաք խնդրին եւ ինչպես կբացատրեք գերմանական եւ ավստրեական պետական գործիչներուն: Լիայոյս եմ, որ Վիեննայում Միսիթարեան միաբանութեան Գերապատիվ արբահայ-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 24:

² Նույն տեղում, թ. 22:

րը, իսկ Բեռլինում Յոհաննես խան Մասեհեանը ամենայն կերպով կ'աջակցեն Ձեզ»¹:

Այնուհետև կաթողիկոսը ավելորդ չէր համարում մեկ անգամ ևս Պողոս Նուբարին հիշեցնել պարզ ճշմարտությունը. «Ձեր Վսեմութեան քաջ յայտնի է, որ այժմ ապրում ենք մի պատմական այնպիսի շրջանում, երբ տաճկահայոց հարցի յաջող լուծման համար կան որոշ նպաստաւոր պայմաններ և յուսատու գրաւականներ: Խնդրի յաջողութեան մի գրաւականն է այն, որ բոլոր հայերը լինէն միասնական և կուսակցական համոզվածութեամբ ևս միացած լինէն, յատկապէս գործիչները աշխատին ամենայն խոհականութեամբ և հեռատեսութեամբ, առանց յախուռն և հակասական քայլերի դիմելու գործունէութեան ժամանակ: Այս առթիւ գոհութեամբ ասում եմ, որ Դուք Ձեր բազմամեա փորձառութեամբ նպաստէք այդ կարեւորագոյն ուղղութեան զօրեղանալուն: Լիայոյս եմ, որ պատգամաւորութեան միւս մեծայարգ անդամները՝ նոյնպէս»²:

Վերջում Վեհը Նուբար փառալուծութիւնը հրավիրում է մի ուրիշ կարևոր խնդրի վրա ևս, այն է՝ իր և իր թիմակիցների գործողութիւնները, մասնավորապէս փաստաթղթերի կազմումը, կատարել որքան հնարավոր է ոչ հրապարակայնորեն: «Յանկալի է,- շեշտում էր նա,- որ այնպիսի աշխատանքները (մեմորանդումը և նախագծի մշակութիւնը) առանձին կուտպուին և թերթերի մէջ ո'չ մի լուր չ'տպուի, որովհետև բացի վնասից ո'չ մի օգուտ չի կարելի սպասել: Դժբախտաբար, պ. Առաքէլեանը* թղթակցութիւններ է ուղարկում այդպիսի աշխատանքների և այլ այնպիսի խօսակցութեանց ու խորհրդակցութեանց մասին, որոնք գործի յաջողութեան համար հրապարակ չպէտք է գալին: Խնդրում եմ, Վսեմափայլ Տէր Հայոց, անհրա-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 22-ի շրջ.:

² Նույն տեղում, թ. 23:

* Խոսքը «Մշակի» քաղաքական մեկնաբան Համբարձում Առաքելյանի մասին էր, որն Ազգային պատվիրակութեան գործունէութեան մասին Փարիզից պարբերաբար թղթակցութիւններ էր ուղարկում իր թերթին:

ժեշտ կերպով ուշադրութիւն դարձնել»¹:

Հնարավորինս գաղտնի աշխատելու խնդրանքով այս անգամ էլ Կաթողիկոսին էր դիմում Մանչեստրի Հայոց առաջնորդ Գևորգ եպիսկոպոսը: Նա Վեհին խնդրում էր ձեռնարկել միջոցներ ազդելու ռուսական այն թերթերի վրա, որոնք շատ բաց են արտահայտվում Հայկական հարցով զբաղվող կազմակերպութեան մասին: Նա անընդունելի էր համարում «Մշակի» այն անզգույշ մեկնաբանութիւնները, որոնք կարող են միայն վնաս բերել գործին²:

Կաթողիկոսին ուղղած փետրվարի 7-ի № 253 գրութեամբ Պողոս Նուբարը իր հերթին նորից էր անդրադառնում ռուսական կողմի նոր անընդունելի տրամադրութիւններին: Նա գրում էր, թե իրեն հայտնի է դարձել, որ Պետերբուրգի կառավարութեան հանձնարարութեամբ փոխարքա Վորոնցով-Դաշկովը Թիֆլիսում հայտարարել է, թե Ռուսաստանը բացառում է Հայոց հարցում որևէ ուժի գործադրում Թուրքիայի վրա: «Դա մեզ անհունապէս յուսախաբ բրաւ,- գրում էր Նուբարը,- քանզի Կայսերական կառավարութեան քաջալերութիւնները կը սահմանափակուին՝ մէկ խօսքով՝ բարեացակամութեան և համակրութեան տարտամ արտայայտութեանց մէջ, իրական օգնութեան մը մասին առանց որոշ յանձնառութեան: Մ. Իզվոյսքիի յայտարարութիւնները համանման են, և հոս, ինչպէս և Տիգրիս, մենք չեն ծածկիր, որ բռնադատումի ունէ միջոց պիտի չի կիրարկուի:

Նախատեսելի է սակայն, որ Բ. Դուռը, որ ուժին առջև միայն տեղի կուտայ, պիտի օգտուի Կայս. Կառավարութեան տրամադրութիւններէն՝ խոյս տալու համար, ինչպէս որ Ձեր Վեհափառութիւնը ևս շատ լաւ յայտնուած է, բարենորոգումները գործադրելու մասին ըրած յանձնարարութիւններէն:

Այժմ գիտնալով Ֆրանսական և Անգլիական Կառավարու-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 23-ի շրջ.:

² Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիւի, ցուցակ 20, թղթապ. 238, վավ. 111, թ. 3:

Թեանց հայացքները, որոնց համաձայնութեան քաղաքականութիւնը Ռուսիոյ վրայ կը չափուի, գոնէ հայկական խնդրի վերաբերմամբ, չատ կը վախնանք, որ մեր պահանջումները լսուելու բախտ չունենան ըստ բաւականի, մանաւանդ որ Փոխարքային նամակէն (22 դեկտեմբերի) երևան կու գայ, որ Զեր Վեհափառութիւնը այսուհետև պէտք չէ, որ դիմէ Պետութեանց: Իրաւ է, որ տեսակցութեան միջոցին, Փոխարքան յայտնած է, որ իր կարծիքով կարող ենք աշխատիլ Բարենորոգումներու իրականացման, Ռուս. Կառավարութեան նախաձեռնութեամբ և գօնորոյէն ներքև, բայց հոգ տարած է նաև աւելացնելու թէ՛ ասիկա իր անձնական կարծիքն է, զոր մտադիր է ենթարկել իր կառավարութեան»¹:

Այսքանից հետո, նշում էր Պողոս Նուբարը, «անտրամաբանական պիտի ըլլար ուրեմն բանակցել Բ. Դուան հետ՝ իր ուղղամտութեան և բարեկամեցողութեան յանձնուելով: Բայց ատկէ չի հետևիր, որ պէտք է հեռու մնալ իսպառ ունէ յարաբերութիւն ունենալէ Օսմ. Կառավարութեան հետ»²:

Նույն խնդրին Պողոս փաշա Նուբարը անդրադառնում էր նաև փետրվարի 10-ին Կաթողիկոսին հղած նամակով: Նա անհանգստություն էր հայտնում, որ Թիֆլիս եկած Իզվոլսկին իր մի հանդիպման ժամանակ հայտարարել էր, թե հայկական բարենորոգումների հարցը միայն ու միայն պետք է լուծվի «բարեկամության ու համագործակցության միջոցով»: Այս նոր իրադրություն մեջ նախատեսելի է, գրում էր Նուբար փաշան, որ Բ. Դուռը, որը միայն ուժի առջև է տեղի տալիս, պիտի օգտվի կայսերական կառավարության այս նոր տրամադրությունից՝ խույս տալու համար հարցի լուծումից³:

Չնայած այդ ամենին՝ ինչպես Կաթողիկոսը, այնպես էլ Պողոս Նուբարը խորապես համոզված էին, որ հայկական հարցում Պետերբուրգի շեղումը ժամանակավոր բնույթ է կրում,

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 27:

² Նույն տեղում, թ. 28-ի շրջ.:

³ Նույն տեղում, թ. 28:

որովհետև Ռուսաստանը չի դադարել Արևելքի քրիստոնեաների պաշտպանը լինելուց և, ի վերջո, աջակից է լինելու հայոց Ազգային պատգամավորությունը: Նա պատահական չէր համարում, որ Պատգամավորության անդամներից որևէ մեկի մտքով չի անցնում, թե առանց Ռուսաստանի գործուն միջամտության հնարավոր է որևէ լուրջ փոփոխություն թուրքահայոց կյանքում: Ուրեմն անորոշ վիճակից դուրս գալու համար ստիպված պետք էր ունենդիր լինել Պետերբուրգի ձայնին, նրա խորհրդի համաձայն՝ համառ աշխատանք տանել գերազանցապես եվրոպական հասարակության, այսինքն՝ ոչ կառավարական հաստատությունների, մամուլի առաջադիմական օրգանների, ոչ քաղաքականացված հայամետ ուժերի հետ, ստանալ նրանց աջակցությունը և հատկապես պատրաստակամությունը ճնշում գործադրելու իրենց կառավարությունների վրա¹:

ԱՆՍՊԱՍԵԼԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1913 թ. փետրվարի 7-ին Պողոս Նուբարը Կաթողիկոսին հաղորդում էր, որ իրեն «անհունորեն հուսախաբ» է արել իր նամակին Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաչկովի պատասխանը, թե ուսական կառավարությունը տրամադիր չէ հայոց հարցը առաջ մղելու համար որևէ բռնի ուժ գործադրել: «Նախատեսելի է, որ Բ. Դուռը, որ ուժին առջև միայն տեղի կուտա, պիտի օգտուի կայսերական կառավարութեան տրամադրություններէն՝ խույս տալու համար... բարենորոգումները գործադրելու մասին ըրած յանձնարարություններէն»²:

Փոխարքան հասկացնել էր տվել, որ դա իր սրտովը չէ, բայց ավելացրել էր, որ դա իր անձնական կարծիքն է³:

Ռուսական կառավարության նման հայտարարությունը պայմանավորված էր նրանով, որ պետությունների մոտ կասկած

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 28-ի շրջ.:

² Նույն տեղում, գ. 47, թ. 26:

³ Նույն տեղում:

էր առաջացել, թե Ռուսաստանն ուզում է բարենորոգումների գործն ամբողջովին իր ձեռքն առնել:

Չնայած ռուսական կառավարության նման Հայտարարությանը՝ Պողոս Նուբարը, սակայն, գտնում էր, որ դա չի նշանակում, թե Պետերբուրգն արդեն ձեռք է քաշել Հայաստանի բարենորոգումների հարցից՝ հատուկ չեչտելով, որ դա պայմանավորված է եվրոպական տերությունների հետ Ռուսաստանի փոխհարաբերություններով: Նա բարձրաձայնում էր, որ ոչ միայն ինքը, այլև իր գլխավորած պատգամավորության բոլոր անդամները այն հաստատ համոզմունքին են, որ «ամէն բանէ առաջ պէտք է Ռուսիոյ վրայ յուսադիր ըլլալ՝ յաջողելու համար», և թե ինքն «աշխատելու է ձեռք բերել իր օժանդակութիւնը Պետլինի դաշնագրին 61-րդ յօդուածին մէջ նախատեսուած բարենորոգումներուն իրագործումին համար:

Հետևաբար, Ռուսիոյ հանդէպ իր ուղղութիւնը պէտք չէ տեղի տայ ոեւէ երկդիմութեան, եւ պատգամավորութիւնը պիտի զգուշանայ յաւետ կատարելու ոեւէ դիմում, որ պիտի կրնայ անհանգիստ ընել ռուսական կառավարութեանը»¹:

Նուբարը միաժամանակ նշում էր, որ ինքը կուզեր «Հայոց դատը պետութիւններէն ոեւէ մեկուն ձեռքին մէջ դնել այն պարագային միայն, որ ռուս կառավարութիւնը ինք կուզեր այդ բանը եւ խոստանար ուժ տալ բարենորոգումներուն եւ անոնք յաջողցնել»: Նրա կարծիքով, իր դեկավարած պատվիրակութիւնը պետք է ձգտի, որ պետությունների վերահսկողության փոխարեն բարենորոգումների ծրագրի մեջ մտցվի միայն ռուսական վերահսկողության պահանջը, քանի որ դա «անտարակոյս աւելի արդիւնաւոր պիտի ըլլար, եթէ գործադրուեր միայն մեկ պետութեան մը կողմէ, փոխանակ մէկէն աւելի»²: Այսպիսով, վերահսկման երկու տարբերակ կար, մեկը պետությունների կողմից վերահսկումն էր, մյուսը՝ միայն մեկ պետության, և նախընտրելի էր, որ դա լիներ Ռուսաստանը³:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 26:

² Նույն տեղում, թ. 27:

³ Նույն տեղում:

Բ. Դուռը Հայոց պատրիարքարանին զգուշացրել էր դիմումներ չհղել պետություններին՝ խոստանալով, որ, ինքը կզբաղվի բարենորոգումների հարցով: Այդ զգուշացման մասին պատրիարքը տեղեկացրել էր Պողոս Նուբարին, որից ստացել էր հետևյալ պատասխանը. Բ. Դուռն նպատակն է խաբել պատրիարքարանին և կանխել տերությունների միջամտությունը:

Այնուհետև Նուբարը նշում էր, որ իր գլխավորած պատգամավորության ոչ մի անդամի մտքով չի անցել հավատ ընծայել Բ. Դուռն խոստումներին և վստահել բարենորոգումներ գործադրելու նրա ցանկությունը: «Որքան ատեն որ վեց վիլայեթները Թուրք իշխանութեան ներքեւ պիտի մնան, Բարենորոգումները հոն պիտի չի ներմուծուին՝ բայց եթէ դուրսէն եկած ճնշումի մը եւ սպառնալիքի մը տակ: Անտրամաբանական պիտի ըլլար ուրեմն բանակցել Բ. Դուռն հետ՝ իր ուղղամտութեան և բարեկամեցողութեան յանձնուելով: Պետք է հեռու մնալ իսպառ ոեւէ յարաբերութիւն ունենալէ Օսմ. Կառավարութեան հետ: Արդարև, պէտք չէ, որ մոռնանք, թէ պատգամավորութիւնս պաշտօն ունի պահանջելու Պետլինի Դաշնագրին 61 յօդուածին գործադրութիւնը, որ կրկին յանձնառութիւն կը պայմանադրէ Բ. Դուռն յանձնառութիւնը, Բարենորոգումներ գործադրելու, և Պետութեանց յանձնառութիւնը, անոնց գործադրութիւնը հսկելու: Ընդունելի պիտի չ'ըլլար, որ բոլորովին անգիտանալ ձեացնէինք Բ. Դուռնը, թէ կը պահանջինք իր կողմէ կատարուած յանձնառութեանց իրագործումը, և որ այդ Բարենորոգումներուն գործադրութիւնը կարելի պիտի չըլլայ առանց իր մասնակցութեան: Ասիկա իմ անձնական կարծիքս չէ. անիկա ինծի վերջերս յայտնուեցաւ շատ յստակ կերպով՝ երկու մեծ Պետութեանց Դեսպաններուն կողմէ, որ ուժգնապէս խորհուրդ տուին ինծի նոյն իսկ Հայոց շահուն համար, ամէն յարաբերութիւն չի խղել Օսմ. Կառավարութեան հետ, և որ դիտել տուին ինծի թէ՛ ոչ մէկ Պետութիւն յօժար ըլլալով բռնի ուժով պարտադրել Բարենորոգումները Բ. Դուռն, հարկ է, որ ծրագիրը ստանայ անոր հաւանութիւնը: Անոնցմէ մին մինչև իսկ ըսավ ինծի, այս բառերով. «Բարենորոգումները չեն կրնար ըլլալ Թուրքիոյ դէմ, այս անոր հետ»: Պէտք է ուրեմն գիտնալ պահել ուղղուած չափը: Անշուշտ,

խնդիր չի կրնար ըլլալ, ունիցէ եղանակաւ, բանակցութեանց յետամուտ ըլլալու Բ. Դուան հետ, բայց մեր շահուն համար և Դեսպաններուն կարծիքին համաձայն, պէտք չի, որ անհաշտ կամ թշնամական դիրք մը բռնինք:

Կը հետևի ուրեմն, որ առանց հաւատալու Օսմ. Կառավարութեան ուղղամտութեան և անկեղծութեան, պէտք չէ սակայն, որ աչքէ վրիպեցնէք, բացի այն պարագայէն, որ բռնի ուժ պիտի կիրարկուի, թէ Բարենորոգումները պիտի կրնան գործադրուիլ, եթէ Բ. Դուռը ընդունի»¹:

Չնայած մտավախութեանը, թե ուսական կառավարութիւնը նկատելի նահանջ է կատարել Հայկական հարցից, բայց շուտով պարզվեց, որ դա թվացյալ է:

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Այն բանից հետո, երբ պարզ դարձավ, որ քանի դեռ բալկանյան դաշինքի երկրների և Թուրքիայի միջև չի կնքվել խաղաղութեան պայմանագիր, ինչպես Ռուսաստանը, այնպես էլ մյուս հինգ մեծ պետությունները տվյալ պահին պատրաստ չեն զբաղվելու հայկական բարենորոգումների հարցով և այն քննութեան չեն առնելու Լոնդոնի կոնֆերանսում, Հայկական պատվիրակութեան ղեկավար Պողոս Նուբարը որոշեց առժամանակ թողնել այդ կոնֆերանսի հետ կապված ակնկալիքները, բայց ձեռքերը ծալած չնստել, այլ շարունակել եռանդուն աշխատանքը՝ ժամանակավորապես փոխելով գործելու մարտավարութիւնը: Նա պատվիրակութեան գործունեությունն ուղղեց հենց այդ կառավարությունների նշանավոր պետական գործիչների հետ աշխատանքներ տանելուն՝ աչքաթող չանելով նաև վեց մեծ տերությունների հասարակական կարծիքի վրա ազդելու անհրաժեշտությունը: Հրամայական խնդիր էր անդադրում գործել հանրային կարծիքը դրականորեն տրամադրելու հայութեան և

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 33, թ. 2:

նրա չարչրկված հարցի նկատմամբ, բայց գործել հետևողականորեն և խիստ չրջահայաց, քանի որ հայկական խնդիրը հետզհետե սուր ճգնաժամային բնույթ էր ստանում:

Հետաքրքրական է, որ Պողոս Նուբարից անկախ այդպես էր մտածում նաև Ամենայն հայոց կաթողիկոսը: Նուբար փառալուստ հասցեագրած նամակներից մեկում նա շեշտում էր, որ քանի դեռ Լոնդոնի դեսպանաժողովը լիազորված չէ զբաղվելու Հայկական հարցով, իսկ մյուս կողմից ուսաց ու ֆրանսիական կառավարությունները հայերին խորհուրդ չեն տալիս դիմելու դեսպանախորհրդին, ուստի առայժմ պետք է մի ուրիշ ուղիով ընթանալ:

Պողոս փառալուստ քաջատեղյակ էր նախկիններում Հայկական հարցն առաջ քաշելու հանգամանքներին և դրանց արդյունքներին, մանավանդ որ այդ հարցով տեսականորեն զբաղվել էր նաև իր հանգուցյալ հայրը՝ Նուբար փառալուստ: Չնայած դրան՝ նա մեկ անգամ ևս խորամուխ եղավ Հայկական հարցին առնչվող փաստաթղթերի բովանդակությունում, ծանոթացավ դրանց վերաբերյալ հայկական և օտար մամուլի բազմաթիվ հրատարակումներին:

Վերընթացելով փաստաթղթերը՝ Պողոս Նուբարը ամենայն ուշադրությամբ ուսումնասիրում էր նաև 1878 թ. Կ. Պոլսից Գերմանիայի մայրաքաղաք գնացած հայկական պատվիրակության անդամների գործունեությունը լուսաբանող հուշագրություններն ու նամակագրությունները: Դրանք ցույց էին տալիս, որ պատվիրակությունը Բեռլին էր գնացել սուլթան Աբդուլ Համիդի կատարյալ հովանավորությամբ (չատերը գտնում էին՝ թելադրությամբ): Թուրքաց վեհապետը հայոց պատգամավորության Բեռլին մեկնելուն հավանություն էր տվել՝ ոչ թե հայերի հանդեպ ունեցած համակրանքից (որը լիովին բացակայում էր նրա խառնվածքում), այլ նպատակ ունենալով եվրոպական շահերը հակակռեղ Ռուսաստանին՝ նվազագույնի հասցնելով վերջինիս դերը, որը շարունակ միջազգային հանրությունն էր ներկայանում որպես «Արևելքի քրիստոնյաների իրավունքների մեծ պաշտպան»: Այդ նպատակով Համիդը նույնիսկ հայտարարություններ էր անում, թե Թուրքիայի հպատակ բոլոր քրիստոնյաների հոգածությունը պատրաստ է ենթարկել

Եվրոպայի հավաքական կամքին: Դրանով նա նպատակ ուներ թուրքիայի գործերին Ռուսաստանի շարունակական միջամտությունն առաջն առնել, մյուս կողմից՝ դիվային խորամանկություններ ջուրը ձգել Հայաստանի բարենորոգության խնդիրը՝ օգտվելով վեց մեծ պետությունների միջև գոյություն ունեցող հակասություններից և մրցակցությունից:

Բայց այժմ շատ բան էր փոխվել 1878 թ. համեմատությամբ: Հիմա հայ գործիչները բախտորոշ առաքելությամբ Եվրոպայի կենտրոններից մի ուրիշում՝ Փարիզում, հավաքվել էին ոչ թե թուրքական իշխանությունների համաձայնությամբ, այլ նրանց կամքին հակառակ:

Տեղի ունեցած լուրջ փոփոխությունները հաշվի առնելով՝ Պողոս Նուբար փառանքալու առաջիկայում ծավալելու էր դիվանագիտական խոշոր աշխատանք, որպիսին չէր կատարել հայ քաղաքական գործիչներից և ոչ մեկը՝ թերևս Իսրայել Օրուց հետո: Նուբարը քաջ գիտակցում էր, որ Հայկական բարձրավանդակում խաչաձևվում են քաղաքական մեծ շահեր, որոնց նկատմամբ խելամիտ մոտեցումն է լինելու իր պատմական առաքելության հիմնական նպատակը:

Ուսումնասիրելով Հայկական հարցի անցյալը՝ Պողոս Նուբար փառանքալու հանգամանորեն մշակեց Ազգային պատվիրակության գործունեության մարտավարությունը, որը հիմնված էր մի քանի կարևոր սկզբունքների վրա:

1) 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից ի վեր հայ հասարակական-քաղաքական, կրոնական ուժերը Հայկական հարցի լուծման միջոց էին համարում սրտառուչ դիմումներն ու խնդրագրերը, մեծերի գուժը շարժելը, դժբախտ Հայության նկատմամբ մարդասիրական զգացմունքներ բորբոքելը ոչ միայն օտար մտավորականության, այլև պետական, քաղաքական, հոգևոր գործիչների շրջանում: Նրանք նաև մտածում էին Հայկական հարցը լուծել Եվրոպային և Ռուսաստանին բարոյականության դասեր տալով, ինչպես նաև Արևելքում իբր հայերին վերապահված քաղաքակրթական դերի թմբկահարմամբ: Ինչպես ցույց էին տվել այդ ժամանակաշրջանի դեպքերն ու իրադարձությունները, դիվանագիտական-քաղաքական նման

ուղին կործանարար էր եղել թուրքահայ ժողովրդի համար, արժեցել էր հարյուրհազարավորների կյանք, Հայաստանին բերել էր ավեր ու աղետ:

Պողոս Նուբարի մեծությունն մասին է խոսում այն, որ նա վճռականորեն խոստովեց այդ ազգակործան ուղուց և որդեգրեց գործելու միանգամայն նոր, արժանապատիվ սկզբունք, որի էությունը հետևյալն էր. ա) Մարդասիրական պատճառաբանությունները, որոնք նախկինում կարող էին ժամանակավոր ազդեցություն առաջ բերել, այժմ կորցրել են իրենց նշանակությունը: Հետևապես պետք է առաջ բերել քաղաքական և տնտեսական պատճառները: Ելակետը պետք է լինի հաստատումն այն իրողության, որ Հայաստանի բարենորոգումները նպաստելու են Ասիական թուրքիայի ամբողջականության պահպանմանը և նրա տնտեսական բարգավաճմանը, բ) Ոչ մի տեղ որևէ տիրակալ կամ բռնախումբ իրեն ենթակա որևէ ժողովրդի կամավոր չի ձերբազատել նրան արկանող շղթաներից՝ ընդառաջելով նրա խնդրանքին ու աղաչանքին: Հետևապես, ոչ թե խնդրագրերով ու աղերսագրով պետք է դիմել տերությունների կողմավորություններին, այլև կարողանալ նրանց համոզել, որ Հայաստանում բարենորոգումներ անցկացնելը բխում է հենց իրենց՝ տերությունների շահերից և համապատասխանում է իրենց նպատակներին*:

Եվրոպայի հզորությամբ շլացած Հայ գործիչներից գրեթե ոչ մեկը այնպես խորը չէր գիտակցում այդպիսի մոտեցման կարևորությունը, ինչպես Պողոս Նուբարը: Նա համոզված էր, որ Հայաստանի բարենորոգումների մեջ եվրոպական ամեն մի երկիր ամենից առաջ փնտրելու է իր, այլ ոչ թե հայերի շահը:

* Ամիսներ անց՝ 1913 թ. հունիսի 27-ին, Պողոս Նուբարը կաթողիկոսին գրում էր. «Այս պատճառաբանությունը շատ ճիշդ էր եւ ես այն համոզումն ունիմ, որ այս պատճառաբանությունն էր, որ Ռուսիոյ նախաձեռնութեան վրայ Պետութեանց մէջ համաձայնութիւն մը կրցաւ գոյացնիլ: Այս խնդրոյն վերաբերեալ ուրիշ նօթ մ'ալ տպագրել տուի, որուն մէջ շեշտեցի պէտքը Եւրոպական հակակշռի մը, առանց որոյ բարենորոգումները բացարձակապես ազդեցիկ չի պիտի ըլլային»:

Մաղաքիա Օրմանյանի խոսքերով՝ բռնակալության ճիրաններից հայությունն ազատագրումը չի կարող նրանցից «ոչ մեկուն սրտագին եւ անկեղծ եւ իսկական նպատակն ըլլալ»¹: Չէ՞ որ հայերի վիճակը պետություններին չէր հետաքրքրում (կամ համարյա չէր հետաքրքրում) նաև մի պարզ պատճառով: Դա այսպես էր ձևակերպել Կ. Պոլսի «Աւետաբերը». «Հայերը ո՛չ ազգակից եւ ո՛չ ալ կրոնակից պետութիւն մը ունին, որուն պաշտպանութեան ապաւինելով իրենց համար ինքնավար Հայաստան մը ստեղծելու յոյսեր ունենան»²: Իսկ դա նշանակում էր, որ հայկական խնդրի շուրջ գոնե Ռուսաստանին և եվրոպական մեծերի մի մասին համախմբելը հավասարազոր էր հրաշքի: Ելնելով դրանից՝ Պողոս փաշան գտնում էր, որ Ազգային պատվիրակությունը պիտի գործի խիստ չափավոր պահանջների շրջանակներում, որպեսզի տերությունները գոնե նվազագույն համակրանք տաճեն Հայաստանի բարենորոգումների գաղափարի նկատմամբ:

«Ծարունակ ճանապարհորդելով Եւրոպայի մայրաքաղաքները, տեսակցելով թագաւորների, նախարարների, դեսպանների և այլ ազդեցիկ մարդկանց հետ»³, - գրել է Հր. Աճառյանը: Այդ հանդիպումների ու բանակցությունների ժամանակ Նուբար փաշան գերազանց հմտությամբ էր օգտագործում իր հիմնական փաստարկը, այն է՝ Հայաստանի բարենորոգումները ոչ միայն չեն հակասի եվրոպական երկրների շահերին, այլև օգտակար կլինեն նրանց: Բարենորոգումները կնպաստեն երկրների շահերի զուգորդմանն ու միասնությունը. այս էր պետական ու քաղաքական գործիչներին համոզելու Պողոս Նուբարի թափած ջանքերի ելակետը: Եվ փաշային հաջողվում էր հավատ ներշնչել իր զուգակիցներին:

¹ Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, հատ. Գ., Մայր աթոռ ս. էջմիածին, 2001, էջ 54375:

² «Աւետաբեր», № 31, 2 օգոստոսի 1913 թ.:

³ Հ. Աճառեան, Տաճկահայոց հարցի պատմութիւնը (Սկզբից մինչև 1915 թ.), Նոր-Նախիջևան, 1915, էջ 75:

Մի առիթով անդրադառնալով եվրոպական պետությունների և հայերի շահերը զուգորդելու Պողոս Նուբարի ջանքերին՝ Յագուպ Արթին փաշան գրել է. «Իսկապես հանճարեղ հնարք մը եղաւ Պողոս փաշայի կողմէ ապացուցանել Եւրոպայի առեւտրական, ֆինանսական, տնտեսական եւ նոյնիսկ քաղաքական շահն ու օգուտը Հայաստանի բարենորոգումներու մէջ, որ յետագային պիտի կրնային իբր նմոյշ ծառայել թուրք կայսրութեան բոլոր նահանգներուն մէջ ներմուծելու համար: Կարելի է ըսել թէ եւրոպական շահերուն այս կոչն ու մատնանշումն է՝ որ գրաւեց ուշադրութիւնները, Հայաստանի եւ Փոքր-Ասիոյ վրայ»¹:

Հանդիպումների ու զրույցների ընթացքում եվրոպական պետական գործիչները համոզվում էին, որ Հայաստանում բարենորոգումներ անցկացնելը որևէ վտանգ չի պարունակում իրենց շահերին, իսկ դա, իր հերթին, նպաստում էր, որ ռուսական դիվանագիտությունը հայկական հարցում դիմի ավելի համարձակ քայլերի:

Եվրոպական կառավարություններին համոզելու Պողոս Նուբարի ջանքերը, թե Հայաստանում բարենորոգումները ոչ

* Պողոս Նուբարի կողմից եվրոպական շահերի այս մատնանշումը և տերությունների դիվանագետներին դրանում համոզելը ինչ-որ չափով ծառայություն էին նաև արարների ազատագրական շարժմանը: Նույն օրերին արական տարրեր երկրներից Սիրիայում խորհրդակցության հավաքված ղեկավար գործիչներն իրենց ելույթներում հաճախ էին անդրադառնում Հայաստանի բարենորոգումների համար տարվող աշխատանքներում Նուբար փաշայի ձևուն գործելակերպին և առաջարկում էին հետևել նրա օրինակին: Այդ մասին Վ. Մալեգյանին հետևյալն էր գրում Յագուպ Արթին փաշան. «Արարներու պահանջներուն համար գումարուած Սուրիական համաժողովը պատեհ ժամուն զուգադիպեցաւ, մեր գործին ելքը փութացնելու համար, երբ իմաստութիւնը ունեցան նաև խօսելու մեր բարենորոգումներուն մասին եւ պահանջելու որ նոյնը կիրարկուի իրենց երկրին մէջ, մերինին նման վերահսկողութեան ներքեւ: Այս պարագան աւելի եռանդ տուաւ մեզի եւ կը տեսնէք որ այժմ ամէն ինչ լաւ կ'ընթանայ» (Վ. Մալեգեան, Ճամբուս վրայ (Յուշաքաղ), էջ 318):

¹ Վ. Մալեգեան, Ճամբուս վրայ (Յուշաքաղ), էջ 318:

միայն ձեռնտու են հայերին, այլև եվրոպային, ասել է թե՛ հայերի և եվրոպացիների շահերն այդ հարթությունների վրա լիովին համընկնում են, բացառիկ էին հայկական դիվանագիտության պատմության մեջ:

2) Նոր իմաստ էր ստանում Թուրքիայի հետ հարաբերությունների հարցը: Այժմ «Հայկական հարցը» դուրս էր գալիս իր նեղ շրջանակից և ընդգրկում էր ավելի լայն հորիզոն՝ միաձուլվելով ամբողջ օսմանյան կայսրության խնդրին: Պողոս Նուբարը և իր գործակիցները կտրականապես մերժում էին նախկինում հրապարակ նետված այն պահանջը, թե պետք է թուրքահայերի բախտը բաժանել Թուրքիայից: «Անկախ Հայաստանի», անսահման երազանքների, հույսերի ու ակնկալությունների կուռքն արդեն ջախջախված էր: Այլևս ոչ ոք չէր հանդգնում այդ միտքը բարձրաձայնելու՝ այն դիտելով որպես մի անիրագործելի ցնորք, որի մասին կարելի էր երազել ու տենչալ, բայց իրագործել՝ ոչ մի պարագայում: Այժմ հայերի մեջ ամրանում էր այն միտքը, որ թուրքահայ ժողովրդի ճակատագիրը կախված է Թուրքիայի բախտից, ուստի առանձին հայկական շարժումը պետք է տեղի տա համայն Թուրքիայի ժողովուրդների ընդհանրական շահերին:

Նուբար փաշան եվրոպական մայրաքաղաքներում պաշտոնական անձանց հետ հանդիպումների ժամանակ նրանց ձգտում էր համոզել, որ ի դեմս վերանորոգված Հայաստանի՝ թուրքական կառավարությունը կունենա թուրքական պետության մի մեծածավալ ծաղկուն երկիր, որտեղ եվրոպական մշակույթի հետ աճելու է նաև թուրքականը, որտեղ զարգացող արդյունաբերությունը պետական գանձարանին բերելու է ահագին եկամուտ, ուր ժողովուրդը միշտ պատրաստ է լինելու իր պարտքը կատարելու օսմանյան ընդհանուր հայրենիքի հանդեպ: Կոնցեսիաներ տրամադրելով ու փոխառություններ ստանալով՝ Թուրքիան չի կարող զարգացում ապրել: Նա մեծ քայլերով կառաջադիմի՝ ծաղկեցնելով իր գավառները, արդյունաբերելով ընդերքի հարստությունները, ստեղծելով ժամանակակից արդյունաբերություն և այդ ամենի շնորհիվ ճոխացնելով պետական գանձարանը, որը հնարավորություն կտա ապագայում խուսա-

փելու պարտատերերի սպառնալիքներից: Հայաստանում բարենորոգումներ մտցնելը չի նպաստի հայերի՝ Թուրքիայից անջատվելու տրամադրությունների աճին: Ընդհակառակը՝ որքան դրանք շուտ կենսագործվեն, այնքան հայերն ավելի սերտ կմտենան թուրքերին՝ բարիքի դիմաց միշտ բարիք հատուցելով:

Չնայած այդ պարզ իրողությունը՝ ՀՅ դաշնակցությունը, որը մեծ ուշացումով՝ միայն 1912 թ. գարնան սկզբին էր հեռացել Իթիբալիզադից և «Ազատամարտի» էջերում սկսել էր քննադատել վերջինիս, Հայկական հարցում վերադարձել էր Թուրքահայաստանի ինքնավարության իր նախկին տեսակետին՝ հաշվի չառնելով, որ ժամանակները արմատապես փոխվել են: Հայերը, ուրեմն, ասում էր Պողոս Նուբարը, պետք է ելնեն ոչ թե իրենց ցանկություններից, այլ եղած իրական հնարավորություններից:

Հայ հանրային տրամադրությունը այլևս մերժում էր խուսք անգամ ասել ինքնավարության մասին: Ի՞նչ էին ուզում հայերը: Նրանք չէին պահանջում վերակենդանացնել պատմական Հայաստանը, չէին ուզում հայաբնակ նահանգներն անջատել օսմանյան քաղաքական միությունից և կազմել հայկական անկախ երկիր: Նրանք պարզապես երազում էին կարգ ու կանոն, բարեկարգություն հաստատել այն նահանգներում, որտեղ բնակվում էին և՛ իրենք, և՛ քրդերը, և՛ այլ ցեղեր, մտցնել այնպիսի օրենքներ, որոնց հովանու ներքո նրանք բոլորը կարողանան ապրել ազատ և վայելել կյանքի, գույքի, պատվի ապահովություն, անարգել զարգանալ կուլտուրապես:

Հայերին այլևս չէին հետաքրքրում ինքնավարության մասին հայ ազգային-հեղափոխական կուսակցությունների ծրագրերը, նրանց համար այժմ գրավիչ չէր փքուն խոսքը, այլ կարևոր էին համեստ, բայց իրական ու հաստատուն բարեփոխումները: Այդ տեսակետից խիստ կարևոր էր եվրոպային ներկայացնել Թուրքահայության իրական վիճակը: Ցավալի էր, որ Թուրքիայի լուրջությունը եվրոպական հասարակությունն ընդունում էր որպես անդորրության նշան, իբրև բավարար կյանքի ապացույց: Դա սոսկալի էր: Ի՞նչ աներ թուրքահայը. ինչպե՞ս և ի՞նչ վստահություններ նա կարող էր ասպարեզ ելնել, երբ լավ հիշում էր, թե ինչպես Սասունի, Ուրֆայի, Ակնի, Ադանայի և բազմաթիվ ուրիշ

դժոխային արհավիրքները գերեզման տարան անթիվ նահատակների՝ չկարողանալով շարժել եվրոպական որևէ երկրի գուլթը:

Քրդերի ու թուրքերի հարստահարումներից, սպանություններից ու կողոպուտներից հայերը պապանձվել էին: Մեռելների ուրվականները կանգնած էին Թուրքիայի հայացքի առջև և սպառնական նայում էին սարսափելի ներկային ու անորոշ ապագային:

Ահա թե ինչու Ազգային պատվիրակության ծրագրի անբաժանելի մասն էին եվրոպացու կարծիքի մեջ հայի թշվառության մասին նրա ունեցած անբավարար գիտելիքների լրացումը և սխալ պատկերացումները փոխելը:

Թուրքիայի հետ համախումբ ու համախոհ մեծ տերությունները մտահոգված էին նրա տարածքային ամբողջականության պահպանմամբ, իսկ դա նշանակում էր, որ նրանցից ոչ մեկը չէր պաշտպանի Օսմանյան կայսրության նկատմամբ հայերի որևէ արմատական պահանջ:

Պողոս Նուբարը հանդիպումների ժամանակ փորձում էր իր զրուցակիցներին համոզել, որ թուրքահայությունը բնավ չահագրգռված չէ Թուրքիայից որևէ տարածքի, այդ թվում՝ Հայաստանի, անջատմամբ կամ նույնիսկ հայկական ինքնավարության հաստատմամբ:

Ֆրանսիայի նոր արտգործնախարարը նշանակված Բիչոնի, Անգլիայի արտգործնախարարի տեղակալ Նիքոլսոնի և պաշտոնատար այլ անձանց հետ հանդիպումների ժամանակ Պողոս Նուբարն ասում էր, որ Օսմանյան կայսրության տարածքում ոչ մի ազգ այնպես հետաքրքրված չէ այդ պետության գոյությունը, որքան հայությունը: Պողոս փաշան համոզմունք էր հայտնում, որ հայկական կյանքի բարելավումը կնպաստի Օսմանյան կայսրության ասիական նահանգներում պետական կարգի ամրապնդմանը, հետևապես՝ երկրի տարածքային ամբողջականությունը պահպանմանը:

Փարիզում Վիկտոր Բերարի կազմած մի հավաքույթում ելույթ ունենալով՝ Պողոս Նուբարն ասում էր.

«Հասարակության մեջ մեր պահանջների մասին տարածվել

է չատ թյուր ըմբռնում: Կարծում են, թե հայերն ուզում են անկախություն կամ առնվազն ավտոնոմիա, որոնք մեզ համար ուտոպիա են՝ հայկական նահանգների ազգագրական և աշխարհագրական վիճակի տեսակետից: Մեր պահանջն այն է, որ մնանք որպես օսմանյան հավատարիմ հպատակներ, բայց միայն թե Հայաստանում գործադրվեն լուրջ բարենորոգումներ»¹: Հայերը, չեչտել էր նա, համոզված են, որ պետական խոչոր կազմավորման մեջ իրենք կկարողանան հասնել առավել էական նվաճումների, պայմանով, որ իրենց համար ապահովվեն գոյության նորմալ պայմաններ:

Կարծես արձագանքելով Պողոս Նուբարի այդ խոսքերին՝ Կ. Պոլսի «Աւետաբերը» հիշեցնում էր, որ հայերի՝ գնալով խորացող աղետալի վիճակը անհանգստության մեջ է պահում նրանց արտասահմանյան բոլոր անկեղծ բարեկամներին, որոնք օսմանյան կառավարությունը մշտապես հիշեցնում են, որ հայերը անջատողական նպատակներ չունեն, ուրիշների պես զինված չեն կառավարական զենքերով, ավագակային ձգտումներ չունեն, որ նրանց զենքը գուլթանն է, վաճառականությունը և մշակույթը: Մի՞թե օսմանյան կառավարությունը կարող է երկրում գտնել հայերից ավելի օգտակար տարր²:

Հայոց առաջ քաշվելիք պահանջները պետք է ընդունելի լինեին նաև Թուրքիայի համար, ուստի Ազգային պատվիրակությունը գերազույն նրբանկատությամբ էր ձևակերպում իր պահանջները, հանդես չէր գալիս ավելորդ աղմկարարությամբ, բացահայտ թե գաղտնի հակաթուրքական քայլերով: Թուրքական կառավարությունը պետք է համոզվեր, որ բարենորոգումները մեծապես կամրապնդեն հայկական նահանգների միասնությունը կայսրության մյուս նահանգների հետ, զրանով իսկ լիովին կբացառվեր պետության ասիական տիրույթներին սպառնացող վտանգն ամենից առաջ Ռուսաստանի կողմից:

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 239, վավ. 91, թ. 4:

² «Աւետաբեր», № 17, 26 ապրիլի 1913 թ.:

Պողոս Նուբարը և նրա թիմակիցները իրենց «երկչուտ» քայլերը կատարում էին մի այնպիսի ժամանակ, երբ կայսրություն մյուս ոչ թուրք ժողովուրդների շարժումներն այլևս խնդիրներ չէին, ինչպես Հայերի պարագայում էր, այլ ապստամբություններ ու պատերազմներ էին: Բոսնիա-Հերցեգովինայի, Սերբիայի, Չերնոգորիայի և բուլղարական խնդիրները հանգեցրել էին «Արևելյան պատերազմին», այլբանական և Եմենի խնդիրները պսակվել էին փաստացի ինքնուրույնությունամբ, Մակեդոնիայի և Սամոսի խնդիրները առաջ էին բերել ներկա՝ Բալկանյան պատերազմը: Միայն Հայերն էին, որոնք՝ որպես օսմանյան երկրի օրինապահ քաղաքացիներ, հեղաբար ու համբերատարությունամբ շարունակում էին գոյատևել «գործող» սահմանադրության շրջանակներում՝ Հրաժարվելով իրենց խնդիրը Եվրոպա հանելուց՝ Բ. Դոան կամքին հակառակ:

Այդ էր իրողությունը, բայց Հայերն այլ ելք չունեին:

Այժմ ավելի հասկանալի էր դառնում, թե ինչու Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը թուրքահայության համար ավելի կարևոր էր ու հակառակ, քան Բեռլինի դաշնագրի ընդարձակ խմբագրությամբ կազմված 61-րդ հոդվածը: Պողոս Նուբարի գլխավորած Ազգային պատվիրակությունը հենց պաշտոն ունեն եվրոպական պետություններից պահանջելու այն բարենորոգումների իրագործումը, որ Բ. Դուրը հանձն էր առել գործադրելու Հայկական նահանգներում՝ համաձայն Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի:

3) Պողոս Նուբար փառայի և Ազգային պատվիրակության խնդիրներից մեկն էր եվրոպական հասարակայնությունը ցույց տալ, որ հայ տարրն իր դրացի ազգերին երբեք թշնամի չի համարել և միշտ պատրաստակամ է եղել իր ուժերի ներածին չափ նրանց ցույց տալ ամեն օգնություն: Թուրքը, քուրդը, ասորին, եզդին, հույնը եղել են նրա երկրակիցները, որոնց հետ տենչացել է ապրել ու գործել ի շահ հանրային օգտի: Բայց օսմանյան վարչական սիստեմն անկարող է եղել այնպիսի բարենորոգումներ մտցնել, որ Թուրքահայաստանը զարգանա, դառնա ինքնաբավ և օգտավետ լինի ոչ միայն Հայերի, այլև իրենց հետ կողք կողքի ապրող ազգային բոլոր տարրերի համար:

Հայկական հարցի էությունն այն չէր, որ քուրդ, թուրք կամ մի ուրիշ ազգի անդամները զրկվեին քաղաքակրթական բարիքներից: Բնավ ոչ: Հայը միշտ պատրաստ է եղել և այժմ էլ պատրաստ էր աշխատել նաև իր դրացիների կրթության ու զարգացման համար: Միաժամանակ նա ամենայն իրավունքով պահանջում էր, որ դրացիները չվտանգեն իր կյանքը, գույքը, իր կանոնավոր զարգացումը: Բայց, ցավոք, այդ դրացիներից քուրդն ու թուրքը այնպես էլ չեն համակերպվում հայի հետ խաղաղ ապրելուն: Դա հատկապես վերաբերում էր վայրենի բնազդներով առաջնորդվող տարրերին, որոնց համար դեռ խորթ էին քաղաքակրթության բարիքները:

Եվրոպական դիվանագետների հետ հանդիպումների ընթացքում Պողոս Նուբարը մշտապես շեշտում էր, որ Հայաստանի բարենորոգումների այնպիսի ծրագրի նախագիծ է մշակվել, որը մեծապես օգտակար կլինի Հայերի հետ ապրող հարևանների կուլտուրական ու քաղաքակրթական զարգացման համար: Նախատեսվող բարենորոգումները «Հայկական բարենորոգումներ» չեն, այլ «բարենորոգումներ Հայաստանում», Հայաստանում ապրող բոլոր ցեղերի համար:

4) Դիվանագիտական պայքարի ընթացքում պետք է կարողանար գտնել Թուրքիայում եվրոպական մեծ պետությունների և Ռուսաստանի շահերի ճիշտ համադրությունը:

Հաշվի առնելով, որ եվրոպական բոլոր հինգ տերությունները խանդով են վերաբերվում Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի քաղաքական ձգտումներին, պետք էր կարողանալ հմտորեն խուսանավել նրանց հարաբերությունների լաբիրինթոսում, ցույց տալ, որ հայկական պատվիրակությունը հակված չէ իր գործողություններով նպաստելու՝ տերություններից որևէ մեկի շահերը գերակշռություն ստանան մյուսների շահերի նկատմամբ: Միայն քաղաքականապես չեզոք ու հավասարակշռված նման կեցվածքը կարող էր տերությունների կառավարություններին շահագրգռել զբաղվելու հայկական բարենորոգումների հարցով:

Ամեն ինչից երևում էր, որ Թուրքիայի համար դժվար է լինելու Հայկական հարցում Եվրոպայի շահերը հակակշռել Ռու-

սաստանի չահերին և դրանք հակադրել միմյանց: Այժմ հայ գործիչները ոչ թե աղաչանքով, այլ գերազանցապես պահանջով են ներկայանում Եվրոպային, մանավանդ որ նրանք իրենց թիկունքին զգում են Ռուսաստանի տաք շնչառությունը:

5) Նուբար փաշան, որը չէր հարում որևէ հայ քաղաքական կազմակերպության, գտնում էր, որ տվյալ պահին այդ կուսակցություններից որևէ մեկի կողմից թուրքական իշխանությունների դեմ հանդես գալը, մանավանդ ապստամբական և նմանօրինակ այլ քայլերի դիմելը ոչ միայն ծանրագույն կացություն կստեղծեն տառապյալ և արդեն կոտորակված հայության համար, այլև վերջնականապես կտապալեն բարենորոգումների գործը:

Հնչակյանների ղեկավարներն ընդհանրապես չէին ողջունում Ազգային պատվիրակության գործունեությունը՝ այն դիտելով որպես էջմիածնի կղերականության ծնունդ: Դաշնակցությունը, այդ շրջանում պաշտոնապես խզված ինելով Իթթի-հադից, հայկական հարցի լուծումը չէր կապում զենքի հետ, նրա առանձին ղեկավարներ նույնիսկ աջակցում էին Պողոս Նուբարի պատվիրակության գործունեությանը: Չնայած դրան՝ մի քանի դաշնակցական թերթեր, հատկապես Կովկասում, մեծ հույսեր չտածելով սկսված գործի բարեհաջող ավարտի նկատմամբ, միայն ժամանակ առ ժամանակ էին տեղեկություններ հայտնում Պողոս Նուբարի և Պատվիրակության գործունեության մասին:

Նուբար փաշան հայկական բոլոր կուսակցություններին խորհուրդ էր տալիս գոնե մեծ տերությունների կողմից Հայկական հարցի քննարկման ընթացքում իրենց մամուլի օրգաններում խիստ զգուշավորություն հանդես բերել, քննադատական սուր հոդվածներ չտպագրել այդ երկրների, նրանց կառավարությունների ու պետական-հասարակական գործիչների դեմ:

Երվանդ Աղաթոնը վերհիշել է, որ երբ ինքը 1913 թ. հունիսին Եգիպտոսից մեկնել է Փարիզ, նույն ընթացքում Դաշնակցության կողմից այնտեղ հրատարակվող «Pro-Armenia» թերթը շարունակում էր հոդվածներ տպագրել Ռուսաստանի դեմ, որն առաջ էր բերել Պողոս Նուբարի դժգոհությունը: «Նուբար փաշա, - գրել է Աղաթոնը, - ի նկատի առնելով որ եթե Ռու-

սիա բարենորոգմանց խնդրոյն թշնամական աչօք նայի գործը կը ձախողի, ինձմէ խնդրեց որ երթամ Տիրար Վարանդեանը տեսնեմ եւ ըսեմ որ ի սէր ազգային դատի՝ Ռուսիոյ դէմ չգրեն Pro-Armeniaի մէջ: Հետեւեալ օրը Գառթիէ Լաթէն գացի, Տիրար Վարանդեանը իր պանդոկին մէջ տեսայ եւ խնդիրը հասկցուցի: Համամիտ գտնուեցաւ: Մեկնած ժամանակս ինձմէ խնդրեց որ եթէ կարելի էր՝ իրեն եւ Տիրար Ահարոնեանի համար Փաշայէն ժամադրութիւն մը խնդրեմ որ գան զինքը տեսնեն: «Շատ լաւ. Փաշային կ'ըսեմ եւ ժամադրութիւնը առածիս պէս ձեզ կ'իմացնեմ» ըսի: Իրօք ալ երկու օր վերջ զիրենք Փաշային ներկայացուցի: Մի ժամու չափ բարենորոգմանց խնդրոյն վրայ խօսեցան: Երբ իրենց ընկերանալով Փաշային տունէն մեկնեցանք, Տիրար Ահարոնեան եւ Վարանդեան իրենց հիացումը յայտնեցին՝ «Ինչ պատուական ազգասէր մարդ է: Այդ օրէն սկսեալ Pro-Armenia Ռուսիոյ դէմ գրելը դադրեցուց»»:

Հայկական հարցի քարոզչությունը Պողոս Նուբարը տանում էր խիստ մտածված՝ կշռադատելով իր գործողությունների դրական, այլև հնարավոր բացասական հետևանքները:

Վահան Մալեգյանին գրած մի նամակում Յագուպ Արթին փաշան չեչտում էր. «Պողոս փաշայի անդուլ եւ դժուարին աշխատանքին կը պարտինք ձեռք բերուած արդիւնքը, մինչդեռ անյուսալի էր, երեք ամիս առաջ տեսնել որ մեր պահանջները նկատողութեան պիտի առնուին բոլոր մեծ պետութեանց կողմէ, համախոհաբար, գոնէ այն սկզբունքին մասին թէ Հայաստանի մէջ հարկաւոր են բարենորոգումները»²:

Պողոս Նուբարի դիվանագիտական գործունեությունը շատ բարձր էին գնահատում Փարիզում, Լոնդոնում և հատկապես Պետերբուրգում: Կ. Պոլսում ոուսաց դեսպան Միխայիլ Նիկոլայևիչ Գիրսը հայոց պատրիարք Արչարունու ներկայացուցիչներից մեկի հետ ունեցած զրույցում նկատել էր, որ «Նուպար փաշային գործունեությունը շատ օգտակար կրնա ըլլալ հայոց դա-

¹ Երուանդ Գրիգոր Աղաթոն, Կեանքիս յիշատակները, Ժրնէվ, 1931, էջ 202-203:

² Վ. Մալեգեան, Ճամբուս վրայ (Յուլաքաղ), էջ 318:

տին, դիպլոմատիկ աշխարհին հետ կապ պահելով, պրոպագանդա ընելով, հարաբերություններ մշակելով և համակրանք ստեղծելով հայոց դատին համար: Պիտի գիտնաք, որ այսպիսի պարագաներու մեջ ժողովուրդի համակրանքը և հանրային կարծիքը մեծ դեր կխաղան»¹:

Թեև «Հայկական հարցի» լուծումը ստանձնել էին հայ պահպանողական ու ավատական մտածողները խոշոր կապիտալիստ Նուբար փաշայի գլխավորությամբ և հայ եկեղեցին՝ կաթողիկոսի օրհնությամբ, բայց նրանց նախաձեռնությունը, եվրոպական պահպանողական շրջաններից դատ, ողջունում էին նաև եվրոպական սոցիալիստները, որոնց տեսակետը Թուրքիայի հայոց հարցի մասին անփոփոխ էր մնացել վերջին երկու տասնամյակներին:

Իր գլխավորած պատվիրակությունից հաջող աշխատանքը Պողոս Նուբարը պայմանավորում էր նաև հայկական գաղթօջախներում տարվող աշխատանքներով:

Անսալով Նուբար փաշայի ձայնին՝ նրա ազգակիցները եվրոպայում և այլուր շտապում էին աջակից լինել նրան՝ տարբեր կառավարություններին հղած դիմումներով, ժողովներում ու հավաքներում ընդունված բանաձևերով, պետությունների պաշտոնատարների հետ հանդիպումներով և ուրիշ միջոցառումներով: Կաթողիկոսը հանձնարարություն էր տվել հայոց եկեղեցու թեմերին և հատկապես եվրոպական թեմին, որ նրանք սերտ շփումներ հաստատեն տեղի իշխանությունների հետ, աշխուժացնեն հայասերների գործունեությունը, նաև գտնեն հայկական հարցի նոր աջակիցներ: Հայ եկեղեցու թեմերը մեծ ու փոքր գաղութներում կազմակերպում էին ժողովներ ու հանրահավաքներ, որոնցում ընդունվում էին համապատասխան բանաձևեր, անցկացվում ստորագրահավաքներ և այլն:

Այսպես, 1913 թ. փետրվարի սկզբներին Թավրիզի հայերը ցար Նիկոլայ 2-րդի անունով հավաքական դիմում հղեցին Պետերբուրգ «Թուրքիայում մեր տանջվող եղբայրներին» օգնու-

¹ «Էջմիածին», փետրվար, մարտ, ապրիլ, 1965, էջ 166:

թյան ձեռք մեկնելու խնդրանքով: Փետրվարի 11-ին Պետերբուրգից ստացված պատասխանը Թեհրանի ոուս դեսպան Պոկլևսկին հանձնեց Թավրիզի ոուսաց հյուպատոսին՝ Ատրպատականի հայոց առաջնորդարանին փոխանցելու համար: Իր պատասխանում ոուսաց կայսերական կառավարությունը հաղորդում էր հետևյալը.

«Ռուսաստանը բացառապես բարյացակամորեն է վերաբերվում հայ ժողովրդին և այժմ իր սրտին մոտ է ընդունում նրա շահերը: Նա պատրաստ է ամենահաստատ աջակցություն ցույց տալ Թուրքիայում ապրող հայերի ապահովության և կյանքի բարվոքման համար»¹:

1913 թ. մարտի 8-ին ձավայի հայ գաղութի ղեկավարները Սուրբաբայայից եվրոպական վեց մեծ պետությունների և Ամերիկայի Միացյալ Նահանգների վեհապետներին, նախագահներին և արտաքին գործերի նախարարներին, ինչպես և Լոնդոնի դեսպանական վեհաժողովին Թուրքահայաստանի և Կիլիկիայի հայերի ողբալի դրություն և հայկական հարցի մասին հետևյալ հեռագիրն էին ուղարկել.

«Նոնարհաբար հայցում ենք Ձեր զորեղ միջամտությունը՝ վերջ դնելու Թուրքահայաստանում և Կիլիկիայում շարունակվող սարսափներին, հալածանքներին, մեր եղբայրների կոտորածներին և մտցնելու ռեֆորմներ ու երաշխավորելու կյանքի, պատվի ու ինչքի ապահովություն՝ համաձայն Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի»:

Մինգապուրի հայերը ևս համարյա նույն բովանդակություն հեռագրեր հղեցին ոուսաց կայսրին, անգլիական թագավորին և Ֆրանսիայի հանրապետության նախագահին:

¹ «Աշակ», № 48, 5 մարտի 1913 թ.:

ՀՐԱՎԵՐ ԼՈՆԴՈՆԻՑ

1913 թ. մարտի 31-ին Պետերբուրգի հայկական խմբակի Հասցեով Փարիզից ստացվել էր տեղի Հայկական կոմիտեի անդամներ Խանզադյանի և Չոպանյանի ստորագրությամբ նամակ, որով հայտնվում էր, թե առաջիկայում Լոնդոնում գումարվելու է Հայաստանի բարենորոգումների խնդրին նվիրված եվրոպական երկրների հայասիրական կազմակերպությունների ազդեցիկ ներկայացուցիչների կոնֆերանս, որի խնդիրն է լինելու համատեղ քննարկել Հայկական հարցը և նրա լայն քարոզչության համար մշակել միջոցառումների ծրագիր:

Նամակում նշված էր, որ կոնֆերանսի նախաձեռնողները միանգամայն ցանկալի են համարում, որ այնտեղ ներկայացվեն նաև ուսու հասարակության տեսակետները:

Նամակագիրներին հայտնի էր, որ Պետերբուրգի ուսու մտավորականության շրջանում արդեն աշխատանքներ են սկսվել Հայկական կոմիտե ստեղծելու համար, բայց եթե այդպիսին դեռ չկա, գրում էին նրանք, ապա խիստ ցանկալի է, որ լոնդոնյան կոնֆերանսին մասնակցեն գոնե մեկ կամ երկու ուսու ներկայացուցիչներ: Եթե նախապես ստացվի նրանց համաձայնությունը, ապա Լոնդոնից անմիջապես կուղարկվի պաշտոնական հրավեր:

Կոնֆերանսի աշխատանքը սկսվելու էր ապրիլի 13-ին, ուստի հարկավոր էր շտապել՝ Ռուսաստանի կողմից այնտեղ ներկայացուցիչներ ուղարկելու համար:

Պետերբուրգի հայկական խմբակի ապրիլի 8-ի նիստում նրա անդամների մի մասն առաջարկեց մի քանի անուններ, որոնցից առավել նախապատվություն ստացան Մ. Մ. Կովալսկու, Ա. Ի. Գուչկովի և Պ. Ն. Միլյուկովի անունները:

Խմբակի ուրիշ անդամներ կարծիք էին հայտնում, թե արդյոք հարկ կա՞, որ կոնֆերանսին մասնակցեն ուսուների ներկայացուցիչներ, և որքանով է դա ցանկալի: Ընդամին, մատնանշվեց, որ Ռուսաստանում համարյա լիովին բացակայում է հասարակական կարծիքը քաղաքականության ոլորտում և հատկապես արտաքին քաղաքականության մեջ, որի հետևանքով կոնֆերանսին ուսուական կողմի ներկայանալը միանգամայն անիմաստ

է դառնում: Այդ տեսակետի օգտին վկայակոչվում էին օրեր առաջ արտգործնախարար Սերգեյ Սազոնովի խոսքերը, թե Հայկական հարցով ուսուների կողմից բարձրացվող ամեն տեսակի աղմուկ միայն ու միայն կարող է վնասել գործին:

Դրան հետևեցին Խմբակի մյուս անդամների առարկությունները, թե Ռուսաստանում հասարակական կարծիքի կամ դրա նշանակության ժխտումը կլինեք միանգամայն անարդար: Նրանք ասում էին, որ կայսրությունում առկա է հասարակական կարծիք, ճիշտ է՝ ոչ այնքան ազդեցիկ, որքան Արևմուտքում, բայց, այնուհանդերձ, բավականին լսելի: Ուստի այդպիսի տեսակետը նշանակություն կունենա եթե ոչ ուսուների, ապա, համենայնդեպս, եվրոպացիների համար: Ավելորդ աղմուկից խուսափելու անհրաժեշտության մասին նախարար Սազոնովի խոսքերը, ասում էին նրանք, վերաբերում են հենց Ռուսաստանում առկա իրադրությունը: Նա բնավ դեմ չէ Հայկական հարցի քարոզչությանը, ավելին՝ անգամ խորհուրդ է տալիս Եվրոպայում ուժեղացնել քարոզը՝ հասարակական կարծիքը նախապատրաստելու համար: Տեղի ունենալիք կոնֆերանսը հետապնդում է հենց քարոզչական նպատակներ և այնտեղ ուսուների բացակայությունը Արևմուտքում կարող է մեկնաբանվել որպես անտարբերություն Հայկական հարցի նկատմամբ: Ռուսաստանը հայերի հարցով առավել շահագրգիռ տերությունն է, և, ըստ ընդհանուր համոզմունքի, նրանից է կախված գործի այս կամ այլ ուղղությունը: Այդպիսի նպաստավոր պայմաններում ուսու գործիչների կոնֆերանսին մասնակցելուց խուսափելը կարող է տհաճ տպավորություն թողնել և վատ հետևանքներ ու հիասթափություն առաջ բերել նաև այն շրջանակներում, որոնք այդքան համակրանքով են տրամադրված հայոց հանդեպ:

Կարծիքների փոխանակումով նիստի անդամները հանգեցին այն հետևություն, որ ուսու ներկայացուցիչների մասնակցությունը Լոնդոնում ցանկալի է, թեկուզև դժվար է կոնֆերանսից սպասել կամ կանխատեսել ինչ-որ դրական արդյունքներ, բայց, համենայն դեպս, այն կնպաստի Հայկական հարցը ավելի լայն շերտերում քարոզելու և տարածելու գործին:

Այս որոշմամբ էլ նիստը ձեռնամուխ եղավ Լոնդոն ուղար-

կելիք ներկայացուցչի ընտրությունը: Նախանշված անձերից նիստի մասնակիցները առաջինը կանգ առան Պ. Ն. Միլյուկովի թեկնածությունը: Բայց դա հարուցեց նրանց մի մասի առարկությունը, թե, իհարկե, մեծ են Միլյուկովի արժանիքները, բայց նրա անձը՝ որպես կուսակցական մարդու և ձախ հոսանքների ներկայացուցիչ, անցանկալի սրություն կմտցնի քննարկվող հարցի մեջ:

Կիսելով այս մտավախությունները՝ նիստը որոշեց նախապատվությունը տալ Մ. Մ. Կովալևսկու և Ն. Ա. Գուչկովի թեկնածություններին: Այն անկախ դիրքը, որ Կովալևսկին ստեղծել էր իր գիտական և հասարակական-քաղաքական գործունեությունում, այն բարձր հեղինակությունն ու ժողովրդականությունը, որ նա վաղուց վաստակել էր ոչ միայն Ռուսաստանում, այլև Եվրոպայում, ինչպես նաև նրա քաջ ծանոթությունը Արևելյան հարցին, այդ ամենը կանխորոշեցին Լոնդոնյան կոնֆերանսում ռուսների ներկայացուցչի անձի հարցը: Բայց հենց այդտեղ էլ պարզվեց, որ տվյալ պահին Պետերբուրգում չեն ո՛չ Կովալևսկին և ո՛չ էլ Գուչկովը, և որ առաջինը մի քանի օր առաջ մեկնել էր Փարիզ:

Նիստը որոշեց հեռագիր ուղարկել Արչակ Չոպանյանին,

* Մեզ հայտնի չէ՝ Չոպանյանին ու Լորիս-Մելիքովին Փարիզում հաջողվե՞լ էր հանդիպել պրոֆ. Կովալևսկուն, թե՞ ոչ: Կարծում ենք՝ ոչ, համենայնդեպս վերջինիս պարագայում՝ անկասկած: Ջարմանայի է, որ Հովհաննես Ջաքարի Լորիս-Մելիքովը 1912-1914 թթ. ողջ ընթացքում մեկուսացված էր այդ մեծ գործից: Ազգային կյանքից մի կողմ քաշված՝ նա Փարիզում ընդամենը վարում էր ռուս հռչակավոր գիտնական բժիշկ Մեչնիկովի քարտուղարի պաշտոնը: Մեկուսացված էր այն խոշոր գործիչը, որի շատ տարիների գործունեության շնորհիվ Եվրոպայում ստեղծվել էր հայասիրական ահագին շարժում՝ հօգուտ Հայ Դատի: Իր հողվածներից մեկում ռուս խոշոր գիտնական և "Вестник Европы" հանդեսի խմբագիր Մաքսիմ Կովալևսկին գրում էր, որ Հայ մեծ գործիչ եվրոպացի նախկին գործակիցները՝ Ֆրենսիս Պրեսանսեն, Վիկտոր Բերարը, Անատոլ Ֆրանսը, Ժորժեր, Հայկական հարցի վերաբացման ողջ ժամանակամիջոցում նրան բազմիցս կոչ են արել վերստին ասպարեզ գալ՝ աշխատելու իր դժբախտ հայրենակիցների ազատագրության համար, բայց՝ ապարդյուն (տե՛ս «Հորիզոն», 30 հունվարի 1913 թ.): Այդպես էլ մեզ անհայտ մնաց. դա կամավոր՞ հրաժարում էր քաղաքականությունից, թե՞ նրան ուղղակի մեկուսացրել էին:

որպեսզի նա և դուկտ. Լորիս-Մելիքովը* Փարիզում ներկայանան Կովալևսկուն և նրան փոխանցեն Լոնդոն մեկնելու մասին Պետերբուրգի հայկական խմբակի խնդրանքը:

ԿԱՐԵՎՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԵՎ ԱՆԳԼԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Նախքան հանդիպումների շարքն սկսելը Պողոս Նուբարը նպատակահարմար գտավ ծավալել հայնպաստ եռանդուն քարոզչական աշխատանք, հանդես գալ հայկական հարցին նվիրված ելույթներով ու դասախոսություններով:

Ազգային պատվիրակության ղեկավարը և անդամները հողվածներով հանդես էին գալիս եվրոպական պարբերականների էջերում, ընթերցող լայն լսարանին տեղեկացնում հայկական հարցի բովանդակությունը, նպաստում հայկական պահանջների մասին հասարակական բարենպաստ կարծիքի ձևավորմանը:

Հայկական հարցի քարոզչության ուղղությամբ Ազգային պատվիրակությանը մեծ աջակցություն էին ցույց տալիս Հայկական պատվիրակության ղեկավարի հետևողական աշխատանքով եվրոպական գլխավոր մայրաքաղաքներում ստեղծված և մեծ եռանդով գործող հայկական ժամանակավոր հանձնաժողովները¹: Գովեստից վեր էին այնտեղ բնակվող Հայ նշանավոր գործիչների կատարած աշխատանքները: Նրանցից էին, օրինակ՝ լոնդոնաբնակ Կ. Թումանյանը, հայր Նուրիխանը Հոռմից, Մխիթարյան միաբանության արքահայր Մենևիչյանը, Փարիզում հաստատված Ավետիս Ահարոնյանը, Միքայել Վարանդյանը և ուրիշներ:

Կաթողիկոսը Պողոս Նուբարին առաջարկում էր հաճախակի հանդիպումներ ունենալ հատկապես Գերմանիայի պաշտոնական շրջանների հետ, որոնք հանդես էին գալիս Հայկական հարցի քննարկման դեմ²: «Անշուշտ, - Ազգային պատվիրակության

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 23:

² Նույն տեղում, 22-ի շրջ.:

ղեկավարին գրում էր նա,- Ձեզ շատ լավ յայտնի է, թէ ինչ տեսակէտով կմոտենաք խնդրին եւ ինչպես կբացատրեք հարցը գերմանական ու ավստրիական պետական գործիչներին: Լիա- յոյս եմ, որ Վիեննայում Մխիթարեան գերապատիվ արբահայրը, իսկ Բեռլինում վսեմ. Հովհաննես խան Մասեհյանն ամենայն կերպ կ'աջակցեն Ձեզ»¹: Միաժամանակ Վեհը ճիշտ էր համա- րում, որ Պողոս Նուբարը Վիեննայում և Բեռլինում անպատճառ այցելի ոուսաց ղեսպաններին, «կարևոր ղեպքում ցոյց տալու նոցա ոուսաց կառավարութեան ուղղված մեր դիմումների պատճենները, յատկապես ներփակելով պատճենն լայն դիմու- մի], որտեղ բացատրում է Ձեր առաքելութեան մոտակայ նպա- տակը»²: Վերջում կաթողիկոսը խորհուրդ էր տալիս եվրոպա- կան դիվանագետների հետ հանդիպումների ժամանակ մշտա- պես ընդգծել, որ Հայկական հարցով բացառապես զբաղվում են տաճկահայ գործիչները³:

1913 թ. մարտի կեսերին Նուբար փաշան հանդիպում է Ֆրանսիայի արտգործնախարար Մ. Բիշոնին, ապա տեսակցում նաև Ֆրանսիացի մի շարք քաղաքական կարևոր անձնա- վորույթյունների հետ: Դրան հաջորդում է ուղևորությունը Լոն- դոն: Այստեղ Նուբարին չի հաջողվում հանդիպել էդվարդ Գրե- յին, որը մայրաքաղաքից մեկնել էր՝ մի քանի օր հանգստանալու, բայց տեսակցում է արտգործնախարարի բացակայության ժա- մանակ նրան փոխարինողի և անգլիական պառլամենտի մի շարք անդամների հետ:

Այս հանդիպումները և զրույցները խիստ նպաստավոր եղան հայ դատի համար: Այդ ամենի մասին Պողոս Նուբարը Ամենայն Հայոց կաթողիկոսին տեղյակ էր պահում ապրիլի 20-ին Փարիզից ուղարկած ընդարձակ նամակով: Նա գրում էր, որ եվրոպական քաղաքական շրջաններում Հայկական հարցի մասին վերջնականապես ձևավորվել է այն տեսակետը, թե

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 22-ի շրջ.:

² Նույն տեղում, թ. 23:

³ Տե՛ս «Վերածնունդ», № 10-11, մարտ, 1913, էջ 35:

1) Թուրքիայի տարածքային ամբողջականությունը Փոքր Ասիայում ենթակա չէ որևէ փոփոխություն, 2) Անհրաժեշտ է Թուրքիային վարկերի տեսքով ցույց տալ ֆինանսական աջակցություն, որպեսզի նա կարողանա ամրացնել իր տնտե- սությունը, ինչպես նաև կանխել օտար որևէ միջամտություն, որը որևէ հողակտոր անջատելու նպատակ կհետապնդի, 3) այդ ամենի կարևորագույն սատարը Հայկական բարենորոգումներն են, որոնք իրապես կերաշխավորեն երկրի կարգն ու ապահովու- թյունը¹:

Դա նշանակում էր, որ հետապնդելով իր շահը՝ Եվրոպան ինքն էր շահագրգռված օժանդակելու բարենորոգումների գոր- ծադրույթյանը, որը և հայերին հույս էր ներշնչում՝ արժանանա- լու օգտակար արդյունքի: Ամփոփելով Փարիզի ու Լոնդոնի մե- ծամեծերի հետ հանդիպումների արդյունքները՝ Նուբարը կա- թողիկոսին գրում էր. «Որքան ատեն որ մենք պետութեանց կրնայինք ներկայանալ միայն իբր թախանձողի, ի սէր մարդկու- թեան իրենց միջամտութիւնը հայցելով, տեսած էինք, որ մի- միայն համակրանք շահած էինք, առանց ազդեցիկ օգնութեան մը: Այսօր ընդհակառակը, Բարենորոգումները գործադրելու մէջ Պետութեանց ունեցած շահը՝ հայոց շահին հետ զուգընթաց ըն- թանալով, շատ նպաստաւոր տրամադրութեանց կը հանդի- պինք»²:

Հենվելով այս պատճառաբանությունների վրա, Պողոս Նու- բարը թե Փարիզում և թե Լոնդոնում պահանջել էր, որ եթե Հա- յաստանի բարենորոգումների խնդիրը եվրոպական մեծերը տրամադիր չեն ներկայացնելու Դեսպանախորհրդի քննարկմա- նը, քանի որ նրա խնդիրը սահմանափակված էր սոսկ բալկան- յան հարցերով, ապա գոնե հայոց հարցը պետք է ներկայացվի հաշտության կնքումից հետո Փարիզում գումարվելիք միջազ- գային ֆինանսական հանձնաժողովին, որովհետև բարենորո- գումները սերտ առնչություն ունեն Ասիական Թուրքիայի

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 8:

² Նույն տեղում, թ. 9:

Ֆինանսական վարկի հետ: «Կարծիք թէ սա ամենալաւ միջոցն է Պետութեանց ուշադրութիւնը հրաւիրելու եւ գոհացում մը ստանալու, վասն զի չեմ կրնար հաւատալ որ հաշտութիւնը վերջնականապէս կնքուելէն եւ ելմտական խնդիրները կարգադրուելէն վերջ, Պետութիւնք յանձնառու ըլլան մեր գործերով ալ զբաղելու: Արդ՝ այսօր մեր բոլոր ջանքերը պէտք է ձգտին, որ Պետութիւնք հաւանին հայկական խնդիրն ալ ելմտական Յանձնաժողովին ներկայացնելու»¹, - Կաթողիկոսին իր մտածումներն էր հայտնում Ազգային պատվիրակութեան ղեկավարը:

ՀԱՅԱՍԻՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ժողովրդի ճակատագրով մտահոգ եվրոպական և ուսաստանյան հայասերները, որոնք վերջին 4-5 տարիներին՝ օսմանյան սահմանադրութիւնը վերականգնելուց հետո, համարյա դադարել էին զբաղվել հայկական հարցով, այժմ նորից սկսեցին խոսել ամբողջ ձայնով: Դա հիմնականում հետևանք էր այն բանի, որ հայոց կաթողիկոսի հանձնարարութեամբ Ազգային պատվիրակութեան ղեկավար Նուբար փաշան իր գործակիցների աջակցությամբ կարողացավ եվրոպական հայասիրական կոմիտեներ կազմել տալ զանազան մայրաքաղաքներում՝ Լոնդոնում, Փարիզում, Բեռլինում և Շվեյցարիայում՝ հայոց ի նպաստ ընդհանուր կարծիք պատրաստելու համար: Հերթի էր զրված Պետերբուրգում կամ Թիֆլիսում նույնպես նման կոմիտեի ստեղծումը:

Ինչպես նախկինում, ստեղծված նոր իրավիճակում նույնպես հայութեան ամենահետևողական ներկայացուցիչներից շատերը **Ֆրանսիայում էին:**

“Русское слово” թերթը 1913 թ. փետրվարի վերջերին (№ 42) «Հայաստանը և Եվրոպան» վերնագրով տպագրել էր Փարիզի

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 9:

իր թղթակից Սոկոլսկու զրույցը մեծ հայասեր Ֆրենսիս Պրեսսանսի հետ: Երկար տարիներ կանգնած լինելով հայերի կողքին՝ բալկանյան ճգնաժամի օրերին նույնպես նա շարունակում էր մնալ հայ ժողովրդի անկեղծ բարեկամը՝ աշխատելով հայ դատի հաջողության համար:

Թղթակցի հարցին ի պատասխան՝ Պրեսսանսեն ասել էր. «Եվրոպան չպետք է և չի կարող թողնել, որ Հայաստանը խեղդվի այն ուժերի ճիրաններում, որն իր սարսափներով գերազանցում է ամենահամարձակ երևակայությունը: Եվրոպայի խղճի վրա նստած է մի անվճար մուրհակ՝ Բեռլինի դաշնագիրը, որով [մեծ տերությունները] Հայաստանին խոստացել էին բարենորոգումներ իրականացնել պետությունների վերահսկողության ներքո: Հայաստանը բարձր կուլտուրայով մի հին երկիր է, որը տնքում է թուրքերի ու քրդերի լծի տակ»:

Այնուհետև Պրեսսանսեն շեշտում էր, որ ինքն ուրիշ ելք չի տեսնում, բացի այն, որ Հայաստանում մտցվեն բարենորոգումներ մունիցիպալ և վարչական ինքնավարության ձևով, որի իրագործումը պետք է հանձնվի եվրոպացի պաշտոնյաներին և եվրոպական ժանդարմերիային: Նորից բավականանա՞լ Բ. Դուան մուրհակով, որով նա, այս էլ որերորդ անգամ, կպարտավորվի իր վարչության ու դատարանների միջոցով «մտցնել բարենորոգումներ»: Դա ծաղր կլինի առողջ դատողության նկատմամբ և հեզնանք՝ դժբախտ հայերի հեծեծանքի հանդեպ:

Մեծ մարդասերը գտնում էր, որ պահը երբեք այնքան բարենպաստ չի եղել հայոց հարցի լուծման համար, ինչպես այժմ: Բ. Դուուը, որ այսօր-վաղը հաշտություն է խնդրելու բալկանյան դաշնությունից, միաժամանակ հայցելու է Եվրոպայի օգնությունն ու աջակցությունը, որպեսզի կարողանա բուժել պատերազմի պատճառած վերքերը: Ուստի հենց այդ ժամանակ, ունենալով բոլոր հիմքերը, Եվրոպան պետք է թուրքիային ասի. «Ամենից առաջ վճարիք քո հայկական մուրհակը»: Պրեսսանսեն կանխատեսում էր, որ եթե եվրոպական միջամտության հարցում հայ ժողովրդի հույսերը այս անգամ էլ չարդարանան, Հայաստանը կամա թե ակամա կդառնա արյունահեղ սարսափների մի օջախ, որը, իհարկե, ի վերջո, կխախտի դիվանագիտության

օլիմպիական հանդարտությունը, բայց արդեն ուշ կլինի արյունածոր վերքերով հայերի համար:

Այնուհետև Պրեսանսեն նկատում է, որ եթե Եվրոպան մտադիր է նաև բաժանել Թուրքիայի փոքրասիական տիրույթները, ապա այդ դեպքում, ինքնաբերաբար, կվերանա Հայաստանի խնդիրը, իսկ եթե այդ նույն Եվրոպան պատրաստվում է Ասիական Թուրքիայի անբաժանելիությունը հռչակել որպես միջազգային նոր դոգմա, ապա նա պետք է հոգ տանի Հայաստանի մասին և նրան տա իրավական կազմի այն նվազագույն երաշխիքները, որոնք նախատեսված են Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով: Ահա այդ դեպքում միայն «Հայաստանն ազատ կչնչի և Հայ ընդունակ, օժտյալ ազգը, որի հարուստ քաղաքակրթությունը ստրկացված է Թուրքերի բազմադարյան բարբարոս իշխանության տակ, կհանդիսանա Փոքր Ասիայում առաջադիմության և կուլտուրայի օջախ, ինչպիսին եղել է իր անկախության ծաղկման ժամանակներում»:

Հայոց պաշտպանությամբ վաղուց ի վեր հանդես եկող Փրանսիացի հայտնի գրող Վիկտոր Բերարը “Pour les Peuples d’Orient” հանդեսի 1913 թ. № 8-ում (մարտ) տազնապ էր հայտնում հայերի համար: Նա գրում էր, որ հայությունը ապրում է ճակատագրական պահ. նա կամ քիչ թե շատ ազատություն պիտի ստանա, կամ անէանա պատմական թատերաբեմից: Ուստի Եվրոպան պետք է անի ամեն բան դրությունը փրկելու համար: Վ. Բերարը չէր բացառում, որ այս անգամ էլ եվրոպական քաղաքագետները դարձյալ աղմուկ բարձրացնեն, թե դա կնշանակի միջամուխ լինել մի ինքնակալ պետության իրավունքներին: Բայց անցյալի փորձից ելնելով՝ այլևս չպետք է հաշվի առնել նման քաղաքագետների խորհուրդները:

Ֆրանսիական պառլամենտի անդամ Բերտոն “Les Annales Coloniales”-ում գրում էր. «Հայերը հիմա վախենում են, թե Մակեդոնիան Թուրքերի ձեռքից առնելուց հետո դարավոր ճնշման լուծն ամբողջովին պիտի ծանրանա իրենց վզին, եթե կառավարության քաղաքականության մեջ որևէ արմատական փոփոխություն չլինի: Հայերը վախենում են նաև, որ Թրակիայի խլամները կհավաքվեն Անատոլիայում, որոնք հայաբնակ

վայրերում հավաքվելով, մեծամասնություն կկազմեն»¹:

Հայկական հարցի բազմակողմանի քննությամբ և թուրքահայերի հետևողական պաշտպանությամբ հանդես էր գալիս Մարսելում հրատարակվող “Le Semaphere de Marseille” օրաթերթը:

Բայց որքան էլ հզոր ու ազնիվ լինեի Հայասերների ձայնը, այն չէր կարող վճռորոշ լինել. քանի որ շղթայված էր կառավարությունների վարած քաղաքականության պարտադրանքով:

Այդ կապակցությամբ ռամկավարական «Ազգը» (Բոստոն) գրում էր.

«Օտար Հայասերներու հանդեպ չնորհակալութենէ տարբեր զգացում մը չենք կրնար տածել ու արտահայտել, բնականաբար, բայց գիտենք նաև, թէ անոնց համակրութիւնն ու ձայնը մինչև հիմա չկրցավ որևէ չափով ի նպաստ մեզի ծանրացնել քաղաքական նժարը: Նոյնիսկ Կլատսթոնի՝ Մեծ Ծերունիին, բողոքը ձայն բարբառոյ հանապատի մնաց անողոք դիվանագիտութեան հանդէպ, Կլեմանտո՝ ուրիշ հոյակապ հայասէր մը, որու անունը Pro Armenia-յի ճակատը կը զարդարեի այնքան երկար, իր վարչապետութեան օրով, ոչինչ բրաւ կամ կրցաւ ընել հայկական ցավերուն եթէ ոչ վերջ դնելու, գոնէ ամոքելու համար»²:

Եթե նախկինում՝ Համիդի օրոք, հայերը եվրոպական Հայասերների հետ անասհաման հույսեր էին կապում, թե իրենց ազատագրության ճանապարհին նրանք ի վիճակի են հրաչքներ գործելու, ապա այժմ բոլորը հասկանում էին, որ Հայաստանին նրանց աջակցությունը միայն բարոյական նշանակություն ունի, որը, սակայն, չի կարող բարելավել իրենց անագորոյն վիճակը:

Այնուամենայնիվ, էջմիածինը գտնում էր, որ հայասիրական շարժման հետագա ակտիվացումը Եվրոպայում կարող է մեծապես օգտակար լինել Հայկական հարցի նպաստավոր առաջխաղացման համար: Ուստի Գևորգ V կաթողիկոսը խնդրում է Պողոս Նուբարին առանձնահատուկ ուշադրություն դարձնել ու ջանքեր նվիրել որքան հնարավոր է լայն թափ հաղորդելու այդ

¹ «Մշակ», № 69, 29 մարտի 1913 թ.:

² «Ազգ», № 38, 5 մարտի 1913 թ.:

չարժաննր: Նա գտնում էր, որ դրա ծավալման համար կարող է չատ օգտակար լինել ղեկավար մարմինների ստեղծումը:

Կաթողիկոսի հանձնարարականը կատարելու համար Պողոս Նուբարը անմիջապես ձեռնարկում է կոնկրետ գործողություններ: Նրա խորհրդով եվրոպական նշանավոր հայասեր գործիչները փորձում են իրենց երկրներում կյանքի կոչել «Հայկական կոմիտեներ» անունով մարմիններ, որոնք իրենց կարելիություն չափով հայկական հարցը պիտի լուսաբանեն գրական կամ պատմական բանախոսություններով, լրագրական հոդվածներով, կազմակերպելին զանազան միջոցառումներ: Կոմիտեների աշխատանքներին մասնակցում էին պետական ու հասարակական նշանավոր գործիչներ, հայտնի մտավորականներ ու կրոնավորներ: Գերազանցապես օտարազգիներից կազմված այդ կոմիտեները գործում էին հայերի գործողություններից միանգամայն անկախ, բայց նրանց գործուն աջակցությամբ:

Հայկական դատի ֆրանսիական կոմիտեն (“Comité Arménien de Paris”) գործում էր Փարիզում, բայց իր մասնաճյուղերն ուներ Լիոնում և Մարսելում: Կոմիտեի նախագահն էր գեներալ Լաբրուան, որն իր չուրջն էր համախմբել ֆրանսիացի հայասերների ընտրանին: Նրան գործուն աջակցում էին հատկապես Ֆ. Պրեսանսեն, Վ. Բերարը, Ռ. դը Բոչենը, Ռ. Փինոն: Իր ստեղծման օրից կոմիտեն ձեռնարկեց “Pour les Peuples d’Orient” անունով երկչաբաթաթերթի հրատարակումը՝ հայկական հարցը, մասնավորապես Հայաստանի բարենորոգումների խնդիրն ու ընթացքը ֆրանսիական հասարակությանը ծանոթացնելու և մինչ իր բավարար լուծում գտնելը այն վառ պահելու նպատակով:

Հայ դատի ֆրանսիական կոմիտեին եռանդուն աջակցություն էին ցույց տալիս նրա մեջ չմտնող ֆրանսիացի բազմաթիվ նշանավոր անձինք՝ հասարակական գործիչներ, գիտություն ու արվեստի հայտնի դեմքեր, հատկապես պատմաբաններ:

Այսպես, 1913 թ. առաջին կեսին Փարիզում լույս տեսան հայկական հարցի վերաբերյալ մի քանի հետազոտություններ: Դրանցից առանձնանում էր Լյուդովիգ դը Կոնստանսոնի «Բարենորոգումները Ասիական Թուրքիայում. Հայկական

խնդիրը, Սիրիական խնդիրը» ուսումնասիրությունը: Ծագումով ազնվական և քաղաքական համոզմունքներով պահպանողական նշանավոր այդ ֆրանսիացին քաջածանոթ էր հայ ժողովրդի պատմությանը և իր նոր գրքով տալիս էր հայոց հանդեպ ջերմ վերաբերմունքի մի նոր ապացույց: Նա պատկանում էր ֆրանսիական ցեղի լավագույն ավանդույթների պահպաններ Դընի Կոչենի, կոմս դը Մեոնի և այլոց փայլուն պլեադային: Առաջին անգամ Հայաստան էր այցելել 1895-1896 թթ. համիդյան ջարդերից հետո և այստեղ մանրագնին ուսումնասիրելով դրանց հետևանքները՝ իր ձայնն էր բարձրացրել ի նպաստ հայության: 1912 թ. կրկին եկել էր Թուրքիա և իր նոր գրքում գծել այնտեղի դժխեմ պատկերը:

Կատարելով պատմաբանական անդրադարձ և վերլուծելով բազմաբնույթ վիճակագրական նյութեր՝ Լ. դը Կոնստանսոնը եկել էր եզրահանգման, որ առկա է Հայկական հարցի լուծման չորս տարբերակ. 1) 1895 թ. Աբդուլ Համիդի ընդունած բարենորոգումների ծրագրի գործադրում, 2) Հայաստանին ինքնավարության տրամադրում, 3) Ռուսաստանի ուղղակի միջամտություն Հայաստանին՝ ընդհուպ մինչև նրա գրավումը, 4) Հայկական նահանգներում տիրող ներկա անիշխանական վիճակի վերացում, որն անխուսափելիորեն կտարածվի կայսրության մյուս նահանգներում նույնպես և առաջ կբերի Ասիական Թուրքիայի բաժանումը:

Ֆրանսիացի հայասերներին մեծ օգնություն էին հայ գործիչների կողմից ֆրանսերեն հրատարակված հոդվածները, նյութերը, գրքույկները:

Գրիգոր Զոհրապը Մարսել Լեար (Marcel Léart) ծածկանունով՝ 1913 թ. Փարիզում լույս ընծայեց “La Question Arménienne. A

¹ Տե՛ս «Վերածնունդ», № 1, օգոստոս, 1913 թ.:

* Երկար ժամանակ հայերը համոզված էին, թե Մարսել Լեարը ֆրանսիացի հեղինակ է: Այսպես, «Պահակ» (Բոստոն) թերթը իր մի գրախոսականում (25 սեպտեմբերի, № 32, 1913 թ.) նշված ուսումնասիրության հեղինակին անդրադառնալով, գրում էր. «Ասիկա է անունը գրքի մը որ վերջերս հրատարակուեցաւ Փարիզի մէջ, Մարսել Լեար հայասեր ֆրանսիացիին հեղինակութեամբ»:

la lumière des documents” («Հայկական Հարցը փաստաթղթերի լույսի տակ») վերնագրով մի ուսումնասիրություն, ուր տեղ էին գտել Հայկական Հարցի, Հայ և Թուրք ժողովուրդների փոխհարաբերությունների, Հայկական իրավունքների ճանաչման մասին հեղինակի դատողությունները*։ Նշված և այլ խնդիրներ ամփոփվել էին հինգ բաժանումների մեջ. 1) Հայկական Հարցի պատմականը, 2) Բնակչություն, ճարտարվեստ, առևտուր, 3) Թե ինչու Թուրք կառավարությունն ի վիճակի չէ բարենորոգումներ իրագործելու, 4) Դարմանը, 5) Եվրոպան և Հայ դատը։ Գրքի մի ստվար մասը երևան էր հանում Հայության դերի կարևորությունը իբրև ազգ՝ իր պարունակած ցեղային, տնտեսական, մտավոր և այլ իմաստներով։ Վավերաթղթերի մյուս մասը ցույց էր տալիս Թուրքական կառավարության կողմից բարենորոգումներ գործադրելու անկարողությունը։ Մարսել Լեարը Օսմանյան կայսրության արևելյան նահանգներում հանգստություն հաստատելը համարում էր պետության փրկություն միակ միջոցը։ Նա գրում էր, որ իր աշխատությունը ուղղված չէ Թուրքերի և ընդհանրապես իսլամների դեմ, այլ հրապարակ է բերվել վերջիններիս վիճակը նույնպես բարվոքելու մտահոգությամբ։ Եվ ընդհանրապես, չեչտում էր Լեարը, բոլոր այն եվրոպացի հրապարակագիրները կամ քաղաքական գործիչները, որոնք Հայոց դատը պաշտպանում են Արևմուտքի հանրային կարծիքի առջև, երբեք լճնամական զգացումներ չեն տաժում Թուրքիայի կամ իսլամների հանդեպ¹։

* Միայն տասնամյակներ անց՝ 1972 թ. նոյեմբերից սկսած, Գր. Զոհրապի Հայերեն թարգմանությունը այդ ուսումնասիրությունը լույս տեսավ «Նաիրի» (Պեյրուիթ) շաբաթաթերթում, իսկ 1973-ին տպագրվեց առանձին գրքուկով (Գրիգոր Զոհրապ, Հայկական Հարցը փաստաթուղթերու լույսին տակ, Պեյրուիթ, 1973, 32 էջ)։ «Նորք» ամսագրի 1989 թ. № 12-ում լույս է տեսել աշխատության համառոտագրությունը, որը տպագրության էր պատրաստել Լիա Բալագյանը, իսկ առաջաբանը գրել էր տողերիս հեղինակը։ 1991 թ. նույն ամսագրի № 1-ում տպագրվեց աշխատության Սերաստիա նահանգին վերաբերող մասը՝ Ն. Վարդանյանի թարգմանությամբ և Ալբերտ Շարուրյանի արձեքավոր առաջաբանով։

¹ Տե՛ս «Վերածնունդ», № 1, օգոստոս, 1913 թ.։

Փրանսիական կոմիտեին եռանդուն աջակցում էին փարիզաբնակ Հայ գործիչները, որոնք տարիներ շարունակ աշխատել էին Հայ դատի համար։ Նրանցից էին Արչակ Չոպանյանը, Խաչիկ Հյունքյարպեյենտյանը, Պողոս Նուբար փաշայի երկու որդիները՝ Առաքելն ու Զարեհը, ռամկավար գործիչ Վահան Մալեցյանը և ուրիշներ։

Երկարատև դադարից հետո իրենց եռանդուն գործունեությունը վերսկսեցին անգլիացի հայասերները։

Լոնդոնում գործող “Balkan Comity”-ն հիմնել էր Հայկական կոմիտե (“Armenian Comity”), որը մշակել էր միջոցառումների լայն ծրագիր և ձեռնարկել էր դրա իրականացմանը։ Նա սերտ հարաբերությունների մեջ էր մտել ինչպես Փրանսիայի և Գերմանիայի հայկական կոմիտեների, այնպես էլ եվրոպական մայրցամաքի ուրիշ հայանպաստ խմբակցությունների հետ։

1913 թ. գարնանը ստեղծված Լոնդոնի հայկական կոմիտեի մեջ ընդգրկվել էին ոչ միայն վաղուց հայտնի հայասերներ (Ա. Բրայս, Ն. Բեքսթոն, Օ՛Կոննոր և ուրիշներ), այլև նոր սերնդի ներկայացուցիչներ։ Կոմիտեն ձեռնարկեց մի ամսաթերթի հրատարակում, որի առաջին համարը լույս տեսավ հուլիսին և կրում էր “Ararat” անունը։ Կոմիտեի քարտուղարն Արամ Բաֆֆին էր, որը միաժամանակ պարբերականի խմբագիրն էր։ “Ararat”-ի հրատարակչական մասը վարում էր Լոնդոնի հայկական միացյալ ընկերությունը, որի անդամների թվում քիչ չէին անգլիացիների անուններ։

Անգլերեն «Դեյլի կրաֆիկ» (Կ. Պոլիս) թերթից առնելով՝ «Ժամանակ» թերթը հաղորդում էր, որ օրերս Լոնդոնում հայերը համաժողով են ունեցել, որը նախագահել է Հայ ազգի բարեկամներից տեղի հայկական կոմիտեի անդամ Ուիլյամսը, և մասնակցություն են ունեցել եվրոպական վեց մեծ պետություններում բնակվող անձնավորություններ։ Համաժողովում Պողոս Նուբարը ներկայացրել էր մի ընդարձակ տեղեկագիր և մանրամասն բացատրություններ տվել այն ձեռնարկների մասին, որ մինչ այդ կատարել էր հայկական պատվիրակությունը։ Երկար խորհրդակցություններից հետո համաժողովը որոշում էր ընդունել՝ հենվելով Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի և մայիսյան

ծրագրի բովանդակությունը վրա՝ կատարել հետևյալ քայլերը. 1) Առաջիկա մի քանի օրերին հայոց առաջնորդները պետք է նոր դիմումներ ներկայացնեն վեց մեծ տերությունների արտաքին գործերի նախարարություններին, 2) Հասնել այն բանին, որ Հայաստանի խնդրի լուծման անհրաժեշտությունը մասին արձանագրվի Օսմանյան կառավարության և բալկանյան չորս պետությունների միջև կնքվելիք դաշնագրում, 3) Թուրքական կայսրության արևելյան նահանգներում բարենորոգումների գործադրությունը ապահովելու համար հայ գործիչներից կազմել մի հանձնախումբ, որոնք առաջադրվելու են սուլթանի կողմից և գտնվելու են եվրոպացի կոմիսարի ենթակայության տակ, 4) Այդ կոմիսար-կառավարչին պետք է գործակցի մի կոնտրոլ-հանձնաժողով, որի մեջ մտնելու են եվրոպացիներ, հայեր և իսլամներ: 5) Բարենորոգումներն ամենից առաջ պետք է սկսվեն քաղաքացիական, դատական և տնտեսական բնագավառներում, 6) Արևելյան Անատոլիայի հասույթները, բացառությամբ պետական գանձարանին տրվելիք մուծումները, պիտի ծախսվեն Հայաստանի կարիքների համար, 7) Բարենորոգումները գործադրվելու են մեծ տերությունների կոնտրոլի տակ¹:

Շատ ավելի դժվար էր Գերմանիայի հայասերների գործը: Այդ երկրի քաղաքական ողջ ընտրանին, գիտական ու մտավորական շրջանների մեծ մասը տարված էին թուրքամոլական գաղափարներով, որոնք անընդունելի էին համարում թուրքերի կամքին հակառակ որևէ բան անելը և հայերի կյանքի բարելավման անհրաժեշտությունը մասին խոսակցությունները դիտում էին որպես Գերմանիայի շահերին հակասող պարապ զբաղմունք:

Կ. Պոլսից մի քանի օրով Բեռլին մեկնած Թուրքիայում գերմանական դեսպան Վանգենհայմը «Տևտոնիա» ակումբում ունեցած ելույթում ասել էր. «Գերմանիան երբեք թույլ չի տա Ռուսաստանին՝ ճնշում գործադրելու Թուրքիայի վրա: Միամտություն կլինի նույնիսկ մտածել այդ մասին: Նրա համար, որ-

պեսզի Սազոնովի կաբինետին գործողությունների ազատություն տրվի, Գերմանիան երբեք չի համաձայնի զոհաբերել իր շահերն Անատոլիայում: Ո՛չ այժմ, ո՛չ ապագայում մենք ոչ ոքի թույլ չենք տա իր ձեռքերը դնելու Անատոլիայի վրա»¹:

Միանգամայն հակառակ տեսակետի էին գերմանացի մարդասեր մտավորականները, որոնք շարունակում էին հայության օգտին եռանդազին քարոզչական աշխատանքներ տանել: Շատ արդյունավետ եղավ Հայկական հարցի՝ բացառապես գերմանացիներից բաղկացած Բեռլինի հայկական կոմիտեի գործունեությունը, որի գլուխն էր կանգնել դոկտ. Յ. Լեփսիուսը: Վերջինիս շուրջը համախմբված հայասեր գործիչները գտնում էին, որ կարևոր չէ, թե մեծ տերություններից որի օգնությամբ հնարավոր կլինի թուրքահայության համար մարդավայել ապրելու պայմաններ ստեղծել, կարևորն այդ բաղձալի նպատակի իրականացումն է: Բեռլինի հայկական կոմիտեն 1913 թ. ապրիլի 5-ի թվով նամակ էր հղել Թիֆլիսի հայկական կոմիտեի վարչությունը, որի բովանդակության իմաստն այն էր, թե որքան էլ դրականորեն փոխվի հայերի նկատմամբ եվրոպայի վերաբերմունքը, միևնույնն է՝ Հայկական հարցն անհնարին է լուծել առանց Ռուսաստանի ջանքերի գործադրման²: Դրանից հետո կոմիտեի ղեկավարները հատուկ խնդրագրերով դիմել էին անգլիական և ֆրանսիական կոմիտեներին՝ համախոհ ու միաբան գործելու առաջարկով, որը ջերմորեն էր ընդունվել վերջիններիս կողմից:

1913 թ. մարտի սկզբներին կոմիտեի միջնորդությամբ հայերի մի պատգամավորություն էր ներկայացել արտաքին գործոց նախարարություն, ուր շատ բան էր իմացել հայերի նկատմամբ գերմանական կառավարության վերաբերմունքի մասին: Նրանք տեղեկացվել էին, որ 8-10 տարի առաջ Փոքր Ասիայի իր գործակալներից ստացած տեղեկությունների հիման վրա

¹ М. П. Павлович, Империализм и борьба за великие железнодорожные и морские пути будущего, М., 1918, стр. 78.

² ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 43, թթ. 3-4:

¹ Տե՛ս «Ժամանակ», № 1470, 28 մայիսի (10 Հունիսի) 1913 թ.:

կառավարությունում ստեղծվել էր խիստ բացասական կարծիք հայերի մասին՝ իբրև վաշխառու ու կեղեքիչ, խոտվարար ու ծույլ, աշխատելու անընդունակ ու ստորին բնազդների տեր ժողովուրդ: Նախարարությունում նաև ասել էին, որ երբ վերջին մի քանի տարիների ընթացքում Փոքր Ասիայի այլևայլ կենտրոններում հաստատված գերմանացի պաշտոնյաները չփվեցին հայերի հետ, իրենց տեղեկագրերում նրանց արդեն սկսեցին ներկայացնել միանգամայն այլ՝ դրական որակումներով, իբրև համեստ, աշխատասեր, երկրագործ, շիտակ ու գործունյա, զարգացման ընդունակ ժողովուրդի: Հատկապես գերմանացի միսիոներները, որոնք իրենց գործունեությունը ընթացքում մեծապես ստացել էին հայերի աջակցությունը, հայրենիք ուղարկած նամակներում ու ղեկուցագրերում հաղորդում էին այդ ամենի մասին՝ մեծապես փոխելով ոչ միայն գերմանացի ժողովուրդի, այլև իշխանությունների առանձին օղակների վերաբերմունքը հայ ժողովուրդի նկատմամբ¹:

Շվեյցարական կոմիտեն գործում էր Լ. Ֆավրի և Ա. Հոֆմանի գլխավորությամբ, որը սերտ կապերի մեջ էր ոչ միայն մյուս երկրների հայկական կոմիտեների, այլև եվրոպաբնակ նշանավոր հայերի և, իհարկե, Պոդոս Նուբարի հետ:

Եվրոպական և ռուսական շատ հայասերներ, որոնք ընդգրկված էին հայկական կոմիտեների մեջ և գործում էին առանձին, նույնպես նպաստ էին բերում հայոց դատին: Նկատենք նաև, որ ոչ մի ժամանակ եվրոպական մամուլն այնքան մեծ ուշադրություն էր դարձրել հայերի խնդիրներին, ինչպես 1913 թ. առաջին կեսին: Թերթերի ու հանդեսների էջերում հանդես էին գալիս ամենատարբեր քաղաքական կողմնորոշումներ ունեցող մարդիկ՝ լրագրողներ, գիտնականներ, գրողներ, պետական ու հասարակական գործիչներ: Բավարարվենք մեկ օրինակով:

Ֆրանսիացի խոշորագույն գրող և հումանիստ, հալածված ժողովուրդների, հատկապես հայ ժողովուրդի անկեղծ ու անձնվեր բարեկամ Անատոլ Ֆրանսը 1912–1913 թթ. համակրանքի ու

¹ Տե՛ս «Ազգ» (Բոստոն), № 40, 19 մարտի 1913 թ.:

պաշտպանություն բողաչունչ խոսքեր էր ասում հայերի մասին, ստորագրում կոչեր ու դիմումներ: Նրա զգայացունց ու հեղինակավոր խոսքերն ամենուր առաջ էին բերում թուրքական բռնակալության տակ հեծող հայ ժողովուրդի նկատմամբ համակրանք, գոնե բարոյապես նրան աջակից լինելու ցանկություն:

Ինչպես տեսնում ենք, հայասերները հայ ժողովուրդի ցավերը զգում և նրա փրկության մասին մտածում էին գրեթե հայի նման: Նրանց սիրտը լի էր տաք ու գլխաշարժ գործով դեպի տառապյալ ժողովուրդը, խոր էր նրանց փափագը իրական ծառայություն մատուցելու նրա դատին:

Բայց, ցավոք, եվրոպական մամուլի հայանպաստ հրապարակումները հայերի համար չէին տալիս սպասած դրական արդյունքը: Դրանց արձագանքները հիմնականում հասնում էին մայրաքաղաք Կ. Պոլիս, լավագույն դեպքում՝ նաև Իզմիր: Այդ մասին գավառը մնում էր անտեղյակ: Իսկ հայկական նահանգների տգիտություն ու մտավոր խավարի մեջ գտնվող քուրդ և թուրք զանգվածներն ընդհանրապես չգիտեին, թե ինչ բան է մամուլը, և ինչ են գրում արտասահմանյան թերթերը: «Աւետաբերը» հեղանքով նկատում էր.

«Միամտութիւն պիտի ըլլար չափազանց կարեւորութիւն տալ լրագրական այս երեւոյթին: Եթէ Հայոց խնդիրը յօդուածով եւ խօսքով լուծուելիք խնդիր ըլլար, հիմա շատ շատոնց լուծուած վերջացած պիտի ըլլար: Կը բաւէ ո՛րքան խաբուեցանք: «Թայմզ» կամ «Թան», «Նովոյե Վրեմիա» կամ «Պերլիներ Թակալաթ» նոր բան մը չունին ըսելիք, մանաւանդ որ մեր վէրքը մելանով բուժուելիք վէրքերէն չէ: Մենք կը ճանչնանք հայեր որ 1895ին եւ 1896ին «Տեյլի Նիուզ» կարդալով բաւական անգլիերէն սորվեցան, եւ այդ է գուցէ անգլիական մամուլին Հայոց ի նպաստ հրատարակած յօդուածներուն լաւագոյն արդիւնքը: Քաւ լիցի որ ապերախտ գտնուինք այն համակրալից վերաբերումին հանդէպ զոր ցոյց կու տայ մեզ եւրոպական լրագրութիւնը: Մենք միայն կ'ուզենք զգուշացնել մեր ազգը խօսքի եւ գրուածքի վրայ չափէն աւելի յոյս դնելու սխալին դէմ: Մամուլին դերն է առ առաւելն հանրային կարծիքը լուսաւորել: Արդ ի՞նչ կարեւորութիւն ունի Եւրոպայի հանրային կարծիքը

Միր ՄՀէի եւ Սմկոյի համար: Այդ պարոնները եւ իրենց պաշտօնակիցները աւելի պիտի ազդուին երեք կանգուն չուանէ քան երեսուն կանգուն խմրագրականէ: Այս է գէթ մեր համոզումը»¹:

Այնուամենայնիվ, կատարվող աշխատանքի կարևորությունն ակնհայտ էր: Ապրիլի 25-ին Նուբար փաշան կաթողիկոսին գրում էր. «Զեր Օծնութեան յանձնարարութեան համեմատ՝ զանազան մայրաքաղաքներու մեջ հայոց ի նպաստ ընդհանուր կարծիքը պատրաստելու համար ամէն ձիգ ի գործ դնելով յաջողեցանք եւրոպական քօմիթէներ կազմել տալ Լոնդօն, Բարիզ, Պերլին եւ Զուիցերիա: Կը յուսանք, որ Ս. Պէթերսպուրկ կամ Թիֆլիս ալ քօմիթէ մը պիտի կրնայ կազմուիլ»²:

Չնայած Ռուսաստանում դեռ չէր կազմվել հայանպաստ ոռուսական կոմիտե, բայց ոռուսահայ մտավորական ուժերը մանավանդ մայրաքաղաք Պետերբուրգում ծավալել էին պրոպագանդիստական-հրապարակախոսական լայն աշխատանքներ: Նրանք խթանում էին ոռուս հայանպաստ հասարակական կարծիքը, պարբերաբար հանդիպումներ էին ունենում առաջադեմ մտավորականների հետ, որոնք անտարբեր չէին Հայաստանի ու Հայկական խնդրի նկատմամբ և նախկինում էլ հանդես էին եկել զանազան նախաձեռնություններով: Ռուսական մամուլը՝ պաշտոնական թե անպաշտոն, կուսակցական թե անկուսակցական, չէին դադարում Հայկական հարցին նվիրել ընդարձակ էջեր, որոնք լի էին Հայաստանի մասին հողվածներով ու տեղեկություններով: Մամուլի ընդհանուր տոնը, չափը, միտումները հայ ժողովրդի նկատմամբ համակրական էին: Ամեն կողմից այն կարծիքն էր հայտնվում, որ թուրքահայերին անտանելի վիճակից փրկելու համար հարկավոր է մի բան անել, և այդ տեսակետից ոռուսական կառավարությունը որոշակի պարտականություն և իրավունք ունի:

Այդ բոլոր աշխատանքները համակարգելու համար զգացվում էր ոռուս նշանավոր մտավորականներից կազմված մի դե-

¹ «Աւետարներ», № 21, 24 մայիսի 1913 թ.:

² ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 6, թ. 2:

կավար մարմնի բացակայությունը, բայց առայժմ այդ մարմինը չէր հաջողվում ստեղծել:

Նման մտահոգությունները 1912 թ. մարտի վերջերին Արշակ Չոպանյանը Պետերբուրգ, Նիկողայոս Ադոնցին գրած նամակում առաջ էր քաշում ոռուս մտավորականներից որքան հնարավոր է շուտ համակարգող մարմին ստեղծելու հարցը: Չոպանյանի նամակի պահանջի ազդեցությունները Պետերբուրգի նշանավոր հայ գործիչները ապրիլի 8-ին հավաքվում են խորհրդակցություն և փոխանակում կարծիքներ: Հաջորդ օրը՝ ապրիլի 9-ին, Ն. Ադոնցն ընդարձակ նամակ է գրում Արշակ Չոպանյանին և հայտնում իր մտահոգություններն ու մտածումները նրա առաջարկության կապակցությամբ: Նա հայտնում է, որ չնայած թափած ջանքերին՝ մինչև այժմ չի հաջողվել ոռուս նշանավոր գործիչներից Հայկական հարցը հետապնդող մասնախումբ ստեղծել, և, ցավոք, հայտնի էլ չէ, թե ընդհանրապես կհաջողվի՞ մոտ ապագայում կազմակերպել այդպիսի մի մարմին: «Առայժմ ստիպում եմ ենք կանգ առնել առանձին-առանձին անհատների վրայ: Մեր խորհրդակցական ժողովի կարծիքով՝ քանի մը անձինք միայն կարող են յանձնարարուել վստահորեն»¹: Եվ նա թվարկում է նպատակահարմար երեք անձանց անունները՝ Մաքսիմ Կովալևսկի, նախորդ Պետական Դումայի ականավոր պատգամավոր և երբեմնի նախագահ Ալեքսանդր Գուչկով և քաջահայտ Միլյուկով: Նկատի առնելով, որ վերջինս՝ իբրև գործիչ և Դումայի պատգամավոր, հանդիսանում է ձախակողմյան հոսանքների ներկայացուցիչ, հետևապես կառավարական շրջաններում և հարակից հասարակական ազդեցիկ խավերում ոչ բնավ վստահելի անձ է, ուստի խորհրդակցությունը նախամեծար էր համարել միայն առաջին երկու անունները շրջանառել և առավելապես՝ Մաքսիմ Կովալևսկու անունը, որը նույնպես աջակողմյաններին չէր պատկանում, բայց նա իր գիտական և հասարակական գործունեությամբ բավականին հեղինակավոր դիրք էր ստեղծել պայքարող կուսակցություններից մեկուսի և որոշ

¹ ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 6, թ. 1:

առումով համբավ ուներ նաև արտասահմանում, մասնավորապես այն մարդկանց շրջանում, որոնցից ենթադրաբար պիտի կազմվեր Լոնդոնում գումարվելիք հաշտության ժողովը¹:

Ադոնցը Չոպանյանին իրազեկում էր, որ չնայած առ այսօր չի հաջողվել ոուս գործիչներից կազմել նշված հանձնախումբը, բայց Պետերբուրգում պարբերաբար տեղի են ունենում խորհրդակցական նիստեր հասարակության ընտիր և բանիմաց անդամների մասնակցությամբ: Նա նաև տեղեկացնում էր, որ վերջերս հրավիրված մի ժողովում ընտրվել է չորս հոգուց բաղկացած տնօրեն մարմին՝ Դումայի պատգամավոր Միքայել Պապաջանյան, Պողոս Ղուկասյան, բժ. Գրիգոր Տիգրանյան և Նիկողայոս Ադոնց կազմով, որը պետք է համակարգի ոուս գործիչների հետ տարվող աշխատանքները²:

Ռուսաստանի կառավարական շրջանների հետ չփոփոխված ուժեղացնելու նպատակով, ինչպես էջմիածնի կաթողիկոսությունն ու Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, այնպես էլ ազգային պատվիրակությունն օգտագործում էին Ռոմանովների ոուսական գահակալության 300-ամյակին նվիրված հանդիսությունները: Հոբեյանը մեծ շուքով նշվում էր ամբողջ 1913 թվականի ընթացքում:

Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V Սուրենյանցի կոնդակի համաձայն՝ Ռուսաստանի բոլոր առաքելական եկեղեցիներում գոհաբանական մաղթանքներ էին կատարվում նշանավոր տարեթվի առթիվ:

Ռուսաց մայրաքաղաքում տեղի ունեցող հոբեյանական հանդիսություններին մասնակցելու համար Ամենայն հայոց կաթողիկոսի հանձնարարությամբ Կ. Պոլսից Պետերբուրգ մեկնեց թուրքահայոց պատրիարքարանի պատվիրակությունը՝ Ներսես արքեպիսկոպոսի գլխավորությամբ, որի հետ էին ուրիշ բարձրաստիճան եկեղեցականներ:

¹ ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 6, թ. 2:

² Նույն տեղում, թ. 3:

ԵՎՐՈՊԱՑԻ ՀԱՅԱՏՅԱՑՆԵՐԸ ՔՆԱԾ ՉԵՆ

Հայոց դատի եվրոպական ազնիվ նվիրյալների կողքին այդ ճակատագրական պահին հայտնվում էին նաև հայ ժողովրդին ստորացնելու մոլուցքով տարված գործիչներ:

Թուրքերը կարողացել էին կաշառել և հավաքագրել Ֆրանսիայի երկու մոլեռանդ թուրքամուկների՝ տաղանդավոր գրող ու լրագրող ակադեմիկոս Պիեռ Լոտին և լրագրող Կլոդ Ֆարերին:

“Gil Blas” թերթում, պաշտպանելով Թուրքիայի դատը, Պիեռ Լոտին եվրոպական ընթերցողներին փորձում էր համոզել, թե բալկանյան ռազմադաշտերում թուրքերի պարտությունների գլխավոր պատճառներից մեկը օսմանյան բանակի հայ զինվորների դավաճանությունն է, թեև թուրքերն իրենք էին խոստովանում այդ զինվորների քաջությունը:

Երկրորդ անգամ Պիեռ Լոտին ստեց “Daily Tel”-ում: Հակահայկական մոլուցքով նա գրում էր, թե Ադրիանուպոլսում բուլղարական ժամանակավոր վարչությունը վճռել էր, որ բուլղարները պիտի կոտորեին թուրքերին, իսկ հայերը՝ հույներին, և որ, իբր, դրա համար բուլղար հրամանատարությունը նախապես զենք էր բաժանել հայերին: Այս ստոր գրպարտությունը մերկացրին հայկական մամուլի օրգանները, ինչպես նաև վճռականապես մերժեցին ոուսական թերթերից շատերը:

Ռուս գրող ու հրապարակախոս Նեմիրովիչ-Պանչենկոն “Русское слово” թերթի 1913 թ. № 263-ում լույս ընծայած «Զուր գրպարտություն» (“Клевета на смарку”) հոդվածում նշում էր, որ Պիեռ Լոտին և նրա նմաններն իրենց կաշառված գրիչներով անխղճաբար ստում են և ողջ աշխարհի առաջ գրպարտում մի դժբախտ ժողովրդի՝ աշխատելով սև ներկայացնել նրա կարմիր արյունը:

Իր հիմարական գառանցանքներով հատկապես փայլեց Կլոդ Ֆարերը: «Անալ» շաբաթաթերթում տպագրած իր երկու հոդվածներով նա քարոզում էր, թե թուրքերը գերազանց մի ցեղ են, և նրանց դատն արդար է, որ ջարդերն ու գազանությունները նյութողը բալկանյան գործերն են, իսկ թուրքերի կատարած ջարդերը չափազանցված են, որ բոլոր հայերն ամենահետին

գողերն ու թշվառականներն են, որոնք դարերի ընթացքում ապրել են թուրքերի հաշվին՝ որպես ձրիակեր և այլն¹: Թուրքն իր օջախի մեջ հայերին միշտ լայն տեղ է տվել, գրել էր Ֆարերը, օսմանյան պետական մարմիններում նրանք նույնիսկ զբաղեցրել են բազում նախարարական պաշտոններ, կառավարական այլևայլ բարձր դիրքեր, և այդ ամենին նրանք պատասխանել են ապստամբություններով ու ահաբեկություններով²:

Արչակ Չոպանյանը «Անալի» խմբագրին բողոք էր հղել Մ. Ֆարերի հայատյաց հոդվածները տպագրելու համար: Ծաբաթաթերթերը հրատարակել էր Չոպանյանի բողոքի նամակի միայն մի մասը: Այնտեղ նշված էր. «Մ. Ֆարերը կը սխալի կարծելով թէ «Թուրքը իր օճախին մէջ Հայերուն լայն տեղ տուած է եւ թէ օսմ. Նախարարաց խորհուրդը միշտ մէկ կամ երկու Հայեր ունեցած է իր անդամներուն մէջ»³: Թուրքը միշտ Հայը գործածած է, բայց անոր գործիքի երկրորդական դեր մը տալով: Միայն սահմանադրական ըէփմին վերահաստատումէն ետք է որ Հայ մը եւ Յոյն մը Նախարարաց Խորհուրդին մաս կազմեցին, հին ըէփմին Թուրքիա գոյութիւն ունենալէն ի վեր, ընդամէնը չորս Հայ նախարար եղած է: ... Արդէն, Պոլսոյ մէջ Հայ նախարարներ կամ պաշտօնատարներ եղած ըլլալը չապացուցաներ թէ Հայերը գաւառներու մէջ հարստահարութեանց ենթակայ չեն: 1909ին, օսմ. Դահլիճին մէջ Հայ նախարար մը կար, բայց ասիկա արգելք մը չեղաւ որ Կիլիկիոյ մէջ 30.000 Հայեր ջարդուէին: ... Հարկ է այս տեսակ խնդիրներու մէջ շրջահայեաց ըլլալ եւ՝ թեթեւութիւններէ զգուշանալ, մանաւանդ երբ խնդիրը կը դառնայ ազգի

¹ Տե՛ս «Դրոշակ», № 4, ապրիլ, 1913, էջ 61:

² Տե՛ս «Ժամանակ», № 1447, 5 (18) ապրիլի 1913 թ.:

* Միայն «Թանգիմաթի» ռեֆորմներից հետո հայերը պետական մարմիններում ծառայելու իրավունք ստացան: 19-րդ դարի երկրորդ կեսին թուրքական կառավարության մեջ նրանք ունեցել են չորս նախարար՝ Աղաթոն էֆենդի (երկրագործության), Միքայել Բորթուկալ փաշա և Սաբրը Հովհաննես փաշա (կայսրի անձնական գանձերի նախարարներ), Հակոբ փաշա (ֆինանսների նախարար): Վերջինիս՝ օսմանյան ելևուտի մեջ կարգ ու կանոն մտցնելու ջանքերի հետևանքը եղավ նրա խորհրդավոր մահը:

մը վրայ, որ դժբախտ է եւ ճնշուած, որ կը տառապի եւ դառնօրէն: Մ. Ֆարէր այս մասին կրնայ տեղեկութիւն առնել իր երկրին իսկ հիւպատոսներէն, որոնք մօտէն տեղեկ եւ Հայաստանի դէպքերուն»¹:

Եթե “Русское Слово”-ն և ռուսական մամուլի ուրիշ օրգաններ ջերմորեն պաշտպանում էին հայերին և նրանց դատը, ապա Ռուսաստանում կային թերթեր ու ամսագրեր, որոնք շարունակում էին վաղուց որդեգրած հակահայ ընթացքը: Այդ օրերին հայութեանը վարկաբեկելու համար հատկապես կազմից դուրս էր գալիս “Московские Ведомости” թերթը:

ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ: ԲԱՐԵՆՈՐԳՈՒՄՆԵՐԻ ԶԱՆՔԵՐԸ ՎՏԱՆԳԻ ՏԱԿ

Բալկաններում թուրքական բանակների ծանր պարտությունները թուրքահայ առանձին ղեկավար քաղաքական գործիչների մոտ հույս առաջացրին, թե պահը հարմար է ապստամբության միջոցով ազատագրվել օսմանյան բռնապետությունից:

Այդպիսի տրամադրությունների առաջացմանը նպաստեց Ռուսաստանի կառավարության այն հայտարարությունը, թե ինքը պատրաստ չէ հայկական հարցը դնելու միջազգային քննարկման: Հայերը մտածում էին, որ այլևս փակվեց իրենց վիճակը բարելավված տեսնելու վերջին հույսը:

Ապստամբությունը ծրագրվել էր Եգիպտոսի ռամկավարական շրջաններում, և հեղինակը հայ ժողովրդի ազատագրական շարժման նշանավոր գործիչներից Միհրան Տամադյանն էր: Զեռնարկի գաղափարը ծնվել էր սահմանադիր ռամկավար կուսակցության (ՍՌԿ) առանձին ղեկավարների մոտ, որոնք իրենց չէին արատավորել թուրքական իշխանությունների հետ ունեցած գործարքներով:

Դեռևս 1912 թ. կեսերին Եգիպտոսում կյանքի էր կոչվել

¹ «Ժամանակ», № 1447, 5 (18) ապրիլի 1913 թ.:

«Ազգային պաշտպանութեան քոմիթէ» անվանումով մի գաղտնի մարմին, որի հիմնադիրն ու ղեկավարը Միհրան Տամադյանն էր: «Կոմիտեն» ստեղծվել էր Ս. Ռ. կուսակցությունից դուրս, բայց «գլխաւորապէս անոր կենդանի և խանդավառ ոյժերուն վրայ կրթնած»¹:

1912 թ. հոկտեմբերի 20-ին Տամադյանը նամակ էր գրում ՍՌԿ-ի ամերիկյան կենտրոնին, ուր ասված էր, թե Կիլիկիայի ամբողջ ժողովուրդը կազմ ու պատրաստ է ազատագրական պայքարի դրոշ պարզելու թուրքական բռնապետութեան դեմ, որին մեծապէս նպաստելու են Բալկանյան պատերազմում թուրքիայի կրած պարտութիւնները: Ելնելով այդ նպատակադրումից՝ Մ. Տամադյանը «Ազգային պաշտպանութիւն կոմիթէի» ղեկմանի անունից կուսակցութեան ամերիկյան վարչութեանը խնդրում էր «յանուն Կիլիկիոյ ամբողջ ժողովուրդին» այնտեղ գործուղել կուսակցութեան գործիչներից Ազանայի նախկին առաջնորդ եպիսկոպոս Մուշեղ Սերոբյանին՝ ապստամբութիւնը ղեկավարելու համար: Նամակագիրը համոզված էր, որ նրա ներկայութիւնը Կիլիկիայում «հրաշագործ ազդեցութիւն կը գործէ» տեղի հայութեան վրա²:

Այդ պահին, սակայն, Մուշեղ եպիսկոպոսը, որն ապրում էր Պրովիդենսում, կուսակցութեանը հրաժարականի դիմում էր ներկայացրել ՍՌԿ-ի տեղի պատգամավորական ժողովին՝ «զզուած ներքին կարգ մը էնթրիկներէ ու էնթրիկաններէ»³:

Թեև Մուշեղ եպիսկոպոսն այլևս կուսակցութեան անդամ չէր, բայց ամերիկյան ուսման վարչութիւնը նրան է հանձնում Մ. Տամադյանի նամակը և իր կողմից համոզում չմերժել նրա խնդրանքը⁴:

Մուշեղ եպիսկոպոսն ունկնդիր է լինում հայրենիքից եկած ձայնին: «Անմիջապէս կը թողում գործերս, կը փակեմ տպա-

¹ Մ. Սերոբյան, Դիտումներ եւ դատումներ. էջեր օրագրէս, Պեյրութ, 1932, էջ 77:

² Նույն տեղում, էջ 76:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

րանս, կիսատ կը թողում «Ամերիկահայ տարեցոյց»-իս տպագրութեան գործը և կը մեկնիմ Եգիպտոս»¹:

Մինչ եպիսկոպոսը նավի վրա էր, Մ. Տամադյանը մեկնում է Հունաստան և տեսակցում տեղի կառավարական գործիչների հետ, շարադրում իր ծրագրային տեսակետները: Հունական ղեկավարութիւնը մեծ հետաքրքրութեամբ ու շահագրգռվածութեամբ է տեղեկանում կիլիկիահայերի մտադրութեանը, ավելին՝ խոստանում է ցույց տալ անհրաժեշտ օգնութիւն ղեկը ու զինամթերքով:

Վերադառնալով Եգիպտոս՝ Տամադյանն իր համախոհների հետ ձեռնամուխ է լինում ապստամբութեան նախապատրաստման կոնկրետ աշխատանքների: Նախապատրաստվող ապստամբութեան խանդավառ ջատագովներից էր Վահան Մալեգյանը²:

Եգիպտոս է ժամանում նաև Մուշեղ եպիսկոպոսը և հիմնավորվում Ալեքսանդրիայում: Երբ երեկոյան իջել էր նավից և մի քանի ժամ հանգստանալուց և մութն ընկնելուց հետո դուրս էր եկել զբոսնելու, ապա, ինչպէս ինքն է վերհիշել՝ «Գիշերն իսկ փողոցին մէջ եղած խօսակցութիւններէն կը տեսնեմ, թէ կիլիկեան ապստամբութեան չափազանց գաղտնի ծրագիրը չուկայի հասարակ ապրանք մը եղած է»³: Առաջին իսկ պահերին նրա մեջ կասկածներ են արթնանում, թե գործը դրված է լպրծուն զետնի վրա, որը կարող էր չհաջողվել և «աղետաբէր ըլլալ երկրի բնակչութեան»⁴: Ուստի մանրամասն տեղեկութիւններ է հավաքում Կիլիկիայի զինական հնարավորութիւնների, ժողովրդի հոգեբանութեան, դիմադրական կորովի ու պատրաս-

¹ Մ. Սերոբյան, Մեր պայքարը Հայ ազատագրութեան ուղիով: Վերլուծումներ հայկական հարցին շուրջ, Գահիրէ, 1948, էջ 221-222:

² Տե՛ս «Վահան Մալեգեանի կեանքն ու գործը: Յուշամատենան իր ութսունամեակի առթիւ (1871-1951): Կենսագրական ուսումնասիրութիւն ժիրայր Պահրի: Ինքնակենսագրութիւն Վ. Մալեգեան: Դիմանկարներ եւ վկայութիւններ» հրատարակեց Զարուհի Պահրի, էջ 74:

³ Մ. Սերոբյան, Դիտումներ եւ դատումներ, էջ 76:

⁴ Նույն տեղում, էջ 77:

տուժյուններին մասին: Նա իր համար պարզում է, որ այն խան-
դավառուժյունը, որով համակված են գաղտնի կոմիտեի ան-
դամները, չեն կիսում կիրիկիահայերի հիմնական զանգվածները:
«Հետզհետե հասնող նամակներ, տեղեկագիրներ, ներկայացու-
ցիչներ կը չեչտեն վայրկեանին անյարմարութիւնը, և հակայե-
ղափոխական տրամադրութիւնը կիրիկեան ամբողջ ժողովուր-
դին»¹, - գրել է Մուշեղ եպիսկոպոսը: Նա այլևս չէր կասկածում,
որ բարձրացվելիք ապստամբութեան դրոշի տակ հազիվ թե
համախմբվեն զանգվածներ: Չէ՞ որ Մ. Տամաղյանը և նրա
գործակիցները կարծում էին, որ եթե հայերի ապստամբութիւնը
Կիրիկիայում հաջողութիւն ունենա, ապա այն կտարածվի կայս-
րութեան ուրիշ հայաբնակ վայրերում նույնպէս, և բացառված
չէ, որ նրան միանան իշխանութիւնների գործելակերպից կամ
իրենց սոցիալական վիճակից դժգոհ թուրքեր ու քրդեր:

Դեռ տարիներ առաջ անդրադառնալով Թուրքիայում քրդե-
րի ու թուրքերի մասնակցութեամբ ընդհանուր ապստամբու-
թիւն բարձրացնելու հնարավորութեան հարցին՝ Ֆիլիպեում
(Բուլղարիա) լույս տեսնող դաշնակցութեան օրգան «Ռազմիկ»
թերթում նրա խմբագիր Ռուբեն Զարդարյանը գրում էր. «Իրա-
կանութիւնը և Թուրքիոյ պատմական վիճակը ո՛չ մեկ ակնկա-
լութիւն, ո՛չ մեկ երաշխավորութիւն կը թելադրեն հայուն այսօր
հավատալու, թե՛ ընդհանուր ապստամբութիւն մը կարելի է կամ
կրնայ պատրաստուիլ մոտ ատենէն Թուրքիոյ մեջ: Այդ հավատ-
քը չեն տար մեզի՝ թուրք բանակը, թրքական հասարակութիւնը,
թուրք մամուլը, վարժարանները, յառաջադիմութեան ու զար-
գացման բոլոր թուրք ազգականները»²:

Մ. Տամաղյանն ու իր զինակիցները հաշվի չէին առնում, որ
1909 թ. ապրիլյան կոտորածների հետևանքով Կիրիկիայի հայու-
թեան թիվը մեծապէս նվազել է, և չնայած այդ սև օրերից անցել
է չորսուկես տարի, բայց նա դեռ ուշքի չի եկել, չի վերագտել
ինքն իրեն:

¹ Մ. Սերոբեան, Դիտումներ եւ դատումներ, էջ 77:

² «Ռազմիկ» (Ֆիլիպե), № 19, 17 դեկտեմբերի 1905 թ.:

Ուրեմն, «ժողովուրդը ո՛չ միայն պատրաստ չէ՛ այլ և
բացարձակապէս հակառակ է ապստամբական գաղափարին ...
Միայն զինուորութենէ խուսափող կարգ մը երիտասարդներ
կրնան լծուիլ ապստամբութեան գործին, քանի որ լեռները
ապաստանած են արդեն, իրենց մորթը փրկելու համար»¹:

Շատ տարիներ անց վերհիշելով տվյալ հարցի մասին այդ
օրերի իր մտածումները՝ Մուշեղ եպիսկոպոսը նշել է, որ չէր
«ուզեր արհեստական յեղափոխութեան մը ձեռնարկել, առանց
Կիրիկիոյ ժողովուրդին համագործակցութեան», քանի որ
տեսնում էր, որ «չկայ տարր մը, որուն կարենայինք յենուլ
Կիրիկիոյ մէջ ...»²:

Այս խոսքերը Մուշեղ եպիսկոպոսը գրել է շատ տարիներ
հետո՝ իր վտանգավոր գործողութիւններն արդարացնելու հա-
մար: Չէ՞ որ Մ. Տամաղյանի մտադրութեանն առաջիններից մեկն
ինքն էր արձագանքել:

Բնական է, որ հայ եկեղեցին առաջինը հանդես եկավ պատ-
րաստվող ծայրահեղ վտանգավոր, անիմաստ ու աղետալի ձեռ-
նարկի դեմ:

Կիրիկիայի Սահակ կաթողիկոսը 1912 թ. դեկտեմբերի 23-ին
գրում էր, որ ձեռնարկի մեջ ինքը միայն աղետ է տեսնում, իսկ
երկու օր հետո՝ դեկտեմբերի 25-ին, գրած նամակում նա նշում
էր. «Ձեմ փափաքիր իրավամբ ժառանգել Կիրիկիոյ արիւնով
օծուած ըլլալս»³: Այդ խնդրով իր հերթական արցունքախառն
գրութեան մեջ Սահակ կաթողիկոսը Մուշեղ եպիսկոպոսին
սխալութեան նոր կոչ էր անում. «Վերջին խոսք մը ունինք, զոր
եթե լսեք, Կիրիկիան արեան նոր ծովերու մէջ խեղդուելու
անխուսափելի դժբախտութենէն պիտի փրկէք. և ամէն անոնք,
որ մթին ծրագրերներով կը փափաքին դժբախտ Կիրիկեցին մղել
նոյն դժոխքին հարկին, զերծ պիտի պահէք ներկայի և ապագայի
չանթ-անէծքէն, իսկ եթէ չը լսեք, ներկայս իբրև հայրական

¹ Մ. Սերոբեան, Դիտումներ եւ դատումներ, էջ 79:

² Մ. Սերոբեան, Մեր պայքարը հայ ազատագրութեան ուղիով: Վերլու-
ծումներ հայկական հարցին շուրջ, էջ 222:

³ Մ. Սերոբեան, Դիտումներ եւ դատումներ, էջ 77-78:

սիրոյ և գուրգուրանքի անպետ հիշատակ կրակի տուէք, որով փակած պիտի ըլլանք երկարամեայ յարաբերութիւնն ու հաղորդագրութիւնը: ... Մենք կ'աշխատինք յանիրաւի արատաւորուած ձեր անունը, հակառակորդներու ձեր վեղարին նետած արիւնի բիծերը մաքրելու, մինչ դուք հաւատալով Եգիպտոսի երազներուն, վեղար և այլք մեր զաւակաց արեան մէջ թաթախել [կուզեք]: ... Հետևաբար լաւ չէ՞ անձնասպան ըլլալ և չտեսնել երազներու սև օրերն ու տարիները. լաւագոյն չէ՞ առաջին անգամ մեր կուրծքը բանալ գալիք հերոսներու դավաճան գնդակին, և չը թողուլ որ հոգեվարք ժողովուրդ մը ի սպառ կորսուի ...:

Ըսելիքս լրացավ. մի' ըլլաք օտարին դիւցազնը և ազգին դահիճը»¹:

Մանչեստրի հայոց առաջնորդ Գևորգ եպիսկոպոսը Կաթողիկոսին գրած նամակում խստորեն քննադատում էր Մուշեղ եպիսկոպոսի վտանգավոր գործողութիւնները, նրա հովվապետական այցերը Եգիպտոսում: Նա մանրամասն կանգ էր առնում Մուշեղ սրբազանի այն փորձերի վրա, որոնց նպատակն էր Պողոս Նուբարին համոզել աջակցելու իրեն դրամահավաք կազմակերպելու և Կիլիկիայում ապստամբութիւն առաջ բերելու համար:

Գևորգ եպիսկոպոսը Վեհին նաև տեղեկացնում էր, որ 1913 թ. փետրվարի 2-ին Պողոս Նուբարի Փարիզի տանը կայացած ժողովի ժամանակ ինքը ելույթ է ունեցել և ցույց տվել, թե հայութեան համար որքան կարող են կործանարար լինել Մուշեղ եպիսկոպոսի արկածախնդրական քայլերը²:

Ինչպես ասվեց, ապստամբութիւն բարձրացնելու մտադրութիւնը գաղտնի չէր մնացել: Դրա մասին գիտեին ոչ միայն Եգիպտոսում և Կիլիկիայում: Տարբեր երկրներում գտնվող հանրահայտ հայ գործիչներից շատերը մեծ անհանգստութիւն էին ապրում և իրենց տազնապանները փոխանցում ապստամբութեան ղեկավար նշանակված Մուշեղ եպիսկոպոսին:

Փարիզից ահագանգ էր հնչեցնում Եագուպ Արթին փաշան: Իսկ Աղաթոնը 1913 թ. հունվարի 5-ի գրութեամբ Մուշեղ եպիսկոպոսին ուղղակի սպառնում էր. «... Եթէ այսպէս չարիքի մը պատճառ լինիք, դուք կամ ձեր սիրելի ընկերները յաւիտեան անէծքի արժանի պիտի լինիք ...: Ամէն միջոց գործածեցէք, ... որ խենթութիւն չընեն ...: Միայն կը վախնամ Եգիպտոսի մէջ խելքը կարճ խենդեր գտնուին, որ ձեռքի տակէ անոնց (գեյթունցիներին: - Հ. Ս.) պօլ պօլ խոստումներ կընեն կոր, որով անոնք ալ կը քաջայերուին ...: Կը ցավիմ, որ պարապ տեղը քեզ Ամերիկայէն մինչև հոս հոգնեցուցին: Հայը այսպէս է. երազածը իրականութիւն կը կարգէ. ազգը ազգասէրներէն տուժած է միշտ»: Նույն մտահոգութեամբ Արշակ Չոպանյանը Մուշեղ Սերոբյանից ստացած տեղեկութիւնների հիման վրա՝ Փարիզից նրան գրել էր. «Զեյթունի ապստամբութիւն մը՝ այսպիսի բոպէի մը ջախջախման միայն կը յանգի: Միւս կողմէն լուրջ գումարի մը պակասը (և զայն գոյացրնելու անհնարութիւնը) կը ստիպեն մեզ բոլորովին մէկդի դնել այդպիսի ծրագիր մը: Ուրեմն, ամէն կրցածնիդ բրէք, իսկոյն առաջքն առնելու այդ շարժման. թող տեղերնին բոլորովին հանգիստ նստին, այլապէս Զեյթունի բացարձակ քայքայման և փճացման պատճառ կըլլաք: Այդ խորհուրդը անոնց կրնաք տալ մատնանիչ ընելով ներկայ պարագաներուն աննպաստութիւնը: ... Ասոնք ընելէ յետոյ լաւագոյն է որ հոս դառնաք, և մեզի հետ աշխատիք. հոս շատ բան կայ ընելու հայկական դատին համար»³:

Հանդես բերելով լրջմտութիւն՝ Մուշեղ եպիսկ. Սերոբյանը հրաժարվում է կործանում խոստացող մտքից և մտադրվում է իր ուժերը ներդնել ավելի կարևոր գործի մեջ, այն է՝ նախ և առաջ «Ժողովուրդը զինել վաղուան աղետքը կարենալ դիմագրաւելու համար»³: Իսկ դա հնարավոր էր միայն դրամահավաքի միջոցով: Եվ նա այդ նպատակով մեկնում է արտասահման:

¹ Մ. Սերոբեան, Դիտումներ և դատումներ, էջ 78-79:

² Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, ցուցակ 20, թղթապ. 238, վավ. 111, թ. 4:

¹ ԳԱԹ, Մ. Կյուրճյանի ֆոնդ, թղթ. 306, բաժին II, թ. 6:

² Նույն տեղում, էջ 78-79:

³ Մ. Սերոբեան, Մեր պայքարը հայ ազատագրութեան համար, էջ 222:

Ժամանակում Շվեյցարիա՝ նա հանդիպում է այստեղ գտնվող Ավետիս Ահարոնյանին և փորձում է իմանալ, թե Կիլիկիայի ինքնապաշտպանությունից գործի մեջ կարո՞ղ է արդյոք հույս կապել նրա կուսակցության հետ: Վերջինս նրան խորհուրդ է տալիս այդ հարցով դիմել Դաշնակցության Պոլսի Կ. կոմիտեին: Թեև դեռ ուժի մեջ էր իր հանդեպ թուրքական դատարանի կողմից կայացրած մահվան վճիռը, բայց Մուշեղ սրբազանը 1913 թ. փետրվարի 2-ին կարողանում է աշխարհիկ տարազով մտնել Կ. Պոլիս և տեսակցել Դաշնակցության տեղի ղեկավարներից մի քանիսի, այդ թվում Սիմոն Զավարյանի հետ, որը նրան խորհուրդ է տալիս դրամահավաքի գործով անցնել Կովկաս¹:

Է՛լ ավելի խիստ էր Պողոս Նուբար փաշայի վերաբերմունքը: Նա ուղղակի տհասություն էր համարում ապստամբության մասին ամեն մի խոսակցություն հատկապես այն ժամանակ, երբ Ռուսաստանը կարծես հակվում էր Հայկական հարցով զբաղվելու գաղափարին: 1913 թ. փետրվարի 7-ին նա Մուշեղ եպիսկոպոսին գրում էր.

«... Պատգամավորությունը (իր գլխավորած: - Յ. Ս.) սաստիկ յուզուեցավ այն վտանգներուն պատճառաւ, զոր այդպիսի գործեր կրնան ստեղծել ի վնաս հայ ժողովուրդին, մասնավորապէս ներկայ քրիդիքական հանգամանքներու մէջ ...: Պատգամավորությունը որոշեց յատկապէս գրել Գահիրէի և Աղեքսանդրիոյ Քաղաք. ժողովներուն անոնց ուշադրութիւնը հրաւիրելու համար, այն չա՛տ ծանրակշիռ կոճոտութեանց վրայ, որոնց կրնայ պատճառ դառնալ նմանօրինակ շարժում մը, որ միևնոյն ատեն բնոյթը ունի անվրիպելիօրեն վտանգելու մեր դատը, և պատուիրակութեան պաշտոնը դարձնելու դժուար, չըսելու համար անհնար: Իմացայ նաև որ այդ Քոմիթէին հիմնադիրները կը յուսային ձեր մոտ գտնել գործոն մասնակցութիւն մը, և նկատի ունէին ձեր օժանդակութիւնը: Սակայն համոզուած եմ, որ բոլորովին կը բաժնէք պատգամաւորութեան կարծիքը, և անձնապէս յոյս կը դնէմ ձեր խոհականութեան և ա՛յն ազդեցութեանը

¹ Մ. Սերոբեան, Դիտումներ եւ դատումներ, էջ 81:

վրայ, զոր ձեր հայրենակիցներուն մոտ, արգիլելու համար անոնք վտանգելէ ազգային դատը, այն վայրկեանին, որ ամէն ժամանակէ աւելի պէտք ունինք միացրնելու մեր բոլոր ջանքերը...»¹:

1913 թ. փետրվարի 13 (26)-ին Եվրոպայի Հայոց առաջնորդ Գևորգ եպիսկոպոսը Մանչեստրից խիստ գաղտնի («ծածկաբար») նամակ է հղում կաթողիկոս Գևորգ V Սուրենյանցին, որում անդրադառնում է նաև Կիլիկիայում նախապատրաստվող ապստամբությանը: Նա գրում էր.

«Ամենաապահով աղբիւրէ խոր ցաւով իմացած էի արդէն, թե Մուշեղ եպիսկոպոս գնացած էր Եգիպտոս՝ այնտեղից իր համակիր թէթևսոյիկ ոմանց հետ Կիլիկիոյ մեջ մի ապստամբութիւն կազմակերպելու համար»: Սրբազանը Վեհին տեղեկացնում էր նաև, որ Մուշեղ եպիսկոպոսը Եգիպտոսում թյուրիմացության մեջ է գցել Արթին փաշա Յագուբին և նրան խնդրել նամակ գրել Փարիզ, Պողոս Նուբար փաշային, որպեսզի նա «Կիլիկեցուց ինքնապաշտպանութեան համար հանգանակութիւն հայտարարի»: Պողոս Նուբարն իր նախագահությունում հրավիրել էր ժողով և քննարկման դրել Արթին փաշայի նամակը: Գևորգ սրբազանը հայտնում էր, որ ինքը, ժողովում հենց սկզբից հանդես գալով, ցույց էր տվել այն մեծ վտանգը, որը կարող էր առաջ գալ հանգանակություն կատարելու, զենք գնելու և Կիլիկիա ուղարկելու պարագայում, «որ անտարակոյս տասնեակ հազարներու նոր կոտորածի մը պատճառ պիտի լինէր ի՛ Կիլիկիա և ի՛ Գավառս»³:

Մուշեղ եպ. Սերոբյանի դեռ Կ. Պոլսում եղած ժամանակ՝ 1913 թ. փետրվարի 8-ին, Միհրան Տամադյանը և նրա զինակից Բարսիլ Օհանյանը «Ազգային պաշտպանությունից քոմիթէ»-ի դիվանի ղեկավարների հանգամանքով մի շրջաբերականով դիմում էին հղել ուսմկավար կուսակցության ակումբներին և հայտարարել, թե կուսակցության կենտրոնական վարչությունն

¹ Մ. Սերոբեան, Դիտումներ եւ դատումներ, էջ 79:

² Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 111, թթ. 1-2:

³ Նույն տեղում, թ. 7-8:

անցած չորս տարիներին «չը գիտակցաւ իր կացութեան բարդութեան վրա գտնուիլ, ... չը գիտցաւ կենդանութեան և ոգևորութեան միջնորդութեան մը ստեղծել, ազատական շունչ մը ներշնչել շարքերուն»¹, ուստի կոմիտեն որոշել է փոխել իրավիճակը: Դա նշանակում էր, որ կոմիտեի ու հատկապէս նրա ղեկավարի համար ոչ մի նշանակություն չէին ունեցել ամեն կողմից եկող սթամբուլյան կոչերը, և նրանք շարունակում էին նախապատրաստվել ապստամբության:

Մուշեղ եպիսկոպոսը մեկնում է Կովկաս, բայց այստեղ՝ Թիֆլիսում էլ, Դաշնակցության գործիչները դրամահավաքի հաջողության երաշխիքներ չեն տալիս:

1913 թ. մայիսի 22-ի թվով գրած նամակով Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը Ամենայն Հայոց կաթողիկոսին տեղեկացնում էր. «Մի քանի օր սրանից առաջ Բագուից յատուկ մարդու ձեռքով մի գրութեամբ ինձ խնդրում էին գնալ այստեղ փող հանգանակելու որոշ նպատակի համար: Նախ քան որևէ պատասխան տալը երեկ երեկոյան գնացի գնն. Շատիղովի մոտ: Նա այդ օրը ստացել էր փոխարքայի Պետերբուրգ ուղարկած գրութեան պատասխանը, ուր գաղտնի պահելու պայմանով կարդաց ինձ: Արտաքին գործոց նախարարը գրում է. «Հայերին նպաստել զինուելու վտանգավոր է, որովհետև կարող է բռնկում առաջ գալ: Այդ բացասական պատասխանից հետո Բագու գնալու միտք այլևս չկայ»³:

Այդ բանից հետո Մուշեղ եպիսկոպոսը ստիպված մեկնում է Ռուսաստան: «Դեպի Ռուսաստան ճամբորդութեանս միջոցին, - վերհիշել է նա, - վերջին փորձ մը կ'ընեն, ապստամբութեան հանդէպ Կիլիկիոյ ժողովուրդին չկամութիւնը դարմանելու

¹ Մ. Սերոբեան, Դիտումներ և դատումներ, էջ 76-77:

² Նամակի հետագա շարադրանքից երևում է, որ խոսքը Բագվում հանգանակություն կազմակերպելու, հավաքված գումարով գնեք գնելու և Թուրքահայաստան (Կիլիկիա) ուղարկելու մասին էր:

³ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապ. 238, վավ. 168, թթ. 1-2:

տարբեր միջոցներով»¹: Ինչպես երևում է, այստեղ նույնպես անհաջող է լինում առաքելությունը:

Հաջորդ հանգրվանը Հունաստանն էր: Այստեղ նա Եգիպտոսից ստանում է Մ. Տամադյանի մարտի 4 թվակիր նամակը, որով վերջինս հայտնում էր, թե պատրաստվում է մեկնել Կիլիկիա: ««Մնաք բարով» չեմ ըսեր,- գրում էր նա, - որովհետև այն հաստատ համոզումը ունիմ, որ մեզի մինակ չպիտի ձգէք: Կիլիկիոյ ազատագրութեան և Ատանայի վրիժառութեան Սրբազան դատը Ձեզ կը կանչէ ... Կարևոր գումար մը ձեռք բերելու յաջողիք կամ ոչ, լուսագոյն բանը ըրած կըլլաք վերադառնալ Եգիպտոս, և անկէ մեր ընկերներուն հետ խորհելով՝ միջոց մը գտնել երկիր անցնելու: Ձեր ներկայութիւնը պիտի ելեքտրականացնէ ամբողջ Կիլիկեան հայութիւնը, և սարսափահար պիտի ընե թշնամին: ... Ամերիկայէն դրամ չեկաւ. փոխանակ օգնութիւն փութացընելու, մեր գլխուն շան քարոզ կը կարդան, մանրամասնութիւն կուզեն, աշխարհի միւս անկիւնէն կուզեն մեզի հրահանգ տալ և պատգամ արձակել»²:

Տեղյակ չլինելով, որ Մուշեղ սրբազանը հեռացել է ռամկավար կուսակցությունից՝ Տամադյանը պահանջում էր, որ նա հեռագիր ուղարկի Ամերիկա, որպեսզի իր կուսակցական ընկերները փոխեն իրենց ոսկրացած մտայնությունը և ֆինանսական աջակցություն ցույց տան իր գլխավորած կոմիտեին՝ գնեք գնելու և Կիլիկիա փոխադրելու համար: « ... Ո՞վ Ձեզնէ ավելի կրնայ ազդել Ձեր այս եղբայրակիցներուն վրայ: Թող մեզի խոհեմութեան հորդորներ չկարդան. մենք մեր ընելիքը որոշած ենք, և խրատներու անսալու տրամադրութիւն չունինք: Եթե Յեղափոխութիւնը չարիք մը կը նկատեն, գոնէ այնպէս ընեն, որ նուազագույն չարիք մ'ըլլայ այն, քանի որ զայն արգիլելու կամ խափանելու անկարող պիտի ըլլան»³:

Աթենքում գտնված օրերին Մուշեղ սրբազանը փորձում է

¹ Մ. Սերոբեան, Մեր պայքարը Հայ ազատագրութեան ուղիով, էջ 222:

² Մ. Սերոբեան, Դիտումներ և դատումներ, էջ 82:

³ Նույն տեղում:

պարզել, թե արդյոք Հունական իշխանությունները մնում են իրենց այն տեսակետին, որ եթե կիրիկիա-հայերն ապստամբեն, ապա իրենք ղենք-ղինամթերքով օգնություն կգան նրանց (Հույների տված խոստումի մասին սրբազանին ամիսներ առաջ մանրամասն տեղեկացրել էր Մ. Տամադյանը): Նա տեսակցում է Հունաստանի ռազմական նախարարությունից դեկավարության հետ և ներկայացնում հետևյալ ծրագիրը. Հունական զորքը ցամաք է հանվում Դորթ-Յոլի կողմերում, նրան օգնելու համար ոտքի է կանգնում կիրիկիա-հայությունը, և համատեղ կռիվ ազատագրում են Կիրիկիան:

Նախարարությունում նախ հրաժարվում են, թե Տամադյան ազգանունով մեկին երեք ամիս առաջ որևէ խոստում են տվել, ապա կտրականապես մերժում են Կիրիկիա զորք ուղարկելու և թուրքական զորքերի դեմ կռիվելու հնարավորությունը: Մուշեղ սրբազանն իր Հուշերում գրել է. «Յոյն պատերազմական նախարարությունը կը մերժէ առաջարկս, զօրքի անբաւականութեան պատճառով»¹:

Եթե նույնիսկ Հունական կառավարությունը զորք ուղարկելու ապստամբած կիրիկիա-հայությունը օգնելու համար, միևնույնն է, թուրքական իշխանությունների վրեժխնդրական ողջ ատելությունը թափվելու էր հայերի գլխին՝ որպես ապստամբության նախաձեռնողների: Հայերը չունեին հարյուրերորդ մասն անգամ այն սեպարատ հակամենների, որ ցույց էին տալիս Թուրքիայի Հույները, բայց դարձյալ նրանք էին միշտ թուրքական գազանությունների թիրախ դառնում: Դա հիմնականում բացատրվում էր նրանով, որ հայերը չունեին այն պաշտպանությունը, որ ունեին Հույները Աթենքի և եվրոպական կառավարությունների կողմից: Ապստամբությունը և նրա արյունալի վախճանը կնպաստեն Թուրքիայի միջազգային դիրքերի հետագա թուլացմանը, որը հենց Հունաստանի և բալկանյան նախկին դաշնությունների կառավարությունների մշտական նպատակներից մեկն էր: Բայց դրանից ի՞նչ օգուտ կլինի Հայաստանին:

¹ Մ. Սերոբեան, Մեր պայքարը Հայ ազատագրութեան ուղիով, էջ 222:

Մուշեղ սրբազանը Աթենքից ձեռնունայն շարունակում է ճամփան և ժամանում Փարիզ: Մարտի 13-ին Եգիպտոսից Փարիզ հղած հեռագրով Տամադյանը սրբազանից կրկին ու կրկին պահանջում է ձեռք բերած ոչ մեծաքանակ ղենքերի խմբաքանակը Կիրիկիա առաքելու համար կազմակերպել դրամահավաք այս անգամ ֆրանսահայությունից մեջ: Մարտի 15-ին Մուշեղ սրբազանը պատասխան հեռագրով Տամադյանին խնդրում է. «Արգիլել ամեն առաքում և սպասել նամակներուս»: Սաստող բովանդակությամբ երկու հեռագիր ևս (մարտի 19 և 22) սրբազանն ուղարկում է Եգիպտոս¹:

Կրկին անդրադառնալով կիրիկյան խնդրին՝ Ա. Չոպանյանը 1913 թ. մարտի 21-ին Մելքոն Կյուրճյանին գրած նամակում շեշտում էր, որ տեղաբնակ հայերը պետք է «չատ զգոն գտնւին թոյլ չտալու համար նախորդ կոտորածի համեմատութեամբ աւելի մեծ ու մասշտաբային սպանդ»²:

Մ. Կյուրճյանին գրած մի ուրիշ նամակում՝ թվագրված 22 մարտի 1913 թ., Չոպանյանը նշում էր, որ «եթե հնարավոր լինի Կիրիկիային սպառնացող նոր կոտորածի վտանգի առաջն առնել, ապա դրանով հնարավոր կլինի ուժեղացնել Հայության նկատմամբ Եվրոպայի ուշադրությունը»³:

Օրը օրին բոլոր անցուղարձերի, ինչպես նաև հեռագրերի ու թղթակցությունների բովանդակության մասին Մուշեղ սրբազանը հաղորդում էր Պողոս Նուբար փառապետին: Մի օր էլ «... Պողոս փառապետի մօտը կանչելով կը պնդէ, որ դադրեցնել տամ շարժումը, հակառակ պարագային, կը սպառնայ Պատուիրակութենէ հրաժարիլ, եւ մեկնիլ Եգիպտոս, ղեպքերու ամբողջ պատասխանատուութիւնը ձգելով իմ վրա»⁴:

1913 թ. մարտի կեսերին Պողոս Նուբարը Փարիզից տազնապալից հարցում է անում Կ. Պոլսի Հայոց պատրիարքին՝ խնդրելով շտապ տեղեկություններ հաղորդել Կիրիկիայում կա-

¹ Մ. Սերոբեան, Դիտումներ եւ դատումներ, էջ 83:

² ԳԱԹ, Մ. Կյուրճյանի ֆոնդ, թղթ. 306, բաժին II, թ. 4:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 9:

⁴ Նույն տեղում:

տարվող դեպքերի մասին: Թուրքահայոց պատրիարք Հովհաննես արք. Արշարունին մարտի 30/12-ին № 66 գրությամբ Փարիզ, Նուբար փառապետին գրում էր. «Ձեր վսեմութեան գրածին ի պատասխան, կը փութանք յայտնել որ՝ նկատի առնելով խնդրոյն անմիջական լուրջ եւ ծանրակշիռ կարեւորութիւնը, համաձայն Ձեր վսեմութեան եւս փափաքանաց, յանձնեցինք մասնաւոր ուշադրութեան Ազգ. Կեդր. վարչութեան՝ որ տեսնելով ահաւոր վտանգին մերձաւորութիւնը, ժողովը պաշտօն տուաւ վարչութեան անդամ Գեր. Տ. Պալաքեան վարդապետի, որ այսօր կը մեկնի Ադանա՝ վեհ. կաթողիկոսին՝ հետ համախորհուրդ ձեռք առնելու այն բոլոր նպատակայարմար միջոցները, որով հնար է վտանգին առաջին առնել, եւ հայկական հարցին ներկայ քրիտիկական ըրդէին թոյլ չտալ, որ եւրոպական դիւանագիտութիւնը կրկին պատրուակ մը ունենայ մեզ ամբաստանելու եւ գործին անյաջողութիւնը մեզ վերագրելու»:

Տեսնելով, որ Միհրան Տամադյանի և նրա գլխավորած «Ազգային Պաշտպանութեան քոմիթէ»-ի հետ իր գործակցութիւնը շարունակել այլևս անհնարին է, և որ նրանց գործունեութիւնը «արկածախնդրական զուգորդի մը կերպարանք» է առել, 1913 թ. ապրիլի 9-ին Մուշեղ սրբազանը Փարիզից մեկնում է Ամերիկա՝ իր հետ տանելով «սա խայթիչ համոզումը, թե անկեղծ ու անձնուէր յեղափոխականներ ըլլալով հանդերձ, տակաւին չատ հեռու կը գտնուինք քաղաքացիական հասունութենէ»¹:

Բայց բանը դրանով չվերջացավ: Չնայած ապստամբութեան նախապատրաստման հարցի շուրջ հայ գործիչների նամակագրութիւնը եղել էր խիստ գաղտնի, բայց թուրքական անվտանգութեան մարմինների մոտ ինչ-որ կասկածներ էին առաջացել: Դա բավական էր եղել, որ իշխանութիւնների հրահանգով մի նոր սարսափազդու վիճակ ստեղծվի կիլիկիահայոց համար: Լուր տարածվեց, թե հայերը գտնվում են նոր լայնատարած ջարդերի նախաչեմին: Դա առաջ բերեց մեծ խուճապ հայ բնակչութեան մեջ:

^{*} Ոոսքը Կիլիկիո Սահակ կաթողիկոսի մասին էր:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 2:

1913 թ. ապրիլի 3-ին Ադանայում տեղի ունեցավ մեծ իրադանցում: Ջարդի ահուսարսափի տակ շրջակա գյուղերից հազարավոր քրիստոնյա գյուղացիներ ու բանվորներ լցվեցին քաղաք: Միաժամանակ, Ադանայի ծայրամասային թուրքաբնակ թաղերի քրիստոնյաները խուժեցին կենտրոն՝ ապաստանելով հյուպատոսարաններում, օտար զանազան հաստատութիւններում և եկեղեցիներում: Մի շարք թուրքեր, մեկնելով շրջակա մուսուլմանական գյուղեր, լուրեր էին տարածել, թե Ադանայում կրկին հայերի ջարդ է սկսվել, իսկ գավառների թուրք և քուրդ գյուղացիները վերցրել են զենքերը և կազմ ու պատրաստ սպասում են հրամանի՝:

Քաղաքում հուզումն ու սարսափը գնալով ծայր աստիճանի հասավ, և աննկարագրելի խուճապ տիրեց: Հայերի մի մեծ ամբոխ փորձեց խուժել Հայոց Մայր եկեղեցի՝ այնտեղ ապաստանելու, բայց տեղի առաջնորդ Շահե վարդապետը կանխազուշույթյամբ մերժեց որևէ մեկին ներս առնել՝ նկատելով, որ հակառակ դեպքում ավելի կբազմապատկվի ժողովրդի հուզումը: Առաջնորդը տեղի երևելիներից Շահապոյան էֆենդու հետ սկսեց շրջել թաղերով և բարձրաձայն հորդորել, որ ամեն մարդ իր տանը մնա՝ հայտարարելով նաև, որ վախենալու բան չկա: Բարեբախտաբար, նորանչանակ կուսակալի և հայոց առաջնորդի ջանքերով այս անգամ վտանգն անցավ, թեև քաղաքից դուրս բազմաթիվ հայեր և այլ քրիստոնյաներ հարձակումների ենթարկվեցին և ստացան մարմնական խեղումներ:

Քաղաքից մեկ ժամ հեռավորութեամբ գտնվող Ինճիրլի գյուղի քրիստոնյաներն ստույգ վտանգից ազատվեցին շնորհիվ այն բանի, որ տեղի երկաթուղու պաշտոնյան կայարանի շինութեան մեջ առավ նրանց և հեռագրով օգնութիւն խնդրեց Ադանայից: Այդ հեռագրի վրա այնտեղից եկած ժանդարմները ցրեցին զինյալ խուժանը, ձերբակալեցին երիտթուրք մի սպայի և նրա մի քանի համախոհների, որոնք ամիսներ ի վեր մասնավոր ու գաղտնի հանձնարարականներով շրջել էին թուրքական և

¹ Տե՛ս «Ժամանակ», № 1426, 13 (26) ապրիլի 1913 թ.:

քրդական գյուղերով, գրգռել և ջարդի նախապատրաստել մահ-մեղական բնակչությունը:

Այս և ուրիշ վտանգները չեզոքացնելու գործում մեծ դեր էին խաղում Հայ եկեղեցու սպասավորները: Պողոս Նուբարը նշել է, որ «Կիլիկիոյ մեջ խոռվութիւն մը Հանելու նպատակաւ եղած փորձը, Հունաստանի քաջալերութեամբ, որ վիժեց բարեբաղտաբար շնորհու մեր եկեղեցական իշխանութեանց ազգասիրական ճիգերուն: Ամենայն Հայոց վեհ. Կաթողիկոսը, Կիլիկիոյ շնորհ. կաթողիկոսը և Պոլսոյ Ամեն. պատրիարքը ժողովրդեան Հանդարտութիւն եւ խոհեմութիւն քարոզեցին եւ ապացուցին, որ ան ոչ միայն ընդհանուր ջարդի վտանգ մը կը կսպառնայ, այլ նաեւ ընդհանուր կերպով Հայկական դատին մեծամեծ վնասներ կրնայ յարուցանել»¹:

Կիլիկիայում ապստամբություն ծրագրի ձախողման առիթով Պողոս Նուբարն իր անթաքույց ուրախությունն էր Հայտնում նաև ապրիլի 20-ին կաթողիկոսին հղած նամակի (№ 702) հետգրությունը. «Ձեր Վեհափառութիւնը ինձ նման իմացած պիտի ըլլայ յունաց գրգամմը Կիլիկիոյ մեջ տեղի ունենալիք խոռվութեանց կատարեալ անյաջողութիւնը. այս բարի լուրը ինձ սրտի մեծ գոհունակութիւն մը պատճառեց, տեսնելով որ այսպէսով անդարմանելի չարիքներ խափանած էին»²:

Ռուսական դիվանագիտությունը նույնպես բավարարված էր, որ Կիլիկիայում, այնուամենայնիվ, Հայերն ապստամբություն չեն բարձրացրել, որի դեպքում ջուրը կնետվեին Հայկական Հարցի ուղղությամբ մինչ այդ թափված բոլոր ջանքերը: Բայց Պետերբուրգը դեռ լիակատար վստահություն չունեց, թե Կիլիկիան լիովին Հանդարտված է: Դրա վկայություններից մեկը Կոստանդնուպոլսի, Փարիզի և Լոնդոնի իր դեսպաններին ուսուցող արտգործնախարարի 1913 թ. մայիսի 8-ի հեռագիրն էր, ուր ասված էր. «Եթե [Կիլիկիայի] Հայ բնակչությունը հիասթափվի տերությունների երաշխիքով բարեփոխումների իրականացման

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 46, թ. 3:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 11:

հույսից, ապա պետք է որ զգուշանանք տերությունների համար ծայրաստիճան անցանկալի և նախնառաջ Թուրքիայի համար վտանգավոր բարդացումների առաջացումից»¹:

Չնայած բանը չհասավ արյունահեղություն, բայց բազմաթիվ երևելի Հայեր Կիլիկիայից դուրս՝ բուն Հայաստանում, ենթարկվեցին հետապնդումների: Արդարադատություն նախարարի պահանջով իրենց գործերից հեռացվեցին Մուշի առաջնորդ Ներսես եպիսկոպոս Խարախանյանը և Սղերդի առաջնորդական տեղապահ Գևորգ վրդ. Նալբանդյանը, որոնց մեղադրել էին, թե չափազանցված լուրեր են տարածել և գրգռել մարդկանց: Միաժամանակ նախարարը բողոքել էր Բիթլիսի առաջնորդ Սուրեն վրդ. Գալեմյանի դեմ, թե նա կառավարությունը «անգուլթ» որակում է տվել²:

Այսպիսի վախճան ունեցավ Կիլիկիայում ապստամբություն բարձրացնելու ծրագիրը: Զուր չէր, որ ապստամբության դեկավար նշանակված Մուշեղ սրբազանը վերոշարադրյալ դեպքերի մասին հուշերը վերնագրել է՝ «Կիլիկեան գաւեչտը ...»³:

Միանգամայն իրավացի էր «Կոպկասի լրաբերը»՝ գրելով. «Եթե վաղը չէ միւս օրը Ալբանիան ինքնավար պետութիւն պիտի դառնայ, այդ բանը միայն եւ միայն եւրոպական զէնքի եւ ոչ թէ տեղական ոյժերի շնորհիւն է:

Նոյնը պէտք է ասել եւ թիւրքաց Հայաստանի համար: Թէկուզ հազարաւոր տարիներ այդ երկիրը խեղդի ապստամբական շարժումներից թափուած արեան ճապաղիքի մէջ, ոչինչ չի լինիլ, մինչեւ որ մի արտաքին ոյժ, մի աւելի ուժեղ պետութիւն, քան Թիւրքիան, չմիջամտի գործին»⁴:

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3461, л. 18.

² Տե՛ս «Աւետաբեր», № 29, 19 հուլիսի 1913 թ.:

³ Մ. Սերոբեան, Դիտումներ եւ դատումներ, էջ 84:

⁴ «Կոպկասի լրաբեր», № 8 (62), 11 հունվարի 1913 թ.:

ԻՆՉՈՒԻ ՀԱՅԵՐԸ ՁԷԻՆ ԿԱՐՈՂ ԱՊՍՏԱՄԲԵԼ

Արդյոք Հայաստանում կա՞ր որևէ ուրիշ ուժ, որն ունակ լիներ զենքով ընդդիմանալու Հայոց ազգի մարմինը ծվատող թուրքական բռնակալ պետության դեմ: Այդպիսի ուժ չկար: Իսկ կա՞ր որևէ ուժ, որը գոնե կարողանար փոքր-ինչ ընդդիմանալ սրբնթաց Հայաստան թափվող մուհաջիրների հեղեղին: Չկար այդպիսի ուժ: Դրանով միայն կենսահորդ շահագրգռված էր թուրքահայաստանի հայությունը, որը, սակայն, այլևս որևէ ուժ չէր ներկայացնում մինչև ատամները զինված թուրքերի ու քրդերի դեմ հանդիման:

Հատկապես լավ զինված էին քաղաքաբնակ թուրքերը: Նրանց զենքերը հիմնականում նոր էին, եվրոպական սիստեմի: Նրանց ձեռքին հատկապես շատ էին նիկելե գնդակով բազմահարված հրացանները (մանլիխեր, մոսին, թուրքական և գերմանական մատուցներ, լեբել և այլն): Թուրքերի մոտ կային նաև մեծ թվով պետական զենքեր: Քաղաքացի հարուստ թուրքերի տներում կարելի էր տեսնել տասնյակ հրացաններ՝ կախված տարբեր սենյակներում: Նրանք երբեք ռազմամթերքի պակաս չունեին:

Գյուղացի թուրքերը և քրդերը նույնպես, առանց բացառություն, լավ զինված էին: Նրանց հիմնական զենքը կապարե գնդակով տարբեր տեսակի միահարված հրացաններ էին (մարթին, բերդան, կոա, դափաղլի, վինչեստր): Բայց գյուղերում ապրող բեզերը միահարված հրացաններից բացի ունեին նաև նոր սիստեմի կատարելագործված զենքեր:

Քուրդ աշիրեթներից «Համիդիե» հեծելազնդերում արձանագրվածները զինված էին նոր տեսակի պետական հրացաններով, իսկ մնացած աշիրեթների քրդերը՝ ամեն տեսակի զենքերով՝ սկսած չախմախի հրացանից մինչև եվրոպական կատարելագործված 6 միլիմետր տրամաչափի հրացանը:

Ամենաաղքատ և նախրապան կամ հովիվ քրդի ու թուրքի տանը նույնպես կարելի էր տեսնել խնամքով մաքրած ու յուղած, պատից կախած կոա կամ մոսին տեսակի հրացաններ: Բերդան հրացանը հիմնականում գտնվում էր Հայաստանի Վա-

նի, Մուշի, էրզրումի և մասամբ Տրապիզոնի վիլայեթների համեմատաբար ունևոր թուրքերի ու քրդերի ձեռքին:

Չկար զենքի ճշգրիտ հաշվառում, բայց ենթադրվում էր, որ Հայկական 5-6 նահանգների գրեթե մեկուկես միլիոն մահմեդականների ձեռքին միայն կար կատարելագործված տեսակների մոտավորապես 150.000 հրացան:

Դրան գումարվում էր այն, որ մահմեդականները անհամեմատ ավելի զինավարժ էին, քան Հայերը: Եթե Ռուսաստանի հայությունը մահմեդականների համեմատ զինավարժ էր, ապա թուրքիայում հակառակն էր: Թուրքիայի քրդերից ու թուրքերից շատ շատերը կոխի ու արյուն տեսած մարդիկ էին: Թուրք ներքնախավերում կային բազմաթիվ պահեստի սպաներ և զինվորներ (ոեղիֆներ):

Տրապիզոնից, Հալեպից մինչև Վան, Սղերդ ու էրզրում բազմաթիվ լազեր, քրդեր ու թուրքեր իշխանությունների աչքի առջև զբաղվում էին «արգելված» զենքերի առևտրով՝ շահելով մեծ գումարներ: Թե՛ թուրքը և թե՛ քուրդը զենքի համար առանց ափսոսալու սիրահոժար վճարում էին պահանջված բարձր գինը: Եթե, օրինակ, նոր տեսակի հրացանը (մանլիխեր, մատուցեր) եվրոպայում արժեք մոտ 30 ռուբլի, ապա թուրքիայի գավառներում դրանք վաճառվում էին 130-200 ռուբլով: Կոա սիստեմի հրացանը Ֆրանսիայում արժեք 6 ռուբլի, իսկ Հայաստանի մահմեդականներն այն գնում էին 70 ռուբլով՝:

Մահմեդականների այդքան մեծ ռազմական պատրաստությունների դիմաց Հայերն ունեի՞ն միջոցներ, որ կարողանային իրենց պաշտպանել քրդերի, թուրքերի, չերքեզների հարձակումներից, որոնց թիկունքում կանգնած էր կառավարությունը: Կա՞ր զենք, կա՞ր կովող ուժ, կայի՞ն զինադրելու հարմարություններ:

Հայերի գերակշիռ մասը թե՛ քաղաքներում և թե՛ գյուղերում, նույնիսկ խառը բնակչություն ունեցող բնակավայրերում զարմանալիորեն անհոգ էր և մտածել անգամ չէր ուզում ինքնապաշտպանություն կազմակերպման մասին:

¹ Տե՛ս «Մշակ», № 129, 14 հունիսի 1913 թ.:

Հայ տասնյակ գյուղեր, նույնիսկ ամբողջ շրջաններ չունենին մի հրացան անգամ: Քանի որ հային արգելված էր զենք ունենալ, ուստի իր չնչին ունեցածը պահում էր խիստ գաղտնի՝ հիմնականում թաքցնելով հողի տակ: Զգուշանալով ամիսներ, նույնիսկ տարիներ շարունակ նա չէր ստուգում հողում թաղված զենքը, չէր մաքրում ու յուղում, այդ իսկ պատճառով կամ լրիվ անպետք էր դառնում, կամ պահը ներկայանալիս դժվար էր լինելու գործածել:

Քաղաքներում զինված էր հայերի չնչին մասը՝ մեծ մասամբ գրպանի փոքր ատրճանակով, որն ընդհարումների ժամանակ չէր կարող նշանակալի դեր կատարել:

1908 թ. օսմանյան սահմանադրության ազդարարումից հետո մի քանի ամիս տևած ազատությունների ժամանակ հայերը հնարավորություն ունեին մեծաքանակ զենք ձեռք բերելու, քանի որ այդ ընթացքում զենքի վաճառքը ազատ էր, և այն կարող էին անարգել գնել ոչ միայն մահմեդականները, այլև քրիստոնյաները: Նշենք նաև, որ զենքի գները դարձել էին շատ մատչելի, քանի որ վաճառականները մեծ քանակի տարբեր տեսակի զենքեր էին ներմուծում Եվրոպայից և Ռուսաստանից, բացի այդ, անհամեմատ հեշտացել էր զենքերի տեղափոխումը թուրքիայի մի վայրից մյուսը:

Զենքի ազատ առուծախի ժամանակաշրջանը հայերի համար տևեց մինչև 1909 թ. ապրիլի կրիկիահայոց կոտորածները: Զենք չունեցող և այն ձեռք բերել չցանկացող հայերի անտարբերությունը այդ 8-9 ամիսներին նույնիսկ զարմանք էր պատճառում սահմանադրական ազատություններին չհավատացող թուրքերին ու քրդերին:

Բայց, ցավոք, հայերի անհոգությունը դրանով չէր վերջանում: Օսմանյան հեղափոխության հաղթանակին հաջորդած խանդավառության օրերին, հավատալով նոր իշխանությունների ազդարարած ազատությունների և բոլոր ազգերի եղբայրություն մասին լողունգներին, նրանք ծախսվել էին իրենց ունեցած չնչին թվով զենքերը, այն էլ՝ հիմնականում քրդերին ու չերքեզներին, որոնք համաձայնում էին զենքի համար վճարել հնարավոր բարձր գին:

Հենց զենք չունենալը կամ չնչին քանակով ունենալն էր հիմնական պատճառը, որ ջարդերի ժամանակ հայերը հսկայական զոհեր էին տալիս: Նրանցից առավել զգաստ մտածողները տազնապած էին, մշտապես մտահոգ, թե ինչ է լինելու իրենց վիճակը, եթե երկիրը մատնվի անիշխանություն, և նորից կրկնվեն 1894-1895 թթ. և 1909 թ. Ադանայի ջարդերը:

Իհարկե, նման վտանգի ժամանակ այս կամ այն բնակավայրի հայերը կարող էին երևան բերել իրենց ծոցում թաքնված անհայտ ուժեր, մատների վրա հաշվվող անհատներ, որոնք կզոհեին իրենց կյանքը ժողովրդի համար, բայց ինքը՝ ժողովուրդը, ի վիճակի չէր լինի միահամուռ դիմելու ինքնապաշտպանություն:

Այդպես էր եղել կոտորածների ժամանակ: Բացառված չէր, որ կրկնվեին ցավալի ու հայոց համար ամոթալի դեպքերը: Այո՛, երիցս ամոթալի: 1894-1895 թթ. և 1909 թ. եղել են զեպքեր, երբ 2-3 թուրք, զինված միայն տապարներով, կանգնում էին դռների առջև ու հատիկ-հատիկ դուրս բերելով ներսում պահված ուժով լի տասնյակ հաղթանդամ հայ տղամարդկանց, նրանց մորթում էին գառնուկների պես: Եղել են պարսավելի և զզվանք առաջացնող տեսարաններ, երբ անգամ թուրք կանայք, ձեռքերին միայն հացի դանակներ, մորթել են ահաբեկված հայ տղամարդկանց՝ առանց հանդիպելու նրանց գոնե բնազդական ընդդիմություն:

Ջարդերը քաղաքներում սովորաբար սկսվում էին հիմնականում շուկաներից՝ հանկարծակի ու փոթորկի նման: Այդպիսի պահերին հայերը շուկաներում անփույթ ու անհոգ զբաղված էին լինում իրենց սովորական գործերով: Մինչև նրանք գլխի էին ընկնում, թե ինչ է կատարվում շուրջը, արդեն ուշ էր լինում և բոկաների ընթացքում տալիս էին մեծ զոհեր՝ առանց զենքով փոխադարձելու: Այդպես է եղել միշտ, և այդ օրինաչափությունը նրանք երբեք հաշվի չէին առնում:

Այդ ամոթալի դեպքերի հիմնական պատճառն այն է եղել, որ հայերը զենք չեն ունեցել, իսկ որտեղ քիչ թե շատ ունեցել են, կարողացել են ոչ միայն պաշտպանվել, այլև մեծ կորուստներ պատճառել և փախուստի մատնել ջարդարար ոհմակներին: Զինված լինելու դեպքում հայերը հիմա էլ կարող էին ար-

ժանի հակահարված տալ թշնամուն, քանի որ, որպես ազգային հավաքականություն, ունեն բնածին ռազմագիտական բազում հատկանիշներ. ամբողջության մեջ նրանք քաջասիրտ են ու արի, անվեհեր ու անձնագոհ: Այդ ամենին գումարվում էր տեղանքը ճիշտ օգտագործելու նրանց խելքն ու հնարամտությունը:

Օրինակ՝ հայերը քաղաքներում ապրում էին առանձին թաղամասերում, և թուրքական թաղերից առանձնացված լինելը, ծուռ, նեղ և ոլորապտույտ փողոցները նրանց հնարավորություն էին տալիս նվազագույն ուժերով, ընդամենը 4-5 որսորդական հասարակ հրացաններով դիմադրել հարյուրավոր զինված խուժանին:

Քաղաքներում օտար հյուպատոսների ու միսիոներական հաստատությունների գոյությունը և դրանց դրոշի տակ պատսպարվելու հավանականությունը ջարդերի ժամանակ հույս էին տալիս անպաշտպան հայերին և նրանց մղում դիմադրության:

Ինչ վերաբերում է հայ գյուղացիներին, ապա շատ գյուղերում նրանց դիմադրական հնարավորությունները խիստ սահմանափակ էին ոչ միայն այն պատճառով, որ զինված չէին, այլև համախումբ չէին բնակվում. մեծ մասամբ նրանց բնակավայրերը չրջապատված էին բազմաթիվ քուրդ աչիրեթներով, թուրք և չերքեզ գյուղերով:

Բայց հայ գյուղացիները ինքնապաշտպանության տեսակետից նաև հայտնի առավելություններ ունեին հայ քաղաքաբնակների նկատմամբ:

Գյուղական վայրերի հայերի տները քարից էին, պատերը՝ կրաշաղախով, այդ պատճառով էլ ամրակուռ էին, ունեին մեկից ավելի ելքեր: Ծնորհիվ այն բանի, որ նրանք ավանդաբար սովորություն ունեին ողջ ձմռան ու գարնան ամիսների համար պահեստավորել ուտեստեղեն, ուստի վախ չունեին, թե զինված խուժանի պաշարման դեպքում կմատնվեն սովի: Մնում էր ջրի խնդիրը. կիլիկիահայոց 1909 թ. արհավիրքի օրերին հայ գյուղերում հայերը, որպես կանոն, նախապես հոգ էին տանում և ջուր լցնում ոչ միայն կժերը, այլև բոլոր անոթներն ու եղած մյուս տարողությունները:

Այդ բոլոր առավելությունները, ավանդ, չեզոքանում էին զենք-զինամթերքի բացակայություն կամ պակասի պատճառով: «Այդ պարագաներուն յուսահատ հայր, աւանդ, իր բահով եւ մանգաղով է, որ պիտի դիմէ ինքնապաշտպանութեան՝ սպառազինւած քիւրդի ու թիւրքի դէմ...»¹:

Բայց, եղևիկ, հայերի պարագայում անխուսափելի էր գեհե-նական ճակատագիրը...

ԹՈՒՐԲ – ՔՐԴԱԿԱՆ ՆՈՐ ՎԱՅՐԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայերի զենք չունենալու պայմաններում թուրքերի ու քրդերի վայրագությունները նոր ծավալներ էին ընդունում: Գավառի հայության մեջ տիրում էր մտահոգիչ սարսափ: Բոլորը համոզված էին, թե առաջիկա շաբաթներին լայնածավալ կոտորածներ են լինելու: Եվ այդ սարսափն աճում էր Թուրքիայի պատերազմական անհաջողություններին գուզրնթաց:

Քուրդ բեկերն ու աղաներն այլևս ոչ մի կասկած չունեին, որ Հայաստանում իրենք են դրություն տերը: Սպառազեն քրդերը այլևս իրենց առջև արգելքներ չէին տեսնում նոր արհավիրքներ բերելու անգեհ հայերի գլխին: Իրենց չուրջ սարսափ էին տարածում Ծատախն ասպատակող Ծաքիր աղան և Միր-Մհեն, Ալջավազը և Արճեչն ավերող Հուսեին և Էմին փաշաները, Մոկսի հայերին տանջող Նուրի բեկը:

1913 թ. մարտի վերջերին և ապրիլի առաջին տասնօրյակում քուրդ հրոսակախմբերը, թուրք ժանդարմներն ու գործը հայերին ջարդեցին Բիթլիսում, Երզնկայում, Հաճնում, Էրզրումի վիլայեթում և Թուրքահայաստանի ուրիշ վայրերում:

Ամեն օր հայկական գավառներից Կ. Պոլսի հայոց պատրիարքարան էին հասնում սրտակեղեք լուրեր հայերի սպանությունների, հայ կանանց ու աղջիկներին առևանգելու կամ

¹ «Դրօշակ», № 5, մայիս, 1913, էջ 94:

նրանց պատիվն անարգելու, հայոց ազգային սրբութիւնները համատարած պղծելու մասին¹:

Ռամկավարների ուսանողական միութեան «Վերածնունդ» (Կ. Պոլիս) ամսաթերթը, հղում անելով Մարսելի «Արմենիային», հայտնում էր, որ «Հաճրնէն վեց ժամ հեռուն Կեսարիոյ ճամբուն վրայ գտնուող Կազպէլ կոչուած տեղը տասը հայ որբուհիներու պատիւը կը բռնաբարուի թշնամի վայրենիներու կողմէ», իսկ «կառավարութիւնը չի հաճիր տեղէն իսկ շարժիլ եւ գոնէ ձեւականութեան համար թեթեւ քննութեան մը ձեռնարկել, հակառակ անոր որ հիշեալ որբուհիներուն կ'ընկերանար ամերիկացի միսիոնար մը...»²:

Հայաստանի քրդերը ամենուրեք ասպատակում էին հայկական բնակավայրերը, կտրում էին միջգոյուղական ճանապարհները: Հայ շինականը երկյուղում էր տնից դուրս գալ ու մշակել իր հողակտորը: Մուշից «Դրոշակին» գրում էին.

«Մեր բնակավայրը հետզհետէ կը վերադառնայ իր հին, արիւնոտ օրերուն... Մթնոլորտը դարձեալ մթազնած է:

Այս ձմեռ ձիւն շատ եկած էր: Գիւղացիները կենդանիներու համար սնունդ չունէին ... Բնութեան աղէտը բաւական չէր հայ գիւղացիին, չըջակայ պէկեր եւ աղաներ իրենց տաւարները եւ ոչխարները զանազան հայ գիւղերու վրայ բաժնած են պահելու համար: Հայ գիւղացին իր մէկ հատիկ լծկան եզը չի կրնար պահել, ո՞ւր մնաց ձրի՝ քիւրդ պէկին տաւար ու ոչխարը պահել... Դարձեալ տոկոսով դրամ առնել, սալաֆ ընել ու պէկին կենդանիները պահել... Պատկերը բնաւ հին ըէժիմի օրերէն չի տարբերի:

Մէկ քանի հայ գիւղեր արդէն կը պատրաստին դուրս չարտելու քիւրդերու եւ թիւրքերու կենդանիները: Հետեւանքներու մասին մտածել հնար չէ... Յարաբերութիւնները սաստիկ լարւած են, հայեր, թիւրքեր եւ քիւրդեր դէմ դէմի... Անխուսա-

¹ Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիւ, թղթապ. 1, վավերագիր 11⁹², հավելված՝ «Հայերի վիճակի մասին», 10 թերթ, Փրանսերեն, մեքենագիր:

² «Վերածնունդ», № 10-11, սարտ, 1913, էջ 35:

փելի են ընդհարումներ, սպանութիւններ եւ թալան...»¹:

Ալաշկերտի մոտերքը հոշոտվել էին հինգ հայեր, որոնք հրատարակել էին իրենց գոմերում պահել քրդերի ոչխարները²:

Վերջը չէր երևում արյունամած օրերի...

Հայութեան անտանելի վիճակն այսպես էր նկարագրում Ռուբեն Սևակը «Հայաստան» բանաստեղծութեան մեջ.

«Ո՞վ կուլա այսպես խշտյակիս շեմքին.

– Քույր, դարիբն է, բաց...

Կմախք մը կանցնի դուրսէն լալագին.

– Սովն է, դուռը բաց...

Տապարն է ջախջախ, դռանըս կուրծքին.

– Զարդն է, դուռը բաց...»:

Հայերի դժոխային դրութիւնն առատ նյութ էր հայթայթում եվրոպական, ռուսական և մանավանդ հայկական պարբերականներին, որոնց մեջ թուրքահայերի տազնապալի վիճակի մասին տպագրվող ամենօրյա հոդվածները, տեղեկութիւններն ու լուրերը հուզում ու փոթորկում էին մարդասեր հասարակութիւններին:

“Русское Слово” թերթը 1913 թ. ապրիլի 27-ին տպագրել էր իր թղթակցի հաղորդածը Մուշում լարված դրութեան մասին: Քրդերը և թուրքերը հայերի դեմ գործում են սերտ համագործակցութեամբ, գրում էր նա: Հենց օրերս գինվորական իշխանութեան ներկայացուցիչների և քուրդ պարագլուխների միջև տեղի է ունեցել գաղտնի հանդիպում, որի ընթացքում հայերի կոտորած կազմակերպելու համար բաժանվել են դերերը: Այնուհետև նշվում էր, որ քրդերն ու թուրքերը ամեն տեղ զինվում են, իսկ հայերը խստագոյնս պատժվում են նույնիսկ դանակ պահելու համար: Վիլայեթներում շարունակ շրջագայում են մահմեդական ազիտատորներ, որոնք հայերի դեմ գրգռում են խավար խուժանին: Զինվորական ծառայութեան կանչված հայ երիտասարդներից շատերը փախչում են Ռուսաստան, և դրա

¹ «Դրոշակ», № 5, մայիս, 1913, էջ 94:

² «Աւետարներ», № 29, 19 Հուլիսի 1913 թ.:

Համար կալանավորվում են նրանց հարազատները՝ լինեն մեծ թե փոքր: Բանտերը լիքն են կանանցով և երեխաներով: Թերթի թղթակիցը այնուհետև նշում էր, որ ենթադրյալ հուզումների և ապստամբական շարժումների առաջն առնելու պատրվակով օսմանյան կառավարությունը Ջեյթուն է ուղարկել բազմաքանակ զորք՝ «ճնշելու և զսպելու խոտովարար չրջանը»: Իշխանությունները դարձյալ երկյուղում էին Ջեյթունից՝ մտավախությունամբ, որ հայոց այդ բնակավայրը կարող է կատարել այն դերը, ինչ ժամանակին Բալկաններում կատարել է Չերնոգորիան՝ ստեղծելով ազատության մի փոքրիկ հնոց, որն ապագայում վառեց սլավոն բոլոր ազգերի հայրենասիրական զգացմունքները:

1913 թ. ապրիլի սկզբին «Новое Время» թերթը Մաշկով ստորագրությամբ տպագրել էր Կ. Պոլսից ուղարկած մի ծավալուն հոդված, որում հեղինակը հաղորդում էր Դաշնակցության դեկավար գործիչներից մեկի հետ Կ. Պոլսում ունեցած իր զրույցի բովանդակությունը:

Վերջինս ասել էր, թե սահմանադրության հռչակման օրից իր կուսակցությունը միշտ լիակատար համաձայնությամբ է աշխատել «Միություն և առաջադիմություն» կուսակցության հետ՝ նույնիսկ երբ երիտթուրքերը հայերի ջարդ կազմակերպեցին Ադանայում: Այդ ամբողջ ժամանակամիջոցում Դաշնակցությունն անկեղծորեն պաշտպանել է Իթթիհատին այն սնտի հույսով, թե նա, վերջիվերջո, կբարվոքի բազմաչարչար հայ ժողովրդի վիճակը: Բայց համոզվելով, որ ո՛չ ունիոնիստների (երիտթուրքերի), ո՛չ պահպանողականների (Քյամիլ փաշայի) կուսակցությունը և ո՛չ էլ առհասարակ թուրքական որևէ այլ ուժի միջոցները դեռ սպառված չեն:

Եվ դաշնակցական գործիչը թվարկում է հնարավոր եղանակները.

Առաջին և ամենապարզ եղանակն է՝ Ռուսաստանին միացնել հայաբնակ բոլոր հողերը՝ Մերսին և Ալեքսանդրեթ նավահանգիստները ներառյալ:

Երկրորդ լուծումը՝ Հայաստանի մեջ մտցնել այն ուժի մը, ինչ

Ավստրիան ձգտում է հաստատել Ալբանիայում, այն է՝ ստեղծել ավտոնոմ Հայաստան Ռուսաստանի անմիջական հովանավորության ներքո:

Երրորդ, եթե այս կամ այն նկատառումներով Ռուսաստանն անտարբերություն ցույց տա հայերի վիճակի նկատմամբ, ապա դիմել Գերմանիային և, համաձայն նրա նպատակների, կազմակերպել ինքնավար Հայաստան՝ Գերմանիայի հովանավորության ներքո:

Չորրորդ՝ գործադրել Հայաստանում այն ուժի մը, որ անցյալ դարի 60-ական թվականներից իրագործվում է Լիբանանում, այն է՝ ավտոնոմիա բոլոր մեծ պետությունների երաշխավորությամբ¹: «Բայց հայերի բացարձակ մեծամասնությունը, կրկնել է դաշնակցության ներկայացուցիչը, կողմնակից է առաջին և երկրորդ եղանակներին և մեծ հույսով նայում է մեծահոգի մեծ Ռուսաստանի վրա»²:

Այնուհետև հայ գործիչը Մաշկովին տեղեկացրել էր, որ թուրքերն այդ բոլոր տարբերակները մերժում են և հեզնորեն ասում. «Մեզ ցույց տվեք մի վայր, որ բացառապես բնակեցված լինի հայ տարրով, և մենք չենք հապաղի այդտեղ ուղարկել ընդհանուր նահանգապետներ, ամբողջ վարչությունն ու ոստիկանությունը ստեղծել հայերից: Եվ որովհետև դուք այդպիսի վայր ցույց տալ չեք կարող, ուրեմն ինչպե՞ս մենք մուսուլման հոծ զանգվածների կառավարումը հանձնենք փոքրամասնություն կազմող քրիստոնյաների ձեռքը»³: Թղթակցի զրուցակիցը համոզված էր, որ Ռուսաստանը ոչ միայն կարող է, այլ պետք է ստանձնի դժբախտ հայ ժողովրդի փրկության ազնիվ գործը: «Նա պետք է մեզ օգնության հասնի ոչ միայն հանուն քրիստոնեական իղբալիների, այլև իր սեփական էական շահերի: Մենք համոզված ենք, որ եթե Ռուսաստանը հանդես չգա մեզ պաշտպանելու, այդ կանի նույն ինքը Գերմանիան»⁴:

¹ Տե՛ս «Новое Время», 2 апреля 1913 г.

² Տե՛ս նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

“Новое Время” թերթը, որը տարիներ շարունակ հակահայկական տրամադրություններ բորբոքելու հնոց էր, բայց 1912 թվից ի վեր դարձել էր հայկական հարցի ամենաջերմ պաշտպաններից մեկը, անդրադառնալով Բիթլիսում, Երզնկայում և Թուրքիայի ուրիշ վայրերում տեղի ունեցող հայերի ջարդերին, հեզնանքով նշում էր, որ «Թուրքիայի արտգործնախարարը պաշտոնական հաղորդագրություն մեջ աշխատում է ապացուցել, թե այդ ամենն առաջ են եկել հենց իրենց՝ հայերի գրգռիչ գործողությունների հետևանքով, որոնք, իբր, «առանց որևէ պատճառի հարձակվելով տեղական իշխանությունների ներկայացուցիչների վրա՝ ստեղծում են վտանգավոր անկարգություններ»¹: Նույն թերթը օրեր անց իր առաջնորդող հոդվածում գրում էր, որ Ռուսաստանի պատմական միսիան է Հայաստանը փրկել կործանումից²:

Ռուս լրագրողներից մեկը էրգրումի վիլայեթում գտնված միջոցին այցելել էր տեղական գայմագամին, որը սովորություն ուներ իրեն դասելու կրթված անձանց շարքը: Այդ պահին գայմագամի մոտ էր մտել մի գառամյալ հայ կին, որի երեք որդիները գտնվում էին պատերազմում: Դժբախտ կինը եկել էր գայմագամի մոտ՝ իմանալու իր զավակների մասին: Իրեն ուսյալ ներկայացնող պաշտոնյան, հենց ռուս լրագրողի ներկայությամբ դիմելով խեղճուկրակ հայ կնոջը, ասել էր. «Մի՞թե փողոցում քիչ չներ են թափառում, ա՛յ կնիկ, որ եկել ես տեղեկանալու ինչ-որ երեք չների մասին ...»³:

Հայերի դրությունն աղետալի դառնալու կապակցությամբ Կ. Պոլսի ռուսաց ղեսպան Գիրսը այցելեց սուլթանին, ապա եղավ վարչապետի մոտ: Դեսպանի հանձնարարությամբ նույն հարցով ներքին գործերի նախարար Թալեաթի մոտ գնաց ղեսպանության թարգման Մանդելշտամը: Նրանք թուրք կառավարությունից պահանջեցին կտրուկ միջոցներ ձեռնարկել

Հայաստանում կարգը վերահաստատելու համար: Կառավարությունը ի պատասխան հայտնեց, որ չուտով Հայաստան են ուղարկվելու Բալկաններից վերադարձող զորքեր՝ «անդորրությունը պահպանելու» նպատակով: Եվ դա այն ժամանակ, երբ Հայաստանի տարածքի վրա համարյա չկային թուրք զորքեր, քանի որ նրանք երիտթուրքերի կամքով ուղարկված էին վերջնականապես ջարդուփշուր լինելու Եվրոպական Թուրքիայի վերջին կտորների վրա:

Ուստի կարելի էր պատկերացնել դարերի ընթացքում թուրք զորքերի գործած բաշխրոզուկությունների պատճառով սարսափահար եղած հայի վիճակը, երբ նա իր առաջ ցցված տեսներ «անդորրությունը պահպանելու» նպատակով Հայաստան ուղարկված գաղանացած, «քրիստոնյաների վրեժը լուծելու տենչով լցված մերկանդամ և սովալլուկ թուրք զորքին»:

Երիտթուրք իշխանությունների ուղարկած զորքերի ներկայությունից ավելի պիտի խրախուսվեին քրդերը, ամեն տեսակ ընչաքաղց ճիվաղները և ավելի եռանդով պիտի դիմեին հայ տարրի բնաջնջմանը:

Այդ ե՞րբ էր եղել, որ թուրք կառավարությունը հեշտությամբ ընդունեց մեծ պետությունների ղեսպանների առաջարկը և անմիջապես զորքեր ուղարկեց Հայաստան՝ զսպելու քրդերին: Նրանց հավաքական բոլոր դիմումները միչտ մնում էին անիրագործելի, ուստի որևէ հույս չկար, որ թուրք իշխանությունները այս անգամ ընդառաջ պիտի գնային ղեսպանների առաջարկին, թեև, ինչպես միչտ, հիմա նույնպես վերջիններիս պատասխանել էին՝ «բալի էֆենդի»:

Ոմանք կարծում էին, թե այժմ Բ. Դուռը ստիպված կլինի ի կատար ածելու Եվրոպական ղեսպանների թելադրանքն ու կամքը, որովհետև Թուրքիան այժմ ուժասպառ է: Այդպես մտածողները, իհարկե, որևէ հիմք չունեին, քանզի թուրքը, լինել հաղթական թե պարտված, միչտ անբացատրելի ատելությունը, երկաթով ու կրակով է «խաղաղեցրել» ենթադրյալ ապստամբության դիմած հայերին: Հիմա էլ նույնն էր: Բ. Դուռն մտասևեռումը Հայաստանն էր, դեպի ուր պիտի ուղղվեին Բալկաններից գաղթող իսլամների շարքերը: Այս էր կառավարու-

¹ “Новое Время”, 2 апреля 1913 г.

² Տե՛ս նույն տեղում, 22 мая 1913 г.:

³ Տե՛ս «Մշակ», № 116, 30 մայիսի 1913 թ.:

Թյան դիվային ծրագրի նպատակը:

Թուրքական գաղանացած զորքը չէր, որ Հային պիտի ազատեր քրդի ճիրաններից: Դրա ապացույցը Հայաստանում և Կիլիկիայում ամեն օր շարունակվող դեպքերն էին:

«Ներքին գավառներից (Հայաստանի:– Հ. Ս.) Հասած լուրերը հետզհետե դառնում են ավելի վրդովեցուցիչ»¹,– 1913 թ. ապրիլին գրում էր Ֆրանսիս դը Պրեսանսեն:

Կ. Պոլսի Հայոց պատրիարք Արշարունի արքեպիսկոպոսը ապրիլի 13-ին Բ. Դոանը բողոք ներկայացրեց Հայերի սովորական դարձած՝ սպանությունների, նրանց նկատմամբ չղաղարող խժոժությունների դեմ: Ներքին գործերի նախարար Ադիլ Հաջի բեյը, Հաստատելով այդ իրողությունը, խոստացավ, որ, իբր, անհրաժեշտ միջոցներ կձեռնարկի: Դա հերթական խաբեություն էր:

Հայոց պատրիարքարանի կողմից կառավարությունն ուղղված այդպիսի դիմումներ արվել էին տասնյակ տարիներ շարունակ, բայց Թուրքական սահմանադրության հռչակումից հետո, մանաւանդ վերջին երկու տարին, այդ դիմումները Հասել էին անսովոր չափերի: Միայն 1912 թ. հոկտեմբերից 1913 թ. մայիս ընկած ժամանակաշրջանում Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը Բ. Դոանը ներկայացրել էր 176 թագրի, բայց չէր ստացել ոչ մի պատասխան: «Հեռուից դիտողը միայն զարմանալ կարող է այն յամառութեան վրայ, որով դիմումներ է անում պատրիարքարանը եւ այն անտարբերութեան վրայ, որով Հանդիպում է կառավարություն այդ դիմումներին,– գրում էր «Նոր Հոսանք» պարբերականը:– Ոչ Հայերն էին յուսահատուում, ոչ կառավարությունը: Հայերը մատնանշում էին ապօրինություններ, բերում էին Հարստահարություն, Հալածանքի, բռնագրաւման, բռնի իսլամացման եւ առեւանգութեան նոր ու նոր փաստեր, կառավարությունը միշտ միեւնոյն ձեւով սիրալիր պատասխաններ էր տալիս, խիստ կարգադրություններ էր անում, մի վարիչի

¹ «Ատանայի եղեռնը: Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի» գրքույկի (Կ. Պոլիս, 1919) առաջաբանը (էջ 8):

տեղ ուրիշն ուղարկում եւ միշտ... շարունակում էր իր քաղաքականությունը – անտանելի դարձնել Հայոց կացությունը եւ ստիպել նրանց գաղթելու»¹:

1913 թ. ապրիլի կեսերին Հնչակյանների, սահմանադիր ռամկավարների և դաշնակցականների Կ. Պոլսի ղեկավար մարմինները համատեղ հեռագիր էին հղել վարչապետ Մահմուդ Շեքեթ փաշային, ուր ասված էր, որ նահանգային վարչությունները, ժանդարմերիան, ոստիկանությունը, դատարանը խոսքը մեկ արած, գնալով ավելի ուժգին են հետապնդում Հայությունը, ապօրինի բոլոր միջոցներով մի գլխավոր նպատակ հետապնդում՝ ճգմել, քայքայել և ոչնչացնել Հայ ժողովրդի բովանդակ կենսական ուժերը: Ժանդարմերիան ու ոստիկանությունը միաժամանակ կույր են ձևանում՝ չտեսնելու համար քուրդ չարագործների զինյալ խմբերը, որոնք վխտում են ճանապարհներին: «Դեպի Հայերն ունեցած ամոթալի ու հանցավոր վերաբերմունքը Հայ վիլայեթներն ուղղակի դեպի կործանում է տանում: Մինչև այժմ մենք լուր էինք, նկատի առնելով օսմանյան կայսրության ամբողջականությունը վտանգ սպառնացող ծանր պատերազմը: Այժմ այլևս լուր՝ կնշանակի հանցանք գործել»²:

Նույն կուսակցական մարմինները ապրիլի վերջին հետևյալ նոր հեռագիրն են ուղարկում վարչապետին.

«Ժանդարմերիան և ոստիկանությունը, դատական և քաղաքացիական իշխանությունները կարծես միաբանվել են Հալածելու Հայերին, բոլորովին ճնշելու ու ոչնչացնելու նրանց ազգային զգացմունքը: Կարծես օրենքը սահմանված է քրդական ավագակախմբերի արշավանքները հովանավորելու և անգործունյա իշխանություններին անպատիժ թողնելու համար: Բանտերը լեփ-լեցուն են Հայերով, և նրանց մեջ կան ամենքից Հարգված բազմաթիվ մարդիկ, որոնք ոչ մի բանում մեղավոր չեն: Եթե կործանարար ռեժիմին վերջ տալու համար կառավարությունն անհապաղ միջոցներ ձեռք չառնի, ապա Անատոլիան նույն

¹ «Նոր Հոսանք», № 2, ապրիլ, 1913, էջ 465:

² «Նոր մամուլ» (Երևան), № 23 (81), 12 մայիսի 1914 թ.:

տխուր վախճանին կենթարկվի, ինչպես որ Ռուսելիան»¹:

1913 թ. ապրիլի 18-ին Հայոց ազգային ժողովը կրկին քննեց Անատոլիայի հայերի դրությունը: Վիճաբանությունների ժամանակ ժողովի որոշ խմբակցություններ պատրիարք Արչա-րունուն առաջարկեցին անմիջապես հրաժարական տալ: Վերջապես վճռվեց առայժմ չտալ հրաժարականը և նրա գլխավորությունը հերթական մի պատվիրակություն ուղարկել վարչապետի մոտ, նրան ներկայացնել ընդարձակ հուշագիր՝ վերջին անգամ առաջարկելով դադարեցնել Հայոց ջարդերը:

Շտապ կազմված հուշագրում ասված էր, որ «բարենորոգումներ» բառը սարսափ է ազդում այն տարրերին, որոնք ապրում են մակաբույծի պես՝ ծծելով ուրիշի արյունը, որոնց ողջ կյանքի բնաբանը կողոպուտը, ավազակությունը և բռնությունն է: Եվ եթե պետությունն ուզում է արդիականանալ, ապա նախ պարտավոր էր հաշվեհարդար տեսնել այդ մակաբույծների հետ, որովհետև սրանք են առաջընթացի ամենաոխսերիմ թշնամիները: Ազգային ժողովը որոշեց նաև, որ եթե այս անգամ էլ Բ. Դուռը անուշադրության մատնի հերթական դիմումը, պատրիարքը պետք է հրաժարական տա:

Կազմվեց պատգամավորություն, որն ապրիլի 21-ին դիմեց Բ. Դուռ: Բայց վարչապետ Մահմուդ Շեքեթ փաշան չընդունեց պատվիրակությանը՝ առաջարկելով նույն խնդրով դիմել ներքին գործերի նախարար Հաջի Ադիլին: Սա նույնպես հրաժարվեց ընդունել, ավելին՝ սպառնաց հրաժարական տալ, եթե վարչապետը պնդի իր առաջարկը:

Բ. Դուռն վարձուները խոր զայրույթ առաջ բերեց ազգային ժողովի պատգամավորների և պոլսահայության բոլոր խավերի մեջ: Պատրիարքը անմիջապես հրավիրում է Ազգային ժողովի ընդհանուր ժողովի (Քաղաքական + կրոնական) նիստ, որը փոփոխում է հուշագրի բովանդակությունը՝ այն դարձնելով ավելի կտրուկ, դարձյալ մեծ վեգիրին հանձնելու համար²:

«Հայերին բավարարություն տալու» համար մեծ վեգիրը Ադիլ բեյին առաջարկում է այցելել Հայոց պատրիարքին, բայց վերջինս հրաժարվում է կատարել այդ հանձնարարությունը: Դրանից հետո վարչապետը պատրիարքին հայտնում է, որ չուտով Հայաստան կուղարկվի մի մասնախումբ՝ բաղկացած 9 հոգուց՝ երեքական հայ, թուրք և քուրդ կազմով՝ հայերի ու քրդերի միջև հողային վեճերը քննելու, ինչպես նաև պատգամավորական ժողովի վերջին նիստում ընդունված հաշտարար դատավորների մասին օրենքի գործադրությունը նպաստելու համար: Նա նաև ակնարկում է, որ իր կառավարությունը նախագծել է Հայաստանում մտցնել եվրոպական չափանիշներով ժանդարմերիա, այնպիսին, ինչպիսին ժամանակին կար Մակեդոնիայում՝ Փրանսիական գեներալ Բաուսանի հրամանատարության տակ: Այդ ամենի դիմաց Շեքեթ փաշան պատրիարքին խնդրում է դադարեցնել քարոզչությունը Թուրքիայի դեմ:

Ազգային վարչությունը որոշում է մեծ վեգիրի այդ առաջարկությունը հանգամանորեն քննարկել Ազգային ժողովի հերթական նիստում:

Անդրադառնալով Հայոց պատրիարքի գլխավորած պատգամավորության կողմից Բ. Դուռնը ներկայացվելիք հուշագրին՝ Պետերբուրգի հեռագրական գործակալությունը հաղորդում էր.

«Այն հուշագրում, որ այս օրերին Հայոց պատրիարքը ներկայացնելու է Բ. Դուռնը, մեկ առ մեկ թվարկված են Հայաստանում և Կիլիկիայում վերջին երկու ամսում գործված սխտեմատիկ գազանությունները, որոնք հետևանք են կենտրոնական կառավարության անտարբեր վերաբերմունքի և այն հանգամանքի, որ գազանությունները խրախուսվում են տեղական իշխանությունների կողմից: Միաժամանակ բողոք է հայտնվում պատրիարքարանի նկատմամբ Բ. Դուռն կողմից տաժած անվատահույս համար, ինչպես նաև ներքին գործոց նախարար Հաջի Ադիլի դեմ, որը խուսափել է ընդունել իրերի դրությունը պարզելու եկած հայ պատգամավորներին: Հուշագրում նաև խնդիր է բարձրացված Հայաստանում հանգստություն ապահովելու, ավազակությունները դադարեցնելու և հանցագործներ-

¹ «Նոր մամուլ» (Երևան), № 23 (81), 12 մայիսի 1914 թ.:

² Նույն տեղում:

րին պատժելու համար ձեռք առնել կտրուկ միջոցներ: Հուշագրի վերջում մատնանշված է, որ եթե խնդիրը այս անգամ էլ ուշադրություն չառնվի, պատրիարքն իր վրայից վերցնում է պատասխանատվությունը»¹:

Իսկ Հաջի Ադիլը շարունակում էր պնդել իր հրաժարականը և տկար լինելու պատճառաբանությունները՝ փակվել էր տանը: Ի վերջո նա հրաժարական տվեց՝ հայկական խնդրի պատճառով: Վարչապետի պահանջով մայիսի սկզբին նա հետ վերցրեց հրաժարականը:

4. Պոլսի Հայոց ազգային ժողովը պահը հարմար չգտավ պատրիարք Արչարունու հրաժարականի համար: Ավելին, ժողովի կազմն ուժեղացվեց մի քանի նշանավոր գործիչներով:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԵԾ ՎԵՁԻՐ ՄԱՀՄՈՒԴ ՇԵՎՔԵԹ ՓԱՇԱՅԻ ՄՈՏ

1913 թ. ապրիլի 24-ին 4. Պոլսի Հայոց պատրիարքարանի Ազգային ժողովը ձևավորում է հինգ հոգուց բաղկացած հանձնախումբ, որի մեջ ընդգրկվում են պատրիարքը, երկու եպիսկոպոս, Ազգային ժողովի նախագահը և փոխնախագահը: Հանձնախումբը, հայկական գավառներում տիրող վիճակի մասին կազմելով հուշագիր, ապրիլի 27-ին ներկայանում է մեծ վեզիր Մահմուդ Շեքեթ փաշային:

Հուշագրով վարչապետի ուշադրությունն էր հրավիրվում հնարավոր վերահաս աղետի տազնապալի նշանների վրա, աղետ, որը կարող էր նախորդներից շատ ավելի ահավոր լինել: Փաստաթղթում նշված էր, որ մահմեդական զանգվածների գիտակցություն մեջ անարգել ներարկվում է այն համոզումը, թե կայսրությունը պատուհասած բոլոր աղետների մեղավորները քրիստոնյաներն են: Այդ է պատճառներից մեկը, որ շարունակվում են հայերի սպանությունները, թալանը, բռնի մահմեդակա-

¹ АВПРИ, ф. «Политархив», 1913, д. 3461.

նացումը և ամեն տեսակի այլ բռնություններ, իսկ դրանց մեղավորները ոչ միայն չեն պատժվում, այլև խրախուսվում են: Ի ապացույց այդ հաստատումների՝ պատրիարքը բերում է մի շարք կոնկրետ փաստեր: Օրինակ՝ 1909 թ. Ադանայի ջարդի կազմակերպիչներից շատերը նորից հայտնվել են այդտեղ, բնակչությանը գրգռում են քրիստոնյաների դեմ՝ ստանալով տեղի նահանգապետի հովանավորությունն ու աջակցությունը: Միայն Վան քաղաքի բանտում տառապում է 150 հայ՝ մահմեդականներ սպանելու սուտ մեղադրանքով, մինչդեռ հայ հոգևորականներ և ուսուցիչներ սպանած մահմեդական հանցագործներն արդարացվել և ազատ են արձակվել: Իշխանությունները հայերից փութաջանորեն խլում են ունեցած քիչումիչ գեները, մինչդեռ վերջիններիս թշնամիները բացահայտորեն շարունակում են գինվել: Շատ հայեր, ջարդերից երկյուղ կրելով, հեռանում են իրենց հողերից ու գնում քաղաքներ: Ի լրումն այդ ամենի՝ կառավարությունն ուժեղացրել է հայաբնակ մարզերի բնակեցումը մահմեդական գաղթականներով¹:

Հուշագրում մեծ տեղ էր հատկացված թուրք չինովնիկների ու դատավորների գործելակերպին, որոնք, ի վիճակի չլինելով հասկանալու ժամանակի պահանջները և կայսրության իրական շահերը, քրիստոնյաների ոչնչացման մեջ են տեսնում թուրք ժողովրդի գլխին եկած աղետներից փրկվելը: Հուշագիրը մեծ վեզիրից պահանջում էր հրապարակել հրահանգներ, որոնք կահմանեն պաշտոնական անձանց պատասխանատվությունն իրենց թողտվությամբ կատարված բոլոր ապօրինի գործողությունների համար, ինչպես նաև հրապարակել կառավարական հատուկ հաղորդագրություն, որը կհերքի մահմեդական զանգվածում հայերի հանդեպ ծայր առած թշնամական կարծիքները:

Բնութագրական է, որ հուշագիրը սահմանափակվում էր հայության ծանր վիճակի նկարագրությունով և ոչ մի խոսքով չէր անդրադառնում Հայաստանի բարեփոխումների հարցին:

¹ АВПРИ, ф. «Политархив», г. 1913, д. 3461, л. 13.

Այս հանգամանքը խիստ անհանգստացրել էր մեծ վեզիրին՝ նրա մեջ կասկած գցելով, թե հայերը Եվրոպայից ակնկալում են լուրջ միջամտություններ և հենց այդ պատճառով ավելորդ են համարում Բ. Դոան հետ որևէ բանակցություն: Այդ էր պատճառը, որ պատգամավորներին լսելուց հետո Մահմուդ Շեքեթ փաշան ինքը խոսք բացեց բարեփոխումների մասին, բայց պատրիարքը չարձագանքեց՝ ասելով, թե պատգամավորությունը լիազորված չէ այս հարցով բանակցելու:

Ինչ վերաբերում է հայերի գանգատներին, ապա մեծ վեզիրն ընդունեց, որ դրանք զգալի չափով հիմնավորված են: Նա չժխտեց հայկական գավառներում հուզումների առկայությունը և հայտարարեց, թե կառավարությունը վճռական կլինի վերջ դնելու ներկայիս վիճակին՝ պաշտոնանկ անելով անարժան չինովնիկներին: Մերժելով հայերի հասցեին տարածվող հերյուրանքները՝ վարչապետն ամենաջերմ արտահայտություններով գովեց պատերազմի ժամանակ հայ զինվորների հերոսությունն ու անձնուրացությունը:

Այդ հաստատումից անմիջապես հետո մեծ վեզիրը հույս հայտնեց, թե հայերը ավելորդ բողոքներով խնդիր չեն բարձրացնի Բ. Դոան առջև և ամեն կերպ կաջակցեն նրա ջանքերին:

Պաշտոնական «Օսմանյան գործակալությունը» մամուլում հաշվետվություն էր տպագրել վարչապետ Մահմուդ Շեքեթ փաշային հայոց պատրիարքության պատգամավորության այցելության մասին:

Սույն հանդիպման մասին արտգործնախարար Ս. Սազոնովին մանրամասն հաղորդել էր դեսպան Գիրսը 1913 թ. մայիսի 6-ի իր № 88 ձեպագրով¹:

Մահմուդ Շեքեթ փաշայի հետ հայ պատվիրակության հանդիպումից շատ չանցած՝ տեղի ունեցավ Ազգային ժողովի նոր նստաշրջանի բացումը, որով պատրիարքը հանդես եկավ ընդարձակ ելույթով՝ կրկնելով սովորական դարձած գանգատը հայերի անտանելի վիճակից ու կառավարության անզործու-

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1913, д. 3461, л. 13 об. - 14.

նեությունից: Դա պատրիարքարանին ստիպեց հրաժարականի հերթական դիմում ներկայացնել:

Ազգային ժողովը միաձայն մերժեց այդ պահանջը և Հայկական վարչությունն աջակցելու համար զանազան խմբակցությունների ներկայացուցիչներից ընտրեց Հինգ հոգուց կազմված մի նոր հանձնախումբ՝ Գրիգոր Զոհրապ (ազատական), Վահան Թեքեյան (ոսմկավար), Հարություն Շահրիկյան (դաշնակցական), Դավիթ Տեր-Մովսիսյան (կենտրոն), Պետրոս Գալֆայան (հնչակյան) կազմով²:

Նիստից հետո Արշարունի պատրիարքի և Դաշնակցություն Կ. Պոլսի կոմիտեի միջև կայացավ ժամանակավոր համաձայնություն՝ համագործակցաբար աշխատել Բ. Դոան և մեծ պետությունների ու կառավարությունների հետ հարաբերվելիս²:

ՔՐԴԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՆԱԽՆԵՐԳԱՆՔԸ

Հայերի անելանելի վիճակն օր օրի ոգեչնչում էր քրդերին, բայց մյուս կողմից քուրդ ղեկավարների մոտ տազնապ կար, թե մեծ պետությունների «հնարած» հայկական բարենորոգումները կարող են կանգնեցնել Հայաստանի կործանման ընթացքը, մի բան, որ չէր տեղավորվում նրանց հաշիվների ծիրում:

Դիվանագիտական շրջաններում հայկական բարենորոգումների ուղղությամբ ծավալվող աշխատանքներին հակազդելու համար իշխանությունների խրախուսանքով 1913 թ. գարնանը քրդերը սկսեցին «արդարություն համար» շարժումը*:

¹ Տե՛ս «Մշակ», № 97, 7 մայիսի 1913 թ.:

² Տե՛ս նույն տեղում:

* Հայաստանում բարենորոգումների մասին որևէ խոսակցություն անգամ առաջ էր բերում քրդերի հակազդեցությունը, և դա նորություն չէր: Դեռևս 1901 թ. Վանում ոռոսական փոխհյուպատոս Վ. Մանսկին գրում էր. «Անկասկած, Թուրքիայի համար միանգամայն ձեռնտու էր քրդերի շարժումը հակազդելու հայկական շարժմանը, կարելի է բերել մի քանի փաստեր, որոնք ապացուցում են, որ Թուրքական իշխանությունները... օգտվում էին քրդերի

Շարժման գլուխ էր անցել քուրդ տոհմիկ և ավատական բեղրիխանների հետնորդ Աբդուլ Ռեզակ բեյը: Նա նաև ոչ շատ առաջ ստեղծված «Քուրդիստան» կուսակցության ղեկավարն էր:

Ռեզակը, երիտթուրք կառավարության կողմից հալածված լինելով, ստիպված բնակություն էր հաստատել թուրք-պարսկական սահմանի մոտ և իր կենտրոնատեղին էր դարձրել Խոյ գավառի անմատչելի բնակավայրերից մեկը: Այստեղից նա հսկում էր Թուրքիայի քրդության մեջ սկիզբ առած ազգային շարժման զարգացումը, հրահանգներ էր տալիս իր կողմնակից աշիրեթներին: Նրա հսկողությամբ կենտրոնատեղիում պատրաստվում էին քուրդ պրոպագանդիստներ և ուղարկվում «երկիր»:

Թուրքաց պետական և իրավական պայմանների պատճառով ավազակաբարո նկարագիր ունեցող քրդերը միաժամանակ բնությունից խելոք էին և ընդունակ: Եվրոպական Թուրքիայում օսմանյան բանակների կրած պարտությունների հետևանքները, բնականաբար, չէին կարող վիրպել նրանց աչքից: Քրդերը տեսան, թե թուրքական մեծադղորդ համբավ ունեցող ուժն ինչպիսի արագությամբ խոնարհվեց ու ծնկի եկավ բալկանյան փոքր պետությունների հարվածների տակ, և սկսվեց կայսրության լուծարման գործընթացը:

Այդ ամենին ականատես քուրդ ղեկավարներն ըմբռնում էին, որ թուրք պետության այդ աստիճանական անկումը հիմնականում տեղի է ունենում բալկանյան սլավոնական ուղղափառ պե-

այդ հանդիպակաց շարժումից...» (В. Т. Маевский, Ванский вилает, Военно-статистическое описание, Тифлис, 1901, с. 165): Ռուսական բանակի գլխավոր շտաբի անդամ փոխգնդապետ Տոմիլովը 1904 թ. Ասիական Թուրքիայում կատարած ճամփորդության տպավորությունների տակ գրում էր, թե թուրքական կառավարողները աշխատում են քրդերի մեջ ներարկել այն միտքը, թե հայերը նպատակ ունեն ինքնավարություն ձեռք բերել, որպեսզի «իրենց համար ատելի մահճեղականներին անպատիժ չահագործեն ու տնտեսապես ստրկացնեն» (տե՛ս «Отчет о поездке по Азиатской Турции генштаба подполковника Томилова в 1904 г.», ч. 1, СПб, 1907, с. 294):

տություններին Ռուսաստանի կողմից ցույց տրվող բարոյական աջակցությամբ: Այստեղից էլ ծագում էր այն ձգտումը, որ 1913 թ. սկզբներից քրդերի մոտ առաջացել էր դեպի Ռուսաստանը: Որքան քրդերի մոտ զնալով խոր արմատներ էր նետում ռուսասիրության տենդենցը, այնքան ավելի էր աճում Ռուսաստանից աջակցություն ակնկալելու նրանց հույսը: Մյուս կողմից, Փոքր Ասիայում մեծապես պակասել էր թուրք զորքերի թիվը, քանի որ երիտասարդությունը տարել էին կովի դաշտ: Դա խիստ բարենպաստ պայմաններ էր ստեղծել քրդերի կողմից պետության նկատմամբ քաղաքացիական անհնազանդություն դրսևորելու համար:

Այդ ամենը լավ էր հայկական հարցի հնարավոր հաջողության համար, բայց ամբողջ դժբախտությունն այն էր, որ քրդերն ինքնավարություն էին ուզում ոչ միայն Քուրդիստանում, այլև թուրքահայ նահանգների վրա:

Քուրդ պատմաբան Մեվլանզադե Ռիֆաթը գրում էր, թե Հայաստան կոչվածը իրականում Քուրդիստան է, որ երկրի հին անունը «Ուրարտու» է, որը հենց «քուրդ» բառն է, հետևաբար հայերը սերված են քրդերից: «Աւետաբեր» թերթի տեսաբան Ա. Շմավոնյանը գրում էր՝ կասկած չկա, որ այդ վարկածի հեղինակը իրեն հատուկ տրամաբանությամբ կարող է «ապացուցել», թե «ամերիկացիք քիւրտերէն սերած են»¹:

1913 թ. ապրիլին քուրդ ցեղապետերը թուրքական կառավարությանը պահանջ ներկայացրին՝ կայսրության էրզրում, Բիթլիս, Վան, Մամուրեթ ուլ-Ազիզ և Դիարբեքիր ասիական հինգ նահանգներից, այսինքն՝ Թուրքահայաստանի համարյա ամբողջ տարածքի վրա ստեղծել «Շարք ուլ-Ղարիբ» անունով մի առանձին քրդական փաղիչահույություն:

Ցեղապետերը միաժամանակ կառավարությանը գրավոր հայտնել էին, որ քրդերը ցանկանում են՝ այդ ինքնավարությունը ստեղծվի բարենորոգումների այն ծրագրի հիման վրա, որ նախկին մեծ վեզիր Քյամիլ փաշան մշակել էր Սիրիայի համար՝

¹ «Աւետաբեր», № 6, 8 փետրվարի 1913 թ.:

այն պայմանով, որ բոլոր եկամուտները, բացի մաքսային, փոստ-հեռագրային և զինվորական ծառայությունից, ծախսվեն տեղական կարիքների վրա: Ըստ նոր ծրագրի՝ խիստ սահմանափակվելու էին թուրքական կառավարության իրավունքները. նա կարող էր քրդական ինքնավարության գործի հրամանատարությունը ստանձնել միայն պատերազմի ժամանակ, հաստատել բնակչությունից ընտրված նահանգապետին և դրամ կտրել:

Պահանջները չկատարելու դեպքում քրդերը սպառնում էին անջատվել Թուրքիայից: Վարչապետ Մահմուդ Շեքեթ փաշան խոստացել էր հնարավոր ամեն բան անել՝ նրանց պահանջի մեծ մասը բավարարելու համար:

Բաղրխան զադե Աբդուլ Ռեզակ բեյը պարագլուխն էր քրդական շարժման այն հոսանքի, որի ներկայացուցիչները սիրահոգի հանդես էին գալիս ուսուցանել քաղաքականության պաշտպանությունը և ցանկանում էին Ռուսաստանի տիրապետության և նրա հովանու տակ ավերված Հայաստանի հողի վրա ստեղծել քրդական իշխանապետություն:

Վերլուծելով օսմանյան կայսրության քաղաքական իրավիճակը, մասնավորապես տրիպոլիտանական և բալկանյան պատերազմներից հետո Փոքր Ասիայում ստեղծված կացությունը՝ Աբդուլ Ռեզակն իր նստավայրից հանդես եկավ մի հայտարարություն, որը պարսկերեն տպագրվեց ու տարածվեց քրդական բոլոր աշիրեթներում:

Հայտարարության հիմնական մասը նվիրված էր այն հարցին, թե քրդերն ինչ պետք է անեն խոչընդոտելու համար Հայկական հարցի լուծումը:

Հայտարարության մեջ ասված էր.

«... Կառավարությունը, տեսնելով, որ այլևս գուրկ է ինքն իրեն պաշտպանելու ու հոգալու ուժից, ակամա ընկավ Մարոկկոյի և Իրանի ստորացած աստիճանին և մնացած երկրները ձեռքից բաց չթողնելու հույսով ապավինեց Անգլիայի պաշտպանությանը՝ համաձայնելով Հայաստանին ինքնավարություն տալ:

Ստամբուլն ու Անատոլիան պահելու համար Օսմանյան պետությունը զոհեց քրդությունը: ... Օսմանցին Քուրդիստանից երես դարձրեց և Եվրոպային գերի եղավ:

Մենք՝ քրդերս, եվրոպացիների կարծիքով, նույնիսկ նրանց զարգացած ու գիտուն մարդկանց կարծիքով և նրանց բառաբանների բացատրությունները իբր թե կես-վայրենի, խաչնարած և կողոպուտով, թալանով ապրող մի ցեղ ենք: Իսկ հայերը Եվրոպային մատուցած իրենց հիշատակագրերով և խնդրագրերով հաջողացրել են ճանաչվել որպես քաղաքակրթված ազգ, մինչդեռ մենք՝ քրդերս, մեր քաղաքացիական իրավունքները ճանաչելու և պահանջելու ճարպկություն չենք ունեցել: Եվրոպան մեր հեռագրերով, ճառախոսություններով և դիմումներով չպիտի ազդվի: Ուստի մենք էլ զեն ի ձեռին պիտի ենթարկվենք մեծ պետությունների վճիռներին: Հայաստան կազմելու համար որոշված վիլայեթների տիրող և բազմամարդ ցեղը մենք ենք, քանի որ հազար տարի է ինչ հողերով, պատմական ավանդություններով և բազմաթիվ իրավունքներով Հայերից ու թուրքերից շատ ավելի առաջ ենք տեր եղել այս երկրին: Թեև այժմ օսմանյան կառավարությունը մեզ թողել է բախտի քմահաճույքին, բայց մենք՝ քրդերս այս հողի վրա ամենից ավելի իրավունք և արժանիք ունենք վայելելու ինքնավարություն»¹:

Ռեզակ բեյը ցեղակիցներին հավատացնում էր, որ իրենք միայնակ չեն օսմանյան կառավարության և հայերի դեմ մղվող պայքարում, որ, իբր, իրենց հավատարիմ դաշնակիցն է նաև ասորի ժողովուրդը, որը մեծապես շահագրգռված է ապրել քրդական ինքնավարության կամ անկախ պետության մեջ: «Մեր քրիստոնյա ասորի եղբայրներն իրենց նկարագրով, ցեղային ընդունակություններով և նիստուկացով այժմ մեզ հետ միացած և դաշնակցած են, - ասված էր հայտարարության մեջ, - հետևաբար ո՛չ մենք և ո՛չ էլ մեր ասորի հայրենակիցները չենք ընդունում հայերին տրվող շնորհները և մեր քուրդ ու ասորի անունների արհամարհումը»²: Ռեզակի խոսքն այն ժողովրդի մասին էր, որը, լինելով քրիստոնյա, նույնպես ենթակա էր քրդերի բարբարոսական հալածանքներին, մշտական կեղեքումներին ու պարբերական ջարդերին:

¹ Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 8, վավ. 11, թ. 36:

² Նույն տեղում, թ. 373:

Ապա, իրեն վերապահելով քուրդ ու ասորի ժողովուրդների անունից հանդես գալու իրավունքը, Ռեզակ բեյն ազդարարում էր. «Մեր արդար իրավունքները պաշտպանելու համար մենք ոչ թե պիտի դիմենք վրեժի ու թալանի, նույնիսկ չպիտի վշտացնենք ո՛չ իսլամ, ո՛չ քրիստոնյա, ո՛չ հայ կամ հրեա մի որևէ անհատի, այլ ասորի եղբայրների հետ միացած և մեր ձեռքերը մեր զենքերի վրա պատրաստ դրած՝ պիտի հետևյալը հայտարարենք Եվրոպային.

«Մենք հակառակ չենք ձեր որոշումներին, քանի որ օսմանյան կայսրությունն էլ Իրանի և Մարոկկոյի թագավորներ Ահմեդ Ռիզա շահի և Մուլլա Հաֆիդի նման իջավ ստոր աստիճանի վրա, հետևաբար մենք էլ հնազանդվելով աստծո կամքին, պիտի մտնենք Եվրոպայի կոնտրոլի տակ: Սակայն նկատի պիտի առնել, որ մենք՝ քրդերս և ասորիներս, վերջապես, ազգեր ենք, մենք էլ որպես ազգեր իրավունքներ ունենք: Ուտնատակ մի տվեք այդ իրավունքները, որպեսզի մենք ձեր վճիռներին հնազանդվելուց հետո՝ օժանդակենք ձեզ մեր երկրի բարենորոգության գործում»¹:

Քրդերի շուրջը ստեղծված իրավիճակը ներկայացնելուց ու նրանց ազգային նպատակներն ու օրվա խնդիրները բացատրելուց հետո Ռեզակ բեյն իր ցեղակիցներին դիմում էր կոնկրետ գործողությունների հետևյալ կոչերով.

«Ո՛վ քուրդ եղբայրներ: Եթե մենք այժմյանից չկարողանանք ապահովել մեր իրավունքներն ու դատի հաջողությունը, ահա գուշակում եմ, որ Եվրոպայի ծրագրած հայկական առանձնաչնորհումների իրականացման մեջ առաջին քայլը պիտի լինի մեր ունեցած զենքերի հավաքումը, սեյիդների, շեյխերի, ուլեմների, բեգերի և աղաների բնաջնջումը: Իսկ դրանից հետո ո՞վ պիտի պաշտպանի անլեզու և օրենքից անտեղյակ քրդերի հողային և անհատական իրավունքները գիտությունով հզորացած, բայց անբարոյական հայերի դեմ:

Ո՛վ քրդեր, համաձայն եք, որ ձեր ամբողջ քաջությունը, ձեր

¹ Մատենադարան, Արշակ Արպոյաճյանի արխիվ, թղթ. 8, վավ. 11, թ. 37:

կրոնը, ձեր ազգությունը անարգանքի ենթարկվի, ցանկանո՞ւմ եք, որ ձեր հայրենիքը (այսինքն՝ Հայաստանը: – Հ. Ս.) ոտնակոխ լինի և ձեր ցեղը փչանա:

Ուրեմն լսեցեք և տեղեկացեք, որ մեր հավատքն ու կրոնը, մեր քրդական ազգությունն ու հայրենիքը արյան գնով պաշտպանելու համար և հայերին ռայա-ստրուկ չլինելու համար բոլոր քուրդ սեյիդները, շեյխերը, ուլեմաները, ազնվական ցեղապետները, խելացիները, բեկերը, աղաները, կարդացողներն ու դիվանագետները, ջանֆիղաներն ու ռազմիկները, հարուստներն ու աղքատները երդում անելուց հետո կազմել են մի նշանավոր կուսակցություն: Ամբողջ քրդությունը մի սիրտ և մի հոգի է դարձել:

Ուստի այն քուրդը, որ իր սրտում կրոնական հավատքի զգացում ունի և գլխում էլ՝ հայրենյաց սիրտ ու ազգության գաղափարի մտածմունք, իր ուժերի չափով թող աշխատի զինվել և քուրդ ռազմիկներին օգնության փութալ:

Քրդերից ջուկ, ո՛վ իսլամ և քրիստոնյա հայրենակիցներ, մեր գաղափարակից բոլոր եղբայրներ, ձեզ էլ հրավիրում ենք, որ աջակցեք, օգնեք մեզ: Քուրդ զինվորներ և սպաներ, քուրդ պաշտոնյաներ, ձեզ բոլորիդ էլ կոչ ենք անում գալ ու միանալ մեր նպատակին: Նկատի առեք, որ հենց այժմ իսկ Ռուսների 65000 քուրդ սպաներն ու զինվորները անգործ ու անոթի են մնացել: Քուրդիստանի վեց նահանգները հայերին տրվելուց հետո, դուք էլ անոթի ու անպատասպար պիտի մնաք, ո՛վ զինվորներ, սպաներ և պաշտոնյաներ: Այն ժամանակ ձեր կանայք ու զավակները փողոցի քարերի վրա պիտի նստեն առանց հացի ու ապրուստի: Եվ դու, ո՛վ քրդական ազգ, պիտի վռնդվես հայրենիքից և գաղթականության ճանապարհների վրա մատնվես կորստի և անհետացման:

Այն ժամանակ, ինչպես Ռուսների, Կրետեի և մյուս իսլամական կորցրած երկրներում, այստեղ էլ մեր մզկիթները, սրբավայրերն ու տները, մեր պալատները թշնամու ոտքերի տակ պիտի պղծվեն ու փոշի դառնան»¹:

¹ «Մշակ», № 246, 5 նոյեմբերի 1913 թ.:

1913 թ. մայիսին Բիթլիսի և Վանի շրջանների քրդերը հայտարարեցին, թե հրաժարվում են հարկեր վճարել կառավարությանը: Նրանք շատ տեղերում արտաքսում էին թուրք պաշտոնյաներին: Եվ եթե դեռ ապստամբություն չէր բռնկվում, դա հիմնականում նրանով էր բացատրվում, որ քրդերի ներքին անվերջ տարաձայնությունները չէին հարթվում:

1913 թ. մայիսի կեսերին հրավիրվել էր քուրդ ցեղապետերի համագումար՝ ապստամբական մի ընդհանուր ծրագիր մշակելու համար, բայց տարաձայնությունների պատճառով դադարեցվել էին աշխատանքները:

Իսկ հայերի դեմ ուղղված ոճրագործությունները նոր թափ էին առնում: Հուզված վիճակ էր տիրում հատկապես Տարոնի դաշտում: Այնտեղ քրդերը կրկին սկսել էին ալան-թալանը: Ամեն օր այրվում էին դեզերը և ցորենի բարդոցները, մարդիկ կողոպտվում էին խմբերով, սպանություններին վերջ չկար: Բողոքները զանգվածային դարձան, բայց անօգուտ: Շատ տեղերում կրկին բազմախումբ գողթելու շարժումներ սկսվեցին: Հայերի կողմից ոչ մի տեղ որևէ դիմադրություն չկար:

Առաջ անցնելով ասենք, որ ելնելով վերոբերյալ հայտարարության դրույթներից՝ Բաղրխան զազեի Աբդուլ Ռեզակ բեյի գլխավորած «Քուրդիստան» կուսակցության ղեկավարությունը 1913 թ. հոկտեմբերին ընդունել էր հետևյալ որոշումը.

«1. Քանի որ օսմանյան կառավարությունը ստիպման տակ և վախից է համաձայնել Հայաստան կոչված վեց վիլայեթների բարեկարգությունը միայն հայերին նպաստավոր ձևով իրագործելուն, ուստի պիտի բողոքենք այս վճռի դեմ, մինչև որ վեց վիլայեթների մյուս ազգերն էլ նպաստավորվեն: Իսկ մինչ այդ բոլոր քրդերը պարտավոր են միանալ և զենքի ուժով վռնդել վիլայեթների, գավառների և գյուղերի օսմանցի պաշտոնյաներին ու նրանց փոխարեն քուրդ ազգի կողմից նշանակված պաշտոնյաներ կարգել, հիմնելով ժամանակավոր կառավարչություններ՝ քուրդ նախագահներով:

2. Պաշտպանել և որպես եղբայր ընդունել այն պաշտոնյաներին ու զինվորականներին, որոնք օժանդակում են մեր գործին, իսկ, ընդհակառակը՝ մեր դեմ պայքարողներին, որպես կրոնի և

հայրենիքի դավաճանների, սպանել՝ իսկույն և եթ:

3. Մահվան ենթարկել այն դավաճան քրդերին, որոնք գաղտնի կամ հայտնի օգնում են մեր թշնամիներին: Գրավել մահապատժի ենթարկված քրդերի ունեցվածքը:

4. Ամեն մի աշիրեթ պարտավոր է կովոդներ և ներկայացուցիչներ ուղարկել քրդական ապստամբության կենտրոնին:

5. Կազմել ժամանակավոր կառավարություն, որը կոչված լինի պաշտպանել մեր պահանջներն ու իրավունքները, եթե հարկ լինի բանակցել, կարգադրել ընթացիկ խնդիրները և կառավարել քրդությունը:

6. Քուրդիստանի ժամանակավոր կառավարությունը, ինքն իրեն Եվրոպային ձանաչեցնելու և իրավունքները պաշտպանելու համար, պետք է մի պատգամավորություն ուղարկի եվրոպական ղիվանագիտական մարմինների և դեսպանաժողովների մոտ»¹:

Քրդական շարժման մի այլ հոսանք, որը կողմնակից էր օսմանյան պետության հետ գործակցելուն, այդ օրերին Կ. Պոլսում սկսել էր հրատարակել «Ռոժե-Քուրդ» անունով թերթը: Նրա խմբագիրն էր թուրքական պառլամենտում Դերսիմից պատգամավոր ընտրված Լուիթֆի Ֆիքրին, որն իր խմբագրական հոդվածներում բողոքում էր տիրող այն մտայնության դեմ, որն իսլամականության անվան տակ ուզում էր ձուլել զանազան ազգերին (արաբ, քուրդ, լազ և այլն) թուրքերի մեջ:

Հայկական հարցում Լուիթֆի Ֆիքրին լիովին համերաշխվում էր Աբդուլ Ռեզակի հետ, նա նույնպես ուրանում էր Հայաստանի աշխարհագրական գոյությունը, սկզբից մինչև վերջ Քուրդիստան էր կոչում այդ երկիրը, այն համարում պապերից ժառանգած սեփականություն:

Ահա սրանք էին քրդական շարժման նախերգանքն ավետող փաստաթղթերն ու ղեպքերը, որոնք լավագույն կերպով պարզում էին «քրդական շարժում» կոչված հոսանքի բոլոր ներքին ձգտումներն ու տենչերը: Ինչպես տեսնում ենք, քրդական

¹ «Մշակ», № 246, 5 նոյեմբերի 1913 թ.:

ազգային շարժումն իր սկզբնավորման առաջին իսկ քայլերից հանդես եկավ որպես հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի խափանմանն ուղղված ուժ, որի գերագույն նպատակն էր վերացնել թուրքահայությանը նրա հազարամյակների կենսատարածքից և սեփականացնել Հայաստանը:

Թուրքական իշխանությունների աջակցությամբ հանդես գալով որպես հակազդեցություն հայկական բարենորոգումների ծրագրին՝ նորածագ քրդական շարժումը գնալով ծավալվում էր՝ ձևականորեն ձեռք բերելով հակակառավարական երանգներ, բայց բովանդակությամբ միշտ մնալով որպես հայ ժողովրդի հայրենիքը սեփականացնելուն ուղղված շարժում: Ամեն գնով ձեռք գցել Հայաստանը, այս էր շարժման կարգախոսը: Միանգամայն ճիշտ էր նկատել Փարիզի «L'Eclair» լրագիրը՝ 1913 թ. մայիսի 8-ին գրելով. «Քրդերն ավելի շուտ կհրդեհեն ամբողջ Հայաստանը, քան կհամակերպվեն այնտեղ բարենորոգումներ կատարելու գաղափարի հետ»:

ՎՐԵԺՆՆԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չնայած դրան՝ հայ երիտասարդներից ոմանք, չզիմանալով քրդական չղաղարող ոճրագործություններին, Հայաստանի այս կամ այն գավառում դիմում էին անհատական վրեժխնդրական գործողությունների:

Կարկառի գավառի Բերկրի գյուղի բնակիչների մեծ մասը հայեր էին, փոքրամասնությունը՝ քրդեր: Վերջիններին թվում իր չարագործություններով հոչակ էր ձեռք բերել Աբբաս աղան, որը արդուհամիդյան ռեժիմի ժամանակ սպանվել էր գյուղի հայ երիտասարդներից մեկի ձեռքով: Սահմանադրությունից հետո, երբ ամբողջովին վերացել էին հայ հեղափոխական խմբերի գործողությունները, Աբբաս աղայի երկու տղաները՝ Կասրմը և Քեամիրը որոշեցին իրենց հոր վրեժը լուծել: Ճանապարհներին դարանակալելով՝ նրանք կողոպտում և սպանում էին հայ անցորդներին, որոնցից մեկը եղավ Բերկրիի ռես թովմասը:

Համոզվելով, որ երկու եղբայրների ոճրագործությունները

գնալով ավելի ու ավելի մեծ ծավալներ են ընդունում, գավառի երիտասարդներից Մկրտիչն ու Արչակը օրը ցերեկով հարձակվում են չարագործների վրա, սպանում նրանց և բարձրանում լեռները, ինչպես անում էին քաջագուն հայ ֆիդայիները արդուհամիդյան ռեժիմին ցույց տված դիմադրություն օրերին: Հարևան Եղեգիս գյուղում գտնվող ոստիկանական ջոկատը սարսափից հրաժարվում է հետապնդել խիզախ հայ երիտասարդներին¹:

Վրեժխնդրական գործողություններ էին տեղի ունենում նաև Վասպուրականի ուրիշ վայրերում:

Խիզանի բեկերից մեկի Ֆաթ անունով որդին բազմաթիվ չարագործություններ էր կատարել Կարճկանի Ուրանց գյուղում: Նա բնաջնջել էր նաև գյուղի քահանա Տեր-Սարգսի ընտանիքը՝ սպանելով 6 հոգու, ըստ որում՝ քահանայի 6 տարեկան որդուն մորթելուց հետո դիակը նետել էր գետը: Ընտանիքի միակ ողջ մնացած անդամը՝ Մուրատը, որոշում է վրեժխնդիր լինել: 1913 թ. հունիսի 13-ին իրենց գյուղի մերձակայքում հանդիպելով ոճրագործին՝ սպանում է նրան և դառնում փախստական²:

1913 թ. հուլիսի սկզբներին Հայոց Զորի Պլթենց գյուղացի Տիգրանը ճանապարհին հանդիպում է քահանա հորը տանջամահ արած, նաև բազմաթիվ ուրիշ հայեր խողխողած Մյուլք գյուղացի Հսեին և վրեժխնդիր լինում: Սպանելով ոճրագործին՝ Տիգրանը վերցնում է իշխանություններից պարզև ստացած տասը կրականոց նրա հրացանը և հավաքված հայերի ու քրդերի ներկայությամբ, առանց շտապելու, բարձրանում է լեռը:

Կարճկանի Մահմեդ ավագակի չարագործությունների մասին գիտեր ողջ Վասպուրականը: Նրա ոճրախմբի անդամները միայն «սահմանադրական» չորս տարիներին սպանել էին 25 հայ: Մահմեդը իշխանությունների համար խիստ կարևոր անձնավորություն էր, որի խոսքը օրենք էր Վանի կուսակալի և գավառների գայմագամների համար: Կարճկանի կենտրոնի մա-

¹ Տե՛ս «Դրօշակ», № 1, հունվար, 1914, էջ 4-5:

² Տե՛ս նույն տեղում, էջ 5:

տույցներում չորս հայ երիտասարդներ հարձակվում են նրա վրա, իջեցնում ձիուց և զինաթափում: Եղեռնագործին մահվան ենթարկելուց հետո հայ երիտասարդները, զենքերն առած, բարձրանում են Գոմաս լեռ¹:

Շատախում մոլլա Յուսուֆ անունով քուրդ ավազակապետը սպանել էր Սատկեն գյուղացի Մկրտչին: Գյուղի մի քանի հայ երիտասարդներ իրականացնում են վրեժխնդրական գործողություն. գնդակահարելով մոլլա Յուսուֆին, ինչպես նաև Ծիծանց գյուղում յոթ հայ սպանած քրդական ավազակախմբի պարագլուխ Սելիմին՝ նրանք, զենքերն առած, անհետանում են²:

Վասպուրականի հայությունների բարձրացող պայքարի ալիքը տազնապ էր առաջացրել իշխանությունների մեջ: Նրանք նպատակահարմար էին գտել ծայրահեղությունների չղիմել և առայժմ բավականանալ առանձին անհատների ձերբակալումով՝ մտածելով, որ համեմատաբար «մեղմ» քաղաքականությունը կարելի կլինի աստիճանաբար չեզոքացնել ահազանցող վտանգը: «Իսկ քիւրդ աւազակ տարրը սարսափի տակ սմբած կը մնայ»³, - «Դրօշակին» գրում էր Վանի թղթակիցը:

1907 թ. օգոստոսին Փեթարի կովում քրդերի ձեռքով վերջին մեծ ֆիդայի Սպաղանաց Տոնո Մակարի դավադիր սպանումով ավարտվել էր հայ ֆիդայական առասպելական շարժումը⁴: Երիտթուրքական հեղաշրջումից հետո, երբ հռչակված էր իթթիհադ-դաչնակ «եղբայրական դաշինքը», և երբ Դաչնակցությունը հայ մարդկանց մշտապես կոչ էր անում «խոհեմություն հանդես բերել» և «Իթթիհադին չխանգարել կերտելու սահմանադրական կարգեր», այդ մթնոլորտում ամբողջովին դադարեցվել էր զինված դիմադրությունը չարին: Եվ ահա այժմ, երբ Դաչնակցությունն արդեն խզել էր հարաբերությունները Իթթիհադի հետ, և այլևս չէին հնչում «օրինապահ օսմանյան քաղաքացի լինելու» մասին կոչեր, Փեթարի կովից հինգ տարի անց վրեժ-

խնդրական ցասումով լի հայ երիտասարդները կրկին լեռ էին բարձրանում: Նրանք մնալու էին որպես անհատ վրիժառուներ⁵, թե՞ որպես ոահվիրաններ, իրենցով սկզբնավորելու էր ֆիդայական շարժման նոր փուլի սկիզբը: Հագիվ թե:

ԿՈՎԿԱՍԻ ՓՈՒԱՐՔԱՆ ԿԵՆՏՐՈՆԻՑ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ԶԵՆՔ ՏԱԼ ԹՈՒՐՔԱՀԱՅԵՐԻՆ

1913 թ. ապրիլի 27-ին Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաչկովի ռազմական գծով օգնական գեներալ Շատիրովին էր ներկայացել Կովկասի հայերի պատգամավորությունը՝ հետևյալ կազմով՝ Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպ, Թիֆլիսի քաղաքագլուխ Սատիսով, Հայկական բարեգործական ընկերության նախագահ Սամսոն Հարությունյան, «Մշակ» թերթի խմբագիր Ալեքսանդր Քալանթար և Պետական Դումայի անդամ Միքայել Պապաջանով:

Պատգամավորության անդամները գեներալին հայտնեցին իրենց խիստ մտահոգությունը թուրքահայության գնալով վատթարացող վիճակի առթիվ՝ ընդգծելով, որ կովկասահայությունը չի կարող անտարբեր մնալ իր դժբախտ ցեղակիցների ճակատագրի հանդեպ: Թուրքիայի հալածական հայությունը ռուսական կայսերական կառավարությունը խորապես երախտապարտ է իր նկատմամբ ցուցաբերած աջակցության համար, իսկ ռուսահպատակ հայերը հաստատապես հավատում են, որ Ռուսաստանն անպայման կասի իր տիրական խոսքը և Թուրքիային կստիպի հայության կյանքում մտցնել տասնամյակներ սպասված բարեփոխումները, որոնք, վերջապես, այդ ժողովրդին հնարավորություն կտան ապրելու խաղաղ և զբաղվելու իր ներքին գործերով: Միաժամանակ նրանք ասում էին, որ բոլոր հայերը քաջ զիտակցում են, որ անհրաժեշտ է հանդես բերել համբերություն, քանի որ կայսերական կառավարության խոստացած օգնությունը հեշտ իրականանալի չէ, առավել ևս՝ ներկա քաղաքական պահին իրենք հասկանում են, որ ժամանակ է պետք, ուստի և հարկ է սպասել, մինչև վրա կհասնի բարենպաստ

¹ Տե՛ս «Դրօշակ», № 1, հունվար, 1914, էջ 5-6:

² Տե՛ս նույն տեղում, էջ 6:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս սույն աշխատության երկրորդ գրքի 646-648 էջերը:

պահ: Հայերը քաջ գիտակցում են, որ իրենց սրբազան պարտքն է՝ գապվածությունը հետևել կառավարության խորհուրդներին և հնարավորինս նրան օգնել իր դժվարին դիվանագիտական պայքարում:

Այնուհետև պատվիրակները գեներալ Շատիրովին բացում են նրա մոտ գալու բուն նպատակը: Նրանք ասում են, որ իրադարձությունների ընթացքը կովկասահայերին ստիպում է խորհել իրենց թուրքահայ եղբայրներին առաջիկայում սպասվելիք լայնածավալ աղետները մեղմելու հնարավորություն մասին: Բոլոր քրդերը թուրքական կառավարության կողմից գինված են, և գինվելը շարունակվում է: Այս պարագայում անգեն հայերն օգնություն են աղետում, որը գուցորդվում է թե՛ քրդերից և թե՛ թուրքերից պաշտպանվելու հրամայականին: Եվ որքան անպաշտպան է զոհը, այնքան ավելի դաժան է նրա նկատմամբ քրդի կամ թուրքի հաշվեհարդարը: Միմիայն համառ պաշտպանությունն է, որ թերևս կարող է բռնակալներին ինչ-որ չափով հեռու պահել վայրագություններից: Ուստի ողջ կովկասահայության անունից պատգամավորությունը գեներալին խնդրում էր կայսերական կառավարությանը փոխանցել կովկասահայության թախանձանքը, այն է՝ չմերժել իրենց թուրքահայ եղբայրների ինքնապաշտպանության համար փութացնել անհրաժեշտ քանակի զենք՝ գոնե բերդանկաներ և փամփուշտներ՝ դրանք գաղտնի թուրքահայաստան ուղարկելու համար¹: Պատգամավորության անդամները երաշխավորում են, որ ռուսական կառավարության կողմից անհատույց կամ պետական գնով տրամադրված զենքը հավատարիմ մարդկանց միջոցով հասցվելու է իրենց՝ այն թուրքահայերին, ովքեր, իսկապես, ունեն դրա խիստ կարիքը, և որ այն բացառապես գործածվելու է ինքնապաշտպանության, այն էլ միայն ծայրահեղ դեպքում, այլ ոչ թե ակտիվ գործողությունների համար²:

Հայկական պատգամավորության հետ հանդիպումից հետո

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3461, л. 1 (об.).

² Նույն տեղում:

գեներալ Շատիրովը դրա արդյունքների մասին մանրամասն գեկուցում է փոխարքային:

Մի քանի օր անց՝ մայիսի 2-ին, Վորոնցով-Գաչկովն այդ ամենի մասին խիստ գաղտնի ընդարձակ նամակ է հղում արտգործնախարար Ս. Սազոնովին՝ շարադրելով նաև հայերի խնդրանքի մասին իր մտորումները:

Փոխարքան շեշտում էր, որ ներկայումս Ռուսաստանի համար շատ կարևոր է իր հանդեպ թուրքահայերի համակրանքի և կովկասահայերի սիրո ամրապնդումը, և, ընդհակառակը, Ռուսաստանից վանելով թուրքիայի հայերին՝ դրանով իսկ անխուսափելիորեն առաջ կգա ռուսահայերի խիստ դժգոհությունը ռուսաց կառավարության նկատմամբ:

Փոխարքան նշում էր, որ թուրքահայերի շուրջը գտնվող մահմեդական բնակչությունը գլխովին գինված է, մինչդեռ օսմանյան կայսրության մեջ հայերի համար զենք ձեռք բերելու դեմ ամեն տեսակ արգելքներ են դրված³:

Այնուհետև Վորոնցով-Գաչկովն անդրադառնում էր Բալկաններից Հայաստան խուժած մուհաջիրների բնակեցման հարցին՝ նշելով, որ թուրքական կառավարությունը հայերից խլում է նրանց հողերը և դրանց վրա բնակեցնում մահմեդական գաղթականներին, մինչդեռ Ռուսաստանը լուրջորեն է պահպանում՝ ի տես այդ անօրինական գործողությունների: Նա գտնում էր, որ կառավարությունը պետք է լրջագույն ուշադրություն դարձնի այդ խնդրին և անհետաձգելի միջոցների դիմի, որպեսզի մուհաջիրների բնակեցման հարցում թուրքական կառավարությունը հանդես բերի լրջախոհություն և հայ գյուղացի բնակչությանը կրկին չենթարկի նորանոր աղետների: «Նման վերաբերմունքը կհանգստացնի հայերին և կմեծացնի նրանց վստահությունը Ռուսաստանի նկատմամբ»⁴, - եզրահանգում էր փոխարքան:

Այնուհետև շեշտելով թուրքահայաստանի հայ բնակչության նկատմամբ քրդերի կողմից նոր խժդժությունների և լայնածա-

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3461, л. 1 (об.)-2;

² Նույն տեղում, л. 2.

վալ կոտորածների իրական վտանգի մասին՝ Վորոնցով-Դաչկովը կարծում էր, որ Ռուսաստանը պարտավոր է հոգ տանել թուրքահայերի անձնական ու գույքային անվտանգության մասին: Նա գրում էր. «Հայերը քաղաքակիրթ ժողովուրդ են, նրանք ձգտում են խաղաղ զարգացման: Մարդասիրական բնույթի միջոցառումները, որոնք կպաշտպանեն իրենց կրոնը և խաղաղ աշխատանքի հնարավորությունը, ամենից շատ կխրախուսեն թուրքահայերի համակրանքը մեր հանդեպ: Իսկ, ահա, քրդերը, հիմնականում դեռ կիսավայրենի ժողովուրդ լինելով, որը տակավին չի կարևորում խաղաղ մշակույթի բարիքը և որը առայժմ հարգում է միայն ուժը, մեր կողմից իրենց նկատմամբ պահանջվում է ուժի ու արդարության վրա հիմնված հաստատակամություն: Այսպիսով, քրդերից հայերին գերծ պահելուն հաստատակամորեն և արդարությամբ նպատակաուղղված միջոցառումները մեզ համար կամրազրեն առաջիններիս համակրանքը և վերջիններիս հարգանքը՝ մի բան, որ իր հերթին կարող է օգնել մեզ հիմքեր գտնելու այս երկու ազգությունները հաշտեցնելու համար:

Ի գիտություն հայտնելով Ձերդ Բարձր Գերագանցությունը ողջ վերահիշյալի մասին՝ խոնարհաբար խնդրում եմ Ձեզ չմերժել և տեղյակ պահել ինձ այն որոշումների մասին, որոնք հարկավոր կգտնեք ձեռնարկել հայկական հարցի վերաբերյալ՝ նրա ներկա փուլում»¹:

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3461, л. 3 (об.)-4. (Մեզ չհաջողվեց պարզել, թե Կովկասի փոխարքայի սույն նամակն ինչպիսի արձագանք է գտել ռուսական կառավարությունում: Համենայն դեպս, Ռուսաստանի արխիվներում չենք հանդիպել պաշտոնական փաստաթղթի՝ թուրքահայերին դեռք տրամադրելու փոխարքայի առաջարկն ընդունելու կամ մերժելու մասին: Հավանական է, որ առաջարկը մերժվել է, քանի որ այդ ժամանակ ռուսական կառավարությունը հույս ուներ դիվանագիտական միջոցներով ազդել Բ. Դոնան վրա՝ հայ-քրդական հարաբերությունները կարգավորելու համար):

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՅԱՍԻՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՄԻԱՑՑԱԼ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

Լոնդոնի Հայասիրական կոմիտեն, որը մեծ մասամբ կազմված էր անգլիական պառլամենտի անդամներից, մյուս եվրոպական կոմիտեներին հրավիրել էր մի-մի պատգամավոր ուղարկել՝ մասնակցելու այնտեղ գումարվելիք այն ժողովին, որի ընթացքում կարծիքներ փոխանակելով՝ պետք է ճշտվեր մի ուղեգիծ, որը կկարողանար Հայ գործիչներին օգնել զանազան պետություններում իրականացվելիք իրենց ձեռնարկներում: Սակայն այդ կոմիտեններից չվեցարականը Լոնդոն ուղարկեց ոչ թե մեկ հոգու, այլ ամբողջ պատվիրակություն:

Բացառություն էր կազմել Ռուսաստանը, որտեղից չէր եկել ոչ մի պատգամավոր այն պատճառով, որ այնտեղ դեռ չէր կազմավորվել Հայասիրական կոմիտե:

Փարիզից Նուբար փաշան Պետերբուրգի հայկական խմբակին նամակով խիստ անհրաժեշտ էր համարել ապահովել Հայ ժողովրդի ճակատագրով մտահոգ որևէ ռուս նշանավոր գործչի ներկայությունը Լոնդոնի կոնֆերանսին: Ոմբակը նպատակահարմար էր գտել այդ խնդրով դիմել համաշխարհային ճանաչման արժանացած խոշոր գիտնական և նշանավոր հասարակական գործիչ Մաքսիմ Կովալևսկուն, որն այդ պահին գտնվում էր Փարիզում:

Իմանալով այդ մասին՝ Պողոս Նուբարն այնտեղ հանդիպում է Մ. Մ. Կովալևսկու հետ և նույն խնդրով անձնական զրույց ունենում նրա հետ: Վերջինս Նուբարին խոստանում է մասնակցել կոնֆերանսին, բայց ինչ-ինչ պատճառներով չէր կարողացել Լոնդոն մեկնել: Այնուամենայնիվ, նա կոնֆերանսի նախագահի անունով գրել էր հետևյալ բովանդակությամբ նամակը.

«Հարգելի նախագահ:

Նորին գերագանցություն Պողոս Նուբար-փաշան ինձ հետ զրույց է ունեցել հայկական հարցի վերաբերյալ, որով ես չեմ դադարել հետաքրքրվել այն իսկ պահից, երբ իմ ընկեր զոկտոր Լորիս-Մելիքովը Փարիզում և եվրոպայում բողոքի ցույցեր կազմակերպեց ի շահ Հայաստանի:

Ես ուզում եմ օգտվել առիթից՝ ձեր առաջիկա ժողովի հետ կապված, ու իմ և իմ աշխատակիցների («Եվրոպայի լրատու» խմբագրություն) անունից արտահայտել մեր համակրանքը, որ ներչնչում է մեզ հայ ժողովուրդը: Մենք ցավում ենք հայերի անցած և ներկա տառապանքների համար և ցանկություն ենք հայտնում, որպեսզի Եվրոպան ապահովի այս ժողովրդի ապրելու իրավունքը, որը նրան խոստացվել էր դեռ Բեռլինյան տրակտատի և 1895 թ. հուլիսի 13-ի ժամանակներից:

Բարեհաճեք ընդունել, Ձերդ ողորմածություն, իմ խորը հարգանաց հավաստիքը:

Մաքսիմ Կովալևսկի,

Փարիզ 24 ապրիլի 1913 թ.»¹:

1913 թ. ապրիլի 25-ին Մեծ Բրիտանիայի պառլամենտի սրահներից մեկում գումարվեց եվրոպական հայասիրական կոմիտեների ներկայացուցիչների կոնֆերանս՝ նվիրված հայկական բարենորոգումների գործն առաջ մղելու խնդրին:

Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում էին՝ անգլիական կոմիտեի անունից՝ պառլամենտի անդամներ Աննան Բրայսը և Բ. Օ'Քոնորը, Նոել Բիքսթոնը, Էդուարդ Քոյլը, Արթուր Բոնսոպը, Վ. Ջ. Թյուլթերֆորդը, Հարոլդ Բենդերը, Անրի Վիլյամսը, Արթուր Սայմսոսը, Ֆրանսիական կոմիտեի անունից՝ Ռոբեր դը Քեն, գերմանական կոմիտեի անունից՝ Յոհաննես Լեփսիուսը, չվեյցարական կոմիտեի անունից՝ Լեոպոլդ Ֆավրը, Ռընե Կաբարետը, Ադոլֆ Հոֆմանը: Ժողովին հրավիրված էին ներկա գտնվելու նաև Հայոց ազգային պատվիրակությունը (Պողոս Նուբար ու Արթին Մոստիչյան) և Լոնդոնի հայ գաղութի մի քանի նշանավոր անդամներ (պրոֆ. Թումանյան, Տ. Ասլանյան, Մանչեստրի հայկական կոմիտեից՝ Գ. Ֆնդոյան, Ս. Իբլիգճյան, Մ. Մանուկյան)²:

Կոնֆերանսի նախագահ ընտրվեց Անրի Վիլյամսը: Նա իր խոսքում ողջունեց ներկաներին և հույս հայտնեց, որ կոնֆե-

րանսը միակամ կլծվի Հայաստանի ապագայի վերաբերյալ այնպիսի քաղաքականություն մշակմանը, որն արդյունավետ կլինի հայության իղձերի իրականացման տեսակետից: Ներկաների բուռն ծափահարությունների ներքո նա շեշտեց. «Այդ դժբախտ ժողովրդի խաղաղության և հանգստի համար վսեմաշուք Պողոս Նուբարի թափած ջանքերին միանալը մեծ պատիվ է մեզանից յուրաքանչյուրի համար: Այն ծրագիրը, որի կատարմանը լծված է նա, ներկա պայմաններում միակ հնարավոր պահանջն է, որին պետք է ուժ տալ»¹: Այնուհետև դիմելով Նուբար փաշային՝ նրան խնդրեց ելույթ ունենալ և կոնֆերանսին պարզել իր ծրագրերը:

Հանդես գալով Պողոս Նուբարը ֆրանսերենով դիմեց պատգամավորներին՝ բացատրելով այն ամենաչափավոր ձևերով կարևորությունը, որոնք անհրաժեշտ են բավարարություն տալու համար թուրքահայության տարրական պետքերին: Նա Ազգային պատվիրակության անունից ներկաներին ներկայացրեց ամբողջական մի հայտագիր՝ համաձայն Ամենայն հայոց կաթողիկոսի տված հրահանգների և Հիմնված Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի և 1895 թ. հիշատակագրի վրա: Ապա ներկաներին կոչ արեց ուշադիր ուսումնասիրել կաթողիկոսի անունից ներկայացված ծրագիրը, նպաստել դրան, որ այն պետությունների քննարկմանը ներկայացնելու դեպքում հաջողություն ունենա և նպաստի Արևելյան խնդրի վերջնական լուծմանը:

Պողոս Նուբարից հետո խոսք առավ բեռլինաբնակ պատտոր Յոհաննես Լեփսիուսը: Ելույթ ունենալով գերմաներեն (որը անգլերեն թարգմանում էր Փոնսոնը)¹՝ նա կոչ արեց ուժ ու եռանդ չխնայել տերությունների կառավարություններին հասկացնելու, որ Հայաստանին խաղաղություն բերելը նշանակում է խաղաղություն նաև Եվրոպային²: Նա հայտնեց, որ Հայաստանի բարենորոգումների գործին գերմանական կառավարությունը ուժ կտա պայմանով, եթե այն չգործադրվի միայն մի

¹ ПЗПАК, том I, л. 241-243.

² ՀԱԱ, ֆ. 54, ց. 5, գ. 34, թ. 15:

¹ ՀԱԱ, ֆ. 54, ց. 5, գ. 34, թ. 16:

² Նույն տեղում:

պետութեան կողմից՝ նկատի առնելով Ռուսաստանին՝:

Լեպսիուսի այս տեսակետը արժանացավ կոնֆերանսի մյուս մասնակիցների հավանութեանը, և նրան հաջորդած բոլոր ատենաբանները հայտնեցին, թե որևէ ծրագիր, որը չի պարունակի միջազգային հակակշիռ, չի կարող հաջողութուն գտնելու հավանականութուն ունենալ: Բոլորը նույն մտտեցումն ունեցան նաև ընդհանուր կառավարչի հարցում, այն է՝ վերջինս պիտի նշանակվի սուլթանի կողմից, բայց պետութունների հովանավորութեամբ:

Այնուհետև ելույթ ունեցան դը Քեն, Ֆավրը և Բիքսթոնը: Վերջինս իր խոսքի ավարտին առաջարկեց ընդունել հետևյալ միջանկյալ որոշումը. «Սույն կոնֆերանսի մասնակիցներից յուրաքանչյուրը պետք է հանձնառու լինի իրենց երկրում կազմված [հայասիրական] կոմիտեն պահել կանգուն: Կոմիտեները պիտի աշխատանք տանեն իրենց երկրների ընդհանուր կարծիքը պատրաստելու ուղղությամբ՝ ի նպաստ հայկական խնդրի և շարունակական ձիգերով իրենց կառավարութունների վրա ազդեցություն բանեցնեն՝ իրագործելու անհրաժեշտ բարենորոգումներ ի շահ նաև օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման: Կոմիտեները պետք է իրար միջև մշակեն շարունակական հարաբերութուններ»: Բիքստոնի սույն նախագիծը քվեարկվեց միաձայնությամբ²:

Պառլամենտի անդամ Ա. Բրայսը ներկաներին առաջարկեց անմիջական միջոցներ ձեռնարկել գործուն պրոպագանդայով ճնշում գործադրելու սեփական կառավարութունների վրա: Նույն տեսակետը հայտնեցին նաև Օ'Քոնորը, դը Քեն, Լեպսիուսը, Ֆավրը և ուրիշ պատգամավորներ:

Կոնֆերանսը միաձայն ընդունեց անգլիական, ֆրանսիական, գերմանական և չվեյցարական հայասիրական կոմիտեների ներկայացուցիչների կազմած հայտարարության տեսքատր, որը պարունակում էր հետևյալ կետերը. 1) Հայ ժողովրդի դժբախ-

տութունները պահանջում են Եվրոպայի ուշադրությունն ու համակրանքը: Հակառակ Բեուլինի դաշնագրի և 1895-ի բարենորոգումների պարունակած առաջարկութունների (որոնք ընդունվել և հրատարակվել են նաև օսմանյան իշխանութունների կողմից)՝ սույն ժողովրդական տառապանքը նվազած չլինելու պատճառով այժմ անհրաժեշտ է, որ հայկական խնդիրը կրկին ձեռք առնվի եվրոպական բոլոր պետութունների կողմից, 2) Բալկանյան պատերազմը վերջանալուն պես պետութունները պետք է ընդհանուր անվտանգության մի կարևոր մաս համարեն նաև հայկական խնդրի լուծումը, 3) Սույն կոնֆերանսին ներկայացված հայասիրական կոմիտեների միացյալ հանձնառությամբ նրանցից յուրաքանչյուրը պետք է իր կառավարութեանը ներկայացնի սույն հայտարարությունը և հետևյալ պահանջները. ա) Հայաստանում նշանակվելիք բարձր կոմիսարը պիտի լինի եվրոպացի, ստանա պետութունների ընդհանուր համաձայնությունը և պաշտոնի կոչվի սուլթանի հրամանով, բ) Պետութունների ներկայացուցիչներով կազմել մնայուն մի հանձնախումբ, որը պիտի հսկի բարենորոգումների ընթացքը, գ) Ընտրվելիք նահանգային ընդհանուր ժողովը պետք է ունենա կես հայ, կես մուսուլման կազմ, դ) նույն սկզբունքով պիտի կազմվեն տեղական ժանդարմերիան և ոստիկանությունը, ե) Արմատապես բարելավել դատական և ֆինանսական գործերը, զ) Գրաված հողերի նախկին տերերին պատճառած վնասները հատուցել բռնազավթիչների հաշվին, է) Քրդերի և այլ թափառական ցեղերի զավթիչ գործողութունների դեմ ձեռնարկել խիստ միջոցներ: 4) Հարգել օսմանյան պետության ամբողջականութունը և գործուն բարենորոգումներից ավելի նրանից ուրիշ բան չպահանջել, 5) Սույն ծրագիրը պետք է ընդունվի ոչ միայն պետութունների, այլև օսմանյան կառավարության կողմից, մանավանդ որ դրա գործադրումից կօգտվեն բոլոր հպատակները հավասարապես, քանի որ հայկական գավառներում հաստատվելիք կյանքի ու ինչքի ապահովությունը, լավ վարչության ստեղծումը շատ արագ կնպաստեն գալիք զարգացումներին, հարստութունների և ֆինանսների կուտակումներին, մեծապես կբարվոքեն վաճառականության գործերը, 6) Մեծ պե-

¹ ՀԱԱ, ֆ. 54, ց. 5, գ. 34, թ. 17:

² Նույն տեղում, թ. 18:

տուլթյունները պետք է ուշադրություն դարձնեն, այն վտանգի վրա, որին պիտի ենթարկվեն հայաբնակ գավառները, երբ այնտեղ կխուժեն Եվրոպական Թուրքիայից գաղթող մահմեդականները և Բալկաններում պատերազմող թուրք զինվորները, 7) Սույն որոշման օրինակներն ուղարկել Փարիզում գումարվելիք Միջազգային ֆինանսական հանձնաժողովի հերթական նիստին և մեծ պետությունների արտաքին գործոց նախարարություններին¹:

Կոնֆերանսը միաձայնությունով գնահատեց Հայկական պահանջների օրինավոր և արդարացի լինելը:

Պողոս Նուբարն այս ամենի մասին ապրիլի 25-ի նամակով տեղեկացնում է Գևորգ V կաթողիկոսին: «Ուրախ եմ աւետելու Ձեր Վեհափառութեան, - գրում էր նա, - որ սոյն քոնֆերանսը շատ հետաքրքրաշարժ և կարևոր եղավ»²: Նա շեշտում էր, որ եվրոպական հայասերների հավաքը, իբրև եզրակացություն, միաձայնությունով քվեարկեց մի առաջարկություն, որի բովանդակությունն այն էր, որ կոմիտեները հանձնառու են ազդու կերպով գործելու իրենց երկրներում և իրենց կառավարություններին համոզելու, որ սրանք միջամտեն ի նպաստ Հայկական բարենորոգումների: Միայն թե Պողոս Նուբարը խիստ անհանգստացած էր: Մի քանի օր հետո կաթողիկոսին հղած ապրիլի 29-ի նամակով նա անհանգստություն էր հայտնում, թե «Բէթէրսպուրկի կամ Թիֆլիսի քօմիթէն դեռ չէ կազմուած: Փափաքելի է, որ Ռուսիոյ մէջ, ոչ հայերէ, այլ սոսկ ռուսերէ բաղկացած քօմիթէ մը կազմուի, միւս երկրներուն նման: Յուսալի է, որ Ձեր Վեհափառութեան բարձր միջամտութեամբ ընդհուպ իրագործուի այս պէտքը»³:

Նամակագիրն այնուհետև հավելում էր, որ Լոնդոնում գտնվելու առիթից օգտվելով՝ ինքը տեսակցել է տեղի ֆրանսիական դեսպան Մ. Պոլ Գանպոնի հետ, որը 1895-ին

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 19:

² Նույն տեղում, թ. 20:

³ Նույն տեղում, թ. 25:

Ֆրանսիայի դեսպանն էր Կ. Պոլսում և այդ արյունամած օրերին ազնվորեն ստանձնել էր հայոց պաշտպանությունը, ինչպես նաև կոնֆերանսը վերջանալուց հետո նույն օրը հանդիպում է ունեցել Պետերբուրգում ֆրանսիական դեսպան Մ. Դելկասեի հետ, որը արձակուրդով եկել էր Փարիզ, ապա անցել Լոնդոն: Դելկասեն հայտնել էր իր տեսակետը Հայաստանի բարենորոգումների մասին՝ ասելով, որ Հայկական հարցը ամենաարդարացիներից մեկն է: «Երկուքն ալ մեր յայտագիրը տրամաբան գտան և հաստատուն՝ իրաւաբանական տեսակետով. երկուքն ալ անիրականալի կը գտնին ընդհանուր կառավարչին պետութեանց կողմէ անուանումը եւ երկուքն ալ համամիտ են, որ միմիայն միջազգային հակակշռի մը սկզբունքը կրնայ պետութեանց հաւանութիւնը միացնել»¹:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԲԵՐ ԾՐԱԳՐԵՐԸ: ՄԻԱՍՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

Արդեն դեպքերի զարգացման մայիս ամիսն էր: Ինչպես իր տեղում նշվել է, թուրքահայոց Ազգային ժողովի 1912 թ. դեկտեմբերի 21-ի նիստի հանձնարարականով Ապահովության հանձնաժողովը պատրաստել էր Հայաստանի բարենորոգումների ծրագրի նախագիծը: Փաստաթղթին կցվել էին աշխարհագրական քարտեզ, որի վրա ճշտորեն նշված էին Հայկական վեց նահանգների սահմանները, ինչպես նաև ժողովրդագրական աղյուսակ, որում չրջագծված էին այդ նահանգներում ապրող ժողովուրդների խտությունը ու թվական հարաբերակցությունը Հայերի և մուսուլման ազգային տարրերի միջև առանձին-առանձին²:

1878 թ. ի վեր՝ Բեռլինի կոնգրեսից հետո, սա երկրորդ

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 25:

² Մատենագարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 95, թ. 5:

ղեպքն էր, որ Հայաստանի բարենորոգումների ծրագիրը կազմում էին իրենք՝ հայերը*:

1913 թ. հունվարի սկզբին Ապահովության հանձնաժողովի կազմած նախագիծն իր հավելվածներով հանձնվել էր պատրիարք Հովհաննես Արչարունուն:

Նախագիծում հիմնականում ներառված էին ՀՅ դաշնակցության 4. Պոլսի 4. Կոմիտեի կողմից ներկայացված առաջարկները:

Իր տան մեջ ընդունելով 4. Պոլսում ուսական ղեսպանատան առաջին թարգման Անդրե Մանդելշտամին՝ հայոց պատրիարքը պաշտոնապես նրան է հանձնում հայաբնակ վեց նա-

* Մկրտիչ Խրիմյանը և Խորեն Նար-Պեյը 1878 թ. հունիսի 25-ին Բեռլինի կոնգրեսին ներկայացրել էին «Օսմանյան Հայաստանի կազմակերպական կանոնագիր» ծրագիրը:

Այդ փաստաթղթի համաձայն՝ Հայաստանը պետք է ունենար երկրի բարձր կառավարիչ՝ վարչապետ, որին իրավունք պետք է վերապահվեր նշանակել, հսկել և արձակել անխտիր բոլոր պաշտոնյաներին: Փաստաթղթում ներկայացված էին օրենսդրական մարմնի՝ ընդհանուր ժողովի դերը, կազմը և այն ընտրելու եղանակը:

Գատարանները լինելու էին երկու տեսակի՝ չերի և հասարակ: Օրենսգրքի մշակումը հիմնված էր լինելու եվրոպական իրավագիտության սկզբունքների վրա: Այդ ամենից հետո նախատեսվում էր եվրոպական վերահսկիչ մարմնի ստեղծում՝ ծրագրի իրականացման ուղղությամբ տարվելիք աշխատանքները վերահսկելու համար:

Խրիմյանի և Նար-բեյի հեղինակած ծրագրին զուգահեռ՝ Բեռլինի կոնգրեսին ներկայացվել էր նաև եզիպտական նշանավոր պետական ու հասարակական գործիչ Նուբար փաշայի կողմից կազմված Հայաստանի բարենորոգումների նախագիծը, որը զգալիորեն տարբերվում էր առաջին նախագծից: Այստեղ բարենորոգումների խնդիրը ավելի իրատեսական էր: Նուբար փաշան մոտենալուց պատենչներ էր քաշել պետական կյանքի երեք խոշոր ֆունկցիաների միջև և դրանց հատկացնում էր բավականին շոշափելի դեր: Ծրագիրը նախատեսում էր արմատապես փոխել Թուրքահայաստանում տիրող հարկային սխեման՝ առաջարկելով եկամտային հարկ՝ կալվածատուների կամ այսպես կոչված cadastre - ային սխեմանի վրա, որը ձեռնառու նորություն կլիներ հնարարյան հարկային ձևեր կիրառող Թուրքական պետության համար:

հանգների բարեկարգություն մասին պատրիարքարանի մշակած ծրագիրը:

Ֆրանսերեն դիմելով ղեսպանին՝ սրբազանն ասում է, որ թեև պատրիարքարանը ուշացրել է բարենորոգումների ծրագրի կազմումը, բայց դա արվել է գիտակցաբար՝ հարցն ավելի լուրջ քննելու և կշռելու համար, որպեսզի այն համապատասխան լինի իր հոտի կրած ցավերին ու տանջանքներին: «Մենք անկախություն չէ, որ կպահանջենք, այլ մեր պատուի, կեանքի եւ գույքի ապահովությունը»:

Մանդելշտամին հանձնելով ծրագիրը՝ պատրիարքը նրան խնդրում է բովանդակ հայ ազգի անունից այն ներկայացնել ղեսպան Գիրսին: «Պիտի տեսնեք,- ասում է սրբազանը,- որ եղած առաջարկները շատ համեստ են և հիմնված լինելով երկրի ընդհանուր օրենքներու վրա, կպահանջեն նույնիսկ վարչական ձևը, հիմնվելով ապակենդրոնացման սխեմանի և ազգերու հավասարության սկզբունքի վրա: Ձեզ կմնա գիտնալ, թե թուրք կառավարության միջոցով գործադրել կուտար, թե դուք կգործադրեք անձամբ:

Մենք չպիտի հարցնենք Ձեզի, թե մեր հարցը ե՞րբ պիտի լուծենք, այլ կարծեմ արյան հեղեղներու մեջ իր կյանքը ապրող քրիստոնյա և քաղաքակրթության միշտ ձգտած հայ ժողովուրդը իրավունք պիտի ունենա ըսելու Ձեզի. «Կպահանջենք, որ վերջնապես ազատեք մեզի մեր տառապանքներէն»¹:

Պատրիարքը միաժամանակ վախ է հայտնում, թե արդյոք հնարավո՞ր է, որ այս ծրագիրը նույնպես արժանանա նախորդ ծրագրերի տխուր վախճանին: «Եթե բան մը չպիտի ընեք մեզ համար,- ասաց նա,- ինայեցե՛ք մեզի, զի հետևանքները շատ աղետաբեր պիտի ըլլան արդեն դարերէ ի վեր տանջվող հայ ժողովուրդին համար:

Կխնդրեմ, որ վսեմաշուք ղեսպանը իմ աղերսներս հաճի ներկայացնել առ ոտս Վեհափառ Կայսեր Մեծին Ռուսիո»²:

Ի պատասխան՝ թարգմանը հույս է հայտնում, որ հայերի

¹ «Էջմիածին», փետրվար-մարտ-ապրիլ, 1965, էջ 164:

² Նույն տեղում, էջ 165:

նվազագույն պահանջներն այս անգամ կատարվելու են:

Վերջում պատրիարքը տեղեկացրեց, որ պատրիարքարանը կարճ ժամկետում կներկայացնի նաև այս ծրագրի “*Exposè des motifs*”^{*}, ուր մի առ մի տրված կլինեն յուրաքանչյուր հոդվածի պատճառաբանությունները և բացատրությունները¹:

Երիցս ու մանրագնին քննությունից հետո, 1913 թ. առաջին ամսին Մանդելշտամը Հայաստանի բարենորոգումների՝ պատրիարքարանի պատրաստած պահանջը ներկայացնում է ոուսաց ղեսպան Միխայիլ Նիկոլայևիչ Գիրսին՝ նրա կարծիքն ու թելադրությունները ստանալու համար²: Վերջինս հավանություն է տալիս փաստաթղթին, որին կցելով ընդարձակ մեկնաբանություն՝ ուղարկում է Պետերբուրգ: Ապա Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի Կ. Պոլսի ղեսպանների կողմից հայտնած փափագին ընդառաջ՝ պատրիարքարանը, Ռուսիո ղեսպանի համաձայնությունամբ, նախագծի մի-մի օրինակ տրամադրում է նրանց:

Այն ժամանակ, երբ Ապահովության հանձնաժողովը կազմում էր բարենորոգումների պատրիարքարանի նախագիծը, այդ նույն օրերին Փարիզի Ազգային պատվիրակությունը, պատրիարքարանի նախագծից անտեղյակ, կազմում է բարենորոգումների իր նախագիծը՝ հիմքում դնելով 1895 թ. Մայիսյան ծրագիրը, բայց բարեփոխված՝ ժամանակին համահունչ³: Նախագիծը մշակվել էր ֆրանսիացի հայասեր Վիկտոր Բերարի մասնակցությամբ:

Փարիզի ոուսական ղեսպանատունը Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարին տեղեկացնում է, որ Պետերբուրգը նպատակահարմար է համարում Ազգային պատվիրակության և Կ. Պոլսի պատրիարքարանի կազմած բարենորոգումների նախագծերը միավորել, որպեսզի ազգը միջազգային հանրության առջև հանդես գա մի ընդհանուր փաստաթղթով, ասել է թե՛ միասնաբար ու միակամ:

* Պատճառաբանյալ տեղեկագիր:

¹ Տե՛ս «Էջմիածին», փետրվար-մարտ-ապրիլ, 1965, էջ 165:

² Տե՛ս Հովհաննես առ. քհ. Հաճեան, Հայոց տուժանքի ճամբաներով, Ա հատոր, Թեհրան, 1965, էջ 333:

³ ԳԱԹ, Գրիգոր Զոհրապի ֆոնդ, վավ. 91, թ. 4:

Երբ Փարիզում ավարտվել էր հայկական բարենորոգումների ծրագրի կազմումը, 1913 թ. հունվարի վերջերին Համբարձում Առաքելյանն այն տարել էր Էջմիածին ու ներկայացրել կաթողիկոսի հաստատմանը: Միաժամանակ, այդ ծրագրի մի օրինակը Փարիզից ուղարկվել էր Կ. Պոլիս՝ պատրիարք Արչարունուն: Փարիզից Էջմիածին ուղարկած ծրագրի օրինակը Գևորգ V կաթողիկոսը հղել էր Թիֆլիս՝ Ազգային բյուրոյում քննարկելու և եզրակացություն տալու համար:

Մինչև Ազգային բյուրոյից պատասխան կգար, կաթողիկոսն Էջմիածնում ստանում է նաև Կ. Պոլսի պատրիարքարանի կողմից մշակած բարենորոգումների ծրագրի նախագիծը, որը նույնպես քննարկման է ուղարկվում Թիֆլիս՝ Ազգային բյուրոյին:

Ազգային բյուրոյի որոշ անդամներ հակված էին այդ երկու նախագծերի հիման վրա մշակել ուրիշ երկու՝ *minimum* և *maximum* նախագծեր՝ համաձայն փոխարքա Վորոնցով-Դաշկովի բանավոր խորհրդի: Բայց Բյուրոյի անդամների մեծ մասի կարծիքն այն էր եղել, որ հայերը պետք է միայն մի ծրագիր ունենան, որպեսզի որևէ տարաձայնություն չլինի հայության մեջ, և նաև դա այնպես կազմված լինի, որ բխի ոուսաց շահերից, որովհետև ոուս կառավարության աջակցությունն ամենից կարևորն է Հայ Դատի հաջողության համար:

Միևնույն ժամանակ, Թիֆլիսի և Պետերբուրգի Հայ ազգայինները նույնպես իրենց ծրագրերը կազմեցին և ուղարկեցին Պողոս փաշային¹: Պետերբուրգում այդ գործին լծվել էին Ա. Աս-

¹ ԳԱԹ, Գրիգոր Զոհրապի ֆոնդ, վավ. 99: Խնդրի վերաբերյալ իր մտածումները նա ֆրանսերեն չարադրել էր նաև «Հայկական շրջանի հատուկ վարչության հիմնական կետեր» խորագրով ուրվագծում, որը պահպանվում է Գրականության և արվեստի թանգարանի «Գրիգոր Զոհրապի ֆոնդում»: Սույն ուրվագիծը, որը չի կրում ամսաթիվ, հայտնի չէ, թե ում է եղել հասցեագրված: Կարելի է ենթադրել, որ այն հանձնվել է Մանդելշտամին:

Նշենք նաև, որ Հայկական շրջանի բարենորոգումների մասին 11 կետից բաղկացած ծրագիր էր առաջարկել նաև Գրիգոր Զոհրապը: Իրենց ծրագրերը առանձին-առանձին վեց տերությունների Կ. Պոլսի ղեսպանություններին էին ներկայացրել նաև Հնչակն ու Դաշնակցությունը:

րիբեկյանը, Ա. Սարուխանյանը, պրոֆ. Ն. Ադոնցը, Գ. Տիգրանյանը, Մ. Պապաջանյանը և այլք: Իսկ Մոսկվայից նրանց գործուն աջակցում էին իրավաբան Ստ. Մամիկոնյանը, պրոֆ. Ա. Զիվելեգովը, Ամիրյանը և ուրիշներ:

Սակայն բարենորոգումների բոլոր չորս նախագծերից ամենակարևորը երկուսն էին՝ պատրիարքարանինը և Ազգային պատվիրակությունը: Մի շարք կետերի շուրջ նրանց միջև կային նկատելի տարբերություններ, որոնք տարածայնությունների առիթ էին դարձել Պողոս Նուբարի և պատրիարք Արշարունու միջև: Կաթողիկոսին հղած հեռագրով Պողոս Նուբարը, պատրիարքարանի ծրագրի մասին հայտնելով իր կարծիքը, այն համարում էր համարձակ, բայց ոչ իրատեսական, «ոչ բարեպատիկ և ոչ գործնական»¹: Բայց իրականում երկու նախագծերի միջև ընդհանրություններն ավելի շատ էին: Երկուսի ելակետները բխում էին Հայաստանի առկա իրողություններից: Դրանցից զատվում և որոշիչ նշանակություն էին ստանում հատկապես երկուսը՝ հայերի բնակության իրական տարածքների սահմանները և հայ ազգաբնակչության գերակշիռ թվից ելնելով՝ հայկական նահանգների ղեկավար մարմինների ստեղծման հարցը:

Զույգ նախագծերի համաձայն՝ հայերի դրություն բարվոքման իրավական հիմքը մի հայահոծ նահանգ ստեղծելը կարող էր լինել, որում կներառվեին միայն հայերով բնակեցված հողերը: Մինչև որ ձեռք չառնվեր այդ պարզ միջոցը, թուրքերը խոչընդոտելու էին եվրոպական դիվանագետների բոլոր ձեռնարկումները: Բայց նահանգների դասավորմամբ չէր լրանում այն միջոցների ամբողջությունը, որ պահանջում էին հանգամանքները: Հանձինս իր ներկայացուցիչների կազմած նախագծերի՝ հայ ազգը պահանջում էր, որ գալիքում ստեղծվելիք գուտ հայկական նահանգի գլուխ դրվի մի այնպիսի անձ, որը չլինի Կ. Պոլսի անողնաշար կամակատարը և, հետևաբար, կարողանա ինչպես հարկն է բարենորոգումներ կատարել կյանքում: Նա պետք է

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թթ. 21, 22:

նշանակվեր տեղի քրիստոնյաներից կամ, հակառակ դեպքում, եվրոպացիներից: Ընդհանուր նահանգապետին զուգահեռ պետք է կյանքի կոչվեր տեղի ազգաբնակչությունից ընտրված խորհրդակցական մի մարմին: Թերևս միայն նման իշխանությունը կարող է հայերի համար երաշխավորել ապահովություն ու առաջադիմություն նվազագույն պահանջներ, կարծում էին երկու նախագծերի կազմողները:

Երկու նախագծերի այս նմանությունների կողքին առկա էին լուրջ տարբերություններ, որոնք կարող էին հաղթահարվել փոխադարձ զիջումներով, որը, սակայն, տեղի չէր ունենում: Ակնհայտ էր, որ պատրիարքարանը դուրս էր եկել իր ունեցած լիազորությունների սահմաններից և սկսել էր հաճախ միջամտել Ազգային պատվիրակության գործերին:

Փետրվարի 7-ին Պողոս Նուբարը կաթողիկոսին գրում էր. «Ձեր վեհափառութեան մասնաւոր ուշադրութեան կը յանձնիմ այն դժվարութեանց, որ յառաջ եկած է, մէկ կողմէն՝ Ս. Պատրիարքին Կ. Պոլսի մէջ կատարած բանակցութեանց, եւ միւս կողմէ՝ մեր Պատգամաւորութեան միջոցաւ Եւրոպիոյ մէջ կատարուած բանակցութեանց երկուութէնէն: Ձեր Ս. Օծութիւնը պիտի համաձայնի ինծի հետ, որ այս վիճակը չի կրնար տեսել, առանց ծանրապէս վնասելու մեր դատին եւ ապարդիւն ձգելու Պատգամաւորութեան ջանքերը, որուն պաշտօնն ալ անօգուտ պիտի ըլլար: Կը խնդրիմ ուրեմն, որ Ձեր Վեհափառութիւնը բարեհաճի միջամտել Ազգ. Պատրիարքարանի մօտ՝ հարկ եղած կերպով ճշտելու համար իր կացութիւնը»¹:

Կաթողիկոսին հղած նամակներից մեկում Պողոս Նուբարը բողոք էր հայտնում Կ. Պոլսի հայոց պատրիարքարանից: Նա գրում էր. «Ճշմարտապես յուսախար կըլլանք Պոլսոյ Պատրիարքարանէն՝ որ Պատուիրակութեանս հանդէպ ընդդիմադիր ընթացք մը բռնած է, մերժելով որեւէ համաձայնութիւն միակ ծրագրի մը պատրաստութեան մէջ, եւ ստանձնելով բանակցութեանց տնօրինութիւնը, որոնք Պատուիրակութեանս մեծամեծ

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 29:

դժուարութիւններ կ'ստեղծէին»¹: Նա Վեհափառին հիշեցնում էր, որ Ազգային պատվիրակութիւնը պատրիարքարանի հետ հենց սկզբից անհամերաշխ է եղել բարենորոգումների նրա ծրագրի ձևի ու պարունակութեան հարցում, հատկապես այն բանի համար, որ հաշվի չի առել Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը և տերութիւնների 1895 թ. հիշատակագիրը: Ելնելով դրանից՝ Պ. Նուբարը պատրիարքին խնդրել էր մի լիազոր-պատգամավոր ուղարկել Փարիզ՝ պատվիրակութեան հետ համախորհուրդ միասնական ծրագրի նախագիծ պատրաստելու: Պատրիարքարանը, ընդունելով Նուբար փաշայի առաջարկը, 1913-ի փետրվարի կեսին Փարիզ է ուղարկում Ապահովական հանձնախմբի «Հատուկ պատվիրակ» Վահան Փափազյանին՝ պաշտոն ունենալով Ազգային պատվիրակութեան հետ քննարկելու բոլոր չորս (պատրիարքարանի, Ազգային պատվիրակութեան, Թիֆլիսի և Պետերբուրգի Հայ ազգայինների) ծրագրերը և դրանց հիման վրա մի ընդհանուր պաշտոնական նախագիծ կազմելու:

Սկզբում Պողոս Նուբարը դժկամութեամբ էր ընդունել թե՛ պատրիարքարանի նախագիծը և թե՛ պատրիարք Արչարունու պատվիրակին: Գետրգ V-ին ուղարկած № 252 հեռագրով Հայտնելով իր դժգոհութիւնը՝ նա գրում էր. «Հարկադրուեցայ Ձերդ Վեհափառութեան ուղղելու վերոգրեալ հեռագիրը, երբ ինձի հաղորդեցան Ազգ. Պատրիարքարանի կողմէ պատրաստուած ծրագիրը, դիպուածաւ, անձի մը միջոցաւ, որ չեմ գիտեր, ինչպէս յաջողեր է ձեռք անցնել, և շատ անկեղծօրէն կը ցաւիմ, որ Ազգ. Պատրիարքարանը չէ մտածած ինձի ղրկել ուղղապէս, մանաւանդ ևս նկատեցի, որ կարևոր տարբերութիւններ կան վերոյիշեալ ծրագրին և այն ծրագրին մէջ, զոր մենք հոս պատրաստելու հետամուտ ենք. արդէն Ազգ. Պատրիարքարանն աւել կամ պակաս հիմնուած է ինքնօրէնութեան սկզբունքին վրայ, ձև, որ մեզի չի թուիր բարեպատեհ, ոչ ալ գործնական: Կարծեցայ, որ Ձեր Ս. Օծութիւնը իրագեկ չըլլալով երկու տեսակէտներուն տարակարծութեանը, թէրևս ունէ եղանակով գործածէր Ազգ. Պատ-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 8:

րիարքարանի ծրագիրը, և յառաջիկայիս համար ունէ չփոթութեան առաջքը առնելու մտահոգութեամբ, չփոթութիւն, որ կրնայ վնասել ազգային գերագոյն շահերուն, խնդրեցի Ձերդ Վեհափառութենէն առայժմ ունէ կերպով չի գործածել յիշեալ ծրագիրը, սպասելով այն ծրագրին զոր խմբագրելու վրայ ենք՝ հեղինակաւոր անձերու աշխատակցութեամբ»²:

Փարիզում Վ. Փափազյանը շատ կարևոր դեր խաղաց: Տարիներ անց Պողոս Նուբարն ասել էր, նա «ոչ միայն միջնորդի դեր կատարեց, այլև շատ օգտակար կերպով աջակցեցաւ ինձի»³:

Փարիզ հասած Վ. Փափազյանն անմիջապէս սկսեց աշխատակցել պատվիրակութեան անդամների հետ: Պողոս Նուբարը կաթողիկոսին տեղեկացնում էր, որ պատվիրակութիւնը հաշտարար ոգով հնարավոր բոլոր զիջողութիւններն է արել, որի շնորհիվ ձեռք բերվեց վերջնական համաձայնութիւն, և պատրաստվեց դաշնադրական ծրագիր՝ պատրիարքարան ուղարկելու և վավերացնելու համար: «Սակայն զարմանքնիս մեծ եղավ, կաթողիկոսին տեղեկացնում էր Պողոս Նուբարը, երբ ամբողջ ամիս մը սոյն վաւերացումը մեզ մերժուեցաւ, պարտադրելով Պատուիրակութեանս դադարեցնել իր աշխատութիւնները եւ կորսնցնել թանկագին ժամանակ մը...»³: Բայց առավել վիրավորականն այն է, կաթողիկոսին բողոքում էր Նուբարը, որ պատրիարքարանից, ի վերջո, ստացվել է մի նամակ, որով տեղեկացվում է, թե նա, առանց նկատի առնելու համատեղ պատրաստած ծրագրի նախագիծը, Կ. Պոլսի ոռուսաց դեսպանին է հանձնել իր ծրագրի հին նախագիծը, որը ժամանակին մերժվել էր Պատվիրակութեան կողմից: Այսպիսով, պատրիարքարանը պատվիրակութեանը կանգնեցրել է կատարված իրողութեան առջև՝ «պարտադրելու համար զմեզ, որ իր կամքին հպատակինք», - գրում էր Պողոս Նուբարը և ավելացնում. «Ձեր Վեհա-

¹ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 19, թ. 21:

² ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 26, թ. 5:

³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 9:

փառութիւնը կրնայ կշռի՝ Զեր կողմանէ անուանուած Պատու-իրակութեան մը հանդեպ Պատրիարքարանին բռնած այս ընթացքը, և մեր դատին յաջողութեան համար անկե առաջ գալիք չարիքը»¹: Նկատի առնելով, որ «երկու հակընդդէմ գլուխ՝ մին ի Պոլիս և միւսն Եւրոպա, անկարելի է սկսուած բանակցութեանց հաջող ելքի համար», ուստի «ստեղծուած պարագաներուն մէջ կը կարծինք թե անհնար է օգտակար գործ մը տեսնել և կամ յաջողութեան ամենափոքր յոյս մը սնուցանիլ»²: Հետևապէս այդ է պատճառը, տեղեկացնում էր Նուբարը կաթողիկոսին, որ «այսօրուան թղթատարով իսկ պատասխանեցինք Պատրիարքարանին և թախանձագին կը խնդրենք համաձայնել դաշնադրական ծրագրին շուրջ, որ արդեն ընդունուած է իր պատգամաւորին (Վ. Փափազյանի:- Ն. Ս.) կողմէ, և վերջ տալ ամէն ներքին անհամաձայնութեանց, որպէս զի կարենանք դիմադրիլ արտաքին դժուարութեանց՝ որ արդեն իսկ չափէն աւելի են»: Ապա՝ «եթե Պատրիարքարանի ծրագիրը պետութեանց ներկայանայ իր նախկին վիճակին մէջ, ստոյգ ձախողուած մը առաջ պիտի բերե, որուն բոլոր պատասխանատուութիւնը իրենց վրայ կը ծանրանայ»³:

Այնուհետև նամակում Նուբար փաշան կաթողիկոսին անկեղծորեն խոստովանում էր, որ այդ պարագայում ինքը մտադրվել էր «դիմել Զեր Սրբութեան և խնդրել, որ զիս ազատ արձակեք Զեր ինձ յանձնած պաշտօնէն», բայց տեսնելով այն վտանգը, որ այդ օրհասական պահին պատվիրակության ղեկավարի անձի փոփոխությունը կարող է առաջ բերել անցանկալի հետևանքներ, որոնցից հատկապես աղետալի կլիներ այն, եթե տերությունները իմանային, որ հայոց մեջ ծագել է անհամաձայնություն, ուստի, հաշվի առնելով այդ վտանգավոր հանգամանքները, Ազգային պատվիրակության ղեկավարը Վեհին առաջարկում էր դիմել կտրուկ քայլերի. 1) Պատրիար-

քարանին արգելել շարունակելու բանակցությունները Եվրոպա-յում, կամ 2) «Իմ գործէ քաշուիլս է, երբ վստահօրեն կը տեսնիմ, որ իմ հայրենակիցներուս ի նպաստ օգտակար բան մը ընել կարելի չէ այս կացութեան մէջ»¹:

Մի ուրիշ նամակում՝ կաթողիկոսին հղված ապրիլի 25-ին, Պողոս Նուբարը տեղեկացնում էր, որ եվրոպական հայասեր կոմիտեների՝ Լոնդոնում կայացած կոնֆերանսի բոլոր մասնակիցները, որոնք, լինելով բարձրագույն անձնավորություններ, առաջնակարգ դերակատարություն պիտի ունենան հայկական խնդրի լուծման մեջ, ծանոթանալով Ազգային պատվիրակության ծրագրի նախագծին, լիակատար հավանություն են տվել դրան: Այս անգամ էլ Պողոս Նուբարը հույս էր հայտնում, որ Վեհափառի աջակցությամբ պատրիարքարանը պիտի ձանաչի իր սխալը, այլապես եթե շարունակի պնդել ծրագրի նախագծի իր տարբերակի վրա, ապա, անկասկած, «հայկական բարենորոգմանց դատը անյաջողութեան պիտի մատնէ»²:

Դա նշանակում էր, որ ծրագրի մի շարք երկրորդական կետերի շուրջ դեռ ձեռք չէր բերվել համախոհություն, հետևապես՝ վերջնական համաձայնություն: Այդ միջոցին Ապահովական հանձնախմբի մի ուրիշ անդամ³, որն իր անձնական գործով Փարիզ էր մեկնել, միաժամանակ պատրիարքարանից հանձնարարություն էր ստացել համոզել Ազգային պատվիրակությանը՝ ամբողջությամբ ընդունել պատրիարքության նախագիծը, քանի որ այն արդեն հարմար էր նկատված Ռուսաստանի ղեսպանություն, ապա և կառավարության կողմից: Կարճ ժամանակ անց Ազգային պատվիրակությունն այլևս չպնդեց իր նախագծի վրա և 1913 թ. մարտի սկզբին ընդունեց պատրիարքության նախագիծը, որով և հարթվեցին այն բոլոր դժվարությունները, որոնք պատճառ էին դարձել երկուսի միջև հարաբերությունների լարվածություն³:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 9-10:

² Նույն տեղում, թ. 10:

³ Նույն տեղում:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 11:

² Նույն տեղում, թ. 18:

* Պարզել չհաջողվեց, թե ով էր Ապահովական հանձնախմբի՝ Փարիզ գնացած երկրորդ անդամը:

³ ԳԱԹ, Գրիգոր Զոհրապի ֆոնդ, վավ. 91, թ. 5:

Նախագծի վերջնական տարբերակն ըստ էության պատրիարքարանի նախագիծն էր, որն ինչ-որ չափով ներառել էր նաև նախագծի մյուս բոլոր տարբերակների որոշ ձևակերպումներ: Այդ պատճառով վերջնական տարբերակը ստացավ «Միասնական նախագիծ» անվանումը:

Միասնական նախագիծը կյանքի կոչվելուց հետո ղեկավար Գիրսը ցանկություն է հայտնում ծանոթանալ փաստաթղթին: Պատրիարքը նախագիծն ուղարկում է նրան: Այն ուշիուշով ուսումնասիրելուց հետո ղեկավարը փափագ է հայտնում հանդիպել պատրիարքարանի և Դաշնակցության ներկայացուցիչների հետ: Հանդիպումը տեղի է ունենում ապրիլի 12-ին ուսական ղեկավարանում: Պատրիարքարանի կողմից մասնակցում էր Գրիգոր Զոհրապը, Դաշնակցության կողմից՝ բժ. Զավրիևը և Միսն Զավարյանը:

Միայն ընդունելությունից հետո ղեկավարը հայ պատվիրակներին ասում է, որ պատրիարքարանի ներկայացրած միասնական ծրագիրն իր վրա լավ տպավորություն է թողել: Այնուամենայնիվ, նախագծի տեքստի վերաբերյալ կատարում է դիտողություններ:

Մ. Ն. Գիրսի առաջին ցանկությունը վերաբերում էր եվրոպական բարձր կոմիսարի (*Haut commissaire*) խնդրին: Պատրիարքարանի ծրագրի տեքստում նախատեսված էր հայկական վեց նահանգների գլուխ կարգել եվրոպական պետությունների կողմից նշանակված և սուլթանի կողմից վավերացված եվրոպացի մի բարձր կոմիսար:

Կառավարման այդ ձևի պահանջը, ասում էր Գիրսը, հակասում է սուլթանի վեհապետական իրավունքներին և ենթադրում է անջատական ձգտումներ, մի բան, որ չունի իր նախադեպը, հետևաբար չատ հավանական է, որ մերժվի թե՛ եվրոպական պետությունների և թե՛ սուլթանի կողմից: Ուստի Գիրսը գտնում էր, որ այդ հոդվածը պետք է բարեփոխել և պահանջել բարձր կոմիսար, որը առաջադրված լինի սուլթանի կողմից և ստացած լինի եվրոպական պետությունների համաձայնությունը: Այդ կոմիսարը կարող է լինել եվրոպացի, նաև կարող է լինել օսմանցի, բայց անչուչտ՝ քրիստոնյա:

Գիրսի երկրորդ դիտողությունը վերաբերում էր պատրիարքարանի ծրագրի այն պահանջին, որով բարձր կոմիսարին իրավունք էր վերապահվում երկրի ընդհանուր օրենքներից ելնելով՝ տեղական պետքերի թելադրանքով ընդունել պատշաճ օրենքներ և հրատարակել համապատասխան կանոնադրեր: Այդ իրավունքը, ասում էր նա, տրված է միայն նահանգային ընդհանուր ժողովին:

Կատարած երրորդ դիտողությունն այն մասին էր, որ ծրագրում առաջարկված էր գավառի մուսուլման և քրիստոնյա բնակչության կես առ կես ներկայացուցչությունը ընտրովի մարմիններում: Մինչդեռ հայկական նահանգներից ոչ մեկում հայերը մեծամասնություն չեն կազմում¹:

Կատարված դիտողություններն ու արտահայտած ցանկությունները հաշվի առնելուց հետո, ասում է ղեկավարը, նախագիծը հնարավորինս շուտ կուղարկվի Պետերբուրգ և կապասի պատասխանի: Հանդիպման վերջում նա հայ պատվիրակներին ասում է, որ վրա է հասել հայերի լրջախոհության և զսպվածության պահը, որ հայ գործիչների պարտքն է թուրքական իշխանություններին կամա թե ակամա չմատուցել նրանց ձեռնտուքայլեր*:

Ռուսական ղեկավար Միխայիլ Գիրսի համակրական վերաբերմունքը ուրախությամբ ընդունվեց հայ պատվիրակների կողմից, որոնք հայտարարեցին, թե նրա արտահայտած ցանկություններն անպայման հաշվի կառնվեն, և որ բարենորոգումների միասնական նախագիծը մեծագույն վստահությամբ

¹ Տե՛ս «Էջմիածին», փետրվար-մարտ-ապրիլ, 1965, էջ 165-166:

* Հայերին նույն խորհուրդն էին տալիս նաև անգլիացի և ֆրանսիացի դիվանագետները: Այսպես, Կ. Պոլսի անգլիական ղեկավարության առաջին քարտուղար Ֆից Մորիսը հայոց պատրիարքի ներկայացուցչին խորհուրդ էր տվել «որքան հար է լուռ մնալ, երբեք չգժտիլ օսմանեան կառավարութեան հետ, անաղմուկ գործել, արտասահմանի հայ գաղութներուն թողլով Հայկական հարցի հետապնդման գործը, անչուչտ ազդեցութեամբ, հեղինակութեամբ և միջնորդութեամբ Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետին» («Էջմիածին», փետրվար-մարտ-ապրիլ, 1965, էջ 163):

այսօրվանից հանձնում են Ռուսաստանի իրավասուլթյանը:

Շատ չանցած՝ ռուսաց ղեսպանը Հայաստանի բարենորոգումների ծրագրի նախագիծն ուղարկում է Պետերբուրգ:

Չնայած այն բանին, որ Կ. Պոլսի պատրիարքարանի և Ազգային պատվիրակության միջև եղած լարվածությունը խիստ ազդել էր Պողոս Նուբարի տրամադրություն վրա, բայց նա իր առաքելության բարձր գիտակցության մղումով շարունակում էր ուղևորություններ կատարել եվրոպական երկրներ և հանդիպումներ ունենալ բարձր դիրքեր զբաղեցնող պաշտոնատար անձանց հետ: Ապրիլի 29-ին նա Փարիզից կաթողիկոսին գրում էր. «Այս չաբաթուս վերջը կրկին Լոնդոն պիտի երթամ տեսնելու համար սրբ էղևարդ Կրեյը, որ դեռ Սկովտիոյ ըրած ճանապարհորդութենէն չէր վերադարձած: Նոյնպես պիտի տեսնիմ Մ. Իզվոլոսքին՝ Լոնդոն չի գացած»¹:

ՆԻԿՈՒԱՅ II ԿԱՅՍՐԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ Է ՏԱԼԻՍ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻՆ

Թուրքիո հայոց պատրիարք Հովհաննես արք. Արչարունին № 66 գրությունը Փարիզ, Պողոս փաշա Նուբարին հայտնում է, որ բարենորոգումների միասնական ծրագիրը «մատուցվել է ղեսպան Գիրսին, որն այժմ կ'ուսումնասիրի եւ 8-10 օրէն իր վերջնական կարծիքը պիտի հաղորդէ մեզ», իսկ դրանից հետո նա այդ ծրագիրը ընդարձակ մի տեղեկագրով «պիտի մատուցանէ Ռուսիոյ Վեհ. Ցարին»: Ապա՝ «արդ՝ մեր պատրաստուած ծրագիրը “Expone dos motifs”-ով եթէ արժանանա բարձրագոյն հաճութեան, ակներև է, թէ յայնժամ ոչ մեկ փոփոխութիւն կարելի է այլևս ներմուծել, կատարուած իրողութեան մը առջև գտնուած լինելով»: Շուտով ռուսական կառավարությունը Կ.

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 20:

^{*} Կարելի է ենթադրել, որ բարենորոգումների հայկական նախագծին ռուսաց ինքնակալի դրական վերաբերմունքի մասին Գևորգ V-րդ կաթողիկոսին տեղեկացրել էր փոխարքա Վորոնցով-Դաչկովը:

Պոլսի իր ղեսպանի միջոցով հայոց պատրիարքին հայտնեց, որ մեկ-երկու անկարևոր փոփոխություններ այն ընդունվել է: Այնուհետև՝ էջմիածնից տեղեկացված լինելով Նիկոլայ II-ի բարեհաճ վերաբերմունքի մասին ղեսպի Հայկական հարցը, պատրիարքը շարունակում էր. «Ռուս կառավարությունը, հայոց բաղձանքները իմանալու պարտականությունը ստանձնած լինելով Վեհ. Ցարի բարձրագոյն հրամանով, խնդրի ծանրությունը բարձել է Կ. Պոլսի ռուս ղեսպանի վրա, ուստի այդ իսկ պատճառով, բնական է, որ վերջինս ամեն ինչ անելու է չթերանալու համար իր պարտականությունների մեջ, այն է՝ թուրքահայ ժողովրդի վիճակի բարելավման նախաձեռնությունը չթողնել ուրիշ տերությունների կայացուցչի, այլ Վեհ. Ցարի կամքը կատարել լիովին»¹:

Պատրիարքը համոզված էր, որ իրերի այս ինքնաբեր ընթացքը չի հակասում Պողոս Նուբարի ըմբռնումներին, քանի որ նա նույնպես համոզված էր, թե Հայկական դատի իսկական պաշտպանն ու նախաձեռնողը լինելով՝ ռուսական կառավարությունը՝ որպես դրացի անմիջական պետություն, ստանձնած գործը առաջ է տանելու մինչև վերջ: «Առանց անոր (Ռուսաստանի: - Հ. Ս.), - շարունակում էր պատրիարքը, - չենք կրնար ապահովել մեր դատին նպաստաւոր յաջողութիւնը, եւ միչտ խորհրդակցաբար հարկ է գործել Ռուս[ական] կառավարութեան ներկայացուցիչներուն հետ»²:

Ավելին, պատրիարքը մտահոգություն ուներ, որ ռուսական դիվանագիտության, հատկապես Կ. Պոլսի և Փարիզի ռուս ղեսպանի չափից ավելի ակտիվ գործունեությունը հօգուտ հայկական դատի կարող է առաջ բերել եվրոպական մեծ տերությունների կառավարությունների հակազդեցությունը՝ խանգարելով ընդհանուր գործին: Ուստի պետք է կարելի ամեն միջոց ի գործ դնել, որպեսզի «տարբեր մայրաքաղաքներու մանաւանդ Պոլսոյ և Փարիզի ռուս ղեսպաններու պարտաճանաչութեան եւ փութկոտութեան մրցման մեջ [մեր] դատին վնաս չգայ եւ մեր հարցին

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թթ. 1, 2:

² Նույն տեղում, թ. 2:

լուծումը չյապաղի կամ հակասութեանց չենթարկվի»¹:

Չնայած պատճառաբանված որոշակի մտավախություններին՝ Հայ ժողովրդի մեջ նոր ուժով էր վերակենդանանում Ռուսաստանի՝ որպես Հայ ժողովրդի պատմական ճակատագրում վճռական դեր խաղացած տերութեան նկատմամբ անվերապահ խանդաղատանքը: Այդ օրերի Հայ, հատկապես կովկասահայ մամուլի էջերը լի էին ոուսական կայսրությունը, նրա հայասեր ինքնակալներին փառաբանող հողվածներով ու նյութերով, վերատպվում էին Հայ նշանավոր գործիչների՝ հատկապես Սաչախուր Աբովյանի, Լազարյանների, Ստեփանոս Նազարյանցի և ուրիշ մեծերի՝ Ռուսաստանին նվիրված գնահատականները: Շեշտվում էր, որ նոր ժամանակներում Հայ ազգի առաջին հառաչանքն ու ճիշն արձակել է Սաչախուր Աբովյանն իր «Վերջ Հայաստանի» ստեղծագործության մեջ, ուստի նրա անունը սրբազան է ամեն Հայի համար: «Ամենքիս սրտերը լի են սիրով ու երախտագիտության զգացմունքներով նրա կորած գերեզմանի, նրա անմեռ հիշատակի հանդեպ», - կարդում ենք կաթողիկոսին հղած «Հայորդի» ստորագրությունը կրող մի նամակում²:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐՈՒՄ

1913 թ. առաջին կեսին Բրիտանիայի Համայնքների պալատը (խորհրդարանը) երկու անգամ անդրադարձավ Հայկական խնդրին: Անչուչտ, դա հետևանք էր Հայասիրական այն ուժգին շարժման, որ ծավալվել էր երկրում:

Մայիսի 8-ին խորհրդարանում Հայտարարությամբ հանդես եկան պատգամավորներ էնենն Բրայսը և Թ. Բ. Օ'Կոնորը:

Բրայսն իր ընդարձակ ելույթում Ալբանիայի և Ղարաղաղի խնդիրներին համառոտ անդրադառնալուց հետո հանգամանո-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թթ. 1, 2:

² Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 84, թ. 12:

րեն կանգ է առնում Հայկական հարցի վրա:

Հայերին նվիրած իր խոսքը Բրայսը սկսում է նրանով, որ 1878 թ. Բեռլինի դաշնագրի օրերից ի վեր երբեք ավելի նպաստավոր առիթ չի եղել Հայկական խնդրին վերջնական լուծում տալու համար, ինչպես այժմ:

Ելույթ ունեցողն ամենից կարևոր է համարում օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության կյանքի ապահովությունը, որը երկրում չկա: Դա է պատճառը, ասում էր նա, որ Հայ բնակչության մի մասը իր հույսը կապում է ոուսական միջատության հետ, թեև մեծամասնությունն առայժմ չի փափագում իր երկիրը կցած տեսնել Ռուսաստանին: Բոլոր Հայերի նպատակը շարունակում է մնալ իրենց ազգություն և իրենց եկեղեցու պահպանումը: Նրանք ուզում են այսուհետ նույնպես մաս կազմել Օսմանյան կայսրության, իսկ եթե շարունակվի նրանց տառապալից կյանքը, ապա նրանք, հուսահատությունից մղված, ի վերջո կնետվեն Ռուսաստանի գիրկը:

Բրայսն առաջարկում է Թուրքիային չտալ ֆինանսական (փոխառություն) և այլ կարգի օգնություն, մինչև որ նա բարենորոգումներ չկատարի ինչպես իր հայաբնակ նահանգներում, այնպես էլ Կիլիկիայի հայաբնակ շրջաններում: Ելույթի վերջում նա արտգործնախարար էզվարդ Գրեյին խնդրում է «մյուս տերությունների ներկայացուցիչների հետ նպաստավոր նկատել Հայերի պահանջները, որոնք ինքնին խիստ չափավոր են»¹, երբեք չմոռանա, որ Մեծ Բրիտանիան հատուկ պարտավորություններ ունի Հայերի նկատմամբ²:

Այնուհետև ելույթ է ունենում Լիվերպուլից պատգամավոր ընտրված Օ'Կոնորը: Նա սկզբում նշում է, որ միայն Լոնդոնում ստեղծվել է Հայասեր երկու կոմիտե, որ այդպիսիք կյանքի են կոչվել և ակտիվորեն գործում են նաև Փարիզում, Բեռլինում, Ռուսաստանում, Եվեյցարիայում և ուրիշ տեղերում: Չկա մի երկիր, ուր Հայկական տառապանքների մասին հասարակությունը

¹ «Հայկական հարցի վերջին փուլերը», կազմեցին Ջ. Ն. և Մ. Կ., Կ. Պոլիս, 1914, էջ 69-70:

² Նույն տեղում, էջ 70-72:

տեղյակ չլինի և պատրաստակամ չլինի թեթևացնելու դժբախտ մարդկանց վիճակը: Չնայած դրան՝ երկրում շարունակվում են անկարգությունները և քաոսային վիճակը: Թուրքերի համար անհնարին է բռնել առաջադիմություն ճանապարհը, քանի դեռ իրենց երկրում կշարունակվի անկարգությունն ու քաոսային վիճակը: Ահա այս պատճառով է, որ Հայաստանի համար բարենորոգումներ պահանջողները համոզված են, որ դրանից կօգտվեն նաև այնտեղի իսլամները: Օ'Կոնորը գտնում էր, որ Անգլիան իրավունք չունի չմասնակցելու այն մեծ շարժմանը, որ եվրոպայում սկսվել է հայերին հետագա տառապանքներից փրկելու համար: Հենց հիմա է հարմար պահել հայկական խնդիրը լուծելու, քանի որ Թուրքիան եվրոպայից խնդրում է դրամական մեծ օժանդակություն: Այդ խնդրանքը պետք է մերժել, մինչև որ Օսմանյան կառավարությունը երաշխավորություն չտա, որ պիտի ջանա իր նահանգներում բարեկարգ դրություն հաստատել¹: Ելույթի վերջում Օ'Կոնորը սխալ համարեց, որ կառավարությունը անհրաժեշտ եռանդ չի դրսևորում Հայաստանի բարենորոգումների հարցում, և կոչ արեց ավելի հաստատուն քայլեր անել խնդիրն առաջ մղելու համար²:

Երկու պատգամավորներն էլ մատնացույց արեցին հարցի լուծման եղանակը, այն է՝ Հայաստանի բարենորոգումները պետք է կատարվեն միայն եվրոպական երաշխավորության և հսկողության տակ³:

Բրայսի և Օ'Կոնորի ելույթներից հետո հանդես եկավ արտգործնախարարի փոխանորդ Էկլանդը: Նա ողջունեց երկու պատգամավորներին՝ «խիստ կարևոր հարց բարձրացնելու համար», ապա հայտարարեց, որ միանգամայն տեղին են այն բոլոր առաջարկությունները, որոնք ուղղված են Թուրքիայի արևելյան նահանգների բարեկարգմանը: Երկրին անհրաժեշտ է լավ կառավարություն, որը կարող կլինի գլուխ բերելու այդ

գործը: Նա հաստատ համոզմունք հայտնեց, որ Թուրքիայի և բալկանյան դաշնակիցների միջև ընթացող պատերազմը դադարեցնելուց, հաշտություն կնքելուց և ծագած կնճիղները լուծելուց հետո Անգլիան և մյուս տերությունները ձեռք ձեռքի տված կանդրադառնան նաև Թուրքիայի արևելյան նահանգների խնդիրն՝ հատկապես նկատի առնելով հայերի պահանջները¹: Վերջում Էկլանդը պաշտպանեց արտգործնախարարության չափավոր գործելակերպը և շեշտեց, որ, մյուս տերությունների հետ համախորհուրդ, իր գերատեսչությունը շարունակելու է հետևողական աշխատանք տանել Թուրքիայի հետ համաձայնություն ձեռք բերելու ուղղությամբ²:

Հայկական հարցը անգլիական խորհրդարանում բարձրացվեց նաև 1913 թ. մայիսի 29-ին:

Պատգամավոր Օ'Կոնորի այն հարցին, թե ինչ ընթացքի մեջ է Թուրքահայության խնդիրը, արտաքին գործերի նախարար Էդվարդ Գրեյը պատասխանել էր, թե հայերի պահանջները ծայրաստիճան չափավոր են, որ նրանք չեն փափագում ոչ ինքնավարություն և ոչ ուրիշ որևէ մեկ տերության կցում, այլ ցանկանում են օսմանյան հպատակ մնալ և իրենց հնարավորության չափով երաշխավորել Թուրքական կայսրության ամբողջությունը: Նրանք միայն պահանջում են բարենորոգումներ և դրանց համար երաշխիքներ, որոնք ապահովեն իրենց կյանքը, ինչքը և արդարություն: Եվրոպան համոզված է, որ Հայաստանում այլևս ջարդեր չեն լինելու, իսկ դրա երաշխիքը Հայաստանում բարենորոգումներ գործադրելն է՝ եվրոպական հսկողության (կոնտրոլ) պայմաններում: Գրեյը համոզված էր, որ Թուրքական բարձրագույն իշխանությունները այլևս չեն առարկելու եվրոպական հակակոչին³:

Արտգործնախարարի բացատրությունից հետո ելույթ է ունենում Օ' Կոնորը և վկայակոչում «Դեյլի տելեգրաֆ» թերթի

¹ Տե՛ս «Ժամանակ», № 1451, 9 (22) մայիսի 1913 թ.:

² «Հայկական հարցի վերջին փուլերը», էջ 72-74:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 72:

¹ Տե՛ս «Ժամանակ», № 1451, 9 (22) մայիսի 1913 թ.:

² Տե՛ս «Հայկական հարցի վերջին փուլերը», էջ 74:

³ Տե՛ս «Ժամանակ», № 1463, 21 մայիսի (4 հունիսի) 1913 թ.:

Թղթակիցներից մեկի հարցազրույցը Թուրքիայի գահաժառանգ իշխանի հետ, որն ասել էր, թե բացառվում է եվրոպական որևէ կոնտրոլ:

Այնուհետև պատգամավոր Փոնտոներին հիշեցնում է, որ նախկիններում Թուրքիան բազմիցս ընդունել է Հայաստանի բարենորոգումների ծրագրեր, բայց դրանցից ոչ մեկը չի կատարել: Ուստի այժմ պետք է նրան հարկադրել, որպեսզի այս նոր ծրագիրը նույնպես չարժանացնի նախկինների բախտին*:

Նիստի վերջում կրկին հանդես է գալիս արտգործնախարար Գրեյը՝ անորոշ ու անարյուն ելույթով: Նա չեչտում է, որ Ասիական Թուրքիայի բարենորոգումների խնդիրը խիստ կարևոր է, ուստի դրա լուծումով խիստ շահագրգիռ են բոլոր այն պետությունները, որոնք շահ ունեն այնտեղ: Ահա թե ինչու ամեն կերպ պետք է օգնել Թուրքիային, որպեսզի Բալկանյան պատերազմը վերջանալուց անմիջապես հետո առանց հապաղելու նա գլուխ բերի բարենորոգումների խիստ կարևոր գործը¹:

Սորհրդարանում Հայկական խնդիրների չուրջ մտքերի փոխանակումը լայնորեն լուսաբանվեց «Թայմզ» և «Դեյլի տելեգրաֆ» թերթերի մայիսի 30-ի համարներում:

Մայիսի 18-ին Հայկական հարցին անդրադարձավ նաև Իտալիայի խորհրդարանը: Այդ օրն արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչը պառլամենտականներին հանգամանորեն տեղեկացրեց Հայկական բարենորոգումների ուղղությամբ տարվող աշխատանքներին: Սորհրդարանի անդամների

* Եվրոպական հակակռոնի անհրաժեշտության մասին անգլիական պառլամենտում էզովարդ Գրեյի և երկու պատգամավորների ելույթները խիստ դժգոհություն էին առաջացրել թուրքական մամուլում: Այսպես, կովկասյան թուրքերի շրջանում 1911 թ. ստեղծված «Մուսավաթ» կուսակցության պարագլուխներից Ահմեդ Աղաևը, որի մի ոտքը Բաքվում էր, մյուսը՝ Ստամբուլում, այստեղի «Թերջուման» թերթի մայիսի 23 (հունիսի 5)-ի համարում քննադատել էր անգլիական նշված քաղաքական գործիչներին՝ նրանց դիրքորոշումը համարելով կոպիտ միջամտություն օսմանյան երկրի ներքին գործերին (Տե՛ս «Ժամանակ», № 1466, 24 մայիսի (6 հունիսի) 1913 թ.):

¹ Տե՛ս «Ժամանակ», № 1463, 21 մայիսի (4 հունիսի) 1913 թ.:

այն հարցին, թե իտալական կողմը կոնկրետ ինչ քայլեր է ձեռնարկում Հայաստանում հանգստություն ստեղծելու ուղղությամբ, արտգործնախարարության պաշտոնյան պատասխանել էր, որ կառավարությունը Կ. Պոլսի իր դեսպանի միջոցով պարբերաբար իրազեկվում է, թե ինչ է կատարվում Հայկական հարցի շուրջ, և համոզված է, որ Թուրքիայի խաղաղությունն ու անդորրությունը կախված են այդ հարցի լուծումից: Նա նաև նշեց, որ հարցն առաջ մղելու համար իտալական կառավարությունը Բ. Դոանն առաջարկել է իր ծառայությունները, որպեսզի Ասիական Թուրքիայում քաղաքական վարչությունը վերակազմակերպելու միջոցով նպաստած լինի մարդասիրության գործին¹:

Իտալական պառլամենտը Հայկական հարցին անդրադարձավ նաև մայիսի 31-ի նիստում: Պատգամավոր Կալին հարցապնդում արեց Հայոց վիճակի մասին: Արտգործնախարարության խորհրդական իշխան Սքալեան, պատասխանելով հարցումին, ասաց, թե իտալական կառավարությունը «միջազգային պաշտպանության սահմաններում շարունակում է հետևել Հայկական հարցի շուրջ տեղի ունեցող բանակցությունների զարգացումներին: Մինչև այժմ, - շարունակում է իշխանը, - Հայաստանի մեջ կացութիւնը սպառնալից կ'երեւի: Իտալիա, որ մեծապէս կ'փափաքի Օսմ. Կայսրութեան հողային ամբողջութեան ամրապնդմանը Ասիական Թուրքիոյ մէջ, կ'կարծէ թէ այն երկրին մէջ խաղաղութիւնն ու հանդարտութիւնը մեծապէս կախում ունին Հայկական խնդրոյն կարգադրումէն: Իտալական կառավարութիւնը այս ուղղութեամբ Բ. Դոան մօտ դիմում պիտի կատարէ, որպէսզի Թուրքիա գիտնայ թէ Իտալիա, ինչպէս միւս բոլոր տէրութիւնք, համոզուած է որ Օսմ. Կայսրութիւնը ինքզինքը նուիրելով իր ասիական նահանգներուն քաղաքային ու վարչական վերակազմութեանը, ծառայած պիտի ըլլայ քաղաքակրթութեան ու մարդկութեան դատին» (ծափեր)²:

Անդրադառնալով հարցապնդմանը և դրա պատասխանին՝ Իտալիայի հեռագրական գործակալությունը հաղորդել էր. «Ար-

¹ Տե՛ս «Հորիզոն», № 110, 21 մայիսի 1913 թ.:

² Տե՛ս «Բիւզանդիոն», № 5048, 20 մայիսի (2 հունիսի) 1913 թ.:

տաքին գործոց խորհրդական իշխան Աքալէա պատասխանելով երեսփոխան Կալլիի մէկ հարցապնդումին, յայտարարեց թէ իտալական կառավարութիւնը միջազգային պատշաճութեան սահմաններուն մէջ միշտ հետաքրքրուած է Փոքր Ասիոյ մէջ Հայոց խնդրով եւ Իտալիա մեծապէս կ'փափաքի Ասիական Թուրքիոյ հողային ամբողջութեան ամրապնդման եւ տնտեսական զարգացման: Արտաքին գործոց խորհրդականը կ'յուսայ որ խաղաղութիւնն ու հանդարտութիւնը չպիտի խոռովին Հայաստանի մէջ, որովհետեւ այնպէս կ'նկատէ թէ ասիկա ամենակարեւոր միջոցներէն մին է Օսմ. կառավարութեան ամրութեանը համար»¹:

«Բիւզանդիոնը» մայիսի 29-ին նույնպէս անդրադարձել էր իտալական պառլամենտում Հայկական հարցի քննարկման ընթացքին և Աքալէայի ելույթից նոր հատված էր հաղորդել: Սա ցավով ասել էր նաև հետևյալը. «Պերլինի Դաշնագրէն երեսունհինգ տարի ետքը, տակաւին բան մը եղած չէ Հայաստանի մէջ իրագործելու այն բարեկարգութիւնները, որոնք յիշեալ Դաշնագրով նախատեսուած էին: Մանաւանդ թէ Եւրոպայի թոյլատու անգործութեան հանդէպ, առիթ տրուած է աւելի սաստիկ բռնութիւններ գործադրել այդ երկրին մէջ, նոր արիւնագանգ էջեր աւելացնելով անոր պատմութեան վրայ, Համիտի օրով»²:

Այնուհետև ելույթով հանդես էր եկել պատգամավոր Կալին ու թվարկել այն մեծ ոճրագործությունները, որ նախկինում կիրառվել են Հայերի նկատմամբ: Նա հիշեցրել էր, որ Համիդի օրոք զոհվել են հարյուրհազարավոր հայեր, և ցավ էր հայտնել, որ մեծ տերությունները մինչև այժմ զլացել են ազգու միջոցներ գործադրել թուրքական բռնակալների նկատմամբ, որպեսզի զսպեն նրանց գազանային կրքերը, և ստեղծվեն տարրական պայմաններ քրիստոնյա Հայ ժողովրդի ապահովության համար (ներկաները պատգամավորի ելույթը ընդունել էին ծափերով ու համակրական արտահայտություններով)³:

¹ Տե՛ս «Բիւզանդիոն», № 5048, 20 մայիսի (2 Հունիսի) 1913 թ.:

² Տե՛ս նույն տեղում, № 5056, 29 մայիսի (11 Հունիսի) 1913 թ.:

³ Նույն տեղում:

Բայց ինչպէս Անգլիայի համայնքների պալատում, այնպէս էլ Իտալիայի պառլամենտում այդ ամիսներին հայերի մասին արտասանած ճառերը, ինչպէս նաև եվրոպական դանադան շրջանակներում հնչած համակրական պլատոնական արտահայտությունները շոշափելի արդյունք չտվեցին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՎ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամիսներ առաջ՝ 1912 թ. դեկտեմբերի 22-ին (հ. տ. 9-ին), «Русские Ведомости» թերթում լույս ընծայած «Հայերը և թուրքական ճգնաժամը» հոդվածում Ա. Զիվելեգովը գրում էր, թե Լոնդոնում տերությունների ներկայացուցիչները խուսափում են Բալկաններում տեղի ունեցող իրադարձությունների առնչությունը քննություն առնել նաև հայության վիճակը և մի ելք առաջարկել: Նա գտնում էր, որ հայերի խնդրի լուծումով առավել շահագրգռված Ռուսաստանի պարտականությունն է Լոնդոնում բարձրացնել Հայկական հարցը և այն ներառել Դեսպանաժողովի օրակարգ¹:

Իսկ դրանից ավելի վաղ՝ 1912 թ. նոյեմբերի վերջերին, «Berliner Tagesblatt» թերթի թղթակիցը Թուրքիայի արտգործնախարար Գաբրիել Նորատունկյանին հարցրել էր, թե Բալկանյան պետությունների և Թուրքիայի միջև հաշտություն կնքելուց հետո արդյո՞ք եվրոպական մի նոր դեսպանախորհրդի կարիք է լինելու: Նախարարը խուսափողական դիվանագիտական պատասխան էր տվել. «Ինձ անհրաժեշտ չի թուիր. սակայն կրնայ ըլլալ որ մեծ պետությունները պետք տեսնեն՝ ինչ-ինչ շահակցական հարցեր կարգադրելու համար»²:

Անգլիական դիվանագիտությունը գտնում էր, որ Հայկական

¹ Տե՛ս «Русские Ведомости», 22 декабря 1912 г.:

² Հարցազրույցի հայերեն թարգմանությունը տե՛ս «Առաջամարտ», № 1069, 24 նոյեմբերի (6 դեկտեմբերի) 1912 թ.:

հարցը կարող է դիվանագիտական սեղանին դրվել միայն Բալկանյան պատերազմի ավարտից հետո, երբ կվերանան համաշխարհային խաղաղությունը սպառնացող վտանգները: Անգլիացիների հաշվարկներով ենթադրվում էր, որ Հայկական հարցը կարող է եվրոպական դիվանագիտական սեղան բարձրանալ 1913 թ. հունիս-հուլիսին և վերջնական լուծում ստանալ նույն տարվա ընթացքում¹:

Դեռևս 1913 թ. հունվարի վերջերին Փարիզում ավարտվել էր Հայկական բարենորոգումների ծրագրի կազմումը: Այդ մասին Փարիզում ուսական ղեսպան Իզվոլսկու հետ հանդիպման ժամանակ նրան տեղյակ էր պահել Պողոս Նուբարը: Վերջինս նաև հայտնել էր, թե կաթողիկոսի հաստատմանը ենթարկելուց հետո նախագիծը կներկայացվի ուսական կառավարությունը: Ռուս դիվանագետը Պողոս Նուբարին թելադրել էր առայժմ ոչ մի քայլ չանել, մինչև որ նախագծում առաջադրված հարցերի մասին Պետերբուրգից պատասխան չստացվի (ասել է թե՛ պետք չէ դիմել Լոնդոնի ղեսպանաժողովին)²:

Իսկ որտե՞ղ և ի՞նչ մակարդակով պետք է տեղի ունենար բարենորոգումների ծրագրի վերջնական նախագծի քննարկումը:

1913 թ. մարտին եվրոպական մամուլում կարծիք էր արձարծվել, թե Լոնդոնի կոնֆերանսում Բալկանյան երկրների և Թուրքիայի միջև հաշտության պայմանագիր կնքելիս հնարավոր է, որ հաշվի առնվեն նաև Բեռլինի դաշնագրի (1878 թ.)՝ Մակեդոնիային և Հայաստանին վերաբերող հոդվածները: Այդ լուրը մեծ հետաքրքրություն էր առաջ բերել հայ քաղաքական գործիչների մոտ՝ թե՛ Կ. Պոլսում և թե՛ ամենուր:

Այդ և նման լուրերի ազդեցություն տակ Հայկական պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փառան 1913 թ. մարտի

13-ին Փարիզում ներկայանում է տեղի ուսական ղեսպան Իզվոլսկուն և խնդրում է ասել, թե Ռուսաստանի կառավարությունը արդյո՞ք ժամանակը հասած է համարում, որ հայերն իրենց հարցը արժարծեն Լոնդոնի ղեսպանաժողովում: Պողոս փառան այս էլ որերորդ անգամ շեշտում է, որ Թուրքահայերը չեն ցանկանում ինքնավարություն կամ հպատակության փոխում, այլ միայն բարենորոգումներ՝ համաձայն Հայկական հարցի վերաբերյալ եվրոպական մեծերի նախկինում ընդունած փաստաթղթերի:

Այդ կարծիքին տեղեկացված անգլիացի բարձրաստիճան դիվանագետներից մեկը հայտարարություն էր արել, որը բրիտանական մամուլում տպագրվելուց հետո թարգմանաբար լույս էր տեսել Կ. Պոլսի «Ժամանակ» թերթում: Դիվանագետն ասել էր, թե «Հայկական հարցն այս միջոցիս իր ամենէն փայլուն վիճակին մէջ է, որ կը գտնուի»¹, բայց նաև ավելացրել էր, որ Լոնդոնի կոնֆերանսը Բեռլինի դաշնագրի Մակեդոնիային և Հայաստանին վերաբերող հոդվածները փոխելու որևէ լիազորություն չի կարող ունենալ, որովհետև այն միայն ղեսպանների համաժողով է, իսկ Բեռլինի դաշնագիրը կնքվել է միջազգային վեհաժողովում, հետևապես՝ այն կարող է փոփոխության ենթարկվել միայն վեց մեծ տերությունների ներկայացուցիչների մի նոր միջազգային վեհաժողովում: Չնայած դրան՝ դիվանագետը համոզված էր, որ, այնուամենայնիվ, տերությունները մի միջոց կգտնեն, որպեսզի միջազգային վերահսկողություն իրականացնելու միջոցով Հայաստանում գործադրվեն բարենորոգումներ²:

Եվ իսկապես. Անգլիան, վկայակոչելով Լոնդոնի ղեսպանաժողովի աշխատանքի ծանրաբեռնվածությունը և այն, որ դա կոչված է քննելու միայն բալկանյան պատերազմի հետևանքով առաջացած խնդիրները, առաջարկեց հայերի հարցը դուրս թողնել դրա շրջանակից և այն քննության առնել նույնպես Լոն-

¹ Տե՛ս *М. Кочар, Армяно-турецкие общественно-политические отношения и Армянский вопрос (в конце XIX – начале XX веков), Издательство Ереванского университета, Ереван, 1988, էջ 204:*

² Տե՛ս «Վեմ», № Բ, նոյեմբեր-դեկտեմբեր, 1933, էջ 85:

¹ «Ժամանակ», № 1447, 5 (18) ապրիլի 1913 թ.:

² Տե՛ս նույն տեղում:

դոնում, բայց ոչ թե մեծ տերութունների արտգործնախարարների, այլ ղեսպանների մակարդակով: Ավելին, անգլիական դիվանագիտութունը մշակեց ցանկն այն հարցերի ու սկզբունքների, որոնք ենթակա էին քննության ստեղծվելիք ղեսպանաժողովում¹: Ռուսաստանը համաձայնութուն տվեց այդ ցանկին, բայց միաժամանակ փափագ հայտնեց, որ դրանք քննվեն Կ. Պոլսի ղեսպանների միջոցով՝ պատճառաբանելով, որ նրանք ավելի լավատեղյակ են թուրքական իրականությանը, քան տերութունների Լոնդոնի ղեսպանները: Ի վերջո, Ռուսաստանը կարողացավ ընդունել տալ իր տեսակետը², միաժամանակ դիմեց եվրոպական մեծ երկրների կառավարութուններին՝ Կոստանդնուպոլսի իրենց ղեսպաններին հանձնարարել պատրաստել հիմքերը Հայաստանի բարենորոգումների ծրագրի, որը պիտի ներկայացվի Բ. Դուանը՝ հայկական գավառներում գործադրելու համար:

Այդ պահից սկսած Հայաստանի բարենորոգումների հարցի գլխավոր դերակատարը դառնում էր Ռուսաստանը:

Պաշտոնական աղբյուրից լուրը լսելուց հետո Պողոս Նուբարը նպատակահարմար էր համարել անմիջականորեն դիմել պետութունների Փարիզի ներկայացուցիչներին: Նա կաթողիկոսին հաղորդում էր, որ նրանք բոլորը շատ նպաստավոր տրամադրութուն են ցույց տվել և միաձայնությամբ ընդունել են, թե թուրքահայության տառապանքներին հնարավոր է վերջ տալ բարենորոգումների գործադրմամբ, այն էլ Բալկանյան պատերազմից հետո միայն³:

Համաձայնության երեք երկրները անլուծելի որևէ խնդիր չունեցան Կ. Պոլսի ղեսպանաժողովի (ղեսպանախորհրդի) ստեղծման գործընթացում: Հակառակ դրան՝ գերմանական կառավարութունն առաջ էր քաշում զանազան պատրվակներ՝ խափանելու սկսված գործը, բայց, ի վերջո, տեղի տվեց և Կ.

¹ Տե՛ս «Հեռագրեր», № 11, 2 (15) փետրվարի 1913 թ.:

² Տե՛ս Վ. Մալեգեան, Ճամբուս վրայ (Յուզբաղ), Բարիդ, 1950, էջ 316:

³ ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 49, թ. 15:

Պոլսի իր ղեսպան Վանգենհայմին հանձնարարեց միանալ մյուս երկրների ղեսպաններին:

Հետևելով իրենց գերման դաշնակցին՝ Ավստրիան և Իտալիան նույնպես համաձայնութուն տվեցին և Կ. Պոլսի իրենց ղեսպաններին հանձնարարեցին այնտեղ բացվելիք ղեսպանաժողովում Հայկական հարցի քննարկման ժամանակ գործել Գերմանիայի ղեսպանի հետ միակամ ու միաբան:

Կ. Պոլսի ղեսպանաժողովի կազմը հետևյալն էր՝ Մ. Գիրս (Ռուսաստան), Լ. Մալեթ (Անգլիա), Բոմպար (Ֆրանսիա), մարկիզ Պալլավիչին (Ավստրիա), Վանգենհայմ (Գերմանիա), Գառոնին (Իտալիա): Դեսպանաժողովը գործելու էր Ավստրիայի ղեսպան Պալլավիչինի նախագահությամբ¹:

Դեսպանախորհուրդն արտոնվեց հայկական բարենորոգումների ծրագիրը մշակել հավաքաբար: Մեկ-երկու նիստից հետո Կ. Պոլսի ղեսպաններն իրենց թարգմաններից ու քարտուղարներից կազմեցին հանձնախումբ, որին հանձնարարվեց պատրաստել բարենորոգումների ծրագրի նախնական տարբերակը, ըստ որում՝ խիստ կարևոր համարվեց ստեղծել այնպիսի փաստաթուղթ, որն ընդունելի լինի բոլոր կողմերի համար: Հանձնախմբի ամենաուշագրավ երկու անդամներն էին Կ. Պոլսում անգլիական ղեսպանատան առաջին քարտուղար Ֆիցմորիսը և ուսական ղեսպանատան առաջին թուրքիան Մանդելշտամը: Նրանք Արևելքը և մանավանդ Թուրքիան շատ լավ էին ուսումնասիրել, հատկապես մոտիկից քաջ ծանոթ էին Հայաստանի պետքերին ու կարիքներին:

Հանձնախմբի անդամները սկսեցին ուսումնասիրել Հայաստանին վերաբերող հին ու նոր դիվանագիտական փաստաթղթերը և այլ աղբյուրներ: Համեմատաբար կարճ ժամկետում նրանք քննարկման ներկայացրին ծրագրի իրենց նախագծերը: Իր ծրագիրը ներկայացրեց նաև թուրքական կառավարութունը:

Անդրադառնալով Ռուսաստանի նախաձեռնությամբ կյանքի կոչված Կ. Պոլսի ղեսպանաժողովի «անսպասելի» սկսած աչ-

¹ Տե՛ս «Աւետարներ», № 28, 12 Հուլիսի 1913 թ.:

խատանքներին՝ Դաշնակցության Վանի օրգան «Աշխատանք» թերթը գրում էր. «Ներկայիս որոշ է որ Ռուսիան հայկական հարցի նկատմամբ ցոյց տա՞ծ վերապահ քաղաքականություն էն դուրս եկած է եւ կզբաղւի անով»¹: Իր հերթին Յաղուր Արթին փաշան Վ. Մալեզյանին գրում էր. «Կարելոն այն է, որ մեզմով լրջորեն կը զբաղին եւ վստահ եմ որ վերջ ի վերջոյ Հայաստանի նպաստաւոր որոշում մը պիտի տրուի, տա՛յր Աստուած: Մինչ այդ, հարցը դրուած է պետութեանց առջեւ, եւ մեզի ուրիշ բան չի մնար բայց եթե սպասել իրենց բարի տրամադրութեան»²:

Հայկական հարցի շուրջ մեծ պետությունների ձեռք բերած համաձայնությունը քանդելու նպատակով թուրք կառավարությունը դիմեց հերթական նենգ քայլի:

1913 թ. մայիսի 2-ին Լոնդոնում թուրք ղեսպան Թեֆիկ փաշան դիմում է անգլիական իշխանություններին և իր կառավարության անունից խնդրում տեսուչներ ուղարկել Թուրքիա, որպեսզի հայկական նահանգներում բարեփոխումներ կատարելու ընթացքում աջակից լինեն նահանգական իշխանություններին:

Բ. Դոան նպատակը պարզ էր՝ հակասություններ առաջ բերել Անգլիայի և Ռուսաստանի միջև, քանի որ վերջինս չէր հանդուրժի Անգլիայի պաշտոնյաների ներկայությունը Հայաստանում, որը նա համարում էր իր ազդեցություն չըջանը:

Բնականաբար, ռուսական կողմը հանդես է գալիս վճռական բողոքով՝ սպառնալով, որ չի կարող անտարբեր դիտողի դերում լինել և հանգիստ նայել, թե ինչ է կատարվում սահմանամերձ Հայաստանում:

Ռուսական կողմի անդիջում դիրքը զգաստացրեց անգլիական կառավարությանը: Չցանկանալով բարդացնել հարաբերությունները Պետերբուրգի հետ՝ նա որոշեց առայժմ չընդառնալ Բ. Դոան խնդրանքին:

Այդ դեպքը Ռուսաստանին ստիպեց ակտիվացնել դիվանա-

գիտական աշխատանքը և արագացնել Կ. Պոլսում իր ներկայացուցչություն կողմից պատրաստվող հայկական բարենորոգումների ծրագրի նախագծի քննարկումը:

Հայկական բարենորոգումների գաղափարի շուրջ պետությունների կառավարություններին միավորելուն ուղղված Ռուսաստանի ջանքերը ջերմ վերաբերմունքի էին արժանանում հայկական շրջաններում: Աշխարհի տարբեր ծայրերից շնորհակալական հեռագրեր ու նամակներ էին հղվում Պետերբուրգ, ինչպես նաև եվրոպական երկրների ռուսական դեսպանատների հասցեներով: Ռուսական կառավարության կողմից ձեռք առնված նախաձեռնություն լուրը ստանալուն պես Պոզոս Նուբարն այցելում է Փարիզում ռուսաց դեսպանություն և Ազգային պատվիրակության անունից դեսպան Իզվոլսկուն հանձնում շնորհակալական գրություն: Միաժամանակ նա դեսպանին խնդրում է Պետերբուրգ՝ Նիկոլայ II կայսրին հղել ամբողջ հայ ժողովրդի երախտագիտական խոր զգացմունքները:

Օրհասական այդ պահին հայ քաղաքական ու հասարակական գործիչները տենդագին նվիրումով շարունակում էին հայության համար ստեղծված անագորույն վիճակից ելքեր փնտրել:

Հայերը դեռևս շարունակում էին կարծել, թե եվրոպական դիվանագիտությունը առաջնորդվում է մարդասիրական գաղափարներով: Չնայած հայերի բացարձակ մեծամասնությունը բազմիցս հուսախար էր եղել, բայց վերացական ըմբռնումներով շարունակում էր քայլել ինքնախաբեություն չավիղներով: Նա այնպես էլ չէր տարհամոզվում, որ իր մեղկ շահից դուրս պաշտոնական Եվրոպան ուրիշ առաջնորդող գաղափար չունի և չի կարող ունենալ, թեև այդ շահը նա միշտ ոսկեգօծում է հրապուրիչ գաղափարներով ու սին խոստումներով: Եվրոպական մեծերը Հայաստանի խնդրով զբաղվելիս ամենից առաջ հետամուտ էին իրենց հակոտնյա շահերին: «Հայկական բարձրավանդակի վրա, - գրում էր Նիկոլ Աղբալյանը, - խաչաձևում են քաղաքական մեծ շահեր, որոնց հաշտեցնելու մեջ է դժվարությունը»¹:

¹ «Աշխատանք», № 32 (128), 22 հունիսի 1913 թ.:

² Վ. Մալեզյան, Ճամբուս վրայ (Յուշաբաղ), Բարիդ, 1950, էջ 317:

¹ Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. III, Բեյրութ, 1967, էջ 173:

Հենց այդ շահերի բախումն էր, որ ի չիք էր դարձնում հայա-նպաստ որևէ իրական գործ:

Դեռևս 1913 թ. մայիսի վերջերին Ռուսաստանի արտգործ-նախարար Ս. Գ. Սազոնովը հանձնարարում է Բեռլինի ուսաց դեսպան Ս. Ն. Սվերբեկին՝ գերմանական կառավարությանը նախագգուչացնել Պետերբուրգի որոշման մասին, թե ուսական կառավարությունը հաստատակամ է Հայաստանում ձեռնարկե-լու բարենորոգումներ այն նախագծերի ոգով, որոնք նախատես-ված են Բեռլինի դաշնագրով և 1895 թ. տաճկական օրենքով, որը Թուրքիան հրատարակել է Եոյակ համաձայնության պե-տությունների ճնշման տակ, բայց որի գործադրությունը մինչև այսօր նա ձեռնամուխ չի եղել¹:

Սվերբեկը պետք է նաև գերմանական կառավարությանը համոզեր, որ Ռուսաստանը ձգտում է այդ խնդրում ամեն կերպ խուսափել եվրոպական կառավարությունների հետ որևէ մրցակցությունից և որ ցանկանում է, մեծ պետությունների երկու խմբավորումների միջև համերաշխություն ստեղծելով, միահամուռ ջանքերով բարվոքել օսմանյան պետության հայ ազգաբնակչության վիճակը խելացի ու արդարամիտ բարենորո-գումների միջոցով: Ռուսաց դեսպանը, վերջապես, գերմանական կառավարությանը պետք է համոզեր, որ ուսական կառավա-րությունը, իր վրա վերցնելով Հայաստանում բարենորոգումներ կատարելու նախաձեռնությունը, ամենևին մտադրություն չունի բռնաբարելու և խախտելու Թուրքիայի իրավունքները, այլ հենց նրա սեփական շահերից ելնելով՝ ցանկանում է կայսրության սահմաններում տեղի ունենալիք ամեն տեսակ վտանգավոր բարդությունների առաջն առնել²:

Նույն մտահոգությունը ուսական կառավարությունը դիմեց նաև Եոյակ համաձայնության անդամ իր դաշնակիցներին՝ Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի կառավարություններին, որոնք արձագանք տվեցին համակրանքով և իրենց Պոլսո ներկայա-

¹ Տե՛ս С. Д. Сазонов, Воспоминание, М., 1991, էջ 169–170:

² Տե՛ս նույն տեղում, էջ 170:

ցուցիչներին ուղարկեցին համապատասխան հրահանգներ:

Ինչ վերաբերում է Գերմանիայի և Զինակցության մյուս պե-տությունների Պոլսո դեսպաններին, ապա նրանք իրենց կառա-վարություններից թույլտվություն ստացան մասնակցելու Հայ-կական բարենորոգումների նախագծերի մշակմանը նվիրված խորհրդակցություններին՝ հետևյալ պայմաններով. 1) Պահպա-նել սուլթանի գերագույն իրավունքները Հայաստանի վրա, 2) Պահանջել խորհրդակցությունների ընթացքում Թուրքիայի ներկայացուցչի մասնակցությունը:

Բայց շատ չանցած՝ Բեռլինը վերապահ մնաց հայկական բարենորոգումներին նվիրված բանակցություններին մասնակ-ցելուց:

Իրեն տրված հանձնարարության կատարման մասին Ս. Սազոնովին ներկայացրած հաշվետվության մեջ դեսպան Սվերբեկը հաղորդել էր, որ Գերմանիայի արտաքին գործերի նախարարը «համակրանք չի արտահայտել մեր մտադրության հանդեպ, թեև խոստովանել էր, որ հայկական վիլայեթներից Բեռլին նույնպես հասել են աղեկտուր տեղեկություններ, որոնք, ըստ նրա խոսքերի, հնարավոր չէ միշտ ստուգել»¹: Բարենորո-գությունների խնդիրը, չարունակում էր Սվերբեկը, գերման արտգործնախարարին շատ դժվար է թվում, որովհետև, նրա կարծիքով, իբր թե իրենք՝ հայերն են դրդապատճառ հանդիսա-նում: Ըստ որում, ասել էր Փոն Յագովը, պետությունները, հա-յերի մասին հոգալով, պետք չէ մոռացության տան նաև Հայաս-տանի քուրդ ազգաբնակչության շահերը²:

Չնայած գերմանական կողմի բացահայտ հակակրանքին դե-պի հայկական պահանջները՝ Պետերբուրգը չէր դադարեցնում իր համառ ջանքերը նրան Հայաստանի բարենորոգումների խնդրի մեջ կրկին ներգրավելու համար: Եվ դա նրան հաջողվեց:

Օրեր անց՝ 1913 թ. հունիսի 7-ին, ուսական կառավարու-թյունը Սազոնովի միջոցով հաղորդագրություն է ուղարկում մեծ

¹ Տե՛ս С. Д. Сазонов, Воспоминание, М., 1991, էջ 169–170:

² Տե՛ս նույն տեղում, էջ 170:

տերություններին, որով առաջարկվում է Կոստանդնուպոլսում Հայաստանի բարենորոգումների հարցի՝ դեսպանների մակարդակով քննարկումը կազմակերպելու հիմք ընդունել 1895 թ. նախագիծը: Ռուսական այս նախաձեռնությունն ընդունվել էր, թեև գերմանական կողմը հարուցել էր լուրջ խոչընդոտներ. նա կրկին ցանկացել էր, որ թուրքական պատվիրակությունը ներկա լինի քննարկումներին, բայց ռուսական դիվանագիտությունը կտրուկ մերժել էր¹:

ԱՆՎԵՐՋԱՆԱԼԻ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋ

Կլուծվե՞ր արդյոք Հայկական հարցը Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի իրագործման միջոցով, կտրվե՞ր արդյոք Թուրքահայաստանին լայն թե սահմանափակ ինքնավարություն, կստեղծվե՞ր արդյոք Հայկական մի ինքնուրույն իշխանություն, թե՞ կյանքի կկոչվեր միայն 1895 թ. մայիսյան բարենորոգումների օրինագիծը, այս հարցերի պատասխանները կտար միայն իրադարձությունների հետագա ընթացքը²:

Բայց մի բան պարզ էր: Եթե նույնիսկ թուրք կառավարությունը համաձայններ կյանքի կոչել այդ տարբերակներից որևէ մեկը, միևնույնն է, առանց եվրոպական վերահսկողության ոչինչ չէր ստացվի: Իսկ վերահսկողության հարցը, որքան էլ անհավատալի թվար, կարծես կերպարանք էր առնում. ամեն ինչից երևում էր, որ մեծ տերությունները տրամադիր են հանձն առնել իրականացնելու բաղձալի վերահսկողությունը:

Ահա այդ պահին՝ 1913 թ. մայիսին էր, որ Հայաստանի նկատմամբ եվրոպական վերահսկողության հարցի առջև անսպասելիորեն ու միանգամից ցցվեց համարյա անհաղթահարելի մի խոչընդոտ. բոլորի աչքի առջև կարծես կրկնվում էր Սան-

¹ Տե՛ս Վեստենենկի օրագիրը (Յան Վան դեր Դյուսենի առաջաբանը), էջ 22:

² Տե՛ս «Մշակ», № 99, 9 մայիսի 1913 թ.:

Ստեֆանոյի 1878 թ. նախնական պայմանագրի հետ կապված պատմությունը:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանը խոչոր հաղթանակներ էր տարել բալկանյան և փոքրասիական ճակատներում: Բալկաններում ռուսական զորքերը գրավել էին Ադրիանուպոլիսը, Չաթալջան և Բուլաիրը, մտել էին Կ. Պոլսից ընդամենը մի քանի կիլոմետրի վրա գտնվող Սան-Ստեֆանո քաղաքը, իսկ Փոքր Ասիայում ազատագրել էին Բաթումը, Կարսը, Արղահանն ու Բայազետը:

Ռուսների հաղթական պատերազմից հետո՝ 1878 թ. փետրվարի 19-ին (մարտի 3-ին)՝ Սան-Ստեֆանոյում ստորագրված հաշտության նախնական պայմանագրի դորությունամբ, ինչպես առիթ է եղել նշելու այս աշխատության նախորդ գրքերում, հայ ազգը ազատվելու էր թուրքական անազորույն լծից, Հայաստանում մտցվելու էին բարենորոգումներ՝ Ռուսաստանի երաշխավորությամբ և վերահսկողությամբ:

Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը խիստ դժգոհություն էր առաջացրել եվրոպական մեծ պետությունների, հատկապես Անգլիայի և Ավստրո-Հունգարիայի մոտ, որոնք պահանջեցին պայմանագրի վերանայում միջազգային վեհաժողովում: Հատկապես Անգլիայի ջանքերով ամեն բան հեղաշրջվեց:

Բեռլինում կոնգրեսի հավաքված մեծ տերությունների ներկայացուցիչների կողմից 1878 թ. մայիսի 18 (30)-ին ստորագրված պայմանագրի 61-րդ հոդվածով Հայաստանում նախատեսված բարեփոխումների իրականացումը հանվեց ոչ միայն Ռուսաստանի, այլև եվրոպական մեծ տերությունների վերահսկողությունից: Դրանով իսկ եվրոպական երկրները, հատկապես Անգլիան, մեղսակից դարձան հետագա տասնամյակներին թուրքերի կողմից հայության գլխին թափված զուլումներին:

Բեռլինի դաշնագիրը ստորագրելուց անմիջապես հետո՝ 1878 թ. հունիսի 4-ին, Անգլիան առանձին դաշնագիր կնքեց Թուրքիայի հետ, որը հայտնի է «Կիպրոսի դաշնագիր» անունով: Այդ դաշնագրով Թուրքիան Անգլիային հանձնեց Կիպրոս կղզին, փոխարենը երաշխիքներ ստացավ օսմանյան կայսրության տա-

րաճքային ամբողջականություն պահպանման համար: Զևի համար Թուրքիան նաև պարտավորվեց բարենորոգումներ մտցնել Հայաստանում:

Հենց այս երկու՝ Բեուլինի և Կիպրոսի դաշնագրերով Թուրքիան Հայաստանի հարցում իրեն ազատեց մեծ տերությունների իրական վերահսկողությունից: Դա նրան հնարավորություն տվեց մի կողմ նետել Հայաստանի բարենորոգումների բոլոր ծրագրերը, որ առաջարկում էին Եվրոպան և Ռուսաստանը: Ավելին, Հայ ժողովրդի համար սկսվեցին գեհեների տասնամյակները, երբ Թուրքիան եվրոպական մեծ պետությունների անտարբեր աչքերի առաջ Հայաստանը ողողեց արյունով, ենթարկեց քայքայման ու ամայացման:

Եվ ահա այժմ՝ Բեուլինի դաշնագրից 35 տարի անց՝ 1913 թվականին, երբ Ռուսաստանը նորից իր ձեռքն էր առել Թուրքահայությունից ազատագրության գործը, Անգլիան նորից կատարում էր իր եղկելի դերը:

Մինչ Անգլիայի արտգործնախարարությունից ներկայացուցիչը 1913 թ. մայիսին համայնքների պալատում հայտարարում էր, թե Բալկանյան պատերազմից հետո իր կառավարությունը և եվրոպական մյուս մեծ տերությունները ձեռք ձեռքի տված պիտի նպաստեն Հայկական հարցի լուծմանը, հենց այդ նույն ժամանակ նույն կառավարությունը մյուս հինգ մեծ տերություններից գաղտնի ձեռնարկել էր Թուրքիայի հետ մի նոր դավադիր համաձայնագրի կնքմանը, որով առաջիկա 40 տարում երաշխավորում էր նրա անձեռնմխելիությունը:

Համաձայնագրի նախագիծը, որ հետո հայտնի էր դառնալու հանրությունը, ենթադրում էր ուժեղացնել Անգլիայի դիրքերը Թուրքիայի արևելյան նահանգներում և դրանք սահմանազատել «դաշնակից Ռուսաստանի վտանգից»:

Ինչպես հայտնի է, օսմանյան բանակի կազմակերպման գործը Թուրքական կառավարությունն ավանդաբար հանձնել էր գերմանացիներին, նավատորմը կազմակերպելու համար պաշտոնի էին կանչված անգլիացի սպաներ, ոստիկանական զորքերի վարժեցումը և կարգի բերելը նախկինում կատարում էին իտալացիները, իսկ այդ ժամանակ՝ ֆրանսիացիները: Ավել-

ին, ֆրանսիացի Պոման փաշան շարունակում էր մնալ Թուրքական ոստիկանական զորքերի ընդհանուր հրամանատար:

Եվ ահա, անգլիացիներն անարդարացի համարեցին, որ իրենք զրկված են Թուրքական պետության ամենակարևոր դեր ունեցող դատական, վարչական և ոստիկանական ոլորտներում ներկա գտնվելուց: Նրանք աչք ունեին հատկապես Թուրքական ոստիկանության վրա և գտնում էին, որ նրա ղեկավարությունը պետք է հանձնվի անգլիացի սպաների:

Որպես փոխհատուցում՝ անգլիացիները Բ. Դոանը խոստացան օգնել երկիրը դուրս բերելու ներքին քառասյին վիճակից և դրա համար կայսրության կառավարման համակարգում կատարել բարեփոխումներ: Ընդամենը երկու ամսում՝ 1913 թ. ապրիլ-մայիսին, անգլիացի էքսպերտները մշակեցին բարենորոգումների մի ծրագիր¹, որը, սակայն, գործողության մեջ չդրվեց, քանի որ նախատեսված անգլո-թուրքական համաձայնությունը այդպես էլ չստորագրվեց, որի բաղկացուցիչ մասն էր այդ ծրագիրը:

Չնայած ծրագիրը մնաց թղթի վրա, բայց նրա տեքստը մեզ հետաքրքրում է այնքանով, որքանով այն որոշ չափով շոչափում էր նաև Թուրքիայի արևելյան նահանգների խնդիրը:

Անգլիացիների կազմած այդ ծրագրով նախատեսվում էր. 1) Ստեղծել Բարձրագույն հանձնախումբ (Comité technique), որը պետք է նստեր մայրաքաղաք Կ. Պոլսում և ունենար շատ ընդարձակ իրավասություններ: Հանձնախումբը պետք է բաղկացած լիներ 7 անդամից, որոնցից 3-ը՝ Թուրք, 3-ը՝ օտար, նախագահը՝ նույնպես օտար, ենթադրաբար՝ անգլիացի: Կենտրոնական այդ հանձնախումբը անմիջական առնչություն պետք է ունենար ռազմական նախարարի և ոստիկանական զորքերի ընդհանուր հրամանատարի հետ: Նրա տրամադրության տակ էր դրվելու կայսրության ոստիկանական ուժերի մեծ մասը, նրան էր տրվելու այդ ուժերի մասին օրինագծեր կազմելու իրավունքը:

2) Բարձրագույն հանձնախումբին պիտի ենթարկվեին Շրջա-

¹ Տե՛ս «Աւետարեթ», № 21, 24 մայիսի 1913 թ.:

նային քննիչ Հանձնախմբերը (Comission inspection régionale)՝ կենտրոններ ունենալով Կ. Պոլիսը, Իզմիրը, Բեյրութը, Բաղդադը և Տրապիզոնը: Շրջանային Հանձնախմբերի՝ օտարներին հատկացված տեղերի մեծ մասն անցնելու էր անգլիացի սպաների ձեռքը: Շրջանային Հանձնախմբերից յուրաքանչյուրին ենթարկվելու էին մի քանի նահանգներ: Տրապիզոն կենտրոնով չրջանային Հանձնախմբին էին ենթարկվելու հայկական բոլոր վեց նահանգները և Տրապիզոնի նահանգը: Դրանից երևում էր, թե որքան անկարևոր էր համարվում հայկական նահանգների վիճակն այն դեպքում, երբ բոլոր մասնագետների վկայությունն համաձայն՝ չրջանային քննիչ Հանձնախմբերից յուրաքանչյուրը ի վիճակի չպիտի լինեք երեք նահանգից ավելի տարածություն վրա ըստ կարելվույն վերահսկել իրավիճակը, մինչդեռ, ինչպես տեսնում ենք, Տրապիզոնի չրջանային քննիչ Հանձնախմբին էր հանձնվում յոթ ընդարձակ նահանգ: Կառավարման այդ մարմինը պարտավոր էր անթերի կատարել այն բոլոր հրամանները, որ տալիս էին Բարձրագույն Հանձնախումբը և ոստիկանական զինվորություն չրջանային հրամանատարը (տվյալ դեպքում՝ Պոման փաշան): Շրջանային քննիչ Հանձնախմբերի անդամները շարունակ չրջելու էին նահանգներով՝ վերահսկելու տված հրամանների գործադրությունը, լսելու էին ժողովրդի բողոքները և ըստ այդմ քննելու և գնահատելու էին ոստիկանների պաշտոնավարությունը:

3) Յուրաքանչյուր նահանգում ոստիկանական զինվորների թուրք հրամանատարի մոտ, իբրև նրա օգնական, պետք է լինեք օտար սպա, որը կոչված էր լինելու հսկելու Բարձրագույն և Շրջանային քննիչ Հանձնախմբերի հրամանների անմիջական գործադրությունը:

4) Կայսրության ողջ տարածքի վրա սփռված էին լինելու ոստիկանական զինվորականների կայազորներ, որոնք պիտի գտնվեին իրարից 3-5 ժամվա հեռավորությունը, և որոնցից յուրաքանչյուրն ունենալու էր 5-25 ոստիկան զինվորներ: Այս ոստիկանները չրջելու էին իրենց հատկացված տարածքով, մտնելու էին ամեն գյուղ, գրավոր տեղեկություններ էին ստանալու տեղի մուխտարներից՝ կատարված ոճիրների ու

գործած անիրավությունների մասին, անմիջապես ձերբակալելու էին ոճրագործներին և այդ մասին հաղորդելու էին իրենց վերադաս մարմիններին: Ոստիկան-զինվորներին իրավունք էր տրվում անմիջապես զինաթափել անհատներին, բացի այն նահանգներում, որտեղ զինված էր ժողովուրդը՝: Տվյալ դեպքում հայկական նահանգներում զինված էր ամբողջ մի ժողովուրդ՝ քրդությունը: Քուրդ խոչոր ցեղապետեր կային, որոնցից յուրաքանչյուրը ուներ նորագույն զենքերով զինված մի քանի հազար մարդ, ուստի ոստիկան-զինվորների բոլոր ջանքերն ապարդյուն կլինեին՝ նրանց հարգել տալու կենտրոնական մարմինների կամքը: Բայց անգլիական ծրագրի մշակողները այդ մասին մի խոսք անգամ չէին մտցրել փաստաթղթի մեջ: Նրանք, ըստ էություն, հայկական նահանգների հայ բնակչության կյանքի, գույքի և պատվի ապահովությունը համարել էին երկրորդական բան: Բայց եթե վճռական քայլ չէր արվելու՝ զինաթափելու քուրդ զերբեքյիների զինված ուժերը, և նրանք շարունակելու էին հայ գյուղացիության գլխին բերել նորանոր փորձանքներ, այդ դեպքում անգլիացիների ծրագիրը նույնանում էր հայության գլխին պատուհաս դարձած Իթթիհադի ստեղծած զինվորական ուժի հետ:

Այսպիսով, 1913 թ. մայիսին հրապարակ բերված անգլո-թուրքական համաձայնագրի նախագծի համաձայն՝ Անգլիան փաստորեն հանդես էր գալիս հայկական հարցում եվրոպական պետությունների միջամտության դեմ՝ Հայաստանում բարենորոգումների իրագործումը համարելով օսմանյան կառավարության ներքին գործ:

Այդ պայմանագրով, որպես երախտագիտության արտահայտություն, Թուրքիան այս անգամ Անգլիային «նվիրեց» Քուվեյթը, այնպես, ինչպես 1878-ին նույն երախտագիտական զգացումներով նրան էր հանձնել Կիպրոսը:

Ինչո՞ւ Անգլիան այդքան անտարբեր էր թուրք բռնակալների կրնկի տակ հեծող քրիստոնյաների, հատկապես հայերի

¹ Տե՛ս «Աւետարեք», № 21, 24 մայիսի 1913 թ.:

ճակատագրի նկատմամբ: Հիմնական պատճառն այն էր, որ նրա գաղութային վիթխարի կայսրության մեջ հաշվվում էին հարյուրմիլիոնավոր մահամեղականներ, որոնք պաշտպան էին կանգնած ողջ մահամեղականության հոգևոր առաջնորդ համարվող թուրքական սուլթանին: Անգլիան չահագրգռված չէր թուրքիայի քրիստոնյաների պաշտպանության համար իր դեմ հարուցանել մահամեղական աշխարհի դժգոհությունը:

1913 թ. մայիսին համաձայնագիր կնքեցին նաև Անգլիան ու Գերմանիան, որով նրանք պարտավորվում էին հարգել թուրքիայի ամբողջականությունը: Նույն համաձայնագրով Փոքր Ասիան, որի մեջ մտնում էր Հայաստանը, բաժանվում էր ազդեցության երկու գոտիների. հարավային մասը լինելու էր Անգլիայի գոտին, որը նա պետք է բաժաներ Ֆրանսիայի հետ, իսկ հյուսիսայինը՝ Գերմանիային: Վերջինս իր ազդեցության շրջանը պետք է բաժաներ Ռուսաստանի հետ:

1913 թ. մայիսին կնքած անգլո-գերմանական-թուրքական համաձայնություններն ուղղված էին Ֆրանսիայի և Ռուսաստանի, միջնորդավորված՝ նաև Հայաստանի դեմ:

Տեսնելով, որ ինքը վտանգված է մեկուսանալու, Ֆրանսիան աճապարեց թուրքիային ներկայացնել մի շարք պահանջներ, այն է՝ իրեն տալ Միջերկրականի ափի Յաֆֆայի նավահանգստի, Սև ծովի ափի Ինեբոլուի և էրեկլիի նավահանգիստների, Սամսոն-Սվազ-Դիարբեքիր-Տրապիզոն երկաթգծերի կառուցման կոնցեսիաները:

Այսպիսով, Գերմանիան, Ֆրանսիան, Անգլիան, որոնք տարածությունը շատ հեռու էին թուրքահայաստանից, այնտեղ իրենց ազդեցությունը տարածելու մարմաջով բռնված, նույնիսկ Ռուսաստանի սահմաններին անմիջականորեն հարող տարածքներում կարողացել էին արմատավորվել: Ամբողջ թուրքահայաստանի գլխավոր քաղաքներն արդեն պատված էին ֆրանսիական, գերմանական և անգլիական հյուպատոսարանների ցանցով՝ չխոսելով արդեն միսիոներական դպրոցների ու որբանոցների մասին:

Այս էլ որբերող անգամ մեծ տերությունները ցույց էին տալիս, որ եթե հրապարակ է գալիս մեղկ շահը, Հայաստանի հարցն

իրենց համար այլևս որևէ արժեք չի ներկայացնում:

Ոչ մի անգամ այդ պետություններն անկեղծ չեն եղել դեպի թուրքական բարբարոսություններից տանջվող ու տառապող քրիստոնյաները: Գլխավոր համեղ պատառը ինքը՝ թուրքիան էր, որի համար ատամ էին սրում ամենքը: Եվ բոլորած այդ համեղ պատառի շուրջը՝ նրանք անթարթ հսկում էին միմյանց՝ պատրաստ հոշոտելու նրան, ով կհամարձակվեր ձեռք պարզել համեղ պատառին, ուղում էին, որ թուրքիան մնա անշարժ, ինչպես եղել է:

Թո՛ղ որ քրդերը կոտորեն հայերին, իսկ հայերը՝ քրդերին, եթե կարող են: Նույնիսկ թող բոլորը ջարդեն ու ոչնչացնեն միմյանց. դա մի մեծ ցավ չէ. այս էր մեծերի բարոյականությունը: Մարդկային արյունով ու դիակներով պարարտացած այս մտքերն էին, որ պտտվում էին եվրոպական կառավարությունների, պետական գործիչների, դիվանագետների ուղեղներում:

Ամեն անգամ, երբ Եվրոպան կամ Ռուսաստանը բարձրացնում էին Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու անհրաժեշտությունը, թուրքական պաշտոնական շրջաններում հայտարարում էին, թե դրա համար ամենից առաջ անհրաժեշտ է երկրում ստեղծել խճուղային տանելի հաղորդակցություն, որպեսզի ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական իշխանությունների կարգադրությունները ժամանակին տեղ հասնեն և կատարվեն, ապա ստեղծել տեղական ուժեղ իշխանություն, ավելացնել ժանդարմերիայի կազմը: Իսկ դրա համար, ասում էին նրանք, տասնամյակներ են պետք:

Ինչ վերաբերում է հողային վեճերին, իշխանությունները շեշտում էին, որ քրդերը չեն ճանաչում իրավական կարգ ու կանոն, չեն կատարում դատական մարմինների որոշումները, վիճելի հողերը համարում են իրենց սեփականությունը ֆեոդալական իրավունքների հիման վրա, իսկ հայերի վրա նայում են իբրև ճորտերի: Ուստի նախ անհրաժեշտ է վերացնել ֆեոդալական կարգերը, մի բան, որ ավելի երկար ժամանակ է պահանջում, քան խճուղիների կառուցումը կամ ժանդարմերիայի կազմի ավելացումը:

Թուրքերի այս պատճառաբանություններն առաջին հերթին ընդունում էին Անգլիան և հատկապես Գերմանիան:

Մեծ տերութուններից Ռուսաստանը, որը նույնպես իր շահերն էր հետապնդում, տվյալ դեպքում ոչինչ էլ էր ստանում: Նրան մեկուսացրել էին Փոքր Ասիայի գործերից, այն դեպքում, երբ նա Թուրքիայի անմիջական հարևանն էր, հետևապես բոլորից շատ իրավունք ուներ ազդելու հայկական նահանգներին առնչվող գործերին, ասելու իր վճռական խոսքը: Արդեն այն հանգամանքը, որ նա ուներ միլիոնից ավելի հայ հպատակներ, ոչ միայն նրան իրավունք էր տալիս, այլև պարտավորեցնում էր հանդես գալ ի պաշտպանություն հայ ժողովրդի հիմնական հատվածի: Եվ բոլորը հասկանում էին, որ թե՛ Թուրքիայի մասնատման և թե՛ ազդեցություն չըջանները բաժանելու դեպքում Հայաստանն անցնելու էր Ռուսաստանին, թեև Թուրքիայի հետ 1913 թ. մայիսին կնքած համաձայնագրով Անգլիան ամեն ինչ անելու էր՝ խանգարելու Ռուսաստանի մուտքը Հայաստան, հետևապես կրկին ու կրկին արգելք էր լինելու Թուրքահայություն իրձերի իրականացմանը:

Թեև այդ պայմանագրի կետերը գաղտնի էին պահվում, բայց մամուլ էր թափանցել Հայաստանին վերաբերող հատվածը, որից հետևում էր՝ ռուսական հայանպաստ քաղաքականության նկատմամբ արտաքննապես հանդուրժողականություն դրսևորող Անգլիան իրականում ամիսներ շարունակ գաղտնաբար խոչընդոտում էր դրա հաջողությունը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մատենադարանում պահպանվող (№ 49) մի ձեռագրից տեղեկանում ենք, որ 1912 թ. դեկտեմբերի 24-ին Կ. Պոլսում Անգլիայի դեսպան Ջերարդ Լոուտերի և Լոնդոնից Թուրքիա կարճատև այցի եկած անգլիացի պրոֆեսոր Մ.-ի միջև դեսպանությունում տեղի էր ունեցել այսպիսի խոսակցություն.

«Պրոֆեսոր.- Եթե Եվրոպան այս անգամ էլ զլանա հայերին իր ազդեցիկ պաշտպանությունը, հայերը թերևս ստիպված լինեն դիմել Ռուսաստանին:

Դեսպան.- Դա նշանակում է սատանայի ձեռքից նետվել խորունկ ծովի մեջ:

¹ «Էջմիածին», փետրվար, մարտ, ապրիլ, 1965, էջ 160:

Պրոֆեսոր.- Լավ է ծովի խորություն մեջ նետվել, քան շատունակաբար տանջվել սատանայի ճանկերում»¹:

1913 թ. ապրիլից ռուսական զորքերի տեղաշարժեր էին սկսվել դեպի կովկասյան սահման: Սարսափելով դրանից՝ Բ. Դուռը Պետերբուրգի իր դեսպան Թուրխան փաշային պատվիրեց իրազեկ լինել դրա բոլոր պատճառներին, ինչպես նաև ռուսաց կառավարությունը խնդրել հսկողությունը ուժեղացնել հայկական սահմանի վրա կատարվող զինավաճառման վրա¹:

Կ. Պոլսի Թուրք լրագրերը ծայրահեղ գրգռված էին Հայաստանում տարվող ռուսամետ ագիտացիայից: Նրանք հատկապես անդրադառնում էին այն իրողությանը, որ նույնիսկ դաշնակցություն կուսակցությունը, որ մինչ այդ երիտթուրքերի հետ էր, սկսել է քարոզել հոգուտ Ռուսաստանի:

Այդ հանգամանքից ծայրահեղ անհանգստացած էր Անգլիան, որը կարծում էր, թե Ռուսաստանը չուտով կարող է ներխուժել Հայաստան: Արտաքին գործերի նախարար Գրեյը Հուլի կր փաշային, որն այդ ժամանակ գտնվում էր Լոնդոնում, հայտնել էր, որ Հայաստանում բարենորոգումներ մտցնելու հետաձգումը սպառնում է Թուրքիայի ապահովությանը: Հուլի կր փաշան պատասխանել էր, որ բարենորոգումներն իրագործելու համար անհրաժեշտ է առնվազն երեսուն տարի:

Բայց նույն Հուլի կր փաշան և Թեֆիկ փաշան, լինելով Փարիզում և հանդիպելով Պոլոս Նուբար փաշային, վերջինիս հավաստիացնում էին, թե Թուրքիան շատ չուտով իրագործելու է հայերի ցանկությունը:

Ապրիլի վերջերին լավատեղյակ աղբյուրներից Լոնդոն լուր էր հասել, որ դեսպանաժողովի մոտակա նիստում Ռուսաստանը պաշտոնապես հարուցելու է հայկական խնդիրը: Թե հարցի լուծման համար նա ինչ առաջարկություններ էր անելու, դեռ հայտնի չէր: Անգլիացիները մտավախ էին, որ այդ առաջարկը մերժելու դեպքում բացառված չէ ռուսական բանակների ներխուժումը Հայաստան:

¹ Տե՛ս «Մշակ», № 79, 11 ապրիլի 1913 թ.:

Ֆրանսիական “Pour les Peurles d’Orient” երկչաբաթաթերթը, որը նախկինում հանդես էր եկել բազմաթիվ հայաստանահայտ հրատարակումներով, 1913 թ. № 9-ում «Ասիական Թուրքիայի անձեռնմխելիությունը» վերնագրով հոդվածում ընթերցողին տեղեկացնում էր, որ անգլիական “Daily News”-ը, ինչպես և Վիեննայի մի շարք թերթեր հաղորդել են, թե երիտասարդ թուրքերի կառավարությունը մտադիր է մեծ տերություններին խնդրել՝ հաշտության պայմանների թվում մտցնել նաև հետևյալ ձևակերպումը. «Երաշխավորել Թուրքիայի ասիական երկրների և, մասնավորապես, իր արևելյան նահանգների անձեռնմխելիությունը 30 տարվա մի ժամանակամիջոցի համար»¹: Թերթերը հայտնել էին նույնիսկ, որ Հուկկը փաշան և Ջավիդ բեյը այդ բովանդակության դիմումներ են արել, առաջինը՝ Լոնդոնում, երկրորդը՝ Բեռլինում:

Ուրեմն, խոսքն ամենից առաջ արևելյան նահանգների, ասել է թե՛ հայկական նահանգների մասին էր, որոնք ամենից շատ էին ենթարկված Ռուսաստանի կողմից գրավվելու վտանգին:

Ֆրանսիական թերթը նշում էր, որ Լոնդոնի “Daily News”-ը, մեկնաբանելով այդ լուրը, խստորեն հարձակվել էր թուրք քաղաքականությունը մշակող և իրականացնող անձանց վրա, որոնք Հայաստանի անձեռնմխելիության մասին ցանկալի երաշխավորությունը ստանալուց հետո նրանից կցանկանան ստեղծել մի տեսակ Կոնգո, ուր, ըստ հին սովորությունների, ոչ մի բարեփոխում չի մտցվի, նկատի չի առնվի ուսուցիչ ոչ մի գանգատ: Մի խոսքով՝ մի զգվելի ուժի մեծի ներքո դարավոր տանջանքներ կրելուց հետո էլ, իրենց հարյուր հազարավոր եղբայրների սպանություններից հետո էլ հայերը իրենց կտեսնեն ավելի զարհուրելի մի նոր ստրկության մեջ, ուր նույնիսկ իրավունք չեն ունենա դիմելու եվրոպական վերահսկողությանը, ուղղելու իրենց բողոքները Եվրոպային:

Մեծ պետություններին խնդրելով երաշխավորել հայկական նահանգների անձեռնմխելիությունը երեսուն տարվա մի շրջանի

¹ Տե՛ս «Մշակ», № 79, 11 ապրիլի 1913 թ.:

համար՝ ժենն-թուրք քաղաքագետները մտածում էին, որ այդ տարիների ընթացքում թուրքական ուժերը, եվրոպական վերահսկողությունից խույս տալով, կգործադրի կողոպուտի ու բնաջնջման իր սովորական մեթոդները՝ իր վերջին հայ բնակիչներից կղատարկի Հայաստանը:

«Թուրքերը անուղղելի կարճատեսություններ հայերին նայում են իբրև թշնամու, - գրում էր “Daily News”-ը, - բայց որոնք վերածնության մի հզոր գործոն կարող են լինել անատոլիական ընդարձակ երկրամասում: Կապված լինելով կայսրության ամբողջության սկզբունքին, հայերը միայն պահանջում են ֆիզիկական գոյություն և իրենց աշխատանքի պտուղները վայելելու իրավունք»:

Հայաստանի շուրջ զարգացումներից դժգոհ էին Բեռլինում: Գերմանական լրագրերը շարունակում էին հարձակումները Ռուսաստանի վրա, գրում, որ պատրվակ բռնելով հայերի ջարդերը՝ նա ձգտում է գրավել հայկական նահանգները: Գերմանական մամուլը Բ. Գոանը միաբերան խորհուրդ էր տալիս շտապել լուծելու հայկական հարցը և դրանով իսկ խափանել ասիական վիլայեթների անկումը: Միաժամանակ, Բեռլինում թուրքաց նոր դեսպանը 1913 թ. ապրիլի 12-ին կառավարությունից հրահանգ էր ստացել՝ խնդրել Գերմանիայի կառավարությունը, որ ներհակի Ռուսաստանի ջանքերին և արգելք հարուցի հայկական նահանգներում բարենորոգումներ մտցնելու նրա եռանդի առաջ:

Վիեննայի “Reichsport” լրագրի 1913 թ. № 347-ում «Հայկական հարցի թավալումը» վերնագրի տակ դուկտ. Պաուլ Ռորեբախը գետեղել էր հոդված, որով նա եվրոպական կառավարություններին զգուշացնում էր, թե որքան վտանգավոր են Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի մշակած ծրագրերը: «Այժմ իրողությունն այն է, - գրում էր նա, - որ երբ Ռուսաստանը ցանկանա, միշտ կարող է առաջ բերել Ասիական Թուրքիայի տագնապ Հայաստանից, ինչպես որ բալկանյան դաշնակցությունը

¹ Տե՛ս «Մշակ», № 79, 11 ապրիլի 1913 թ.:

նույնը կատարեց Եվրոպական Թուրքիայում Մակեդոնիայից»:

Ավստրիական աղբյուրները նույնպես ճշտում էին, որ Ռուսաստանը, հարուցելով հայկական հարցը և պահանջելով գործադրել Բեռլինի դաշնագիրը, դրանով իսկ անկասելի գնալու է Հայաստանի խնդրի հանգուցալուծմանը: Նրանք հենվում էին Պետերբուրգի այն հայտարարության վրա, որ թույլ չի տալու մակեդոնական պատմության կրկնությունը և Եվրոպական պետություններից պահանջելու է իրեն տալ Հայաստանի մանդատը:

Իտալական կառավարությունը նույնպես դեմ էր Թուրքիայի ասիական նահանգների նկատմամբ Ռուսաստանի հետաքրքրություններին ու ձգտումներին: Նա, մասնավորապես, աչքը հատել էր Կիլիկիային, ուր նույնպես տակնուվրա էր հայության հասարակական կյանքը:

Բացի քաղաքական ընդհանուր պատճառներից, Կիլիկիայի նկատմամբ Հոռոն ուներ նաև մասնավոր շարժառիթներ:

Կ. Պոլսում Իտալիայի դեսպան Գառոնին իր կառավարությանը տեղեկացրել էր, թե հայոց պատմական հին փաստաթղթերը պարունակում են տվյալներ, ըստ որոնց՝ հայկական Կիլիկիայի նախկին թագավորության ժառանգության իրավունքը պատկանում է իտալական ներկա արքունական ընտանիքին: Նա նաև հայտնել էր, որ այդ մասին ապացուցագրերը պահպանվում են Փարիզի ազգային մատենադարանում:

Ստանալով Գառոնինի ղեկուցագիրը՝ կառավարությունը կազմել էր մի հանձնախումբ՝ քննելու համար խնդիրը:

Թուրքիայի նախարարների խորհուրդը հուլիսի 13-ին որոշում կայացրեց՝ Հայաստան մտնելու դեպքում ոչ մի դիմադրություն ցույց չտալ ոուսական զորքերին՝ համարելով դա մեծ պետությունների միջազգային միջոցառում:

Բայց թուրքերի այդ հուսախաբությունը չատ չուտով փոխվեց ոգևորության. Կ. Պոլսում լուր տարածվեց, թե Ռուսաստանը հրաժարվել է Հայաստանը գրավելու մտքից:

ՌՈՒՍԱԿԱՆ ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռուսաստանի կառավարությունը գտնում էր, որ վաղուց ժամանակն է, որ մեծ տերություններն ընդհուպ զբաղվեն Հայկական հարցով և այդ մասին հատուկ հանձնարարություններ էր տվել իր դիվանագիտական ծառայություններին:

Մայիս ամսվա ընթացքում Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովը վիճաբանելով հաղորդած նամակագրությանը Ֆրանսիայի և Անգլիայի արտգործնախարարների հետ մտքեր էր փոխանակում, թե կոնկրետ ինչից պետք է սկսել Հայկական խնդիրն ըստ էության քննարկելիս, մանավանդ որ թուրքական կառավարությունը որդեգրել էր Հայաստանի բարենորոգումների հարցում ամեն կերպ խուսանավելու, այն ձգձգելու և, ի վերջո, նրա լուծումը խափանելու ռազմավարությունը:

Մայիսի սկզբներին Բ. Դուրը դիմել էր Լոնդոն՝ խնդրելով հայկական հարցի առնչությամբ նկատի առնել, որ Թուրքիան անկախ ու սուվերեն երկիր է, և պետք է խուսափել բոլոր այն քայլերից, որոնք կարող են խախտել նրա սուվերենությունը: Այդ մասին իր վերադասին տեղեկացրել էր Լոնդոնում ոուսական դեսպանը: Հետևել էր Ս. Սազոնովի մայիսի 8-ի հանձնարարականը դեսպանին՝ Մեծ Բրիտանիայի արտգործնախարարությանը հիշեցնել, որ «եթե հայ բնակչությունը հիասթափվի տերությունների երաշխիքով բարեփոխումների իրականացման հույսից, ապա պետք է որ զգուշանանք տերությունների համար ծայրաստիճան անցանկալի և նախևառաջ Թուրքիայի համար վտանգավոր բարդացումների առաջացումից»¹:

Մայիսի 9 (22)-ի № 247 գաղտնի հեռագրով Փարիզում ոուսական դեսպան Իզվոլսկին Ս. Սազոնովին պատասխանում է. «Պիչոնը լիովին կիսում է Ձեր կարծիքը Փոքր Ասիայում բարեփոխումներ իրականացնելու համար Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի ջանքերը համատեղելու անհրաժեշտության և

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1913, д. 3461, л. 18.

առանց ուշացնելու գործի անցնելու մասին»¹:

Ռուսական նախաձեռնությունը հավանություն էր տվել նաև անգլիական արտգործնախարար Գրեյը²:

Ինչպես երևում է Լոնդոնում ռուսաց դեսպան կոմս Ա. Բենկենդորֆի մայիսի 21-ի՝ Սազոնովին հղած № 504 հեռագրից, Գերմանիայի կառավարությունը նույնպես սկսել էր հետաքրքրություն հանդես բերել նշված խնդրի հանդեպ և, ըստ երևույթին, նաև հակված էր այն մտքին, որ, հիրավի, նպատակահարմար է առաջիկա բարեփոխումների հիմքում դնել 1895 թվականի նախագիծը: Դեսպանը գտնում էր, որ ցանկալի է հնարավորինս արագացնել Եռադաշինքի տերությունների միջև ընդհանուր ծրագրի սահմանումը, որից հետո հարցի քննարկմանը մասնակցելու առաջարկությամբ դիմել գերմանական բյուրոյի բոլոր կառավարություններին, ըստ որում՝ պետք է ջանալ Հայկական հարցում հնարավորինս վերացնել մրցակցությունը տերությունների երկու խմբերի միջև³:

Դեսպանը նաև ձիջտ էր համարում, որ Անգլիայի և Ֆրանսիայի հետ պայմանավորվածություն ձեռք բերելուց հետո Ռուսաստանը պետք է իր նախաձեռնությունն ամուր պահի սեփական ձեռքերում⁴:

Շատ չանցած ռուսական արտգործնախարարությունն արդեն հաստատում էր իր նախաձեռնության հաջողության մասին:

Այսպես, մայիսի 22-ին Ս. Սազոնովը Բեռլինում ռուսաց դեսպանին հաղորդում էր. «Լոնդոնյան և փարիզյան կարիներտների հետ նախնական բանակցություններից հետո կայսերական դեսպանին Կոստանդնուպոլսում հանձնարարվել է իր Ֆրանսիայի և Անգլիայի գործընկերների հետ մեկտեղ սահմանել այն հիմնական սկզբունքները, որոնց միջոցով հնարավոր կլիներ համերաշխորեն պաշտպանել Հայկական բարեփոխումների ձեռնարկ-

ները: Վերջիններիս հիմքում մեզ առավել ցանկալի էր թվում դնել 1895 թվականին մշակված նախագիծը՝ այն համապատասխանեցնելով նոր պարզ դարձած պահանջներին»¹:

Մայիսի 22-ի № 506 նամակով Սազոնովը Բեռլինում ռուսաց դեսպանին տեղյակ էր պահում, որ Կոստանդնուպոլսի դեսպան Գիրսը հանձնարարություն է ստացել իր Ֆրանսիացի և անգլիացի գործընկերների հետ մեկտեղ Հայաստանի բարենորոգումների հարցում սահմանել այն հիմնական սկզբունքները, որոնք կկարողանային համերաշխորեն պաշտպանել Եռադաշինքի բոլոր երեք տերություններին²:

Ռուսական դիվանագիտության համար ցանկալի էր, որ այդ սկզբունքների հիմքում դրվեր 1895 թ. մշակված նախագիծը՝ այն համապատասխանեցնելով արդի իրողություններին: Պետերբուրգում հուլիսի 1-ին համարում, որ Լոնդոնում ռուսաց դեսպանը մայիսի 21-ի № 504 հեռագրով Սազոնովին հաղորդել էր, որ կարծես Գերմանիայի կառավարությունը նույնպես սկսում է հետաքրքրություն հանդես բերել Հայաստանի բարենորոգումների հարցի հանդեպ և ըստ երևույթին կողմնակից է հրապարակ բերել 1895 թ. նախագիծը³:

Այս դրական հանգամանքը ռուսական դիվանագիտության համար հնարավորություն էր ստեղծում միջոցներ ձեռնարկել մեղմելու տերությունների երկու խմբերի միջև մրցակցությունը և հարցի հստակ քննարկմանը մասնակցելու առաջարկությամբ պաշտոնապես դիմել մյուս բոլոր հինգ կարիներտներին:

Բեռլինում ռուսաց դեսպանին հղած վերոհիշյալ նամակով Սազոնովը նրան խորհուրդ էր տալիս. «Այն դեպքում, երբ Գերմանիայի արտաքին գործոց գծով պետքարտուղարը խոսք կբացի այս հարցի շուրջ, Դուք կարող եք նրան ասել, թե որքանո՞վ Ձեզ հայտնի է, Պետերբուրգում մեծ ուշադրությամբ են հետևում նրան, թե ինչ է կատարվում մեզ սահմանակից վիլայեթ-

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3461, л. 21.

² Նույն տեղում, թ. 22:

³ Նույն տեղում, թ. 78:

⁴ Նույն տեղում:

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3461, л. 78.

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

ներում, և որ այնտեղից Պետերբուրգ հասնող լուրերը խիստ տազնապալի են. քրիստոնյա բնակչությունը ենթարկվում է դաժան բռնությունների, իսկ սպանությունները վերջ չունեն: Անհրաժեշտ կլինի հիշեցնել, որ հատկապես հրատապ է քրիստոնյա բնակչության նկատմամբ Բալկաններից եկած մահմեդականների կողմից կատարվող բռնությունների և սպանությունների առաջն առնելը»¹:

Կասկած չկար, որ նշյալ միջոցները կարող էին միայն նպատակ ունենալ չվատթարացնել առանց այն էլ ծանր դրությունը, որից Օսմանյան կառավարությունը դժվար թե ինքնուրույն ի վիճակի լիներ գլուխ հանել: Մինչդեռ բնավ ոտնձգություն չանելով Թուրքիայի շահերի հանդեպ՝ Ռուսաստանը, որը Կովկասի սահմանակից մարզերում մեծաթիվ հայկական բնակչություն ուներ, Թուրքիայի հետ պետք էր խորհրդի նստեր՝ հետագա վտանգավոր բարդացումները կանխելու համար:

Գործին օգնելու միակ միջոցը, ուրեմն, Պետերբուրգը համարում էր Հայաստանում անհապաղ բարեփոխումներ ձեռնարկելը, որն ունակ կլիներ խաղաղություն տալ բնակչությանը: Ահա թե ինչու կայսերական կառավարությունը որոշել էր առաջիկայում դիմել տերություններին՝ հարցը համատեղ քննարկելու համար:

Մյուս կողմից՝ Կովկասի ուսական իշխանությունները անդադար խաղաղեցնում էին տեղի հայությունը, որպեսզի նա սպասի, մինչև որ տերությունների հետ Ռուսաստանի բանակցությունները տան դրական արդյունքներ:

Իսկ դա հնարավոր էր, եթե, Սազոնովի խոսքերով, «Բեռլինյան կարինետին համողիչ լինեն մեր բացատրությունները»²:

Կասկած չկար, որ նշյալ միջոցները կարող էին միայն առանց այն էլ ծանր դրությունը չվատթարացնելու նպատակ ունենալ, որից Օսմանյան կառավարությանը դժվար թե ինքնուրույն ի վիճակի լիներ գլուխ հանելու: Մինչդեռ, բնավ ոտնձգություն

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1913, д. 3461, л. 78 (об.).

² Նույն տեղում, թ. 81 (չրջ.):

չանելով Թուրքիայի շահերի հանդեպ, Ռուսաստանը, որը Կովկասի սահմանակից մարզերում մեծաթիվ հայ բնակչություն ուներ, Թուրքիայի հետ պետք է խորհրդի նստեր՝ հետագա վտանգավոր բարդացումները կանխելու համար:

Գործին օգնելու միակ միջոցը, ուրեմն, անհապաղ բարեփոխումներ ձեռնարկելն էր, որոնք ընդունակ կլինեին խաղաղություն տալու բնակչությանը: Ահա թե ինչու կայսերական կառավարությունը մտադիր է առաջիկայում դիմել տերություններին՝ առաջարկելով քննարկել համատեղ միջոցառումներ ձեռնարկելու հարցը:

Իրենց կողմից ուսական իշխանությունները Կովկասում անդադար խաղաղեցնում էին հայերին, որպեսզի սրանք սպասեն մինչև տերությունների հետ Ռուսաստանի բանակցությունների դրական արդյունքին:

ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵԼԸՆԹԱՑԸ

Պողոս Նուբարը ակնդետ հետևում էր բանակցությունների միջազգային արձագանքներին, անպատասխան չէր թողնում հայ ազգային պատվիրակության նպատակներն ու գործունեությունը հանրությունը սխալ ներկայացնելու կամ գիտակցաբար խեղաթյուրելու փորձերը, ամեն կոնկրետ դեպքում հանդես էր գալիս անհրաժեշտ բացատրություններով ու մեկնաբանություններով:

1913 թ. մայիսի 12-ին «Թայմզ» թերթը տպագրել էր Կ. Պոլսից ստացված մի հեռագիր, որում տեղ էր գտել երկու կոպիտ սխալ: Հեռագրում նախ ասված էր, թե Էջմիածնի կաթողիկոսի կողմից կյանքի կոչված և Նուբար փաշայի նախագահության տակ գտնվող հայ ազգային պատվիրակությունը ներկայացնում է եզրապտտուից և Օսմանյան կայսրությունից դուրս գտնվող հայերին: Այնուհետև հեռագիրը հաղորդել էր, որ, իբր, պատվիրակությունը Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին թելադրել է նպատակ, որ բարենորոգումները երաշխավորեն ոչ թե վեց

պետութիւնները, այլ նրանցից միայն մեկը՝ անշուշտ ակնարկելով Ռուսաստանին:

Մայիսի 15-ին Պողոս Նուբար փաշան Փարիզից նամակ է հղում «Թայմզի» տնօրենին: Անդրադառնալով թերթի թույլ տված սխալներին՝ նա գրում էր, որ Հայ ազգային պատվիրակութիւնը ոչ թե ներկայացում է Հայ ազգի մի մասը, այլ ամբողջ Հայ ժողովրդին և առաջին հերթին թուրքահայութեանը: Ամբողջ Հայ ժողովուրդն է մտահոգ թուրքահայութեան վիճակով: «Պատուիրակութիւնը կը բաղկանայ բացարձակապէս օսմանյան հպատակներէ ու ունի միակ պաշտօն մը՝ որ է Ասիա-Թուրքիոյ հայկական նահանգներուն մեջ բարենորոգումներու գործադրութիւնը պահանջել, ու իր ծրագրին միաձայնութեամբ համաձայնած են բոլոր Հայ կուսակցութիւնները»¹:

Ինչ վերաբերում էր բարենորոգումները երաշխավորող կողմին, ապա Նուբար փաշան տեղեկացնում էր, որ Հայ ազգային պատվիրակութիւնը երբեք որևէ թելադրութիւն չի արել Կ. Պոլսի հայոց պատրիարքութեանը և երբեք բարենորոգումների երաշխավոր չի դիտել վեց մեծ տերութիւններից որևէ մեկին, «այլ ընդհակառակը՝ միշտ իրեն սկզբունք ունեցած է կենսալ միջազգային գետնին վրայ Պերլինի դաշնագրին 61-րդ յօդուածին, որով մեկ կողմէն Թուրքիա կը խոստանայ բարենորոգումներ գործադրել հայկական նահանգներուն մէջ, ու միւս կողմէ ալ տէրութիւնները կը խոստանան անոնց գործադրութեանը հսկել»²:

Այնուհետև, օգտվելով ներկայացված պատեհութիւնից, Պողոս Նուբարը «Թայմզի» տնօրենին ևս երկու հաստատում է անում. 1) «Պատուիրակութիւնը յանուն հայերուն չպահանջեր ո՛չ անջատում, ո՛չ անկախութիւն, ո՛չ քաղաքական ինքնավարութիւն – ինչ որ հայկական նահանգներուն ազգագրական և աշխարհագրական պայմաններուն մէջ ցնորք մը միայն կը համարենք – այլ կը պահանջէ միայն Պերլինի դաշնագրին 61րդ

¹ «Ժամանակ» (Կ. Պոլիս), № 1456, 14 (27) մայիսի 1913 թ.:

² Նույն տեղում:

յօդուածով խոստացուած եւ Մեծ Տերութեանց Պոլսոյ դեսպաններուն 11 Մայիս 1895ի Յիշատակագրին մէջ բանաձեւուած բարենորոգումներու ծրագրին գործադրութիւնը (ընդգծումները Պ. Նուբարինն են:– Ն. Ս.): 2) Այդ բարենորոգումները պետք է գործադրուին նոյնքան իսլամ բնակչութեանց, որքան քրիստոնեայ բնակիչներու շահուն համար³: Ատոնց նպատակը պիտի ըլլայ վիլայէթները իմաստուն վարչութեան մը տակ դնելով պաշտպանել բոլոր բնակիչները՝ իսլամ թէ քրիստոնեայ, վաղկատուններու աւազակութեանց, անկարգութեանց եւ սպանութիւններուն դէմ»⁴:

Մյուս կողմից, չնայած Ռուսաստանի համար անբարենպաստ զարգացումներին, չնայած այն բանին, որ նրա կառավարութիւնը հայտարարել էր, թե հեռու է Հայաստանը գրավելու մտքից, բայց Պետերբուրգը, այնուամենայնիվ, չձգեց հայկական հարցը և այն առաջ մղելու համար դիմեց դիվանագիտական նոր, այս անգամ վճռական քայլի:

1913 թ. մայիսի 26-ին Ռուսաստանի կայսերական կառավարութիւնը մի շրջաբերականով դիմեց մեծ պետութիւններին⁵: Այդ վավերագիրը հայկական հարցի զարգացման տեսակետից հիրավի ունեցավ պատմական նշանակութիւն:

Շրջաբերականում շեշտվում էր, որ հայկական հարցը մեծ կարևորութիւն ունի... «մեզ համար ինչպես Կովկասում մեր ներքին դրութեան, այնպես էլ Ռուսաստանի շահերի տեսակետից»: Հիշեցվում էր, որ բալկանյան ճգնաժամի հենց սկզբից կայսերական կառավարութիւնը հարատև ջանքեր է գործադ-

³ Հարկ է նշել, որ թուրքական մամուլի որոշ օրգանների համար ըմբռնելի էր Հայ պատվիրակութեան այս մոտեցումը: Օրինակ՝ 1913 թ. մայիսի 13 (27)-ի համարում Կ. Պոլսի «Վազիֆե» թերթը գրում էր. «Հայ ազգը քրդերի ու թուրքերի հետ պետք է զինակից լինի: Այս նպատակը ոչ միայն հայերի, այլև մյուս ցեղերի պատմական ճակատագրի պահանջն է: Ուստի այդ ճակատագիրը միասնաբար կերտելուց զատ ուրիշ միջոց չկա» («Ժամանակ», № 1466, 24 մայիսի (6 հունիսի) 1913 թ.):

⁴ «Ժամանակ», № 1456, 14 (27) մայիսի 1913 թ.:

⁵ Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտութեան ...», էջ 188-189:

րել, որպեսզի Փոքր Ասիայում նույնպես չբռնկվի հակաթուրքական ապստամբություն: Եվ եթե մինչև այժմ Ռուսաստանին դա հաջողվել է, «ապա միայն հայերին անընդհատ կրկնված խոստումի չնորհիվ՝ թե Ռուսաստանը աչալուրջ է նրանց շահերի նկատմամբ և պատեհ առիթով իր ձեռքը կվերցնի բարենորոգումների դեկավարումը (ընդգծումը մերն է: - Հ. Ս.)՝ դրան մասնակից դարձնելով երկու դաշնակից ու բարեկամ պետություններին»:

Ռուսական կառավարությունը այնուհետև սպառնալիք էր ուղղում Թուրքիային՝ նշելով, որ եթե կովկասյան իր սահմանների շրջանում (այսինքն՝ Հայաստանում: - Հ. Ս.) հանկարծակի առաջ գան ամենալուրջ բարդություններ, ապա դրանք չեն կարող անտարբեր թողնել Պետերբուրգին: Ուստի, նկատի ունենալով հայերի հոգեկան տրամադրությունը, Ռուսաստանի կողմից երաշխավորված բարենորոգումները Հայաստանում, լինի դա միայնակ թե Ֆրանսիայի և Անգլիայի հետ համատեղ, «միակ միջոցն է խաղաղեցնելու այդ շրջանները և կանխելու մի ընդհանուր ըմբոստություն վտանգը»: Ապա՝ «Թուրքիան վերստին կանգնած է երկրնտրանքի առջև՝ կամ պահպանել իր տարածքային ամբողջականությունը, հրաժարվելով ինքնակամ ու լիակատար իշխանությունից, կամ մնալ խուլ այն դասերի հանդեպ, որ նրան հենց նոր տվեցին»:

Շրջաբերականում ընդգծվում էր, որ Թուրքիայի բալկանյան տիրույթների անդամահատումը համեմատաբար հեշտ կատարվեց, որովհետև այնտեղ ազգաբնակչության ընդհանուր թվում թուրքերը փոքրամասնություն էին կազմում, իսկ Հայաստանի պարագայում վիճակը բոլորովին այլ է, քանի որ նրա մեծ մասում հայերն են փոքրամասնություն կազմում, հետևապես հայ ժողովրդի համար ինքնավարություն ձեռք բերելը անհող երազանք է: Հետևապես՝ Հայաստանի հայություն փրկության միակ հույսը մնում է այնտեղ բարենորոգումներ մտցնելը:

Ռուսական կառավարությունը նաև հարկ էր համարում հիշեցնել. Մակեդոնիան, օրինակ, թուրքերի իշխանությունից ազատվեց այն պատճառով, որ այնտեղ բարենորոգումների անցկացումը Բ. Դուռն աններելիորեն ուշացրեց և դրա համար

էլ քաղեց իր դանդաղկոտություն դառն պտուղները: Հետևապես՝ որքան կարելի է, պետք է արագացնել Հայաստանում բարենորոգումներ մտցնելու գործը:

Հինգ մեծ պետություններին ուղղված ռուսական կառավարության շրջաբերականը առաջ բերեց նրանց անմիջական արձագանքը:

Առաջինն արտահայտվեց գերմանական կառավարությունը՝ հայտարարելով, թե Հայաստանում եվրոպական վերահսկողությունը պետք է կիրառվի բոլոր մեծ պետությունների, այլ ոչ թե դրանցից միայն մեկի կողմից, նույնիսկ եթե վերջինս մյուս բոլորի կողմից լիազորված լինի՝:

Ընդունելի համարելով Բեռլինի մոտեցումը՝ բրիտանական կառավարության ներկայացուցիչը Համայնքների պալատում ունեցած ելույթի ժամանակ պաշտպանության տակ առավ այն տեսակետը, որ թուրքական Ասիայի վերաբերյալ հարցերը պետք է լուծում ստանան բոլոր մեծ պետությունների կողմից, և որ որևէ անջատ գործողություն անթույլատրելի է²:

Իհարկե, պատմականորեն հայկական հարցը պետք է վերաբերեր հատկապես Ֆրանսիային, Ռուսաստանին և Անգլիային, բայց իրադարձությունների ընթացքը փոխել էր ավանդույթը: Ռուսական կառավարությունը քաջ գիտակցում էր, որ անհնարին է չտեսնել վերջին տարիներին Փոքր Ասիայում Գերմանիայի շահերի զարգացումը, որի հետևանքով փոխվել էր Հայաստանի հարցում եվրոպական մյուս պետությունների վերաբերմունքը:

Բեռլինում ռուսական դեսպան Սվերբեկը այցելում է Գերմանիայում արտգործնախարար Գոտլիբ Ֆոն Յագովին՝ պարզելու համար նրա վերաբերմունքը ռուսական կառավարության շրջաբերականի նկատմամբ: Յագովին ասում է, որ իր կառավարությունն ընդհանուր առմամբ կողմ է հայկական բարենորոգումների գործը ձեռնարկելուն, բայց կասկածում է, որ Կ. Պոլսում մեծ պետությունների դեսպանները կարող են շոշափելի

¹ Տե՛ս «Բարենորոգումները Հայաստանում...», էջ 32:

² Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության ...», էջ 205-206:

արդյունքի հասնել¹: Այնուամենայնիվ, գերմանական կողմի հիմնական մտահոգությունը կապված էր Թուրքիայի ամբողջականությունը պահպանելու սկզբունքի հետ, որը Բեռլինի համար ուներ առաջնային նշանակություն:

Մայիսի 29-ին Միխայիլ Նիկոլաևիչ Գիրսի հետ հանդիպման ժամանակ պարզ դարձավ, որ Յագովը նահանջել է ընդամենը երեք օր առաջվա իր դիրքորոշումից: Նա հարկ համարեց ասել, որ Պետերբուրգի առաջարկը զարմանք ու վրդովմունք է առաջ բերել Բեռլինում, որովհետև Հայկական բարենորոգումների շատ փափուկ (*délicat*) հարցը չի կարելի միակողմանի բարձրացնել: Յագովն ասում է, թե իրենք՝ հայերը, շատ հաճախ են զայրացուցիչ արարքներ գործում, բացի այդ՝ նրանք կազմում են Հայաստանի ազգաբնակչության միայն աննշան մեծամասնությունը, և, պաշտպանելով նրանց, մեծ պետությունները չպետք է մոռանան նաև քրդերի շահերը:

Չնայած այդ ամենին՝ Յագովը կրկին խոստանում է հանձնարարել Կ. Պոլսի դեսպան Վանգենհայմին անհապաղ մտքերի փոխանակություն սկսել մյուս պետությունների՝ Կ. Պոլսի դեսպանների հետ: Վերջում նա կարծիք է հայտնում, որ Կ. Պոլսի դեսպանաժողովը չի կարող Բ. Դոան համար դատարանի նշանակություն ունենալ, ընդհակառակը, Թուրքիային պիտի տրվի որոշ իրավունք՝ մասնակցելու բարենորոգումներին²:

Ավստրիան և Իտալիան նույնպես պահանջեցին, որ Թուրքական կողմը ևս մասնակցի դեսպանների խորհրդակցություններին:

Այսպիսով, եռյակ դաշնությունն առաջ է քաշում երկու սկզբունքային պահանջ.

ա) Ձխախտել սուլթանի վեհապետական իրավունքները և բարենորոգումների խնդրի քննարկումներին մասնակից դարձնել Թուրքական ներկայացուցչին:

բ) Ի տարբերություն եռյակ գինակցության երկրների՝ Փրանսիական կառավարությունը տալիս է իր համաձայնու-

¹ Տե՛ս «Բարենորոգումները Հայաստանում...», էջ 31:

² Տե՛ս նույն տեղում, էջ 33-34:

թյունը ուսական առաջարկին և անմիջապես համապատասխան հրահանգ է իջեցնում Կ. Պոլսի իր դեսպանին:

Փրանսիական կառավարության դրական արձագանքին հետևում է Լոնդոնը, որը նաև հավանություն է տալիս Փարիզի առաջարկին՝ եռյակ համաձայնության երկրների (Ռուսաստան, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա) Կ. Պոլսի դեսպանատներից կազմել մի հանձնաժողով՝ յուրաքանչյուր դեսպանատնից ընտրելով մեկ անդամ: Հանձնաժողովը մշակելու էր Հայկական բարենորոգումների ծրագիրը:

Մայիսի 28-ի և 29-ի հեռագրերով Սազոնովը Գիրսին լիազորում է բանակցությունների մեջ մտնել Բ. Դոան հետ, իսկ մայիսի 30-ին նրան հրահանգում է եռյակ դաշնության Կ. Պոլսի դեսպաններին հայտնել, որ վերին աստիճանի անցանկալի է Թուրքական ներկայացուցչի մասնակցությունը իրենց առաջիկա խորհրդակցություններին¹:

Միխայիլ Նիկոլաևիչը մայիսի 30-ին գերմանական դեսպան Վանգենհայմի ուշադրությունը հրավիրում է այն հանգամանքի վրա, որ «Թուրքիայի ներկայացուցչի մասնակցության լուրը միայն խոր հիասթափում առաջ կբերի հայերի մեջ»²:

Հունիսի 1-ին Գիրսը հանդիպում է ունենում մեծ վեզիր Սայիդ Հալիմի հետ: Վերջինս ասում է, թե ինքն իմացել է, որ Ռուսաստանը առաջարկում է Հայկական հարցը հանձնել միջազգային հանձնաժողովի քննությանը, իսկ արդյո՞ք ավելի ճիշտ չէր լինի Բ. Դոանը հնարավորություն տալ մշակելու բարենորոգումների սեփական ծրագիր: Գիրսը պատասխանում է, որ վերջին ամիսների ընթացքում ինքը բազմիցս հրավիրել է մեծ վեզիրի ուշադրությունը իրերի դրություն վրա Հայաստանում, բայց դա ոչ մի հետևանք չի ունեցել: Իսկ դրությունն Անատոլիայում օրըստօրե վատթարանում է, որը խիստ անհանգստացնում է նաև Ռուսաստանին:

«Մեր այդ նախաձեռնությունը, - շեշտում է Գիրսը, - նպատակ չունենալով խախտելու սուլթանի վեհապետական իրա-

¹ «Բարենորոգումները Հայաստանում...», էջ 35:

² Նույն տեղում:

վունքները, լի է բարեկամությունը դեպի Թուրքիան, և այդ պատճառով դուք այդ հարցում մեզ պետք է ցույց տաք լիակատար աջակցություն»¹:

Ինչ վերաբերում էր այդ շրջանում ուսական իշխանությունների ներկայացուցիչների հետ հայ գործիչների հանդիպումներին, ապա դա հիմնականում իրականացվում էր Փարիզում ուսական դեսպան Իզվոլսկու միջոցով: Այստեղ՝ Փարիզում, հայկական պատգամավորությունը հետևում էր ուսական կառավարության խորհուրդներին և սպասում՝ մինչև կհասներ նպաստավոր պահ, երբ Եվրոպան կկամենար զբաղվել հայկական հարցով:

ԱՆՀԵՏԱՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԸ

1913 թ. սկզբներից ուսական մամուլը արտակարգ հետաքրքրություն էր ցուցաբերում հայկական հարցի նկատմամբ: Մեծ ու փոքր բազմաթիվ պարբերականներ անդրադառնում էին ոչ միայն այդ հարցի բարձրացման ընթացքին, այլև հայ ժողովրդի պատմական անցյալին, ազատության համար նրա պայքարի ոգորումներին:

Թուրքահայ ժողովրդի կյանքին մոտիկից ծանոթանալու համար ուսական որոշ թերթերի խմբագրություններ հայկական նահանգներ էին գործուղում հատուկ թղթակիցներ, որոնք ծանոթանում էին հայերի դրությունը և ստացած տպավորությունները հոդվածներով, հոդվածաչափերով ու գրքերով անմիջապես ներկայացնում էին ուս ընթերցողին*:

¹ «Բարենորոգումները Հայաստանում...», էջ 36:

* Օլգենինից առաջ և հետո Թուրքահայաստանում ճանապարհորդել էին ուրիշ գործիչներ ևս: Նրանցից էին Ա-Դօ-ն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), որը վերադառնալով տպագրել էր «Վանի, Բիթլիսի և էրզրումի վիլայեթները» (Երևան, 1912) գիրքը: Նրանից հետո՝ 1914 թ. ամռանը, Հայաստան էր մեկնել հոգևորական Ռ. Բեկրուլյանցը (Северянин), որը ճանապարհորդել էր Վանի, Բիթլիսի, էրզրումի և Տրապիզոնի վիլայեթներում և վերադառնալով իր տպավորություններն ամփոփել էր «По Турецкой Армении» գրքում (Ростов на Дону, 1914):

Այսպես՝ 1913 թ. Վան է հասնում «Русское Слово» նշանավոր թերթի թղթակիցը*: Փետրվարի 21-ին ի պատիվ նրա Երեմյան վարժարանում տրվում է ճաշկերույթ: Ներկա էին հայ մտավորականներից շատերը՝ տեղի ուսական հյուպատոսի թարգման Ղևոնդ Սրվանձտյանը, հնչակյաններից Ա. Սուլաքյանը, դաշնակցականներից Իշխանը, հայտնի վաճառականներ ու արհեստավորներ:

Հանդես գալով իր պատվին կազմակերպված հավաքին՝ ուս թղթակիցը տեղեկացրել էր, որ իր նպատակն է ամենախղճմիտ եղանակով ուսումնասիրել Թուրքահայերի երկարամյա տառապանքը և իր ստացած տպավորությունները օրը օրին տեղեկագրել իրեն գործուղած թերթի էջերում: Դրանով, ասում էր նա, հույս ունի նպաստելու Ռուսաստանում և արտասահմանում ճշմարիտ կարծիքի ձևավորմանն այն ժողովրդի մասին, որն իր ստեղծագործական ուժով, խաղաղ ու աշխատասիրական գործունեությամբ, իր կատարյալ համբերությամբ ամենաարժանավոր տեղ պիտի բռնի ազգերի մեծ ընտանիքում¹:

Հայկական հարցի միջազգային քննարկման ճակատագրական օրերին Պետերբուրգի «Биржевые Ведомости» թերթի խմբագրությունը նույնպես որոշում է իր նշանավոր աշխատակիցներից մեկին՝ հայտնի հրապարակախոս Անտուան Բերեզովսկի-Օլգենսկուն (գրչանունը՝ Տ. Օլգենին), ուղարկել Թուրքահայաստան՝ մոտիկից ծանոթանալու տեղի վիճակին և տպավորությունները փոխանցելու թերթին:

Նախկինում տարիներ շարունակ Օլգենինը եղել էր Պետերբուրգի «Новое Время» թերթի աշխատակիցը, այնուհետև հրավիրվել էր «Биржевые Ведомости» լրագիր: Յոթ տարիներից ի վեր ուսումնասիրել էր «արևելյան խնդիրը», եղել Մակեդոնիայում, Ալբանիայում, Արաբիայում, Թուրքական և պարսկական սահմանագլխային վայրերում, իր ուսումնասիրություններով հանրային նպաստավոր կարծիք էր պատրաստել Ռուսների քրիստոնյաների մասին:

* Անձի ինքնությունը պարզել չհաջողվեց:

¹ Տե՛ս «Կոհակ» (Կ. Պոլիս), № 11, 27 մարտի 1913 թ.:

1912 թ. վերջին և 1913-ի սկզբին Օլգենինը գալիս է Անդրկովկաս, լինում է Թիֆլիսում, Երևանում, էջմիածնում, Հանդիպումներ է ունենում Հայ մտավորականների, քաղաքական ու կրոնական գործիչների հետ, մոտիկից շփվում ու ճանաչում նրանցից շատերին, մասնավորապես բարեկամական սերտ կապեր է հաստատում «Մշակի» խմբագիր Ալ. Քալանթարի հետ: Անդրկովկասում Օլգենինը խորամուխ է լինում հայկական հարցի բուն էություն մեջ, հայությունը հուզող հարցերի մասին կարող է մի շարք դասախոսություններ, ապա 1913 թ. հունվարի վերջերին մեկնում է Թուրքահայաստան՝ հաղորդակցվելու հայոց տառապանքներին*:

Օլգենինի ուղևորությունը Թուրքահայաստանում խիստ արգասաբեր էր: Նա շուրջ չորս ամիս մնում է Թուրքահայաստանում, լինում է նրա վեց նահանգներում, ժամանում էրզրում, Բայազետ, Ալաշկերտ, Արճեչ, Բիթլիս, Մուշ, Վան, Սղերդ, Դիարբեքիր, հանգամանորեն ծանոթանում հայության սոցիալ-տնտեսական ու քաղաքական դրությունը և “*Буржевые Ведомости*” թերթին ուղարկում հոդվածաշարք, որը լույս է տեսնում «Անհետացող Հայաստանը» ընդհանուր խորագրի տակ:

Վանում հրատարակվող «Վան-Տոսպ» շաբաթաթերթին տված հարցազրույցում այն հարցին, թե «հայերի համար ինչ կարևորություն ունեն Ձեր թղթակցությունները», Տ. Օլգենինը պատասխանել էր.

«Ինչպես միշտ, նույնպես և այժմ ոռու կառավարությունը մեծապես չահագրգռված է Հայաստանով, նա հոն չահեր ալ ունի, այնպես որ հայեր կրնան հույս դնել յուր բարեացակամութեան վրայ: Իմ ուսումնասիրություններն Ռուսիո մեջ պիտի պատրաստեն նպաստաւոր հանրային կարծիք մը հայերու համար»¹:

Ալաշկերտից մինչև Արճեչ Տ. Օլգենինը տեսնում է հայ գյու-

* Անդրկովկասում և Թուրքահայաստանում Տ. Օլգենինի ծավալած հայանպաստ գործունեություն մասին մանրամասն տե՛ս Ա. Զաքարյանի հոդվածում՝ «Ռուս հրապարակախոս Տ. Օլգենինը Հայաստանի և հայկական հարցի մասին» («Պատմա-բանասիրական հանդես» № 4, 1989, էջ 67-84):

¹ «Վան-Տոսպ», № 5, 1913, էջ 56-57:

ղերի ամայությունը, բայց Արճեչից սկսած՝ հանդիպում է դեռ չեն մնացած գյուղերի, իսկ Վան քաղաքում՝ հայություն կենդանի կյանքի¹: Ահա թե ինչու այստեղից ուղարկած հոդվածում նա գրել է. «Մի՛ մարեք հոգին ... Թերահավատ մարդիկ թո՛ղ ասեն, թե Հայաստանը կես կենդանի է, եթե արդեն վերջնականապես կորած չէ, բայց ես ասում եմ Ձեզ, որ Հայաստանը կենդանի է և կմնա կենդանի ...»²:

Վանում եղած ժամանակ Օլգենինը կազմել էր քաղաքի դպրոցների վիճակագրությունը³, որը զետեղել էր նույն հոդվածում: «Վանի հայ ազգաբնակչությունը, - գրում էր նա, - ժողովրդական կրթության գործի համար տալիս է այն, ինչ որ կարող է և ի վիճակի չէ ավելի մեծ գոհողություններ անելու: Հայ ազգաբնակչությունն իր միջոցներով Վան քաղաքում պահում է 30 դպրոց՝ 5104 աշակերտներով (3200 տղա, 1904 աղջիկ), տարեկան 5.345 օսմ. լիրայի բյուջեով: Ինչ վերաբերվում է Վանի ամբողջ վիլայեթին, ապա այստեղ կա 136 հայ դպրոց՝ 6200 աշակերտով (5500 տղա, 700 աղջիկ), տարեկան 2.700 լիրաբյուջեով»⁴:

Համեմատության համար Օլգենինը բերում է մի քանի թվեր նաև մահմեդական ժողովրդական կրթության վիճակի մասին: Նա գրում էր. «Այդ համեմատությունից կարելի է դատել, թե հայերը որքան կուլտուրապես բարձր են թուրքերից և քրդերից, և թե որքան է թուրք կառավարությունը հոգ տանում այդ մասին: Ամբողջ վիլայեթում, չհաշված մի տասնյակ մեղրեսները, գոյություն ունեն (մահմեդական) 40 դպրոցներ (2360 աշակերտով, որոնցից միայն 135 աղջիկ), տարեկան 3.630 օսմ. լիրաբյուջեով: Այս թվի մեջ մտնում են և՛ ուսուցչական ճեմարանը, և՛ զինվորական դպրոցը Վանում»⁵:

Օլգենինը նշում էր մի քանի ուրիշ թվեր ևս. Վան քաղաքի

¹ Տե՛ս «Հայրենիք», 8 (32), հունիս, 1925, էջ 118:

² “*Буржевые Ведомости*”, № 13471, 29 марта 1913 г.

³ «Հայրենիք», № 8 (32), հունիս, 1925, էջ 118:

⁴ “*Буржевые Ведомости*”, № 13471, 29 марта 1913 г.

⁵ Նույն տեղում:

հայոց դպրոցների ուսուցչական մարմինը բաղկացած էր 210 ուսուցիչներից ու վարժուհիներից, իսկ վիլայեթի գյուղական հայ դպրոցներում դասավանդում էին 185 մանկավարժներ, մինչդեռ քաղաքում և ամբողջ վիլայեթում թուրք կրթական հիմնարկների մեջ ուսուցիչների թիվն ընդամենը 73 էր¹:

Այդ ամենը, առաջ բերելով մահմեդականների նախանձն ու թշնամությունը, միաժամանակ զարմանք էր պատճառում օտարներին: Հենց այդ ժամանակ էր, որ Յոհաննես Լեփսիուսի մերձավոր բարեկամներից, Թուրքիայում հայ որբանոցների հիմնադիրներից պատրո Լեհմանը և Մոսուլի գերման հյուպատոս Հոլչտայնը Վանի նահանգի հայոց վիճակը համարում էին նախանձելի, ուստի և անարդար էին գտնում իրենց քաղաքական և տնտեսական դրություն մասին նրանց բողոքներն ու տրտունջները: Իսկ Վանի նորընտիր նահանգապետ Թահսին բեյը զարմանալի, անըմբռնելի և անմեկնելի էր համարում պետական բյուջեից ոչ մի գրոշ չստացող հայ դպրոցների կրթական որակի գերազանցությունը պետական դպրոցների նկատմամբ²: Հիշյալները դժվար էին ըմբռնում, որ հայի համար դպրոցն ու լուսավորությունը գերակա էին անհրաժեշտ շատ բաներից, որ նա պատրաստ է ամեն գոհողության իր զավակներին կրթության տալու համար:

Վան քաղաքից մեկնելուց հետո Օլգենինի առջև գծագրվում է նահանգի գավառների հայության ծով տառապանքի անեղր պատկերը: Թեև գավառներում տիրապետողը դեռ հայ լեզուն, հայ բարքերը և հայ սովորություններն էին, բայց այդ ամենի վրա ծանրացած էր թուրք և քուրդ հալածիչների մշտական սպառնալիքը: Նույնիսկ այդ պայմաններում նահանգի հայ գյուղացիները չէին կորցնում հավատը, թե մի օր լույս է բացվելու իրենց համար: Երիցս իրավացի էր Վանի ոռոսական փոխհյուպատոս Սերգեյ Պետրովիչ Օլֆերինը, որը, նահանգի գյուղերից մեկում դիմելով հայերին, ասել էր. «Հիրավի ես միանում եմ ձեր

¹ Տե՛ս «Биржевые Ведомости», № 13471, 29 марта 1913 г.

² Տե՛ս «Հայրենիք», 8 (32), հունիս, 1925, էջ 119:

կենսունակութեան, գործունեութեան, անընկճելի տոկունութեան և դեպի ազգի ճակատագիրն ունեցած ձեր հմայելի հոյսի ու հավատքի վրա»¹:

Շրջելով Վանի վիլայեթի մի շարք բնակավայրերով՝ Օլգենինը հանդիպում է ավերակված ճարտարապետական անկրկնելի կոթողների: Նա ցավով նշում էր, որ քաղաքակիրթ աշխարհը մինչև այժմ բոլորովին անտեղյակ է հայ ժողովրդի երբեմնի հզորության, նրա ինքնատիպ ստեղծագործական ոգու մասին: Օլգենինը ուրախությամբ էր ընդունել այն փաստը, որ վերջին տարիներին որոշ չափով աճել է հետազոտողների հետաքրքրությունը հայերի անցյալի մշակութային արժեքների նկատմամբ²:

Բայց որքան Օլգենինը խորանում էր Հայաստանի տարածքներով, այնքան ավելի էր համոզվում, որ ինքը գործ ունի շատ արագ անհետացող Հայաստանի հետ: Նրա առաջին հոգվածի վերնագիրը՝ «Հայաստանը կենդանի է և կմնա կենդանի», արագորեն չքանում էր նրա երևակայության մեջ և տեղը զիջում անելանելի հոռետեսության:

Վանից անցնելով Բիթլիս՝ Օլգենինը ականատես է լինում նահանգի հայության թշվառ ու մեծապես վտանգված վիճակին, բազմաթիվ գանգատներ է լսում քրդական հարստահարումների ու ասպատակությունների, հայ բնակիչների չղաղարող սպանությունների մասին:

1913 թ. մարտի 21-ին Օլգենինը Բիթլիսից ուղարկած թղթակցության մեջ գրում էր, որ այնտեղ հայերի ոչ միայն անձնական գույքն ու պատիվը, այլև կյանքը ամբողջովին գտնվում են բոլորովին անգրագետ, տգետ ու ազահ քուրդ բեկե-

¹ Տե՛ս «Հայրենիք», 8 (32), հունիս, 1925, էջ 119:

² Թիֆլիսի Ազգագրական ընկերության քարտուղար ազգագրագետ Երվանդ Լալայանը (ընկերության նախագահն էր Արեքսանդր Մելիք-Ազարյանը) 1911 թ. գնացել էր Վասպուրական, չրջել նահանգի գավառներով, ցուցակագրել վանքերն ու եկեղեցիները, հավաքել և ուսումնասիրել բազմաթիվ հին ձեռագրեր, պեղումներ կատարել Վան քաղաքի Շամիրամ թաղամասի նախապատմական (քարեդարյա) հնավայրում և այլն (տե՛ս Համբարձում Երամեան, Յուշարձան Վան-Վասպուրականի, էջ 137):

րի ու աղաների ձեռքում: Նա օրինակներ էր բերում՝ ցույց տալու համար քաղաքակրթության ամենացածր աստիճանի վրա գտնվող արյունարբու այդ հակների իրական արժեքը: Նա գրում էր, որ հարկային տեսուչ Իբրահիմ էֆենդին 100-ից այն կողմ հաշվել չգիտեր, Յուսուֆ փաշան չէր կարողանում ստորագրել իր անունը: Բայց ինչ արած, նրանք էին հայերի բախտը տնօրինողները:

“Биржевые Ведомости”-ի 1913 թ. մարտյան մի ուրիշ համարում Օլգենինը, հենվելով հյուպատոսների ասածների վրա, հայտնում էր, որ հայերը բուռն ցանկությամբ ձգտում են դեպի Ռուսաստան: Ավելին, Հայաստանում բնակվող եզդիների և նույնիսկ մուսուլման բնակչության մի մասի մոտ նույնպես նման տրամադրություն է դրսևորվում¹:

Օլգենինը նշում էր, որ այդ մասին իրեն մանրամասն պատմել է Օլֆերինը, որը չափազանց սիրված էր Վանի նահանգի հայերի կողմից: Նրա ասածները հաստատում են տեղի ֆրանսիական հյուպատոս Զարչեսկին, գերմանական ու ամերիկյան միսիոներները, օտարերկրացի ուրիշ պաշտոնյաներ ևս:

Հողվածագիրը շեշտում էր, որ Ռուսաստանի նկատմամբ թուրքահայերի համակրանքը բնական հետևանք է Մերձավոր Արևելքում ռուսական ավանդական ազատագրական քաղաքականության, որն առանձնապես ջերմորեն բռնկվել էր Բեդլինի կոնգրեսից հետո: Սակայն 1890-ականների սկզբներից թուրքահայերի համակրանքը սկսեց թուլանալ Դաշնակցության ջանքերով: Այդ հոսանքի առաջացման հետևանքով ժողովրդի մտավորական, ավելի ճիշտ՝ քաղաքական խավերի մեջ ռուսասիրությունը փոխվեց հայտնի թշնամանքի, որը փաստորեն տևեց մինչև վերջերս: 1908 թվականից սկսած՝ այդ կուսակցությունը հայ ժողովրդի բախտը կապեց Թուրքիայի հետ, բայց հետագա իրադարձությունների բերումով դաշնակցականների հակառուսական քաղաքականությունն անխնա տապալվեց: Հայ ժողովրդական զանգվածների մեջ գնալով է՛լ ավելի ամրացավ այն

համոզումը, թե «արտաքոյ Ռուսաստանի՝ չիք փրկութիւն հայոց», և այդ գիտակցությունը 1910 թ. վերջերին այնպիսի հաստատ և ամուր ձև ստացավ, որ ձախակողմյան մտավորական խմբերը, վախենալով կորցնել ժողովրդի վրա իրենց ունեցած ազդեցության վերջին մնացորդները, ստիպված վերադարձան ռուսասիրության այն պատմական հունը, որից նրանք ժամանակին դուրս էին եկել ազմուկով:

Օլգենինը նշում էր, որ միայն այդ հանգամանքով կարելի է բացատրել այն տարօրինակ փաստը, որ ռուս գործերի՝ Պարսկաստան մտնելուց հետո այդտեղից փախած դաշնակցականները օսմանյան երկրում հանդիսացան ոչ թե ռուսների զայրացած հակառակորդներ, ինչպես պետք էր սպասել, այլ, ընդհակառակը, ռուսական մշակույթի և ազդեցության եռանդուն և գործուն տարածողներ: Դաշնակցական տարագիրներին էր պարտական ռուսական առևտուրն այն արագ հաջողությունների համար, որ ձեռք բերվեցին վերջին 2-3 տարում Թուրքիայի և Ռուսաստանի սահմանակից երկրներում: Դաշնակցական տարագիրներն են, որ թուրքահայերի մեջ աննախընթաց թափով շարունակում են տարածել ռուսաց լեզուն և ռուսական մշակույթը¹: Դաշնակցական տարագիրները, որոնք Վանում և էրզրումում կանգնած էին ծայրահեղ ձախակողմյան մամուլի գլուխ, այժմ չիտակ և բարձրաձայն խոստովանում են իրենց սխալը և համարձակ ու կրքոտ քարոզում, թե անհրաժեշտ է, որ հայ ազգն իր վստահությունը տա Ռուսաստանին, միայն ու միայն նրան²:

Վանի ռուսական փոխհյուպատոս Օլֆերինը անհրաժեշտ էր համարում ընդգծել այն փաստը, որ Վանում հրատարակվող «Աշխատանք» դաշնակցական լրագիրը վերջին երեք տարում թշնամական մի խոսք անգամ չի ասել Ռուսաստանի դեմ, բայց միաժամանակ չատ խիստ հանդես է գալիս եվրոպական պետությունների և մանավանդ Թուրքիայի դեմ:

Միանգամայն իրավացի էին և՛ Օլգենինը, և՛ Օլֆերինը: Հի-

¹ Տե՛ս “Биржевые Ведомости”, 28 марта 1913 г.

¹ Տե՛ս “Биржевые Ведомости”, 28 марта 1913 г.:

² Տե՛ս նույն տեղում:

րավի, 1913 թ. գարնանը հայ ազգի բացարձակ մեծամասնությունն այն համոզմանն էր, որ թուրքաց Հայաստանի ազատագրության հարցը կարող է լուծվել միայն չնորհիվ Ռուսաստանի: Հայերի աչքերը հառած էին Ռոմանովների տան վրա:

Օլգենինը իր հողվածում բերում էր Հայ գյուղացիների՝ դեպի Ռուսաստանն ունեցած սրտակցություն գլխաշարժ ու միամիտ օրինակներ, որ իրեն հաղորդել էր Վանի փոխհյուպատոս Օլֆերինը:

Ահա այդ օրինակներից մեկ-երկուսը. «Անցյալ (1912 թ.: - Հ. Ս.) ամառ անցնելով Վանի վիլայեթի գյուղերով՝ նա (Օլֆերինը: - Հ. Ս.) իջևանում է Քղզի գյուղում: Այստեղ նրան ցույց են տալիս մի ծերացած, հոգեպես հիվանդ հայի, որը 40 տարի շարունակ ամեն օր առավոտները դուրս էր գալիս գյուղի ծայրը և երկար նայում դեպի հյուսիս, ապա դառնալով տուն, հառաչելով ասում էր. «Ձէ՛, դեռ չեն գալիս մոսկով քեռիները (ռուսները: - Հ. Ս.)»¹: Իսկ Հայկանեստ գյուղում եղած ժամանակ նրան (Օլֆերինին: - Հ. Ս.) մոտեցել էր մի ծայրահեղ աղքատ Հայ գյուղացի և, մեկնելով նրան մի հին ռուսական ուրբլիանոց, ասել էր. «Ոչինչ սրանից ավելի լավ բան ես չունեմ: Վերցրու այս ուրբլին և դրա դիմաց միջնորդիր Ռուսաց ցարի առջև, որ ռուսները շուտ գան այստեղ»²:

Դա խորտակվող ժողովրդի աղեկատուր հառաչանքն էր:

Մենք այստեղ հնարավորություն չունենք, և դրա հարկն էլ չկա, մանրամասն անդրադառնալ Օլգենինի «Անհետացող Հայաստանը» հողվածաշարի բոլոր 22 հողվածների բովանդակությունը և վերլուծել դրանք:

Թուրքիայի կառավարությունը չհանդուրժեց Օլգենինի ներկայությունը Թուրքահայաստանում, որն իր հողվածներով տարածում էր Հայ ժողովրդի անտանելի կացություն մասին ճշմարտությունը:

¹ Տե՛ս «Биржевые Ведомости», 28 марта 1913 г., տե՛ս նաև «Հորիզոն», № 74, 4 ապրիլի 1914 թ.:

² Տե՛ս նույն տեղում:

1913 թ. ապրիլի 11-ին Օլգենինը Դիարբեքից իր թերթի խմբագրությունն էր ուղարկել մի հեռագիր, որը տեղ էր հասել միայն յոթ օր հետո՝ ապրիլի 18-ին, որովհետև տեղի թուրքաց իշխանությունը երկար ժամանակ պահել էր: Ահա հեռագրի տեքստը.

«Վանի և Բիթլիսի նահանգապետներից մեղադրվելով հակաթուրքական պրոպագանդի մեջ՝ ես Կ. Պոլսից ստացա ներքին գործերի մինիստրի հրամանը, որով հայտնվում էր, թե պարտավոր եմ անմիջապես թողնել Թուրքիան՝ բռնելով այնպիսի ճանապարհ, որի վրա չլինեն ո՛չ հայեր, ո՛չ քրդեր: ... Թուրքաց արտաքին գործերի մինիստրը նույնիսկ հարկ չէր համարել ռուսաց դեսպանությունը (Կ. Պոլսի: - Հ. Ս.) տեղեկացնել իմ արտաքսման մասին: Դիարբեքիում ռուսական հյուպատոսությունն չլինելու պատճառով թուրքական կառավարության գործողության դեմ իմ բողոքը տեղի ֆրանսիական հյուպատոսի միջոցով ես ուղարկեցի մեր դեսպանություն:

Ամենաեռանդուն կերպով բողոքում եմ թուրքական իշխանությունների կողմից ինձ վրա բարդած անհիմն մեղադրանքների դեմ: Վանում և Բիթլիսում ես ամբողջ ժամանակ ապրել եմ ռուսաց հյուպատոսարաններում և այցելում էի միմիայն այն անձանց, որ ինձ ցույց էին տալիս ռուսաց հյուպատոսները:

Ձեր կողմից ևս բողոքեցեք այն բռնի միջոցների դեմ, որ ձեռք է առել թուրքաց կառավարությունը մի ռուս լրագրողի դեմ, որի հանցանքը միայն այն է, որ բարեխղճորեն արձանագրել է գործերի իսկական դրությունը:

Վաղը մեկնում եմ Խարբեքի և էրզրումի վրայով»¹:

Տ. Օլգենինը իր հեռագրով խնդրում էր ռուսական հասարակական կարծիքին՝ բողոքել իր նկատմամբ գործադրած, բայց ոչնչով չհիմնավորված ռեպրեսիայի դեմ: Ահա, ելնելով իր թղթակցի այդ խնդրանքից, «Биржевые Ведомости» խմբագրությունն իր հերթին հեռագիր է հղում Թիֆլիս՝ «Մշակ» թերթի խմբագրությունը՝ հույս հայտնելով, որ «հարգելի լրագիրը

¹ «Մշակ», № 91, 30 ապրիլի 1913 թ.:

հասարակության և պրոֆեսիոնալ համերաշխության զգացումներով չի մերժի միանալ մեր խմբագրության այդ բողոքին»¹:

«Մշակի» խմբագրությունը իր համերաշխությունը հայտնեց «*Биржевые Ведомости*»-ի խմբագրությանը, ուրախություն արտահայտեց, որ Օլգենինը ողջ և առողջ է, միաժամանակ բուռն զայրույթով միացավ ողու թերթի արտահայտած բողոքին՝ ընդդեմ թուրքական այդ նոր կոպիտ գործողությանը: «Հանուն Հայ հասարակության և Հայ ինտելիգենցիայի՝ մենք բարձրաձայն բողոքում ենք մեր պաշտոնակցի դեմ գործադրված բիրտ ու անարդարացի միջոցի դեմ»², - ասված էր «Մշակի» խմբագրության հայտարարության մեջ:

Թուրք կառավարության սպառնալիքների տակ Օլգենինը էրզրումի վրայով անցնում է Կովկաս և մայիսի 20-ին հասնում Թիֆլիս:

Եվ ահա, Թուրքիայի՝ հայերով բնակեցված վեց վիլայեթներով կատարված շրջագայությունից վերադարձած Օլգենինը մայիսի 27-ին Թիֆլիսի ամենամեծ դահլիճներից մեկում՝ Արտիստական թատրոնի դահլիճում, կարդում է դասախոսություն «Անհետացող Հայաստանը» թեմայով՝ Թուրքահայաստան կատարած իր երկարատև ճանապարհորդության և ստացած տպավորությունների մասին: Դահլիճը լեփ-լեցուն էր ունկնդիրներով, հիմնականում, իհարկե, թիֆլիսյան հասարակության հայկական մասից: Դասախոսությունը ներկա էին փոխարքա Վորոնցով-Դաչկովի ներկայացուցիչ, հետևազորի գեներալ Շատիրովը, պաշտոնական այլ անձինք, այդ թվում՝ ողուսաց արտգործնախարարության առաջին դեպարտամենտի՝ Կովկասի փոխարքային կից սահմանային գործերի վարչության ղեկավարը, որ դասախոսության մասին մանրամասն տեղեկություններ էր հաղորդել Պետերբուրգ՝ իր վերադասին³:

Հրապարակախոսը ունկնդիրներին տեղեկացնում էր, որ Թուրքիան տակավին թուլացած չէ, ինչպես կարծում են: Կորց-

նելով եվրոպական հողերը՝ նա դեռ ուժեղ է մնում Ասիայում:

Եվրոպական մասում ունեցած կորստի դեմ Թուրքիան իր համար ձեռք բերեց շոչափելի դրական արդյունք. արթնացան թուրք-մահմեդականների զզգային գիտակցությունն ու զգացմունքը, որոնք փոթորկվեցին չովինիզմի ոգով: Այս պայմաններում, ասում էր Օլգենինը, Հայկական հարցը Ռուսաստանի համար դարձել է շատ մեծ կարևորություն ունեցող խնդիր: Կարելի է ասել, որ Հայկական հարցը դարձել է նաև ռուսական հարց: ... Արևմտահայությունն իր հայացքն ուղղել է քրիստոնյա Ռուսաստանի կողմը... և վերջինս պետք է բարձրացնի հայերի պաշտպանություն իր հզոր ձայնը»²: «Հայկական հարցի լուծման նախաձեռնողը պետք է լինի Ռուսաստանը: Դա նրա բարոյական պարտականությունն է, դա են պահանջում նաև նրա պետական շահերը: Ռուսաստանը պետք է ուղղի իր անցյալի սխալները: Ռուսական պետությունը ապագայում մեծ վտանգ է սպառնալու... Ռուսաստանը պետք է պահանջի ոչ միայն բարենորոգումների կատարում, այլ նաև Հայաստանի ինքնավարության իրականացում...»³:

«Ես, պարոններ՝, պետք է ի չիք դարձնեմ կովկասահայի լավատեսությունը և ասեմ, որ այլևս գոյություն չունի նախկին Հայաստանը. մնացել է սոսկ նրա խղճուկ հետքը: Երբեմնի հարուստ քաղաքներից այժմ միայն մնացել են մնացորդներ, բեկորներ: Այնտեղ, ձեր երազած Հայաստանում, օր ու գիշեր արթուն են միայն անցյալի փլատակները ... Այժմ Հայաստանը նման է գերեզմանատան ... Միայն Վանի վիլայեթում է, որ հայերը ընդհանուր բնակչության մեջ կազմում են մեծամասնություն՝ 58 տոկոս: Մնացած հայաբնակ վայրերում հայերի թիվը 30 տոկոսից չի անցնում»:

Դասախոսության ընթացքում Օլգենինը դառնություն էր խոսում հայկական կազմակերպությունների մասին: Նա ասում

¹ «Մշակ», № 83, 20 ապրիլի 1913 թ.:

² Նույն տեղում:

³ АВПРИ, "Политархив", з. 1913, д. 3461, лл. 122, 122 об., 123, 123 об., 124.

¹ Տե՛ս «Մշակ», № 116, 29 մայիսի 1913 թ., նաև՝ А. А. Закарян, Русский публицист Т. Ольгенин об Армении и Армянский вопрос, ИФЖ, 1990, № 2, с. 68-84:

² «Բաքվի ձայն», 15 հունիսի 1913:

³ Նույն տեղում:

էր. «Ճիշտ է, այժմ քաղաքներում ու գյուղերում կան կուսակ-
ցական մարմիններ, կոմիտեներ, բայց դրանք միայն արտաքին
տեսքով են հանդես գալիս, իրականում նույնիսկ ներկա տագ-
նապի ժամանակներում նրանց միջև չկա ներքին միաբանու-
թյուն, համերաշխ գործակցություն»¹:

Բանախոսը դառը կսկիծով էր նկարագրում հայկական ան-
միաբանությունն ու անհաշտությունը ոգին: Ամենուր շարունակ
տեղի են ունենում ներքին պայքարներ ու կոիվներ, վեճեր ու
երկպառակություններ, և որ հատկապես ամոթալի է՝ զինված
ընդհարումներ: Հայկական քեներն ու նախանձը հասել են այն աս-
տիճանի, որ նույնիսկ այժմ, երբ թուրքահայր կանգնած է «լինել-
չլինելու» երկրնտրանքի առջև, հայկական կազմակերպություն-
ները շարունակում են դիմել ստոր մատնությունների:

Անդրադառնալով բարենորոգումների հարցին՝ Օլգենինը
նշում էր, որ այդ հարցում թուրքահայ կուսակցությունների միջև
գուցե կա ինչ-որ առերևույթ համաձայնություն, բայց չկա ընդ-
հանուր գործողության ծրագիր և սերտ միաբանություն որևէ
դրական աշխատանք կատարելու համար: Եվ եթե վրա հասնի
մի ճգնաժամային պահ, ապա հայ քաղաքական կազմակերպու-
թյունները միանգամայն անպատրաստ ու անզոր կգտնվեն դի-
մագրավելու արհավիրքը:

Այնուհետև բանախոսն անդրադառնում է թուրքահայոց
տնտեսական դրությունը: Նա գտնում էր, որ այժմ նույնիսկ
ավելորդ է հարց բարձրացնել քրդերի կողմից հայերից խլված
հողերը իրական տերերին վերադարձնելու մասին: Այդ հողերն
այլևս անդառնալիորեն կորած են հայերի համար, նրանք պետք
է վերջնականապես իրենց հույսը կտրեն, թե երբևիցե դրանք
հետ կվերցնեն: Ոչ միայն Ռուսաստանը, այլև բոլոր մեծ պետու-
թյունները միասին անկարող են արդեն «լուծված խնդիրը» նո-
րից լուծելու հոգուտ հայերի: Դրա համար հարկ կլինի կոիվ
սկսել 2,5 միլիոն քրդերի դեմ:

Հայ գյուղացիները քուրդ բեկերից կապալով ստիպված

¹ «Մարտ», № 7, 15 Հուլիսի 1913 թ.:

վերցնում են նախկինում իրենց պատկանած հողերը: Մինչև
վերջերս քուրդ բեկերը հողը հայ գյուղացուն կապալով տալիս
էին մշակելու առանց պայմանագրի, իսկ այժմ նրանք կալվա-
ծագրեր են կնքում անասելի ծանր պայմաններով:

Բացի կալվածագրերի վճարից՝ կապալառու հայը բեկին
վճարում է ստացած գյուղատնտեսական եկամտի կեսը, նույ-
նիսկ 3/4-ը: Եթե դրան ավելացնենք մյուս հարկերը, ասում է
Օլգենինը, ապա պատկերը պարզ կլինի: Հայը գտնվում է բեկի
ցանցի մեջ, մշակում է հողը, հերկում ու ցանում, բայց իր աշ-
խատանքի արդյունքը չի վայելում, որովհետև համարյա ամբողջ
հասույթը տալիս է բեկին:

Թուրքահայ գյուղացիների հողերը «օրինական», «քաղա-
քակիրթ» եղանակով խլելու համար կառավարությունը հրա-
պարակ էր բերել մի ուրիշ դժոխային միջոց: 1910-1913 թթ.
Թուրքահայաստանի զանազան վայրերում բացվել էին այսպես
կոչված ագրարային բանկեր, որոնք կարիքավոր գյուղացիներին
«փոխարինաբար» բարձր տոկոսներով տալիս էին որոշ գումար:
Եթե բանկ եկած հայ գյուղացուն իր կարիքներն ինչ-որ չափով
հոգալու համար անհրաժեշտ է, ասենք, 10 լիրա, ագրարային
բանկը նրան ընդունում է սիրալիր և պատրաստակամությամբ
հայտնում տալու ավելին, ասենք՝ 15-20 լիրա, ըստ որում՝
առանց որևէ ձևական վավերացումների՝ բավարարվելով միայն
գյուղացու ստորագրությամբ: Միաժամանակ նրան հայտարար-
վում էր, որ եթե ուղիղ մեկ տարի հետո նա չկարողանա խոշոր
տոկոսով հանդերձ բանկին վերադարձնել պարտքը, ապա նրա
ունեցած հողաբաժինը օտարվելու է առանց որևէ դատարանի
կամ վճռաբեկ ատյանի որոշման: Խեղճուկրակ հայ գյուղացին
ստիպված համաձայնում էր առաջարկված պայմանին, որով-
հետև մեծ կարիքից զրոգված՝ այդ րոպեին նրան փող էր պետք:
Աչքը փակեց, տարին անցավ, և գեղջուկի գոյություն միակ
աղբյուրը՝ հողը, ձեռքից գնում էր ընդմիջ:

Ունկնդիրներին հայ շինականի այդ կորստաբեր դրություն
մասին գաղափար տալու համար Օլգենինը բերում էր կոնկրետ
փաստեր: Օրինակ՝ Ուլաթի շրջանում հայերի հողերի 90 տոկոսը
գրավ էր դրված, Մալաթիայի շրջանում՝ 87 տոկոսը և այլն:

Ո՞ւր էր գնալու անճար թուրքահայր: Նրան մնում էր միայն մի հուսահատ միջոց՝ ձեռքն առնել գաղթականի անիծյալ ցուպը:

Դասախոսությունն մեջ Օլգենինը առաջ էր քաշում հայ-ուսական հարաբերությունների հետագա զարգացման խնդիրը: Հայկական հարցը, ասում էր նա, փաստորեն Փոքր Ասիայի մակեդոնական պրոբլեմն է: Ռուս հասարակության համար պետք է պարզ լինի, որ այն նաև ռուսական հարց է: Փոքր Ասիայում ընդհանուր է դեպի Ռուսաստանը ձգտումը: Հայաստանում բնակվող մյուս այլազգի ու այլակրոն բնակիչներից՝ եզդիներից ու քրդերից, շատերը նույնպես համակրում են Ռուսաստանին: «Ես հպարտանում էի, թե աշխարհի այս մասում ինչպիսի խանդավառ և սիրաբորբոք տենչանք գոյություն ունի իմ հայրենիքի նկատմամբ», - չեչտում էր Օլգենինը:

Դասախոսությունից հետո դրա առանձին մասերը առաջինը տպագրեց «Մշակը»¹:

Թիֆլիսում որոշ ժամանակ մնալուց հետո Տ. Օլգենինը մեկնում է Բաքու և «Անհետացող Հայաստանը» թեմայով այստեղ հունիսի 8-ին նույնպես կարդում է հրապարակային դասախոսություն, որից հետո մեկնում է Պետերբուրգ:

“Буржевые Ведомости” թերթում Օլգենինի տպագրած «Անհետացող Հայաստանը» հոդվածաչարրը ամբողջովին կամ հատվածաբար արտատպվեց ոչ միայն Ռուսաստանի, այլև Թուրքիայի և արտասահմանի հայ թերթերում՝ առաջ բերելով հուզմունքի ու վհատության լայն ալիք:

Թիֆլիսում ու Բաքվում, ինչպես և այլուր հայերից շատերին ծանր էր եկել Օլգենինի՝ սրտի ցավով ասած խոսքերը, թե «Հայաստանն անհետանում է»: «Հայաստանը չի անհետանալու երբեք»՝ հակաճառում էին հայկական մամուլի զանազան օրգաններում հանդես եկող հեղինակները, թեև սրտի խորքում ունեին ասոելի հեռանկարի տազնապար:

«Մարտ» (Մոսկվա) թերթը գրում էր. «Հայաստանը ոչ անհետացել է և ոչ էլ կանհետանա: Հայաստանը՝ այս արտասուքի

¹ Տե՛ս «Մշակ», № 116, 29 մայիսի 1913 թ.:

և տառապանքների աշխարհը, մնացել է և մնալու է, եթե, իհարկե, նրա որդիքը (նկատի ունեի թուրքահայերին: - Հ. Ս.) իրենց հայացքը չուղղեն ուրիշ ոչ մի կողմ, այլ հղեն դեպի իրենց արյունակիցները, դեպի իրենց [ռուսահայ] հարազատ քույրերն ու եղբայրները, որոնք հանգամանքների շնորհիվ այսօր վայելում են բախտի բոլոր վայելքները»¹:

Ավելին եղան նաև վերջին կովի, ճակատագրական պայքարի կոչող արձագանքներ: Հեռավոր Կալիֆորնիայի Ֆրեզնո քաղաքում լույս տեսնող դաշնակցական «Ասպարեզ» թերթը գրում էր.

«Անհետացող Հայաստան ...

Հայաստանը պիտի անհետանայ, այո՛, եւ «քաղաքակիրթ», «քրիստոնյա» «հայասեր» եվրոպացիներ ու ռուսներ, քանի մը տասնեակ կամ հարիւր բարեսիրտ եւ հեռուն չը մտածող ծեր կանայք՝ թերեւս ցավ զգան հայ ազգի ոչխարային ոչնչացման համար: Քաղաքական մուրացկանութեամբ, ախ ու վախով, լաց ու կոծով, սուգ ու շիվանով զգուելի եղանք թէ՛ օտարներուն եւ թէ՛ մեզի: Համազգային նոր տրամադրութիւններ, նոր ներչնչումներ ու կենսական գոյութեան նոր ու առողջ պահանջներ պետք է երևան բերենք՝ մեր խոսքը յարգելի ընելու համար աշխարհին: Հայութիւնն անհետացման շրջանին հասած է եւ անհետացումէն զերծ պահելու համար՝ զենք ու նոր ոգի պէտք է անոր: Ինքնապաշտպանութեան գործն ամէնէն էական պահանջ է ներկայ ճգնաժամային օրերուն մէջ: Պէտք է կոյր ըլլալ չտեսնելու համար այդ պահանջը, պէտք է խուլ ըլլալ՝ չը լսելու համար այդ աղաղակը»²:

Բայց, ավա՛ղ, ժամանակը բաց էր թողնված: Հայաստանը, հիրավի, անկասելիորեն անհետանում էր:

¹ «Մարտ», № 7, 15 հուլիսի 1913 թ.:

² «Ասպարեզ», № 251, 30 մայիսի 1913 թ.:

ՌՌՌՍԱԿԱՆ ԳՐԱՎՈՒՄԸ՝ ՀԱՅ ԶԱՆԳՎԱԾՆԵՐԻ ԻՂՁ

1913 թ. մայիսի 18 (31)–ին Թուրքահայոց պատրիարքը հերթական դիմումն է հղում մեծ վեզիր Մահմուդ Շեքեթ փաշային՝ ապրիլի 29–ից ի վեր Արևելյան Անատոլիայում և Կիլիկիայում հայերի հանդեպ կատարված ոճիրների՝ ավազակությունների, կողոպուտների ու սպանությունների մասին և կրկին ու կրկին խնդրում է ձեռնարկել միջոցներ խաղաղ բնակչությունը պաշտպանելու համար¹:

Թուրքահայոց ազգային կազմակերպություններն այլևս անզոր էին աղետների դեմ որևէ միջոց ձեռք առնելու: Կառավարությունն առաջվա պես ոչ մի ուշադրություն չէր դարձնում հայոց պատրիարքի ու Ազգային վարչությունից դիմումների ու գանգատների վրա:

Այս պայմաններում Թուրքահայ ժողովրդի ստվար հատվածը հավատ չէր ընծայում հայկական նահանգներում եվրոպացիների օգնությամբ բարենորոգումներ մտցնելու դիվանագիտական գործողությունների նկատմամբ և իրենց հայացքը հառել էին հյուսիս:

Իհարկե, բոլոր հայերի համակրանքը Ռուսաստանի կողմն էր, բայց նրանց տարբեր հատվածները տարբեր ձգտումներ էին դրսևորում: Թուրքահայություն մի մասն ընդհանրապես հեռու էր անջատողական ձգտումներից: Մտավորականության գերակշիռ մասը և հայ ազգային կուսակցությունների Թուրքահայ հատվածները ուզում էին ունենալ տարածքային ինքնավարություն, որպեսզի Հայաստանի բոլոր ազգերը հավասար իրավունքներով մասնակցեին նրա կառավարմանը և հավասարապես օգտվեին իրավունքներից: Իսկ հայերի ամենաչարքաչ մասը, որը համարյա զրկված էր ամեն ինչից, երազում էր իր կողքին տեսնել ռուս զինվորին, այսինքն՝ Հայաստանը տեսնել Ռուսաստանի կազմում, ուր իր հայրենակիցները անդորրություն էին վայելում:

¹ Տե՛ս Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, Թղթապ. 1, վավեր. 11⁸⁵: Ֆրանսերեն տեքստ՝ բաղկացած 15 թերթից:

1913 թ. գարնանը ոչ միայն հայերի ամենաթշվառ մասի մոտ, այլև մտավորականության և հոգևորականության նշանակալի հատվածներում գնալով մարում էր եվրոպացիների օգնությամբ հայկական նահանգներում բարենորոգումներ մտցնելու հավատը, միաժամանակ զորանում ձգտումը դեպի Ռուսաստան: Վերականգնանում էր Հայաստանը ռուսների կողմից գրաված տեսնելու վաղեմի հույսը:

Թուրքահայաստանի ռուսական գրավումով հայ ժողովրդի պատմական հայրենիքը, ինքը՝ հայ ժողովուրդը, կհամախմբվեր մի պետության մեջ: Քաղաքական այդպիսի հնարավոր փոփոխությունից դեպքում Հայաստանը կդառնար Ռուսաստանի մի մասը, և հայերը մի որոշակի քաղաքակրթական կողմնորոշման հնարավորություն կունենային, այն է՝ կողմնորոշում դեպի ռուսական հզոր մշակույթը, կենցաղն ու սովորույթները, իրենց բնածին ունակություններով կհասնեին տնտեսական բարձունքների: Հայության երկու հատվածներում կստեղծվեին մտածողություն և ինքնադրսևորման նմանատիպ պայմաններ: Աստիճանաբար կմերձենային հայերի գրական երկու լեզուները, որը մեծապես կնպաստեր ազգային վերածնության գործին:

Ռուսաստանի կողմից հայերն ունեցել են ավանդաբար:

Կոստանդնուպոլսի պատրիարք **Ներսես Վարժապետյանը** 1879 թ. ասել էր. «Երկու հարյուր տարի է մենք նայում ենք Ռուսաստանի կողմը և նրանից սպասում ազատություն: Ռուսաստանի հետ դաշինք կնքելուց բացի ես ազատության այլ հնարավորություն չեմ տեսնում»¹: Ավելի ուշ Կ. Պոլսի ռուս դիվանագետները իրենց կառավարությունը տեղեկացրել էին, որ «Թուրքահայերը Ռուսաստանին համարում են իրենց միակ պաշտպանը»²:

Եվ ահա այժմ հատկապես Թուրքահայաստանի խորքերից Կ. Պոլիս հասած հուսահատության ճիչերը, ուրիշ տեղերից եկող

¹ «Պատմա-բանասիրական հանդես», № 1, 1995, էջ :

² АВПРИ, ф. «Турецкий стол» (новый), 1904, д. 2483, лл. 1, 2.

աղաղակները ցույց էին տալիս, որ հայերի հոծ խմբեր փայտա-
յում են ոռուս գինավորին իրենց կողքին տեսնելու իղձը:

Այդպես էին մտածում ամենից առաջ Կ. Պոլսի ազգային
աշխարհիկ իշխանությունները:

«Այդ ուղին,- դողողուն ձայնով ասել էր Ազգային վարչու-
թյան նախագահ ծերունի Ստեփան Գարայանը,- մենք ընտրել
ենք ոչ թե ելնելով մեր սեփական դատողություններից ու իրա-
վիճակն ըմբռնելուց, այլ ամբողջ ազգի տրամադրվածությունից,
և եթե մենք սխալվել ենք, ապա սխալվել ենք ամբողջ հայ ազ-
գության հետ...»¹:

Հայաստանի ոռուսական գրավումը հայություն համար
փրկություն էր համարում նշանավոր քաղաքական գործիչ, գրող
և իրավաբան Գրիգոր Զոհրապը:

Ռուսահայ գործիչների մի խմբի հետ ունեցած հանդիպման
ժամանակ Զոհրապն ասում էր, որ թուրքահայության գլխավոր
հենարանը Ռուսաստանն է՝ և՛ հարևանի, և՛ շահերի իրավուն-
քով: Նա պետք է հաստատվի Հայաստանում, որը կարևոր փուլ
կլինի դեպի Միջերկրականի տաք ջրերը դուրս գալու ճանապարհ-
հին: Այդտեղ նրա միակ հուսալի հենարանը կլինի հայությունը:
... Հայերը, տեղում մեծ ուժ լինելով, կարող են իրենց աջակ-
ցությամբ Ռուսաստանին հնարավորություն տալ խաղաղորեն
ներթափանցելու Հայաստան: Ռուսաստանն իր կողմից պետք է
ապահովի նրանց մշակութային, ազգային խաղաղ զարգացումը:
Ռուսական դեսպանության շրջանակների մարդկանց հետ
զրուցելիս գրողը միշտ զարգացնում և պաշտպանում էր այդ
տեսակետը և, հիմնվելով երկու կողմերի շահերի վրա, առաջ
քաշում փոխադարձ օգնության սկզբունքն ըստ donant, donant
բանաձևի²:

Զոհրապի կարծիքով՝ ոռուսական իշխանությունների խստու-
թյուններն այլազգիների, այդ թվում հայերի նկատմամբ ժամա-

նակավոր բնույթ ունեն: Որքան էլ խիստ լինեն ոռուսական
օրենքները, հայերը Ռուսաստանում գոյություն ունեցող քաղա-
քական իշխանության պայմաններում հնարավորություն ունեն
մեծապես առաջադիմելու: Ռուսաստանը երիտասարդ երկիր է,
ապագա ունեցող պետություն, և այն ճնշումը, որի մասին շատ
են խոսում հայ գործիչներից ոմանք, միշտ չէ, որ իշխելու է
Ռուսաստանում: Հաշվի առնելով այդ երկրի պատրաստակա-
մությունը օգնելու և աջակցելու հայերին, մենք պետք է կարո-
ղանանք խելամտորեն խուսափել նրան չափից ավելի մեծ պա-
հանջներ ներկայացնելուց, պետք է բավարարվել նրա կողմից
ներկայացվելիք չափավոր նախագծով: Մնացյալը կլրացնի ու
կկատարի ապագան:

Հարցը բացերեաց քննարկվում էր նաև հայկական մամուլի
էջերում:

Այլևս չունենալով քաղաքական անկախության կամ ինքնա-
վարություն անիրագործելի ցնորքներ, գրում էր «Մշակը»,
թուրքահայերը, միանալով ոռուսական մեծ պետությանը, գոնե
կապահովեն իրենց ցեղային, լեզվական, կրոնական անկախու-
թյունը, հոգևոր, բարոյական-մտավոր ինքնուրույնությունը և
այլևս վախ չէին ունենա իրենց կյանքի, գույքի և պատվի հա-
մար: «Մեր բնական պաշտպանը,- թերթում գրում էր մտա-
վորական թաթուլ Վանանդեցին,- Ռուսիան է: Միայն ու միայն
Ռուսիան կրնայ պաշտպանել մեր կեանքը, մեր պատիւը, մեր
ինչքը: ... Ռուսիոյ այս պաշտպանութիւնն ազգովին խնդրելն
այնչափ կարևոր է, որ և ոչ վայրկեան մը տատամսիլ պէտք է»¹:

Ռուսական գրավման կողմնակիցները համոզված էին, որ
դրանով կփրկվեն հայրենիքն ու ազգը, Հայաստանի կացությունը
կբարվոքվի, թուրք ռեժիմի արհավիրքի համեմատ շատ ավե-
լի լավը կլինի այնտեղ հաստատվելիք ոռուսական վարչությունը:

Նույնիսկ հայ եկեղեցականները, որոնք իրենց հոտին միշտ
համբերություն էին քարոզել, հիմա քրդերի անլուր հալածանք-

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 95, թ. 29-30:

² Նույն տեղում, թ. 24:

¹ Տե՛ս «Մշակ», № 282, 19 դեկտեմբերի 1912 թ.:

ներից հայերի փրկութեան ելքը տեսնում էին ռուսական զորքերի կողմից Հայաստանի գրավումը:

Արևմտահայաստանը ռուսների կողմից գրավելու հետևողական կողմնակից էր Տիգրանակերտի թեմի առաջնորդ, Կ. Պոլսի ապագա պատրիարք Զավեն եպիսկոպոս Տեր-Եղիայանը: Մի գրույցի ժամանակ նրան հարցրել էին. «Ձեր կարծիքով ինչ ձևաչափով է ցանկալի լուծել հայկական հարցը»: Սրբազանը պատասխանել էր. «Ես բարենորոգումներին նայում եմ լոկ որպես կիսամիջոց, որը որոշ չափով կթեթևացնի հայ ժողովրդի ճակատագիրը՝ Ռուսաստանի պարտադիր հսկողության պայմաններում: Հարցի արմատական լուծումը կլինե՞ր ամբողջ Հայաստանի միավորումը Ռուսաստանի իշխանության ներքո, որի հետ պատմականորեն կապված է հայերի ճակատագիրը»: Այն հարցին, թե «Ո՞ր տիրապետության քաղաքականությունն է առավել շահավետ և օգտավետ հայերի համար», սրբազանը պատասխանել էր. «Այս դեպքում պետք է դատել մեր և այս կամ այն իշխանության հետաքրքրությունների ընդհանրության տեսանկյունից: Արևմտյան Եվրոպայի ոչ մի երկիր այնքան չի հետաքրքրված հայ ժողովրդի գոյությամբ, որքան Ռուսաստանը, որի հպատակության տակ է մեր ժողովրդի կեսը, և որը հարևան Թուրքիայի հետ իր բազմադարյա պայքարի ավարտին չի կարող չհենվել այն մարզերի քրիստոնեական տարրի վրա, որոնք կազմում են ռուսական Կովկասի շարունակությունը»: Վերջում Եղիայանը հայտարարել էր. «Այն գիտակցումը, որ մենք՝ հայերս, պետք ենք Ռուսաստանին, որ նա լուծի իր պատմական խնդիրը, մենք վստահ ենք, որ այդ պետությունը կօգնի և կպահպանի մեզ: Ինչքան շուտ գա Ռուսաստանն այստեղ, այնքան լավ մեզ՝ հայերիս համար, քանի որ մենք չենք հասցնի ոչնչանալ Թուրքական Հայաստանում, բայց մենք էլ մեր կողմից պարտավոր ենք անել ամեն ինչ՝ թեթևացնելու համար նրա խնդիրները, այսինքն՝ համագործակցենք ուժեղացնելու նրա մշակութային, առևտրային

¹ ЦГИА РА, ф. 57, оп. 2, д. 685, л. 18.

և տնտեսական ազդեցությունն այս կողմերի վրա»¹:

Սրբազան Զավեն Եղիայանը համարձակ, եռանդուն և անվախ գործիչ էր: Նա հայերին նույնիսկ կոչ էր անում ապստամբել և օգնել ռուսներին Հայաստանը ազատագրելու թուրքական լծից: Այսպես, էրզրումի եկեղեցում արտասանած ճառում նա ասել էր. «Հպատակվելով՝ հայերը ոչնչի չեն հասնի, և եթե նրանք ձգտում են ինքնուրույնության, ապա պետք է նորից զենք վերցնեն և զենքով, ռուսական բանակի օգնությամբ, ձեռք բերեն ազատություն»²:

Գևորգ ծայրագույն վրդ. Պալաքյանի կողմից Կ. Պոլսից Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V-ին գրած նամակում կան այսպիսի տողեր. «Ընդհանուր փափագը սա է, թե՛ մեր փրկութեան միակ յոյսը Թուրքիոյ դրացի ռուսական մեծազոր կայսրութիւնը կրնայ լինել, քանի որ Թուրքիոյ ազատագրուած բոլոր ժողովուրդները եւ ազգերը, չնորհիվ Ռուսիոյ կայսրներու ազատագրուած են: Եւ մենք հայերս ալ այժմ բոլորովին տարբեր ճակատագիր եւ բախտ ունեցած պիտի լինեինք...»³:

Այնուհետև Պալաքյանը Վեհափառին տեղեկացնում էր, որ Պատրիարքի հետ ծայրաստիճան գաղտնապահությամբ գործող «Ապահովության հանձնաժողովը» նույնպես այդ ուղղությամբ աշխատանքներ է տանում, և որ այդ մտքով նաև գաղտնի դիմումներ են արված Կ. Պոլսի ռուսական դեսպան Գիրսին, որն իր կարգին դրանց մասին հաղորդումներ է արել Պետերբուրգ: Նամակագիրն ավելացնում էր, որ ազգային տարբեր և օտար շրջանակներից մշտապես առաջարկներ են արվում անպայման դիմել ռուսական պետության պաշտպանությանը, և որ այդ նույն մտքով Ֆրանսիայի նախարարների խորհրդի նախագահ Պուանկարեն առաջարկ է արել Նուբար փաշային՝ նրա հետ ունեցած մի քաղաքական տեսակցության ընթացքում⁴:

¹ АВПРИ, ф. “Политархив”, д. 3464, л. 45. Секретное донесение ген. консула в Эрзеруме Адамова от 26 октября, 1913 г., № 73.

² ЦГИА РА, ф. 57, оп. 2, д. 625, л. 18.

³ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ 95, թ. 5:

⁴ Նույն տեղում, թ. 4:

էջմիածնի Մայր աթոռի «Արարատ» հանդեսը գրում էր. «Մենք կողմնակից չենք, առհասարակ, որ պետութիւնների ներքին անկախութիւնը վտանգուի արտաքին միջամտութիւնից, բայց քանի որ Տաճկաստանի անցեալ եւ ներկայ ոեժիմը անկարող եւ ապիկար է երկրում ամենատարրական կարգը մտցնելու, քանի որ այդ պետութեան մէջ մարդասպանութիւններն ու աւազակութիւնները ոչ միայն չեն վերանում, այլ նոյն իսկ երկրի բարձր կառավարութեան՝ ներքին գործոց մինիստրի կողմից սովորական բան են յայտարարում, որի համար չարժէ անհանգստանալ – այդպիսի պետութեան խօսք հասկացնել կարող է միմիայն ուժը – արտաքին զօրեղ եւ վճռական միջամտութիւնը»¹:

Թուրքահայութեան ազգային իղձերն իրենց արտահայտութիւնն էին գտնում Թուրքիայում աշխատող ոուս դիվանագետների բազմաթիւ գրութիւններում:

«Ռուսաստանի հետ միանալը բոլոր արեւմտահայերի մշտնջենական երազանքն է», – իր նոթագրութիւնում շեշտել էր երկար ժամանակ Թուրքահայաստանում եղած, էրզրումի ուսական Հյուպատոսութեան խորհրդական Վիչինսկին: Նա գրում էր. «Քանի որ հայ բնակչութեամբ Թուրքական վիլայեթները գտնվում են մոտ հարեանութեամբ Ռուսաստանի հետ, ուստի բնական է, որ վաղուց նրան են ուղղված հայերի հայացքները որպէս միակ մեծ տերութեան, որը կարող է այդ քրիստոնյա ժողովրդին ազատել Թուրքական լծից, ինչպէս ազատեց բալկանյան քրիստոնյաներին: Պարզ է, որ հայկական հարցի լուծումը այսպէս թե այնպէս անխուսափելիորեն պետք է բաժին ընկնի Ռուսաստանին, որովհետեւ միայն նա կարող է իրական օգնութիւն ցույց տալ հայերին՝ հայկական մարզերը միացնելով ուսական տիրույթներին»²:

Վիչինսկին կարծում էր, որ այդ հարցում Ռուսաստանի համար կան շատ բարենպաստ պայմաններ: Մի կողմից, բալ-

¹ «Աշխատանք», № 33 (129), 29 հունիսի 1913 թ.:

² ЦГВИА, ф. 2000, с. оп. 1, д. 991, лл. 432.

կանյան պատերազմը լիովին ցույց տվեց, որ Թուրքական բանակի մարտական պատրաստութիւնը և մարտական որակը դեռևս վերակազմավորման փուլում են: Մյուս կողմից, ինչպէս հայ ժողովրդի զանգվածների, այնպէս էլ, առանց բացառութեան, նրա բոլոր քաղաքական կազմակերպութիւնների ու կուսակցութիւնների տրամադրվածութիւնն այնքան բարենպաստ է, որ եթե Թուրքիայի հետ բախում լինի, ապա Ռուսաստանը հայերից կստանա միանգամայն իրական օգնութիւն»¹:

Կոստանդնուպոլսում Պետերբուրգի հեռագրական գործակալութեան նորանշանակ թղթակից Գ. Յանչևեցկին՝ Թուրքահայ նահանգներ կատարած ճամփորդութիւնից հետո ասել էր, որ ինքն անձամբ զգացել է Թուրքիայի հայ ժողովրդի ամենաջերմ, սրտաբուխ վերաբերմունքը Ռուսաստանի և ոուս ժողովրդի նկատմամբ, ուստի իրեն համարում է նրա (Թուրքահայութեան: – Ն. Ս.) անկեղծ բարեկամը և մաղթում է, որ Ռուսաստանը այդ ժողովրդին առնի իր գրկի մեջ²:

Կ. Պոլսի ուսական դեսպան Միխայիլ Նիկոլաևիչ Գիրսը արտգործնախարար Սազոնովին ուղղած մի պաշտոնական գրութեամբ նշում էր. «Համակրանքը դեպի Ռուսաստան թափանցել է նաև հայ բուրժուազիայի և մտավորականութեան մեջ... Իմ հարցապնդումներին Վանի, Բայազետի, Բիթլիսի, էրզրումի և Տրապիզոնի մեր Հյուպատոսները միաձայն վկայում են, որ ներկայումս բոլոր հայերը, առանց կուսակցական խտրութեան, համակրում են Ռուսաստանին, օրինակ, Վանի փոխհյուպատոսը ... հեռագրում է, որ բոլոր հայերը կողմնակից են Ռուսաստանին և անկեղծորեն ցանկանում են ուսական գործի գալուստը կամ բարենորոգումները Ռուսաստանի վերահսկողու-

¹ ЦГВИА, ф. 2000, с. оп. 1, д. 991, лл. 433.

² Նշենք, որ Գ. Յանչևեցկուն հակառակ, նրա եղբայր անուղղելի հայատյաց էր, որը “Новое Время” թերթում տպագրած իր թղթակցութիւններով ու հողվածներով տարիներ շարունակ հարձակումներ էր գործում հայերի վրա, ժխտում էր համալսման և համաթուրքական շարժումների գոյութիւնը՝ դրանք համարելով հայերի կողմից հնարած բան (նույն տեղում):

³ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ 95, թ. 5:

Թյան տակ: Բայագետի փոխհյուպատոսը հաղորդում է. «Բոլոր հայերը ... ներկայումս ... սաստիկ ցանկանում են Ռուսաստանի հովանավորությունն ու Հայաստանի գրավումը»¹:

Նույն դիվանագետը Պետերբուրգ ուղարկած զեկուցագրերից մի ուրիշում նշում էր. «Անհրաժեշտ է հավաստիացում տալ թե՛ [Ամենայն հայոց] կաթողիկոսին և թե՛ Կ. Պոլսի [հայոց] պատրիարքին, որ կայսերական կառավարությունը հայ ժողովրդին ... ցույց կտա ... հնարավոր հովանավորությունը: Պետք է նկատի առնել և՛ այն հնարավորությունը, որ ներկայումս Թուրքիայում տիրող անիշխանությունն մեջ բարենորոգումները չեն բերելու սպասվող հանգստությունը, ուստի պատրաստ պետք է լինել այն բանին, որ գուցե անհրաժեշտ դառնա մեր գործերի մուտքը հայկական նահանգներ»² (ընդգծումը մերն է: - Ն. Ս.):

Կ. Պոլսում խոսում էին, որ Ռուսաստանը գրավելու է Հայաստանը, Անգլիան տիրանալու է Անատոլիային, իսկ Ֆրանսիան ձեռք է ձգելու Սիրիան: Լուրեր էին պտտվում, որ Ռուսաստանը Բ. Դոանը հայտնել է, թե հայերին կոտորածներից փրկելու համար մտադիր է գրավել Հայաստանի Վան, էրզրում և Բիթլիս քաղաքները:

“Русское Слово” թերթը գրում էր. «Կ. Պոլսի ռուսաց դեսպանը հայտնեց Բ. Դոանը, որ եթե չդադարեն քրդերի ջարդարար հարձակումները հայերի վրա, և այդ ջարդերը զանգվածային բնույթ ստանան, Ռուսաստանը վճռականորեն հանդես կգա պաշտպանելու հայերին»³:

Եվրոպական թերթերը նույնպես որոշակի խոսում էին, որ քրդերի ու Թուրքերի ձեռքով Հայաստանում վերսկսված ջարդերն առաջ կբերեն Ռուսաստանի միջամտությունը, և նա կգրավի Թուրքահայաստանն ու նրա մերձակա շրջանները, որը հենց հայերի երազանքն է:

¹ «Հայաստանը միջազգային դիվանագիտություն և սովետական արտաքին քաղաքականություն փաստաթղթերում (1828-1923)», էջ 152:

² АВПРИ, “Политархив”, д. 3452, л. 18.

³ “Русское Слово”, 11 ноября 1912 г.

Ինչո՞ւ հայերի մեծ մասի համար հատկապես 1913 թ. գարնանն էր անհետաձգելի Ռուսաստանի տիրապետությունը հաստատումը Հայաստանում: Որովհետև պահը ճակատագրական էր և թելադրված էր կոնկրետ հրամայականներով. 1) Քանի որ Բալկանյան պատերազմը Թուրքերի կողմից հռչակվել էր «սրբազան», ուստի այն վերջանալուց հետո պիտի սկսվեին լուրջ խժոժություններ անպաշտպան քրիստոնյաների դեմ: Հույնը, բուլղարը, սերբը, չեռնոգորցին, մակեդոնացին, քրիստոնյա ալբանը ունեին իրենց պաշտպանները: Անցյալում, երբ Թուրքն անկարող էր լինում ըմբոստությունների ու ահաբեկչական ակտերի համար նրանցից վրեժ լուծելու, իր բարկությունը թափում էր հայերի՝ որպես իսլամի թշնամիների գլխին: Այժմ էլ նույն պատկերն էր: Բայց ո՞րն էր հայերի հանցանքը, ինչո՞վ էին մեղավոր նրանք, եթե Չեռնոգորիան, Բուլղարիան, Սերբիան, Հունաստանը պատերազմ էին հայտարարել Թուրքիային և հաղթանակներ էին տանում: Բայց Թուրքական ֆանատիկոսությունը սթափ դատել չգիտեր. չեռնոգորցին, բուլղարը, սերբը քրիստոնյաներ են, հայը նույնպես քրիստոնյա է: Չկարողանալով վրեժ առնել առաջիններից՝ նա իր զայրույթը թափում էր հայի վրա, որովհետև նա դավանակից է հիշյալ ազգերին, 2) Պատերազմը բացել էր վիթխարի ծախսերի դուռ, և Թուրքիայի արդեն խարխլված ու դատարկված գանձարանը պետք էր լրացնել: Կարելի էր երևակայել, թե ինչ բռնություններ, ինչ կոդոպուտներ ու անիրավություններ պիտի տեղի ունենային դրամ հայթայթելու համար: Եվ ովքե՞ր էին հերթական անգամ անարգվելու ու կոդոպուտվելու. իհարկե՝ առաջին հերթին հայերը:

Այդ հանգամանքը քաջ ըմբռնում էին նաև Ռուսաստանի դաշնակիցներ Անգլիայում և Ֆրանսիայում: 1913 թ. հունվարի 20-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի ներկայացուցիչը անգլիական դեսպանատանը տեսակցություն է ունենում դեսպանատան առաջին թարգման Ֆից Մորիսի հետ: Զրույցի ընթացքում անգլիացի դիվանագետն ասել էր. «Թրքահայերը պէտք է համոզվին, թե իրենց փրկությունը ռուս պետությունից ձեռամբ կրնա ըլլալ միայն, հետևապես պէտք է անոր օժանդակություն և խորհուրդներուն դիմեն: Մանավանդ, որ Թրքահայաստանի

բարեկարգութեան հսկողութիւնը ոուս կառավարութիւնը պիտի ընէ, եւ աս է, որ առ այդ հարմարութիւն ունի: Որքան ալ Ֆրանսա եւ Անգլիա ցարդ միշտ հակառակած են – 1878-էն ի վեր մանավանդ – Ռուսիո պետութեան հայոց եւ Թրքահայաստանի նկատմամբ ունեցած ծրագիրներուն եւ ձգտումներուն, սակայն այժմ պարագաները փոխված լինելով, իրենք մէկ կողմ թողած են իրենց երբեմնի հակառուս քաղաքականութիւնը եւ ընդհակառակը իրենք ուժ պիտի տան Ռուսիո, այժմու Թրքահայաստանի մասին բռնելիք քաղաքականութեան»¹:

Ֆրանսիայի վարչապետ եւ արտաքին գործերի նախարար Ռայմոնդ Պուանկարեն (որը շուտով՝ 1913 թ. հունվարին, դառնալու էր երկրի նախագահ), հայտարարել էր, թե Ֆրանսիան օգնելու է Ռուսաստանին, որպեսզի հայոց դատը հաջող ելք ունենա²:

Իհարկե, բոլոր հայերը չէին, որ, ինչպես վերը նշվեց, երազում էին իրենց հայրենիքի ոուսական գրավումը: Նրանց մի մասի ցանկությունը չէր կարող գործունեություն ծրագիր լինել Հայաստանի փրկություն ուղիներ որոնող հայ քաղաքական գործիչների ու մտավորականության մի մասի համար: Ռուսաստանի գերակշիռ դերն ընդունելով հանդերձ՝ նրանք հասկանալի պատճառներով չէին կարող ոուսական գրավում պահանջել^{*}, քանի որ դա 1) Առաջ կբերեր մեծ անախորժու-

¹ «Էջմիածին», փետրվար-մարտ-ապրիլ, 1965, էջ 161:

² Նույն տեղում:

^{*} Հայ դատի ամենահին, ամենաանկեղծ եւ անձնվեր բարեկամներից մեկը՝ Վիկտոր Բերարը, 1912 թ. դեկտեմբերին «Փուր լե փեօիլ դ'Օրիան» թերթում տպագրած հոդվածներից մեկում հիմնվելով ոչ հավաստի տեղեկությունների վրա, գրել էր, թե հայերն այս բոլորիս բաժանված են երեք մասի. ոմանք ուզում են անկախություն, ուրիշները՝ միջազգային կոնտրոլ, եւ երրորդ մասը՝ ոուսական գրավում: Իրականում նրանք նման ազգային ծրագիր չունեին, որովհետեւ այդպիսի ծրագրի կենսագործման համար պայմաններ չկային: Տվյալ հանգամանքներում հայերի կողմից ոուսական գրավման պահանջը նրանց համար կարող էր կործանարար վախճան ունենալ: Բովանդակ հայությունն ուզում էր վարչական ինքնավարություն՝ եվրոպական-միջազգային երաշխավորությամբ ոուսական հսկողության եւ հովանավորության ներքո:

թյուններ տերությունների միջև: Նրանք դատում էին, որ եթե եվրոպական տերությունները ստիպված էին համակերպվել ոուսական քաղաքականության հաջողությունների հետ Բալկաններում, ապա երբեք չէին հանդուրժի նրա մի ուրիշ մեծ հաղթանակը: Չէին հանդուրժի հատկապես Գերմանիան ու Ավստրիան: Այս վերջիններիս պաշտոնական եւ կիսապաշտոնական հրատարակություններում հանդես եկող քաղաքական գործիչները ռազմաչունչ հայտարարություններ էին անում, որ եթե հայերին պաշտպանելու պատրվակով Ռուսաստանը մտնի Փոքր Ասիա, ապա կհանդիպի իրենց երկրի վճռական դիմադրությունը¹: Գերմանական մամուլը առիթը բաց չէր թողնում ատամներ ցույց տալու Հայաստանի ոուսական գրավման գաղափարի դեմ: «Deutsche Tageszeitung» թերթը գրում էր. «Եթե Ռուսաստանը իր սպառնալիքն իրագործի եւ գորքերը շարժի դեպի Հայաստան, դրանով նա կստեղծի իրադրություն եւ առաջ կբերի համապատասխան գործողություններ ուրիշ պետությունների կողմից... Եռյակ միությունը կարգելակի Թուրքիայի վերջնական լիկվիդացումը»²: Գերմանացիները դիմում էին ցանկացած սաղրանքի՝ վարկաբեկելու համար Փոքր Ասիայում Ռուսաստանի քաղաքականությունը: Այդ նպատակով նրանք նույնիսկ լուրեր էին տարածում, թե ոուսները զրգոում են քրդերին եւ նրանց մղում հայերի կոտորածների³, 2) Հայության համար կարող էր մեծ ողբերգություն լինել, եթե հայկական նահանգներ մտած ոուսական գորքերը Եվրոպայի ճնշման տակ ստիպված լինեին նահանջել Կովկաս եւ հայությունն անպաշտպան թողնել թուրքական պետության պատժիչ մեքենայի առջև, ինչպես դա տեղի ունեցավ 1877-1878 թթ. ոուս-թուրքական պատերազմից հետո:

¹ Տե՛ս «Կովկասի լրագրեր», № 14, 18 հունվարի 1913 թ.:

² М. П. Павлович, Империализм и борьба за великие железнодорожные и морские пути будущего, 1918, стр. 78.

³ Տե՛ս Տո. Степанян, Армения в политике империалистической Германии (конец XIX – начало XX веков), изд. «Айастан», Ереван, 1975, էջ 84:

Ակնհայտ էր, որ հայերն ամեն պահի կարող էին քաղաքացիական համար: Հնարավոր այդ հանգամանքը և դրանից բխող մահացու վտանգը հաշվի առնելով՝ թուրքահայ գործիչների մի մասը (Գեղամ Բարսեղյան, Վուսմյան և ուրիշներ), վճռականապես հանդես գալով ուսանողների կողմից Հայաստանի գրավման դեմ, գտնում էր, թե որպեսզի այդ բանը տեղի չունենա, թուրքական իշխանությունները պետք է շուտափույթ բարելավեն հայերի դրությունը: Պետերբուրգում լավ գիտեն, ասում էին նրանք, որ այդ դեպքում Օսմանյան կայսրության հանդեպ Ռուսաստանի հայերի համակրությունն ավելի կաճեր, և այդ տրամադրությունը, միանալով Կովկասի իսլամ տարրերի համակրությանը, մշտական վտանգի աղբյուր կլինե՞ր ուսական Կովկաս երկրամասի գոյության համար: Այս պայմաններում, մտածում էին նրանք, ուսական կառավարությունն այլևս առիթ չէր ունենա թուրք-ուսական սահմանագլխին խնդիրներ հարուցելու և դեպքեր ստեղծելու: Հետևապես, վերջնականապես կձախողվեին թուրքահայության ներքին գործերին խառնվելու և հայերին պաշտպանելու դիմակի տակ իր քաղաքականությունն առաջ տանելու Պետերբուրգի մտադրությունները¹:

Հայկական հարցի լուծման գործում Ռուսաստանին չեզոքացնելու տեսակետը վճռականապես մերժվում էր թուրքահայության բացարձակ մեծամասնության կողմից:

Մամուրեթ-ուլ-Ազիզ կուսակալության* նույնանուն պաշտոնաթերթը իր № 1429-ում տպագրել էր Նարբերդի հայոց առաջնորդ Պսակ ծ. վարդապետի հոդվածը, ուր հեղինակը հանդես էր գալիս հայկական գործերում Ռուսաստանի մասնակցության դեմ: Նա գրում էր. «Ո՞վ իսլամ եղբայրներ, մենք աղէկ կը ճանչնանք Ռուսիոյ պողպատէ շինուած լուծը: Բռնակալութեան օրերուն նոյնիսկ այս ասացուածքը կար, թե «Ռուսիոյ պողպատէ լուծէն Համիտի փայտե լուծը նախամեծար և տանելի

¹ Տե՛ս «Աւետարեք», № 23, 7 հունիսի 1913 թ.:

* Նարբերդի վիլայեթ:

է»: Այս ասացուածքը հայ լեզուին մեջ առակի կարգ անցած է...: Ռուսիոյ նպատակը շատ գեշ է: Եւ մենք օսմանցիներս ատիկա լաւ գիտնալու ենք, ծածկելու չենք... Ռուսաստանի մեջ բնակող մեր հայ եղբայրներուն քաջած զուլումը ու տառապանքը մեզի յայտնի են: Սխալ քայլ մը թէ՛ իսլամ և թէ՛ քրիստոնեայ հայրենակիցներս վտանգի կենթարկե»¹:

Առաջնորդի այս հոդվածը խոր դժգոհություն էր առաջ բերել նահանգի հայության մեջ:

Վերակազմյալ հնչակյան կուսակցության Նարբերդի նահանգային վարչությունը հանդես եկավ հայտարարությամբ և կեղծիք համարեց Ռուսաստանին Պսակ ծ. վարդապետի անարդարացի վերագրումները: «Ճշմարտութեան բոլորովին հակառակ է նորեն, թէ ուսահայերը զուլումի արհաւիրքի մէջ կապրին, - ասված էր հայտարարության մեջ: - Օր մերունց անոնք ջարդերու, բռնութիւններու ու բռնաբարումներու հեծծող աղաղակներ չի բարձրացուցին, ընդհակառակը՝ բաղդատմամբ թրքահայերու արգահատելի կապացուցանէ թէ անոնք ապրում են անբաղդատելիորեն աւելի խաղաղ, աւելի ձեռնտու ու ազատ պայմաններու մէջ»²: Նշվում էր, որ, իհարկե, Ռուսաստանում տեղի են ունեցել քաղաքական հալածանքի դեպքեր, բայց դրանք կիրառվել են բացառապես պետության դեմ ուղղված քաղաքական գործողություններ իրականացնողների նկատմամբ՝ երբեք չտորելով անմեղ ու խաղաղ ժողովրդի իրավունքները²:

Հայաստանի ուսական գրավման անորոշ հետևանքների վտանգը խիստ անհանգստացնում էր Եվրոպայում գտնվող հայ քաղաքական գործիչներից ու մտավորականներից շատերին, որոնք հնարավորություն ունեին անմիջականորեն մոտիկից շոչափելու տեղի հասարակական շերտերի և կառավարությունների տրամադրությունները:

Ավ. Իսահակյանը 1913 թ. հունվարի 13-ին Ժնևից Փարիզ,

¹ ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 42, թ. 1:

² Նույն տեղում:

Ավ. Ահարոնյանին գրում էր. «Հիմա լրագրներում որ պատահում ես Հայաստանի մասին մի խօսք, կապուած է ուսական օկուպացիոնի հետ: Այդպէս էլ պէտք է լինէր. ոուսը ինչ լաւ բան կարող էր մտածել մեր մասին: Բերանս չի զօրում, որ ասեմ թէ այդ լաւ է – օկուպացիոն... չեմ ուզում, թէեւ տաճկահայերը չատ են ուրախ»¹:

Ամեն ինչից գատ՝ կարևոր էր իմանալ, թե Հայաստանի ուսական գրավումը ինչ գին կարող է ունենալ:

Հայաստանի ուսական գրավումը երազող Հայուխոյունը համոզված չէր, թե Պետերբուրգը մի հարվածով կարող է վճռել Հայկական հարցը՝ գրավելով Հայաստանը: Դրա պատճառն ինչպես ամբողջութամբ վերցրած Արևելյան հարցի, այնպես էլ նրա մասը կազմող Հայկական հարցի նկատմամբ Ռուսաստանի բռնած հարափոփոխ դիրքն էր: Չնայած դրան՝ ուժի մեջ էր մնում ուսական կայսրութեան գերակա նպատակներից մեկը՝ դուրս գալ միջերկրականի տաք ջրերը: Իսկ այդ ճանապարհին ընկած էր թուրքական բռնապետութեան ձիրաններից փրկվել երազող Հայաստանը: Ուրեմն՝ Հայաստանի գրավման շարժառիթ կարող էր լինել ոչ թե Ռուսաստանի կողմից քրիստոնյա Հայուխոյուն անկախութեան թուրք-մահմեդական լծից, այլ Միջերկրականի առինքնող ասիերը:

Ինչևիցե, Հայ զանգվածների հետզհետե աճող ձգտումը դեպի Ռուսաստան բնական էր ու անկեղծ: Հայաստանի ուսական գրավման գաղափարը օր օրի թափանցում էր թուրքահայ հասարակութեան նորանոր շերտեր:

Կառավարական տեսակետը – Բալկանյան պատերազմի այդ օրերին (պատերազմ, որը նախերգանք էր համաեվրոպական պատերազմի, և որին պատրաստ չէր Ռուսաստանը) պաշտօնական Պետերբուրգը գերագույն զգուշութեամբ էր ձեռնարկել

¹ «Հայրենիք», № 4 (279), ապրիլ, 1949, էջ 45: Նկատենք, որ կովկասահայ համայնա բոլոր քաղաքական ուղղութիւնների մամուլի օրգանները հրաժարվում էին օգտագործել «օկուպացիա» բառը: Ինչո՞ւ «օկուպացիա», այլ ոչ թե «գրավում» կամ նույնիսկ «ագատագրում»:

աջակցելու հայկական բարենորոգումների իրականացմանը: Կառավարութիւնը տվյալ ժամանակամիջոցում չափազանց վտանգավոր էր համարում թուրքահայերի ապստամբական որևէ բռնկում, հետևաբար անկարելի էր դնել ուսական զորքերով հայկական վիլայեթները գրավելու հարցը: Դա առաջ կբերեր ուս-թուրքական լայնամասշտաբ նոր անխուսափելի պատերազմ, որը կվտանգեր Թուրքիայի հարևան Անդրկովկասի ուսական տիրույթները:

Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Դմիտրիևիչ Սազոնովը իր հուշերում գրել է. «Հայերի ապստամբութիւնը Անդրկովկասին սահմանակից փոքրասիական վիլայեթներում, որ միշտ հնարաւոր էր Թուրքիայի հայ բնակչութեան կեանքի անտանելի պայմանների հետեւանքով, սպառնում էր վառել հրդեհը եւ մեր սահմանի այս կողմը, ուր բազմաթիւ ու բարեկեցիկ ուսահայերը անխուսափելի կերպով գործօն օժանդակութիւն պիտի ցոյց տային թուրքական հարստահարութիւնների դէմ կռուող իրենց ապստամբ եղբայրներին»:

Անդրկովկասը իր խայտաբղէտ ու թոյլ խաղաղեցուած ազգաբնակչութեամբ վտանգաւոր հող էր ներկայացնում ամէն տեսակ խառնակութիւնների եւ յուզումների համար, եւ մեր տեղական վարչութիւնը չափազանց շահագրգռուած էր, որ մեր սահմանակից թուրքական շրջանները զինուած ապստամբութեան թատերաբեմ չդառնան: Հազիւ թէ կարիք կայ մատնանշելու, որ նման մի ապստամբութիւն համարեա անխուսափելի կերպով առաջ կը բերէր պատերազմ Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ, այսինքն՝ կը հասցնէր այնպիսի հետեւանքների, որոնցից ուս կառավարութիւնը ամէն կերպ աչխատում էր խուսափել:

Վերեւ ասուածից հետեւում է, որ ոչ միայն մարդասիրական հետաքրքրութիւնը դէպի մի քրիստոնեայ դժբախտ ժողովրդի ճակատագիրը, ինչքան եւ ուժեղ լինէր այդ հետաքրքրութիւնը, այլ եւ մեր ամէնից քիչ հանգիստ համարուող ծայրագաւառներից մէկի (նկատի ունեն Անդրկովկասը:– Հ. Ս.) անդորրութեան պահպանման փաստը բերեց կայսերական կառավարութիւնը այն գիտակցութեան, որ անհրաժեշտ է ստանձնել հայ-

կական վիլայեթներում հիմնական բարենորոգումներ մտցնելու նախաձեռնությունը»¹:

Արդյո՞ք թուրքահայության հիմնական զանգվածների անկեղծ ցանկությունը բավական էր, որ նա ուսաներին իր կողքին տեսներ: Իհարկե՝ ո՛չ:

Ռուսական կառավարությունը, երկրի իշխող դասակարգերը, մամուլի օրգանները և ընդհանրապես ուսու հասարակությունը թուրքիայի ասիական տարածքների գրավման հարցի նկատմամբ ունեին տարբեր, նույնիսկ տրամագծորեն հակառակ տեսակետներ:

Թուրքիայի հայկական վիլայեթների նկատմամբ Պետերբուրգի ունեցած պաշտոնական տեսակետը զանազան պատճառաբանություններով պաշտպանում էին տարբեր ուսու գործիչներ հատկապես օկտյաբրիստների (*октябристы*) միջավայրից: Նրանք գտնում էին, որ ուսաները ո՛չ կարիք և ո՛չ էլ ցանկություն ունեն մեծացնելու իրենց կայսրությունը, քանի որ առանց այդ էլ այն շատ ընդարձակ է:

Այսպես, բուլղարական մամուլի օրգաններից մեկը, մատնանշելով թուրքահայերի անտանելի վիճակը, Ռուսաստանի կառավարությունը կոչ էր արել աջակցել թուրքահայերին՝ նրանց երկիրը գրավելու միջոցով²: “Утро России” թերթում լույս տեսած հոդվածի հեղինակը՝ կառավարական բարձր պաշտոն զբաղեցնող օկտյաբրիստ Ն. Մամոնտովը վճռականապես դեմ էր արտահայտվել բուլղարական թերթի արտահայտած մտքին: Նա գրել էր, որ Ռուսաստանի շահերին միանգամայն հակառակ են Օսմանյան կայսրության քայքայումը և ուսական Կովկասի հայաբնակ տարածքի կողքին որևէ նոր հայաբնակ գաղութի հիմնումը: Ընդհակառակը, Ռուսաստանի նպատակը պիտի լինի

¹ С. Д. Сазонов, Воспоминания, Москва, 1991, стр. 168-169 (Ս. Դ. Սազոնովի «Հուշերի» հայությունը վերաբերող հատվածներն առաջին անգամ լույս են տեսել 1928 թ. «Հայրենիք» ամսագրում: 1948 թ. սույն հուշերը վերահրատարակվել են նույն ամսագրում: 1960 թ. «Հայրենիքը» կրկին անդրադարձել է նշված հուշերին [№ 7 (413)], էջ 46-57):

² Տե՛ս «Կովկասի լրագրեր», № 12, 16 հունվարի 1913 թ.:

թույլ չտալ թուրքական տիրապետության միջուկի, այսինքն՝ Փոքր Ասիայի վիլայեթների քայքայումը: Եթե Ռուսաստանը հետևի իր «բարեկամների» խորհուրդներին և իրեն միացնի Հայաստանը, դրանով իսկ նա ձեռք կբերի իր համար միանգամայն ավելորդ 230 հազար քառակուսի վերստ լեռնոտ մի տարածություն՝ Թուրքահայաստանը, որի հողը ընդունակ չէ կերակրելու այնտեղ ապրող 4.7 միլիոն բնակչությունը: Այդ տարածությունը ցեղագրական կազմը բոլորովին հակառակ է բուլղարական մամուլի պնդումներին, այսինքն՝ այնտեղ ապրում են միայն մեկ միլիոն քրիստոնյա հայեր, որոնք «բիչ թե շատ բարեացակամ են տրամադրված Ռուսաստանի նկատմամբ»: Բնակչության մյուս զանգվածը, որը կազմում է մոտ 3.7 միլիոն մարդ (ընդհանուր բնակչության 68 տոկոսը) Ռուսաստանի նկատմամբ կատաղի թշնամությունը տողորված, լավ զինված թուրքեր, քրդեր և լազեր են: Մնացածները եզդիներ են և զզբաչներ: Մենք նույնիսկ չպետք է պահանջենք, գրում էր Ն. Մամոնտովը, որ թուրքիան քանդի Փոքր Ասիայի վիլայեթների մուտքը Ռուսաստանի կողմից փակող էրզրումի ամրությունները, քանի որ ոչ մի ցանկություն չունենք ներխուժելու անբերրի տափաստանները: «Հողային ոչ մի պահանջ չունենալով Հայաստանում, դրանով իսկ թուրքիային կապացուցենք մեր խաղաղասիրությունն ու բարեացակամությունը»¹: Այնուհետև հոդվածագիրը նշում էր, որ Հայաստանի գրավումը չի թուլացնի, այլ միայն կղժվարացնի Կովկասի սահմանների պաշտպանությունը, ուստի նույնիսկ ռազմագիտական տեսակետից Ռուսաստանը պետք է հրաժարվի բոլորովին ոչ ձեռնտու այդ գաղափարից: Միաժամանակ Ն. Մամոնտովը չեչտում էր, որ «խուսափելով հանդերձ Հայաստանում արկածախնդրական քայլեր անելուց, մենք պետք է պահանջենք թուրքիայից, որ նա, վերջապես, ներքին ինքնավարություն տա իր հայկական վիլայեթներին և զինաթափ անի քրդական հրոսակախմբերը»²:

¹ Տե՛ս «Կովկասի լրագրեր», № 12, 16 հունվարի 1913 թ.:

² Նույն տեղում:

Ռուս գործիչներից ուրիշները դեմ էին նույնիսկ թուրքահայերին ինքնավարություն տալուն: Այսպես, «Բիւզանդիոն» թերթի խմբագիր Բուզանդ Քեչեյանը պատմել էր, թե ինչպես օկտյաբրիստների պարագլուխ Ա. Գուչկովը, գալով Կոստանդնուպոլիս, գրուցել էր տեղի հայ հասարակությունների հետ և դեմ արտահայտվել Հայաստանի ինքնավարությանը թուրքիայի կազմում՝ ասելով, թե դա չահավետ չէ Ռուսաստանին¹: Երկրներ նվաճելու ուրիշ մի նոր ախորժակ չի գրգռում ուսներին: Ռուսաստանի կառավարությունը խորապես հարած է խաղաղությունը, որը թույլ կտա մեծապես զարգացնել անհուն հարստություններ ունեցող երկիրը: Ուստի նրան բնավ ձեռնադր չէ, որ կովկասյան իր սահմանագծի վրա եղծվի խաղաղությունը:

“Баку” թերթի խմբագիր Քր. Վերմիչյանը խոսակցություն էր ունեցել հայկական հարցի մասին իրազեկ, Պետերբուրգում բարձր դիրք զբաղեցնող մի պաշտոնյայի հետ: Վերջինիս արտահայտած հիմնական մտքերը թարգմանաբար տպագրել էր Կ. Պոլսի «Ժամանակը»:

Խոսելով ուսական գորքերի կողմից Հայաստանը գրավելու հայերի վաղեմի բուռն ցանկության մասին՝ ուս պաշտոնյան ասել էր. «Երազել ուսական գրաւումի մասին երկրի (Արևմտյան Հայաստանի:– Հ. Ս.) մը համար, որ իր տարածութեամբ աւելի ընդարձակ է, քան Կովկասը, բնաւ կարելի չէ, եւ ամէնէն առաջ այն պարզ պատճառով, որ Ռուսիան այդպիսի քայլ չընեն հակառակ Եւրոպայի: Բացի այդ, ատանկ խոշոր հողամասի մը գրաւումը պիտի ստիպէ պահել խոշոր զինուորական ուժ մը, որը Ռուսիան չունի Կովկասեան սահմանագլխի վրայ: Նոյն իսկ այն պարագային, եթէ վեց վիլայէթներու մէջ լուրջ խառնակութիւններ առաջ գան, որոնց հետեւանքը ըլլայ արիւնհեղուիւն, Ռուսաստանը չի կրնար ստանձնել Եւրոպայի առջեւ այնպիսի խոշոր պատասխանատուութիւն, որպիսին է Թուրքիոյ այդ կարեւոր հողամասին գրաւումը»²:

¹ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 95, թ. 27-28:

² «Ժամանակ», № 1425, 12 (25) ապրիլի 1913 թ.:

Իհարկե, այս ամենը նկատի էր առնում պաշտոնական Ռուսաստանը, ուստի մտադիր չէր գրավել Հայաստանը: Տվյալ ժամանակում նա պատերազմ չէր ուզում, որի պատճառներն էին. **Առաջին**, ռուս-ճապոնական պատերազմում կրած ծանր պարտությունից հետո նա դեռ չէր հասցրել վերականգնել իր ռազմական հզորությունը: **Երկրորդ**, այդ պատերազմը նպաստել էր, որ ամբողջ երեք տարի երկիրն ալեկոծվի մեծ հեղափոխությունից, ուստի որևէ երաշխիք չկար, թե մի նոր պատերազմի դեպքում Ռուսաստանը նորից չի ընկղմվի հեղափոխական հորձանուտի մեջ՝ ռոմանովյան գահի համար անկանխատեսելի հետևանքներով: Այլ խոսքով՝ տվյալ ժամանակաշրջանում Պետերբուրգի համար «ներքին թշնամու»¹ դեմ անողոք պայքարը շարունակում էր գերակա մնալ արտաքին թշնամու դեմ մղվելիք կովից: **Երրորդ**, Բալկաններում ծագած պատերազմը մեծ լարվածություն էր առաջացրել պետությունների հարաբերություններում, ուստի Պետերբուրգը խուսափում էր իր համար մի նոր թնջուկ ստեղծելուց այս անգամ Մերձավոր Արևելքում: Ռուսական մամուլը նկատում էր, որ նախկիններում Թուրքիայի դեմ պատերազմներում Ռուսաստանն իր դեմ ունենում էր միայն օսմանյան բանակը: Մյուս պետությունները, չհաշված Սևաստոպոլի կոիվը, միշտ չեզոքություն էին պահպանում: Սրանց վերջին խոսքը արտահայտվում էր խաղաղության պայմանագիր կնքելու ժամանակ: Այս «վերջին խոսքը»² ասածը շատ էլ կայուն բան չէր ուս-թուրքական սահմանն անխախտ պահելու համար: Հնարավոր էին քաղաքական այնպիսի զարգացումներ, որոնց շնորհիվ ձայների մեծամասնությունը տրվեր հօգուտ Ռուսաստանի: Բայց այժմ այն բանի պատճառով, որ Ռուսաստանը ոչ մի քայլ չէր արել Ասիական Թուրքիայում իր գերիշխան իրավունքը հաստատելու համար, մյուս կողմից ընդհակառակը՝ Անգլիան, Գերմանիան և Ֆրանսիան տնտեսական ու քաղաքական մեծ նվաճումներ էին արձանագրել Թուրքիայի արևելյան նահանգներում, հենց այդ երկու պատճառով

¹ “Утро России”, 7 января 1913 г.

² Նույն տեղում:

դրույթունը բոլորովին փոխվել էր: Ուրեմն՝ եթե Ռուսաստանը այժմ փորձեր Թուրքահայաստանը գրավել, ապա իր դեմ կունենար, բացի օսմանյան բանակից, նաև եոյակ նիդակակիցների բանակը մի կողմից, անգլիականը՝ մյուս կողմից, թերևս միայն Ֆրանսիան բավականանար տհաճություն ժեստով դեպի իր դաշնակիցը: Այսպիսով, քաղաքական պայմանների նոր դասավորության պատճառով Ռուսաստանն առանց մյուս պետությունների համաձայնության չէր կարող Թուրքիայից ոչ մի թիղհող գրավել: Ուստի ռազմապես հզոր բանակի կարիքը Թուրքիայի համար եթե ոչ վերանում էր, ապա ինքնըստինքյան մեծապես նվազում էր: **Չորրորդ.** Հայաստանի տարածքների նկատմամբ Ռուսաստանի նոր հավակնությունների հետևանքով փուլ կգային այն փխրուն համաձայնությունները, որոնք մեծ ջանքերի գնով կարծես ձեռք էին բերվում տերությունների միջև Հայաստանի հարցում: Պատահական չէ, որ ինչպես Կ. Պոլսում ռուսական դեսպան Միխայիլ Նիկոլաևիչ Գիրսը, նույնպես և արտգործնախարար Սերգեյ Սազոնովը հայ դեկավարներին խորհուրդ էին տալիս Բալկանյան պատերազմի այդ օրերին շեշտակի չդնել Հայկական հարցը և մանավանդ հեղափոխական քայլեր չկատարել, որովհետև միջազգային դիվանագիտական մթնոլորտը չափազանց ծանր է, և դժվար է լինելու Հայկական հարցի լուծման շուրջ ի մի բերել մեծ պետությունների համաձայնությունը: Բժ. Զավրյանի հետ հանդիպման ժամանակ դեսպան Գիրսը նրան թելադրել էր, որ հայ գործիչները պետք է Եվրոպայի աչքին ներկայանան իբրև զոհեր և ոչ թե որպես հեղափոխականներ, որոնք Թուրքիայի ձգնաժամից օգտվել են ուղում¹:

Ազատականների (լիբերալներ) տեսակետը.– Հայաստանի ռուսական գրավման հարցում ռուս ազատական հոսանքի տեսակետը մոտ էր կառավարականին: Զինված ուժերով Փոքր Ասիա մտնելու գաղափարը մեծ երկյուղ էր առաջ բերել ազա-

¹ **Հովհաննես աւ. քհ. Հաճեան**, Հայոց տուժանքի ճամբաներով, Ա հատոր, Թեհրան, 1965, էջ 330:

տական քաղաքական շրջաններում, նրանց մամուլի օրգաններում, մտավորականությունում:

Ռուս ազատական մամուլը թեև չէր դնում Հայաստանի գրավման հարցը, բայց անկեղծորեն ցանկանում էր, որ հայկական դժբախտ նահանգներում հաստատվի մարդավայել մի ուժով, որպեսզի ռուսական սահմանին կից այս երկիրը հնարավորություն ունենար զբաղվելու խաղաղ աշխատանքով, այլ ոչ թե այս կամ այն պետության համար Ռուսաստանին սպառնացող պլացդարմ դառնար:

Ռուսական կաղեխների առաջնորդ Պյոտր Միլյուկովը գրել է.

«Կովկասյան բոլոր ժողովուրդներից հայերը, չնայած այն բոլոր դաժան վիրավորանքներին, որ նրանց ազգային գիտակցությունը հասցրել էր ռուսական հին վարչությունը, մնացել են ամենահավատարիմը Ռուսաստանին: Նրանք ակտիվ մասնակցել են Թուրքիայի դեմ ռուսական բոլոր պատերազմներին. և դա հասկանալի է, քանզի Փոքրասիական թերակղզու արևելյան մասի բնակչության շուրջ կեսը եղել են հայերը և ընդհանրապես քրիստոնյաները: Հայերը ուրիշներից ավելի մոտ են եղել մեզ նաև քաղաքական տեսակետից...»¹:

Մի ուրիշ առիթով Միլյուկովն ասել էր. «Մենք յիշելու և ըմբռնելու ենք, որ հայերու պաշտպանությունը մեր պարտականություն է և իրավունքն է:

Անգլիական քաղաքականությունը հայերուն համար եղած է՝ փակել դժոխքին ելքը, բացի դրացի Ռուսաստանէն, ոչ Անգլիան եւ ոչ ուրիշ մը կրնայ Հայաստանի վրայ հսկողութիւն եւ քօնթրոլ գործ դնել»²: Ապա՝ «Եթե այս անգամն ալ առիթը բաց թողունք, ինչպէս ըրինք 1879.ին եւ 1895ին, մենք կը դատապարտենք բոլոր սարսափներէն եւ բռնութիւններէն ողջ մնացած Հայ ժողովուրդի մնացորդն ալ վերջնական բնաջնջումի, եւ կը

¹ **П. Н. Миллюков**, Воспоминания, том второй (1859-1917), Москва, “Современник” 1990, стр. 120.

² **«Աշխատանք»**, № 33 (129), 29 հունիսի 1913 թ.:

զրկուինք մեր իսկ սահմանին բնական պաշտպանութենէն»¹:
 Ռուս ազատականների համար Հայաստանի գրավումը և
 թուրքական ռազմաբռնապետական լծից Հայության ազատագ-
 րումը մնում էր որպես մի հեռավոր ցանկություն:

Ազգայնական, իմպերիալիստական շրջանների տեսակետը.–
 Քաղաքական-հասարակական այս ուղղության գործիչները,
 մամուլի ծայրահեղ աջ օրգանները գտնում էին, որ խիստ ան-
 հրաժեշտ է Հայաստանի անհապաղ գրավումը: Ավելին, նրանք
 պահանջում էին հասնել մինչև Տավրոս-Ալեքսանդրեթ, այսինքն՝
 մինչև Միջերկրական ծով:

Ինչ խոսք, թուրքահայության ազգային շահը ամենից առաջ
 համընկնում էր այս վերջին տեսակետին: «Մշակը» գրում էր, որ
 հայերը բախտավոր կլինեին, եթե Մեծ ու Փոքր Հայքերը, Աղձ-
 նիքը, Ատրպատականը և Կիլիկիան ընդգրկվեին մի սահմանի
 մեջ, տվյալ դեպքում՝ ռուսական սահմաններում²:

Այդ պահին Ռուսական տերություն և հայ ժողովրդի շահերը
 կրկին համընկել էին, ինչպես 1828-1829 թվականներին: Ստեղծ-
 վել էին արտակարգ նպաստավոր պայմաններ տառապյալ
 թուրքահայության ֆիզիկական փրկության համար:

Ռուս ծայրահեղ, իմպերիալիստական շրջաններում խմորվող
 Հայաստանն անհապաղ գրաված տեսնելու կողմնակիցների
 իդձը հիմքից բոլորովին գուրկ չէր: Արևելյան հարցը, որի անմի-
 ջական բաղկացուցիչ մի մասը կազմում էր հայկական հարցը, ոչ
 այլ ինչ էր, եթե ոչ դարերի ընթացքում օսմանյան բռնապետու-
 թյան անկման և ռուսական տիրապետության անկասելի ծա-
 վալման հարց:

Ոչ մի երկիր 16-17-րդ դարերում այնպիսի արագությունը չէր
 ավելացրել իր տարածքն ու բնակչությունը, ինչպես եղել էր
 ռուսական կայսրության պարագայում: Այդ ժամանակաշրջա-
 նում նրա ընդարձակման դինամիկան հետևյալ պատկերն էր
 ներկայացրել.

¹ «Աշխատանք», № 33 (129), 29 հունիսի 1913 թ.:

² Տե՛ս «Մշակ», № 135, 22 հունիսի 1913 թ.:

Թվականներ	Տարածությունը՝ քառ. մղոններով
1505	784.000
1533	996.000
1584	2.650.000
1598	3.328.000
1676	5.448.000
1682	5.618.000

Արդեն Պետրոս Մեծի օրոք Ռուսաստանը հսկայական երկիր
 էր: Բայց դրանից հետո էլ նա շարունակ աճել և ընդարձակվել
 էր: Դրա վկայությունը ստորև բերված աղյուսակն է.

Թվականներ	Եվրոպայում կատարած նվաճումները (քառ. կմ)	Ասիայում կատարած նվաճումները (քառ. կմ)
1725	1.738.000	4.092.000
1770	1.780.000	4.452.000
1800	2.014.000	4.452.000
1825	2.226.000	4.452.000
1855	2.261.250	5.194.000
1867	2.267.360	5.267.560

Երկրորդ աղյուսակում նշված վերջին՝ 1867 թվականից հե-
 տո էլ ռուսական կայսրության տարածքն ընդարձակվեց և
 արդեն 1913 թ. կազմեց 22,479,600 քառ. կիլոմետր:

Գրեթե նույն համամասնությամբ աճել է կայսրության
 բնակչության թիվը.

Թվականներ	Բնակչությունը
1722	14.000.000
1742	16.000.000
1762	19.000.000
1782	28.000.000
1796	36.000.000
1812	41.000.000
1815	45.000.000
1835	65.000.000
1858	74.000.000
1913	166.108.000

Որո՞նք էին ռուսական երկրի այս հարաչարժ աճի պատճառները, արդյո՞ք այժմ՝ 1912-1913 թվականներին, դադարած կարելի էր համարել այդ հզոր տերություն ընդարձակման ընթացքը, թե դա դեռ պիտի շարունակվեր, այդ հարցերը հուզում էին ողջ Եվրոպային, Պարսկաստանին, Չինաստանին, և հատկապես՝ թուրքերին և ռուսներին:

Անգլիացիները տազնապում էին Միջագետք մտնելու գերմանացիների մտադրությունից, իսկ վերջիններս գտնում էին, որ Ասիական թուրքիայում իրենց շահերն ավելի մեծ են, քան անգլիացիներինը, և այդ իսկ պատճառով սրանց ամեն կերպ խոչընդոտում էին մտնելու նույն Միջագետք: Իսկ որո՞նք են ռուսական շահերն այդ նույն տարածքներում, հարց էր տալիս «Новое Время»-ն և պատասխանում, որ գերմանական նկրտումներին Ռուսաստանը պետք է հակադրի իր կամքը: «Աշխարհագրական քարտեսին ուղղուած հապճեպ նայուածք մը պիտի բաւէ ճշգրիտ գաղափար մը տալու, թէ ի՞նչ նշանակութիւն ունի Փոքր Ասիան Ռուսիոյ համար,- գրում էր թերթը:- Մեզի համար անիկա Արեւմտեան տէրութիւններու Արեւելքը չէ, ոչ ալ մեր արտածութեան համար շուկայ մը, կամ Ասիայի եւ Եւրոպայի միջեւ հաղորդակցութեան ճամբայ մը ...: Անիկա մեր Հարան է, ճիշդ այն Հարաւը որուն համար Ռուսիա երկար ատեն եւ

յարատեւօրէն պայքարած է: Փոքր Ասիան, հարաւի կողմը մեր բնական սահմանագրութիւնն է, Թուրքիոյ հետ ունեցած մեր դարաւոր պայքարին վերջաւորութիւնը: Մենք արդէն մտած ենք Փոքր Ասիոյ թերակղզին: Երեսուն եւ հինգ տարի առաջ Ռուսական զօրքերը Ղարսը գրաւեցին, որ Ասիական թուրքիոյ հիւսիսային բերդը կը նկատուի, եւ Ռուսական սահմանները Եւրասիական կերպով մօտեցուցին: Սան Սթէֆանօի դաշնագրութեամբ այս հողամասերը Ռուսիոյ տրուեցան բայց Պերլինի Վեհաժողովին մէջ Անգլիան պնդեց որ մեր սահմանագիծը Ալաշկերտէն եւ Պայագիտէն հիւսիս քշուի, որովհետեւ չէր փափաքէր որ էրզուրումէն Դարէժ երկարող «Պարսական մեծ ուղին» Ռուսիոյ ձեռքը մնայ: Այն ատեն մենք համակերպեցանք ու տեղի տուինք»¹:

Թերթը Ռուսաստանի դիվանագիտութեան կոպիտ պատմական սխալ էր համարում, որ նա 1878 թ. Բեռլինում ենթարկվեց Անգլիայի ու Գերմանիայի ճնշմանը և ձեռքից բաց թողեց Ասիական թուրքիան՝ ամբողջ ուշադրությունը կենտրոնացնելով Բոսֆոր ու Դարդանեկ նեղուցների վրա: Կյանքը, սակայն, ցույց տվեց, որ այդ հաշվարկը ճիշտ չէր կատարված, քանզի դա դժվար լուծվելիք հարց էր: Միայն չատ ու ռուսական դիվանագիտությունը հասկացավ, որ Միջերկրական ծով դուրս գալու ամենաուղիղ և ամենաճիշտ ճանապարհն ընկած է Ասիական թուրքիայի վրայով: Բայց երբ Ռուսաստանի իշխանությունները այդ հասկացան, Գերմանիան արդեն հասցրել էր այնտեղ զբաղեցնել Անգլիայի տեղը՝ թափանցելով տարածաշրջանի բոլոր խորքերը: Ռուսական դիվանագիտությունը, կարևորություն չտալով դրան, մեծագույն սպառնալիք ստեղծեց Ռուսաստանի շահերին: Տեսնելով Պետերբուրգի անտարբերությունը Փոքր Ասիայի նկատմամբ՝ ոչ միայն Գերմանիան, այլև Անգլիան ու Ֆրանսիան ձեռնարկեցին թուրքիայի բաժանմանը՝ առանց Ռուսաստանի մասնակցություն²:

¹ «Новое Время»-ի հոդվածի թարգմանությունը տե՛ս «Պահակ» (Բոստոն), № 28, 21 օգոստոսի 1913 թ.:

² Տե՛ս «Պահակ», № 28, 21 օգոստոսի 1913 թ.:

Ռուս ծայրահեղ ազգայնականները գտնում էին, որ թեպետ Հայաստանի գրավումը այսօր շատ ավելի դժվարին է, քան էր 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերին, բայց կայսրություն չահեցող պահանջում են եթե ոչ այսօր, ապա մոտ ապագայում ձեռնարկել Ասիական Թուրքիայի վրայով Միջերկրականի ջրեր դուրս գալու վաղեմի նպատակի իրականացումը:

Ազգայնական-իմպերիալիստական շրջանները մշտապես մատնանշում էին նախորդ դարերում Ռուսաստանի հզորացման ընթացքը Ռոմանովների արքայական տան վեհապետությունը, որի 300-ամյակը մեծ շուքով նշվում էր 1913 թ. առաջին կեսին: Հորեյանը լայն արձագանք գտավ նաև Անդրկովկասի հայաբնակ քաղաքներում ու գյուղերում: Ամենայն հայոց կաթողիկոսի հատուկ կոնդակով գոհաբանական մաղթանքներ եղան կայսրության բոլոր հայկական եկեղեցիներում, կազմակերպվեցին հանդիսավոր ժողովներ ու հավաքներ¹, հայկական մամուլում լույս տեսան մեծ թվով հոդվածներ ու նյութեր:

Հորեյանական օրերին հայ քաղաքական, հասարակական, մշակութային, կրոնական գործիչները անդրադառնում էին հայ ժողովրդի պատմական ճակատագրում Ռոմանովների տան խաղացած առաջադիմական դերին, ռուսական պետության կազմում ռուսահայության տպավորիչ ձեռքբերումներին, նրա ապահով գոյություն փաստին: Մամուլում լույս տեսած հոդվածներն ու նյութերը ցույց էին տալիս, որ Ռուսաստանի կողմից Կովկասի ու Անդրկովկասի գրավումը մեծ կարևորություն է ունեցել ոչ միայն հայերի, այլև տարածաշրջանի բոլոր ժողովուրդների համար: Նաև արժարժվում էր այն միտքը, որ հայ ժողովրդի՝ Թուրքիայում բնակվող հատվածի ազատագրությունը այլ տարբերակ չունի, քան նրա հայրենի երկրի միացումը Ռուսաստանին²:

Բայց արդյո՞ք Ռուսաստանի միջոցներն ու հնարավորություններն այդ պահին բավարար էին դրան հասնելու համար:

¹ ՀԱԱ, ֆ. 92, ց. 1, գ. 502, թ. 2 և շրջ.:

² Նույն տեղում, գ. 385:

Կոնկրետ ինչ քայլեր էր անում Ռուսաստանը իր պատմական երազն իրականացնելու համար: Ի՞նչ նախապայմաններ էր նա ստեղծել Փոքր Ասիայում, որպեսզի վճռական ռոպեին կարողանար հաջողություններ իրականացնել իր ծրագիրը:

Ցավոք, համարյա ոչինչ:

Դիվանագիտության տրամաբանությունը թելադրում է, որ նախքան դիվորական ուժով որևէ տարածք գրավելը պետք է այնտեղ աստիճանաբար տարածել տնտեսական ու մշակութային ազդեցություն՝ դրանով իսկ նպաստավոր պայմաններ ստեղծել վերջնական նպատակին հասնելու համար:

Հենց այդպես էլ վարվում էին արևմտյան տերությունները: Անգլիացիները, ամերիկացիները, ֆրանսիացիները, գերմանացիները Թուրքահայաստանում և Կիլիկիայում ստեղծել էին հյուպատոսությունների լայն ցանց, բացել էին բազմաթիվ դպրոցներ ու որբանոցներ: Ռուսաստանին սահմանակից նահանգներում՝ Վանում, Պարբերգում, Էրզրումում, Տրապիզոնում, Եվրոպական լեզոններից իշխում էին ֆրանսերենն ու անգլերենը, Եդեսիայում, Սեբաստիայում, Կիլիկիայում՝ գերմաներենն ու ֆրանսերենը:

Թուրքահայաստանից արտաքին ողջ առևտուրը կատարվում էր Եվրոպական երկրների հետ: Շինարարական բոլոր նախաձեռնությունները գալիս էին այդ նույն երկրներից: Օրինակ՝ ճանապարհաշինության գործը ֆրանսիական մի ընկերության ձեռքում էր, երկաթուղիների կառուցման կոնցեսիան ռուսականից անցել էր ֆրանսիական «Ռեժի ժեներալ դը շրմեն-դըֆեր»-ին: Մխախտող մոնոպոլիան նույնպես ֆրանսիացիների ձեռքում էր:

Համեմատության համար նշենք, որ Արևելքի քրիստոնյաների պաշտպան Ռուսաստանն ամբողջ Թուրքահայաստանում ուներ միայն չորս հյուպատոսություն: Ռուսական դիվանագիտությունը նույնիսկ Անդրկովկասին համարյա սահմանակից հայաշատ Մչո շրջանը բոլորովին մատնել էր անուշադրության՝ թողնելով Թուրք-քրդական անլուր բռնությունների ենթակա: Նույն վիճակում էին Սեբաստիայի, Տիգրանակերտի նահանգները, Թուրքահայաստանի բազմաթիվ ուրիշ շրջաններ:

Ոչ միայն Թուրքահայաստանի խորքերում, այլև նույնիսկ սահմանակից ու անխուսափելիորեն ուսական քաղաքներ դառնալու հեռանկար ունեցող էրզրումում և Տրապիզոնում չկար անգամ ուսական մի նախակրթարան՝ գոնե ուսահայտակ հայերի երեխաների ուսուցումը կազմակերպելու համար: Ուստի օրինաչափ էր, որ ամբողջ Թուրքահայաստանում տեղացիների բերանից չէր լսվում ուսերեն խոսք:

Իսկ ինչպիսի՞ն էր ուսական առևտրի դրուժյունը Թուրքահայաստանում: Գոնե էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում ուսարդյունաբերողները և առևտրականները պետք է որ գերիշխող դիրք ունենային, ինչպես, ասենք, Պարսկաստանի Ատրպատականում, որտեղ առևտուրը աշխույժ վիճակում էր՝ չնորհիվ ճանապարհների և ընդհանրապես հաղորդակցության միջոցների նկատմամբ ուսական իշխանությունների կողմից ցուցաբերվող ուշադրության:

«Մշակը» ցավով նշում էր, որ նույնիսկ ուսական սահմանագլխի Բեոթեկ գավառակը* ողողված է ֆրանսիական, գերմանական, ավստրիական ապրանքներով, իսկ ուսական ապրանքների կարելի է դեպքից դեպք հանդիպել, չնայած դրանք չուկայում փնտրվում են, ավելի հարգի են, քան եվրոպականը: Դրա պատճառը թերթը համարում էր ապրանքների առաքման անկազմակերպ լինելը: Չիմանալով ուսերեն՝ թուրքահայ առևտրականները չէին կարողանում անմիջականորեն հաղորդակցվել ուսական ֆիրմաների հետ, իսկ ուս առևտրական գործակալներին Թուրքահայաստանում կարելի էր հաշվել մատերի վրա¹:

Այսպիսով՝ Ռուսաստանի կողմից Հայաստանի գրավումը հնարավոր էր ոչ թե հայերի մեծ մասի խնդրանքով կամ ուս ազգայնականների ցանկություններով, այլ իրերի բերումով, այսինքն՝ կայսրության ռազմատնտեսական հզորացմամբ և այդ հիմքի վրա ուսական կառավարության դրսևորած վճռականություններով:

* Գտնվում է Կարաուրգանի դիմաց:

¹ Տե՛ս «Մշակ», № 135, 22 Հունիսի 1913 թ.:

Իսկ դա կլիներ միայն այն դեպքում, եթե միջազգային հարաբերություններում առաջ գար արմատական ցնցում: Բալկանյան պատերազմն առաջ չբերեց այդ ցնցումը: 1912 թ. վերջերին և 1913 թ. առաջին ամիսներին այդ վտանգն անցած էր: Այդ պայմաններում ուսների կողմից Հայաստանի գրավումը դառնում էր անիրագործելի: Հետևապես՝ հարկ էր սպասե՞լ համաեվրոպական ընդհանուր նոր պատերազմի, թե՞ պետք էր ձեռք բերել հայկական հարցի նկատմամբ տերությունների ընդհանուր համաձայնությունը՝ Հայաստանում բարենորոգումներ իրագործելու համար: Տվյալ պահին իրականը և հնարավորը այս երկրորդ ուղին էր:

Ա. Չոպանյանը, Մելքոն Կյուրճյանին ուղարկած նամակում անդրադառնալով Բալկանյան պատերազմի հնարավոր հետևանքներին, համոզմունք էր հայտնում, որ իր կարծիքով «Ռուսիան բալկանեան խնդրի լուծումէն ետք պետք է ձեռնարկի Թրքահայաստանի խնդիրը ոչ միայն այնտեղ բարենորոգումներ սկսելու, այլև ինքնավարութիւն հաստատելու մտադրութեամբ»¹:

Կարծես ընդհանրացնելով Ռուսաստանի կողմից Հայաստանի գրավումը երազող հայերի՝ միմյանցից տարբեր տեսակետները՝ Հովհաննես Թումանյանը «Հայկական հարցն ու իր լուծումը» հոդվածում շեշտում էր, որ ներկայումս այդ հարցն ընկալվում է որպես մի ամբողջ ժողովրդի ֆիզիկական գոյության հարց, որի լուծմամբ անկեղծորեն չահագրգռված է մեծ տերություններից միայն մեկը՝ Ռուսաստանը²:

Այդպիսի խոր համոզմունք էր հայտնում նաև Արչակ Չոպանյանը՝ իր նամակներից ուրիշ մեկում³:

¹ ԳԱԹ, Մ. Կյուրճյանի ֆոնդ, թղթ. 306, բաժ II, թ. 2:

² Տե՛ս Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951, էջ 235:

³ ԳԱԹ, Արչակ Չոպանյանի ֆոնդ, թղթ. 483, թթ. 1-6:

**ՄԱՀՄՈՒԴ ՇԵՎՔԵԹ ՓԱՇԱՅԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ:
ՌԵԺԻՄԻ ՍԱՍՏԿԱՑՈՒՄԸ**

Թուրք հասարակության բոլոր չերտերում և հատկապես զինվորականության մեջ գնալով ուժեղանում էր դժգոհությունը իթթիհազական իշխանության դեմ:

1913 թ. մայիսի կեսերին Կ. Պոլսի Օկ – մեյդանի մի տան մեջ 30 քաղաքացիական և զինվորական անձեր գումարել էին գաղտնի խորհրդակցություն, ուր քննարկվել էր կառավարության տապալման հարցը: Տեղեկանալով այդ մասին՝ ոստիկանությունը կալանավորել էր խորհրդակցության մասնակիցներին 15 հոգու, որոնց թվում եղել էր ոստիկանության նախկին մի խոչոր պաշտոնյա:

Հունիսի 2-ին ռազմական նախարարությունից ավտոմոբիլով Բ. Դուռը մեկնող զինվորական համազգեստով երկու անձ հարձակվում են վարչապետ Մահմուդ Շեքեթ փաշայի վրա և սպանում նրան¹:

Շեքեթ փաշան, որ ազգությունը արաբ էր (ինչպես Նազըմ փաշան՝ չերքեզ), իթթիհազական լինելուց առաջ ազդեցիկ զինվորական էր, չիտակ մարդ և հայտնի էր իր անհանդուրժողականությամբ դեպի անիրավությունները:

Մահմուդ Շեքեթ փաշայի սպանությունն իր հետևից բերեց ծանր հետևանքներ, որը Կ. Պոլսից տարածվեց գավառներ:

Շեքեթ փաշայի սպանությունը իսկական տեոորի օրինակ էր: Անմիջապես երկրում հայտարարվեց ռազմական դրություն: Սկսվեցին կառավարության հակառակորդների մահապատիժներ, աչքի ընկած բոլոր իթթիլաֆականները ձերբակալվում էին փողոցում, աշխատավայրում թե տանը²:

Միաժամանակ, Իթթիհազն արտակարգ մեծ եռանդ դրսևորեց իր բոլոր հակառակորդներին արատավորելու համար: Վարչապետի սպանությունը նա փորձում էր կապել երկրում թե ար-

տասահմանում գտնվող իր նկատմամբ ո՛չ բարյացակամորեն տրամադրված անձանց հետ: Զանազան պատճառաբանություններով ամբաստանվեցին իշխան Սաբահեդդինը, Քեամիլ փաշան և նշանավոր ուրիշ գործիչներ:

Ինչպես և սպասվում էր, ձերբակալությունների ալիքը շուտով տարածվեց նաև գավառներում:

Այս կերպ Իթթիհազը հույս ուներ կարճ ժամանակում ընկճել իր բոլոր հակառակորդներին և մշտնջենավորել իր իշխանությունը:

Միաժամանակ, իշխանությունը կենտրոնացավ փոքրաթիվ անձնավորությունների ձեռքում: Դրանց թվում առաջին պլան էին մղվել հերոսացած էնվեր բեյը, ներքին գործոց նախարար Թալեաթ բեյը և ծովային նախարար Ջեմալ փաշան: Կազմվեց նոր կառավարություն՝ հիմնականում բաղկացած պնդագլուխ ու անխոհեմ երիտթուրք տարրերից: Կառավարության գլուխ կանգնեց եվրոպական կրթությամբ, բայց քաղաքական որևէ կշիռ չունեցող եգիպտական արքայազն Սաիդ Հալիմ փաշան, որը մինչ այդ զբաղեցնում էր արտգործնախարարի պաշտոնը¹:

Նոր կառավարությունից դուրս թողնվեց ներքին գործերի նախարար Հաջի Ադիլ բեյը, և նրան փոխարինեց 1913 թ. հունվարի 10-ին Իթթիհազի կողմից իրականացված պետական հեղաշրջման ընթացքում ամենավճուղիական դեր կատարած Թալեաթ բեյը: Առաջին անգամ չէր, որ նա ստանձնում էր ներքին գործերի նախարարի պաշտոնը: Ինչպես ցույց ենք տվել վերը, նա այս պաշտոնը զբաղեցրել էր նաև Հուսեյն Հիլմի փաշայի կառավարության մեջ: Նա էր, որ Ադանայի զարհուրելի եղեռնից հետո կարողացավ մտերմական հարաբերություններ մշակել Կ. Պոլսի դաշնակցական ղեկավարների հետ և չահել նրանց վստահությունը: Եվ դա այն աստիճան, որ դաշնակցության շարքերում նրան անվանում էին «մեր Թալեաթը»: Դաշնակցությունը

¹ Տե՛ս *Ա. Կ. Մանդելշտամ, Младотурецкая держава, с. 32.*
² Տե՛ս նույն տեղում:

¹ Տե՛ս *Անտրէ Մանտեյլտամ, Օսմանեան կայսրութեան ճակատագիրը: Առաջին մաս, երիտասարդ թուրքերը պատերազմէն առաջ, Թարգմ. Միքայել Շամտանճեան, Կ. Պոլիս, 1919, էջ 87:*

ցույց տված այդ վերաբերմունքով Թալեաթը կարողանում էր փոշի փչել Եվրոպայի աչքին: Կ. Պոլսի լրջախոհ հայ գործիչները Թալեաթ բեյի վերստին կառավարության մեջ մտնելը դիտում էին որպես նոր վտանգ հայության համար, քանզի հնարավոր էր, որ նա նոր փորձեր աներ համաձայնություն գոյացնելու Դաշնակցության հետ:

Պետական խորհրդի նախագահ ընտրվեց պառլամենտի երբեմնի նախագահ և երբեմնի ներքին գործերի նախարար Սալիլ բեյը, որը թե՛ հրապարակային երևույթով և թե՛ ներքին համոզմունքներով մոլեռանդ ազգայնական թուրքի կատարյալ կերպար էր: Կառավարությունից հանվեց էրզրումի նախկին կուսակալ, Շեքեթ փաշայի դահլիճում առևտրի ու երկրագործության նախարար աշխատած Ջեմալ բեյը: Այս պաշտոնաթողությունը կարող էր խիստ բացասական ազդեցություն ունենալ հայոց համար, քանզի նա, Հայաստանի վիճակին իրազեկ լինելով, երբեմն ձայն էր բարձրացնում, թե որքան շուտ բարենորոգումներ կատարվեն այնտեղ, այնքան լավ: Սոսում էին, թե նրան նոր կառավարությունից դուրս են թողել հենց այդ պատճառով:

Ռազմական նախարար նշանակվեց Իզզեթ փաշան, որը Նազրմ փաշայի սպանությունից հետո բանակի հրամանատարն էր և զինվորականության մեջ ժողովրդականություն էր վայելում, ծովային նախարար՝ Ջեմալ փաշան, ֆինանսների նախարար՝ Ջավիդը: Իթիհազի կոմիտեի գլխավոր քարտուղարներ նշանակվեցին Ֆեհմի բեյը և Մահմուդ Շուքրի բեյը¹:

Կառավարությունը կազմված էր, բայց երկրի ղեկը փաստորեն ամբողջովին գտնվում էր Թալեաթ-Ջեմալ-էնվեր եռյակի ձեռքում:

Կարծիք կար, որ եթե Մահմուդ Շեքեթ փաշան կարողանար շարունակել իր պաշտոնը և զինվորական ուժ համախմբեր Հայաստանում, ինչպես նա բազմիցս հավաստիացրել էր Արշարունի պատրիարքին, ապա հնարավոր էր, որ քրդերը ինչ-որ

¹ Տե՛ս *А. Н. Мандельштам, Младотурецкая держава*, с. 32.

կերպ չափավորեին իրենց ասպատակությունները:

Երկրի քաղաքական շփոթ կացությունը, գործադրած խստությունները, ժողովրդի ահաբեկ և լարված վիճակը խորապես ազդում էին հայոց վրա, որոնք տազնապով տվայտում էին՝ անստույգ ապագայի պատճառով:

1913 թ. հունիսի վերջին Բ. Դուռը Կ. Պոլսի հայոց պատրիարքարանից պահանջեց իրենց պաշտոններից հեռացնել Սուլի առաջնորդ Ներսես եպս. Սարախանյանին և Սղերդի առաջնորդ Գևորգ վարդապետ Նալբանդյանին՝ պատճառաբանելով, որ սրանցից առաջինը գիշերային խորհրդակցություններ է ունեցել տեղի ուսական հյուպատոսի հետ, իսկ երկրորդը «գրգռիչ» դեր է կատարում և «չափազանցված» լուրեր հաղորդում: Թուրք կառավարությունը բողոքում էր նույնպես Բիթլիսի առաջնորդ Սուրեն վարդապետ Գալեմյանի՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին հղած մի հեռագրում կառավարության հասցեին «անգութ» բառը գործածած լինելու համար:

Բ. Դուռն ուղարկած իր պատասխանի մեջ պատրիարքարանը հերքել էր վերոհիշյալ առաջնորդներին վերագրված ամբաստանությունները և պնդել, թե ինքը կատարյալ վստահություն ունի իր առաջնորդների նկատմամբ:

Պատրիարքարանի պատասխանին հետևել էր Բ. Դուռն հերթական սադրանքը: Նրա պատվերով լուրեր տարածվեցին, թե Շեքեթ փաշայի սպանության մեջ մեղավոր է նաև հայկական ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշան:

Թուրք թերթերի հունիսյան համարներում զրպարտչական լուրեր հայտնվեցին, թե Պողոս Նուբարը Փարիզում մտերմական կապեր է հաստատել թուրք քաղաքական տարագիրների, հատկապես Շեքեթ փաշայի ոխերիմ հակառակորդ Շերիֆ փաշայի հետ: Շրջանառվող այդ ստահոգ լուրերին հավատ ընծայեցին եվրոպական մի քանի դիվանագետներ, որոնք նույնիսկ հարկ համարեցին Ամենայն հայոց կաթողիկոսի ուշադրությունը հրավիրել այդ «փաստի» վրա՝ շեշտելով, որ Նուբար փաշայի նման գործելակերպը միջամտություն է Թուրքիայի ներքին գործերին և կուսակցական վեճերին:

Իմանալով այդ մասին՝ Պողոս Նուբար փառալուծական հանդես եկավ Հայտարարությունում, ուր նշվում էր, որ տարածված լուրը զրպարտություն է և արդյունք՝ նոր խարդավանքների և սաղ-րանքների:

ԿՐԿԻՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ (ԿՈՆՏՐՈՒ) ԽՆԴԻՐԸ

Գլխավոր տարբերությունը, որ կար և մնում էր Հայ, օտար և օսմանյան բարեփոխումների ծրագրերում, վերաբերում էր եվրոպական վերահսկման (կոնտրոլ) խնդրին:

Հայաստանում կիրառվելիք միջոցառումների վրա կոնտրոլ հաստատելու անհրաժեշտության հարցին նախկինում անդրադարձել էին եվրոպական պետական ու քաղաքական բազմաթիվ գործիչներ: Այսպես, լորդ Սոլսբերին ժամանակին պարտադիր էր համարում եվրոպական խիստ հսկողությունը ամեն խաբեության ընդունակ Կ. Պոլսի վրա, որը երբեք ոչ մի հետաքրքրություն չի ունեցել՝ բարվոքելու հայերի վիճակը: Կլեմանսոն ասում էր, որ Թուրքական բոլոր կառավարողները հայերի նկատմամբ միշտ առաջնորդվել են «խոստացիր, բայց մի կատարիր» սկզբունքով, ուստի նրանց վրա ճնշում գործադրելը միակ ճիշտ գործելակերպն է: Իսկ Վիկտոր Բերարն ընդգծել էր. «Օսմանյան բարենորոգում, եվրոպական հակակշիռ, ազդու բարենորոգումներ, իրական հակակշիռ – առանց դրանց Հայ ազգի համար ապահովություն չի կարող լինել»¹:

Ազգային պատվիրակության ծրագրի համաձայն՝ կոնտրոլը համարվում էր բարենորոգումների իրականացման անհրաժեշտ ու գլխավոր պայման: «Չկա հայկական բարենորոգում առանց միջազգային կոնտրոլի», – չեչտում էր Պողոս Նուբարը: Հենց այս սկզբունքի վրա էր հիմնված նրա դիվանագիտական ողջ աշխատանքը:

Նուբարը գտնում էր, որ հայկական բարենորոգումների

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 33, թ. 14-ի շՐՋ.:

որևէ ծրագիր չի կարող հաջողություն ունենալ, եթե նրա կատարումը դրվի միայն Թուրքական կառավարության վրա՝ նրա նկատմամբ չհաստատելով տերությունների վերահսկողությունը: Նա հանդիպումների ժամանակ իր զրուցակիցներին մշտապես հիշեցնում էր, որ նախկիններում մեծ պետությունների և Թուրքիայի միջև կնքված բոլոր պայմանագրերում, որոնցում հողվածներ կային Հայաստանի և հայերի մասին, նախատեսվում էին նաև այդ հողվածների կատարման ուղղությամբ Բ. Դոան պարտավորությունները:

Երբ Փարիզի Թուրք դեսպան Ռիֆաթ փառալուծական հանդիպումներից մեկի ժամանակ Պողոս փառալուծական չեչտել էր այդ պարտադիր սկզբունքը, Թուրք պաշտոնյան Նուբարին հարցրել էր. «Կարելի չէ՞ արդյոք, որ բարենորոգումների հարցը մենք գործադրենք ինքներս՝ միասին ու ընտանեբար, առանց գործին խառնելու ուրիշ պետությունների: Փառալուծական պատասխանել էր, որ ինքը համաձայնվել է զբաղվել իր ազգակիցների խնդիրներով միայն այն պայմանով, եթե Հայկական հարցը խարսխվի հաստատուն կովանի վրա, ինչպիսինը տվյալ դեպքում եվրոպական կոնտրոլն է: Վկայակոչելով Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը, Պողոս Նուբարը դեսպանին հիշեցրել էր, դաշնագիրը ստորագրած պետությունները նաև պարտավորություն են ստանձնել, որպեսզի հանձնառու կողմը՝ Թուրքիան, կատարի սահմանված իր պարտավորությունները: Հետևապես դաշնագիրը ստորագրած կողմերից մեկը՝ Թուրքիան, այսօր չի կարող մերժել պետությունների հսկողության իրավունքը»¹:

Ամեն անգամ թե՛ սուլթանը և թե՛ կառավարությունը խոստումներ էին տալիս կատարել Հայաստանում նախատեսված բարենորոգումների ծրագրերը, բայց միշտ էլ խաբում էին և դրանք չէին գործադրում. յուրաքանչյուր նոր պայմանագրից հետո հայերի վիճակն ավելի էր վատթարանում, իսկ եվրոպացիներն ի վիճակի չէին լինում Թուրքական խոստումների կատարման նկատմամբ սահմանել որևէ վերահսկողություն:

¹ «Հորիզոն», № 23, 30 հունվարի 1913 թ.:

Ուրեմն, Թուրքիայի ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ եվրոպական վերահսկողության հաստատումը ձեռք էր բերում սկզբունքային նշանակություն, դառնում բարենորոգումների իրականացման հիմնական երաշխիք¹:

Եվրոպական կոնտրոլի երկուզը վաղուց էր իշխում Թուրքական կառավարողների վրա: Սան-Ստեֆանոյի դաշնագրով Ռուսաստանը, իսկ Բեռլինի դաշնագրով եվրոպական վեց մեծ պետությունները իրավունք էին ստացել միջամտելու Թուրքիայի ներքին խնդիրներին և հսկելու տեղի ունենալիք բարեփոխումները: Պարզ էր, որ հիմա էլ եվրոպան չպետք է հրաժարվեր ձեռք բերած իր այդ կարևոր իրավունքից: Ուստի ոչ միայն եվրոպային պետք էր խոստումներ տալ, այլև նրա առջև դնել կատարված իրողությունները:

Թուրք կառավարիչները մշտապես չեչտում էին, որ իրենք երբեք չեն ընդունի եվրոպական միջամտությունը Թուրքիայի ներքին գործերին, այդ թվում՝ Հայաստանի բարենորոգումների ընթացքին: Թուրքերը համարում էին, որ օտար պետությունների որևէ միջամտություն իրենց կայսրության ներքին գործերին, այդ թվում՝ օտար կոնտրոլը, անչափ վիրավորական է իրենց ազգային արժանապատվությանը:

Բայց հայերը ստիպված էին վերահսկում պահանջելու: «Աւետաբեր» թերթի քաղաքական մեկնաբան Հ. Մամիկոնյանը գրում էր. «Եթե հայերը միջնադարեան ճորտերու կեանք չունենային եւ քիչ շատ մարդկայնօրէն տանելի վիճակ մը ունենային եւ սահմանադրական հիմնական սկզբունքները գործադրուէին, անոնք Եւրոպական քոնթրոլի երբեք պէտք չէին ունենար»²:

Եվ եթե «հայը, թուրքը, արաբը և մյուսները կատարելապէս գոհ ըլլան իրենց կառավարութենէն, ո՞վ իրաւունք կ'ունենայ անոնց անունով մեր երկրի ներքին գործերուն միջամտելու: Ամէն քոնդրոլ եւ միջամտութիւն այն ատեն ինքնիրեն կը վերնայ

մեր Կայսրութենէն, որուն զօրացումը կախում ունի միայն զինք բաղադրող տարրերու երջանկութենէն եւ տեւական յառաջդիմութենէն»¹: Միայն այդ ժամանակ «մենք ալ, կառավարութիւնն ալ կազատուինք այս քոնթրոլի մղձաւանջէն»²:

Անդրադառնալով օսմանյան կառավարողների այն պնդմանը, թե եվրոպական վերահսկումը տրորում է Թուրքերի ազգային արժանապատվությունը, «Աւետաբերի» մի ուրիշ համարում նույն Մամիկոնյանը չեչտում էր, որ երկրի պաշտոնական չընդունակներում «արժանապատվության զգացում» հասկացությունը շատ սխալ է ըմբռնված, և հենց այդ պատճառով երկիրը մեծ վնասներ է կրում: Օրինակ՝ Կրետեի խնդրում արժանապատվության սխալ ըմբռնման հետևանքով Բ. Դուրը չկարողացավ ժամանակին համաձայնության գալ Հունաստանի հետ և դրանով իսկ չեզոքացնել նրա մասնակցությունը Բալկանյան դաշինքին: Արժանապատվության սխալ ըմբռնման պատճառով Թուրքիան չկատարեց խոստացած բարեփոխումները Մակեդոնիայում, Ալբանիայում, Եմենում և կրեց դրա ծանր հետևանքները³:

Ամեն անգամ, երբ ոչ Թուրք տարրերը դիմում էին եվրոպայի օգնության, Թուրքերը դա որակում էին որպես «ղավաճանություն», «գրուժանություն», «ապերախտություն» և նման բաներով: Նրանք ասում էին, թե հայերը բողոքներով եվրոպային են դիմում, որովհետև Օսմանյան կայսրությունը չեն համարում իրենց հայրենիքը: Ի պատասխան այդ մեղադրանքի՝ Վանի «Աշխատանքը» գրում էր.

«Հոն ուր կը ջարդեն ազգ մը կեավուր կանւանեն զայն, տարրական արդարութիւնը կը գլանան անոր – հոն հարազատ հայրենիք մը չի կրնար գոյութիւն ունենալ անոր համար: Հետեւաբար եւ ո՛չ մէկ նւիրական պարտականութիւն մը այդ կարծեցեալ հայրենիքին հանդէպ, որմէ չեղումը քաղաքացիական ոճիր մը նկատուէր: Խորթ եւ չար մայր մը չի կրնար եւ իրաւունք

¹ Տե՛ս «Բուլթանիա», № 1097, 27 դեկտեմբերի 1912 (9 հունվարի 1913 թ.):

² «Աւետաբեր», № 23, 7 հունիսի 1913 թ.:

¹ «Աւետաբեր», № 28, 12 հունիսի 1913 թ.:

² Նույն տեղում, № 23, 7 հունիսի 1913 թ.:

³ Նույն տեղում, № 28, 12 հունիսի 1913 թ.:

չունի հարազատ սիրող մոր մը գուրգուրանքը եւ անձնւիրութիւնը պահանջելու իր խորթ եւ անիրաււած զաւակէն»¹:

Ռուս բարձր պաշտոնյաներից մեկն ասել էր. «Միակ բանը որ կմնայ [Հայաստանում] բարենորոգումներ մտցնելն է, հարկաւ, եւրոպական քօնթրօլի տակ: ... Միւս բոլոր բաները ես առանց ծածկելու կը նկատեմ քաղաքական զառանցաբանութիւն ու ցնորք, որ ոեւէ քննադատութեան չի դիմանար եւ տրամազծօրէն հակառակ է ուժերու այն յարաբերութեան, որ գոյութիւն ունի վեց վիլայէթներու մէջ»²:

Բայց միջազգային վերահսկում ասելով Հայ գործիչներն ինչ էին հասկանում՝ եվրոպական միջազգային վերահսկում, որը պետք է համատեղ իրականացնեին վեց մեծ պետութիւնները, թե՞ վերահսկում, որը կիրականացնէր այդ պետութիւններից որեւէ մեկը: Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը Հայտարարել էր, թե կտրականապէս դեմ է պետութիւնների համատեղ վերահսկմանը հայկական նահանգներում նախատեսվելիք բարենորոգումների ընթացքին, քանի որ դա անխուսափելիորեն առաջ կրբերի այդ պետութիւնների անտարբեր ու անպատասխանատու վերաբերմունքը վերահսկման պարտականութիւնների նկատմամբ՝ նրանց չահերը և նպատակները իրար հակասելու պատճառով: Որպէս դրա վկայութիւն, պատրիարքարանում մատնացույց էին անում Մակեդոնիայի բարենորոգումների վրա հսկում սահմանելու մասին եվրոպական մեծերի պարտավորութիւնների կատարման տապալումը: Հայերը մտածում էին, որ եվրոպական վերահսկման հաջողութիւնն ապահովված կլինի, եթե այն հանձնվի վեց պետութիւններից միայն մեկին, գերադասելի է Ռուսիային: Դա նաև հայկական պաշտոնական շրջանների ընդհանրական տեսակետն էր³:

Բայց նկատենք, որ Հայ առանձին գործիչների մեջ կասկածներ կային, թե օտարների հարկադրանքով կատարվող ձեռ-

նարկները արդյո՞ք կարող են արդյունավետ լինել: «Ավետաբերը» գրում էր. «Կառավարութիւնը կարգ մը պայմաններով կ'ընդունի Ռուս եւ Գերման դեսպանատանց առաջարկները: Բայց մենք կը փափաքինք որ Հայաբնակ նահանգները բարեկարգուին ոչ թէ օտար դեսպաններու ճնշման ներքեւ եւ մեր երկրին բնիկ եղող այս կամ այն տարրին կամքին հակառակ: Մենք մեծ օգուտներ չենք ակնկալեր այնպիսի բարեկարգութենէ մը որ խրտչեցնէ մեր Հայրենակիցներուն ստուար մէկ մասը եւ խտտելի ըլլայ կառավարութեան: Մենք կը փափաքինք որ թէ՛ կառավարութիւնը եւ թէ՛ ժողովուրդը, թէ՛ թուրքը եւ թէ՛ Հայը, թէ՛ իսլամը եւ թէ՛ քրիստոնեան անկեղծ ուրախութեամբ եւ միասիրտ ողջունեն բարեկարգութիւնը իբր փրկութեան միակ միջոց եւ բարօրութեան գերագոյն աղբիւր: Այն ատեն, եւ միայն այն ատեն, մենք, այս երկրին զաւակներս, պիտի դառնանք իրական տէրը Հայրենի Հողին, պիտի մշակենք զայն եւ ծաղկեցնենք եւ մեր գլուխները անոր նուիրական ծոցին մէջ չհանգչեցուցած՝ օր արեւ պիտի տեսնենք»⁴:

ՄԻԱԲԱՆՎԵԼՈՒ ԿՈՉ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայկական խնդիրը ձեռքն առնելուց հետո ոռուսական կառավարութիւնն այն առաջ է մղում: Նա միասնական նախագծի նկատմամբ իր դրական վերաբերմունքի մասին արտգործնախարարութեան միջոցով իրազեկում է դաշնակից Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարութիւններին և նրանց ուղարկելով հայկական նախագիծը՝ խնդրում է Հայտնել իրենց տեսակետը: Շուտով Պետերբուրգում ստացվում է նշված երկու կառավարութիւնների համաձայնութիւնը: Ավելին, նրանք Հայտնում են, որ հետագա նախաձեռնութիւնների իրավունքը թողնում են Ռուսաստանին:

Ռուսաստանի արտգործնախարարութիւնը որոշ ժամանակ

¹ «Աշխատանք», № 34 (130), 6 Հուլիսի 1913 թ.:

² «Ժամանակ», № 1425, 12 (25) ապրիլի 1913 թ.:

³ «Էջմիածին», փետրվար-մարտ-ապրիլ, 1965, էջ 162:

⁴ «Ավետաբեր», № 2, 10 Հունվարի 1914 թ.:

խուսափում էր Հայկական Հարցի մասին բանակցել Գերմանիայի, ապա նրա դաշնակիցներ Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի կառավարությունների հետ՝ համոզված լինելով, որ նրանք պիտի ընդդիմանան Հայկական Հարցում Պետերբուրգի մտադրություններին: Ռուսական կողմի զգուշավորությունը և մտավախությունը հիմք ունեին, քանզի 1895 թ. Մայիսյան ծրագիրն ընդունելիս, որով տերությունները Թուրքիային պարտադրել էին Հայաստանում անցկացնել բարենորոգումներ, այդ երեք երկրները ձեռնպահ էին մնացել: Այնուամենայնիվ, Ս. Սազոնովը փորձեց զգուշորեն շոշափել Բեռլինի տրամադրությունը և վկայակոչելով մայիսյան ծրագիրը՝ գերմանական կառավարությանը նույնպես համոզել միասնաբար բարձրացնելու Հայաստանի բարենորոգումների հարցը: Պետերբուրգը գերմանական կողմին պարզաբանում էր, որ Թուրքիայի հայաբնակ նահանգների վիճակը չի կարող անդրադարձ չունենալ Կովկասի հայության վրա, և որ հետագա բարդությունները կանխելու համար իր կառավարությունը մտադիր է մոտակա ժամանակում պաշտոնապես դիմել բոլոր մեծ պետություններին՝ միատեղ քննելու ստեղծված կացությունը: Բեռլինը թեև չմերժեց, բայց գտնում էր, որ նման ձեռնարկը ավելորդ է ու անտեղի, քանզի այդ նույն բանը տերությունների խնդրանքով կարող է անել ինքը՝ Բ. Դուռը: Այնուամենայնիվ, գերմանական կառավարությունն իր արտգործնախարարությունը հրահանգում է առաջարկ ներկայացնել Պետերբուրգի կողմից բարձրացրած Հայկական Հարցի քննությունը Գերմանիայի մասնակցություն նպատակահարմարության մասին:

Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը 1913 թ. մայիսի 22-ին Ամենայն հայոց կաթողիկոսին գրում է, որ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարը Կովկասի փոխարքային հայտնել է, թե Պետերբուրգը տեղյակ է Պոլսի հայոց պատրիարքի կողմից դեսպան Գիրսին ներկայացրած միասնական ծրագրին, որի նպատակը, ըստ էության, Հայաստանը ուսաց հովանավորության տակ դնելն է: Այդ ամենը նկատի ունեցած նախարարը Պոլսո դեսպանին գրել ու հրահանգել էր նշված ծրագիրը ներկայացնել Կ. Պոլսի ֆրանսիական ու անգլիական

դեսպաններին, որպեսզի նրանք տաճիկ կառավարության առջև միասնաբար պաշտպանեն փաստաթուղթը: Ենթադրվում էր, որ վերջինս ամեն դժվարություն կհարուցի հատկապես ծրագրի այն հոդվածների դեմ, որով հայերը պահանջում են եվրոպական կոնտրոլ (վերահսկողություն) և ընդհանուր կոմիսարի նշանակում եվրոպայից:

Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին Ս. Սազոնովի գրած նամակի վերջում ասված էր, թե իրենց հասած տեղեկություններով Պոլոս Նուբար փաշան չի ցանկանում համերաշխ գործել Պոլսո պատրիարքի հետ, քանի որ հակառակ դեպքում այդ բանն առաջ կբերի հակազդեցություն թուրքերի և եվրոպացիների կողմից: Ուստի Սազոնովը, ասված էր Մեսրոպ եպիսկոպոսի նամակում, փոխարքային առաջարկել է՝ խնդրել Վեհափառ Հայրապետին, որպեսզի նա համոզի Պոլոս Նուբարին՝ համակերպվել պատրիարքի գործելակերպին¹:

Այլ խոսքով՝ ռուսական կառավարությունը հայ գործիչներին կոչ էր անում Հայկական Հարցի համար այդ ճակատագրական պահին միաբանվել և հակասությունների տեղիք չտալ: Բանն այն է, որ Հայաստանի բարենորոգումների հարցի շուրջ Հայկական պատվիրակության և Կ. Պոլսի պատրիարքարանի միջև եղած ոչ էական հակասությունները խորանալու միտում ունեին: Մյուս կողմից՝ հենց պատրիարքարանում և Հայոց ազգային ժողովում չէին դադարում անսկզբունք վեճերը, որոնց կենտրոնում պատրիարքի անձն էր: 1913 թ. մայիսի 6-ին Գևորգ Սուրենյանց կաթողիկոսին գրած նամակով Հովհաննես Արշարունի պատրիարքը հայտնել էր, որ ինքը հրաժարական է տվել պաշտոնից, միաժամանակ անդրադարձել էր դրա շարժառիթներին՝ շեշտադրելով Հայոց ազգային ժողովում իր դեմ նյութված դավերը²: Եվ ահա, ռուսական կողմի հորդորն իր դրական ազդեցությունն էր գործել մանավանդ Հայկական պատվիրակության անդամների վրա: Դա երևում էր թեկուզ Յազուպ

¹ Մատենադարան, կաթող. դիվան, թղթապ. 238, վավ. 168, թթ. 1:

² Նույն տեղում, վավ. 109, թթ. 2, 3, 4:

Արթին փաշայի մի նամակից, ուր կային այսպիսի տողեր. «Յուսանք մանաւանդ որ բոլոր հոսանքները՝ արմատական, յեղափոխական կամ չափաւոր, քիչ մը համբերութիւն ունենան եւ միանան, ժամանակ թողով պետութեանց որ համաձայնութեան մը յանգին»¹:

Բայց մեծ տերութիւնների կառավարութիւնների համար հեշտ էր համաձայնութեան գալը: Միջազգային դիվանագիտութեան մեջ ամեն օր նորանոր ուշադրամ իրողութիւններ էին տեղի ունենում, որոնց մի մասը հրապարակվում էր, մյուս մասը՝ սփինքսային խորհրդավորութեամբ սքողվում ու ծածկվում:

ՀԱՄԵՐԱՇՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ ՀԱՅՈՑ ՄԵՋ

Անհամերաշխութիւն՝ ահա հայութեանը բնորոշ ախտանիշներից մեկը: Դա մի անբուժելի թվացող հիվանդութիւն էր, որը նախապատմական դարերից ձգվել էր մինչև 20-րդ դար և մնում էր չբուժված, ընդհակառակը՝ ավելի բորբոքված, ավելի շեշտադրված: Համբավավոր մտավորական Սուրեն Պարթևյանը գրում էր. «Հոն՝ ուր կը բացակայի մտքի հաւասարակշռութիւնը, սառն դատողութիւնը, կը տիրեն զգացումներու յեղեղուկ քամիներ: Զգացումը ըմբոստ է որ եւ է ուղղութեան, սկզբունքի հանդէպ եւ ընդունակ է արտագրելու խանդավառ տիրացուներ կամ կատաղի հայհոյողներ, եւ փոխնիփոխ այդ երկու ծայրերու մէջ տարուբերած են տաճկահայ մտաւորականներու մեծ մասը հասարակական այս կամ այն երեւոյթին հանդէպ իրենց վերաբերումին մէջ»²: Ամենաբազմամարդ կենտրոններից մինչև հետին գյուղը անհամերաշխութեան տխուր դրվագներ և ցավալի տեսարաններ էին ներկայացնում: Սխալ հասկացված ազգասիրութեամբ ամեն ինչ փչանում էր: Ազգային գործերի անկերպարան պայմաններում նոր սերունդը հեշտութեամբ ընկալում էր

¹ Վ. Մալէգեան, Ճամբուս վրայ (Յուշաբաղ), Բարիդ, 1950, էջ 317:

² «Վան Տոսպ», 6 ապրիլի 1913 թ.:

մեծերի ախտանիշները: Բայց չէ՞ որ նոր ուղիներ փնտրելու դեպքում իր բնածին ընդունակութիւններով և զնահատելի ձիրքերով նա կարող էր մեծապես նպաստել ներազգային համերաշխութեանը և դրանով իսկ դժվարացնել անմիաբան հայ զանգվածների դեմ շրջապատող անհանգիստ ցեղերի չղաղարող ոտնձգութիւնները:

Ուրախալի էր, որ Հայկական հարցի վերաբացման սկզբից իսկ հայութեան ներհասարակական կյանքը նկատելիորեն սկսել էր փոխվել: Նրա բոլոր խավերում առաջ էր եկել ընդհանուր մղում դեպի համերաշխութիւն, ազգային դատի շուրջ եղբայրական միութիւն: Դա ամենից առաջ արտահայտութիւն գտավ պառլամենտական ընտրութիւնների ժամանակ:

Իթիթհադի կոմիտեի ընդունած որոշման համաձայն՝ թուրքական պառլամենտի պատգամավորական ժողովի հերթական ընտրութիւնները տեղի էին ունենում ոչ թե մեկ որոշակի օրում, այլ 1913-1914 թվականների ընթացքում՝ գրեթե մեկ ամբողջ տարի:

Պատգամավորական ընտրութիւնները բոլոր երկրներում սովորաբար թրծում են ժողովրդի զանազան խավերին, նրանց տալիս քաղաքական որոշ դաստիարակութիւն: Ընտրական պայքարում է, որ քաղաքական զանազան խմբակցութիւնները, հոսանքներն ու աշխարհայացքները բախվում են իրար, որից մեծապես օգտվում է ժողովուրդը: Այս բոլորը, սակայն, օտար էր թուրքական հասարակութեանը:

Ս.-Դ. հնչակցան կուսակցութեան Պոլսո ռուսանողական միութեան օրգան «Կայծ» հանդեսը գրում էր, որ Թուրքիայում պատգամավորական ժողովի ընտրութիւնները երևութական են, քանի որ ժողովրդի մեծ մասը չի մասնակցում դրան. մասնակցում են հիմնականում Իթիթհադը և նրա հավատարիմ զանգվածը: «Կայծի» առաջնորդողը գտնում էր, որ, չնայած դրան, բոլոր հայերը, առանց կուսակցական խտրութեան, միակամ պիտի մասնակցեին ընտրական պայքարին: Թեև այդ պայքարում նրանք եթե նույնիսկ չկարողանային շատ պատգամավորներ ուղարկել պառլամենտ, բայց գոնե ժողովրդին ցույց կտային Իթիթհադի ներքին բովանդակ փտածութիւնը, նրա հետադի-

մական քայլերի և սխալների կործանիչ լինելը¹:

Գովելի պիտի լիներ, եթե Հայ ազգն ամբողջությամբ ու բարձր կազմակերպվածությամբ ծառանար Իթիհադի դեմ՝ իբրև նրա ազգայնամուլական քաղաքականությունից ամենատուժած մի ժողովուրդ: Իթիհադն է Հայության ռևերսիվ թշնամին, հետևապես նրա շարքերում գտնվող Հայ գործիչները նույնպես վտանգավոր են իրենց ժողովրդի համար, որովհետև Իթիհադի հյու ծառաներն են, իրավունք չունեն դուրս գալու նրա նշած ուղեծրից: Ուստի Հայ ազգի շահի տեսակետից «աւելի լաւ է երեսփոխան ունենալ Տիմիթրի Վլախոֆ մը, քան Իթիհադական Հալաճեան մը: Այստեղ այլեւս ինչ նշանակութիւն կրնայ ունենալ Հայ երեսփոխաններու թիւը: Իթիհադական Հայ մը անկեղծ պիտի ըլլայ հետեւելու իր կուսակցութեան ծրագրին ու քաղաքականութեան, որոնք գլխովին հակառակ են Հայուն»²:

Հնչակյան մամուլն առաջարկում էր ազգովին բոլորակալ ընտրությունները կամ գոնե ձեռնպահ մնալ դրանց մասնակցելուց, և դա կլիներ ընտրական պայքարի մի ձև՝ ընդդեմ ինքնիշխան տիրող Իթիհադ կուսակցության: Բայց դա էլ չեղավ: Հայ ազգային պաշտոնական մարմինները և քաղաքական կուսակցությունները նախընտրական պայքարի հենց սկզբից հանդես եկան հեղհեղուկ հայտարարություններով՝ չկարողանալով առաջին իսկ օրերից ճշտել իրենց դիրքը: Դրան ավելացավ կրկին մեջտեղ եկած կուսակցական անհամերաշխությունը:

Բայց հարկավոր էր ի վերջո պարզել. հայերը, վերջապես, ուզո՞ւմ են թուրքական պառլամենտում մարդ ունենալ, թե՞ ոչ: Նրանց մեծամասնությունը, այնուամենայնիվ, ուզում էր: Դա ցանկանում էին հատկապես ազգային իշխանությունները:

1913 թ. մայիսի 6-ին Ամենայն Հայոց կաթողիկոսին գրած նամակում Հովհաննես Արչարունի պատրիարքը բողոքում էր, որ «առանց Իթիհադի աջակցութեան ոչ մի Հայ թրքաց երեսփոխանական ժողովոյ մեջ կարող չէ աթոռ գրավել»³:

¹ «Կայծ» (Թիֆլիս), № 7-8, Հունվար-փետրվար 1913 թ., էջ 194:

² Նույն տեղում, էջ 195:

³ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 109, թ. 4:

Ուստի անխուսափելի էր դառնում ընտրություններին հայերի մասնակցությունը: Բոլորտից նրանք ոչինչ չէին շահի, ուստի հաջողության հասնելու համար պետք է հանդես գային միասնական նախընտրական բլոկով: Իսկ դրա համար անհրաժեշտ էր համերաշխության միջնորդ տեղծել համազգային հողի վրա:

Եվ նախաձեռնությունը վերցրին եգիպտահայերը:

Եգիպտոսի միջկուսակցական խառն մարմնի նախաձեռնությամբ 1913 թ. Հունիսի 3-ին Կահիրեում տեղի ունեցավ հրապարակային բազմամարդ ժողով՝ նվիրված Հայ Դատին և ազգային համերաշխությանը: Միտինգը կազմակերպել էր Դաշնակցության տեղի կոմիտեն, որին աջակցել էին տեղի հնչակյան մասնաճյուղերը և սահմանադրական ուսուցիչական ակումբները:

Հանրահավաքում, որը նախագահում էր Տիգրան Կամսարականը, ելույթներով հանդես եկան Դաշնակցության ղեկավար գործիչներից Ակնունին, ուսուցիչներից՝ Սուրեն Պարթևյանը և ուրիշներ: Ելույթ ունեցան նաև ազդեցիկ օտարականներ՝ մի արար շեյխ, հրապարակագիր Ժորժ Վեյսին, հայտնի հայասեր Մաքս Կոլադը: Մեծ խանդավառությամբ և միաձայնությամբ հանրահավաքն ընդունեց «Հայտարարություն»՝ ուղղված Եգիպտոսի 15 հազար հայությանը:

Հայտարարությունը «հանրային հպարտութիւնով եւ արտաքին հաճոյքով» ազդարարում էր, թե ստեղծված է Հայ քաղաքական բոլոր ուժերի ներդաշնակ ու անխախտ համագործակցություն, որն այնքան կարևոր է «բարենորոգումներու շուրջ ստեղծուած բացառիկ կացութեան հանդեպ»: Ուրախությամբ արձանագրված էր, որ վրա է հասել «նոր եռանդի ու նոր յոյսերու շրջանը», որը փորելու է «հին, աւերիչ կրքերուն գերեզմանը» և դրանով իսկ փրկություն է բերելու «մեծատանջ Հայ ժողովուրդին ու Մայր երկրին՝ անոր քաղաքական տազնապի օրերուն մեջ... Պառակտումները ուժերը վատնեցին, համերաշխումը ուժեր պիտի ամբարէ»¹:

Եգիպտահայ համերաշխական շարժման նախաձեռնությունն արձագանք գտավ Կ. Պոլսում, Երկրում, Կիլիկիայում և

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 312, վավ. 79, թ. 2:

այլուր: Հետագա օրերին ու ամիսներին ամենուր կազմակերպվում էին համերաշխություն և համագործակցության ձեռնարկներ՝ խանդավառություն առաջ բերելով թե՛ կուսակցությունների շարքերում և թե՛ հասարակության մեջ: Տարիների ու տարիների անվերջ կռիվները, ներքին սին ընդհարումները և ուժերի աննպատակ վատնումը, որոնցով այնքան հարուստ էր, ավաճող, հայրության կյանքը, պիտի վերջ գտնեին այս նոր հոսանքի առջև, և նրա շնորհիվ ազգի բոլոր կենսունակ ուժերը, նրանց եռանդը պիտի ուղղվեին գլխավոր նպատակին՝ քաղաքականապես բարձրացող հայ ժողովրդի սահմանադրական ու ազգային իրավունքների պաշտպանությանն ու ամրապնդմանը:

Այսպիսով՝ աննախընթաց համերաշխություն միջնորդող էր ստեղծվել հայկական միջավայրում՝ լինելով երկրի ներսում, թե արտասահմանում: Հայոց այլևայլ իրարամարտ կուսակցությունների համերաշխությունը սկզբնավորվել էր վաղուց և եզրագծով և տարածվել ողջ հայաշխարհով մեկ: Ամեն կողմ կատարվող համերաշխական արտահայտությունները ցույց էին տալիս, որ հայերը, պատկանելով գաղափարական զանազան ուղղությունների, կարող են հաշտ լինել, կուսակցասեր լինելով՝ ի վիճակի են միմյանց հետ ապրելու եղբայրաբար: «Գուցէ մեր պատմական կեանքին մէջ ո՛չ մէկ ատեն,- գրում էր հայ ավետարանականների օրգան «Աւետարեբը», - մեր ներքին միութեան այնքան պէտք չենք ունեցած որքան այսօր: Գոյութեան պայքարի մէջ ազգ մը ամէնէն աւելի ներքին զօրութեան եւ համաձայնութեան պէտք ունի: Այս տեսակէտով կը յուսանք թէ մեր կեդրոնական ազգային իշխանութիւնը քաղաքական կուսակցական համերաշխութեան մէջ՝ իր ցուցադրած գովելի եռանդին կը միացնէ նաեւ կրօնական-յարանուանական համերաշխութիւնը, որով ամբողջ Հայութիւնը իբր անհատ մը իր բոլոր կարողութիւնները կը գործածէ իր վիճակին բարուքման եւ յառաջդիմելու այն ասպարէզին վրայ, որ պատմութիւնը գծած է անոր, օրինակ դառնալով նաեւ Օսմանեան տարրերուն»¹: Իսկ

¹ «Աւետարեբ», № 26, 28 Հունիսի 1913 թ.:

ուսմկավարների «Վերածնունդ» պարբերականի հոդվածագիրը հարց էր տալիս.

«Երբ ասիկա կարելի էր, կը տարուի մտածելու թէ, հապաինչու այնքան գոհակութիւններ, խայտառակութիւններ կատարուեցան ճիշդ այն վայրերուն մէջ, ուր այս համերաշխութեան նախաքայլերը հիմա կ'առնուին: Եթէ կրնայինք իրարու հետ այսքան եղբայրանալ, ի՞նչպէս, ի՞նչպէս երէկ իրարու գլուխ կը պատռէինք եւ մինչեւ իսկ իրարու արիւն կը թափէինք: Հիմա կը թուի թէ գերբնական ուժ մը մոռցնել տուած է այս բոլորը: Չենք կրնար ուրախ չըլլալ այս մասին եւ չփափաքիլ որ այդ սեւ օրերու յիշատակը ամբողջովին հեռանայ մեր միտքերէն: Մենք ուրեմն ջերմապէս կը ծափահարենք այդ համերաշխութիւնները եւ ինչքան անոր տեւականութեան, նոյնքան ալ անոր շրջութեան եւ ամէն կողմէ անկեղծութեան փափաքող ըլլանիս կը յայտնենք»¹:

Պողոս Նուբարին մեծ բավականություն էր պատճառել այն, որ հայկական հարցի այդ փուլում հայ հեղափոխական կուսակցությունները վերջապես որոշել են հրաժարվել հեղափոխական գործելակերպից և խնդիրն առաջ մղել օրինական ճանապարհով: Դա նշանակում էր, որ հայ պահպանողականների կողմից ավելի քան քառորդ դարի խրատներն ասպարոջուն չեն անցել թուրքիայում գործող այդ կուսակցությունների համար, թեև՝ շատ ուշացումով:

Այդ ժամանակաշրջանում հայ պահպանողականները համառորեն հայ հեղափոխական ուժերին «խելք էին սովորեցնում», որ թուրքական զինվորական հզոր իշխանության տակ հեծող մի փոքր ժողովուրդ չի կարող ազատագրվել սեփական ուժերով, եթե չլինեն դրսի միջամտությունը ու աջակցությունը: Ձինված կովի ասպարեզված մի քանի տասնյակ կամ մի քանի հարյուր անձնագոհ հայորդիները չէին կարող ոչինչ անել, եթե նրանք նույնիսկ ունենային հերկուլեսյան քաջություն: Արդյունքը եղավ հարյուրհազարավոր հայերի բնաջնջումն ու գաղթը: Հայերը չու-

¹ «Վերածնունդ», № 1, օգոստոս, 1913, էջ 32:

ներին և չէին կարող ունենալ այն գորեղ ապստամբական կազմակերպությունները և շարժումները, որպիսիք ունեցան մակեդոնացիները կամ արաբները, որոնք նույնպես չկարողացան ոչինչ անել:

Թե ինչով վերջացավ համերաշխական շարժումը, այդ մասին խոսք կլինի գրքի հետագա էջերում:

ԹՈՒՐԲԱԿԱՆ «ԱԶԱՏԱԿԱՆ» ՄԱՄՈՒԼՆ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ Է ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՂԱՑՄԱՆԸ

Առանձին թուրք պաշտոնյաներ և հատկապես թուրքական «ազատական» մամուլը 1913 թ. գարնանը հաճախ էին անդրադառնում հայկական նահանգների բարենորոգումների ուղղութեամբ հայերի և արտասահմանյան հայամետ գործիչների տարած աշխատանքներին, նույնիսկ համակրական արտահայտություններ էին անում հայության հասցեին, ավելին՝ հանդես էին գալիս բարենորոգումների ուղղությամբ տարվող աշխատանքները արագացնելու առաջարկություններով:

Հայկական բարենորոգումներն արագացնելու պահանջ առաջադրող թուրք գործիչների թվում կային նույնիսկ նախարարներ, նույնիսկ ինքը՝ Շեքեթ փաշան: Հետաքրքրական էր “Humanité” թերթի թղթակցին տված հարցին Իթթիհադի «ազատական» պարագլուխներից Ջավիդ բեյի պատասխանը: «Հայերը վերին աստիճանի աշխատավոր ժողովուրդ են: Նրանք հավատարմությամբ ծառայել են օսմանյան հայրենիքին... Մենք հաստատապես որոշել ենք լուծել քրդերի ու հայերի միջև եղած վեճերը, արդարությունը լուծել հողային խնդիրը, վնասագերծել քրդերին...»¹:

Կ. Պոլսում դադարեցված «Ալեմդար» թերթի փոխարեն 1913 թ. ապրիլից Աբդուլոսման Ադիլ բեյի խմբագրությամբ

¹ “Humanité”-ի սույն հարցազրույցի թարգմանությունը տե՛ս «Դրօշակ», № 4, ապրիլ, 1913, էջ 61:

սկսել էր լույս տեսնել «Ազմ» թուրքերեն թերթը: Նույն տարվա մայիսին այս պարբերականում տպագրվել էին խիստ տարօրինակ մի քանի խմբագրականներ, որոնցում առաջին անգամ թուրք մամուլի մի օրգան անկեղծ ու ջերմ գնահատականներ էր տալիս թուրքահայերին և ընդհանրապես հայ ժողովրդին: Այդ խմբագրականներն անմիջապես թարգմանել և տպագրել էր Կ. Պոլսի «Ժամանակ» թերթը: Նրանցից մեկում, դիմելով հայերին, Ադիլ բեյը գրել էր. «Մի՛ վախնաք, հայրենակիցներ, կա՛մ միասին պիտի ազատինք կամ միասին պիտի կորսուինք: Եթէ դուք, հայե՛ր, մենե՛ք բաժնուիք, թուրքերուն սալթանաթը, իսլամական խալիֆայությունը մեր ձեռքէն պիտի ելլէ: ... Մեր հաստատ համոզումը այն է որ թուրքիոյ անկման միակ պատճառն է երկար տարիներէ ի վեր Քրիստոնեաներուն սիրտը երկրին կառավարութեան վրայ պէտք եղածին պէս տաք չլլալը»¹:

«Ստամպուլ» թերթը 1913 թ. ապրիլի 31-ին «Հայկական խնդիրը» վերնագրով հոդվածում գրել էր, որ Բալկանյան պատերազմի առաջին իսկ օրերից հայերը մեծ հայրենասիրություն են մասնակցել երկիրը արտաքին թշնամուց պաշտպանելու կոփմաներին և դրա դիմաց ոչ մի պահանջ չեն առաջադրում: Նրանք միայն պահանջում են, որ իրենց թույլ տան անվտանգ ապրել, որ ապահով լինեն իրենց ունեցվածքն ու պատիվը: «Բ. Դրան մեջ հինգ տարիե ի վեր իրարու յաջորդող բոլոր կառավարությունները ճանչցած են այս պահանջներուն արդարացի ըլլալը, - շարունակում էր թերթը.- բայց, դժբախտաբար ոեւէ ազդու միջոց ձեռք չառնուեցաւ մինչեւ այսօր, այս օսմանցիներուն անտանելի վիճակին դարման տանելու համար: Մահմուդ Շէվքեթ փաշայի դահլիճը իշխանութեան հասնելուն պէս բարենորոգմանց համար իր մտադրություններուն փայլուն ապացոյցը տուաւ եւ շատ մը օրէնքներ հրատարակեց, որոնց կանոնաւոր գործադրությունը երկրին տնտեսական վերականգնումին պիտի նպաստէ: Կը յուսանք որ Մահմուդ Շէվքեթ փաշա հայերու պահանջները նկատի առնելով փութով հարկ եղած

¹ «Ժամանակ», № 1461, 19 մայիսի (2 Հունիսի) 1913 թ.:

միջոցները ձեռք պիտի առնէ՝ Անատոլուի արեւելեան նահանգներուն մէջ անդորրութիւնը եւ ապահովութիւնը տեւական կերպով հաստատելու համար»¹:

Կ. Պոլսում հրատարակվող լատինատառ թուրքական «Լաթուրքի» թերթի խմբագրականում ասվում էր. «Յաւի, անձկութեան եւ յուսահատութեան երկար աղաղակ մը կը շարունակէ բարձրանալ Հայաստանի լեռներէն ու դաշտերէն եւ արձագանգելով, մինչեւ մեզի կը հասնի, երկար, ողբազին ու սրտայոյզ հեծկտուքի մը պէս: Այդ աղաղակը խողխողուած ժողովուրդի մը ողբը, մեռնելու չյօժարող ազգի մը եղբրական եւ գերագոյն կոչն է: Այս ձայնը պիտի լսուի վերջապէս: Անոր անձկութիւնը պիտի հասկցուի: Հանրային իշխանութիւնները չպիտի յուզուին ի վերջոյ եւ խօսքերուն վերջը չպիտի գայ»²:

Այնուհետեւ պարբերականը վկայում էր, որ, անշուշտ, կառավարութիւնը Հայերի վիճակը բարվոքելու հրամաններ է տվել տեղական իշխանութիւններին: «Բայց ի՞նչ կարծե՞ն հրամանները, երբ անոնց գործադրութիւնը չապահովուի: Եւ, արդարեւ, Հայաստանէն հասնող լուրերը ամէն օր հայոց դէմ գործուած սպանութեանց, գողութեանց, ամէն տեսակ բռնութեանց գոյժը կը բերեն: Հարկ է որ իրերու այս կացութիւնը վերջանայ: Հարկ է որ կառավարութիւնը այս վիճակին վերջ տալու համար ամէնէն ազդու միջոցները ձեռք առնէ»³:

Թերթը հատկապէս անհանդուրժելի էր համարում քրդերի չղաղարող չարագործութիւնները՝ գրելով. «Պէտք է որ քիւրտերը եւ բոլոր ջարդարարներուն չահատակութիւնները դադրին, այդ գարշելի չարագործութիւնները, որոնք Համիտեան շրջանը կը յիշեցնեն, պատուհաս մը եւ անորակելի աղէտ մըն են»⁴:

Անդրադառնալով վերը հիշատակված Ադիլ բեյի և մյուս

¹ Հոդվածի հայերեն թարգմանությունը տե՛ս «Ժամանակ», № 1443, 1 (14) մայիսի 1913 թ.:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

թուրք (այդ թվում՝ երիտթուրք) գործիչների՝ հայերի մասին դրական արտահայտություններին և նրանց վիճակը բարելավելու անհրաժեշտություն մասին առաջարկություններին, «Ժամանակ» թերթի մեկնաբան Ա. Գալփագջյանը նշում էր. «... Օսմանցիութիւնը կազմող ազգերուն մէջ, Թուրքիա բնակող ցեղերուն մէջ, իսլամ թէ քրիստոնեայ, չկա ցեղ մը, չկայ ազգ մը, որ հայուն չափ Թուրքիան գիտակցաբար սիրած ըլլայ»: Ապա՝ «Հայուն հայրենիքը Թուրքիան է, եւ աշխարհի մէջ այն տեղը զոր հայերը ամէնէն շատ կը սիրեն՝ Հայաստանն է: Եվ, որքա՛ն երջանիկ պիտի ըլլային հայերը, եթէ... [նրանց] թոյլ տային ազատօրեն սիրել աշխարհի մէջ իրեն ամէնէն ցանկալի տեղը՝ Հայաստանը եւ անկեղծօրէն սիրել իր մեծ հայրենիքը՝ Թուրքիան»¹:

Բայց եթե հայերի այս իդէա մինչև հիմա փափագված չափով չի իրականացել, ապա դա պատճառ չէ, որ այսուհետ նույնպէս նրանց երազածը իրականություն չի դառնալու, հաստատ համոզմունք էր հայտնում Գալփագջյանը և ավելացնում. «Եթէ թուրքերը սրտանց եւ հայերը սրտանց իրարու մօտենան, զիրար ողջագուրեն, գործակցին, Թուրքիա երեսուն տարուան միջոցին իսլամական եւ օսմանեան մեծ տէրութիւն մը կ'ըլլայ:

Մեր ալ փափաքը այդ է, այսինքն՝ մեծ Թուրքիոյ մէջ անդորր ու բարգաւաճ Հայաստան մը»²:

Այդ օրերին (1913 թ. հունիսին) հայերի նկատմամբ համակրական մի շարք հոդվածներ տպագրեց «Ազմ» թերթը, որի խմբագիրը առաջ էր քաշում այն թեզը, թե Հայաստանը կորցնելը հոմանիչ է Օսմանյան կայսրության կործանումին: Այս մոտեցումը միանգամայն արդարացի համարելով՝ «Աւետաբեր» թերթը գրել էր. «Հայերը կարծես ամբողջ կայսրութեան քաղաքակրթական ու վարչական վիճակին ջերմաչափն են: Որչափ հայերը նեղուին՝ այնչափ կայսրութեան ընդհանուր կացութիւնը տազնապալից կը համարուի, որչափ անոնք անդորրութեան եւ բարօրութեան մէջ ապրին՝ այնքան ամբողջ կայսրութեան հա-

¹ «Ժամանակ», № 1461, 19 մայիսի (2 հունիսի) 1913 թ.:

² Նույն տեղում:

մար բարօրութեան եւ յառաջդիմութեան նոր շրջան մը կը բացուի: Մենք բոլոր սրտէ կը մաղթէինք որ այս խորունկ գիտակցութիւնը որ կ'իշխէ մեր ամէնէն բարձր շրջանակներու մէջ՝ խորապէս թափանցէր նաեւ մեր բոլոր պետական բարձր շրջանակներէն մինչեւ յետին գիւղական միւտիւրի մտայնութեան մէջ եւ անոնց գործունէութեան առանցքը դառնար»¹:

Գահաժառանգ իշխան Յուսուֆ Իզգեղինը «Դեյլի տելեգրաֆ» թերթի թղթակցի հետ ունեցած մի տեսակցութեան ընթացքում արտահայտել էր հայերի համար շատ նպաստավոր գաղափարներ: «Սիրտս ամեն անգամ արյունոտվում է, երբ մտածում եմ հայերի կոտորածների մասին: Հայերի հանդեպ ծանր պարտականություններ ունենք»: Նա նախորդ տարիներին նույնպէս քանիցս իր համակրություններն էր ցուցադրել հայոց բարեգործական և դպրոցական հաստատությունների հանդեպ: Այդ պարագան հայերի համար սփոփիչ էր, որովհետև դա գոնե բարոյական վարձատրություն էր այն անթիվ զոհողությունների դիմաց, որ անում էր հայ ազգը օսմանյան երկրի համար²:

Բայց թուրք, հատկապէս երիտթուրք գործիչների, թուրք «ազատական» մամուլի արտահայտած դրական զեղումներին այլևս քչերն էին հավատում: Բոլոր հայերը, բացառությամբ մի փոքր խումբ անուղղելի լավատեսների, ոչ մի հույս չունեին, թե թուրքական իշխանությունները իրենց հանդեպ կատարելու են որևէ դրական քայլ, իրագործելու են տված խոստումներից գոնե մեկը:

Որ հայերը թուրք «ազատական» մամուլին հավատարու ոչ մի հիմք չունեին, երևում էր թեկուզ նրանից, որ այդ պարբերականները խնամքով խուսափում էին գործածել մի շարք աշխարհագրական ու պատմական անուններ՝ դրանք համարելով «վնասակար» ու «աղետաբեր» կայսրության ամբողջականության համար: Այդ անուններից ամենասոսկառիթը համարվում

էր «Հայաստան» բառը: Թուրքերի մոտ այն համոզումն էր տիրում, թե «Հայաստան» բառը գործածելու դեպքում վաղ թե ուշ պիտի հաջորդի «Հայաստանի ինքնավարությունը»: Այս մտայնությունը այնքան հաստատուն էր նստել թուրքերի ուղեղում, որ երբ 1911 թ. Թուրքիայի պատգամավորական ժողովում Գրիգոր Զոհրապը իր ելույթում անդրադարձել էր հայկական ցավերին՝ գործածելով «Հայաստան» բառը, թուրք և քուրդ պատգամավորները, զսպանակի պէս ցատկելով տեղերից, գոռգոռացել էին՝ արտաբերելով «էրմենիստան յոք», «Մեմալիքը օսմանիտե վիլայեթ վար» և նման զայրալից արտահայտություններ³:

1913 թ. մայիսի 6-ի իր խմբագրականում անդրադառնալով պատրիարք Արչարունու մի հայտարարությունը, ուր գործածված էր «Հայաստան» բառը, «Ժամանակ» թերթը գրել էր. «Բարեկարգությունը անհրաժեշտ է ոչ միայն Քուրդիստանին...» և այլն՝ «Քուրդիստան» ասելով նկատի առնելով հազարամյակների «Հայաստան» երկիրը²:

«Աւետաբերը» հիշեցնում էր, որ մինչ ամիսներ առաջ ներքին գործոց նախարար Ադիլ բեյը խոստանում էր ապակենտրոնացման հիման վրա հայկական նահանգներում կիրարկել «հիմնական և ընդարձակ» բարենորոգումներ, մյուս կողմից՝ արդարադատության նախարարը հայոց պատրիարքարան էր ուղարկում մի «թէզքէրէ», որով հորդորում էր չարձագանքել հարստահարությունների մասին զավառներից եկած լուրերին³:

Թուրք մամուլի «ամենաազատական» օրգաններին ոչ մի հավատ չի տաժում նաև երիտթուրքական իշխանությունների հետ այլևս որևէ հույս չկապող Դաշնակցությունը: «Մահաբեր պատրանք» վերնագրով առաջնորդողում «Դրօշակը» գրում էր. «Յրենք մահաբեր պատրանքը: Ժամանակն է նողկանքով երես դարձնենք թուրք պաշտօնական շողոքորթ ժպիտներից, որոնք

¹ «Ավետաբեր», № 28, 12 Հուլիսի 1913 թ.:

² Նույն տեղում:

¹ Տե՛ս «Ժամանակ», № 1449, 7 (20) մայիսի 1913 թ.:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս «Աւետաբեր», № 28, 12 Հուլիսի 1913 թ.:

ամէնէն վտանգաւոր դաւերն եղան մեր ժողովրդի գոյութեան դէմ: Երիտասարդ թիւրք կառավարութիւնը չորս տարուց ի վեր քայլ առ քայլ սիստեմատիկ կերպով կատարեց բոլորը, ինչ պէտք էր մեր անկեղծ հաւատի թեւերը բրտօրէն փետելու, մեր անվերապահ ու շիտակ վստահութիւնը արիւնի մէջ տրորելու եւ իրաւունքի ու արդարութեան մեր յոյսերը ոճրաշունչ ցուրտ հողմերին տալու համար»¹:

Դաշնակցութեան մոտ արդեն ձևավորված (թեև մեծ ուշացումով) այդ համոզմունքը այլևս աներեր էր: Նա հիմա ոչ մի կասկած չունէր, որ հանձին Իթթիհադի՝ հայ ժողովուրդն ունի ոխերիմ թշնամի, որ, հետևապես, իթթիհադական մամուլի ցանկացած օրգանի, այդ կուսակցութեան ցանկացած գործչի կամ անդամի՝ հայերին հանդուրժելու մասին խոսքերը պարզապես խաբկանք են: «Դրօշակը» շարունակում էր. «Ոչ մի դառնութիւն չմնաց, որ չճաշակէինք եւ ոչ մի ցեղային անարգանք, նւաստացումն, որին չ'ենթարկւեր հայ ժողովրդի արդարամիտ համբերութիւնը: «Սահմանադրական» Թիւրքիան, Աբդիւլ-Համիդի չարակամութեամբ ու դիւական եռանդով զինւած, բայց նրանից աւելի նենգօրէն եւ աւելի մեթոդով այս չորս տարում հայ ժողովրդի արիւնը ծծեց վամպիրի պէս, նրա անդարձ կորստեան վիճը փորեց եւ մենք՝ ազնւօրէն դիւրահաւատներ, պատրանքներով աչքերնիս շլացած՝ անզգայիօրէն քայլ առ քայլ դէպի այդ ճակատագրական անդունդը դիմեցինք:

Յրենք վերջապէս այդ մահաբեր պատրանքը!

Ձխաբենք մեզ և չխաբւինք ուրիշներից»²:

Կուսակցությունն իր պաշտոնաթերթի միջոցով հայ ժողովրդին զգուշացնում էր սպասվելիք էլ ավելի մեծ փորձություններից ու արհավիրքներից. «Այսօր ճակատ առ ճակատ կանգնած ենք ամենադաժան, սարսեցուցիչ առեղծաժի առաջ: Հայ ժողովրդի լինել չլինելու խնդիրն է հրապարակի վրայ, կա՛մ՝ այսօր նա պիտի ապահովի իր ազգային գոյութիւնը իրական

երաշխիքներով, կա՛մ պիտի պատրաստուի, որպէս քաւութեան նոխազ, վերանա Թիւրքիայի աւերակների տակ թաղւել»¹:

«Դրօշակը» կուսակցութեան անունից գղջանք էր հայցում հայութունից՝ տարիներ շարունակ խաբված լինելու համար, գրելով. «Եւ մենք խաբւեցինք ամենաանարգ, ամենատմարդի կերպով: Արդ այսուհետեւ անօգուտ են մեր անկեղծ ճիգերն ու զոհաբերութիւնները, քանի որ դուք հակադրում էք թիւրք պետութեան շահերը, մեր ազգային գոյութիւնը, ի դուր մեր շիտակութիւնը, երբ մեր չորս կողմում միայն կեղծիք է, խաբբեայութիւն, դաւ ու ստութիւն»²:

Ապա, դիմելով երիտթուրքերին, պարբերականը ցասումով նրանց երեսին էր չարտում հոգում կուտակված զայրույթը. «Ձենք հաւատում ձեզ, ձեր խոստմանը, ձեր անուշ խօսքերին, մանաւանդ ձեր ժպիտներին, որովհետեւ դառն փորձով գիտենք այդ բոլորի արժէքը...

Ձենք հաւատում ձեզ, եւ այլ եւս չենք կարող հաւատալ, որովհետեւ հակառակ ձեր խոստման եւ մեր դիւրահաւատութեան, դուք Աբդիւլ-Համիդի հաւատարիմ ժառանգորդները, եռանդուն աշակերտները հանդիսացաք:

Ձենք հաւատում ձեզ եւ չենք կարող հաւատալ, քանի որ ձեր պետական ըմբռնումը միայն ոճիր է, ձեր մտայնութիւնը՝ միմիայն իսլամական, ձեր հետապնդած քաղաքականութիւնը՝ վայրագ, անողորմ, յանցագործ, որ մեր ժողովրդին կորստեան անդունդն է փորում:

Ձենք հաւատում ձեզ, չենք կարող այսուհետեւ ձեզ վստահիլ: Հայ ժողովրդի «փրկութիւնը փնտրելու ենք միմիայն (ընդգծումը մերն է: - Հ. Ս.) Եվրոպայի խոստացած իրական (ընդգծումը մերն է: - Հ. Ս.) երաշխիքների մէջ...»³:

Մի պատրանքը վերջապես թոթափած՝ «Դրօշակն» ընկնում էր մի ուրիշ պատրանքի մեջ... Միթե ծաղր չէր «Փրկությունը

¹ «Դրօշակ», № 4, ապրիլ, 1913, էջ 49:

² Նույն տեղում:

¹ «Դրօշակ», № 4, ապրիլ, 1913, էջ 51:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

փնտրելու ենք միմիայն Եվրոպայի խոստացած իրական երաշխիքների մեջ...» կործանարար համոզումը: Այդ ե՞րբ է Եվրոպան գործնականում աջակից եղել Հայաստանին, Հայ ժողովրդին: Այո՛, Եվրոպայից եղել են խոստումներ, հայտարարություններ, բանաձևեր, այսինքն՝ եղել է թղթե «օգնություն», բայց ոչ երբեք՝ իրական աջակցություն:

«Օգնություն...»: Հայր՝ կուսակցական թե անկուսակցական, լուսավորչական թե կաթոլիկ, դեռ չէր թողնում օտարի օգնությունը թուրքական չարիքից փրկվելու մարմաջը: Հենց կոտորակված, բաժան-բաժան հայոց ազգն էր իր արևելյան և սփյուռքյան հատվածներով, որ Եվրոպային օգնության հասավ նրա համար ծանրագույն օրերին՝ Առաջին և Երկրորդ աշխարհահամարտերի տարիներին՝ ազատության զոհասեղանին դնելով իր հարյուրհազարավոր զավակների կյանքը:

**ԿՈՎԿԱՍՈՒՄ ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՎՈՐՈՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՄԵՆԱՀՊԱՏԱԿ
ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՆԻԿՈՒԱՅ II-ԻՆ:
ՓՈՒՍԱՐՔԱՆ ԿՐԿԻՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՔԻՆ**

Հայաստանի բարենորոգումների շուրջ տերությունների միջև ընթացող սուր բանակովի օրերին 1913 թ. հուլիսի 11-ի թվանշամբ կոմս Վորոնցով-Դաշկովը ցար Նիկոլայ II-ին ներկայացրեց ընդարձակ ղեկուցագիր անցած 8 տարիներին Կովկասի փոխարքայի պաշտոնում իր գործունեության մասին*:

Հասարակական կարևոր հնչեղություն ունեցող իր ղեկուցագիրը փոխարքան սկսում էր նրանով, որ իր 8-ամյա գործունեության ընթացքում ինքը մամուլի էջերում հաճախ է

* Զեկուցագիրն առաջին անգամ ամբողջությամբ տպագրվել է Պետերբուրգի “Новое Время” և Թիֆլիսի “Кавказ” թերթերում, ապա 36 էջանոց գրքույկով լույս է տեսել Պետերբուրգում 1913 թ. օգոստոսին՝ “Всеподданнейший отчет за восемь лет управления Кавказом, генерал-адъютанта Воронцова-Дашкова” վերնագրով:

ենթարկվել խիստ քննադատության, Պետական Դումայում և կենտրոնական կառավարության կողմից: Իր քննադատների հիմնական մեղադրանքն այն է եղել, նշում էր նա, որ Կովկասի փոխարքայի կառավարման ձևն ու բովանդակությունը միանգամայն տարբեր են կայսրության մյուս վարչական տարածքները կառավարող բարձրաստիճան պաշտոնյաների գործելակերպից: Իր հակառակորդների այդ դիտարկումը համարելով միանգամայն ճիշտ՝ Վորոնցով-Դաշկովը ղեկուցագրում չեչտում էր, որ այդպես էլ պետք է լիներ, քանզի իր որդեգրած գործելաոճը գերազանցապես թելադրված է Կովկասի տեղական պայմանների առանձնահատկություններով: «Որքան ես եմ հասկանում, նշում էր նա, - այդ գործելակերպը ինձ համար անխուսափելի է եղել, որովհետև այն անմիջականորեն բխում է [Կովկասում] փոխարքայություն հաստատելու բուն իսկ գաղափարից»¹:

Կովկասում իր կառավարման ոճն ու եղանակները միանգամայն ճիշտ համարելով՝ փոխարքան միաժամանակ գրում էր. «Լավ էին, թե՛ վատ իմ կառավարման եղանակները, իհարկե, ինձ չի տրված գատել», բայց իբրև այդ կառավարման հետևանք կարող ենք ասել, որ կովկասյան ազգաբնակչության մեջ «Նոբրին Մեծությունն ունի նույնպիսի հավատարիմ հպատակներ, ինչպես և Կենտրոնական Ռուսաստանում, որոնք պատրաստ են զոհել իրենց կյանքը նրա բարօրության համար և ձգտում են միայն մի նպատակի՝ լինել իրենց հայրենիքի՝ Ռուսաստանի երախտապարտ զավակներ»²:

Անցնելով կովկասյան փոխարքայությունում տիրող քաղաքական դրությունը՝ կոմսը գրում էր. «Դեռևս 1910 թվին ինձ համար պարզ էր դարձել, որ Կովկասը գտնվում է լիակատար խաղաղեցման նախօրյակին»³: Իբրև Կովկասի խաղաղեցման վկայություն Վորոնցով-Դաշկովը բերում էր այնտեղ ոճրագործությունների թվի կտրուկ նվազման փաստը: Կովկասին

¹ “Всеподданнейший отчет за восемь лет ...”, стр. 1.

² Նույն տեղում, էջ 1-2:

³ Նույն տեղում, էջ 2:

Հատուկ էին ոճրագործությունների այնպիսի տեսակներ, ինչպիսիք էին սպանությունները, ավարառություններն ու ավազակությունները: Փոխարքան նշում էր, որ 1907 թ. կատարած 17300 նման ոճրագործությունների թիվը 1912 թ. իջել է 8350-ի, որը մեծ չափով պակաս է նույնիսկ 1902 թ. «նորմալ տարում» կատարված ոճրային դեպքերից¹:

Դիմելով Կովկասի գլխավոր ազգությունների քաղաքական տրամադրություններին՝ Վորոնցով-Դաչկովն ամենից առաջ կանգ էր առել Հայոց վրա: Նա գրում էր, որ կայսրության սահմաններում Հայերի հետ ունեցած բարդ խնդիրները «ինքներս ենք ստեղծել մեր անզգույշ վերաբերմունքով» դեպի նրանց կրոնական ու ազգային զգացմունքները: «Ոչ մի անջատողական տրամադրություններ Հայերի մեջ գոյություն չունեն», - շեշտում էր փոխարքան և հիշեցնում, որ «ռուսահայերի մեջ ազգայնական շարժումը, որին ուղեկցվում էին ահաբեկչական գործողություններ իշխանության ներկայացուցիչների դեմ, առաջ եկավ Հայոց եկեղեցու գույքերը հարքունիս գրավելուց, բայց այդ շարժումը միանգամից չքացավ, և կարելի է հուսալ՝ անդառնալի կերպով», երբ այդ գույքերը վերադարձվեցին²:

«Իհարկե, - գրում էր փոխարքան, - հեղափոխական կուսակցությունները Հայերի մեջ գոյություն ունեն և Ռուսաստանի ներսում, բայց խոսել Հայ ժողովրդի հակառուս լինելու մասին նույնքան տարօրինակ է, ինչպես ռուս ժողովրդին կասկածել դեպի իր թագավորը հավատարիմ հպատակ լինելու մեջ: Ուստի Հայ ազգը անջատողականության մեջ մեղադրելու ամեն մի փորձ ջախջախվում է իրական փաստերի առաջ, որոնք հակառակն են ապացուցում՝ Հայերի անձնվիրությունը Ռուսաստանին»³:

Սույն աշխատության՝ ՀՅ դաշնակցության դատավարությանը նվիրված ենթագլխում արդեն նշվել է, որ Կովկասի փո-

¹ “Всеподданнейший отчет за восемь лет ...”, стр. 2.

² Նույն տեղում, էջ 6:

³ Նույն տեղում, էջ 7:

խարքա Վորոնցով-Դաչկովը կտրականապես դեմ էր այդ դատավարության կազմակերպմանը՝ գտնելով, որ Դաշնակցությունը, վերջին հաշվով, կայսրության համար վտանգ չի ներկայացնում, քանի որ նրա պայքարը միտված չէ Ռուսաստանի թուլացմանը կամ քայքայմանը: Եվ ահա 1913 թ. հուլիսի 11-ի զեկուցագրում կրկին անդրադառնալով Դաշնակցության հարցին՝ Վորոնցով-Դաչկովը վճռականորեն շեշտում էր իր տեսակետի միանգամայն արդարացի լինելը և որպես ապացույց վկայակոչում էր դատավարության արդյունքները: «Հակառակ իմ առաջարկների, - գրում էր նա, - Պետերբուրգում «Դաշնակցություն» կուսակցության դեմ կազմակերպվեց մի դատ, որը պետք է ապացուցեր ամբողջ [Հայ] ժողովրդի հեղափոխական լինելը, և միաժամանակ, առանց ինձ տեղեկացնելու ամբողջ Կովկասում կատարվեցին անօրինական ձեռքարկություններ մոտ 1000 հոգու, որոնց մեջ կային Հայտնի դրամատերեր և հասարակական գործիչներ: Ինչպես Հայտնի է, դատավարությունը վերջացավ «պո'ւֆ»-ով»¹:

Ջեկուցագրում Վորոնցով-Դաչկովն անդրադարձել էր նաև թուրքահայության հարցերին՝ իր անկեղծ համակրանքն արտահայտելով նրա նկատմամբ: Փոխարքան գտնում էր, որ Ռուսաստանում պետք է ամենաակտիվ աջակցություն ցույց տրվի թուրքական լծի տակ տառապող Հայ ժողովրդին: «Այժմ մենք տեսնում ենք, որ ոչ միայն ռուսաց Հայերը չեն ձգտում անջատվել Ռուսաստանից, այլև թուրքահայերը բուն ձգտում ունեն ձեռք բերելու նրա հովանավորությունը: Արդարությունը պահանջում է նրանց ցույց տալ ամենայն աջակցություն»²:

Անդրադառնալով վրացիներին՝ փոխարքան նշում էր, որ ինչպես Հայերին, սրանց նույնպես չի կարելի անջատողականներ համարել: Իր ամբողջության մեջ վրաց բնակչությունը Ռուսաստանի հետ է, բացի ազգայնականների մի խմբի, որը, չահարկելով վրաց եկեղեցու ավտոկեֆալության հարցը, հանդես է

¹ “Всеподданнейший отчет за восемь лет ...” էջ 3:

² Նույն տեղում:

գալիս վարչական մարմիններում ավելի շատ վրաց հավատացյալներ ընդգրկելու պահանջով:

Ի տարբերություն հայերի և վրացիների՝ փոխարքան այլ գնահատական էր տալիս Կովկասի մուսուլմանական բնակչության ձգտումներին: Նա գրում էր.

«Անցնելով մուսուլման ազգաբնակչության՝ ես չեմ կարող չնկատել, որ եթե մեզ հարկավոր է ապագայում վախենալ Կովկասի առանձին ազգությունների անջատողական ձգտումներից, ... ապա պետք է վախենալ հենց մուսուլման ազգաբնակչությունից, նկատի ունենալով նրա թվական գերակշռությունը բոլոր մյուս ազգությունների նկատմամբ, կրոնական ֆանատիկոսության բռնկման հնարավորությունը, ինչպես և Կովկասի դրացիությունը մուսուլման պետությունների հետ...»¹:

Վորոնցով-Դաշկովը կանխատեսում էր, որ Կովկասի մուսուլմանությունն ապագայում կարող է մեծ տհաճություններ պատճառել Ռուսաստանին, բայց այժմ նրա անջատողական ձգտումները դեռ սաղմնային վիճակում են: «Բարեբախտաբար, գրում էր նա, - դեռ թանձր տգիտության մեջ ընկղմված մուսուլման զանգվածների մեջ անջատողական ոչ մի միտք ծագել չի կարող*, ուստի այդ է պատճառը, որ պանիսլամիզմի և պանթուրքիզմի քարոզչության առանձին փորձերն առայժմ որևէ հաջողություն չեն ունեցել Կովկասում»²:

Շոչափելով Կովկասի ազգաբնակչության կողմից ակնկալվող մի քանի զեմստվոյական, դատաստանական և այլ բարենորոգումների անհրաժեշտության հարցը՝ փոխարքան տալիս էր կովկասցիների քաղաքական իդձերի ընդհանուր գնահատական

¹ “Всеподданнейший отчет за восемь лет ...”, էջ 4:

* Ինչ խոսք, փոխարքան այս հարցում սխալվում էր: Ընդամենը մեկ տարի հետո ծագած համաշխարհային պատերազմը և դրա ընթացքը հակառակն ապացույցեցին. «Թանձր տգիտության մեջ ընկղմված» կովկասյան թուրքերը, համենայնդեպս նրանց մեծ զանգվածներ, լիովին բացահայտեցին իրենց հակոուս, պանթուրքական նպատակները:

² “Всеподданнейший отчет за восемь лет ...”, էջ 9-10:

ներ՝ գրելով, որ դրանց գոհացումը կովկասցիներին ընդմիշտ կչաղկապի Ռուսաստանի հետ:

Ապա երկրի տնտեսական դրուծյան և կուլտուրական-լուսավորական գործի վիճակի համառոտ տեսությունը տալուց հետո փոխարքան ցարի ուշադրությունը հրավիրում է Կովկասի վարչականավարման մի քանի խնդիրների վրա: Նա հիշեցնում էր, որ իրեն քննադատողներից ոմանք կառավարությանն առաջարկել են վերացնել Կովկասի փոխարքայությունը՝ որպես իրեն չարդարացնող կառավարման ձև, և Կովկասն անմիջականորեն ենթարկել կենտրոնական կառավարությանը: Չհամաձայնելով իր ընդդիմախոսների հետ՝ փոխարքան ցարին գրում էր, թե «անցած ութ տարիները շոչափելիորեն անձամբ ինձ համոզեցին, որ կովկասյան երկիրը անմիջականորեն Պետերբուրգի կենտրոնական կառավարությանը ենթարկելը, առավել ևս փոխարքայի պաշտոնը փոխարինելը քաղաքացիական մասի ընդհանուր հրամանատարի կամ ընդհանուր նահանգապետի պաշտոնով՝ չի կարող համապատասխանել պետության ընդհանուր շահերին: ... եթե ես, որ վայելում եմ փոխարքայի իշխանություն և իրավունքներով դրված եմ մինիստրներից եթե ոչ բարձր, գոնե նրանց հավասար, ստիպված եմ եղել երբեմն եռանդուն կոիվ մղել կենտրոնական կառավարության ներկայացուցիչների դեմ՝ բարենորոգումներ անցկացնելու համար»: Իսկ եթե վերանա փոխարքայությունը, գրում էր նա, այն ժամանակ, ինչ խոսք, այդպիսի կոիվն ուղղակի անհնարին կլինի: Ներքին գործերի նախարարին ենթակա Կովկասի ղեկավարը չի կարող չհպատակվել նրան և անառարկելիորեն չկատարել նրա բոլոր կարգադրությունները: «Ուստի կովկասյան փոխարքայությունը պետք է պահպանել և ապագայում՝ անկախ իմ անձնական դրուծյունից՝ իբրև փոխարքայի: Ինքնըստինքյան հասկացվում է, որ պահպանելով Կովկասի կառավարման այդ ձևը, անհրաժեշտ է փոխարքայական կառավարումը անձնակազմի իմաստով դնել պատշաճող դրուծյան մեջ, որպեսզի ըստ պաշտոնյանների թվի և նրանց աշխատավար-

¹ “Всеподданнейший отчет за восемь лет ...”, էջ 34:

ձի չափը համապատասխաններ նրա նպատակներին: Ես չկարողացա մինչև այժմ այդ անել՝ նկատի ունենալով անցումային ժամանակաշրջանը և կենտրոնական կառավարություն տատանումները Կովկասի կառավարման գյուլթյուն ունեցող ձևի նկատմամբ: Այժմ պետք է այդ հարցը վերջնականապես լուծել և փոխարքայություն կառավարումը դնել պատշաճ դրույթյան մեջ»¹:

Միաժամանակ փոխարքայության վարչակազմի և կենտրոնական կառավարության միջև ավելի սերտ կապ հաստատելու համար Վորոնցով-Դաշկովը խիստ կարևորում էր փոխարքային Մինխատրների խորհրդի կազմի մեջ մտցնելը, իսկ Պետերբուրգից նրա բացակայելու ժամանակ նրա փոխանորդի ներկայությունն ապահովումն այնտեղ, որպեսզի փոխարքայական կառավարչությունը միշտ իրազեկ լինի կայսրության մասշտաբով իրականացվող կառավարման գործերին²:

Մենք հավաստի տեղեկություն չունենք, թե Կովկասի փոխարքայի սույն զեկուցագիրն ինչպես է ընդունվել Նիկոլայ II-ի կողմից կամ ինչ հետևանք է ունեցել, բայց մի բան հաստատ է. Կովկասի փոխարքայի կարգավիճակը փոփոխելու անհրաժեշտության մասին Վորոնցով-Դաշկովի առաջարկությունը չէր ընդունվել:

Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի՝ ցար Նիկոլայ II-ին հղած ընդարձակ զեկուցագիրն այդ վճռական օրերին խիստ ժամանակին էր: Սույն նշանավոր փաստաթղթում ինչպես ուսասանայությունը, այնպես էլ, մանավանդ, թուրքահայությունը տրված բարձր գնահատականն անշուշտ մեծապես նպաստել էր Կովկասում Վորոնցով-Դաշկովի կառավարման տարիներին կայսրի մոտ արդեն ձևավորված առանձնահատուկ դրական կարծիքի ամրապնդմանը: Անշուշտ, ցարի հրահանգով կամ համաձայնությամբ զեկուցագիրը մամուլում և առանձին գրքույկով անմիջապես հրատարակելը ակնհայտ ազդակ էր Հայկական հարցի առաջխաղացման մեջ ընդգրկված ուսական դիվանագիտությունը և ընդհանրապես պետական մարմիններին:

¹ “Вспомогательный отчет за восемь лет ...”, էջ 35:

² Նույն տեղում:

ԱՆՀԻՄՆ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ

Անտրտունջ կրելով իրեն բաժին ընկած դիվանագիտական լարված պայքարի ծանր բեռը՝ Պողոս փաշա Նուբարը երբեմն նաև ստիպված էր պաշտպանվել որոշ ազգայինների անհիմն մեղադրանքներից:

Հայկական հեղափոխական երկու կուսակցությունները՝ Դաշնակցությունն ու Հնչակը, դժգոհել էին Ազգային պատվիրակության ղեկավարի գործունեությունից՝ մեղադրելով, թե նա բարենորոգումների ողջ գործն իր վրա է վերցրել՝ հետին դիրքեր մղելով Կ. Պոլսի պատրիարքարան:

Դա երևում էր թեկուզ Փարիզից Գևորգ V կաթողիկոսին հղած Պողոս փաշա Նուբարի հղած հուլիսի 7(20)-ի նամակից, որով բողոքում էր, թե «ինձ դեմ հնարած էնթրիկներու եւ գրպարտութիւններու» հեղինակները «զիս կը հալածին»: Միաժամանակ նա Վեհափառին հայտնում էր իր երախտագիտությունը այն բանի համար, որ վերջինս երբեք չի փոխել իր ջերմ վերաբերմունքն Ազգային պատվիրակության ղեկավարի նկատմամբ: «Այժմ Պատուիրակութեան յարաբերութիւնները [Պոլսո պատրիարքարանի] հետ կանոնաւոր շաւղին մեջ մտած են շնորհիւ Ձեր Սրբութեան»¹: Հիրավի, միակ լուրջ անհամաձայնությունը, որ գոյություն ուներ Պոլսո պատրիարքարանի և Ազգային պատվիրակության միջև, արդեն հարթված էր՝ շնորհիվ Վեհի լրջախոհ ու հավասարակշռված վերաբերմունքի հանդեպ ընդհանուր գործը²:

Շարունակելով նամակի շարադրանքը՝ Պողոս Նուբարն այնուհետև Վեհին գրում էր, որ ինքն ուրախ է Հայաստանի հարցերով բանակցությունների կենտրոնը օսմանյան կայսրության մայրաքաղաք տեղափոխելու համար, հետևապես բնական է, որ Կ. Պոլսի պատրիարքարանը պիտի ստանձնի տերությունների տեղի դեսպանների հետ ուղղակի հարաբերությունների մեջ մտնելու պաշտոնը: Նա հիշեցնում էր, որ այդպես էր եղել նաև

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 43, թ. 6:

² Նույն տեղում, թ. 41:

1895 թվականին, երբ Հայկական բարենորոգումներին վերաբերող բոլոր հարցերով զբաղվում էր նույն պատրիարքարանը: Քանի որ Կ. Պոլսի դեսպաններն արդեն սկսել էին աշխատել Ռուսաստանի կողմից ներկայացված բարենորոգումների ծրագրի վրա, ուստի Նուբար փաշան կարծում էր, որ «այժմ տարակուսելու պատճառ չկայ, որ շնորհիվ Ռուսիոյ կառավարութեան նախաձեռնութեան, որով մեր դատը իր պաշտպանութեան տակ առած է, պետութիւնը քիչ ատենէն պիտի համաձայնին եւ Հայաբնակ գաւառներու մէջ բարենորոգմունք ի գործ պիտի դրուին»¹:

Պողոս Նուբարը կաթողիկոսին իր անթաքույց հպարտութունն էր հայտնում. «Ազգային պատուիրակութեան» նպատակը՝ որ կը կայանար պետութեանց միջամտութիւնը Հայցել Պէրլինի դաշնագրոյն 61 յօդուածով պարտադրուած բարենորոգմանց կիրառման ի նպաստ, հիմա կատարուած է»²:

Բայց Նուբար փաշայի դեմ հանդես էին գալիս ոչ միայն հեղափոխական կուսակցութիւնները: Նրան սկսել էին փնտրել նաև աջից:

Այսպես՝ Կ. Պոլսի «Բիւզանդիոն» և «Ժամանակ» թերթերը մայիս-հունիս ամիսներին տպագրել էին Ազգային պատուիրակութեան ղեկավարին վարկաբեկող հոդվածներ, որոնց մասին տեղեկացվել էր նաև Կովկասի փոխարքայութիւնում և Պետերբուրգում:

Նշված թերթերը, հատկապես «Ժամանակը», Նուբարին մեղադրում էին, թե նա գաղտնի սերտ հարաբերությունների մեջ է «Մեշվերեթ» թերթի արտոնատեր ու խմբագիր Շերիֆ փաշայի և նրա տիկնոջ հետ, որոնք, հնարավոր է, կապ ունեն երիտթուրքական իշխանութիւնների հետ՝ ենթադրելի բոլոր հետևանքներով:

Հուլիսի 6-ին Պողոս Նուբարը դառնացած սրտով Փարիզից նամակ է հղում «Ժամանակի» խմբագրին, որն իր հոդվածներից

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 43, թ. 41:

² Նույն տեղում:

մեկում չեչտել էր, թե Ազգային պատուիրակութեան ղեկավարը միացել է Շերիֆ փաշային ու նրա թերթի քաղաքական ուղղութեանը՝ դրանով իսկ խառնվելով Թուրքիայի ներքին գործերին, հայերի համար ստեղծելով նոր գլխացավանք:

Նուբարն իր նամակում չէր ժխտում, որ ինքը վաղեմի կապեր ունի Շերիֆ փաշայի հետ, քանի որ նա բազմաթիվ հոդվածներ է գրել Թուրքիայում բարենորոգումներ մտցնելու գաղափարի օգտին: Ընդհանուր առմամբ բարենորոգումների կողմնակից լինելով՝ թուրք մտավորականն իր թերթում հաճախ էր հանդես գալիս նաև Բեուլինի դաշնագրի 61-րդ հոդվածի համաձայն Հայկական գավառներում արմատական փոփոխություններ կատարելու պահանջի պաշտպանութեամբ: «Այս մասին իրեն չնորհակալ պէտք էի ըլլալ, ինչ որ ըրի եւ ինչ որ ըրած եմ բոլոր անոնց, որ խօսքով կամ գրչով մեր դատին ուժ տուած են, գրում էր Նուբարը «Ժամանակի» խմբագրին: - Ձեմ ըմբռնէր թէ՛ Շերիֆ փաշան մեր բարենորոգմանց խնդիրքը արդարացի և օգտակար գտնելուն և անոնք պետութեան համար շահավէտ գտնելուն համար, ինչպէս եզրակացնել կուզին, թէ Պատուիրակութիւնը կը միանայ անոր թերթին ընդգրկած ընդհանուր քաղաքականութեան: Պէտք է յաւելուլ, որ բոլոր կենացս մէջ ներքին քաղաքական խնդիրներէ միշտ հեռու կեցած եմ, հետեւաբար հիմայ չէ որ ընթացքս պիտի փոխիմ, հիմայ որ Ասիաբնակ իմ հայրենակիցներուս շահերուն պաշտպանութիւնը ազատաբար ընդունած եմ, որ զիս կը պարտադրի յարգել և շարունակել իմ առջի ընթացքս»¹:

Ինչ վերաբերում էր այն շինծու մեղադրանքին, թե Նուբար փաշան խառնվում է Թուրքիայի ներքին գործերին, որը կարող է խիստ բացասական անդրադարձ ունենալ Հայկական Հարցով տարվող բանակցությունների ընթացքի վրա, ապա նա իր նամակում գրում էր. «Ինձ յանձնուած պաշտօնը բացայայտ կերպով սահմանեալ է: Ես մի միայն կ'զբաղիմ երկայն ժամանակէ ի վեր խոստացուած վարչական բարենորոգումներու

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 46, թ. 3:

խնդրով, և անոնց գործադրութեան յաջողութիւնը ապահովելու համար Պէրլինի Դաշնագիրը ստորագրող բոլոր պետութեանց պէտք եմ դիմում ընել: Մեր հետեւած նպատակը ո՛չ որքի համար գաղտնիք մը չէ, ինչ որ արդէն կը հաստատին իմ յայտնութիւններս և իմ գրութիւններս, մանաւանդ սկիզբէն Թուրքիոյ դեսպանին դիմելով ընելիք դիմումներու մասին իրեն տեղեկութիւն տալս անգամ կապացուցին Օսմանեան Կառավարութեան դէմ իմ տածած յարգանքս: Բարիացակամ մարդ մը այս զգացումներս չի կրնար ուրանալ: Բայց կը տեսնիմ, որ պէտք է եղեր գանոնք հաստատիլ, հետեւաբար կը դիմիմ ձեր թերթին հեղինակութեան մէջտեղ հանելու համար եղած յայտարարութեանց սուտութիւնը, որ սխալ ըլլալէ աւելի դիտումնաւոր են»¹:

Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաչկովը, անհանգստացած Պոզոս Նուբարի դեմ հայկական նշված թերթերի հրապարակումներից, մայիսի 24-ի նամակով դիմում է հայոց կաթողիկոսին՝ պարզելու եղելությունը: Վեհը հանձնարարում է Ս. Աթոռի դիվանապետ Բագրատ վարդապետին հնարավորինս կարճ ժամկետում իմանալ խնդրի էությունը: Վերջինս պարզաբանում է հայցում Նուբար փաշայից: Հուլիսի 15-ին հետևում է փաշայի ծավալուն նամակը վարդապետ-դիվանապետին:

Ազգային պատվիրակության ղեկավարը նախ մտահոգություն էր հայտնում, որ Պոլսում իր դեմ ուղղված զրպարտությունը մեջտեղ գալով՝ ոչ միայն նպատակ ունի վարկաբեկելու իրեն, այլև հասցնելու ռուսական կառավարության ականջին՝ լրջորեն վնասելով բարենորոգումների գործին: Նա համոզված էր, որ «այս էնթրիկաները երկու աղբիւրէ կրնան ծագիլ կամ հաւանականաբար երկուքէն ալ ի միասին»: Առաջինը «անշուշտ Թիւրք կառավարութեան կողմէ է, որ կը ջանայ ամէն միջոցներով խաբանիլ Հայաստանի բարենորոգումները՝ որուն հասնելու համար կը կարծի թէ լաւագոյն միջոցը սուտ զրպարտութիւններով վարկաբեկելն է Նորին Ս. Օծութեան Պատուիրակութիւնը՝ որուն պետութեանց մօտ ունենալիք յաջողութենէն կը

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 46, թ. 3-ի շրջ.:

վախնայ: Անոր մէկ ապացոյցը կը տեսնինք Թիւրք Կառավարութեան պաշտօնական թերթերուն յօդուածներուն մէջ: ... Այս ստայօղ լուրերը կրնային ծագել նաև երկրորդ աղբիւրէ մ'ալ, այն ալ մեր մի քանի հայրենակիցներն են՝ որ գործին սկիզբը՝ իմ հետեւած չափաւոր բրօկրամիս չէին հաւանած և ցաւ զգացած էին Ձեր Վեհափառութեան ինձ նկատմամբ ցոյց տուած վստահութեան՝ զիս իր պատուիրակն անուանելով*։ Քաղած տեղեկութիւններու համեմատ պատճառներ ունիմ հաւատալու, որ իրենք ուրախ պիտի ըլլան նոր ընտրութենէ մը և կը փափաքին այսօր Պատուիրակի փոփոխութեան: Փոխարքային իր նամակին մէջ ըրած ակնարկութիւնը արդէն, ի մասին իմ և Պատրիարքարանի անհամաձայնութեան, այս տեղեկութիւնները մասամբ կը հաստատէ»¹:

Իր նամակով Նուբարը նաև ժխտում էր տարածվող այն լուրերը, թե բարենորոգումների ծրագրի պատրաստության ժամանակ Կ. Պոլսի պատրիարքարանի և Ազգային պատվիրակության միջև ծագած անհամաձայնությունները շարունակվում են: Երկուսն էլ աշխատում են համատեղ, առանց տարաձայնությունների, շեշտում էր նա:

Կրկին անդրադառնալով փոխարքայի՝ մայիսի 24-ի նամակով արտահայտած անհանգստությունը, թե ներկա պահին Թուրքիայի ներքին գործերին միջամտելը կարող է անկանխատեսելի ծանր հետևանքներ ունենալ բանակցությունների գործընթացի վրա, Պոզոս Նուբարը գրում էր. «Ես ոչ միայն ուղղակի կերպով մասնակցած չեմ Թուրքիոյ ներքին քաղաքականութեան եւ ոչ ալ անուղղակի կերպով, այլ եւ նաեւ այս մասին ինձ եղած դիմումներուն ականջ իսկ չեմ կախած: Նորին Վեհափառութեան ինձ վստահացած պաշտօնին կարեւորութեան վրայ իմ գաղափարս շատ բարձր է, նոյնպէս կը ճանչնամ իմ պարտականութիւնս որպէս զի չի կարենամ թոյլ տալ, որ Ազգային պատուի-

* Պոզոս փաշան նկատի ունի Դաշնակցությանը և Հնչակին:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 46, թ. 4:

րակուլթիւնը չեղի իր ճամբէն, որ սահմանուած էր, եւ այն պաշտօնէն, որ ստանձնած է»¹:

Ապա հետգրութեամբ (P.S.) Նուբարն ասածին ավելացնում էր, որ իր հարաբերութիւնները Փարիզի ռուսական դեսպանութեան հետ շատ ջերմ են: Նույն օրվա առաջին կեսին նա տեսակցութիւն էր ունեցել դեսպան Իզվոլսկու հետ և պատմել իր դեմ կատարվող հարձակումների մասին, բայց դեսպանը որևէ նշանակութիւն չէր տվել դրան: «Դեսպանատունը, տեղեկացնում էր Նուբարը, - ինձ դեմ եղած յարձակումներու մասին ո'եւէ տեղեկութիւն չէ ունեցած, որով զրպարտութեանց ուր տեղէն բխած ըլլալուն մասին տեղեկութիւն մը չի կրցաւ տալ: Դեսպանը խոստացաւ գրել առ որ անկէ զանոնք հերքելու համար: Խնդրիմ, այս նամակը ստանալնուդ պէս հեռագրաւ ինձ իմացուցէք զիս հանգստացնելու համար»²:

Այս ամենից վերջ Պողոս Նուբարը կաթողիկոսի համար միանգամայն անսպասելի առաջարկութիւն է անում. «Յարգելի Երոպիոյ մէջ կատարուած բանակցութիւնք, ասկէ վերջ Կ. Պոլսոյ մէջ տեղի ունենալուն պատճառաւ, Պատուիրակութիւնը ալ ևս իրական աշխատութիւն մը պիտի չունենայ, որուն պատճառ մը չի մնար: Հետեւաբար կը խնդրիմ Ձեր Վեհափառութենէն զիս արձակել այն պաշտօնէն, որ ինձ յանձնելու անհուն պատիւն ըրած էր և որ այժմ զայն վերջացած կը նկատիմ: Ձերդ Վեհափառութիւնը վստահ կրնայ ըլլալ, որ երախտապարտ և զգացեալ յիշատակ մը պիտի պահիմ միշտ ինձ յայտնուած վստահութեան և ինձ ցոյց տրուած թանկագին աջակցութեան համար այնպիսի դժուարին պարագաներու մէջ, յորում պէտք էինք անձնուիրաբար աշխատիլ մեր Ասիական Թուրքիոյ հայրենակիցներու ազատութեան համար:

Մեծաւ շնորհակալութեամբ և Ամենախորին յարգանքով՝
Պողոս Նուպար»³:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 46, թ. 5-ի շրջ.:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, գ. 43, թ. 42:

Ազգային պատվիրակութեան ղեկավարի մոտ առկա հրաժարականի տրամադրութիւնը խոր տագնապի էր մատնել Գևորգ V Վեհափառին:

Հուլիսի 24-ին կաթողիկոսը պատասխան նամակ է հղում Պողոս փաշա Նուբարին, ուր ասված էր, որ նրա դեմ եղած խոսակցութիւններն անհիմն են և ծնունդ թշուրիմացութեան ու չարամտութեան: «Վսեմափայլ Տեր, - գրում էր կաթողիկոսը, - միանգամայն համոզված եղէք իմ առ Ձեզ ունեցած կատարեալ վստահութեան ու հաւատի: Ես համոզուած եմ, որ Դուք Ձեր հեռատեսութեամբ, փորձառութեամբ, աշխատանքով և դէմքով մեծարգո նպատեցիք Հայոց հարցին: Ձեր վերջին և վերջնութեան նամակների մէջ գրում եք, որ բանակցութիւնների կենտրոնը Պոլիս է փոխադրուած, ուրեմն և այսուհետև Պատրիարքարանն անմիջապէս կ սկսի յարաբերութիւնները Դեսպանների հետ: ճշմարիտ է, Պատրիարքարանի վրայ այժմ աւելի շատ պարտականութիւն և աշխատանք է ծանրանում, սակայն ի նկատի ունենալով, որ Դեսպանները ևս շարունակ իրենց կենտրոնական իշխանութեանց հետ բանակցութեանց մէջ են, շատ բնական է, որ Հայոց հարցի յաջողութեան համար դեռևս անելիք շատ կայ եւրոպական մայրաքաղաքներում»¹:

Կաթողիկոսը շատ անհանգիստ էր, որ միանգամայն անսպասելի մի նոր քաղաքական բարդութիւն է առաջ եկել Հայկական հարցի ճանապարհին՝ հանձինս բալկանյան պետութիւնների միջև եղբայրասպան պատերազմի սոսկալի բռնկման և որպէս դրա հետևանք թուրքական զորքերի հաջողութեան և այլն: Այդ պատերազմի պատճառով քաղաքական կացութիւնն այնպէս խճճված է և անակնկալներով հղի, գրում էր Վեհափառը, որ դժվար է որոշակի բան ասել: «Այժմեան ցաւալի պարագան այն է, որ եվրոպական դիվանագետները համեմատաբար ավելի քիչ են զբաղվում [հայկական հարցով], քան վերջին [Բալկանյան երկրորդ] պատերազմից առաջ: Ահապասիկ այս հանգամանքը ևս ի նկատի ունենալով, թե ես և թե զիտակից հայերը

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 43, թ. 8-9:

անհրաժեշտ են համարում Ազգային պատգամաւորութեան գոյութիւնն Եւրոպայում Զեր լուսաւոր, հեռատես և հեղինակաւոր դեկաւարութեան ներքոյ:

Ուստի խնդրում եմ Զեր ազնուագոյն առաքելութեանը, բարեհաճեցէք շարունակել յօգուտ Տաճկահայ ժողովրդի բարօրութեան և երջանկութեան, որն անպայման մօտ է Զեր ազգասէր սրտին, միանգամայն ուրախ, չտխրելով չարամիտ լուրերէն: Լիայոյս լինելով Զեր մարդասէր պատրաստակամութեան վերայ, մաղթում եմ Զեզ երկար կեանք և կատարեալ յաջողութիւն, օրհնելով Զեզ և Զեր նշանաւոր գերապատուութեանը»¹:

Միայն բավական ժամանակ անց՝ սեպտեմբերի 12 (25)-ին, Պողոս Նուբարը համաձայնութիւն է տալիս շարունակելու գլխավորել Ազգային պատվիրակութիւնը. նա գրում էր. «Վեհափառ Տէր: Զեր Սրբազնութեան 24 Յուլիս ամսաթիւ նամակը ստանալու պատիւն ունեցայ] եւ ինձ նկատմամբ անոր պարունակած բարեհաճ զնահատումներուն համար խորապէս երախտապարտ եմ, եթէ Զեր Վեհափառութիւնը կը կարծէ, որ իմ աջակցութեանս շարունակութիւնը օգտակար կրնայ ըլլալ, թէպէտ այժմ բանակցութիւնը կը շարունակուին իմ գործունէութեան շրջանէս դուրս, պատրաստ եմ, Զեր անձին նկատմամբ իմ հնազանդութեանս ապացոյց մը տալու համար, շարունակել ժամանակ մը եւս, ինձ յանձնուած բարի պաշտօնը: Պէտք եմ սակայն յաւելուլ, ցաւօք սրտի, որ երկար ժամանակէ ի վեր իմ անձնական գործերս երեսի վրայ թողած եմ, որոնք կը պահանջէն իմ ներկայութիւնս Եգիպտոս, եւ թէ ինձ շատ դժուար պիտի ըլլայ հոն չերթալ գալ նոյեմբեր ամսոյն մէջ: Այսու հանդերձ կը յուսամ, որ մինչև այն ժամանակ, մեր բարենորոգմանց խնդիրը լուծման մը պիտի յանգի և ես չեմ երկմտեր ապահովիլ Զեր վեհափառութիւնը, որ բոլոր իմ ջանքերս այն նպատակին սպաս դնելէ չի պիտի դադրիմ»²:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 43, թ. 9:

² Նույն տեղում, գ. 33, թ. 19:

Ա. ՄԱՆԴԵԼՇԱՄԻ ՆԱԽԱԾՐԱԳԻՐԸ

Ստանալով մյուս մեծ տերութիւնների համաձայնութիւնը՝ Կ. Պոլսի իրենց դեսպանների մակարդակով քննելու հայկական հարցի լուծման հնարավորութիւնները՝ Կ. Պոլսում ռուսաց դեսպան Մ. Ն. Գիրսը հանձնարարում է դեսպանատան առաջին դրագոման (թարգման) պրոֆեսոր Ա. Ն. Մանդելշտամին* մշակել բարենորոգումների նախնական ծրագիր Հայաստանի համար՝:

Լուրջ ու խոհուն ռուս դիվանագետը նախագծի ստեղծման ընթացքում հանդես բերեց մեծ պատասխանատվութիւն ու հմտութիւն²: Իր աշխատանքը նա սկսեց՝ ուսումնասիրելով հայկական հարցին առնչվող միջազգային բոլոր փաստաթղթերը: Բարենորոգումների ծրագիրը կազմելիս նրա համար հիմք ծառայեցին 1880 թ. եվրոպական հանձնաժողովի մշակած՝ վիլայեթների մասին օրենքը, Լիբանանի մասին արձանագրութիւնների կանոնադրութիւնը, 1895 թ. Կ. Պոլսում Ֆրանսիայի, Ռուսաստանի և Անգլիայի դեսպանների հիշատակագիրն ու ծրագիրը Հայաստանի բարենորոգումների վերաբերյալ, 1895 թ. հոկտեմբերի 20-ի սուլթանական հրովարտակը և 1913 թ. մարտի 13 (26)-ի վիլայեթների մասին նոր օրենքը: Իր ձեռքի տակ Մանդելշտամն ուներ նաև Պողոս Նուբարի գլխավորած պատվիրակութիւն և Կ. Պոլսի պատրիարքարանի կազմած հայկական բարենորոգումների երկու նախագծերը:

* Իր կյանքի զգալի մասը Անդրե Մանդելշտամը նվիրել էր Օսմանյան կայսրութիւնն ուսումնասիրութիւնը, ուր 16 տարի (1898-1914 թթ.) եղել էր Կ. Պոլսի ռուսական դեսպանութիւնի դրագոման (թարգման): Նա բարձրակարգ իրավագետ էր, Միջազգային օրենքի հաստատութիւնն անդամ և այլն (տե՛ս Անտրէ Մանտէլսթամ, Օսմանեան կայսրութեան ճակատագիրը: Առաջին մաս, Երիտասարդ թուրքերը պատերազմէն առաջ, թարգմ. Միքայել Շամտանձեան, Կ. Պոլիս, 1919, էջ 12):

¹ «Բարենորոգումները Հայաստանում», էջ 36:

² Այդ մասին մանրամասն տե՛ս Գ.Ա.Թ. Գրիգոր Զոհրապի ֆոնդ, վավ. 91, թ. 6:

Օգտագործելով այդ բոլոր փաստաթղթերը՝ Մանդելշտամը իր նախածրագիրը կազմեց Բեռլինի 1878 թ. դաշնագրից բխող պաշտոնական իրավունքի գորութայամբ:

Հայաստանում բարեփոխումների իր նախագիծը ուսական դիվանագետը կառուցել էր երկու հիմնական սկզբունքի վրա. ա) Պետք է ճշտվեն այն տարածքի սահմանները, որում մտցվելու են բարեփոխումները, բ) Բարեփոխումների ներմուծումը պետք է երաշխավորվի հատուկ հսկողությամբ¹:

Անթաքույց համակրանքով փարվելով Հայկական Հարցի լուծման գաղափարին՝ Մանդելշտամը միևնույն ժամանակ դրսևորեց զգայուն խորաթափանցություն՝ իր առաջարկություններին տալով այնպիսի ձևակերպումներ, որ խնայի թուրք կառավարության դյուրագրգացությունը: Նախագծում նա չմտցրեց կետեր, որոնք կարող էին ավտոնոմիայի մասին երկյուղներ առաջ բերել և Բ. Դոանը վանել Հարցի քննարկումից:

Բարձր զնահատելով ուսական դրագոմանի կատարած աշխատանքը՝ Վահան Փափազյանը նկատում էր, որ նա իր «մասնագիտական մեծ հեղինակությամբ և Հայկական Հարցի նկատմամբ իր ունեցած խոր ու բազմակողմանի ծանոթությամբ» հիանալիորեն հիմնավորած էր մեր պահանջները՝ միջազգային իրավունքի և Հայկական Հարցի իրավական անհերքելի տվյալներու և փաստաթղթերու վրա»²:

Երբ Հայկական բարենորոգումների ծրագրի նախագիծն արդեն պատրաստ էր³, Կ. Պոլսի ուսաց դեսպան Գիրսն այն ուղարկեց Պետերբուրգ: Այստեղ արտգործնախարարության դիվանագետների կողմից վավերագրեր ենթարկվեց հանգամանալից քննության ու արժանացավ հավանության: Ռուսաստանի նախարարների խորհրդում հաստատվելուց հետո արտգործնախարար Սերգեյ Սազոնովի ստորագրած առաքման գրով նախագիծը վերադարձվեց Կ. Պոլսի՝ դեսպան Միխայիլ Նիկոլաևիչին:

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3464, л. 77.

² Վահան Փափազյան, Իմ յուշերը, հատ. II, Պեյրութ, 1956, էջ 239:

³ Տե՛ս Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթապ. 1, վավ. 11⁹⁰ (13 թերթ, Փրանսերեն, մեքենագիր):

Հայկական բարենորոգումների ծրագրի ուսական նախագիծը (որը հայտնի է նաև «Մանդելշտամի նախագիծ» անունով) ընդհանուր գծերով ուներ հետևյալ բովանդակությունը.

Թուրքաց Հայաստանի բոլոր վեց վիլայեթները (Էրզրումի, Սվազի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիի և Նարբեքիի) միանում են մի նահանգի մեջ, միաժամանակ այդ վիլայեթների կազմից անջատվում են այն մասերը, որոնք բնակեցված են զուտ մուսուլման բնակչությամբ¹:


Վերակազմված Հայաստանի կառավարիչ է կարգվում մի գեներալ-նահանգապետ (*inspecteur général*)՝ պայմանով, որ նա լինի մի ձեռնհաս քրիստոնյա եվրոպացի և նշանակվի մեծ պետությունների հավանությամբ ու սուլթանի համաձայնությամբ՝ 5 տարի ժամկետով²: Նրա ձեռքում պիտի կենտրոնանար գործադիր ողջ իշխանությունը: Նահանգապետին իրավունք է վերապահվում արձակելու զինվորական ու քաղաքացիական բոլոր պաշտոնյաներին և կարգել նորերին²:

Նահանգապետին առընթեր ստեղծվում է մի վարչական խորհուրդ՝ բաղկացած նահանգի մեջ մտնող վիլայեթների վարչակազմերի ներկայացուցիչներից և խորհրդականներից: Խորհրդի հիմնական զբաղմունքներից մեկը պիտի լիներ հայկական գործերի վարումը:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 51, թ. 1:

² Հայերը փափագում էին, որ կառավարիչը նշանակվեր ուսական պետության կողմից: Կ. Պոլսի ուսական դեսպանատանը Հայոց պատրիարքի պատվիրակի հետ ունեցած գրույցի ընթացքում Մանդելշտամի այն հարցին, թե հայերը չէի՞ն ուզի, որ ընդհանուր կառավարիչը թուրք լիներ, նա պատասխանել էր. «Ո՛չ, զժբախտաբար, թուրք կառավարությունը և թուրք կառավարիչները երկիրը բարեկարգելու անկարող ըլլալնին հաստատած են դարեր է ի վեր, և մեր վիճակը նոր հուսախաբութիւններ կրելու չի կրնար հանդուրժել» («Էջմիածին», փետրվար-մարտ, ապրիլ, 1965, էջ 162):

² Տե՛ս Յան Վան դեր Դյուսեն, Հայկական օրագիրը (հետայսու՝ Վեստենենկի օրագիրը), էջ 23:



Թուրքահայաստանի վեց նահանգները¹

Նահանգի օրենսդրական իշխանությունը հանձնվում է ընտրովի նահանգային օրենսդրական ժողովին (խորհրդարան), որի կազմում մտնելու են հավասար թվով մահմեդականներ և քրիստոնյաներ: Խորհրդարանը պետք է կատարի օրենսդրական պարտականություններ տեղական նշանակություն ունեցող հարցերում: Այդ մարմնի միջոցով մշակված օրենքները պիտի հաստատվեն կամ մերժվեն սուլթանի կողմից: Ամեն մի սանձակում (գավառում) նույնպես նախատեսվում էր հաստատել վարչական խորհուրդներ՝ հավասարապես ընտրված քրիստոնյաներից ու մահմեդականներից:

Ստեղծվում է ժանդարմերիայի և ոստիկանության ծառայողական կադրերի նոր շրջանակ, ուր բարձր պաշտոնները

¹ Վերցված է Արտեմ Օհանջանյանի «Armenia 1915, Austro-Hungarian Diplomatic Reports Prove the Cenozide» (Vienna, 2011) գրքից:

հանձնվելու էին եվրոպացիներին, իսկ ստորին պաշտոնները վարելու էին քրիստոնյա և մուսուլման բնիկները՝ հավասար իրավունքներով և կես առ կես համամասնությամբ:

Նահանգում դատարանը ենթարկվում է արմատական բարենորոգման, ստեղծվում է արդարադատության և շրջիկ դատարանների ինստիտուտ:

Մահմանվում է կարգ, համաձայն որի՝ Հայաստանում գինա-կոչված բոլոր երիտասարդները, առանց ազգային տարբերության, պարտավոր են զինվորական ծառայություն կատարել իրենց ծննդավայրում և հարակից վայրերում:

Արձակվում են «համիդիե» գնդերը:

Մուսուլմաններին և քրիստոնյաներին տրվում են կառավարչության մեջ պաշտոններ ստանալու հավասար իրավունքներ:

Նահանգում թուրքերի հետ պաշտոնական է ճանաչվում նաև հայոց լեզուն: Այսպիսով, «կրոնի ազատություն, ինչպես և՛ արդարադատության, ժողովրդական կրթության, զինվորագրության, հողատիրության, երկրագործության և ֆինանսական տուրքերի տեսակետից ուսական նախագիծը հայ բնակչությանը տալիս էր լիակատար, լիուլի ապահովություն»¹, - գրում էր արտգործնախարար Մազոնովը:

Վերջապես, որ շատ կարևոր էր, ուսուց գիվանագիտությունը անհրաժեշտ էր համարում հանգամանորեն ճշտել այն եղանակները և միջոցները, որոնցով հնարավոր կլիներ սահմանել եվրոպական մշտական վերահսկողություն (կոնտրոլ) Հայաստանում նախատեսվող բարենորոգումների գործադրության վրա: Պետությունների հրահանգած վերահսկողությունը պիտի կատարվեր Կ. Պոլսի իրենց ղեսպանների և տեղական հյուպատոսների միջոցով:

Մանդելշտամի ծրագրի բովանդակությունը կարելի է այսպես համառոտագրել. Հայաստանում հաստատել ապահովություն ու արդարություն, առանց ազգի ու կրոնի խտրության

¹ С. Д. Сазонов, Воспоминания, Париж, 1927, стр. 171-172.

այնտեղ երաշխավորել բոլոր բնակիչների ֆիզիկական գոյությունը և նրանց գույքի ազատ տնօրինությունը իրավունքը*:

Թեև Մանդելշտամը նախատեսել էր կազմել այնպիսի նախագիծ, որ Բ. Դուռը չհրաժարվի դրա քննարկումից, բայց իրականում ստացվել էր մի փաստաթուղթ, որը փաստորեն ընդգրկում էր Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի մինչ այդ առաջարկած բոլոր կարևոր կետերը: Դա, ըստ էության, ինքնավար Հայաստանի ստեղծման ծրագիր էր, որով նա ստանում էր քաղաքական այնպիսի կարգավիճակ, ինչպիսին ուներ Լիբանանը**:

Նախորդ շուրջ երկու տասնամյակների ընթացքում Ռուսաստանը բացարձակապես հակառակ էր, որ Թուրքահայաստանին տրվի, թեկուզ ամենանեղ սահմաններում, ինքնավարության նման մի բան:

Արտգործնախարար, Հայտնի Հայաստաց Լորանով – Ռուստովսկուն է պատկանում Թուրքիայում Հայերի կոտորածների ժամանակ՝ 1895 թ., արտահայտած հետևյալ կարծիքը. «Ռուսաստանն ուրախ կլինի, եթե Թուրքական վարչությունը բարեփոխվի և սուլթանի քրիստոնյա Հպատակները կյանքի ու գույքի

* Ա. Մանդելշտամի հեղինակած ռուսական նախագծի ամբողջական տեքստը տե՛ս «Сборник дипломатических документов. Реформы в Армении», Пб., 1915, с. 61-68, «Оранжевая книга», № 2 - Дипломатическая переписка России, предшествовавшая войне с Турцией. Пб., 1914, с. 61-69, Լեօ, Հայոց հարցի վավերագրեր, Թիֆլիս, 1915, էջ 314-329:

** Օսմանյան կայսրության պրովինցիաներից մեկը՝ Լիբանանը, մեծ տերությունների ճնշման տակ 19-րդ դարի 60-ական թվականներին ստացել էր ինքնավարություն, որը երաշխավորված էր այդ նույն տերությունների պաշտպանություններով: Վերջիններիս կողմից հովանավորված կարգավիճակը փոխվել կարող էր միայն այն դեպքում, եթե տերությունները տային իրենց համաձայնությունը, որ երբեք չէին տա: Հաստատված կանոնակարգի համաձայն՝ Լիբանանի նահանգապետը պետք է լիներ քրիստոնյա: Տվյալ ժամանակաշրջանում Լիբանանի նահանգապետը Հայազգի Հովհաննես փաշա Գույումջյանն էր, որն այդ պաշտոնին նշանակվել էր պետությունների հավանություններով: Լիբանանի այդ դրությունն ստեղծվել էր մարոնիթների կոտորածից հետո: Այնուհետև Լիբանանում չէին եղել քրիստոնյաների զանգվածային նահատակություններ:

լավագույն ապահովություն ունենան, բայց նա հակառակ է, որ Ասիայում ստեղծվի այնպիսի մի երկիր, ուր հայերը բացարձակ արտոնություններ վայելեն: ... Ներկայումս Ռուսաստանի հայերը գրգռված դրություն մեջ են, ուստի տեղական ռուսական իշխանությունները ստիպված են խիստ միջոցներ ձեռք առնել, որպեսզի նրանք չկարողանան զենք ու փող ուղարկել սահմանից այն կողմ (Թուրքահայաստան: - Հ. Ս.) ... Ռուսաստանը չի կարող ընդունել, որ իր սահմանի վրա կազմվի մի նոր Բուլղարիա»¹:

Հիմա ժամանակները փոխված էին. Թուրքահայաստանը շատ անհրաժեշտ էր Պետերբուրգին*:

Ինչևիցե, այժմ Ռուսաստանի շահերը համընկնում էին հայերի շահերին, և վերջիններս պետք է օգտվեին դրանից: Մանդելշտամի նախագիծը նրանց սրտովն էր**:

Կ. Պոլսի ռուսաց դեսպան Գիրսը Ա. Մանդելշտամի նախածրագիրը ներկայացնում է Եոյակ համաձայնության պետությունների (Անտանտ)՝ Կ. Պոլսի դեսպանատների ներկայացուցիչներից կազմված նախապատրաստական հանձնախմբին, որի անդամներն էին Մեծ Բրիտանիայի դեսպանատան առաջին դրագոման Ֆիցմորիսը, Ֆրանսիայի դեսպանատան քարտուղար կոմս Սեն-Քանթենը, Ռուսաստանի դեսպանության առաջին

¹ «Մշակ», № 115, 26 սեպտեմբերի 1907 թ.:

* Նկատենք, որ ռուսական սևհարյուրակային մամուլի մի քանի օրգաններ հանդես եկան Մանդելշտամի նախածրագրի դեմ: Օրինակ՝ հակահայ տրամադրություններով համակված «Земщина» թերթում Ե. Սկուրուխին ստորագրություններով մի թունալից հոդված էր տպագրվել՝ «Հայաստանի ավտոնոմիան անթույլատրելի է» վերնագրով, ուր հեղինակը եզրակացնում էր, թե հայկական ինքնավարությունը խիստ վնասակար է Ռուսաստանի համար: Նշված հոդվածն արտատպել էր Թիֆլիսում հրատարակվող «Голос Кавказа» թերթը՝ իր 1913 թ. մայիսի 23-ի համարում:

** Արևելյան Անատոլիայի հայաբնակ նահանգներում անցկացվելիք մանդելշտամյան վերափոխումների և հարակից խնդիրների մասին տե՛ս Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթապ. 1, վավ. 11⁸⁷ (15 թերթ, ֆրանսերեն):

դրագոման Մանդելշտամը: Համատեղ քննելով նախագիծը՝ նրանք ընդունում են այն¹:

Գրան պետք է հաջորդեր վավերագրի քննությունը Համաձայնությունների՝ Կ. Պոլսի դեսպանների մակարդակով: Այդ նպատակով հունիսի 4 (17)-ին ի մի են հավաքվում Գիրսը, բրիտանական դեսպան Լոուիթերը և ֆրանսիական դեսպանությունից հավատարմատար Մ. Բոպպեն: Վերջին երկուսն ամբողջովին հավանություն են տալիս նախագծին՝ մտցնելով նրա մեջ մի քանի չնչին փոփոխություններ միայն:

Այսպիսով, հայկական հարցի լուծման հիմնական սկզբունքների շուրջ Եռյակ համաձայնությունների պետությունների միջև ստեղծվում է լիակատար համաձայնություն ու համերաշխություն միջոցով:

«Ամենամոտ ապագայում ես մտադիր եմ ծրագիրը ներկայացնել մեծ պետությունների դեսպանների խորհրդակցությանը»², - հունիսի 8-ին Գիրսը հեռագրում էր Սազոնովին:

Քանի որ Հայաստանի բարենորոգումների նախագիծն առայժմ քննարկվել ու ընդունվել էր միայն Եռյակ համաձայնությունների երկրների դիվանագետների կողմից, ուստի այն դեռևս իրավական փաստաթուղթ չէր: Այդ պատճառով հունիսի 17-ին ստեղծվում է մի հանձնախումբ, որի մեջ են մտնում բոլոր վեց տերությունների՝ Կ. Պոլսի դեսպանատների հետևյալ ներկայացուցիչները՝ Մեծ Բրիտանիայի դեսպանատան առաջին դրագոման Ֆիցմորիս, Ֆրանսիայի դեսպանատանից՝ քարտուղար դը Սեն-Քանթեն, Գերմանիայի դեսպանատանից՝ դրագոման դոկտ. Շեոնբերգ, Ռուսաստանի դեսպանատանից՝ ավագ դրագոման Մանդելշտամ, Ավստրո-Հունգարիայի դեսպանատանից՝ առևտրական գործերի տնօրեն Պանֆելի, Իտալիայի դեսպանատանից՝ երկրորդ դրագոման Ա. Շաուբեր: Հանձնախումբը, որն ստացել էր «Հայկական բարենորոգումների հանձնաժողով» անվանու-

¹ Տե՛ս Մատենադարան, Արչակ Ալպոյաճյանի արխիվ, թղթապ. 1, վավ. 11⁹¹ (3 թերթ, ֆրանս. մեքենագ.):

² «Բարենորոգումները Հայաստանում», էջ 37:

մը, պիտի կանոնավորապես նիստեր գումարեր, մանրամասն ուսումնասիրեր Հայաստանի բարենորոգումների նախկինում կազմված բոլոր ծրագրերը, ապա ձեռնարկեր ոուսական նախագծի քննարկումը: Հանձնախմբի անդամները աշխատելու էին դեսպանների անմիջական ղեկավարությամբ:

«Новое Время»-ն գրում էր, որ «Թուրքերը համոզված էին, թե դր. Շեոնբերգը ավելի հաշվենկատորեն ու հավատարմությամբ կպաշտպանի սուլթանի շահերը, քան բոլոր փաշաները միասին վերցրած: Նրանք վստահ էին, որ գերմանացի դիվանագետը հարկ եղած դեպքում կփորձի ի չիք դարձնել ոուսական կողմի բոլոր առաջարկները»³:

Նախքան Մանդելշտամի նախագծի քննարկմանը ձեռնամուխ լինելը ոչ միայն Հայկական բարենորոգումների հանձնաժողովի անդամներին ու բանակցող կողմերի կառավարություններին, այլև մամուլի օրգաններին և ընդհանրապես հասարակայնությանը մեծապես հետաքրքրում էր երկու առանցքային հարց. 1) Ո՞րն է Հայաստանը, որո՞նք են նրա սահմանները, 2) Որքա՞ն է հայերի թիվը Հայաստանում: Այդ երկու հարցերի պատասխանները բանակցությունների մասնակիցներին պիտի օգնեին կողմնորոշվելու որոշումներ ընդունելիս:

Առաջին հարցին պատասխանելը հեշտ էր այն առումով, որ Հայկական հարցի վերաբացման օրերին բոլորի համար մոտավորապես պարզ էր «Հայաստան» աշխարհագրական հասկացության տարածքային ընդգրկումը:

Կ. Պոլսի ոուսական դեսպանությունում աշխատած երկար տարիների ընթացքում Մանդելշտամը հավաքել էր Հայաստանի տարածքին և հայերի թվին վերաբերող վիճակագրական բազմաբնույթ ու մեծաքանակ տեղեկություններ: Նրա համար ամենից առաջ կարևոր էր պարզել, թե 1913 թվականին որ տարածքը կարող է համարվել իրական Հայաստան:

Դարեր շարունակ Ասիական Թուրքիան ազգագրական և աշխարհագրական տեսակետից բաժանված է եղել երեք գլխա-

³ «Новое время», № 13662, 24 марта 1914 г.

վոր մասերի՝ Անատոլիա, Հայաստան և Սիրիա-Միջագետք: Տարածաշրջանի հարավում Արաբիայի ընդարձակ տափաստաններն են՝ ծայրահեղ չոր կլիմայով, Բաղդադով, Մոսուլով, Բասրայով: Այս կողմերում Հայաստանն է իր քմայքոտ ու երփնեքանգ սարերով ու բարեբեր դաշտերով, ձորերով ու խորխորատներով: Այդ երկրում, որ օտարներն անվանել էին դրախտավայր, ապրել էր բազմաքանակ Հայ ժողովուրդը: Բայց այդ Հայաստանն այլևս չկար, այն մնացել էր անցյալում: Օսմանյան տիրակալության պայմաններում թուրքն ու քուրդը դարերի ընթացքում բզկտել էին նրա մարմինը, տեր դարձել Հայկական բարձրավանդակի ընդարձակ փեշերին՝ հայոց ապրելու տեղերը վերածելով կղզյակների: Հայաստան աշխարհի երբեմնի հսկայածավալ տարածքներում հիմա ապրում էին այլ ազգեր ու ցեղեր կամ թուրքացած ու քրդացած հարյուրհազարավոր հայեր, գուցե և միլիոններ: Այնուամենայնիվ, դեռ հոժ գանգվածներով հայեցի էին մնացել Հայկական բարձրավանդակի հյուսիսարևելյան մասի 5-6 նահանգները, որոնք թուրքերի կողմից պաշտոնապես ստացել էին «Արևելյան Անատոլիա» անվանումը, որն այդպես էլ չէր ընդունվել ոչ միայն Հայ, այլև օտար գիտական ու հասարակական շրջաններում:

Վերջապես, Հայաստանի հյուսիս-արևմուտքից սկսվում էին Պոնտոսի և Փոքր Ասիայի շրջանները:

Ավելի դժվար էր պարզել մյուս հսկան հարցը, որքա՞ն է թուրքերի կողմից Արևելյան Անատոլիա հորջորջված Հայ բնակչության թիվը: Դա Հայկական հարցի այն մասն էր, որ իր տարտամ և խճճված վիճակով ամենից ավելի էր կարոտ լուսաբանություն:

ՀԱՅԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Երբ Բեոլինի 1878 թ. կոնգրեսում քննվում էր Հայկական հարցը, դիվանագետներից շատերն այն միտքն էին արտահայտել, թե հայերը չունեն երկու կարևոր բան՝ ռազմական կորով, որպեսզի կարողանան պաշտպանել իրենց երկիրը, և հարաբե-

րական թվական մեծամասնություն, որպեսզի պաշտպանեն իրենց այն իրավունքները, որ խնդրում են:

Հայ գործիչները, Հայկական մամուլը ժամանակին վճռակալորեն ժխտում էին այդ անհիմն հավաստումները՝ առաջ բերելով բազմաթիվ անկողմնակալ հետազոտողների տեսակետները:

«Հորիզոնը» գրում էր, որ վերջին՝ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը ցույց էր տվել, որ ռազմական տեսակետից հայություն հեռավոր ժամանակների մարտական կորովը չի մարել: «Հետագա տարիները, - գրում էր «Հորիզոնը», - նոր ու բազմաթիվ ապացույցներ տվին, որ հայերի մասին այդ տարածած կարծիքը լիովին անհիմն է»¹: Հիրավի, հեղափոխական շարժումները, Սասունի և Զեյթունի ընդհարումները, հայ-թաթարական կռիվները Կովկասում, Իրանի ազատագրական շարժումներում հայերի քաջարի մասնակցությունը, Հայ զինվորների հերոսությունները Բալկանյան պատերազմում ակնհայտորեն ցույց էին տվել, որ նրանք ոչ միայն ունեն ռազմական հզոր կորով, այլև, եթե հարկ լինի, ընդունակ են հանդես բերելու զինվորական փայլուն կարողություններ: Բավական էր միայն թվարկել Անդրանիկի և Եփրեմի անունները:

Այժմ՝ 1913 թվականին, այլևս ոչ ոք չէր հավատում, թե հայության ռազմական կորովը մարած է: Հիմա թուրքական իշխանությունները և նրանց աջակիցները շեշտադրում էին, թե հայերը խիստ սակավաթիվ են Հայկական բարձրավանդակում: Առավել բազմամարդ Վանի նահանգում նրանք հայերի թիվը հաշվում էին ընդամենը 16%²:

Քանի որ Հայկական հարցի վերաբացման օրերից սկսած՝ հայերի թվի հարցը ձեռք էր բերել խիստ ծանրակշիռ նշանակություն, ուստի հայության բարեկամներն իրենց պարտականությունն էին համարում ճշտել իրական վիճակը, ճշգրիտ հետազոտություններով ցույց տալ, թե Հայկական բարձրավանդակում հայությունն ինչ թվական մեծություն է ներկայանում:

¹ «Հորիզոն», № 12, 17 հունվարի 1913 թ.:

² Տե՛ս նույն տեղը:

Հայկական մամուլը գտնում էր, թե ցանկալի է, անշուշտ, որ հայերի իրական թիվը ճշտվեր իր բովանդակ ծավալով, բայց եթե ժամանակի սղուծյան պատճառով անհնար է այդպիսի մի ընդգրկուն ծրագրի իրագործումը, ապա առայժմ թերևս բավական կլիներ հետազոտել Հայաստանի միայն մի, ասենք՝ վանի կամ Թիֆլիսի նահանգներից որևէ մեկը: Ոմանք գտնում էին, որ այն նույնիսկ հնարավոր է իրագործել 20-25 հոգու ուժերով մեկ ամսվա ընթացքում: Ստացված արդյունքը բաղադրելով շրջանավոր թվերի հետ՝ որոշակի կերևար այն մեծ տարբերությունը, որ կար հայություն փաստական և իշխանությունների կողմից շրջանավոր անիրական թվերի միջև:

«Հորիզոնը» գրում էր, որ գիտակցելով հայերի թվի նշանակությունը հայկական հարցի լուծման գործում՝ Երկրի գործիչները պարտավոր են առանց ուշացնելու «կազմակերպել այս կարևոր գործը գիտական հիմունքներով ու դրանով վերացնել մի շարք անհիմն ու չարամիտ թիրիմացություններ»¹:

Անշուշտ, այդ գործի նշանակությունը, անկախ իր գիտական արժեքից, սթափեցնող և ընկալելի կլիներ թե՛ օտար և թե՛ հայ հասարակական կարծիքի համար, քանզի ակնհայտ կդառնար, որ չնայած բոլոր արհավիրքներին, այնուամենայնիվ թուրքահայ ժողովրդի բացարձակ մեծամասնությունը ողջ է ու շարունակում է ապրել հազարամյակների իր հայրենիքում:

* * *

Նախկիններում օսմանյան կայսրության մեջ չկար ճշգրիտ վիճակագրություն: Թուրքական կառավարությունն ընդհանրապես ազոտ պատկերացում ուներ իր հպատակների ճշգրիտ թվի մասին, եղածն էլ անստույգ էր, քմահաճույքի արդյունք: Այդ էր պատճառը, որ թուրք «ուսումնասիրողները» բավարարվում էին մասնավոր անձանց կազմած «վիճակագրություններով»:

Թուրք կառավարությունը ոչ միայն խարդախում էր հայոց թիվը թղթի վրա, ոչ միայն նրանց տոկոսային հարաբերությունը

իջեցնում էր վարչական նոր բաժանումներով, այլև հալածանքներով, սպանություններով, իսլամացումով ստիպում էր գաղթել երկրից: Մյուս կողմից՝ զինվորական տուրքից նեղված հայերը շարունակում էին թաքցնել իրենց արու զավակներին՝ որպես անտանելի հարստահարումներից խուսափելու միջոց:

Ճշգրիտ տեղեկությունների բացակայությունը միշտ լայն դուռ էր բացում կամայական ենթադրությունների առջև: Դրանից դատ՝ թուրք կառավարությունը միշտ առաջնորդվում էր ոչ թե կայսրության ազգաբնակչության մի կարևոր մասը կազմող հայության իրավ թիվը ճշտելու մտահոգությամբ, այլ՝ որոշակի քաղաքական նկատառումներով: Անշուշտ, իրենց միշտ ձեռնտու է եղել պակաս ցույց տալ հայերի թիվը, որպեսզի կարողանան ըստ այդմ մերժել նրանց պահանջները: Իսկ հայերը, չունենալով համապատասխան հնարավորություններ, սովորաբար չէին գրադվում իրենց թվաքանակի հարցերով:

Ինչ վերաբերում է օտար հետազոտողներին, ապա նրանք հայերի մասին տեղեկություններ քաղելիս, առանձին բացառություններով, հենվում էին թուրքական միտումնավոր պաշտոնական տվյալների վրա: Իսկ առաջին պաշտոնական մարդահամարը Թուրքիայում կատարվել էր 1844 թվականին:

19-րդ դարի սկզբներից, թեև հազվադեպ, եվրոպայում հանդես եկան թուրք պաշտոնական ազդեցություններից անկախ հետազոտություններ, որոնցում տեղ էին գտնում թվական տեղեկություններ նաև հայերի ու նրանց անմիջական հարևանների մասին: Բացի այդ, Թուրքիայում ճանապարհորդած եվրոպացիները երկրի առանձին վիլայեթների և ամբողջությամբ վերցրած կայսրության բնակչության թվի վերաբերյալ թողել են գրառումներ, որոնք, սակայն, զերծ չեն թյուրիմացություններից ու կոպիտ սխալներից:

Ստորև ժամանակագրական կարգով ներկայացնում ենք այն հիմնական աղբյուրները, որոնցում տեղեկություններ կան թուրքահայության թվի մասին:

19-րդ դարի սկզբի գերմանացի նշանավոր վիճակագիր դոկտ. **Գ. Հասելը** 1822 թ. լույս ընծայած իր գրքում (“G. Hassel, Lehrbuch der Statistik der europäischen Staaten”, Waimar, 1822) թուր-

¹ «Հորիզոն», № 12, 17 հունվարի 1912 թ.:

քական կայսրությունն հայերի թիվը ներկայացրել էր 1.690.000¹:

Նոր ժամանակներում Օսմանյան կայսրության բնակչության հաշվարկի առաջին փորձը կատարել է ֆրանսիացի գրող ու ճանապարհորդ Մ. Ուբուչինինը, որն ամբողջ աշխարհի հայերի թիվը հաշվել է 4.000.000² տալով հետևյալ վիճակագրությունը.

Օսմանեան կայսրութիւն	2.400.000
Ռուսաստան	900.000
Պարսկաստան	600.000
Հնդկաստան և Ասիայի երկրները	40.000
Եվրոպայի երկրները	60.000

Ըստ Ուբուչինինի բերած տվյալների՝ Օսմանյան կայսրության 2,4 միլիոն հայերից 400 հազարն ապրում էր Կ. Պոլսում և Եվրոպական Թուրքիայում, իսկ 2 միլիոնը՝ Ասիական Թուրքիայում, որի մեջ այն ժամանակ մտնում էին նաև Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանները: Նշված 2,4 միլիոն հայերից Ուբուչինինը ավելի հանգամանորեն կանգ էր առել հայ կաթոլիկների վրա՝ նրանց թիվն ամբողջ Օսմանյան կայսրության մեջ հաշվելով 38-40 հազար, որից 17.000 Կ. Պոլսում, 9.000 Անգորայում, 4.000 էրզրումում, 2.500 Տրապիզոնում, 1.500 Արդվինում և 1000 Բրուսայում³:

Հետաքրքիր տեղեկություններ է պարունակում ավստրիացի վիճակագիր Ռոդենի գիրքը (*“Die Türkei und Griechenland in ihrer Entwicklungsfähigkeit”*, Frankfurt, 1856): Ըստ այդ աշխատության՝ կայսրության եվրոպական մասում հայերի թիվը կազմում էր 400.000, իսկ Ասիական Թուրքիայում՝ 2.000.000, այսինքն երկու անգամ շատ քրդերից³:

Կարլ Մարքսը և Ֆրիդրիխ Էնգելսը, խոսելով Թուրքիայի ազ-

¹ Տե՛ս *“Mesrop”* Հանդես (Բեռլին), № 1, Հուլիս, 1914, երկրորդ մաս, էջ 17-18 (Լիպարիտ Նազարյանի հոդվածը):

² Տե՛ս *«Արարատ»*, № 2, փետրվար, 1914, էջ 130:

³ Տե՛ս *“Mesrop”* Հանդես (Բեռլին), № 1, Հուլիս, 1914, երկրորդ մաս, էջ 20:

գությունների մասին, հայերի թիվը, առանց հայ կաթոլիկների, ցույց են տվել 2.400.000¹:

Առաքել Սարուխանը, հենվելով Հայոց ազգային սահմանադրության հիմնադրման առթիվ 1862 թվականին կատարված «ընդհանուր և դավանական ազգահամարի» վրա, հայ ժողովրդի թիվը Թուրքիայում ցույց է տվել երեք միլիոն: Տարբեր աղբյուրներից հայթայթած բազմաբնույթ տվյալների հիման վրա նա ներկայացրել էր կայսրության ընդհանուր տարածքի տարբեր մասերում հայերի թվի հետևյալ պատկերը.

Կ. Պոլիս ու Բալկաններ	400.000
Կիլիկիա և Արևմտյան Փոքր Ասիա	600.000
Փոքր Հայք (Սեբաստիա, Կեսարիա)	670.000
Մեծ Հայք (Թուրքական մաս)	1.330.000
ընդամենը՝	3.000.000 ²

Մոտավորապես նույն ժամանակ եվրոպացի **Էնգելհարդեն** իր «Թուրքիան և Թանզիմաթը» գրքում հայ կաթոլիկների թիվը հաշվում էր 150.000, իսկ հայ բողոքականներինը՝ 20.000³:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից առաջ հայերը Թուրքահայաստանում ներկայացնում էին շատ հոծ մի զանգված: *“Новое Время”* թերթը գրում էր, որ «Գոթայի ալմանախի» տվյալներով՝ այդ ժամանակ Թուրքիայում կար չորս միլիոն հայ: Հայ ազգաբնակչությունը հատկապես գերակշռում էր էրզրումի նահանգում⁴:

Արդեն 1880 թ. **Թուրքական կառավարությունը** հրապարակեց մի վիճակագրություն, որ «հաստատում էր», թե հայերը մի աննշան փոքրամասնություն են կազմում ինչպես Հայաստա-

¹ Տե՛ս *К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 10, էջ 171:*

² Տե՛ս Մատենադարան, կաթողիկոսական դիվան, ցուցակ 20, թիվապ. 237, վավ. 2, թ. 1-2:

³ Տե՛ս *«Նոր Հոսանք»* (Թիֆլիս), № 3, մայիս, 1913, էջ 625:

⁴ *“Новое Время”* թերթի հոդվածի թարգմանությունը տե՛ս *«Մշակ»*, № 209, 22 սեպտեմբերի 1913 թ.:

նում, այնպես էլ Կիլիկիայում: Ըստ այդ վիճակագրություն՝ Հալեպի, Ադանայի, Տրապիզոնի, Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Տիգրանակերտի, Մամուրէթ-յուլ-Ազիզի և Սեբաստիայի ինը նահանգներում ապրում էր ընդամենը 4.629.375 մարդ, որոնք բաժանվում էին այսպես.

Մահմեդականներ	3.619.625
Հայեր	721.750
Ուրիշ քրիստոնյաներ	288.000:

Այ. Մյասնիկյանը գրել է. «Վիճակագրությունը լավ բան է, բայց ավելի լավ է վիճակագրական լարախաղացությունը: Թուրքական կառավարությունը միշտ էլ կարող է, ինչպես նա այդ արել է արդեն, վիլայեթները այնպիսի սահմանների մեջ դնել կամ վիճակագրությունը այնպիսի ուղղություն տալ, որ ամեն տեղ քրիստոնյաները փոքրամասնություն կկազմեն»¹:

Այս խեղաթյուրված «վիճակագրությունները» հիմք հանդիսացան եվրոպական հետազոտողների համար, որոնք լայն շրջանառություն մեջ դրեցին աղավաղված թվերը:

Մինչդեռ նշված 9 նահանգներում 1880 թ. հայերի թիվն իրականում առնվազը կրկնակի ավելի էր:

1892 թ. լույս է տեսնում Փրանսիացի Վիտալ Կինեի՝ Թուրքական պաշտոնական աղբյուրների վրա հիմնված քառահատոր վիճակագրությունը՝ «*La Turquie d'Asie par Vital Cuinet, Paris*», ըստ որի՝ հայերի թիվն էր (հազարներով).

Լուսավորչականներ	995.479
Կաթոլիկներ	89.746
Բողոքականներ	95.841

Ընդհանուր գումարը՝ 1.181.066:

Բուլղար ընկերաբան դոկտ. Ն. Միխովը, որը 19-րդ դարի

¹ Ալեքսանդր Մյասնիկյան, Երկեր հինգ հատորով, հատոր 1, «Հայաստան» հրատ., Երևան, 1984, էջ 245:

վերջից ձեռնարկել էր Օսմանյան կայսրության բնակչության թվի մատենագիտական-վիճակագրական խոր հետազոտությունն ու վերլուծությունը, իր ուսումնասիրություններում Թուրքիայի եվրոպական մասի բնակչության պատկերը այսպես էր ներկայացնում.

առնաուտ	1,500,000
բուլղար	4,000,000
հայ	400,000 (հաշված նաև Պոլիսը) ¹ :

Հարկ է նաև նկատի առնել, որ այդ ժամանակ օսմանյան պետություն մեջ տիրող սոցիալ-տնտեսական հարաբերությունների պայմաններում մինչև 1894-1896 թվականները հայերի զանգվածային կոտորած և կրոնադարձություն չեն եղել, որովհետև, ինչպես նկատել է խորհրդային թուրքագետ ակադեմիկոս Գորդլևսկին, թուրքերը ձեռնպահ էին մնում մասսայաբար իսլամ ընդունել տալու քաղաքականությունից, քանի որ դա նյութական վնաս էր հասցնում պետական զանձարանին. կրոնափոխներն արդեն ազատվում էին քրիստոնյաներից գանձվող խարաջից և ջիզյեից՝ վճարելով միայն համեմատաբար թեթև աշարը²...

Վիճակն արմատապես փոխվեց 19-րդ դարի երկրորդ կեսին, երբ Թուրքիայում սկսվեցին հայերի զանգվածային կոտորածներ, որի հետևանքով նրանց թիվը կրճատվեց մինչ այդ շտեմնված արագությամբ:

Լայնածավալ աղետը վրա հասավ 1894-1896 թթ. հայկական մեծ կոտորածներից (եղեռն) հետո, կոտորածներ, որոնք խլեցին ավելի քան 300.000 հայերի կյանք: Այդ արյունալի հաշվեհարդարը մեծ աղմուկ ու վրդովմունք էր առաջ բերել քաղաքակիրթ աշխարհում: Եվրոպան ուժեղացրել էր ճնշումը Թուրքիայի վրա: Այս հանգամանքը չէր կարող չանհանգստացնել Կ. Պոլսի իշխանություններին: Նման պայմաններում սուլթան Աբդուլ Համիդը

¹ Տե՛ս «Mesrop», № 1, հուլիս, 1914, երկրորդ մաս, էջ 19:
² В. А. Гордлевский, Собрание избранных сочинений, т. 3, стр. 41.

և Բ. Դուռը տենդայնորեն միջոցներ էին փնտրում արդարացնելու իրենց գործողությունները: Դրանցից մեկն էր Եվրոպային ցույց տալ, թե հայությունն այնպիսի չնչին թիվ է կազմում կայսրության ասիական նահանգներում, որ, հետևապես, Թուրքիայի դեմ նրա թշնամական գործողությունները որևէ հիմք ու հեռանկար չունեն: Եվ սկսվեց Թուրքահայության մեծ քայքայումը: Ելնելով բնակչության նվազագույն աճի հաշվարկումներից՝ 50 տարվա ընթացքում (1862-1912 թթ.) հայերի թիվը Թուրքիայում պետք է լիներ առնվազն 6-7 միլիոն: Բայց այդ ժամանակաշրջանում նրանց թիվը գահավեժ անկում էր ապրել:

1912 թ.՝ Հայկական հարցի վերաբացմանը նախորդած 30 տարիներին, հատկապես 1894-1896 թթ. հայկական լայնածավալ ջարդերի, 1909 թ. Կիլիկիայի կոտորածների և այլևայլ արհավիրքների հետևանքով բուն Հայաստանի հայերի թիվը կրճատվել էր 900.000-ով: 1894-1896 թթ. հայերի զանգվածային կոտորածներից հետո Թուրքական կառավարությունը մեծ եռանդով ձեռնամուխ էր եղել հայկական նահանգների ազգագրական պատկերի արագ փոխելուն, որպեսզի Հայաստանի հայերը ամենուր փոքրամասնություն կազմեն:

Ձնայած հայ ժողովրդի գլխին եկած բազում արյունալի դժբախտություններին, այնուամենայնիվ հայերը կայսրության մեջ իրականում չարունակում էին պատկառելի թիվ կազմել:

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի կողմից անցկացված մարդահամարը ցույց էր տվել, որ կայսրության մեջ հայերի թիվը 1912 թ. պակաս էր 2.160.000-ից: Հակառակ պատրիարքարանի ներկայացրած թվերի՝ Թուրքական կառավարությունը 1913 թվականի պառլամենտական ընտրությունների նախընտրական շրջանում ողջ կայսրության մեջ հայերի ընդհանուր թիվը ներկայացրել էր ընդամենը 1.100.000¹:

Գրիգոր Զոհրապի «Հայկական հարցը փաստաթուղթերուն լույսին տակ» աշխատության մեջ տեղ գտած վիճակագրության համաձայն՝ 1913 թ. Օսմանյան կայսրությունում կար 2 միլիոն

100 հազար հայ, նրանցից 1 միլիոն 18 հազարը բնակվում էր հայկական 6 նահանգներում, 408 հազարը՝ Կիլիկիայում, իսկ մնացյալները ցրված էին կայսրության զանազան մասերում: Ըստ որում՝ հայկական 6 նահանգների ամբողջ բնակչության 100-ից 40-ը հայեր էին, 25-ը՝ թուրքեր, 15-ը՝ քրդեր, մնացածը փոքր համամասնություններով զանազան ցեղերից էին:

Բարկանյան առաջին և երկրորդ պատերազմների միջև ընկած շրջանում տպագրված Փրանսիացի հետազոտող Լյուդվիգ դե Կոնտանսոնի «Բարենորոգումները Թուրքիայում. Հայկական հարցը» աշխատության մեջ հայերի թիվն ամբողջ աշխարհում ներկայացնում էր հետևյալ թվերով.

Ասիական Թուրքիայում	1.150.000
Եվրոպական Թուրքիայում	250.000
Ռուսաստանում	1.500.000
Պարսկաստանում	150.000
Եգիպտոսում, ԱՄՆ-ում և այլ երկրներում	50.000
Ընդամենը	3.100.000¹:

Ավելին, անդրադառնալով Թուրքիայում 1913 թ. հայերի թվի հարցին, «Новое Время» թերթը գրում էր, որ այդ ողջ երկրում հայերը «այժմ հազիվ հաշվվում են» 3 միլիոն, որից 200 հազարը Կ. Պոլսում և Թուրքական Թրակիայում, 800.000-ը՝ ասիական զանազան վիլայեթներում, և մոտ 2 միլիոնը՝ Հին Հայաստանում՝ Էրզրում, Նարբերդ, Բիթլիս, Վան և Դիարբեքի վիլայեթներում²:

Պրոֆ. Ազատ Համբարյանը հաշվել է, որ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին արևմտահայերի թիվը պետք է կազմեր մոտ 3 միլիոն 883.7 հազար մարդ: Բայց 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո՝ մինչև Առաջին

¹ Տե՛ս Լյուդվիգ դե Կոնտանսոն, *Реформы въ Азиатской Турции. Армянскій вопросъ*, Москва, 1914, էջ 15:

² «Новое Время» թերթի սույն հոդվածի թարգմանությունը տե՛ս «Մշակ», № 209, 22 սեպտեմբերի 1913 թ.:

¹ «Արարատ», № 1, հունվար, 1914, էջ 50:

համաշխարհային պատերազմը, կայսրություն մեջ կոտորվել, արտաքսվել և ձուլվել է մոտ մեկ միլիոն հայ: Իսկ եթե հաշվենք նաև սպասվելիք բնական աճը, ապա այդ թիվը բարձրանում է 1.300.000-ի: Այս երկու հիմնական տվյալներից ելնելով՝ հեղինակը գտնում էր, որ Թուրքիայում 1914 թ. սկզբին հայերի թիվը եղել է 2.583.007 մարդ¹:

Ինչպես վերը նշվեց, 1913 թ. թուրքական կառավարությունը կայսրության հայերի թիվը ցույց էր տվել 1.000.000, որից, իբր, միայն 600.000-ն էր ապրում Հայաստանում²: Սովորաբար Հայաստանում հայերի թվին անդրադառնալիս թուրքական կողմը այն համեմատում էր թուրքերի ու քրդերի ընդհանուր թվի հետ՝ նկատի առնելով, որ նրանք երկուսն էլ պատկանում են մահմեդական կրոնին:

1913 թ. նոյեմբերի 17-ին Փարիզում գումարված Հայասերների երկրորդ կոնֆերանսում ունեցած զեկուցման մեջ Պոզոս Նուբար փաշան Հայաստանի վիլայեթների ազգաբնակչության վերաբերյալ ներկայացրել էր հետևյալ պատկերը.

Հայեր	1.018.000
Տաճիկներ	666.000
Քրդեր (վաչկատուն և նստակեաց)	424.000
Այլ և այլ մուսուլմաններ	88.000
Ջանազան դավանանքների պատկանողներ	254.000
Նեստորականներ և հույներ	165.000
Գումար	2.615.000

Այս թվերը ցույց են տալիս, ասում էր Պոզոս Նուբարը, որ Հայկական վիլայեթներում մոտավորապես երկուսուկես միլիոնից մեկ միլիոնից ավելին հայեր են, այնինչ տաճիկները չեն հասնում նույնիսկ 700.000-ի, իսկ քրդերը, որոնց մեջ և վաչկատունները, միայն 424.000 են: Ուրեմն, հայերի թիվը առանձին

¹ Տե՛ս «Բանբեր Երևանի Համալսարանի», № 2, 1969, էջ 110-111:

² Տե՛ս «Արարատ», № 1, հունվար, 1914, էջ 50:

վերցրած ավելի շատ է, քան տաճիկներն ու քրդերը միասին¹: Ահա թե ինչու «չի կրնար ընդունուիլ որ փոքրամասնություն մը կառուարի մեծամասնություն մը»², - չեչտում էր նա:

Անկողմնակալ բոլոր աղբյուրները նշում են, որ Հայկական Հարցի վերաբացման ժամանակ Հայաստանում հայերը, այնուամենայնիվ, հարաբերական մեծամասնություն էին կազմում: Մաղաքիա Օրմանյանը «Հայոց եկեղեցին» գրքում հայերի թիվը կայսրության մեջ հաշվում էր 1.892.500 (լուսավորչականներ՝ 1766.000, կաթոլիկներ՝ 85.000, ավետարանականներ՝ 41.500)³: Լեպսիուսը հայերի թիվը Թուրքիայում նշում էր 1.800.000⁴:

Օսմանյան կայսրությունում տարբեր ժամանակներում հայերի թվի վերաբերյալ վիճակագրական բազմաբնույթ տեղեկություններ են հաղորդել նաև ուրիշ հետազոտողներ:

1913 թ. երկրորդ կեսին բարենորոգումների առնչությամբ տեղությունների դիվանագիտական ծառայություններին միանգամայն հասկանալի պատճառով ոչ այնքան հետաքրքրում էր օսմանյան կայսրության մեջ հայերի թվաքանակն ընդհանրապես, որքան նրանց թիվը Հայաստանի վեց նահանգներում:

Մարդկությունը թեևակոխել էր 20-րդ դար, բայց Թուրքիայում շարունակվում էին հայերի անլուր հալածանքները, որի հետևանքով ամեն տարի տասնյակ հազարներ լքում էին բուն Հայաստանը: 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի առաջին տասնամյակում այնտեղից միայն Ռուսաստան էր անցել ու այնտեղ բնակություն հաստատել շուրջ կես միլիոն հայ:

Այդ նպատակին հասնելու համար իշխանությունները դիմել էին երկու արմատական միջոցի: Առաջին՝ վարչականորեն վերաձևեցին և վերակազմեցին Հայաստանի տարածքը՝ դրան կցելով բացառապես մահմեդականներով բնակեցված շրջաններ, որի հետևանքով ստեղծվեցին վարչական նոր միավորներ՝ կազ-

¹ Տե՛ս «Արարատ», № 1, հունվար, 1914, էջ 50:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 41, թ. 2:

³ Տե՛ս «Նոր Հոսանք», № 3, մայիս, 1913, էջ 625:

⁴ Տե՛ս "Der Christliche Orient" Հանդէսի № 3-4, 1913 թ.:

մելով Բիթլիսի, Վանի, Դիարբեքի, Մամուրեթ-ուլ-Ազիզի նահանգները: Դրա արդյունքում նորաստեղծ նահանգներում մահ-մեղականների համեմատ կտրուկ իջավ հայերի թվի տոկոսային հարաբերակցությունը: Երկրորդ, զուգահեռաբար միջոցներ ձեռնարկվեցին բուն Հայաստանում հայությունը բացարձակ թվաքանակը նրանց բուն երկրում կրճատելու համար: Հայաստանում ամրանալու և բազմանալու համար թուրքերի, քրդերի ու գաղթական չերքեզների համար ստեղծված էին բացառիկ արտոնյալ պայմաններ, իսկ հայերը ենթակա էին լայնածավալ հալածանքների և անհատական ու խմբային սպանությունների: Եթե Հայաստանի տարածքների վերաձևումն ու վերակազմավորումը ավարտվել էր դեռ մինչև 1908 թ. օսմանյան հեղափոխությունը, ապա Հայաստանում հայերի թվի կրճատումը շարունակվում էր Իթիբհազի իշխանություն օրոք:

Ոչ միայն Թուրքիան, այլև բազմաթիվ եվրոպական և ուսական պաշտոնյաներ, հայտնի քաղաքագետներ ու դիվանագետներ, մամուլի տարբեր ուղղությունների օրգաններ Հայաստանի բարենորոգումների անհրաժեշտությունը մասին արտահայտվում էին խիստ հոռետեսորեն¹:

Այսպես, հայկական հարցին քաջածանոթ ոուս բարձր պաշտոնյաներից մեկը հայ մի խմբագրի հետ ունեցած զրույցի ընթացքում ասել էր. «Բնաւ հիմք, որեւէ իրական հող չկա Հայաստանի ինքնավարութիւնը երազելու, եւ այդ անոր համար, որ վեց վիլայէթներու սահմանին մէջ բաւարար չափով հայ չկայ ինքնավարութիւն մը ստեղծելու համար: Հոն հայերը մեծամասնութիւն չեն կազմեր, ուստի եւ ամենալայն ինքնավարութիւնն անգամ հնարաւորութիւն չպիտի տայ հայերուն ինքզինքնին կառավարելու եւ պիտի ենթարկէ զանոնք ընտրութեան ատեն թուական առաւելութիւն ներկայացնող բնակչութեան»¹:

Արդյո՞ք Հայաստանում հայերի՝ որպես էթնիկական ամբողջության թիվը բավարար է, որ բարենորոգումների շնորհիվ նրանք կարողանան պահպանել ու զարգացնել իրենց ազգային

ինքնությունը, դառնան տնտեսական ու քաղաքական կայուն միավոր, այս առանցքային հարցը մեծապես հետաքրքրում էր նաև Կ. Պոլսի դեսպանախորհրդին, Հայոց պատրիարքարանին, հայ կուսակցություններին և ընդհանրապես ողջ հայությունը:

Հարցի պատասխանը թուրքերի ու գերմանացիների համար միանշանակ բացասական էր:

Հայաստանի բարենորոգումների հանձնաժողովի նիստերը դեռ չէին սկսվել, երբ Բ. Դուռը և գերմանական բլոկի դիվանագետները բազմաբնույթ «հիմնավորումներով» հակադրվում էին Մանդելշտամի կազմած նախագծի տվյալներին: Նրանց ջանքերը՝ բազմաբնույթ դրսևորումներով, անշուշտ, արդյունք էին տալիս: Օրինակ՝ գնալով շատերի մոտ ձևավորվում էր այն համոզումը, որ Հայաստանում կատարվելիք բարենորոգումների արդյունքում պետական կառավարման գործում քրիստոնյա հայերը այնտեղի մահմեդականների հետ չեն կարող ձեռք բերել հավասար իրավունքներ, քանի որ իրենց թվաքանակով դիջում են նրանց: Շեշտադրելով այդ «իրողությունը»՝ թուրք և գերմանացի դիվանագետները տարբեր հանդիպումների ժամանակ և մամուլի էջերում պնդում էին, որ այդ հանգամանքը բոլորովին անիմաստ է դարձնում հայերի հարցով հատուկ զբաղվելը, մանավանդ եթե հաշվի է առնվում Հայաստանում ապրող այլազգի հոծ գանգվածների կյանքի բարելավման անհերքելի անհրաժեշտությունը: Այլ խոսքով՝ հայոց դրությունը բարվոքումը պայմանավորված է Թուրքիայի ընդհանուր բարենորոգմամբ:

Ինչպես նշվել է վերը, Կ. Պոլսի ուսական դեսպանությունը առաջին դրագոմանը մինչ այդ տևական ժամանակ զբաղվել էր հայերի թվի և նրանց զբաղեցրած տարածքի հետ կապված հարցերով: Ուստի Հայաստանի հայերի թվի մասին հայոց պատրիարքարանի կողմից ոուսաց դեսպանությունը տրամադրած տեղեկությունները նրան չէին գոհացրել՝ առաջացնելով երկմտանք: Նա մտածում էր, թե արդյո՞ք դրանք չեն ուռճացվել, և արդյո՞ք միաժամանակ շատ չի ընդլայնել հայկական սահ-

¹ Տե՛ս «Նոր հոսանք», № 3, մայիս, 1913, էջ 3:

¹ «Ժամանակ», № 1425, 12 (25) ապրիլի 1913 թ.:

մանը՝ ընդգրկելով նաև Սիվասը (Սեբաստիան): Պատրիարքարանն ամեն անգամ նրան հանգստացրել էր՝ չեչտելով, որ իր ներկայացրած թվերը միանգամայն հուսալի են, իսկ Թուրքիայում ապրող ժողովուրդների, առանձնապես հայերի մասին բոլոր պաշտոնական և նույնիսկ ոչ պաշտոնական վիճակագրական տվյալները արժանի չեն վստահություն, քանի որ Թուրքական իշխանությունների համար գիտական վիճակագրությունը բառիս բուն իմաստով դեռևս խորթ էր:

Ստեղծված այդ աննպաստ մթնոլորտում ուսական դիվանագիտությունը՝ հանձին Կ. Պոլսի նրա դեսպանություն, ստիպված էր կրկին ու կրկին անդրադառնալ Հայաստանի հայ բնակչության մասին հրապարակի վրա եղած վիճակագրական տվյալներին: Կոնկրետ այդ գործին ձեռնարկեց Անդրե Մանդելշտամը:

Չնայած պատրիարքի հավաստիացումներին՝ Կ. Պոլսի ուսաց դեսպանությունն, այնուամենայնիվ, նրան խնդրել էր իր թեմերի հնարավորությունների սահմաններում, ինչպես նաև ուսահայ իրավասու մարմինների ներգրավմամբ կրկին ստուգել Հայաստանի վեց վիլայեթների հայություն թիվը: Դեսպանությունը, հավանաբար, կարծիք էր հայտնել, որ այդ տեսակետից շատ օգտակար կլինեն նաև Պետերբուրգի հայկական խմբակի (ՊՀԽ) մասնակցությունը գործին:

Այդ հարցի կարևորության մասին ուսաց դեսպանությունը հաղորդել էր նաև Պետերբուրգ՝ արտգործնախարարությունը: Այդ է վկայում վերջինիս այն հետաքրքրությունը, որ ցուցաբերում էր Թուրքահայաստանում մարդահամար անցկացնելու ուղղությամբ Խմբակի նախապատրաստական աշխատանքների նկատմամբ:

1913 թ. մայիսի վերջին իր 12-րդ մասնավոր նիստում Պետերբուրգի հայկական խմբակը կազմել էր երեք հոգուց բաղկացած մի հանձնախումբ՝ իր անդամներից մեկի՝ վիճակագրության հայտնի մասնագետ, ներքին գործերի նախարարության վիճակագրական հանդեսի ավագ խմբագիր Ս. Կ. Պատկանովի ղեկավարությամբ: Մյուս երկու անդամներն էին Ս. Տիգրանյանը և Ն. Ադոնցը: Հանձնախումբը պետք է հանգամանորեն ուսումնասիրեր խնդիրը և պարզել, թե որքան ֆինանսական միջոցներ

են անհրաժեշտ մարդահամարն անցկացնելու համար¹: Նա իր աշխատանքներում պետք է ընդգրկեր մայրաքաղաքի գիտական հիմնարկներում և ուսումնական հաստատություններում աշխատող հայ վիճակագիրներ ու տնտեսագետներ: Վերջիններից Հայաստան պետք է մեկնեին անձինք, որոնք տեղերում կարողանային բացատրել, թե ինչպես կատարել մարդկանց հաշվառումը, նրանց թվի ճշտումը: Նպատակահարմար համարվեց Պետերբուրգում տպագրել տալ հարցաթերթիկներ և դրանք ուղարկել Հայաստանում մարդահամար անցկացնողներին:

Խմբակի հունիսի 1-ին տեղի ունեցած նիստը լսեց Ս. Պատկանովի ղեկուցումը հանձնախմբի կատարած նախապատրաստական աշխատանքների մասին: Այնուհետև ղեկուցողը ներկայացրեց Թուրքահայաստանում մարդահամար անցկացնելու մասին իր նկատառումները՝ հատկապես ծանրանալով տեխնիկական խնդիրների վրա²:

Պատկանովը գտնում էր, որ Ռուսաստանի ազգությունը հայ վիճակագիրներից և հարակից մասնագետներից կազմած հանձնախումբը, որը ուսական իշխանությունների աջակցությամբ մեկնելու է Թուրքահայաստան, մեկ ամսվա ընթացքում պետք է ուսումնասիրի հայերով բնակեցված մի քանի տարածք: Այս կերպ հնարավոր կլինի պարզել այնտեղ բնակվող ազգայնկրոնական խմբերի համամասնությունը: Պատկանովը գտնում էր, որ ուսումնասիրությունները պետք է կատարվեն ըստ ծխերի՝ հաշվառելով տվյալ գյուղի ամբողջ բնակչությունը: Ըստ ծխերի մարդահամար անցկացնելիս նստակյաց բնակչությունը (հայերը) պետք է իր մասին առավել մանրամասն հաղորդի ժողովրդագրական փաստեր (ընտանիքի կազմի, սեռի, տարիքի, այդ թվում՝ կիսաաշխատող ծերերի, զառամյալ ծերերի, ընդհանրապես 60-ից ավելի տարիք ունեցողների, ֆիզիկական արատներ ունեցող անաշխատունակների կամ հաշմանդամների

¹ ПЗПАК, том I, с. 250-252.

² Նույն տեղում, с. 261-265.

մասին) ու տնտեսական (հողի չափի, բերքի, գերակշռող մշակաբույսերի, անասնապահության և այլնի մասին) տվյալներ: Բացակայող նստակյաց բնակիչների փոխարեն տեղեկություններ կարելի է ստանալ ազգականներից ու հարևաններից, իսկ նորեկ ու քոչվոր բնակիչների մասին բավական է տեղեկանալ նրանց ընտանիքի մեկ-երկու անդամից: Մասնագետների մասին մտատավոր տվյալներ կարող են հայտնել նաև նրանց հարևան հայերը:

Ս. Պատկանովը կարծում էր, որ բացի ծխական մարդահամարից՝ անհրաժեշտ է կազմել նաև առանձին բնակավայրերի տնտեսական վիճակի նկարագիրը, որով կարելի է պատկերացում կազմել բնակչության նյութական, հոգևոր, բարոյական և ֆիզիկական վիճակի մասին: Նման նկարագրությունների համար տեղեկությունները պետք է հավաքվեն տվյալ բնակավայրի հինգ-վեց առավել բանիմաց և հարգված անձանց հետ զրույցների ժամանակ, ինչպես և կարելի է տեղեկություններ ստանալ հոգևորականներից, ուսուցիչներից, նաև կրթված ու ճշմարտախոս անձանցից:

Պետերբուրգի հայկական խմբակն ի վերջո կազմել էր Թուրքահայաստան մեկնող հանձնախումբ: Արդյո՞ք այն եղել էր Երկրում և կատարել սահմանափակ մարդահամար, այդ մասին մենք լրացուցիչ տեղեկություն չունենք, մասնավանդ որ ձեռնարկի մասին հիշատակություն չկա ոչ խմբակի հետագա նիստերի արձանագրություններում և ոչ էլ Անդրե Մանդելշտամի հուշագրություններում*:

Այնուամենայնիվ, Մանդելշտամը ստիպված էր նորից գործադրել Թուրքահայաստանում հայերի թվաքանակի կարևորագույն հարցն իր համար վերջնականապես համոզմունք դարձնելուն ուղղված մեծ ջանքեր: Հիմա Հայաստանի բարենորոգում-

* Միայն մի աղբյուրից իմանում ենք, որ 1913 թ. սեպտեմբերին ՊՉՆ-ն Կոստանդնուպոլիս էր փոխանցել 1000 ուրլի՝ Հայաստանի և Թուրքիայի հայերի մասին վիճակագրական նյութեր հավաքելու նպատակով (տե՛ս ПЗПАК, том I, էջ 293), որի պատասխանատվությունը դրված էր Վ. Փափազյանի վրա:

ների խնդրի տարբեր մակարդակներում տեղի ունեցող քննարկումների ժամանակ նա լայնորեն օգտագործում էր ձեռքի տակ եղած նյութերը և հետևողականորեն պաշտպանում այն եզրակացությունները, որոնց նա հանգել էր, այն է՝ հայերը Հայաստանում շարունակում են հարաբերական մեծամասնություն կազմել բնակչության ընդհանուր թվաքանակում, որքան էլ նրանց հալածել են, կոտորել կամ արտաքսել երկրից: Դիվանագետի հուշերում հիշատակություն չկա այդ մասին, բայց հետագա ամիսներին տեղի ունեցած քննարկումների ժամանակ նրա ելույթների դիտարկումը դա է վկայում:

Դեսպանախորհրդին հետաքրքրող մյուս կարևոր խնդիրը, հայոց թվական մեծությունից բացի, այն էր, թե բարենորոգումներ իրականացնելուց հետո հայերն արդյոք ունակ կլինե՞ն պահել, զարգացնել ու պաշտպանել այն: Սա արդեն ոչ թե քանակի, այլ որակի խնդիր էր: Հատկապես ռուսական դիվանագիտությանն էր հետաքրքրում թուրքահայերի կուլտուրական զարգացման աստիճանը: Պետք էր ապացուցել, ուրեմն, որ հայերը ոչ միայն բավական մեծ թիվ են կազմում Հայաստանում, այլև այնտեղ միակ ընդունակ տարրն են, որի վրա կարող են հենվել նոր կարգերը: Նրանք կլինեն այդ նոր կարգերի անձնավեր ու քաջարի պաշտպանները: Այո՛, հայերը ոչ միայն թիվ էին, այլև որակ:

Հայկական և ռուսական մամուլի օրգանները իրավացիորեն գրում էին, որ այնպիսի մի խնդրում, ինչպիսին հայոց հարցն է, ժողովրդի թիվը, անշուշտ, մեծ նշանակություն ունի, բայց դա միակ հանգամանքը չէ, որ որոշիչ լինի այդ հարցը լուծելիս: Ոչ պակաս կարևորություն ունեն նաև ազգաբնակչության բնատուր ընդունակությունները և քաղաքակրթական աստիճանը: Երևանում լույս տեսնող «Ոսոք» թերթը գրում էր, թե Հայաստանի նահանգներում հայերը «տնտեսական, մտավոր և աշխատանքի ընդունակություններով ամենէն կարևոր ազգությունն են, միակ քաղաքակիրթ տարրը»¹: Հետազոտողներից շատերը

¹ «Ոսոք» (Երևան), № 10, 8 մարտի 1914 թ.:

նույնպես գտնում էին, որ խնդիրը բոլորովին էլ այն չէ, որ հայերն արդեն բացարձակ մեծամասնություն չեն Հայաստանի բազմազգ բնակչության թվում: Եթե նույնիսկ օտար ազգերը հայերին իրենց հայրենիքում դարձրել են փոքրամասնություն, բայց չպետք է մոռանալ, որ նրանք ունեն անվիճելի գերազանցություն՝ տնտեսական և մտավոր մեծ ուժ: Հայերը համալամբված զանգված են՝ բառիս եվրոպական իմաստով ազգությունը բնութագրող բոլոր տվյալներով:

Մի առիթով Նուբար փաշան շեշտել էր. «Հարկ չեմ համարում ձեզ ասելու, որ կարևորությունը հարկաւ չի չափում լոկ ազգաբնակչության թվում եւ որ վաճառականությունը, արդիւնագործությունը եւ մտաւորական մշակոյթը պէտք է հաշուի առնել: Այդ պայմաններում հայերը ներկայացնում են ոչ թէ 50% կամ 60%, այլ 80%-ից ավելի»¹:

1911 թ. աշնանից մինչև 1912 թ. աշունը Կոստանդնուպոլսում գտնված ռուս արևելագետ Արիանդա Տրրկովան, որը հանգամանորեն ծանոթացել էր նաև տեղի հայություն կյանքին, իր «Հին Թուրքիան և երիտթուրքերը» գրքում տվել էր թուրքահայերին բնորոշող մի շարք բնութագրություններ: Նա գրում էր.

«Բոլոր ազգային խմբերից, որոնք ապրում են օսմանյան կայսրությունում, հայերը, ակնհայտորեն, քաղաքական խելամտության մեծ բաժնի և ընդհարապես քաղաքական առավել դաստիարակության ու կազմակերպվածության տերերն են: Նրանց օրինակով կարելի է ուսումնասիրել ժողովրդի կենսունակությունը: Մեկուկես հազար տարի առաջ նրանք կորցրել են իրենց պետության անկախությունը, բաժանվել են պարսիկների ու բյուզանդացիների միջև և այդ ժամանակից, փոխելով պետական տիրակալներին, պահպանել են լեզուն, գրականությունը, սովորույթները, պահպանել են բուն ազգային դեմքը, որը հիմա էլ պահպանում են համառորեն և հմտորեն: Նրանք թուրքիայում շատ չեն՝ միայն երկու միլիոն, բայց նրանց հետ հաշվի են նստում, որովհետև այդ քառասային, անջատ-անջատ

երկրում հայ ժողովուրդը միաձուլված ուժ է»¹:

Այդ խնդիրը լուսաբանելու համար դիվանագետների համար շատ կարևոր էր պարզել, թե հայերն ի՞նչ դիրք են գրավում Թուրքիայի տնտեսության և լուսավորության բնագավառում ընդհանրապես և Հայաստանում մասնավորապես: Նրանք համոզված էին, որ եթե Թուրքահայաստանում ստեղծվեն տանելի պայմաններ, ապա իրենց ունակությունների և կրթական մակարդակի շնորհիվ արագորեն կկարգավորեն ազգային բոլոր գործերը:

Նույնիսկ թուրքական տիրապետության դժոխային պայմանների մեջ հայկական նահանգներում արտադրողական գործունեությունը և առևտուրը, ինչպես նաև վարկային գործը շարունակում էին մնալ հայերի ձեռքում: Այլ խոսքով՝ հայ տարրը Հայաստանի վեց նահանգներում շատ ավելի կարևորություն ուներ, քան կարելի էր ենթադրել նրանց թվից:

Հայաստանի հայ տարրի տնտեսական գործության մասին գաղափար տալու համար Ա. Զիվելեգովն անդրադառնում էր Հայաստանի վեց նահանգներից ամենաքիչ հայ բնակչություն ունեցող (մոտ 50%) Սեբաստիա (Սվազի) նահանգի առևտրական և արդյունաբերական վիճակագրությանը և համեմատությունների մեթոդով պարզում նրանում հայերի և այլազգիների տնտեսական դիրքերը: Նա ցույց էր տալիս, որ օրինակ՝ ապրանքների ներմուծումով զբաղվող 166 առևտրականներից թուրքեր էին միայն 13-ը, հույներ՝ 23-ը, մնացած 141-ը հայեր էին: Արտահանող 150 առևտրականներից 127-ը հայեր էին, և 23-ը՝ թուրքեր, 37 դրամատերերից և բանկիրներից 32-ը հայ էին և միայն 5-ը՝ թուրք: 9800 խանութպաններից և արհեստավորներից 6800-ը հայեր էին, 3000-ը թուրքեր: Տեղական արդյունաբերությունը նույն պատկերն էր ներկայացնում. 153 գործարաններից և ջրաղացներից 130-ը պատկանում էր հայերին, 20-ը՝ թուրքերին և 3 գորգի գործարան՝ օտարներին կամ խառն ընկե-

¹ «Արարատ», № 1, հունվար, 1914, էջ 50:

¹ Ариадна Тыркова, Старая Турция и младотурки. Годъ въ Константинополь, Петроградъ, 1916, стр. 63.

րություններին: Գործարանների և ջրաղացների մեքենավարներն ու տեխնիկական ուրիշ աշխատանքներ կատարողները բացառապես Հայեր էին: Արդյունաբերական այդ ձեռնարկություններում աշխատում էին մոտ 17.700 բանվոր, որոնցից մոտ 14.000-ը Հայեր էին, 3.500-ը՝ թուրքեր, իսկ 200-ը՝ հույներ և ուրիշ ազգերի ներկայացուցիչներ^{*}: Դա դեռ ամենը չէր. Կոստանդնուպոլսում նույնիսկ թուրքերեն գրքերն ու պարբերականները մեծ մասամբ տպագրվում էին Հայերին պատկանող տպարաններում:

Այս թվերը և փաստերը մեկնություն կարիք չունենին:

Նույն պատկերն էր նաև լուսավորության բնագավառում: Ամենքը գիտեին, որ լուսավորության գործը Հայերի մոտ շատ ավելի առաջ է գնացել, քան թուրքերի: Թուրք կառավարությունը ժողովրդական լուսավորության համար հատուկ տուրք էր գանձում ողջ ազգաբնակչությունից, այդ թվում նաև քրիստոնյաներից: Այդ հարկի ամբողջ եկամուտը կառավարությունը հատկացնում էր մահմեդական դպրոցներին: Հայերը, որոնք տուրք էին տալիս մահմեդական դպրոցների համար, իրենց դպրոցները պահում էին բացառապես սեփական միջոցներով: Իսկ իշխանությունները ոչ միայն որևէ օժանդակություն ցույց չէին տալիս հայկական դպրոցներին, այլև ամեն տեսակ արգելքներ էին հարուցում դրանց համար:

Նույնիսկ 1895-1896 թթ. Հայերի մեծ կոտորածներից հետո՝ 1901/1902 ուսումնական տարում, Կ. Պոլսի պատրիարքարանին ենթակա դպրոցների թիվը միայն Հայաստանում հասնում էր 458-ի՝ 33.822 երկսեռ աշակերտով: Նույն ուստարում Կիլիկիայում կար 90 դպրոց՝ 9132 աշակերտով: Կայսրության մյուս մասերում գործում էին 260 դպրոցներ՝ 39.691 աշակերտներով: Այլ խոսքով՝ Թուրքիայի Հայ առաքելական հարանվանությունը

նշված ուսումնական տարում ուներ 808 դպրոց՝ 82.645 աշակերտներով: Այդ թվի մեջ չէին մտնում Հայ կաթոլիկ և Հայ ավետարանական համայնքների մոտ 100 դպրոցները, որոնցում ուսանում էր շուրջ 1000 աշակերտ: Այդ ամենից բացի՝ գործում էին 100 մասնավոր դպրոցներ: Այսպիսով՝ 1901/1902 ուստարում Թուրքիայի Հայերը իրենց միջոցներով պահում էին մոտավորապես 1000 դպրոց՝ 100.000 աշակերտով¹:

Այդ ամենն անհավատալի էր համիդյան սարսափի շրջանում, բայց այդպես էր:

1908 թ. օսմանյան հեղափոխությունը հաջորդած առաջին շրջանում, երբ երիտթուրքերը հարաբերական ազատամտություն էին ցուցաբերում, Հայերը բացեցին նորանոր դպրոցներ: 1909-1912 թթ. միայն Կ. Պոլսի «Միացեալ ընկերութեան» ջանքերով կյանքի էր կոչվել 102 նոր դպրոց՝ 8019 երկսեռ աշակերտներով, իսկ «Ազգանվեր Հայուհեաց» ընկերությունը բացել էր 36 դպրոց՝ 3270 աշակերտով: 1912/1913 ուսումնական տարվա վերջին միայն Հայաստանում կար 585 հայկական դպրոց, ուր սովորում էր ավելի քան 52.000 աշակերտ, իսկ օտարերկրյա բողոքական և կաթոլիկ առաքելությունների կողմից Հայաստանում բացված ուսումնարանների հետ միասին այդ թիվը հասնում էր 785-ի՝ 82.000 աշակերտով: Մինչդեռ թուրքերն ամբողջ Հայաստանում հազիվ ունեին 150 դպրոց, ուր սովորում էր շուրջ 17.000 աշակերտ: Իսկ քրդերը ոչ մի ուսումնարան չունեին²: Անգլիական “Statist” հանդեսի տվյալներով՝ 1913 թ. կայսրության թուրք ազգաբնակչության 1000 անձից միայն 5-ը կարողալ-գրել գիտեր: Երկրի մահմեդականների մշակութային վիճակին անդրադառնալով՝ հանդեսը գրում էր, թե նրանք չունեն գոնե մեկ պետական թատրոն³:

Եվրոպական մամուլի օրգաններին և դիտորդներին հե-

^{*} Բերված թվերը Զիվելեզովը, հավանաբար, քաղել էր Թիֆլիսում հրատարակվող սոցիալական ուղղվածության «Նոր հոսանք» հանդեսի 1913 թ. № 3-ից (էջ 627): Վերջինս, իր հերթին, դրանք վերցրել էր 1913 թ. գարնանը Փարիզում ֆրանսերեն լույս տեսած Գրիգոր Զոհրապի “La Question Arménienne. A la lumière des documents” («Հայկական հարցը փաստաթուղթերու լույսին տակ») ուսումնասիրությունից:

¹ Տե՛ս «Նոր հոսանք», № 3, մայիս, 1913, էջ 629:

² Այս թվերը քաղված են եվրոպական Հայաստանների երկրորդ կոնֆերանսում (1913 թ. նոյեմբերի 17) Պողոս Նուբարի գեկուցման տեքստից (տե՛ս «Արարատ», № 1, հունվար, 1914, էջ 50)

³ “Statist”-ի հոդվածի հայերեն թարգմանությունը տե՛ս «Երկունք» (Կ. Պոլիս) պարբերականի 1913 թ. օգոստոսի 1 (14)-ի համարում (№ 2):

տաքրքրում էր այն հարցը, թե դարեր շարունակ թուրքական լծի տակ տառապած և քրդերի տևական հարստահարմանը ենթարկված, հետևապես իրենց ուղղունակությունը կորցրած հայերը ի վիճակի կլինե՞ն նեցուկ լինելու նոր կարգերին և հարկ եղած դեպքում զենքով պաշտպան կանգնելու իրենց իրավունքներին: Հայկական մամուլը և հայ գործիչները վստահաբար դրական պատասխան էին տալիս: Նրանք նշում էին, որ թեև հայերի զինվորական ուժին պահպանվել էր միայն Հայաստանի առանձին շրջաններում (Զեյթուն, Սասուն), բայց արդուհամիդյան բռնակալությունը դեմ անհավասար պայքարում հայերի ցուցաբերած քաջությունը հանրաժանությամբ էր նաև եվրոպայում, իսկ Բալկանյան պատերազմում նրանց ցուցաբերած խիզախությունն մասին բազմիցս արտահայտվել են թուրքական մամուլն ու բազմաթիվ բարձրաստիճան թուրք ուղևորական գործիչներ ու պետական նշանավոր դեմքեր: Ինչ վերաբերում էր վարչական ընդունակություններին, ապա բազմաթիվ հայեր օտար պետություններում պետական պաշտոններ վարելիս ցուցաբերել էին փայլուն ընդունակություններ:

«Մենք համոզված ենք,- գրում էր «Նոր խոսքը», - որ բարենորոգումների իրագործումից յետոյ չի անցնի մի 20-30 տարի, եւ հայերը ցոյց կը տան իրենց ընդունակութիւնը նաեւ վարչական եւ զինուորական ասպարէզներում: Հայը, որ օտարներին այնքան հաւատարմութեամբ եւ ճշտութեամբ ծառայել է դարեր շարունակ, անկասկած աւելի մեծ եռանդով եւ ընդունակութեամբ կը ծառայի մի երկրի, որի խորթ որդին չի համարւի այլեւս:

Մեր խորին համոզումով հայութիւնը միակ տարրն է Հայաստանում, որ ընդունակ է ոչ միայն մի բարեկարգ երկիր հարստացնելու եւ լուսաւորելու, այլեւ այդ երկրի մէջ կարգ հաստատելու եւ ստեղծւած նոր կարգը պաշտպանելու: Պէտք է միայն ապահովել նրա անարգել զարգացումը»¹:

Հայաստանում հավասար պայմանների ստեղծումը հայերի

¹ Տե՛ս «Նոր հոսանք», № 3, մայիս, 1913, էջ 630:

մշակութային ու տնտեսական առաջընթացի անհրաժեշտ կանխադրույթն էր, ինչպես նաև նրանց ամբողջ քաղաքական ու հասարակական զարգացման տրամաբանական եզրակացությունը:

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՄԵՏ (ՀԱՅԱՍԻՐԱԿԱՆ) ԿՈՄԻՏԵ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԱՆՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Որքան իրական էր դառնում մեծ պետությունների կառավարությունների կողմից Հայաստանի բարենորոգումների հարցն իրենց արտաքին քաղաքականություն ակտիվորեն ներառելու խնդիրը, և որքան ծավալվում էր հայասիրական շարժումը եվրոպայում, այնքան ուսական հասարակական-մտավորական շրջաններում ուժեղանում էր Ռուսաստանում նույնպես հայամետ (հայասիրական) կոմիտե ստեղծելու պահանջը:

Ռուսաստանում ուս մարդկանց կողմից հայասիրական (հայամետ) կոմիտեի ձևավորման անհրաժեշտությունը մասին Պետերբուրգի հայկական խմբակին բազմիցս գրել էին Կոստանդնուպոլսից և եվրոպական մայրաքաղաքներից: Խմբակին նույն հարցով մի քանի անգամ դիմել էր նաև Պողոս Նուբարը:

Խմբակի բյուրոյի 1913 թ. հունիսի 12-ի նիստում հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Մ. Պապաջանովը: Նա նշեց, որ վերջին ժամանակներս Հայկական հարցի վերաբերյալ դումայական ելույթներից հետո, ուս գործիչներից շատերը սկսել են իրեն դիմել եվրոպայի օրինակով Ռուսաստանում նույնպես հայամետ կոմիտե ստեղծելու առաջարկներով: Բայց, ասում էր նա, խնդրո առիթով դումայական կուսակցությունների որոշ ներկայացուցիչների հետ ունեցած զրույցների արդյունքում ինքը եկել է այն եզրակացություն, որ հազիվ թե հաջողվի ձևավորել խառը կազմով արտակուսակցական կոմիտե, որի մեջ մտնեն տարբեր քաղաքական համոզմունքներ ունեցող անձինք: Նույնիսկ Հայկական հարցի երկու նշանավոր համախոհներ Պ. Ն. Միլյուկովը և կոմս Բոբրինսկին չեն կարող համատեղ աշխա-

տել, որովհետև դավանում են քաղաքական տարբեր ուղղությունների: Նկատենք, որ ընդհանրապես հայամետ և ոչ հայամետ (կամ հայատյաց) ոուս գործիչների կարելի էր հանդիպել ոուսական հասարակական-քաղաքական համարյա բոլոր հոսանքներում, հետևապես նրանց անկարելի էր համախմբել մի տանիքի տակ: Իսկ եթե փորձ արվեր ոուսական հայկական կոմիտե ստեղծել քաղաքական միևնույն ուղղությունների կայացուցիչներից, ապա այն կենթարկվեր քաղաքական մյուս ուղղությունների ներկայացուցիչների թշնամական վերաբերմունքին, և նման ձեռնարկը անմիջապես կփլուզվեր¹:

Նախքան հարցի քննարկումը Մ. Պապաջանովը գրույց էր ունեցել արտգործնախարարությունից մերձավորարևելյան բաժնի ղեկավար իշխան Տրուբեցկոյի հետ, որը բացասական էր արտահայտվել ոուսական կոմիտե ստեղծելու գաղափարին: Նա ասել էր, որ եթե կոմիտեի նպատակը պետք է լինի Հայկական հարցում կառավարությունը խրախուսելը, ապա դրա անհրաժեշտությունը բնավ չկա, որովհետև վերջինս հիմա այնքան լավ է տրամադրված դեպի Հայաստանի բարենորոգումների հարցը, որ որևէ աջակցության կարիքը չունի, և բավական է միայն չխանգարել նրան: Տրուբեցկոյը միաժամանակ ասել էր, թե ինքն անհանգստություն ունի, որ նման կոմիտեի անդամների միջև կծագեն ինչ-ինչ տարաձայնություններ, կամ այդ կառույցը արտաքին ինչ-ինչ պայմանների հետևանքով կգնա այնպիսի ճանապարհով, որը չի համապատասխանի կառավարության կողմից պաշտպանվող ուղղությունը:

Հարցի քննարկման ընթացքում Մ. Տիգրանովը նույնպես ցանկալի չհամարեց կուսակցական գունավորմամբ կոմիտեի ստեղծումը: Այն պետք է լինի վերկուսակցական, ասում էր նա, նրանում պետք է ընդգրկել ոչ միայն Դումայի պատգամավորների, այլև Դումայից դուրս գտնվող մարդկանց՝ սենատորների, ակադեմիկոսների, Պետական խորհրդի անդամների և, ընդհանրապես, հայտնի հասարակական-քաղաքական գործիչների: Այդ

¹ ПЗПАК, том I, стр. 267-268.

դեպքում միայն գուցե հաջողվի կոմիտեն դնել որևէ բարձրաստիճան այրի հովանու տակ: Նա կարծում էր, որ այդ նորաստեղծ մարմինը չպետք է սահմանափակվի միայն քաղաքական գործերով, այլ նաև պետք է զբաղվի տարաբնույթ հարցերով՝ ընդհուպ մինչև մշակութային նախաձեռնությունների իրականացումը¹:

Հանդես գալով ստեղծվելիք կոմիտեի մասին Տիգրանովի պատկերացումների դեմ՝ Մ. Աճեմովը գտնում էր, որ հիմա ժամանակը չէ մշակութային բնույթի հարցեր առաջադրել, որ պահի շահը պահանջում է կենտրոնացնել խնդիրը Հայկական հարցի շուրջ: Նա կտրուկ արտահայտվեց ընդհանրապես ոուս հասարակական ուժերից հայասիրական կոմիտե ձևավորելու բուն գաղափարի դեմ, անկախ այն բանից, թե ինչպիսին կլինի այն՝ խառը, թե համասեռ: Աճեմովի կարծիքով, ոուսական հայասիրական կոմիտեից, եթե այն ստեղծվի, բացի վնասից՝ ոչ մի օգուտ չի ունենա: Եվ ինչ որ մինչև օրս Հայաստանի բարենորոգումների հարցով Ռուսաստանում արվել է, ապա դա հայ քաղաքական, հասարակական, գիտական ուժերի տքնություն արդյունք է: «Մենք, - ասում էր նա, - վերջին տարիներին մեծ ջանքեր ենք թափել և կարողացել ենք ձեռք բերել ոուսական կառավարության բարեհաճությունը և հիմա էլ այդ կառավարության հետ միասնաբար աշխատում ենք ի շահ թուրքահայոց հարցի»²: Աճեմովը չեչտում էր, որ ոուսական հայասիրական կոմիտե ստեղծելուց հետո հնարավոր է, որ նրա ղեկավարումը հուսալի ձեռքերից հայտնվի անորոշ կասկածելի ձեռքերում: Նա նկատում էր, որ կառավարությունը և անձամբ ցար Նիկոլայ II-ը ներկայումս ավելի լավ են տրամադրված հայերի նկատմամբ, քան ոուս հասարակության տարբեր, նույնիսկ առաջադեմ շերտերը: Ապա ելույթ ունեցողը նկատում էր, որ Հայաստանի բարենորոգումների հարցում ոուսական կառավարության և ոուսական հասարակության միջև կան որոշակի տարաձայնու-

¹ ПЗПАК, том I, стр. 268-269.

² Նույն տեղում, стр. 269:

թյուններ: Ավելին, այդ հարցում ոուս հասարակութայան մեջ նույնիսկ կան խժողովություններ: Ահա թե ինչու հայերի նկատմամբ կառավարության բարեհաճ վերաբերմունքը չահավետ չէ ներկայացնել հասարակական լայն շրջանակներին: Ավելին, ասում էր նա, ստեղծվելիք Հայաստանի կոմիտեն կարող է վերածվել մեծ վտանգի աղբյուրի, եթե մերոնց իսկ ջանքերով ոուս հասարակությունը ներքաշվի հայկական խնդիրների վերաբերյալ կառավարության հետ համատեղ աշխատանքների մեջ: Աճեմովը համոզված էր, որ ոուս հասարակական ուժերից ձևավորված կոմիտեն կարող է կանգնել հայերի համար ոչ ցանկալի ուղու վրա. բուն կոմիտեի ներսում կուսակցական կամ անձնական տարաձայնությունների հետևանքով դրա գործունեությունը կարող է ընթանալ միանգամայն վտանգավոր ուղիով, և Հայկական հարցը, մեր ցանկություններից անկախ, կվերափոխվի հարմար գործիքի կառավարության դեմ պայքարի կամ միջկուսակցական հաշիվներ մաքրելու համար: Հայամետ կոմիտեի անարդյունավետությունը ցույց տալու համար Մ. Աճեմովը վկայակոչում էր Բալկանյան պատերազմի առաջին իսկ օրերից Ռուսաստանում ստեղծված սլավոնամետ (սլավոնասեր) անպտուղ կոմիտեի օրինակը և գտնում, որ պետք է մեկընդմիջտ հրաժարվել հայամետ կոմիտեի գաղափարից և շարունակել աշխատել այնպես, ինչպես աշխատել են մինչև օրս՝ հույսը դնելով սեփական ուժերի վրա¹:

Երիցս իրավացի էր Մովսես Աճեմովը: Հայկական հարցը միջազգային հնչեղություն էր ձեռք բերել հենց հայերի և առաջին հերթին նրանց նվիրյալ գործիչների թափած մեծ ջանքերի շնորհիվ էջմիածնի Մայր Աթոռ, Կ. Պոլսի պատրիարքարան, Ազգային պատվիրակություն և հատկապես նրա ղեկավար Պողոս Նուբար փաշա, որը հսկայական աշխատանք էր կատարում եվրոպական պետությունների կառավարական շրջանների և մամուլի օրգանների հետ, Թիֆլիսի Հայոց ազգային բյուրո, վերջապես՝ Պետերբուրգի հայկական խմբակ- ահա այն սյուները,

որոնց վրա այդ պահին խարսխված էր ողջ հայությունը հուզող հարցը:

Ինչ վերաբերում էր Ռուսաստանին, ապա այստեղ որպես Հայկական հարցի լուծման գլխավոր ուժ հանդես էր գալիս ինքը՝ ոուսական կառավարությունը, ոուսական Պետական Դուման, որոնք ստանում էին Նիկոլայ II ցարի բարեհաճ վերաբերմունքը Հայաստանի բարենորոգումների խնդիրն առաջ մղելու համար: Երկրորդ ուժը ոուսաստանյան մամուլն էր, հատկապես նրա աջ, պահպանողական թևը, որի էջերում հանդես եկող անձինք Հայաստանում բարենորոգումներ իրականացնելը դիտում էին որպես Ռուսաստանի համար բարենպաստ նախադրյալ՝ դեպի Միջերկրական ծով տարածվելու համար: Ինչ վերաբերում էր մեծ առումով ոուսական հասարակությանը, հատկապես մտավորականությանը, որոշ բացառություններով նրանք միանգամայն անտարբեր էին տվյալ պահին Հայոց ամենակենսական խնդրի նկատմամբ: Այնպես որ, Ռուսաստանում եվրոպական երկրների օրինակով Հայաստանի կոմիտե ստեղծելու դեմ Աճեմովի դիտարկումը միանգամայն տեղին էր, դրական էր նաև Նմբակի բյուրոյի արձագանքը նրա հարցադրումներին ու պատճառաբանություններին:

Մ. Աճեմովի բազմակողմանի հիմնավորված ելույթը սթափեցնող ազդեցություն գործեց Բյուրոյի անդամների վրա: Շարունակվեց մտքերի փոխանակումը, որի արդյունքում որոշվեց մեկընդմիջտ հրաժարվել ոուսական կոմիտե կազմակերպելու մտքից, և այդ մասին հաղորդել Փարիզ՝ Պողոս փաշա Նուբարին՝ հիշեցնելով, որ Ռուսաստանը եվրոպա չէ, և այստեղ դասակարգային, միջէթնիկական և այլ կարգի հակասությունները, հասարակության և կառավարության միջև տարաձայնությունները նպաստավոր չեն ոուս հայամետ (հայասեր) կոմիտեի ստեղծման համար: Այն ոչ միայն որևէ օգուտ չի բերի Հայկական հարցին, այլև կարող է խիստ բացասական դեր խաղալ ոուս դիվանագետների վճռական գործողությունների համար:

¹ ПЗПАК, том I, стр. 270.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻՆ Ե ՊԱՍՏԵԼՈՒ
ԳՈՐԾՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԴԵՐԻ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ
ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՄԲԱԿՈՒՄ**

Պետերբուրգի հայկական խմբակի Բյուրոն իր 1913 թ. Հունիսյան նիստերից մեկում քննություն առավ ուսական մամուլի օրգանների հետ տարվող աշխատանքի հարցը, որի կապակցությամբ զեկուցումով հանդես եկավ Խմբակի անդամ, ուսական Դումայի պատգամավոր Միքայել Պապաջանովը:

Ջեկուցողը Բյուրոյի անդամներին հաղորդեց, որ Հայկական հարցի վերաբերյալ Դումայում ունեցած իր վերջին ելույթից հետո ուս հասարակական-քաղաքական գործիչներից շատերն իրեն են դիմել և առաջարկել ծառայություններ՝ հատկապես պատրաստականություն հայտնելով լրատվամիջոցներում հանդես գալ հոդվածներով և քարոզել Հայկական հարցը: Նա նշում էր, որ, օրինակ՝ պրոֆեսոր Պլետնևն արդեն մի քանի հոդվածներ է տեղադրել *“День”* թերթում: Բացի այդ՝ նա գրող Կորոլենկոյին և Վոզովոզովին խորհուրդ է տվել ներգրավվել հոգուտ հայերի աշխատանքներում: Միաժամանակ Մաքսիմ Կովալևսկին խոստանում է *“Вестник Европы”* և *“Русское Слово”* պարբերականների աջակցությունը: Պ. Ն. Միլյուկովը, ասում էր Մ. Պապաջանովը, իր հերթին տեղեկացրել է, որ *“Речь”* թերթը պատրաստակամ է իր էջերը տրամադրել հայերի կարիքներին: «Բայց մենք պետք է ուշադրություն դարձնենք այն բանի վրա, որ մամուլի գործը կազմակերպենք այնպես, որպեսզի հոդվածագիրներն արջի ծառայություն չմատուցեն մեզ, ինչը շատ հնարավոր է»¹, - շեշտում էր Մ. Պապաջանովը:

Դումայի պատգամավորի հաղորդումից հետո Բյուրոյի անդամներ Գ. և Լ. Տիգրանովները, Ս. Տիգրանյանը, Ա. Ասրիբեկովը, Հ. Սաղաթեյանը, Պ. Ղուկասովը, Հ. Ղուկասովը, Մ. Աֆեմովը, Գ. Գյանջունցը, Ի. Բաղրամովը, Ս. Պատկանովը, Հ. Զավրիևը, Ն. Ամատունին և Ն. Ադոնցը իրենց կարճատև ելույթներով խիստ կարևորություն տվեցին ուսական մամուլում Հայոց

¹ ПЗПАК, том I, стр. 272.

հարցի լայն լուսաբանմանը: Նրանք բոլորը հայոց նկատմամբ ուսական մամուլի դրական վերաբերմունքը համարում էին խիստ արժեքավոր Հայաստանի բարենորոգումների խնդրի առաջխաղացման տեսակետից՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ տպագրված հոդվածներն ու նյութերը հաշվի են առնվում եթե ոչ ուսական պաշտոնական շրջանակներում, ապա գոնե՝ եվրոպական հասարակական կարծիքի կողմից: Ելույթ ունեցողներից ոմանք մտավախություն ունեին, թե մամուլի տարբեր միջոցների անջատ և չհամաձայնեցված ելույթները կարող են անբարենպաստ հետևանքներ ունենալ, եթե ժամանակին այդ ուղղությամբ միջոցներ չձեռնարկվեն: Ուստի խիստ կարևոր համարվեց նախ և առաջ խմբակին կից կազմակերպել տեղեկատվական մամլո բյուրո՝ կազմված Խմբակի բյուրոյի անդամներից, որպեսզի այն հետամուտ լինի տվյալ հարցին, նյութեր ու տեղեկություններ հավաքի հայկական թերթերից և այլ աղբյուրներից՝ դրանք ուսական թերթերի խմբագրություններ ուղարկելու համար: Բացի այդ, Բյուրոյի անդամները պետք է գործնական կապերի մեջ մտնեն ուսական թերթերի ու հանդեսների խմբագրությունների, հատկապես դրանց արտաքին հարաբերությունների բաժինների ղեկավարների հետ և անձնական զրույցներում բացահայտեն թուրքիայի հայության իրական վիճակը, աջակցեին մամուլում տեղադրվելիք հոդվածների մշակմանը: Ելույթ ունեցողները նաև ցանկություն հայտնեցին, որ Բյուրոն հնարավորության դեպքում հարաբերություններ հաստատի թուրքական Հայաստանում գործող հասարակական կազմակերպությունների, հայտնի գործիչների, թերթերի աշխատակիցների ու թղթակիցների հետ՝ նրանցից անմիջական թարմ տեղեկություններ ստանալու համար:

Այս բոլոր գործառույթները և պարտականությունները կարելի էր դնել Բյուրոյի վրա, բայց քանի որ նրա անդամները ամուսնը ցրվելու էին, ուստի նիստն անհրաժեշտ գտավ ստեղծել հատուկ մամլո բյուրո, որի կազմում ընտրվեցին Ս. Տիգրանովը, Հ. Սաղաթեյանը և Հայկական հարցի ճանաչված գիտակ Սաբուխանյանը (Թիֆլիսից)¹:

¹ ПЗПАК, том I, стр. 274.

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԶՐԱՊՏՈՒՅՏՈՒՄ

1913 թ. երկրորդ կեսին Հայկական հարցը գտնվում էր մեծ տերությունների դիվանագիտության սևեռուն ուշադրության կենտրոնում: Նրա շուրջը ծավալվել էր ուժգին պայքար, որը լիրովին բացահայտում էր այն բոլոր հակասությունները, որոնք այդ հարցի շուրջ առկա էին մի կողմից Ռուսաստանի (որի հետ էին Անգլիան և Ֆրանսիան), մյուս կողմից Գերմանիայի (որի հետ էին Ավստրո-Հունգարիան և Իտալիան) միջև: Այդ խմբավորումներից առաջինի մեջ չկար լիակատար համերաչխություն, մի բան, որ էապես խանգարում էր Ռուսաստանի նախաձեռնություններին: Ի տարբերություն Անտանտի երկրների՝ Գերմանիայի գլխավորած քաղաքական խմբավորման մեջ Հայկական հարցում ոչ միայն համաձայնություն, այլև կուռ միասնություն էր:

ԵՆԻ – ՔԵՈՅԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Ինչպես վերը նշվեց, 1913 թ. հունիսի 27-ին վեց տերությունների Կ. Պոլսի դեսպանատների ներկայացուցիչներից ստեղծվել էր մի հանձնախումբ՝ քննելու համար Ա. Մանդելիտամի կազմած Հայկական բարենորոգումների ծրագրի նախագիծը:

Նախագծի քննարկումները տեղի ունեցան Կ. Պոլսի Ենի-Քեոյ թաղամասում գտնվող ավստրո-հունգարական դեսպանա-

տանը՝ 1913 թ. հուլիսի 3-ից 24-ը¹: Մասնակցում էին վերը նշված վեց պետությունների Կ. Պոլսի դեսպանությունների ներկայացուցիչները: Սորհրդաժողովի նախագահ ընտրվեց Ավստրիայի դեսպան Պոնֆիլին՝ Կ. Պոլսի դիվանագիտական կորպուսի ավագը (դուայենը):

Թեև հայկական հարցը չէր քննարկվում դեսպանների մակարդակով, բայց և այնպես նրանց ենթակա դիվանագետ-դրագոմանների հավաքվելու փաստը հայ հասարակությունն ընդունեց խանդավառությամբ, քանզի դա նշանակում էր, որ հայերին հուզող խնդիրը փաստորեն մտել է Կ. Պոլսի դեսպանախորհրդի օրակարգ:

Քանի որ հայկական բարենորոգումների հարցի քննությունն ըստ էության ամբողջովին հանձնվել էր հայկական բարենորոգումների հանձնաժողովին, այսինքն՝ մեծ տերությունների Կ. Պոլսի դեսպաններին, թվում էր, թե Ազգային պատվիրակությունն այլևս անելիք չունի: Այդ էր պատճառներից մեկը, որ Պոդոս Նուբարը կաթողիկոսին գրած նամակով խնդրել էր իրեն ազատել Ազգային պատվիրակության ղեկավարի պաշտոնից և ցրել Պատվիրակությունը: Ինչպես վերը նշվեց, կաթողիկոսը, սակայն, մերժել էր Նուբարի առաջարկը՝ գտնելով, որ նա առաջիկայում դեռ շատ բան ունի անելու թուրքահայ ժողովրդի համար²:

Նախապես ձեռք բերած պայմանավորվածության համաձայն՝ հանձնախումբը պետք է քննարկեր Մանդելիտամի կազմած ու ներկայացրած նախագիծը^{*}: Նախագծի հեղինակը դին-

¹ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ VI, Երևան, 1981, էջ 529, Հովհաննես աւ. քհ. Հանեան, Հայոց տաժանքի ճամբաներով, Ա հատ., Թեհրան, 1965, էջ 336:

² Տե՛ս «Վեստենենկի օրագիրը» (Յան Վան դեր Դյուսենի առաջաբանը, էջ 23):

^{*} Նշենք, որ այդ օրերին քննարկման էին ներկայացվել նաև Կ. Պոլսի Ֆրանսիական ու անգլիական դեսպանատների մշակած նախագծերը: Ֆրանսիական նախագծով առաջարկվում էր Հայաստանում նշանակել մի ընդհանուր տեսուչ, թեկուզ նա լինի թուրք, որը պետք է պատասխանատու լիներ Բ. Դոան առաջ: Անգլիական նախագծով նախատեսվում էր Հայաստանի վարչական մասը հանձնել անգլիացի վեց տեսուչների: Հենց սկզբից այդ երկու նախագծերին ընդդիմացան Ռուսաստանը և Գերմանիան, և դրանք հանվեցին հետագա քննարկումներից:

ված էր փաստական մեծաքանակ նյութերով և պատրաստ էր պաշտպանելու փաստաթղթի յուրաքանչյուր հոդվածը: Նրա հզոր հակառակորդն էր գերմանական դեսպանությունն զրազոման Շոնբերգը, որը ստանում էր Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի ներկայացուցիչների անվերապահ աջակցությունը:

Այն ժամանակ, երբ ուսական կողմն իր գործընկերներին ծանոթացնում էր փաստաթղթի բովանդակությունը, Բ. Դուռը վերջնական պատրաստություններ էր տեսնում՝ խափանելու Ենի-Քեոյի քննարկումները: Իր հուշագրություններում Ջեմալ փաշան գրել է. «Հայկական բարենորոգումների հարցում մենք ձգտում էինք ազատվել այն պարտականություններից, որոնք մեր վզին էին փաթաթել ուսները»¹: Եվ երբ դիվանագետներն արդեն հավաքվել էին քննարկելու Մանդեղլտամի նախագիծը, հանձնախմբի առաջին իսկ նիստում Թուրքիայի ներկայացուցիչը հայտարարեց, թե պահանջում է նախ քննության առնել բարեփոխումների Բ. Դուռնից առաջարկվող փաստաթուղթը՝ բաղկացած 17 հոդվածից:

Ինչպես հետո պարզվեց, այդ նախագիծը արտգործնախարարությունում կազմելուց հետո այն հանձնվել էր հատուկ հանձնախմբի քննության՝ մեծ վեզիրի նախագահությունում և արտաքին գործերի, լուսավորություն, ֆինանսների և ներքին գործերի նախարարների մասնակցությամբ:

Թուրքական օրինագծի տեքստի մասին կառավարությունը տեղյակ չէր պահել Հայոց պատրիարքարանին: Ավելին, առանց վերջինիս գիտությունն նշված հանձնախումբ էին հրավիրվել մի քանի հայ գործիչներ, որոնք չունեին պաշտոնական լիազորություն: Դրանք էին՝ նախկին պատրիարք Մաղաքիա Օրմանյանը, մեջլիսի նախկին պատգամավոր Նազարեթ Տաղավարյանը, Թուրքական «Սաբահ» թերթի խմբագիր Քելեկյանը և բանկիր Գյուլբենկյանը: Թուրքական կառավարությունը հույս էր ունեցել, որ հայ գործիչները, ծանոթանալով իր կազմած նախագծին, հավանություն կտան փաստաթղթին՝ դրանով իսկ նպաստելով

¹ Джемаль паша, Указ. раб., с. 56.

Հայկական հարցում տերությունների միջնորդության խափանմանը: Իմանալով այդ մասին՝ Հայոց պատրիարքը պաշտոնական բողոք հայտնեց առ այն, որ առանց իրեն տեղյակ պահելու նշված անձինք ներքաշվել են անհաճո գործարքների մեջ:

Տեղեկանալով Բ. Դուռն հերթական դավադիր գործելակերպին՝ Հայոց պատրիարքարանը կառավարություն ուղարկեց բողոքի թագիր, ուր նշված էր, որ ինքն այլևս չի հավատում Բ. Դուռն բանավոր խոստումներին, թե առանց պետությունների միջամտության նա բարեփոխում կկատարի Հայաստանում*:

Իր մի զեկուցագրում Գիրսը գրել է. «Հայկական հարցում Բ. Դուռն այժմյան գործելակերպը [հայոց] պատրիարքական շրջանակներում բացատրվում է նրանով, որ նա վախենում է տերությունների և հատկապես Ռուսաստանի միջամտությունից»¹:

Դեռևս Ենի-Քեոյի քննարկումները սկսվելուց երկու օր առաջ՝ հուլիսի 1-ին, Թուրքական կառավարությունը հանդես էր եկել հայտարարությամբ, թե բարենորոգումները պետք է տարածել ոչ միայն Հայաստանի, այլև կայսրության բոլոր նահանգների վրա: Որպես ուսական նախագծի հակառակադրվող՝ նա վեց տերությունների դեսպանների հանձնախմբի հենց առաջին նիստի քննարկմանը ներկայացրեց դեռևս 1881 թ. Բ. Դուռն պատրաստած և սուլթանի կողմից ստորագրած «Օրենք վիլայեթների մասին» փաստաթուղթը, որը հենց պարունակում էր այդ դրույթը: Փաստաթուղթը լրացվել էր ուրիշ դրույթներով. մասնավորապես՝ առաջարկվում էր կայսրության ողջ տարածքը բաժանել վեց շրջանների, ըստ որում՝ արևելյան շրջանները

* Ա. Մանդեղլտամը գրել է, որ Հայոց պատրիարքարանը չէր կարող հավատալ Բ. Դուռն խոստումներին թեկուզև այն պատճառով, որ նա Թուրքահայերի անտանելի վիճակի մասին 176 անգամ դիմել էր նրան, բայց վերջինս ոչ մի անգամ չէր պատժել մեղավորներին, և հայերից խլած հողերը նախկինի պես մնացել էին թուրքերի և քրդերի ձեռքին (Տե՛ս A. Mandelstam, Le sort de l'Empire Ottoman, Paris, 1917, p. 213):

¹ АВПРИ, ф. "Политархив", д. 3459, лл. 68, 69.

առնվելու էին 3-րդ և 5-րդ շրջանների մեջ: Բ. Դուռը նույնիսկ պատրաստակամություն էր հայտնել, թե ինքը դեմ չէ, որ այդ վարչական շրջանների կառավարման հսկողությունը դրվի հատուկ ստեղծվելիք մարմնի վրա՝ բաղկացած ինչպես օսմանցի, այնպես էլ օտար (եվրոպացի) հսկիչներից: Ավելին, նա նույնիսկ խոստանում էր չուտով զբաղվել վարչական շրջանների ղեկավարների նախնական կազմը ընտրելու հարցով: Անչուչտ, այդ հայտարարությունը կատարվել էր Բեռլինի ակնհայտ թելադրանքով՝ նպատակ հետապնդելով հանձնախմբի ուշադրությունը չեղել քննարկվող օրակարգային հարցից: Դա էր վկայում հանձնախմբում գերմանական ներկայացուցիչ Շեոնբերգի ելույթը, թե ոչ միայն Հայաստանը, այլև օսմանյան ողջ կայսրությունը կարիք ունի վարչակառավարման համակարգի արմատական վերափոխումների, ուստի սխալ է զբաղվել միայն հայերի պահանջների քննությունը: Կարծես տերությունների մյուս ներկայացուցիչները նույնպես հակվում էին միայն հայկական հարցով չսահմանափակվելու գաղափարին¹:

Գերմանական կողմը հայտարարում էր, որ կայսրության մասշտաբով վարչակառավարման համակարգի բարելավումը անխուսափելիորեն կբերի իշխանություն ապակենտրոնացման, որից լիուլի կօգտվեն պետության բոլոր ոչ թուրք ժողովուրդները, այդ թվում՝ հայերը:

Կ. Պոլսի «Աւետարների» քաղաքական մեկնաբան Հ. Մամիկոնյանը, անդրադառնալով իշխանություն ապակենտրոնացման խնդրին, ցավով նշում էր, որ «Փոքրամասնություն կազմող ազգերուն իրաւունքները պաշտպանելու սկզբունքը եւ արդարութեան հիմնովին գործադրութեան գաղափարը դեռ պէտք եղած ձեւով չէ արմատացած (Թուրքիայում:– Հ. Ս.): Ց'այժմ բարեփոխութիւնը Եւրոպան խաբելու եւ հանդարտեցնելու զէնք մը կը նկատուէր մեր [Թուրք] հինգուլիս դիւանագէտներու կողմէ, որոնք փոխանակ Եւրոպան խաբելու իրենց երկիրը կործանեցին:... (Նկատի ունեւ Բալկանյան պատերազմի հետեւանքները:–

¹ «Աւետարներ», № 29, 19 Հուլիսի 1913 թ.:

Հ. Ս.) Առանց Եւրոպայի գործակցութեան մենք մեր սեփական ոյժերով չպիտի կարենանք մեր քայքայման վիճակի մէջ գտնուող կայսրութիւնը վերականգնել, զօրացնել եւ մեր դրացիներուն եւ ամբողջ աշխարհին զայն պատկառելի դարձնել»¹:

Մեկնաբանը չեչտում էր, որ ապակենտրոնացում ասելով պետք է հասկանալ, որ անհրաժեշտ է մի կողմ դնել կայսրության նահանգների ներկայումս գործող կանոնադրերը, որոնցով կենտրոնից նշանակված վալիներն ամենակարող իշխաններ են դառնում, իսկ փոքրամասնությունների իրավունքները նրանց համար համարվում են ոչինչ չարժեցող անհեթեթություններ: «Հարկաւ այն ատեն այդ տեսակ ամէն բարեփոխութիւն որեւէ բաղձալի նպատակի չի հասցնէր, այլ նորանոր դժգոհութեանց առիթներ կը ստեղծէ»²,– եզրահանգում էր Հ. Մամիկոնյանը:

Բայց արդյո՞ք երիտթուրքական կամարիլիան տրամադիր կլինէր երբեք կամովին գոնե կես քայլ անել կայսրության բազմազգ հասարակության կառավարման համակարգի ապակենտրոնացման ուղղությամբ: Համենայնդեպս հայերից քչերն էին դրան հավատում:

Հիրավի, թղթի վրա ավետելով ամբողջ Փոքր Ասիայի վերանորոգության և նրա բնակիչների երջանկության, անդորրության ու բարեկեցության նոր դարազուլիս՝ բարենորոգումների թուրքական նախագիծն իրապես որևէ նպատակ չունեւ նպաստելու փոքրասիական ազգաբնակչության և, մասնավորապես, հայերի վիճակի բարելավմանը:

Բավական է ասել, որ արևելյան նահանգների վերաբերյալ այդ վավերագրում ընդամենը մեկ կետ կար, այն է՝ հայերի և քրդերի միջև գոյություն ունեցող հողային վեճերը պարզելու և կարգավորելու համար ստեղծել մի հատուկ հանձնախումբ: Այդքանը միայն, որին հիմա չէր հավատում ոչ ոք՝ ո՛չ հայն ու քուրդը, ո՛չ ինքը՝ Բ. Դուռը, և ո՛չ էլ Եվրոպան: Թուրքական

¹ «Աւետարներ», № 28, 12 Հուլիսի 1913 թ.:

² Նույն տեղում:

նախագծում ոչ մի անգամ չէր օգտագործված «Հայաստան» աշխարհագրական անունը*:

Թուրքական նախագիծը փաստորեն մերժում էր Ռուսաստանի առաջարկած բարենորոգումների համարյա բոլոր կետերը, իսկ դա նշանակում էր, որ պետք է նույնը մնար Թուրքահայաստանի վիճակը:

Առաջ բերելով բարեփոխումների իր նախագիծը՝ Թուրքական կառավարությունը նպատակ ուներ և, պետք է խոստովանել, կարողացավ տարաձայնություններ առաջ բերել Ենի-Քեոյի խորհրդակցության մասնակիցների միջև:

Գերմանիայի ներկայացուցիչն անմիջապես պաշտպանեց Բ. Դոան դեմարշը՝ առաջարկելով բարենորոգումների հարցի քննարկումների հիմքում դնել Թուրքական նախագիծը, որը Բաբը Ալիում շտապ գրվել էր հենց Բեուլինի խորհրդով ու թելադրություններով¹: Նա պնդում էր, որ պետք է Թուրքիային թողնել իր ներքին խնդիրների, այդ թվում հայկական հարցի լուծումը: Այլապես նրանից վերցնելով հայկական հարցի լուծման իրավունքը՝ դրանով իսկ Հայաստանի անջատման առաջին քայլը կարվի, որով օսմանյան կայսրության կործանման սկիզբը կգրվի²: Եթե Մանդելշտամն իր նախագծի հիմքում դրել էր հայկական տարածքի սահմանների ճշտումը և բարեփոխումների ու դրանց գործադրողների վրա հատուկ հսկողության սահմանումը, ապա գերմանական կողմը գտնում էր, որ դա անպայման հավակնություններ կհարուցի փոքրասիական մյուս ազ-

* Երիտթուրքերը դա բացատրում էին իրենց ցանկացած ձևով: 1916 թ. Թուրքական կառավարությունը հրատարակեց «Հայկական հեղափոխական շարժումը և կառավարության միջոցառումները» վերնագրով հոդված, ուր ասված էր, որ իբր, պատմությունը հայտնի չէ «Հայաստան» անունով երկիր: Այսինքն՝ կա հայկական շարժում, բայց չկա Հայաստան: Սույն հոդվածը «Հայկական հեղափոխական շարժումը Թուրքիայում» վերտառությամբ վերատպվել է Բուդապեշտում հրատարակվող «Revue de Hongarie» հանդեսի 1967 թ. հուլիսի համարում (№ 55): Հոդվածի ուսերեն թարգմանության ամբողջական տեքստը պահպանվում է ЦГВИА-ում:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թթ. 21-22:

² АВПРИ, ֆ. «Политархив», ց. 1913, ձ. 3464, л. 77.

գությունների շրջանում՝ դրանով իսկ թուլացնելով օսմանյան պետությունը, իսկ բարեփոխումների վրա հսկողության սահմանումը անհամատեղելի է սուլթանի ինքնիշխանության գաղափարի հետ³:

Միաժամանակ, հաշվի չառնելով Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի կողմից անցկացված մարդահամարի արդյունքները, ինչպես նաև օտարերկրյա անկողմնակալ հետազոտողների աշխատություններում տեղ գտած տվյալները, գերմանական կողմը խեղաթյուրում էր հայկական նահանգների բնակչության ազգային թվակազմը՝ հայերի թիվը նվազեցնելով առնվազն մեկ երրորդով⁴:

Մանդելշտամն իր հուշերում նշում էր, որ Գերմանիան ձեռքից եկածն արեց տապալելու ռուսական նախագծի ընդունումը, թեև Պետերբուրգը նրան խոստացել էր, կարևոր զիջումներ անելով, զգալիորեն կծկել բարենորոգումների սահմանները⁵: Ռուսական կողմը քաջ գիտեր, որ հայկական հարցի լուծումը թողնել Թուրքիային, նշանակում է ոչինչ չլուծել: Եթե Թուրքիան լինել եվրոպական մի պետություն փոքր ի շատե տանելի օրենքներով, ուր երկրի բնակիչները հավասար իրավունքներով օժտված քաղաքացիներ ու հպատակներ լինեին, ուր քրիստոնյաների համար ստեղծված լինեին խաղաղ կուլտուրական զարգացման տարրական պայմաններ, եթե Թուրք կառավարությունը տասնյակ տարիներ տևող սոսկալի կոտորածներով և ջարդերով չխեղդեր դժգոհության և բողոքի ամեն մի արտահայտություն, այդ ժամանակ, այո՛, հնարավոր կլիներ ասել, թե չպետք է միջամտել նրա ներքին կյանքին, և պետք է թողնել, որ նա ինքը կարգադրի իր գործերը: Բայց երբ մի պետություն չարունակում է ջարդել ու կոտորել իր հպատակներին, որովհետև նրանք այլազավան են, երբ Թուրքը գտնում է, որ սրանք

¹ Տե՛ս АВПРИ, ֆ. «Политархив», ց. 1913, ձ. 3464, л. 77:

² Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթապ. 1, վավ. 11⁹³:

³ Տե՛ս Անտրե Մանդելսթամ, Օսմանեան կայսրութեան ճակատագիրը: Առաջին մաս: Երիտասարդ Թուրքերը պատերազմէն առաջ, Թարգմ. Միքայել Շամտանճեան, Կ. Պոլիս, 1919, էջ 121:

ստեղծված են իր բոլոր հաճույքները կատարելու, ձրի աշխատելու, իր հողերը հերկելու և բերքը հանձնելու իրեն, երբ կառավարությունը վայրագ քրդերին ու չերքեզներին թույլ է տալիս սպանել անմեղ մարդկանց, կանանց ու երեխաների, ապա աշխարհի ո՞ր օրենքը, մարդկային ո՞ր խիղճը և բանական-նությունը կարող են ասել, թե մի՞ միջամտեք, թողեք՝ թուրքն ու քուրդը անեն իրենց իմացածը:

Ցավոք, ոչ հեռավոր անցյալում այդպես էին դատում և՛ պահպանողականության, և՛ հետադիմության առանձին ներկայացուցիչները, և՛ նույնիսկ սոցիալիստներից ոմանք՝ Բիկոնսֆիլդը, Սուլզբերին, Լոբանով-Ռոստովսկին, Հանոտոն, երբ նրանք անտարբեր դիրք էին բռնել և թույլ տվեցին արյունարբու սուլթանին կոտորել 300.000 հայեր՝ ասելով. «Մենք իրավունք չունենք միջամտելու մի այլ երկրի ներքին գործերին»: Բայց այդպես չէին դատում և մտածում եվրոպական և ռուսական շատ նշանավոր գործիչներ, որոնք իրենց կառավարությունների հանցավոր անտարբերությունը և դահապետների ձեռքը չբռնելը նշավակում էին՝ նրանց անարգանքի սյունին գամելով: Հիմա ռուսական դիվանագետ, դրագոման Անդրե Մանդելշտամը ստիպված էր դժվարին ու ջղերը մաշող պայքարի մեջ մտնել ոչ միայն Թուրքիայի ներկայացուցչի, այլև գերմանական կողմի հետ, որը չէր թաքցնում, որ ինքը Հայաստանի բարենորոգումների հարցի քննարկմանը մասնակցում է ամրապնդելու համար կայսրության թուրքերի շահերը: Դա ոչ միայն Կ. Պոլսի գերմանացի դիվանագետների, այլև ընդհանրապես գերման քաղաքագետների մեծ մասի և մամուլի կարծրացած տեսակետն էր: Գերմանացի հրապարակախոս Ֆ. Վինֆրիդը, անդրադառնալով խնդրո առարկա հարցին, խոստովանում էր, որ Գերմանիան իր մասնակցությունը բերեց Հայկական բարենորոգումների ռուսական նախագծի քննարկմանը՝ «հենց Թուրքիայի շահերից ելնելով»¹: Գերմանական կառավարության կարծիքով, եթե

¹ Տե՛ս Սթ. Ստեփանյան, *Արմենիա в политике империалистической Германии*, Ереван, 1975, стр. 92:

ռուսական բարենորոգումների նախագիծն ընդունվի և իրականացվի, ապա Անատոլիայի առնվազն կեսը կդառնա Հայաստան՝ Թուրքիայի հետ շատ թույլ կապերով, մի բան, որ երբեք չի կարելի թույլ տալ: Դեպքն այն Վանգենհայմը, դիմելով բացահայտ սադրանքի, պնդում էր, թե Մանդելշտամի նախագծի թաքնված նպատակը հայկական բոլոր նահանգները Ռուսաստանին ենթարկելն է: Գերմանացի թուրքամուլ գործիչները նույնիսկ լուրեր էին տարածում, թե Ռուսաստանը քրդերին զինում է Հայ բնակչության նոր ջարդեր կազմակերպելու համար:

Հայոց հայրենիքում բարենորոգումներ անցկացնելու ռուսների նախաձեռնությունը և հետևողականությունը առաջ էին բերում գերման քաղաքագետների անթաքույց վրդովմունքը: «Նրախուսանքի փոխարեն, - գրել է Սերգեյ Սագոնովը, - Գերմանիան կամեցավ Հայերին համոզել, որ առանց Բեռլինի աջակցության նրանք երբեք իրենց իղձերն իրականացած չախտի տեսնեն: Ու սկսեց բարենորոգումների գործը դանդաղեցնել ու խոչընդոտների ենթարկել...»:

Գերմանիայի արտաքին գործերի նախարարը Բեռլինում ռուսական դեսպանին ուղղակի ասել էր, որ բարենորոգումների առաջարկները հազիվ թե գործնական որևէ նշանակություն ունենան, քանի որ Գերմանիան երբեք չի համաձայնի այն գործողություններին, որոնք կսպառնան Թուրքիայի տարածքային ամբողջականությանը: Ֆոն Յագովը հասկացնել էր տվել, որ Գերմանիան Ռուսաստանին թույլ չի տա ուժեղանալ Փոքր Ասիայում, քանի որ դրան ձգտում են իրենք:

Այդ առթիվ տպագրած «Հայկական գործերը» վերտառությունը իր ընդարձակ առաջաբանում ռուսական *«Новое Время»* թերթը գրում էր. «Կա Հայոց երկիր, կա քրդական արշավանքներից տառապող Հայ ժողովուրդ, կա Եվրոպա, որ 35 տարի առաջ Թուրքիայից հանդիսավոր խոստում է ստացել, թե [Հայաստանում] բարենորոգումներ կմտցվեն: Մի բան միայն չկա՝ բարենորոգումներ: Ըստ երևույթին դիվանագետների կողմից

¹ С. Д. Сазонов, *Воспоминания*, стр. 170.

չկա ոչ մի ձգտում պաշտպանելու հայերի գանգատները: Թուրքական կառավարությունն այժմ անարժեք հավաստիացումներ է անում՝ փորձելով համոզել, թե Փոքր Ասիայում իր սեփական ծրագրով է անպայման ուզում անցկացնել բարենորոգումներ, որոնց բարիքներից չուայրեն օգտվելու են նաև հայերը և որ, իբր, Բ. Դոան կողմից նախատեսված բարենորոգումների ծրագրի վերջնական մշակումն առաջ է տարվում փութաջանորեն...

Մենք շատ կցանկանայինք իմանալ, թե արդյո՞ք այժմ էլ Կ. Պոլսում կան միամիտներ, որոնք հավատում են թուրքական խոստումներին»¹:

Մանդելշտամը գրում էր, որ բարենորոգումների հարցում Գերմանիայի քաղաքականությունն առաջ էր բերել թուրքահայության ամենաբուռն դայրույթը²:

Բոլորը շատ լավ էին հասկանում, որ ջանադրաբար պաշտպանելով Բ. Դոան կողմից ներկայացրած նախագիծը՝ դրանով իսկ Գերմանիան ամենից առաջ պաշտպանում է իր տնտեսական շահերը Թուրքիայում: «Աշխատանք» թերթը գրում էր. «Նոր ապացույցներու պէտք չկայ հաւատալու համար որ Եւրոպական դիւանագիտութիւնը հայ ժողովուրդի շահէն ու ցաւէն առաջ մտածելիք բաներ ունի սեփական շահը և հաշիւը»³:

Գերմանական կողմի առաջարկը համախոհաբար պաշտպանեցին երեքպետյան զինակցություն մյուս երկու անդամների՝ Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի ներկայացուցիչները: Նրանք միասնաբար պահանջում էին ուսական նախագծի քննարկումից առաջ նախ անդրադառնալ թուրքական նախագծին:

Ռուսաց ղեսպան Գիրսը բողոք հայտնեց եռապետյան զինակցության հայտարարության դեմ՝ նշելով, որ Ռուսաստանն իր ծրագիրը քննարկման է ներկայացրել ավելի վաղ, քան թուրքիան, ուստի առաջնայնություն սկզբունքի (priority) համաձայն՝ ուսական ծրագիրը պետք է քննության ենթարկվի

¹ «Новое Время», № 205, 18 սեպտեմբերի 1913 թ.:

² Տե՛ս Անդրե Մանդելշտամի վերը նշված հուշերը, էջ 121:

³ «Աշխատանք» (վան), № 8 (154), 21 դեկտեմբերի 1913 թ.:

առաջին հերթին: Բացի այս, նշում է ուս դիվանագետը, 1881 թ. թուրքական ծրագիրը նախկինում մնացել է թղթի վրա, այժմ նույնպես որևէ երաշխիք չկա, թե այն կարող է կյանքի կոչվել:

Ինչպես և սպասելի էր, Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսիայի դիվանագետները մերժեցին գերմանական բլոկի պահանջները:

Այսպիսով, առաջին իսկ օրից Ենի-Քեոյում ստեղծվեց նյարդային լարված մթնոլորտ, որը տևեց հանձնախմբի քննարկումների ամբողջ ընթացքում: Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Սազոնովը իր հուշերում նկատել է. «Հանձնախմբի առաջին նիստից ականբե ղարձավ, որ նրա աշխատանքները արդեն դատապարտված են անհաջողության»¹:

Ռուսական կողմը, սակայն, մտադիր չէր հեշտություն տեղի տալ և համաձայնել, որ Հայաստանի բարեփոխումների հիմքում դրվեն թուրքական խիստ կցկտուր ու անկատար ակտերը: Նա շարունակում էր պնդել Ա. Մանդելշտամի նախագծի քննարկման նպատակահարմարությունը՝ հակառակ դեպքում սպառնալով դադարեցնել հարցի քննարկումն ընդհանրապես և դրա համար մեղավոր ճանաչել Գերմանիային:

Չնայած թուրքերի կատաղի դիմադրությանը՝ գերմանական կողմը, ուսական կողմի հետևողական ու անդիջում կեցվածքի շնորհիվ, ստիպված եղավ համաձայնություն տալ, որ քննարկման դրվի միայն ուսական (Մանդելշտամի) նախագիծը:

Եթե գերմանական դիվանագիտությանը չհաջողվեր քննարկումից դուրս մղել մանդելշտամյան նախագիծը, ապա դրա փոխարեն Ենի-Քեոյում Գերմանիայի ներկայացուցիչ Շեոնբերգի՝ Բեոլինից ստացած ցուցումի համաձայն, բոլոր ջանքերը պիտի գործադրեր՝ այնպես ձևախեղելու ուսական նախագծի կետերը, որպեսզի դրանք վերածվեն իրենց հակադրության:

Գերմանիայի գլխավորած զինակցության ղեսպանների հանձնարարությունը ավստրո-Հունգարական ղեսպան Պալավիչինին հանդես եկավ հայտարարությամբ, թե Ենի-Քեոյի

¹ С. Д. Сазонов, Воспоминания, стр.172.

խորհրդաժողովում քննություն են ենթարկվելու ինչպես հայկական բարենորոգումների ուսական նախագիծը, այնպես էլ 1881 թ. թուրքական ծրագիրը՝ Բ. Դոան լրացումներով:

Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Սազոնովն իր հուշերում նշել է. «Հանձնաժողովի նիստերի բացումից հետո ուսական կառավարությունն անմիջապես ստացավ մի հիշատակագիր Պետրոգրադի գերմանական դեսպանից: Այդ հիշատակագրի մեջ ուսական նախագծի էական մասը ենթարկվում էր քննադատության և ի վերջո ցանկություն էր հայտնվում, որ պետությունները հայկական բարենորոգումների խնդրում «հավասարապես ի նկատի առնեին նաև թուրքիայի կամքը»¹:

Ենի-Բեդյում գերմանական ներկայացուցչի կողմից թուրքիային ցույց տված աջակցությունը բոլորովին անսպասելի չէր: Արդեն չորս տասնամյակ էր, որ Գերմանիան թուրքիային համարում էր Մերձավոր Արևելքի և առհասարակ Արևելք թափանցելու իր *avant-poste*-ն: Դեռևս Բիսմարկի պետական կանցլերության շրջանում հրապարակ նետած *Weltpolitik*-ը (համաշխարհային քաղաքականություն) Վիլհելմ II-ի կառավարման շրջանում դարձել էր պաշտոնական Գերմանիայի բովանդակ ձգտումների և տենչանքների կենտրոնական առանցքը, որը ձգվում էր Օսմանյան կայսրությունով:

Երբ 1893 թ. նոյեմբերի 27-ին Աբդուլ Համիդը հատուկ իրադեով հայտարարել էր, թե իր որոշումով Բաղդադի երկաթուղու չինարարության կոնցեսիան տրված է «Գերմանական բանկին»², այդ ժամանակից սկսած՝ Բեդյունն ամուր կանգնեց Օսմանյան կայսրության թիկունքին:

Բախչի Իշխանյանը թուրքիայում Գերմանիայի շահերի մասին գրում էր. «Գերմանիան համարել է թուրքիային որպես մշտական նախադուռ, իր *avant-poste*-ն՝ տնտեսագաղութային

քաղաքականության համար Մերձավոր Արևելքում և քաղաքական խոշոր ու հեռավոր ձգտումների իրականացման համար առհասարակ Արևելքում»¹:

Երկու երկրների շահերը համընկնում էին նաև միջազգային ասպարեզում: Նույն Բախչի Իշխանյանը նշում էր, որ «Թուրքիան, իր հերթին, համարել է Գերմանիային՝ որպես իր դիւանագիտական պաշտպան-հաւատարմատարը Եւրոպայի քաղաքական կոնցերտի մրցադաշտում, որպես իր հովանաւորը, իր լաւախոս փաստաբանը օսմանեան պետութեան պատմական թշնամիների հանդէպ, որպէս ռազմական կատարելագործութեան եւ փորձառու ուժերի այն հզոր ներկայացուցիչը, այն անսպառ օրրանը, որից հրահանգվելու գերագույն կարիք էր զգում «հիվանդ մարդը» իբրև գիւնտրական պետութիւն»²:

Ահա երկու երկրների ներքին ու արտաքին շահերի այս զգալի ընդհանրությունը էր թելադրված թուրքիայի հայություն նկատմամբ Գերմանիայի՝ որպես պետության հակահայ քաղաքական կեցվածքը, պետություն, որը նախկինում բացահայտորեն խրախուսում էր սուլթան Համիդին նրա հայաջինջ քաղաքականությունը, իսկ այժմ, հայերի նկատմամբ նույն ատելությունը տողորված, աջակցում էր երիտթուրքերին՝ ձախողելու Հայաստանի բարենորոգումների ընթացքը:

Այդ տեսակետից շատ բնորոշ էր ստատոս սեկրետարի (պետքարտուղարի) տեղակալ Յիմերմանի 1913 թվականին արած հետևյալ հայտարարությունը. «Ըստ էության հայերը պետք չեն Գերմանիային. Հայաստանը՝ բնակեցված հայերով, վնասակար է նրա շահերին... Հայաստանից ստացված բոլոր զեկույցները վկայում են այն մեծ հույսերի մասին, որ այդ ժողովուրդը տածում է Ռուսաստանի նկատմամբ... Թուրքիայի ամբողջությունը սպառնացող վտանգից խուսափելու համար Գերմանիան ըստ

¹ С. Д. Сазонов, Воспоминания, стр. 172.

² Տե՛ս Գ. Լ. Բոնդարևսկիյ, Багдадская дорога и проникновение германского империализма на Ближний Восток (1888-1903), Госиздат Узбекской ССР, Ташкент, 1955, стр. 149.

¹ Բ. Իշխանեան, Գերմանիայի եւ Թուրքիայի տնտեսա-քաղաքական փոխարարեթիւնը (Քննական տեսութիւն), Թիֆլիս, 1915, էջ 8:

² Նույն տեղում:

էութեան պետք է հայերին թողնի թուրքերի լիակատար տնօրինութեան տակ»¹: Ավելին, գերմանական կառավարութիւնը չէր բավարարւում նման հայտարարութիւններով, նա նաև մշակեց հայկական հարցի լուծման կոնկրետ ծրագիր, որը նախատեսում էր Հայաստանում ստեղծել մուսուլմանական մեծամասնութիւն, ապա հայերին քշել Միջագետք՝ որպէս գերմանացիներին սպասարկող բանվորական էջան ուժ:

Երեքպետյան դաշինքի գլխավոր ուժի՝ Գերմանիայի ներկայացուցիչ Շեոնբերգը ուղղութիւն էր տալիս ավստրո-հունգարական և իտալական դիվանագետների գործողութիւններին: «Новое Время»-ն գրում էր. «Ռուսաց կառավարութեան ձեռնարկումը դժվարութեան հանդիպեց ոչ այնքան Բ. Դոան, որքան Կ. Պոլսի գերմանական դեսպանութեան կողմից: Այնպէս ստացվեց, որ ռուսական միսիան գլխավորապէս խորհրդակցում էր միայն գերման դիվանագետ Շեոնբերգի հետ, որը տալիս կամ չէր տալիս իր համաձայնութիւնը ռուսական ծրագրի առանձին որոշումներին»²:

Մանղելշտամի նախագծին Թուրքիա-Եոյակ գինակցութիւն տանդեմի միջամտութիւնները և հակառակութիւնները վերաբերում էին հետևյալ խնդիրներին.

Ա) Դեմ դուրս գալով հայկական մեկ (միասնական) մարզի ստեղծմանը՝ գերմանական դեսպանութեան դրագոման Շյոնբերգն իր կառավարութեան տեսակետը պատճառաբանում էր նրանով, որ Մանղելշտամի կողմից նշված տարածքը, որը կազմում է Անատոլիայի կեսը կամ Թուրքիայի 1/7 մասը, այսինքն՝ հավասար է լինելու Գերմանիայի կեսին կամ Բուլղարիային և Ռումինիային միասին վերցրած, չունի նորմալ գործունեութեան անհրաժեշտ պայմաններ, որ նրանում հատկապէս ծայրահեղ անմխիթար վիճակում են գտնվում ճանապարհները, հետևապէս երկրի տարբեր մասերը զրկված են լինելու միմյանց հետ և մեկ

¹ *Международные отношения в эпоху империализма, серия III, т. I, М., 1931.*

² «Новое Время», № 13662, 24 марта 1914 г.

միասնական մարզի կենտրոնի հետ հաղորդակցվելուց¹: Ուստի, հակառակ ռուսական կողմի առաջարկած սկզբնական նախագծի՝ գերմանական կողմն առաջարկում էր հայկական նահանգները մեկի փոխարեն բաժանել երկու մարզերի (սեկտորների), որը հնարավորութիւն կտար կրճատել դրանց բնակավայրերի ու կենտրոնների միջև տարածութիւնները և դրանով իսկ հեշտացնել մարզերի կառավարումը: Ըստ որում, թույլատրելի էր համարվում նշված երկու սեկտորների գլուխ կանգնեցնել եվրոպացի գեներալ-նահանգապետների (*inspecteur général*), որոնք պետք է նշանակվեին Բ. Դոան կողմից և հաստատվեին սուլթանական ֆերմանով²: Բայց այնտեղ ոչ մի խոսք չկար պետութեան վարչական մարմիններում քրիստոնյաների մասնակցութեան և ընդհանրապէս նրանց իրավունքների մասին:

Բ) Գերմանական կողմի թելադրմամբ և Թուրքիայի համաձայնութեամբ հայկական երկրամասին էր կցվում Տրապիզոնի շրջանը (որը ռուսական բաժանումի մեջ չկար), ինչպէս նաև մի քանի ուրիշ ոչ հայկական շրջաններ՝ մահմեդականներին Հայաստանում մեծամասնութիւն դարձնելու նպատակադրումով: Հայաստանի «ընդարձակման» գերմանական կողմի առաջարկութիւնը նաև նպատակ էր հետապնդում նախապէս խափանել հետագայում բարենորոգումների ենթակա շրջաններից ինքնավար Հայաստանի առաջ գալը՝ նշված ամբողջական տարածքի վրա հայութեան չնչին փոքրամասնութիւն լինելու պատճառաբանութեամբ:

Գ) Թեև բոլոր ընդհանուր ժողովներում թողնվում էր հայերից և իսլամներից կես առ կես անդամներ նշանակելու ռուսական առաջարկը, բայց այդ կարգը գերմանական կողմի պնդմամբ պետք է գործադրվեր վեց նահանգներից միմիայն եր-

¹ Տե՛ս «Բարենորոգումները Հայաստանում», էջ 123:

² Ինչպէս տեսնում ենք, Բեոլինը, հետևապէս նաև Բ. Դուրը, այնուամենայնիվ, ստիպված էին սկզբունքով ընդունել օտար կառավարիչների նշանակումը հայկական նահանգների համար (այդ մասին հանգամանորեն տե՛ս հետագա շարադրանքում):

կուսի համար, մյուս չորս նահանգներում պիտի գործեր համամասնական ներկայացուցչության սկզբունքը:

Գ) Ռուսական նախագծից հանվում էր Հայկական բարենորոգումների ուղղությունը Թուրքիայի կատարելիք քայլերի ընթացքի վրա եվրոպական պարտադիր վերահսկողություն իրականացնելու դրույթը:

Ռուսական կողմը խորհրդաժողովում համառ դիմադրություն էր ցույց տալիս՝ պաշտպանելով իր ներկայացրած պայմանները: Նա բազմիցս շեշտում էր, որ անթույլատրելի է Հայաստանի մասնատումը երկու մասի: Ընդհակառակը՝ գերմանական դեսպանության առաջին թարգման Ծեռնբերգը վճռակա՛նորեն պաշտպանեց հայկական մեկ նահանգի փոխարեն Հայաստանի վեց նահանգների վրա երկու չրջան ստեղծելու Թուրքական առաջարկը, որի գաղափարի հեղինակը Բեուլինն էր:

«Հայաստան» աշխարհագրական հասկացությունը Թուրքիայի համար չունեւր ո՛չ քաղաքական և ո՛չ էլ վարչական նշանակություն, այլ խոսքով՝ օսմանյան կառավարության համար «Հայաստանի բարենորոգումների խնդիր» գոյություն չունեւր: Հենց դրանից ելնելով է, որ նա համաձայնություն էր տվել երկու սեկտորների գաղափարին¹:

Ռուսաց արտգործնախարար Սերգեյ Սազոնովը վերհիշել է. «Ռուսական նախագծի հայեցակետը, որ պաշտպանում էին նաև Փրանսիական ու անգլիական ներկայացուցիչները, անկարելի էր միանգամայն համաձայնեցնել Գերմանիայի ու նրա դաշնակից Ավստրո-Հունգարիայի պահանջների հետ, որովհետև վերջինների նպատակակետը բոլորովին անհամապատասխան էր մեր նախագծին: Այդ պատճառով հանձնաժողովի հետագա նիստերը վերածվեցին միայն ապարդյուն վիճաբանությունների: Այդ վիճաբանությունները ճնշող տպավորություն էին գործում նրա այն անդամների վրա, որոնք լրջորեն էին նայում բարենորոգումների կատարելիք դերի վրա և անկեղծորեն ցանկանում էին օր առաջ բարենորոգումներ մտցնել այդ դժբախտ երկրում,

¹ Տե՛ս «Ռայլայիկ», № 27, 12 մարտի 1914 թ.:

ուր բնիկ ժողովուրդը պարբերաբար ենթարկվում էր ամենանա՛նգութ բնաջնջումի և որոնք այդ միջոցով կհուսային ապագա արյունահեղությունների առաջն առնել»¹:

Սակայն ռուսական կողմի դիմադրության արդյունքը ցանկալի չեղավ: Նա հայտարարեց, թե պատրաստ է չպնդել Հայաստանի նահանգներից մեկ խոշոր մարզ՝ մեկ նահանգապետի գլխավորությամբ, ստեղծելու դրույթը և համաձայն է, որ Հայաստանը բաժանվի երկու մարզի, և դրանցից յուրաքանչյուրը կառավարվի առանձին վերատեսուչի կողմից^{*}: Ռուսաստանը մատնանչեց, թե իր համար միևնույնն է՝ Հայաստանը կդառնա մեկ մարզ, թե արհեստականորեն կբաժանվի երկու մարզերի, կարևոր է, որ այդ մարզերի պետերը կախյալ չլինեն Թուրքական կառավարությունից, նշանակվեն միմիայն տերությունների համաձայնությամբ և ունենան նույնքան իշխանություն և լիազորություններ, որքան Լիբանանի գլխավոր նահանգապետը:

Ընդ սմին, Ռուսաստանը միանգամայն որոշակիորեն գերմանական կողմին հավաստիացնում էր, թե ինքը որևէ ակնկալիք չունի Հայաստանից, այլ միայն ուզում է, որ կարգուկանոն հաստատվի այնտեղ՝ իր սահմանների հարևանությամբ: Նա հույս ուներ, որ այժմ, երբ Հայաստանում բարեփոխություններ մտցնելու հարցում բոլոր տերությունները հանգել են համաձայ-

¹ С. Д. Саэонов, Воспоминания, стр. 171-172.

^{*} Մի առիթով Ս. Սազոնովն ասել է, թե պետությունների միջև համաձայնություն կայացնելու համար Ռուսիան հարկադրված է եղել բարենորոգումների ծրագրում մի քանի զիջումների գնայ, որոնցից ամենամեծը կատարվել է Հայաստանի երկու նահանգների հարցում: Նա շեշտել է, որ ռուսական կողմից այդ զիջումն արվել է, որպեսզի ծրագրում հնարավոր լիներ գոնե պահպանել հակակշռի պահանջը, որին մեծ կարևորություն էր տալիս իր կառավարությունը: Այս առիթով նա միաժամանակ հույս էր հայտնել, որ Մանդելշտամի ծրագրի այդ մասն այնպես է փոփոխված, որ դեսպաններին թույլ է տալիս իրենց հյուպատոսների միջոցով հակակշիռ կիրարկել ոչ միայն Հայաստանի նահանգներում, այլև նույնիսկ գավառներում (ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 4-ի շրջ.):

նույն, Թուրքիան չի ստեղծի հետագա դժվարություններ¹:

4. Պոլսի ռուսական դեսպանությունից հավատարմատար Գալկեիչը Սազոնովին գրում էր. «Մեկ գլխավոր նահանգապետով օժտված բոլոր հայերով բնակեցված վայրերը մեկ ամբողջության մեջ միավորելու փոխարեն ստիպված եղանք բավարարվելու երկու գլխավոր տեսուչների հսկողություն տակ երկու սեկտորների ձևավորմամբ՝ նաև ընդգրկելով այդ սեկտորների մեջ բացառապես մահմեդականներով բնակեցված վիլայեթների մասեր: Չհաջողվեց ձեռք բերել ոչ մեկ ժողովի հիմնում ամբողջ Թուրքահայաստանի համար, ո՛չ էլ Գլխավոր Սորհուրդների իրավասությունների ընդլայնում՝ հասցնելով դրանք Եվրոպական Թուրքիայի վիլայեթների համար 1880 թ. Միջազգային Հանձնաժողովի առաջարկած չափերին:

Ստիպված եղանք հրաժարվել ռուսական նախագծի նաև մի քանի այլ երկրորդական կետերից»²:

Ռուսական կողմի ստիպողական նահանջի պատճառներից մեկն այն էր, որ նրա դաշնակիցներ Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները չափազանց թույլ էին պաշտպանում Ռուսաստանի ներկայացրած նախագիծը: Այնպիսի տպավորություն էր ստեղծվել, թե նրանք իրենց ռուսաստանյան դաշնակցի ներկայացրած փաստաթուղթը պաշտպանում են սոսկ բարոյական պարտք կատարելու միտումով: «Իսկ դա, անշուշտ, ինչպես նկատել է հայ գործիչներից մեկը, - չէր կարող վրիպել եոյակ գինակցության թափանցող հայացքներից»: Ապա՝ «Անգլիան երկյուղ էր կրում ռուսների դեպի Փոքր Ասիայի խորքերը թափանցելուց: Սակայն չէր ցանկանայ նաև հրապարակը Գերմանիային յանձնել, որը դէպի Արեւելք էր երկարել իր թաթր՝ Բաղդադի գծով եւ խառնել տաճկական գործերին»³:

Եթե Հայաստանը երկու մասերի բաժանելու հարցում ռուսական կողմը պարտություն կրեց, բայց անկոտրում մնաց

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1913, д. 3464, л. 77.

² Նույն տեղում, ծ. 3472, л. 101 (օճ.):

³ Հովհաննես աւ. քհ. Հաճեան, Հայոց տաժանքի ճամբաներով, Ա հատոր, Թեհրան, 1965, էջ 336-337:

Եվրոպական վերահսկողությունից հարցում, որը Մանդելշտամի ծրագրի ամենակարևոր ու կենսական պահանջն էր: Թեև Թուրքիայի վրա ներգործություն ամենաանհրաժեշտ միջոցը՝ բարենորոգումների ընթացքի վրա վերահսկողություն իրականացնելու խնդիրը, Մանդելշտամը ձևակերպել էր իր նախագծի վերջին՝ 22-րդ հոդվածում, ըստ որում շատ տարտամ, այն է՝ «մեծ տերություններն ապահովելու են բոլոր այն տրամադրությունների կատարումը» անորոշ ցանկությամբ, բայց նայնպես դա կարող էր վճռական դեր խաղալ բարենորոգումների իրական կենսագործման տեսակետից:

Մի կողմից՝ վեց մեծ տերությունների, մյուս կողմից՝ այդ տերությունների և Թուրքիայի միջև ընդհարման գլխավոր դաշտը հենց այդտեղ էր: Վերահսկողության խնդիրն էր, որի մասին այդ պետությունները չէին կարողանում որոշ համաձայնության հանգել, և որից Թուրքիան կարողացել էր ճարպկորեն օգտվել 33 տարիներ ի վեր:

Թուրքերը գտնում էին, որ վերահսկողությունն անարգանք է իրենց ազգային արժանապատվությանը, մահացու հարված՝ ինքնասիրությանն ու հեղինակությանը, մի բաց դուռ՝ Եվրոպայի ցանկացած միջամտության համար, նախագուշակ՝ կայսրության մոտավոր կամ հեռավոր անդամահատման:

Եվրոպական վերահսկողության դեմ իրենց անկոմպրոմիս կեցվածքը երիտթուրքերը հիմնականում պատճառաբանում էին նրանով, որ արտաքին միջամտության ուրվականը միշտ հետապնդում է իրենց և խանգարում երկիրը բարեկարգելու իրենց ջանքերին:

Անշուշտ, այդ վերահսկողությունը կարող էր երկու տեսակ լինել՝ հավաքական և միասնական:

Հնարավոր էր, որ բոլոր վեց տերությունները, որոնք բաժանված էին երկու խմբավորումների, վերահսկողություն կատարեին հավաքաբար, այսինքն՝ խմբավորումներից մեկին, ասենք՝ եոյակ դաշնությանը լիազորեին իրականացնելու վերահսկողությունը: Մյուս տարբերակն այն էր, որ վերահսկողության ամբողջ գործը միասնական որոշումով հանձնեին վեց պետություններից որևէ մեկին՝ լայն լիազորություններով:

Ակնհայտ էր, որ բոլոր վեց պետությունների թվում միայն Ռուսաստանն էր, որ իբրև Թուրքիայի անմիջական հարևան՝ հնարավորություն ուներ ստանձնելու վերահսկողի պաշտոնը: Մյուս հինգ տերությունները այդ հնարավորությունը չունեին՝ աշխարհագրականորեն Թուրքիայից հեռու լինելու պատճառով:

Թե մեծ պետությունները բարենորոգումների գործադրության համար ինչպես էին ապահովելու վերահսկողությունը, դա, անշուշտ, պիտի արվեր նրանց միջև կնքվելիք առանձին համաձայնագրի դրույթների հիման վրա¹:

Հայկական հարցով համաձայնության գալու համար ոուսաց կայսերական ղեսպանին հարկ եղավ հաղթահարել մեծամեծ դժվարություններ: Մի կողմից նա ստիպված էր լինում հաշվի նստել հայերի՝ հնարավորինս առավել լայն բարեփոխումների հասնելու ցանկության հետ, մյուս կողմից՝ Բ. Դուան համառ դիմադրության հետ, ով ջանում էր ի չիք դարձնել իրեն առաջադրված բարեփոխումները, և ով դրա համար ըմբոստանում էր ոուսական նախագծի բոլոր էական մասերի դեմ: Չի կարելի ասել, թե թուրքական ընդդիմագործության դեմ պայքարում ոուսաց կայսերական ղեսպանը գոնե նվազագույնը ստանում էր Ֆրանսիայի և Անգլիայի ներկայացուցիչների գործուն աջակցությունը:

Ենի-Քեոյում ծավալված բուռն ու անզիջում վիճաբանությունների արդյունքն այն եղավ, որ ութ նիստ գումարելուց հետո, բացարձակապես աննպատակ համարելով հետագա քննարկումները, վեց պետությունների դիվանագետների հանձնախումբը հուլիսի 24-ին դադարեցրեց իր աշխատանքները²:

Հանձնախմբի աշխատանքների ձախողման գլխավոր պատճառը Եռյակ Ձինակցության ներկայացուցիչների բռնած ակնհայտ թշնամական վերաբերմունքն էր ոուսական նախագծի հանդեպ:

Մեծ դժվարությամբ համաձայնություն էր ձեռք բերվել

միայն առանձին ոչ վճռորոշ հարցերում, ինչպես օրինակ՝ դպրոցականը, ագրարայինը և լեզուների իրավահավասարությունը: Ինչ վերաբերում է բարեփոխումների գլխավոր, սկզբունքային հիմքերին՝ մեկ հայկական տարածքային միավորման ձևավորում, տերությունների համաձայնությամբ դրա գլխավոր կառավարչի նշանակում, նշված միավորման նահանգային ժողով, դրանում տեղերի ու պաշտոնների բաշխման հավասարության սկզբունքի կիրառում և մյուս կարևորագույն հարցերում ոուսական կողմը պարտություն էր կրել³:

Ենի-Քեոյի ձախողման առթիվ Պողոս Նուբարը Փարիզից կաթողիկոսին գրում էր. «Ձեր Վեհափառութիւնը Կ. Պոլսոյ Պատրիարքարանի կողմէ տեղեկացած պիտի ըլլայ Դեսպաններու բանակցութեանց ընթացքը, այդ մասին կրկին գրելու հարկաւորութիւն մը չեմ տեսնիր: Արդ՝ Ձեր Սրբութիւնը գիտէ անշուշտ, որ նոյն իսկ Գօմիսիօնի մէջ, Գերմանիա եւ իր երկու Դաշնակիցները՝ Աւստրիա եւ Իտալիա, սխաթեմաթիք ընդդիմութիւն մ'ըրին ոուսական ծրագրի դէմ, այնպէս որ անկարելի եղաւ որեւէ համաձայնութեան մը յանգիլ»²:

Սերգեյ Սազոնովը մի առիթով շեշտել է, որ Ենի-Քեոյի անհաջողության գլխավոր պատճառը ոուսական նախագծի ամեն մի կետի հանդեպ Գերմանիայի ներկայացուցչի ցուցաբերած հետևողական բացասական վերաբերմունքն էր: «Այնպես որ, - նշում էր Սազոնովը, - նախագիծն այն կերպարանքով, որ ստացավ Գերմանիայի ներկայացուցչի մտքած բազմաթիվ փոփոխություններից հետո, կորցրեց իր ողջ նշանակությունն ու գործնական արժեքը: Պետք էր վերջ տալ այդ խայտառակ կատակերգությանը»³:

«Մանչեստր Գարդիան» թերթը տպագրել էր Ենի-Քեոյի արդյունքների մասին Պողոս Նուբարի գնահատականը: «Արդարև, ինչ որ յոյս ունէինք, բոլորը չկարողացանք ստանալ», -

¹ Տե՛ս «Մշակ», № 219, 4 հոկտեմբերի 1913 թ.:

² С. Д. Сазонов, Воспоминания, стр. 172.

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1914, д. 3472, л. 99 об.

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 33, թ. 12:

³ Նույն տեղում:

ափսոսանքով ասել էր նա և ցավով նշել, որ Մանդելշտամի նախագիծը մեծապես տուժել է այնտեղից կարևորագույն մի շարք պահանջներ դուրս մղվելու պատճառով¹: Մի ուրիշ առիթով Նուբարն ասել էր. «Բ. Դուռը գոհացում ստացավ այն բոլոր էական կետերի նկատմամբ, որոնց վրա պնդեց»²:

Ենի-Քեոյում հայկական բարենորոգումների ոռուսական կողմի ներկայացրած նախագծի տապալումը, անչուլտ, ոռուսական դիվանագիտության պարտությունն էր, որն էականորեն բացասական անդրադարձ ունեցավ նրա միջազգային հեղինակության վրա:

Թեև Ենի-Քեոյի օրերին գերման դիվանագետների պահվածքը ոռուս դիվանագիտության համար ստորացուցիչ էր, բայց գործի շահերից ելնելով՝ ոռուսական կողմը հանդես էր բերում արտակարգ սառնասրտություն և համբերատարություն:

Այդպիսով, ինչպես տեսնում ենք, հայկական հարցում հիմնական դերակատարություն ունեցողները երկուսն էին՝ Ռուսաստանն ու Գերմանիան: Վերջինիս խոսքն անքննելի էր իր դաշնակիցներ Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի ու ազդեցիկ էր Ռուսաստանի դաշնակիցներ Անգլիայի ու Ֆրանսիայի համար: Նկատենք նաև, որ այն միակամությունն ու ամբողջությունը, որ կային եռապետական զինակցության մեջ, չկային եռյակ համաձայնության մեջ: Երբ Գերմանիայի և նրա դաշնակիցների ներկայացուցիչները վճռականորեն պաշտպանում էին թուրքական նախագիծը և նույնքան վճռականորեն մերժում ոռուսականը, Ռուսաստանի դաշնակիցներ Անգլիայի ու Ֆրանսիայի ներկայացուցիչները երկչոտաբար չեզոք դիրք էին բռնել: Կարելի է նույնիսկ պնդել, որ եթե Գերմանիան ու նրա դաշնակիցները՝ Ավստրո-Հունգարիան և Իտալիան, բացահայտորեն էին դեմ արտահայտվում Հայաստանում «ինչ-որ» բարենորոգումներ կատարելուն, ապա Անգլիան ու Ֆրանսիան դրանց դեմ գործում էին գաղտնի: Ակնհայտ դարձավ, որ Ռուսաստանն ի

¹ «Մանչեստր Գաղղիանի» սույն հրատարակման հայերեն թարգմանությունը տե՛ս «Կովկասի լրագրեր», № 46, 4 մարտի 1914 թ.:

² «Կովկասի լրագրեր», № 46, 4 մարտի 1914 թ.:

վիճակի չէ միայնակ իրականացնելու իր ծրագրերը: Ռուսաստանի նկատմամբ հատկապես Անգլիայի դարավոր հակադրությունը Միջին Արևելքում ակնհայտորեն ավելի ծանրակշիռ էր, քան իր՝ որպես դաշնակցի դրությունը: Ուստի չէր կարելի հույս դնել իր այդ դաշնակցի վրա: Պետերբուրգում համոզված վստահություն չկար նաև մյուս դաշնակցի՝ Ֆրանսիայի նկատմամբ:

Ֆրանսիան միշտ եղել էր Թուրքիայի պետական ամբողջականության ամենաջերմ պաշտպանը: Նրա քաղաքական ու ֆինանսական շահերը ուրիշ բան չէին կարող թելադրել: Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման կողմնակից լինելով հանդերձ՝ այդ երկիրը նույնքան անվերապահ ջատագով էր Թուրքիայի բարեկարգությանը, սակայն միայն այն պայմանով, որ այդ գործին չմիջամտեն այս կամ այն պետությունը, պետական ու քաղաքական այս կամ այն անհատ գործիչները: Իսկ դա նշանակում էր, որ Ֆրանսիան դեմ էր Թուրքիային հուզող խնդիրները միջազգայնացնելուն:

Այժմ էլ դրա պատճառը հասկանալի էր: Զբաղված լինելով Մարոկկոյում՝ Ֆրանսիան հնարավորություն չունեցրեց Ասիական Թուրքիայում ընդլայնել իր քաղաքական ազդեցությունը չրջանակը: Իսկ եվրոպական մյուս պետությունների, գլխավորապես Գերմանիայի քաղաքական նվաճումները Թուրքիայում եվրոպական հավասարակշռությունը ի վնաս իրեն փոխելու բնույթ ունեին:

Դեռ բալկանյան պատերազմից առաջ Ֆրանսիական դիվանագիտությունը, ինչպես տեսանք, առանձին երկյուղով էր նայում գերմանական առաջխաղացմանը սիրիական ծովափերում, Ալեքսանդրեթում և Մերսինում, իսկ բալկանյան անցքերից հետո այս երկյուղն ավելի լուրջ կերպարանք առավ:

Այդ ընդհանուր շարժառիթներից մղված՝ Ֆրանսիան հայկական հարցի համար ևս միջազգային լուծում էր առաջարկում և հակառակ էր արտահայտվում այս կամ այն պետությունը մասնավոր մանդատ տալու սկզբունքին: Նա առավել ևս չէր ցանկանում, որ Գերմանիան անհատական նախաձեռնություն ստանձնի բարենորոգումների գործադրության տեսակետից, գրավի հայերի համակրությունն ու այդպիսով ջանա իր քաղա-

քական դիրքերն ամրապնդել Հայաստանում և Միջագետքում:

Հայկական հարցի շուրջ ծավալված դիվանագիտական պայքարը Ֆրանսիան օգտագործում էր Բ. Դուան վրա նոր ճնշումներ գործադրելու համար: Արդյունքում նա կոնցեսիա ստացավ Արևմտյան Հայաստանում երկաթգիծ կառուցելու համար:

Մոտավորապես նույն դրդապատճառներով Ենի-Քեոյում Հայկական հարցի համար «չէր տառապում» նաև Անգլիան:

Շատ չանցած՝ Անգլիայի նախարար-նախագահ Ասկվիտը Գիլդհոլում արտասանել էր մեծ ճառ, որը նվիրված էր եղել արտաքին-քաղաքական երեք հարցերի՝ Բալկանյան պատերազմի հետևանքներին, մեքսիկական գործերին և Հայկական բարենորոգումներին:

Առաջնորդող հողվածով անդրադառնալով Ասկվիտի ճառին՝ “Новое время”-ն տեղեկացնում էր, որ առաջին երկու հարցերի վերաբերյալ Ասկվիտը ոչինչ նոր բան չի ասել, բայց Հայկական բարենորոգումների հարցի նրա մեկնաբանությունները մեծ հետաքրքրություն են առաջացրել ունկնդիրների մեջ:

Վարչապետը նշել էր, որ Մեծ Բրիտանիան ողջունել է այն փաստը, որ բալկանյան պատերազմը չի չոչափել թուրքական կառավարության չափերը Փոքր Ասիայում: Թուրքերի գերիշխանությունն անսասան է մնացել ասիական երկրներում, և դա չատ լավ է: Բրիտանական կառավարությունն ամեն կերպ պաշտպանելու է թուրքերի գերիշխանությունը կայսրության մեջ: Միաժամանակ նա այն կարծիքն էր հայտնել, որ գոյություն ունեցող քաղաքական status quo-ի լավագույն երաշխիքը ներքին լայն բարենորոգումներն են Թուրքիայում, որոնք, սակայն, «չեն կարող ցանկալի արդյունք տալ առանց մեծ պետությունների աջակցության», և որ գլխավորն է, այդ բարենորոգումները փոքր իսկ չափով չպետք է խախտեն թուրքական սուլթանի վեհապետական իրավունքները: Իր միտքը Ասկվիտը վերջացրել էր հետևյալ խոսքերով. «Իմ կառավարությունը չի կարող թուրքիայի իրական չափերը զոհաբերել Հայկական երևակայական բարենորոգումներին»¹: Դիպուկ է նկատել Հայկ Ասատրյանը.

¹ Տե՛ս “Новое Время”, 30 октября 1913 г.

«Մի բանում անսխալ էին տաճիկները. նրանք գիտեին, որ բարոյախոսությունը ... Եվրոպայի առաքինությունների վերջին, անգոր մնացորդն է»¹:

Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Էդուարդ Գրեյը, շարունակելով իր նախորդների ավանդական քաղաքականությունը, խորհրդարանի նիստերի ժամանակ բազմիցս հայտարարել էր, որ Անգլիան չի կարող թույլ տալ Ռուսաստանի ուժեղացումը Թուրքիայի ասիական մասում: «Անգլիան իր քաղաքականությունը պաշտպանում է Թուրքիայի անձեռնմխելիությունը, - ասել էր նա, - այդ պատճառով ցանկալի է զգուշանալ Թուրքիայի արևելյան նահանգներին վերաբերվող որևէ քաղաքական պահանջից»²:

Հայ ականավոր գրող Րաֆֆին, դեռևս 1895 թ. անդրադառնալով Հայկական հարցում Անգլիայի քաղաքականությանը, ընդգծել էր, որ Հայերի անտանելի վիճակը թուրքերի տիրապետության տակ երբեք չի հետաքրքրել անգլիացիներին: Նրանց ուզածը միանգամայն ուրիշ բան է՝ «Հայաստանը վերածել հզոր պատենչի Ռուսաստանի դեմ»³:

Երբեք չհրաժարվելով իր թուրքամոլ քաղաքականությունից, ահա այժմ նույնպես, 1912-1914 թթ. Հայկական բարենորոգումների շուրջ դիվանագիտական պայքարում Անգլիան հավատարիմ էր մնում իր անցյալից եկող ավանդույթներին: Իսկ դրա գինը այն եղավ, որ ընդամենն ամիսներ անց Թուրքիան Անգլիային զիջեց Քուվեյթը, իսկ բրիտանական կառավարությունը պարտավորություն ստանձնեց բոլոր ջանքերը գործադրել, որպեսզի «հանգստացնի» Հայերին և թույլ չտա օտար միջամտություններ Հայկական հարցում:

Հաշվի առնելով Պետերբուրգի նախաձեռնությունների նկատմամբ Ռուսաստանի դաշնակիցների ծայրահեղ անտարբերությունը և այն, որ, չնայած դրան, ռուսական կառավարու-

¹ Հայկ Ասատրեան, Հայաստան արիական նախադիրք Առաջավոր Ասիայում, Սոֆիա, 1942, էջ 17:

² «Մշակ», 8 մարտի 1914 թ.:

³ Րաֆֆի, Տաճկահայք, 1895, էջ 41:

Թյունը մտադիր չէ ձեռք քաշելու Հայկական Հարցի լուծման իր տեսլականից, Բ. Դուռը դիմում էր ամենատարբեր միջոցների՝ Հայ-ոսուսական գործակցությունը խարխելու համար: Այդ նպատակի իրագործմանն ամեն կերպ նպաստում էին գերմանացիները՝ փորձելով Հայ գործիչներին մոտեցնել թուրքերին: Եվ սկսվում է անպաշտոն տեսակցությունների մի շարք:

ՀԱՅԵՐԻՆ ՇԱՀԱԾԵԼՈՒ ՓՈՐՁ ԲԵՌԼԻՆԻՑ

Ենի-Քեոյի ձախողումից հետո, անշուշտ, Բեռլինից եկած հրահանգով դեսպան Վանգենհայմը միանգամայն անսպասելիորեն ցուցաբերեց հաշտվողական վերաբերմունք՝ Հայերի վրա անբարենպաստ տպավորություն չթողնելու համար: Նա պահանջեց, որ մեծ տերությունները միջոցներ ձեռնարկեն և պարտադրեն Բ. Դուռը գոնե իրականացնելու թուրքական ծրագիրը՝ համաձայնեցված ոսուսական ծրագրի այն կետերի հետ, որոնք միաձայն ընդունվել էին Ենի-Քեոյի քննարկումների ժամանակ¹:

Գերմանական դեսպանն իր գիտնական կցորդ Ֆոն-Շտրենմայելի միջոցով ներքին գործերի նախարար Թալեաթ բեյին թելադրում է ուղղակի հարաբերության մեջ մտնել Հայոց պատրիարքարանի հետ և համատեղ լուծել Հայկական Հարցը՝ իբրև ընտանեկան խնդիր: Այս թելադրանքից անմիջապես հետո Թալեաթն իր մոտ է հրավիրում Գրիգոր Զոհրապին և նրան հայտնում Բ. Դուռն ջերմ ցանկությունը՝ Հայերի և իրենց միջև բանակցությունների միջոցով, առանց դրսի միջամտության, Հայկական Հարցը լուծելու համար: Հանդիպման ընթացքում օգտվելով առիթից, Զոհրապը Թալեաթին ընդհանուր գծերով պարզում է Հայերի գլխավոր պահանջները օսմանյան շահերի տեսակետից: Դրա վրա վերջինս բաղձանք է հայտնում հատուկ մի տեսակցություն կազմակերպել կողմերի մասնակցությամբ՝ փոխըմբռնման գալու համար:

¹ Տե՛ս «Վեստեննևի օրագիրը» (Յան Վան դեր Դյուսենի առաջաբանից), էջ 25-26:

Յիմերմանի հետ Պողոս Նուբարի հանդիպումից մեկ շաբաթ անց Գրիգոր Զոհրապի տանն անպաշտոն հանգամանքով հավաքվում են Թալեաթը, Սալի և Ֆեհմի էֆենդիները, Իթթիհադի ընդհանուր քարտուղարը և Հայերից՝ Զոհրապը, Շահրիկյանը և Վարդգեսը¹:

Հայ գործիչները նախօրոք պայմանավորվել էին խստիվ պահպանել իրենց ղեկավար սկզբունքներից մեկը, այն է՝ թուրքերի հետ ապահովել սովորական հարաբերություններ, իսկ Հայկական Հարցի մասին երբեք պաշտոնական բանակցություններ չսկսել, քանի որ այդ հարցը գտնվում էր միջազգային կովանի վրա, ուստի որևէ պաշտոնական բանակցություն կխանգարեր դրան, մանավանդ որ նրանք ոչ մի հավատ ու վստահություն չունեին թուրքերի, նրանց ղեկավարների անկեղծ բարեկամությանը: Այս հանգամանքը ուղեցույց համարելով՝ խորհրդակցության հայ մասնակիցները թուրքերի հետ խոսում էին միայն ընդհանուր հարցերի շուրջ, չնայած Թալեաթը և նրա ընկերները ամեն կերպ ջանում էին հանդիպմանը բանակցությունների ձև տալ՝ խոսելով ավելի որոշակի հարցերի մասին:

Սույն տեսակցություններից հետո նույն կազմով նշանակվել էր երկրորդ հանդիպումը, որի ընթացքում թուրքերը ցանկություն հայտնեցին լսել Հայ գործիչների պահանջները և դրանց մասին անկեղծորեն հայտնել իրենց տեսակետները:

Ճիշտ այդ միջոցին էր, որ գերմանական դեսպանը կատարեց իր տարօրինակ volte face-ն՝ միաժամանակ հրաժարվելով կատարած զիջումներից: Գուշակելով դրա պատճառը՝ Հայ գործիչները չուզեցին այլևս քաջալերել թե՛ թուրքերին և թե՛ մանավանդ գերմանական դեսպանին:

Դրանից հետո Հայերն այլևս գերմանական դեսպանության հետ հրաժարվում էին շփվել: Թուրքերն էլ, այդ պահին զբաղված լինելով բուլղար-թուրք կոնֆերանսով, որոշ ժամանակ համարյա դադարեցրել էին իրենց ակտիվությունը Հայկական Հարցի շուրջ: Եթե չհաշվենք Զոհրապի մեկ-երկու տեսակ-

¹ ԳԱԹ, Գրիգոր Զոհրապի ֆոնդ, վավ. 91, թ. 13:

ցուծյունները խալի և Թալեաթ բեյերի հետ, ապա պետք է ասել, որ դրանով ավարտին էր հասել թուրք պարագլուխների հետ հայ գործիչների անպաշտոն հանդիպումների առաջին փուլը¹:

Թուրք առաջնորդների հետ նման խոսակցությունների երկրորդ փուլը սկսվում է Փարիզ մեկնած Պետրոս Հալաջյանի Կ. Պոլիս վերադառնալուց հետո:

Սեպտեմբերի սկզբին Թալեաթը ցանկություն է հայտնում Հայկական հարցի մասին խոսել Հալաջյանի հետ և նրան հատկացնել միջնորդի դեր: Թալեաթի հետ տեսակցելուց առաջ Հալաջյանը դիմել էր հայոց պատրիարքարանի Ապահովության հանձնաժողովի երկու անդամների* և նրանց հայտնելով առաջարկության մասին՝ նրանցից ցանկացել էր կարծիք իմանալ: Ստացվել էր բացասական պատասխան. երկու գործիչներն էլ դա համարել էին խիստ վնասակար²:

Չնայած դրան՝ Հալաջյանը, այնուամենայնիվ, երկու հանդիպում է ունենում Թալեաթի հետ, որը վերջանում է անարդյունք³:

Ստեղծված պայմաններում, երբ Ենի-Քեոյի խորհրդաժողովում փաստորեն ձախողվել էր բարենորոգումների ուսական ծրագիրը, Ա. Ջիվելեզովը “Русскія Вѣдомости” թերթում տպագրված հոդվածում շեշտում էր, որ դրա գլխավոր դերակատարը հանդիսացավ դեսպան Վանգենհայմը, որը «երիտթուրքական կառավարության խանդավառ երկրպագուն է և Իթիհադի պարագլուխների հավատարիմ բարեկամը»⁴: Նրա երկերես քաղաքականությունը Բեոլինում մեծ պաշտպանություն է գտնում հատկապես Մերձավոր Արևելքի հարցերում գերմանացիների պաշտոնական ամենամեծ պատգամախոս, արտգործնախարար-

¹ ԳԱԹ, Գրիգոր Չոհրապի ֆոնդ, վավ. 91, թ. 14:

* Փաստաթղթում չի նշված, թե ովքեր էին Ապահովական հանձնաժողովի այդ երկու անդամները:

² ԳԱԹ, Գրիգոր Չոհրապի ֆոնդ, վավ. 91, թ. 14:

³ Նույն տեղում, թ. 15:

⁴ Ա. Ջիվելեզովի նշված հոդվածի արտատիպը տե՛ս «Արարատ», № 2, փետրվար, 1914, էջ 123:

րի օգնական ֆոն Ցիմերմանի կողմից: Հոդվածագիրը բարձրացնում էր այն հարցը, թե գերմանաթուրքական ճամբարն ինչու է հապաղում, և ինքն էլ պատասխանում է. ձգձգումներն առաջին հերթին օգտակար են թուրքական կառավարությունը, և դա ինքնըստինքյան հասկանալի է, բայց ինչու է ձեռնադրու Գերմանիային: Որովհետև, նշում էր Ջիվելեզովը, Բեոլինում գտնում են, որ հայկական բարենորոգումները հարկավոր են միայն Ռուսաստանին, իսկ Գերմանիան դրանից ոչ մի օգուտ չի քաղելու: Հետևապես գերմանացիներն ուզում են դրա դիմաց փոխհատուցում ստանալ: Բայց փոխհատուցումն արդեն կատարված է այն իմաստով, որ նրանք արդեն հասցրել են մտնել հայկական Կիլիկիա: Դա գերմանացիներին քիչ է թվում, ուստի նրանք այժմ «իրենց հայացքն ուղղում են դեպի Մեծ Հայաստան»¹, ձգտում են այնտեղ ձեռք բերել կոնցեսիաներ, ցանկանում են կառուցել նոր երկաթուղիներ, որոնք կմիացնեն Անգորան, Կեսարիան, Սվազը, Նարբերդը և Մոսուլը, այսինքն՝ քաղաքագիտական լեզվով ասած՝ Հայաստանի արևմտյան բոլոր տարածքները կտրելու միացնել Թուրքիայում արդեն ձեռք բերած իրենց ազդեցություն չըջաններին²: Ճակատագրական սխալ կկատարի Ռուսաստանը, «եթե այդ բոլոր խաղերի վրա չդարձնի հարկավոր ուշադրություն և, վերջապես, եռանդուն կերպով չբարձրացնի յուր ձայնը»³, - շեշտում էր Ջիվելեզովը:

Ենի-Քեոյից հետո Կ. Պոլսում երկար ժամանակ ընդհատվեցին բարենորոգումների հարցի քննարկումները:

Միանգամայն պարզ էր դառնում, որ առանց Գերմանիայի համաձայնությունից՝ անհնարին է ակնկալել որևէ առաջընթաց հայկական հարցում: Բարենորոգումների ընթացքի վերահսկողություն, հայկական տարածքների կառավարման վարչական ձևի և մյուս կարևորագույն խնդիրների լուծման համար բավական էր, որ համաձայնություն կայանար Գերմանիայի և Ռու-

¹ Ա. Ջիվելեզովի նշված հոդվածի արտատիպը տե՛ս «Արարատ», № 2, փետրվար, 1914, էջ 123:

² Նույն տեղում, էջ 124:

³ Նույն տեղում:

սաստանի միջև, որովհետև այդ երկուսի համաձայնությունն ըստ էության կնշանակեր երկու երեքպետյան խմբակցությունների համաձայնություն: Եթե Գերմանիան կողմ լիներ, կողմ կլինեին նաև Ավստրիան ու Իտալիան, իսկ Ռուսաստանի հետ համաձայն կլինեին Ֆրանսիան և Անգլիան: Ուստի ռուսական կառավարությունը մնում էր մի բան՝ փորձել մեղմել նրա հակառակությունը և համաձայնության եզրեր գտնել փոխզիջման գնալու միջոցով, որը կապահովեր գոնե նվազագույն աջակցություն բարեփոխումների նախագիծը Բ. Դոանը ներկայացնելիս¹: Իսկ դա հնարավոր կլիներ, եթե հաջողվեր փարատել Բեռլինի կասկածները: Այդ նպատակին ուղղվեց և՛ ռուսական դիվանագիտություն, և՛ Նուբար փաշայի գործունեությունը:

Միաժամանակ թուրք ղեկավարները կրկին փորձ են անում Հայկական հարցը զրկել իր միջազգային բնույթից և այն վերածել հայ-թուրք խնդրի: Թալեաթ բեյի, Օսման Նազիմի փաշայի և Իթթիհադի ազդեցիկ գործիչներից էոմեր Նազի բեյի պարբերական դիմումները միայն մի բան էին վկայում՝ Հայկական կողմին հարկադրել բանակցությունների մեջ մտնել իրենց հետ և, այդպիսով, արգելք լինել պետությունների միջամտությանը: Այդ նպատակով նրանք ամեն կարելին անում էին, որպեսզի Կ. Պոլիս բերեն Ազգային պատվիրակության ղեկավար Նուբար փաշային՝ հայության եվրոպական գործունեությունը հիմքից անդամահատելու համար: Թուրք պաշտոնյաները, սակայն, հայերին միայն այնպիսի խոստումներ էին տալիս, որոնք շատ հեռու էին գոհացուցիչ լինելուց:

Այնուամենայնիվ, հայ գործիչներից ոմանք հակված էին համաձայնության գալու Բ. Դոան հետ և նույնիսկ հրաժարվելու պետությունների գործոն միջամտությունից: Նման տրամադրությունների առաջացմանը նպաստում էր այն, որ թուրքահայության մոտ մի թույլ հույս էր առկայծել այն պատճառով, որ կայսրության ամբողջականության պահպանման մտահոգությունները՝ կառավարությունն առաջին կարևոր քայլն էր արել

¹ АВПРИ, ф. «Политярхив», г. 1913, д. 3472, л. 99 (об.).

արարների արդար պահանջներին գոհացում տալու համար: Այդ ազգը, որը թուրքից հետո կայսրության ամենակարևոր տարրն էր, Ալեքսադրեթից և Դիարբեքիից սկսած՝ տարածվում էր մինչև Հնդկական օվկիանոս, և այդ տարածքը կազմում էր Օսմանյան կայսրության գրեթե 2/3 մասը: Ոչ շատ առաջ արար ազգային իշխանությունների հետ կնքած համաձայնագրերով կառավարությունը զիջել էր մի շարք կարևոր արտոնություններ. 1) Արաբները պահանջել էին երեք նախարարի պաշտոն, ինչպես նաև մյուս բոլոր նախարարություններում պատասխանատու բարձր պաշտոններ: 2) Արաբական տարրական դպրոցների և դատարանների պաշտոնական լեզուն պետք է լիներ արաբերենը: 3) Պետական բարձրագույն պաշտոնների ընտրության ժամանակ արաբ տարրը ներկայացված պետք է լիներ իր թվական համամասնությամբ: 4) Արաբաբնակ վիլայեթների հասույթների մեծագույն մասը պետք է ծախսվեր նույն վիլայեթների պետքերի համար²:

Հայերը կարծում էին, որ կառավարությունը հետզհետե գոհացում կտա նաև հայությանը: «Օսմ[անյան] կայսրութեան երկու ամենազորեղ տարրերու մէջ՝ կնքուած այս համաձայնութիւնն անկեղծաբար մեզ կ'ուրախացնէ... Մենք կը յուսանք թէ կառավարութիւնը համոզմամբ վերահասու ըլլալով տարրերու եղբայրակցութեան օգուտներուն՝ շուտով նման եղբայրակցութիւններ կը կնքէ նաեւ հայերուս հետ, տալով մեզ մեր ուղածները»², - գրում էր Կ. Պոլսում հրատարակվող հայ ավետարանականների օրգան «Աւետարներ» թերթը:

Բայց դրանք լոկ հույսեր ու ցանկություններ էին:

¹ «Աւետարներ» (Կ. Պոլիս), № 33, 16 օգոստոսի 1913 թ.:

² Նկատի ունի՝ «միջև»:

² «Աւետարներ» (Կ. Պոլիս), № 33, 16 օգոստոսի 1913 թ.:

**ՅՈՀԱՆՆԵՍ ԼԵՓՍԻՈՒՍ.
«ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՐՅԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐՑՆ Է»**

“Der Reichesbote” լրագրի 1913 թ. մայիսի 14-ի համարում Հայ ժողովրդի վաղեմի բարեկամ դոկտոր Յոհաննես Լեփսիուսը գետնից էր Կիլիկիայում գրած մի հոդված՝ «Հայաստանի ապագան» վերնագրով: Մեծ հայասերը ցավ էր հայտնում, որ նորից ու նորից ստիպված է հերքել բազմիցս հերքված այն կարծիքը, թե հայոց կոտորածների հիմնական պատճառը հայ վաճառականների կեղեքումներն են, որոնք, իբր, խաբուծ ու ծծում են խեղճ մահմեդականների արյունը, մրցակցության մեջ տապալում այլազգի բոլոր առևտրականներին:

Ի վերջո, պե՞տք է փարատվի հայերի՝ իբրև «արևելքի հրեաների» մասին առասպելը, թե՞ ոչ, - հարց էր տալիս Լեփսիուսը և շարունակում. «Մի ազգ, որի 70 տոկոսը հողագործ, իսկ 15 տոկոսը զանազան արհեստների մարդիկ են, անխղճություն է նրան ներկայացնել որպես չարչիական մի ժողովուրդ»¹:

Դիմելով վաճառականությանը վերաբերող 1911 թ. արևելյան վիճակագրությանը՝ Լեփսիուսը նշում էր, որ Թուրքիայի մեծածախ առևտրի միայն 10 տոկոսն է մահմեդականների ձեռքում, դրանից փոքր-ինչ ավելի են մանրավաճառությանը զբաղվող մահմեդականները: Դրա դիմաց ոչ միայն ներքին վաճառականությունը, այլև եվրոպայի ու մյուս աշխարհամասերի հետ Թուրքիայի առևտրական գործառույթունն իրենց ձեռքում ունեցող վաճառատների ընդհանուր թվի 40 տոկոսն ընկնում է հույներին, իսկ 30 տոկոսը՝ հայերին: Առևտրի մնացած մասը պատկանում է սիրիացի, հրեա և եվրոպացի առևտրականներին պատկանող վաճառատներին:

Այնուհետև հոդվածագիրը նշում էր, որ Թուրքիայում աշխատող գերմանացի ֆինանսիստներն ու առևտրականները, Բաղդադի երկաթուղին կառուցող ինժեներները բազմիցս անդրադարձել են հայերի կողմից օսմանյան կայսրությանը բերած մեծ

¹ Տե՛ս «Մշակ», № 86, 24 ապրիլի 1913 թ.:

նպաստների մասին, իրեն պատմել են, թե մանավանդ Թուրքիայի խորքերում ոչինչ անել հնարավոր չէ առանց հայերի: Ասիական Թուրքիայի՝ Միջերկրական և Սև ծովերի ափերի մշակելի բոլոր հարմար տարածքները մինչև վերջին տարիներս պատկանել են հայերին և հույներին:

Իսկ որո՞նք են այդ երևույթի պատճառները, հարց էր տալիս Լեփսիուսը և պատասխանում, որ դրանք բազմազան են՝ ավանդույթներ, աչքաբացություն, գիտելիքներ, լեզուների իմացություն, կրոնական նեղ կաղապարների մերժում և այլն: Թուրք վաճառականների գերակշիռ մասը եվրոպացիների հետ առևտրական հարաբերություններից դուրս է մնում լեզուներ չիմանալու պատճառով: Եթե քրիստոնեական ազգերը մեծ թափով միջամուխ են լինում եվրոպական արժեքներին, ապա մահմեդական քաղաքակրթությունը մնացել էր մի անշարժ կետի վրա:

Լեփսիուսը շեշտում էր, որ Թուրքիայի հայերը որևէ ցանկություն չունեն դավաճանելու կայսրությանը: Նրանք ուզում են մնալ Թուրքիայում, եթե կառավարությունը հոգա արդարադատության ամենապարզ պահանջները: «Հենց որ թուրքական կառավարությունը հաստատուն կամք ցույց տա հայկական վիլայեթներում կարգ ու կանոն ստեղծելու, խլրտումները, որոնց ծնունդ տվողը ռուս գործակալներն են, կղաղարեն ինքնին, և հայ ազգաբնակչությունն ամենայն հաստատակամությամբ կպահի կառավարության կողմը»:

Մի ուրիշ հոդվածով Լեփսիուսը գերմանական կառավարության ուշադրությունը հրավիրում էր այն բանի վրա, որ եթե նա ցանկանում է Թուրքիայի կայունությունը, ապա պետք է ոչ թե միակողմանի պաշտպանի վերջինիս, այլև լուրջ քայլերի դիմի Օսմանյան կայսրության հայերի վիճակը բարվոքելու համար: Ոչ թե հայերին թշնամությամբ հանել Բեռլինի դեմ, այլ կոնկրետ բարի գործերով շահել նրանց բարեկամությունը: Եվ դա նաև հանուն Թուրքիայի ներքին դրության ամրապնդման:

«Կոնկրետ բարի գործերից» Լեփսիուսը թվարկում էր մի քանիսը, որոնցից էին նաև. 1) Շարունակել երկաթուղիների շինարարությունը իր զանազան ճյուղերով, որոնք կընդգրկեն

նաև Հայաստանի տարածքները, 2) Պոլսում բացել գերմանական համալսարան, որի սովորողների թվում մեծ բաժին հատկացնել Հայերին, ինչպես նաև դասախոսական կազմում ներգրավել Եվրոպայում կրթություն ստացած Հայ մտավորականների, 3) Ուշադրություն կենտրոնում պահել բուն Հայաստանի կրթական կարիքների բավարարման հարցը, այնտեղ հիմնել եվրոպական մակարդակի մի մեծ վարժապետանոց և այլն¹:

Այս վիճակում էր գործը, երբ 1913 թ. հունիսի սկզբին դր. Լեպսիուսը ձեռնարկեց նոր ճամփորդություն Թուրքիայում՝ հիմնականում լինելով Կիլիկիայում: Վերադառնալով Կ. Պոլիս՝ այստեղ նրա առաջին իսկ գործը եղավ նոր իրադարձությունների լույսի տակ խորամուկս լինել Հայերի պահանջներին, պարզել, թե «արդյո՞ք բոլոր Հայերն են, որ ծառայություն են լծվել ռուսական նվաճողական քաղաքականությանը», ինչպես իրեն հաղորդել էին Կ. Պոլսի գերմանական դեսպանատանը: Հայերի հետ շփումների ընթացքում մանրամասն ծանոթանալով պետություններին ներկայացվելիք նրանց ծրագրին, որը հավանություն էր գտել առաջին հերթին Պետերբուրգում, նա համոզվեց, որ գերմանական կողմի կասկածները միանգամայն անտեղի են: Ընդառաջ գնալով Կ. Պոլսի գերմանական դեսպանության ցանկությանը՝ նա համաձայնեց որոշ ժամանակ մնալ օսմանյան մայրաքաղաքում՝ Հայերի հետ գերմանական շփումները խորացնելու, նրանց հետ իրավախոսություն ստեղծելու համար:

Պետերբուրգի հայկական խմբակը տեղեկացված էր, որ Կոստանդնուպոլսում դր. Լեպսիուսը հօգուտ հայկական պահանջների տեղի գերմանական դեսպանի հետ ունեցել է լուրջ խոսակցություն և պահանջել գիշումների գնալ Հայկական հարցում: Լեպսիուսի հետևողական ջանքերի շնորհիվ դեսպան Վանգենհայմը ինչ-որ մի պահից սկսել էր որոշակի բարեհաճություն ցուցաբերել Հայերի պահանջների նկատմամբ, որը, սակայն, դիվանագիտական բարենաղթություններից և զրույցներից այն

¹ Տե՛ս «Աշխատանք» (Վան), № 32 (128), 22 հունիսի 1913 թ.:

կողմը չէր անցնում և չէր արտահայտվում իրական գործնական քայլերում¹:

Երկար բանակցություններից հետո և Լեպսիուսի խորհրդով դեսպան Վանգենհայմը, վերջապես, հայկական պահանջներից ընդունեց մի քանիսը, որի մասին Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը պարբերաբար հաղորդում էր ռուսական դեսպան Միխայիլ Նիկոլակիչ Գիրսին:

Այդ «գիշումներն» անելով հանդերձ՝ գերման դեսպանը դուկտ. Լեպսիուսի միջոցով ամեն կերպ ջանում էր Հայերին անջատել ռուսներից ու չեզոքացնել և նրանց ուղղակի հարաբերության մեջ դնել օսմանյան կառավարության հետ: Բայց Հայ գործիչները, խուսափելով այդ ծուղակից, հասկացրին ու համոզեցին գերմանացիներին, որ ներկա պահին թուրքական կողմի հետ իրենց որևէ պաշտոնական բանակցություն առայժմ անկարելի է, և որ թե՛ Հայերի և թե՛ գերմանացիների շահը պահանջում է նախ և առաջ Հայոց հարցի շուրջ ռուս-գերմանական ուղղակի համաձայնություն ձեռք բերել, որի շնորհիվ միայն կարելի կլիներ թուրքերին համոզել Հայաստանում ձեռնարկելու բարենորոգումներ: Միաժամանակ նրանք բացատրում էին, որ անհնարին է Հայերին անջատել ռուսներից, և որ Հայերը միաժամանակ կցանկանային, որ Գերմանիան չահագրգռվածություն ցուցաբերեր իրենց հարցով:

Ռուս-գերմանական մերձեցման անհրաժեշտության մասին Հայ գործիչները մտքեր էին փոխանակում դուկտ. Լեպսիուսի հետ՝ նպատակ ունենալով Գերմանիան հակել ռուսների կողմը: Ի վերջո նա շատ նպատակահարմար ու օգտակար գտավ այդ հեռանկարը, և ինքն առաջինը եղավ, որ գերմանական դեսպանի համաձայնությամբ տեսակցություն ունեցավ Անդրե Մանդելշտամի հետ, որից շատ լավ տպավորություն ստացավ: Դրանից հետո ռուս, և գերման դեսպանները ուղղակի հարաբերությունների մեջ մտան երկու կողմերի թարգմանների (զրազոմանների) միջոցով: Բանակցությունների ընթացքում գերմանական կողմ-

¹ ИЗПАК, том I, стр. 291.

մից եղան նոր զիջումներ: Դա, իր հերթին, պարտավորություն դրեց ուսական կողմի վրա՝ նույնպես որոշ զիջումների գնալ, որոնք վերաբերում էին Թուրքահայաստանի երկու սեկտորներին, ինսպեկտորներին և այլ խնդիրների: Միաժամանակ Հայկական Հարցով Հարաբերություններ Հաստատվեցին Բեռլինի և Պետերբուրգի միջև¹:

Երկու ղեսպանների այս մերձեցման միջոցին ղոկտոր Լեփսիուսը Հայ գործիչներին առաջարկեց միաժամանակ հարաբերություններ սկսել Բ. Դուան հետ: Հայկական կողմը նկատեց, թե թուրքերի հետ հարաբերությունները կարող են նրանց քաջալերել իրենց ընդդիմության մեջ, ուստի ավելի հարմար է այդպիսի պատասխանատու քայլ անելուց առաջ իմանալ Ազգային պատվիրակության կարծիքը: Լեփսիուսը ղժգոհությամբ ընդունեց այդ մերժումը և ստիպված հեռագրով Փարիզից Կ. Պոլիս հրավիրեց Պողոս Նուբար փաշային, որը պետք է բանակցություններ վարեր, և հնարավորության դեպքում նպաստեր՝ վերջնական համաձայնության գալու: Բայց Ազգային պատվիրակության ղեկավարը ինքնաբերաբար, թե պատրիարքարանից ստացած հեռագրի հիման վրա մերժել էր գալ Պոլիս՝ պատճառաբանելով, որ հայոց կաթողիկոսն իրեն պաշտոն է սահմանել միմիայն Եվրոպայի համար, և թե Պոլսում բանակցությունների վարումը միայն ու միայն պատրիարքարանի և ազգային իշխանությունների իրավասությունն է: Լեփսիուսի հեռագրի հետ գրեթե միաժամանակ Նուբար փաշան Կ. Պոլսի պատրիարքարանից նույնպես հեռագիր է ստանում, որով նրան խնդրվում էր չընդունել Կոստանդնուպոլիս գալու հրավերը²:

Այն բանից հետո, երբ պարզ է դառնում, որ Պ. Նուբարը վճռականապես հրաժարվում է Փարիզից Պոլիս գնալ, ղոկտ. Լեփսիուսը Կ. Պոլսից մի ուրիշ հեռագիր է ուղարկում նրան, որով հայտնում է, որ եթե Ազգային պատվիրակության ղեկավարը չի ընդունում իր առաջարկությունը, ապա ինքը նախա-

¹ ԳԱԹ, Գրիգոր Զոհրապի ֆոնդ, վավ. 91, թ. 4:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 33, թ. 20-ի չրջ.:

տեսվածից չուտ մեկնում է Եվրոպա՝ անձամբ հանդիպելու նրան: Եվ այդպես էլ լինում է:

Սեպտեմբերի սկզբին տեղի է ունենում երկու գործիչների հանդիպումը Շվեյցարիայում: Զրույցի ընթացքում ղոկտորն անդրադառնում է այն կետերին, որոնց չուրջ Պոլսում փոխըմբռնում էր ձեռք բերվել, ապա ավելացնում է, որ օսմանյան մայրաքաղաքում վերջնական համաձայնություն գոյացնելը շատ դժվար էր, քանզի տերությունների այնտեղի ղեսպանատների թարգմանիչները, որոնք դժբախտաբար մեծ ազդեցություն ունեն իրենց պետերի վրա, շատ թրքասեր են, և ինքը, որ հայերի բարեկամն է, փափագում է, որ բարենորոգումները հաջող ավարտ ունենան, ուստի այդ իսկ պատճառով եկել է իրեն խնդրելու իր հետ կրկին մեկնել Բեռլին և գերման արտգործնախարարությունից ձեռք բերել ավելի նպաստավոր տրամադրություն, որ չի գտել Պոլսո ղեսպան Վանգենհայմի մոտ: Նուբարը Լեփսիուսին պատասխանում է, որ իր ազգի դատի հաջողության համար ինքը պատրաստ է ամեն ինչ անել, բայց քանի որ բարենորոգումների խնդիրը ձեռնարկել է Ռուսաստանը, և նա էլ ներկայացրել է ծրագիրը, որի համար արժանացել է Հայ ժողովրդի հարգանքին ու երախտագիտությանը, հետևապես գերմանական կառավարությունն առաջին հերթին պետք է համաձայնություն գա նրա հետ¹:

Այս ամենի մասին հեռագրելով կաթողիկոսին՝ Պողոս փաշան Լեփսիուսի հետ իր զրույցի նման ընթացքը պատճառաբանում էր նրանով, որ «այս պայմաններուն մեջ ոուս կառավարութեան [նկատմամբ] մեր յարգանքը եւ երախտագիտութիւնը ապացուցանելու համար մենք պետք չէինք ուղղակի կերպով միջամտիլ և կամ անոր (Լեփսիուսին:– Չ. Ս.) որևէ խոստում մը ընիլ»²: Հետևաբար՝ բանակցությունները պետք է տեղի ունենային Պետերբուրգի և Բեռլինի միջև:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 33, թ. 20-ի չրջ.:

² Նույն տեղում, թ. 21:

Գործը թողնելով երկու կողմերին, որի լուծման համար նրանցից մեկը՝ Ռուսաստանը, մեծապես չահագրգռված էր դրա հաջող ելքով, իսկ մյուսը՝ Գերմանիան չարունակում էր մնալ որպես գլխավոր հակառակորդ, Նուբարը, սակայն, մտադիր չէր ամբողջովին մի կողմ քաշվել: Նա դոկտոր Լեփսիուսին ասում է, որ «եթե իմ աջակցությունս կրնայ դոյզն օգտակարություն մը ունենալ այս համաձայնությունեան օժանդակելու, ապա ձեռքիս եկածը պիտի ընեմ»¹: Նա պատրաստակամություն է հայտնում կրկին գնալու Բեռլին և միջնորդի դեր կատարելու երկու կառավարությունների միջև, եթե, իհարկե, նրանք ցանկանան ընդունել իր այդ առաջարկությունը: Դոկտոր Լեփսիուսը լիովին հավանություն է տալիս գրուցակցի մտադրությունը, ապա նրանք պայմանավորվում են, որ 2-3 օր հետո դոկտորը մեկնելու է Բեռլին, տեսակցություն է ունենալու արտգործնախարարի հետ, որպեսզի նա Նուբարին պաշտոնապես հրավիրի տեսակցության: Վերջինս սիրահոգաբար հայտնում է, որ հրավերը ստանալուն պես անմիջապես կմեկնի Բեռլին, միաժամանակ դոկտորին իրազեկում է, որ եթե գործերն ընթանան իր ուղածի պես, ապա «պարտական պիտի ըլլամ նաև Բէթէրսպուրկ ալ երթալ և զիս Ռուսական կառավարութեան տրամադրութեան տակ ղնելով, իրեն տեղեկացնել ինչ որ ցարդ կատարուած է, քանզի չենք կրնար չի յիշել, որ Ռուսիա եղաւ՝ որ մեծանձնութեամբ մեր դատին հոգւով փարեցաւ»²:

Բայց, ցավոք, գործընթացը դոկտոր Լեփսիուսի կարծածից շատ ավելի դժվար ընթացք ունեցավ, քանզի նրա հետ հանդիպումից շատ չանցած՝ Նուբարը պատրիարքարանից նամակ ստացավ, թե Պոլսից դոկտորի մեկնումից հետո այնտեղի գերմանական ղիվանագետների մտքերում առաջ է եկել լուրջ փոփոխություն, որի հետևանքով դեսպանատունը հետ է առել դոկտ. Լեփսիուսի ջանքերով արված բոլոր զիջումները և պատրիարքարանին հայտնել է, թե բարենորոգումների համար հա-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 33, թ. 21:

² Նույն տեղում, թ. 21-ի շրջ.:

յերը պետք է անմիջական բանակցությունների մեջ մտնեն Բ. Դուան հետ և նրա հետ էլ գան ընդհանուր համաձայնություն:

Բնական էր, որ պատրիարքարանը ուղղակի շփարել էր այս անակնկալ փոփոխություններից, քանզի միանգամայն ստույգ էր, որ եթե Գերմանիան համառոտ իր բռնած այս դիրքի մեջ, ապա բարենորոգումները կենթարկվեին շատ մեծ վտանգի:

Բայց Նուբար փաշան իր հույսը չէր կտրում և ուզում էր հավատալ, թե Վանգենհայմի գլխավորած Կ. Պոլսի դեսպանությունը բարենորոգումների հանդեպ այդպիսի աննպաստ դիրք է բռնել առանց Բեռլինի հրահանգների, և ինքը համոզված է, որ Բեռլինում, այնուամենայնիվ, կհանդիպի ավելի նպաստավոր տրամադրություն: «Նամանավանդ կը յուսամ, որ Ռուսիա, որ այնքան վեհանձնօրեն ընդգրկեց և հոգւով փարեցաւ մեր դատին, եւ որ անոր ի նպաստ չուայլած աջակցութեան եւ օժանդակութեան մէջ այնքան մեծ անչահախնդրութիւն մը ցոյց տուաւ, պիտի կրնայ նաեւ այս նոր դժուարութեանց առաջըն առնիլ»¹, - Ռուսաստանի մասին իր խորհրդածությունները այսպես էր ամփոփում Ազգային պատվիրակության ղեկավարը:

Դոկտ. Լեփսիուսի՝ Եվրոպա մեկնելուց մի քանի օր անց՝ օգոստոսի 24-ին, գերմանական դեսպանության թարգման Շեոնբերգը Մանդելչտամին հաղորդել էր, թե դեսպան Վանգենհայմը տրամադիր է պաշտպանելու Հայկական շրջանը մեկ նահանգի վերածելու տարբերակը: Տեղեկանալով այդ մասին՝ պատրիարքարանը հարթված է համարում խնդիրը և սպասում, որ ոուս և գերման դեսպանները զուլիս գլխի տալով Հայկական մեկ շրջան ստեղծելու երկուստեք ընդունած տարբերակը ընդունել կտան նաև Բ. Դուանը և այդ նպատակով նրան կներկայացնեն համատեղ պատրաստած դիմում²:

Բայց մի քանի օր հետո Շեոնբերգը հանկարծ գալիս է ուսական դեսպանատուն և Մանդելչտամին հայտնում, թե դեսպան Վանգենհայմը հրաժարվում է Հայկական նահանգները մեկ

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 33, թ. 17:

² ԳԱԹ, Գրիգոր Զոհրապի ֆոնդ, վավ. 91, թ. 9:

չըջանի մեջ միավորելու տեսակետից, ավելին՝ հայտարարել է, թե ընդհանրապես չի ընդունում հայկական պահանջներից և ոչ մեկը՝ առաջարկելով նույնությունը ընդունել Հայկական հարցի մասին թուրքական տեսակետները, որոնք արտահայտված են Բ. Դոան 1913 թ. հուլիսի 1-ի չըջաբերականում:

Գերմանացիների այս հանկարծակի *volto-face*-ն* չըմեցրել էր հայ գործիչներին, որոնք այլևս ոչ մի ցանկություն չունեին չփոխելու գերմանական դեսպանության հետ: Այդ օրերին Թալեաթը և Նալիլ բեյը, մի քանի աչքառու հայ ազգայինների հետ հանդիպելով, խոսակցություն ունեցան Հայկական հարցի շուրջ: Հանդիպումներից մեկի ժամանակ Թալեաթը հայտնել էր, որ գերմանական դեսպանության գինվորական կցորդը ցանկություն է հայտնել տեսակցելու հայկական կողմի հետ և համաձայնություն գալու¹:

Այս տարուբերվող պարագաներում հայ գործիչները կռահեցին գերմանացիների *volte-face*-ի պատճառը: Հավանաբար թուրքերը գերմանացիներին ասել էին, թե մի կողմից նրանք իրենց թելադրում են հայերի հետ համաձայնություն գալ, մյուս կողմից նույն հայերին քաջալերում են՝ առանց իրենց գիտություն ընդունել նրանց պահանջները: Գերմանացիների այդ հավանական տակտիկայի հանդեպ հայերն ավելի կտրուկ դիրք բռնեցին: Պարզելով իրենց պահանջների ամենաէական կողմերը՝ նրանք շեշտում էին դրանց վրա անխախտ մնալու իրենց վճռականությունը: Միաժամանակ Հայոց պատրիարքության ներկայացուցիչները տեսակցություն ունեցան գերման թարգման Շեոնբերգի հետ, որին հայտնեցին իրենց բուռն դժգոհությունը՝ սպառնալով հայկական շարժումներով, միաժամանակ հասկացնելով, որ հայերը երբեք անտեղի զիջումների չպիտի գնան: Այս անզիջում դիրքն ազդել էր գերմանացիների

* Վոլտֆաս (ֆրանսերեն՝ տառացիորեն «երես շուռ տալ») նշանակում է երեսով հանկարծակի շուռ գալ դեպի իրեն հետապնդող հակառակորդը, թշնամին: Դիվանագիտական տերմին:

¹ ԳԱԹ, Գրիգոր Զոհրապի ֆոնդ, վավ. 91, թ. 9:

տրամադրությունների վրա, որոնք սկսեցին աստիճանաբար փոխել իրենց վերաբերմունքը: Հայերի գլխավոր պահանջների և դրանց իրագործմանը հասնելու նրանց վճռական տրամադրվածության մասին դեսպան Վանգենհայմը հեռագրով հայտնել էր Բեռլին: Հայոց այդ վճռականությունը դեսպանին նաև հուշել էր որոշ չափով գործել զգուշորեն:

Հայոց պատրիարքարանը այդ ամենի մասին պարբերաբար հաղորդում էր Պողոս փաշային՝ միաժամանակ նրան խնդրելով շտապել Բեռլին և, իր ազդեցությունը գործադրելով, հասնել նրան, որ գերման կառավարությունը նպաստավոր հրահանգ տա Կ. Պոլսի իր դեսպանին:

Մյուս կողմից՝ դեռ հուլիսի վերջին Փարիզի գերմանական դեսպանը դոկտ. Լեփսիուսին Շվեյցարիայից հրավիրել էր Փարիզ՝ այնտեղ տեսակցելու Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարին, իսկ նույն ամսվա վերջերին Պողոս Նուբարը Փարիզից մեկնում է Բեռլին՝ փորձելով գերմանական կառավարական չըջանները տրամադրել հօգուտ հայկական բարենորոգումների:

Շատ չանցած՝ Կ. Պոլսի գերմանական դեսպանատունը Բեռլինից ստացել էր նպաստավոր հրահանգ՝ Հայկական հարցում գործակցել ոռուսական դեսպանատան հետ և գործել համատեղ:

Նույն ժամանակ՝ Կ. Պոլսից Եվրոպա վերադառնալուց հետո, իր մի հոգվածում դոկտ. Յոհաննես Լեպսիուսը նկատում էր, որ բալկանյան պատերազմի հետևանքով արևելյան հարցի բոլոր ցավոտ խնդիրները լուծված են, բացի մեկից՝ հայկականից: «Այսուհետև «արևելյան հարց» ասելով պետք է հասկանալ հայկական հարցը»¹, - գրում էր նա:

Լեփսիուսը նշում էր, որ եթե թուրքական կառավարությունը կարողանա լրջորեն ձեռնարկել Հայաստանի վերանորոգման գործը, նա կվաստակի քրիստոնյա հպատակների համակրանքը և դրանով իսկ ի վիճակի կլինի արգելակելու պետության կազմալուծման ընթացքը:

¹ «Մշակ», № 217, 9 հոկտեմբերի 1913 թ.:

Հայ ժողովրդի բարեկամը չեղտում էր, որ Գերմանիան միակ պետությունն է, որ ոչինչ չունի վաստակելու Ասիական Թուրքիայի քայքայումից, ընդհակառակը, նա նույնիսկ մեծ վնաս կկրի:

«Ճիշտ է,- գրում էր Լեփսիուսը, - Հայերը իրենց թշվառություն օրերում, այսօր նույնպես, որևէ աջակցություն չեն ստացել գերմանական դիվանագիտությունից, բայց դրա փոխարեն նրանք մեծ համակրանք են գտել գերման ժողովրդի մեջ. ոչ մի ազգ այնքան զոհաբերություններ չի արել Հայկական տանջանքներն ամոքելու համար, որքան գերմանական ազգը»¹:

Իհարկե, Լեփսիուսի այս վերջին հաստատումն իրականությունից հեռու էր, բայց կարծում ենք, որ դա ամենից առաջ ուղղված էր գերմանական իշխանություններին՝ նրանց մեջ առաջ բերելու «Հայկական տանջանքներն ամոքելու» տրամադրություն:

Լեփսիուսը համոզված էր, որ «Գերմանիան շատ բան կարող է անել Հայերի և Թուրքերի հաշտեցման գործում: Գերմանացիներն իրենց գործունեության ընթացքում արդեն գնահատել են Հայերի աշխատասիրությունն ու խելքը: Նրանք լավ են հասկանում, որ Թուրքիայում հաջողություններ չէին կարող ունենալ առանց Հայերի աջակցության: Այժմ գերմանական դիվանագիտությունը հասկանում է Հայկական հարցի լուծման մեծ կարևորությունը, ուստի նա հետևողականորեն պաշտպանելու է Հայ ժողովրդի բոլոր իրավացի պահանջները»²:

Բայց Հայկական հարցի վերջնական լուծման բանալին Լեփսիուսը տեսնում էր ոչ թե Գերմանիայի, այլ Անգլիայի ձեռքում: Եթե եռակողմ համաձայնության անդամներից մեկը՝ Ֆրանսիան, տրամադիր լինի պաշտպանելու Ռուսաստանին, հետևապես նաև՝ Հայկական հարցը լուծելու նրա ջանքերին, ապա Անգլիան, ընդհակառակը, դեռ պետք է որոշի, թե արդյոք Թուրքական արևելքում նա շարունակելու է ընթանալ Ռուսաստանի

¹ «Մշակ», № 217, 9 Հոկտեմբերի 1913 թ.:

² Նույն տեղում:

հետ ու դառնալ նրա անմիջական դրացին, թե՞ վերադառնալու է իր ավանդական արևելյան քաղաքականությունը և հանձին Թուրքիայի՝ ստեղծելու է մի տեսակ տամպոն-պետություն իր և ռուսական ազդեցություն չըջանների միջև:

Ղրիմի պատերազմից ի վեր Անգլիան ամեն ինչ արել է, որպեսզի ռուսական զորքը պարփակվի Արարատի հետևում, գրում էր Լեփսիուսը: Եթե Ռուսաստանին հաջողվեր Հայաստանի միջով առաջանալ մինչև Միջագետք և Կիլիկիա, եթե նա կարողանար միևնույն ժամանակ վերցնել Դարդանելի դռները, ապա բրիտանական հեգեմոնիան Միջերկրականում կանհետանար, և Հնդկաստանի ծովային ճանապարհը կվտանգվեր: Երբ դա տեղի ունենա, Անգլիայի համաշխարհային հեգեմոնիան վախճան կգտնի Սուեզի ջրանցքում:

Ինչպես տեսնում ենք, Լեփսիուսը Թուրքիայում հետևողականորեն պաշտպանում էր Գերմանիայի տնտեսական և քաղաքական շահերը, միաժամանակ անկեղծորեն հավատացած էր, որ իր երկիրը մեծ առաքելություն ունի Ասիական Թուրքիայի զարգացման գործում ընդհանրապես, Հայկական հարցի բարեհաջող լուծման տեսակետից՝ մասնավորապես: Դա կնշանակեր արևելյան հարցի վերջնական հանգուցալուծում:

«Թող չզարմանան.- նշում էր Լեփսիուսը,- որ մենք պաշտպանում ենք Թուրքական կայսրության ամբողջության սկզբունքը: Միայն գերմանական շահը չէ, որ այդպես է հրամայում: Կա մի ավելի մեծ նպատակ, մի ավելի լայն շահ: Արևելքը և մանավանդ մուսուլման արևելքը ժամանակի պետք ունի եվրոպական կուլտուրան յուրացնելու համար: Ավետարանը չպետք է վայրագորեն կործանի այն խոչընդոտները, որոնց հանդիպում է: Նա պետք է աշխատի հաղթել նրանց իր բարոյական պրեստիժով: Մենք կարծում ենք, որ այդպես է նաև հայերի կարծիքը»¹:

Դուկտոր Յոհաննես Լեփսիուսը մենակ չէր իր հայասիրական

¹ «Մշակ», № 217, 9 Հոկտեմբերի 1913 թ.:

գործունեություն մեջ: Նա Գերմանիայում ուներ բազմաթիվ համակիրներ հատկապես համալսարանական մտավորականության և լրագրողների մի մասի շրջանում, որոնք ոչ միայն հավանություն էին տալիս Տոլուստ թուրքահայության նրա ձեռնարկներին, այլև հնարավորությունների սահմաններում աջակցում էին նրան: Գոկտորի հայանպաստ տեսակետները պաշտպանություն էին գտնում գերմանական թե՛ անկախ և թե՛ պետականամետ մամուլի էջերում: Հայկական հարցի մասին այդ օրերին բազմաթիվ հոդվածներ լույս տեսան «Berliner Tageblatt», «Frankfurter Zeitung», «Der Reichsbote», «Die Hilde», «Der Christliche Orient», «Deutsch – Asiatich – Afrik Korrespondenz» և այլ թերթերում: Առաջադեմ լրագրողները նաև առիթը բաց չէին թողնում հակահարված տալու գերմանական մամուլի առավել թուրքասեր օրգանների էջերում հայտնված հայավնաս տեսակետներին: Գնալով մեծանում էր թիվը նաև քաղաքական այն գործիչների, որոնք քաջածանոթ էին հայերի անագորույն վիճակին և առնվազն ունեին մարդասիրական մղումներ նրա նկատմամբ:

Իհարկե, այդ ամենը չէր կարող աննկատ մնալ երկրի կառավարական շրջաններում: Չնայած դրան՝ պաշտոնական Գերմանիան չարունակում էր Հայկական հարցում կառչած մնալ իր կոչտ դիրքորոշմանը: Այդ էր պատճառը, գրում էր Անդրե Մանդելշտամը, որ հակառակ մեծ գերմանացու ձեռնարկած հայանպաստ գործունեությունը, այնուամենայնիվ, նա չկարողացավ թուրքահայության մեջ առաջ բերել հանրային կարծիքի հեղաշրջում: Իր հարցի լուծումը հայությունն ակնկալում էր միայն Պետերբուրգից¹:

¹ Տե՛ս Անտրե Մանդելսթամ, Օսմանեան կայսրութեան ճակատագիրը: Առաջին մաս, էջ 191:

ՆՈՐ ՆԱԽԱՋԵՌ-ՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀՈՒՍԱԴՐՈՂ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Վեց պետությունների Կ. Պոլսի դեսպանությունների դրամանների հունիսին Ենի-Քեոյում կայացած պաշտոնական խորհրդակցություններում ռուսական կողմի կրած պարտությունը հոգեբանական ծանր ազդեցություն էր թողել Պետերբուրգի դիվանագիտական շրջաններում: Ռուսական կառավարությունը դա դիտում էր որպես վերջին ամիսների իր երկրորդ խոչոր պարտությունը՝ Բալկաններում կրած անհաջողությունից հետո:

Բալկանյան երկրորդ պատերազմում Թուրքիայի տարած հաղթանակը, հատկապես թուրքերի կողմից բուլղարներից Ադրիանուպոլսի վերագրավումը խառնել էին Պետերբուրգի բոլոր հաշիվները: Ռուսական կառավարությունը մեծ ջանքեր էր գործադրել այդ քաղաքը Բուլղարիային վերադարձնելու համար, բայց դրական ոչ մի արդյունքի չէր հասել: Դիվանագիտական այդ պայքարում, որ մղվել էր Գերմանիայի գլխավորած զինակցության դեմ, ռուսական կողմը ոչ միայն չէր ստացել Համաձայնության դաշինքի մյուս երկու անդամների՝ Անգլիայի ու Ֆրանսիայի աջակցությունը, այլև առաջ էր բերել վերջիններիս խիստ դժգոհությունը, մի բան, որը կարող էր պատճառ դառնալ եվրոպական գործերից Պետերբուրգի լիակատար մեկուսացմանը: Ուստի Ռուսաստանը ստիպված էր եղել տեղի տալ:

Հիմա՝ Ենի-Քեոյի անհաջողությունից հետո, ռուսական դիվանագիտության համար միանգամայն պարզ էր դարձել, որ Հայկական հարցում այլևս անհեռանկար է հույսեր կապել դաշնակից երկրների դիվանագետների երկչոտ ու անհետևողական պահվածքի հետ:

Այս անելանելի թվացող վիճակում ռուսական կառավարությունը ստիպված էր գնալ *va banque*-ի. հինգ մեծ տերությունների կառավարություններին նա առաջարկեց համատեղ ռազմանավային ցույց կատարել օսմանյան մայրաքաղաքին հարող ջրերում, որը, սակայն, վճռականապես մերժվեց ոչ միայն Գերմանիայի գլխավորած զինակցության, այլև Անգլիայի և

Ֆրանսիայի կողմից: Դա ծանր հարված էր Ռուսաստանի՝ որպես մեծ տերություն ինքնասիրությանը: Հետևեց Պետերբուրգի սպառնալիքը, որ եթե Թուրքիան իր զորքերը չհանի Ադրիանուպոլսից, ապա ինքը ստիպված կլինի 1) Սևծովյան ռազմանավերի ուղեկցությանը իր ցամաքային զորքերը իջեցնել Տրապիզոն-Ռիզե հատվածում և սկսել Թուրքահայաստանի գրավումը, 2) Կովկասում անցկացնել ընդհանուր զորահավաք, զինվորական մեծ ուժեր կենտրոնացնել Թուրքական սահմանի վրա՝ խափանելու համար հակառակորդի հնարավոր ներխուժումն Անդրկովկաս: Ռուսական կառավարությունն այդ ծայրահեղ հայտարարությունը հաջորդում է Բեոլինից հնչած սպառնալիքը, թե ռուսական զորքերի Թուրքահայաստան մտցնելը ինքը կդիտի որպես *casus belli* և կհայտարարի զորահավաք: Լոնդոնը և Փարիզը նույնպես վճռականապես հանդես եկան Ռուսաստանի մտադրության դեմ: Վեց մեծ պետություններից հինգի կողմից պաշտպանություն ստացած Թուրքիան հայտարարեց, թե ինքը պատրաստ է կենաց ու մահու կռվի դուրս գալ երկիր ներխուժելիք ռուսական զորքերի դեմ:

Այդ ամենը խիստ բացասաբար անդրադարձան Ռուսաստանի միջազգային հեղինակության վրա, որի պատճառով նրա դիրքերը թուլացան նաև Հայաստանի բարենորոգումների համար վարվող բանակցություններում:

«Մինչդեռ դրությունը Հայկական վիլայեթներում ոչ միայն չէր բարվոքվում, - վերհիշել է Սերգեյ Սազոնովը, - այլև մեծ պետությունների Կ. Պոլսի դեսպանություններն իրենց հյուպատոսներից ամեն օր ստանում էին տեղեկագրեր Թուրքերի ու քրդերի կողմից Հայ ազգաբնակչության անվերջ կեղեքումների ու խժոժությունների մասին: Թուրքական կառավարությունը ոչ միայն այդ անիրավությունների առաջը չէր առնում, այլև ինքն էր խրախուսում, իսկ գերմանական դեսպանն այդ ամենի վրա նայում էր սառնասրտորեն»¹:

Համոզված, որ իր առաջ քաշած հարցերը առաջիկայում

¹ С. Д. Сазонов, Воспоминания, стр. 158.

նույնպես պաշտպանություն չեն գտնելու Անգլիայի և Ֆրանսիայի կողմից, Պետերբուրգը որոշեց կանգ չառնել կես ճանապարհին, այլ նորանոր քայլեր անել՝ փոխելու համար Հայկական հարցում գերմանական իշխանությունների կոշտ դիրքորոշումը: Ենթադրվում էր ծայրահեղ դեպքում նույնիսկ հրաժարվել հայկական նահանգներից միասնական հայկական մարզ ստեղծելու գաղափարից և ընդունել երկու («արևելյան» և «արևմտյան») սեկտորներ ստեղծելու գերմանական կողմի առաջարկը: Դրա փոխարեն ակնկալվում էր, որ Բեոլինը, որպես փոխգիջում, համաձայնություն կտա երկու սեկտորների տարածքների մեջ ընդգրկել Մանդեղլիտամի գծած հայկական միասնական մարզի ողջ տարածքը, ինչպես նաև անփոփոխ կթողնվի տերությունների համաձայնությամբ սեկտորներում գեներալ-նահանգապետներ նշանակելու ռուսական նախագծով նախատեսված կարգը:

Սերգեյ Սազոնովը վերհիշել է. «Ենի-Քեոյի հանձնաժողովում ռուսական կառավարությունը չհասնելով իր նպատակին՝ որոշեց այս անհաջողության առջև կանգ չառնել և ջանալ այլ ճանապարհով հասնել իր առաջադրած նպատակին, որպեսզի իրականանար Հայկական վիլայեթներում եվրոպական պետությունների հսկողությունը Թուրքական վարչությունների գործունեության վրա: Այս նպատակով արտաքին գործոց նախարարությունը հանձնարարեց Պոլսո մեր դեսպանին՝ անմիջապես համաձայնության գալ գերմանական դեսպան բարոն Վանզեն-Հայմի հետ միասնաբար մշակելու անհրաժեշտ բարենորոգումների մի ծրագիր»¹:

Ռուսական կողմի պնդումներով Հայաստանի բարենորոգումների խնդիրն ի վերջո դարձավ ուղղակի բանակցությունների առարկա Պետերբուրգի ու Բեոլինի միջև: Հայկական հարցում գործուն դեր ունեցողները 1913 թ. ամռան վերջին ու աշնանը հենց այդ երկու պետություններն էին:

Նկատի առնելով ռուս-գերմանական բանակցությունների սկզբունքային նշանակությունը՝ Ռուսաստանն ամբողջ ժամա-

¹ «Հայրենիք», № 2, փետրվար, 1948, էջ 48:

նակ այդ բանակցությունների ընթացքի մասին տեղեկացնում էր Ֆրանսիային և Անգլիային:

Հուլիսի 25-ին Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Սազոնովը Ռուսաստանում Գերմանիայի դեսպան Ֆրիդրիխ Պուրտալեսին հանձնեց Ռուսական կառավարության նոր առաջարկությունները: Միաժամանակ, Պուլսի ռուսական դեսպանը հանձնարարություն ստացավ բոլոր ջանքերը գործադրել գերմանական դեսպան Վանգենհայմի հետ համատեղ կազմել Բ. Դուան համար ընդունելի փաստաթուղթ: Պետերբուրգը համոզված էր, որ եթե հաջողվի համաձայնություն գալ գերմանական կողմի հետ, ապա իր դաշնակիցներն անխուսափելիորեն դուրս կգան իրենց որդեգրած չեզոք վիճակից և կընդգրկվեն հարցի գործնական քննարկումների մեջ:

1913 թ. Հուլիսի 25-ին Բեռլինում ռուսական հավատարմատար Բրոննեկուն Սազոնովը գրում էր. «Մեծ պետությունների մեջ արմատական հարցերի շուրջ ծագած տարաձայնությունների պատճառով բարենորոգումների գործը մատնված է անչարժուխան, որից, սակայն, անհրաժեշտ է խուսափել՝ աչքի առաջ ունենալով վտանգալից հետևանքները: Այս իմաստով ես հայտնեցի գերմանական դեսպանին և կարևորում եմ, որ Դուք ևս հենց այժմ հայկական բարենորոգումների առթիվ բացատրվեք պ-րն Յագովի հետ»¹:

Ռուսական կողմը քաջ գիտակցում էր, որ Մանդեղլտամի նախագծի և գերմանական կողմի միջև տեսակետների տարբերություններն այնքան էական և արմատական են, որ հազիվ թե հաջողվի առանց լուրջ զիջումների որևէ արդյունքի հասնել գերմանացիների հետ հետագա բանակցություններում: Ուստի Պետերբուրգը հենց սկզբից գերմանական կողմին տեղեկացրեց, որ դեմ չէ հայկական մի նահանգ ստեղծելու փոխարեն Հայաստանի տարածքում վարչական երկու շրջան ստեղծելու նրա պահանջին: Բայց Բեռլինը դրանով չէր բավարարվում և պահանջում էր Մանդեղլտամի նախագծից հանել ուրիշ էական կետեր ևս:

¹ «Բարենորոգումները Հայաստանում», էջ 50:

Իսկ Հուլիսի 27-ին Սազոնովին հղած հեռագրով Գիրսը նշում էր, որ բոլոր մեծ տերությունների կառավարություններն արդեն ստացել են Ենի-Քեոյի խորհրդածոցով արձանագրությունները, և կարծես թե նրանց մոտ հանգիստ վիճակ է: Բայց իրողությունն այն է, որ «հայերի որևէ հեղափոխական շարժում զսպել կարելի է միմիայն նրանց դրություն բարեփոխության խոստումով: Ուստի խնդրում եմ հնարավոր ջանք գործ դնել, որպեսզի հաջողացնեք մեր հայեցակետերի համաձայնեցումը օտար պետությունների հետ և տաք ինձ համապատասխան հրահանգներ»¹:

Սազոնովը օգոստոսի 6-ին հերթական նամակն է հղում Բեռլինում ռուսաց հավատարմատար Բրոննեկուն, ուր ասված էր. «Վերին աստիճանի ցանկալի եմ գտնում հարմար ընդունել գերմանական կառավարությանը մեր մշտական հետաքրքրության մասին հայկական հարցով, որն անհրաժեշտ է կենդանացնել իր մեռած դրությունից»²:

Հայկական բարենորոգումների հարցը կենդանացնելու, այսինքն՝ Գերմանիայի հետ համաձայնություն գալու նպատակով եռանդազին աշխատանք ձեռնարկեցին նաև Հայոց ազգային պատվիրակությունը և հատկապես նրա նախագահ Պողոս Նուբար փաշան: Այդ ճանապարհին նրանց վիճակված էր հաղթահարել բազմաթիվ նոր արգելքներ:

Հայկական խնդրի նկատմամբ գերմանական կառավարության դիրքորոշումը փոխելու նպատակով անհրաժեշտ էր ամենից առաջ նրան ապացուցել, որ հայկական բարենորոգումներն իրենց մեջ որևէ վտանգ չեն պարունակում գերմանական շահերի համար, քանի որ այն ուղղված չէ նրա ավանդական բարեկամի՝ Թուրքիայի անվտանգության և նրա տարածքային ամբողջականության խախտման դեմ: Իսկ դրա համար անհրաժեշտ էր, որ Գերմանիայի ղեկավար շրջանները քաջատեղյակ լինեին հայերի իսկական մտադրություններին, ունենային սպառիչ տեղեկություններ:

¹ «Բարենորոգումները Հայաստանում», էջ 50-51:

² С. Д. Сазонов, Воспоминания, с. 159.

Հուլիսի 18 (31)-ին գրած նամակներից մեկում* Պ. Նուբարը նշել էր, որ ինքը մտադիր է գնալ Բեռլին և անձամբ տեսակցություններ ունենալ երկրի ղեկավար չրջանների հետ, հանդես գալ հաղորդումներով հայոց նպատակների մասին¹: Իսկ կաթողիկոսին գրած նամակում հայտնում էր, որ ինքը Բեռլին գնալով պիտի ջանա գերմանական կառավարությունը տրամադրել դեպի Հայկական հարցը: Նա նշում էր, որ Բեռլինում իր հիմնական խնդիրը պիտի լինի փոխել գերման կառավարության մեջ արմատացած այն մտայնությունը, թե մենք հայության երկու հատվածները միավորելու նպատակ ունենք, «թե՛ Ռուսիոյ ձեռքին մեջ խաղալիք եղած ենք եւ կ'աշխատինք նրա շահերի օգտին բարենորոգումներու միջոցաւ փրկել մեր հայրենակիցները հալածանքի ուժիմէն»²:

ՀԱՆԳԻՊՈՒՄ ՑԻՄԵՐՄԱՆԻ ՀԵՏ

1913 թ. օգոստոսի սկզբին Պողոս Նուբարը ժամանում է Բեռլին՝ առաջին խնդիր ունենալով հանդիպել արտգործնախարար Գոտլիբ Ֆոն Յագովին, բայց պարզվում է, որ վերջինս արտասահմանյան ուղևորության մեջ է: Ուստի Նուբարն ընդունելություն է խնդրում Յագովի տեղակալ, արտաքին գործոց պետական փոխարտուղար դոկտ. Ա. Յիմերմանի հետ:

Տեսակցությունը հազիվ սկսած՝ Նուբարը նկատում է, որ Յիմերմանը «մեր բարենորոգումներու համար քաջալերական տրամադրություններ չունի»³: Նա հենց սկզբից հայտարարում է, թե Գերմանիան վստահություն չի տաժում ռուսական (Մանդելշտամի) ծրագրի նկատմամբ, միաժամանակ հայերին վերագրում ռուսասեր տրամադրություններ: Պողոս Նուբարը պատասխանում է, թե այդ ամբաստանությունը տեղին չէ, և որ ինքը հիմնականում հենց այդ նպատակով է եկել Բեռլին, որ-

* Արխիվային փաստաթղթից չի երևում, թե Նուբարն ում է հասցեագրել:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 46, թ. 1:

² Նույն տեղում, գ. 33, թ. 19:

³ Նույն տեղում, գ. 46, թ. 1:

պեսզի անկեղծորեն բացատրություն տա՝ վստահ լինելով, որ պիտի կարողանա ամեն թյուրիմացություն փարատել և հավատ ներշնչել, որ հայերը ոչ մեկի, այդ թվում ռուսների նկատմամբ հատուկ հակումներ չունեն¹: Նա պարզաբանում է՝ ասելով, որ Թուրքիայի հայերը չահագրգռված չեն միանալու Ռուսաստանին, քանի որ նրանցից ամեն մեկն իրեն համարում է հավատարիմ օսմանցի: Նա հավելում է, որ ռուսական սահմաններում ապրող հայերը, ցավոք, ենթակա են ռուսական մշակույթի ուժգին ազդեցությանը, կորցնում են իրենց լեզուն, իսկ նրանց ազգային եկեղեցին մշտական հալածանքի տակ է, մի բան, որ չի կարելի ասել Թուրքիայի պարագայում:

«Շատ լավ կը հասկնամ,- ասում է Հայ դիվանագետը,- որ Գերմանիա վստահություն չունենայ ծրագրին վրայ այն պատճառաւ, որ Ռուսիոյ կողմէ ներկայացուցած է, սակայն, ներեցեք ինձ յայտնել որ սոյն ծրագիրը միայն ռուսական անունն ունի, ան մեր, հայերիս, պատրաստած ծրագիրն է եւ ռուսական դեսպանը գայն թեթեւօրեն փոխելով, ներկայացրել է իբրեւ ռուսական ծրագիր: Հայոց կողմեն ռուսասեր միտում չկայ, կասկածելն անգամ անտեղի է»: Հայերի պահանջներին, որոնք շատ համեստ են, պետք է գոհացում տրվի, և դա կարող է հանձն առնել մեծ պետություններից որևէ մեկը: «Հայկական գաւառներու կացութեան արդի վիճակը չի կրնար շարունակուիլ»: Եվ դա ոչ միայն մարդասիրության տեսակետից: Այդ կացությունը կարող է վտանգել Թուրքիայի հողային ամբողջականությունը, հետևաբար՝ նաև եվրոպական խաղաղությունը: Ապա նա ասում է, որ բարենորոգումներ պահանջելով՝ հայերը նպատակ չունեն շահեկանորեն ծառայել Ռուսաստանին կամ Թուրքիայի հանդեպ թշնամական գործողություններ ձեռնարկել: «Մեր նպատակն է Ասիոյ մեր հայրենակիցներն ազատիլ եւ արգիլել որ զանոնք չդիմեն յուսահատական արարքի մը: ... Հայկական խնդիրը քաղաքական հանգամանք չունի, նրա նպատակը պարզապես բարի վարչություն ունենալն է»²:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 46, թ. 1:

² Նույն տեղում, գ. 41, թ. 2:

Պողոս Նուբարը բացատրում է նաև, որ Հայ ազգային պատմավիրակություն մեջ չկա ոչ մի ուսասնայ, որ հայերը միշտ փափագել և փափագում են մնալ օսմանցի: Նրանք միշտ միայն ու միայն բարենորոգում են պահանջել՝ առանց ինքնավարության կամ բաժանման գաղափարի: Նրանք ուզում են միայն ներքին լավ բարեկարգություն, լավ վարչություն, որն իրենց ապահովի խաղաղություն և արդարություն, որը իրենց թույլ կտա ազատորեն աշխատել և առաջադիմել¹:

Պողոս Նուբարի այս տրամաբանված պատճառաբանություններն աստիճանաբար Յիմերմանին վստահություն ներշնչեցին: Նա հիմա ուրախ էր, որ, հակառակ իր ունեցած համոզմունքի, հայերը ո՛չ ինքնավարություն և ո՛չ էլ բաժանում են ուզում: Եվ, չթաքցնելով իր տեսակետի ու տրամադրության փոփոխությունը, նա այդ առթիվ խորին գոհունակություն հայտնեց:

Միաժամանակ, Պողոս Նուբարը Յիմերմանին ասում է, որ եթե հայերը Թուրքիայից բաժանվելու հարց չեն դնում, դա անում են այն պայմանով, որ իրենց բարենորոգումներ չնորհվի, հակառակ դեպքում, երկու չարյաց միջև փոքրագույնն ընտրելով, պիտի փափագեն ընտրել բաժանումը՝ ազատվելու համար արդի անտանելի վիճակից:

Հանդիպման ընթացքում Յիմերմանին հետաքրքրում են մի քանի ուրիշ կոնկրետ հարցեր ևս, որոնք և նրան մտահոգություններ տեղիք էին տալիս.

Անդրադառնալով հայկական նահանգները մեկ ամբողջական միավորի մեջ ընդգրկելու հարցում գերմանական կողմի մտավախությունը, թե դա կդյուրացնի այդ տարածքի կցումը Ռուսաստանին, Պողոս Նուբարը դա համարում էր չհիմնավորված: Ռուսաստանը, ասում էր նա, դարեր շարունակ աչք ունի Կոստանդնուպոլսի վրա, և մենք, հայերս, դրա դեմ ոչինչ անել չենք կարող: Նույնը վերաբերում է Հայաստանին: «Չեմ կարող ըմբռնիլ,- ասում էր նա,- թէ ինչ գոյություն չունի կրնայ ըլլալ

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 41, թ. 2:

Ռուսիոյ՝ այս երկրները իրեն միացնելու, երբ վեց գաւառները մեկի տեղ երկուքի բաժնուած ըլլան: Սա այնպիսի հաւանակաւորութիւն մը է որ ո՛չ կախում ունի վարչական բաժանումներէ եւ ո՛չ ալ բարենորոգումներէ, այլ միմիայն կախում ունի բոլոր ընդհանուր քաղաքականութենէ: Պէտք է հաւատալ որ եթէ Ռուսիա այսօր Հայաստանը իրեն կցիլ չի խորհիր, պատճառը այն է որ Գերմանիա,- կարծեմ թէ Անգլիա ալ,- զայն իրեն թոյլ չեն տար»¹: Իսկ եթե օրերից մի օր Ռուսաստանը և Գերմանիան դաշնակիցներ դառնան, այն դեպքում հայկական նահանգները մեկ թե երկու մարզի մեջ ընդգրկելը այլևս արգելք չի լինի, որ Ռուսաստանը հայկական հողերը միացնի իրեն, և այդ դեպքում Բեռլինը թույլ կտա այդ բանն անել: Ուստի այսօր անարդար է ընդդիմանալ բարենորոգումներին՝ պատրվակելով, թե դրանք կարող են դյուրացնել ռուսների կողմից հայոց նահանգները գրավելու միտումները²:

Այդ հարցի համատեքստում Ազգային պատմավիրակության նախագահը մի քանի խոսք է ասում Հայկական հարցի հանդեպ Գերմանիայի դաշնակից Ավստրիայի բռնած դիրքի մասին: Նա անտրամաբանական է համարում, որ այդ երկիրը, Հայաստանում որևէ շահ չունենալով, ընդդիմանում է բարենորոգումներին: Ուրեմն նրա բռնած հակահայ դիրքը միայն քաղաքական է, և կարելի է հուսալ, որ Ավստրիայի հակահայ կեցվածքը «պիտի դադրի այն օրէն, երբ Գերմանիա մեր բարենորոգումներուն ուժ տայ»: Այս խոսքերի վրա Յիմերմանը «ծիծաղցաւ առանց հերքման նշան մ'ընելու»³, - վերհիշել է Նուբարը:

Մեծ էրուզիցիայի տեր գրուցակցի փաստարկումները և կուռ տրամաբանությունը լարված հետաքրքրություն էին առաջացրել գերման դիվանագետի մոտ, որը, գլխով հավանության նշաններ անելով, նրան քաջալերում էր շարունակել արտահայտած մտքերը:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 46, թ. 2-ի շրջ.:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, թ. 3:

Օգտվելով ստեղծված բարենպաստ մթնոլորտից՝ Պողոս Նուբարն անդրադառնում է Հայաստանի բարենորոգումների ծրագրի ձևափոխման հնարավոր հետևանքներին: Զրուցակցին հիշեցնելով ընթացիկ տարվա գարնանը Կիլիկիայի Հայերի ապստամբական փորձը, որը տեղի չունեցավ միայն Հայոց պատրիարքի, Հայ կաղնակերպությունների համատեղ ջանքերի, նրանց խոհուն գործելակերպի շնորհիվ, նա շեշտում էր, որ նման վտանգ կարող է կրկնվել, «եթե այսօրուան անտանելի կացութեան վերջ մը չի տրուի»¹: Ասելով, որ այդ խոսովության փորձի մասին ինքը տեղյակ է, Յիմերմանն ընդունում է, որ այդպիսի վտանգն իրոք որ հիմա էլ խիստ իրական է:

Այնուհետև Յիմերմանը հարցնում է, որ եթե Հայաստանում բարենորոգումներ կատարվեն, ապա արդյո՞ք շղթայական գործընթացով նույն բանը չեն պահանջի նաև պետության մյուս ոչ թուրք բնակչությանը նահանգները, որի անխուսափելի հետևանքը կլինի պետության մասնատումը: Պողոս Նուբարը հիշեցնում է, որ նախ օսմանյան երկրի ժողովուրդներից ոչ մեկը չի ենթարկվում այնպիսի դաժան հալածանքների, հետապնդումների ու ջարդերի, ինչպես թուրքահայ ժողովուրդը, հետևապես Հայաստանում բարենորոգումներ կատարելն անհետաձգելի է: Նա նաև շեշտում է, որ մեծ տերությունները նոր չէ, որ զբաղվում են Հայաստանում Հայերի վիճակի բարելավման հարցով, որ նրանց ցանկությունն արտահայտություն է գտել ինչպես 1878 թ. Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածում, այնպես էլ 1895 թ. մայիսյան ծրագրում: Այդ փաստարկմանը Պ. Նուբարը ավելացնում է, որ կայսրության՝ գերազանցապես մահմեդական բնակչությանը արևելյան նահանգներն ազգաբարձական տեսակետից չեն կարող բաղդատվել Հայկական նահանգների հետ թեկուզև այն պատճառով, որ, օրինակ՝ արարներն արդեն ստացել են իրենց պահանջների գոհացումը, իսկ Հայկական բարենորոգումների սկզբունքը հաստատված է 1895 թ. ծրագրով, որը տարածվում է Հայկական ներկա 6 նահանգների վրա, և որը

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 46, թ. 3:

հաստատված է կայսերական իրազեով:

Յիմերմանն ընդունում է Պողոս Նուբարի հավասարակշռված փաստարկումները և հայտարարում, թե Գերմանիան ուժ է տալու բարենորոգումների ծրագրին: Նա միաժամանակ խորհուրդ է տալիս Բ. Դուանը չվիրավորելու համար նրա ծրագրից որոշ բաներ ներառել ուսուսական ծրագրի¹:

Վերջացնելով խոսքը՝ Յիմերմանն ասում է, թե մեծ հաճույքով ունենդրեց Պողոս Նուբարի հայտարարություններն ու մտքերը և համոզվեց դրանց անկեղծությանը: Հանդիպման սկզբում Հայ գործչի նկատմամբ վստահություն չտածած գերմանացի դիվանագետը արմատապես փոխել էր իր կարծիքը: Զրույցի ամբողջ երկրորդ հատվածում նա մեծ ուշադրությամբ էր լսում զրուցակցին՝ նշաններով քաջալերելով նրան շարունակել իր խոսքը:

Իր բարեկամներից մեկին ուղարկած նամակում², մանրամասն կարագրելով դոկտ. Յիմերմանի հետ իր հանդիպումը, Պ. Նուբարը նշել էր. «Տպաւորութիւն ունեցայ, որ կրցած էի զինքը համոզել, թէ Հայերը որեւէ կանխամտածումներ չունին, ինչպէս որ իրենք կ'ենթադրեին եւ թէ պէտք չկար տարակուսիլ Հայերուն անկեղծութենէն»³: Մի ուրիշ առիթով Նուբար փաշան ասել էր, թե վերջապես, համոզվելով «հայկական պահանջատիրութեան անկեղծութեան եւ արդարութեան մեջ, իմ ներկայութեանս դ-ր Յիմերման հեռագրեց իր Պոլսոյ դեսպանին եւ այն վայրկեանին սկսեալ համապատասխան պետութեանց ներկայացուցիչներուն հանդիպած դիմադրութիւնը դադարեցաւ»³:

Ա. Յիմերմանի հետ հանդիպումը բավական տրամաբանված ու արդյունավետ եղավ: Գերմանացի դիվանագետն իրեն հուզող հարցերին ստացել էր խելամիտ ու համոզիչ պատասխաններ, որոնք նշանակալի չափով փոխել էին Հայկական հարցում նրա տեսակետը: Այդ հանդիպումը սկզբունքային նշանակություն

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 46, թ. 4:

² Նամակից չի երևում, թե այն ում է հասցեագրված եղել:

³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 46, թ. 4-ի շրջ.:

³ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 26, թ. 6:

ունեցա՞վ նաև բարենորոգումների գործում գերմանական քաղաքականությունից և որոշակի դրական փոփոխություն համար: Հայկական հարցը մտնում է Գերմանիայի շահագրգռությունների ոլորտը:

Տարիներ անց՝ 1919 թ., անդրադառնալով գերմանացի դիվանագետի հետ իր հանդիպմանը, Պողոս Նուբարը ասել էր, թե Յիմերմանը «բարեացակամորեն վարուեցավ եւ ես երջանիկ եղա զինքը համոզելու թէ՛ հայերու ի նպաստ պահանջուած բարենորոգումները օգտակար պիտի ըլլային նաեւ նոյն իսկ Օսմանեան կառավարութեան, քանզի անոնք պիտի բառնային խառնակութիւնները եւ անկարգութիւնները՝ որոնք ուշ կամ կանուխ պետութիւններուն միջամտութեան տեղի պիտի տային: Քանզի այն ժամանակ պալքանեան պատերազմի շրջանին մեջ կը գտնուէինք եւ բոլոր դիւանատունները կը ջանային արգիլել որ այդ բխումը ընդհանուր պատերազմ մը առաջ չի բերեր, ինչ որ Գերմանիան անգամ (անշուշտ ինքզինքը բաւական պատրաստ չի զգալով մեծ պատերազմի մը) ջերմորեն կը ձգտեր խուսափիլ անկէ»¹:

Յիմերմանի հետ հանդիպումից հետո Պողոս Նուբարը սեպտեմբերի 12 (25)-ին կաթողիկոսին գրում էր, որ ինքն այդ մասին մանրամասն տեղեկացրել է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին, ուստի «Զեր Օծնութեան տեղեկութիւն տալու համար ամէնալաւ միջոցը կը նկատիմ ներփակիլ սոյն տեսակցութենէ անմիջապէս վերջ պատրիարքարանի ուղղած նամակիս պատճենը»²: Չնայած դրան՝ Պողոս Նուբարը նպատակահարմար էր գտել Բեռլին կատարած իր ուղևորության գլխավոր արդյունքի մասին Վեհին հակիրճ գեկուցել հետևյալ տողերով.

«Զեր Վեհափառութիւնը պիտի նշմարէ, որ գերման Միւնիսթրի մը հանդէպ, որ կը յայտնէր, թէ Ռուսիա՝ ծրագրի մը ներկայացնելու նախաձեռնութիւնն ստանձնած ըլլալուն համար անոր դէմ մեծ անվստահութիւն մը կը սնուցանէին, ստիպուեցայ

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 33, թթ. 19-20:

² Նույն տեղում, թ. 20:

Ռուսիոյ դէմ բռնելիք վերապահ դիրքս չափազանցիլ, որպէս զի սոյն անվստահութիւնը մեղմացնեմ: Հետեւանքը սա եղաւ, որ երբ զատուեցայ Միւնիսթրէն, ինձ ապահովութիւն տուաւ, որ համոզուած էր, թէ մենք ինքնավարութեան եւ բաժանման որեւէ գաղափար չունէինք եւ թէ այս պայմաններուն մէջ Գերմանիա պիտի աջակցէր մեր բարենորոգմանց խնդրոյն եւ պիտի ընդունէր քօնթրօլը՝ առանց որոյ կը հասկնար թէ որեւէ բարենորոգում անկարելի էր ազդու ըլլալ Թուրքիոյ մէջ»¹:

Գերմանիայի արտգործնախարարությունում տեղի ունեցած հանդիպումից շատ չանցած՝ Պողոս Նուբարը մի քանի օրով մեկնում է Շվեյցարիա՝ հանգստանալու:

Օգոստոսի 9-ին Բեռլինում ռուսական հավատարմատար Բրոննսկին կրկին հանդիպում է Գերմանիայի պետական քարտուղար Յագովին և զրուցում հայկական հարցի մասին: Նույն օրն իսկ ռուսաց հավատարմատարը Սազոնովին հեռագրում է. «Պետական քարտուղարը պատասխանեց ինձ միայն ընդհանուր հակաճառություններով, ցույց տալով, որ վտանգավոր է սկիզբ դնել Ասիական Թուրքիայի բաժանմանը, որից Գերմանիան ձգտում է խուսափել, մատնանշելով այն հանգամանքի վրա, որ ամենաբազմամարդ հայաբնակ շրջաններում հայերն ընդհանուր բնակչության 42 տոկոսն են, հետևաբար ամենուրեք փոքրամասնություն են կազմում»: Չնայած դրան, հաղորդում էր Բրոննսկին, Յագովը ցանկություն հայտնեց իր ձեռքի տակ ունենալ ռուսական ծրագրի փաստական հիմնավորումը, որովհետև լավատեղյակ չէ դրա բովանդակությանը²:

Ըստ որում՝ Գերմանիայի արտգործնախարարությունում իր հանդիպումների ընթացքում Բրոննսկին մշտապես շեշտում էր, որ իր կառավարությունը մեծ զիջման է գնացել՝ համաձայնություն տալով հայկական նահանգները երկու սեկտորների մեջ միավորելու գերմանա-թուրքական առաջարկին:

Օգոստոսի 21-ին՝ Յագովի հետ հերթական հանդիպման ժա-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 33, թթ. 19 շրջ. և 20:

² Նույն տեղում, թ. 267:

մանակ, Բրոննսկին կրկին հիշեցնում է ուսական կողմի կատարած կարևոր դիջման մասին: Այս անգամ պետական քարտուղարը ուս դիվանագետին անսպասելիորեն տեղեկացնում է, որ ինքը պատվիրել է Կ. Պոլսում գերման դեսպան Վանգենհայմին, որ Գիրսի հետ հանդիպման ժամանակ նա պատասխան քայլ կատարի՝ տարաձայնությունները եթե ոչ հարթելու, գոնե մեղմելու համար¹:

Եվ, իրոք, գերմանական արտգործնախարարությունը Կ. Պոլսի իր դեսպանատանը հրահանգ է իջեցնում բանակցությունների մեջ մտնել հայոց պատրիարքարանի հետ²:

Երկու օր անց՝ օգոստոսի 23-ին, Բրոննսկին հեռագիր է ստանում Ռուսաստանի արտգործնախարարի օգնական Ներատովից: Վերջինս տեղեկացնում էր, որ Յագովի կողմից Վանգենհայմին տված ցուցումների համար ինքը պաշտոնապես գոհունակություն է հայտնել Պետերբուրգում գերմանական հավատարմատարին³:

Ներատովը օգոստոսի 29-ին Գիրսին հետևյալ հարցումն է անում. «Յանկալի է իմանալ գերմանական դեսպանը արե՞լ է Ձեզ որևէ առաջարկություն բարենորոգումների հարցի մասին»: Նախարարության ղեկավարության անունից նա այնուհետև տալիս է հետևյալ ցուցումը. «Նկատի ունենալով Բեռլինի մեր հավատարմատարին տված Յագովի համապատասխան տեղեկությունը, Դուք կարող եք, հակառակ դեպքում, Ձեր կողմից սկսել բանակցություններ բարոն Վանգենհայմի հետ»⁴:

Յագովի այս ցուցումը նշանակում էր, որ Ռուսաստանն ուղղակի բանակցելու էր Բ. Դոան հետ, այսինքն՝ ուս-գերմանական բանակցությունները փոխարինվում էին ուս-թուրքականով: Դա չէր նշանակում, թե թուրքական կողմն այլևս չի շարունակելու գործել Բեռլինի թելադրանքով՝ արտաքննապես պահպանելով իր «ինքնուրույնությունը»: Բայց դա նշանակում

¹ «Բարենորոգումները Հայաստանում», էջ 53:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 33, թ. 20:

³ «Բարենորոգումները Հայաստանում», էջ 53:

⁴ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 33, թ. 20:

էր, որ Ռուսաստանի հետ բանակցություններում Բեռլինն իր լիազորությունները պաշտոնապես և ցուցադրաբար պարզապես փոխանցում էր մեծ վեդիլին, և դա օրինակ պիտի հանդիսանար նաև հայկական բարենորոգումների գործընթացի մեջ ընդգրկված մյուս չորս տերությունների համար, որոնք հետևելու էին բանակցությունների ընթացքին և կարող էին միջամտել միայն հարկ եղած դեպքում:

Ռուս-թուրքական բանակցություններն ընթանալու էին ամիսներ շարունակ՝ ընդհուպ մինչև 1914 թ. հունվարի 26-ը: Այդ ամբողջ ժամանակաշրջանում դրանք իրենց ողջ ծանրությամբ ընկնելու էին ուսական կառավարության ուսերին:

ԱՐՇԱՐՈՒՆԻ ՍՐԲԱԶԱՆԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ: ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԳԱՀԻՆ՝ ԶԱՎԵՆ ՏԵՐ - ԵՂԻԱՅԱՆԸ

1913 թ. մարտ-ապրիլ ամիսներին բալկանյան դաշնակիցների կողմից Ադրիանուպոլսի և այլ քաղաքների ու բերդերի գրավումով Թուրքիան կանգնել էր լիակատար փլուզման վտանգի առջև: Բայց դա չէր բխել մեծ տերությունների շահերից, ուստի և նրանց միջնորդությամբ Թուրքիայի և բալկանյան դաշնակիցների միջև Լոնդոնում կնքվել էր խաղաղության պայմանագիր:

Բայց լոնդոնյան պայմանագրից հետո՝ ավարը բաժանելու ժամանակ, դաշնակիցները, դժբախտաբար, չէին կարողացել համաձայնության գալ: Գժտություններն ու ատելությունները, հետզհետե ծանրանալով, 1913 թ. հունիսի 16 (29)-ին առաջ էին բերել Բալկանյան երկրորդ պատերազմը՝ այս անգամ արդեն երեկվա դաշնակիցների միջև: Պատերազմը տևեց մինչև օգոստոսի 10-ը: Օգտվելով խառնաչփոթից՝ Թուրքերն անցան հակահարձակման և հետ գրավեցին Բալկաններում օսմանյան նախկին տիրույթների զգալի մասը, այդ թվում՝ Ադրիանուպոլիսը:

Վերագրաված տարածքներում թուրքերը՝ թուրք զինվորականությունը և տեղացի թուրք ամբոխը, վրեժխնդրության թույնով լի, սկսեցին քրիստոնյաների նկատմամբ արյունալի

հաշվեհարդար տեսնել: Նորից պրկվեց դարավոր ոսոխի սպանիչ ձեռքը, նորից կենդանանում էր մահաբեր հիդրան, որի կյանքի կոչողը եղան երեկվա դաշնակիցների բիրտ ազահուլությունը և քաղաքական տհասությունը:

Հայերի զանգվածային կոտորածներ տեղի ունեցան հատկապես Ռոդոսթո քաղաքում և Մալկարա հայաբնակ գյուղում:

Հայերի ակնհայտ ու իրական ծառայությունների հանդեպ թուրքիայի ցուցաբերած այս ապերախտ վերաբերմունքից հետո հայ մարդը կարող էր այլևս ուրիշ անգամ ևս, եթե պահանջեր պահել, կրկին իր կյանքն ու դրամը տալ այն երկրի կառավարությունը, որ իրեն մերժում էր մարդկային ամենատարրական իրավունքները, նույնիսկ կյանքի ապահովությունը:

Տեսնելով, որ հայերի դժնդակ կացությունն ղիմաց թուրքաց կառավարությունը այնպես էլ ձեռք չէր առնում բարենորոգիչ ոչ մի միջոց, թուրքահայոց պատրիարք արքեպիսկոպոս Հովհաննես Արչարունին, որն անցյալում մեկ անգամ չէ, որ ներկայացրել էր պատրիարքական աթոռից իր հրաժարականը, բայց միշտ մերժում էր ստացել, Հուլիսի 19-ին նոր հրաժարականի խնդրագիր ներկայացրեց թե՛ հայոց ազգային ժողովին և թե՛ օսմանյան կառավարությանը՝ որպես բողոք Ռոդոսթոյի և Մալգարայի հայերի կոտորածների:

Դեռ չաբաթներ առաջ՝ 1913 թ. մայիսի 6-ին, պատրիարք Արչարունին Ամենայն հայոց Կաթողիկոսին գրած վերջին նամակով նշել էր, որ ինքն այլևս չի դիմանում թուրքական կառավարության անմիջական հրահանգներով հայկական վիլայեթներում չղաղարող թալանի, բռնաբարությունների և սպանությունների մասին պատրիարքարան հասած բողոքների ու աղերսանքների հեղեղին: Նա նաև բողոքում էր, որ այդ պայմաններում Կ. Պոլսի հայոց ազգային ժողովի երեսփոխանները և թուրքական պառլամենտի հայ անդամները ոչ միայն մատրմատին չեն խփում անօրինականությունների առաջն առնելու համար, այլև ընտրել են ազգադավ ուղի՝ համաձայնության գալով ու գործակցելով Իթիհադի հետ: Պատրիարքը նաև շեշտում էր, որ տարաբախտ հայերի ամենափոքր ընդվզումը, ինքնապաշտպանական որևէ գործողություն իշխանությունների

կողմից անմիջապես կանխվում են և խեղդվում արյան մեջ՝:

Պատրիարքը Գևորգ V-ին հիշեցնում էր, որ դեռևս ապրիլի 17-ին նրան ուղարկած նամակով ինքը կարծիք էր հայտնել, թե ներկա բախտորոշ պահին հույժ կարևոր է աշխարհի բոլոր նշանավոր հայ հովվապետների խորհրդակցությունը գումարումը Ս. Էջմիածնում, որը կղիմի Ռուսաստանի մեծագոր կայսրին՝ տանջահար հայ ժողովրդին օսմանյան ռեժիմից փրկելու խնդրանքով՝:

Հայաբնակ նահանգների հայերի անտանելի վիճակը ներկայացնելուց հետո Հովհաննես Արչարունին Վեհին խնդրել էր ընդունել իր հրաժարականը պաշտոնից՝ պատճառաբանելով, թե ուժերից վեր է որևէ կերպ թեթևացնելու իր տառապյալ հոտի կյանքը: Կաթողիկոսը չէր պատասխանել պատրիարքի նամակին՝ դրանով իսկ նաև մերժելով պաշտոնից հրաժարվելու նրա խնդրանքը:

Եվ ահա այժմ, երբ տեղի էին ունեցել Ռոդոսթոյի և Մալկարայի կոտորածները, Հովհաննես Արչարունին Հուլիսի 19-ին, որպես բողոք, իր հրաժարականի խնդրագիրը ներկայացրեց այս անգամ թե՛ հայոց ազգային ժողովին և թե՛ Օսմանյան կառավարությանը:

Ազգային ժողովին ներկայացրած հրաժարականում սրբազանը գրել էր.

«Վերջերս Ռոդոսթոյի վիճակին մեջ պատահած տխուր դեպքերը ինչպես ինձ, նմանապես ամբողջ ազգիս ցավ պատճառեցին, և ես ընկճուած անոր ազդեցութենէն՝ առողջական տեսակէտով անբավական կը զգամ շարունակել պատրիարքական պաշտոնս և կը հարկադրուիմ մատուցանել հրաժարականս:

Արդ, կը թողում պատրիարքական աթոռը և կը հայցեմ երկնից, որ հաճի այց առնել տառապեալ ազգիս և գոհացում տալ անոր բազմաղիմի պետքերուն ու դարմանել անոր ծովացեալ ցաւերը»¹:

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, ցուցակ 20, թղթապ. 238, վավ. 109, թ. 1-2:

² Նույն տեղում:

³ Մշակ, № 164, 28 Հուլիսի 1913 թ.:

Իր այդ քայլի պատճառը միայն իր հոտի նկատմամբ թուրքական կառավարության թշնամական ընթացքը չէր: Բանն այն է, որ ձախորդ հանգամանքների բերումով նա չկարողացավ հասնել պատրիարքարանի հետ Հայոց ազգային ժողովի և նրա վարչական մարմինների գործակցությունը: Այդ պայմաններում սրբազանը գերադասեց հրաժարական տալ, քան շարունակել վարել իր պաշտոնը մի այնպիսի ժամանակ, երբ ազգային ամենաէական և կենսական շահերը կարող էին վտանգվել:

Ազգային ժողովը հուլիսի 19-ի նիստում ընդունեց պատրիարքի հրաժարականը:

Հովհ. Արչարունու հրաժարականի խնդրանքին Բ. Դուռը ձգձգում էր պատասխան տալ: Նկատի առնելով պահի ծանր դրությունը՝ Հայ կուսակցությունները պատրիարքին խնդրեցին մնալ իր պաշտոնում: Բայց սրբազանը վճռական էր տրամադրված, և կառավարությունը ի վերջո ընդունեց հրաժարականը:

Արչարունի սրբազանի հրաժարականն ընդունելուց հետո Հայոց պատրիարքական տեղապահ ընտրվեց Փարբիել եպիսկոպոս ձևահիրճյանը:

Օսմանյան սահմանադրությունը հաջորդած ընդամենը հինգ տարում մի քանի անգամ փոխվել էին Կ. Պոլսի Հայոց պատրիարքները (Օրմանյան, Իզմիրյան, Դուրյան, Արչարունի): Հիմա պատրիարքի գահին պետք է նստեր մեկը, որը կարողանար գլուխ հանել Հայության համար ճակատագրական այդ չրջանի դժվարագույն խնդիրներից: Շատերը պարտադիր էին համարում, որ նոր պատրիարքը երկար տարիներ չփուժներ ունեցած լինել թուրքաց նախարարների և Կ. Պոլսի օտար ղեսպանների հետ, մոտիկից ծանոթ լինել տերությունների դիվանագիտական հարաբերություններին, լավ ուսումնասիրած հայկական խնդիրը, իմանար մեծ տերություններից յուրաքանչյուրի վերաբերմունքը այդ հարցի հանդեպ և այդ ուղղությամբ նրանց վարած քաղաքականության դրդապատճառները: Շարունակ հարաբերության մեջ մնալով դիվանագիտական աշխարհի հետ՝ պատրիարքը պետք է կարողանար անմիջապես ըմբռնել քաղաքական պարագանների փոփոխությունը և ըստ այնմ

դրանք օգտագործել՝ ի շահ ազգի ու եկեղեցու:

Այդպիսի փորձառու անձինք շատ չէին թուրքահայ հոգևորականության շարքերում, իսկ եզակի բանիմաց եպիսկոպոսների դեմ հաճախ ցցվում էր կուսակցական մոլեռանդությունը:

Ահա թե ինչու այս անգամ միտք հղացավ առաջնությունը տալ գավառի եկեղեցական գործիչներից մեկին, որն ավելի լավ կարող էր ըմբռնել բուն ժողովրդի կարիքները: Հաջորդ պատրիարքի մասին խոսելիս Կ. Պոլսի Հայոց քաղաքական չրջանակներում հիմնականում նշվում էին երեք եպիսկոպոսների՝ Դիարբեքիրի առաջնորդ Զավենի, Կարնո առաջնորդ Սմբատի և Սեբաստիայի առաջնորդ Թորգոմի թեկնածությունները¹: Եվ վիճակն ընկավ Տիգրանակերտի (Դիարբեքիրի) առաջնորդ Զավեն արքեպիսկոպոսի վրա, որը եղել էր Արմաշի վանքի սան, Մաղաքիա Օրմանյանի և Եղիշե Դուրյանի աշակերտներից մեկը և 15 տարի շարունակ գործել էր Կարինում, Վանում, Սարբերդում և Տիգրանակերտում: Առաջնորդական պաշտոնավարության տարիներին նա աչքի էր ընկել որպես իր ժողովրդի շահերի ու իրավունքների հետևողական պաշտպան²:

Տիգրանակերտից մինչև Կ. Պոլիս պատրիարքական թեկնածուն անցավ Հայաստանի միջով և անձամբ տեսավ Հայ ժողովրդի ողբերգական կացությունը, որին ծանոթ էր և առաջ, իբրև գավառային առաջնորդ: Ամենուրեք Հայ բնակչությունը ջերմ ընդունելություն էր ցույց տալիս պատրիարքության թեկնածուին: Այդ ուղևորությունը նա իր հերթին օգտագործում էր մոտիկից ծանոթանալու ժողովրդի վիճակին: Հասնելով Պոլիս՝ պատրիարքը սրտագին ընդունելություն գտավ մայրաքաղաքի Հայության կողմից: Կառավարությունը, իր հերթին, վայելուչ ընդունելություն կազմակերպեց նրան³:

1913 թ. օգոստոսի 30-ին Հայոց ազգային պատգամավորական ժողովը ձեռնարկեց թուրքահայոց նոր պատրիարքի ընտրությունը: Ժողովին մասնակցում էր 84 պատգամավոր: Զանա-

¹ Տե՛ս «Մշակ», № 196, 6 սեպտեմբերի 1913 թ.:

² Տե՛ս «Մարտ», № 12, 20 սեպտեմբերի 1913 թ.:

³ Տե՛ս «Արարատ», № 1, հունվար, 1914, էջ 26-27:

զան խմբակցությունների և հոսանքների միջև կայացած համա-
ձայնություն չնորհիվ, գաղտնի քվեարկությունը և 64 ձայնով
պատրիարք ընտրվեց Օրմանյանի հետևողական համախոհ,
Դիարբեքի թեմի առաջնորդ Զավեն եպիսկոպոս Տեր-Եղիա-
յանը:

Ամենայն հայոց Գևորգ կաթողիկոսը շտապեց նրան չնորհել
արքեպիսկոպոսական աստիճան:

Նոր պատրիարքի առաջին քայլերն իսկ ցույց էին տալիս, որ
նա կոչված է գործունյա և ազդեցիկ դեր խաղալու հայրենի
բնաշխարհում, թուրքահայ ժողովրդի կյանքի վերջին երկու
տարիներին:

**ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ
ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՈՐՈՇ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ**

1878 թ.-ից մինչև 90-ական թվականները Ռուսաստանը ան-
կեղծորեն ցանկանում էր թեթևացնել հայերի դրությունը Թուր-
քիայում, իսկ Անգլիան խոչընդոտում էր դրան: 90-ական թվա-
կաններին այդ երկու հզոր պետությունների դերերը փոխվեցին.
մինչդեռ **Անգլիան** տրամադիր էր բարվոքելու թուրքահայոց
դրությունը, Ռուսաստանը հետ կանգնեց իր նախկին մտադրու-
թյունից և հասկացնել սովեց, որ առայժմ հրաժարվում է հայերին
էական օգնելու մտքից: Իսկ Ֆրանսիան դեռ չէր կողմնորոշվում
իր անելիքներում:

Մոտավորապես 1910 թ. սկզբներից խնդրին խառնվեց **Գեր-
մանիան**, որը մինչ այդ ձեռնպահ էր և համարյա չէր հե-
տաքրքրվում հայկական հարցով: Միաժամանակ, թուրքամետ
Գերմանիայի քաղաքականությունը երկրի հասարակական
կարծիքի ազդեցություն տակ հայերի հանդեպ աստիճանաբար
նկատելի փոփոխության էր ենթարկվում:

Այդ երևույթը, որ նշմարելի էր դեռ 1911-1912 թթ., ակնհայտ
դարձավ 1913 թ. սկզբներից: Հայերի մասին գերմանական
իշխանությունների ունեցած բացասական քարացած կարծիքն

աստիճանաբար տեղի էր տալիս. Բեռլինն ավելի մոտիկից էր
հետաքրքրվում հայերով:

Դրա դրդապատճառները բազմազան էին, որոնց թվում
առանձնանում էին երկուսը: Առաջին պատճառն այն էր, որ այդ
տարիներին Գերմանիան մեծ հուսախաբություններ էր ունեցել:
Միացյալ Նահանգները, համառորեն հետևելով Մոնրոյի սկզբունք-
ներին, արգելք էր լինում արևմտյան մայրցամաք եվրոպական
երկրների, այդ թվում Գերմանիայի ներթափանցմանը: Գերմա-
նիան չէր կարողացել հիմնավորվել նաև Մարոկոյում, Բալկան-
յան երկրորդ պատերազմից նույնպես նա ոչինչ չստացավ:

Մնում էր միայն Ասիական Թուրքիան՝ իբրև հրապարակ իր
արդյունաբերական հսկա արտադրությունների, և գաղութա-
վայր՝ իր հարածուն բնակչության համար: Այստեղ Գերմանիան
մտադիր էր ձեռք գցել երկու կարևոր տարածք. այն դեպքում,
եթե օսմանյան պետությունն ի վիճակի չլիներ մնալ իր
ասիական տիրույթների տերը, կամ առաջ գար այդ տիրույթ-
ները եվրոպական մյուս տերությունների միջև ազդեցություն
չըջանների բաժանելու խնդիր:

Գերմանիայի համար այդ երկու տարածքներից մեկը Կիլի-
կիան էր, որը հարմարագույն տեղ էր այդ շրջանում իր ծովային
հաղորդակցությունը զարգացնելու համար, իսկ երկրորդը
Միջագետքն էր, որտեղ Գերմանիան կառուցում էր Բաղդադի
երկաթուղին: Եվ եթե նրան հաջողվեր այդ երկու տարածք-
ներում ձանաչել տալ իր արտոնյալ իրավունքները, նա, հիրավի,
ձեռք կբերեր մի խոշոր հենակետ՝ գաղթականական մեծ ծրագիր
իրականացնելու համար:

Այդ ծրագրի իրականացման երկրորդ պատճառն իր առջև
ցցված ոռոսական վտանգի՝ ամեն զնով հաղթահարումն ու չե-
զոքացումն էր:

Ռուսները արդեն կարողացել էին թուրք կառավարությունը
ստիպել, որ երկաթգիծն անցնի ոչ թե Սվազի և Խարբերդի
մարդաչատ նահանգներով, այլ Միջագետքի ամայի տափաս-
տաններով՝ ոռոսական կայսրության սահմաններից հեռու, մի
բան, որ բավական չափավորել էր Վիլհելմ կայսրի իդձերն ու
երազանքները:

Իսկ հիմա Ռուսաստանը սպառնում էր բոլորովին խախտել ու խորտակել Հայաստան թափանցել փափազող Գերմանիայի ձեռնարկումները:

1913 թ. ապրիլի 1-ին՝ գերմանական ռայխստագում արտաքին գործերի նախարարությունն անախաճաչվի քննություն ժամանակ, այդ գերատեսչությունն ստատուս-սեկրետար (արտգործնախարար) Գոտլիբ Փոն Յագովը և մի շարք պատգամավորներ անդրադարձել էին նաև Հայկական Հարցին: Ցավակցություն Հայտնելով Թուրքիայում «Հայերին նեղություններ տալու առիթով»՝ նրանք, սակայն, պահանջներ անհաշտ էին համարել Հայկական Հարցը վերակենդանացնելու համար՝ գտնելով, որ այդ դեպքում «Ռուսաստանը հնարավորություն կստանա զբաղվելու Հայաստանը»:

«Յուրաքանչյուր երկիր,- գրում էր “Frankfurter Zeitung” լրագիրը,- որը ձգտում է տիրապետություն հաստատել Առաջավոր Ասիայում, պետք է գրավի Հայաստանը»¹:

Հայաստան մուտք գործելու Ռուսաստանի քաղաքականությունը չեզոքացնելու համար Բեռլինը մտադիր էր էլ ավելի ուժգին սատարել Թուրքիային: 1913 թ. հունվարի 21-ին գերմանական կանցլեր Բետման-Հոլվիգը Լոնդոնում ղեկավար Լիխնովսկուն գրում էր, որ Գերմանիան կենսականորեն չահագրգռված է, որ «Ասիայում թուրքական տիրապետությունը պահպանվի անձեռնամխելի՝ հնարավորինս երկար»²:

Գերմանիան քաջ գիտակցում էր, որ Հայկական բարենորոգումների հարցը Ռուսաստանի համար մի հարմար առիթ է՝ Թուրքիային ներկայացնելու խիստ պահանջներ, իսկ ծայրահեղ դեպքերում՝ դիմելու ներգործական քայլերի: Ռուսաստանի մոտենալը Միջագետքին, անշուշտ, խիստ անցանկալի էր Գերմանիայի համար:

¹ Մեջբերված է Ս. Ստեփանյանի “Армения в политике империалистической Германии” գրքից, Ереван, 1975, с. 20.

² А. С. Аветян, Германский империализм на Ближнем Востоке, изд. международные отношения, М., 1966, стр.

Բեռլինում մտածում էին, որ եթե Ռուսաստանը հաստատվի Արարատի բարձրավանդակի վրա՝ այդքան մոտիկ Բաղդադի գծին ու Միջագետքի գաղթավայրերին, ապա պատերազմի պարագային մինչ գերմանացիներն իրենց երկրից բանակներ կփոխադրեն Փոքր Ասիա, ցարի կազակները վաղուց գիծը զբաղված և հասած կլինեն Միջերկրական ու Բաղդադ:

Գերմանական մամուլի օրգանները գրում էին, որ իրենց բոլոր կառավարությունները մինչև այժմ անհոգ են եղել պարզելու, թե իրականում ի՞նչ է կատարվում Թուրքիայի՝ ռազմավարական խոշոր նշանակություն ունեցող Հայկական նահանգներում, չեն կամեցել պարզել, թե ինչպիսի հնարավորություններ կան՝ Հայերի ավանդական ռուսամետությունը փոխելու և Հայկական բարձրավանդակում ռուսական ազդեցությունը չեզոքացնելու համար: Հավանաբար մամուլի նման քննադատությունների ազդեցության տակ էր նաև, որ 1913 թ. հունիսի կեսերին Բեռլինից Հայաստան մեկնեց գերմանական մի հատուկ հանձնախումբ՝ արտաքին գործերի նախարարության պաշտոնյա, պրոֆ. Լենսմանի գլխավորությամբ: Լուրերի համաձայն՝ դրա կազմում էր նաև գերմանական շտաբի մի բարձրաստիճան գինվորական: Հանձնախմբի առջև խնդիր էր դրվել հանգամանորեն ուսումնասիրել Հայաստանի ժողովրդի տրամադրությունները, պարզել Հայկական նահանգներում գերմանացիների հիմնավորվելու և ռուսական վտանգին հակազդելու հնարավորությունները:

Կ. Պոլսի գերմանական ղեկավարությունն այդ ուղղությամբ լարված աշխատանք էր տանում իր հյուպատոսությունների միջոցով, որոնք գործում էին Ադանայում, Հալեպում, Ալեքսանդրեթում, Բաղդադում, Բեյրութում, Դամասկոսում, Էրզրումում, Սամսունում, Տրապիզոնում, Ջմյուռնիայում, Մոսուլում և Հայֆայում: Ինչպես տեսնում ենք, դրանց նկատելի մասը գործում էր բուն Հայաստանում և Հայաշատ վայրերում: Այդ հյուպատոսությունների հիմնական նպատակներից էր Հայերին Ռուսաստանի դեմ տրամադրելը, մյուս կողմից նրանց Գերմանիայի կողմը սիրաչահելը:

Վերը նշվեց, որ Բեռլինում ռուսական ղեկավար Ս. Սվերբեևը

1913 թ. հունիսի սկզբներին Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովին հաղորդել էր, որ ինքը եղել է գերմանական կառավարությունում, հանդիպում ունեցել արտգործնախարար Փոն Յագովի հետ, որի ընթացքում վերջինս ղեկավարել է հայտնել Հայաստանում ռուսական քաղաքականության դեմ: Սազոնովին իր հուշերում նշել է, որ դեսպան Սվերբենի կարծիքով՝ Փոն Յագովի ղեկավարությունը բացատրվում էր այն բանով, որ գերմանական կառավարությունը, ըստ երևույթին, նույնպես կամեցել է այս կամ այն ձևով արժարժել հայկական բարենորոգումների խնդիրը, դրանով իսկ թուլացնել նրանց՝ հայերի ավանդական ռուսամետ կողմնորոշումը, հետևապես ղեկավարացնել Հայկական հարցում Պետերբուրգի գործողությունները: Ուստի Բեռլինը չէր կարող գոհ լինել, որ ռուսական կողմը կանխել է նրա մտադրությունը¹:

Գերմանիայի անակնկալ հետաքրքրությունը հայերի հանդեպ անշուշտ բացատրվում էր նրանով, որ Բեռլինի կառավարությունը, չկամենալով թուրքերին գրգռել չափազանց լայն բարենորոգումների ծրագրով, միաժամանակ դեմ չէր առժամանակ որոշ շեղում կատարել իր որդեգրած բացահայտ հակահայ քաղաքականությունից և փորձել շահել հայերի համակրանքը, որոնք «թուրքական տիրապետության մեջ տնտեսական և մշակութային տեսակետից ամենագնահատելի ուժերից մեկն էին հանդիսանում»²:

1913 թ. մայիսի 1-ին Գերմանիան նախազգուշացրեց Բ. Գոանը, որ եթե Ռուսաստանը հանդես գա ի պաշտպանություն թուրքահայերի, ինքը միջոցներ ձեռք կառնի պաշտպանելու իր շահերը Անատոլիայում, այսինքն՝ ռազմակալման կենթարկի այն շրջանները, որոնցով անցնում է Անատոլիայի երկաթուղին:

Ահա այստեղ էլ սկսվում էին Հայաստանի բնակչության համակրանքը շահելու Գերմանիայի փնտրտուքները:

Թե՛ Կիլիկիայում, որտեղ 1909 թ. զանգվածային կոտորած-

ներից հետո դեռ բավական թվով հայեր կային, և թե՛ Միջագետքում, որը սահմանակից էր հայկական շրջաններին, Գերմանիան որոնում էր հատկապես տեղացի կուլտուրական տարրեր: Նա քաջ գիտակցում էր, որ իրեն կարող են աջակից լինել ոչ թե վաչկատուն ցեղերը, ինչպես, օրինակ՝ քրդերը, այլ եվրոպական մշակույթին հարած զանգվածները, ինչպիսիք հայերն են: Ուստի Կ. Պոլսի գերմանական դեսպանության հրահանգով նրան ենթակա հյուպատոսությունները Հայաստանում հատուկ ծրագրերով աշխատանք էին տանում հայերի շրջանում՝ նրանց իրենց կողմը շրջելու նպատակով: Գերմանացի դիվանագետները շարունակ այցելում էին հայկական գավառներ, լինում վանում, Բիթլիսում, Մուշում, Նարբերդում, Գիարբեքիրում և այլ տեղերում: Գերմանական դիվանագիտությունը մեծ ջանքեր էր գործադրում հատկապես էրզրումում, ուր 1913 թ. բացված հյուպատոսությունը գլխավորում էր էդգար Անդերսը:

Բազդազի երկաթուղու զանազան հատվածների շինարարությունը ձեռնամուխ լինելու հենց առաջին օրերից գերմանացիները սկսել էին մուտք գործել Թուրքիայի արևելյան վիլայեթների այն խուլ վայրերը, որտեղ հայ բնակչությունը շարունակում էր տվյալ մասնաշրջանի մոլեռանդ ֆանատիկոսների լծի տակ: Նրանք հայերի շրջանում հանդես էին գալիս ոչ միայն որպես գերմանական առևտրական տների շրջիկ գործակալների, այլև միսիոներների, բողոքական և այլ հարանվանական քարոզիչների դերում: Այդ քարոզիչների մեծ մասը ամերիկահայատակ գերմանացիներ էին, որոնք առանց քաշվելու հայերի շրջանում տանում էին հակառուսական լայն պրոպագանդ:

Գերմանացի միսիոներներն ու գործակալները 1894-1896 թթ. հայկական կոտորածներից հետո սկսել էին Հայաստանում իրենց ենթակայության տակ ստեղծել դպրոցական և բարեգործական հաստատությունների աչքի ընկնող մի ցանց, որի ճյուղերը տարածվում էին նաև Պարսկաստանում: Հայաստանում և Կիլիկիայում հիմնվել էին որբանոցներ ու հիվանդանոցներ: Տպավորիչ էր կրթության բնագավառում գերմանացիների արածը: Գերման մանկավարժները մեծ եռանդով նվիրվել էին հայ մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործին:

¹ Տե՛ս С. Д. Сазонов, Воспоминания, էջ 17:

² Նույն տեղում:

Մի քանի քաղաքներում գերմանական դպրոցական ցանցը ներառել էր լավ կազմակերպված բազմամարդ ժողովրդական դպրոցներ: Դրանցից բացի՝ Վանում, Սարբերդում, Դիարբեքիրում, Եղեսիայում, Տրապիզոնում, Կիլիկիայում և այլուր բացված դպրոցների մի մասը գործում էր միջնակարգ ուսուցման ծրագրերով: Հայ դպրոցականները սիրով հետամուտ էին ուսումնասիրելու գերմաներենը, գերմանական գրականությունն ու գիտությունը: Ավանդույթ էր դարձել, որ ամեն տարի տասնյակ Հայ երիտասարդներ իրենց ուսումը լրացնելու համար մեկնեն Գերմանիա: Այստեղի համալսարաններում և բարձրագույն մյուս դպրոցներում սովորում էին հարյուրավոր Հայ ուսանողներ, որոնք կապեր էին հաստատում գերմանացի դասախոսների ու դասընկերների հետ, նրանց ծանոթացնում իրենց ազգային մշակույթի գանձերին: Հայոց լեզվի, պատմության և գրականության ուսումնասիրությունը դարձել էր գերմանացի գիտնականների կարևոր զբաղմունքներից մեկը:

Լուսավորության և կրթության ասպարեզում գերման միսիոներների թափած ջանքերը տարեցտարի ավելի նկատելի էին դառնում ու աչքի ընկնող պտուղներ տալիս: Հայերի մեջ գնալով ստվարանում էր կրթված մարդկանց, մտավորական ուժերի թիվը. ասպարեզ էին գալիս լավ պատրաստված քահանաներ, բժիշկներ ու ուսուցիչներ: Սրանց համարյա բոլորի մեջ այն կարծիքն էր ամրապնդվել, որ Ռուսաստանը, որն արևելքի քրիստոնյաների վաղեմի պաշտպանն է, այժմ, սակայն, անհաղթահարելի հանգամանքների առաջ տեղի տալով, չի կարողանում զբաղվել Հայկական խնդրի լուծմամբ: Ուստի, ըստ նրանց, այդ իրադրության մեջ միակ պետությունը, որ կարող է թեթևացնել Հայ ժողովրդի դրությունը և միանգամից բարվոքել նրա վիճակը, Գերմանիան է:

Փոքր Ասիայում գերմանական հյուպատոսներն ու Բաղդադի երկաթուղու գերմանացի տնօրենները շատ Հայերի պաշտոններ էին տվել և դա օգտագործում էին՝ հօգուտ Գերմանիայի և առհասարակ գերմանական շահերի պրոպագանդ անելու, քարոզելու ոչ միայն Թուրքիայի, այլև Ռուսաստանի Հայերի շրջանում:

Այդ տեսակետից բնորոշ է, որ, օրինակ, Վուլգայի ավազանում գտնվող գերմանական գաղութների համար Սարատովում հրատարակվող գերմանալեզու լրագրի խմբագիրը հայկական ծագումով մի անձնավորություն էր, որը կրթություն էր ստացել գերմանական ավետարանական ընկերակցությունում¹:

Գերմանական եկեղեցին, որ միշտ մտահոգ էր եղել Հայերի ճակատագրով, այժմ մեծ եռանդով էր հանդես գալիս նրանց պաշտպանությամբ: “Christliche Welt” չաբաթաթերթն իր 1913 թ. № 9-ում առաջարկում էր Թուրքիայի հետ խաղաղության դաշնագիր չկնքել, մինչև նա ապահովություն չտա Հայերին: «Շուտով պետք է խաղաղություն կնքվի Թուրքիայի և բալկանյան դաշնակիցների միջև, - գրում էր պարբերականը: - Եվրոպան հավատարիմ չմնաց Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով Հայերին տված խոստմանը և դրանով իսկ մեղսակից դարձավ իրար հաջորդող նրանց կոտորածներին: Հայերի արյունը այսօր էլ թափվում է: Գոնե հիմա թուրքերի հետ չպետք է խաղաղության դաշնագիր կնքել, մինչև որ նրանք Հայկական վեց վիլայեթներում ապահովություն հաստատելու ամուր երաշխիքներ չտան: Իսկ այնպիսի երաշխիք, որ թղթի վրա չմնա, կարող են տալ միայն վեց մեծ պետությունները՝ Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Սարբերդ, Կարին և Սեբաստիա նահանգների վրա տեղական խաղաղություն հաստատելով»:

Հողվածագիրը շեշտում էր, որ հենց Գերմանիայի անմիջական շահն է պահանջում արդարացի լուծում տալ Հայկական հարցին: Նա հիշեցնում էր, որ գերմանացիները Հայաստանում ունեն դպրոցներ, որբանոցներ, հիվանդանոցներ: Հայերն են, որ գնում են իրենց երկիրը և հարյուրներով հաճախում գերմանական համալսարաններ և գերման գիտությունն ու կրթությունը փոխադրում Արևելք: «Հայ տարրը շատ ավելի կարևոր տեղ է բռնում Թուրքիայում, քան ըստ երևույթին կարծում է մեր պետական գործիչների մեծ մասը: Նրանք են կազմում օսմանյան

¹ Տե՛ս «Մշակ», № 81, 18 ապրիլի 1913 թ.:

պաշտոններու թյան ողնաչարը, և շատ դեպքերում, երբ գործի գլուխ մի թուրք է լինում, վճռական դեր կատարող խորհրդականները հայերն են ... Իսկ որ գլխավորն է, նրանք մեզ հավատակից քրիստոնյաներ են, մարդիկ, որոնց պիտի խողխողեն, եթե մարդասպանի ձեռքը բռնող չլինի»¹:

Պարբերականը համոզված էր, որ հայկական հարցը պետք է վճռվի այժմ կամ երբեք: «Ուստի մենք պահանջում ենք, որ Գերմանիան օգնի այդ կարևոր խնդիրն այս անգամ գլուխ բերելուն, այլ ոչ թե սառն ու կարճատև մի քաղաքականության հետևելով՝ մեղսակից դառնա հայերից նոր արյուն թափելու ոճրագործությանը»:

Գերմանացի բազմաթիվ կրոնական գործիչներ հայօգուտ քարոզներ էին կարդում եկեղեցիներում, հանդես էին գալիս մամուլի էջերում, դիմումներ ու խնդրանքներ էին հղում կառավարությանը: Հայության հանդեպ իր կարեկցանքով ու հայօգուտ գործունեությամբ այդ օրերին հատկապես աչքի էր ընկնում պաստոր Լեհմանը:

Հայերի մասին դրական հոդվածներ էին տպագրում ոչ միայն գերմանական անկախ պարբերականները, այլև կիսապաշտոնական լրագրերն ու հանդեսները:

Այսպես, “Berliner Tageblatt” թերթի 1913 թ. № 296-ում պրոֆ. Մարտին Հարթմանը առաջարկում է թուրքերին և հայերին առանձնացնել իրարից: Քանի որ այլևս անհնարին է նրանց համատեղ կեցությունը, գրում էր նա, ուստի Արևմտյան Անատոլիայում պետք է հավաքել թուրքերին, իսկ Արևելյանում՝ պահել հայերին: «Թող առանձնացված թուրքը ցույց տա իր շնորհքը, - նշում էր Հարթմանը, - ցույց տա, թե ինքը որքան և ինչպես կարող է գոյատևել առանց չարքաչ աշխատավոր հայ ձեռքի, առանց նրա վճարած անթիվ տուրքերի»:

Գերմանական մամուլի առանձին օրգաններ իրենց էջերում երբեմն տեղ էին տալիս նաև հայ հեղինակների: Նրանք տպա-

¹ Տե՛ս «Մշակ», № 81, 18 ապրիլի 1913 թ.:

² Նույն տեղում, № 150, 11 հուլիսի 1913 թ.:

գրում էին ինչպես թուրքահայերից ստացված տեղեկություններ, այնպես էլ գերմանական համալսարանների հայ ուսանողների և Արևմտյան Եվրոպայի մայրաքաղաքներում գործող գանազան քաղաքական ուղղություններ դավանող հայ գործիչների տրամադրած հոդվածներ ու նյութեր:

Առաջագետ մարդասեր գերմանացիների հայամետ գործունեությունը և դեպի հայերը գերման իշխանությունների ունեցած բացահայտ հակակրանքի մեղմացումը, անչուշտ, դրական արձագանք էին գտնում հայության շրջանում: Սակայն հայ մամուլի առանձին օրգաններ նշում էին, որ գերմանական կայսրի և նրա կառավարությունների հովանավորությունը սովորաբար ավելի շատ վնաս է պատճառել հովանավորայիններին, քան բարիք է բերել: Կյանքը ցույց է տվել, որ շատ հաճախ Գերմանիան բորբոքում էր իր պաշտպանյալների կրքերը, նրանց հասցնում հոգեկան կատարյալ լարվածության, ապա հետ էր քաշվում, նրանց լքում ու մատնում թշնամու ձեռքը: Մարդիկ հիշում էին, որ այդպես է նա վարվել նաև հայերի հետ: Պատահական չէր, որ հայերի հասցեին Գերմանիայից եկող դրական ազդակները հայ դեկավար շրջաններում ընդունում էին օրինաչափ մտավախությունը, զգաստ ու ոչ լիակատար հավատով:

Բայց հայկական շրջաններում, այնուամենայնիվ, գնալով մեծանում էր այն գործիչների թիվը, որոնք սկսել էին հավատ տածել Գերմանիայի քաղաքականության մեջ նկատվող փոփոխությունների անկեղծությանը, քանզի այդ երկրի կառավարությունը սկսել էր բացեիքաց իրազեկել, թե ինքը մոտիկից հետաքրքրվում է հայկական հարցով և նույնիսկ Թուրքիայի կառավարության ուշադրությունը հրավիրում հայերի կրած զրկանքների, նրանց հարստահարումների վրա և պահանջում դրական գործունեություն ծավալել Հայաստանում հնարավորինս արագ բարենորոգումներ մտցնելու համար:

Սկսվել էին եռանդուն հարաբերություններ Կ. Պոլսի գերմանական դեսպանության և հայոց պատրիարքարանի միջև:

Դեռ 1913 թ. ապրիլի 16-ին Կ. Պոլսում գերմանական դեսպան Վանդենհայնը Թուրքիայի վարչապետի և ներքին գործերի նախարարի ուշադրությունը հրավիրել էր այն հանգամանքի

վրա, որ մահամեղականների ներկա հուզմունքը Հայաստանում հիշեցնում է Ադանայի կոտորածի շրջանը, և համառորեն խորհուրդ է տվել ձեռք առնել եռանդուն միջոցներ անկարգությունների առաջը փակելու համար:

Գերմանիան հատկապես քնքշազգաց էր դարձել Կիլիկիայի հայերի նկատմամբ:

Հենվելով Փարիզի իր դեսպանությունը Պոդոս Նուբարի տված մի գաղտնի տեղեկագրի, ինչպես նաև Բեռլինի հայասեր գերմանացի գործիչների գրավոր արտահայտած կոլեկտիվ կարծիքի վրա՝ գերմանական կառավարությունը դեսպան Վանգեն-Հայմին հրահանգել էր սպառնիչ տեղեկություններ հայտնել Կիլիկիայի վերաբերյալ: Գեսպանն իր հերթին հանձնարարել էր դեսպանատան առաջին դրագոման կոմս Քանիցին հնարավորինս շտապ պատրաստել այդ տեղեկագիրը: Վերջինս այցելում է հայոց պատրիարքին նրա տանը և խնդրում պատրիարքարանի ուժերով պատրաստել հանգամանալից տեղեկագիր: Այդ այցելությունը Գերմանիան բացորոշապես հայերին իրագեկում էր, որ ցանկություն ունի Կիլիկիայի հարցով ուղիղ բանակցություններ սկսել նրանց ղեկավարություն հետ¹:

1913 թ. ապրիլին թուրքերը որոշել էին Ձատկի առթիվ հայերի ջարդ կազմակերպել Կիլիկիայում, և դա, հավանաբար, տեղի կունենար, եթե գերմանական մի մարտանավ չժամաներ Մերսին՝ հայերի կոտորածների դեպքում նավաստի զինվորներին ցամաք հանելու հրահանգով:

Օրեր անց Մերսինի նավահանգստում խարխալ է գցում գերմանական “Strasburg” զրահանավը²: Նավապետը երեք սպաների ուղեկցությամբ գնում է Ադանայի նահանգի կենտրոն և հանդիպում նահանգապետին: Զրույցի ընթացքում նա հայտարարում է, որ եթե հայերի դեմ մահամեղականների ներկա հուզումները վերածվեն զանգվածային անկարգությունների, ապա գերմանական կառավարությունը չի կարող սառնասիրտ մնալ և

¹ Տե՛ս «Էջմիածին», փետրվար-մարտ-ապրիլ, 1965, էջ 164:

² Տե՛ս նույն տեղում, էջ 156:

անձամբ պատասխանատու կճանաչի նահանգապետին: «Դուք պետք է ամեն ջանք գործադրեք իսլամ ժողովրդին հանգիստ պահելու», - ասել էր նա և ավելացրել, որ ինքը հայ բնակչությունը հանգստացնելու պահանջով դիմելու է Կիլիկիայի հայոց կաթողիկոսին նրա հետ հանդիպման ժամանակ:

Նահանգապետը և հանդիպմանը ներկա տեղական թուրք պաշտոնյաները ջանացել էին գերման ծովային հրամանատարին հետ պահել պաշտոնական զինվորական համազգեստով Կիլիկիայի հայոց կրոնապետին այցելելուց, բայց նա պատասխանել էր, որ ինքը գիտե իր անելիքը:

Դրանից հետո զրահանավի հրամանատար Պասխենը այցելում է Կիլիկիո Սահակ Բ կաթողիկոս Սապայանին և նրան խնդրում հայ բնակչությունը հորդորել, որ չենթարկվի հուզմունքի ու տագնապի, միաժամանակ հուսադրում է, ասելով, որ գերմանական կառավարությունն արթուն հսկում է՝ թե ինչ է կատարվում Կիլիկիայում, և իրեն արտոնել է հայերի կոտորած սկսվելու դեպքում անմիջապես գործ իջեցնել ափ և կրակ բացել ջարդարարների վրա, ձեռնարկել նաև ուրիշ միջոցներ հայերի կյանքն ու գույքը պաշտպանելու համար¹:

Լոնդոնի «Թայմզ» թերթը մայիսի 9-ի թվով հաղորդում էր, որ Կիլիկիայի կաթողիկոսը Պոլսի հայոց պատրիարքին հաղորդել է, թե նչված հաժանավի հրամանատարը իրեն խնդրել է ամեն կերպ խուսափել մոլեռանդություն գրգռող որևէ արարքից, միաժամանակ խոստացել է Մերսինից «Սթրագբուրգի» հեռանալուց հետո հասնել այն բանին, որ նույն նավահանգիստ մտնի գերմանական մի ուրիշ հաժանավ՝ հայերին պաշտպանելու համար:

Նավապետին առաջնորդարանից ճանապարհելուց հետո կաթողիկոսը հաջորդ օրը նրան փոխայցելություն է ուղարկում Գերմանիայում ուսում ստացած Գրիգոր վարդապետ Պալաքյանին: Գերմանացին նրան ցույց է տալիս ընդգծված սիրալիր վերաբերմունք, երկար զրուցում նրա հետ: Նավապետն անկեղծո-

¹ Տե՛ս «Ժամանակ», № 1443, 1 (14) մայիսի 1913 թ.:

րեն ասել էր, թե մինչև վերջերս գերմանական կառավարությունը սխալ էր գործում՝ անտեսելով հայերին, բայց այժմ նրա քաղաքականությունը հիմնովին փոխվել է՝ բռնելով հայանպաստ դիրք:

«Մթրազբուրգի» հեռանալուց հետո իսկապես որ տարբեր օրերի Մերսին և մերձակա ջրեր են հասնում գերմանական ուրիշ մարտանավեր՝ «Գեորգեն», «Կայեր», «Դրեզդեն», «Բրեսլաու» հաճանավերը, «Լորեյ» պահականավը և ուրիշ ռազմանավեր, որոնք Կիլիկիայի մոտերքում երկու-երեք օր մնալուց հետո հեռանում էին՝ նորից վերադառնալու հավաստիացումներով¹:

Ի պաշտպանություն քրիստոնյաների՝ գերմանացիների այդ հանդիսադրական քայլը կարևոր նշանակություն ունեցավ կիլիկիահայերի համակրանքը չահելու տեսակետից: Վերջիններս նույնիսկ սկսեցին մտածել, թե Գերմանիան արդեն իր հովանավորություն տակ է առնում իրենց: Իսկ Գերմանիայի խնդիրներից մեկը Կիլիկիայում այն էր, որ հայերին ցույց տար, թե ինքը նրանց պաշտպանելու համար գործում է ավելի եռանդով, քան Ռուսաստանը:

Գերմանիայի այս ցուցադրական չահագրգռությունը, մանավանդ զինվոր ցամաք հանելու մտադրությունը արձագանք էին գտել եվրոպական ուրիշ երկրների կառավարություններում, որոնք շտապել էին, իրենց հերթին, մեկական մարտանավ ուղարկել Կիլիկիայի ափերը:

Այս ամենի շնորհիվ կիլիկիահայերի ջարդի անմիջական սպառնալիքը, որ առաջացել էր 1913 թ. ապրիլ-հունիսին, հուլիսից սկսած՝ ժամանակավորապես թուլացավ:

Չնայած դրան՝ Գերմանիան շարունակում էր մնալ հայկական բարենորոգումների լուրջ հակառակորդ:

Գերմանական իշխանությունների արտաքննապես մարդասիրական թվացող այդ նոր մարտավարությունը որդեգրումը իրականում հայկական հարցի համար կանխատեսելի վտանգ-

¹ Տե՛ս «Ժամանակ», № 1442, 30 ապրիլի (13 մայիսի) 1913 թ.:

ներ էր պարունակում: Հայերի սիրտը չահելու միջոցով հայկական հարցում գերակշռություն ձեռք բերելու Գերմանիայի մտադրությունն անհանգիստ էր անում հայ գործիչներին մանավանդ այն պատճառով, որ այդ երկիրն ահագին չահեր ուներ Թուրքիայում, մեծ ազդեցություն՝ նրա կառավարության վրա: Օգտագործելով իր բազմաբնույթ լծակները՝ նա կարող էր ի դերն հանել Ռուսիայի ջանքերը:

Եռյակ զինակցություն մյուս երկու անդամները՝ Ավստրո-Հունգարիան և Իտալիան, որոնք մինչ այդ, կենսական չահեր չունենալով Հայաստանում, չէին հետաքրքրվում հայերի վիճակով, այժմ կարծես թե որոշ չահագրգռություն էին դրսևորում հայկական հարցում:

Ավստրիան, որ մինչ այդ հայերի վերաբերյալ չէր մշակել որևէ առանձին քաղաքականություն, այժմ հայտարարում էր, թե ինքն իր վրա է վերցնում Թուրքիայում ապրող հայ կաթոլիկների դատը և փորձելու է ազդել Բ. Դոան վրա, որպեսզի նա հատուկ հոգածություն հանդես բերի նրանց նկատմամբ:

Ավստրիական գեներալ Գերստների ստորագրությամբ 1913 թ. փետրվարին “Oesterrichische Rundschau” թերթում փոքրասիական խնդիրների վերաբերյալ մի հոդված էր երևացել, որտեղ մեծ տեղ էր հատկացված հայկական հարցին, ընդգծված էր, որ այդ հարցը հրատապ լուծում է պահանջում: Գեներալն ուշադրություն էր հրավիրում Փոքր Ասիայում ոռոսական վերջին հաջողության վրա, որի պատճառը, ըստ նրա, Ռուսաստանի կողմից հայկական հարցի բարձրացումն է: Ուստի նա Եռյակ դաշնություն կարևոր խնդիրներից մեկն էր համարում նախաձեռնությունը խլել Ռուսաստանից և հայկական հարցում ակտիվ դրական կեցվածք դրսևորել¹:

Համեմատաբար զուսպ էր Իտալիան, որն անցյալում, ավելի քան իր զինակիցները, զբաղվել էր հայկական խնդրով և ընդհանրապես հայտնի էր իբրև հայերին համակրող պետություն:

¹ Տե՛ս «Մշակ», № 81, 18 ապրիլի 1913 թ.:

ինչպես ցույց ենք տվել սույն աշխատությունների երրորդ գրքում, Տրիպոլիտանիայի պատերազմի ժամանակ Իտալիան նույնիսկ փորձել էր, հայերին դրդել, որ նրանք քաղաքական շարժում սկսեն Թուրքիայի դեմ:

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՍԵՊՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

Բեռլինում ուսական գործերի հավատարմատար Բրոնես-կին օգոստոսի 29-ի (սեպտեմբերի 11-ի) № 229 գաղտնի հեռագրով Սերգեյ Սազոնովին տեղեկացնում էր, որ ինքը նույն օրը Գերմանիայի պետական քարտուղար Յագովից ստացել է հուշագիր հայկական բարեփոխումների վերաբերյալ, որում ասված է, թե ուսական նախագծի դրույթների մի մասը կարելի է արդեն ընդունված համարել բոլոր վեց տերությունների կողմից: Իսկ այն, որ Կոնստանդնուպոլսի հանձնաժողովի անդամների մի մասը հեռացել է ուսական տեսակետից, ապա դրա պատճառն այն է, որ նրանք անհնարին են համարում Բ. Դոան կողմից այդ դրույթների ընդունումը: Ինչ վերաբերում է Գերմանիայի կառավարությանը, նշում էր Բրոնեսկին, ապա նա ոչ հնարավոր և ոչ էլ ցանկալի է համարում ստիպել Թուրքիային անելու այն, ինչը կամավոր երբեք չի ընդունելու: Ուստի բեռլինյան կաբինետը կարծում է, որ հանձնաժողովը պիտի ձեռնամուխ լինի Թուրքական նախագծի ավելի խոր ուսումնասիրմանը, որի մեջ Բ. Դուռը, ի վերջո, կհամաձայնի ընդառաջ գնալ առաջարկվող փոփոխություններին: Հենց դրա համար, հայտնում էր Բրոնեսկին, պետքարտուղար Յագովը արդեն հանձնարարել է Վանգենհայմին Գիրսի հետ միասին նորից անդրադառնալ Թուրքական նախագիծը որոշ փոփոխությունների ենթարկելու հնարավորությանը¹: Հաջորդ օրը՝ օգոստոսի 30-ին (սեպտեմբերի 12-ին), Սազոնովին հղած գաղտնի հեռագրով Բրոնեսկին հայտնում է, որ

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3464, л. 24.

ինքը նույն օրը այցելել է պետքարտուղար Յագովին և զրույցի ընթացքում նրան տեղեկացրել, որ ինքը մտադիր է հեռագրել Վանգենհայմին և խնդրել, որ նա ավելի զիջող լինի ուսական առաջարկությունների նկատմամբ: Պետքարտուղարը պատասխանել է, թե դրա կարիքը բնավ չկա, որովհետև ինքը Վանգենհայմին անհրաժեշտ խորհուրդ է տվել, և որ վերջինս արդեն համապատասխան ցուցում է տվել իր դեսպանությունից առաջին թարգմանին, որը և հանդիպում է ունեցել Մանդելշտամի հետ: Յագովը միաժամանակ հավելել էր, որ այդ հանդիպումը և կարծիքների փոխանակումը չեն հարթել առկա տարաձայնությունները: Այդ կապակցությամբ Բրոնեսկին Սազոնովի ուշադրությունը հատկապես հրավիրում էր այն խնդրի վրա, որ «հենց այսօր Կ. Պոլսից ստացած հաշվետվությունից երևում է, որ որևէ առաջընթաց չի կատարվել սեկտորների բաժանման խնդրում, այսինքն՝ առաջվա պես ուսական ներկայացուցիչը կանգնած է սեկտորների ուղղաձիգ բաժանման սկզբունքի վրա, իսկ հանձնախմբի գերմանացի անդամը պաշտպանում է հորիզոնական գծով բաժանման գաղափարը, ինչպես ներկայացված է Թուրքական նախագծում»: Յագովն ասել էր, թե այդ հարցի մասին վերջնական խոսք ասել չի կարող, որովհետև ինքը համարյա անձանոթ է սեկտորների բաժանման հարցին, հետևապես պատճառ չի տեսնում ձիջտ համարել ուսական կողմի պնդումները և կարգադրել Վանգենհայմին ընդունելու ուսական նախագծի այդ դրույթը¹:

Յագովը հաստատում է իր այն կարծրատիպ դիտողությունը, թե հարկավոր է կանգ առնել բարեփոխումների այնպիսի միջին նախագծի վրա, որը Թուրքիայի համար ընդունելի կլիներ, քանի որ տերությունները բնավ հակված չեն ուժ կիրառել հայկական բարենորոգումներն անցկացնելու համար: Հեռագրի վերջին տողերով Բրոնեսկին Սազոնովին հաղորդում էր, որ առարկելով պետքարտուղարի այդ տեսակետին՝ ինքն ասել է, թե Թուրքիայի մտքով երբեք չէր անցնի ընդդիմանալ իրենց

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3464, л. 24-25.

նախագծի դրույթներին, եթե չլինեին տարաձայնությունները տերուծյունների միջև, որոնք էլ հենց թուրքերին դիմադրողական ուժ են տալիս¹:

Զրույցի ընթացքում Բրոնեակին խոսք էր բացել նաև ընդհանուր վերատեսուչների նշանակման դժվարությունների մասին: Սույս տալով որոշակի հարցադրմանը պատասխանելուց՝ Յազովն ասել էր, թե Բ. Դոան հետ նախապես պետք է համաձայնեցնել այս կամ այն հարմար թեկնածուի հարցը: Նա նաև գտնում էր, որ ինքը հակված է ճանաչելու հայկական վիլայեթների բնակչության ոչ թե համեմատական (համամասնական), այլ հավասարաչափ ներկայացուցչության սկզբունքը²:

Իսկ Կոստանդնուպոլսում օգոստոսի 29-ին շարունակվում էին Գիրսի և Վանգենհայմի միջև սկսված բանակցությունները: Միաժամանակ բանակցում էին Մանդելշտամը և Կ. Պոլսի գերմանական դեսպանության ղրագոմանը: Այդ և հետագա մի քանի օրերի նրանց բանակցություններն ընթանում էին խիստ լարված մթնոլորտում:

Առկա տարաձայնությունները չէին հարթվում նաև երկու դեսպանների՝ Գիրսի և Վանգենհայմի հանդիպումների ընթացքում: Գերման դեսպանը շարունակում էր պնդել, որ հանձնախմբի նիստերի վերսկսումը պետք է կատարվի թուրքական ծրագրի հիմքի վրա, որ իր երկիրը և ընդհանրապես Եվրոպան որևէ հարկադրական միջոց չեն կիրառի թուրքիայի դեմ, ուստի պետք է սահմանափակվել բարենորոգումների ծրագրի այն կետերով միայն, որ հոժարակամ կընդունի նա: Այդ նպատակով Վանգենհայմը առաջարկում էր հրավիրել ռուսական, գերմանական և թուրքական ներկայացուցիչների մի համատեղ խորհրդակցություն՝ քննելու համար Բ. Դոան ցանկությունները: Գիրսը հրաժարվել էր այդ առաջարկն ընդունելուց՝ գտնելով, որ նման խորհրդակցությունը միայն կնպաստի հարցի լուծումը ձգձգելուն, իսկ Բ. Դոան ցանկությունները կարելի է պարզել

մեծ վեզիրի հետ ունենալիք մտերմական բացատրությունների ժամանակ, և դրա համար բնավ հարկ չկա հատուկ խորհրդակցություն կազմակերպել: Վերջում ռուս դեսպանը Վանգենհայմին հայտարարել էր, որ ինքը հնարավոր չի համարում հետ կանգնել նախագծի այն կետերից, որոնք կարող էին զսպել հայերին ոտքի կանգնելու³:

Ռուսական դեսպանի այդ վճռական կեցվածքը գերմանացի դեսպանին ստիպում է որոշ նահանջ կատարել իր անդիջում դիրքերից: Սեպտեմբերի 2 (15)-ին Սազոնովին հղած հերթական (№ 830) գաղտնի հեռագրով Գիրսը հայտնում է, որ, վերջապես, Վանգենհայմը համաձայնեց ռուսական նախագծին, ասելով սակայն, թե հետևյալ երեք կետերն այնքան էլ հստակեցված չեն. 1) Հայաբնակ երկու սեկտորների գլխավոր տեսուչների նշանակումը՝ տերուծյունների բարեկամական համաձայնությամբ, 2) Դեսպանների կողմից անցկացվող հսկողությունը՝ ինչպես Բ. Դոան հետ անմիջական հարաբերություններում, այնպես էլ տեղերում հյուպատոսական ներկայացուցիչների միջոցով՝ Բեռլինյան տրակտատի 61-րդ հոդվածի հիման վրա, 3) Քրիստոնյաների և մահմեդականների հավասար թիվը տեղական խորհուրդներում և վարչական պաշտոններում⁴:

Բայց Վանգենհայմն իր «զիջումը» պայմանավորում էր այն անհրաժեշտությամբ, որ նախ հարկավոր է ստուգել, թե Բ. Դուռը որքանով է պատրաստ ընդունելու այդ երեք կետերը: Նա կրկին (այս էլ որերորդ անգամ) Գիրսին առաջարկում է հրավիրել ռուս, գերմանացի և թուրք դիվանագետների հատուկ խորհրդակցություն և այնտեղ պարզել, թե նշված երեք կետերի նկատմամբ ինչպիսին է Բ. Դոան վերաբերմունքը: «Սակայն ես մերժեցի այս առաջարկությունը, - նշված հեռագրում շեշտադրում էր Գիրսը, - քանի որ հարմար չեմ գտնում թուրքերի աչքում բարձրացնել Գերմանիայի ակնառու դերը հայկական բարեփոխումների գործում մյուս տերուծյունների առաջ», մանավանդ

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1913, д. 3464, л. 25.

² «Բարենորոգումները Հայաստանում», էջ 53:

¹ «Բարենորոգումները Հայաստանում», էջ 58:

² АВПРИ, ф. "Политархив", г. 1913, д. 3464, л. 31.

որ գերմանացի դեսպանը հայտարարել է, թե Գերմանիան ստիպված է լինում հաշվի առնել նաև իր դաշնակիցների կարծիքը, որոնք միշտ պատրաստ են մեղադրելու իրեն Բ. Գոան առաջ՝ Թուրքիայի շահերը բավարար չափով չպաշտպանելու համար (իբր նման հանդիմանություն է արել Խտալիան): «Բայց ես տարակուսում եմ իմ ընկերակցի անկեղծ լինելու հարցում, երբ նա հայկական բարեփոխումների հանդեպ Գերմանիայի սառնությունը կցում է դաշնակիցների վրա: Կարելի չէ չափով կղերղեմ նրան հայերի նկատմամբ ավելի կարեկից վերաբերմունքի՝ վստահ լինելով, որ, եթե մեզ չհաջողվի անցկացնել մեր ծրագիրն իր գլխավոր կետերով, ապա մեզ սպասում են լուրջ բարդացումներ Հայաստանում»¹:

Հետագա օրերին բանակցությունները կառուցողական բնույթ էին կրում: Մոտավորապես սեպտեմբերի 3-ից երկու դեսպանները հանդիպում էին համարյա ամեն օր և փորձում ընդհանուր լեզու գտնել: Բանակցությունների ընթացքը ցույց տվեց, որ առանց փոխադարձ զիջումների անհնարին է ակնկալել որևէ արդյունք: Բայց բանն այն էր, որ հիմնականում ստիպված էր զիջումների գնալ ռուսական կողմը: Հատկապես բուռն վիճաբանություններ եղան երկու սկզբունքային հարցերի շուրջ, որոնք ռուսական կողմից առաջարկվել էին Ենի-Քեոյի քննարկումների ժամանակ, բայց մերժվել էին թուրք-գերմանական համատեղ ջանքերով: Ընթերցողներին հիշեցնենք, որ դրանք հիմնականում վերաբերում էին հայկական նահանգներից մի սեկտոր (չրջան, վիճակ) ստեղծելուն և դրա ղեկավար քրիստոնյա ընդհանուր վերաքննիչ (վերատեսուչ) նշանակելուն:

Արդեն մեկընդմիջտ լուծված համարելով մեկի փոխարեն Հայաստանում երկու սեկտոր (վիճակ) ստեղծելու հարցը՝ Հ. Վանգենհայմը ըստ էության իր ջանքերն ուղղեց հատկապես սեկտորների ղեկավարումը Բ. Գոանը թողնելու խնդրին:

Ռուսական նախագծով ենթադրվում էր Հայաստանը վարչական միավոր դարձնելու ղեկավարում այս տարածքի ղեկավարու-

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3464, л. 31 (об.).

թյունը հանձնել պետությունների կողմից նշանակված մի քրիստոնյա գեներալ նահանգապետի, բայց ահա այժմ Վանգենհայմը պահանջում էր, որ Բ. Գոան ինքը նշանակի երկու շրջանների ղեկավարներին, որոնք պիտի ստանային *Inspecteurs généraux*՝ ընդհանուր վերատեսուչներ՝ անվանումը, իսկ պետություններն իրենց կողմից նշանակելու են շրջանների ղեկավարներին աջակից մի-մի եվրոպական խորհրդական¹:

Թվարկված այս երկու կարևորագույն հարցերում Գիրսը ստիպված էր նահանջել և ընդունել գերմանական կողմի առաջարկները: Այդ առաջարկներին հարկադրված հավանություն տվեց նաև Գևորգ V կաթողիկոսի ներկայացուցիչ Պողոս Նուբար փաշան:

Ռուսական դեսպանին հաջողվեց գոնե ընդունելի դարձնել խիստ էական երկու կետ. ա) ինչ տեսակ բարենորոգումներ էլ կատարվեն Հայաստանում, դրանք պետք է վերահսկվեն մեծ պետությունների կողմից, բ) գեներալ-ինսպեկտորների և նրանց խորհրդականների միջև ծագած տարաձայնությունների ղեկավարում վճռական ձայնը պատկանում է վերջիններին: Հայաստանի ապագայի համար բարեգուշակ նշան էր, որ այդ կետերի ընդունումն ընդդիմության չհանդիպեց Գերմանիայի դեսպանի կողմից:

Վերջապես 1913 թ. սեպտեմբերի 8 (20)-ին ավարտվում են Հայաստանի բարենորոգումների մասին ռուս-գերմանական բանակցությունները², իսկ սեպտեմբերի 10 (23)-ին Հոֆմայստեր Գիրսը և Վանգենհայմը ստորագրում են 6 կետից բաղկացած համաձայնագիր՝ հետևյալ բովանդակությամբ.

* Գրականության մեջ և մամուլում օգտագործված են նաև «ընդհանուր քննիչներ», «ընդհանուր վերաքննիչներ», «գեներալ քննիչներ», «գեներալ վերատեսուչներ», «գեներալ ինսպեկտորներ» բառակապակցությունները, «մարզպան» տերմինը: Աշխատության մեջ նախընտրել ենք գերազանցապես օգտագործել «ընդհանուր վերատեսուչներ» բառակապակցությունը, որովհետև այն ավելի հաճախ է օգտագործվում գրականության մեջ:

¹ Տե՛ս «Վեստենենկի օրագիրը» (Յան Վան դեր Դյուսենի առաջաբանը), էջ 26-27:

² Տե՛ս «Մշակ», № 209, 22 սեպտեմբերի 1913 թ.:

1) Բ. Դուռը դիմելու էր մեծ պետություններին, որպեսզի նրանք Արևելյան Անատոլիայի երկու սեկտորների համար, որոնք են՝ ա) էրզրում, Տրապիզոն*, Սվազ և բ) Վան, Բիթլիս, Խարբերդ (Դիարբեքիր) – ուղարկեն երկու ընդհանուր վերատեսուչ**։ 2) Վերատեսուչները նշանակվում են տերությունների առաջարկությամբ և Բ. Դուռն հրամանով։ Սրանց տրվում է իրենց ենթակայությունների բոլոր մակարդակի պաշտոնյաներին արձակելու, ստորադասներին նշանակելու, բարձրաստիճանավորներին և բոլոր դատավորներին սուլթանի հաստատմանը ներկայացնելու իրավունքը, 3) Յուրաքանչյուր սեկտորում հաստատվում է ընտրովի ժողով՝ կես մահմեդական և կես քրիստոնյա սկզբունքով, 4) Այս սկզբունքն ընդունելի է համարվում երկու սեկտորների բոլոր պաշտոնյաների դասավորման համար։ 5) Մեծ պետություններն իրենք պետք է հսկեն բարենորոգումների գործադրումը՝ ինչպես Կ. Պոլսի իրենց ղեկավարների, նույնպես և տեղական հյուպատոսների միջոցով։ 6) Բ. Դուռը, մեծ պետությունների հետ պայմանավորվածություն ձևով բերելով, Արևելյան Անատոլիայի երկու սեկտորներում ներմուծելու է ուրիշ բարենորոգումներ նույնպես¹։

* Թեև մուսուլման հոծ բնակչություն ունեցող Տրապիզոնի նահանգի միացումը Հայաստանի մյուս նահանգներին մեծապես փոխում էր դրանցում հայ և մուսուլման բնակչության թվաքանակի համամասնությունը հոգուտ վերջինի, բայց հայ տարրը չարունակում էր գերիշխել Վանի նահանգում, իսկ էրզրումի (Կարին) և Բաղեշի (Բիթլիս) նահանգներում քիչ էր զիջում մուսուլմաններին։ Միայն այդ երեք նահանգներում կային 1500-ի չափի գուտ հայ գյուղեր (Տե՛ս «Հորիզոն», № 138, 28 հունիսի 1914 թ.):

** Գիրսի և Վանգենհայմի բանակցություններից հետո միջազգային դիվանագիտական փաստաթղթերում Հայաստանի վարչական երկու միավորների (չրջանների) համար հիմնականում գործածական էր «սեկտոր» տերմինը, իսկ սեկտորների ղեկավարների համար, ինչպես նշվեց, գլխավորապես օգտագործվում էր «ընդհանուր վերատեսուչներ» բառակապակցությունը։

¹ Բարենորոգումների նախագծի ուսական և գերմանական ղեկավարությունների համատեղ կազմած փաստաթղթի հիմնական դրույթների մասին տե՛ս Մատենադարան, Արչակ Ալպոյաճյանի արխիվ, թղթապ. 1, վավ. 11⁹⁶ (Փրանս., մեք.):

Այսպիսով, Հայաստանի բարենորոգումների ուսական նախագիծը մեծապես կրճատելու և շատ կետերի բովանդակությունը փոխելու հետևանքով փաստորեն ստեղծվել էր նոր նախագիծ։ Հետագա քննարկումներից դուրս էին մնացել՝ 1) հայկական գավառները երկու կամ մեկ նահանգի վերածելու, 2) վերատեսուչների իրավասությունների և 3) նահանգային ժողովներում կամ վարչական մարմիններում հայերի կիսովի կամ համեմատական մասնակցություն խնդիրները։

Իր երկրի արտաքին գործերի նախարար Սերգեյ Սազոնովին նույն օրը՝ սեպտեմբերի 10-ին, հղած հեռագրով Մ. Գիրսը հաղորդում էր. «Իմ գերմանական ընկերը և ես համաձայնեցինք գործադրել մեր ջանքերը, որպեսզի Բ. Դուռը և մեր ընկերները (նկատի ունեն ճյուս չորս մեծ տերությունների Կ. Պոլսի ղեկավարներին։ - Հ. Ս.)» ընդունեն Հայաստանի բարենորոգումների ծրագիրը¹։

Փաստաթուղթը ներկայացվելու էր Թուրքիայի վարչապետին, իսկ վերջինս իր կառավարության անունից այն ծանուցելու էր մեծ պետություններին՝ ստանալու համար նրանց պաշտոնական հավանությունը։

Ինչպես տեսնում ենք, սեպտեմբերի 10-ի ծրագիրն իր արդյունավետությամբ ու ներգործությամբ զգալի չափով զիջում էր ուսական (Մանդելշտամի) ծրագրին։ Չնայած դրան՝ Պետերբուրգը ստիպված էր հաշտվել իրողության հետ և հավանություն տալ իր ղեկավարի կողմից ստորագրված փաստաթղթին։

Սեպտեմբերի 11-ին Ռուսաստանի արտգործնախարարության կառավարիչ Ներատովը Փարիզում և Լոնդոնում ուսաց հավատարմատարներին հայտնում էր, որ Գիրսի և Վանգենհայմի ստորագրած համաձայնությունը Ռուսաստանի «կայսերական կառավարության կողմից հավանություն գտավ»²։

Բանակցությունների ընթացքի ու հետևանքների մասին 1913 թ. սեպտեմբերի 12-ին Կաթողիկոսին մանրամասն հաղոր-

¹ Տե՛ս «Բարենորոգումները Հայաստանում», էջ 60։

² Նույն տեղում, էջ 276-277։

դելուց հետո Պողոս Նուբարը կրկին մեկնում է Բեռլին¹:

Գերմանիայի հետ համաձայնեցրած ուսական նախագիծը վերջին խմբագրություններ ուղարկվեց բոլոր մեծ պետությունների կառավարություններին՝ հանձնելու համար Թուրքիային: Ըստ որում, եվրոպական համերգը ուսական նախագիծը Թուրքիային պետք է առաջարկեր ոչ թե որպես բարի խորհուրդ, այլ եվրոպայի միաձույլ վճիռ²:

Ռուս-գերմանական համաձայնությունը ողջունեցին եվրոպական պետությունների կառավարությունները, և դա ամենից առաջ այն պատճառով, որ Մանդեղլտամի ծրագրի մեջ կատարված փոփոխությունները մեծապես իջեցրել էին ուսական կողմի դերը բարենորոգումների ծրագրի շուրջ դեռ ծավալվող դիվանագիտական պայքարում:

Բեռլինում ուսական հավատարմատար Բրոննսկին Ս. Սազոնովին հեռագրով տեղեկացնում էր, որ Գերմանիայի արտգործնախարար Գոտլիբ Փոն Յագովը «չատ գոհ է համաձայնությունից, որի մասին նա կտեղեկացնի ավստրո-հունգարական և իտալական կառավարություններին»³:

Ստորագրելով փաստաթուղթը՝ Բեռլինը հետապնդում էր երկու գլխավոր նպատակ:

Առաջին, պահպանել Գերմանիայի հմայքը օսմանյան կառավարության վրա: Պետք էր ներչնչել թուրքերին, որ Հայաստանի կառավարման նախկին ձևն այլևս վտանգավոր է իր իսկ Թուրքիայի և նրա ամբողջության համար, որովհետև ուսաց սահմանի մոտ հայերի լայնածավալ հուզումների դեպքում Ռուսաստանը կարող էր միջամտել, իսկ Թուրքիան իր ունեցած ուժերով անկարող կլինի կասեցնել նրա զորքերի ներխուժումը: Ուստի հայկական բարենորոգումների ծրագրում արմատական փոփոխություններ կատարելուց հետո այն ստորագրելով՝ գերմանական կողմը դրանով իսկ արգելք էր դնում ուսական հնարավոր

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 1:

² Նույն տեղում, էջ 278:

³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 278, թ. 277:

դինված միջամտության առջև, հայկական վիդայեթները պահում էր Թուրքիայի իշխանության ներքո, իսկ հետագայում խելացի միջոցներով գուցե հնարավոր կլիներ թուլացնել հայ տարրի նշանակությունը ուսական կովկասին սահմանակից տարածքներում, դրանով իսկ կայսրության վրա կախված վտանգի առաջն առնել հենց սաղմնային վիճակում:

Գոհ էին նաև անգլիական կառավարությունում: Սազոնովին հասցեագրած հեռագրով Լոնդոնում ուսաց հավատարմատար դ'էտերը նշում էր, որ Մեծ Բրիտանիայի արտգործնախարար էդուարդ Գրեյը ուրախություն է հայտնել՝ իմանալով Կ. Պոլսում ձեռք բերած համաձայնության մասին, գտնելով, որ դա ամենաճիշտ միջոցն է «խուսափելու վտանգալից բարդություններից, որոնք կարող էին ծագել փոքրասիական փոխադարձ շահերի [ընդհարման] հողի վրա»¹: Մի ուրիշ հեռագրով դ'էտերը նույն հասցեով հաղորդում էր, որ «անգլիական կառավարությունը Բ. Դոան առաջ կպաշտպանի Հայաստանի բարենորոգումների մեր ծրագիրը, որ մշակել են մեր և գերմանական դեսպանները Կ. Պոլսում»²:

Մտավորապես նույնպիսի բովանդակության հեռագիր Սազոնովը ստացել էր Փարիզում ուսական հավատարմատար Սևաստոպոլոյից: «Ես հանձնեցի Պալեոլոգին հայկական բարենորոգումների ծրագիրը: Նա ծրագիրը գտավ վերին աստիճանի նպատակահարմար և խոստացավ, համաձայն Ձեր ցանկության, ուղարկել համապատասխան պատվեր Կ. Պոլսի ֆրանսիական դեսպանին»³: Նույն հավատարմատարը երկու օր հետո՝ սեպտեմբերի 14 (27)–ին, № 466 գաղտնի հեռագրով իր վերադասին հաղորդում էր. «Հայկական բարեփոխումների մեր նախագծի առթիվ այսօր խոսակցության ժամանակ Լարժերին հարուցեց տեսուչների ազդության հարցը: Նա միանգամայն հասկանում է, որ նրանցից մեկը, հավանաբար՝ Հյուսիսային մարզինը, ան-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 278, թ. 277:

² АВПРИ, ֆ. "Политархив", з. 1913, д. 3464, л. 55.

³ «Բարենորոգումները Հայաստանում», էջ 62:

պայմանորեն պետք է լինի ոուս և չի հավակնում Ֆրանսիայի համար այդ պաշտոններից որևէ մեկին, [բայց] Ֆրանսիայի համար բնավ հարմար չէր լինի գերմանացու նշանակումը հարավային մարզի համար, առավել ևս, որ հենց այդ մարզում Ֆրանսիան պետք է որ ունենա շոշափելի երկաթուղային շահեր: Մինչդեռ, Բեռլինից, ըստ Կամբոնի՝ տեղեկությունների, կարծես նման ենթադրություն գոյություն ունի»¹:

Անդրադառնալով ոուս-գերմանական ձեռք բերված համաձայնությունները՝ Ս. Սազոնովն այսպես էր գնահատում այն. «Թեև բարենորոգումների ծրագիրը գերմանա-ուսական վերամշակումից բավականին պոչատ ստացվեց, այնուամենայնիվ այն ընդունելի է ոուսական կառավարության կողմից, որովհետև նույնիսկ իր այդ անկատար տեսքով այն էապես բարելավում էր թուրքահպատակ հայության վիճակը»²: Ռուսաստանի արտգործնախարարը գտնում էր, որ չնայած բոլոր թերություններին՝ այդ համաձայագիրը հիմնականում համապատասխանում է իր առաջադրած գլխավոր նպատակին, որով վերջ պիտի տրվեր հայկական վիլայեթների կոպիտ ու կաշառակեր թուրք պաշտոնյաների դաժան գործելակերպին և քրդերի սանձարձակ գործողություններին: Ենթադրվում էր, որ այն պետք է լիներ քրիստոնյա հայ ժողովրդի քաղաքացիական կյանքի բարելավման առաջին քայլը, ժողովուրդ, որը, հակառակ աստվածային և մարդկային բոլոր օրենքների, դարեր շարունակ ստիպված է եղել տառապել թուրք-քրդական արյունալի լծի տակ: «Այս առաջին քայլին, - գրում էր Ս. Սազոնովը, - անխուսափելիորեն պիտի հաջորդեն ուրիշ քայլեր, և հայերի համար, վերջապես, հնարավորություն պիտի ստեղծվի ավելի խաղաղ ու արտաքին ճնշումներից զերծ ու մարդկային գոյության համար տանելի պայմաններում ապրել»³:

* Ֆրանսիական դեսպան Կ. Պոլսում:

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1913, д. 3464, л. 52.

² «Հայրենիք», № 2, փետրվար, 1948, էջ 48:

³ Նույն տեղում:

Իհարկե, մեծ պետություններից ամեն մեկը սեպտեմբերի 10-ի համաձայնագիրը գնահատում էր՝ ելնելով իր շահերից, թեև թվում էր, թե տվյալ պարագայում եվրոպական շահակից պետություններից յուրաքանչյուրի դիրքը առանձին-առանձին նպաստավոր է հայկական խնդրի արդար լուծման համար: Բայց դա արտաքին երեսն էր: Այս տերություններն այնքան ներհակ էին իրար և այնպիսի հակառակ հաշիվներով էին շարժվում, որ հավաքաբար անզոր ու ապիկար էին որևէ իրական փոփոխություն առաջ բերելու Հայաստանում տիրող կացություն ու պայմանների մեջ:

Հայաբնակ նահանգների բարեկարգության խնդիրը Ռուսաստանին հուզում էր այնքանով, որքանով հնարավորություն կար դրանք մտցնել իր ազդեցության շրջանակի մեջ: Անգլիան ու Ֆրանսիան, հավատարիմ իրենց ավանդական քաղաքականությանը, բարենորոգումները ջատագովում էին, որպեսզի երկարացնեն օսմանյան կայսրության կյանքը, որպեսզի դրանով իսկ արգելք դնեն Ռուսաստանի ու Գերմանիայի իդձերի ու ձգտումների առջև:

Շատերի համար, որոնք անտեղյակ էին մեծերի այդ շահախնդրություններից, անհասկանալի էր հայկական հարցում Գերմանիայի քաղաքականության փոփոխությունը, եվրոպական մի պետության, որ ամբողջ 35 տարի ուղղակի թշնամական դիրք էր բռնել Հայոց հարցի և հայերի նկատմամբ, իսկ այժմ քաղաքական զանազան կոմբինացիաների պատճառով փոխում կամ մեղմում էր իր անհաշտ վերաբերմունքը և ձեռք մեկնում Ռուսաստանին՝ միաբան ու համերաշխ ծրագրով լուծելու չարչրկված դժվարագույն հարցը: Կարելի է համոզված ասել, որ նա ոուսական կողմի հետ հայկական հարցով համաձայնության եկավ երկակի իմաստով. առաջին՝ որպեսզի կարողանա Բ. Դոանն ասել, թե ինքը Ռուսաստանին հետ է պահել լայն բարեփոխումներից և Թուրքիայի համար անվտանգ վիճակ է ստեղծել, երկրորդ՝ Գերմանիայի համար թանկ էր ձեռք բերել հայերի համակրանքը, որոնք թվապես, առավել ևս քաղաքակրթապես գերակշռում են իր ազդեցության ոլորտը հանդիսացող Կիլիկիայում: Մարտելում հրատարակվող "Le Sémaphore de Marseilla" օրա-

Թերթը գրում էր, թե կարելի է անվարան հաստատել, որ հայկական խնդրում գերմանական քաղաքականությունը փոփոխություն է ենթարկվում և աստիճանաբար հեռանում է Արդուլ Համիդի հայաջինջ քաղաքականությունից, որին նա աջակից է եղել երկար ժամանակ: Դրա հիմնական պատճառը Թերթը համարում էր գերմանացիների անհազ ձգտումը՝ տիրանալու ամենից առաջ հայկական Կիլիկիային: Այդ պատճառով է, որ Գերմանիայի պահվածքը բանակցությունների ամբողջ ընթացքում առանձնանում էր կեղծավորությամբ, և հայերին նրա աջակցությունն ուներ լոկ ցուցադրական բնույթ: Իրականում բարոն Վանգենհայմը ու, առավել ևս, ֆոն Մուցիուսը մնում էին Թուրքիայի հավատարիմ խորհրդատուները¹:

Պատահական չէր, որ լավ իրազեկված հայերը միանգամայն ճիշտ գնահատեցին գերմանական դիվանագիտության այդ նենգ պահվածքը:

Չնայած այդ ամեն անորոշություններին՝ հայկական հասարակությունը նույնպես, ելնելով Հայաստանի բարենորոգումների հարցում տերությունների միջև գոյություն ունեցող խոր հակասությունների փաստից, ընդհանուր առմամբ դրական էր գնահատում ռուս-գերմանական բանակցությունների արդյունքները:

Ռուսական Պետական Դումայի նստաշրջանի ավարտից հետո Դումայի անդամ Միրքայել Պապաջանյանը մեկնել էր Կ. Պոլիս, Փարիզ և Բեռլին և այնտեղ երկար խոսակցություններ էր ունեցել հասարակական և քաղաքական գործիչների հետ բոլոր այն հարցերի վերաբերյալ, որոնցով շատ էր հետաքրքրվում հայ հասարակությունը:

Վերադառնալով Ռուսաստան՝ Պապաջանյանը Բաքվում՝ Հայոց մարդասիրական ընկերության դահլիճում, հայկական հարցի մասին հանդես է գալիս զեկուցումով և նկարագրում նրա վիճակը: Մանրամասն խոսելով ընդհանրապես հայկական հար-

¹ Նշված Թերթի հոդվածի հայերեն թարգմանությամբ արտատպված հատվածը տե՛ս «Մարտ» (Մոսկվա), № 1, 1 հունվարի 1914 թ.:

ցի գերմանական դիվանագիտության ավանդական բացասական վերաբերմունքի մասին՝ նա շեշտել էր, որ, իր կարծիքով, մոտիկ ապագայում հայկական հարցի մասին կարելի է խոսել ավելի որոշակի ու հավատով՝ նկատի ունենալով ռուս-գերմանական բանակցությունների հաջող ընթացքը:

Բարձր հեղինակավոր շրջաններում արդեն համոզված էին, որ Հայաստանում բարենորոգումներ մտցնելու մասին ռուսական ծրագիրն այլևս չի ենթարկվելու հակաճառությունների, ուստի և կարելի է հուսալ, որ փաստաթուղթը շուտով կներկայացվի թուրքական կառավարությանը¹:

ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՇՏԱՐԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆԸ

Չնայած սեպտեմբերի 10-ի համաձայնագրի ծվատված լինելուն՝ Թուրքահայ գործիչներն ուրախ էին, որ, այնուամենայնիվ, գերմանացի դեսպանը ստորագրել է փաստաթուղթը: Նրանք մտածում էին, որ ազգի թշվառ վիճակի պայմաններում այդ համաձայնագիրն առայժմ այն գերազույնն է, որի մասին կարող է երազել ամեն մի հայ Թուրքահայաստանում:

Ռուս-գերմանական համաձայնագիրը սեղանի վրա էր, պետությունների կառավարություններն էլ հավանություն էին տվել դրան, բայց հայ գործիչների, այդ թվում Պողոս Նուբարի սրտում տազնապ էր և ոչ առանց հիմքի: Արդյո՞ք Բ. Դուռը հեշտությամբ կընդունի համաձայնագրի կետերը: Չէ՞ որ 19-րդ դարի 60-ական թվականներին հաջորդած տասնամյակների փորձը ցույց էր տվել, որ հայկական հարցի լուծման համար մեծ պետությունների կողմից կատարված բոլոր առաջարկները մնացել են անհետևանք, որովհետև Թուրքական իշխանություններն ամենատարբեր պատճառաբանություններով հրաժարվել են դրանք կատարելուց:

¹ «Մարտ» (Մոսկվա), № 13, 1 հոկտեմբերի 1913 թ.:

«Արդարեւ բազմաթիւ են բարենորոգումներու այն ծրագիրները զորս Օսմ. կառավարութիւնը դիտաւորութիւն ունեցած է գործադրելու 1862էն ի վեր,- իր ելույթներէց մեկում ասել է Պողոս Նուբարը: - Այդ ծրագիրներուն շատը ներշնչուած են եւրոպական պետութիւններու խորհրդով և նոյն իսկ գործադրութեան սկզբնաւորութիւն մըն ալ ունեցած են, բայց ամէնքն ալ թողուած են մէկ կողմ ...»¹:

«Այս անգամ այդ ավանդույթից կարող է բացառութիւն լինել» Հարցադրումը պատասխան էր պահանջում: Անորոշ կացութեան մեջ կարևոր էր պարզել, թե ուս-գերմանական համաձայնագիրը դրական գնահատած պետութիւնների կառավարութիւններն արդյո՞ք հաստատակամ ու միակամ են լինելու Բ. Դոան առջև պաշտպանելու նրան ներկայացվելիք պահանջները:

Հայերի մտավախութիւնը, հուզմունքն ու խռովքը հիմնագուրկ չէին: Դեռ նոր էին ավարտվել ուս-գերմանական բանակցութիւնները, երբ տերութիւններին հայտնի դարձավ, որ թուրք կառավարութիւնը հակված է բոյկոտելու սեպտեմբերի 10-ի համաձայնագիրը: Թուրք վարիչները լավ էին հասկացել, որ դրա շնորհիվ հայկական բարենորոգումների հարցը մտել է առաջնութեան նոր փուլ, և դա նրանց տագնապի էր մատնել: Հատկանշական է, որ թուրքական կառավարութիւնը առաջվա պես շարունակում էր ամեն կերպ խուսափել «Հայկական խնդիր», «Հայկական հարց» բառակապակցութիւնից և մշտապես օգտագործում էր «Արևելյան Անադոլուն»:

1913 թ. սեպտեմբերի կեսերին Մ. Գիրսը և Հ. Վանգենհայմը Թուրքիայի նախարարների խորհրդի նախագահ Սայիդ Հալիմ փաշային ներկայացրին իրենց կառավարութիւնների կողմից հավանութեան արժանացած վեց կետից բաղկացած հայկական պահանջները: Փաստաթուղթն աչքի անցկացնելուց անմիջապես հետո սադրազամը խիստ ընդդիմացել էր՝ ասելով, թե իր

¹ Երուանդ Օտեան, Պողոս փաշա Նուպար (կենսագրական նոթեր), Կ. Պոլիս, 1913 թ., էջ 67:

կառավարութիւնը երբեք չի ընդունի ուսանների և գերմանացիների ձևակերպած այդ չարաբաստիկ առաջարկները¹: Նա ուս-գերմանական համաձայնագիրը ներկայացրեց նախարարների խորհրդի քննարկմանը, որը եկավ այն եզրակացութեան, որ նշված վավերագրով Թուրքիայի համար փաստորեն ստեղծվում է մի նոր Մակեդոնիա, ուստի որոշվեց բոլոր ուժերով դիմադրել դրա իրականացմանը: Սայիդ փաշայի կոշտ հակազդեցութիւնից և Բ. Դոան արված եզրակացութիւնից հետո երկու դեսպանները հայտարարել էին, թե համաձայնագրի տեքստի շուրջ կարող են բանակցել:

Տեղեկանալով Բ. Դոան հականախագծային դիրքորոշմանը՝ հայոց պատրիարքը և հայ ազգային գործիչները վճռական բողոք ներկայացրին Կ. Պոլսի ուս և գերման դեսպաններին՝ պահանջելով որևէ զիջում չկատարել ընդհանուր վերատեսուչների և նրանց խորհրդականների հարցերում²:

Շուտով թուրքական կողմին հայտնի դարձավ, որ ինչպես Պետերբուրգը, այնպես էլ Բեռլինը վճռական են տրամադրված՝ կիրարկելու ընդունված պայմանագրի բոլոր կետերը: Ուստի մի քանի օր հետո, երբ դեսպանները կրկին ներկայացել էին Բ. Դոան՝ պատասխան առնելու, Սայիդ փաշան այս անգամ հանգիստ տոնով հայտարարել էր, թե իրենք որոշել են ընդունել ուս-գերմանական համաձայնագրով ընդհանուր վերաքննիչներ նշանակելու մասին առաջարկութիւնը՝ պայմանով, որ նրանք լինեն օսմանցիներ: Ինչ վերաբերում է նրանց խորհրդականներին, ասել էր վարչապետը, ապա Բ. Դուռը դեմ չէ, որ նրանք լինեն եվրոպացիներ՝ լայն լիազորութիւններով:

Ինչպես նախկինում, թուրք կառավարութեան և Իթիհատի աչքի փուլը բարենորոգումների ընթացքի վրա եվրոպական վերահսկողութեան հարցն էր: Բ. Դուռը և նրան հավատարիմ մամուլի օրգանները ձայները մեկ արած առաջվա պես պնդում էին, թե «Մենք կոնստրուկ չենք ուզում»: Նրանք կոնստրուկ դիտում

¹ ԳԱԹ, Գրիգոր Զոհրապի Փոնդ, վավ. 91, թ. 12:

² Տե՛ս նույն տեղում:

էին որպէս վիրավորանք օսմանյան արժանապատուութեանը, երկրի վեհապետական իրավունքներին և անկախութեանը:

Այդ օրերին Հայոց պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Եղիայանը իր ուղեկիցների հետ Տոլմա Բախչե պալատում ընդունվում է սուլթանի կողմից: Պատրիարքի ողջունի խոսքին սուլթանը պատասխանել էր. «... Հայ ազգն այս երկրի ամենահավատարիմ տարրերից մեկն է եղել միշտ: Վստահ եմ, որ Զեր բարվոքող ջանքերով նա պիտի շարունակի մնալ նույն շավիղի մէջ՝ օգտակար ծառայություններ մատուցելով Օսմանյան երկրին, ուր պիտի ապահովի իր բարօրությունը: Սա իմ մեծագույն փափագներից մեկն է»¹:

Այնուհետև սուլթանն ասել էր, որ եվրոպական կոնտրոլը վիրավորական է ոչ միայն թուրքերի, այլև Հայերի համար, որ թուրքերն ու Հայերը իրենց միջև եղած բոլոր հարցերը կարող են վճռել համատեղ, առանց դրսի միջամտություն²:

Հանդիպումից հետո Հայկական մամուլի օրգանները ողջունեցին Հայերի հանդեպ սուլթանի դրական մոտեցումները, բայց անընդունելի էին համարում եվրոպական վերահսկողությունը բացառելու նրա տեսակետը: «Եթե կոնտրոլ չեք ուզում, այն դեպքում ինքներդ ձեռնարկեք բարենորոգումների գործը», - խորհուրդ էր տալիս «Աշխատանք» թերթը և շարունակում. «Կուզե՛ք որ այս երկիրը մշտապես տառապի անապահովության ու ջարդի մղձավանջի տա՞կ, կուզե՞ք որ շարունակվեն սպանությունները, բռնությունները, պաշտոնական ու անպաշտոն կամայականությունները: Կոնտրոլ չեք ուզում, բայց ուզում եք, որ դեռ ջարդվե՞ն Հայերը, որ նոր Ադանանե՞ր լինեն: Եվ միթե՞ դրանք չեն վիրավորում օսմանյան արժանապատուությունը, չեն վնասում թուրքիայի անկախությունն ու վեհապետական իրավունքները: Միթե՞ Հայկական կոտորածները կազմել են թուրք պետության փառապսակը, ավելացրել նրա փառքն ու պատիվը»³:

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 337^a, վավ. 212, թ. 42:

² «Արարատ», № 1, հունվար, 1914 թ., էջ 28, Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 337^a, վավ. 212, թ. 43:

³ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 337^a, վավ. 212, թ. 43:

Ի պատասխան թուրքերի «Մենք կոնտրոլ չենք ուզում» բողոքի՝ ՀՅԴ Վանի «Աշխատանք» թերթը «Դուք քօնթրօլ չեք ուզեր, մենք բարենորոգում կուզենք» վերնագրով հոդվածում գրում էր, որ Հայերն անհամբեր ուզում են բարենորոգումներ ու դրանց անմիջական գործադրություն: Եվ դա բխում է իսկական օսմանյան հայրենասիրությունից:

«Մեր հայրենասիրությունը կը կայանայ բարենորոգումներու գործադրութեան մէջ, այս երկրի զարգացման ու բարուքման մէջ, մինչդեռ ձերինը շարունակ ժխտելու, մերժելու մէջ ամէն արդար պահանջ, ամէն փրկարար աշխատանք եւ ամէն մատուցուած օժանդակութիւն: Զեր այդ «հայրենասիրութիւնը» օսմանեան հայրենիքը կործանման հասցուց եւ պալքանեան աղէտը բերաւ անոր գլխուն՝ անապահովութեան եւ ջարդի սպառնալիքի տակ պահելով զայն: Այդ կոյր «հայրենասիրութիւնը» օսմանեան կայսրութիւնը իր մայրամուտին մօտեցուց: Այժմ ատենն է որ քիչ մըն ալ փորձէր մերինը»¹:

Այնուհետև թերթը շեշտում էր, որ բարենորոգումների գործում կոնտրոլը եվրոպայի կողմից հարկադրվում է պատմական անհրաժեշտությամբ և արդյունք է թուրք կառավարության կործանիչ քաղաքականության: «Կուզե՛ինք որ մեր հայրենիքը (նկատի ունի Օսմանյան կայսրությունը: - Հ. Ս.) փրկուէր մեր (բոլոր օսմանցիների: - Հ. Ս.) իսկ ձեռքով, կը փափաքէինք որ բարենորոգումները գործադրուէին մեր ջանքերով եւ այդ նպատակով հայ ժողովուրդը ոչինչ խնայեց ինչպէս անցեալին նոյնպէս եւ սահմանադրական շրջանին մէջ: Բայց մեր բոլոր փափաքները փշուր-փշուր եղան, մեր բոլոր ջանքերը անօգուտ անցան թրքական ոէժիմի կամակորութեան եւ թուրք մտայնութեան ստեղծած թոյնի ու ատելութեան առջեւ»²:

«Աշխատանքը» համոզված էր, որ հայ ժողովուրդը անցյալի դառն ու արյունոտ փորձանքներից հետո իրավունք ունի չհավատալու թուրք շովինիզմի անկեղծությունը, իրավունք ունի

¹ «Աշխատանք», № 6 (152), 7 դեկտեմբերի 1913 թ.:

² Նույն տեղում:

կասկածանքով նայելու թուրք կառավարութեան բարենորոգչական բոլոր ծրագրերին ու ձեռնարկներին, և այդ իրավունքը ոչ ոք չի կարող նրանից խլել, որովհետև «չեղաւ օր մը պատմութեան մէջ, որ թուրք կառավարութիւնը խոստանար ու կատարէր, չեղաւ օր մը որ անոր խոսքին անմիջապէս յաջորդէր գործը»¹:

Թուրքական սուլթանի անհաջող փորձից հետո գերմանական դեսպան Վանգենհայմը այցելում է Զավեն պատրիարքին և փափագ հայտնում, որ նա բարենորոգումների համար անձամբ առաջարկներ ներկայացնի Բ. Դոանը՝ վստահեցնելով, որ դրանք անպայման կընդունվեն, և որ ներկա նպաստավոր հանգամանքներում ճիշտ կլինեն, որ հայերն իրենք անմիջականորեն իրավախոհութեան գան Բ. Դոան հետ:

Պատրիարքը, ինչպես դրանից առաջ ասել էր Իթթիհատի ներկայացուցիչներին, այժմ էլ դեսպանին էր պատասխանել, թե ինքը պետութեան ղեկավար չէ, որ ցուցում տա, թե ինչպես պետք է կատարվեն բարենորոգումները, ինքը միայն իր հոտի բարօրութեանը նախանձախնդիր հովիվ է և պարտավոր է միայն գործած անիրավութիւնները ներկայացնել Բ. Դոու և սպասել կառավարութեան ձեռնարկած միջոցներին: Հայոց պատրիարքի գործը չէ նաև, ասել էր նա, բարենորոգումների գործադրումը թելադրելը կամ դրանց գործադրման եղանակը սահմանելը: Պատրիարքը միաժամանակ հիշեցրել էր, որ թուրքաբնակ, ուսաստանաբնակ և արտասահմանի հայերի միահամուռ բաղձանքով է, որ Ամենայն հայոց կաթողիկոսը հայկական կողմից բարենորոգումների գործի գլուխ է կարգել Նուբար փառային, ուստի ինքը լիազորութիւն չունի որևէ մեկին հրահանգ տալու: Քանի որ այդ իրավունքով բացառապէս օժտած է միայն Պողոս Նուբարը, ուստի եթե Բ. Դուուր և գերման դեսպանը չահագրգիռ են գործն առաջ մղելու, ապա նրան պետք է հրավիրեն Պոլիս՝ թուրք կառավարութեան հետ բանակցելու համար: Զավեն արքեպիսկոպոսը Վանգենհայմին նաև դիտել էր տվել, որ եթե

¹ «Աշխատանք», № 6 (152), 7 դեկտեմբերի 1913 թ.:

նույնիսկ իթթիհատի հաղականների ներկա կառավարութեանը հնարավոր լինել վստահել, միևնույնն է՝ ոչ մի երաշխիք չկա, որ երկրում արագորեն փոփոխվող քաղաքական անկայուն իրավիճակում հեղաշրջումների միջոցով պաշտոնների չեն կոչվի ուրիշ քաղաքական ուժեր, որոնք անմիջապէս կմոռանան իրենց նախորդների տված խոստումները:

Գործի ընթացքի մասին Պատրիարքարանն օր օրի հեռագրով հաղորդում էր Պողոս Նուբարին, որն իր թելադրութիւններով և Փարիզի ու Բեռլինի միջև կատարած եռանդուն գործունեութեամբ մեծապէս նպաստում էր գործի հաջողութեանը¹:

Այդ օրերին Նուբար փառային Բեռլինում էր, ուր հերթական հանդիպումն էր ունեցել փոխարտգործնախարար Ա. Յիմերմանի հետ: Նա վերջինիս ուշադրութիւնը կրկին հրավիրել էր բարենորոգումների կիրառման ընթացքում տերութիւնների կողմից վերահսկողութիւն իրականացնելու խնդրի վրա՝ գտնելով, որ այդ հարցում թուրքիային կատարած ցանկացած զիջում կնշանակի անդառնալիորեն տապալել սկսած գործը:

Հայկական կողմի դիվանագիտական եռուն գործունեութիւնը թուրքերին ստիպեց արագ հակամիջոցներ ձեռնարկել: Նախարարների խորհուրդը գտավ, որ չպետք է սպասել մեծ պետութիւնների հերթական քայլերին, այլ անհրաժեշտ է հանդես գալ Հայաստանի բարենորոգումների սեփական նախաձեռնութեամբ՝ կրկին հրապարակ բերելով վիլայեթների մասին 1881 թ. օրենքը, ուր, բնականաբար, ոչ մի խոսք չկար ո՛չ Հայաստանի վարչական կառուցվածքի, ո՛չ սեկտորների ընդհանուր վերատեսուչների, ո՛չ եվրոպական վերահսկողութեան և ո՛չ էլ այն մյուս կետերի մասին, որոնք տեղ էին գտել սեպտեմբերյան համաձայնագրում:

Նախարարների խորհուրդը հանձնարարեց վարչապետին (որը կատարում էր նաև արտգործնախարարի պարտականութիւնը)՝ վճռականապէս մերժել եվրոպական վերահսկողութեան մասին սեպտեմբերի 10-ի ուսուցիչական հաշտարար

¹ ԳԱԹ, Գրիգոր Զոհրապի ֆոնդ, վավ. 91, թ. 2:

համաձայնագրում տեղ գտած դրույթը, ինչպես նաև պնդել, որ սեկտորների վերատեսուչներին նշանակում է Բ. Դուռը, իսկ նրանց խորհրդականների թեկնածուներին առաջադրում են տերուծյունները: Ըստ թուրքական կառավարության պատկերացումների՝ այդ պաշտոնյաները կլինեն եվրոպացիներ, բայց փաստորեն լիովին զրկված գործադիր իշխանությունից¹:

Նախարարների խորհրդի հանձնարարականի հիման վրա կազմված հակաառաջարկ նախագծի տեքստը հոկտեմբերի 20-ին ներկայացվեց Կ. Պոլսի ուսսական ղեսպանությունը²:

Թեև խորհրդականների մասով թուրքերի հակաառաջարկը արտաքննապես թվում էր ոչ էական, բայց Պողոս Նուբարը այնտեղ տեսնում էր թաքնված վտանգ ընդհանուր վերատեսուչների ինստիտուտի համար: Այդ առաջարկի իրականացումն առաջ կբերեր այնպիսի դժվարություններ ու զրանցից ծնված անլուծելի բարդություններ, որոնք վտանգի տակ կղնեին արդեն ձեռք բերած նվազագույն պայմանավորվածությունները: Նա նկատում էր, որ եվրոպական խորհրդատուների գաղափարն անձամբ ներչնչել է վարչապետ Սայիդ Հալիմը, որը, եզրկատացի լինելով, բայց վարելով թուրքական վարչապետական պաշտոն, դատում է իր ծննդավայրի կարգերի համաձայն: Այդ երկրում, իրոք, տեղական ամեն մի նախարարությունում գոյություն ունեն եվրոպական խորհրդատուներ՝ լիազորված լայն գործադիր իշխանություններ, բայց ստորադաս նախարարներին: Նրանց միջև ընդհարումներ չեն լինում, որովհետև Եզրկատոսում նախարարությունների բոլոր խորհրդատուները անգլիացիներ են, որոնք այդ երկրում շարունակում են պահպանել իրենց գերազանցությունը ոչ միայն եզրկատացի, այլև նույնիսկ եվրոպացի ոչ անգլիացի պաշտոնյաների նկատմամբ: Եզրկատոսի և Հայաստանի պայմանները իրարից բոլորովին տարբեր են. եթե առաջինում նախարարություններին առընթեր խորհրդատուները կարգվում են մի պետություն՝ Անգլիայի իշխանությունների

կողմից, ապա բոլորովին այլ կերպ կլինի Հայաստանում, «որտեղ խորհրդատուներն ունենալով անորոշ իրաւասութիւն և ընդամին առանց պատասխանատուութեան, նրանց թիկունքին կ'լինեն մեկի փոխարէն վեց պետութիւններ», որոնց դժվար է պատկերացնել մի կայուն համաձայնություն¹: Այդ պայմաններում եթե վերատեսուչների և նրանց խորհրդականների միջև ծագեին վեճեր, ապա դրանք պետք է լուծվեին Բ. Դուռնի միջամտությամբ, իսկ դա կնշանակեր նախարարների խորհրդի թղթակույտերի մեջ թաղել ընդհանուր վերատեսուչների դեմ խորհրդականների բարձրացրած ամեն բողոք: «Յայտնի լինելով օտոմանեան դիւանագիտութեան յապաղումներն ու սովորական քաջըզուկները, - ասում էր Պողոս Նուբարը, - կարող ենք հաւատացնել, որ յիշեալ ընդհարումները կ'լինեն լուծուած յօգուտ ընդհանուր վերատեսուչների և այն ժամանակ ի հարկէ անարժեք կ'դառնայ և կանդամալուծուի խորհրդատուների իրաւասութիւնը»²:

Պողոս Նուբարը գտնում էր, որ այդ հարցի լուծման ելքը միայն այն կլիներ, որ խորհրդատուները նույնպես ունենային իրական գործադիր իշխանություն՝ վերատեսուչների իշխանությունը հավասարակշռելու համար: Դա իր հերթին կնպաստեր, որպեսզի պետությունները վերահսկողություն իրականացնեին տեղում, այլ ոչ թե Կ. Պոլսի ղեսպանների միջոցով³: Ավելին, Նուբարը կարծիք էր հայտնել, որ ինքը նույնիսկ դեմ չէր լինի, եթե Բ. Դուռնի կողմից նշանակված ընդհանուր վերատեսուչները մշտապես մնային Կ. Պոլսում և այնտեղից «ղեկավարեին» երկու սեկտորների գործերը, իսկ տերուծյունների կողմից նշանակված և վարչական գործնական լիազորություններով օժտված խորհրդականները տեղում առաջ տանեին բարենորոգումների գործը:

Վերադառնալով նախարարների խորհրդի վերը նշած նիստին՝ նշենք, որ նա նաև վարչապետին պատվիրել էր այսուհետև Հայ-

¹ «Արարատ», № 1, Հունվար, 1914, էջ 51:

² Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթապ. 1, վավերագիր 11⁹⁸, 3 թերթ, ֆրանսերեն, մեքենագիր:

¹ «Արարատ», էջ 52:

² Նույն տեղում, № 1, Հունվար, 1914, էջ 52:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 33-34:

կական հարցի մասին տերուծյունների դեսպանների արած հարցումներին պատասխանել, որ Բ. Դուռն ինքն է տրամադիր բարելավելու օսմանյան քաղաքացիներ հանդիսացող հայերի պահանջները՝ իր իսկ ձեռքով բարենորոգումների ծրագիր կազմելու և իրականացնելու միջոցով, բայց մի պայմանով միայն, որ իրեն չչտապեցնեն, այլ ժամանակ տան սեփական միջոցներով բարվոքելու նրանց վիճակը: Կառավարությունն այս իմաստով պետք է պատասխան տար նաև հայերի ներկայացուցիչների հարցումներին:

Այս գաղափարը նույնպես թուրքերին ներչնչել էր գերման դեսպան Վանգենհայմը, որը եռյակ դաշինքի անունից մի առիթով Գիրսին ասել էր, թե ճիշտ կլինե՞ր թուրքիային տալ երեք տարի ժամանակ Հայաստանում բարենորոգումներ ինքնուրույնաբար մտցնելու համար: Ս. Սաղոնովը գրում էր, որ գերմանական կառավարությունը, տալով իր համաձայնությունը Պոլսո գերմանական և ռուսական դեսպանների միջոցով բարենորոգումների ծրագրի միասնաբար մշակմանը, ոչ միայն ոչինչ չարեց Բ. Դուռն առջև այդ ծրագիրը պաշտպանելու համար, այլև ամեն կերպ ջանաց ձգձգել նրա կատարումը:

Թուրք նախարարները բնավ հաշվի չէին նստում այն իրողության հետ, որ Ռուսաստանը և Գերմանիան, ընդառաջ գնալով Բ. Դուռն տազնապներին, թե Մանդելշտամի նախագիծը գալիս է խախտելու ու կործանելու երկրի քաղաքական և պետական անկախությունը, ստիպված են եղել փոխադարձ համաձայնությամբ ծայրահեղ նվազեցման ու տկարացման հասցնել այդ վավերագիրը, որից այն կողմ այլևս ոչ մի քայլ չէր կարելի անել: Այս նվազագույնն անգամ Բ. Դուռն չէր ընդունում՝

Նախարարների խորհուրդը նաև չէր ուզում տեսնել, որ սեպտեմբերի 10-ի համաձայնագրում, որպես երկու երկրների ներկայացուցիչների համաձայնության արդյունք, հազիվ աղոտ նշմարվում էր հատկապես վերահսկողության գոյությունը, այն էլ խիստ երբուրև և ենթակա տարբեր մեկնությունների, որոնք անմիջապես երևան կգային, երբ բարենորոգումները սկսեին ներմուծվել թուրքահայաստան:

¹ Տե՛ս «Հայրենիք», № 2, փետրվար, 1948, էջ 49:

ԶԻՆՎԵԼՈՒ ԵՎ ՊԱՅՔԱՐԻ ԿՈՉԵՐ

Հայկական հասարակությունը հատկապես մամուլի միջոցով տեղեկացված էր Հայաստանի բարենորոգումների նախագծի շուրջ ծավալված քննարկումներին: Բոլորը տեսնում էին, թե Բ. Դուռն Գերմանիայի հովանավորությամբ ինչպիսի կատաղություն էր դիմադրում Ռուսաստանի և Նուրբար փաշայի ջանքերին, խոչընդոտում նրանց դիվանագիտական նախաձեռնությունները:

Ինչպես թուրքահայ, այնպես էլ ռուսահայ մտավորականության մի մասը, խիստ դժգոհ լինելով, որ բարենորոգումների ռուսական ծրագիրը կրճատվելով անձանաչելիորեն փոխվել է, այլևս հույս չուներ, թե դիվանագիտական ճանապարհով հնարավոր է հասնել որևէ դրական արդյունքի:

Ստեղծված հոգեբանական այս մթնոլորտում նորից է ասպարեզ գալիս սեփական ուժերով, զենքի ու պայքարի միջոցով ահավոր իրականությունից դուրս գալու գաղափարը, որը կենդանություն էր առել թուրքական լծից բալկանյան ժողովուրդների ազատագրության օրինակով:

Զենքի դիմելու կողմնակիցները հատկապես վերակազմյալ հնչակյան և Ս.-Դ. հնչակյան կուսակցությունների շարքերից էին: Նրանք գտնում էին, որ բալկանյան երկրորդ պատերազմի հետևանքները, Բուլղարիայից հետո ամենից ավելի վտանգավոր կացություն էին առաջ բերել տաճկահայերի համար, ուստի այս նոր դրությունն աչքի առաջ ունենալով՝ պետք է ձեռք առնել ինքնապաշտպանական ամեն կարգի միջոցներ: Հողվածագիրներից շատերն այն տեսակետին էին հակվել, որ ինքնապաշտպանության կազմակերպումը հայերի ֆիզիկական գոյության պահպանման միակ երաշխիքն է:

Ռումինիայի Քեսոթենջե (Կոստանցիա) քաղաքում իր աշխատանքները սկսած Ս.-Դ. հնչակյան կուսակցության պատգամավորական V ժողովը (1913 թ. սեպտեմբերի 5) իր ընդունած բանաձևով ազդարարում էր, որ կուսակցությունը վճռական է շարունակելու երիտթուրք իշխանությունների դեմ որդեգրած քաղաքականությունը: Բանաձևում արձանագրված էր.

«Նկատի ունենալով որ իթթիհատ վե թերագգը կուսակցու-
թիւնը իր մէջ կը մարմնացնե թուրք յարձակողական ազգայնա-
կանութիւնը՝ իր բոլոր ստորոգելիներով, որ՝ ան կը հանդիսանայ
թէ՛ քաղաքական կուսակցութիւններու եւ թէ՛ մանաւանդ բաղ-
կացուցիչ ազգութիւններու համար վտանգաւոր եւ վնասակար.

Ս. Գ. Հնչակեան կուսակցութեան է Պատգամաւորական ժո-
ղովը խստիւ կ'արգիլէ իր բոլոր Գործադիր Մարմիններուն որեւէ
գործակցութիւն ունենալ անոր հետ եւ կ'որոշէ ամէն միջոցներով
անողոք պայքար մղել անոր դէմ զայն բոլորովին փշրելու,
տապալելու համար»¹:

«Ի՞նչ է մնում անելու, - հարցնում էր «Նոր մամուլ» թերթը,-
պատրաստվել, միջոցներ հայթայթել գեթ ինքնապաշտպանու-
թյան համար: Բավական է որքան կոտորվեց այս ժողովուրդը
ոչխարի նման: Գեթ տալ միջոց նրան՝ մեռնելու մարդու պես,
զենքը ձեռքին: Ո՞ւր են մեր պոռոտախոսները, մի շարք բյուրո-
ները, ի՞նչ եղան այն մասնաժողովները, որ երեկ մեծ-մեծ բրդում
էին և ընտրողական քվեի մոտենում: Բավական չէ՞ միթե կեղ-
ծիքը, խաբեբայությունը սրի ու սարսափի մեջ քարշ եկող անզոր
և անտեր Տաճկաստանի [հայ] ժողովրդի նկատմամբ»²:

Կրկին ու կրկին անդրադառնալով Տ. Օլգենիւսի այն հաստա-
տուն տեսակետին, որ Հայաստանն անխուսափելիորեն ու գա-
հավեժ գնում է դեպի անհետացում, Բոստոնում հրատարակվող
Վերակազմյալ Հնչակյանների «Ազգ» թերթը առաջնորդող
խմբագրականում գրում էր.

«Մենք մինչև հիմա մեր դառն փորձառութիւններէն յետոյ,
տակավին չկրցանք սորվիլ թէ ոչ օտարին վրայ դրուած յոյսն, ոչ
ալ անտարբեր կամ մինչև անգամ քծնող համակերպութիւնը,
չեն կրնար մեզի երաշխավորել հիմնական ապահովութիւն մը,
իբր անհատ ու ազգ մեր գոյութիւնը պահպանելու համար, չեն

¹ «Պատմութիւն Ս. Գ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962)», Ա. Հատ.,
Բեյրութ, 1962, էջ 367:

² Տե՛ս «Նոր մամուլ», № 31, 14 Հուլիսի 1913 թ.:

կրնար նոյնիսկ դոյզն չափով մեղմել մեզի դեմ ի գործ դրված
անողոք հալածանքն ու հեռացնել մեր շուրջը գոռացող արիւ-
նոտ փոթորիկներէն ծագելիք աղետները»³:

Հողվածում շեշտվում էր, որ հայության գժտությունների
հիմնական պատճառը նրա դարավոր կրավորականությունն է,
այն կործանարար մտայնությունը, թե իրեն փրկող ուժը իրենից
դուրս է, այլ ոչ թե իր ներսում: «Հայը ուրիշներու վրայ յոյս դնելէ
առաջ պէտք է ինքն իրեն վստահ ըլլայ, պէտք է խնայել ու զոհել
սորվի: Եթէ հայ ժլատ ունեորին քառորդ դարէ ի վեր թալանի
մէջ կորսնցուցած հարստութիւնն այս կամ այն ձևով ի սպաս
դրուեր ազգային վերածնութեան, եթէ հարիւր հազարավոր հա-
յերու արիւնը, փոխանակ խելագար արկածախնդրութիւններով
ու ոչխարի համակերպութեամբ թափելու, խնայուեր ու ի պա-
հանջել հարկին առիւծի մոնչումներով հոսեր, հայը դիվանագի-
տական մուրացկան մը ըլլալու անպատուութեան ենթարկուած
չպիտի ըլլար այսօր»⁴:

Եվ այսպես, դարձյալ բորբոքվում էր գենք ունենալու բաղ-
ձանքը, միայն զենքը, կոխիլը, պայքարը կարող են փրկել հային:
Գոնե մեռնել զենքը ձեռքին, այլ ոչ թե կյանքից հեռանալ ան-
պատիվ մահով:

«Պայքար՝ ահա հայուն պարտականութիւնը, պայքար՝
զինք մեռնելու դատապարտող պետական խորամանկ կարգա-
դրութիւններու դէմ, պայքար՝ տգիտութեան և իր մարմինն ու
նկարագիրը ապականող ախտերու դէմ, պայքար՝ մի թիզ հողին
եղած ոտնձգութիւններու, իր մազին մեկ թելին դպչող ձեռքերու
ու պատուոյն ուղղուած միակ ծուռ նայուածքի մը դէմ: Պայքար ոչ
թէ խոսքով, անխորհուրդ ու գահավեժ ոստումներով, այլ
առնական կորովով ու ինքնավստահ մարդու լրջութեամբ»⁵:

Նույնիսկ Դաշնակցությունը արդեն վերջնականապես հա-
մոզվել էր, որ թուրքերից խաբված և Արևմուտքից լքված թուր-

³ «Ազգ» (Բոստոն), № 12, 10 սեպտեմբերի 1913 թ.:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում:

քահայութիւնը այլևս ուրիշ ելք չի գտնում, քան զենք վերցնել: ՀՅԴ օրգան Վանի «Աշխատանքը» գրում էր. «Ո՛չ, ալ չենք խաբուիր ոչ փայլուն խոստումներէ եւ ոչ ալ պաշտոնական կամ անպաշտօն որոշումներէ»¹:

Բայց այդ և նմանօրինակ կոչերն ու հորդորները, այն էլ հիմնականում հեռվից հեռու, անօգուտ ու ժամանակավրեպ էին: Հայերին համակել էր ափսոսանքի զգացումը, որ «սահմանադրական ազատութիւնների» պայմաններում իրենք կամավոր զինաթափվել են: Հայաստանում տերն ու տիրականը քուրդն էր՝ համարձակ ու անվախ: Չկար այլևս հերոս ֆիդայիների զենքի շաչունը: Անցել էին ժամանակները, երբ նշանավոր հայ ֆիդայապետների լոկ անունները լսելիս քրդերն իրար էին անցնում, զսպվում էր նրանց անհագ ախորժակը: Հայի անվախութեան և դյուցազնութեան մասին նրանք երգեր էին հյուսում: Հիմա զենք չունեցող անպաշտպան հայր քրդի ու թուրքի աչքին ոչնչություն էր: Նրա ունեցվածքին լիակատար տեր դառնալը թշնամի հարևանների համար ամիսների հարց էր, իսկ կյանքը խլելը՝ սովորական բան:

Այս պայմաններում անկարելի էր անգամ խորհել թուրքահայութեան ցրիվ հատվածների միացյալ ինքնապաշտպանութեան մասին: Հարկավոր միջոցները տեղերում բացակայում էին: Հեռավոր անկյուններում համարյա անհնարին էր զենք հայթայթել, քանի որ չկար պետք եղած գումարը: Թուրքահայութեան տնտեսական թշուառ կացութեան պայմաններում անկարելի էր գլուխ բերել ինքնապաշտպանութեան գործն առանց արտաքին օգնութեան: Բայց աշխարհի ոչ մի պետություն հայերին զենք չէր տա: Զենք չէին տա նաև օտար մասնավոր հաստատությունները: Մնում էր միայն օգնութեան մի աղբյուր՝ Կովկասի ու արտասահմանի հայությունը, ավելի ճիշտ՝ նրա այն մասը, որ գտնվում էր նյութական համեմատաբար բարեկեցիկ պայմաններում և քաղաքական բարենպաստ վիճակում:

Կովկասի և արտասահմանի հայությունը հուզվել էր, շարժ-

վել, նա մտածում էր իր եղբայրների ու քույրերի մասին, գրում էր, խոսում, բողոքում: Նա երագում էր զանազան միջոցներով հասնել այն բանին, որ թուրքահայերը ապագայում ունենան մի բարենորոգված երկիր և այդ նպատակով միջազգային դիվանագիտութեան ուշադրությունն էր հրավիրում Հայկական հարցի վրա: Այդ ամենն անկարելի էր ուրանալ, բայց հենց դրանով էլ փաստորեն սահմանափակվում էր նրա գործունեությունը:

Տվյալ պահին արևմտահայերն ամենաշատ կարիք ունեին ստանալու ֆինանսական-տնտեսական օգնություն, որպեսզի կարողանային նախ և առաջ ինքնապաշտպանութեան համար որոշ քանակի զենք ձեռք բերել: Բայց նման օգնություն չէր ստացվում կամ համարյա չէր ստացվում: Այս օգնությունը չէր տրվում մի շարք «արդարացուցիչ» պատճառաբանություններով. «խոհեմ և զգույշ լինել», «չգրգռել մոլեռանդությունը», «կասկած չներշնչել», «չարժումներ առաջ չբերել» և այլն:

Չնայած դրան, այնուամենայնիվ, 1913 թ. աշնանը փորձեր արվեցին արտասահմանից զենք ձեռք բերելու:

1913 թ. նոյեմբերի սկզբին, հունական մի շոգենավ զենքով ու ռազմամթերքով բեռնված, մեկնել էր Կիլիկիա՝ դրանք հայերին հանձնելու համար:

Այդ մասին ստանալով տեղեկություն՝ Միջերկրական ծովի գերմանական նավատորմի հրամանատարը մեկնում է Կիլիկիայի ափերը, որպեսզի արգելք լինի զենքի բեռնաթափմանը: Բայց մինչ այդ, ենթարկվելով իրենց հոգևոր իշխանությունների նախազգուշացմանը և առհասարակ չմտորելով ապստամբութեան մասին, հայերը չէին եկել ծովափ՝ զենքն ընդունելու: Հունական շոգենավը, մոտենալով պայմանավորված տեղը՝ Մերսինից ոչ հեռու ծովափին, և չտեսնելով հայերի, շտապ հեռանում է ծով:

Թուրքերն իմացել էին հունական շոգենավի ժամանման ու նրա նպատակի մասին և սկսել էին քրիստոնյաների դեմ ուղղված զայրալից շարժումներ անել: Երկյուղ կար, որ կրկնվելու են Ադանայի 1909 թ. ապրիլյան գազանությունները:

Հունական աղբյուրների համաձայն՝ զենքով բեռնված նավը պատկանելիս էր եղել մասնավոր անձի, իսկ թե ով էր վարձել

¹ «Աշխատանք», № 46, 28 սեպտեմբերի 1913 թ.:

այն*, չհաջողվեց պարզել: Քանի որ նավը մասնավոր սեփականություն չէր, ուստի Կիլիկիայի ափերին նրա երևալուն քաղաքական նշանակություն չտրվեց¹:

Հայկական դիվանագիտական շրջաններում անհանգստացած էին զենքին ապավինելու կոչերից: Մտածումը ծայրահեղ վտանգավոր էին համարում Պողոս Նուբար փաշան և բարենորոգումների գործի նրա անմիջական ղինակիցները: Զենքի ընդամենը կտորներ ունեցող Հյուժված ու կոտորակված հայությունը օսմանյան պետություն ղեմ պայքարի ելնելու դեպքում արդյո՞ք կարող էր դիմանալ թուրքական բանակի հարվածներին: Թեև այդ բանակը դաժան պարտություններ էր կրել տրիպոլիտանական և բալկանյան պատերազմներում, բայց նա դեռ բավականաչափ ուժեղ էր արյան մեջ խեղդելու հայերի ամեն մի հակակառավարական ապստամբություն: Ավելին, թուրքերի համար դա կլինեք բաղձալի պատրվակ՝ Հայաստանի բարենորոգումների նախագիծը վերջնականապես թաղելու համար:

Եվրոպական և ռուսական մամուլը ողջունում էր հայերի չափավորությունը և զգուշավորությունը, որոնք կարողացան խուսափել խարուսիկ արկածներից և սպասել Եվրոպայի խոստացած բարենորոգումներին: Ռուսական մամուլը միաժամանակ նշում էր, որ մեծ պետությունները պետք է հնարավորինս փութացնեն բարենորոգումների գործը, որովհետև հայերի սարսափելի կացությունը նրանց կարող է հուսահատեցնել և դրդել այնպիսի քայլերի, որից կարող են չահել միայն թուրքիան և Գերմանիան²:

* Խոսակցություն կար, որ նավը վարձակալել էր մեծահարուստ Ալեքսանդր Մանթաչյանի գործակալներից մեկը:

¹ Տե՛ս «Մշակ», № 250, 9 նոյեմբերի 1913 թ.:

² Տե՛ս նույն տեղում:

ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՆՈՐՈՇ ԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամբողջ երեք և կես ամիս՝ 1913 թ. հոկտեմբերի սկզբներից մինչև 1914 թ. հունվարի վերջերը, տերությունների՝ Հայկական հարցի մեջ ընդգրկված դիվանագետները զբաղված էին ռուս-գերմանական համաձայնությունը թուրքիայի կողմից ընդունելու խնդրով: Այլ խոսքով, եթե Ենի-Քեոյի ձախողումից հետո ռուսական դիվանագիտության և Պողոս Նուբարի գլխավոր հոգսը Հայկական բարենորոգումների հարցում Գերմանիայի մասնակցության ապահովումն էր, ապա ռուս-գերմանական սեպտեմբերի 10-ի համաձայնագիրն ընդունելուց հետո առաջին գիծ էր մղվում այդ վավերագրի գործադրումը խափանելուն ուղղված թուրքիայի ջանքերի չեզոքացումը:

Ահա այս նպատակով Պողոս Նուբարը 1913 թ. սեպտեմբերի վերջերին մեկնում է Բեռլին և կրկին հանդիպում արտգործնախարարի տեղակալ Ա. Յիմերմանին: Զրույցի ընթացքում նա բարձրացնում է բարենորոգումների նկատմամբ տերությունների կողմից վերահսկողություն հաստատելու խնդիրը: Յիմերմանը հավաստիացնում է, որ ինքը լիովին բաժանում է վերահսկողության կարևորության մասին Պ. Նուբարի տեսակետը, և որ գերմանական կառավարությունն ընդհանրապես հետևողական է լինելու սեպտեմբերի 10-ի համաձայնագիրն առաջ մղելու հարցում:

Պողոս Նուբարը Կաթողիկոսին նամակով տեղեկացնում է Բեռլինում կատարած իր դիվանագիտական նոր գործունեության մասին: «Այս այցելությունը, - գրում էր նա, - պատճառ եղաւ բառնալու այն դժվարությունները, որոնք ծագած էին եւ ես վերադարձայ շատ գոհ՝ ձեռք բերած ըլլալով հավաստիքը կառաւարութեան, որ ճանչնալով մեր բարենորոգմանց օգտակարութիւնը նոյն իսկ գերմանական քաղաքականութեան տեսակետով, որոշած է ուժ տալ մեր բարենորոգմանց խնդրոյն. հետեւաբար քիչ ժամանակէն ռուս կառավարութեան հետ պիտի համաձայնի բարենորոգումներու ծրագիր մը»¹:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 1:

Պողոս փաշան այնուհետև նշում էր, որ Բեռլինից Փարիզ վերադառնալուց հետո ինքը տեղեկացվել է, որ գերմանական կառավարությունը հարգել է իր խոստումը և համաձայնություն է եկել Ռուսաստանի հետ, ինչը նշանակում է, որ բոլոր պետությունների միջև արդեն համաձայնությունը կատարյալ է: Մնում է միայն ծրագրի նախագիծն ընդունել տալ Թուրքիային ու գործադրել:

Այնուամենայնիվ Նուբարը կասկած էր հայտնում, թե Թուրքիան հեշտությամբ է տեղի տալու: «Բ. Դուռը,- գրում էր նա,- իր ավանդական քաղաքականությունը կ'ընդդիմանա առանց ըմբռնելու, որ բարենորոգումներու գործադրությունը իրեն համար աւելի չահաւոր է, քանզի ան պիտի չըջէ հայկական գաւառներու մեջ տեղի ունենալիք բոլոր խոռվութեանց պատճառները, որոնք կրնան վտանգել Օսմանեան կայսրութեան գոյութիւնը. ստույգ է, թե առանց ազդու ճնշումի մը Բ. Դուռն, ոչինչ ձեռք պիտի կրնայ բերուիլ»¹:

Իսկ ինչպիսի՞ ճնշումը կարող է ազդել Թուրքերի վրա: Նուբար փաշան համոզված էր, որ տվյալ պահին այդ ճնշումը կարող է լինել միայն **Ֆինանսական**: Նա հույսը չէր կորցնում, որ Փրանսիական կառավարությունն ի վերջո կ'մերժի փոխառություն ստանալու Բ. Դուռն խնդրանքը: Հետապնդելով այդ նպատակը՝ նա բազմաթիվ դիմումներ է հղում Փրանսիայի արտգործնախարարությունը, պառլամենտի անդամներին, հեղինակավոր հրատարակագիրներին՝ խնդրելով ազդել կառավարության վրա, որպեսզի նա ֆինանսական ճնշումը ուժեղացնի Թուրքերի վրա:

Օրեր անց (հոկտեմբերի 7-ին) Նուբար փաշան հանդիպում է ունենում և բանակցություններ վարում Փրանսիայի արտգործնախարար Պիչոնի հետ՝ պահանջելով սեպտեմբերի 10-ի համաձայնագիրը կատարելու երաշխիքներ, որը և ստանում է: Շատ չանցած՝ նոյեմբերի սկզբին, նա հանդիպում է Փարիզ ժամանած Ռուսաստանի վարչապետ Վ. Կոկովցևին և երկար տևած զրույցի ընթացքում հավաստիացում է ստանում, թե

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 1:

Պետերբուրգը վճռական է՝ առաջ մղելու Հայկական հարցը, միայն թե ժամանակ է պետք:

Իտալիայի կառավարությունը նույնպես իր դրական վերաբերմունքն է ցույց տալիս ուս-գերմանական համաձայնագրի նկատմամբ:

Ռուս-գերմանական համաձայնագիրն ի չիք դարձնելու Թուրքերի ձեռնարկած խափանարարական ճիգերին իր հետևողական աշխատանքը հակադրում էր հատկապես ուսական դիվանագիտությունը: Եթե Պետերբուրգը նահանջեր իր դիրքերից և ընդունել Թուրքական առաջարկները, որոնք ըստ էության նաև գերմանական կողմի առաջարկներն էին, ապա կստացվեր, որ նա հանգիստ հաշտվում է հայկական բարենորոգումների, հետևապես Ռուսաստանի շահերի դեմ ուղղված Թուրք-գերմանական միացյալ ճակատ ստեղծելու փաստի հետ:

1913 թ. հոկտեմբեր 4 (17)-ին Սազոնովին ուղարկած հեռագրում Գիրսը գրում էր. «Ես հարմար առիթ բաց չեմ թողնում ձեռքիցս, որպեսզի մեծ վեզիրի առաջ պնդեմ իմ և Վանզենհայմի մշակած վեց կետերի սկզբունքային ընդունման անհրաժեշտության վրա: Այդ վեց կետերի բնագիրը ես հանձնեցի մեծ վեզիրին: Պետք է ասեմ, որ մինչև այժմ հանդիպում եմ նրա կողմից համառ հակառակություն»¹:

Նկատենք, որ Թուրքերին դարձյալ ուժ էր տալիս սեպտեմբերի 10-ից հետո Գերմանիայի բռնած դիրքը: Թեև Յագովը Պողոս Նուբարին հավաստիացրել էր, որ գերմանական կառավարությունն ամեն կերպ նպաստելու է, որ Թուրքիան ընդունի բարենորոգումների ծրագիրը, բայց իրականում Բեռլինը տրամադիր չէր Բ. Դուռնը պարտադրելու մի բան, որը նրա սրտովը չէր:

Նշված հեռագրում Գիրսը Սազոնովին տեղեկացնում էր, որ Թուրքական կառավարության հակառակության գլխավոր հիմքը հետևյալն է. կազմել երկու Հայաստան, որոնցից յուրաքանչյուրը կառավարվելու է Բ. Դուռնից համարյա անկախ վերատես-

¹ «Հայաստանը միջազգային դիվանագիտության ...», էջ 280:

չով: Կառավարությունն այդ պաշտոնյային արձակելու իրավունք բարենորոգումների ծրագրով չի նախատեսված, եթե նույնիսկ նա բացահայտ հանդես գա Թուրքիայի շահերի դեմ: Դրանով իսկ սկիզբ է դրվում կայսրության բաժանման, որովհետև նրա մնացած մասերն էլ կպահանջեն նմանօրինակ արտոնություններ:

Մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան ասում էր, որ սեպտեմբերի 10-ի համաձայնագիրը ըստ էության մտցնում է քաղաքական, այլ ոչ թե անհրաժեշտ վարչական սկզբունքներ, այնինչ Հայաստանում պահանջվում է կատարել միայն վարչական փոփոխություններ: Նա օրինակ էր բերում անցյալում եվրոպական խորհրդականների օգնությամբ կայսրության վարչական և ֆինանսական հիմնարկություններում կատարված փոփոխությունները: Հենց այդպիսի խորհրդականներ են հարկավոր անատոլիական վիլայեթների բարեկարգման համար, չեչտում էր Սայիդ Հալիմը¹:

Գիրսը հակադարձում է՝ ասելով, որ այժմ Հայաստանի վիլայեթներին վերաբերող գլխավոր հարցը Հայերի համար խաղաղ դրություն ապահովելն է, և որ՝ եթե այդպիսի դրություն չստեղծվի, Հայերը «պատրաստ են ոտքի կանգնել»: Վերատեսուչներ նշանակելով՝ տերությունները ցանկանում են իրենց համար ապահովել Հայաստանի դրության վերահսկման իրավունքը, որը սահմանված է Բեռլինի 1878 թ. վեհաժողովի կողմից՝ ձևակերպված նրա ընդունած միջազգային դաշնագրի 61-րդ հոդվածով: Բոլորին է հայտնի, որ այդ դաշնագրի տակ դրված է նաև Թուրքիայի ստորագրությունը: Ռուս դիվանագետը մեծ վեզիրին նաև հիշեցնում է, որ «Թուրքիան չպետք է աչքաթող անի և այն հանգամանքը, որ վեց կետից բաղկացած ծրագիրն արդեն հավանություն է գտել բոլոր մեծ պետությունների կողմից»²:

Սայիդ Հալիմը պատասխանում է, որ հայկական հարցում

մեծ պետությունների համակամ լինելու վկայություն է նաև այն, որ Գիրսի ասածները նույնությամբ կրկնում են Կ. Պոլսում Գերմանիայի և Ֆրանսիայի դեսպաններ Վանգենհայմը և Բոմպարը: «Բայց, չնայած դրան, չեչտում էր մեծ վեզիրը, ես չեմ կարող փոխել իմ տեսակետը»:

Սայիդ Հալիմի հետ ունեցած տեսակցություններից հետո համոզվելով, որ նա չի նահանջելու, Գիրսը հանդիպում է ունենում Վանգենհայմի հետ, և նրանք պայմանավորվում են, որ հիշյալ վեց կետերի վերաբերյալ իր հետագա բացատրությունների ժամանակ մեծ վեզիրը տա միայն գրավոր պատասխաններ:

Թուրքական կողմի համառությունը մեղմելու համար Գիրսը առաջ է քաշում մի գաղափար, այն է՝ եթե Բ. Դուռն ընդունի հայկական բարենորոգումների սեպտեմբերի 10-ի ծրագիրը, ապա դրա դիմաց համաձայնել, որ չորս տոկոսով բարձրացվեն Թուրքիա ներմուծվող ապրանքների մաքսատուրքերը: Այդ առաջարկը Գիրսը ներկայացնում է Պետերբուրգ և ստանում դրական պատասխան: Դրան հաջորդում է Գիրսի հանդիպումը Վանգենհայմին: Վերջինս, խորհրդակցելով Բեռլինի հետ, համաձայնություն է տալիս ուսսական առաջարկին:

Հոկտեմբերի 11 (24)-ին Ս. Սազոնովին հղած № 904 գաղտնի հեռագրով Գիրսը հայտնում էր. «Վաղը ես հայկական հատուկ հարցով խորհրդակցություն եմ ունենալու մեծ վեզիրի հետ: Նա ինձ խոստացել է գրավոր ներկայացնել իր առարկությունները մեր կետերի վերաբերյալ: Հավանաբար դրանք կլինեն բացասական, բայց մեր պարզաբանումների ոչ պաշտոնական բնույթի պատճառով ես մտադիր եմ դրանց չտալ մերժման նշանակություն, այլ կջանամ օգտվել դրանցից, որպեսզի մեծ վեզիրին ներքաշեմ ինձ հետ հայկական հարցի քննարկման մեջ, որից նա մինչև այժմ խուսանավել է»²:

Հոկտեմբերի 12-ին հերթական անգամ լինելով մեծ վեզիրի մոտ՝ Գիրսը նրանից ստանում է գրավոր զեկուցագիր հայկա-

¹ Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության ...», էջ 281:

² «Բարենորոգումները Հայաստանում», էջ 63:

¹ «Բարենորոգումները Հայաստանում», էջ 261:

² АВПРИ, ф. "Политархив", г. 1913, д. 3464, л. 66.

կան բարենորոգումների ծրագրի վեց կետերի մասին: Տեղում ընթերցելով ղեկույցը՝ դիվանագետը պարզում է, որ այն նշված ոչ մի կետի ուղղակի պատասխան չի պարունակում, այլ իրենից ներկայացնում է ղեկավարատիվ փաստաթուղթ ընդհանրապես բարենորոգումների դերի, մեծ պետությունների բարոյական ու տնտեսական օգնության նշանակությունը և այլնի մասին:

Ամենաընդհանուր բնույթի գրավոր հայտարարությունից հետո, թե թուրքիան ցանկանում է բարեփոխումներ անցկացնել, մեծ վեզիրը, սակայն, նույնիսկ գլխավոր վերատեսուչներին տերությունների առաջադրմամբ նշանակելու սկզբունքից խուսափելու փորձ էր անում՝ առաջարկելով ստեղծել լայն իրավունքներով օժտած արտասահմանցի խորհրդականների պաշտոններ: Այդ պաշտոնյաների ձեռքում, ըստ էության, պիտի կենտրոնանար ողջ իրական իշխանությունը Հայաստանի երկու սեկտորներում¹:

Հոկտեմբերի 13-ին Պետերբուրգ հղած հեռագրով Գիրսը Սազոնովին հաղորդում է մեծ վեզիրի հետ այդ հանդիպման և նրանից ստացած գրության բովանդակության մասին: «Ես նկատեցի, որ Սայիդ Հալիմի ղեկուցումը հարցին նոր ընթացք չի տալիս և պետք է սկսել նրա կոնկրետ քննարկումը, - գրում էր ղեսպանը: - Առաջին կետի շուրջ մի ժամվա խոսակցությունից հետո մեծ վեզիրը մեր տեսակետների տարբերությունը գտավ նրանում, որ մենք ցանկանում ենք առաջարկել Դոանը եվրոպական ընդհանուր վերատեսուչներ, այնինչ նա մեզանից խնդրում է եվրոպական խորհրդականներ այդ վերատեսուչների համար, երաշխավորելով, որ հիշյալ խորհրդականները կունենան լիակատար իրավունք, իսկ վերատեսուչներն անհրաժեշտորեն կկատարեն նրանց խորհուրդները»²:

Ինչպես տեսնում ենք, իր հակառակարկով Բ. Դուռը ձգտում էր, որ Հայաստանի երկու սեկտորներում վերատեսուչներ նշանակվեն թուրքահայատակներ, իսկ նրանց կից՝

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3472, л. 100 (об.).

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 1:

օտարերկրյա խորհրդականներ, որոնք վերատեսուչների վրա ազդելու որևէ լծակ չէին ունենալու: Դա նշանակում էր, որ վտանգի տակ էր դրվելու բարենորոգումների իրականացման ողջ ընթացքը, եթե տերությունները համաձայնեին թուրքերի հակառակարկին:

Ահա թե ինչու Գիրսը կտրականապես մերժել էր Սայիդ Հալիմի գրավոր ղեկուցման հատկապես այդ կետը և պնդել, որ վերատեսուչները նշանակվելու են մեծ պետությունների կողմից, լինելու են եվրոպացիներ, ինչպես նախատեսված է ռուս-գերմանական համաձայնությունում:

Մինչ Գիրսը Կ. Պոլսում եռանդուն աշխատանք էր ծավալել սեպտեմբերի 10-ի համաձայնագրի դրույթները պահպանելու համար, այդ նույն ժամանակ Պողոս Նուբարը Փարիզում հետևողական աշխատանք էր տանում, որպեսզի ռուսական կողմը չարունակի հավատարիմ մնալ իր որդեգրած ուղուն:

Նուբարը մեծ հույսեր էր կապում հատկապես Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովի հետ, որը շուտով գալու էր Փարիզ: Ըստ նրա ունեցած տեղեկության՝ Փարիզում Սազոնովը հայկական հարցով լուրջ շփումներ պետք է ունենար Փրանսիական կառավարության անդամների, այդ թվում՝ Բիչոնի հետ: Նա կաթողիկոսին տեղյակ է պահում, որ ինքն անպայման հանդիպելու է Սազոնովին, և եթե Վեհր իրեն երաշխավորում է, ապա ինքը մտադիր է նրան հայտնել «Ձեր Օժնութեան, բոլոր հայ ազգին երախտագիտական զգացումները այն վեհանձն նախաձեռնութեան համար, որ Ռուսիո ունեցաւ եւ այն ազգու օժանդակութեան համար, որ մեզ շնորհեց մեր բարենորոգմանց գործին ի նպաստ, վասն զի անվիճելի է, որ Ջարին կառավարութեան շնորհիւ է, որ պետութեանց մեջ համաձայնութիւն մը գոյացաւ, որուն հետեւանքով կրնանք այսօր յուսալ, թե մեր Ասիական Թուրքիոյ եղբայրները պիտի դադրին տառապելէ: Այս տեսակետով ամէն հայ պէտք է յաւիտենական երախտագիտութիւն մ' ունենայ Վեհ Զարի կառավարութեան»¹:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 1:

Չորս օր անց կաթողիկոսին գրած հերթական նամակով Պողոս Նուբարը հայտնում է, որ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Սազոնովը եկել է Փարիզ և անմիջապես մեկնել Վիչի՝ այնտեղի հանքային ջրերում բուժվելու: Իմանալով այդ մասին և օգտվելով առիթից՝ ինքը Փարիզից կապվել է նրա հետ և խնդրել ունկնդրություն՝ միաժամանակ պատրաստակամություն հայտնելով այդ նպատակով շտապ ուղևորվել Վիչի: Բայց Սազոնովը սիրալիբ հեռագրով Պողոս Նուբարին տեղեկացրել է, որ ինքը Վիչիում մնալու է շատ կարճ ժամանակ, ուստի նպատակահարմար չի գտնում փաշայի այնտեղ մեկնելը, և որ ինքը Փարիզ է վերադառնալու ամսի 17-ին, ուր և անմիջապես կ'ընդունի իրեն: Ս. Սազոնովի Փարիզ վերադարձի նույն օրը տեղի է ունենում Պողոս փաշայի հետ նրա հանդիպումը, որը վերջինս համարել է «ինձ շնորհած ամենակարելու տեսակցությունն»¹:

Հանդիպման ընթացքում Պողոս Նուբարը Վիչի գնացած Սազոնովի ներողամտությունն է հայցում անհանգստացնելու համար: Վերջինս պատասխանում է, որ Փարիզում տեսակցելու իր առաջարկի պատճառը եղել է Պ. Նուբարին չանհանգստացնելը, որովհետև Փարիզ-Վիչի ճանապարհը շատ տաղտկալի է, և ինքը չի ցանկացել նրան տհաճություն պատճառել: Միաժամանակ Սազոնովին ասում է, թե հիմա ինքը շատ ուրախ է, որ անձամբ ծանոթանում է մի նշանավոր անձնավորություն հետ, որին արդեն երկար ժամանակից ի վեր գիտե հեռակա կարգով²:

Պողոս Նուբարն Ամենայն Հայոց կաթողիկոսի և անձամբ իր անունից երախտագիտություն է հայտնում Ռուսիոյ ցարին՝ հայությունը շնորհած անշահախնդիր աջակցության համար: Այնուհետև նա շեշտում է, որ «հակառակ մեր բոլոր դիմումներուն եւ ջանքերուն, միւս երկրներու մեջ միայն անտարբերութեան եւ պարզ համակրական բողոքներու բաղխած էինք, մանավանդ Անգլիոյ մեջ, մինչեւ որ ռուսական կառավարութիւնը մեր Դատն իր ձեռքն առավ: Հետեւաբար հայերը, միեւնոյն

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 3:

² Նույն տեղում, թ. 4:

զգացմամբ ներշնչուած, երբեք չի պիտի մոռնան, որ Ռուսիոյ կը պարտին իրենց ազատագրումը ու անոր հանդեպ միշտ յաւիտենական երախտագիտութիւն մը պիտի սնուցանեն»¹:

Ի պատասխան՝ Ս. Սազոնովը հայտնում է, որ անձամբ ինքը մեծ կարևորություն է տալիս Հայաստանի բարենորոգումների խնդրին և թե նույնիսկ որոշել է Պետերբուրգ վերադարձին կանգ առնել Բեռլինում և այդ հարցի շուրջ տեսակցել Գերմանիայի կանցլերին՝ երկու երկրների գործողությունները համաձայնեցնելու համար: Նա նաև իրազեկում է, որ պատրաստակամ է Բեռլինում հանդիպել Յիմերմանին: Պողոս Նուբարը նպատակահարմար գտավ ասելու, որ գերմանացի այդ դիվանագետը շատ համակիր է Հայաստանի բարենորոգումներին և ամենալավատեղյակն է կառավարության մյուս անդամների համեմատ: Սազոնովը նկատեց, որ թեև բարենորոգումների ծրագիրը բոլորովին հայերի բաղձանքներին չի համապատասխանում, բայցևայնպես շատ լուրջ բարեփոխումներ է պարունակում, որոնցով պետք է գոհանալ²:

Սազոնովը նաև շեշտում է, որ ռուսական կառավարություններ, ինչպես և եվրոպական մյուս կառավարությունները այսօր փափագում են պահպանել Ասիական Թուրքիայի ամբողջությունը՝ գիտենալով, որ դրանից է կախված բարենորոգումների գործողությունը:

Այնուհետև կաթողիկոսին հղած սույն նամակով Պողոս Նուբարը կրկին անդրադառնում է Սազոնովի հետ իր հանդիպմանը և կրկին բարձր գնահատում Հայկական հարցում ռուսական դիվանագիտության բացառիկ դերը: «Այս պայմաններուն մեջ, գրում էր նա, - կը խորհիմ, որ այս պահուս Բարիզի մեջ պ-րն Սազոնովի ներկայութիւնը մեր դատին համար ամենայարմար եւ ամենաբարձրակարգ պարագաներէն մին կը կազմե»: Նա նշում էր նաև, որ Սազոնովը հայերի հոգսերի մասին խոսել է Պուլանկա-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 4:

² Նույն տեղում:

րեի հետ, որը մեծ ազդեցություն ունի Ֆրանսիայի արտաքին քաղաքականության վրա¹:

Նամակի վերջում Պողոս Նուբարը կաթողիկոսին տեղեկացնում է նաև, որ Սազոնովի հետ իր ունեցած տեսակցությունից հետո ինքն իմացել է, որ Թուրքիայի վրա ֆինանսական ճնշում գործադրելու հարցով ոուս նախարարը նույն օրը հանդիպել է Ֆրանսիացի նախարար Բիչոնին, որը խոստացել է ընդառաջել հայերի պահանջին և փոխառություն չբացել Բ. Դուան համար²:

Իմանալով այդ մասին՝ Նուբարը նույնպես փափագում է հանդիպել Բիչոնին: Նույն օրը վերջինս ընդունում է հայ գործչին և երկար զրույց ունենում նրա հետ: Տեսակցության ընթացքում նախարարը հաստատուն տեսակետ է հայտնում, թե Ֆրանսիային ձեռնադրել է պահանջել Թուրքիայի Status quo-ն՝ նկատի ունենալով իր շահերը Սիրիայում, բայց եթե պետությունները նպատակահարմար գտնեն, բացառված չէ, որ իր երկիրը այդ հարցում համախոհ լինի Ռուսիային³:

Հանդիպման վերջում Նուբարը հարկ է համարում Ֆրանսիայի նախարարին ասել, որ եթե Հայաստանում բարենորոգումներ չիրականացվեն, ապա հայերն այլևս այլ միջոց չեն ունենա, քան բացահայտորեն հանդես գալ Թուրքիայի անմարդկային կարգերի դեմ: Բիչոնը պատասխանում է. «Հայկական բարենորոգումներն այսօր Եվրոպայի հանգստությունն են»⁴:

Հոկտեմբերի 15 (29)-ին Գիրսը նորից հանդիպում է ունենում Սայիդ Հայիմին, որը դարձյալ համառ կերպով պնդում է, որ իր կառավարությունը չի կարող ընդունել Եվրոպայի մասնակցությունը ընդհանուր վերատեսուչների նշանակման հարցում: Մեծ վեզիրի կոչող դիրքը մեղմելու համար ոուս դիվանագետը հնարավոր է գտնում, որ Թուրքերը յուրաքանչյուր սեկտորի համար մեծ պետություններից խնդրեին ոչ թե մեկ ընդհանուր վերատեսուչ, այլ երեք թեկնածու, որոնցից Բ. Դուռը կնշա-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 5:

² Նույն տեղում, թ. 4:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, թ. 5:

նակեր մեկին: Բայց այդ առաջարկը ևս չի բավարարում Սայիդ Հայիմին:

Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 16-ին, Սազոնովին հղած № 918 հեռագրում Գիրսը նշում էր, որ «մեծ վեզիրը ... գուցե անձամբ ավելի զիջող կլիներ, եթե ենթակա չլիներ երիտասարդ Թուրքերի կոմիտեի խիստ հսկողությանը: Նա գործում է իր պարագլուխների շովինիստական զգացմունքների ազդեցության ներքո»¹:

Այդ համոզումն ունենալով՝ Գիրսը պայմանավորվում և նույն օրը հանդիպում է ունենում երիտթուրք կոմիտեի գլխավոր գործիչների հետ, որոնց թվում էր նաև Թալեաթը: Հանդիպման ընթացքում նա ավելի է համոզվում, որ մեծ վեզիրը գտնվում է կոմիտեի լիակատար հսկողության տակ:

Երիտթուրք պարագլուխները կրկնում էին այն, ինչ Գիրսը լսել էր Սայիդ Հայիմից: Նրանք կտրականապես ասել էին, թե Հայաստանում լինելու են միայն ու միայն Թուրքահպատակ վերատեսուչներ, և որ նախատեսված թեկնածուներից մեկը լինելու է ճանապարհների հաղորդակցության նախկին նախարար, ազգությամբ հայ Հալաջյանը, որին հայերը վերաբերվում էին ծայրահեղ կասկածանքով: Թալեաթը հայտնում է, որ մտադիր է Թրակիայի գործերից ընտրել 7000 լավագույն զինվոր և երկու հայկական սեկտորների համար կազմակերպել ժանդարմերիա՝ հայերին քրդերի բռնություններից պաշտպանելու համար: Այդ մտադրությունն ամբողջովին հակասում էր հայկական բարենորոգումների ծրագրին, որը նախատեսում էր, որ նշված սեկտորների ժանդարմերիայի կազմի կեսը հավաքագրվելու է քրիստոնյաներից²:

Այդ հանդիպման մասին նույն օրը՝ հոկտեմբերի 16 (29)-ին, Սազոնովին հղած երկրորդ՝ № 919 գաղտնի հեռագրում Գիրսը շեշտադրում էր հետևյալը. «Ընդհանրապես վերցրած, երիտասարդ Թուրքերն աշխատում են թաղել հայկական հարցը, հա-

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3664, л. 71.

² Նույն տեղում, л. 72.

մարելով այն Թուրքիայի ներկա դրույթյան ամենավտանգավոր հարցերից մեկը և երկյուղելով, որ հայերին արած ամեն մի զիջողություն կարող է առաջ բերել արաբների համապատասխան պահանջը: Ես առարկեցի ասելով, թե հայկական հարցով մենք զբաղվում ենք այն պատճառով, որ իրավունք ունենք համաձայն Բեռլինի դաշնագրի (1878 թ.- Յ. Ս.) և այն հիման վրա, որ անհրաժեշտ ենք համարում երաշխավորելու հայերի ապագա գոյության ապահովությունը: Միմիայն եվրոպական երաշխավորությունը կարող է սահմանել խաղաղություն հայերի մեջ և այդպիսով ամրապնդել Թուրքիայի ներքին անդորրությունը»¹:

Ռուս դեսպանի համառությունը մեծ վեզիրին ստիպեց, ի վերջո, մի զիջում անել. չընդունելով ընդհանուր վերատեսուչների նշանակումը մեծ պետությունների համաձայնությունամբ՝ նա դրա փոխարեն առաջարկեց այդ պետություններին իրավունք տալ, որ նրանք յուրաքանչյուր վերատեսչին կից նշանակեն մի եվրոպացի կամ ռուս խորհրդական, որոնք կհաստատվեն Բ. Դոան կողմից 5 տարի ժամկետով և հնարավորություն կունենան իրենց լիազորությունները նորոգելու ոչ ավել, քան երկու անգամ: Սայիդ Հայիմն ասում է, թե ինքը չի կասկածում, որ ընդհանուր վերատեսուչները այդ դեպքում պարտավոր են լինելու ենթարկվել իրենց այդ խորհրդականների կարծիքին: Գիրսը բացասական վերաբերմունք է արտահայտում այդ առաջարկին, որը նույնպես հակառակ էր բարենորոգումների ծրագրին:

Գերմանիայի դեսպան Վանգենհայմը, իմանալով Սայիդ Հայիմի այդ առաջարկի մասին, Գիրսին ասում է, որ եթե Բ. Դոուրը շարունակի համառել, հավանաբար այլևս ոչինչ չի մնա անելու, քան ընդունել մեծ վեզիրի առաջարկը: Բեռլինում Ռուսաստանի դեսպան Սվերբեկը Սազոնովին տեղեկացնում է, որ մեծ վեզիրի այդ առաջարկի ընդունմանը կողմ է նաև Յիմերմանը²:

Ռուսական կառավարությունը ստիպված է լինում որոշ

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3664, л. 72.

² Նույն տեղում, л. 73.

զիջումների գնալ և Բ. Դոանը առաջարկել, որ եթե թուրքերն այդքան մեծ նշանակություն են տալիս իրենց հեղինակության արտաքին կողմերի պահպանմանը, ապա ընդունելի է, որ սեկտորների մեջ մտնող նահանգների վալիները ունենան թուրքահպատակ մեկական տեղակալ, որոնց նշանակման իրավունքը վերապահվի թուրք կառավարությունը՝ պայմանով, որ նրա իշխանությունը լինի խորհրդանշական և ունենա լոկալական բնույթ: «Մենք զիջել կարող ենք ըստ ձևի, բայց ոչ ըստ էություն»¹, - Գիրսին հեռագրով ցուցում էր տալիս Սազոնովը: Երկու շաբաթ անց նույն հասցեով վերջինս գրում էր. «Կարծում ենք, որ դյուրություններ տալով Դոանը մեր ծրագրի ընդունման համար, մենք արել ենք ամենավերջին զիջումը և կղժվարանալինք առաջարկել նորը»²:

Ռուսական կողմը Բ. Դոանը միաժամանակ հայտարարում է, որ այդ զիջումը Թուրքիային անում է, որպեսզի նա անթերի կատարի հայկական բարենորոգումների ծրագիրը:

Իսկ գերմանական դիվանագիտությունը գնալով ավելի ու ավելի էր հակվում թուրքերին նկատելի զիջումներ կատարելու կողմը: Բեռլինում ռուսական դեսպան Սվերբեկի հետ ունեցած զրույցի ժամանակ Յիմերմանն ասում է, որ «այժմ պետք է խուսափել Դոանը նոր ցուցումներ տալուց»: Ռուսաց դեսպանը հակադրվելով նշում է, որ հայկական բարենորոգումների հարցը վերին աստիճանի մեծ նշանակություն ունի Ռուսաստանի համար, և նա չի կարող սկզբունքային զիջումներ անել: Մեղմելու համար լարված մթնոլորտը գերմանացի դիվանագետը դեսպանին խոստանում է անպայման հանդիպել Լոնդոնում գտնվող Թուրքիայի ֆինանսների նախարար Ջավիդ բեյի հետ և նրան պաշտոնապես հայտնել, որ Բեռլինը հաստատապես կանգնած է մնալու հայկական բարենորոգումների ծրագիրն անչեղ կատարելու տեսակետի վրա³:

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3464, л. 72.

² Նույն տեղում:

³ «Բարենորոգումները Հայաստանում», էջ 69:

Սվերբեկը Յիմերմանին տեղեկացնում է, որ տեսակցություն է ունեցել Ջավիդ բեյի հետ և նրան ասել, որ հանուր եվրոպայի և նույնիսկ իր՝ Թուրքիայի շահերի տեսակետից անհրաժեշտ է չհակառակել Հայաստանի համար ծրագրված բոլոր բարենորոգումների ներմուծմանը: Ջավիդ բեյը հակաճանդելով ասել էր, թե «ծրագիրը խախտում է Թուրքիայի վեհապետությունը և եթե չլինեին Ռուսաստանի որոգայթները Հայաստանում, Թուրքիան ինքը հեշտությամբ կարող էր ներմուծել բոլոր անհրաժեշտ բարենորոգումները»¹: Յիմերմանը Սվերբեկին հավաստիացնում է, որ, իբր, ինքը Ջավիդին պատասխանել է, թե միանգամայն բնական է Ռուսաստանի հետևողական դիրքը, որովհետև Կովկասում ապրում է բազմաքանակ հայ բնակչություն, որի շահերն արտահայտող Պետերբուրգի կայսերական կառավարությունն այլևս հնարավոր չի գտնում մտցնելու որևէ փոփոխումներ խորը մտածված և մշակված ծրագրի մեջ:

Սազոնովին հաղորդելով Յիմերմանի հետ այդ հանդիպման մասին՝ Սվերբեկը գրում էր. «... Ես կասկածում եմ իմ խոսակցի լիակատար անկեղծությունը և երկյուղ եմ կրում, որ միգուցե Ջավիդ բեյին նրա ասածները բավականին պարզ ու եռանդուն չեն եղել»²:

Բեռլինում ռուսական դեսպանի մտավախությունը զուր չէր: Հոկտեմբերի 26-ին Ռուսաստանի արտգործնախարարի տեղակալ Ներատովը հեռագրով տեղեկացնում է Գիրսին, որ Պետերբուրգում գերմանական հավատարմատարի հետ ունեցած զրույցի ընթացքում վերջինս, Վանգենհայմից նախապես ստացած լինելով հայկական բարենորոգումների մասին Թուրքական կառավարության պատասխանագիրը, աշխատում էր պաշտպանել նրա առարկություններն ու առաջարկությունները³: Իսկ Բեռլինի նույն ռուսական դեսպանը նոյեմբերի 3-ին Սազոնովին ուղղակի գրել էր. «Հայկական բարենորոգումների խնդրում

¹ «Բարենորոգումները Հայաստանում», էջ 69:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 70:

խոսք չի կարող լինել մեր և Գերմանիայի միաբան գործունեություն մասին ...»¹:

Բեռլինի ռուսական դեսպան Սվերբեկը մի քանի օր անց Սազոնովին հեռագրում էր. «Օգտվելով Ջավիդի հետ տեսակցության առիթից՝ շոշափել եմ Հայկական հարցը: Նա ծայրահեղ անդիջող էր: Նա հայտարարեց ինձ, որ Թուրքիայի ինքնիշխան իրավունքները խախտող այս հարցում Պորտայի կողմից չեն կարող տեղի ունենալ հետագա զիջումներ և որ ինքը չի հասկանում՝ ինչո՞ւ տերությունները մերժեցին եվրոպացի գլխավոր տեսուչներին սեփական ընտրությամբ նշանակելու՝ Օսմանյան կառավարության առաջարկը, որոնք օժտված կլինեին ամենալայն լիազորություններով, բայց, հավանաբար, կախված կլինեին Թուրքական կառավարությունից: Նա ասաց ինձ, որ չլինելով Կարինետի անդամը, ինքն ունի ավելի ազատորեն արտահայտվելու հնարավորություն: Նրա հայտարարությունն, ըստ երևույթին, երիտթուրքական կոմիտեի կարծիքն է: Յիմերմանն ապշած է Ջավիդի անդիջողությունից, որը հավանաբար արտահայտվում է նաև Գերմանիայի հետ տնտեսական բանակցություններում»²:

Այդ ամենը նշանակում էր, որ վիճակն իսկապես անորոշ է, և ոչ ոք ի գորու չէ կանխատեսելու բանակցությունների հետագա ընթացքը:

Փարիզում ռուսաց դեսպան Իզվոլսկին ընդունել էր մի քանի լրագրողների, որոնցից մեկը հարց էր տվել, թե համոզվածություն կա՞, որ չուտով Հայաստանում կձեռնարկվեն բարեփոխումների իրագործման գործնական քայլեր: Դեսպանը պատասխանել էր, թե Ռուսաստանի կողմից հարցի շուտափույթ լուծմանն աջակցելը ոչ մի կասկածի ենթակա չէ, բայց ինքնին այդ հարցը շատ բարդ է ու իր մանրամասներով դեռ չի հասունացել՝ հարուցելով Թուրքիայի էական առարկությունները: «Ես ավելացրի, - գրել էր նա Պետերբուրգ հղած հեռագրում, -

¹ «Բարենորոգումները Հայաստանում», էջ 73:

² ВПРИ, ф. "Политархив", г. 1913, д. 3465, л. 7.

Թե դեռ անհրաժեշտ է ավարտել հերթական՝ Ալբանիայի, հույն-թուրքական հարցերը, և որ անհնար է ավելի շուտ լուծել բոլոր հարցերը»¹:

Իզվոլսկու անորոշ պատասխանը անհանգստություն էր առաջ բերել հայ գործիչների մոտ, քանի որ նա Ալբանիային և Հունաստանին թվարկելիս չէր հիշատակել Հայաստանի անունը: Բայց այդ օրերին Փարիզում ստացվել էր հայերի համար սփոփիչ գոնե մի լուր:

Կովկասում իր գործունեություն մասին 1913 թ. հուլիսի 11-ին ցար Նիկոլայ II-ին զեկուցագիր ուղարկելուց հետո խիստ վատթարացել էր փոխարքա Վորոնցով-Դաչկովի առողջական վիճակը: Երկարատև բուժումից հետո նա վերջապես առողջացել էր և Կովկասից մեկնել Լիվադիա (Ղրիմ)՝ հանգստանալու:

Հոկտեմբերի 17-ին, բոլորովին կազդուրված, Լիվադիայից Թիֆլիս էր վերադարձել Վորոնցով-Դաչկովը: Այն ընդունելությունը, որ Թիֆլիսի բնակչությունը ցույց էր տվել Կովկասի փոխարքային, մինչ այդ քաղաքում աննախադեպ, արտասովոր բան էր: Հիմա փոխարքայի բազում հայ բարեկամները համոզված էին, որ նա կրկին նախկին եռանդով իր աջակցությունը կբերի Հայաստանի բարենորոգումների գործին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆԸ ԵՊԱՍՏԱԾ ԵՐԵՔ ՄԵԾԵՐԻ ՄԱՀԸ

1913 թ. աշնանը ընդամենը մի քանի օրում վախճանվեցին հայ հասարակական-քաղաքական կյանքի երեք նշանավոր գործիչներ, որոնք մեծ աշխատանք էին տանում Հայաստանի բարենորոգումների ծրագրի նախագծի առաջխաղացման համար:

1913 թ. հոկտեմբերի 15-ին Կ. Պոլսում իր բնակարանից «Ազատամարտ» թերթի խմբագրություն գնալիս Թաքսիմի հրապարակում «Աշխատանքի տան» առջև հանկարծամահ է

¹ АВІРІА, ф. “Политархив”, г. 1913, д. 3465, л. 8. (Նկատի ունեն նաև Հայաստանի բարենորոգումների հարցը):

լինում Դաչկանակցություն հիմնադիրներից Սիմոն Զավարյանը:

Հսկայական էր Զավարյանի վաստակը հօգուտ իր ժողովրդի Դատի: Նա հազվագյուտ անձնավորություն և բյուրեղյա մաքրություն կենդանի օրինակ էր: Միշտ պայքարի ու աշխատանքի մեջ, միշտ ծրագրերի ու նպատակների հետամուտ այդ մարդը հարազատ ժողովրդի ազատագրությունը նվիրաբերեց հույսերով ու երազներով բեղուն իր գիտակցական ողջ կյանքը:

Հանգուցյալը մշտապես ապրել էր նյութական կարիքի մեջ՝ միջնադարյան ճգնավորի պես ինքնազրկելով իրեն, բայց երբեք չէր դիմել այսօգ օգնությունը: Վերջին տարիներին Կ. Պոլսի կենտրոնական վարժարանում մի քանի դասեր վարելով՝ ջանում էր պահել իր նյութական համեստ անկախությունը:

Հայկական հարցի վերաբացման սկզբից Զավարյանը Կ. Պոլսում էր և ամեն ինչ անում էր իր նպատար բերելու նրա հաջողությունը: «Մեծ էր անոր ժողովրդականությունը, - գրում էր Վահան Փափազյանը: - Ծատերուն համար դեմքով անձանոթ՝ հնամաշ հագուստներով այդ տերվիչը սէր ու յարգանք ստեղծած էր թե բարձր և թե խոնարհ խաւերուն մեջ»¹: Նա մշտապես այցելում էր «Ազատամարտ»-ի խմբագրություն, խորհուրդներ տալիս խմբագրակազմին, թերթում տպագրում խմբագրականներ ու հոդվածներ օրվա հրատապ հարցերի շուրջ, այցելում էր պատրիարքարան, հանդիպում օտար գործիչների և եվրոպական թերթերի թղթակիցների հետ և այլն, և այդ լարված գործունեության կենտրոնում պահում իրեն հուզող գլխավոր՝ Հայաստանի բարենորոգումների հարցը:

Զավարյանի մահը խոր վիշտ էր պատճառել ողջ հայությունը: Մեծ հայրենասերի թաղման եկեղեցական արարողությունը կատարվեց Կ. Պոլսի Բերայի Ս. Երրորդություն եկեղեցում: Ականատեսը վերհիշել է. բազմահազար ժողովուրդ էր կուտակվել եկեղեցում և նրա շրջակայքում: Բոլորը հուզմունք էին ապրում: Ականատեսը գրում էր, թե նույնիսկ Դաչկանակցության հետևողական հակառակորդ «Բյուզանդիոն» թերթի խիստ պահպա-

¹ Վահան Փափազյան, Իմ յուշերը, հատ. երկրորդ, Բելյութ, 1952, էջ 267:

նողական խմբագիր Բյուզանդ Քեչեյանը, Զավարյանի դին տեսնելով, դառնագին արտասովում էր: Եկեղեցում և նրա շրջակայքում Կոմիտասը և Շահնուրադյանը երգում էին մի մեղանուշ շարական, լայիս էին բոլորն անխտիր: Կառավարությունն ուղարկել էր զինվորական վաչտ, որը պատվի էր կանգնել եկեղեցուց մինչև Թաքսիմի պարտեզ, զինվորական նվագախումբը մահերգ էր նվագում և հազարավոր մարդիկ գլխահակ հետևում էին դագաղին¹:

Սգահանդեսներ տեղի ունեցան հայկական զանազան գաղթօջախներում: Ալեքսանդրիայում կազմակերպված սգո արարողությունը բանախոսությունում հանդես գալով Զավարյանի հիշատակին՝ ուսման վար գործիչ Միհրան Տամադյանն ասել էր. «Մեզի ըսին թե Սիմոն Զաւարեան յանկարծամահ եղավ: Ըստ իս սխալ է Զաւարեանի մասին այս բացատրութիւնը: Զաւարեան յանկարծամահ չեղաւ, այլ շնչասպառ, հեւասպառ, ոգեսպառ ու արիւնաքամ եղաւ: Քսանրհինգ տարիէ ի վեր ամէն օր իր շունչէն, իր կեանքէն, իր ոգիէն, իր կորովէն, իր արիւնէն մաս մը, կաթիլ մը կը զոհէր հայրենիքի փրկութեան սեղանին վրայ, անիկա հայ յեղափոխութեան անկէզ մորենին էր, հայ ժողովուրդին մշտավառ կանթեղը, հայ ազատագրութեան մշտալոյս փարոսը»²: Իսկ Դաշնակցության «Աշխատանք» թերթին տված իր ցավակցական խոսքում նա գրել էր. «Անիկա կ'անհետանայ այսօր՝ լուսեղէն ակօս մը թողած տառապանքի դաշտին վրայ, ուր աշխատեց մշակին պէս լուռ, գեղջուկին պէս անտրտուն»³:

Իթիթիհաղի ղեկավարությունը թույլ տվեց, որ Զավարյանի մարմինը գետեղվի Բաթում մեկնող նավի վրա: Հայերը հանգուցյալի դին Կովկաս ճամփեցին մեծ թափորով ու բազմաթիվ սգո ճառերով: Սգակիր թափորի մեջ էին Զեմալ Ազմին, Բեհաէդդին Շաքիրը և իթիթիհաղական ուրիշ ոխերիմ հայատյացներ, որոնք Զավարյանի դագաղին հետևում էին կեղծ արցունքն

աչքերում: Ականատեսը վերհիշել է, որ «ամէն պաշտօնական դիրուժին տրւած էր յուղարկաւորութեան շուքին համար, ու Զինւորական Ակադեմին ղրկած էր իր նւագախումբը ուղեկցելու համար սուգի թափորին, որուն նմանը տեսած չէ ու պիտի չտեսնէ հայ ժողովուրդը: Եւ ո՛վ գիտե ինչեր զգացին եւ բոլոր անոնք որ ներկայ եղան Զավարեանի թաղման, երբ տեսան հայ ժողովուրդը՝ այսպէս վիթխարի եւ այսպէս վսեմ իր սուգին մէջ»¹:

«Սիմոն Զաւարեան» վերնագրով ժողովածուի (Ա հատոր, Բեյրութ, 1983) նյութերն ընթերցողներին պատկերացում են տալիս, թե Կ. Պոլսից մինչև Բաթում, Սև ծովի եզերքի բնակավայրերում, հանգրվանից հանգրվան, իսկ հետո Բաթումից Թիֆլիս հայերն ինչպիսի ցնցող վերաբերմունք էին ցուցաբերում հանգուցյալի նկատմամբ:

Սիմոն Զավարյանի դագաղը դրվեց Թիֆլիսի հայոց Մայր եկեղեցում, ապա մեծահանդես արարողություններից հետո փոխադրվեց Խոջեվանք և հուղարկավորվեց այնտեղի գերեզմանոցում: Նրա դին այդտեղ էին բերել հայ ժողովրդական բոլոր խավերի ներկայացուցիչները: Թեև իշխանությունները հուղարկավորության ժամանակ արգելել էին որևէ ճառախոսություն, բայց մարդկային հսկա բազմություն ներկայությունն ինքնին խոսում էր այն վիթխարի հեղինակության մասին, որ հանգուցյալն ուներ հարազատ ժողովրդի զանգվածներում:

Զավարյանի մահվան օրից սկսած և հետագա օրերին ու շաբաթներին ամենքը՝ դաշնակցականը թե բոլշևիկը, պահպանողականը թե ազատականը խոր ափսոսանք էին արտահայտում բարոյականության տիպար այդ մարդու կորստի առթիվ: Անզուգական մարդու մահվան գույժին այսպես է արձագանքել Հովհաննես Թումանյանը. «Շատ հազարների մեջ մինը կարող է լինել ազնիվ և անկեղծ: Էս տեսակ հազվագյուտ մարդկանցից մեկն էր Սիմոն Զավարյանը»²: Պոետը վկայում էր, որ իր շրջա-

¹ Վահան Փափագեան, Իմ յուշերը, հատ. երկրորդ, Պեյրութ, 1952, էջ 268-269:

² «Յուսաբեր» (Կահիրե), № 178, 25 դեկտեմբերի 1913 թ.:

³ «Աշխատանք» (Վան), № 49 (145), 20 հոկտեմբերի 1913 թ.:

¹ «Վէմ», № 1, հունվար-ապրիլ, 1935, էջ 25-26:

² «Հորիզոն», 17 հոկտեմբերի 1913 թ.:

պատում գիտի միայն մի մարդու, որը «անխիղճ կերպով իրեն գրկում էր ամեն վայելքից»¹: Դա Ջավարյանն էր²: «Իմ կարծիքով էս հազվագյուտ հատկություններն էլ բավական են, որ մարդ սիրվի ամեն տեղ»³:

Այդ մեծ կորուստն իրենցն էին համարում քաղաքական հակընդդեմ հայացքներ ունեցող հակադաշնակցական բազմաթիվ գործիչներ՝ հնչակյան Ավետիս Նազարբեկը, ազատականներ Համբարձում Առաքելյանը, Արչակ Չոպանյանը և ուրիշներ: Դաշնակցությունը երեք հիմնադիրներից մեկի մահը խոր ցավ էր պատճառել բուլղարի կուսակցության ականավոր գործիչ Ստեփան Շահումյանին, որը հանգուցյալի նկատմամբ ունեցած իր զգացմունքները հրապարակ էր հանել մամուլով:

Մեծ հայի մահը ցնցել էր նրա ջերմ բարեկամ Ավետիք Իսահակյանին: «Սիմոն Ջավարյանի նվիրական հիշատակին» բանաստեղծություն մեջ, արժևորելով թանկագին ընկերոջ կյանքի ուղին, նա գրում էր.

Ուարագանեց ամեն սուտը ու վատը,
Լացեց ամեն տառապողի լացի հետ,
Կյանքով կոփեց ազատության լույս-դատը,
Եվ չփնտրեց նենգ փախուստի արահետ:

...

Եվ չունեցավ գլուխ դնելու մի չոր քար,
Ձեռք չմեկնեց ո՛չ ընկերի, ո՛չ եղբոր,
Ինչ որ ուներ, տարավ մոտիկն ու օտար,
Իրեն մնաց մի սիրտ անտո՛ւն, վիրավոր:

Իսկ Սիամանթոն Ջավարյանին նվիրված բանաստեղծություն մեջ ունի այսպիսի տողեր.

¹ Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու. 10 հատորով, հատոր VII, էջ 100:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 102:

Լոյսին վազող առաքինի, լոյս բաժանող հայրենասեր,
Լոյսին դիմաց ծնրադիր և լոյսին համար մահացող մարդ...

Հոկտեմբերի 20-ին իր կյանքի ուղին ավարտեց հասարակական մեկ այլ մեծ գործիչ՝ «Մշակի» երկարամյա խմբագիր Ալեքսանդր Քալանթարը: Օրը կիրակի էր, առավոտյան խուռներամ ժողովրդի և բազմաթիվ մտավորականների հետ Քալանթարը ևս գնացել էր Թիֆլիսի Նոջեվանքի գերեզմանատուն՝ Րաֆֆու մահվան 25-ամյակի (1888-1913) առթիվ նրա շիրիմին հարգանքի տուրք մատուցելու արարողությունը մասնակցելու: Եվ ահա այստեղ նա հանկարծամահ է լինում և մի քանի օր հետո նույնպես ամփոփվում Նոջեվանքի գերեզմանատանը:

Քալանթարի մահը մեծ հարված էր կովկասահայության ազատական հոսանքին: Հանգուցյալի բազմաթիվ բարի գործերի թվում հատկապես առանձնանում են Գրիգոր Արծրունուց հետո «Մշակի» խմբագրի պաշտոնի ստանձնելը և պատվով կատարելը*:

Հայկական մամուլը լցվեց հանգուցյալի կյանքի և գործի մասին հոգովածներով ու նյութերով: Նրանք հիշեցնում էին, որ լինելով տաղանդավոր հրապարակախոս և նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ, հանգուցյալը նաև իր հնարավորությունների սահմաններում կատարել է բազմաթիվ բարեգործություններ. մասնավորապես նրա ֆինանսական աջակցությամբ երևանի և Թիֆլիսի նահանգների հայկական մի շարք գյուղերում բացվել էին տարրական դպրոցներ: Քալանթարը մահացավ այն ժամանակ, երբ հայոց Հայրապետի հատուկ

* Ալ. Քալանթարը, որպես խմբագիր-հրատարակիչ, «Մշակը» ստորագրել է 1892 թ.-ից մինչև 1911 թ. հունվարի 30-ը (№ 19-ը), նրան մի կարճ ժամանակ հաջորդել է պարբերականի գլխավոր մեկնաբան-խմբագիր Համբարձում Առաքելյանը՝ 1911 թ. հունվարի 30-ից (№ 20-ից) մինչև նույն թվականի մարտի 23-ը (№ 61-ը): Դրանից հետո «Մշակը» դարձյալ խմբագրել է Ալ. Քալանթարը, որի վախճանից հետո խմբագիր-հրատարակիչի պաշտոնը 1913 թ. հոկտեմբերից դարձյալ ստանձնել է Համբարձում Առաքելյանը:

հանձնարարությունը Համբարձում Առաքելյանի և Թիֆլիսահայ մի քանի ուրիշ գործիչների հետ նա ձեռնարկել էր հայրենի հողի վրա մի բարձրագույն կրթական օջախ հիմնելու աշխատանքները: Նա ոչ միայն կազմել էր համալսարանի ստեղծման ծրագիրը, այլև ստանձնել էր հովանավորելու այն իր ունեցած ֆինանսական միջոցներով, ինչպես նաև այդ գործով շարժել հայ մեծահարուստների, հատկապես Բաքվի հայ նավթարդյունաբերողների ու գործարանատերերի հետաքրքրությունը, որոնց թվում էին նաև իր բազմաթիվ բարեկամներն ու երկու եղբայրները: Մյուս երկու եղբայրները նույնպես, որոնք ապրում էին Պետերբուրգում և Մոսկվայում, խոստացել էին ֆինանսական լուրջ աջակցություն*:

Այլ Քալանթարի մահով այդ ժամանակ Երևանի նահանգում բարձրագույն ուսումնական հաստատություն հիմնելու փորձը ձախողվեց**:

Հայկական մամուլի համարյա բոլոր օրգանների ուշադրություն կենտրոնում են ջնջեցալի՝ իբրև հրապարակախոսի եռուն գործունեությունն էր:

Մեծարժեք էին «Մշակի» էջերում պարբերաբար լույս տեսած նրա առաջնորդող խմբագրականները: Հայկական հարցի վերաբացման առաջին օրերից մինչև իր մահը նա Թերթի էջերում հանդես էր գալիս տերությունների ներկայացուցիչների գործողությունների լուսաբանմամբ ու մեկնաբանություններով, մյուս կողմից՝ խորհուրդներ էր տալիս և առաջարկություններ անում բանակցությունների մասնակիցներին՝ Ազգային պատվիրակությանը, էջմիածնին, Կ. Պոլսի պատրիարքարանին, Ազգային բյուրոյին:

Ընթերցողներն անհամբերությամբ էին սպասում Թերթի խմբագրի առաջնորդող հոդվածներին, որոնցում նա խոր վերլուծության էր ենթարկում բանակցությունների ընթացքը,

* Քալանթարի բոլոր ութ եղբայրները ավարտել էին եվրոպական կամ ուսական համալսարաններ, բոլորն էլ հասել էին բարձր դիրքերի:

** Միայն տարիներ անց՝ Հայաստանի առաջին Հանրապետության օրոք (1919 թ.), հնարավոր եղավ իրականացնել հայ մտավորականության իդար:

զգուշացնում Թուրքիայի ու նրա դաշնակիցների դիվանագիտական հնարավոր նորանոր խարդավանքներից, մյուս կողմից՝ փարատում էր ընթերցողների անհանգստությունը, թե ենթարկվելով Թուրքիայի բարեկամ Գերմանիայի ճնշումներին՝ Պետերբուրգն ի վերջո տեղի կտա և կհրաժարվի հայկական բարդ հարցի ծանրությունը կրելուց:

Բարենորոգումների շուրջ ընթացող բանակցությունների ընթացքը Թերթի էջերում լայնորեն լուսաբանելու համար Այլ Քալանթարն ավելացրել էր հատուկ թղթակիցների հաստիքները: Թերթն արդեն մի քանի թղթակիցներ ուներ Թուրքիայի գանազան վայրերում, այդ թվում՝ Թուրքահայաստանի նահանգներում, որոնք Թիֆլիս էին հաղորդում ամենաթարմ տեղեկություններ: Թերթի թղթակիցները ջանադրաբար գործում էին նաև Ռուսաստանում և եվրոպական երկրներում:

Իր էջերում թարմ ու ճշգրիտ տեղեկություններ պարունակող «Մշակը» ձեռքից ձեռք էր անցնում:

Քալանթարի շիրիմի վրա պսակները դեռ չէին թառամել, երբ Բաքվում հոկտեմբերի 23-ին կյանքից հեռացավ Թիֆլիսի քաղաքագույուս Ալեքսանդր Ռատիսյանի ավագ եղբայրը՝ Ն. Յ. Դաշնակցության առաջին սերնդի նշանավոր ներկայացուցիչներից Կոստանդին Ռատիսյանը:

Կ. Ռատիսյանը բարձր դիրք էր գրավում Բաքու քաղաքի հասարակական կյանքում և ոչ միայն հայկական միջավայրում: Պայծառ խելքի և պերճախոս լեզվի տեր լինելով՝ խոսում էր կրակոտ, մարդկանց գրավում երիտասարդական խանդավառությամբ: Նրա դյուրաշարժությունից չէր երևում, որ գլորել է տասնամյակներ:

Անցյալ դարի 90-ական թվականների սկզբներից հատկապես Բաքվի հայության շրջանում չէր եղել որևէ կարևոր իրադարձություն, որին իր մասնակցությունը բերած չլիներ հանգուցյալը:

Անցյալ դարի 80-ական թվականների վերջերից սկսած՝ Կ. Ռատիսյանի գլխավոր հոգսերից մեկը Ռուսահայաստանի տեղի (տարածքի) ճշտումն էր: Նա գտնում էր, որ Բաքվում և Ելիզավետպոլի նահանգի որոշ գավառներում մուսուլմանների թվի

գերազանցություն պատճառով հայերն ապագա չունեն, և որ նրանք պարտավոր են աստիճանաբար, բայց ոչ դանդաղ, իրենց հարստությունները տեղափոխել թուրքահայաստանին սահմանակից Երևանի նահանգ՝ այն պատճառաբանությամբ, որ հայերն այստեղ ապրում են հոծ զանգվածներով, և որ հենց այդ տարածքն է, որ ապագայում դառնալու է հայկական ազգային պետության կորիզը¹:

4. Սատիսյանի մահվան առթիվ գրած «Ողոր հայր» վերնագրով հոդվածում Հովհաննես Թումանյանը շեշտում էր, որ նա «մի ուժեղ անձնավորություն էր, մի խոշոր, ինքնատիպ դեմք, որ ջոկվում էր բազմությունների միջից»: Նա «հայությունը կրում էր ինչպես մի սրբազան դրոշակ, բռնած իր գլխից շատ վեր ի տես ամբողջ աշխարհի ... ամեն տեղ նրա ներկայությամբ քաշվում էին դիպչել հայությունը: Մինչև անգամ մեր տանը, նրա եղած ժամանակ, զգուշանում էինք, չլինեք թե մի որևէ բանով մեղանչեինք հայության դեմ ու վրդովեինք մեր սիրելի Կոստիսին: Իսկ նրա վրդովվելը՝ Աստված հեռու տաներ, հարձակվում էր վարագի նման և չափ ու սահման չէր ճանաչում»:

Մեզ նման մի դիմազուրկ եղած ժողովրդի մեջ, ուր շատերը ամաչում են իրենց հայ լինելուց և ամեն քայլափոխում դեմո են ելնում անգույն ու անբովանդակ «անազգի» մարդկանց տիպերը, նա մի եզակի մարդ էր, երևույթ էր:

Իբրև գործիչ՝ մարմնացած անհանգստություն էր: Ուր գնում էր, տակն ու վրա էր անում, շարժում էր, և միշտ դեպի առաջ: Դեռ ուսանողության օրերից, ութսունական թվականների վերջերից, հայտնվում է նա իր ամբողջական բնավորությամբ: Ու՛վ չի հիշում էն ժամանակվա Պետերբուրգի ուսանողության տենդային գործունեությունը ... Կովկաս վերադառնալով, նա նվիր-

վեց ազգային-հասարակական գործունեության, հանդիսացավ հայկական նոր շարժման նախաձեռնողներից մինը, եղավ Դաշնակցության հիմնադիրներից մեկը, և մինչև վերջին շունչը չղաղարեց գործելուց»¹:

Հայկական հարցի վերաբացման օրերին Կ. Սատիսյանն ամբողջովին կերպարանափոխվել էր՝ կրկնապատկված եռանդով ծավալելով լայն գործունեություն ոչ միայն Բաքվում, այլև Թիֆլիսում: Նա օրերով դուրս չէր գալիս Հայ ազգային բյուրոյի նստավայրից, օգտագործում էր Կովկասի փոխարքայության պաշտոնյաների հետ իր ունեցած լայն կապերը՝ նրանց տրամադրելով իրենց հնարավորությունների չափով օգտակար լինել թուրքահայաստանի բարենորոգումների ընթացքին, ջանալ հայանպաստ մթնոլորտ ստեղծել իրենց շրջապատում: Կ. Սատիսյանը իր ջանքերը կենտրոնացրել էր հատկապես Կովկասի փոխարքայության ավանդաբար հակահայ քարոզչություն տանող մամուլի էջերում չեզոքացնելու աննպաստ հրապարակումները: Օգտագործելով իր ծանոթությունները Պետերբուրգի և Մոսկվայի քաղաքական շատ գործիչների հետ՝ նա կարողանում էր ուսուսական մամուլի զանազան օրգաններին շահագրգռել ավելի հաճախ տպագրել թուրքահայաստանի հայ ժողովրդի անտանելի դրության մասին և դրանով իսկ նպաստել Հայաստանի բարենորոգումների գործընթացին:

Օրերի ընթացքում տեղի ունեցած այդ եռյակ անակնկալ մահերը տևական սգի մատնեցին Հայ հասարակության տարբեր շերտերի: Նրանց հիշատակին հայ և օտար մամուլը օրեր շարունակ տպագրում էր ներբողներ, հուշեր, կենսագրականներ և այլ նյութեր:

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237^{III}, վավ. 259:
^{*} Հայ իրականության մեջ գործող բոլոր ազգային-հեղափոխական կուսակցությունները (ՀՅԴ, Հնչակ, Վերակազմյալ Հնչակ) իրականում ազգայնական էին, հետևապես ազգայնական էին նրանց բոլոր անդամները: Մեզանում չկային ազգայնամուլ գործիչներ: Բացառություն էր Կոնստանտին Սատիսյանը, մեր կարծիքով՝ միակ հայ ազգայնամուլը:

¹ Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հատոր VII, էջ 101-102:

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇՈՒԿԱՆ ՆՈՐ ՇԱՐԺՈՒՄ

Հայաստանի բարենորոգումների գործընթացին նպաստելու համար Հայաստանի ամեն կողմից ձայներ էին լսվում ազգային բացարձակ համերաշխություն հաստատելու անհրաժեշտության մասին: Ընդհանուրի պահանջն էր. անկախ կուսակցական պատկանելությունից և սոցիալական դրությունից՝ միմյանց ձեռք մեկնել, ամեն ջանք գործ դնել՝ վերացնելու այն բոլոր մանր ու անպտուղ վեճերը, միջկուսակցական ապարդյուն ու վնասակար պայքարները, որոնք տարիներ ու տարիներ պառակտված էին պահում հայկական հասարակությունը՝ պատճառ դառնալով ուժերի ամուլ վատնումի: «Մերձեցում և համագործակցություն» նշանաբանով ամենուր մեծ ցանկություն էր առաջացել համախմբվել Հայկական Դատի շուրջ, միասնաբար ու ներդաշնակ առաջ մղել Հայաստանի բարենորոգումների խնդիրը, որի իրականացումը կենսականորեն անհրաժեշտ կլիներ թե՛ ժողովրդի և թե՛ Օսմանյան պետության չահերի տեսակետից: Խնդիր էր դրվում նաև միջկուսակցական համերաշխական շարժման մեջ ընդգրկել հայ հասարակության անկուսակցական, չեզոք շրջանները ևս, որպեսզի հայության կենսունակ ու կառուցողական բոլոր ուժերն ու հոսանքներն ի վիճակի լինեն ծառայելու գլխավոր նպատակին՝ երկրի վերաշինությանը և հայ ժողովրդի համար բարօր կյանքի ստեղծմանը:

Ամիսներ առաջ թուրքահայության ջանքերը համատեղելու առաջին քայլերն էին արվել Եգիպտոսում, Կիլիկիայում, Վասպուրականում, Բալկաններում՝ արժանանալով ժողովրդի համակրանքին ու աջակցությանը և մամուլի օրգանների խրախուսանքին:

Միջկուսակցական և համազգային համերաշխություն ստեղծելու ճանապարհին լավագույն օրինակ էր տվել Իզմիրի հայությունը: Հայ երեք քաղաքական կուսակցությունների, կազմակերպությունների՝ Դաշնակցության Իզմիրի կոմիտեի, Հնչակյան Իզմիրի մասնաճյուղի և Սահմանադիր-առավարների տեղի ակումբի միացյալ ժողովը մտքերի լայն փոխանակումից հետո աստեղծել էր Միջկուսակցական մարմին, որն այսուհետ պիտի

գործեր համերաշխության նշանաբանով:

Թուրքահայոց համերաշխ գործակցություն կարիքը գուցե երբեք այնքան կենսական չէր եղել, որչափ այդ շրջանում, քանզի հասել էր բուսեն, երբ տերությունները և, առաջին հերթին Ռուսաստանը, աշխատում էին Հայաստանում իրականացնել վաղուց երազած բարենորոգումները:

Ամենայն հայոց կաթողիկոսը բարենորոգումների ծրագիրը կազմելու ողջ ժամանակամիջոցում թուրքահայերին շարունակ հորդորում էր աշխատել ամեն կերպ համերաշխ ընթանալ՝ հանուն գործի հաջողության: Իր կոնդակներից մեկում նա զգուշացնում էր, որ օրախնդիրը կարող է ցանկալի լուծում ստանալ, «եթե ամենայն քաղաքական կուսակցությունը հայոց միաբանեալ ընդ միմեանս, համերաշխ եւ սրտեռանդն ոգւով աշխատ լինին վասն ապահովութեան Հոգեւոր որդւոց Մերոց Տաճկահայաստանի, որք, տարաբախտաբար, կան յանմխիթար եւ յանապահով վիճակի: Ապա՝ ի յուշ ածեալ Մեր զգառնագին պայմանս գոյութեան նոցա, զանապահովութիւնս կենաց, ընչից եւ պատուոյ եւ զանկարագրելի թշուառութիւնս, տառապիմք եւ վշտանամք ի սիրտ եւ ի հոգի, սակայն զարդիս տեսանելով զհամերաշխ եւ զմիաբան գործակցութիւն յազգային գործս զաւակաց Մերոց առանց խտրութեան քաղաքական եւ կրօնական համոզմանց, սփոփիմք եւ վիշտն Մեր մեղմանայ եւ յոյսն զօրանայ, քանզի արդարեւ միմիայն միաբան ոգւով, հեռատես եւ համերաշխ գործունէութեամբ ամենայն գործչաց հայոց, հիմունք ազգային կենաց մերոց լինիցին հաստատ եւ անդրդուելի եւ յառաջադիմութիւնն առողջ եւ անսայթաք, զի գուգութիւն է մայր ամենայն բարեաց»¹:

Հայտարարության մեջ նշվում էր, որ Միջկուսակցական մարմինը որոշել է առաջիկայում ընդունել համատեղ գործելու հատուկ ծրագիր, որով կճշտվեն երեք կուսակցությունների փոխադարձ հարաբերությունների սահմանները, որպեսզի կարելի լինի հնարավոր ներքին պառակտումների ու թշուրհիմացությունների առաջն առնել և ներդաշնակություն մտցնել կուսակցական հանրային մարմինների աշխատանքներում:

¹ «Արարատ», № 4, ապրիլ, 1914, էջ 328:

1913 թ. վերջերին, երբ Հայկական հարցը դեռ հարափոփոխ քննարկումների փուլում էր, խորհրդակցական մի շարք ժողովներից հետո ՀՅ դաշնակցությունն արևմտյան բյուրոն, Ս. Գ. հնչակյան կուսակցության Թուրքիայի կենտրոնական վարիչ մարմինը, Սահմանադիր ռամկավարների կենտրոնական ակումբը, վերակազմյալ հնչակյան կենտրոնի վարչությունը եկան այն համաձայնություն, որ տվյալ պահին Թուրքահայ քաղաքական ուժերի համար ջանքերի խելացի համադրումը այլընտրանք չունի, և որ պետք է բոլոր հնարավորություններն ի սպաս դնել Հայկական բարենորոգումներին, որոնց իրականացումը գերազանցապես անհրաժեշտ է թե՛ ժողովրդի և թե՛ պետության շահերի տեսակետից: Ընդունված հայտարարագրով առաջիկա ամիսների համատեղ գործակցության կարևորագույն խնդիրն էր համարվում «Համերաշխօրէն ընթանալ օսմ. երեսփոխանական ընտրությունաց եւ պառլամենտական խնդիրներու մէջ»¹:

Հայտարարագիրը, որով նվիրագործվում էր երկար սպասված համերաշխությունը, ջերմ ու անկեղծ ընդունելություն գտավ թե՛ կուսակցական և թե՛ արտակուսակցական խավերում: Դա պատահական չէր, քանզի Հայ ժողովուրդն իր փշոտ ճանապարհին վաղուց էր փափագում, որ իր ներսում գործող քաղաքական ուժերը, վերջապես, ձեռնարկեն տևական համերաշխ գործակցություն:

Պատմության եզակի դեպքերից մեկն էր, որ Հայ քաղաքական ուժերը միավորվում էին: Այդպիսի մի կարճատև համախումբ տեղի էր ունեցել ամիսներ առաջ, որի մասին խոսել ենք վերում: Այժմ, ուրեմն, հայերը միակամ էին և ունեին հստակ նպատակ՝ համատեղ աջակցել բարենորոգումների ծրագրի ընդունմանը, ապա և՛ իրականացմանը:

Հայ քաղաքական ուժերը պարզ գիտակցում էին, որ իրենք չեն կարող անմիջական ազդեցություն ունենալ բանակցային գործընթացի վրա, բայց գոնե բանակցողները պետք է տեսնեին, որ ամբողջ ազգը միակամ է իր իրավունքները պաշտպանելու գործում:

¹ «Մարտ» (Մոսկվա), № 2, 12 հունվարի 1914 թ.:

Թուրքահայաստանից ստացված թղթակցություններից հեղինակը չեչտում էր, որ բոլորն այժմ ձգտում են «ջանք ու աշխատանք չխնայել մեջտեղէն վերացնելու բոլոր սին ու վնասակար վեճերն ու ընդհարումները, որոնք տարիներ ու տարիներ պառակտման եւ հետեւաբար ուժերու ամուլ վատնումի պատճառ են եղած, անկեղծօրեն ձգտիլ համերաշխական այս շարժման կապելու հայ հասարակութեան անկուսակցական շրջանները, որպեսզի բոլոր կենսունակ եւ շինարար ոյժերը, բոլոր հոսանքները կարող ըլլան ծառայելու զլիսավոր նպատակին-երկրին եւ հայ ժողովրդին՝ անոր սահմանադրական և ազգային իրավունքներու ամրապնդման համար»²:

Քաջալերիչ էր, որ թեև մեծ ուշացումով, բայց, այնուամենայնիվ, սկսված համերաշխական շարժումը չէր սահմանափակվում կուսակցական շրջանակներով: Խորհրդակցության մասնակիցները հիշատակում էին, որ ամիսներ առաջ համերաշխության մասնակի ձեռնարկներ են եղել և՛ երկրի ներսում, և՛ գաղութներում, որոնք հավանության էին արժանանում հայության բոլոր հատվածներում: Ուստի, ասում էին նրանք, ոչ ոք կասկած չպիտի ունենա, որ միջկուսակցական ներկա համերաշխությունը ջերմ ու անկեղծ ընդունելություն կգտնի կուսակցական թե արտակուսակցական բոլոր շերտերում: Ամենքը համոզված էին, որ «այլևս ոչ մէկ երկդիմութիւն, ոչ ալ քայքայիչ յոռետեսութիւն: Ընդհակառակը: Այս շարժումը, որուն իրագործման վաղուց փափագող է հայ ժողովուրդը, պէտք է իր արդեն փշոտ ճամբուն վրայ գտնե բոլորին կողմէ - կուսակցական թէ՛ չեզոք, մտավորական թէ՛ աշխատավոր, վաճառական թէ՛ արհեստավոր - անկեղծ համակրանք, խորունկ յարգանք ու գործնական աջակցութիւն³: Ուստի անհրաժեշտ համարվեց լայն աշխատանքներ տանել հասարակության զանազան չեզոք խավերի մեջ, որպեսզի սկսված շարժումը դառնա համաժողովրդական, «նոյնքան սիրելի չեզոք հասարակութեան, որքան և կուսակցական շարքերու համար»³:

¹ «Մշակ», № 3, 5 հունվարի 1914 թ.:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

Առաջարկությունն արվեց մի ներքին կանոնագրով մանրամասնել ձեռք բերված միջկուսակցական համաձայնության նպատակը, ընդլայնել կուսակցական փոխադարձ հարաբերությունների սահմանները, բարձրացնել միջկուսակցական միջնորդ ատյանների դերը, որպեսզի կարելի լինի նոր պառակտումների և թյուրիմացությունների առաջը ժամանակին առնել, կուսակցական հարաբերությունների մեջ մտցնել կայուն ներդաշնակություն: Այդ մանրամասնությունները կուսակցությունների ղեկավար մարմինները պետք է հաղորդեին տեղական կազմակերպություններին, որպեսզի ամեն տեղ կուսակցական շարքերն ընթանային այն ուղիով, որը կհամապատասխաներ հիմք դրված համերաշխության ոգուն և նպատակին:

Հայ կուսակցությունների համերաշխությունը ենթադրում էր գործողությունների համահունչ փոխհամաձայնեցում, որպեսզի հնարավոր լիներ առաջ մղել տվյալ պահին հայությունը ամենահուզող՝ բարենորոգումների խնդիրը:

Պետք է շեշտել, որ, ի պատիվ թուրքահայերի, այդ ամիսներին գոնե որոշ չափով պահպանվել էր ազգային համերաշխ գործակցությունը թե՛ Պոլսում և թե՛ գավառներում: Եվ հենց տարբեր հոսանքների համատեղ գործունեությունն էր, որ զգալի չափով նպաստեց բարենորոգումների ծրագրի հանդես գալուն: Պողոս Նուբարը մի առիթով հայտարարել էր, թե «մեր գործի յաջողութեան շատ նպաստեց նաև կուսակցութեանց համերաշխ գործունեութիւնը»¹:

¹ «Արարատ», № 4, ապրիլ, 1914, էջ 328: Նկատենք, որ հայկական կուսակցությունների համերաշխ գործակցությունը եթե է՛լ ավելի սերտ լիներ, ապա գուցե թուրքահայերի համար ստեղծվեր բարենորոգումների ավելի գոհացուցիչ ծրագիր, քան կար հրապարակի վրա: Ցավոք, նրանցից յուրաքանչյուրը, ըստ էության, շարունակում էր գործել համաձայն իր քաղաքական ըմբռնումների:

“Русские Ведомости” թերթի 1913 թ. № 276-ում Ալեքսեյ Զիվելեգովը «Երիտասարդ թուրքերը, Եվրոպան և հայերը» վերտառությունում հոդվածում, անդրադառնալով թուրքահայաստանի բարենորոգումների հարցի զարգացումներին, գրում էր. «Քրդական ասպատակությունների ու հափշտակումների և թուրքական հարստահարումների մասին հայերի բոլոր գանգատները, ինչպես միշտ, այսօր նույնպես մատնված են անուշադրության: Հայկական վիլայեթներում թագավորում է այնպիսի կամայականություն, որ չի տարբերվում համիդյան օրերի մղձավանջից: Բայց հենց որ մեծ պետությունները համաձայնության եկան և մշակեցին պահանջների ընդհանուր ծրագիր, ներքին գործերի մինիստրությունը հանկարծ համակվեց արտակարգ համակրությունը դեպի հայերը: Ոչ մի կասկած չկա, որ Բ. Դուռը այժմ հոժարելու է շատ բան խոստանալ հայերին»²:

Հայոց նորընտիր պատրիարք Զավեն սրբազանին սիրաշահելու և իր կողմը գրավելու համար Բ. Դուռը նրան խորհուրդ տվեց մեկնել Հայաստանի նահանգները և սեփական աչքերով տեսնել, թե այդտեղի թուրք բնակչությունն ինչպիսի «անկեղծ սեր է տածում եղբայր հայերի հանդեպ ընդհանրապես և հայոց հոգևոր առաջնորդի նկատմամբ՝ մասնավորապես»²:

Հոկտեմբերի կեսերին պատրիարքը Կ. Պոլսից ուղևորություն է վերցնում դեպի Հայաստան: Երիտթուրք կառավարությունը ներքին գործերի նախարարի միջոցով գավառական իշխանություններին նախապես խիստ հրահանգավորել էր պատրիարքին ընծայել բոլոր պատիվները:

Ժամանելով էրզրում՝ Զավեն պատրիարքն այնտեղ գտնում է փառահեղ ընդունելություն ոչ միայն հայերի, այլև թուրքերի կողմից:

Հոկտեմբերի 21-ին պատրիարքը էրզրումից մեկնել էր Բա-

¹ “Русские Ведомости”, № 276, 1913 շ.

² «Մշակ», № 267, 30 նոյեմբերի 1913 թ.:

բերդ: Նրան ճանապարհող էրգրումցինների խուռն բազմութունները լցվել էին փողոցները: Քաղաքի դռան մոտ շարք էին կանգնել հայկական և թուրքական դպրոցների աշակերտները, թուրք արհեստավորական վարժարանի սաներն՝ իրենց նվազախմբով, մի ջոկատ զինվորներ և այլք: Նահանգապետ Ռեչատ բեյը պատրիարքին բարի երթ մաղթելուց հետո պարտք համարեց նրան ուղեկցել մեկուկես ժամ, իսկ քաղաքային և զինվորական պաշտոնյաները բազմաթիվ թիկնապահների ուղեկցութամբ պատրիարքին հասցրին էրզրումից երեք ժամվա հեռավորության վրա գտնվող Իլիջա գյուղը:

Հաջորդ օրերին պատրիարքն անցավ Թուրքահայաստանի նահանգներով, դարձավ կենդանի վկա Հայաստանի արգահատելի վիճակի: Հայության կյանքը նա հատկապես աղետալի տեսավ Բաղեչի նահանգում, ուր իշխանությունն ու կեղեքիչները գործում էին ձեռք ձեռքի: Հասնելով Դիարբեքիր և տեսնելով նույն վիճակը՝ սրբազանը բռնում է հետդարձի ճանապարհը: Դարձյալ պակաս չեղան թուրքերի «համակրական» ցույցերը, «պատիվներն» ու շողոքորթությունները, որոնք նրան ուղեկցում էին Դիարբեքիրից մինչև Կ. Պոլիս¹:

Կառավարության կողմից հայոց պատրիարքին ընծայված այս արտակարգ պատիվների և ընդունելությունների առիթով թուրքերի մոտ, նույնիսկ նրանց գիտակից թվացող մտավորական և զինվորական շրջաններում ծայր էին առել տրտունջներ: Նրանք դժգոհում էին, որ հայերին սիրաշահելու համար սարքված ցույցերի ու համակրանքի չափն անցնում է, որ կառավարութանը պատիվ չի բերում այդքան քծնել և ստորանալ մի էրմենի գյավուրի առջև, թեկուզ նա պատրիարք է:

Բայց թուրքերից առավել փորձվածները լավ հասկանում էին, որ ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը շատ լավ գիտի հայերի գլխի տակ փափուկ բարձ դնելու արվեստը: Կարողանա՞ր նա այդպիսի հրահանգված պատիվների, հացկերույթների, փառավոր ընդունելությունների միջոցով լռեցնել

¹ «Մշակ», № 267, 30 նոյեմբերի 1913 թ.:

նորընտիր պատրիարքին, նրան հաշտության մղել մի ուժով հետ, որը ավեր ու մահ է սփռում Թուրքահայաստանում:

Նոյեմբերի 7-ին հասնելով Կ. Պոլիս՝ Ջավեն պատրիարքը պատրաստվեց Թուրքահայաստանում կատարած երկարատև ուղևորությունից ստացած տպավորությունները և այնտեղի իրական վիճակը ներկայացնել Բ. Դռանը:

Հայոց պատրիարքին իր կողմը գրավելու կառավարության փորձերը անկեղծ լինելուց շատ հեռու էին: Ոչ ոք չէր հավատում, թե պատիվներն ու ցույցերը, որ տրվել էին նրան, սիրո ու կատարյալ հարգանքի արտահայտություններ էին: Բոլորին պարզ էր, որ Բ. Դռան խնդիրը պատրիարքի վստահությունը չահելն էր և այն ծառայեցնելը իր քաղաքական նպատակներին:

Ջավեն սրբազանը, անշուշտ, այնքան միամիտ չէր, որ հեշտութամբ գործիք դառնար կառավարության ձեռքին: Ուղևորության ընթացքում իրեն ցույց տված «համակրական» ցույցերի տակ նա ամենուր ընդնշմարել էր իր խեղճ ու տառապյալ ժողովրդի անծայր թշվառությունը: Կ. Պոլիս վերադարձած օրն իսկ մայր եկեղեցում արտասանած նրա քարոզը դրա վկայությունն էր¹:

Պարզ էր, որ պատրիարքն իր առաջին քայլերից պիտի գտնվեր կառավարության դեմ առ դեմ և նրա հետ պայքարի մեջ մտնելու ճակատ առ ճակատ:

Տեսնելով, որ սեպտեմբերի 10-ի համաձայնագրի իրագործման համար Գերմանիան չի գործադրում հետևողական ջանքեր, բայց դրա փոխարեն Ռուսաստանն ու իր դաշնակիցներն ամուր կանգնած են համաձայնագրի պահանջի վրա, Բ. Դուռը որոշեց Թուրքիային նոր գլխացավանքներից ազատելու համար դիմել իր հանապազօրյա, սովորական միջոցին՝ հայերին խաբել ամեն տեսակ խոստումներով, դրա դիմաց նրանց առաջարկել իրենց իսկ բերանով հերքել սեփական թշվառությունը, ի լուր ամենքի հայտարարել, թե վստահություն ունեն «հարագատ կառավարության» վրա և պետք չեն տեսնում եվրոպական միջամտություն:

¹ «Մշակ», № 267, 30 նոյեմբերի 1913 թ.:

Պարզ էր, որ թուրքահայ ժողովրդի անունից այդպիսի մի հայտարարություն, թեկուզ սպառնալիքներով խլված, կարող էր ի չիք դարձնել ուս-գերմանական համաձայնագիրը և մեծապես վտանգել այն դատը, որի լուծումը իրենց ձեռքն էին առել երկու մեծ պետությունները:

Եվ Բ. Դուռը անջատ բանակցություններ սկսեց ... հայերի հետ: Իթիհասդի պարագլուխները կաշվից դուրս էին գալիս հայերին բարեկամ ձևանալու համար և այդ նպատակով հաճախակի գալիս էին հայկական հանդեսներին, իրենց ներկայությունը «պատվում» կազմակերպված միջոցառումները:

Այդ ժամանակահատվածում հայությունն իր հայրենիքում թե արտասահմանում աննախընթաց չուրով տոնում էր հայ գրերի գյուտի 1500-ամյա և տպագրության 400-ամյա հոբելյանները, որոնք լրացել էին 1912 թվականին: Տոնի կազմակերպման նախաձեռնությունը պատկանում էր ուսահայությունը: Այն փնտրված առիթ էր օտարներին, այդ թվում Հայաստանի բարենորոգումների ծրագրի մշակման մեջ ընդգրկված վեց մեծ պետությունների դիվանագետներին ցույց տալու հայ ժողովրդի անկրկնելի մշակույթը, նրա արժեքը համամարդկային մշակույթի գանձարանում, ինչպես և խաղացած առանձնահատուկ քաղաքակրթական դերը Մերձավոր և Միջին Արևելքում՝ դառնալով առաջավոր գաղափարների քարոզիչ իրեն շրջապատող ազգերի մեջ: Միաժամանակ հոբելյանները զարկ պիտի տային թուրքահայերի ազգային վերազարթնումին:

Իհարկե, եթե չլինեք Հայաստանի բարենորոգումների գործընթացը, միևնույնն է, հայ գրի գյուտը և հայ տպագրության հոբելյանը անշուշտ նշվելու էր բարձր մակարդակով, բայց այժմ այն, բացի նրանից, որ մեծ նշանակություն էր ստանում Հայաստանի երկու հատվածների հոգևոր-մշակութային մերձեցման առումով, ձեռք էր բերում նաև քաղաքական իմաստ ու կարևորություն բարենորոգումների խնդիրն առաջ մղելու տեսակետից:

Հոբելյանական հանդիսությունների կենտրոնատեղին ընտրվել էր ս. էջմիածինը՝ Ամենայն հայոց կաթողիկոսների աթոռանիստը, ուր խմբված էին հայ եկեղեցական-ազգային լուսավորություն գործին նվիրված լավագույն ուժերը՝ ի դեմս

վանքի ուսումնական միաբանություն և Գևորգյան հոգևոր ձեմարանի ուսուցչական խմբի: Ընտրված կենտրոնական հոբելյանական հանձնաժողովին պիտի օժանդակեր ձեմարանի մանկավարժական խորհուրդը:

Ամեն ջանք գործ էր դրվում տոնը համազգային դարձնելու, ուստի և հանդիսություններին մասնակցելու համար հրավիրվել էին ոչ միայն հայ-լուսավորչական եկեղեցու անդամներ, այլև հայ կաթողիկոս բողոքական գործիչներ, առավելապես, Իհարկե, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան ուխտերը, որոնց շատ բանով էր պարտական հայագիտությունը (որոչ չափով՝ նաև եվրոպական և ուսական արևելագիտությունը, հատկապես նրանց պատմական և պատմագրականագիտական ճյուղերը): Հոբելյանական հանդեսներին պիտի հրավիրվեին նաև օտար ծագում ունեցող հայագետներ¹:

Իհարկե, տվյալ ժամանակ հոբելյանական հանդիսությունների ամենացանկալի մասնակիցներից մեկը կլինեք Պողոս Նուբար փաշան: Վեհափառը նրան հրավիրել էր ամենաջերմ խոսքերով: Բայց Ազգային պատվիրակության ղեկավարը խիստ զբաղվածության պատճառով չէր կարողացել մեկնել էջմիածին:

Հոկտեմբերի 13-ին Նուբար փաշան Փարիզից կաթողիկոսին հեռագրել էր.

«Վեհափառ Տէր.

Ձեր Ս. Օծութինը բարեհաճած էր հրաւիրել զիս մասնակցելու տառերի գիւտի 1500-ամեակի և հայ տպագրութեան 400-ամեակի համազգային մեծ յոբելանական հանդէսներուն: Երջանիկ պիտի ըլլայի ներկայ գտնվելով սոյն հայրենասիրական հանդէսներու, եթէ Ձեր Վեհափառութեան ինձ յանձնած պատուաբեր պաշտօնն այս վայրկեանիս իմ ներկայութիւնս, աւելի քան երբէք, անհրաժեշտ չի դարձնէր Եւրոպիոյ մէջ: Փափաքելով սակայն մասնակցել սոյն ազգային հանդէսներուն, խնդրեցի մեծ Տիար Հ. Առաքելեանէ ներկայ գտնուել իմ կողմէս, և երախտապարտ պիտի ըլլամ, եթէ Ձեր Ս. Օծութինն հաճի ընդունել սոյն ներկայացումը:

¹ «Արարատ», № 8-9, օգոստոս-սեպտեմբեր, 1913, էջ 861-862:

Հիրաւի, չուզեցի անտարբեր մնալ այն տօնակատարութեանց, գոր կը կազմակերպեն մեր ազգակիցները՝ տօնելու այն երկու մեծ գիւտերը, որոնք սատարեցին մեր երկրին բարոյական և մտաւորական զարգացման և որոնց շնորհիւ ծնաւ մեր գրականութիւնը և մեր ազգային յառաջադիմութիւնը՝ դասաւորելով Հայ ազգը ամենաքաղաքակիրթ ազգերու շարքին մէջ, ներշնչելով նաև այն համակրութիւնը, որ այսօր մեզ կը հաւաստէ Եւրոպա՝ ուժ տալով մեր արդար պահանջներուն:

Կրկնելով այս ազգային տօնին առթիւ իմ խորին շնորհաւորութիւններս՝ Զերդ Ս. Օծութեան ամենախորին յարգանքով՝ Պօղոս Նուպար»¹:

Մեծ տոնը գտնվում էր Ամենայն Հայոց Հայրապետի՝ Գևորգ Ե-ի բարձր հովանավորութեան ներքո: Նա էր սահմանում հորեյանական միջոցառումների վայրը և տևողությունը, որոնց անցկացումը նախատեսված էր, ինչպես ասվեց, ձգել մինչև տարեվերջ:

Հորեյանական տարում Հայաստանի զույգ մասերում, բոլոր Հայկական գաղթավայրերում անցկացվում էին ամենաբազմաբնույթ միջոցառումներ՝ Հանդեսներ, ժողովրդական Հավաքներ, կազմակերպվում էին դասախոսություններ, գրքեր և գրքույկներ էին հրատարակվում Հայ Առաքելական եկեղեցու պատմության, Հայ ժողովրդի կյանքում նրա ունեցած բացառիկ դերի մասին՝ որպես գիտության ու մշակույթի հովանավորի, ժողովրդի դարավոր ավանդույթների արթուն պաշտպանի:

Հայությունը ամենուր ևս մեկ անգամ իմաստավորում էր այն վիխթարի գործը, որ կատարել էր մեծ գիտունը՝ Մեսրոպ Մաշտոցը: Ստեղծելով Հայկական գրերը՝ այդ հանճարեղ մարդը բախտորոշ դեր կատարեց ժողովրդի պատմական ճակատագրում, սկիզբ դրեց նրա ազգային վերածնությունը: Բոլոր Հայ քաղաքական կուսակցություններն ու կրոնական համայնքները, սրտառուչ համերաշխությամբ ի մի գալով, կատարում էին Հայկական քաղաքակրթության անմահ հիմնադիրների փառաբանքն ու օրհնաբանությունը:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1007, թթ. 51 և չրջ.: Բնագիր: Զեռագիր:

Հորեյանական միջոցառումները լայն արձագանք էին գտնում Ռուսաստանում: Բազմաթիվ միջոցառումներ էին կազմակերպվում Պետերբուրգում, Մոսկվայում, տերություն այլ Հայ գաղթավայրերում: Հայ և ռուս լսարանների առջև դասախոսություններով Հանդես էին գալիս պրոֆ. Նիկոլայ Մառը, պրոֆ. Նիկոլայ Ադոնցը, հրապարակախոս Ալեքսեյ Զիվելեգովը, խոշոր քաղաքական գործիչ Պավել Միլյուկովը և ուրիշներ:

Լարված աշխատանք էր տանում պրոֆ. Ն. Մառը: Հորեյանի առթիվ Պետերբուրգում և այլուր նա Հանդես էր գալիս դասախոսություններով, ռուսական գիտական Հանդեսներում, հատկապես «Христианский Восток»-ում տպագրում էր հոդվածներ ս. Մեսրոպ Մաշտոցի դարակազմիկ գյուտի, Հայ ժողովրդի անցած դժվարին պատմական ուղու, Կովկասում, Մերձավոր ու Միջին Արևելքում նրա խաղաղացած պատմական դերի, համաշխարհային քաղաքակրթության մեջ նրա անգնահատելի ներմուծումների մասին:

Հորեյանական միջոցառումներ էին անցկացնում նաև Եվրոպայում: Այստեղ հաճախ նախաձեռնողները լինում էին Հայասերները: Ժողովներ ու գիտական նստաշրջաններ կազմակերպվեցին Լոնդոնում, Ժնևում, Բեռլինում և այլուր, որոնց, բացի գիտնականներից, մասնակցում էին նաև քաղաքական ու հասարակական գործիչներ, պետական պաշտոնյաներ, դիվանագետներ: Նոյեմբերի 14-ին Կաթողիկոսին գրած նամակում Պողոս Նուբարը տեղեկացնում էր, որ ինքը մասնակցել է Փարիզի Սորբոնի համալսարանում տեղի ունեցած հանդիսավոր ժողովին, որն անցել է շատ բարձր մակարդակով¹:

Թուրքահայությունը նույնպես իր վարչական ու կրոնական կառույցների, մտավորական դասի հետ համազգային տոնը նշեց մեծ շուքով:

Կ. Պոլսի Հայոց ազգային պատրիարքարանի հրամանի համաձայն՝ թեմական բոլոր քաղաքների եկեղեցիներում, դպրոցներում առանձին-առանձին տեղի էին ունենում հորեյանական արարողություններ և հանդեսներ:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 15:

Հսկայական բազմություն էր հավաքվել Վարազա վանքում: Բոլորի շուրթերին Մեսրոպ Մաշտոցի անունն էր: Հայ գրերի ստեղծման, հայ ժողովրդի ճակատագրերի վրա դրանց թողած ազդեցության, ժողովրդի բազմադարյա մշակույթի մասին զեկուցումներով ու ելույթներով հանդես եկան քաղաքական և մշակութային գործիչներ Արտակ Դարբինյանը, Մ. Տամադյանը, Մ. Քրաչյանը, Տ. Մահլեպաչյանը և ուրիշներ: Հայրենաշունչ ելույթներն առաջացրել էին մեծ ոգևորություն հավաքույթի բոլոր մասնակիցների մոտ¹:

Եվդոկիայի հայոց վիճակի առաջնորդ Շավարշ վարդապետը էջմիածին ուղարկած զեկուցագրում տեղեկացնում էր, որ իրենք մեծամբոխ բազմություն «Հովհան Ոսկերեբրան վանքում արժանավայել հանդեսներով տոնել են ազգային մեծ հոբելյանը: Հատուկ հրավերի վրա Սեբաստիայի առաջնորդ Տ. Թորգոմ սրբազանը եկել է Եվդոկիա և նախագահել հոբելյանական հանդեսները: Ըստ մասնավոր կարգացույցի, - նշում էր նա, - առտուան կրօնական արարողությունն էն յեսոյ՝ ցերեկին տեղի ունեցաւ բուն յորելեանական հանդէսը, իրիկուան՝ պաշտօնական հացկերույթ եւ գիշերին՝ հրախաղութիւններ ու ժողովրդային խրախճանութիւններ: Մեր ժողովուրդը մասնաւորապէս կոզելորէր նաեւ այն պարագան, որ առաջին տպագրիչներէն մին եղած է Աբգար դպիր, որ Եւդոկիացի ըլլալով մեր հայրենակիցն էր»²:

Քաղաքներում և դրանց մերձակա շրջաններում միասնական ծրագրով անցկացվող միջոցառումների ընթացքում հայ հեղինակների մեծ ոգևորություն արտասանած ճառերի մի զգալի մասը հայ մշակույթը պանծեցնում էր... այդ մշակույթի մահացու թշնամի թուրքերի լեզվով: Բայց կար ավելի վրդովեցուցիչ երևույթ. այդ հայկական հանդեսներին հրավիրվում էին նաև թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք գալիս էին տեսնելու, թե հայերն ինչպես են հայ գրին գովք անում ... թուրքերեն:

¹ Տե՛ս «Աշխատանք» (Վան), № 49 (145), 20 հոկտեմբերի 1913 թ.:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1007, թթ. 77-78:

Այս և նման սովորական դարձած ցուցամուրումն աննե-րելի էր, որովհետև հայերը, մեծ թե փոքր, վաղուց գիտեին, որ թուրքը մահացու թշնամի է իրենց ազգին ու մշակույթին: Պատահական չէ, որ թուրք հրավիրյալներն անկուշտ աչքերով, նախանձով ու անմար ատելությամբ էին ունկնդրում ու դիտում հայոց հանդիսությունները: Ականատեսը վերհիշում էր, որ այդպիսի մի հանդեսի հրավիրված էր գազանաբարո Մուսամներ անունով մեկը, որը հետագայում իր հայասպան գործունեությամբ նողկալի պիտի դառնար: Կեսարիա քաղաքում հայ մշակույթին նվիրված մի հանդեսի ներկա գտնվելուց հետո նա, մաղձով լցված, բղավել էր թուրք երևելիների երեսին, երբ իրեն հրավիրել էին հացկերույթի: «Դո՛ւք, տխմա՛ր թուրքեր, դուք տիրող տարր էք այս երկրին մէջ, բայց ա՛յնքան ետ մնացած էք հայերէն, ըայաներէն, որ պիտի գղջաք օր մը ձեր այս յետամնացութեան համար: Բացէ՛ք այժմէն ձեր աչքերը, սթափեցէ՛ք...»: «Նախանձով թունաւորուած այս խօսքերը ա՛յնքան պերճախօս են եւ մեկնութեան չեն կարօտիր»¹:

Հայ գրի և տպագրության հոբելյանական եզրափակիչ հանդեսը տեղի ունեցավ 1913 թ. հոկտեմբերի 11-ին Կ. Պոլսի մայր եկեղեցում՝ ներսում և դրսում հավաքված հսկա բազմության ներկայությամբ: Եկել էին բազմաթիվ օտար դիվանագետներ, այդ թվում՝ ղեսպաններ, կարևոր պաշտոնյաներ: Ներկա էին նաև Իթթիհատի պարագլուխներից մի քանիսը, այդ թվում՝ Թալեթը: Նրանք եկել էին իբր իրենց «ուրախությունը կիսելու» «հայ եղբայրների» հետ: Թուրք մեծամեծները արտաքնապես ցույց էին տալիս, թե հայկական հոբելյանն իրենց համար նույնպես անկեղծ ցնծության առիթ է:

Ականատեսը պատմում է. «Դեռ կը յիշեմ Թալեթը Մայր եկեղեցի մտած պահուն Միհրդատ Հայկազ արիւն-քրտինք մտած էր անցք մը բանալու եւ պահարանի դռնէն եկեղեցի

¹ Գաբրիել Թազորեան, Երազանքի և տաղնապաների տարիներ (1908-1915) և գաղափարի ախոյեաններ Վահան Ս. Քիրքճեան ու Գեորգ Ս. Վիշապեան, Գահիրե, էջ 102-103:

մտցնելու համար ներքին գործերու նախարարը եւ միւս թիւրք հիւրերը: Ո՞վ գիտե ինչե՞ր կանցնին հայ ժողովուրդի դահիճի մտքէն՝ երբ կը տեսներ այդ յոգնախուռն բազմութիւնը, որ լեցուցեք էր Մայր Եկեղեցին, բակը, չըջակայ փողոցները՝ իր ցեղին մշակոյթը տօնելու համար: Իր ցեղին յարութեան հաւատացող ժողովուրդի մը հոգեկան պոռթկումն էր այդ տօնը, ու չէր կրնար բան մը խլրտած չըլլալ մեր վաղւան դահիճներուն ներսը»¹:

Դահլիճի առաջին շարքի բազմաթոռին բազմել էր Թալեաթը՝ կեղծ ժպիտը դեմքին, իսկ օթյակում թագաժառանգ Մեջիդն էր և Իթիհիհի պարագլուխներից Յուսուֆ Իզզեղինը:

Հանդեսը բացելուց հետո նախ կարդացվեց հայոց Կաթողիկոսի կոնդակը, որով փառաբանվում էր մեծագույն տոնը, ապա կոչ էր արվում մասնակցել «Կրթական հիմնադրամ» ստեղծելու համար ծավալվող համազգային հանգանակութեանը: Կաթողիկոսն իր կոնդակով հույս էր հայտնել, որ մեսրոպյան գրերի գյուտի տոնը պետք է նպաստի հայոց միասնութեան նվիրական գաղափարի հաղթանակին: Կոնդակի ընթերցումը բազմիցս ընդհատվում էր որոտընդոստ ծափահարութիւններով և հավանութեան կոչերով:

Ապա ելույթներով հանդես եկան Խաթակը, Կոստան Զարյանը, Սիամանթոն և ուրիշներ:

Հետևեց համերգային մասը: Բեմում էր հարյուրից ավելի երիտասարդներից և օրիորդներից կազմված երգչախումբը, որը ստեղծել էր այդ ամիսներին Կոստանդնուպոլսում գտնվող Կոմիտաս վարդապետը, որը և վարում էր երգչախմբի ելույթը:

Թալեաթն այդ ամենը դիտում էր ուշադիր և նախանձից կրճտացնում ատամները²: Չնայած դրան՝ նա բեմ բարձրացավ և «մեծ իրադարձութեան կապակցութեամբ» ողջունեց հանդեսի մասնակիցներին: «Ու դեռ կը յիշեմ Թալեաթի ճառը Մայր Եկե-

ղեցույ մէջ՝ ի փառս հայ մշակոյթի: Հայ ժողովուրդի վաղւան դահիճը եկել էր փաղաքշանքներով օրօրել իր որսը: Օր մը յետոյ ալ, Թաքսիմի պարտէզին մէջ սարքւած հանդէսին խօսք պիտի առնէր ուրիշ դահիճ մը, ճէմալ, նոյնքան անուշ օրօրներով համեմելով իր ճառը»¹, - վերհիշել է ակնատեսը:

Հատկանշական է, որ հորեյանական եզրափակիչ հանդեսից հետո այդ ժամանակ Կ. Պոլսի զինվորական նահանգապետ Զեմալ փաշայի կարգադրութեամբ ձերբակալվեցին հավաքույթին մասնակցած մի շարք հայ գործիչներ, որոնց նա հայտարարեց, որ «եթե հայերը շարունակեն իրենց դավաճանական գործունեությունը, ապա թող գիտենան, որ թուրք կառավարությունը բավական ուժեղ է գանոնք բնաջնջելու, առանց խնայելու ո՛չ ձերի, և ո՛չ մանուկի»²:

Բ. Դուռը նոյեմբերի սկզբին Կ. Պոլսի հայոց պատրիարքին՝ որպես թուրքահայոց ազգային կենտրոնական վարչութեան նախագահ և Թուրքիայի ամբողջ հայ ժողովրդի օրինական ներկայացուցիչ, առաջարկեց միջնորդել Պողոս Նուբարի առաջ, որպեսզի նա դադարեցնի իր գործունեությունը Եվրոպայում, իսկ Հայաստանի բարենորոգումների հարցով բանակցություններ սկսի պատրիարքարանի ու կառավարութեան միջև: Բայց պատրիարքը տալիս է խելացի պատասխան, այն է. որովհետև բարենորոգումներ ձեռք բերելու և իրագործելու խնդրի լուծումը իր վրա է վերցրել հայ ազգի գերագույն հոգևոր պետը՝ Ամենայն հայոց կաթողիկոսը, որը և նշանակել է առանձին պատգամավորություն – ներկայացուցչություն՝ եվրոպական և թուրքական կառավարությունների առաջ պաշտպանելու այդ դատը, ուստի պատրիարքարանը ձեռնհասութիւն և իրավունք չունի միջամտել գործին և անջատ բանակցություններ վարել թուրքաց կառավարութեան հետ, քանզի այդ իրավունքը պատկանում է միայն Ամենայն հայոց կաթողիկոսին և նրա պատգամավորներին³:

¹ «Վէմ», № 1, հունվար-ապրիլ, 1935, էջ 25-26:

² Տե՛ս Վահան Փափազեան, Իմ յուշերը, հատ. երկրորդ, Պեյրուիթ, 1952, էջ 166-169:

¹ «Վէմ», № 1, հունվար-ապրիլ, 1935, էջ 26:

² Ատոն Մոզեան, Աքսորականի մը ողիականը, Փարիզ, 1958, էջ 10:

³ «Մշակ», № 272, 6 դեկտեմբերի 1913 թ.:

Այս պատասխանը արժանավոր, օրինավոր և ազգային շահերի տեսակետից միակ հնարավորն էր, որով պետք էր Բ. Դուռը համոզել, թե հայերն այս անգամ այլևս մտադիր չեն հավատալու 35 տարիներ ի վեր շոսայվող սին, փուչ ու խաբուսիկ խոստումներին:

Բ. Դուռը համենայնդեպս շարունակում էր դիմել նորանոր փորձերի: Մայրաքաղաքի թերթերը գրում էին, որ ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը հայերի ներկայացուցիչներին հայտնել է, թե կառավարությունը ցանկանում է նրանց հետ բանակցել և դրա համար խնդրել է իրեն ներկայացնեն պահանջվող խնդիրների ցուցակը: Նախարարը կառավարության կողմից խոստացել էր պառլամենտում հայ պատգամավորների թիվը հասցնել մինչև 18-ի, թեև հայերը պահանջում էին 22 տեղ: Մամուլը հաղորդում էր, որ նախարարների խորհուրդը, նոյեմբերի 29-ից սկսած, զբաղված էր Հայաստանում բարենորոգումներ մտցնելու խնդրով: Նախարարների խորհրդակցություններին հրավիրվել և մասնակցում էր հայազգի Հալաջյան էֆենդին: Այդ օրերին նաև ուրիշ միջոցառումներ էին իրականացվում: Օրինակ՝ Վանի վիլայեթում Բ. Դուռը կազմել էր մի մասնախումբ՝ երկու հայ, երկու թուրք և մի հույն կազմով: Չնայած քրդերի բողոքին՝ նրանցից որևէ մեկը չընդգրկվեց մասնախմբի կազմի մեջ: Այդ խմբին իրավունք էր տրված վճռելու այն բոլոր հողային խնդիրները, որոնք առաջացել էին քրդերի և Ռուսելիից Հայաստանում տեղավորվող թուրքերի կողմից հայերի հողերը բռնություններ խլելու հետևանքով: Մասնախումբը լիազորված էր նաև, որ եթե հնարավոր չլինի խաղաղորեն հաշտության գալու, ապա այդ դեպքում բռնադատիչները պարտավոր էին նախկիններում հայերին պատկանող հողերի փոխարեն նրանց տալ դրամական փոխհատուցում: Բայց հայերի նկատմամբ քրդերի համատարած ոճրագործությունների պայմաններում հնարավոր չէր լինի տուժածների օգտին որևէ վճիռ կայացնել, առավել ևս՝ իրականացնել: Չնայած դրան՝ թուրք ղեկավարները կրկին ու կրկին փորձեր էին անում Հայկական հարցը զրկել իր միջազգային բնույթից և այն վերածել հայ-թուրք խնդրի: Այս անգամ էլ գտնվեցին որոշ հայ գործիչներ, որոնք պնդում էին, թե գուցե լավ է հրաժարվել հայության գործերին պետությունների միջամտությունից և

համաձայնություն գալ թուրքական կառավարության հետ*:

Մոսկվայում հրատարակվող «Մարտ» թերթը այդ առթիվ գրում էր. «Եթե այս բոլորն այն խաբուսիկ քաղաքականութեան շարունակությունը չէ, որ Տաճկաստանում գոյություն ունի Աբդուլ Համիդի՝ սուլթանական գահ բարձրանալու օրերից», միևնույնն է, «դրանց հետ պետք է վերաբերուել խորին զգուշությունով»¹:

Իրենց ազգային կյանքի վերջին՝ ավելի քան երեք տասնամյակների պատմական փորձով թուրքահայերը խորապես համոզվել էին, որ թուրքական հիդրայի ճանկերից իրենք կարող են փրկվել միայն ու միայն Ռուսաստանի միջամտությամբ և ջանքերով²:

Նոյեմբերի 15-ի հեռագրով Գիրսն իր նախարարությունը գեկուցում է, որ ինքը չի կասկածում, որ բարեփոխումների իր մշակած խմբագրումը կհանդիպի հայության լիակատար քաջալերանքին³, իսկ հաջորդ հեռագրերից մեկով նա Սազոնովին տեղեկացնում էր, որ «նոր պատրիարք Զավենը հայտնեց ինձ օրերս ազգի երախտագիտությունը կայսերական կառավարությանը՝ միաժամանակ հույս հայտնելով, որ նախագիծը կանցկացվի իր ներկա տեսքով՝ առանց Պորտայի հանդեպ ցանկացած անընդունելի զիջումների: Նույն մտածելակերպին են հետևում հայ ժողովրդի բոլոր իրազեկ ներկայացուցիչները, որոնց հետ ես անընդմեջ հարաբերությունների մեջ եմ»⁴:

* Մի պահ եղավ, որ դեպի այդ տեսակետը թեքվեց նաև նորընտիր պատրիարք Զավեն արքեպիսկոպոսը, որը Հայկական հարցի շուրջ ընթացող բանակցություններին լիակատար չէր տիրապետում: Պատահական չէր, որ նա Ապահովական հանձնաժողովին հանձնարարել էր իրեն մանրամասն տեղեկագիր ներկայացնել 1912 թ. օգոստոս – 1913 թ. նոյեմբեր ժամանակահատվածում Հայկական հարցի շուրջ տեղի ունեցած կարևոր իրողությունների մասին: Կատարելով պատրիարքի հանձնարարականը՝ ղեկտեմբերի 4-ին Ապահովական հանձնաժողովը նրան ներկայացրել էր 17 էջից բաղկացած մանրամասն տեղեկագիր (տե՛ս ԳԱԹ, Գրիգոր Զոհրապի ֆոնդ, վավ. 91, թթ. 1–17):

¹ «Մարտ», № 19, 1 դեկտեմբերի 1913 թ.:

² АВПРИ, փ. «Политархив», з. 1913, 0. 3459, л. 25.

³ Նույն տեղում, թ. 32:

⁴ АВПРИ, փ. «Политархив», з. 1913, 0. 3465, л. 48.

**ՄԻ ԱՆՍՊԱՍԵԼԻ ՎՐԻՊՈՒՄ:
ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ ԿՈԿՈՎՅԵՎԻ ՄՈՏ**

Բարեփոխումների ձգձգումը և մամուլում բարձրացված աղմուկը թուրքերին թե էին տալիս համոզվելու, որ իրականում, բացի Ռուսաստանից, ոչ մի երկիր չահագրգռված է հայաստանում կատարել որևէ բարենորոգում:

Պողոս Նուբարը և հայոց պատրիարքարանը ուշադիր հետևում էին երիտթուրքական մամուլի նոր սպառնալիքներին և պետությունների միջև արդեն ձեռք բերված համաձայնությունների դեմ Բ. Դոան կողմից ձեռնարկվող նոր քայլերին:

Իր № 198 ձեպագրով դեսպան Գիրսը Ս. Սազոնովին հաղորդում էր, որ, թեև հայերի ցանկությունների համաձայն, ռուսների առաջարկած նախագիծը հավանություն է արժանացել Ֆրանսիայի կողմից, չեղոք վերաբերմունքի՝ Անգլիայի կողմից, բայց Եոյակ զինակցությունը Գերմանիայի գլխավորությամբ երբեմնե երբեմն շարունակում է դրսևորել հակազդեցություն, որի հետևանքով դանդաղում է բարենորոգումների նախագծի վերջնական խմբագրումը: Այդ հապաղումը էլ ավելի էր սրել թուրքերի և հայերի հարաբերությունները ինչպես գավառներում, նույնպես և մայրաքաղաքում¹: Պատահական չէր, որ հենց այդ օրերին «Միություն և առաջադիմություն» կուսակցության կոմիտեի նիստերից մեկում կարծիք էր հայտնվել, որ բարեփոխումներ անցկացնելու անհրաժեշտության մասին Ռուսաստանի առաջարկած պայմանները բացարձակապես անընդունելի են նաև Եվրոպայի համար. վերջինս վերջապես համոզվում է, որ արդյունքում թուրքիայից կօտարվեն վեց վիլայեթները և կղաղնան ռուսական հավակնությունների ասպարեզ: Ավելին, օսմանյան մամուլը նաև կեղծ լուր էր տարածել, թե ռուսական իշխանություններն այժմ զղջում են, որ բարձրացրել են հայկական բարենորոգումների հարցը և հիմա հիմքեր են փնտրում դրանից ձեռք քաշելու համար:

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3465, л. 32.

Այդ օրերին Իթիհհազի կոմիտեի մի ուրիշ նիստից հետո Բ. Դուռը Ֆրանսիայի կառավարության հատուկ ուշադրությունը հրավիրել էր այն հետևանքների վրա, որոնք կարող էին ծագել ռուսական նախագծի իրականացումից: Բ. Դուռը կարծում էր, թե Ռուսաստանի ու Գերմանիայի մերձեցումից դժգոհ Փարիզը հանուն Արևելյան Անատոլիայում ունեցած իր շահերի հանդես կգա այդ տարածաշրջանում Ռուսաստանի նկրտումների դեմ: Թուրքական կառավարությունը նաև փայփայում էր այն հույսը, որ նույն տեսակետին կհակվի Անգլիան ևս: Ինչ վերաբերում էր բարենորոգումների հարցում Իտալիայի և Ավստրո-Հունգարիայի բռնած դիրքին, ապա դրանցից առաջինն անվերապահորեն թուրքիայի կողքին էր, իսկ երկրորդը կարծես հակված էր խնդիրը միջազգայնացնելու, որը երբեք չէր կարելի թույլ տալ: Եվ, վերջապես, Բ. Դուռը հասկացրել էր Գերմանիային, թե իր երկիրը նրանից ակնկալում է Ռուսաստանի ձգտումների սանձում²:

Այս իրադրության մեջ Ռուսաստանը ոչ թե բռնեց նահանջի ճանապարհը, այլ խստացրեց իր դիրքը: Պետերբուրգում թուրքիայի դեսպան թուրխան փաշայի հետ նոյեմբերի 8-ին ունեցած հանդիպման ժամանակ արտգործնախարար Սազոնովը նրան ասել էր. «... Այժմ մենք հասել ենք մեր զիջողության վերջին կետին և այլևս նոր զիջումներ չենք անելու»: Ավելին, նա դիմել էր ուղղակի սպառնալիքի, որ «եթե հայերը կորցնեն իրենց դրությունը բարելավման հույսը, այն ժամանակ նրանք ստիպված կլինեն դիմելու ծայրահեղ միջոցների, իսկ մենք բազմիցս նախազգուշացրել ենք թուրքիային, որ այդպիսի մի դրության նկատմամբ անտարբեր մնալ չենք կարող»²:

Ահա այս միջոցին՝ 1913 թ. նոյեմբերի 14-ին, Նուբար փաշան Ամենայն հայոց կաթողիկոսին հղում է հերթական նամակ, որով նրան տեղյակ է պահում, թե եվրոպական թերթերը հաղորդել են, որ Ս. Սազոնովը Պետերբուրգում հայտարարել է, թե

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3459, л. 33.

² Նույն տեղում:

Ֆրանսիայից Ռուսաստան վերադառնալու ճանապարհին ինքը ստիպված է եղել կանգ առնել Բեռլինում, որպեսզի հայկական հարցով տեսակցի գերմանական կառավարությունը: Միաժամանակ Նուբարը տեղեկացնում է, որ «վերջերս պատահած դեպք մը ինձ վախ ներշնչեց, թէ ռուսական կառավարությունն տրամադրություննց մէջ փոփոխութիւն մը յառաջ եկած ըլլայ»¹:

Բանն այն է, որ Ռուսաստանի վարչապետ Վլադիմիր Նիկոլայի Կոկովցևը, որն այդ օրերին գտնվում էր Փարիզում, լրագրողների հետ հանդիպման ժամանակ նրանցից մեկի հարցին ի պատասխան՝ հասկացնել էր տվել, թե Հայաստանի բարենորոգումների խնդրի լուծումը դեռ չի հասունացել և կարոտ է երկար ժամանակի, քանի որ դեռ անհրաժեշտ է լինելու առաջիկայում նույնպես թուրքական կողմի հետ դժվարին բանակցություններ վարել: Այդ մասին առաջինը գրել էր Փարիզի «Թան» թերթը: «Ձեր Սրբութիւնը կրնայ երեւակայել զգացած յուզմունքս՝ կարդալով այդ լուրը»², - գրում էր Նուբարը կաթողիկոսին: Նա նշում էր, որ եթե ռուսաց վարչապետը իսկապես այդպիսի հայտարարություն էր արել, ապա դա «յայտնապէս կը հակասեր Սազոնովի ըրած յայտարարութեանը, և որուն առաջ բերելիք ամենափոքր չարիքը՝ թուրքերը քաջալերել պիտի ըլլան իրենց ընդդիմութեան մէջ»³:

Ինչ խոսք, Ռուսաստանի վարչապետի այս սայթաքումը մեծապես ոգեշնչել էր թուրքերին և տազնապի մատնել Նուբարին, որը իսկույն տեսակցություն է խնդրում Կոկովցևին՝ ստանալու բացատրություն և նրա ուշադրությունը հրավիրելու հնարավոր այն ծանր հետևանքների վրա, որոնք կարող էր առաջ բերել այդ հայտարարությունը: Վարչապետն անմիջապես ընդունում է նրան և գրույցի հենց սկզբին հավաստիացնում, որ բնավ իր մտքով չի անցել, թե հնարավոր է ենթադրել՝ Ռուսաստանը

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 13:

² Նույն տեղում, թ. 13 (չրջ.):

³ Նույն տեղում:

ձեռք է քաշել Հայաստանի բարենորոգումների խնդրից, և որ ինքը պարզապես ուզել է ասել, թե Եվրոպան այժմ շատ անհանգստացած է ալբանական հարցի ձգձգումից և թուրք-հունական հաշտության բանակցությունների խափանումից, որոնք լրջորեն սպառնում են ընդհանուր անվտանգությունը, հետևապես հնարավորինս արագ պետք է հարթել մեծ վտանգներ պարունակող այդ կնճիռները, ապա լրջորեն զբաղվել հայերի խնդրով:

Նուբարն ասում է, որ այդ դեպքում արդյո՞ք պետք չէ ցրել մարդկանց մեջ առաջ եկած թյուրըմբռնումն ու «գեշ տպավորությունը և ցոլացնել ռուսական կողմի ճշմարիտ խոսքը»: Կոկովցևն անմիջապես տալիս է իր համաձայնությունը, որից հետո համատեղ շարադրում են բացատրական մի տեքստ «Թայմսի» համար: Այնտեղ ասված էր ամենակարևորը. վարչապետ Կոկովցևը կատարելապես համաձայն է արտգործնախարար Սազոնովի հետ, որ Ռուսաստանը հաստատ որոշել է հետամուտ լինեն Հայաստանի բարենորոգումներին մինչև դրանց լիակատար իրագործումը¹: Դրանով Ռուսաստանի վարչապետի վրիպումը հարթվում է:

Այնուհետև էջմիածին ուղարկած իր նամակում Նուբարը հավելում է, որ նախարարապետի հետ տեսակցությունից օգտվելով՝ ինքը նրան կարծիք է հայտնել, որ հայկական հարցի հիմնախնդիրը կղառնա կրիտիկական, եթե ռուսական կողմից ձեռք չառնվեն արտակարգ միջոցներ: Բանն այն է, ասել էր նա, որ հայերը անհամբեր սպասում են բանակցությունների ելքին, բայց նրանց մեջ կա մի հատված, որին զսպելը դժվար կլինի, եթե կացությունն այդպես շարունակվի: Եվ հայերի այդ հատվածի քայլերի առաջն առնելու համար պետք է արագացնել բանակցությունների գործընթացը, որի հաջողությունը մեծապես կախված է Թուրքիայի վրա ֆինանսական ճնշում գործադրելուց: Հուսադրող է, ասել էր նա, որ Ֆրանսիայից բացի՝ Անգլիան նույնպես, հավանաբար, միանա այդ ճնշմանը: Արդեն անգլիա-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 13 (չրջ.):

կան պառլամենտում կազմվել է մի հանձնախումբ, որը նույնիմաստ դիմում պիտի կատարի էդվարդ Գրեյին՝ հայցելով, որ Անգլիան պիտի մերժի Բ. Դոանը որևէ ֆինանսական աջակցություն, մինչև որ բարենորոգումների գործն ավարտին չհասցվի: Նա Կոկովցեին խնդրում էր, որ Ռուսաստանը նույնպես հետևի այդ օրինակին: «Ելմտական ճնշում մը բանեցնելը միակ միջոցն է եւրոպական խաղաղութիւնը վրդովող ծանր կնճիռները հեռացնելու համար»¹, - համոզված էր Նուբարը:

Ուշադրություն ունենդրելով հայկական պատվիրակության ղեկավարին՝ Կոկովցեն ասում է, որ իր կառավարությունը նույնպես Թուրքիային մերժելու է որևէ փոխառություն տալ, մինչև Հայաստանի բարենորոգումների ծրագրի առկա մնացած խնդիրները չլուծվեն: «Վեհ. Յարի կառավարությունը պիտի անի իր ձեռքից եկածը», - շեշտել էր նա, ապա ավելացրել, որ Պետերբուրգ հասնելուն պես Սերգեյ Սազոնովին պիտի հանձնարարի, որ նա կաբինետին առաջարկ ներկայացնի Թուրքիայի վրա ֆինանսական ճնշման հարցով մյուս պետություններին միանալու մասին²:

Ջրույցից պարզ էր դարձել, որ Պետերբուրգին անհանգստություն էր պատճառում մի ուրիշ հանգամանք ևս: Բանն այն է, որ գերմանական կառավարությունը, նահանջ կատարելով սեպտեմբերի 10-ի համաձայնագրից, միաժամանակ լարել է բոլոր ուժերը, որպեսզի լայնացնի և ուժեղացնի իր ազդեցությունը մանավանդ Թուրքիայի փոքրասիական վիլայեթներում:

Հիրավի, այդ անհանգստությունը հիմնադուրկ չէր: Եթե մինչ այդ գերմանացի միսիոներների ուժերով ու միջոցներով, այսինքն՝ բարեգործական հիմունքներով էին բացվել բազմաթիվ դպրոցներ, հիվանդանոցներ ու որբանոցներ, ապա այժմ այդ նախաձեռնությունն իր վրա էր վերցնում գերման կառավարությունը, բայց միայն մի տարբերությամբ. այս անգամ ոչ թե բարեգործական հիմնադրամների, այլ պետական միջոցներն էին

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 14:

² Տե՛ս նույն տեղում, շրջերես:

ուղղվելու Փոքր Ասիա, բայց դրանք հատկացվելու էին միայն թուրքերով բնակեցված տարածքների՝ Գերմանիայի ազդեցությունը կայսրություն տիրապետող ազգի վրա ուժեղացնելու նպատակով: Հայտնի էր դարձել, որ Գերմանիայի ղեկավարությունը պատրաստել է մի հատուկ ծրագիր, որի համաձայն՝ Թուրքիայի փոքրասիական վիլայեթներում պետք է հիմնվեին մի շարք ուսումնարաններ, որոնցում թուրք երեխաները ստանալու էին ճրի կրթություն: Միաժամանակ որոշվել էր Պուսի և գավառների թուրքական կրթարաններում գերմանական կառավարության միջոցներով պահել Գերմանիայից եկած ուսուցիչ-ուսուցչուհիներ, որոնք դասավանդելու էին գերմաներեն: Այդ առթիվ Բեռլինում արդեն սկսվել էին բանակցություններ Գերմանիայի արտաքին գործերի և լուսավորության նախարարությունների միջև¹:

Ավանդաբար Ռուսաստանի ազդեցությունը չըջան համարվող Թուրքահայաստանում նման ծրագրի կենսագործումը սաստիկ կուժեղացնե գերմանական ներկայությունը Թուրքիայում:

Բայց ուսական կառավարությունը քնած չէր: Տեղեկանալով այդ ամենի մասին՝ նա գերմանական կողմին հասկացնել տվեց, որ ինքը հայկական հարցում հաստատակամ է, և իր որդեգրած դիրքերից նահանջ չի լինելու:

Մյուս կողմից՝ այդ օրերին «Թայմսը» հրատարակել էր մի խմբագրական՝ ի նպաստ Հայաստանի բարենորոգումների, ուր խնդիրը ներկայացված էր հայոց տեսակետներին միանգամայն համահունչ: Քանի որ այս թերթը սերտ հարաբերություններ ուներ կառավարության հետ, ուստի Նուբարը կարծում էր, որ նման հոդված հրապարակելու համար խմբագրությունը պետք է ստացած լինեք համապատասխան արտոնություն, ինչը ապացուցում է, որ անգլիական կաբինետը հրաժարվել է Հայաստանի բարենորոգումների նկատմամբ իր որդեգրած կրավորական դիրքից և հայերի համար նպաստավոր կեցվածք է որդեգրել: Դրա ապացուցաներից մեկը Նուբարը համարում էր այն, որ լոր-

¹ «Բարենորոգումները Հայաստանում...», էջ 79:

ղերից մեկի պատվին տրված հացկերույթի ժամանակ Անգլիայի կառավարության ղեկավար Ասկվիտը նաև արտասանել էր հետևյալ խոսքերը. «Պետք է ավելացնեն, որ Ասիական Թուրքիայի հողային ամբողջության պահպանման առաջին, լավագույն և ապահովաբար ամենաօգտակար պայմանը ներկա պարագաներում բարենորոգումներն են, որոնք պետք է գործադրվեն ազդու կերպով, պետությունների ուղղակի և գործուն մասնակցությամբ»¹:

Տվյալ ժամանակահատվածում Հայաստանի բարենորոգումների կացությունը Պողոս Նուբարն ամփոփում էր հետևյալ երկու կետերով. 1) Պետությունները համաձայնության են եկել ոչ միայն Հայաստանում բարենորոգումներ կատարելու անհրաժեշտության հարցում, այլև բարենորոգումների ծրագրի շուրջ: Փաստաթուղթն արդեն ներկայացված է օսմանյան կառավարությանը, որը, սակայն, առանց գնահատելու իր իսկ շահերը, կուրորեն շարունակում է ընդդիմանալ դրան, 2) Բ. Դոան ընդդիմությունը բեկելու համար այժմ կա մի հիմնական միջոց՝ Թուրքիայի վրա տերությունների, հատկապես Ֆրանսիայի կողմից ֆինանսական ճնշում գործադրելը:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

Ընդառաջ գնալով տվյալ պահին Հայկական հարցի վիճակի մասին ստույգ տեղեկություններ ստանալու Պետերբուրգի հայկական խմբակի ցանկությանը՝ նոյեմբերի 12-ին արտգործնախարար, հոֆմեյստեր Ս. Դ. Սազոնովը ընդունեց նրա անդամներ Պ. Ղուկասովին, Ն. Սաղաթեյանին և Մ. Պապաջանովին:

Հենց սկզբից Սազոնովն ասաց, որ Ռուսաստանը մինչև այժմ անդադար ու անխոնջ պաշտպանել է հայերի կողմից մշակված և Կ. Պոլսում ուսաց դեսպան Գիրսին ներկայացված Հայաստանում անցկացվելիք բարեփոխումների նախագիծը՝ աննշան

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 14 և շրջ.:

փոփոխություններով այն հատվածների, որոնք առաջ կբերեին մյուս տերությունների բուռն հակազդեցությունը:

Այնուհետև արտգործնախարարը հանգամանորեն անդրադառնում է պայքարի այն հանգրվաններին, որ առայժմ ուսացկան դիվանագիտությունը մղում է հայերի համար նպաստավոր փաստաթուղթ մշակելու ուղղությամբ: Չնայած բարենորոգումների ծրագրի նախագծի մի շարք կետերի շուրջ ընթացող վիճաբանություններին՝ Ռուսաստանի, Գերմանիայի և Թուրքիայի միջև ակտիվ բանակցությունները դեռ շարունակվում են:

Հայ պատգամավորության այն հարցին, թե Թուրքիայի կողմից բարենորոգումների ծրագիրը մերժելուց հետո արդյո՞ք Ռուսաստանը կփորձի Հայաստանում ուժի միջոցով հասնելու որևէ արդյունքի, Սազոնովը շեշտեց, որ Հայկական հարցի լուծման համար ներկայումս Ռուսաստանը մտադրություն չունի զինված ուժ կիրառել, մանավանդ որ Պետերբուրգի կողմից ցանկացած սպառնալիք Գերմանիան դիտում է որպես Թուրքիայի նկատմամբ ագրեսիվ քայլ, Օսմանյան կայսրության ամբողջականությանը ոտնձգություն: Որպեսզի Հայաստանի բարեփոխումների ընթացքն արագացվի, ասում էր նախարարը, ենթադրվում է առաջիկայում այնտեղ ավելացնել ուսացկան հյուպատոսների և փոխհյուպատոսների թիվը¹:

Նոսք բացելով Թուրքիայի տարածքային ամբողջականության մասին՝ արտգործնախարարն ասաց, որ տերությունները նրան վերաբերվում են որպես ճաքեր տված բաժակի և զգուշանում, որ չփչրվի, ու այն բաժանելու հողի վրա համընդհանուր եվրոպական պատերազմի պատճառ չդառնա, քանի որ տերությունները դեռ համաձայնության չեն եկել Թուրքիայի բաժանման հարցի շուրջ:

Այնուհետև Ս. Սազոնովն անդրադառնում է հայերին ոչ պակաս հետաքրքրող Հայաստանում երկաթուղային կոնցեսիաների խնդրին: Հարց բարձրացնելու հավանական պատճառն այն էր, որ նախորդ օրերին Պետերբուրգի Հայ գործարարները դիմել

¹ ПЗПАК, том I, стр. 303.

էին կառավարութեանը ուսական ընկերությունների կողմից Հայաստանի տարածքում երկաթուղային կոնցեսիաներ ձեռք բերելու անհրաժեշտություն մասին՝ ընդգծելով այդ երկրի համար դրանց շուտափույթ իրականացման խիստ կարևորությունը և վճռորոշ նշանակությունը: «Մենք խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել այս գործի ընթացքի վրա և բացատրել, թե ինչ կարող ենք մենք՝ Հայերս, ձեռնարկել ինչպես թուրքիայում, այնպես էլ դրա սահմաններից դուրս, որպեսզի հարցը շուտափույթ դրական լուծում ստանա», - ասված էր կառավարությանն ուղղված ՊՀՆ-ի ուղերձում, որին անդրադարձել էին «Россия», «Голос Москвы», «Русское Слово» և ուրիշ պարբերականներ: Սազոնովը հայ գործիչներին ցույց տվեց Ֆրանսիայից օրերս ստացված մի նոր քարտեզ, որի վրա գունավոր նշված էին թուրքիայում տեղությունների կոնցեսիաների ոլորտները, այն է՝ Ֆրանսիան՝ Սիրիայում և Հայաստանի հարավային մասում՝ ներառյալ Տրապիզոնը (Տրապիզոն-Սվազ-Նարբերդ), Անգլիան՝ Զմյուռնիայի շրջանում, Իտալիան՝ Զմյուռնիայի շրջանի ոչ մեծ հատվածում և Հյուսիսային Կիլիկիայում, Ռուսաստանը՝ բուն Հայաստանում և մինչև Սև ծով հասնող ուսական սահմանին հարող մասում, Գերմանիան՝ Բաղդադի երկաթուղու և Կիլիկիայի ամբողջ տարածքում¹:

Ինչ վերաբերում է «Comité de L'Asie Francaise»-ի կողմից Փարիզում հրավիրվելիք համաժողովին, ապա Սազոնովը դրա օգտակարությունը չէր կասկածում, քանի որ նպատակն էր օգնել իրականացնելու ուսական բարեփոխումները: Նա ուսպետական ու հասարակական գործիչների մասնակցությունը այդ ձեռնարկին միանգամայն ցանկալի էր համարում²:

Վերջում նախարարն ինքն է հիշատակում Հայաստանում հնարավոր ապստամբության մասին և չեչտում, որ դա միանգամայն անցանկալի է, քանի որ ներկայիս կոնյունկտուրայի պայմաններում այն ոչ միայն որևէ օգուտ չի բերի գործին, այլև

¹ ПЗПАК, том I, сmp. 303-304.

² Նույն տեղում:

կարող է արյան գետերի պատճառ դառնալ, որը ոչ ոք չէր ուզենա իր խղճի վրա վերցնել:

Հայկական խմբակի 1913 թ. նոյեմբերի 21-ի հատուկ նիստը լսեց Պ. Ղուկասովի, Հ. Սաղաթեյանի և Մ. Պապաջանովի ղեկույցը արտաքին գործերի նախարարին իրենց այցելություն մասին:

ՓՈՒՆԱՌՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Զնայած ուսական դիվանագիտության մեծ ջանքերին՝ ուս-թուրքական բանակցությունները 1913 թ. նոյեմբերին չառունակում էին անարդյունք տեղապտույտ տալ:

Պետերբուրգի ղեկավար շրջանները Հայկական բարենորոգումների հարցը համարում էին ուսական գործ, իսկ Հայերից երիտասարդ թուրքերի դժգոհությունը գնալով ուժեղանում էր և սպառնում նոր բարդություններ առաջ բերել:

Նոյեմբերի կեսերից «Միություն և առաջադիմություն» կոմիտեն ուժեղացրեց Հայերի հալածանքները՝ պատճառաբանելով, որ նրանք ոչ միայն չեն դիմադրում Եվրոպայի միջամտությունը թուրքիայի ներքին գործերին, այլև ամեն կերպ աջակցում են դրան:

Արձագանքելով Հայերի դեմ Իթիհատի կոմիտեի նոր արշավին՝ թուրքերը Կ. Պոլսում սկսեցին բոյկոտել Հայ վաճառականների ապրանքները: Ավելին, մայրաքաղաքի արվարձաններից մեկում բացահայտվեց մի դավադրություն, որի մասնակիցները նպատակ էին դրել կազմակերպել Հայերի կոտորած, քանզի նրանց եկեղեցիներն ու դպրոցները:

Կ. Պոլսում պետությունների ղեսպանները նոյեմբերի 22-ին հարց ուղղեցին Բ. Դոանը, թե նա ինչ է մտածում մայրաքաղաքում լարվածությունը թուլացնելու մասին, և որո՞նք են բարենորոգումների այն առաջարկները, որ կառավարությունը կարող կլինի գործադրել Հայաստանում: Բ. Դոուր պատասխանեց, որ բարենորոգումներ կատարելու մասին խոսք անգամ չի կարող լինել, մինչև որ Եվրոպան չկատարի իր հետևյալ պա-

հանջները՝ 1) փող տալ, 2) պաշտոնյաներ ուղարկել, 3) չպահանջել ոչ մի վերահսկում բարենորոգումների իրականացման ընթացքի վրա:

“Русские Ведомости” թերթի 1913 թ. № 276-ում տպված վերոնշյալ հոդվածում Ա. Զիվելեզովը նկատում էր. «Թուրքահայաստանում բարենորոգումներ կատարելու հարցը, որը կարծես մոտենում էր լուծման, նորից խճճվում է, մեծ պետությունների դիվանագիտությունը դարձյալ կանգնել է երիտթուրքական կառավարության համառ դիմադրության առաջ և չգիտի ինչպես դա հաղթահարի»:

Թվում էր, թե հաղթահարված են էական խոչընդոտները: Եռյակ համաձայնությունները, որոնք շահագրգռված էին, որ Անատոլիան մտնի խաղաղ դարզացման շավիղ, արդեն եկել էին համաձայնության, բայց Ռուսաստանի և Գերմանիայի միջև շարունակվող տարաձայնությունները խափանում էին հայկական հարցի հանդեպ ընդհանուր տեսակետի մշակումը: «Ահա թե ինչու բարենորոգումների հարցն առաջ չի գնում»¹, - եզրահանգում էր Ալեքսեյ Զիվելեզովը:

Նույն պատկերն էր ներկայացնում նաև “Русское Слово” թերթը: Հոդվածագիրը նշում էր. «Թուրքահայաստանի ռեֆորմների հարցը մի ամբողջ ամսվա ընթացքում դեռ ոչ մի քայլ չի առաջացել, չնայած լավագիտակ դիվանագիտական շրջանների վկայությունը այդ հարցում հայացքների լիակատար համաձայնություն է կայացել Ռուսաստանի և Գերմանիայի միջև: Դիտմամբ ձգձգելով իր պատասխանը ռեֆորմների մասին ռուսական վերջնագրին, դրանով իսկ Բ. Դուռը ձգտում է ժամանակ շահել»²:

1913 թ. նոյեմբերի սկզբներին Պողոս Նուբարը Փարիզից նամակ էր գրել Մ. Ի. Պապաջանովին, որում հաղորդել էր, որ Ռուսաստանի նախաձեռնությամբ և ջանքերով տերություններն արդեն հանգել են այն վերջնական եզրակացության, որ Թուրքահայաստանում բարեփոխումներ անցկացնելն անհրաժեշտ է հենց Եվրոպայի շահերի տեսակետից, բայց մյուս կողմից Բ. Դուռ-

ը, որին տերությունների դեսպանները փոխանցել են բարեփոխումների նախագիծը, վճռականապես մերժել է այն և հրաժարվել է որևէ բարենորոգում իրականացնելուց, ըստ որում՝ բացառելով տերությունների կողմից որևէ վերահսկողություն կամ միջամտություն: Ուստի այժմ, նշում էր Պողոս Նուբարը, պետք է ենթադրել, որ այլ բան չի մնում, քան ստիպել Բ. Դուռնելու բարեփոխումների նախագիծը նրա վրա ֆինանսական ճնշում գործադրելու միջոցով: Այժմ Ֆրանսիան չի ցանկանում միայնակ իր վրա վերցնել նման ճնշում կատարելու պարտականությունը, քանի որ նրա կողմից Թուրքիային վարկավորելու մերժումը կարող է ձեռնառու լինել մի ուրիշ տերության: Որպեսզի նման բան թույլ չտրվի, թուրքերի վիճակի շտկմանն ուղղված վարկը պետք է միջազգային բնույթ կրի: Թուրքիայի վրա նման ճնշում պետք է կատարեն նույնիսկ այն կառավարությունները, որոնք նրա հետ ունեն բարեկամական հարաբերություններ¹:

Այնուհետև Պողոս Նուբարը տեղեկացնում է, որ ինքը վերջերս խորհրդակցել է Անգլիայի իր բարեկամների հետ, և նրանք հանգել են այն կարծիքին, որ օգտակար կլինեն Փարիզում համաժողով հրավիրել, որի ժամանակ Եվրոպայից տարբեր երկրների ներկայացուցիչները հանգամանորեն կքննարկեին խնդիրը, քվեարկությամբ կընդունեին տերություններին ուղղված դիմում, որով կխնդրեին նրանց ֆինանսական ճնշում գործադրել Թուրքիայի վրա: Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության վրա ազդեցություն ունեցող “Le Comité de L’Asie Francaise”-ն իր կազմում ձևավորել է Հայկական հատուկ կոմիտե, որը և ստանձնել է նոյեմբերի վերջին օրերին այդ համաժողովի հրավիրումը՝ ֆրանսիական բանակի նախկին գեներալ իսիմուս Դ. Լակրուայի նախագահությամբ: Բրիտանական Հայկական կոմիտեն Լոնդոնում իր հերթին արդեն ստացել է պառլամենտի մի քանի անդամների՝ համաժողովին մասնակցելու համաձայնությունը, իսկ դոկտոր Լեփսիուսը, որը համաժողովում ներկայացնելու էր Գերմանիան, խոստացել են ժամանել

¹ “Русские Ведомости”, № 276, 1913 թ.

² “Русское Слово”, № 272, 26 ноября 1913 թ.

¹ ПЗПАК, том I, стр. 276.

նաև հայտնի քաղաքական դեմքեր հրավիրել Ավստրիայից, Իտալիայից և Շվեյցարիայից: Պողոս Նուբարը շեշտում էր, որ մինչև օրս միայն Ռուսաստանից հնարավոր չի եղել գտնել մեկին, որը այդ կարևոր գործին մասնակցելու ցանկություն հայտնի: Նա Մ. Պապաջանովին խնդրում էր աջակցել, որ այդ համաժողովին մասնակցություն բերեն նաև ռուսաստանցի ներկայացուցիչներ, և առաջին հերթին տալիս էր Գուչկովի անունը, որը, ինչպես իրեն բացատրել էին, շատ հարմար էր այդ կարևոր գործին: Եթե հեռավորության պատճառով Ռուսաստանից որևէ մեկին չհաջողվեր ներկա գտնվել համաժողովին, Նուբար փաշան ենթադրում էր, որ Պետերբուրգի հայերը կարող են դիմել այդ պահին Փարիզում գտնվող ռուսներից որևէ մեկին:

Նոյեմբերի 8-ին Պետերբուրգի հայկական խմբակը իր նիստում քննության առավ Պողոս Նուբարի նամակը: Այն ընթերցելուց հետո առաջինը ելույթ ունեցավ Ա. Սարուխանյանը և սովեց հետևյալ մեկնաբանությունները. Թուրքիայի ֆինանսական ծանր վիճակը ստիպում է Բ. Դոանը եկամտի նոր աղբյուրներ փնտրել՝ պետական բյուջեի դեֆիցիտը ծածկելու, Բալկանյան պատերազմի ընթացքում կատարած ծախսերը փակելու և կարճաժամկետ որոշ վարկեր մարելու համար: Նման աղբյուրներից էին որոշ ապրանքների վաճառքի նկատմամբ պետական մենաչնորհը, մաքսատուրքերի ավելացումը և որ հիմնականն է՝ պետական փոխառությունները:

Մաքսատուրքերի խնդրին անդրադառնալով՝ Սարուխանյանը միտք արտահայտեց, որ Թուրքիան մինչև վերջին տարիները օտարերկրյա բոլոր ապրանքներից, անկախ դրանց ծագումից, գանձում էր 8 տոկոս ad valorem: Կապիտուլյացիայի հիման վրա նա իրավունք չունեի մաքսատուրքեր գանձել առանց եվրոպական տերությունների թույլտվության: Դրանք առաջին անգամ փոխվեցին 1904 թվականին՝ 8 տոկոսից հասնելով 11 տոկոսի: Այդ ժամանակ մեծ տերությունները դրան համաձայնվեցին միայն այն պայմանով, որ Թուրքիան ընդունի Մակեդոնիայի բարեփոխումների նախագիծը, և Թուրքիան տեղի սովեց: Այն ժամանակ նման ֆինանսական ճնշումը հաջողությամբ պսակվեց: Այժմ Պորտան կրկին խնդրում է Եվրոպայի համաձայնությունը՝

մաքսադրույքները ևս 4 տոկոսով մեծացնելու, և այդ բանակցությունների վարումը հանձնարարված է ֆինանսների նախկին նախարար Զավիդ բեյին: Երկու տերություններ՝ Ավստրիան և Իտալիան, արդեն պարտավորվել էին ընդունել այդ պայմանները և նույնիսկ այդ հարցում աջակցություն ցույց տալ Թուրքիային: Մնացած տերությունները՝ Ֆրանսիան, Ռուսաստանը, Գերմանիան և Անգլիան, իրենց համար թուրքական կառավարությունից տարաբնույթ կոնցեսիաներ և տնտեսական օգուտներ էին պոկել, որոնց նկատմամբ արդեն սկզբունքային համաձայնություն էր ձեռք բերվել, իսկ մի մասի վերաբերյալ բանակցությունները դեռ չարունակվում էին: Այս տերությունները, ինչպես բոլորը միասին, այնպես էլ առանձին-առանձին, կարող էին հենց այդ հողի վրա ճնշում գործադրել Թուրքիայի նկատմամբ:

Անդրադառնալով պետական փոխառությունների հարցին՝ Ա. Սարուխանյանը նկատեց, որ Թուրքիան կարող էր գումարներ հայթայթել միայն Ֆրանսիայում, որն ընդհանրապես ամենից շատ է չահագրգռված Թուրքիայի տնտեսական կայունացմամբ: Նույնիսկ Թուրքիայի պետական բանկը՝ Banque Ottomane, ոչ այլ ինչ էր, քան հիմնականում ֆրանսիական կապիտալի վրա հիմնված արտոնյալ վարկային հաստատություն, որն իր դիրեկտիվները հիմնականում ստանում է Փարիզից: Ֆրանսիական կառավարությունը Թուրքիայից իր համար տնտեսական նոր իրավունքներ ու կոնցեսիաներ է կորզել Հայաստանում և Սիրիայում բարեփոխումներ կատարելու հողի վրա՝ սկզբունքային համաձայնություն տալով (առայժմ պայմանականորեն) Փարիզի բորսայում 700 մլն. ֆրանկ արժողությամբ նոր թուրքական փոխառության: Ֆրանսիան այժմ լիակատար հնարավորություն ունեի ֆինանսական ճնշում գործադրելու Թուրքիայի վրա, այդ թվում՝ նաև ներկայացնելով Հայաստանում բարեփոխումների իրականացման ծրագիրը: Բայց, ինչպես երևում է Պողոս Նուբար Փաշայի նամակից, Ֆրանսիան անհանգստանում էր, որ իր միանձնյա հանդես գալը Թուրքիան կարող է ներկայացնել որպես իր հանդեպ թշնամական ակտ, ինչից կարող են օգտվել մյուս տերությունները, առաջին հերթին՝ Գերմանիան՝ թուլացնելով Թուրքիայում Ֆրանսիայի ազդեցությունը և տնտեսական

չահերը, առավել ևս, երբ այդ ժամանակ Բեռլինում բանակցություններ էին ընթանում մի կողմից Ֆրանսիական և գերմանական բանկերի և մյուս կողմից տերությունների ներկայացուցիչների միջև Փոքր Ասիայում նրանց տնտեսական փոխադարձ հարբերությունները ճշտելու շուրջ:

Ուստի Ֆրանսիան, համաձայնելով ճնշում գործադրել Թուրքիայի վրա հօգուտ Հայաստանում բարեփոխումներ անցկացնելու Ռուսաստանի ծրագրի, միաժամանակ գտնում է, որ ծրագրին պետք է անպայման աջակցի Գերմանիան: Հենց դա էր, Ա. Սարուխանյանի կարծիքով, ֆինանսական ճնշման էությունը, որի մասին գրում էր Նուբար Փաշան¹:

Խմբակի նիստի ընդհանուր եզրակացությունն այն էր, որ, հիրավի, տվյալ պահին Բ. Դոան վրա ճնշում գործադրելու ուրիշ արդյունավետ միջոց չկա:

Այնուհետև, քննարկելով Փարիզի առաջիկա կոնֆերանսին Ռուսաստանի ներկայացուցիչների մասնակցության հարցը, Խմբակի նիստն ընդունեց հետևյալ որոշումը. 1) ՊՀՆ անունից խնդրել Պետական Դումայի անդամ Ա. Ի. Գուչկովին (որին մատնացույց էր արել նաև Նուբար փաշան), ինչպես նաև Մ. Մ. Կովալևսկուն* մասնակցել վերը հիշատակված համաժողովին, 2)

¹ ПЗПАК, том I, стр. 278-281.

* Համաշխարհային հռչակ ձեռք բերած նշանավոր գիտնական, Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր, ուսուցիչներին կուսակցության հիմնադիրներից, «Вѣстник Европы» ամսագրի խմբագրապետ Մաքսիմ Կովալևսկին Հայ ժողովրդի ազնիվ բարեկամներից էր: Հայկական հարցի բարձրացման և երկար ամիսներ տևած քննարկումների ընթացքում նա հանդես է եկել բազմաթիվ հողվածներով: Օրինակ՝ «Русское Слово» թերթում տպագրած մի ընդարձակ հոդվածում, որը նվիրված էր անցյալում եվրոպայում լայն ծավալում ստացած հայասիրական շարժման պատմությանը, Մ. Կովալևսկին ամոթանք էր տալիս մարդկությանը, որ չի կարողանում բռնել քրդերի ձեռքը: Նա հրապարակային քննարկման էր դնում այն հարցը, թե հայերը, վերջապես, իրավունք ունենա՞ն ապրելու իրենց հայրենիքում, թե՞ պետք է բնաջնջվեն: Արյան բաղնիքներ են սպասվում 1.200 հազար քրիստոնյա բնակչությանը, զգուշացնում էր Մ. Կովալևսկին: Նա ուսական կառավարությանը կոչ էր անում զգաստ ու հետևողական լինել, որ Թուրքիայի դժբախտ հայությունը ուրիշ ժողովուրդների պես վերջապես «ապրելու իրավունք» ունենա (հողվածի մասին տե՛ս «Հորիզոն», 30 հունիսի 1913 թ.):

Ցանկալի է արտգործնախարարությունից Հայկական հարցին լավատեսյակ պաշտոնյա Գ. Ռաֆայովիչի մասնակցությունը համաժողովին, ուստի խնդրել Պ. Ղուկասովին, Մ. Պապաջանովին և Հ. Սաղաթեյանին՝ այդ հարցով դիմել նախարարին:

Սույն չափազանց կարևոր խնդրի քննարկումից հետո ՊՀՆ-ն անդրադարձավ Հ. Զավրիևի՝ Բեռլինից գրած նամակին, որով նա խնդրում էր անհապաղ 1000 ռուբլու աջակցություն ցույց տալ «Pour les peuples d'orient» ամսագրին, որը Հայկական հարցի ջերմ պաշտպան է և մեծ աշխատանք է տանում այն եվրոպայում լայնորեն պրոպագանդելու ուղղությամբ: Հանդեսի խմբագրությունը ջանք էր խնայել Փարիզում Հայաստանի բարենորոգումների խնդրին նվիրված կոնֆերանսի հրավիրումը գլուխ բերելու համար: Հատկապես կարևոր էր, որ ամսագիրն ընթերցվում էր եվրոպական բոլոր տերությունների արտգործնախարարություններում և ընդհանրապես այն բոլոր շրջանակներում, որոնք հետաքրքրված էին Հայաստանի բարենորոգումների հարցով: Բյուրոն բավարարեց Հ. Զավրիևի խնդրանքը, միաժամանակ ցանկություն հայտնեց, որ խմբագրությունը հանդեսի օրինակներից ուղարկի այն անձանց, որոնց ցուցակը կներկայացնի ինքը:

Հաջորդ հարցը վերաբերում էր Պետերբուրգում ուսական հայամետ (հայասիրական) կոմիտե ստեղծելուն: Հաղորդումով հանդես գալով՝ Խմբակի անդամ Վ. Վարդանովը տեղեկացրեց, որ այդ պահանջը շարունակում են առաջ քաշել ուս հասարակական-քաղաքական և գիտական-մշակութային գործիչները: Նրանց պատկերացմամբ այդ կոմիտեն տարբեր քաղաքների ուս բնակչության շրջանում պետք է լայնորեն ու ճիշտ լուսաբաներ Հայկական հարցը՝ դասախոսություններ կազմակերպելով, թերթերում հոդվածներ տպագրելով և այլն¹:

Նիստը վարող Գ. Տիգրանովը հիշեցրեց, որ այդ նույն հարցը Փարիզի և Կոստանդնուպոլսի հայերի կողմից բարձրացվել է դեռևս 1913 թ. գարնանը, բայց ՊՀՆ նույն տարվա հունիսի

¹ ПЗПАК, том I, стр. 285.

12-ի և 25-ի նիստերում մերժվել է այդ առաջարկը: Չփոխելով ՊՀՆ բացասական կարծիքը հայասիրական ուսական կոմիտե ստեղծելու մասին, նիստը, սակայն, խիստ էական համարեց Վ. Վարդանովի առաջարկի երկրորդ մասը և ցանկալի համարեց ՊՀՆ-ի ջանքերով ու միջոցներով և ուս մտավորականների լայն ներգրավմամբ Ռուսաստանի տարբեր քաղաքներում դասախոսությունների կազմակերպումը և զանազան պարբերականներում հայերի և Հայկական հարցի մասին հոդվածների ու նյութերի տպագրումը¹:

Վերջում խմբակը լսեց նաև բավական երկար ժամանակ Գերմանիայում եղած ՊՀՆ անդամ Գ. Բոզդանյանի մի կարևոր հաղորդումը: Նա ասաց, որ ինքը Բեռլինում ներկա է եղել տեղի Հայկական կոմիտեի նիստերից մեկին, որին մասնակցում էին նաև դոկտոր Լեփսիուսը և պաստոր Շտիրը: Վերջիններս նախաձեռնություններ Կոմիտեի քննարկմանն է ներկայացվել երկրում արդեն գործող գերմանա-ֆրանսիական, գերմանա-անգլիական, գերմանա-ճապոնական և այլ միությունների օրինակով գերմանա-հայկական միություն (“Deutsch-Armenische gesellschaft”) ստեղծելու հարցը: Շեշտադրվեց, որ Միության նպատակը պետք է լինի գերմանացիների շրջանում հայ գրականության, պատմության, մշակույթի մասին տեղեկությունների տարածումը, և որ այն քաղաքական նպատակներ չի հետապնդելու: Միությունը պիտի ունենար մի թերթ կամ ամսագիր, որը հրատարակվելու էր երկու լեզվով՝ գերմաներեն և հայերեն: Պարբերականին մասնակցություն պիտի բերեն տարբեր բնագավառների ականավոր գեմքեր՝ գրականագետներ, նկարիչներ, ճարտարապետներ, գիտնականներ, նույնիսկ Ռայխստագի անդամներ՝ տարբեր կուսակցություններից²:

Նախանշված նպատակները կյանքի կոչելու և նման տպագիր օրգան ունենալու համար անհրաժեշտ էր որոշակի գումար: Քանի որ Բեռլինի հայերը նման միջոցներ չունեին, ուստի նիստը

¹ ПЗПАК, том I, сmp. 286.

² Նույն տեղում, էջ 282-283:

Գ. Բոզդանյանին հանձնարարեց Պետերբուրգի հայերին խնդրել՝ գերմանացի բարեկամներին 2000 ռուբլու օգնություն ցույց տալ: Մ. Պապաջանովը կարծիք հայտնեց, որ այդ նպատակով պետք է դրամահավաք կազմակերպի նաև Թիֆլիսի Ազգային բյուրոն¹:

1913 թ. նոյեմբերի 17-ին Պողոս Նուբարը Փարիզից մեկնում է Բեռլին՝ հույս ունենալով այդ կարևորագույն հարցում ձեռք բերելու նաև Թուրքիայի շահերի ամենահետևողական պաշտպանի՝ գերմանական կառավարության եթե ոչ աջակցությունը, ապա գոնե չեզոքությունը:

Նուբարը Բեռլինում նախ հանդիպում է տեղի ուսական դեսպանության խորհրդական (գործերի հավատարմատար) Բրոննսկու հետ: Հայ գործիչն ասում է, թե Բեռլին գալու իր նպատակն է Թուրքիայի վրա ֆինանսական ճնշում գործադրելու հարցով հանդիպել Գերմանիայի պետքարտուղարի տեղակալ Յիմերմանին: Թեև ուսական դիվանագետը համոզված էր, որ գերմանական կառավարությունը հազիվ թե համաձայնի դիմել այդ արդյունավետ միջոցին, բայց, փորձելը, այնուամենայնիվ, վնաս չէ:

Ջրույցի ընթացքում Պողոս Նուբարը ցանկանում է իմանալ Բրոննսկու կարծիքը, թե բարենորոգումների գործի հաջողության համար արդյոք հարկ չէ՞, որ ինքը հարցազրույցներ տար Բեռլինի մի քանի թերթերին: Բրոննսկին նրան խորհուրդ չի տալիս՝ մատնանշելով, որ հայ մարդուց բխող հայանպաստ հրապարակումները դժվար թե այստեղ առանձնապես համոզիչ թվան: Միաժամանակ նա ասում է, որ հայության խնդրին օգտակար կլինեն տեղի հասարակական կարծիքի վրա ներազդել գերմանական մամուլի միջոցով՝ հրապարակելով հոդվածներ, որոնց հեղինակները կլինեն գերմանացի հրապարակախոսներ, և որոնց լեյտմոտիվը պետք է լինի հետևյալը. Գերմանիան խոշոր շահեր ունի Թուրքիայի ասիական մարզերում, հետևաբար նա շահագրգռված է պահպանելու վերջինի ամբողջականությունը, իսկ դա նշանակում է լայն ու կենսունակ բարեփոխումներով

¹ ПЗПАК, том I, сmp. 283.

խոսաւիել հայկական ապստամբութիւններէից, կոտորածից և տեական անարխիայից, մի բան, որը բխում է Գերմանիայի շահերից: Պողոս փաշան շնորհակալ է լինում խորհրդի համար և խոստանում օգտվել դրանից: Բրոննակու այն հարցին, թե նա արդյոք ունի՞ Բեռլինում մեկին, որի միջոցով հնարավոր կլինե՞ր այդ առումով ազդել լուրջ մամուլի վրա, Պողոս փաշան խորհրդապահորեն ասում է, թե այդ մեկը դոկտոր Լեփսիուսն է՝:

Բեռլինում Նուբար փաշան երկարատե տեսակցութիւն է ունենում պետքարտուղարի տեղակալ Յիմերմանի հետ: Հանդիպման ընթացքում նա ընդարձակ բացատրութիւն է տալիս բարենորոգումների շուրջ ընթացող բանակցութիւնների հայկական ընկալումների մասին՝ հատկապես չեչտադրելով հայկական քաղաքական շրջաններում ծագած ոգևորութիւնը Փրանսիական կառավարութեան այդ հայտարարութեան առթիւ, որ ինքը երբեք փոխառութիւն չի տրամադրի Բ. Դոանը, եթե նա շարունակի խոչընդոտել հայկական հարցի առաջախաղացմանը: Հենց այդպես էլ արտահայտվել էր Փրանսիական կառավարութեան ղեկավար Պիչոնը Պողոս Նուբարի հետ հանդիպման ժամանակ²:

Գերման բարձր դիվանագետի հետ հանդիպումը Նուբարի վրա թողել էր այն տպավորութիւնը, որ նրա կառավարութիւնն այժմ կարծես բավական բարյացակամորեն է տրամադրված հայերի նկատմամբ, այսինքն՝ գիտակցում է բարեփոխումների անհետաձգելիութիւնը: Յիմերմանն ուղղակի ասել էր, թե պլատոնական խոստումների կամ թուրքական ղեղատոմսի ծաղրատնազներով այլևս անհնար է բավարարել Թուրքիայի հայ բնակչութեանը: Նուբարի համար հատկապես անսպասելի էր եղել, որ Թուրքիայի վրա ֆինանսական ճնշում գործադրելու անհրաժեշտութեան մասին առաջարկութիւնը միանգամայն ընդունումով էր ընդունվել Յիմերմանի կողմից:

Թուրքիայի երկու գլխավոր պարտատուների՝ Ֆրանսիայի և

Գերմանիայի նման վերաբերմունքը գոհունակութիւն էր պատճառել Պողոս Նուբարին: Քանի որ ֆինանսական կարիքները թուրքական կառավարութեանը կարող էին ստիպել ավելի զիջող լինել, ուստի Նուբարն ակնկալում էր, որ տերութիւնները ձեռքից բաց չեն թողնի Բ. Դոան վրա խաղաղ ներգործելու իրենց ունեցած այդ միջոցը: Հայ գործիչը համոզված էր, որ փողի հարցում թուրքական կառավարութեան կարիքն այնքան մեծ է ու անհետաձգելի, որ անգամ բավական կլինե՞ր հայտարարել փոխառութեան ստանալը ուշացնելու մասին, որպեսզի Թուրքիան հարկադրված լինե՞ր ընդունել բարեփոխումների ուս-թուրքական նախագիծը: Քանի որ Թուրքիան այդ պահին ուներ 500-ից 700 միլիոն ֆրանկի կարիք, ապա այն մտավախութիւնը, թե Բ. Դոանը կարող է գտնել փողի այլ չուկաներ, իրական չէր: Տասը կամ հիսուն միլիոնը, որ թուրքական կառավարութիւնը կարող էր տարբեր տեղերից ձեռք բերել շատ բարձր տոկոսադրույքով, ընդամենը մի կաթիլ էին ծովում և նրան չէին հանի դրամական դժվարութիւններից: Այնպես որ, եթե Ֆրանսիան, Գերմանիան, ինչպես նաև Անգլիան համաձայնեին իրենց բանկերին հրահանգել՝ առժամանակ՝ մինչև բարեփոխումների ընդունումը, չֆինանսավորել թուրքական նոր փոխառութիւնները, ապա այդ երկիրը, չունենալով մի ուրիշ վարկատու, որը կտար փոքրիչատե խոշոր փոխառութիւն, այդ դեպքում անհապաղ կղաղարեցներ իր դիմադրութիւնը բարեփոխումներին¹:

Պողոս Նուբարը գտնում էր, որ Բ. Դոան վրա իր առաջարկած ճնշումը բնավ չպետք է սպառնալից երանգ ունենա, որ ներկայիս ֆինանսական անմխիթար վիճակում գտնվող Թուրքիային բավական կլինե՞ր բարեկամաբար արված մի արտահայտութիւն այն մասին, թե տերութիւնները պատրաստ են ամեն կերպ դյուրացնելու թուրքական կառավարութեան համար փոխառութեան ձևակերպումը, բայց, իբրև դրա երաշխիք, Թուրքիայի ներքին խաղաղութիւնն ապահովելու համար խնդրում են նախ

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3465, л. 30.

² Նույն տեղում:

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3465, л. 30.

ընդունել հայկական բարեփոխումների ոռու-գերմանական նախագիծը: Ըստ որում Նուբարը գտնում էր, որ լավ կլիներ՝ տերությունների նման առաջարկության նախաձեռնությունը հանձն առնել Ռուսաստանի կայսերական կառավարությունը¹:

Այս մտածումներով Նուբար փաշան հանդիպում է նաև Բելինում ոռուսաց ղեսպան Սվերբենի հետ, մանրամասն նրան ներկայացնում փոխառությունների մասին իր ծրագիրը, որը լիակատար հավանություն է գտնում: Դեսպանը, սակայն, ճիշտ է համարում, որ այդ միջոցի նախաձեռնությունը լավ կլիներ վերապահել ոչ թե Ռուսաստանին, այլ թուրքական կառավարության խոշորագույն վարկատու Ֆրանսիային: Բայց Պողոս Նուբարը առարկում է՝ ասելով, որ Ֆրանսիայի հենց այդ առանձնահատուկ դիրքն է, որ նախընտրելի է դարձնում մի այլ տերության կողմից այդ առաջարկության նախաձեռնումը:

Զրույցի ընթացքում Սվերբենը հետաքրքրվում է, թե իրենց հետ հանդիպման ժամանակ Ցիմերմանն ինչպես է արձագանքել ֆինանսական ճնշման առաջարկին: Պողոս փաշան խոստովանում է, թե պետքարտուղարի փոխանորդից չի ստացել որոշակի պատասխան, բայց տպավորություն ունի, որ հարցի հանդեպ Գերմանիայի վերաբերմունքի հստակեցումը պայմանավորված է մյուս տերությունների բռնած դիրքից²:

Բեռլինում երկու օր մնալուց հետո Պողոս Նուբար փաշան վերադառնում է Փարիզ, ուր տեղի էր ունենալու հայասերների երկրորդ համաեվրոպական հավաքը:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՅԱՍԻՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ ՓԱՐԻԶՈՒՄ

Իրերի դրությունը բարդ լինելով հանդերձ՝ հայկական բարենորոգումների խնդիրը Եվրոպայում և առանձնապես Ֆրանսիայում, Անգլիայում և Շվեյցարիայում արժանացել էր վառ համակրություն:

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3465, л. 31.

² Նույն տեղում:

1913 թ. նոյեմբերի սկզբին նշանավոր դաշնակցական գործիչ Հակոբ Զավրյանը (Զավրիև) կուսակցության հանձնարարությունով մեկնում է Բեռլին՝ այնտեղ դուկտ. Յոհաննես Լեփսիուսի հետ քննարկելու Արևմտահայաստանում բարենորոգումների անցկացման հարցը: Բեռլինում Լեփսիուսը և Զավրիևը հանգամանորեն վերլուծում են հայկական հարցի շուրջ ստեղծված իրադրությունը, պետությունների դիրքորոշումները և գործին նպաստելու իրենց հնարավորությունները: Քննարկվող հարցերի շուրջ ձեռք է բերվում ընդհանուր փոխըմբռնում, որի արդյունքում կազմվում է երկու փաստաթուղթ ՀՅ դաշնակցության և երիտթուրք - դաշնակցություն փոխհարաբերությունների մասին, որոնք հանձնվում են Գերմանիայի արտգործնախարարություն:

Բարենորոգումների հարցի հաջող ելքին նպաստելու համար եվրոպացի հայասերները որոշեցին ավելի սերտ համակարգել իրենց գործողությունները և այդ նպատակով նախաձեռնեցին հրավիրել հայասիրական կոմիտեների ներկայացուցիչների երկրորդ միջազգային կոնֆերանսը¹:

1913 թ. նոյեմբերի 8-ին Ժնևից Թիֆլիս ուղարկված հեռագրով հայտնում էին, որ “Comité de l’Asie Française”-ն («Ֆրանսիայի ասիական կոմիտեն») նախատեսել է նույն ամսվա վերջերին Բեռլինում (Շվեյցարիա) գումարել հայասերների կոնֆերանս, ուր զեկուցելու է Պողոս Նուբար փաշան: Նշված էր նաև, որ հավաքն ընդունելու է Հայաստանի բարենորոգումների մասին հատուկ փաստաթուղթ և այն՝ որպես դիմում, հղվելու է մեծ տերություններին: Բայց կոնֆերանսի կազմակերպիչները շուտով փոխեցին իրենց մտադրությունը և որոշեցին այն հրավիրել Փարիզում: Կոնֆերանսի նախապատրաստման ուղղությամբ եռանդուն աշխատանք կատարեցին «Ֆրանսիայի ասիական կոմիտեի» նախագահ Էմիլ Սենարին, կոմիտեի հայկական բաժանմունքի նախագահ, գեներալ դը Լակրուան և

¹ Կոնֆերանսի մասին մանրամասն տե՛ս «Կովկասի լրագրեր», № 264 (313), 20 նոյեմբերի, № 266 (315), 24 նոյեմբերի 1913 թ.:

փոխնախագահ Ռոբերտ դը Գէն, որոնք ժամանակ ու ջանք չխնայեցին կարևոր միջոցառումը հաջողությամբ նախապատրաստելու համար*:

Փարիզի կոնֆերանսը հավաքվելու էր մի այնպիսի ժամանակ, երբ Հայկական բարենորոգումների հարցն արդեն մեկ տարվա պատմություն ուներ: Այդ ամբողջ ժամանակամիջոցում բարեփոխումների դրոշակակիրը Ռուսաստանն էր: Թեև ոչ աշխուժորեն նրան նեցուկ էր Ֆրանսիան, բոլորովին աջակցություն չկար Անգլիայի կողմից, իսկ Եռյակ զինակցության դաշինքը Գերմանիայի գլխավորությամբ գաղտնի թե բացահայտ դիմադրում էր: Այս բոլոր սկզբում փորձել էր ուսական նախաձեռնությունները փոխել թուրքականով, բայց երբ չէր հաջողվել, նրա անդամները մի շարք էական առարկություններ էին ներկայացրել ուսական նախագծի դեմ: Բայց ներքին պայքարի և վիճաբանությունների այս ամբողջ պատմությունը 1913 թ. աշնանն արդեն մնացել էր անցյալում: Կանցլերի և Յիմերմանի հետ Բեռլինում Սազոնովի ու Կոկովցևի անհատական բացատրություններից հետո Գերմանիան հակվել էր բարեփոխումներին աջակցելու կողմը՝ չնայած շատ համեստ չափով:

Հիմնական առաջարկությունների վեց կետերից բաղկացած համաձայնողական նախագիծը մշակվել էր Կոստանդնուպոլսում և մեծ տերությունների ընդհանուր կամքի արտահայտություն էր: Այս հավաքական կամքին Թուրքիան հակադրել էր իրենը: Նա կտրականապես հրաժարվում էր ճանաչել Եվրոպական վերահսկողության սկզբունքը (որը ժամանակին ընդունվել էր Բեռլինի պայմանագրի 61-րդ կետով): Տերությունները ստիպված էին նոր փոխզիջումային տարբերակներ հորինել Բ. Դոան ինքնասիրությունը բավարարելու համար: Բայց այս առաջարկություններն էլ Կոնստանդնուպոլսում վճռական դիմադրության էին հանդիպել:

* Հանրահայտ է, որ եվրոպական գիտնականներից, գրական և հասարակական գործիչներից Հայկական հարցին ամենից շատ նվիրված էին ֆրանսիացիները:

Այսպիսին էր դրությունը, երբ Հայկական բարեփոխումների եվրոպացի բարեկամները համարձակություն ունեցան խոսելու այն մասին, ինչը չէին համարձակվում անել կառավարությունները, այն է՝ Բ. Դոան վրա ճնշում գործադրելու միջոցների մասին: Այդ միջոցներից ամենագործունը Թուրքիային տրամադրվելիք փոխառության և որևէ այլ տիպի ֆինանսական աջակցության հետաձգումն էր, քանի դեռ նա չէր ընդունել տերությունների առաջարկությունը՝ թեկուզ դրա ամենագույակ տարբերակով:

Հարկադրման հենց այս միջոցների քննարկման նպատակով պետք է հավաքվեր փարիզյան խորհրդակցությունը:

Ռուսական արտգործնախարարությունում գտնում էին, որ շատ լավ կլիներ, եթե Comité de L'Asie Française կողմից նախատեսվող Փարիզի կոնֆերանսին միասնական դաշինքով ներկայացված լինեին ուսական գլխավոր կուսակցությունները՝

Նոյեմբերի 10-ին Պետերբուրգի Հայկական խմբակի ղեկավարությունն ընտրել էր մի պատվիրակություն՝ Ա. Ի. Գուչկովի, Մ. Մ. Կովալևսկու և Պ. Ն. Միլյուկովի հետ բանակցելու համար, որպեսզի նրանք մասնակցեն Փարիզում կայանալիք Հայկական հարցին նվիրված միջազգային համաժողովին: Բայց հաջորդ օրը առաջին երկուսը հրաժարվել էին մեկնել, իսկ Մ. Պապաջանովի ջանքերի շնորհիվ Միլյուկովը համաձայնություն էր տվել՝

Համակրանքով վերաբերվելով համաժողովի գաղափարին՝ Գուչկովն ու Միլյուկովն առանձին-առանձին հեռագրեր էին հղել Փարիզ՝ համաժողովի աշխատանքներին մաղթելով հաջողություն:

Նոյեմբերի 14-ին Փարիզից էջմիածին հղած նամակով Պողոս Նուբարը կաթողիկոսին տեղեկացնում էր, որ զանազան երկրների մի շարք խոչոր հայասեր գործիչներ մտադիր են մոտ օրերս Փարիզում հրավիրել մի կոնֆերանս, որի նպատակը պետք է լինի կառավարություններին խնդրել, որ նրանք Բ.

¹ ПИПАК, том I, стр. 307.

² Նույն տեղում, стр. 287-288.

Դուան վրա գործադրեն ֆինանսական ճնշում և նրան ստիպեն ընդունել և կյանքի կոչել Հայաստանի բարենորոգումների ծրագիրը: «Այս տեսակ իդձ մը,- գրում էր Նուբարը,-քուէարկուած վերոյիչեալ պայմաններու մեջ՝ քօնֆերանսին մասնակցող զանազան երկիրներու ազդեցիկ անձնաւորութեանց կողմէ, անտարակոյս նպաստաւոր ազդեցութիւն մը պիտի ընէ զանազան կառուարութիւններու վրայ»¹:

Նույն օրը՝ նոյեմբերի 14-ին, Պողոս Նուբարը նամակ է գրում Մոսկվա՝ Ռուսաստանի Դումայի պատգամավոր Մ. Ի. Պապաջանովին, ուր ասված էր, որ Ռուսաստանի ջանքերով տերութիւնները եկել են այն վերջնական եզրակացութեան, որ Թուրքահայաստանում բարենորոգումները պարտադիր են Հենց Եվրոպայի շահերի տեսակետից: Բայց, գրում էր նա, Բ. Դուռը, որին ներկայացվել էր բարենորոգումների ծրագիրը, վճռակա՛նապես մերժել է այն՝ հատկապես պարտադիր վերահսկողութեան մասին դրույթը: Այժմ, նշում էր Նուբարը, չկա Թուրքիայի վրա ազդելու այլ միջոց, բացի ֆինանսական ճնշումից: Ֆրանսիան չի ցանկանում միանձնյա իր վրա վերցնել այդ ճնշումը՝ առաջարկելով հարցին տալ միջազգային բնույթ: Այդ ճնշումը պիտի կատարվի նույնիսկ այն կառավարութիւնների կողմից, որոնք բարեկամական սերտ կապերի մեջ են Թուրքիայի հետ, քանի որ Հենց բոլորից շատ իրենք կարիք ունեն Թուրքահայաստանում բարենորոգումների իրականացման՝ դրանով իսկ ապահովելով անվտանգութիւն ու խաղաղութիւն և փրկելով կայսրութիւնը մասնատումից:

Խորհրդակցելով Անգլիայի իր բարեկամների հետ՝ գրում էր Նուբար փաշան, նրանք եկել են այն եզրակացութեան, որ օգտակար կլինեն Փարիզում հրավիրել համաժողով, որտեղ Եվրոպայի տարբեր երկրների ներկայացուցիչները կարող կլինեն մասնակցութիւն ունենալու և քննարկումների արդյունքում խնդրանքով դիմել բոլոր տերութիւններին, որպեսզի նրանք փոխադարձ համաձայնութեամբ ճնշում գործադրեն

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 15:

Թուրքիայի վրա: Նուբարը հաղորդում էր, որ Ֆրանսիայի արտգործնախարարութեան վրա ազդեցութիւն ունեցող “Le Comité de L’Asie”-ն իր կազմից ձևավորել է հատուկ հայկական կոմիտե, որը և ստանձնել է նշված համաժողովի հրավիրումը նոյեմբերի վերջին օրերին: Նա նշում էր նաև, որ իր հերթին Բրիտանական հայկական կոմիտեն Լոնդոնում ընդունել է որոշում այդ գործում ներգրավել նաև պառլամենտի անդամներին*:

* Բրիտանական հայկական կոմիտեի ընդունած որոշման մեջ տեղ էին գտել հետևյալ կետերը. «1) Հայ ժողովրդի դժբախտութիւնները պահանջում են Եվրոպայի ուշադրութիւնը և համակրութիւնը: Այժմ անհրաժեշտ է, որ հայկական հարցը ձեռք առնվի մյուս պետութիւնների կողմից, որովհետև չնայելով Բեռլինի դաշնագրի և 1895 թվականի ռեֆորմների ծրագրի մեջ պարունակած տրամադրութիւններին, որոնք սկզբունքով ընդունվել և հրատարակվել են օսմանյան կառավարութեան կողմից, հայերի տանջանքները բնավ չեն նվազել: 2) Մեծ պետութիւնները պետք է հայկական հարցի լուծումը դարձնեն մի էական մասն այն ընդհանուր լուծման, որին պետք է հանգեն բաւանյան պատերազմի ավարտումից հետո: 3) Կոմիտեն առաջարկում է հետևյալ ծրագիրը. ա) Հայաստանը դեկլարելու համար պաշտոնի է կանչվում Եվրոպացի մի գերագույն կոմիսար՝ ներկայացված մեծ պետութիւնների կողմից և նշանակված սուլթանից, բ) Հայաստանի կառավարման վրա վերահսկողութիւն (կոնտրոլ) սահմանելու համար ստեղծվում է մի մնայուն հանձնաժողով՝ մեծ պետութիւնների ներկայացուցիչներից, գ) կյանքի է կոչվում հայերից ու մուսուլմաններից կես առ կես ընտրված նահանգային մի հանձնաժողով, դ) ստեղծվում է տեղական ժանդարմերիա և ոստիկանութիւն, ե) կատարվում են տեղական դատաստանական և ֆինանսական ռեֆորմներ, զ) կիրառվում են վարչական միջոցներ՝ վարձատրելու հողային կեղեքումների գոհերին, է) միջոցներ են ձեռնարկվում քրդերի և այլ թափառական ցեղերի նկատմամբ: 4) Այս ծրագիրը, հարգելով օսմանյան կայսրութեան ամբողջականութիւնը և պահանջելով անհրաժեշտ խստիւմ ռեֆորմներ, կարող է ընդունվել ոչ միայն մեծ պետութիւնների, այլև օսմանյան կառավարութեան կողմից, որի բոլոր հպատակները հավասարապես կշահեն, կլինի կյանքի ու գույքի ապահովութիւն հայաբնակ նահանգներում, այնտեղ լրջորեն կուժեղանա ֆինանսական և առևտրական կայունութիւնը՝ ապահովելով հարստութեան բազմապատկում ու բնակչութեան բարգաւաճում: 5) Մեծ պետութիւնների ուշադրութիւնը հրավիրել այն վտանգի վրա, որը կարող է սպառնալ հայաբնակ նահանգներին, եթե թույլ տրվի այնտեղ բնակչութիւն հաստատելու Եվրոպական Թուրքիայի գաղթականներին և Բալկաններում պատերազմած թուրք զինվորներին: 6) Սույն բանաձևի պատճենը ուղարկել չուտով Փարիզում գումարվելիք Միջազգային ֆինանսական հանձնաժողովին և մեծ պետութիւնների արտաքին գործերի մինիստրներին» (ПЗПАК, том I, стр. 243-245)

սիւուան ուրիշները հետ կներկայացնի Գերմանիան, խոստացել են գալ նաև նշանավոր քաղաքական դեմքեր Ավստրիայից, Իտալիայից և Շվեյցարիայից:

Այնուհետև Պողոս Նուբարն իր նամակում շեշտում էր, որ մինչ այժմ միայն Ռուսաստանում չեն գտնվել գործիչներ, որոնք ցանկություն հայտնեին մասնակցելու այդ ժողովին: Ուստի նա Մ. Պապաջանովին խնդրում էր միջոցներ ձեռնարկել, որպեսզի այնտեղ մասնակցեն նաև Ռուսաստանը ներկայացնող գործիչներ, որոնց դերն այդ գործում մեծ է: Նուբարը հատկապես նշում էր, որ շատ կցանկանար համաժողովում Ռուսաստանը ներկայացնող «մեր լավ բարեկամ», Պետական Դումայի պատգամավոր Ա. Ի. Գուչկովը:

Հայասերների՝ որպես վեց մեծ տերությունների ոչ պաշտոնական ներկայացուցիչների երկրորդ կոնֆերանսը տեղի ունեցավ նոյեմբերի 17 (30)-ին: Այս կոնֆերանսն ավելի ներկայացուցչական էր, քան եվրոպական նախասիրական կոմիտեների ներկայացուցիչների նախորդ կոնֆերանսը, որը հրավիրվել էր 1913 թ. ապրիլի 25-ին, Լոնդոնում:

Փարիզի կոնֆերանսին մասնակցում էին Հայտնի Հայասեր գործիչներ՝ Ֆրանսիայից՝ գորավար դ՛Լակրուա (*“Comité de L’Asie Française”*–ի* նախագահ), էմիլ Սենատ, Վիկտոր Բերար, Ռենե Պինոն, Ռ. դ՛ Բե, Անգլիայից՝ Հ. Բեքստոն, Ա. Վիլյամս, Օ՛ Կոննոր, Գերմանիայից՝ դոկտ. Յոհաննես Լեփսիուս, Ավստրո-Հունգարիայից՝ Պրունկուլ, Անտոն Հերման, Իտալիայից՝ սենատի անդամ դուքս դ՛Անդրեան և դի Կամաֆան, Շվեյցարիայից՝ Լ. Ֆավր, Կլապարեդ, Ռուսաստանից՝ Պ. Միլյուկով, Հայոց ազգային պատվիրակությունից՝ նրա ղեկավար Պողոս Նուբար փաշա և այլք:

Կոնֆերանսի նախագահ ընտրվեց գեներալ դ՛Լակրուան, որը «Ֆրանսիայի ասիական կոմիտեի» հայկական սեկցիայի

* Այդ կոմիտեի (գրականության մեջ օգտագործվում է նաև «խորհուրդ» բառը) հոգին էր Հայոց ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան:

նախագահն էր: Բացելով կոնֆերանսը և ողջունելով պատվիրակներին՝ նա խոսքի սկզբում իսկ նշեց, որ հայասիրական շարժումը ծնունդ է առել Անգլիայում, ապա այնտեղից տարածվել այլ երկրներում:

Բեուլինի 1878 թ. վեհաժողովի 61-րդ հոդվածը, ասում էր նա, Կ. Պոլսի ջանքերով երկար ժամանակ մնացել է օդից կախված, բայց հիմա Եվրոպան հաստատ ցանկություն ունի նորից ձեռքն առնելու Հայաստանի բարենորոգումների հարցը: Նա հիշեցրեց, որ անցյալ դարնանը Ռուսաստանը ծրագիր է ներկայացրել Թուրքահայաստանում եվրոպական հսկողության ներքո արմատական բարեփոխումներ մտցնելու մասին, որը ենթարկվել է Կ. Պոլսի դեսպանատների անդամների քննությունը, և չնայելով Երեքպետյան դաշնության, գլխավորապես Գերմանիայի առարկություններին, այն ընդունվել է մի քանի փոփոխություններով և ճանաչվել որպես մեծ պետությունների ընդհանուր կամքի արտահայտություն: Ապա վերհիշելով Պիչոնի խոսքերը, թե *“les réformés en Arménie – c’est la tranquillité d’Europe”*, նախագահողը հույս հայտնեց, թե կարծես մոտ է այդ ցանկության իրականացումը:

Լակրուան գտնում էր, որ թերևս կարելի էր մի քանի շտկումներ կատարել առկա նախագծի բովանդակության մեջ, բայց քանի որ այն տեսքի բերելը ձգձգվել է ամիսներ շարունակ, ուստի կատարյալ անխոհեմություն կլինեին մատնանշել դրանում եղած թերությունները: Որքան էլ այդ թերությունները նշանակալի լինեին, այժմ դրանց վերացնելու պահը չէ, նշել է բանախոսը, այլ եղածը անմիջականորեն գործի դնելու, լավ թե վատ՝ արդեն գոյություն ունեցող ծրագիրն իրականացնելու ժամանակը: Ուրեմն իրենց խնդիրն է ազդել պետությունների ղեկավարների վրա, որպեսզի նրանք ի կատար ածեն Կ. Պոլսի դեսպանների ընդունած նախագիծը: Եվրոպական հասարակական կարծիքը

* «Ռեֆորմները Հայաստանում Եվրոպայի անդորրությունն է»: Հարկ է նշել, որ Պիչոնի այդ արտահայտությունը ուղղորդում էր կոնֆերանսի ելույթների ու վճիռների ընդհանուր տոնը:

նույնպես պետք է իր ազդու ձայնը բարձրացնի՝ ի պաշտպանություն հալածական ու տառապյալ հայերի:

Կոնֆերանսը նախագահողը նկատում էր, որ բարենորոգումների նախագիծն ընդունելու համար ստեղծված է բարենպաստ վիճակ այն առումով, որ Բալկանյան պատերազմում կրած պարտությունների հետևանքով Թուրքիան ներկայումս կանգնած է ֆինանսական դժվարին կացություն առջև և եվրոպական պետություններից խնդրում է փոխառություններ: Ուստի միանգամայն իրավացի կլինեն պետությունները, եթե ձնչում գործադրեն նրա վրա և ստիպեն իրագործելու որոշակի բարեփոխումներ Հայաստանում: Ճնշում գործադրելով Բ. Դոան վրա, ասում էր նա, Եվրոպան օգնած կլինի Թուրքիային, որը այսպիսով գերծկանա արտաքին ճակատագրական միջամտություններից և կապահովի կայսրության ամբողջականությունն ու երկարակեցությունը: Նման քայլը Թուրքիային շատ ձեռնասու է, շարունակում է Լակրուան, մանավանդ եթե հաշվի առնվի, որ հայերն իրենց համար չեն խնդրում առանձնակի արտոնություններ: «Թուրքիայի նկատմամբ չունենալով ոչ մի կենտրոնախույս ձգտում, չեչտում էր Լակրուան, - նրանք միայն ցանկանում են բարենորոգություն, որպեսզի կարողանան մնալ սուլթանի հավատարիմ հպատակներ, առանց հետին միտումների ընդունել վեհապետությունը, որ ներկայումս այնպես անողորմաբար ծանրացած է նրանց վրա»¹: Այնուհետև նա ասում է, որ առանց եվրոպական կոնտրոլի Հայաստանում ոչ մի բարենորոգում հնարավոր չէ իրականացնել: Թեև Թուրքիան պնդում է, թե կոնտրոլը անպատվաբեր է վեհապետության համար, բայց իրականում այն կայսրության պահպանման երաշխիք է:

Բացման խոսքի վերջում գեներալ Լակրուան առաջարկում է նախ լսել Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փառային, որը կներկայացնի, թե ինչ վիճակում է Հայաստանի բարենորոգումների ընթացքը, ինչ հույսեր ունի Հայաստանը, ինչից կարող է հայ ժողովուրդը հիասթափվել, եթե այս

¹ «Արարատ», № 1, հունվար, 1914, էջ 40:

անգամ էլ հաջողություն չունենա երեքուկես տասնամյակ շարքովող Հայկական հարցը:

Ամբիոն բարձրանալով՝ Պողոս Նուբարը զեկուցման սկզբում երախտագիտական խոսքեր է հղում կոնֆերանսի կազմակերպիչներին և մասնակիցներին, որոնք «ոչ միայն ցույց տվին իրենց ամենաեռանդուն գործակցությունը, այլև նույնիսկ չ'տատանվեցին երկար ճանապարհի հոգնածություններն հանձն առնել՝ գալու համար այս գործին, որին մենք հետևում ենք՝ իրենց բերելով [մեր] ջերմ համակրանքն ու հիացումը»: Ապա՝ «Ձեր շնորհիվ այս համագումարը կարող է ունենալ վճռական հետևանքներ ու արգասիքներ և մենք, բոլոր հայերս, կպահանջվենք նկատմամբ աներկբայելի երախտագիտություն»¹:

Անցնելով բուն խնդրին՝ Պողոս Նուբարը համառոտ անդրադառնում է Հայկական հարցի գլխավոր շրջաններին ու ղեպքերին, Բ. Դոան հետ պետությունների երկարատև բանակցություններին, որոնց նպատակն է եղել կյանքի նվազագույն, տանելի պայմաններ ստեղծել հայոց համար: Այնուհետև զեկուցողը ներկայացնում է Հայկական հարցի լուծման ուղղությամբ վերջին ամիսներին կատարված աշխատանքները, նշում դժվարությունները, որոնք առաջացել էին Հայաստանի բարենորոգումների հարցի շուրջ ընթացող բանակցությունների ժամանակ: Պողոս Նուբարը չեչտում էր, որ Հայաստանի բարենորոգումների հարցը ոչ միայն Հայկական հարց է, այլև միջազգային խնդիր, որովհետև եթե եվրոպական դիվանագիտությունը կամենում է պահել Ասիական Թուրքիայի անձեռնմխելիությունը, ապա չի կարող սառնասրտորեն նայել, թե ինչպես է դժբախտությունների մեջ տվայտում այնտեղ ապրող հնագույն քրիստոնյա մի ժողովուրդ: Եվրոպան պետք է ձեռք առնի վճռական միջոցներ: Հրապարակի վրա կա բարենորոգումների պատրաստի ծրագիր, որը մշակված է Կ. Պոլսում և արժանացել է մեծ պետությունների ղեսպանների խորհրդաժողովի հավանությունը: Նախագծված բարենորոգումները պետք է գործադրվեն եվրոպայի

¹ «Արարատ», № 1, հունվար, 1914, էջ 31-37:

վերահսկողություն (կոնտրոլ) ներքո, որն անհրաժեշտ է «հենց իրեն Տաճկաստանի շահերի տեսակետից»¹: Թուրքիան ամեն ինչ անում է, որբարենորոգումների խնդիրն «իրականացնի» սեփական միջոցներով և ըմբռնումներով: Ջի կարելի հույս դնել Բ. Դոան բարի կամքի վրա, հակառակ դեպքում դա կնշանակի Եվրոպայի ստանձնած պարտավորությունները նորից նետել անհայտություն գիրկը: Եթե Հայկական հարցի արծարծման նախաձեռնությունն այս անգամ պատկանում է Ռուսաստանին, բայց դա չպետք է հարուցի ուրիշ երկրների կառավարությունների անվստահությունը: Բարեբախտաբար, չեչտում էր Պողոս Նուբարը, այն թյուրիմացությունները, որոնք խնդրի քննարկումների ընթացքում առաջ էին եկել պետությունների ղեկավարների ու դիվանագետների շրջանում, արդեն մնացել են անցյալում: Կոնֆերանսի մասնակիցներին Նուբար փաշան հիշեցրեց, որ հայերը բնավ անջատողականներ չեն, իսկ այն բանից հետո, երբ Ռուսաստանը հայտնեց, որ չի ցանկանում Հայաստանի անեքսիան, ուստի օրակարգից հանվեց հայերի երազած առավելագույնը՝ իրենց երկրի ինքնավարության հարցը: Հայերի պահանջն այժմ նվազագույն է՝ արդարություն իրենց նկատմամբ և հավասարություն օսմանյան մյուս հպատակների շարքում, այլ խոսքով՝ նրանք ցանկանում են մնալ որպես «բարի տաճկաստանցիներ»²:

Բայց այդքանից հետո էլ, ասում էր Պողոս փաշան, Բ. Դուռը չի համաձայնվում այդ նվազագույն պահանջն անգամ երաշխավորել՝ հարցի լուծումը բացառապես թողնելով իր կամեցողությանը: Հիմա, երբ բացավում է գինվորական ճնշումը³, Եվրոպայի ձեռքին մնացել է միայն մի լծակ՝ **Ֆինանսական ճնշում** գործադրել թուրքական իշխանությունների վրա՝ նրան **առայժմ** չտրամադրելով դրամական փոխառություններ:

¹ «Արարատ», № 1, հունվար, 1914, էջ 31-37:

² Նույն տեղում, էջ 33:

³ Տե՛ս **Հ. Աճառեան**, Տաճկահայոց հարցի պատմությունը (սկզբից մինչև 1915 թ.), Նոր-Նախիջևան, 1915, էջ 75:

Այո, երբ համարյա սպառված էին Բ. Դոան վրա ճնշում գործադրելու մյուս բոլոր հնարավորությունները, դրանցից մնացել էր միայն մեկը՝ Թուրքիային դրամական փոխառություններ չտրամադրելը: Այն պետք է պայմանավորել ուսուցանական համաձայնությամբ, ասում էր Պողոս Նուբարը: Այդ մի համատեղ, թեթև ֆինանսական ճնշումը կարող էր արդյունավետ լինել, այսինքն՝ Բ. Դոանը մղել գիջման, քանի որ երկիրը տնտեսական ծանր կացության մեջ է: Վիճակը թեթևացնելու համար ֆինանսների նախարար Ջավիդը նախ Բեուլին էր գնացել փոխառություն կնքելու, բայց հաջողությունը չնչին էր եղել, ապա երկար ժամանակ բախել էր Փարիզի ֆինանսական-դիվանագիտական շրջանների դռները՝ նորից հանդիպելով ձախողման*:

Հայոց պատրիարքարանի և Ազգային պատվիրակության եռանդուն գործունեության շնորհիվ՝ Պետերբուրգը նույնպես մերժել էր թուրքական փոխառությունը՝ այն պայմանավորելով Հայկական հարցի արդար լուծումով: Ավելին, Ռուսական կառավարությունն իր դաշնակից Ֆրանսիայից պահանջել էր փոխառություն տալու հարցում գիջում չանել Բ. Դոանը, մինչև նա դրական լուծում չտա Հայկական հարցին²:

Պատահական չէ, որ երբ Փարիզի ուսական ղեսպան Իզվոլսկու հետ հանդիպման ժամանակ Ֆրանսիայի նախագահ

* Ֆրանսիական քաղաքական մտքի բնագավառում միմյանց ընդդիմադիր էին երկու ուղղություններ. մի մասը առաջնային նշանակությունը տալիս էր ֆինանսներին, որոնց պետք է հետևեր քաղաքականությանը, մյուս մասը գտնում էր, որ, ընդհակառակը՝ ֆինանսները պետք է ենթարկվեն քաղաքականությանը: Ծատ կարևոր էր պետական մտքի երկրորդ ուղղության ամրապնդումը, և կոնֆերանսը կարող էր դրական ազդեցություն ունենալ այդ գաղափարի վրա (ՄՅՊԱԿ, տոմ I, տր. 307): Այդպես էլ եղավ. Ջավիդ բեյը հանդիպել էր ֆրանսիական քաղաքական մտքի երկրորդ ուղղության պատնեչին (ՄՅՊԱԿ, տոմ I, տր. 308):

¹ Տե՛ս **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատոր երկրորդ, Պեյրութ, 1952, էջ 257:

² Տե՛ս նույն տեղում, էջ 257-258:

Պուանկարեն նրան հարցրել էր, թե «ե՞րբ պետք է վերցնեք ձեր արգելքը թուրքական փոխառություն վրայից», դեսպանը պատասխանել էր. «Երբ թուրքերը ֆոն Սանդերսի առնչությամբ ընդունեն մեր պահանջը և իրագործեն հայկական բարենորոգումները»: Պուանկարեն իր լիակատար համաձայնությունն էր հայտնել՝ միաժամանակ տեղեկացնելով, որ իրենք նույնպես այդ նույն պատասխանն են տվել Զավիդին և Փարիզի թուրք դեսպանին՝:

Պողոս Նուբարը միաժամանակ շեշտում էր, որ հայերը, մարդասիրական սկզբունքից ելնելով, ընդհանրապես դեմ են թուրքիային փոխառությունից զրկելուն, որ խոսքը միայն կոնկրետ խնդրի առնչությամբ նրան ժամանակավորապես փոխառություն չտալու մասին է: Այո, ոչ թե տեական ժամանակով փոխառությունների մերժում, այլ՝ «բարեկամական ֆինանսական ճնշում», այսինքն՝ փոխառություններ տալու հետաձգում²: Թուրքական իշխանությունները, նշում էր Պողոս Նուբարը, մշտապես շեշտում են, թե պետք է խնայել իրենց երկրի ինքնասիրությունը «եվրոպական միջամտություններից», բայց այդ դեպքում ինչու նրանք չեն վիրավորվում՝ համաձայնություն տալով գերմանական գեներալին՝ նշանակել օսմանյան գինված ուժերի ամենակարևոր ռազմական միավորի հրամանատար:

Վերջում Ազգային պատվիրակության ղեկավարը կրկին երախտագիտություն է հայտնում Եվրոպայում ծավալված հայասիրական շարժման ղեկավարներին, որոնք ջանք ու եռանդ չէին խնայում օգտակար լինելու բազմաչարչար հայ ժողովրդին³:

Պողոս Նուբարի գեկուցումից հետո ֆրանսերենով հրապարակվում է կոնֆերանսի կողմից ընդունվելիք բանաձևի նախագիծը, որից հետո սկսվում է մտքերի փոխանակումը:

¹ Տե՛ս Վահան Փափազեան, Իմ յուշերը, էջ 258 (փոխարինել «Նարնջագույն գրքով», էջ 141):

² «Արարատ», № 1, հունվար, 1914, էջ 32:

* Նկատի ունի գեներալ Լիման ֆոն Սանդերսին:

³ Պողոս Նուբարի ելույթն ամբողջությամբ տե՛ս Բարգէն Վարդապետ, Հայկական հարցը և Պողոս Նուբար փաշան, Վաղարշապատ, 1914, էջ 18-31:

Առաջինը ելույթով հանդես է գալիս Իտալիայի ներկայացուցիչ դուքս դ'Անդրիան: Շեշտելով Հայաստանում բարենորոգումների անհրաժեշտությունը՝ նա միաժամանակ պահանջում է ոչ մի պարագայում կասկածի տակ չդնել հայկական նահանգների վրա թուրքիայի վեհապետական իրավունքները:

Կոնֆերանսում մեծ ու բովանդակալից ելույթով հանդես եկավ հայտնի հրապարակախոս, Պետական Դումայի անդամ Պավել Նիկոլաևիչ Միլյուկովը*։ Հենց սկզբից նա անդրադառնում է իրենից առաջ հանդես եկած դ'Անդրիայի ելույթին և նրան հիշեցնում 1895 թ. Չեստերում մեծն Գլադստոնի ելույթը, որով նա ներկաներին խորհուրդ էր տվել Հայկական հարցի վերաբերյալ, այն է՝ 1) «Սահմանափակվել միայն խիստ անհրաժեշտով»։ Մեկնաբանելով այդ խոսքերը՝ Միլյուկովն ասում է. «Մենք հենց դա էլ անում ենք, ինչպես երևում է Նուբար փաշայի ելույթից։ Երբ Ռուսաստանն առաջ քաշեց Հայաստանի բարեփոխումների իր նախագիծը, մեզ ասում էին. «Դուք (ուսներդ։- Հ. Ս.) փորձում եք երկնքում կոտնել որսալ, դրա փոխարեն ավելի լավ չէ՞՞՞ ձեռքում պահել բռնած երաշտահավը»։ Դե ինչ, մենք այսօր Գերմանիայի հետ միասին երաշտահավին էլ ենք համաձայն, բայց մեզ տվեք կենդանի երաշտահավ, այլ ոչ թե խաղալիք, որի փետուրներն առաջին իսկ անձրևից կթափվեն»։ 2) «Չհավատաք Բ. Դոան խոստումներին», - ասել էր Գլադստոնը։ «Այդ միակ երաշխիքը, - շեշտում էր Միլյուկովը, - կարող է լինել մեր (ռազմաքաղաքական երկու բլոկների։- Հ. Ս.) երկրների իշխանությունների կողմից իրական վերահսկողություն հաստատումը»։ 3) «Կանգ չառնեք ճնշումների առաջ, քանի որ Կոստանդնուպոլսում արտաքին ճնշումն ավելի լավ են հասկանում, քան

* Հայ ժողովրդի նվիրյալ բարեկամ Պավել Նիկոլաևիչ Միլյուկովը (1859-1943) ուսու նշանավոր քաղաքական և հասարակական գործիչ էր, պատմաբան ու հրապարակախոս, կաղետական (Սահմանադրական դեմոկրատական - ժողովրդական ազատության) կուսակցության առաջնորդ։ 1917 թ. մարտ-մայիս ամիսներին եղել էր ժամանակավոր կառավարության արտաքին գործերի նախարար։ 1918 թ. տարագրվել և հաստատվել է Փարիզում, ուր և հուլարկավորված է։

ներքին պարտականությունը»: «Գլխատոնյան այս երրորդ խորհրդի իրագործումն էլ, - ասում էր Միլյուկովը, - ըստ մեր կողմից ընդունվելիք բանաձևի՝ պետք է իրենց վրա վերցնեն պետությունները»¹:

Այնուհետև Պավել Միլյուկովը ներկաներին տեղեկացում է, որ Ռուսաստանում թեև տակավին կազմակերպված չէ հայկական կոմիտե, բայց այնտեղ ամենատարբեր հոսանքների և կուսակցությունների մարդիկ միակամ համակրում են հայերին: Կրկին անդրադառնալով դ'Անդրեայի ելույթին՝ նա նշում է, որ եթե Ռուսաստանը չի դնում Թուրքահայաստան գործ մտցնելու հարցը, ապա ինքնրստինքյան հասկանալի է, որ Թուրքիայի տարածքային անձեռնմխելիությանը որևէ վտանգ չի սպառնալու: Բայց դա չի նշանակում, ասում էր նա, որ թուրքական կառավարությունն առաջվա նման պետք է թուլյատրել հեշտությամբ խուսափել Հայաստանում բարենորոգումներ մտցնելու հարցի լուծումից: Ռուսաստանի ներկայացուցիչը հիշեցնում էր, որ հայկական հարցի լուծման համար հանգուցյալ Գլխատոնը երեք գործնական խորհուրդ է տվել. 1) Չափավորել Թուրքիային ներկայացվելիք պահանջները և սահմանափակվել միայն ամենաանհրաժեշտով, 2) Չհավատալ թուրքական կառավարության խոստումներին և նրանից պահանջել իրական երաշխիքներ, 3) Եթե Բ. Դուռը չհամաձայնի հոժարակամ կատարել բարենորոգումները, ապա կանգ չառնել ճնշման առաջ, քանզի Կ. Պոլսում արտաքին ստիպողական միջոցների արժեքն ավելի լավ են ըմբռնում, քան ներքին պարտականություններին*:

Պ. Միլյուկովն իր ելույթը ավարտում է հետևյալ խոսքերով. «Թուրքիայի կառավարության վրա Եվրոպան պետք է ազդի ունեցած բոլոր հնարավորություններով»: Նա մեծ պետությունների կառավարություններին կոչ արեց Թուրքիայի ֆինանսա-

կան պահանջներին բավարարություն չտալ, մինչև որ Բ. Դուռը չհամաձայնի Հայաստանում մտցնել բարենորոգումներ¹:

Նշենք, որ Ֆրանսիա մեկնած Թուրքիայի ֆինանսների նախարար Ջավիդ բեյը այդ ժամանակ Փարիզում համաձայնության էր եկել, որ Ֆրանսիան իր երկրին փոխառություն կտա այն ժամանակ միայն, երբ գոյանա թուրքահայ հաշտություն, ինչպես նաև Թուրքիան հանձնառու լինի գործադրել Հայաստանի բարենորոգումները: Քանի որ այդ ժամանակ թուրքահայ հաշտությունն արդեն գոյացել էր, հետևապես մնում էր միայն հայկական բարենորոգումների խնդիրը: Եվ որպեսզի դա չդիտվեր որպես միայն Ֆրանսիայի կողմից Թուրքիայի վրա ճնշում գործադրելու միջոց, Փարիզը ձգտում էր օսմանյան փոխառությանը տալ միջազգային բնույթ և այն ստանալու միակ պայման դնել հայկական բարենորոգումների գործադրումը²:

Հանդես է գալիս Ֆրանսիայի Հայտնի գրող Ռենե Պինոն, որի ստեղծագործությունների նյութը հիմնականում Մերձավոր Արևելքն էր: Այդ օրերին վերահրատարակվել էր նրա «Բարեփոխումները Ասիական Թուրքիայում» գիրքը, որի նոր գրված առաջաբանում նա բոլոր մեծ տերությունների պարտքն էր համարել անհապաղ ձեռնարկել Հայաստանի բարեկարգումը: Ասիական Թուրքիայի ընդհանուր վիճակի համայնապատկերի վրա նա ճշմարիտ համարեց այն բոլոր առաջարկությունները, որոնք ուղղված են Հայաստանի և նրա ժողովրդի վիճակի բարվոքմանը՝ հիշեցնելով, որ այդ հարցի դրական լուծումով է պայմանավորված աշխարհի այդ մասի հանդարտությունը³: Ռենե Պինոն ճիշտ գտավ Ֆրանսիայից պահանջելը, որ նա գումարներ չտա Թուրքիային, բայց նույնը պահանջեց նաև առանձին-առանձին մյուս բոլոր հինգ մեծ պետություններից: Բոլորը միասին պետք է մերժեն գումարներ տրամադրել թուրքերին, ասում էր նա: Պինոյի ելույթի մեխը հենց դա էր. ոչ միայն Ֆրանսիան պիտի հրաժարվի

¹ ПЗПАК, том I, стр. 324-325.

* Հայասերների Փարիզի կոնֆերանսում իր գործունեությունը Պ. Միլյուկովն անդրադարձել է հետագայում՝ տարագրության ժամանակ գրած հուշերում (տե՛ս Պ. Н. Милоков, Воспоминания, том второй (1859-1917), Москва, "Современник", 1990, էջ 120):

¹ Տե՛ս «Կովկասի լրագրեր», № 264 (313), 20 նոյեմբերի 1913 թ.:

² Տե՛ս «Աշխատանք» (Վան), № 4 (150), 23 նոյեմբերի 1913 թ.:

³ «Արարատ», № 1, Հունվար, 1914, էջ 34:

Թուրքիային փոխառուծյուն տալուց, այլև ողջ Եվրոպան, այն բոլոր պետությունները, որոնք ունեն ֆինանսական լուրջ միջոցներ: «Դրամ տալու մերժումն,- ասում էր նա,- պետք է լինի ընդհանուր, որպեսզի ոչ ոք հետո չկարողանա պճնազարգվել ծածուկ բարեկամի և Տաճկաստանի պաշտպանի դերում»¹:

Ամբողջ խորհրդակցությունը բնական հետաքրքրություններ սպասում էր, թե ինչ կասի Գերմանիայի ներկայացուցիչ դոկտ. Յոհաննես Լեփսիուսը, որը քիչ առաջ էր ժամանել Փարիզ՝ Կրիլիայում (Ադանայի վիլայեթ) կատարած ճանապարհորդությունից հետո, և որն առանձնահատուկ եռանդով ձգտում էր հայերին թեքել Գերմանիայի կողմը: Քանի որ նա ֆրանսերեն հմուտ չէր խոսում, ուստի նրա գերմաներեն արտահայտած շատ մտքեր կորան չվեցարացի Ֆավրի կատարած թարգմանության ընթացքում: Հայացք նետելով Հայկական հարցի միջազգային արժարժման փուլերի վրա՝ նա նախ վկայակոչեց Սան-Ֆրանցիսկոյի տրակտատի 16-րդ և Բեռլինյան տրակտատի 61-րդ հոդվածները: Ինչպես երևում է,- ասում էր նա,- թվերի տեղերն են փոխել: Իսկ ի՞նչ էր նշանակում թվերի նման տեղափոխությունը: Սան-Ստեֆանոյի պայմանագրով մեկը հանդես է գալիս վեցի դեմ: Այդ մեկը Թուրքիան էր: Այդ թվաբանությունը փոխելու համար Գերմանիան մեծ ջանքեր գործադրեց և հաջողության հասավ: Այս անգամ էլ վեցը մեկի դեմ էր, և այդ մեկն այս անգամ Ռուսաստանն էր, իսկ Թուրքիան վեցյակում փոխարինել էր նրան: Եվ ահա այժմ՝ երեք և կես տասնամյակ հետո, այդ տարաձայնությունը լուծվել է: Միաժամանակ դոկտ. Լեփսիուսն ափսոսանքով շեշտում էր, որ երկար բանակցությունների արդյունքում ստեղծված բարենորոգումների նախագիծը շատ զիջողական է, ուստի ամեն ինչ պետք է արվի գոնե եվրոպական տեսուչների հսկողական իրավունքները մեծացնելու համար: Նա խիստ դժգոհ էր այդ ուղղությամբ բանաձևի տեքստում տեղ գտած *“attribution de pouvoirs”*² ընդհանուր և անորոշ ձևակերպումից:

¹ «Արարատ», № 1, հունվար, 1914, էջ 34-35:

² ПЗПАК, том I, стр. 325.

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Գերմանիայի ներկայացուցիչն ավելի արմատական էր արտահայտվել, քան այն ընդհանուր միտումը, որ առկա էր կոնֆերանսի մեծամասնությունում:

Շվեյցարիացի պատգամավորներն իրենց ելույթներում հարց էին դնում, որ եթե Թուրքիան հրաժարվի Հայաստանում բարենորոգումներ գործադրել եվրոպական վերահսկողություն ներքո, ապա այդ դեպքում հայերի պաշտպանություն գործը պետք է թողնել միայն Ռուսաստանին:

Հերթը հասնում է անգլիացի պատգամավորներ Օ'Կոնորին, Ա. Վիլյամսին և Բեքստոնին:

Ծագումով իռլանդացի, Համայնքների պալատի անդամ Օ'Կոնորն իր ելույթը սկսում է բացատրություններ, թե ինչու Անգլիան ավելի հետևողական չի պաշտպանում Հայկական հարցը: Նա ասում է. «Մենք բոլորս կողմնակից ենք հայոց ազատությանն ու ապահով կյանքին, բայց վախ ունենք, որ բարենորոգումների հարցն ավելի առաջ մղելով՝ կարող ենք նպաստել Հայկական նոր ջարդերի սանձազերծմանը»:

Ա. Վիլյամսը, որը *“British Armenian Comittee”*-ի նախագահն էր, նշում էր, թե ինքը գիտակցում է, որ իր գլխավորած կոմիտեն և Անգլիայի արտգործնախարարությունը մինչև այժմ «գործել են լուռության մեջ», բայց հիմա, երբ Հայաստանի բարենորոգումների հարցում Ռուսաստանը ձեռք է բերել Գերմանիայի համաձայնությունը, իր երկիրը ևս պատրաստակամ է գործուն դեր կատարելու: Անդրադառնալով եվրոպական վերահսկողության խնդրին՝ նա նույնպես գտնում էր, որ առանց դրա Հայաստանի մասին ընդունված ոչ մի որոշում չի կենսագործվի:

Կոնֆերանսի մասնակիցների վրա հատկապես ուժգին տպավորություն էր գործել պաստոր Հարալդ Բեքստոնի գրավոր ելույթը: Իր եղբայր Նոելի հետ և վիպասան Արամ Բաֆֆու ընկերակցությամբ նա մոտիկ անցյալում ճանապարհորդել էր Հայաստանում, եղել է ջմիրաձնում, հանդիպել հայոց կաթողիկոսին, այնտեղից Պարսկաստանի վրայով անցել Թուրքիա և անձամբ ականատես եղել հայոց հայրենիքի ղժբախտ վիճակին: Բազմակողմանի փաստարկված ելույթում նա ոչ միայն Հա-

յաստանի բարեկարգումը համարում էր անհրաժեշտ, այլև անհետաձգելի: Գյուղական ժողովուրդը, ասում էր նա, «պատրաստ է պաշտպանվել զենքով»: Բեքստոնը մատնանշում էր թուրքական իշխանությունների կառավարողներին անհամալուծությունն ու թուլությունը և եվրոպական վերահսկողությունը համարում էր այլընտրանք չունեցող միջոցառում: Իր գերզգայական ելույթը պատահաբար այսպես էր ավարտել. «Հայ ազգաբնակչությունը պահանջում է օգնություն: Նա պահանջում է իր ապագա գոյության ապահովությունը: Ձի կարելի անվերջ սպասել: Իր կյանքը բարվոք չտեսնելով, ժողովուրդը սպասում է Ռուսաստանի գրավման: Եթե ռուսաց զորքերն անցնեն սահմանը, [հայերը] նրանց կհանդիպեն ինչպես բարեկամների և կ'ողջունեն՝ ինչպես ազատարարների: Ահա թե ինչու պետք է ավելի շուտ անենք այն, ինչ որ կարող ենք»¹:

Ջուտ բրիտանական հետևողականությունը և անկեղծությունը Բեքստոնը արտահայտեց այն, ինչ բոլորի մտքին էր, բայց ոչ մեկը չէր համարձակվում բացահայտ ասել, այն է՝ անհրաժեշտ է անհապաղ ամենաեռանդուն միջոցներ, և դա արվելու է՝ ելնելով հենց Թուրքիայի շահերից, այլապես Մակեդոնիայի նման մի նոր ցնցման նա չի դիմանա: Մեկն ու մեկը. կա՛մ պետք է փրկել այդ կայսրությունը, կա՛մ իրար մեջ բաժանել այն:

Կոնֆերանսն ընդունեց հետևյալ բանաձևը.

«Պատվիրակները ցանկություն են արտահայտում, որ մեծ պետությունները չհամաձայնեն բարձրացնել օսմանյան մաքսային դրույքները, չընդունեն Թուրքիայում ապրող օտարերկրացիների վրա նոր տուրքեր նշանակելը, մերժել փոխառություններ ստանալու Թուրքիայի բոլոր դիմումները, մինչև որ նա բացահայտորեն չընդունի հայկական բարենորոգումների այն ծրագիրը, որ նրան ներկայացրել են Կ. Պոլսում մեծ պետությունների ղեկավարները: Թուրքական կառավարությունը նաև պարտավոր է համաձայնել Հայաստանում բարենորոգումների ընթացքի վրա եվրոպական վերահսկողության հաստատմանը,

¹ ПЗПАК, том II, сmp. 310.

գործադիր իշխանությունների հանձնմանը եվրոպական գործակալներին, որպեսզի վերականգնվեն իշխանության ենթարկվի հայկական վիլայեթների վարչակազմը»¹:

Պատգամավորներից յուրաքանչյուրը հանձն առավ իր երկրի կառավարության ուշադրությունը հրավիրել այս որոշման վրա, և հնարավորինս կարելի դարձնել նրա աջակցությունն ու միջամտությունը՝ հօգուտ հայկական բարենորոգումների:

Եվրոպական հայասերների կոնֆերանսի արդյունքները ողջունում էին եվրոպական հասարակությունների մարդասեր տարրերը:

Այդ օրերին անգլիացի անվանի տիկին Լյուսի Քլեենդիլը մի շարք հոդվածներով ողջունեց հայասերների կոնֆերանսի հաջող ավարտը: Հեռու հայաստանից, անձանոթ հայ լեզվին, դուրկ հայության հետ որևէ արյունակցական կապից, բայց որպիսի խոր գործով ղեկի օտար, փոքր ու տանջվող հայությունը, մանավանդ որպիսի հմտությամբ ու սիրով ղեկի հայերի պատմություն և հայ դատը:

Այդ անշահախնդիր վերաբերմունքը ուղղված էր մարդկություն մեկ բեկորին լոկ այն պատճառով, որ սա անիրավված էր, չարչրկված, հետևաբար արժանի էր ամեն գիտակից անհատի բարոյական ու գործնական աջակցության:

Կոնֆերանսի ղեկուցումների և ընդունած որոշման սեղմագրերը տպագրվեցին եվրոպական բազմաթիվ թերթերում և հատկապես քաղաքական ուղղության հանդեսներում, իսկ “*Pour les peuples d'Orient*” հանդեսը լայնորեն լուսաբանեց կոնֆերանսի ընթացքը՝ ամբողջովին հրապարակելով և՛ ելույթները, և՛ որոշումը: Հանդեսի համարներում տպագրվում էին Հայաստանին և հայ ժողովրդին նվիրված խմբագրականներ ու հոդվածներ:

¹ «Մշակ», № 277, 13 դեկտեմբերի 1913 թ.:

ՌՌԻՍ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Հայկական Հարցի կնճռոտ ընթացքը, նրա լուծման գործում մշտապես շարունակվող ձգձգումներն ու նորանոր խոչընդոտների ի հայտ գալը խիստ անհանգստություն էին առաջացրել ոուս առաջադեմ մտավորականություն, հասարակություն լայն շրջանակներում, Պետական Դումայում, անգամ նրա ծայրահեղ աջ պատգամավորների մոտ: Նրանք զանազան միջոցներով իրենց բողոքի ձայնն էին բարձրացնում Հայկական Հարցի շուրջ ստեղծված անորոշ վիճակի, մասնավորապես ոուսական դիվանագիտության ցուցաբերած, իրենց կարծիքով, անվճռականություն դեմ:

Հայտնի հրապարակախոս, գիտնական ու պետական խորհրդի անդամ պրոֆ. Մաքսիմ Կովալևսկին *"Русское Слово"* թերթի 1913 թ. № 145-ում գետեղած իր մի ֆելիետոնում Հայկական Հարցի ձգձգումները, նրա շուրջը ծավալված դիվանագիտական խաղերը համարում էր մարդկության ամոթ: Նա գայրույթով էր արտահայտվում այդ Հարցի շուրջ եվրոպական մեծերի ծավալած սակարկումների մասին՝ հիշեցնելով Հայ ժողովրդի երկար տարիներ կրած տառապանքները քրդերի և թուրքական իշխանությունների ձեռքին: Քանի որ Հայաստանի խառնակ վիճակն օգտագործելով՝ տեղի քրդերը կարող են վերսկսել կոտորածները, Կովալևսկին հորդոր ու հրավեր էր կարդում ձեռնհաս անձանց ու տերությունների առաջնորդներին՝ բարենորոգումների խնդիրը հնարավորինս արագ առաջ մղելու միջոցով օր առաջ կանխել վերահաս վտանգը:

Քանի որ Ռուսաստանում չկար Հայկական կոմիտե, ուստի Փարիզից վերադառնալուց հետո Պավել Միլյուկովն անմիջապես ձեռնարկում է Մոսկվայում կազմակերպել գոնե մի խմբակ: Նա հանդիպումներ է ունենում քաղաքի մի շարք հասարակական ու գիտական նշանավոր գործիչների հետ, որոնք տողորված էին թուրքիայի հայությանն ամեն կերպ աջակից լինելու գաղափարով: Տեսակցությունների արդյունքում շատ շուտով՝ 1913 թ. նոյեմբերի կեսերին, Մոսկվայում ստեղծվում է Հայկական խմբակ:

Մոսկվայի օրինակով քայլեր են արվում նաև Պետերբուր-

գում: Այստեղ ոուս նշանավոր գործիչների մի խումբ ձեռնարկում է հրավիրելու ժողով՝ հրապարակայնորեն արտահայտելու իր տեսակետները Հայկական Հարցի շուրջ ընթացող բանակցությունների նկատմամբ:

Ժողովին նախապատրաստվելու համար 1913 թ. նոյեմբերի 12-ին Պետերբուրգի հայտնի հասարակական-քաղաքական գործիչ, Պետական Դումայի անդամ, Հայ ժողովրդի բարեկամ Ա. Ն. Բրեանչանինովի* տանը հրավիրվում է խորհրդակցություն, որին մասնակցում են մայրաքաղաքի մտավորականության մի խումբ ներկայացուցիչներ: Նրանք իրենց ելույթներում շեշտում էին, որ ոուսական դիվանագիտության սրբազան պարտքն է ավելի հետևողական առաջ տանել Հայաստանի բարենորոգումների գործը, որը ներկայումս դարձել է ամենահուզող Հարցերից մեկը ոուս մտավորականության համար:

Որոշում ընդունվեց ժողովը հրավիրել երկու չաբաթ անց:

Ելնելով այն իրողությունից, որ Հայկական Հարցի վերաբացման օրերից Պետերբուրգի հայկական խմբակը իր կարևորագույն տեղն է ունեցել բանակցությունների գործընթացներում, ուստի նպատակահարմար համարվեց անպայման ժողովին հրավիրել Պետերբուրգի հայկական խմբակի մի քանի անդամների, որպեսզի նրանք Հայաստանի բարենորոգումների շուրջ տեղի ունեցող բանակցությունների մասին ժողովականներին հաղորդեն նոր տեղեկություններ և ընդհանրապես պարզեն իրենց տեսակետներն ընթացող դիվանագիտական պայքարում ոուսական կողմի ցուցաբերած ջանքերի արդյունավետության մասին**:

* Հայկական Հարցի վերաբացման օրերից Ա. Բրեանչանինովը ոուսական արտգործնախարարությունը մի շարք առաջարկություններ էր արել՝ թուրքերի հետ բանակցություններում չզնայ չպատճառաբանված զիջումների:

** Թե ոուսական մայրաքաղաքի գիտական և հասարակական-քաղաքական շրջաններում որպիսի կարևոր կշիռ ունեց Պետերբուրգի հայկական խմբակը, ցույց է տալիս թեկուզ այդ օրերին ոուսաց արտգործնախարար Ս. Սազոնովին Կոստանդնուպոլսից Մ. Գիրսի ուղարկած հեռագիրը, որով դեսպանը խիստ անհրաժեշտ էր համարել Հայաստանի բարենորոգումների դեռևս քննարկման փուլում գտնվող նախագծի մասին անպայման խմանալ խմբակի

Նոյեմբերի 21-ին Պետերբուրգի հայկական խմբակի նիստում քննության դրվեց ժողովին մասնակցելու նպատակահարմարության հարցը: Այդ մասին հաղորդեց Հ. Զավրիևը և առաջարկեց ներկայացուցիչներ ուղարկել այնտեղ:

Ելույթ ունեցողների դատողությունների հիման վրա նիստը խիստ զգուշավոր վերաբերմունք ցուցաբերեց կայանելիք ժողովի հանդեպ: Նշվեց, որ տեղի ունենալիք հավաքի մասնակիցների կորիզը կազմելու են լիբերալ ուղղվածություն ունեցող հայկականները, ինչպես և թունդ սլավոնասերներ, Հայաստան անհապաղ զորք մտցնելու կողմնակիցներ, որոնք բոլորը խիստ ընդդիմություն են արտաքին քաղաքականության ներկայիս դեկավարներին և անձամբ Ս. Սազոնովին: Եվ դա այն դեպքում, երբ մայրաքաղաքի հայ մտավորականությունը, այդ թվում Պետերբուրգի հայկական խմբակի բոլոր անդամները լիովին համերաշխ են Հայաստանի բարենորոգումների հարցում արտգործնախարարության, հոֆմեյստեր Սազոնովի, նրա աշխատակիցների, Կ. Պոլսում ուսուսական դեսպանության կողմից վարվող քաղաքականության հետ:

Ուստի Սմբակի նիստը որոշում ընդունեց, որ տեղի ունենալիք ժողովում ելույթ ունենալիս իր ներկայացուցիչները պետք է ցուցաբերեն մեծ զգուշություն՝ արտգործնախարարությունում տարակուսանք առաջ չբերելու համար: Չէ՞ որ ուսուսական կառավարությունն այնքան մեծ ջանքեր էր գործադրել Հայկական բարենորոգումների հարցը լուծելու համար և շարունակում էր այդ ուղղությամբ իր եռանդուն գործունեությունը՝ դիվանագիտական պայքարում հաղթահարելով ամենատարբեր խոչընդոտներ: Կառավարության խրախուսանքով էր, որ ու-

կարծիքը: Սազոնովը իշխան Տրուբեցկոյի միջոցով այն փոխանցել էր Մ. Պապաջանովին: Հեռագրին կցվել էր Թուրքահայաստանում անցկացվելիք բարենորոգումների նախագծի տեքստը: 1913 թ. նոյեմբերի 28-ի հատուկ նիստում Մ. Ի. Պապաջանովը այդ մասին հաղորդում արեց, որից հետո նախագծի տեքստը ենթարկվեց մանրազնին քննության: Սմբագրական դիտողություններն ամփոփելուց հետո Սմբակը խնդրեց Պապաջանովին դրանց մասին տեղեկացնել արտգործնախարարություն (տե՛ս ПЗПАК, том I, стр. 315-316):

սական հասարակության հատկապես մտավորական շերտերում, մամուլում, համալսարանական միջավայրում զնայով ուժեղանում էին հայասիրական տրամադրությունները: Դրա ապացույցներից էին այն կրակոտ ելույթները, որ ժողովներում ունենում էին մտավորականները, այն բանաձևերը, որ ընդունվում էին՝ կառավարությանը կոչ անելով հայկական հարցում չզնայ ավելորդ զիջումների:

Հայ գործիչները քաջ ըմբռնում էին, որ կառավարության և ուսուսական հասարակության միջև առաջացած ամեն մի տարաձայնություն միայն կխանգարեր Հայկական հարցին: Այդ էր պատճառը, որ ՊՀՍ նոյեմբերի 21-ի նիստը սկզբում հակված էր ընդհանրապես ներկայացուցիչներ չուղարկել ժողովին, բայց հարցի բազմակողմանի քննարկումից հետո, այնուամենայնիվ, նպատակահարմար համարվեց ուղարկել: Սմբակի մի քանի անդամների ներկայությունը կարող էր օգտակար լինել այն իմաստով, որ ժողովում հրավիրված էին նաև այնպիսի անհատներ, որոնք լավատեղյակ էին Հայկական հարցում եվրոպական տերությունների վերաբերմունքի ներքին ծալքերին, ուստի նրանցից այս կամ այն լրացուցիչ տեղեկություն ստանալն օգտակար կլիներ: Ուստի նիստը նպատակահարմար գտավ նշված ժողովին ուղարկել Պ. Ղուկասովին, Ս. Տիգրանյանին, Հ. Սաղաթեյանին, Ն. Աղոնցին, Սարուխանյանին և Հ. Զավրիևին¹:

Մայրաքաղաքի մտավորականության ժողովը տեղի ունեցավ 1913 թ. նոյեմբերի 26-ին Ա. Ն. Բրեանչանինովի տանը:

Ժողովը բազմամարդ էր: Բացի կազմակերպական մեծ խմբի անդամներից, ներկա էին նաև բազմաթիվ ուսուսական անձինք՝ Պետական խորհրդի և Պետական Դումայի անդամներ, պրոֆեսորներ, հասարակական հայտնի գործիչներ, թերթերի ու հանդեսների խմբագիրներ, բարձրաստիճան զինվորականներ: Այստեղ էին Պետերբուրգի հայկական խմբակի վերը նշած անդամները:

Հավաքի մասնակիցները հիմնականում ազատական ուղղու-

¹ ПЗПАК, том I, стр. 309.

Թյան ոուս ազգայնականներ էին, որոնք ընդհանրապես դեմ էին երկրի արտաքին քաղաքականությունը վարող դիվանագիտական հաստատությունների ղեկավարներին, թեև առանձնացնում և հավանություն էին տալիս Կոստանդնուպոլսում ոուսական ղեսպանության աշխատողների հայկական քաղաքականությունը:

Ժողովի նախագահ ընտրված պրոֆեսոր **Մ. Պ. Չուբինսկին** ղեկուցման համար ձայն տվեց Ա. Բրեանչանինովին: Իր ընդարձակ ղեկուցման մեջ մանրամասն ներկայացնելով Ռուսաստանի մերձավորարևելյան քաղաքականությունը՝ ղեկուցողը խիստ քննադատության ենթարկեց Հայկական հարցում այդ քաղաքականության երկչոտությունն ու անհետևողականությունը, գերմանական դիվանագիտության առջև նրա անհիմն ընկրկումը: Նա ոուսական կառավարությունից պահանջեց վերջ տալ Գերմանիային մշտապես զիջումներ անելու վատ սովորությունը, որը մեծ վնասներ է բերում կայսրությունը: Չեկուցողը պահանջեց կտրուկ և ուժգին հակազդել երկրի շահերին հակասող բոլոր քայլերին: Նա անթույլատրելի համարեց, որ Հայաստանի բարենորոգումների ծրագրում կատարվել են կրճատումներ, որոնք արդյունք են Գերմանիայի բիրտ ընդդիմությանը, որը և պատճառ է դարձել Թուրքիայի համարձակ ու ամբարտավան դառնալուն:

Այնուհետև ժողովի նախագահ **Մ. Չուբինսկին** կարծիք հայտնեց, որ նախքան մտքերի փոխանակությունն անցնելը նպատակահարմար է լսել միջոցառմանը հրավիրված հայ գործիչների ելույթները: Ստանալով ժողովականների համաձայնությունը՝ **Մ. Չուբինսկին**, դիմելով հայ ժողովրդի ձայնը ներկայացնող հրավիրյալներին, նրանց խնդրեց քննարկվող հարցը բացահայտել՝ ըստ հայկական հայեցակետի:

Հայերից առաջինը հանդես եկավ **Ն. Ադոնցը**: Նա իր ելույթում նախ անդրադարձավ հայ-ուսական դարավոր հարաբերությունների պատմությանը, Հայկական հարցի ծագմանն ու բովանդակությանը, ապա հանգամանորեն բացահայտեց, թե այն ինչ չըջափուլերով է անցել, ներկայացրեց 1912 թ. աշնանից այն վերաբացելու ուղղությամբ հայերի թափած ջանքերը, ներ-

կաների ուշադրությունը հրավիրեց **Ա. Մանդելշտամի** մշակած բարենորոգումների ծրագրին գերմանական դիվանագիտության չղաղարող միջամտությունների վրա, որի հետևանքով այնտեղ կատարվել են հայության համար բազմաթիվ աննպաստ փոփոխություններ:

Ն. Ադոնցին հաջորդում է **Հովհ. Սաղաթեյանը**, որը քննադատում է հայության նկատմամբ ոուսական կառավարության կողմից շուրջ երեք տասնամյակ վարած սխալ քաղաքականությունը՝ իբրև հայկական իրականության չիմացության հետևանք: Եվ դա այն դեպքում, երբ հայերը ոուսների անկեղծ դաշնակիցներն են և իրենց հնարավորությունների սահմաններում նպաստում են Ռուսաստանի ներքին ընդհանուր վերանորոգությանը: Հայության նկատմամբ անխոհեմ քաղաքականություն վարած ոուս պետական գործիչների խիստ քննադատությունը, որ իր ելույթում կատարում էր Սաղաթեյանը, արժանանում էր ներկաների բուռն ծափահարությունը:

Ապա հանդես է գալիս **Գ. Բուդաղյանը**, որն իր ելույթը հիմնականում նվիրում է Հայկական հարցում Գերմանիայի կատարած ավերիչ դերի բացահայտմանը, թվարկում է ոուս-գերմանական բանակցությունների արդյունքում ձեռք բերված ամենանվազագույն պահանջներ պարունակող բարենորոգումների ծրագրում ի վնաս հայերի կատարած փոփոխությունները:

Իր ելույթում **Ա. Սարուխանյանը** խոսում է **Կ. Պոլսի** Հայոց պատրիարքության դեմ թուրքական իշխանությունների չղաղարող ոտնձգությունների մասին, որի պատճառով թուրքահայությունը շուտով զրկվելու է ազգային կյանքով ապրելու որևէ հնարավորությունից: Ապա շեշտում է, որ հայերի դժբախտությունը այն է, որ Եվրոպայի և Ռուսաստանի ճնշման տակ **Բ. Դուան** ընդունած բոլոր որոշումները մնացել են թղթի վրա, ուստի ներկայումս նույնպես քննարկվող բարենորոգումների ծրագիրը անպայման արժանանալու է նույն բախտին, եթե Եվրոպայի և հատկապես Ռուսաստանի կողմից խիստ վերահսկողություն չիրականացվի դրանց կատարման վրա:

Ելույթ ունեցած բոլոր հայ գործիչները ընդգծեցին, որ **Կ. Պոլսի** ոուսական ղեսպանության կազմած և ղեսպանա-

խորհրդին ներկայացրած Մանդելշտամյան ծրագիրը արտահայտում էր թուրքահայության բաղձանքն ու փափագը, բայց քանի որ Եվրոպայի ճնշմամբ այն աղճատվել է, և նույնիսկ այդ տեսքով դրա իրականացումը հանդիպում է մեծ դժվարությունների, իսկ մյուս կողմից՝ Թուրքիայի հայաբնակ նահանգները կարոտ են շտապ բարենորոգումների, ուստի անհրաժեշտ է ուսուցանական կրճատված ծրագիրը անհապաղ գործադրել եվրոպական և ուսական հսկողությունը՝ գոնե ինչ-որ չափով թեթևացնելու համար թուրքահայ իրավագուրկ ժողովրդի ծայրահեղ թշվառ վիճակը:

Քանի որ ժողովի մասնակիցները բավարար տեղեկություններ չունեին Հայաստանն ասպատակող քրդերի և նրանց նկատմամբ ուսական կառավարության քաղաքականության մասին, ժողովի նախագահը, դիմելով հայ պատվիրակներին, խնդրեց հանգամանորեն անդրադառնալ այդ հարցին: Վերջիններից խոսք է առնում Ա. Սարուխանյանը և մանրամասն նկարագրում այն ոճրագործ դերը, որ քրդերը խաղում են թուրքահայության կյանքում:

Հայերի ելույթներից, ապա և մտքերի փոխանակումից հետո պրոֆ. Չուբինսկին ամփոփեց ժողովի արդյունքները, ապա շեշտեց, որ նրա մասնակիցները, որոնք լիակատար պատկերացում ստացան Հայկական հարցի շուրջը ծավալված դիվանագիտական պայքարի մասին, թե՛ ամբիոններից և թե՛ մամուլի էջերում պետք է հանդես գան որպես արդարություն մունետիկներ:

Այնուհետև սկսվեց ժողովի մասնակիցների մտքերի փոխանակումը: Ելույթ ունեցողների մի մասը գովեստով էր խոսում Հայաստանի բարենորոգումների ուղղությամբ կառավարության քաղաքականության մասին, շատերն անհրաժեշտ էին համարում ավելի ակտիվացնել երկրում ստեղծված զանազան ուսական կոմիտեների գործունեությունը: Ժողովականների մեծ մասն էլ, այդ թվում Ա. Բրեանչանինովը և պրոֆ. Մ. Չուբինսկին, գտնում էին, որ ուսական դիվանագիտության քայլերը խիստ թերի են:

Ժողովի նախագահը ներկաներին հայտնեց, որ կազմվել է

որոշման նախագիծ և այն հրապարակելու համար խոսքը փոխանցեց Ա. Ն. Բրեանչանինովին:

Որոշման նախագծում նշված էր, որ Ռուսաստանի և Գերմանիայի դիվանագետների կողմից Հայաստանում անցկացվելիք բարենորոգումների ներկայումս ընդունված ծրագիրը բացարձակապես չի համապատասխանում հայ ժողովրդի իղձերին: Եվ չնայած դրան՝ թուրքական դիվանագիտության մեքենայությունների պատճառով նույնիսկ այդ կիսատ-պոատ ծրագիրը կարող է տապալվել: Նախագծով ուսական դիվանագիտության կոպիտ ու վտանգավոր սխալներն էին համարվում գերմանական կողմի ճնշմանը ենթարկվելը և նրա պահանջով ծրագրի տեքստում անընդունելի տարրեր մտցնելը, որով, ըստ էության, նսեմացել են ուսական պետության նախաձեռնությունները: Նախագծով ուսական դիվանագիտությանը հիշեցում էր արվում, որ նա պարտավոր է քաջ գիտակցել Մերձավոր Արևելքում ունեցած իր նպատակները, գործել Եվրոպայից և մասնավորապես Գերմանիայի համաձայնությունից անկախ, ինչպես գործում է վերջինս, որը, ամենևին հաշվի չառնելով Ռուսաստանի անհամաձայնությունը, հաջողությամբ առաջ է տանում իր նպատակները Բոսֆորում՝ գեներալ Սանդերսին նշանակելով թուրքական գործերի հրամանատար, շարունակում է կառուցել Բաղդադի երկաթուղին և այլն: Ռուսաստանը պարտավոր է Թուրքիայի և նրա հովանավոր Գերմանիայի հետ խոսել ինչպես հավասարը հավասարի՝ որպես հզոր տերություն:

Նախագիծն իր բովանդակությամբ փաստորեն հակառակ էր գնում ուսական կառավարության «երկչուտ քաղաքականությունը Հայկական հարցում»: Սուր գնահատականներով այս փաստաթուղթը դրվեց քվեարկության և միաձայն ու ծափահարություններով ընդունվեց որպես որոշում:

Ռուս առաջադիմական գործիչների այդ նշանավոր ժողովի եզրակացությունը հաջորդ օրն իսկ՝ նոյեմբերի 27-ին, լույս տեսավ Պետերբուրգի “Вечернее Время”, “Вестник Мира”, “Русские Ведомости” և ուրիշ թերթերում:

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՆՇԱՆԱՎՈՐ
ԳՈՐԾԻԶՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ
ՄԱՍՍԱՑԱԿԱՆԱՑՈՒՄԸ**

Փարիզյան կոնֆերանսը և պետերբուրգյան ժողովը մեծապես նպաստեցին եվրոպական ու ռուսական հայասերների ջանքերի հետագա միավորմանը, ավելի հաճախակի դարձան Հայկական հարցի պաշտպանությունն ուղղված միջոցառումները, նոր թափ հաղորդվեց հայանպաստ շարժմանն ընդհանրապես:

Այդ օրերին թուրքահայ ժողովրդին նվիրված մի քանի նոր հոդվածներ հրատարակեց առողջական ծանր վիճակում գտնվող նշանավոր հրատարակախոս, քաղաքական գործիչ և Մարդու իրավունքների լիգայի նախագահ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆրանսիս դե Պրեսանսեն: “*Pour les peuples d’Orient*” շաբաթաթերթը, որը լույս էր տեսնում Պրեսանսենի գլխավոր աշխատակցությամբ, թեպետ նվիրված էր առհասարակ արևելյան ժողովուրդներին, բայց նրա գրեթե բոլոր էջերը լեցուն էին հոդվածներով՝ նվիրված հայկական խնդրին և Հայաստանի վիճակին: Հայերի դառնաղի կացությունը հանգիստ չէր տալիս ճնշվածների այդ մեծ պաշտպանին: Նրանց մարտիրոսությունը նվիրված իր հոդվածներից մեկում նա գրել էր. «Աշխատավոր ժողովրդի՝ հայերի մեծամասնությունը ապրում է անստուգություն մեջ, մշտնջենական հարվածի տակ: Պոլսում թուրք իշխանությունները ո՛չ ժամանակ, ո՛չ ուժ և ո՛չ թերևս հաստատ կամք ունեն Բուրդիստանի ավազակ ցեղերին հարկադրելու՝ հանրային կարգապահության և խաղաղության հարգանքը»¹:

Ֆրանսիայում իրականացված ձեռնարկներից մեկը “*Pro Armenia*” թերթի վերահրատարակումն էր 1913 թ. դեկտեմբերի 1-ից՝ Ֆրանսիս դե Պրեսանսենի և Վիկտոր Բերարի ղեկավարությամբ*:

¹ «Ատանայի եղեռնը: Տեղեկագիր Յակոբ Պապիկյանի» գրքույկի (Կ. Պոլիս, 1919) առաջաբանը (էջ 8):

* Հայկական հարցի պաշտպանության համար տարիներ առաջ, ինչպես ցույց է տրված սույն աշխատության նախորդ գրքերում, Փարիզում հրատարակվում էր “*Pro Armenia*” երկշաբաթաթերթը՝ ֆրանսիացի հայտնի գրող և

“*Pro Armenia*”-ի № 1-ում ղեկավարած խմբագրական ազդն այսպես էր բնորոշում թերթի վերահրատարակման նպատակը. «“*Pro Armenia*”-ն Հայաստանի դատի հետ շարունակում է պաշտպանել նաև թուրքական կայսրության բոլոր ճնշված ազգերի և իր՝ Թուրքիայի դատը, երկրի, որին նրա կառավարողները տանում են դեպի անդունդ՝ մերժելով լուրջ բարենորոգումների ամեն մի պահանջ: Մենք խնդրում ենք Հայաստանի և Թուրքիայի բոլոր բարեկամներին, բոլոր նրանց, ովքեր իրենց սրտին մոտ են զգում եվրոպական խաղաղության շահերը, աջակցել արդարության և խաղաղության պաշտպան այս թերթին՝ նրա համար գտնելու բաժանորդներ»:

Հետևելով Պրեսանսենի օրինակին՝ ֆրանսիական և եվրոպական այլ երկրների մամուլի բազմաթիվ օրգաններ ևս իրենց էջերը տրամադրում էին հայկական հարցով մտահոգ նշանավոր մտավորականների, հասարակական ու քաղաքական գործիչների:

Շատ չանցած Պրեսանսեն հիվանդացավ: 1913 թ. վերջերից նա գրեթե տնից դուրս չէր գալիս: Այդ օրերին էր, որ նրա հետ առաջին անգամ ծանոթացավ Նուբար փաչան: Միք. Վարանդյանը, որ ուղեկցում էր Պողոս Նուբարին, հետագայում վերհիշել է. «Օր մըն ալ Պողոս փաչան խնդրեց առաջնորդել զինքը մեր հիվանդ բարեկամին քով, որու գիտությունն ու տաղանդը անխորապէս կը գնահատեր 25 տարիէ ի վեր, երբ Պրեսանսեն «Թանի» խմբագրապետ էր: Գացինք, ծանոթացանք: Ազգային

բանաստեղծ Պիեռ Քիարի ղեկավարությամբ: Համարյա բոլոր հայասեր ֆրանսիացի գործիչներն ու հրատարակախոսներն աշխատակցել էին այդ օրգանին, որի ընդհանուր տեսչությունը հանձնված էր բժ. Լորիս-Մելիքյանին: Այդ պարբերականը ժամանակին ահագին ծառայություններ էր մատուցել հայ դատին: Բայց Պ. Քիարի անակնկալ վաղաժամ վախճանից հետո դրա հրատարակումը դադարեցվեց: Դրա փոխարեն 1912 թ. սկսել էր լույս տեսնել ֆրանսիացի հայասերների “*Pour les Peuples d’Orient*” («Հանուն Արևելքի ժողովուրդների») թերթը՝ Ֆ. Պրեսանսենի և Վ. Բերարի ղեկավարությամբ: Եվ ահա այժմ այս պարբերականին փոխարինելու էր վերահրատարակվող “*Pro Armenia*”-ն:

պատվիրակութեան նախագահն իր ու հայ ժողովրդի խորին երախտագիտութիւնը հայտնեց հիվանդին՝ անոր երկարամյա թանկագին ծառայութիւններուն համար»¹:

1913 թ. դեկտեմբերի 7-ին Պրեսանսեն հետագալ կյանքից: Ֆրանսիացի նշանավոր գործչի մահով հայ ժողովուրդը կորցրեց իր ազգային դատի մեծ պաշտպաններից մեկին: Հայկական մամուլը ցավով անդրադառնալով մեծ մարդասերի կորստին՝ շեշտելով, որ նրա նվիրական անունը ընդմիշտ մնալու է հայոց պատմութեան էջերում:

Պրեսանսեի մահից առաջ (նոյմբերի 16-ին) Լոնդոնում վախճանվել էր հայ ժողովրդի մի ուրիշ ազնիվ բարեկամ Հենրի Լինչը: Նա եվրոպական հանրութեան լայն շրջաններին հայտնի “Armenia” գրքի հեղինակն էր: Մարդասեր այդ անգլիացին շուրջ երկու տասնամյակ եղել էր հայ ժողովրդի կողքին, իր հողվածներով ու ելույթներով արձագանքել նրա ցավերին²:

Փարիզի ու Պետերբուրգի հայասերների ընդունած բանաձևերը լայն արձագանք գտան նաև Ռուսաստանում:

Պետերբուրգի հայկական խմբակի 1913 թ. նոյեմբերի 23-ի հատուկ նիստում Պավել Նիկոլայևիչ Միլյուկովը զեկուցեց Փարիզ կատարած իր ուղևորութեան և “Comite de L’Asie Francaise”-ի նախաձեռնութեամբ նոյեմբերի 17 (30)-ին Հայկական հարցով տեղի ունեցած կոնֆերանսի և նրան իր մասնակցութեան մասին:

Միլյուկովն իր հաղորդումը սկսեց նրանով, որ եթե փարիզյան կոնֆերանսի տերուտիրականը 13 տարվա պատմութիւն ունեցող “Comite de L’Asie Francaise” էր, ապա նրա ոգին Պոդոս Նուբար փաշան էր³: Այնուհետև նա մանրամասն ներկայացրեց կոնֆերանսի մասնակիցների ելույթների հիմնական թեզերը: «Այո, ակնհայտ է, որ կոնֆերանսը ճիշտ ժամանակին էր: Փո-

¹ «Հայրենիք», № 11, սեպտեմբեր, 1923, էջ 59:

² Տե՛ս «Մարտ», № 19, 1 դեկտեմբերի 1913 թ.: Մարդասեր անգլիացու գործունեութեանը «Մարտ» պարբերականը հանգամանորեն անդրադարձել է 1913 թ. № 20-ում:

³ ПЗПАК, том I, сmp. 320.

խառութեան միջազգայնացման և միջազգային ճնշման նախապայմանի մասին որպես լավագույն միջոցի, արդեն սկսել են խոսել պաշտոնական շրջանակներում: Չեմ գարմանա, եթե Թուրքիան դադարի հայերի ճակատագրերը փորձութեան ենթարկել».- շեշտում էր նա, ապա համոզմունք հայտնում, որ այդ խիստ կարևոր հավաքի ընդունած բանաձևը դրական մեծ ազդեցութիւն է գործելու Հայկական հարցի շուրջ ընթացող բանակցութիւնների վրա*:

Այնուհետև Պ. Միլյուկովը դեկտեմբերի 7-ին Մոսկվայում հանդես եկավ զեկուցումով և ունկնդիրներին դարձյալ իր տպավորութիւնները հաղորդեց կոնֆերանսի աշխատանքի մասին: Նա նշեց, որ այժմ հայկական հարցը Թուրքիայում մտնում է նոր փուլ: Հայերն արդեն ոչ մի հույս չեն կապում Բ. Դուան հետ, չեն հավատում սահմանադրական Թուրքիային, որն ամեն կերպ ձգտում է իրենց ձուլել թուրք էթնոսի մեջ:

1913 թ. դեկտեմբերի 10-ին Միլյուկովի ջանքերով Մոսկվայում տեղի է ունենում հայասերների խորհրդակցութիւն, որին մասնակցում են մի շարք նշանավոր կաղետ գործիչներ և քաղաքի հայ համայնքի աչքի ընկնող ներկայացուցիչներ: Դեկտեմբերի 11-ին նա Մոսկվայում կարդում է նոր դասախոսութիւն հայկական հարցի մասին: Նա ասում է, որ բարենորոգումների նախագծի ակտիվ պաշտպանութեան համար անհրաժեշտ է Ռուսաստանում ձևավորել հասարակական կարծիք, քանի որ ներկայումս հարցը անորոշ վիճակում է:

Մոսկվայում տպագրվող «Մարտ» թերթը քաղաքի և Պետերբուրգի հայերին կոչ էր անում խնդրել Պ. Միլյուկովին իրենց առջև հանդես գալ հայասերների Փարիզի կոնֆերանսի մասին հանգամանալից զեկուցումով, որը թույլ կտա ճիշտ պատկերացում կազմել Հայկական հարցի իրական վիճակի մասին, իմանալ, թե այն զարգացման որ հանգրվանում է գտնվում: «Այսպիսի լուրջ խնդիրներում է ժանազին ծափահարութիւնների սիրա-

* Պ. Միլյուկովի զեկուցի բովանդակութիւնը բերված է «Ռեչ» թերթի 30 նոյեմբերի 1913 թ. համարում:

հարները պետք է մի քիչ կծկուին և հասկանան իրենց չափը»¹: Այնուամենայնիվ, «Մարտը» չէր կորցնում հույսը, որ հայասերների հավաքը դրական ազդեցություն կգործի Հայաստանի բարենորոգումների ընթացքի վրա: «Ինչպես կվերաբերուին պետութիւններն այս եզրակացութիւններին (կոնֆերանսի ընդունած որոշումներին:– Յ. Ս.), ի հարկե դիպլոմատների ժամանակակից խաղերին նայելով, դժուար է որոշ խօսք ասել, բայց որ եւրոպական ժողովուրդների՝ գոնէ մեծամասնութեան կարծիքը այդ կոնֆերանսի հետ տարբեր չէ կարող լինել, այդ ակնհերե է, Հայաստանի հեծեծանքներին կուլտուրական ազդեցւորը չեն կարող հանդուրժել, եւ Եւրոպայի այս ու այն անկիւններում այս տեսակ կոնֆերանսներ շարունակուելու են, մինչեւ որ մի թշուառ երկիր, որ Ասիայի մի սահմանից միշտ յարել է դէպի եւրոպական կուլտուրան, միշտ գութանի ծայրից բռնած՝ նայել է դէպի մտաւոր լոյսի հորիզոնը եւ շարունակ ձգտել միմիայն խաղաղ կենսաքի, միմիայն իւր պատուի, խղճի ու գոյքի ապահովութեան օրէնքի, շունչ չառնէ եւ փշերի տակից չազատուի»²:

Միլլուկովը նաև ուսական մի շարք թերթերում հանդես եկավ հողվածներով, որոնցից առավել ընդգրկուելը, թերևս, “Речь” թերթում տպագրածն էր³: Այս հողվածի հետքերով Հայկական հարցին անդրադարձան ուսական ուրիշ պարբերականներ: Միլլուկովի հողվածին բազմաթիվ արձագանքներ եղան հատկապես Հայկական մամուլում:

Որքան ուժեղանում էր եվրոպական և ուսական առաջադեմ մամուլի ու հայասիրական շարժման ճնշումը Թուրքիայի վրա, այնքան վերջինիս իշխանությունները ուժեղացնում էին հսկողությունը Հայ մամուլի նկատմամբ՝ պատճառաբանելով,

¹ «Մարտ» (Մոսկվա), № 19, 1 դեկտեմբերի 1913 թ.:

² Նույն տեղում:

³ Տե՛ս «Մշակ», № 277, 13 դեկտեմբերի 1913 թ.: “Речь” թերթում լույս տեսած սույն հողվածը թարգմանաբար տպագրվեց «Արարատ» հանդեսի 1914 թ. հունվարի համարում, ապա ղետեղվեց Մայր Աթոռի միաբան Բարկեն վարդապետի «Հայկական հարցը և Պօղոս Նուբար փաշան» գրքույկում, Վաղարշապատ, 1914, էջ 7–13:

Թե այն սխալ է ներկայացնում հայկական նահանգներում տիրող վիճակը, անտեղի քննադատում է իշխանություններին՝ նրան անարդարացիորեն մեղադրելով անգործություն, հատկապես քրդերի նկատմամբ զսպիչ միջոցներ չկիրառելու համար: Հարվածի տակ ընկավ նաև «Ազատամարտ» օրաթերթը, որը երիտթուրքեր-դաշնակցություն խզումից հետո սկսել էր քննադատել երիտթուրքերին, հատկապես նրանց ներքին քաղաքականությունը: Ուստի կառավարությունը առիթ էր փնտրում թերթը փակելու, և այն շուտով ներկայացավ: 1913 թ. վերջերին «Ազատամարտը» թարգմանաբար հրատարակել էր Հարուղ Բեքատոնի հողվածը, ուր նա պատմել էր այն տպավորությունների մասին, որ ստացել էր իր եղբայր Նոյելի հետ Հայկական նահանգներում կատարած ճամփորդությունից: Հողվածի լույս տեսնելուց անմիջապես հետո՝ դեկտեմբերի 14-ին, թերթի պատասխանատու տնօրեն Հակոբ Սիրունին կանչվում է պատասխանատվության և ռազմական դատարանի կողմից դատապարտվում չորս ամսվա բանտարկության: Պարբերականը փակվում է¹: Խիստ վերահսկողություն սահմանվեց նաև Կ. Պոլսում լույս տեսնող «Ուսանող» և «Երկունք» դաշնակցական ամսաթերթերի վրա*:

ՔՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ ՀԱՅԵՐԻՆ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՓՈՐՁԵՐ

Քրդերի առանձին ղեկավարների հետ ուսական կողմի ակտիվ շփումները մտահոգություն էր առաջացնում հայկական շրջաններում:

Վերջին երկու տարիներին Կովկասի վարչակազմի առանձին

¹ Տե՛ս «Վեմ», № 1, հունվար-ապրիլ, 1935, էջ 25:

* «Ազատամարտը» ՀՅԴ արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթն էր, իսկ «Ուսանողն» ու «Երկունքը»՝ ՀՅԴ մասնաճյուղեր հանդիսացող՝ Եվրոպայի ու Կ. Պոլսի ուսանողական միությունների ամսաթերթերն էին (տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», № 1, հունվար, 2001, էջ 217):

օղակների անձինք սերտ հարաբերություններ էին հաստատել հատկապես երկու քուրդ նշանավոր գործիչների՝ Սմկոյի և Աբդուլոնեգակի հետ՝ ձգտելով նրանց Ռուսաստանի կողմը թեքել: Հատկապես կարևորություն էր տրվում վերջինիս, որը թուրքական բարձր պաշտոնյա էր, երկար ժամանակ ապրել էր Կ. Պոլսում և մեծ ազդեցություն ուներ ցեղակիցների վրա: Որպես քուրդ նշանավոր իշխան Բեդրիսան բեյի հետնորդ՝ Աբդուլ Ռեզակը երազում էր նախկին կիսասնկախ Քուրդիստանի վերականգնման մասին և այդ նպատակով սկսել էր լայնածավալ դավադրություններ կազմակերպել թուրքական իշխանությունների դեմ¹:

1911 թ. Պոլսից գալով Կովկաս՝ Աբդուլ Ռեզակը հաստատվել էր Թիֆլիսում: Նա հաճախ հանդիպումներ էր ունենում Կովկասի փոխարքային կից գործող Արտաքին գործերի նախարարության ներկայացուցչության գործակալների հետ: Նրանց խոսակցության հիմնական նյութը սահմանամերձ հարաբերություններն էին:

Սմկոյի և Աբդուլ Ռեզակի իշխանությունը տարածվում էր նաև թուրք-պարսկական սահմանին բնակվող քրդական ցեղերի վրա, որոնք Ռուսաստանի և Թուրքիայի միջև պատերազմ ծագելու դեպքում կարող էին կարևոր դեր խաղալ: Ռուսաստանի կողմից ռազմակալած՝ Պարսկաստանի աղբբեջանաբնակ այդ սահմանագլուխը ստրատեգիական շատ կարևոր դիրք էր գրավում, քանի որ այնտեղից Ուրմիայի վրայով ուղիղ ճանապարհ էր բացվում դեպի Վանի վիլայեթ՝ Փոքր Ասիայի սիրտը: Այս ուղին ռուսների համար ավելի հարմար էր, քան Կովկասյան սահմանից դեպի Հայաստան տանող ուղիները: Իսկ Աբդուլոնեգակին և Սմկոյին ենթակա քրդական ցեղերը հիմնականում բնակվում էին Հենց Ուրմիայի և Վանի վիլայեթներում:

Կիսանկախ Քուրդիստան ստեղծելու նպատակին հասնելու համար Աբդուլոնեգակը փորձեր էր անում իր կողմը գրավել հայերին, և այդ գործում նրան կարծես թե աջակցում էին Կովկասի

ռուսական իշխանությունները¹: Թիֆլիսում նա հանդիպել էր տեղի Հայ նշանավոր գործիչներից մեկին* և նրան հաղորդել իր գաղտնի ծրագրի մասին, միաժամանակ խնդրել, որ կովկասահայ խոչոր փողատերերը իրեն օգնեն զենք ձեռք բերելու՝ վստահեցնելով, որ բոլոր քրդերը մեկ մարդու նման ոտքի են կանգնելու, հաղթելու են թուրքերին, և այն ժամանակ Քուրդիստանում հայերը՝ որպես քրդերի դաշնակիցներ, կսկսեն լավ ապրել:

Աբդուլ Ռեզակի առաջարկը քննարկելու համար Հայ գործիչը Թիֆլիսում հրավիրել էր գաղտնի խորհրդակցություն, որին մասնակցել էին վեց հայ երևելիներ, այդ թվում՝ տվյալ պահին Թիֆլիսում գտնվող Պետերբուրգի հայկական խմբակի անդամ Ա. Զ. Սարուխանյանը: Նա ասում է, որ Աբդուլ Ռեզակը խիստ չափազանցնում է ինչպես իր կողմնակից քրդերի թիվը, այնպես էլ քրդական ցեղերի վրա իր ազդեցությունը: Ապա ներկայանում էր ռազմական ցեղերի վրա իր ազդեցությունը: Ապա ներկայանում էր դավադրության ողջ անհեթեթությունը, և որ կարևոր է՝ ցույց է տալիս այն ահռելի վտանգը, որին կենթարկվեն հայկական բնակավայրերը: Նա շեշտում էր, որ քուրդ շեյխերի շրջանում Աբդուլ Ռեզակն ունի բազմաթիվ արյունարբու թշնամիներ, որոնք ապստամբության դեպքում անպայման միանալու են թուրքական զորքերին և կովի են գնալու ապստամբ աշիրեթների դեմ, չնայած առանց սրանց օգնության էլ թուրքական զորքերը հեշտությամբ կճնչեն ապստամբությունը, և այդ դեպքում դժվար չէ պատկերացնել, թե ինչ կլինի հայերի վիճակը: Իսկ եթե արկածախնդրական ձեռնարկը մի հրաշքով հաջողություն ունենա, այդ դեպքում հայերը կհայտնվեն քրդական մոլեռանդ շեյխերի իշխանության տակ: Թուրքն ու քուրդն իրար արժեն:

Թուրքիայի հայերի ճակատագիրը քրդերին կապելու գաղափարը, այսպիսով, դատապարտված էր ձախողման:

Թիֆլիսից Պետերբուրգ վերադառնալուց հետո Ա. Սարու-

¹ ПЗПАК, том I, сmp. 310-311.

¹ ПЗПАК, том I, сmp. 311.

* Աղբյուրը չի հիշատակում Հայ գործչի անունը:

խանյանն այդ ամենի մասին հաղորդում տվեց Հայկական խմբակի 1913 թ. նոյեմբերի 21-ի նիստում¹:

**Բ. ԴՌԱՆ ՆՈՐ ՈՐՈԳԱՅԹԸ:
ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԶԳՁԳՈՒՄՆԵՐ**

1913 թ. նոյեմբերի վերջին ներքին գործոց նախարար Թալեաթ բեյն այցելում է Զավեն պատրիարքին: Նա եկել էր հավաստիացնելու, թե Բ. Դուռն այս անգամ ամեն ինչ անելու է, որպեսզի Հայաստանի ժողովուրդը գոհ մնա կառավարության միջոցառումներից, միայն թե սրբազանը հրապարակավ Հայտարարի, որ հայերը հրաժարվում են Հայկական հարցը օտարների միջամտությամբ լուծելուց: Առաջինը Համիդն էր, որ հայերի 1895-96 թթ. կոտորածների ժամանակ փորձել էր լարել այդ որոգայթը, երբ Կ. Պոլսում հայոց պատրիարք էր Մատթեոս Իգմիրյանը: Ի պատիվ վերջինիս՝ որքան էլ սուլթանը և Բ. Դուռը ճնշումներ էին գործադրել, նա հրաժարվել էր եվրոպական միջամտության դեմ որևէ թուղթ ստորագրելուց: Հիմա՝ 17-18 տարի հետո, պատմությունը դարձյալ կրկնվում էր, և կասկած չկար, որ կառավարությունն այս անգամ Զավեն պատրիարքին էր ստիպելու հայ ազգի անունից նման թուղթ ստորագրել:

Բայց Զավեն սրբազանին ճանաչողները վստահ էին, որ նա այդ քայլին չի գնա:

Հայկական հարցից մեծ տերություններին հեռացնելու թուրք կառավարության հետևողականությունը, հիրավի, համառության նախանձելի օրինակ էր: Այդ դեպքից հետո պատրիարքարան է գալիս Լոնդոնի բանակցություններում օսմանյան կառավարության նախկին ներկայացուցիչ և տվյալ պահին հանրօգուտ շինության ու առևտրի նախարար Օսման Նիզամի փաշան: Նա եկել էր հորդորելու պատրիարքին՝ թուրքահայերի անունից հանդիսավորապես հանդես գալ հայտարարությամբ,

որ հայերը երբեք չեն փափագում եվրոպական հակակշիռը, և թե Պողոս Նուբար փաշան իրավասու չէ հանդես գալու թուրքահայոց անունից: Միաժամանակ նա պատրիարքին հավաստիացնում է, որ հայերը որևէ հիմք չունեն չհավատարու Հայաստանում բարենորոգումներ կատարելու կառավարություն խոստումներին:

Զավեն պատրիարքը մերժում է առաջարկված պահանջները: Նա էլ էր կարող այլ կերպ վարվել, քանի որ երիտթուրք նախարարի հետ համաձայնության գալը ուղղակի դավաճանություն կլիներ ազգային շահերին:

Օսման Նիզամի փաշան հայոց պատրիարքարանից ձեռնունայն վերադառնում է Բ. Դուռ՝ Թալեաթ բեյին տանելով Զավեն պատրիարքի մերժողական պատասխանը:

Դրանից հետո «Միություն և առաջադիմություն» կոմիտեի հանձնարարությամբ նախկին նախարար հայազգի Հալաճյանը գալիս է հայոց պատրիարքի մոտ՝ նրան կրկին համոզելու, որպեսզի ձեռք քաշի եվրոպացիների հետ համագործակցելուց և գործ ունենա միայն կառավարության հետ: Պատվիրակը նրան փոխանցում է նաև պառլամենտում հայերին 18 տեղ հատկացնելու մասին Թալեաթի խոստումը:

Պատրիարքը Հալաճյանին ընդունում է շատ սառը և հայտնում, որ հայերին պետք չեն խոստացած պատգամավորական տեղերը, քանի որ նրանք ընդհանրապես չեն մասնակցելու պառլամենտի ընտրություններին: Ինչ վերաբերում է եվրոպացիներից խզվելու պահանջին, չեչտել էր պատրիարքը, ապա դա հավասարազոր է ինքնասպանության¹:

Բայց Թալեաթը չի ընկրկում: Ինչպես նա, այնպես էլ Սայիդ Հալիմի փաշայի կարիներտի բոլոր անդամները սաստիկ անհանգստացած էին Նուբար փաշայի հաջող գործունեությամբ: Նրանց հատկապես հավասարակշռությունից հանել էր այն իրողությունը, որ Պողոս Նուբարին ընդունել և նրա հետ երկար զրույցներ էին ունեցել Պիչոնը, էդուարդ Գրեյը, Յագովը, Սազոնովը:

¹ ПЗПАК, том I, стр. 309-314.

¹ Տե՛ս «Новое Время», 21 декабря 1913 г.

Վարչապետը չէր թաքցնում իր դժգոհությունը ներքին գործերի նախարար Թալեաթ բեյից, որ սա չէր կարողանում գսպել այն Հայ գործիչներին, որոնք Կ. Պոլսից աջակցություն էին ցույց տալիս Պողոս Նուբարի գլխավորած Հայկական պատվիրակությանը:

Հայերի դիվանագիտական հաջողություններից տազնապած՝ երիտթուրքական կառավարությունը, որպես հակադարձում, մի օր հանդես էր բերում քրդական ինքնավարության հարց՝ Հայկական պահանջների ուժը հավասարակշռելու համար, մի ուրիշ օր կազմում էր բարենորոգումների մշակման և իրագործման հանձնաժողովներ՝ իբր զբաղվելու Փոքր Ասիայի հայաբնակ շրջանների խնդիրներով, երրորդ օրն առաջարկում էր Փոքր Ասիայում մտցնել այնպիսի կարգեր, որ ժամանակին գործել էին Մակեդոնիայում, չորրորդ օրը հնարում էր բարենորոգումներից խուսափելու մի նոր միջոց, և այսպես շարունակ:

Այդ բոլոր քայլերը համարելով անարդյունավետ՝ Թալեաթի պահանջով Բ. Դուռը 1913 թ. դեկտեմբերի սկզբներին Փարիզից Նուբար փաշային պաշտոնապես հրավիրում է Կ. Պոլիս՝ Հայկական հարցի շուրջ բանակցելու: Վերջինս երկմտում ու տատանվում է:

Բ. Դուռն մի աշխատակցից տեղեկանալով Պողոս Նուբարին մայրաքաղաք հրավիրելու վարչապետի մտադրությունն՝ մասին՝ Կ. Պոլսի պատրիարքը շտապում է ռուսաց դեսպանատուն՝ դեսպան Գիրսի կարծիքը իմանալու: Վերջինս ասել էր, թե Պողոս փաշայի ներկայությունը Պոլսում ավելորդ է և նույնիսկ հակառակ է Հայոց շահերին, քանզի Բ. Դուռն կողմից Ազգային պատվիրակության նախագահին հրավիրելու նպատակը տերություններին թուրքական կառավարության տրվելիք պատասխանը հետաձգելն է և եվրոպական միջամտությունը չեզոքացնելը: Հայաստանում բարենորոգումներ կատարելու խոստումով Բ. Դուռը փորձում էր պետություններին փաստի առաջ կանգնեցնել: Պատրիարքի հետ ունեցած տեսակցությունից հետո Գիրսը գաղտնի հեռագրով (№ 1065) Փարիզում ռուսաց դեսպան Իզվոլսկուն հայտնում է. «Հայոց պատրիարքն ամենավճռական կերպով արտահայտվեց այդ (Կ. Պոլիս Պողոս Նուբարի:– Ն. Ս.)

այցելություն դեմ: ... Չեմ կարող չընդունել, որ պատրիարքի և Հայ քաղաքական գործիչների կողմից պաշտպանվող կարծիքը հիմնավոր է: Իմ բանակցությունները Մեծ Վեզիրի հետ ձգձգվում են, և ես անշուշտ չեմ կարող երաշխավորել դրանց հաջողությունը, բայց և կարծում եմ, որ Պողոսի ժամանումն իրոք առիթ կտա է՛լ ավելի մեծ ձգձգման համար՝ նրա հետ անմիջական պարզաբանումների պատրվակով»¹:

Բ. Դուռն առաջարկը մերժելու մասին Նուբար փաշան դեկտեմբերի 13-ին գրում էր կաթողիկոսին, միաժամանակ նրան տեղեկացնում, որ երեք օր առաջ Փարիզում Թուրքիայի դեսպան Ռիֆաթ փաշայի միջոցով այդ երկրի վարչապետից նույնպես հրավեր է ստացել գնալ Պոլիս², և որ ինքն առաջարկը մերժել է հետևյալ երկու հիմնական պատճառաբանությամբ. 1) «Առանց հայոց կաթողիկոսի հաւանութեան չեմ կրնայ Պոլիս երթալ»³, 2) «Կաթողիկոսը հեռագրած է, թե Թուրքիոյ կառավարութեան հետ հարաբերուելը չի մտնում իմ պաշտոնիս լիազորութեանց մեջ»⁴:

Ջրույց էր շրջում, թե քանի որ Պողոս Նուբար փաշան մերժել է գնալ Պոլիս, ուստի Բ. Դուռը որոշել է եվրոպա ուղարկել Օսման Նիզամի փաշային՝ նրա հետ բանակցելու համար⁵:

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3465, л. 60.

² Մի այլ աղբյուրում նշված է, որ կառավարության կողմից Նուբարին անձամբ հրավիրել էր Գաբրիել Նորատունկյանը: Նուբարը 1913 թ. հունվարի 3-ին Վահան Մալեգյանին գրում էր. «Գալով խորհրդապահական հաղորդագրութեան գոր կ'ընէք ինձի նորատունկեան էֆենտիի կողմէ, պարզ է թէ պիտի ստիպում մերժել ինձի ըլլալիք այդ տեսակ հրաւեր մը: Եթէ ընդունիմ, ազգ. իշխանութեանց եւ հայրենակիցներուս կողմէ ինձի հանդէպ ցոյց տրուած վստահութեան արդիւնքը եղող կացութիւնը պիտի տկարանայ ամուլ վիճաբանութիւններով: Այսուհանդերձ, ոեւ է առարկութիւն չունիմ Եպարքոսին զրկելու պետութեանց ներկայացուելիք յուշագրին յար եւ նման օրինակը, երբոր վերջնական ըլլայ բարենորոգմանց ծրագիրը գոր պատրաստելու հետամուտ ենք» (Վ. Մալեգեան, ճամբուս վրայ (Յուշաքաղ), էջ 307):

³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 61:

⁴ Նույն տեղում, թ. 61-ի շրջերես:

⁵ Տե՛ս «Ազգ» (Բոստոն), № 30, 14 հունվարի 1914 թ.:

4. Պոլսի հայոց պատրիարքարանի հետ լեզու գտնելու համար Բ. Դուռը նույնիսկ պատրաստակամություն հայտնեց նրան ընդառաջ գնալ վաղուց չարչրկված հարցում՝ առաջիկա պառլամենտում հայերին տալ այնքան տեղ, որը համապատասխաներ թուրքահայ ժողովրդի թվին:

Հայոց ազգային կենտրոնական վարչությունը, հիմնվելով այն փաստի վրա, որ Թուրքիայում հայերի թիվը երկու միլիոնից ավելի է, իսկ ընտրական օրենքով նախատեսված է, որ յուրաքանչյուր 50.000 հոգին մի պատգամավոր պիտի տա, գտնում էր և պահանջում, որ այդ հաշվով հայերը պառլամենտում պիտի ունենան պատգամավորական 20 տեղ:

Պատրիարքարանը միաժամանակ պահանջում էր, որ պառլամենտի պատգամավորներն ընտրվեն Հայոց ազգային ժողովի կողմից: Այդ պահանջի նպատակն էր հայ պատգամավորական թեկնածուների նախընտրական շրջանի կուսակցական զգվոտոցների, փոխադարձ վարկաբեկումների և ազգային շահերը կուսակցական շահերին ծառայեցնելու մոլուցքի ոլորտից դուրս բերել և նախընտրական պայքարը մտցնել քաղաքակիրթ հունի՝ այն ծառայեցնելով ազգային համախմբման գործին:

Կառավարությունը մերժեց այդ արդարացի պահանջները, որին հետևեց պատրիարքի՝ վերը նշված հայտարարությունը, թե հայերին պետք չեն պատգամավորական տեղեր, որովհետև նրանք ընդհանրապես մտադիր չեն մասնակցելու ընտրություններին:

Նոյեմբերի վերջերին «Միություն և առաջադիմություն» կոմիտեն հայոց պատրիարքարանին տեղեկացրեց, որ ինքը դեմ չէ, որ ապագա պատգամավորական պալատում հայերին հատկացվի 20 տեղ՝ պայմանով, որ հայ թեկնածուների 20 տոկոսը, այսինքն՝ 4 տեղը, տրվի երիտթուրք կուսակցության հայ անդամներին: Պատրիարքը հայտարարեց, որ այդ դեպքում հայերը կմասնակցեն ընտրություններին: Բայց Թալեաթը մեկ շաբաթ անց նրան հաղորդեց, որ կոմիտեն փոխել է իր տեսակետը, և հայերը պառլամենտում կստանան 18 տեղ: Պատրիարքարանը հավանություն է տալիս նաև այդ թվին: Բալկանյան երկրորդ պատերազմի ավարտից ի վեր դա թերևս առաջին դեպքն էր, որ

համաձայնություն էր ձեռք բերվում հայոց պատրիարքարանի և Բ. Դուռնի միջև:

Պողոս Նուբարին 4. Պոլիս կանչելու գործում կրած անհաջողությունը չվհատեցրեց և չկանգնեցրեց թուրքական կառավարությանը, որն այս անգամ, նոյեմբերի 22-ին, դիմեց ՀՅ դաշնակցություն կուսակցությանը՝ նրան ընդունելով որպես թուրքահայ ժողովրդի ներկայացուցիչ, և արեց համարյա նույն առաջարկությունները, ինչ պատրիարքին:

Վերը նշված ուսական երկու՝ “Русские Ведомости” և “Русское Слово” թերթերն անհանգստություն էին հայտնում, որ Իթիհահադի լարած թակարդի մեջ ՀՅ դաշնակցությունը կարող է հեշտությունը ընկնել, քանի որ այդ երկու կուսակցությունները տարիներ շարունակ գործել են քաղաքական համաձայնություններ:

Ձուր չէր մտավախությունը: Դաշնակցությունն անմիջապես չմերժեց առաջարկը և հոժարեց բանակցություններ վարել Թալեաթ բեյի հետ: Վերջինս հերթական խոստումներն արեց, իսկ Դաշնակցությունը պահանջեց, որ դրանք վավերացվեն սուլթանի հատուկ իրազեով:

“Русское Слово”-ն ցավով նշում էր, որ երիտասարդ թուրքերը դաշնակցություն կուսակցության հետ ունեցած որոշ տարաձայնություններից հետո, որը հանգեցրել էր նրանց դաշինքի քայքայմանը, հիմա նորից բանակցություններ են սկսել նրա ներկայացուցիչների հետ՝ փորձելով վերականգնել իրենց նախկին համագործակցությունը: Նրանք հայերին խոստանում են ամեն տեսակ բարիք, միայն թե դաշնակ ղեկավարները հրապարակայնորեն հայտարարեն, թե Հայաստանի ժողովուրդն այժմ խորապես հավատում է, որ թուրքական կառավարությունն ինքը Հայաստանում կկատարի բարենորոգումներ, հետևապես ավելորդ են Թուրքիայի ներքին գործերին օտարերկրյա ամեն տեսակի միջամտությունները:

«Անկասկած,- գրում էր թերթը,- հայ-թուրքական համաձայնությունը զորավոր հաջողություններ կլինեն Բ. Դուռնի դիվանագիտական խաղում: Ձի կարելի վստահ լինել, որ երեքպետյան դաշնության երկրները, գլուխ ունենալով Գերմանիա-

յին, ցանկացած դեպքում չեն փոխի իրենց հայացքը և, իբր, հայկական հարցում հայերի ցանկություն դեմ չգնալու պատրվակով չեն հրաժարվի եվրոպական կոնտրոլի պահանջից»¹:

“Русские Ведомости”-ում Ա. Ջիվելեգովն ընթերցողին տեղեկացնում էր, որ 1913 թ. նոյեմբերի 22-ին ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը, որը երիտթուրք կաբինետի հոգին էր, իր մոտ է հրավիրել Դաշնակցություն ականավոր գործիչներին և նրանց առաջարկել կառավարությունը ներկայացնել այն հարցերի ցուցակը, որ կուսակցությունը կցանկանար լուծված տեսնել:

Երիտթուրքական կառավարությունը պետություններին հայտնել էր, որ նա բանակցություններ է սկսել Դաշնակցության կուսակցության ներկայացուցիչների հետ և հույս ունի դրանց միջոցով ձեռք բերել հարցի այնպիսի լուծում, որով հայերն իրենց միանգամայն բավարարված են զգալու: Բ. Դուռը պետություններին հայտնել էր նաև, որ Դաշնակցության ղեկավարները, իբր, համարյա տվել են իրենց համաձայնությունը, միայն թե պահանջում են, որ հրապարակվի կառավարության խոստումը հաստատող սուլթանական իրադե²:

Միաժամանակ, կառավարության կարգադրությամբ Վանում ստեղծվեց «Կոմիտե» անունով մի հանձնախումբ՝ բաղկացած 5 անդամից՝ 2 հայ, 2 թուրք և 1 հույն, որին հանձնարարված էր քննել ու լուծել հայ սեփականատերերի և քրդերի միջև եղած միջհողային այն վեճերը, որոնք վերաբերում էին վերջիններիս կողմից առաջինների հողերի հափշտակմանը: Փոխադարձ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում հանձնախմբին հնարավորություն էր տրված դիմելու կառավարությանը՝ բռնազրավված հողերի դիմաց հայերին փոխհատուցել զրամով:

Դաշնակցության ու կառավարության միջև սկսված բանակցությունները, այնուամենայնիվ, չարունակում էին գլխա-

վորապես պատվել հայերի ներկայացուցիչների թիվը պառլամենտում ավելացնելու հարցի շուրջ:

Երիտթուրք կառավարության նպատակը շատ պարզ էր: «Այս պահին, երբ բարենորոգումների ծրագրի հարցը տարածայնություններ է հարուցում մեծ պետությունների միջև, նշված հողվածում գրում էր Ա. Ջիվելեգովը, - Թալեաթի հոգան ամենևին այն չէ, թե ինչ են կամենում դաշնակցականները: ... Կառավարության համար տվյալ պահին կարևոր է մի բան՝ որպեսզի հայկական հարցը դուրս բերվի եվրոպայի հսկողությունից»¹:

Ինչ խոսք, հարցի այդօրինակ լուծմանը Դաշնակցության կողմից հանաձայնություն տալը հերթական կոպիտ սխալը կլիներ, բայց Թալեաթը և նրա արբանյակները գործադրում էին բոլոր ջանքերը, դիմում էին կաշառման հայտնի ու անհայտ միջոցների, ինչպես և՛ բացահայտ սպառնալիքների, որպեսզի այդ կուսակցությունից պոկեն համաձայնություն:

Բայց ոչ ոք դեռ չէր մոռացել, թե թուրքերը որքան առատ խոստումներ են տվել ոչ միայն հին ռեժիմի ժամանակ, այլև «սահմանադրական կարգերի» օրոք: Թալեաթի այս քայլերը հին խորամանկության նոր դրսևորում էին:

Վանի հանձնաժողովը (կոմիտեն) կատարյալ կատակերգություն էր: Հնարավոր էր, որ այն սկսեր աշխատել, բայց պարզից պարզ էր, որ հայերի և քրդերի միջև համաձայնություն չէր կայանալու: Ինչ վերաբերում էր հայերին դրամական հատուցում տալուն, ապա եթե նույնիսկ հողերի գնահատումը արդարացի լիներ, միևնույնն է, ոչ մի քուրդ դրամական փոխհատուցում չէր անի հայից խլած հողի դիմաց, իսկ պետությունը նույնպես չէր կարող ստանձնել փոխհատուցումը, քանի որ չունեի այդ հնարավորությունը:

Միակ բանը, որ կարող էին ձեռք բերել դաշնակցականները, հայ պատգամավորների թվի ավելացումն էր պառլամենտում: Թալեաթը համաձայնել էր այդ թիվը տասից հասցնել 18-ի:

¹ “Русское слово”, № 272, 26 ноября 1913 г.

² “Русские Ведомости”, № 276, 1913 г.

¹ “Русские Ведомости”, № 276, 1913 г.

Հայերը պահանջում էին 22: Եվ եթե նույնիսկ Թալեաթը զիջեր, ապա դա իրական արժեք չէր ունենա, քանի որ Թուրքական պառլամենտը, այլևս ոչ մի քաղաքական ազդեցություն չուներ երկրում: Ինչ վերաբերում է սուլթանից պահանջվող իրադեհին, ապա դա նույնքան անզոր կլիներ, որքան Թուրքական պառլամենտը:

“Русские Ведомости”-ն, նույնպես և “Русское слово”-ն տագնապում էին, որ դաշնակցությունը և Հայ քաղաքական ուրիշ ուժեր, ինչպես նախկինում շատ անգամ է եղել, այս անգամ էլ կխաբվեն Թուրքական դիվանագիտական խաղերից: «Բայց Եոյակ դաշնության պետությունները չպետք է ընկնեն այդպիսի թակարդի մեջ,- շարունակում էր թերթը: - Նրանք պետք է քաջ իմանան, որ Դաշնակցություն կուսակցության գործիչները Հայ ժողովրդի կողմից բնավ լիազորված չեն Համաձայնություն Հայտնելու երիտասարդ Թուրքերի առաջարկներին կամ մերժելու դրանք: Թուրքական կառավարությունն իր տրամադրության տակ ունի բավականաչափ միջոցներ, որպեսզի Հայ ազգության պատկանող իր Հպատակներին, Հատկապես նրանց, ովքեր ապրում են Կ. Պոլսում, ստիպի ստորագրել ամեն տեսակ Հայտարարություններ»¹:

Արձագանքելով այդ մտքին՝ Ա. Զիվելեզովը գրում էր, որ ոչ մի Հայ իրավունք չունի Թուրք կառավարության հետ ստորագրելու որևէ փաստաթուղթ, որն ուղղված լինի մեծ տերությունների կողմից Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու դեմ: «Դաշնակցականները ոչ մի կարիք չունեն Թալեաթի հետ առանձին բանակցություններով դժվարացնելու մեծ պետությունների միսիան»²:

Այս անգամ Հայերը կարողացան չընկնել Իթիհատի լարած որոգայթը: Հայերին «կառավարության հետ Հաշտեցնելու» Բ. Դոան ջանքերը շարունակվում են 1913 թ. ամբողջ դեկտեմբեր ամսվա ընթացքում, բայց անարդյունք: Ահա դրանից հետո

¹ “Русское слово”, № 272, 26 ноября 1913 г.

² “Русские Ведомости”, № 276.

Թուրք իշխանություններն անցնում են բացահայտ սպառնալիքների և ահաբեկման:

Արմեն Գարոն վկայում է, որ 1913 թ. դեկտեմբերին Ջեմալ բեյը մի գիշեր իր մոտ է կանչում ՀՅ դաշնակցություն նշանավոր գործիչ Վարդգեսին (Հովհաննես Սերենկյույան) և Հայտարարում հետևյալը. «Եթե դուք պնդեք երոպական քոնթրոլի մասին, մենք ստիպուած պիտի լինինք ընդունիլ: Բայց ատոր արդիւնքն այն կ'ըլլայ, որ այդ վեց վիլայեթներուն իսլամ ազգաբնակչութիւնը ոտքի պիտի ելնէ, եւ 3-4 հարիւր հազար Հայեր պիտի կոտորուին: Եւ հաւանական է, որ ոռուները, առիթէն օգտուելով, պիտի գան եւ գրաւեն այդ նահանգները»¹:

Երբ Վարդգեսը հարցնում է, թե ինչու է այդ բանը իրեն ասում, Ջեմալը պատասխանում է. «Որպեսզի դուն ալ երթաս ձերիններուն ըսես՝ խելքերը գլուխին հաւաքեն»²:

Արմեն Գարոն շարունակում է իր վկայությունը. «Երբ Վարդգէսն այս լուրը բերեց, մենք լուրջ ժողով մ'ունեցանք եւ որոշեցինք, որ Փոքր Սարգիսն ու ես երթանք երիտասարդ Թուրքերու մոտ եւ Կ. կոմիտէին հետ խոսինք այս մասին: Յաջորդ օրն իսկ ժամադրութիւն ըրինք անոնց կոմիտէի երկու գլխաւոր անդամներուն հետ Բերայի սրճարաններէն մէկուն մէջ: Եւ յայտնեցինք Միհթատ Շիւքրիին եւ Քիւչիւկ Քեմալին, որ Հ. Յ. դաշնակցութիւնը իրենց սպառնալիքին կ'պատասխանէ հետեւեալ սպառնալիքով.- «Եթէ գաւառներու մէջ որեւէ կոտորածի դէպք պատահի, մենք անմիջապէս պիտի վերսկսինք մեր յեղափոխական գործունէութիւնը Պոլսոյ մէջ, եւ պատասխանատուները չեն ազատիր մեր ձեռքէն»: Մեր այս սպառնալիքը ապշեցուց երկու բանագնացները: Անոնք սկսան մեզ երդում ընել, որ ձեմալը ինքնագլուխ այդ յիմար խոսքերն ըսեր է, եւն. եւն.:

Ճեմալին սպառնալիքը եւ մեր պատասխանը անմիջապէս երեւցան եւրոպական մամուլին մէջ: Եւ մէկ քանի օր յետոյ

¹ «Հայրենիք», № 2, դեկտեմբեր, 1922, էջ 41:

² Նույն տեղում:

Թուրք կառավարությունը զիջեց հիմնական կետին մէջ՝ բայց ի հարկէ ամէն տեսակ միջոցներու դիմեց, որ եւրոպական քոնթրոլը անուանական լինի միայն»¹:

Կառավարութեան կողմից հայերին համոզելու փորձերին զուգահեռ Թուրք մամուլն իր հերթին հոգեբանական ահոբեյի ճնշում էր գործադրում նրանց վրա: Պարբերականները ջանում էին հայերին համոզել, թե հավատարմ Ռուսաստանի խոստումներին՝ խաղալիք են դառնում ռուսաց դիվանագիտութեան ձեռքին, իսկ դա կարող է շատ թանկ նստել իրենց:

Թուրք մամուլի էջերից հատկապէս չէր իջնում եվրոպական վերահսկողութեան հարցը: Թերթերը գրգռում էին հանրային կարծիքը վերահսկողութեան դեմ, այն համարում ամեն մի թուրքի համար բոլորովին անընդունելի, լկտի ոտնձգութիւն պետութեան պատվի ու երկրի անկախութեան դեմ: Իթթիհադական «Թանինը» հայերին սպառնում էր, որ եթե նրանք ազգովին չընդդիմանան «եվրոպական վերահսկողութեան ընդհանուր վտանգի» դեմ, անմիջապէս չսկսեն բարենորոգումների հարցը քննութեան առնել թուրքերի հետ, եթե չհրաժարվեն օտար պետութիւնների ջակցութիւնից, ապա կարող են վստահ լինել, որ չեն փրկվելու մահաճակատների վրեժխնդրութիւնից:

**ԳԵՆԵՐԱԼ ԼԻՄԱՆ ՖՈՆ ՍԱՆԴԵՐՍԻ ՄԻՍԻԱՆ:
ՌՈՒՍ – ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ԳՈՒՄԱՐՎՈՒՄ Է ՆՈՐԸ**

Հայկական բարենորոգումների հարցը լքվելու և մոռացութեան արխիվ նետվելու շեմին էր, երբ մի դիպվածով այն նորից չունչ առավ:

^{*} Արմեն Գարոն, ինչ խոսք, չափազանցնում էր երիտթուրք կոմիտեի երկու անդամներին իր և Փոքր Սարգսի տված սպառնալիքների թողած տպավորութիւնը և դերը, եթե նկատի ունենանք, որ թուրք կառավարութիւնից զիջումներ կորզելու համար Ռուսաստանի դիվանագիտութիւնից և Պողոս Նուբարից, պահանջվում էին հսկայական ջանքեր:

¹ «Հայրենիք», № 2, դեկտեմբեր, 1922, էջ 41:

Դրա պատճառը գերմանական ռազմական ներկայութեան կտրուկ աճն էր Կ. Պոլսում և դրան Ռուսաստանի խիստ բացասական արձագանքը: Մինչ մի կողմից լիազորված անձինք դաշնագրեր էին պատրաստում և ստորագրում, մյուս կողմից զորավարները սրեր էին պատրաստում դրանք պատռելու համար:

19-րդ դարի 80-ական թվականների սկզբներից Գերմանիան իր ազդեցութիւնը Թուրքիայի վրա տարածելու ամենագործուն միջոցներից մեկը համարում էր օսմանյան զինված ուժերի վրա վերահսկողութիւն հաստատելը:

Սուլթան Համիդի խնդրանքով գերմանացի ֆելդմարշալ ֆոն դեր Հոլցը 1883 թվականից Թուրքիայում ստանձնել էր այդ երկրի բանակի հրահանգչի պաշտոն՝ ուղղութիւն տալով թուրք զինվորականութեանը, հատկապէս սպայակույտին: Նրա գլխավոր խնդիրն էր եղել թուրքական զինված ուժերը վերակառուցել պրուսական սիստեմով, կարգապահութեամբ ու ոգով¹: Ֆելդմարշալի պարտականութեան մեջ էր մտնում նաև զանազան մոբիլիզացիոն ծրագրերի կազմումը: Հարկ է նշել, սակայն, որ ֆոն դեր Հոլցը Թուրքիայում իր ողջ ծառայութեան ընթացքում՝ մինչև 1896 թվականը, որևէ հրաման տալու իրավունք չունեցավ, նրա ենթակայութեան տակ չէր եղել ոչ մի թուրք զինվոր:

Զինվորական հրահանգչի իր պարտականութիւնները թուրքական բանակում կատարելուց հետո էլ ֆոն դեր Հոլց փաշան՝ որպէս ռազմական խորհրդական, մնաց Կ. Պոլսում ընդհուպ մինչև 1908 թ. օսմանյան հեղափոխութիւնը, որի հաղթանակից անմիջապէս հետո թողեց իր ծառայութիւնը, մեկնեց Գերմանիա և այլևս չվերադարձավ Թուրքիա՝ հակառակ երկու տարի հետո նույն միսիայով նրան նորից Կ. Պոլիս ուղարկելու Վիլհելմ կայսեր ցանկութեան:

Մինչ այդ ծագել էին մի շարք հանգամանքներ, որոնք արտաքին տպավորութիւն էին ստեղծել, թե խախտվել է թուրքերի վստահութիւնը գերմանական զինվորական մեթոդների նկատմամբ:

¹ Բ. Իշխանեան, Գերմանիայի և Թուրքիայի տնտեսա-քաղաքական փոխարարներու թիւնը (քննական տեսութիւն), Թիֆլիս, 1915, էջ 35:

Երիտթուրքերի պետական հեղաշրջումից հետո ռազմական փորձագետները եկել էին այն եզրակացություն, թե Գերմանիայի ազդեցությունը Թուրքիայի վրա գնալով թուլանալու է: Դա այն ժամանակ էր, երբ սուլթան Համիդի տապալումից հետո երիտթուրքերը իրենց ներկայացնում էին որպես ֆրանսիական հեղափոխության հետևողական ջատագույններ, այն հեղափոխություն, որը ժողովրդական էր բառի իսկական իմաստով: Երիտթուրքերը ճիգ էին անում իրենց հեղաշրջումը ներկայացնելու որպես ժողովրդական հեղափոխություն: Հերթական այդ խարկանքը բացահայտել էր ոչ այլ ոք, քան Գերմանիայի կայսր Վիլհելմ II-ը՝ գրելով, թե այդ «հեղափոխությունը կատարվել է ոչ թե Փարիզի ու Լոնդոնի «երիտասարդ թուրքերի», այլ բացառապես բանակի և համարյա ամբողջովին Գերմանիայում սովորած, այսպես կոչված, «գերմանական թուրք սպաների» կողմից: Դա մաքուր զինվորական հեղափոխություն էր: Այդ սպաները լիովին գրագետ են և բացառապես մտածում են գերմաներեն»¹:

Ֆոն դեր Հոյցը, որը նախկինում շատ տարիներ մարզել էր սուլթան Աբդուլ Համիդի բանակը, այժմ՝ 1909 թ. հուլիսին, կրկին եկել էր Կ. Պոլիս և ձեռնամուխ եղել այս անգամ մարզելու երիտթուրքական բանակը²: Գերմանիայի կանցլեր Բյուլովի արտահայտությամբ ֆոն դեր Հոյցը պետք է «բարձրացներ Թուրքիան ռազմական, քաղաքական ու տնտեսական տեսակետից, թուրքերին գրավեր մեր կողմը և նրանց կապեր մեզ հետ»³: Ժամանակով Թուրքիա՝ նա հատկապես մեծ կարևորություն տվեց Արևելյան Անատոլիայի պաշտպանությանը, հետևապես ամենից առաջ ռուս-թուրքական սահմանագծի ամրապնդմանը³:

Բայց ֆոն դեր Հոյցի՝ վերջին անգամ Թուրքիա գալը նախ-

¹ “Германский империализм и милитаризм”, М., 1965, стр. 68.

² Ֆոն դեր Հոյցի այս վերջին այցելությունը Թուրքիա նախորդել էր էնվերթիմի որպես Թուրքիայի զինվորական ատաշեի (կցորդ) Բեռլին մեկնելը:

³ Georg Halvartzen, Империализм до 1914 г., М., 1961, էջ 74:

³ Տե՛ս Մ. Արզումանյան, Հայաստան. 1914-1917, Երևան, 1969, էջ 57:

կինների համեմատ նվազ արդյունավետ եղավ: Մի շարք հանգամանքներ արտաքին տպավորություն էին ստեղծել, թե խախտվել է թուրքերի վստահությունը գերմանական զինվորական մեթոդների նկատմամբ: Իսկ դրա պատճառները Տրիպոլիտանական և Բալկանյան պատերազմներն ու դրանց հետևանքները եղան, հատկապես Բալկանյան պատերազմում թուրքական բանակի կրած դաժան պարտությունները, որոնք մեծ հիասթափություն էին առաջ բերել ոչ միայն Թուրքիայում, այլև գերմանական կառավարության բարձր շրջաններում:

Բալկանյան պատերազմը դեռ նոր էր վերջացել, երբ սուլթանը դիմեց Վիլհելմ կայսրին՝ նոր հիմքերի վրա դնելու իր երկրի ռազմական ուժերի կազմակերպման գործը և այդ նպատակով ավելի մեծ արտոնություններով օժտված զինվորական պատվիրակություն ուղարկել Թուրքիա, որը ոչ միայն գերմանական սպաներ պիտի տեղավորեր թուրքական զինվորական դպրոցներում, այլև թուրքական բանակի հրամանատարներ նշանակեր առավել աչքի ընկած գերման գորավարներ¹:

Գերմանիան, իհարկե, մեծ պատրաստակամությամբ ընդունալ գնաց թուրքական կողմի ցանկությունը: Ամեն տեսակի անակնկալներից սուլթանին պաշտպանելու պատրվակով 1913 թ. նոյեմբերի 8-ին գերմանական կառավարությունը համաձայնագիր է կնքում Բ. Դոան հետ, որի հիման վրա Վիլհելմ II կայսրը Թուրքիա է ուղարկում 42 սպաներից կազմված մի զինվորական միսիա՝ երիտասարդ, համարձակ ու շրջահայաց գեներալ Լիման ֆոն Սանդերսի գլխավորությամբ: Կայսրը նրան տվել էր հեծելազորային գեներալի աստիճան և այդ առթիվ հեռագրով սրտագին շնորհավորել՝ մաղթելով գերազանց կատարել չափազանց կարևոր առաքելությունը²:

1913 թ. դեկտեմբերի 4-ի սուլթանական իրադեոլ Սանդերսը նշանակվում է Կ. Պոլսում տեղակայված օսմանյան առաջին բանակային կորպուսի (պիրինջի քոլ-օրդու) հրամանատար, այն

¹ Տե՛ս «Հայրենիք», № 21 (265), փետրվար, 1948, էջ 39 (տողատակ):

² Տե՛ս «Ախուրյան» (Ալեքսանդրապոլ), № 2, 5 հունվարի 1914 թ.:

գորաբանակի, որի ձեռքում էր մայրաքաղաքը և զույգ նեղուցները¹: Իսկ լավ հայտնի է, որ ով տիրում է որևէ կենտրոնական կառավարում ունեցող պետության մայրաքաղաքին, նա սովորաբար տիրում է նաև ողջ երկրին: Առայժմ Գերմանիայի վերահսկողության տակ էր անցնում Բոսֆոր-Ֆարդանեյի շրջանը, իսկ դա նշանակում էր, որ պատերազմի ժամանակ ռուսական նավատորմը կշրջափակվեր Սև ծովում, որը Վիլհելմ կայսրի հետապնդած որոշակի նպատակն էր:

Գերմանիայից ուղարկած զինվորական այս միսիան թուրքիայում բոլորովին այլ խնդիրներ պիտի ունենար, քան ունեցել էին նախկին և առանձնապես Փոն դեր Հոլց փաշայի միսիանները: Եթե Լիմանը ստանձնում էր Կ. Պոլսի գորաբանակի հրամանատարությունը, ապա 42 սպաները պիտի ղեկավարեին այդ զորքը՝ այն դարձնելով զինվորական մի օրինակելի միավոր՝ մարզված, զինված, հանդերձավորված գերմանական գորաբանակի նման, որի օրինակով պիտի վերակառուցվեր թուրքական ամբողջ բանակը:

Նախկինում՝ մինչև Բալկանյան պատերազմը, Գերմանիան ձգտում էր որքան կարելի է ուժեղացնել թուրքական բանակը, որպեսզի եվրոպական պատերազմի դեպքում այն կարողանա զսպել բալկանյան պետություններին, բայց այժմ, երբ այդ պատերազմից հետո պայմաններն արմատապես փոխվել էին, թուրքիան այլևս անկարող էր նշված պետությունների հանդեպ զսպիչ դեր կատարել: Այս փոփոխված իրադրությունն մեջ Գերմանիայի գլխավոր նպատակն այլևս թուրք բանակը կրթելը չէր, այլ Կ. Պոլսում իր ակտիվ ազդեցության հաստատումը, որին հասնելու համար ամենախելամիտ միջոցը նա համարեց թուրքիայի ամենակարևոր ստրատեգիական կետերը ձեռք գցելը: Ինչպես նշում էր Ա. Մանդելշտամը, Սանդերսի գործունեությունը մեծ աջակցություն էր ցույց տալիս Բեոլինից վերադարձած, ծայրահեղ գերմանասեր էնվեր բեյը²: Սա գերմանացիների

¹ Տե՛ս «Ազգ» (Բոստոն), № 32, 28 հունվարի 1914 թ.:

² Տե՛ս Անտրե Մանտելսթամ, Օսմանեան կայսրութեան ճակատագիրը: Առաջին մաս, էջ 123:

վաղեմի բարեկամն էր, միաժամանակ ատելությունը էր լցված դեպի Ռուսաստանը: Նրա հայտնվելը Բոսֆորի ափերում Փոն-Սանդերսի առաքելության ուղղակի հետևանք էր: Ռազմական նախարարությունում պաշտոնավարության առաջին իսկ օրերից նա հայտարարություններ էր անում, որ անհրաժեշտ է մաքրել թուրքական բանակի բարձր սպայական կազմը և ազատված պաշտոնները բաժանել գերմանացի զինվորականների միջև¹:

Արդարև, Ռուսաստանը չարունակում էր Բոսֆորի և նեղուցների նկատմամբ իր վաղեմի քաղաքականությունը, այն է՝ ամեն կերպ արգելք լինել որևէ մեծ տերության՝ դրանց վրա վերահսկողություն հաստատելու ձգտումներին: Հիշենք թեկուզ, որ բալկանյան ճգնաժամի օրերին Պետերբուրգը Բուլղարիային բարեկամաբար, բայց սպառնալից խորհուրդ էր տալիս Չաթալշայից այն կողմ չանցնել և չմտնել օսմանյան մայրաքաղաք:

Կ. Պոլսի վրա լիակատար վերահսկողություն հաստատելու գերմանական կառավարության բացահայտ արկածախնդրական քայլը մեծ անհանգստություն, դժգոհություն ու իրարանցում առաջ բերեց Եռյակ համաձայնության երկրների ղեկավար շրջաններում: Եվ ոչ միայն: Շփոթված էին Պոլսի և այլ տեղերի հայ գործիչները: Պողոս փաշան կաթողիկոսին գրում էր. «Ցավալի է, որ Գերմանական զինուորական հրամանատարի դէպքը ճիշդ այս պահուստ տեղի ունեցաւ և, երկպառակութիւններ առաջ բերաւ Երրեակ Զինակցութեան և Երրեակ Համաձայնութեան մէջ, ինչ որ զմեզ պիտի զրկէ Գերմանիոյ գործնական աջակցութենէն: Չեմ կարծեր, որ այս զինուորական հրամանատարի խնդրոյն կարգադրութենէն առաջ Գերմանական Կառավարութեան դիրքին մէջ փոփոխութիւն մը յառաջ գայ: Կը վախցուի ուրեմն, որ մեր բարենորոգմանց խնդիրը յապաղման ենթարկուի, ի բաց առեալ եթէ Ռուսիա, որ անշուշտ փոխառինութիւններ պիտի պահանջէ հակակշռելու համար Գերմանիոյ ստացած առաւելութիւնները, մեր բարենորոգմանց խնդիրը սոյն փոխա-

¹ Տե՛ս «Արարատ», № 2, փետրվար, 1914, էջ 125:

որնութեանց պայմաններէն մին ընկի ուզէ, ինչ որ մենք պէտք ենք ցանկալ»¹:

Ա. Զիվեյեգովը “Русские Ведомости” թերթի № 276-ում գրում էր, որ ստեղծված պայմաններում «եթե գերմանացիները հրապուրվեն Սանդերսի միջադեպի իրենց համար արդյունավետ ընթացքով և տատանվեն (խոսքը բարենորոգումների ծրագրի գործադրության նկատմամբ հնարավոր հակողությունից հրաժարվելու մասին է: - Հ. Ս.), ապա, միևնույնն է, մեծ պետությունները պարտավոր են օգտագործել ձեռքի տակ եղած միջոցները, այդ թվում՝ 1913 թ. նոյեմբերի 18-ին Փարիզում տեղի ունեցած հայասիրական կոմիտեաների ներկայացուցիչների կոնֆերանսի առաջարկությունները (նկատի ունենալով կոնֆերանսի պահանջը՝ եվրոպական ոչ մի բորսայում թույլ չտալ թուրքական փոխառության կնքում, չհամաձայնել թուրքիայում մաքսային տուրքերի բարձրացմանը: - Հ. Ս.) և Բ. Դոանը պարտադրեն իրենց կամքը»²:

Սանդերսի միսիան Բոսֆորի ափեր ուղարկելու փաստը ռուսական մամուլը մեծ գայրույթով գնահատեց որպես տերությունների ուժերի հավասարակշռության խախտման արտառոտ դեպք, որը սրում է ռուս-գերմանական առանց այն էլ բարդ հարաբերությունները:

Հետևապես կոչտ եղավ Պետերբուրգի կառավարության արձագանքը: Ռուսաստանն անկարող էր սառնասրտորեն դիտել, թե ինչպես է իր առջև ցցվում բեռլինյան նոր վտանգը: Թողտվության դեպքում օսմանյան մայրաքաղաքը, ուրեմն և ամբողջ թուրքիան անխուսափելիորեն ընկնելու էին Գերմանիայի հրամանի տակ:

Ձնայած այն հանգամանքին, որ մինչ այդ Գերմանիան Ռուսաստանի հետ որոշ համաձայնության էր եկել, բայց այս դեպքից հետո իրերի դրությունը նորից ընթացքից չեղվեց:

Հետզհետե ուժեղացող տարաձայնությունների մթնոլոր-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 61-62:

² “Русские Ведомости”, № 276.

տում Պետերբուրգը սկզբում Բ. Դոանը ներկայացրեց խիստ բողոք՝ սպառնալով մարտական պատրաստության բերել Կովկասի իր զորքերը և Սևծովյան նավատորմը¹, բայց հետո փոխեց խոսքի տոնը:

1913 թ. դեկտեմբերի 23-ին Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Սազոնովը զեկուցագիր է գրում ցար Նիկոլայ II-ին, որով պնդում է, որ Կ. Պոլսի թուրքական բանակի վրա գերմանական հրամանատարության վերահսկողության ճանաչումը Ռուսաստանի կողմից հավասարազոր կլինի քաղաքական խոչոր պարտության: Միաժամանակ նա գտնում էր, որ անհնար է Սանդերսի միսիայի առնչությամբ հակամիջոցներ ձեռնարկել առանց Ֆրանսիայի և Անգլիայի հետ նախնական համաձայնություն ձեռք բերելու, այսինքն՝ միակողմանի գործողությունների ծավալումը հղի է անկանխատեսելի վտանգներով²: Միաժամանակ Սազոնով չէր բացառում, որ ռուս-գերմանական հարաբերությունների հետագա լարվածության դեպքում հնարավոր է թուրքիայի նկատմամբ պատժամիջոցների կիրառում, որը կարտահայտվի տարբեր կերպ՝ այդ թվում նույնիսկ թուրքական հողի որոշ մասի գրավումով³:

Բայց կառավարության նախագահ Կոկովցևն ավելի զգուշավոր գտնվեց: Նա բոլորովին բացառում էր ռուսական կողմի որևէ մի գործողություն, որը կտաներ Գերմանիայի հետ հարաբերությունների հետագա վատթարացում: Վարչապետը Ռուսաստանի համար մեծագույն վտանգ էր համարում այդ պահին Գերմանիայի հետ ռազմական ընդհարումը:

Ռուսաց վարչապետի և արտգործնախարարի տեսակետների միջև զգալի տարբերությունների առկայության պայմաններում 1913 թ. դեկտեմբերի 31-ին (1914 թ. հունվարի 13-ին)

¹ Տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», № 7 (559), հունիս, 1989, էջ ...:

² Տե՛ս «Վէմ», Գ տարի, № 1, հունվար-ապրիլ, 1935, էջ 9-10 (Անդրէ Մանդելշտամի հոդվածից):

³ Տե՛ս “Красный архив”, том VI, стр. 67:

Կոկովցևի նախագահությունը տեղի ունեցավ մի գաղտնի ժողով՝ քննելու համար Լեման Փոն Սանդերսի միսիայի հարցը¹: Համակողմանի քննարկումներից հետո ժողովը եկավ այն եզրակացություն, որ Ռուսաստանը դեմ չէ, որ զորավարը ստանձնի թուրքական բանակի մարզչի դերը, բայց վճռականապես հակառակ է Պոլսում նրա հրամանատարությունը, որը, անշուշտ, Գերմանիային պիտի ապահովեր տիրապետող դիրք թուրքիայում: Այս ժողովի արձանագրությունները և ուրիշ աղբյուրներ² ցույց են տալիս, որ Ռուսաստանը բոլորովին ցանկություն չուներ թուրքիայում նվաճումներ կատարելու, բայց պատրաստ էր նույնիսկ ծայրահեղ միջոցների դիմելու այդ երկրում գոյություն ունեցող ռազմաքաղաքական վիճակի պահպանումը (status quo) ապահովելու համար:

Ի վերջո ռուսաց կառավարությունը որդեգրեց հետևյալ դիրքորոշումը. չարունակել բանակցությունները գերմանական կառավարության հետ, միաժամանակ Ֆրանսիայի և Անգլիայի հետ համախորհուրդ նոր ճնշումներ կիրառել թուրքիայի նկատմամբ: Եթե դա նույնպես որևէ արդյունք չտա, միևնույնն է, ընդունելի չէ գործը հասցնել Գերմանիայի դեմ ռազմական ընդհարման³:

Որքան էլ առաջին հայացքից թվար, թե կատարվածը որևէ առնչություն չունի հայերի հետ, իրականում այն միջնորդավորված ազդում էր նրանց վրա, քանի որ նոր ճեղքվածք էր առաջ բերում ռուս-գերմանական հարաբերություններում այն պահին, երբ մինչ այդ նրանց հայացքները փոքր-ինչ մոտեցել էին չարչրկված Հայկական հարցում:

Ռուսաստանի կառավարության անհանգստությունը ըմբռնումով ընդունեցին Անգլիան ու Ֆրանսիան, թեև այդ հարցում նրանք առերես չէին գործակցում Պետերբուրգի հետ, ինչպես լծակցված էին Հայկական հարցում⁴:

Գերմանիայի հետ հետագա հարաբերությունները պարզելը

¹ “Константинополь и Проливы”, т. 1, стр. 65-71.

² “Красный Архив”, т. VII, стр. 46-49.

³ Տե՛ս «Վէմ», Գ տարի, № 1, հունվար-ապրիլ, 1935, էջ 10:

⁴ Տե՛ս «Կովկասի լրագրեր», № 268 (317), 27 նոյեմբերի 1913 թ.:

համարելով օրվա հրատապ խնդիր՝ Պետերբուրգը ստիպված էր ուշադրությունը կենտրոնացնելու նոր ծագած կնճռոտ խնդրի վրա՝ երկրորդական գիծ մղելով դիվանագիտական պայքարի հայկական ուղղությունը, իսկ թուրքական կողմը, օգտվելով դրանից, կփորձեր ձգձգել բարենորոգումների հարցի լուծումը և, ի վերջո, այն հանել օրակարգից: Մյուս կողմից՝ եթե Ռուսաստանն ի վերջո համաձայնություն տար Բոսֆորի շուրջ ստեղծված Բեռլինի դեմարչին, այդ դեպքում գուցե գերմանական կողմը, որպես փոխհատուցում, պարտավորված կլիներ Հայկական հարցում զիջումների գնալու Պետերբուրգին: Ուստի պատահական չէր, որ հայ քաղաքական շրջաններն առանձնապես տագնապած չէին Բեռլինի սանդերսյան նախաձեռնությունով, ավելին՝ դրանում որոշ դրական բան էին տեսնում Հայկական հարցի առաջխաղացման առումով: Իրականությունից ոչ հեռու այդ տեսակետի վկայություն օգտին էր խոսում այն զիջողական կեցվածքը, որ որդեգրել էր դեսպան Վանգենհայմը՝ խորհուրդ տալով Բ. Դոանը Հայաստանի բարենորոգումների հարցում մեղմացնել կոչը դիրքորոշումը և հնարավորինս արագ համաձայնության գալ Պետերբուրգի ներկայացրած պահանջների հարցում՝ համոզված, որ դա կմեղմացնի Սանդերսի միսիայի հարուցած տագնապները Պետերբուրգում:

Ռուսական արքունիքը թուրք կառավարությունից պահանջեց թուրքական մի ուրիշ բանակի գլուխ կարգել ռուս զորապետներից մեկին՝ Գերմանիայի հետ քաղաքական հավասարակշռություն պահպանելու համար, բայց մերժում ստացավ:

Դրան ավելացավ Ռուսաստանի համար անհաջող մի եղբուրություն ևս:

1913 թ. դեկտեմբերի վերջերին սուլթանի հրամանով էնվեր բեյը նշանակվեց թուրքիայի զինվորական նախարար, միաժամանակ ստացավ փաշայի տիտղոս: Դա աննպաստ հանգամանք էր Ռուսաստանի շահերի տեսակետից: Երիտթուրքերի ղեկավարության մեջ նա միակ ընդունակ քաղաքագետն էր, որ լցված էր անհուն հավատով դեպի թուրքիան, դեպի նրա բանակը: Անկասկած, նրան զինվորական նախարար նշանակելը Սանդերսի միսիայի Բոսֆորի ափեր բերող քաղաքականության շարունա-

կուլթյունն էր: Նույնպես հավանական էր թվում, որ էնվերի նշանակումը տեղի էր ունեցել Բեռլինի գաղտնի ու ջերմ հավանություններ: Լինելով գերմանացիների հին բարեկամ՝ նա նախարարի պաշտոնում իր գործունեությունն սկսեց՝ հեռացնելով բարձրաստիճան մի շարք զինվորականների՝ թուրքական բանակում գերմանացիներին ավելի մեծ տեղ տալու համար:

Չհանդուրժելով ստեղծված դրությունը՝ Ռուսաստանը հակացնել տվեց, որ հետագա բարդություններից խուսափելու համար Բեռլինը պետք է հետ կանչի իր զինվորական միսիան:

Տվյալ պահին Ռուսաստանի հետ հարաբերությունների հետագա բարդացմամբ չահագրգիռ չէր նաև Գերմանիան, որը մտածում էր իր կատարած քայլը ինչ-որ բանով փոխհատուցելու մասին: Այդ փոխհատուցումը եղավ հայկական բարենորոգումների հարցում Ռուսաստանին ընդառաջ գնալը: Հատուցման գինը բարենորոգումների՝ 1913 թ. սեպտեմբերի 10-ի ուսուցչական համաձայնությունը հետևելն էր և Թուրքիայի համառությունը միասնաբար կոտրելը: Գերմանական կառավարությունն այդ քայլին գնաց, միայն թե մարեին զինվորական միսիայի դեմ բարձրացած բողոքները, և ինքը կարողանար առաջ տանել Բոսֆորի ափերին ամրանալու խնդիրը: Դրան գումարվում էր և այն, որ, ինչպես արդեն նշել ենք, գերմանական կառավարական վերնախավում հայության հանդեպ տեղի էին ունեցել նկատելի դրական փոփոխություններ: Դա ամիսներ անց դիտարկել էր նաև «Новое Время»-ի թղթակիցը՝ գրելով. «Գերմանացիները չահագրգռված չեն փչացնելու իրենց հարաբերությունները Անատոլիայի տեղական բնակչության հետ: Ըստ երևույթին այս նկատառումով է բացատրվում այն փաստը, որ Բեռլինը, կիսով չափ դեմ լինելով ուսական ծրագրին, չէր պնդում և չէր փորձում ապացուցել, թե հայաստանն ընդհանրապես կարիք չունի բարենորոգումների»¹:

Հանուն հայկական խնդրի լուծման՝ Ռուսաստանը որոշ ժամանակ ևս հանդուրժեց Սանդերսի միսիայի ներկայությունը օս-

մանյան մայրաքաղաքում: Եռյակ համաձայնությունն էր կուսակազմների՝ Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունները գարմացած էին, թե ինչպես եղավ, որ Գերմանիան հանկարծ ուխտը հրաժարվեց հակվում է հայկական բարենորոգումների նախագծին համաձայնություն տալու կողմը:

Բայց որքան էլ Հայկական հարցը կարևոր էր Ռուսաստանի համար, այնուամենայնիվ իր նշանակությունը այն չէր կարող համեմատվել սևծովյան նեղուցների հետ, որի գրավումը տասնամյակներ շարունակ եղել էր ազգային գաղափար ուսուցների և բացարձակ գաղափար կայսերական կառավարության համար: Ուստի վերջինիս չէր կարող բավարարել հայկական բարենորոգումներին աջակցելու գերմանական կառավարության ցուցադրական ժեստը: Այդ բանը շատ լավ էին հասկանում Բեռլինում, և, ի վերջո, գերմանական կառավարությունը ստիպված էր զիջել: Լիման ֆոն Սանդերսը ազատվեց օսմանյան առաջին բանակային կորպուսի հրամանատարի կարևորագույն պաշտոնից, և նրան փոխարինեց թուրք գորահրամանատարներից մեկը: Սանդերսը նշանակվեց օսմանյան ամբողջ բանակի քննիչ (մյուֆետիչ): Նրա այդ պաշտոնը թեև ավելի բարձր էր, բայց նախորդը շատ ավելի կարևոր էր, գերադասելի և ազդեցիկ:

Ռուսաստանն առայժմ բավարարված էր:

ԱՌԱՋԸՆԹԱՅ

Դժվարին ու խիստ կարևոր երկու խնդիրների՝ Սանդերսի միսիայի և Հայաստանի բարենորոգումների շուրջ համաձայնություն ձեռք բերելու համար և՛ Բեռլինը, և՛ Պետերբուրգը ցուցաբերեցին փոխադարձ հանդուրժողականություն: Մյուս կողմից՝ հայաստաստ նոր գործընթացներ էին տեղի ունենում անգլիական, մանավանդ Ֆրանսիական դիվանագիտության մեջ:

1913 թ. դեկտեմբերի սկզբներին փոխվել էր Ֆրանսիայի կառավարության կազմը: Այդ առթիվ Կաթողիկոսին գրած նամակում Պողոս Նուբարը նշում էր, որ «մեր դատին համար ավելի նպաստավոր վիճակ է ստեղծուել»՝ նկատի առնելով, որ Կլե-

¹ «Новое Время», № 13662, 24 марта 1914 г.

մանսոն, «որուն հետ երկար ժամանակէ ի վեր բարեկամական յարաբերութիւններ ունիմ, եւ որուն հայասիրական զգացումները խիստ ծանոթ են, նոր կաբինետին վրայ իրական ազդեցութիւն մ'ունի, հետեւապես նորակազմ նախարարութեան տրամադրութիւններն անտարակոյս բարեացակամ կրնան ըլլալ մեր նկատմամբ»¹:

Կաթողիկոսին գրած մի ուրիշ նամակով Պողոս Նուբարը նշում էր, որ Ֆրանսիան ուժեղացնում է ճնշումը Բ. Դոան վրա, որպեսզի նա կառուցողական դիրք գրավի և համակերպվի այն մտքի հետ, որ բարենորոգումների ծրագիրն իր համար այլընտրանք չունի²:

Բարենորոգումների հարցով թուրքական կառավարութեան վրա ճնշում գործադրելուն էր հակվել նաև անգլիական արտգործնախարարութիւնը: Այս պայմաններում Բ. Դուռը ստիպված էր խուսանավել և կրկին փորձ անել անմիջական չփումների մեջ մտնելու հայկական կողմի հետ:

Փարիզում ռուսաց դեսպան Իզվոլսկին ղեկտեմբերի 3 (16)-ի* № 587 գաղտնի հեռագրով իր վերադասին հաղորդում էր հետևյալը. «Տեղի (Փարիզի:– Հ. Ս.) թուրքական դեսպանութեան միջոցով Պողոս Նուբար փաշան ստացել է Կոստանդնուպոլիս այցելելու մեծ վեզիրի հաստատամիտ հրավերը՝ հավանաբար հայկական գործեր քննարկելու համար:

Այս հրավերն ընդունելուց առաջ, նա կցանկանար իմանալ, արդյոք, օգտակար և ժամանակահատուկ էր գտնում այն: Նա խնդրում է նաև այդ մասին խոսքը հայոց պատրիարքի հետ և իմ միջոցով վերջինիս կարծիքը հայտնել իրեն»³:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 59-ի շրջերես:

² Նույն տեղում, թ. 67:

* Մի այլ աղբյուրում՝ ղեկտեմբերի 16 (29)-ին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թթ. 61-62):

³ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3465, л. 57 (Մեզ հայտնի չէ, թե պատրիարքն ինչպիսի կարծիք է հայտնել այդ հարցի կապակցությամբ, համենայն դեպս ձեռքի տակ չունենք ռուսական կողմի հնարավոր հարցման և ստացած պատասխանի մասին որևէ գրավոր վկայություն, բայց հավանական է, որ այն եղել է և եղել է բացասական:– հեղ.):

Օրեր անց ղեկտեմբերի 16 (29)-ին, անդրադառնալով իր հետ Կ. Պոլսում հանդիպելու մեծ վեզիրի արտահայտած հերթական* բուռն ցանկությունը, Պողոս Նուբարը կաթողիկոսին մանրամասն ներկայացնում էր իր մերժման շարժառիթները: Նա գրում էր. «Դեսպան Իզվոլսկի (Փարիզում Թուրքիայի դեսպան:– Հ. Ս.) միջոցաւ մեծ եպարքոսէն հեռագիր մը ստացայ, որուն պատճէնն ներփակ է, որով ինձ կը հրաւիրէին Պօլիս երթալ և բարենորոգմանց խնդրոյն մասին բանակցիլ: Բնաւ տարակոյս չունէի, որ մեծ եպարքոսն զիս Պօլիս հրաւիրելով, կը յուսար զիս համոզել՝ բարենորոգմանց տաճկական ծրագիրը ընդունիլ տալու առանց պետութեանց հաւանութեամբ նշանակելի եւրոպացի պաշտօնեաներու գործակցութեան: Արդէն պատրիարքարանէն այս վայրկենիս ստացած մէկ գրութիւնս իմ այս կասկածս կը հաստատէ: Ամէն. Պատրիարքն Բ. Դոնէն տեղեկացած ըլլալով մեծ. եպարքոսէն Պօլիս հրաւիրելու մտադրութիւնը, փութացած էր այս մասին Ռուսիոյ Դեսպանին կարծիքն իմանալ, որ յայտնած էր թէ՛ իմ ներկայութիւնս Պօլսոյ մէջ աւելորդ, նոյն իսկ մեր շահերուն հակառակ էր, վասնզի Բ. Դոան զիս հրաւիրելուն նպատակը պետութեանց տալիք պատասխանն յետաձգել էր, առարկելով, որ ինձ հետ բանակցութեանց մէջ է, և այս միջոցաւ հեռացնել Եւրոպիոյ միջամտութիւնը: Ժամանակ չահելով, և իբր թէ բարենորոգումներ գործադրելով պետութիւնները, կատարուած իրողութեան մը առջև դնել է Բ. Դոան փափաքը»:

Պողոս Նուբարը շեշտում էր, որ թուրքական կողմի ցանկությունն ընդառաջ գնալը կնշանակեր անդառնալի հարված հասցնել բարենորոգումների գործին: «Այս պատճառաւ որոշեցի մերժել մեծ եպարքոսին հրաւերը, պատասխանելով, որ առանց Ձերդ Վեհափառութեան հաւանութեան չեմ կրնար Պօլիս երթալ, և կարճ կապելու, և նոր հրաւերի առաջքն առնելու համար՝ ստիպուեցայ յայտնել թէ Ձերդ Վեհափառութիւնը իր պատասխանը ինձ հեռագրած էր, դիտել տալով թէ իմ պաշտօնս մինչև Պօլիս չէր երկարէր, ուր Ձեր Վեհափառութիւնը ներկայացուած

* Երկրորդ:

էր Ամէն. Պատրիարքին կողմէ: Նաև անելցուցի, ըսելով թէ՛ Ձերդ Սրբութիւնը կը կարծէր թէ, ինձ նման, անգամ մը որ Պետութիւնք մեր խնդիրը ձեռք առած են, ամենապարզ կենցաղավարութիւնն իսկ կը պահանջէր, որ չի միջամտինք մենք Դեսպաններու և Բ. Դոան մէջտեղ, քանզի սոյն միջամտութիւնը կրնար նաև ծանր անպատեհութիւններ ունենալ մեր բանակցութեանց համար:

Կը փութամ տեղեկացնել զայս Ձերդ Վեհափառութեան, որպէս զի ըստ այնմ կարենաք պատասխանել, երբ Թիւրքերու կողմէ դիմում ըլլայ Ձեր մօտ՝ զիս արտօսելու որպէս զի Կ. Պօլիս երթամ:

Վստահ եմ թէ Ձերդ Սրբութիւնը բոլորովին համամիտ պիտի ըլլայ ինձ հետ՝ թէ ուրիշ միջոց չի կար, մանաւանդ Ռուսիոյ Դեսպանին յայտարարութեանց վրայ՝ որ Պօլսոյ մէջ բանակցութիւնները կը վարէ: Արդէն մեր շահն ալ կը պահանջէ, որ սոյն ուղղութեամբ գործինք, վասնզի կասկած չիկայ, որ Պետութիւնք, որ մեր բարենորոգումներու յաջողութեամբ կը շահագրգռուին, լաւագոյն պայմաններ ձեռք պիտի բերեն, քան մենք՝ մեր ուղղակի միջամտութեամբ»¹:

Պատմական պահը անսխալ ըմբռնելու և համապատասխանաբար ճշգրիտ որոշումներ ընդունելու իր արտակարգ ունակութեամբ Պողոս Նուբարը եզրահանգել էր, որ իրողութիւնների տվյալ դասավորությունը թելադրում է՝ մի կարծ ժամանակ ինքն ընդմիջի: «Առ այժմ, ինչպէս երեկ գրած էի Ձերդ Վեհափառութեան, մեզ կը մնայ համբերել եւ սպասել պետութեանց բանակցութեանց ելքին»², - Կաթողիկոսին գրում էր նա և հույս հայտնում, թե իր այդ զգուշավորությունը ռուսական դիվանագիտությանը չի խանգարի շարունակելու եռանդուն գործունեությունը³:

Օգտվելով ստեղծված բարենպաստ պահից՝ ռուսական դիվանագիտությունը ուժեղացնում է Բ. Դոան հետ իր աշխատանքը: Համարյա ամեն օր Գիրսը հանդիպում է մեծ վեզիրին և համարյա ամեն օր Պետերբուրգ է հղում հեռագրեր ու նամակ-

ներ: Իսկ Սազոնովը, որ ուշադրությունը հետևում էր ռուս-թուրքական բանակցություններին, հեռագրերով ուղղություն էր տալիս Գիրսին, պահանջում չպատճառաբանված դիջումներ չանել մեծ վեզիրին և ամեն ինչ անել, որպեսզի Բ. Դոան ընդունի բարենորոգումների ռուս-գերմանական նախագիծը:

Ռուսական մամուլը ջերմորեն պաշտպանում էր կառավարության հետևողական գործողությունները հայկական բարենորոգումների հարցն առաջ մղելու գործում:

1913 թ. դեկտեմբերի 7-ին “Русское Слово” թերթը, անդրադառնալով այն հարցին, թե տվյալ պահին Ռուսաստանը Արևելքում ինչ դեր ունի կատարելու, հետևյալ խորհրդածությունն էր անում. «Նեղուցների հարցից՝ հետո ամենակարևոր հարցը Ռու-

* “Русское Слово”-ն նկատի ուներ այն, որ տվյալ պահին Ռուսաստանի համար ամենակարևոր հարցը Դարդանելի և նեղուցների հարցն էր, որի շուրջ տերությունների ձեռք բերած համաձայնությունները և նրանց շահերի հավասարակշռությունը խախտված էր:

Այն ամենը, ինչ Ռուսաստանն այդ ժամանակ կարող էր ձեռք բերել, նեղուցներով առևտրական նավերի համար նավարկության լիակատար ազատության հասնելն էր՝ անկախ այն բանից, թե Թուրքիան արդյոք կգտնվե՞ր որևէ պետության հետ պատերազմի մեջ, թե՞ ոչ:

Այդ խնդրի դիվանագիտական լուծման ամենալավ եղանակը կլիներ վերականգնել Սան-Ստեֆանոյի դաշնագրի գործողությունը, որով առևտրական նավերի անցուղարձը թույլատրվում էր ամեն ժամանակ: Դաշնագրի 24-րդ հոդվածն ազդարարում էր. «Ինչպես պատերազմի, նույնպես և խաղաղ ժամանակ Բոսֆորը և Դարդանելը բաց կլինեն ռուսական նավահանգիստներից եկող և դեպի դրանք ուղղվող չեզոք երկրների առևտրական նավերի համար: Այս առումով Բարձր Դուռը պարտավորվում է առաջիկայում այլևս չսահմանել Սև և Ազովի նավահանգիստների անվավեր բլոկադա, քանի որ դա չի համապատասխանում 1856 թ. ապրիլի 4 (16)-ին Փարիզում ստորագրված դեկլարացիայի ճշգրիտ իմաստին» («Հայաստանը միջազգային դիվանագիտություն...», էջ 96): Առևտրական հարաբերությունների լիակատար ազատությունը սևծովյան նավահանգիստների հետ մեծ կարևորություն ուներ ոչ միայն Ռուսաստանի, այլև մյուս մեծ պետությունների, մանավանդ Իտալիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի համար, որոնք ծովային ճանապարհով՝ Դարդանելի միջով, ստանում էին հարավ-ռուսական և ումիտական ցորեն, նավթ ու մարգանց, այլ ապրանքներ և հումքատեսակներ: Չնայած Թուրքիայի ունեցած մեծ մտավախությանը՝ Ռուսաստանը բազմիցս Բ. Դոանը հանգստացրել էր, որ նրա վեհապետական իրավունքը բնավ չի խախտվի, եթե չեզոք նավերն ազատ նավարկեն նեղուցներով:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 58-59:

² Նույն տեղում, թթ. 61-62:

³ Նույն տեղում, թ. 67:

սաստանի չահերի և արևելքում ունեցած մեր հմայքի համար հանդիսանում է Թուրքահայաստանի բարենորոգումների հարցը: Այդ հարցը հանկարծ անհետացել է քաղաքական հորիզոնից, և կարծես թե իրապես Հայաստանում վաղուց հաստատվել է բաղձալի անդորրություն: Բայց այնտեղ դա միայն թվացյալ է, և ամեն ռոպե կարելի էր սպասել քրդական գազանությունների և թուրքական անգթությունների նոր բռնկում: Գերմանիան հայտնել է, թե նա այլևս մտադիր չէ արգելքներ հարուցելու Սազոնովի համեստ ծրագրին: Էլ ինչո՞ւ պետք է հապաղել»¹:

Այնուհետև, հենվելով երկրի հասարակական կարծիքի վրա, թերթը շարունակում էր. «Ռուսաստանը չի կարող անտարբեր վերաբերվել այն անարխիային, որ բուն է դրել Կովկասի հարևանությունը և պատճառ դառնում թուրքահայերի տանջանքներին: Մեզ համար հայոց հարցը նաև պատվի հարց է, հայ ժողովրդի նկատմամբ մեր պատմական պարտքի հատուցման հարց:

Եթե Ռուսաստանին հաջողվի ապահովել եվրոպական կոնտրոլ Թուրքահայաստանում նախատեսվող բարենորոգումների վրա, այդ դեպքում ոուս անվան հմայքը Մերձավոր Արևելքում կբարձրանա վաղուց չտեսնված բարձրություն: Մեր կողմն է ոչ միայն միջազգային իրավունքը, այլև ամբողջ քաղաքակիրթ աշխարհի համակրանքը: Հայերն այժմ մնում են վերջին քրիստոնեական ժողովուրդը, որի կեսը հեծում է թուրքական անգութ լծի տակ»²:

Թուրքերի կողմից կատարվող անընդհատ քաշքշուկը ուսական կառավարությունում արդեն հասունացրել էր այն տրամադրությունը, որ եթե Բ. Դուռը բանակցություններում գնալով է՛լ ավելի խստացնի իր դիրքը, ապա չպետք է բացառել Թուրքիայի նկատմամբ հարաբերությունների կոչտացումը՝ ընդհուպ մինչև ռազմական միջամտությունը:

Դեկտեմբերի 9-ին արտգործնախարար Սերգեյ Սազոնովը № 1035 խիստ զաղտնի հեռագրով Թիֆլիս, Կովկասի փոխարքա

¹ «Русское Слово», 7 декабря 1913 г.

² Նույն տեղում:

Վորոնցով-Դաշկովին հաղորդում էր տվյալ պահին հայկական հարցով իր ընդհանուր նկատառումները, միաժամանակ շեշտում. «Հայկական վիլայեթներում վերափոխումների անհրաժեշտությունն մասին Ռուսաստանի կողմից ներկայացված պահանջների կատարումից Թուրքիայի խուսափելու դեպքում, մեզ հարկ կլինի նախօրոք նախապատրաստել ռազմական բնույթի որոշ միջոցներ, որոնք մեզ թույլ կտան, հարկ եղած դեպքում, արագ բավարար ուժեր կուտակել Կովկասյան մեր սահմանին»¹:

Կովկասի փոխարքան, որ անթաքույց տողորված էր Թուրքահայաստանը գեհենական վիճակից բոլոր միջոցներով դուրս բերելու գաղափարով, իր դեկտեմբերի 13-ի պատասխան հեռագրով լիովին հավանություն էր տալիս կառավարությունից մտադրությունը: Նա արտգործնախարարին գրում էր. «Այս պատճառով և առհասարակ կիսելով Ձերդ Բարձր Գերազանցությունից արտահայտած հայացքը վերոհիշյալ հարցով՝ պարտքս եմ համարում խոնարհաբար խնդրել Ձեզ, Ողորմած Տեր, պատիվ շնորհել ինձ ծանուցումով, թե ստույգ մեր Կովկասյան սահմանին ի՞նչ նախապատրաստական միջոցներն են, որ Դուք անհրաժեշտ կգտնեիք ձեռնարկել այն դեպքում, եթե Բ. Դուռը հրաժարվեր մեր կողմից նրան ներկայացված պահանջների կատարումից»²:

Բայց, Սանդերսի ռազմական միսիայի շուրջ ձեռք բերված ոուս-գերմանական համաձայնությունը, այնուամենայնիվ, ուսական դիվանագիտության համար որոշ պահ էր ստեղծել՝ աշխուժացնելու իր գործունեությունը Հայկական հարցի ուղղությամբ: Չնայած դրան՝ Սանդերսի միսիայի շուրջ դիվանագիտական պայքարը սրված էր պահում երկու երկրների միջև տարաձայնությունները: Չէին մարում ոուսական կողմի կասկածները Բեռլինի հետագա ավելի կոչտ քայլերի հնարավորության մասին: Այդ հանգամանքը հաշվի առնելով՝ գերմանական կառավարությունը նպատակահարմար գտավ դիվանագիտական

¹ АВПРИ, ф. «Политархив», г. 1913, д. 3465, л. 82.

² Նույն տեղում:

որոշ քայլերով մեղմել ուսական կողմի անվստահությունը: Վանգենհայմն իր վերադասից հրահանգ ստացավ Հայկական հարցում որոշ գիշումներ կատարել Գիրսին: Դրա արտահայտություններից մեկը եղավ գերման ղեկավարի այցելությունը Բ. Դուռ և ուսական կողմի հետ որոշ համաձայնությունից հալու անհրաժեշտություն մասին նրա տված խորհուրդը:

Գեկտեմբերի 10-ին Վանգենհայմը Գիրսին հայտնում է, որ ինքը միանում է Բ. Դուռն հետ նրա բանակցություններին:

Ռուսաստանի և Գերմանիայի ղեկավարները գեկտեմբերի 11-ին* միասին այցելում են մեծ վեզիրին և երկար զրույց ունենում: Հատկապես հանգամանորեն քննարկվում են ընդհանուր վերատեսուչների և սեկտորների խորհրդականների հետ կապված հարցերը: Արդյունքում արձանագրվում է լուրջ առաջընթաց. մեծ վեզիրը, վերջապես, ձեռք է քաշում նշված երկու հարցերի մասին ունեցած իր կոչտ տեսակետից: Առանձնապես կարևոր էր, որ նա ընդունել էր ուս-գերմանական համաձայնությամբ ձեռք բերած տարբերակը, ըստ որի՝ վերատեսուչները պետք է առաջադրեին տերությունները և հաստատվեին սուլթանի կողմից: Ինչ վերաբերում է խորհրդականների խնդրին, ապա դա պահանջեց համեմատաբար երկար քննություն: Դեռ մինչև Գիրսի ու Վանգենհայմի այցելությունը մեծ վեզիրին վերջինս և նրա կառավարության անդամները վերջնականապես համոզվել էին, որ բարենորոգումների անցկացումը խափանելու նպատակով իրենց առաջարկած եվրոպական խորհրդականների ինստիտուտը անհաջողություն է մատնվել՝ Բ. Դուռը բերելով անցանկալի նոր բարդություններ: Ուստի նախարարների խորհուրդը որոշել էր ընդհանրապես հրաժարվել այդ ինստիտուտից: Իսկ երբ ղեկավարները նրան հարցրին, թե արդյոք կարելի է ենթադրել, որ Բ. Դուռը համաձայն է վերադառնալու եվրոպացի գլխավոր վերատեսուչներ նշանակելու մասին նախկինում նախատեսված կարգին, Սայիդ փաշան հնարավոր համարեց դրա հավանականությունը¹: Բավարարելով Թուրքիայի ինքնասիրու-

թյունը և սահմանելով կառավարման դուալիստական սկզբունքը՝ տերությունները հիմք էին ընդունում Մակեդոնիայի փորձը, ուստի և պնդում էին խորհրդականի կողմից գլխավոր վերատեսուչների որոշումները բողոքարկելու իրավունքի վրա՝ սահմանելով դրանց քննարկման ժամկետները: Յուրաքանչյուր գլխավոր վերատեսուչի հետ նախատեսվում էր ունենալ մեկ խորհրդական: Եթե մեծ վեզիրի հետ ղեկավարների բանակցություններում ձեռք չէր բերվում համաձայնություն, ապա որպես հիմք էր ընդունվում խորհրդականի կարծիքը, և նրա որոշումը մտնում էր ուժի մեջ, իսկ գլխավոր վերատեսուչի որոշումը դրանով իսկ կասեցվում էր: Մեծ վեզիրը բողոքարկման համար պահանջում էր մեկ ամիս՝ դրանով իսկ սկզբունքորեն համաձայնվելով ինչպես եվրոպացի խորհրդականի նշանակմանը, այնպես էլ գլխավոր վերատեսուչի հետ տարաձայնություններ ունենալու դեպքում նրա վետոյի իրավունքին, միաժամանակ ինքնուրույն գործողություններ արտոնելով նրան, եթե ժամանակին չի հետևում ղեկավարների և մեծ վեզիրի համաձայնեցված հրահանգը¹:

Նշված հարցերը քննարկելուց հետո Սայիդ փաշան իրեն այցելած ղեկավարների հետ ունեցած զրույցի ժամանակ պաշտոնապես հայտարարեց, որ իր կարծիքները վճիռ է կայացրել վերադառնալ ուս-գերմանական վեց կետեր պարունակող նախագծին: Հետագա բարդություններից խուսափելու և արդեն ստացածն ամրապնդելու համար Գիրսն անմիջապես համաձայնություն տվեց Սայիդ փաշայի առաջարկին: Իր համաձայնությունը չուշացրեց նաև Վանգենհայմը: Այսպիսով, չնայած թուրքական կառավարության համառ դիմադրությանը և գերմանական դիվանագիտության երկդիմի խաղերին՝ վեց կետից կազմված ուս-գերմանական ծրագիրը, այնուամենայնիվ, մնաց բարենորոգումների շուրջ ընթացող բանակցությունների հիմքում:

Անդրադառնալով մեծ վեզիրի հետ երկու ղեկավարների հանդիպմանը՝ “Новое Время” թերթը ողջունում էր ձեռք բերած արդյունքները և հույս հայտնում, որ դրանից հետո բանակ-

* Մի այլ աղբյուրի համաձայն՝ գեկտեմբերի 12-ին (տե՛ս АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3472, л. 100 об.).

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3472, л. 100 (об.).

¹ ПЗПАК, том I, стр. 305-306.

ցություններն է՛լ ավելի արդյունավետ կլինեն¹:

“Речь” թերթը իր հերթին հաղորդում էր, որ հանդիպումից հետո ոուսաց դեսպանը հայտնել է, թե հայկական հարցը ըստ երևույթին ընդունում է նպաստավոր ընթացք, և որ խնդրի վերջնական լուծումը կախված է «Միություն և առաջադիմություն» կոմիտեի դիրքից²:

Ռուսական մի ուրիշ թերթ՝ “День”-ը, նշում էր, որ Բ. Դոանը տեղի ունեցած այդ հանդիպման ժամանակ ծայրից ծայր կարդացվել է 14 բաժնից բաղկացած բարենորոգումների նախագիծը, որի հիմքում ոուսաց և գերման դեսպանների համատեղ մշակած համաձայնությունն էր: «Հայաստանին այժմ անհրաժեշտ է հանգստություն անցյալից և ուժերի վերականգնում: Ավտոնոմիայի հարցն ապագային է վերապահված»³, - շեշտում էր պարբերականը:

Գիրսը Սազոնովին հեռագրում է, որ հանդիպման վերջում մեծ վեճերը խոստացել է քննարկված հարցերի շուրջ ձեռք բերած համաձայնությունների մասին առաջարկություն ներկայացնել նախարարների խորհուրդ⁴:

Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 12-ին, Կ. Պոլսի գերման դեսպանը այցելում է հայոց պատրիարքարան և տեսակցում Զավեն պատրիարքի հետ: Զրույցը տևում է մեկ ժամից ավելի: Դեսպան Վանգենհայմը այդ այցելությունը կատարել էր հայերին ցույց տալու համար, որ, իբր, Գերմանիան նույնքան շահագրգիռ է լուծելու հայկական հարցը, որքան Ռուսաստանը:

Բայց այս անսովոր երկար տեսակցությունը կասկածներ առաջ բերեց հայ շրջանակներում, թե Գերմանիան, ձևացնելով, որ ինքը Ռուսաստանի հետ համամիտ է հայկական հարցում, իրականում նպատակ ունի այդ հարցին տալ այնպիսի ընթացք, որ այն լուծվի ի նպաստ երիտասարդ թուրքերի: Այդ մտավա-

¹ Տե՛ս “Новое Время”, 19 декабря 1913 г.

² Տե՛ս “Речь”, 15 декабря 1913 г.

³ Տե՛ս “День”, 15 декабря 1913 г.

⁴ Տե՛ս «Բարենորոգումները Հայաստանում», էջ 307:

խությունը թելադրված էր նրանով, որ Գերմանիան չուտով, իր բուռը հավաքելով թուրքական բանակի ողջ ուժը, իշխող դիրք է գրավելու օսմանյան կայսրություն մեջ:

Արդարև՝ Գերմանիայի դեսպանը եկել էր հայոց պատրիարքի մոտ՝ կատարելու շատ նշանակալի դեր, այն է՝ միջնորդ դառնալ Բ. Դոան և հայ ազգի միջև համաձայնություն: Հայկական մամուլը հայտնում էր, որ Վանգենհայմը պատրիարքին խորհուրդ էր տվել, որ հայերը պետք է հույսերը կտրեն Եվրոպայից և հրաժարվեն վերահսկողության գաղափարից: Ահա այս էր եղել գերման դիվանագետի հայոց պատրիարքարան այցի գլխավոր նպատակներից մեկը:

Մամուլի հաղորդած այդ լուրը խոռովել էր հայոց պատրիարքությունը մոտ կանգնած հայ մտավորական գործիչների մտքերը, որոնց շրջանում արագորեն ուժեղանում էին նույնիսկ ըմբոստանալու տրամադրություններ, որոնք կարող էին փոխանցվել հայաբնակ գավառներ: Այդ մասին իրազեկված լինելով՝ Բ. Դոուրը շտապում է ստեղծել մի հանձնախումբ, որին մասնակից է անում նաև մի քանի աչքի չընկած հայերի: Հանձնախումբը մշակում է Հայաստանի բարեփոխումների մի նոր նախագիծ և այն ներկայացնում կառավարությանը: Բայց պատրիարքարանի շուրջը համախմբված հայ գործիչները կառավարական այդ նախագիծը համարում են իրենց ամենահամեստ պայմաններին չհամապատասխանող, իսկ բուն հանձնախումբը՝ թուրքական սովորական խեղկատակություն: Դա թուրքական որոշ թերթերի համար առիթ էր դարձել իրենց էջերում զետեղելու հայերի հասցեին սպառնալիքներով լի հոդվածներ¹:

Հայկական կոմիտեները Փարիզում և Լոնդոնում մտադիր էին իրենց հերթին նոր դիմումներ հղել տեղի կառավարություններին: Ընդ որում, հայկական հարցի հանդեպ ոուսական կառավարության վերաբերմունքից կախված՝ նրանք խնդրելու էին Եռադաշնության բոլոր երեք տերություններին տեր կանգնել հայերի պաշտպանությունը, հակառակ դեպքում՝ դիմելու էին

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3465, л. 10.

Ռուսաստանին՝ միայնակ տնօրինելու ամբողջ հայկական գործը:

Սազոնովին ուղղված դեկտեմբերի 11 (24)-ի իր № 1204 գաղտնի հեռագրով դեսպան Գիրսը հաղորդում էր, որ իրեն հասած տեղեկությունների համաձայն՝ Կովկասի հայերը՝ կոմս Լոբրիս Մելիքով և իշխան Արզուլիան կազմով, նույնպես ստեղծում են պատգամավորություն՝ Եվրոպա մեկնելու համար: Ըստ որում, համառ լուրեր էին տարածվել, թե Եվրոպա ուղևորվելու համար պատգամավորությունը կազմել է Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը՝ Մեսրոպ եպիսկոպոսի խորհրդով¹:

«Որպեսզի այս գործի նախաձեռնությունը մենք ձեռքից բաց չթողնենք,- խորհուրդ էր տալիս Գիրսը,- ես ցանկալի կհամարեի անհապաղ պատասխանել հայերի կողմից մեզ տրված դիմումին: Ես մտերմաբար արդեն հայտնել եմ նրանց՝ Պորտալին տրված մեր այն խորհուրդների մասին, թե անհրաժեշտ է իրականացնել բարեփոխումներ, և թե չի կարելի թույլ տալ Ռուսների հայերի արտագաղթը: Սակայն, կարծում եմ՝ դա նրանց այնքան էլ չի բավարարի և չի կանգնեցնի եվրոպական տերություններին դիմելու հարցում: Միանգամայն հասկանալով, որ իրական օգնությունը կարող են ստանալ միայն մեր կողմից, նրանք զգուշանում են գնալ մեր մտադրություններին հակառակ հայկական հարցի զարգացման մեջ: Նրանք ակնկալում են մեր դեկավարությունը իրենց հետագա գործողություններում, երբեք չեն հրաժարվելու: Կարծում եմ՝ ժամանակն է պարզաբանել այս հարցը Եռադաշնության տերությունների հետ, առավել ևս, որ անգլիացիք սկսում են ուշադրությամբ հետևել դրան: Բացի այդ, միգուցե, հարկ կլինեի հայտարարել հայերին, որ, բնավ չխրախուսելով նրանց կողմից որևէ հեղափոխական նախաձեռնություն, մենք այդուհանդերձ չենք թողնի նրանց անպաշտպան՝ կոտորածի դեպքում: Ոնդրում եմ Ձեր ցուցումները»²:

Մեծ վեզիրը դեկտեմբերի 14-ին Բ. Դուռ է հրավիրում Ռուսաստանի և Գերմանիայի դեսպաններին և հանդիսավորապես հայտնում, թե կառավարությունը հակված է որոշում ընդունելու

մեծ պետությունների աջակցությամբ հայաստանում բարենորոգումներ մտցնելու մասին:

Դեկտեմբերի 15-ին քննելով հայկական հարցը՝ Թուրքիայի նախարարների խորհուրդը սկզբունքորեն ընդունում է բարենորոգումների ուսուցանական ծրագիրը, այդ թվում՝ եվրոպական վերահսկողության հարցը, և վարչապետին առաջարկում է շարունակել բանակցությունները ռուսական դեսպան Գիրսի հետ՝ հատկապես լուծում գտնելու գլխավոր վերատեսուչների հարցում: Հետևյալ օրը՝ դեկտեմբերի 16-ի առավոտյան, մեծ վեզիրը ռուսաց դեսպանին առաջարկում է վերատեսուչներ նշանակելու հետևյալ կերպը. տերությունների ներկայացուցիչների հետ այդ անձանց իշխանության ծավալի վերաբերյալ պայմանավորվածություն ձեռք բերելուց հետո Բ. Դուռն ի պաշտոն բանավոր դիմելու է մեծ տերություններին՝ խնդրելով մատնանշել հարմար թեկնածուների, միաժամանակ նրանց իրազեկելով վերատեսուչների իրավասությունների մասին³:

Բանակցությունները շարունակելու մասին Թուրքաց նախարարների խորհրդի և մեծ վեզիրի առաջարկությունների մասին դեկտեմբերի 16 (29)-ի երեկոյան Գիրսը հաղորդում է Սազոնովին⁴: Հետևում է Սազոնովի դեկտեմբերի 18-ի գաղտնի հեռագիրը Փարիզում ռուսաց դեսպան Իզվոլսկուն. «Վերջին տեղեկությունները Կ. Պոլսից հույս են ներշնչում, որ մենք Դոնից բարենպաստ պատասխան կստանանք հայկական բարենորոգումների առթիվ: Ի խուսափումն տարածայնությունների, որոնք կպատահեին ծրագրված խորհրդականների և ընդհանուր վերատեսուչի հարցում, կարելի է սպասել, որ Դուռը յուրաքանչյուր սեկտորի համար մեծ պետությունների առաջարկությամբ նշանակի եվրոպական ընդհանուր վերատեսուչներ, փոխանակ հիշյալ խորհրդականների:

Այս պատճառով ցանկալի է աչքի առաջ ունենալ հենց այժմվանից թեկնածուներ երկրորդական պետությունների հպատակներից: Ոնդրում եմ Ձեզանից, որ միանգամայն մտեր-

¹ Տե՛ս АВПРИ, փ. "Политархив", г. 1913, д. 3465, л. 10.

² Նույն տեղում, л. 11:

¹ АВПРИ, փ. "Политархив", г. 1913, д. 3472, л. 100 (об.).

² Տե՛ս «Բարենորոգումները Հայաստանում», էջ 82:

մաբար հաղորդեք Պողոս Նուբար փաշային այդ մասին և տեղեկանաք աչքի առաջ ունի՞ր նա արդյոք համապատասխան թեկնածուներ»¹:

Հենց ղեկտեմբերի 16-ի թուրքական առաջարկությունն չուրջ էլ ղեկտեմբերի ամբողջ երկրորդ կեսին ընթանում էին համառ բանակցություններ Մ. Գիրսի և մեծ վեզիրի միջև:

Բանակցությունների ընթացքում Մ. Գիրսը ձգտում էր նոր նախագծի մեջ մտցնել բարեփոխումների գլխավոր սկզբունքները, իսկ թուրքաց նախարարների խորհուրդը ջանում էր ամբողջ գործը սահմանափակել վերատեսուչներ նշանակելու և նրանց լիազորությունները ճշտելու հարցերով:

Դեկտեմբերի 23-ին մեծ վեզիրը ոուսաց դեսպանին փոխանցեց գլխավոր վերատեսուչների լիազորությունների նախագծի տեքստը, իսկ Մ. Գիրսն իր կողմից նրան հանձնեց այն հայտագիրը, որը պետք է ուղարկվեր տերություններին²:

Դեսպանի և մեծ վեզիրի միջև տեղի ունեցած դժվարին բանակցությունների ընթացքում նշված երկու տեքստերը միավորվեցին, իսկ միասնական տեքստի վերջնական խմբագրությունն ընթանում էր գրեթե ամեն օր:

Կ. Պոլսից ստացված հուսադրող նոր տեղեկությունների հիման վրա «Մշակը» գրում էր. «Շնորհիվ այդ բարեհաջող հանգամանքների՝ Հայկական հարցը ներկայումս իր լուծմամբ վերջնական էտապի մեջ է գտնվում, և անտարակուսելի է, որ 1914 թ. Թուրքիայի բազմաչարչար ժողովուրդը կտեսնի իր ազատությունը»³:

¹ Տե՛ս «Բարենորոգումները Հայաստանում», էջ 83: Իզվոլսկուն ուղղված Ս. Սազոնովի սույն հեռագրի երկրորդ հատվածը Ռուսաստանի արտգործնախարարության արխիվում (Մոսկվա) պահպանվող փաստաթղթում այսպես է ձևակերպված. «Ոնցդ եմ Ձեզ Պողոս Նուբարին գաղտնի հայտնել, որ Կ. Պոլսից ստացված վերջին տեղեկությունները հուսադրում են, թե Բ. Դուռը կարծես համաձայնության գալու տրամադրություն է գրեկտեմբերի վերատեսուչների հարցում: ... Ցանկալի է տեղեկանալ, թե արդյոք Պողոս փաշան նկատի չունի՞ր հարմար թեկնածուների» (АВПРИ, ф. «Политархус», з. 1913, д. 3465, л. 99):

² АВПРИ, ф. «Политархус», з. 1913, д. 3472, л. 101.

³ «Մշակ», № 1, 1 հունվարի 1913 թ.:

Բայց ղեռ չուտ էր նման եզրահանգումը, քանզի բարենորոգումների ճգնաժամային փուլը ղեռ հաղթահարված չէր: Հետագա օրերին ձեռք բերած համաձայնությունը սկսեց ճեղքեր տալ Բեուլինից Կ. Պոլիս հասած հրահանգներով, որի հետևանքով վանգենհայնը գնալով ավելի ու ավելի բացահայտ էր ցուցաբերում ոուս-գերմանական համաձայնագրից հետ կանգնելու տրամադրություններ: Այդ նպատակով գերմանացի դեսպանը սկսել էր ավելի հաճախ հանդիպումներ ունենալ թուրքական կառավարության ղեկավարի հետ:

Բայց Նուբարը համոզված էր, որ դա չի հաջողվի ինչպես Բ. Դուռը, այնպես էլ Բեուլինին: Կաթողիկոսին հղած հեռագրում նա գրում էր. «Ամէն պարագայի մէջ Թուրքիոյ՝ մեր բարենորոգումները մերժելու յամառութիւնն, որոնք միայն պիտի կրնան զինքը նոր դժբաղդութիւններէ ազատիլ, ցոյց կուտայ որ բնաւ չի օգտուած անցելոցն դասերէն: Չի տեսնիր, որ Հայաստանը իրեն համար նոր Մակեդոնիայ մը կրնայ դառնալ, աւելի ահռելի հետեւանքներով, որոնք կրնան նոյն իսկ Օսմանեան Կայսրութեան գոյութիւնը վտանգել»¹:

ԹՅՈՒՐԻՄԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱՐԱՏՈՒՄ

Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Գիրսը 1913 թ. դեկտեմբերի 18-ից պետք է արձակուրդ զնար, բայց օրեցօր հետաձգում էր մեկնումը՝ մինչև թուրք կառավարությունից բարենորոգումների նախագծի մյուս կետերի վերաբերյալ պատասխան ստանալը: Բայց թուրք վարիչներն ամեն օր խաբում էին նրան և հետաձգում իրենց պատասխանը՝ պահանջելով զանազան զիջումներ: Ստանալով Եոյակ զինակցության աջակցությունը՝ նրանք համառորեն ձգտում էին նորանոր փոփոխություններ կատարել սեպտեմբերի 10-ի համաձայնագրում:

Դրան գումարվում է այն, որ մեծ վեզիրի հետ ղեկտեմբերի

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 62:

12-ի Հանդիպումից ընդամենը երկու օր անց Վանգենհայմը Գիրսին բողոքում է, թե ինքը Հայկական Հարցում չափից ավելի տեղի է տվել, և որ իր կողմից հետագա զիջումները բացառվում են:

Այս էլ որերորդ անգամ, երբ բարենորոգումների ծրագրի ամբողջացումը մոտենում էր իր ավարտին, հանկարծ ներկայանում էր մի նոր դժվարություն, և լուծումը հետաձգվում էր:

Քանի որ Գերմանիային Հաջողվեց այնչափ կրճատել բարենորոգումների ծրագիրը, որ նրանում ինքնավարության նշույլ անգամ չմնա, կարելի էր հուսալ, որ փոխըմբռնողության ստեղծված մթնոլորտը կնպաստի բարենորոգումների կիրառմանը, որ Կ. Պոլսում գերման դեսպան Հանս Վանգենհայմը Բ. Դուանը կստիպի անհապաղ ընդունել ռուս-գերմանական ծրագիրը և անմիջապես սկսել այն իրականացնել: Բայց դա միայն արտաքննապես էր այդպես թվում:

Գերմանական դեսպանը, որը երիտթուրք կառավարության երկրպագուն և Հավատարիմ բարեկամն էր, թեև ցույց էր տալիս, թե համակրում է մյուս դեսպանների գործողությունները, բայց կուլիսների հետևում իրականացնում էր ուրիշ քաղաքականություն: Նրա այդ երկդիմի գործելակերպը հավանություն էր գտնում Բեռլինում, հատկապես արտաքին գործերի ստատս-սեկրետարի օգնական Ֆոն Յիմերմանի կողմից, որին գերմանացիները համարում էին անսխալական Մերձավոր Արևելքի Հարցերում:

Ստանալով գերմանացիների բացահայտ աջակցությունը՝ Բ. Դուանը պահանջեց ամենից առաջ ծրագրից հանել այն կետը, որով եվրոպացի խորհրդականները ստանում էին վճռորոշ ձայնի իրավունք, և հնարավորություն տալ, որ ինքը նշանակի նրանց՝ Հակառակ դեպքում սպառնալով առաջ քաշել խորհրդականների պաշտոնը ծրագրից բոլորովին հանելու հարցը: Խորհրդականների խնդրի հետ Բ. Դուանը նոր վիճաբանությունների դուռ էր բացում նաև գլխավոր վերատեսուչների իրավունքների ու պարտականությունների հարցի շուրջ:

Նախարարների խորհուրդը մեծ վեգիրին լիազորել էր ռուսական կողմին ներկայացնել հետևյալ պայմանները. սա պաշ-

տոնապես բանավոր դիմելու է պետությունների ներկայացուցիչներին՝ նրանց խնդրելով թեկնածուներ առաջադրել երկու սեկտորների գլխավոր վերատեսուչների պաշտոնների համար: Ըստ որում, ռուսական կողմի հետ համաձայնություն չալուց հետո մեծ վեգիրը պաշտոնապես նրան էր ներկայացնելու այդ անձանց իշխանություն ծավալի վերաբերյալ նոր առաջարկություն՝ հավելելով, որ նրանց հետ կնքվելու է 10 տարվա պայմանագիր, և եթե այդ ժամանակաշրջանում հարց ծագի նրանցից որևէ մեկին կամ երկուսին փոխարինելու անհրաժեշտության մասին, այդ դեպքում Բ. Դուանը կդիմի մեծ տերությունների աջակցությանը:

Ռուսական կողմը գտնում էր, որ ձիշտ կլինի գլխավոր վերատեսուչների պաշտոնավարման ժամկետը սահմանել ոչ թե 10, այլ մինչև 5 տարի՝ հնարավորության դեպքում այն ինքնաբերաբար վերականգնելու պայմանով: Այդ առաջարկությունը պայմանավորված էր նրանով, որ անհաջող ընտրության դեպքում նոր վերատեսուչ ընտրելու համար ամբողջ 10 տարի չսպասել:

Դեկտեմբեր 16 (29)-ի № 1699 հեռագրով դեսպան Գիրսը Սազոնովին հաղորդում էր. «Այս վերջին պայմանի վերաբերյալ դեռևս գոյություն ունի տարաձայնություն նախարարների Խորհրդի որոշման և իմ միջև: Գերմանական դեսպանի և իմ կողմից մեծ վեգիրին վերջին անգամ այցելելու ժամանակ որոշվել էր, որ պայմանը արտահայտվելու է հետևյալ նախադասությամբ, “la Sublime Porte compte sur le meme concours bienveillant des Puissances”*: Նախարարների Խորհուրդը ցանկանում է հեռացնել même բառը, մինչդեռ բացառապես հենց այս բառն է, որը երաշխավորում է, որ նոր ընտրությունների դեպքում, դրանք կկատարվեն նույն կարգով, ինչ՝ հիմա: Այդ պատճառով ես համառոտն անդում էի, որ պահանջվի այս բառը, և Մեծ Վեգիրը

¹ АВПРИ, ф. “Политархив”, з. 1913, д. 3465, л. 90.

* «Բարձր Դուան ակնկալում է տերությունների նույն բարեացակամ աջակցությունը»:

խոստացավ ինձ, թե կփորձի համոզել Նախարարների Խորհրդին թողնելու այս բառը: Չորեքշաբթի օրը երեկոյան Մեծ Վեզիրը՝ նախնական ծանոթացման համար, կտա ինձ տեսուչների լիազորությունների տեքստը: Այս տեքստի վերաբերյալ մեր համաձայնության և Պորտայի հետագա նոտայի մեջ *méme* բառը պահպանելու դեպքում, որի տեքստը նույնպես սահմանվելու է նախապես՝ թեկնածուներին ներկայացնելուց առաջ, ես այս ամբողջ նախագիծը կհամարեի միանգամայն ընդունելի և հայերին լիովին բավարարող: Բայց արդեն հիմա կարելի է ասել, որ բարեփոխումների հարցը խիստ առաջացած է»¹:

Վերոհիշյալ ձգձգումները, լինելով երիտթուրքերի մարտավարության կարևորագույն բաղադրիչը, միաժամանակ ձեռնտու էին Գերմանիային: Թե ինչու դրանք ձեռնտու և անգամ անհրաժեշտ էին երիտթուրքերի համար, միանգամայն հասկանալի էր, իսկ թե ինչու նաև ձեռնտու էին Գերմանիային, դրա պատճառը դարձյալ պետք է տեսնել Թուրքիայի մերձավորարևելյան տարածքներում նրա վարած քաղաքականության ընդհանուր համատեքստում:

Պաշտոնական ու սովորական հանդիպումների ժամանակ դեսպան Վանզենհայմը Գիրսին հիշեցնում էր, որ Հայաստանում բարենորոգումներ մտցնելն ամենից առաջ ձեռնտու է Ռուսաստանին, և որ միանալով նրա կողմից մշակած ծրագրին՝ Գերմանիան դրա դիմաց իրավունք ունի պահանջելու համապատասխան փոխհատուցում Պետերբուրգից:

Ի՞նչ նոր զիջումների մասին էր ակնարկում գերման դեսպանը: Ակնհայտ էր, որ թեև Թուրքիան իր ասիական նահանգներում Գերմանիայի համար ստեղծել էր նպաստավոր բոլոր պայմանները, բայց վերջինս խիստ ղեկավար էր ձեռք բերածով: Գերմանացիները ձգտում էին ստանալ ոչ միայն այն ամենը, ինչ հնարավոր էր, այլև ինչ ուզում էին:

Արդեն ամբողջ Կիլիկիան (Փոքր Հայաստանը) գտնվում էր գերմանական շահերի ոլորտում, այսինքն՝ այն արդեն կորած էր հայկական ազգային ամբողջականության գաղափարի համար:

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3465, л. 90-91.

Բայց այդքանը քիչ էր թվում գերմանացիներին, որոնք շարունակում էին ազահ հայացք նետել դեպի Մեծ Հայաստան: Գերմանական կառավարությունը 1913 թ. ամռանն ու աշնանը նոր կոնցեսիաներ էր ստացել թուրք կառավարությունից, մասնավորապես ծրագրվել էր երկաթուղիներով իրար միացնել Անգուրան, Կեսարիան, Սվազը, Խարբերդը, Դիարբեքիրը և Մոսուլը: Եթե այդ ծրագիրն իրականանար, ապա Հայաստանի ամբողջ արևմտյան մասը անխուսափելիորեն կմիանար գերմանական ազդեցության շրջանին:

Փակագծում նշենք, որ այդ նույն ժամանակ թեև ուսական նախարարություններից մեկի դարակում ընկած էր Կարս-էրզրում երկաթուղու կառուցման իրավունքը, բայց Ռուսաստանը չէր շտապում օգտվել դրանից:

Ինչպես տեսնում ենք, գերմանացիները չէին ուզում ժամանակ կորցնել: Եվ եթե հայերն իրենց դարավոր տանջանքներով ընկած էին նրանց նորանոր ախորժակները հագեցնելու ճանապարհին, ապա ավելի վատ էր հենց հայերի համար:

Հայաստանում սեփական ծրագրի իրականացման խոչընդոտներից մեկը գերմանացիները համարում էին եվրոպացի խորհրդականներին, որոնք կարող էին դժվարություններ ստեղծել իրենց համար: Ահա թե ինչու գերմանական դիվանագիտությունը այժմ ձգձգում էր Հայկական հարցի ծրագրի կենսագործումը՝ հույս ունենալով, որ, ի վերջո, կհաջողվի այնտեղից վանել խորհրդականների ինստիտուտի մասին պահանջը:

Գերմանացիների՝ այդ նպատակով թափած ջանքերը Ռուսաստանի համար սկզբունքորեն անընդունելի համարելով՝ Ալեքսեյ Զիվելեզովը գրում էր. «Ռուսական դիվանագիտությունը մի նոր, ճակատագրական սխալ գործած կլիներ, եթե չառներ այդ խաղի առաջը՝ բռնելով ավելի կտրուկ, եռանդուն դիրք: Հայոց հարցն այն ժամանակ միայն լուծում կստանա, եթե այն հայերի համար փրկություն լինելով, միաժամանակ տնտեսական ու քաղաքական շահերի տեսակետից ձեռնտու կլինի Ռուսաստանին»¹:

¹ «Մշակ», № 2, 4 հունվարի 1914 թ.:

Զիվելեգովի և մյուս հայ գործիչների գրավոր ու բանավոր ելույթներն ակտիվ արձագանք էին գտնում ուսական մամուլի էջերում: 1913 թ. դեկտեմբերի կեսերից ուսական թերթերի էջերը լցված էին Հայկական հարցին առնչվող հոդվածներով ու նյութերով: Դրանցից շատերը նվիրված էին Հայկական հարցում գերմանական քաղաքականության ելևէջներին, դրանում որոշակիության բացակայությանը:

Ռուսական հասարակական կարծիքի հզոր ճնշման տակ կառավարությունը վերջին հնարավոր սահման համարեց իր կողմից Թուրքերին արդեն արված զիջումները:

Դրությունը լրջանալու կապակցությամբ Գիրսն իր կառավարության կարգադրությամբ հետաձգում է արձակուրդ մեկնելը և մեծ վեճերի հետ վերականգնում բարենորոգումների վերաբերյալ խոսակցությունը¹:

Արդեն դեկտեմբերի 19-ին Պետերբուրգում Գերմանիայի դեսպան Պուրտալեսը, հանդիպելով Սազոնովին, բողոքում էր, որ Հայկական բարենորոգումների առթիվ Բ. Դոան հետ Գիրսի՝ օրերս վարած բանակցությունների ժամանակ վերջինս, իբր, առաջարկել է նոր պահանջներ, որոնք չեն մտնում սեպտեմբերի 10-ի ուս-գերմանական համաձայնագրի մեջ: Գիրսին հաղորդելով Պուրտալեսի բողոքը՝ նրանից Սազոնովն ստանում է պատասխան այն մասին, որ գերմանացու պնդումը չի համապատասխանում իրականությանը: Հաջորդում է գերմանացի դեսպանին ուղղված արտգործնախարարի դեկտեմբերի 20-ի հուշագիրը, ուր ասված էր, որ ինքը հայկական բարենորոգումների հարցը ենթարկել է «ամենամանրամասն քննության», և որ թյուրիմացություն պետք է համարել ուսական կողմին ավելորդ միջամտություններում մեղադրելը: «Հաղորդելով այդ մասին Ձերդ գերազանցությանը ի տեղեկություն, հույս ունեմ՝ Դուք կբարեհաճեք հավատալ, որ Դոան հետ վարած երկար բանակցությունների ժամանակ մենք ապացուցեցինք համաձայնության գալու մեր անկեղծ ցանկությունը: Այդ համաձայնու-

¹ «Մշակ», № 22, հունվար 1914 թ.:

թյունը պաշտպան էր հանդիսանում Թուրքիայի օրինական ինքնասիրությունը և նրա իսկական շահերին»¹: Այնուհետև, գերմանական կողմի սիրտը շահելու նպատակով, Սազոնովը շարունակում էր. «Միաժամանակ ես բավականությամբ շեշտում եմ այն, որ հիշյալ բանակցությունների ժամանակ Գերմանիան ցույց տվեց մեզ իր աջակցությունը, գտնելով մեր պահանջներն արդարացի»²:

Գերմանական կողմն անընդհատ խուսանավում էր, բայց Ռուսաստանն անզիջում էր: Նա շարունակում էր պնդել, որ եթե հայկական բարենորոգումները չուտով չիրականանան, ապա հայկական նահանգներում անկարգություններն ու խլրտումները հետզհետե խոշոր ծավալ կստանան, և այդ դեպքում զինվորական իրենց միջամտությունն անխուսափելի կդառնա:

Գիրսը Սազոնովին հղած իր հեռագրերից մեկում նշում էր, որ դեռ քիչ է գերմանական հովանավորությունը Թուրքիային, մյուս մեծ տերություններն էլ հավանություն են տալիս Գերմանիայի դիրքորոշմանը: «Հետևաբար մենք կգործենք մենակ, մեզ վրա կրելով գործի ամբողջ ծանրությունը, նրա հետևանքը, այսինքն՝ ստիպված կլինենք Դոան համառության դեպքում, որը համարյա թե անխուսափելի է, դիմել ճնշման»³:

1913 թ. դեկտեմբերի երրորդ տասնօրյակում շարունակվեցին Գիրսի լարված բանակցությունները Բ. Դոան հետ, որոնք, սակայն, որևէ դրական արդյունք չունեցան:

Ավելին, օգտվելով գերմանական կողմի բռնած դիրքից՝ Բ. Դուռը ուս դեսպանի հետ նոր վիճաբանություն բացեց երեք կետերի շուրջ. 1) Ընդունելով այն սկզբունքը, որ ընտրական ժողովներում մահմեդականներն ու քրիստոնյաները պետք է ունենան հավասար ներկայացուցչություն, Բ. Դուռը միաժամանակ գտնում էր, որ միայն թե դա պետք է լինի ընդհանուր տեսուչների կողմից կատարվելիք մարդահամարից հետո, 2) Խոս-

¹ «Բարենորոգումներ Հայաստանում», էջ 87:

² Նույն տեղում, էջ 88:

³ Նույն տեղում, էջ 86:

տանալով արձակել համիդյան զնդերը՝ թուրք կառավարութունը, սակայն, հակառակվում էր գորակոչիկների գինձառայութունը տեղում անցկացնելու սկզբունքին, 3) Կառավարութունը հայտարարեց, որ թույլ չի տա, որ հայկական համայնքները հայերից հարկեր գանձեն ազգային դպրոցների պահպանման համար, մի պահանջ, որի մասին անդադրում բարձրաձայնում էր Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը:

Գրավոր ձևակերպված այս կետերից զատ՝ մեծ վեզիրը Գիրսի հետ հանդիպումներից մեկի ժամանակ առաջ էր քաշել եվրոպական վերահսկողության խնդրին կրկին վերադառնալու անհրաժեշտության հարցը:

Կառավարութունը դրանով չէր բավարարվում: Դիվանագիտական սեղանի շուրջ հանդես գալով բարենորոգումների նախագծի սկզբունքային կետերի նորանոր մերժումներով՝ Բ. Դուռը միաժամանակ տերութունների ներկայացուցիչներին հայտարարում էր, թե իրենց համար համառորեն բարենորոգումներ են ուզում նաև քրդերը, ուստի կառավարութունը չվարել է, թե ինչպես նրանց բավարարութուն տա:

Ամեն ինչից երևում էր, որ Բ. Դուռը վերջին փորձն է անում հայերի արյունը կրկին ոթելու սպառնալիքով մի կողմ նետել հատկապես եվրոպական վերահսկողության խնդիրը: Այդ նպատակով Կ. Պոլսից հրահանգներ էին գնում հայկական նահանգների վալիներին և իթթիհադի տեղական շեֆերին՝ «չարժեղ քրդերին»:

Դեկտեմբերի 24-ին Մ. Գիրսը № 1132 հեռագրով արտգործնախարար Ս. Սազոնովին իրազեկում է, որ անցած շաբաթվա ամբողջ ընթացքում ինքը ստիպված է եղել համառ բանակցութուններ վարել մեծ վեզիրի և հիմնականում նրա միջոցով՝ նախարարների խորհրդի հետ: Ընդ որում, ուսական ղեսպանը ձգտել էր վերջնականապես ճշտել վերատեսուչների լիազորութունները:

Նախորդ օրը տեղի ունեցած գաղտնի և թեժ խորհրդակցության ընթացքում մեծ վեզիրը Գիրսին էր փոխանցել այդ լիազորութունների մասին թուրքական տեքստը՝ որպես Բ. Դուռն վերջնական խոսք, իսկ ղեսպանը մեծ վեզիրին էր փոխանցել

ուսական կողմի նախագիծը, որը նա պետք է ուղարկեր տերութունների Կ. Պոլսի ղեսպաններին: Ռուսական կողմը ստիպված իր կողմնաձեռնադրում էր ներառել թուրքական տեքստի մի քանի կարևոր դրույթներ: № 1132 հեռագիրը տալու օրը Գիրսը մեծ վեզիրի հետ կրկին քննարկել էր իր նախագիծը, որի ընթացքում Սայիդ Հիլմի փաշան կատարել էր լուրջ փոփոխութուններ: Թուրքերի կողմից փոփոխության ենթարկված այդ նախագիծը ներկայացվելու էր ինչպես Բ. Դուռն, այնպես էլ ուսական կայսերական կառավարության քննարկմանը: «Ես հայտնեցի մեծ վեզիրին, - իր հեռագրով Սազոնովին հայտնում էր ղեսպանը, - որ բնավ չեմ երաշխավորում, որ այն կընդունվի մեր կառավարության կողմից» Այնուհետև ավելացրել էր. «Անձամբ ես կարծում եմ, որ տվյալ պահին մենք, այնուհանդերձ, պետք է բավարարվենք բարեփոխումների սկզբունքով: ... Մյուս տերութունները չեն հետևի մեզ, եթե մենք ներկայացնենք ավելի լայն պահանջներ: Վաղը երեկոյան մեծ վեզիրը կհաղորդի ինձ նախարարների խորհրդի կարծիքը: Խնդրում եմ անմիջապես հաղորդել ինձ Ձեր ցուցումները»¹:

Անհանգստացած ստեղծված վտանգավոր վիճակով՝ դեկտեմբերի 27-ին Թիֆլիսում տեղի է ունենում Ազգային բյուրոյի պատգամավորների և էջմիածնից կաթողիկոսի կողմից ուղարկված անձանց միացյալ ժողով:

Լավ տեղեկացված չլինելով 1913 թ. վերջավորությանը ուսական դիվանագիտության թափած ջանքերի մասին՝ էջմիածնի Մայր Աթոռում և Թիֆլիսի Ազգային բյուրոյում թյուր տպավորութուն էր ստեղծվել, թե հայկական հարցում պակասել է Պետերբուրգի եռանդը, թե թուրքերի չղաղարող ձգտումներին նա չի տալիս համարժեք պատասխան, որի հետևանքով ամեն անգամ Բ. Դուռը դիմում է նենգադուլի:

Միացյալ ժողովն իր ընդունած որոշման մեջ արձանագրել էր, թե փոխարքա Վորոնցով-Դաչկովի միջնորդությամբ բավական ժամանակ առաջ Կաթողիկոսը կայսր Նիկոլայ Ռոմանովին

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1913, д. 3465, л. 110 (об.).

ուղարկել է հուշագիր, որի պատասխանը դեռ չի ստացել: Ուստի ժողովը որոշել էր փոխարքային խնդրել թույլ տալ էջմիածնի կողմից մի պատգամավորություն ուղարկելու Պետերբուրգ՝ տեղում պարզելու եղելությունը, ինչպես նաև կառավարությունը դրդել ավելի որոշակի արտահայտվելու Հայկական Հարցի վիճակի և ուսական քաղաքականության մասին: Որոշվում է նաև հրահանգել Պողոս Նուբարին, որ նա շարունակի իր մասնավոր դիմումները պետությունների դիվանագիտական ներկայացուցիչներին, իսկ պաշտոնական դիմումների համար սպասի Գևորգ V կաթողիկոսի նոր կարգադրություններին¹:

Արձագանքելով Թիֆլիսի միացյալ ընդհանուր ժողովի տրամադրություններին՝ պատրիարքը դիմել էր Գիրսին՝ հետևյալ խնդրանքով.

1) Դեսպաններին անմիջական մասնակից դարձնել Թուրքական կառավարության հետ Գլխավոր տեսուչների լիազորությունների սահմանների մշակմանը), 2) Տեսուչի պաշտոնի թափուր լինելու դեպքում պատրաստ լինել դիմագրավելու Թուրքական կողմի՝ ձգնաժամը ձգձգելու և ի վնաս բարեփոխումների ժամանակն օգտագործելու նկրտումները, 3) Ամեն գնով ամրագրել տվյալ սեկտորում քրիստոնյաների և մահմեդականների հավասար մասնակցություն սկզբունքը, 4) Խոնարհաբար խնդրել դեսպանին՝ արձակուրդ չգնալ մինչև բարեփոխումների մասին պայմանագիրը վերջնական տեսքի բերելը և կնքելը, 5) Նկատի առնելով Թուրքիայում ընդհանուր քաղաքական իրադրություն անկայունությունը՝ արագացնել պայմանագրի կնքումը՝ գրավոր ձևակերպելով նրա, առանց բացառություն, բոլոր պայմանները²:

Բայց, ինչպես երևում է արխիվային մի փաստաթղթից, Թիֆլիսի միացյալ ժողովից անմիջապես հետո Բյուրոյի անդամների մի մասի մեջ կասկած էր առաջացել մայրաքաղաք պատգամավորություն ուղարկելու նպատակահարմարության հարցի

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, թ. 31:

² АВІРІ, ֆ. “Политархив”, г. 1913, д. 3465, л. 3.

նկատմամբ հարմար համարելով էջմիածնից նախարարներին նամակներ գրելը¹:

Հայկական Հարցում ուսական դիվանագիտության ոչ եռանուն գործելակերպի մասին թյուրըմբռնումները թվացյալ էին, ուստի կասկածները չուտով փարատվեցին մի շարք ապացույցներով, որոնք վկայում էին, որ ուսական դիվանագիտությունը հավատարիմ է մնացել իր որդեգրած սկզբունքներին:

1) Ընդհանուր ժողովի սխալ եզրակացությունից երեք օր առաջ՝ դեկտեմբերի 23-ին, Բյուրոյում ուսաց դեսպանորդ Կուղաշովը Սազոնովին հաղորդել էր, որ ժամեր առաջ իրեն է այցելել Փարիզից ժամանած Պողոս փաշա Նուբարը և զրույցի ընթացքում նաև ասել, որ Կոստանդնուպոլսի հայ պատրիարքից հեռագրային հաստատում է ստացել, թե տերությունների կողմից առաջարկելիք եվրոպացի երկու գլխավոր վերատեսուչների նշանակման վերաբերյալ Բ. Դուռը համաձայնություն է տվել: Դեսպանորդը հավելում էր, թե Պողոս Նուբարը մասնավոր կերպով իմացել է, որ Թուրքական կառավարությունն իբր մտադիր է բարեփոխումների մասին դեկրետ հրապարակել միայն գլխավոր վերատեսուչներին նշանակելու մասին հրամանագիրը ստորագրելուն զուգահեռ: Դա անընդունելի է Նուբարի համար, որը միջնորդում է, որ կայսերական կառավարությունը պնդի, որ պեսդի սույն դեկրետը հրապարակվի անհապաղ՝ չսպասելով թեկնածուներ գտնելուն²: Կ. Պոլսի դեսպան Գիրսը Պետերբուրգից ցուցում է ստանում, որ Բ. Դուռն համապատասխան հաղորդումը կարող է արվել վերատեսուչների նշանակումից հետո միայն³:

2) Դեկտեմբերի 25-ին Մ. Գիրսը Սազոնովին հեռագրել էր, որ վերատեսուչների թեկնածուների հայտնաբերման հարցը քննարկվելու է Կ. Պոլսի դեսպանների խորհրդաժողովի հատուկ նիստում: Սակայն, նշում էր ուս դեսպանը, «թույլ կտամ ինձ

¹ АВІРІ, ֆ. “Политархив”, г. 1913, д. 3472, л. 100 (об.).

² Նույն տեղում, д. 3465, л. 106:

³ Նույն տեղում:

կարծիք արտահայտել, որ դրա համար առավել հարմար վայրը կարող էր լինել Պետերբուրգը: Այսպիսով կշեռվեք, որ Ռուսաստանին է վերապահվում այս հարցում ղեկավար դերը, և որ միայն նրա պաշտպանություն չնորհիվ հայերը կկարողանան հասնել իրենց կյանքի որոշ բարելավմանը»¹:

3) Միացյալ ժողովից ընդամենը երկու օր հետո՝ դեկտեմբերի 29-ին, Կոստանդնուպոլիս հրահրած № 3570 գաղտնի հեռագրով Սազոնովը Գիրսին հաղորդում էր, որ Պետերբուրգում գերման դեսպան Պուրտալեսը նախորդ օրն իր հետ զրույցի ժամանակ բողոքել է, թե «Բ. Դուան հետ հայկական բարեփոխումների մասին վերջին բանակցություններում Դուք առաջ եք քաշել Գերմանիայի կողմից պաշտպանված սկզբնական նախագծում տեղ չգտած նոր պահանջներ, բայց ես հերքել եմ այդ մեղադրանքը»: Մատնանշելով նույնքան ամսին մշակած նախագծում ռուսական կողմից թուրքերին արդեն արված շոշափելի զիջումները՝ Սազոնովը շեշտում էր, որ իր գլխավորած նախարարությունը դրանք դիտում է իբրև իր կողմից կատարած ծայրագույն հետնահանջ, և այլևս ոչ մի զիջում չի արվելու Բ. Դուանը²:

Որ Ռուսաստանը վճռական էր մնացել իր գործողություններում, վկայում էր նաև հոֆմայստեր Գիրսի կողմից Սայիդ փաշային ներկայացված գրավոր առաջարկությունը, որում հստակ ասված էր, որ իր կառավարությունը մինչև վերջ պաշտպանելու է վերատեսուչների և խորհրդականների անբռնադատելի իրավունքների մասին համաձայնագրի նախագծով նախատեսված սկզբունքը:

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3465, л. 120.

² Նույն տեղում, ծ. 3465, л. 113:

ԹՈՒՐԿԵՐՆ ՈՒ ՔՐԴԵՐՆ ԻՐԵՆՑ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԴԵՐՈՒՄ

Սերգեյ Սազոնովն իր հուշերում գրում էր. «Մինչդեռ դրությունը հայկական վիճակներում ոչ միայն չէր բարվոքվում, այլև մեծ պետությունների Պուսի դեսպանատները իրենց ենթակա հյուպատոսներից ամեն օր տեղեկագրեր էին ստանում հայ ազգաբնակչության վրա թուրքերի և քրդերի կատարած անվերջ կեղեքումների և խժոժությունների մասին: Թուրքական կառավարությունը ոչ միայն այդ անիրավությունների առաջը չէր առնում, այլև հաճախ ինքը խրախուսում էր. իսկ գերմանական դեսպանը այդ ամենի վրա նայում էր սառնասիրտ աչքով»¹:

Ռուս-գերմանական համաձայնությունից իր դժգոհությունները Բ. Դուուը թույնով փոխանցեց թուրք մամուլին: Հայերի գլխին նոր ուժով մաղձ էին տեղում մայրաքաղաքի «Թանին», «Թասֆիրի էֆքեար», «Իգդամ», «Թերջիման» թերթերը, ծայրահեղ ազգայնական մյուս պարբերականները: «Թանինի» խմբագրապետ Զահիդ բեյը թերթում բացահայտ սպառնական տոնով հայտարարում էր. «Թուրք կառավարությունը ո՛չ մեկ պայմանով չի կրնար հանդուրժել Եւրոպայի ուղղակի կամ անուղղակի ազդեցութեամբ կատարուած բարենորոգումներու ձեռնարկներուն»: Զահիդը գրում էր, որ բացի պատերազմից՝ Եվրոպան չի կարող իր կամքը Թուրքիային թելադրելու ուրիշ որևէ միջոց գտնել: Մինչ հայաստանի բարենորոգումների շուրջ բանակցությունները շարունակվում էին, և նկատվում էր որոշ առաջընթաց, թուրք մոլի մամուլը երկրով մեկ «բացատրում» էր, թե այդ ամենից թուրքերին ինչ դժբախտություններ են սպասվում: Նա ընդհանրապես վերին աստիճանի տխուր դեր խաղաց 1913 թ. վերջին 2-3 ամիսների ընթացքում: Ազգայնական թերթերը դիմում էին չափազանցությունների, տպագրում կեղծիքներ ու սաղրանքներ: Գրգռելով տգետ ամբոխին՝ այդ պարբերականները ըստ էության ստեղծեցին հակահայկական

¹ «Հայրենիք», № 2 (265), փետրվար, 1948, էջ 48:

² Զահիդ բեյի սույն հոդվածը հայերեն թարգմանությունը տե՛ս «Աշխատանք» (Վան), № 3 (149), 16 նոյեմբերի 1913 թ.:

և հակաքրիստոնեական ազգայնական շարժման մի նոր կատաղի ալիք, որի նշանաբանն էր. «Ինչը թուրքական չէ, և ինչը իսլամական չէ, պետք է արհամարհել, այսպեսնեւ ու հարվածել»:

Այդ և նման ուրիշ կոչերի ազդեցություն տակ բորբոքվեց հասարակական կարծիքը: Կառավարությունն ու ժողովուրդը ոտքի ելան, ալեկոծվեցին, դարձան մի հոգի ու մի բերան՝ խստիվ բողոքելով «Եվրոպայի այս ծանր ոտնձգություն» դեմ:

Թուրքը հայի պես չէ, որ մեկը աջ քաշի, մյուսը՝ ձախ: Կառավարությունից հնչած ամեն մի արտահայտություն անմիջապես արձագանք էր գտնում կայսրության բոլոր անկյուններում, թուրք հասարակության բոլոր խավերում:

Սկսած պետական պաշտոնյաներից մինչև փողոցի անչափահաս երեխաները՝ բռնում ու թափահարում էին հայ քահանայի օձիքը, հայհոյում ու անպատվում կամ եկեղեցու դռների վրա ու պատերին աղտեղություններ քսում: Թուրք լրագրողները միակամ ցասկոտ դիրք էին բռնել, իսկ պետական պաշտոնյաների և զինվորականների ստորագրությունները թերթերի էջերում լույս տեսած հոդվածները լի էին ամբողջ Հայաստանն արյունով ողողելու սպառնալիքներով: Ինչ վերաբերում էր քրդերին, ապա նրանք այս ու այն բեյի բերանով հայերին ահաբեկում էին մինչ այդ չտեսնված կոտորածով, եթե նրանք համարձակվեն ընդունել եվրոպացիների թելադրած բարենորոգումները:

1914 թ. հունվարի սկզբներին Պետերբուրգ հեռագիր էր հասել, թե հայերին կոտորելու համար երիտթուրք կոմիտեն Հայաստանում եռանդուն ագիտացիա է մղում: Կոմիտեի էմիսարները շրջում էին հայկական նահանգներով մեկ և մահմեդականներին խորհուրդ տալիս ձեռք բերել սպիտակ չալմա և սպիտակ ֆես՝ տարբերվելու համար քրիստոնյաներից, երբ կսկսվի կոտորածը¹:

1914 թ. առաջին շաբաթում մթնոլորտն հատկապես անտանելի էր դարձել Բարձր Հայքում: Այստեղ մեկը մյուսի հետևից տեղի էին ունենում թուրք մտավորականների զաղտնի ժողով-

ներ՝ ամբոխավարների և դադաչների մասնակցությամբ: Իթիֆի-հադի կոմիտեի ցուցումներով թուրք մտավորականությունը գործում էր հասարակական թափթփուկների հետ միակամ ու համերաչխ¹:

Օսմանյան պառլամենտում էր գրումից պատգամավոր ընտրված Սեյֆուլլահ Էֆենդին տեղական մյուզիք Մեոհյուրդար Ահմեդ բեյի հետ այստեղ ստորագրություններ էր հավաքում թուրք երևելիներից, որ իրենք երբեք չեն կարող ընդունել որևէ վերահսկում, որտեղից էլ որ այն թելադրված լինի, որովհետև դա վնասում է ազգերի համերաչխությունը և ոտնատակ տալիս վեհապետի անբռնաբարելի իրավունքները²:

Այսպիսով, չարագուշակ սև ամպերը նորից կուտակվում էին հայոց անմխիթար իրականության մոռյլ հորիզոնի վրա: Նորից ահ ու դող, նորից սարսուռ էր անցնում ազգի մարմնով:

Հայերի համար նորություն չէին իրենց ազգի ու նրա պահանջների հանդեպ կենտրոնական կառավարության բռնած դիրքը, նրան պաշտպանող թուրք մամուլի օրգանների բանեցրած լեզուն: Բայց ինչ կատարվում էր Հայկական Հարցի վերաբացումից հետո՝ 1913 թ. աշնանը և 1914 թ. առաջին ամսին, վեր էր ամեն սպասածից:

Կառավարությունը պատրիարքարանից ստացած վերջին թագրիքը այնպիսի վիրավորական ու վրդովեցուցիչ ձևով էր հետ ուղարկել, որ մինչ այդ չէր եղել նույնիսկ սուլթան Համիդի օրերին: Բ. Դուռը հայտարարել էր, որ այսուհետ ոչ մի պատասխան չի տալու պատրիարքարանի թագրիքներին: «Կառավարության այդ ընթացքը, - գրում էր «Աշխատանք» թերթը, - նախատինք մըն է ուղղված ամբողջ Հայ ազգի հասցեին, անոր քաղաքակրթական ճիգերուն եւ անոր արդար ու յառաջադէմ պահանջներուն»³:

Մյուս կողմից, թուրք մամուլը իթիֆիհադական «Թանին» ու

¹ Տե՛ս «Մշակ», № 4, 9 հունվարի 1914 թ.:

¹ Տե՛ս «Մշակ», № 5, 10 հունվարի 1914 թ.:

² Տե՛ս նույն տեղում:

³ «Աշխատանք» (Վան), № 5 (151), 30 նոյեմբերի 1913 թ.:

«Թասավիրի էֆքեար» մոլի օրգանների գլխավորութեամբ և, անշուշտ, քաջալերված հայ ազգի հանդեպ կառավարութեան բռնած արհամարհական դիրքով, իր էջերում հայ ազգի դեմ այնպիսի սպառնալից լեզու էր գործածում, որ ի հայտ էր բերում թուրքական հրապարակագրութեան ախտավոր վիճակը: Եվ եթե այդպիսի լեզու գործածեք հայկական մամուլը, ապա ընդմիջտ լուծեան կդատապարտվեք: Անտարբեր մնալով իթթիհադական մամուլի գրգռիչ ու ամբոխավար հրապարակումների նկատմամբ, ավելին՝ խրախուսելով դրանք՝ իշխանութունները միաժամանակ հայկական թերթերին արգելում էին հանդես գալ պատասխան հերքումներով, ինչպես նաև խստով պահանջում էին ոչ մի նյութ չտպագրել բարենորոգումների շուրջ ընթացող բանակցությունների ու ծրագրերի մասին:

Այսպիսի աշատութեան արդյունքը լինում էր այն, որ թուրքական մամուլի սանձարձակ սաղրանքների ազդեցութեան տակ շատ թուրքեր սպառնական նամակներ էին ուղարկում հայկական թերթերի խմբագրություններ՝ պահանջելով ոչ մի նյութ չտպագրել բանակցությունների ընթացքի մասին, հակառակ պարագայում խոստանալով «ջարդել ու կոտորել այնպես, որ երնեկ ասեք անցյալի ձեր սև օրերին»: Չնայած այս և նման վայրենի սպառնալիքներին՝ հայկական մամուլը, աչքի առաջ ունենալով բոլոր վտանգները, շարունակում էր իր առաքելությունը:

«Աշխատանք» թերթը, արտահայտելով հայկական հասարակության վճռականությունը, գրում էր. «Հայ ազգը հաստատապէս որոշած է ապրիլ եւ չնահանջել իր պահանջներէն՝ ոչ մերժումներու եւ ոչ ալ ջարդէ ու կոտորածի սարսափներուն առջեւ եւ ապրիլ ուրիշներու հետ հաւասար իրաւունքներով եւ հաւասար պարտականութիւններով»¹:

Ինչպես Հայկական հարցի վերաբացման նախորդ բոլոր ամիսներին, 1913 թ. վերջին ամիսներին նույնպես քուրդ վերնախավը վճռականապես կանգնած էր Իթթիհադի ու նրա կառավարութեան կողքին և ամեն կերպ նրանց աջակցում էր հայկա-

¹ «Աշխատանք», № 5 (151), 30 նոյեմբերի 1913 թ.:

կան բարենորոգումների ծրագրերը խափանելու համար: Քրդերն այս ու այն բեյի բերանով հայերին ահաբեկում էին մինչ այդ չտեսնված կոտորածով, եթե նրանք համարձակվեն ընդունել եվրոպացիների թելադրած բարենորոգումները:

Մի քանի ամիս առաջ կառավարութեան լուռ համաձայնութեամբ Կարճկանի քրդերը և այլ տեղերից օգնութեան եկած նրանց ցեղակիցները ավերեցին գավառի բազմաթիվ հայաբնակ գյուղեր, թալանի ընթացքում սպանեցին և վիրավորեցին տասնյակ հայերի: «Քիչ մնացած էր որ ողջ Կարճկանը Ատանայի վերածուեր, ամբողջ հայ գիւղերը սրախողխող ըլլային քիւրդ խուժանի վայրագութեանց»¹, - գրում էր «Աշխատանք» թերթը: Հիմա նույն բանը ամեն պահի կարող էր կատարվել Հայաստանի ուրիշ տեղերում:

«Հայերին ջարդելու հիմնական դերը հատկացված է քրդերին»², - տազնապում էր «Մշակը»: «Շարունակելով Աբդուլ Համիդի գործելակերպը՝ Իթթիհադի կոմիտեն հայերի նոր կոտորած է ուզում սարքել՝ դարձյալ քրդերի ձեռքով»³, - գրում էր «Русское Слово» թերթը:

«Եթե այժմ քուրդ ջարդարաները Կ. Պոլսից տված ազդանշանով անպաշտպան հայերի վրա թափեն իրենց գայրույթը, - զգուշացնում էր «Русское Слово»-ն, - այդ դեպքում մեծ պետությունների վրա կրնկնի բարոյական պատասխանատվութեան ողջ ծանրությունը: Մանավանդ Ռուսաստանը չի կարող հաշվի չառնել իր նկատմամբ հայ ժողովրդի վստահությունը և լվանալ ձեռքերը: Նման վարվելակերպը անհամապատասխան կլիներ ոչ միայն ռուսական շահերին, այլև մեծ պետութեան պատվի և արժանապատվութեան համար»⁴: Այնուհետև «Русское Слово»-ն շարունակում էր. «Պետք է հուսալ, որ մեր դիվանագիտությունը

¹ Տե՛ս «Աշխատանք», № 35, 13 հուլիսի 1913 թ.: Քրդերի Վանի վերայեթի հայերի նկատմամբ չղաղարող ոճրագործությունների մասին տե՛ս նույն թերթի 1913 թ. հուլիսի 27-ի համարում (№ 37)

² «Մշակ», № 4, 9 հունվարի 1914 թ.:

³ «Русское Слово», № 4, 5 января 1914 г.

⁴ Նույն տեղում:

չի հապաղի ձեռք առնել իրեն մատչելի բոլոր միջոցները՝ պաշտպանելու համար քրիստոնյա ժողովրդի խաղաղ գոյությունը Հայաստանում և Քուրդիստանում: Այլապես կարող է պատահել, որ երբ, վերջապես, հայկական բարենորոգումներն ավելի շոշափելի ձև ստանան, այլևս ոչ ոք չլինի, որի համար գործադրվեն այդ բարենորոգումները»¹:

Տեղեկանալով նոր եղեռնագործության դիմելու քրդերի ու թուրքերի մտադրության մասին՝ ուսական դիվանագիտությունը Բ. Դոանը իրազեկեց, որ Հայաստանում որևէ անկարգություն ծագելու դեպքում ամբողջ պատասխանատվությունը Ռուսաստանը ձգելու է թուրքաց կառավարության վրա²:

Որոշ ժամանակ առաջ երիտթուրքերը կախաղան էին բարձրացրել կամ գնդակահարել քուրդ աղաներից, բեյերից և շեյխերից մի քանիսին, որոնք սկսել էին հանդես գալ երիտթուրքական իշխանությունների դեմ՝ հանուն սուլթանական հին կարգերի վերականգնման: Պատժի արժանացածներից էին Շաքիր աղան, Միր-Մհերը և ուրիշ ոճրագործ հայակերներ³: Նույն ժամանակ՝ 1908 թ. հեղափոխությունից հետո, իշխանության եկած երիտթուրքերից փախած և Պարսկաստան անցած քուրդ աղաներն ու բեյերը, ստանալով Իթթիհատի կոմիտեի թուլյտվությունը, վերադարձան Թուրքիա: Իթթիհատի կառավարությանը հավատարմության երդումներ տալուց հետո նրանք հետ ստացան շարժական ու անշարժ ողջ ունեցվածքը և անմիջապես անցան Հայ բնակչության հալածանքին:

Ոչնչացված էր Սայիտի խումբը, բայց ձերբակալված էին արդյոք Երուսի ավագակները կամ Գավաչի Զանկոն: Ո՛չ: Այլապես ինչպե՞ս կարող էր անդորրություն հաստատված լինել, երբ նրանք դարանամուտ, ամեն ըտպե պատրաստ էին ցույց տալու իրենց «սխրագործությունները»:

¹ «Русское Слово», № 4, 5 января 1914 г.

² Տե՛ս «Մշակ», № 4, 9 հունվարի 1914 թ.:

³ «Բիւզանդիոն», 9 հոկտեմբերի 1913 թ.:

Կառավարական զորքերի հետ ընդհարման ժամանակ սպանվել էին Վասպուրականի հայտնի քուրդ ավագակապետներից մի քանիսը: Բայց դրանով հայերի մեջ չէր առաջացել քրդական հարստահարումներից փրկվելու որևէ հույս, քանզի ակնհայտ էր, որ կառավարությունը գաղտնի թե բացահայտ շարունակում է զինել քրդերին:

Իսկ ունեցած քիչ-միջ զենքով քրդերին դիմադրություն փորձ անելու դեպքում հայերը ենթարկվում էին դաժան պատիժների: Հայկական գյուղերում մի զենք անգամ չթողնելու հրահանգներ էին տրվում:

Եթե օսմանյան հեղափոխությունից հետո՝ 1908 թ. սկսած, հայերը «կամավոր» էին իշխանություններին հանձնում իրենց զենքերը, ապա այժմ՝ 1913 թ. վերջերին, Իթթիհատի կոմիտեի առաջադրանքով դա իրականացնում էր ինքը՝ կառավարությունը: Հայերի լիակատար զինաթափումը ուղեկցվում էր խաբեություն, թե այն տարածվելու է նաև քրդերի ու մյուս ազգային խմբերի վրա: Այդ սուտ խոստումների առնչությամբ «Ազատամարտը» դեռ ամիսներ առաջ գրում էր.

«Մեզ խոստացան անխտրականութիւն հաստատել եւ տեսանք արդիւնքը: Հայերու պարբերական զինաթափութիւնը՝ խուզարկելով ու խոչտանգելով: Կարծես հայերը զինւած բանակներ ունին, իսկ միւս ազգութիւնները անզէն ոչխարի հոտեր են: Որովհետեւ այսքան հայերու զէնքերը զրաւելու ընթացքին ականատես չեղանք մի քանի քրդական զինաթափութեան փաստերու, մինչդեռ մեր վիլայէթի մէջ հայերը բոլորէն քիչ զինւած եւ քիչ զէնք ունեցող ժողովուրդն են: Հայերու զինաթափութիւն կը շարունակուի նոյնիսկ օրէնքով թոյլատրուած զէնքերուն համար: Մենք չենք պահանջեր, որ հայերը զէնք կրելու արտօնւած լինեն, այլ այն որ կառավարութիւնը պարտաւոր է բոլորի վերաբերմամբ անկողմնակալ գտնուիլ: Եթէ զինաթափութիւն է, ապա ուրեմն ատոր թող ենթարկուին նաև քրդերն ու թուրքերը, մի խօսքով բոլոր ժողովուրդները եւ ո՛չ թէ բացարձակապէս հայերը, բայց այդպէս չէ: ... Սա սիստեմատիկ ու ծրագրուած հալածանք է: Խլտրացի քիւրդ ցեղը յարձակեց, կրակ բացաւ կառավարական զորքերու դէմ, օրերով կոխ մղեցին —

տեսակետով: Դա նախնական վիճակ է, կուլտուրական ամենա-
ցածր աստիճան է,- նկատում էին նրանք:- Եվ հայերը ըստ
էության սատարում են մարտնչող հետամնացությունն ու
կիսավայրենի բարքերի երևույթը»:

Հայկական լրագրերը հաղորդում էին, որ 1913 թ. դեկտեմ-
բերին Բ. Դոանը տեղի էր ունեցել թուրք նախարարների և մի
քանի հայ նշանավոր գործիչների համատեղ խորհրդակցություն,
որի ընթացքում վերջիններս առաջարկել էին Հայաստանի տե-
ղական երկու լեզուները՝ հայերենն ու քրդերենը, հավասարա-
պես ընդունելի դարձնել դատարաններում խնդրագրեր կազմե-
լիս և մյուս բոլոր գործառույթներում: Այդ պահանջին առարկե-
լով՝ ներքին գործերի նախարարն ասել էր. «Հայերէնի համար կը
հասկնամ, կանոնաւոր լեզու մըն է. սակայն կարելիութիւն չեմ
տեսներ քրդերէնի համար՝ որ գրական լեզու մը չէ»: Դրան ի
պատասխան՝ խորհրդակցության հայ մասնակիցներից մեկն
ասել էր. «Երբ լեզու մը կը խօսուի, զայն գրելու միջոցն ալ
գտնուած է կամ կը գտնուի անշուշտ: Ժողովուրդ մը կարելի չէ
զրկել ինքզինքը հասկցնելու բնական իրաւունքէն»¹:

Թուրքը զարմացած էր. ինչպե՞ս թե՛ հայը հանդես է գալիս
որպես քրդի իրավունքների պաշտպան: Այո՛, ասում էին հայ
գործիչները, իրավունքն ու արդարությունը ազգություն չունեն:
Հայերի քաջած բոլոր տառապանքների հիմնական պատճառնե-
րից մեկը հենց այն է, որ ինչպես արդուհամիդյան արյունալի
ոեժիմը, այնպես էլ Իթիհատի հաստատած անտանելի կարգը
իրավունքի և արդարության գործին միշտ նայել են ազգայնամոլ
աչքերով²:

Հայերը սրտանց փափագում էին, որ քրդերն ունենան հաս-
տատուն բնակություն, լինեն նստակյաց, որպեսզի ունենան
զարգանալու հնարավորություն: «Ժամանակը» գրում էր.
«Ունէ հայ երբեք մտքէ անցուցած չէ, որ քիւրտերը մնան ներ-
կայ վիճակին մէջ: Բարենորոգումները պէտք է ընդունիլ իրենց

ամէն հետեւանքներովը. անարդարութիւն մը պիտի ըլլար քիւրտ
տարրին ներկայ անկեալ վիճակին մէջ մնալը փափաքիլ. մենք
հայերս գիտենք թէ անարդարութիւն եւ բարենորոգում չեն
կրնար միասին ապրիլ»¹:

Որքան էլ քրդերը փորձեին ցույց տալ, թե անսահման նվիր-
ված են թուրքերին և որպես մահմեդական անքակտելի միաս-
նություն են կազմում նրանց հետ, բայց հայերին աննկատ չէր
այն, որ երկուսի միասնությունը չի կարող դիմանալ ժամանակի
քննությունը և խախտվելու է հայությունն իր հայրենիքից հա-
մատեղ ջանքերով դուրս մղելուց հետո: Բայց հիմա քրդության
համար օդի ու ջրի պես անհրաժեշտ էր առավելագույնս օգտվել
թուրքական իշխանությունների ընձեռած հովանավորությու-
նից՝ «անցանկալի» էթնոս հայությանը բնաջնջելու համար:

Անդրադառնալով քրդերի ցեղային հատկանիշներին՝ «Աւե-
տաբեր» թերթի խմբագրապետը շեշտում էր այդ հատկանիշ-
ներից առավել տիպականը. միշտ հակվել է զորավորի կողմը:
Նա նշում էր, որ Բալկաններում թուրքական պետության կրած
ձախողումներից հետո քրդերը «սուր հոտառութեամբ մը սկսած
են իրենց նոր ապաստանարան մը որոնել ռուսական թեւարկու-
թեան ներքեւ»: Եվ հողվածագիրը մատնանշում էր մի շարք
քուրդ բեյերի ու փաշաների, որոնք «այժմէն սկսած են թաքուն
յարաբերութիւն մշակել ռուս կառավարութեան հետ, մինչեւ իսկ
անոնցմէ ոմանք պատուանշաններով օժտուած են նոյն պետու-
թենէն, ինչպէս կարդացինք թերթերուն մեջ: Որովհետեւ պետք
է գիտնալ թէ քուրդ ժողովուրդը որչափ տգէտ, նոյնչափ խորա-
գէտ եւ հեռատես է, ինչ որ կ'ապացուցուի իրենց ցեղային հե-
տեւեալ առածով. «Հիւր պը Փըբրա՛, քիւր պը Փըբրա՛, տիւր
Փըբրա՛»^{*}»:

Այնուհետև թերթը հիշեցնում էր, որ քրդերը ժամանակին
զանազան բռնություններով իրենց հարևանությամբ ապրող
հայերին ստիպել են իսլամություն ընդունել ու քրդանալ, որպես-

¹ Տե՛ս «Ժամանակ», № 1316, 23 դեկտեմբերի 1912 թ.:

² Տե՛ս նույն տեղում:

¹ «Ժամանակ», № 1316, 23 դեկտեմբերի 1913 թ.:

^{*} «Մանր-մանր մտածիր, խոր մտածիր, հեռու մտածիր»:

զի այդ կերպ ավելի զորացնեն իրենց թիվը, իսկ այժմ նույնանման և ավելի դաժան բռնություններով փորձում են հայերին դուրս մղել իրենց հայրենիքից¹:

Ի դեպ, ոուս պաշտոնյաները չէին թաքցնում, որ դարասկզբի 10 տարիներին ոուսական դիվանագիտությունը և զինվորական համապատասխան ստորաբաժանումները սերտ կապերի մեջ են եղել քրդերի առաջնորդների հետ և նրանց օգտագործել են Ռուսաստանի քաղաքական նպատակներին: Բայց, ի վերջո, քրդերի նկատմամբ Պետերբուրգը բռնեց բացասական դիրքորոշում՝ համարելով, որ նրանք սերտ կապերով (այդ թվում նաև՝ կրոնական) կապված են թուրքերի հետ, և բացի այդ, քաղաքական իրադրությունը Արևմտյան Հայաստանում այնպիսին է, որ քրդերին մերձենալու դեպքում Ռուսաստանը անխուսափելիորեն կկորցնի հայերին և «հայկական» խաղաքարտը: Խորհրդային քրդագետ Մ. Ս. Լազարևը այդ առթիվ նշում է, որ Պետերբուրգում «ակնհայտորեն չէին վստահում քրդերին և հույս չէին դնում նրանց աջակցության վրա, իսկ Բ. Դոան հետ հայկական հարցի առթիվ բանակցությունների ժամանակ ոուսական դիվանագիտությունը քրդական պրոբլեմը չոչափում էր միայն այնքանով, որքանով որ դա անհրաժեշտ էր հայերի ազգային շահերը և անվտանգությունը հայկական վիլայեթներում ապահովելու համար»²:

Ի տարբերություն ոուսական դիվանագիտության, որը տրամադիր չէր հայկական խնդիրը զոհաբերել՝ ի դեմս քրդերի՝ այսրոպեական դաշնակից ձեռք բերելու համար, Գերմանիան, ընդհակառակը, շահագրգռված էր «քրդական հարցը» պահել օրակարգում, և որքան հնարավոր է խանգարել «ռուսների շահերին լծված» հայերի նպատակների իրագործմանը: «Քրդական հարցը» միշտ պետք է հակադրված պահել «հայկական հարցին», այս էր Հայաստանի բարենորոգումների հարցում Բեռլինի վարած քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը:

Նշանավոր բուլղարի Բագրատ Բորյանը համոզված էր, որ հանդես գալով քուրդ ժողովրդի շահերի «պաշտպանություն» օգտին՝ Գերմանիան մի գլխավոր նպատակ էր հետապնդում, այն է՝ պաշտպանել Թուրքիայի ընդհանրական շահերը¹:

Ինչպես տեսնում ենք, Ռուսաստանն իր նպատակներին ժամանակ առ ժամանակ օգտագործում էր Հայաստանի քրդերին, բայց դա անում էր ոչ ի վնաս հայերի, իսկ Գերմանիան քրդերին օգտագործում էր հայերին «զսպելու» համար՝ հօգուտ իր դաշնակից Թուրքիայի, հետևապես նաև՝ հօգուտ իրեն: Քրդական հարցում Գերմանիայի հետ տարակարծություն չունեին նրա դաշնակիցները, հատկապես՝ Ավստրիան: Ինչ վերաբերում է Համաձայնությունը դաշինքի երկու երկրների՝ Անգլիայի և Ֆրանսիայի կառավարություններին, ապա սրանք քրդական գործոնը հաջողությամբ օգտագործում էին իրենց դաշնակից Ռուսաստանի առջև փակ պահելու դեպի Մերձավոր Արևելք ձգվող ուղիները, թեև այդ երկրների հասարակական կարծիքը առաջնորդվում էր միանգամայն ուրիշ տրամաբանությամբ:

Հայկական մամուլն ընթերցողներին էր մատուցում քրդական հարստահարումներից հայ գյուղացիներին պաշտպանելու անհրաժեշտության մասին անգլիական ու ֆրանսիական հասարակություններից իրենց կառավարություններին հղած բազմաթիվ հորդորներ ու կոչեր:

«Յուսաբեր» (Կահիրե) թերթն արտատպել էր Ալեքսանդրիայում լույս տեսնող հունական «Թահիտրոմոս-Օմոնիա» օրաթերթում 1914 թ. հունվարի 2-ին տպագրված հոդվածը Հայկական հարցի մասին: Հեղինակը նշում էր, որ անգլիական հասարակությունը մեծապես հետաքրքրված է թուրքահայերի կյանքով, և որ այդ հասարակության մեջ ընդհանուր կարծիքն այն է, որ Օսմանյան կայսրության ասիական տարածքների ապահովության կարելի է հասնել միայն ու միայն Հայաստանը եվրոպական հակալիռ դիտելու դեպքում: Հայաստանի նկատմամբ անգլիական հասարակության հետաքրքրությունն այն-

¹ «Աւետարեր», № 21, 24 մայիսի 1913 թ.:

² М. С. Лазарев, Курдский вопрос, 1891-1917, М., 1972, с. 242-245.

¹ Տե՛ս Բ. Ա. Բորյան, Армения, Международная дипломатия и СССР, ч. I, М.-Л., 1928, с. 282.

քան է աճել, նշում էր պարբերականը, որ բազմաթիվ բրիտանացիներ վերջին շրջանում ճանապարհավել են Հայաստան՝ իրենց աչքերով տեսնելու այդ առեղծվածային երկիրը: Գրանց թվում թերթը հատկապես պատմում է Պրքսթըն ազգանունով երկու եղբայրների մասին, որոնք Հայաստան մեկնելուց առաջ արտգործնախարար էղուարդ Գրեյից ստացել էին հանձնարարական՝ մանրամասն ուսումնասիրել հայերի կացությունը և գրավոր կարծիք ներկայացնել իրեն:

Լինելով Հայաստանում՝ եղբայրներն ուսումնասիրել էին Հայություն կյանքի խղճալի պայմանները, որից հետո նրանցից ավագը շարունակել էր մնալ Հայաստանում, իսկ կրտսերը վերադարձել էր Լոնդոն և արտգործնախարարին ներկայացրել իր նոթագրությունները, որոնցում տեսակետ էր հայտնել, որ անհրաժեշտ է որքան հնարավոր է ուժ տալ Հայաստանի ինքնավարությանն ի նպաստ քարոզչությանը:

Այնուհետև Պրքսթըն կրտսերը հարցազրույցներ էր տվել Լոնդոնի մամուլին: Թերթերից մեկի հրատարակագրի հնչեցրած հարցին նա պատասխանել էր, թե պատշաճ է նկատում դրամ ունեցող իր հայրենակիցներին խորհուրդ տալ ամուսն թե ձմռան ամիսներին այցելել Հայաստան: Եվ նա նկարագրում է Հայաստանում իր տեսածը: Հայաստանը հարմարագույն երկիր է բոլոր նրանց համար, ասել էր նա, որոնք փափագում են մարդկության վաղնջական կյանքի մի քանի օրեր անցկացնել այնտեղ: Կարելի է ձիով կամ քարավանով ճամփորդել, բացօթյա իջևանել, ավազակների հանդիպել կամ քրդերի հետ փոխհրաձգություն կատարել, բարձրանալ բարձրաբերձ լեռների վրա կամ իջնել խորաձոր հովիտներ: Հայաստանը ամենահարուստ երկրներից մեկն է, բայց այն աստիճան անուշադրության մատնված, որ խորին տխրություն է համակում այցելուին: Ամբողջ երկիրը հեծում է ամենաճնշիչ կարգերի տակ, որը նույնիսկ միջնադարյան ավանդականությունից վատթարագույն է: Հողը պատկանում է քրիստոնյաներին, բայց բավական է, որ քուրդը կամ ուրիշ մահմեդական որևէ հողամաս գրավի և նրա վրա հաստատվի մեկ տասնամյակ, որպեսզի նա տեր ճանաչվի իշխանությունների կողմից: Այդպես է եղել, որ հայերն աստիճանաբար զրկվել են իրենց ունեցվածքից:

Հայկական խնդիրը, շարունակում էր Պրքսթըն կրտսերը, բազմակնճիռ հարց է, և դա լուծելու մեծագույն խոչընդոտը քրդերն են: Այս հետամնաց ժողովուրդն ընդունակ չէ քաղաքակրթության, գրավոր լեզու չունի, բայց ունի ավազակային անսահման բնազդներ: Նա անկարող է խաղաղությունը ապրելու իր հարևանների հետ, և նրա մեջ քաղաքակրթական գոնե նախնական տարրեր մտցնելու ուղղությամբ բոլոր փորձերը մինչև այժմ ձախողվել են:

Ի հակադրություն քրդերի՝ հայերը ոչ միայն առավելապես քաղաքակրթված են, այլև ունեն Արևելյան մեծ եկեղեցուց անկախ ազատական և ամենահայրենապաշտական առանձին եկեղեցի: Ուստի իրարից այդքան խիստ տարբեր տարրերի միաձուլումն անկարելի է, ասում էր Պրքսթըն կրտսերը: Նրա կարծիքով, Հայաստանը կարող է փրկվել միայն այն դեպքում, եթե եվրոպական հակակշռի ներքո նրան տրվի գործելու ազատություն: Հայերի պահանջն էլ հենց այս է: Դժվար չի լինի երկիրն այնպես բաժանել գոտիների, որ բավարարություն տրվի դանազան չահակիցների, տվյալ դեպքում՝ Ռուսաստանին՝ հյուսիսից, Գերմանիային՝ հարավից և մյուս պետություններին՝ ուրիշ կողմերից: «Եթե մեծ տերությունները համաձայնության գան Հայաստանի ապագայի հարցում,՝ եզրահանգում էր անգլիացին,՝ ապա հնարավոր կլինի լուծել Փոքր Ասիայի մյուս անլուծելի թվացող խնդիրները: Ըստ որում այդ խնդիրներից ոչ մեկն այնքան կնճռոտ ու ծանրակշիռ չէ, որքան Հայաստանի խնդիրը»:

Հանդես գալով Հայկական բարենորոգումների դեմ՝ քրդական գործիչների մի մասը զբաղված էր Հայաստանում անկախ քրդական պետություն (բեյլիք) ստեղծելու խնդրով¹:

«Ռոժե քուրդ» թերթի խմբագիր, օսմանյան պառլամենտի պատգամավոր Լուրֆի Ֆիքրին և թերթի չուրջը համախմբված քուրդ ազգայնականները, ժխտելով Հայաստանի գոյությունը, այն համարում էին «պապերից ժառանգած Գուրդիստան»², հե-

¹ «Ցուսաբեր», № 183, 6 հունվարի 1914 թ.:

² Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1 (74), 1986, էջ 52-53:

տևապես հանդես էին գալիս հայկական բարենորոգումների դեմ¹:

Նկատենք, սակայն, որ քրդական ազգայնական տարբեր հոսանքներին պատկանող դեմքերը, աննշան բացառություններով, քրդությունը չէին ճանաչում: Հիմնականում իրենցից ներկայացնելով որպես քիչ թե շատ կրթված առանձին անհատներից կազմված չափազանց փոքր մի շերտ՝ նրանք դեռևս նկատելի ազդեցություն չունեին քուրդ գանգվածների վրա: Իրականում վերջիններիս վրա առաջվա պես բացարձակ իշխանություն ունեին ցեղապետները, էշրաֆները, մյութեղալիպները, հրոսապետները...²:

Հայերի հողերի վրա Քուրդիստան ստեղծելու մոլեռանդ ու ազդեցիկ ավատապետներից էին, օրինակ Հայդերանցի ցեղապետ Քյոո Հուսեին փաշան, Մազրիկ ցեղի պետ Շարաֆ բեյը, Կարճկանի Մուսա բեյը, Քեմալ բեյը, Աբդուլ Ռեզակը, Իսմայիլ աղա Սմկոն, չեյի Թահան և ուրիշներ: Կարճկանի Մուսա բեկը Հայերին սպառնացել էր. «... Դուք մտադիր եք ինքնավարություն ձեռք բերել, բայց դա անօգուտ ջանք է: Եթե երբևէ դա իրականանա, վստահ եղեք, որ ինչքան Հնարավորություն ունենք պիտի աշխատենք հայությունն անմիջապես բնաջնջել: Այս բանը լավ իմացեք»³:

Հայաստանը Քուրդիստան դարձնելու քուրդ նորաթուխ մտավորականների և ցեղապետների, ընդհանրապես քրդերի համար բացարձակ գաղափար դարձած մոլեռանդ ձգտումը բացառիկ երևույթներից մեկն էր ազգերի պատմության մեջ: Նույնիսկ թուրք նվաճողները, գրավելով Հայաստանը, երկար դարեր, ընդհուպ մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը, պահպանում էին «Հայաստան» տեղանունը*:

¹ Տե՛ս «Մշակ», № 246, 6 նոյեմբերի 1913 թ.:

² Տե՛ս «Բիւզանդիոն», № 5041, 11 մայիսի 1913 թ.:

³ Ա. Ս. Համբարյան, Երիտթուրքերի ազգային..., էջ 257:

* 1964 թ. ՍՍՀՄ ԳԱ Ասիայի ժողովուրդների ինստիտուտը հրատարակել էր Մ. Ս. Լազարևի «Քուրդիստանը և քրդական պրոբլեմը» խորագիրը կրող աշխատությունը, որտեղ հեղինակը Քուրդիստանի մեջ էր մտցրել ամբողջ

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, իր ժողովրդի տնտեսական ու քաղաքական ծայրահեղ հետամնացություն, կրոնական սաստիկ մոլեռանդություն, թուրք իշխանությունների ձեռքին կույր գործիք լինելու պատճառով, ինչպես և եվրոպական տերությունների չղաղարող դավերի պայմաններում, նաև այլևայլ գործոնների ազդեցություն տակ քուրդ վերնախավը Հայկական հարցի վերաբացման առաջին իսկ օրերից մինչև վերջ վճռականապես հանդես էր գալիս Հայաստանի բարենորոգումների իրագործման դեմ՝ հաշվի չառնելով, որ դրանք կյանքի կոչվելու դեպքում կբարելավվեր նաև Հայաստանում ապրող քուրդ ժողովրդի տնտեսական ու քաղաքական դրությունը, պայմաններ կստեղծվեին նրա մտավոր առաջադիմություն համար:

Թուրքերն իրենց հարց էին տալիս. երբևիցե հայերը կհրաժարվե՞ն արդյոք Հայկական հարցից: Այդ հարցին իրենք էլ պատասխանում էին՝ «Երբե՛ք»: Ինչ խոսք, նրանք իրավացի էին: Չէ՞ որ «Հայկական հարց» գոյություն չէր ունենա, եթե հայերը չլինեին քրիստոնյա և մանավանդ չունենային սեփական լեզու ու ազգային նկարագիր: Հայկական հարցը պահանջում էր Հային ազատ թողնել դավանելու իր կրոնը և գործածելու իր լեզուն: Բայց այդ դեպքում նա կնկատվեր որպես մուսուլմանին հավասար մարդ, մի բան, որ անընդունելի էր թուրքի և քրդի համար:

1913 թ. դեկտեմբերի 20 թվակիր նամակով Պողոս Նուբարը կաթողիկոսին հաղորդում է, որ Բ. Դոան համառություն հետևանքով ստեղծված նոր կացությունը պահանջում է լրացուցիչ ջանքերի մեծ լարում¹:

Արևմտյան Հայաստանը (տե՛ս Մ. Ս. Լազարև, *Курдистан и курдская проблема*, М., 1964, էջ 19-20): Այդ սխալը, ավել կամ պակաս, տեղ էր գտել նաև նույն ինստիտուտի աշխատակից Ն. Ա. Նալֆինի գրքում (տե՛ս Н. А. Халфиш, *Борьба за Курдистан. Курдский вопрос в международных отношениях XIX века*, М., 1969): Դեռ այն ժամանակ նշված աշխատությունները հանգամանալից քննադատություն ենթարկվեցին ՀՍՍՌ ԳԱ Արևելագիտության սեկտորի աշխատակիցների կողմից (տե՛ս օրինակ՝ ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), 1964, № 5, էջ 91-94):

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 67-68:

Թուրքերն իրենց հերթին լարում էին բոլոր ուժերը՝ չընդունելու սեպտեմբերի 10-ի ուսուցանական համաձայնագիրը: Դա բնական էր, քանզի պատմության փորձով նրանք համոզվել էին, որ հույնը, սերբը, բուլղարը թե կայսրության մի ուրիշ ժողովուրդ, երբ կարողացել էր նվաճել իր ազգային նպատակներից մեկը, ապա այլևս կանգ չէր առել և իր ուժերով թե այլոց դուրս էր պրծել օսմանյան բռնապետական լծից:

Թե ինչ դիրք պիտի բռնեին և ինչ գործնական միջոցների կղիմեին Ռուսաստանն ու Գերմանիան թուրք կառավարության մերժման և ժողովրդական բողոքների հանդեպ, որպեսզի, այնուհանդերձ, առաջ տանեին իրենց մշակած ծրագիրը, կախված էր այն հանգամանքից, թե ո՞ր աստիճանի են շահագրգռված նրանք այդ խնդրում, որքա՞ն թույլ կտան նրանց շահերը այս կամ այն կտրուկ միջոցին դիմելու, և թե որչափով էր անկեղծ այդ խնդրում Գերմանիայի համերաշխությունը Ռուսաստանի հետ, որն ստեղծվել էր ոչ այնքան հաստատուն հողի վրա:

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇՈՒԿԱՆ ՆՈՐ ՇԱՐԺՈՒՄ

Հայաստանի բարենորոգումների գործընթացին նպաստելու համար նորից ամեն կողմից ազգային բացարձակ համերաշխություն հաստատելու անհրաժեշտության կոչեր էին հնչում: Ընդհանուրի պահանջն էր. անկախ կուսակցական պատկանելությունից և սոցիալական դրությունից՝ միմյանց ձեռք մեկնել, ամեն ջանք գործ դնել՝ վերացնելու այն բոլոր մանր ու անպտուղ վեճերը, միջկուսակցական ապարդյուն ու վնասակար պայքարները, որոնք տարիներ ու տարիներ պառակտված էին պահում հայկական հասարակությունը՝ պատճառ դառնալով ուժերի ամուլ վատնումի: «Մերձեցում և համագործակցություն» նշանաբանով ամենուր մեծ ցանկություն էր առաջացել համախմբվել Հայկական դատի շուրջ, միասնաբար ու ներդաշնակ առաջ մղել Հայաստանի բարենորոգումների խնդիրը, որի իրականացումը կենսականորեն անհրաժեշտ կլիներ թե՛ ժողովրդի և

թե՛ օսմանյան պետությունից: Խնդիր էր դրվում նաև միջկուսակցական համերաշխական շարժման մեջ ընդգրկել Հայ հասարակության անկուսակցական, չեզոք չըջանները ևս, որպեսզի հայության կենսունակ ու կառուցողական բոլոր ուժերն ու հոսանքներն ի վիճակի լինեն ծառայելու գլխավոր նպատակին՝ երկրի վերաշինությունը և Հայ ժողովրդի համար բարօր կյանքի ստեղծմանը:

Ամենայն հայոց կաթողիկոսը բարենորոգումների ծրագիրը կազմելու ողջ ժամանակամիջոցում թուրքահայերին շարունակ հորդորում էր ձգտել ամեն կերպ համերաշխ ընթանալ՝ հանուն գործի հաջողության: Իր կոնդակներից մեկում նա զգուշացնում էր, որ օրախնդիրը կարող է ցանկալի լուծում ստանալ, «եթե ամենայն քաղաքական կուսակցությունը հայոց միաբանեալ ընդ միմեանս, համերաշխ եւ սրտեռանդն ոգւով աշխատ լինին վասն ապահովութեան Հոգեւոր որդւոց Մերոց Տաճկահայաստանի, որք, տարաբախտաբար, կան յանմխիթար եւ յանապահով վիճակի: Ապա՝ ի յուշ ածեալ Մեր զդառնագին պայմանս գոյութեան նոցա, զանապահովութիւնս կենաց, ընչից եւ պատուոյ եւ զաննկարագրելի թշուառութիւնս, տառապիմք եւ վշտանամք ի սիրտ եւ ի հոգի, սակայն զարդիս տեսանելով զհամերաշխ եւ զմիաբան գործակցութիւն յազգային գործս զաւակաց Մերոց առանց խտրութեան քաղաքական եւ կրօնական համոզմանց, սփոփիմք եւ վիշտն Մեր մեղմանայ եւ յոյսն զօրանայ, քանզի արդարեւ միմիայն միաբան ոգւով, հեռատես եւ համերաշխ գործունէութեամբ ամենայն գործչաց հայոց, հիմունք ազգային կենաց մերոց լինիցին հաստատ եւ անդրդուելի եւ յառաջագիմութիւնն առողջ եւ անսայթաք, զի զուգութիւն է մայր ամենայն բարեաց»¹:

Ամիսներ առաջ թուրքահայության ջանքերը համատեղելու առաջին քայլերն էին արվել Եգիպտոսում, Կիլիկիայում, Վասպուրականում, Բալկաններում՝ արժանանալով ժողովրդի հա-

¹ «Արարատ», № 4, ապրիլ, 1914, էջ 328:

մակրանքին ու աջակցությունը և մամուլի օրգանների խրախուսանքին:

Միջկուսակցական և համազգային համերաշխություն ստեղծելու ճանապարհին լավագույն օրինակ տվեց Իզմիրի հայությունը: Հայ երեք քաղաքական կուսակցությունների՝ Դաշնակցություն, Իզմիրի կոմիտեի, Հնչակի Իզմիրի մասնաճյուղի և Սահմանադիր-նամկավարների տեղի ակումբի միացյալ ժողովը մտքերի լայն փոխանակումից հետո ստեղծել էր Միջկուսակցական մարմին՝ համերաշխության նշանաբանով:

Միջկուսակցական մարմինը որոշել է առաջիկայում ընդունել համատեղ գործելու հատուկ ծրագիր, որով կճշտվեն երեք կուսակցությունների փոխադարձ հարաբերությունների սահմանները, որպեսզի կարելի լինի հնարավոր ներքին պառակտումների ու թյուրիմացությունների առաջն առնել և ներդաշնակություն մտցնել կուսակցական հանրային մարմինների աշխատանքներում:

Թուրքահայոց համերաշխ գործակցություն կարիքը գուցե երբեք այնքան կենսական չէր եղել, որչափ այդ շրջանում, քանզի հասել էր բուսական, երբ տերությունները և առաջին հերթին Ռուսաստանը մեծ ջանքեր էին թափում Հայաստանում իրականացնելու վաղուց երազած բարենորոգումները:

Միակամ գործելու Իզմիրի հայության օրինակը բացառիկ նշանակություն ունեցավ համազգային մասշտաբով համերաշխական շարժում առաջ բերելու համար: Նույնիսկ կուսակցությունները փոխադարձաբար դրսևորում էին հաշտ ու բարյացակամ վերաբերմունք և վճռորոշ խնդիրներում միմյանց ձեռք էին մեկնում:

Այդ ամենն իր ցայտուն արտահայտությունն էր գտնում Հայկական մամուլում: Արտասահմանի և Կ. Պոլսի հայ թերթերում համարյա վերջ էր գտել նախկին մոլեզին բանակոխվել: Առաջվա պես մամուլի էջերում կարծիքների տարբերության պակաս չկար, բայց մարդիկ այլևս չէին անվանարկում իրար: Ազգային դատի շուրջ բոլորը համերաշխ էին:

1913 թ. հոկտեմբերին, երբ Հայկական հարցը դեռ հարափոփոխ քննարկումների մեջ էր, խորհրդակցական մի շարք ժո-

ղովներից հետո ՀՅ դաշնակցություն արևմտյան բյուրոն, Ս. Դ. Հնչակյան կուսակցություն Թուրքիայի կենտրոնական վարիչ մարմինը, Սահմանադիր նամկավարների կենտրոնական ակումբը, Վերակազմյալ Հնչակյան կենտրոնի վարչությունը ի մի գալով կնքեցին համաձայնություն, որ տվյալ պահին թուրքահայ քաղաքական ուժերի համար ջանքերի խելացի համադրումը այլընտրանք չունի, և որ պետք է բոլոր հնարավորություններն ի սպաս դնել հայկական բարենորոգումներին, որոնց իրականացումը գերազանցապես անհրաժեշտ է թե՛ ժողովրդի և թե՛ պետության շահերի տեսակետից: Ընդունվեց «Հայտարարագիր», որով առաջիկա ամիսների համատեղ գործակցության կարևորագույն խնդիրներն էին համարվում.

«ա) Միասնաբար եւ ձեռք ձեռքի տուած գործել Հայկական Բարենորոգումներու իրականացման համար:

բ) Համաձայնութեամբ շարժիլ Ազգային Ներկայացուցչական Մարմիններու մէջ:

գ) Համերաշխօրէն ընթանալ Օսմ. Երեսփոխանական ընտրութեանց եւ Պարլամենտական խնդիրներու մէջ»¹:

Հայտարարագիրը, որով նվիրագործվում էր երկար սպասված համերաշխությունը, ջերմ ու անկեղծ ընդունելություն գտավ թե՛ կուսակցական և թե՛ արտակուսակցական խավերում: Դա պատահական չէր, քանզի հայ ժողովուրդն իր փշոտ ճանապարհին վաղուց էր փափագում, որ իր ներսում գործող քաղաքական ուժերը, վերջապես, ձեռնարկեն տևական համերաշխ գործակցություն:

Պատմության եզակի դեպքերից մեկն էր, որ հայ քաղաքական ուժերը միավորվում էին: Այդպիսի մի կարճատև համախումբ տեղի էր ունեցել ամիսներ առաջ, որի մասին խոսել ենք վերում: Այժմ, ուրեմն, հայերը միակամ էին և ունեին հստակ նպատակ՝ համատեղ աջակցել բարենորոգումների ծրագրի ընդունմանը, ապա և՛ իրականացմանը:

Հայ քաղաքական ուժերը պարզ գիտակցում էին, որ իրենք

¹ «Մարտ» (Մոսկվա), № 2, 12 հունվարի 1914 թ.:

չեն կարող անմիջական ազդեցություն ունենալ բանակցային գործընթացի վրա, բայց գոնե բանակցողները պետք է տեսնեն, որ ամբողջ ազգը միակամ է իր իրավունքները պաշտպանելու տեսակետից:

«Մշակ»-ում Թուրքահայաստանից ստացված թղթակցությունների հեղինակը շեշտում էր, որ բոլորն այժմ ձգտում են «Չանք ու աշխատանք չխնայել մեջտեղէն վերացնելու բոլոր սին ու վնասակար վեճերն ու ընդհարումները, որոնք տարիներ ու տարիներ պառակտման եւ հետեւաբար ուժերու ամուլ վատնումի պատճառ են եղած, անկեղծորեն ձգտիլ համերաշխական այս շարժման կապելու հայ հասարակութեան անկուսակցական շրջանները, որպեսզի բոլոր կենսունակ եւ շինարար ոյժերը, բոլոր հոսանքները կարող ըլլան ծառայելու երկրին եւ հայ ժողովրդին՝ անոր սահմանադրական և ազգային իրավունքներու ամրապնդման համար»¹:

Քաջալերիչ էր, որ թեև մեծ ուշացումով, բայց, այնուամենայնիվ, սկսված համերաշխական շարժումը չէր սահմանափակվում կուսակցական շրջանակներով: Մարդիկ հիշատակում էին, որ ամիսներ առաջ համերաշխության մասնակի ձեռնարկներ են եղել և՛ երկրի ներսում, և՛ գաղութներում, որոնք հավանության են արժանացել հայության բոլոր հատվածներում: Ուստի, ասում էին նրանք, ոչ ոք կասկած չպիտի ունենա, որ միջկուսակցական ներկա համերաշխությունը ջերմ ու անկեղծ ընդունելություն կգտնի կուսակցական թե արտկուսակցական բոլոր շերտերում: Ամենքը տողորված էին մի նպատակադրությունից՝ «այլևս ոչ մէկ երկդիմութիւն, ոչ ալ քայքայիչ յոռետեսութիւն: Ընդհակառակը՝ այս շարժումը, որուն իրագործման վաղուց փափագող է հայ ժողովուրդը, պէտք է իր արդեն փշոտ ճամբուն վրայ գտնե բոլորին կողմէ - կուսակցական թէ՛ չեզոք, մտավորական թէ՛ աշխատավոր, վաճառական թէ՛ արհեստավոր - անկեղծ համակրանք, խորունկ յարգանք ու գործնական աջակցութիւն»²: Ուստի

¹ «Մշակ», № 3, 5 հունվարի 1914 թ.:

² Նույն տեղում:

անհրաժեշտ համարվեց լայն աշխատանքներ տանել հասարակության գանազան չեզոք խավերի մեջ, որպեսզի սկսված շարժումը դառնա համաժողովրդական, «նոյնքան սիրելի չեզոք հասարակութեան, որքան և կուսակցական շարքերու համար»¹:

Առաջարկություն արվեց մի ներքին կանոնագրով մանրամասնել միջկուսակցական համաձայնությունից նպատակը, ընդլայնել կուսակցական փոխադարձ հարաբերությունների սահմանները, բարձրացնել միջկուսակցական միջնորդ ատյանների դերը, որպեսզի կարելի լինի նոր պառակտումների և թյուրիմացությունների առաջը ժամանակին առնել, կուսակցական հարաբերությունների մեջ մտցնել կայուն ներդաշնակություն: Այդ մանրամասները կուսակցությունների ղեկավար մարմինները պետք է հաղորդեին տեղական կազմակերպություններին, որպեսզի ամեն տեղ կուսակցական շարքերն ընթանային այն ուղիով, որը կհամապատասխաներ հիմք դրված համերաշխության ոգուն և նպատակին:

Հայ կուսակցությունների համերաշխությունը ենթադրում էր գործողությունների համահունչ փոխհամաձայնեցում, որպեսզի հնարավոր լինեին առաջ մղել տվյալ պահին հայությանը ամենահուզող՝ բարենորոգումների խնդիրը:

Կարելի է հաստատել, որ 1912-1913 թվականներին և դրանից հետո՝ ընդհուպ մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը, Հայ դատին նվիրված ազգային գործունեությունն այնքան կարգապահ էր ու գործնական, այնքան համերաշխ ու միակամ, ինչպես երբեք չէր եղել: Այդ համակամ գործակցությունը բառիս իսկական իմաստով ետում էր հավասարապես երեք կենտրոնների շուրջ՝ Կ. Պոլիս, Էջմիածին-Թիֆլիս-Պետերբուրգ և Փարիզ՝ Ազգային պատվիրակության նստավայր: Բոլորը համերաշխ էին և միմյանց աջակից: Ոչ մի կողմը չէր ձգտում ծայրահեղություն: Հայ գործիչների ցուցաբերած ողջամտությունն ու գործնականությունը, իրենց ժողովրդի կենսական ու գերագույն հարցի շուրջ սերտ համախմբումը կարևոր ազդակներ էին, որոնք

¹ «Մշակ», № 3, 5 հունվարի 1914 թ.:

ամենուր նպաստում էին հայ ցեղի հանդեպ համակրանքի աճին: Պողոս Նուբարը մի առիթով հայտարարել էր. «Մեր գործի յաջողութեան շատ նպաստեց նաեւ կուսակցութեանց համերաշխ գործունէութիւնը»¹:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՆ ԱՄՈՒՐ ՊԱՀՈՒՄ Է ԻՐ ԶԵՌՔՈՒՄ

Վրա հասավ 1914 թվականը: Թուրքահայությունը լարված սպասում էր իր կյանքը ապահով դարձնելու մեծ տերությունների խոստումների իրականացմանը, բայց որը դեռ չկար:

Նոր տարվա հունվարը լինելու էր Բ. Դուան հետ ոուսական դիվանագիտության վճռական ճակատման ամիս, որը վերջանալու էր թեպետ թերի, բայց հայերին անվտանգ կյանք խոստացող համաձայնություններ:

Գևորգ V կաթողիկոսին գրած նամակում Պողոս Նուբարը նշում էր, թե բարենորոգումների խնդիրը 1914 թ. սկզբներից կարծես նպաստավոր է դարձել: Խոսքն ամենից առաջ վերաբերում էր այն բանին, որ եվրոպական ընդհանուր վերաքննիչների խնդիրը մշտապես մերժած Բ. Դուանը հիմա վերջապես հասկացել էր, որ մեծամեծ վտանգների չենթարկվելու համար այլևս չի կարող հարցը ձգձգել և ընդունեց, որ հայկական գավառների բարենորոգումների գործադրումը պետք է հսկեն պետությունների ներկայացուցիչները: Բ. Դուան կողմից այսպիսի որոշման պատճառը այն գործը ֆինանսական ճնշումն էր, որ կատարել էր ֆրանսիական կառավարությունը Թուրքիայի վրա, երբ Զավիդ բեյը կրկին եկել էր Փարիզ՝ փոխառության պայմանագիր կնքելու:

¹ «Արարատ», № 4, ապրիլ, 1914, էջ 328: Նկատենք, որ հայկական կուսակցությունների գործակցությունը եթե սերտ լիներ, ապա գուցե թուրքահայերի համար ստեղծվեր բարենորոգումների ավելի գոհացուցիչ ծրագիր, քան կար հրապարակի վրա: Ցավոք, նրանցից յուրաքանչյուրը մինչ այդ ըստ էության գործել էր համաձայն իր քաղաքական ըմբռումների:

Բայց այդ արդյունքը իրականում պետք է վերագրել Պողոս Նուբարին, որը նախօրյակին եղել էր Ֆրանսիայի նախարարների խորհրդի նախագահի ու արտգործնախարարի մոտ և խնդրել Զավիդ Բեյի հետ հանդիպման ժամանակ փոխառության հարցը այս անգամ էլ կապել բարենորոգումների խնդրին: Երկար բանակցելուց հետո ֆրանսիացի երկու գործիչներն էլ հարգել էին Պողոս Նուբարի խնդրանքը:

Այս հաջողությունը զուգորդվել էր այն, որ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը Բ. Դուան հետ համաձայնություն էր ձեռք բերել բարենորոգումների նախագծի գրեթե բոլոր կետերի չուրջ՝ ի բաց առյալ նահանգային ժողովների և պաշտոնների բախշման հավասարության խնդիրները:

Բայց այս հաջողությունն անմիջապես հաջորդել էին Բ. Դուան նոր խարդավանքները: Սա կտրուկ հայտարարություն արեց, թե բարենորոգումների գործադրության ընթացքում տերությունները չպիտի միջամտեն գործին, չպիտի դիմեն որևէ հարկադրանքի Բ. Դուան նկատմամբ, և որ միայն ինքը՝ թուրքական կառավարությունն է ամբողջովին ստանձնելու դրանց առաջնորդման աշխատանքը:

Ռուսական կողմն անմիջապես անհամաձայնություն հայտնեց Բ. Դուան հավակնություններին, բայց մնաց մենակ:

Մինչ այդ Գերմանիայի արտգործնախարարությունը կարծես հավանություն էր տվել 6 կետից բաղկացած նախնական նախագծին, բայց Կ. Պոլսի գերմանական դեսպանությունը վերապահ լինելով հայտարարեց, թե ոուսական դեսպանի հետ կարող է համաձայնել այնքանով, որքանով բարեփոխումներ անցկացնելու համար հարկ չի լինելու դիմել ներագրեցությունների: Այս հարցում Վանզենհայմի հետ համաձայն էին տերությունների՝ Կ. Պոլսի մյուս բոլոր դեսպանները: Ուստի Գիրսը 1913 թ. դեկտեմբերի 27-ին (1914 թ. հունվարի 9-ին) գաղտնի հեռագրով Սազոնովին գրում էր. «Հետևաբար մեզ հարկ կլինի հանդես գալ միայնակ՝ կրելով ճնշամիջոցների դիմելու բոլոր հետևանքները»: Բայց այդ քայլին դիմելը պարունակում էր անկանխատեսելի վտանգներ, ուստի դեսպանը գտնում էր, որ ուժային սպառնալիքը առայժմ պետք է մի կողմ դնել: Ներկա

պահին, նշում էր Գիրսը, «Հայերը չեն կարող չգիտակցել իրադրություն վտանգավորությունը: Նրանց քաղաքական գործիչները, ովքեր մշտապես իրազեկ են բանակցությունների ընթացքին, բացահայտորեն դեմ են հանդես գալիս հռչակված պայմաններին, բայց կարծում են, դրանցով ժամանակավորապես կբավարարվեին, եթե համոզվեին, որ Ռուսաստանը մտադիր չէ հենց այժմ ռազմական ուժով մեծ զիջումներ պահանջել: Իրենց պահանջները, անկասկած, իրենք համապատասխանեցնում են Ռուսաստանին իրենց կողմից վերագրվող մտադրություններին: Իրենց հույսերը հանգում են Ռուսաստանի ռազմական գործողությունը, որը դժվար թե կարտահայտեր մեր շահերը»¹:

1914 թ. հունվարի 4 (17)-ին Գիրսը հեռագրում է (№ 11) Պետերբուրգ, թե մեծ վեճի իրեն հայտնել է, որ նախարարների խորհուրդը համաձայն է ժամանակավորապես՝ մինչև մարդահամարը, որը դժվար թե տեղի ունենա հինգ տարուց չուտ, ընդունել ռուսական կողմի պահանջը մահմեդականների և ոչ մահմեդականների հավասար ներկայացվածության վերաբերյալ միայն Վանի և Բիթլիսի վիլայեթների խորհուրդների համար, թեև, նրա խոսքերով, դրանցում էլ հայերը չեն կազմում բնակչության կեսը, այլ ընդամենը՝ 1/3-ը: Նշված երկու նահանգների ժողովներում հավասարության սկզբունքի կիրառումը Բ. Դուռը համարում էր իր կողմից արված մեծ զիջում: Պատրիարքարանը խնդրել էր, որ հավասարության սկզբունքը տարածվի նաև էրզրումի նահանգի վրա, բայց մեծ վեճի լսարանապետ մերժել էր այդ պահանջը²: Մյուս վիլայեթների համար նախարարների խորհուրդը հնարավոր չէր համարում կիսաչափ ներկայացվածությունն անգամ ժամանակավորապես՝ մտավախություն ունենալով, թե, իբր, անխուսափելի կլինի «մահմեդականների պայթյունը», որոնք կազմում են այդ վիլայեթների բնակչության ճնշող մեծամասնությունը: Ուստի թուրքական կառավարությունը, հաղորդում էր Գիրսը, այդ վիլայեթների համար

առաջարկում է ընտրությունների հետևյալ համակարգը. բացի Տրապիզոնից, որտեղ մնում է ընտրությունների հին կարգը, հայ ընտրողների թիվը սահմանվելու է հենց իրենց՝ Հայերի կողմից, ընդ որում նրանց ցուցակներին իշխանությունները կվստահեն, իսկ թուրք ընտրողների թիվը կսահմանվի այժմ գոյություն ունեցող ցուցակներով: Նահանգային ժողովների անդամների քանակը կորոշվի համաչափորեն՝ ըստ նշյալ բնակչության խմբերի³:

Իր հեռագրի վերջում դեսպանը ավելացնում էր. «Վաղը կհաղորդեմ* Հայ Պատրիարքության արձագանքը այս կետի վերաբերյալ, որի հարցումն արել եմ այսօր: Իսկ անձամբ ես կարծում եմ, որ մինչև մարդահամարը կիսաչափ ներկայացվածության համար չարժե ոխակի տակ դնել հայերի օգտին արված զիջումները»:

Նուբարը նույնպես 1/3 սկզբունքի կիրառումը հայկական մյուս նահանգների ներկայացուցչական ժողովներում ողբերգություն չէր համարում, եթե իրականում այդ նահանգային ժողովներում երկու սկզբունքներն էլ գործեին կանոնավորապես:

Երկուդեղծով, որ օգտվելով քրդերի հակահայկական խժոժություններից, Բ. Դուռը բանակցություններում կուժեղացնի իր դիրքերը և ուրիշ զիջումների չի գնա, Գիրսը ստիպված էր նոր պահանջներ չառաջադրել, մանավանդ որ ակնհայտ էր գերմանական և ավստրո-հունգարական դեսպանությունների դժգոհությունը ռուս-թուրքական բանակցություններում ռուսական կողմի հետևողական գործողությունների նկատմամբ:

Գիրսի կողմից նոր պահանջներ չառաջադրելը, ինչ խոսք, հետընթաց քայլ էր բանակցություններում:

Այդ առթիվ Կ. Պոլսում ֆրանսիական գործերի հավատարմատարը 1914 թ. հունվարի 11-ին իր վերադասին՝ արտգործնախարար Դումենեզին, հայտնում է, որ ռուսաց դեսպան Գիրսը

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3465, л. 115 (об.).

² Նույն տեղում, л. 137:

³ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3465, л. 138.

* Մեր ձեռքի տակ չկա դեսպան Գիրսի խոստացած («Վաղը կհաղորդեմ») 1914 թ. հունվարի 5-ի հերթական հեռագիրը (№ 12)

չուտով անորոշ ժամանակով մեկնելու է արձակուրդ, իսկ նրա համաձայնությունը թուրքերին արած զիջումները ուսական կառավարությունը դեռ չի վավերացրել: «Ռուսական [ղիվանագիտություն] այս անհաջողությունը, - չեչտում էր հավատարմատարը, - անտարակույս մեծ բավականություն կընդունվի թուրքերի կողմից, ... իսկ հուսախաբությունն ու վրդովմունքը շատ խոր կլինեն հայերի մեջ»¹:

Նահանգային ժողովների և պաշտոնների խնդիրներում ձեռք բերած համաձայնությունից հետո դեսպան Գիրսը Կ. Պոլսից մի քանի օրով մեկնում է Փարիզ: Հունվարի 12 (25)-ին այնտեղ Պոդոս Նուբարը հանդիպում է նրան: Երկարատև զրույցի ժամանակ նրանք բոլոր մանրամասներով քննարկում են արդյունքները: Դեսպանն այն կարծիքին էր, որ չնայած մի շարք հարցերում ձեռք էր բերվել համաձայնություն, բայց ստացածը քիչ չէ, և «եթե մենք Թուրքիոյ առաջարկությունը ընդունինք, ապա Բ. Դուռը պետությունից պիտի հաղորդե իսկույն սոյն համաձայնությունը եւ մեր բարենորոգումները պիտի գործադրեն»²:

Պ. Նուբարը կաթողիկոսին հաղորդում էր. «Մ. տը Կիրսի հետ մեր բռնելիք յարմարագոյն դիրքին մասին խորհրդակցեցանք, եւ թեր ու դէմը կչոելով, քննեցինք այն հաւանականութիւնը, թէ մեզ համար արդեօ՞ք աւելի շահաւոր է ներկա ծրագիրը ընդունիլ, թէ պէտ անբաւական, թէ մերժել զայն լաւագոյն պայմաններ ձեռք բերելու յոյսով: Բնական է, երկայն բանակցութիւններէ վերջ ձեռք բերուած ծրագիրը մեր փափաքածէ հեռու է, սակայն և այսպէս այն կը պարունակէ խիստ կարեւոր զիջումներ, որ Բ. Դուռը ըրած է շնորհիւ ուրախալի պարագաներու, մասնաւորապէս պետությունից համերաշխութեան»³:

Ինչպես Գիրսը, այնպես էլ Պոդոս Նուբարը եկել էին այն վերջնական համոզման, որ եթե ձեռք բերած համաձայնությունը գործադրվի խղճի մտքը, ապա այն, անտարակույս, Հայաստան-

նում կապահովի առաջադիմություն: Այլապես թուրքական կողմից ստորագրված ծրագիրը մերժելով (լավագույնը ստանալու հույսով)՝ կվտանգվեր նաև մինչ այդ ձեռք բերածը: Օսմանյան կառավարությունից դրանից ավելին չէր կարելի սպասել: Նաև վտանգ կար կառավարության փոփոխության, ուստի ուրիշ նոր անձերի իշխանության գլուխ գալու դեպքում բացառված չէր, որ նրանք չեղյալ կհայտարարեն արդեն ձեռք բերածը:

Նաև հույժ կարևոր էր եղել, որ Ֆրանսիայի ֆինանսների նախարարությունը շատ ազդեցիկ օժանդակություն էր ցույց տվել հայկական կողմին՝ Ջավիդ բեյին վճռականապես հայտարարելով, որ եթե Թուրքիան լուծում չտա հայկական խնդրին, ապա երբեք փոխառություն չի ստանա: Բայց ինչպես Պոդոս Նուբարը, այնպես էլ Գիրսը, քաջ գիտակցում էին, որ ֆինանսական ճնշումն անկարելի է հավերժաբար գործադրել, որ վաղ թե ուշ փոխառությունն արտոնվելու է, այլապես Թուրքիան կհանգի լիակատար սնանկության, որից եվրոպական տերությունները շահ չունեն: Ուրեմն, սպասված առիթը, վերջապես, ներկայացել էր, և այն պետք էր օգտագործել արդյունավետությամբ, մասնավանդ որ այդ հնարավորությունը կարող էր երկար չտևել: Ուստի ճիշտ էր առանց ուշացնելու համաձայնության գալը Բ. Դուռն հետ. սա Գիրսի և Նուբարի համատեղ կարծիքն էր: Վերջինս Կաթողիկոսին գրում էր, թե ինքը հույս ունի, որ պատրիարքարանը նույնպես պիտի ընդունի իրենց տեսակետը: «Նաեւ չեմ տարակուսեր, որ Ձեր Վեհափառութիւն ալ նոյնպէս մեզ հետ համախորհուրդ պիտի ըլլայ»¹, - նշում էր նա:

Բայց ուսական կողմից Բ. Դուռնն արած վերջին զիջումներին հայ գործիչներից ոչ բոլորն էին հավանություն տալիս:

Կ. Պոլսից և Փարիզից անբարենպաստ տեղեկություններ ստանալով՝ Պետերբուրգում գտնվող դոկտ. Զավրիևը այդ օրերին տեսակցություն է ունենում արտգործնախարարության Մերձավոր Արևելքի դեսպարտամենտի վարիչ իշխան Տրուբեցկոյի հետ: Վերջինս հայ նշանավոր գործչին հիչեցնում է, որ

¹ «Բարենորոգումները Հայաստանում», էջ 71:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 10:

³ Նույն տեղում, թ. 11:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 11 (չրջ.):

Հայկական հարցը ուսական կառավարություն համար ուս-
թուրքական հարաբերություններում կարևորագույն հարցերից
մեկն է, միաժամանակ ասում է, որ եթե իր կառավարությունը
ներկայումս թուրքական կողմին հարկադրված զիջումներ է
անում, հայերը չպետք է դրանից վրդովվեն, քանի որ Ռուսաս-
տանի նպատակն այժմ գոնե բարենորոգումների հիմքերը դնելն
է՝ հետագայում այն ավելի ընդլայնելու և ամրապնդելու համար:
Միևնույնն է, Ռուսաստանը երբեք իր ձեռքից բաց չի թողնելու
բարենորոգումների գործը, վստահեցնում է նա: Տրուբեցկոյը
նաև շեշտում է, որ հայ տարրը իր շնորհներով և ընդունակու-
թյուններով մեծապես զնահատելի է Ռուսաստանի համար ոչ
միայն Հայաստանի սահմաններում, այլև նրանից դուրս:

Տրուբեցկոյից բաժանվելուց հետո Ջավրիկը նույն օրը նրան
ուղարկում է գրություն, ուր ասված էր. «Ես երջանիկ կը լինեի
Ձեր արած յայտարարությունները հաղորդելու թիւրքիա գտնու-
ող իմ մօտ բարեկամներուս, բայց անպարկեշտ չգտնուելու
մտահոգութիւնը, կը ստիպէ ինձի դիմել Ձեզ՝ խնդրելով յայտնել
թէ ի՞նչ չափով կրնամ Ձեր խօսքերը հաղորդել անոնց...»¹: Հե-
տևում է իշխանի պատասխանը, թե ինքը Ջավրիկին արտոնում
է թուրքիայում գտնվող իր բարեկամների նեղ շրջանակին հա-
ղորդել իր՝ որպես ուսական պաշտոնյայի արտահայտած
մտքերը²:

ՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՐԵՊ ՀՈԴՎԱԾԻ ՄԱՍԻՆ

Հազիվ էին նշմարվում համաձայնության հասնելու եզրեր,
երբ 1913 թ. վերջին ՀՅ դաշնակցությունը դնում էր ժողովրդին
զինելու խնդիրը: «Դրօշակը» գրում էր, որ կառավարությունը
«կուզե իր անխելք խելքով եւ ... կը պահանջե որ հայ ժողո-
վուրդը զինաթափ լինի: Զինաթափ ... ո՛չ, այս անգամ ո՛չ: Ամեն

¹ Վահան Փափագեան, Իմ յուշերը, հատ. երկրորդ, էջ 259:
² Տե՛ս նույն տեղում, էջ 260:

բան, բայց ոչ զինաթափութիւն... Մենք այլ եւս «ոչխարի հոտ»
չենք»¹: Հայ ժողովուրդն այլևս «չպետք է անտարբեր մնա, նա
պետք է դիմէ իր ինքնապաշտպանութեան, որ վեր է ամեն
սրբութենէ...»²:

Այդ մարտահրավերը Դաշնակցությունը նետում էր այն ժա-
մանակ, երբ հայությունը վաղուց զինաթափ էր, ապա այդպիսի
կոչերը տվյալ պահին միայն ջուր էին լցնում Իթիհադի ջրա-
ղացին, քանի որ հակառակ էին Հայկական հարցի լուծման այդ
դժվար պահի տրամաբանությունը:

Հայ հեղափոխական մյուս կուսակցությունը՝ Հնչակը, նույն-
պես համերաշխվում էր Դաշնակցության ժամանակավրեպ
կոչերին:

Փարիզի «Թան» թերթը 1914 թ. հունվարի 12-ի թվով լույս
էր ընծայել Հնչակյան կուսակցության ղեկավարության կողմից
ներկայացված մի հոդված՝ խմբագրության մեկնաբանությամբ³:

Հոդվածի բովանդակությունը հիմնավորված էր Կոնստան-
ցա (Քեոսթենձե) քաղաքում (Ռումինիա) 1913 թ. սեպտեմբերին
գումարված կուսակցության հերթական պատգամավորական
ժողովի կողմից վավերացված որոշումների դրույթներով, որոնց
մասին խոսել ենք վերը:

Հայաստանի բարենորոգումների վերաբերյալ պատգամա-
վորական ժողովն ընդունել էր հետևյալ որոշումը.

«Պաշտպանել ինքնավար Հայաստանի գաղափարը» (ընդ-
գծումը մերն է - Հ. Ս.), որպես միակ միջոցը Հայաստանի մէջ
ապրող թէ՛ հայ եւ թէ՛ միւս տարրերու հաշտ, խաղաղ, անվրդով
զարգացմանը եւ առաջդիմութեանը, համոզուած ըլլալով, որ
ատիկա այն անհրաժեշտ պայմանն է, որով Հայ ազգը կրնայ իր
ազգային անհատական գոյութիւնը ապահովել՝ ներքին և
արտաքին ոտնձգութիւններուն դեմ:

¹ «Դրօշակ», № 1, հունվար, 1914, էջ 7-8:
² Նույն տեղում, էջ 8:
³ «Թան» թերթի սույն հոդվածը թարգմանաբար լույս է տեսել «Մշակի»
1914 թ. հունվարի 23-ի համարում:

Եւ որովհետեւ թուրք տիրող ազգի եւ անոր ղեկավար դասու պատմական անընդունակութիւնը եւ անբարեացկամութիւնը այլեւս անվիճելի է, ինչպէս որոշ են նաեւ արտաքին ուժերու յարաբերութիւնները ու քաղաքական ձգտումները, որոշեց պահել ինքնավար Հայաստանի գաղափարը»¹:

«Թանը» անդրադառնում էր Կոնստանցայի ժողովի այս որոշման հետևյալ ենթակետերին.

1. Որոշ ժամանակամիջոցի համար Հայաստանում նշանակել եվրոպայի կողմից ընտրված ընդհանուր կառավարիչ, 2. Հայ և մահմեդական բնակչություն ունեցող նահանգների համար, առանց կրոնի խտրություն, հրապարակ բերել ընդհանուր քվեարկություն և որոշ ժամանակի համար ընտրված մի ընդհանուր ժողով, որը պետք է ունենա վիճաբանելու և մեծամասնությամբ որոշում տալու ամեն իրավունք՝ կայսրության տնտեսական, քաղաքական և սոցիալական օրենքների շրջանակներում, 3. Ընդհանուր կառավարիչը ժողովի անդամներից մեկին կհանձնարարի՝ իր գործընկեր պաշտոնյաներից կազմել վարչական խորհուրդ, որը պիտի ունենա գործադիր իշխանություն իրավասություններ ամբողջ նահանգի վրա, 4. Ինչպես օրենսդրական, այնպես էլ վարչական մարմիններում հիմնական գործածական լեզուն պետք է լինի հայերենը:

Ինչ վերաբերում էր այն հարցին, թե հայկական նահանգներում հայերն ու մահմեդականները ինչ համամասնությամբ պիտի մասնակից լինեն վարչական կառավարմանը, հողվածում բերվում էր Կոնստանցայի ժողովի ընդունված որոշման այն մասը, ըստ որի՝ «քրիստոնյայի ու մահմեդականի միջև իսկական հավասարակշռություն գտնելը գործնականապես անկարելի է», քանի որ «ասոնցմէ մին պիտի վարէ միւսը»: Եվ համագումարը նախապատվությունը տվել էր քրիստոնյային՝ «այն պարզ պատճառով, որ դարավոր փորձը ցոյց տուաւ, թէ մահմեդականները անկարող են համբերատար (tolérant) մի կառավարութիւն ստեղծել այն երկիրներու մէջ, ուր զանազան ժողովուրդ-

¹ «Պատմութիւն Հնչակեան կուսակցութեան», էջ 366 - 367:

ներ կան: Անոնք բնավ ընդունակ չեղան կառավարելու իրենց տիրապետութեան տակ ինկած երկիրներէն և ոչ մին: Իրենց քաղաքական գիտութիւնը տիրողի և տիրապետուողի յարաբերութիւնները պահելէն անդին չանցնիր, տեղացի ժողովուրդները միշտ ալ կենթարկուին ստրկութեան ամէն նուաստացումներու և ամէն անարգանքներու»¹:

«Թան» թերթի հողվածում մեջբերված էին Հնչակի պատգամավորական ժողովի որոշումից ուրիշ հատվածներ ևս, ինչպես օրինակ՝ 1) «Համագումարը հաստատում է, որ «Ռիսի ու ատելութեան եւ ոչ մի զգացում չենք տածեր թուրք զանգուածի հանդեպ: Բայց մահմեդականութիւնը չափազանց ետ է մնացել, որպեսզի կարողանա իր ծոցէն ստեղծել մի ղեկավարող դասակարգ, որ տարուած չըլլար կրոնական նեղ անհամբերատարութեամբ և ցեղային ուժգին ատելութեամբ»² ... «Ներկայ ծրագիրը, զոր կարելի է «Ինքնավար Հայաստան» երկու բառով ամփոփել, չէ կարելի պահանջկոտ համարել, քանի որ այն գործնական է և չափավոր: Այն կը պահանջէ անյապաղ գործադրութիւն որպեսզի առաջն առնուի լուրջ բարդութիւններու, շարունակական խռովություններու և սպառնալից փոթորիկներու»³:

«Թանի» նշված հողվածը ֆրանսերեն լույս տեսավ առանձին բրոշյուրով, որը կրում էր «Կոչ եվրոպական պետություններին ու ժողովուրդներին» անունը: Եվրոպական մամուլը բազմաթիվ այունակներով անդրադարձավ այդ հողվածին, իսկ թուրքական թերթերից մի քանիսը գրում էին, թե «Թանի» այդ հողվածից հետո Բ. Դուռը պարտավոր է մի կողմ նետել այն բոլոր համաձայնությունները, որոնք ձեռք են բերվել այսպես կոչված Հայաստանի բարենորոգումների հարցում:

Եվ դա այն դեպքում, երբ հազիվ էին նշմարվում բարենորոգումների համաձայնագիր ստորագրելու եզրեր:

Պահանջելով Թուրքահայաստանի ինքնավարություն օս-

¹ «Մշակ», № 15, 23 հունվարի 1914 թ.:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

մանյան կայսրությունը սահմաններում՝ հողվածի հեղինակները հաշվի չէին առել թուրքահայության կացությունը սովյալ պահին, երբ «Ինքնավար Հայաստանի» պահանջի մասին խոսք չկար դիվանագիտական սեղաններին, իսկ դրա փոխարեն թուրք-գերմանական կողմը օր օրի հետևողականորեն խուզում էր բարենորոգումների ուսական ծրագիրը՝ նրանում չթողնելով հայերի ամենանվագագույն պահանջները նույնիսկ:

Բնական է, որ նման գրավոր ելույթները, այն էլ եվրոպական լեզուներով, ունակ էին բացասական դեր խաղալու, քանզի թուրքական փորձված դիվանագիտությունը սովոր էր ի շահ իրեն օգտագործել հայերի ամեն մի վրիպում:

Հակառակ եվրոպական մամուլի՝ հայկական մամուլը լուծյամբ անցավ հնչակյանների հողվածի կողքով:

Պետերբուրգում անհանգստացած էին, որ հայ ազգային կուսակցությունների չմտածված գործողությունները կարող են նորանոր դժվարություններ առաջ բերել բանակցությունների ընթացքին և խափանել մինչ այդ ձեռք բերած համաձայնությունները: Ուստի Կ. Պոլսի ուսաց դեսպանությունը հայ ղեկավար քաղաքական գործիչներին մշտապես զգուշացնում էր անցանկալի գործողություններից: Միաժամանակ Պետերբուրգը քայլեր էր ձեռնարկում արագացնելու ընդհանուր վերատեսուչների թեկնածուների ընտրությունը, որն իր հերթին լավատեսություն կառաջացներ հայերի մեջ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԱՏԵՍՈՒՉՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԸ

Ընդհանուր վերատեսուչներն ամենից առաջ պիտի ունենային ուժեղ բնավորություն և ամուր կամք, որպեսզի կարողանային դիմագրավել Բ. Դուան ճնշումներին, լինեին անաչառ, ունենային կազմակերպչական ակնհայտ եռանդ, ինչպես և լինեին արդեն ճանաչված հեղինակություններ, քանի որ կրելու էին չափազանց ծանր լուծ՝ Հայաստանում կատարել մարդասիրական աննախադեպ մեծ գործ: Միաժամանակ նրանք պետք է

խորապես գիտակցեին ստանձնելիք պաշտոնի պատասխանատվությունը, ըմբռնեին, որ հիմնականում իրենցից է կախված գերագույն նպատակի՝ Հայաստանի բախտի կտրուկ վերափոխմանը հասնելու հաջողությունը: Ծատերը համոզված էին, որ եթե վերատեսուչներն իրենց տրված իշխանությունը կարողանան գործադրել բանիմացորեն, հետևողական ու եռանդով, այն ժամանակ հայերը արդյունավետ և ուժգնորեն պաշտպանված կլինեն այն չարագործություններից, որոնցից տանջվում են այսքան երկար ժամանակ:

Բ. Դուուր, որ սկզբից պնդում էր, թե ընդհանուր վերատեսուչները (*Inspecteurs généraux*) պետք է իր կողմից նշանակված օսմանցիներ լինեն, իսկ նրանց խորհրդականները՝ եվրոպացիներ, ապա Բեոլինում գտնում էին, որ վերատեսուչները կարող են նաև օսմանյան հպատակներ լինել: Գերմանացի դիվանագետներից շատերը կարծում էին, որ եթե սեկտորների վերատեսուչները եվրոպացի լինեն, ապա ուսական կողմը կպահանջի, որ այդ պաշտոնը հանձնվի ուսի: Բայց այդ բանը Պետերբուրգի մտքով անգամ չէր անցնում¹:

Ի վերջո Բ. Դուուր հասկացավ, որ այդ դուալիզմը Թուրքիայի համար նոր վտանգներ է առաջ բերելու, ուստի ընդունեց, որ Հայաստանում մտցվելիք բարենորոգումների գործադրության վրա պետք է հսկեն ոչ թե օսմանցի, այլ եվրոպացի ընդհանուր վերատեսուչներ՝ առաջադրված մեծ պետությունների և նշանակված իր կողմից:

Ենթադրվում էր, որ Թուրքիան իր համար այդ դժվարին որոշմանն էր հանգել ստիպողաբար, իսկ ստիպողը եղել էր Փրանսիական կառավարությունը: Պողոս Նուբար փառանքանիցս դիմել էր Ֆրանսիայի նախարարների խորհրդի նախագահ և արտաքին գործերի նախարար Դումերգին, որպեսզի նա ճնշում գործադրի Բ. Դուան վրա և նրան հորդորի ընդունել Հայաստանում եվրոպացի ընդհանուր տեսուչներ նշանակելու մեծ պետությունների առաջարկը:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 46, թ. 4-ի շրջ.:

Եվ ահա, հերթական փոխառությունը կնքելու համար Զավիթ բեյը կրկին եկել էր Փարիզ: Նա հանդիպում էր ունեցել Դուաներգի հետ, որը Թուրքիային հատկացվելիք Ֆինանսական օժանդակության խնդիրը կապել էր հայկական բարենորոգումների հետ և Թուրքական կառավարությունը պարտադրել էր ընդհանուր վերատեսուչների հարցում զնալ զիջման¹:

Պարզ էր, որ չէր կարելի Ֆինանսական ճնշումը մշտապես գործի դնել, քանզի միևնույնն է, վաղ թե ուշ փոխառությունը կնքվելու էր, այլապես վրա կհասներ Թուրքիայի տնտեսության սնանկացումն ու փլուզումը, որը բնավ ձեռնադրել էր մեծ պետություններին՝ այնտեղ ունեցած մեծ շահերի պատճառով:

Դեռ մինչև համաձայնագրի կնքումը Գերմանիան և Ռուսաստանը ճիշտ էին համարում, որ վերատեսուչներն ընտրվեն փոքր չեզոք երկրներից, բացի բալկանյան պետություններից²:

Արդեն 1913 թ. դեկտեմբերի կեսերից ռուսական դիվանագետները Բելգիայում և Շվեդիայում որոնում էին վերատեսուչների պաշտոնի համար հարմար թեկնածուներ³: Բելգիայում, Հոլանդիայում և Դանիայում ռուսաց դեսպանությունների դեսպանորդներին դեկտեմբերի 14-ին ուղարկած № 3465 գաղտնի հեռագրով Ս. Սազոնովը գրում էր. «Մենք անմիջականորեն չահագրգռված ենք լավագույն թեկնածուների ընտրության հարցում, որոնց ցանկալի է ընտրել կա՛մ Բելգիայի, կա՛մ Հոլանդիայի, կա՛մ Դանիայի հպատակներից: Սույնը նկատի առնելով՝ խնդրում եմ Զեյ, բնավ հարցում չանելով կառավարություններին, որոնց մոտ Դուք հավատարմագրված եք, հայտնել մեզ Զեր անձնական կարծիքն այն մասին, թե կա՞ն արդյոք, Զեր կարծիքով, նշված պաշտոններն զբաղեցնելու հարմար մարդիկ»⁴:

Նույն օրը դեսպան Գիրսին հղած հեռագրով Ս. Սազոնովը հայտնում էր, թե ռուսաց կառավարությունը նախընտրելի է

համարում դիմել երկրորդական պետություններին, դիցուկ՝ Բելգիային, Դանիային և Հոլանդիային: Ռուսական կողմը գերատեսուչի էր համարում՝ երկու սեկտորների վերատեսուչները լինեն միևնույն ազգություն՝ նրանց գործունեության ընդհանուր ուղղությունն ավելի սերտ միասնություն հաղորդելու նպատակով⁵:

Ռուսական կողմի խնդրանքով վերատեսուչների թեկնածուների փնտրտուքները ձեռնարկեց նաև Նուբար փաշան: Նա գործադրում էր բոլոր ջանքերը՝ հնարավորինս շուտ գտնելու այնպիսի թեկնածուներ, որոնք ունակ լինեին կատարելու իրենց դժվարին գործը:

Պողոս Նուբարը սկսեց թեկնածուներ փնտրել՝ չըջագայելով Եվրոպայի երկրորդական պետությունների քաղաքներում: Նա սկզբում Բելգիայի ու Հոլանդիայի արտագործնախարարներին խնդրեց Հայաստանում ստեղծվելիք երկու սեկտորներից յուրաքանչյուրի համար երաշխավորել երկուական թեկնածու, որոնցից ամեն մեկ սեկտորի համար կընտրվեր մեկը: Բայց երաշխավորված երկու հոլանդացիները դուրս մնացին, քանի որ նրանցից մեկը՝ 32 տարեկան և մայրի կոչումով, հարմար չհամարվեց՝ վարչական փորձ չունենալու պատճառով, իսկ մյուսն ինքը հրաժարվեց: Վարչական աշխատանքի փորձ չունենալու պատճառով դուրս մնացին նաև բելգիացի երաշխավորված երկու թեկնածուները:

Առանց ժամանակ կորցնելու Պողոս Նուբարը շարունակեց նոր թեկնածուների փնտրտուքները: Նա գտնում էր, որ ինչպես Ռուսաստանին, այնպես էլ հայերին չահավետ է վերատեսուչներ ընտրել հոլանդացիների, քանի որ հայտնի էր նրանց բացասական վերաբերմունքը Գերմանիայի նկատմամբ, իսկ բելգիացիներն այդ երկրի հանդեպ ընդամենը չեզոք էին:

Նուբարը հայոց կաթողիկոսին հայտնում էր, որ Բելգիայում իրեն առաջնակարգ երկու նոր թեկնածու էին ներկայացրել՝ գեներալ Տևիլ և քոլոնել Հանրին, որոնց ինքն ընդունել է ամենայն վստահությունով: Հոլանդիայում արտաքին գործոց նախարարի

¹ Տե՛ս «Մշակ», № 19, 28 հունվարի 1914 թ.:

² Տե՛ս «Ախուրյան» (Ալեքսանդրապոլ), № 2, 5 հունվարի 1914 թ.:

³ АВПРИ, ф. "Политархив", г. 1913, д. 3465, л. 86. Տե՛ս նաև «Մշակ», № 19, 28 հունվարի 1914 թ.:

⁴ АВПРИ, ф. "Политархив", г. 1913, д. 3465, л. 86.

⁵ АВПРИ, ф. "Политархив", г. 1913, д. 3465, л. 87.

հետ ունեցած զրույցի ընթացքում շատ լավ տպավորություն է ստացել: Կշռելով ընդհանուր քննիչների համար նախատեսված պաշտոնի կարևորությունը, մանավանդ այն պատիվը, որը վերաբերելու է այն երկրին, որտեղից ընտրվելու էին նրանք, նախարարը հույս էր հայտնել, որ, այնուամենայնիվ, կգտնվի հարմար թեկնածու¹: Շվեյցարիայում նույնպես աշխատանք է տարվում՝ գտնելու հարմար թեկնածուներ, բայց այնտեղ փնտրտուքները դեռ արդյունք չեն տվել: «Անկեղծ հայասեր մը սակայն կզբաղի այս խնդրով և ես լիայոյս եմ թէ քիչ ատենին պիտի կրնայ այնպիսի առաջարկներ ընել, որ օգտակարապես պիտի ծառային մեզի»²: Համոզված, որ իր ջանքերը զուր չեն անցնի, Պողոս Նուբարը կաթողիկոսին վստահեցնում էր, որ պետությունները շատ շուտով Բ. Դոանը կառաջարկեն հարմարագույն թեկնածուներ, «որով կայացած համաձայնությունը իրականացման շրջանին մէջ պիտի մտնե»³:

Սազոնովին հղած հեռագրով Բելգիայում Ռուսաստանի դեսպան Իվան Ալեքսանդրովիչ Կուլաչովը նշում էր, որ «Պողոս Նուբարը հատկապես մեծ հույսեր է դնում բելգիացիների վրա՝ դանիացիների ու հոլանդացիների հետ համեմատած նրանց ավելի գործունյա համարելով: Պողոս փաշան համոզված է, որ չնորհիվ Աֆրիկայում ձեռք բերած արժեքավոր փորձի, բելգիացիներն ավելի ընդունակ են հաջողությամբ անցկացնելու նախանշված բարեփոխումները անքաղաքակիրթ մի երկրամասում, որի բնակչության կեսն ավազակներ են»⁴: Դեսպանորդը նաև հաղորդում էր, որ «այսօր Պողոս Նուբարը հանդիպելու է բարոն Ամպենի, կոմս Դարեկոտի և ուրիշ նշանավոր անձանց հետ, որոնց օգնությամբ հույս ունի առաջիկայում ընտրել միանգամայն հարմար թեկնածուներ»⁵: Նա նաև Կուլաչովին փոխանցել էր, թե մեկ ամիս առաջ ինքը պատեհություն է ունե-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 14 և շրջ.:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ АВПРИ, ф. "Политархив", г. 1913, д. 3465, л. 106.

⁵ Նույն տեղում:

ցել հանդիպելու Բելգիայի թագավոր Ալբերտի հետ և խոսել բելգիացի թեկնածու գտնելու իր ցանկության մասին: Թագավորը խոստացել էր այդ հարցում օգնել իրեն¹:

Վերջում Կուլաչովը հաղորդում էր. «Այսօր Փարիզ է վերադառնալու Նուբար փաշան, որը խոստացավ նախքան մեկնելը ևս մեկ անգամ այցելել ինձ և հայտնել իր բանակցությունների արդյունքների մասին: Դրա հետ մեկտեղ նա ինձ խնդրեց շարունակել աջակցել իրեն: Ես պատասխանեցի, թե պատրաստ եմ օգնել, բայց չեմ կարող որևէ բան ձեռնարկել նախքան Ձերդ Բարձր Գերագանցությունից պատշաճ հրահանգներ ստանալը»²:

Իր հերթին, նույն ժամանակ Բ. Դուռը բանակցություններ էր վարում բելգիական կառավարության հետ: Այդ նպատակով Բրյուսել էին գնացել Հուկկը փաշան և Ռիֆատ փաշան³:

Ռուսական դիվանագիտությունը շահագրգռված էր, որ ընդհանուր վերատեսուչների թեկնածուների փնտրտուքներում Նուբար փաշան ներգրավվի ավելի ակտիվորեն, քանի որ նա Եվրոպայում ուներ լայն ծանոթություններ, անձնապես ճանաչում էր պետական ու հասարակական շատ նշանավոր գործիչների, որոնք կարող էին նրան աջակից լինել այդ գործում:

Փարիզում ոռուսաց դեսպան Իզվոլսկուն 1913 թ. դեկտեմբերի 28-ին հղած հեռագրով Սազոնովը գրել էր. «Ննդրում եմ Ձեզանից, որ միանգամայն մտերմաբար հաղորդեք Պողոս Նուբար փաշային այդ (երկրորդական պետությունների հպատակներից թեկնածուներ նկատի առնելու:– Հ. Ս.) մասին և [նրանից] տեղեկանաք՝ աչքի առաջ ունի՞ր նա արդյոք համապատասխան թեկնածուներ»⁴:

Իր արձակուրդը Փարիզում անցկացնող Միխայիլ Նիկոլաևիչ Գիրսը 1914 թ. հունվարի սկզբին այստեղ հանդիպել էր Պողոս Նուբարին: Նրանք երկար զրուցել էին բարենորոգումների

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1913, д. 3465, л. 106-107.

² Նույն տեղում, թ. 107:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ «Բարենորոգումները Հայաստանում», էջ 83:

ծրագրի, հատկապես ընդհանուր վերատեսուչների ընտրություն հարցի շուրջ: Գիրսը Նուբարին հաղորդել էր, որ մյուս մեծ պետությունները հակված են ընդունելու Ռուսաստանի առաջարկը՝ վերատեսուչներ նշանակել եվրոպական չեզոք և փոքր պետությունների՝ Շվեյցարիայի, Շվեդիայի, Բելգիայի և Հոլանդիայի հպատակներից¹:

1913 թ. դեկտեմբերի վերջերին Փարիզից գալով Բրյուսել՝ նա տեղի կառավարական պաշտոնյաների հետ սկսում է թեկնածուների որոնում: Արդյունքում ընտրում է երկու հոգու՝ Բելգիական Կոնգոյի նախկին փոխկառավարիչ Հենձիին և գեներալ Դեգիսին:

Բայց Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը դեմ էր բելգիացիներից թեկնածուներ ընտրելուն՝ գտնելով, որ Բելգիան մեծ շահեր ունի օսմանյան կայսրությունում. եթե Բ. Դուռը խախտելու լինի պայմանները, ապա նրանք համարձակություն չեն ունենա ընդդիմանալու: Պատահական չէ, որ Կ. Պոլսի հայ նշանավոր գործիչների մասնակցությամբ պատրիարքարանը հատուկ ու բազմակողմանի քննության ենթարկեց այդ խնդիրը և եկավ այն եզրակացություն, որ չպետք է ընտրություն կատարել այն երկրներից, որոնք ունեն տնտեսական, առևտրական ու քաղաքական մեծ շահեր թուրքիայում կամ ակնկալում են ունենալու: Հետևապես մեծ պետություններն ընդհանուր վերատեսուչներ պետք է ընտրեին միայն չեզոք փոքր թագավորություններից²:

Կ. Պոլսում ֆրանսիական գործերի հավատարմատարը արտաքին գործերի նախարար Դումերգին հղած գաղտնի հեռագրով հայտնում էր, որ «հայ առաջնորդները մտահոգված են օտարազգի ընդհանուր տեսուչների նշանակման հարցով: Երեկ նրանք դեմարշ են կատարել ռուսական դեսպանության մոտ՝ պահանջելու, որ տերությունների ընտրությունը չկանգնի բելգիացիների և շվեյցարացիների վրա (վերջիններս նույնպես թուրքիայում ունեին մեծ շահեր:– Հ. Ս.), այլ [սահմանափակվի]

նորվեգացիներով, դանիացիներով, հոլանդացիներով և չվեդներով:

Այլ կողմից՝ իմ ռուսական կոլեգան ինձ ասաց, որ իր կառավարությունը ցանկանում է հեռու պահել չվեգացիներից»³:

1914 թ. հունվարի 13-ին Պողոս Նուբարը կաթողիկոսին գրում էր.

«Մոռացայ տեղեկացնելու Ձերդ վեհափառութեան, որ Մ. Սաղոսօֆ վերջերս, իր Բարիզի Դեսպան Ա. Իզվոլսքիի միջոցաւ, ինձ խնդրեց տեղեկացնել իրեն այն թեկնածուները, զոր ես կը ճանչնամ, իբր յարմարագոյն ընդհ. քննիչի պաշտօնին: Իսկոյն խուզարկութիւններս սկսայ Պելճիգայի և Ջուիցիիոյ մէջ, վասն զի ընդհ. քննիչները պէտք են ընտրուիլ փոքր Պետութեանց հպատակներէն, այսինքն Պելճիգայի, Հոլանդայի, Տանրմարգայի կամ Ջուիցիիիոյ: Նկատի ունենալով պէտք եղած բազմազէմ յատկութիւնները, որք անհրաժեշտ են այսպիսի շատ կարեւոր պաշտօն մը գրաւելու համար, շատ դիւրին չէր գտնիլ այն անձինք, որ այս յատկութիւնները կը վայելին: Առ այժմ երկու թեկնածու ունիմ գտած, և կը յուսամ ուրիշներ ալ գտնիլ, որպէս զի Պետութիւնը կարենան անոնց մէջէն լաւագոյն թեկնածուն ընտրել»²:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԹՈՒՐԲԱԿԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Հունվարի 9-ին* մեծ վեզիրը ռուսական դեսպանությունը տեղեկացնում է, թե ինքը հայկական բարենորոգումների նախագծի վերաբերյալ ունի որոշ նոր առաջարկություններ: Պարզ էր, որ դրանք ըստ էության լինելու էին ոչ թե լոկ առաջարկություններ, այլ նոր հականախագիծ:

Դեսպան Գիրսի հենց Փարիզ մեկնելու օրը, հունվարի

¹ Տե՛ս «Մշակ», № 20, 29 հունվարի 1914 թ.:

² Տե՛ս «Կովկասի լրագրեր», № 31, 11 փետրվարի 1914 թ.:

¹ «Հայաստանը միջազգային դիվանագիտության ...», էջ 338:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 34, թ. 41:

* Հնարավոր է նաև՝ հունվարի 10-ին:

12-ին, նրան փոխարինող գործերի հավատարմատար Գուլկեիչը, անշուշտ, դեպպանի նախապես տված ցուցումի համաձայն, Բ. Գուանը հայցագիր է ներկայացնում պարզաբանում ստանալու, թե որոնք են արդեն բազմաթիվ քննարկումներ անցած բարենորոգումների նախագծի վերաբերյալ թուրքիայի վարչապետի նոր առաջարկությունները:

Քանի որ մեծ վեզիր Սայիդ Հիլմի փաշան առանձնապես բարձր հեղինակություն չէր վայելում նախարարների խորհրդում, Գուլկեիչը դիմում է կաբինետի ավելի ազդեցիկ անդամներին՝ Թալեաթին և Նալիլին, ինչպես նաև Սայիդ Հիլմին: Քննարկման էին դրված նահանգային ժողովների, գլխավոր վերատեսուչների և պաշտոնների բաշխման հարցերը: Ըստ որում, Թալեաթը հենց սկզբից հայտարարում է, որ այդ խնդիրների քննարկումը տեղի է ունենալու մեծ վեզիրի առաջարկած նախագծի շրջանակներում: Եվ մեծ վեզիրն իր նոր նկատառումներն է հայտնում բարեփոխումների նախագծի առթիվ:

Նախ քննարկման է դրվում նահանգային ժողովների տեղերի հարցը: Թե՛ բանակցությունների արդյունքում մեծ վեզիրը և Թալեաթը համաձայնում են հավասար ներկայացուցչություն մտցնել նաև էրզրումի վիլայեթում, միայն մի պայմանով, որ հիշյալ սկզբունքը ներմուծվի ոչ թե անհապաղ, ինչպես Վանում և Բիթլիսում, այլ այն դեպքում, երբ մարդահամարի ցուցակագրությունը չի վերջանա առաջի տարվա ընթացքում: Թուրքերը առաջվա պես հրաժարվում էին նաև Սվազի, Նարբերդի և Դիարբեքիի վիլայեթների ընդհանուր խորհուրդների համար ընդունելի համարել մահմեդական 2/3 անդամների դիմաց քրիստոնյաների 1/3 ներկայացուցչությունը և առաջարկում էին անհապաղ սահմանել ընտրությունների համամասնական սկզբունքը, որով մահմեդական ընտրողների թիվը որոշվելու էր գոյություն ունեցող ընտրական ցուցակներով, իսկ ոչ մահմեդականներինը՝ համապատասխան համայնքների ներկայացրած ցուցակներով¹:

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1913, д. 3465, л. 140-140 об.

Հայերը քաջ ըմբռնում էին թուրքերի այդ հնարքները, ուստի և պնդում էին, թե անհնար է էրզրում կենտրոնով սեկտորի մեջ մտցնել Տրապիզոնի վիլայեթն իր գրեթե միլիոնանոց մահմեդականներով: Հենց դրա համար էլ նրանք առաջարկում էին ընդունել արդար ազգագրական սահման, որը կարող էր իրենց համար փոքրիչատե հավասար ներկայացուցչություն ապահովել նահանգային խորհուրդներում:

Մեծ վեզիրի և Թալեաթի հետ այդ հարցի քննարկման արդյունքի մասին նույն օրը Ս. Սազոնովին հղած իր զեկուցագրում Գուլկեիչը գրում էր. «Այն պատճառով, որ գերմանական դեպանությունից վարքագիծը ծայրահեղ կեղծավոր է, հատկապես՝ վերջերս, և որ անգլիացիների և ֆրանսիացիների աջակցությունը ավելի քան թույլ է, կարծում եմ, որ ինձ համար անհնար կլինի զիջումների հասնել նաև այս վերջին հարցում: Եթե Ձեր բարձր Գերազանցությունը ցանկալի եք համարում հայերի համար ապահովել իրենց կողմից խնդրված ձայների մեկ երրորդը Նարբերդի, Սվազի և Դիարբեքիի վիլայեթներում, ապա Ձեզ անձամբ հարկ կլինեք ձնչում գործադրել թուրքական տեղի (Պետերբուրգի: Ն. Ս.) հավատարմատարի վրա»¹:

Ռուսական դիվանագիտությանն անհանգստացնում էր այն, որ Մակեդոնիայից և Թրակիայից մեծ թիվով մահմեդականների վերաբնակեցումը Հայաստանում կփոխի ոչ միայն էրզրում կենտրոնով սեկտորի հայկական նահանգների, այլև Վան կենտրոնով սեկտորի հայկական նահանգների ժողովրդագրական պատկերը, որն անմիջական ազդեցություն կգործի նահանգային ժողովների անդամների հարաբերակցության վրա: Հունվարի 18-ին Սազոնովը Գուլկեիչին հեռագրում էր. «Մենք երկյուղ ենք կրում՝ միգուցե թուրքիան վերաբնակեցման միջոցով Հայաստանում ստեղծի մահմեդական մեծամասնություն: Այս պատճառով մենք բացասաբար ենք վերաբերվում դեպի համեմատական սկզբունքը և գերադասում ենք ընդհանուր խորհուրդներում

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1913, д. 3465, л. 52.

հիմնել որոշ համաչափություն ազգությունների ներկայացուցիչների միջև»¹:

Մեծ վեզիրի առաջարկած նախագծային փոփոխություններում ընդհանրապես տեղ չէր գտել սեկտորների համար ընդհանուր ժողովների հարցը*։ Այս հանգամանքը խիստ թուլացնում էր բարեփոխման նշանակությունը։ Այդ դեպքում ո՞վ էր քննարկելու վարչությունների, դատարանի, ֆինանսների և այլոց բարելավման նախագծերը, եթե չլինեն սեկտորների ժողովները։

Սեկտորի վիլայեթական ժողովները չէին կարող կատարել այդ դերը, քանի որ ի հայտ կգար փոխադարձ հակասություն, և, բացի այդ, ըստ «Վիլայեթների մասին օրենքի», դրանց իրավասություն սահմանները խիստ նեղ էին, բազում անգամ փոքր, քան անգամ Ռուսաստանում ղեմստությունների իրավունքները։

Քանի որ նահանգային ժողովների տեղերի հարցում հնարավոր էր եղել պահպանել վերանորոգումների ոռու-գերմանական նախագծի հիմնական դրույթները, ուստի Գույկևիչը հունվարի 13 (25)-ի № 37 հեռագրով Սազոնովին գրում էր. «Խնդրում եմ Ձերդ Բարձր գերագանցությունը լիազորել ինձ գրավոր ամրագրելու՝ parapher մեծ վեզիրի հետ ձեռք բերած համաձայնությունը, որը ես կկարողանայի անել հենց վաղն առավոտյան»²:

Անցնելով գլխավոր վերատեսուչների հարցին՝ Գույկևիչը չեչտում էր, որ մեծ վեզիրի ներկայացրած նախագծում ոչինչ չի ասված սեկտորների ղեկավարման պայմանները բարեփոխելու, նրանց իրավունքների ու նախաձեռնությունների մասին, ուստի պարտադիր է անպայման նշել հատկապես վարչությունը, տնտեսությունը և դատարանը վերափոխելու իրավունքների

¹ «Բարեփոխումները Հայաստանում», էջ 98:

* Նշենք, որ սեկտորների համար ընդհանուր ժողովների հարցը, հավանաբար պատահամբ, տեղ չէր գտել նաև նոյեմբերյան համաձայնական նախագծում։ Այս բացթողման հնարավոր բացասական հետևանքների մասին նշվում էր Գույկևիչի հունվարի 14-ի հեռագրում (Տե՛ս АВПРИ, փ. "Политархив", г. 1913, д. 3472, л. 21):

² АВПРИ, փ. "Политархив", г. 1913, д. 3465, л. 21.

մասին՝ եթե գլխավոր վերատեսուչները արձատապես չփոխեին դատական համակարգը, նշանակում էր, որ ուժի մեջ էին մնալու շարիաթական դատարանները, որոնք առանց բացառություն պաշտպանում էին մահմեդականներին՝ ի վնաս քրիստոնյաների։

Ըստ մեծ վեզիրի առաջարկության՝ գլխավոր վերատեսուչը իր սեկտորում գերագույն ատյան չէ, այլ միայն վերահսկող անձ։ Իսկ դա նշանակում էր, որ ամբողջ վարչական մեքենան պետք է մնար նախկին վիճակում, այսինքն՝ Բ. Դուան ենթակայությունը։ Բոլոր գործերը պիտի ներկայացվեին նախարարների քննությանն ու լուծմանը՝ լիովին չըջանցելով գլխավոր վերատեսուչին։ Ճիշտ է, վերջինիս վերապահվում էր միայն պաշտոնյային ժամանակավորապես գործից հեռացնելու իրավունքը, բայց նա պարտավոր էր համապատասխան նախարարին բացատրագիր ներկայացնել պաշտոնանկության պատճառի (կամ պատճառների) մասին։ Այսինքն՝ մեծ վեզիրն առաջադրում էր պայման, որը, ըստ էության, համարյա չեզոքացնում էր իր պարտականությունների կատարմանը չհամապատասխանող պաշտոնյային պաշտոնանկ անելու իրավունքը։ Մեծ վեզիրի առաջարկություններում չէր նախատեսված նաև, թե հարցն ինչպես է լուծվելու, եթե կառավարությունը մերժի վերատեսչի կողմից պաշտոնատար անձանց հեռացնելու շարժառիթները. արդյո՞ք այդ դեպքում կաբինետը կարող է պահանջել նրանց վերականգնումը իրենց աշխատանքում։ Դա, անշուշտ, կդառնար բազում բախումների պատճառ, որը կթուլացներ վերատեսչի դիրքերը։ Հենց դրան էլ ձգտում էր Բ. Դուուը։ Եթե դրան ավելացվեր այն, որ մեծ վեզիրը ընդհանրապես բաց էր թողել շատ կարևոր մի հարց՝ գլխավոր վերատեսուչն արդյո՞ք կարող է հեռացնել սուլթանի կողմից նշանակված վալիին և նահանգի մյուս բարձր պաշտոնյաներին, ապա պարզ էր դառնում, որ Բ. Դուուը գիտակցաբար էր անտեսում այդ կարևոր հարցը, որպեսզի անվերջ առձակատումների դուռ բացի և հնարավորինս ի չիք դարձնի գլխավոր վերատեսուչների դերն ու նշանակությունը։

¹ АВПРИ, փ. "Политархив", г. 1913, д. 3465, л. 135.

Այսպիսով, մեծ վեզիրն իր առաջարկով գլխավոր վերատեսուչին վերապահում էր այնպիսի դեր, որ միայն նա կարող էր բացահայտել պաշտոնյաների պարտականությունների թերությունները՝ նրանց ծառայությունից հեռացնելու կասկածելի իրավունքով հանդերձ: Վերատեսուչը ստիպված էր լինելու անընդհատ ջանքեր ծախսել պայքարելու կենտրոնական կառավարության անհարկի միջամտությունների դեմ՝ առանց որևէ դրական արդյունքի: Իսկ կառավարությունը, առանց նրա կարծիքը հաշվի առնելու, «նրա» սեկտորը կողոզեր նորանոր չինովնիկներով, որոնք նախորդներից ոչնչով լավը չէին լինի:

Այդ պայմաններում գլխավոր վերատեսուչը շատ շուտով կհասկանար իր աշխատանքի ողջ ապարդյունությունը: Իրեն հարգող եվրոպացի ոչ մի բարձր աստիճանավոր անկասկած չէր համաձայնի այդ խեղկատակությունը:

Վերջապես մեծ վեզիրի երեք գլխավոր առաջարկություններից վերջինը վերաբերում էր պաշտոնյաների խնդրին: Ամիսներ շարունակ այն տեսակետն էր խմորվել, որ հայկական նահանգներից գոնե երկուսում (Վան, Բիթլիս) պաշտոնները, ըստ կարելիության, կես առ կես պիտի բաժանվեն քրիստոնյաների ու մահմեդականների միջև, և որ կարևոր է, պաշտոնյաները պիտի կարգվեն գլխավոր վերատեսուչների կողմից, բայց ընտրվեն ու առաջադրվեն եվրոպական պետությունների կողմից, ծանոթ հայասերներից: Այդ հանգամանքը հույս էր ներշնչում, որ հայոց շահերը պաշտպանված կլինեն: Բայց ահա այժմ Բ. Դուռը փորձում էր միանգամայն նոր սկզբունքներ ներմուծել արդեն շրջանառվող փաստաթղթի մեջ, ուր չկար նույնիսկ որևէ հիշատակություն ժանդարմերիայի և ոստիկանություն, ինչպես նաև դրանցում քրիստոնյաների մասնակցություն մասին¹: Դա, անշուշտ, արվել էր հետագայում Հայաստանը «Թուրք քոմիտաջի» ոստիկաններով ու ժանդարմներով ողողվելու նպատակով, որոնք ցանկացած պահի կփոխարինվեին համիդիկներով:

Այսպիսով, մեծ վեզիրի նախագծի համաձայն՝ մարզի

ամբողջ վարչական, հասարակական և դատական կարգը մնում էր բացարձակապես անփոփոխ: Պաշտոնյաների բոլոր նշանակումները, ամբողջ վարչարարական գրազույթությունը, մարզին վերաբերող բոլոր կարգադրություններն ու հարցերի լուծման բոլոր թույլտվությունները կենտրոնանալու էին Կոստանդնուպոլսում՝ «Պաշտոնյաների մասին» օրենքի համաձայն: «Այդ օրենքն արդեն ինքնին գուտ թուրքական ստեղծագործություն էր, ուր ամեն ինչ նախատեսված էր բոլոր պաշտոնյաներին կենտրոնական կառավարությունից կախման մեջ պահելու համար»¹, - ասված էր Գուլկեիչի հայցազիր-հեռագրում:

Թուրքական գործող օրենսդրությունն այնպիսին էր, որ ոչ մահմեդականի, առավել ևս հայի համար գրեթե անհնար էր ծառայության ընդունվել, որքան էլ նա ուսյալ լիներ: «Պաշտոնյաների մասին» գործող օրենքի պահպանման դեպքում պետական ծառայությունում հավասարության մասին հարցը գործնականում անիրագործելի կլիներ: Այդ հարցում Բ. Դուռն պատճառաբանությունն այն էր, որ գործող պաշտոնյաների հեռացումը ծանր կանդաղադանա պետական բյուջեի վրա, քանի որ պաշտոնից հեռացված չինովնիկը, օրենքի համաձայն, շարունակելու է գանձարանից ստանալ իր դրույքավճարի կեսը, իսկ եթե դատարանը նրան արդարացնի, ապա նա կստանա իր աշխատավարձը լրիվ չափով, մինչև անցնի նոր պաշտոնի:

Վարչապետարանում Գուլկեիչի ցույց տված համառ դիմադրության շնորհիվ հաջողվում է անխաթար թողնել բարենորոգումների շրջանառության մեջ գտնվող նախագիծը: Պետերբուրգ հղած հունվարի 12 (25)-ի № 37 հեռագրով Գուլկեիչը հայտնում էր. «Ոստիկանության և ժանդարմերիայի պաշտոնները բաշխելու համար, թուրքերը համաձայնեցին, որ տեսուչները հավասարության սկզբունքը կիրառվի ոչ թե՛ “autant que possible”, այլ՝ “á mesure que les postes deviendraient vacants”» իմ առա-

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3465, л. 135.

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3465, л. 135.

* «Որքան հնարավոր է», այլ՝ «այն չափով, որքանով պաշտոններ կբացվեն»:

Չարկած բանաձևով: Մյուս պաշտոնների համար հավասարութան սկզբունքը պայմանավորվում է՝ “*autant que possible*”»¹:

Ինչպես տեսնում ենք, թուրքական կողմն ամեն ինչ անում էր հայկական բարենորոգումների ծրագիրը փակուղի մտցնելու համար: Մեծ վեզիրը ներկայացրել էր ոչ թե նախագիծ, այլ հականախագիծ, որի նպատակն էր ղեկավարների ձեռքից խլել սրանց նախագիծը, որը մինչ այդ համարվում էր միակը, որքան էլ որ թուրքերը դրան համառորեն դիմադրում էին: Գուլկեիչը Սազոնովին հաղորդում էր. «Թուրքերը մերժում են ղեկավարների մինչ այժմ մշակած բոլոր նախագծերը, նրանք նաև խլում են պայմաններ առաջադրելու նախաձեռնությունը: Իսկ դա նշանակում է, որ ղեկավարները ստիպված պիտի լինեն հարմարվել թուրքերի հավակնություններին»²: Այդ միտքն ապացուցելու համար Գուլկեիչն անցնում է մեծ վեզիրի առանձին առաջարկների գնահատմանը, որոնք, ըստ նրա խոսքերի, «ունակ են սպանելու բարեփոխումների իմաստն ու բովանդակությունը»³: Պատահական չէր Սազոնովի 1914 թ. հունվարի 14-ի հեռագիրը, որով նա Գուլկեիչից պահանջում էր «խուսափել տարածայնություններ ու ձգձգումներ առաջ բերելուց և Բ. Դոանը հայտնել, որ նշված երեք նահանգներում 2/3 և 1/3 սկզբունքից նահանջ չի լինելու»:

Նշենք, որ այս վերջին երկու հարցերը ոռոսական առաջարկով լուծելուն համամիտ էին Անգլիան և Ֆրանսիան: Ավելին, վերջինիս կառավարությունը ոռոսական առաջարկից ավելի հեռուն էր գնում:

Այսպես, Ֆրանսիայի արտգործնախարար Դումերգը Կ. Պոլսում գործերի իրենց հավատարմատարին 1914 թ. հունվարի 17-ին գրում էր. «... Ինձ թվում է, որ երկու կետերի վերաբերյալ, որոնց շուրջը Ռուսաստանն ու Թուրքիան անհամաձայն են, լավագույն լուծումը, որ պետք է որդեգրվի, կլինեն հետևյալը:

Մինչև մարդահամարը դավանանքային հավասար ներկայացուցչությունը պետք է տարածվի բոլոր վիլայեթների վրա: Արդարև, իր առևտրական գործունեությունը և իր կրթությունը հայկական տարրը հանդիսանում է երկրի բարգավաճման գլխավոր գործոնը՝ միանգամայն գերազանցելով թուրքական տարրը: Արդար է, որ այս դրությունը հաշվի մեջ մտնի և, ի հատուցում, հակակշռի հայերի թվական ցածր մակարդակը:

Թուրքիայում քրիստոնյա կրոնական համայնքները վարչական օրգանիզմներ են, ունեն ինքնուրույն գոյություն և վայելում են հատուկ արտոնություններ: Որպես այդպիսիք՝ օսմանյան կառավարությունից նրանք կարող են իրավունք ստանալ տեսուչների հսկողությունը դպրոցների պահպանման համար իրենց կրոնակիցների վրա հարկեր դնելու: Այդ հարկերը կհանվեն նահանգային խորհուրդների քվեարկած հարկերից, որոնց արդյունքն այնժամ կհատկացվեր բացառապես մահմեդական դպրոցների կարիքներին»⁴:

Սազոնովը գտնում էր, որ եթե թուրքերը ձեռք չտան նախագծում տեղ գտած երեք նահանգներում 2/3 և 1/3 սկզբունքին, ապա ուրիշ մեկ-երկու հարցերում կարելի է նրանց որոշ զիջումներ անել՝ հիմք ընդունելով մեծ վեզիրի նախագիծը և փորձելով բարելավել նրանց առաջարկությունները*։ Հետևում է Գուլկեիչի գաղտնի հեռագիրը, ուր ասվում էր. «Եթե հիմք ընդունվի մեծ վեզիրի նախագիծը, և ձգտենք բարելավել այն, ապա հավանորեն բան դուրս չի գա: Չէ՞ որ, եթե նրա մեջ մտցնենք այն շտկումները, որոնք հնարավորություն կտային փրկել ոռոսական նախագծի սկզբունքները, ապա մեծ վեզիրի

¹ «Հայաստանը միջազգային դիվանագիտություն ...», էջ 319-320:

* 1914 թ. հունվարի սկզբին Կ. Պոլսից հեռագրել էին Թիֆլիս, թե հայկական հարցի վերաբերյալ գլխավոր հապաղումը այն է, որ Ռուսաստանը պահանջում է գավառական խորհուրդների անդամների կեսը նշանակել հայերից, իսկ Բ. Դոանը առարկում է՝ պնդելով, որ հայերը Արևելյան Անատոլիայում բնակչության ընդհանուր թվի 40 տոկոսն են կազմում, և որ հայերին արտոնություններ տալն էլ ավելի կգրգռի քրդերին (տե՛ս «Մշակ» № 2, 4 հունվարի 1914 թ.):

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1913, д. 3465, л. 140.

² Նույն տեղում, л. 133.

³ Նույն տեղում:

նախագծից ոչինչ չի մնա: Այդ դեպքում ինչո՞ւ է պետք այն հիմք ընդունել: Իսկ եթե ենթադրվում է միայն չտկել մեծ վեզիրի նախագիծը, ապա անչուշտ անհնար կլինի նրա մեջ մտցնել ռուսական նախագծի կարևորագույն սկզբունքները, և այդ դեպքում վերջինից հետք անգամ չի մնա: Կտապավի ամբողջ աշխատանքը, որը ծախսվել է չուրջ մեկ տարվա ընթացքում»¹:

Չնայած այդ համոզմունքին՝ Գուլկեիչը, սակայն, հայկական բարենորոգումների հարցի նախաձեռնությունը ռուսական ձեռքերում պահելու համար Սայիդ Հիլմի հետ հունվարի 16-ին ունեցած հանդիպման ժամանակ ստիպված համաձայնում է Սվազի, Նարբերդի և Դիարբեքի վիլայեթներում ընդհանուր խորհուրդների անդամներին համամասնական սկզբունքով ընտրելու առաջարկին:

Թույլ տված վրիպումը ինչ-որ չափով սրբազրելու համար ռուսական դիվանագիտությունից պահանջվեցին նոր ջանքեր: Նա նոր շփումներ սկսեց տերությունների հետ: Հունվարի 20-ին Գուլկեիչը տեղեկացնում է Սազոնովին, որ «մեծ պետությունների ներկայացուցիչներից մի քանիսը դժբախտաբար չեն համակրում մեր վերջին պնդումներին: Նրանք գտնում են, որ տեղերի 1/3-ի ապահովումը հայերի համար երեք վիլայեթներում երկրորդական հարց է»²: Պետությունները նաև պաշտպանում էին էրզրումի վիլայեթում ընդհանուր խորհրդի անդամների թուրքական համամասնական սկզբունքը:

Կ. Պոլսում ֆրանսիական գործերի հավատարմատարն արտգործնախարար Դումերգին գրում էր. «Եռյակ դաշինքի ներկայացուցիչները բացեիբաց քննադատում են Պետերբուրգի կառավարության անդիջողականությունը ... նրանք հայտարարում են, որ տերությունները կարող են իրավացիորեն շարունակել խոսակցություններն առանց Ռուսաստանի ... Անգլիական ղեկավարը՝ ավելի վերապահ լինելով հանդերձ, պակաս չի քննադատում ռուսական կեցվածքը ... Մեծ վեզիրն ավելի հեռու չի

զնա այժմյան դիջումներից, որ մինչև անգամ հայերը գտնում են բավարար, իսկ Ռուսաստանն իրեն ռիսկի է ենթարկում ...»¹:

Նախքան Կ. Պոլսից մեկնելը դեսպան Միխայիլ Գիրսը Պետերբուրգ էր ուղարկել մի ղեկուցագիր, ուր մասնավորապես ասված էր, որ այսպես թե այնպես անհրաժեշտ է շտապ ռազմական պատրաստություններ տեսնել, որովհետև դեպքերը Մերձավոր Արևելքում այսօր-վաղը կարող են Ռուսաստանին մղել պատերազմի: «Հարցերից մեկը, որ մեզ կարող է հարկադրել վճռական գործողությունների, դա հայկական զանգվածային կոտորածի պարագան է: Այդ դեպքում մենք պետք է դիմենք արագ և վճռական գործողությունների»²: Չպետք է մոռանալ, գրում էր նա, որ թուրքերի ռազմական և ռազմածովյան ուժերը զնալով կաճեն: Գիրսի ղեկուցագրից երևում էր, որ նա կողմնակից էր, որ ռուսական զորքերը ափ իջնեն և զրավեն Տրապիզոնը, ապա առաջ շարժվեն Բայազետի ուղղությամբ³:

Չի բացառվում, որ հենց Գիրսի այդ ղեկուցագրի հիման վրա էր, որ Սերգեյ Սազոնովի նախագահությամբ 1914 թ. հունվարի 21-ին Պետերբուրգում հրավիրվել էր միջազգային դրուժյանը նվիրված հատուկ խորհրդակցություն՝ պետական և ռազմական մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությամբ: Բացման իր խոսքում Սազոնովը մատնանշել էր, որ եթե տերություններից որևէ մեկը նորից փորձ անի նեղուցների նկատմամբ հաստատելու իր գերիշխանությունը, ապա Ռուսաստանը հարկադրված կլինի ռազմական ուժով անհապաղ զրավել Պոլսը: Ելույթ ունեցողները մանրազնին քննության էին ենթարկում ռազմական նախապատրաստությունների, պատերազմի հավանական ընթացքի և հետևանքների, ծովային հետևակը ցամաք հանելու, փոխադրամիջոցների, սեծովյան նավատորմի կարելությունների, կովկասյան լեռնաշղթայով անցնելիք երկաթուղու նոր գծի կառուցումն արագացնելու և այլ հարցեր: Իր ելույթում

¹ АВПРИ, ф. "Толмачус", г. 1913, д. 3465, л. 134.

² «Բարենորոգումները Հայաստանում», էջ 99-100:

¹ «Հայաստանը միջազգային դիվանագիտության...», էջ 356:

² Վահան Փափազեան, Իմ յուշերը, էջ 260-261:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 261:

իշխան Տրուբեցկոյը շեշտել էր, որ եթե թուրքահայերը չարժու՜ններ սկսեն, այդ դեպքում անխուսափելի կդառնա ռուսական զորքերի կենտրոնացումը սահմանի վրա: Իսկ հայկական շարժումների հավանականությունը վաղուց արդեն մտեցել էր զրոյական սահմանագծին. հայերը լուռ ու մունջ սպասում էին իրենց դրուձյան բարվոքմանը:

Բարենորոգումների ծրագրի գլխավոր կետերի շուրջ համաձայնությունն ավարտելով՝ մյուս բոլոր կետերի շուրջ բանակցությունները շարունակվում էին մի կողմից Կ. Պոլսում հավատարմագրված ռուսական ու գերմանական դեսպանների և հայոց պատրիարքարանի, մյուս կողմից՝ այս երեքի և Բ. Դոան միջև:

«ԱՅԼԵՎՍ ՈՉ ՄԻ ԶԻՋՈՒՄ»

Թուրքերն այն կարծիքին էին, որ եթե մեծ վեզիրին ու Թալեաթին չի հաջողվել արմատական փոփոխություններ մտցնել Հայաստանի բարենորոգումների ռուս-գերմանական նոյեմբերյան նախագծի բովանդակության մեջ, ապա դա նշանակում է, որ թուրքական դիվանագիտությունը կրել է հերթական պարտությունը: Ելնելով այդ կանխավարկածից՝ Բ. Դուռը հայտարարեց, թե ինքն այլևս «ոչ մի զիջում» չի անելու:

1914 թ. հունվարյան հետագա մի քանի օրերին շարունակվում էր գաղտնի և հույժ գաղտնի հեռագրերի լարված փոխանակում Կ. Պոլսի ռուսական դեսպանատան և Պետերբուրգի, վերջինիս և ռուսական դիվանագիտական ներկայացուցչությունների հետ Փարիզում, Բեռլինում և Լոնդոնում*:

Այս ժամանակահատվածում ռուսական և հայկական կողմերի համար շատ կարևոր էր նկատվում հետևյալ մարտավա-

* Միայն 1914 թ. հունվարի 10-24-ն ընկած ժամանակահատվածում ռուսաց արտգործնախարարության և Կ. Պոլսի ռուսաց դեսպանության միջև փոխանակված հեռագրերի համարների համադրումը ցույց է տալիս դրանց թիվը՝ շուրջ 30:

րուձյունը. եթե հետայսու չի հաջողվելու նոր զիջումներ ստանալ թուրքական կողմից, ապա գոնե կարողանալ պահպանել արդեն ձեռք բերածը:

Փարիզում գտնվող Մ. Ն. Գիրսի և Պողոս Նուբար փաշայի հանդիպման ընթացքում բազմակողմանի քննություն է անվում հայկական բարեփոխումների շուրջ ստեղծված վիճակը, և պայմանավորվածություն է ձեռք բերվում հետագա համատեղ անելիքների շուրջ:

Այդ հանդիպումից անմիջապես հետո Փարիզում ռուսաց դեսպան Իզվոլսկին հունվարի 15 (28)-ին հետևյալ գաղտնի հեռագիրն է հղում Պետերբուրգ. «Մ. Ն. Գիրսի հետ հանդիպելուն պես Պողոս Նուբար փաշան նամակով և հեռագրով դիմել է [Կ. Պոլսի հայոց] պատրիարքություն՝ հույժ պնդելով բարեփոխումներով բավարարվելու անհրաժեշտության վրա, որոնց համաձայնել է Բ. Դուռը: Այդ համաձայնությունը ձեռք է բերվել ինչպես Հայկական գործերով Տերությունների միջև կայացած համաձայնության, այնպես էլ հերթի մեջ դրված ֆինանսական հարցերի շնորհիվ, որոնք Ռուսաստանի ձեռքում հույժ հզոր միջոց դարձան Բ. Դոան վրա ներգործելու համար: Բայց թե՛ այն և թե՛ այս հանգամանքները կարող են փոխվել: Եվ Նուբարը նախազգուշացնում է հայերին, որ այդ դեպքում իրենք կարող են զրկվել այն շատ էական բարեփոխումներից, որոնք առաջարկված են իրենց: Մ. Ն.-ն՝ լիովին համաձայն է այս փաստարկներին: Նա իր կողմից խիստ ցանկալի է համարում, որ հարկավոր է հենց հիմա համաձայնել թուրքերի առաջարկություններին, նրա կարծիքով, հետագա բանակցությունների հաջողության շանսերը փոքր են»¹:

Գիրսի և Պ. Նուբարի համատեղ եզրակացությունը կուստանդնուպոլսից անմիջապես միանում է Գուլկեիչը: Ս. Սադոնովին ուղղած հունվարի 16 (29)-ի գաղտնի հեռագրով նա հայտնում է, որ մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշայի և Թալեաթի

* Գիրսը:

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1914, д. 3472, л. 40.

հետ հունվարի 12-ի իր հանդիպումից հետո անցած երեք օրերին ինքը չի այցելել Բ. Դուռ, և դա, հավանաբար, տհաճ տպավորություն է թողել կաբինետի վրա: Դրա ապացույցն այն էր եղել, որ մեծ վեզիրն իր չըջապատում սկսել էր զանգատվել ոուսական դիվանագետից՝ դժգոհելով, որ նա չի գալիս կրկին հանդիպելու իր հետ: Նա մտահոգ էր եղել, որ տերությունները կարող են պատժամիջոցների դիմել և կոչտացնել իրենց պահանջները Հայաստանի բարեփոխումների նախագծում, ուստի ծրագրում է նոր հանդիպում Գուլկեիչի հետ: Վերջինս վերը նշված իր հեռագրով Սազոնովին տեղեկացնում էր. «Այսօր մեծ վեզիրն ինձ հրավիրեց իր մոտ: Զրույցի սկզբին նա պնդեց նախորդ հանդիպման ժամանակ հայկական բարեփոխումների նախագծում փոփոխություններ կատարելու իր տեսակետի վրա, որն իբր ունի խիստ սկզբունքային նշանակություն: Այդուհանդերձ, երկարատև առարկություններից հետո հաջողվեց նրան բեկել ընդունելու իմ առաջարկած «ադ-ոեֆերենդում» տեքստը, որին և ժամեր անց հավանություն տվեց նախարարների խորհրդի նախօրոք գումարված նիստը՝ հետևյալ խմբագրությամբ. «Սվազի, Ուարբերդի, Դիարբեքիի վիլայեթներում ընդհանուր խորհուրդները նախատեսված էր ընտրել համամասնության սկզբունքի հիման վրա: Այս առումով մինչ մարդահամարի անցկացումը մահմեդական ընտրողները կգերակշռեն ընտրացուցակներում, իսկ ոչ մահմեդականների թիվը որոշվելու է ըստ այն ընտրացուցակների, որոնք ներկայացնելու են իրենց համայնքները: Բայց եթե նյութական դժվարություններն այդ ընտրական համակարգը դժվար կիրառելի դարձնեն, ապա այդ դեպքում ընդհանուր վերատեսուչը իրավունք է ստանում, որպես, զիջում առաջարկել ընդհանուր խորհուրդների ստեղծում երեք վերոհիշյալ վիլայեթներում, որոնք ավելի համապատասխան լինեն այդ համայնքների ներկա պահանջներին ու պայմաններին»¹:

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1914, д. 3465, л. 141: (Սույն մեջբերումը թարգմանված է ֆրանսերեն օրինակից):

Հեռագրի վերջնամասում Գուլկեիչը ավելացրել էր. «Այս փոխզիջողությունը Բ. Դուռն արած ծայրագույն զիջումն է, որից այն կողմ նա այլևս չի գնա: Այս տեքստը, չվնասելով թուրքերի ինքնասիրությունը, տերությունների կողմից նշանակվելիք [գլխավոր] վերատեսուչներին հնարավորություն է տալիս վերոհիշյալ վիլայեթներում հայերի համար ապահովել արդար ներկայացուցչություն»:² Գուլկեիչը հույս էր հայտնում, որ հայոց պատրիարքարանը այսուհետև կենթարկվի այն որոշմանը, որը կհաճի ընդունել կայսերական կառավարությունը, միայն թե աղերսում է հնարավորինս շուտ կնքել համաձայնագիրը: «Այդ իսկ պատճառով թույլ եմ տալիս ինձ... միջնորդել Ձերդ Բարձր Գերագանցությունը, որպեսզի խուսափենք իմ № 45 հեռագրում հիշատակված զարգացումներից և ոուսաց ձեռքերում պահենք հայկական բարեփոխումների հարցի տնօրինությունը: Եթե Ձերդ Բարձր Գերագանցություն համաձայնեք ինձ հետ, խնդրում եմ շտապ լիազորել ինձ հենց վաղը Սայիդ Հալիմ փաշայի հետ ստորագրել «պարաֆե»-ն՝ տերություններին հասցեագրված թուրքական նոտայի նախագիծը»¹:

Նույն օրը՝ հունվարի 16-ին, Գուլկեիչը երկրորդ հեռագիրն է հղում, որով Սազոնովին տեղեկացնում է, որ դիվանագիտական մի աղբյուրից իրեն վստահել և հայտնել են, թե Բ. Դուռը մտադիր է մի փորձ ևս անել՝ տապալելու ոուս-գերմանական նոյեմբերյան համաձայնության այն մասը, որը վերաբերում է վիլայեթական խորհուրդներին, և այդ նպատակով դիմել է տերությունների միջնորդությանը: Բայց, նշում էր Գուլկեիչը, բացաված է, որ ներկայումս տերությունների ունեցած ընդհանուր տրամադրությունների պայմաններում թուրքերին հաջողվի իրականացնել իրենց ցանկացածը «ոչ մեր օգտին»²:

Հաջողության չհասնելով վիլայեթական խորհուրդների հարցում՝ Բ. Դուռը մի վերջին փորձ էլ կատարում է վերաքննելու բարեփոխումների նոյեմբերյան նախագծի երկու սեկտոր-

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1914, д. 3465, л. 141-141 об.

² Նույն տեղում, л. 142:

ներում պաշտոնների բաշխման մասին դրույթը: Տերութունների Կ. Պոլսի ղեկավարներն այս անգամ ընդառաջ են գնում թուրքական կողմին և խնդրում են ֆրանսիական ղեկավարին՝ Փարիզի հետ խորհրդակցելով՝ նշված դրույթը ներկայացնել նոր խմբագրությամբ, որը և կատարվում է հետևյալ տեսքով.

«Եթե երկու սեկտորների վերատեսուչները չառարկեն, ապա ոստիկանության և ժանդարմերիայի թափուր տեղերը լրացնելիս պետք է առաջնորդվել մահմեդականների և ոչ մահմեդականների հավասար իրավունքի սկզբունքով:

Հավասարության նույն սկզբունքը կիրառվում է 2 սեկտորների մնացյալ բոլոր հասարակական գործառույթների վերաբաշխման ժամանակ»¹:

Հավատարմատար Գուլկեիչը Պետերբուրգ ուղարկած (պատճենը՝ Փարիզ) հունվարի 19-ի (փետրվարի 1-ի) հեռագրով հաղորդում էր. «Ի խուսափումն թյուրիմացությունների՝ պարտքս եմ համարում հաղորդել երկու սեկտորներում պաշտոնների բաշխման մասին կայացած համաձայնության վերջնական խմբագրության ֆրանսիական տեքստը:

Այս տեքստը միանգամայն բավարարում է Հայոց պատրիարքարանին»²:

Հավանաբար անմիջապես հետևել էր Սազոնովի պատասխան հեռագիրը, որով նա դժգոհել էր, թե մեծ վեցիրի առջև գործերի հավատարմատարը չի բարձրացրել նաև շատ կարևոր՝ վիլայեթական խորհուրդների հարցը:

Հունվարի 20-ի (փետրվարի 2-ի) հեռագրով (պատճենը՝ Փարիզ) Գուլկեիչը Սազոնովին տեղեկացնում էր, որ ինքը մեծ վեցիրի հետ հանդիպման ժամանակ նաև հայտարարել է, թե լիազորված է նախատորագրել համաձայնագիրը միայն այն պայմանով, որ էրզրումի վիլայեթի խորհրդում անհապաղ մտցվի հավասար ներկայացուցչություն, ինչպես արված է Վանի

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1914, д. 3465, л. 142. (Պարբերությունը թարգմանված է նշված փաստաթղթի ֆրանսերեն հատվածից):

² Նույն տեղում, л. 143:

և Բիթլիսի վիլայեթներում, իսկ Սարբերդի, Դիարբեքիրի և Սվազի վիլայեթներում հայերի համար անհապաղ ապահովվի տեղերի մեկ երրորդը¹:

Մեծ վեցիրը, որը վերոհիշյալի մասին արդեն տեղեկացված էր Պետերբուրգում օսմանյան ղեկավարության գործերի հավատարմատարի հեռագրով, Գուլկեիչի պահանջից հետո ընկել էր ծայրահեղ բորբոքված վիճակում էր²: Նա վճռականապես մերժում է որևէ հետագա զիջումների հնարավորությունը՝ պատճառաբանելով, որ իր կառավարությունն ի վիճակի չէ պառլամենտում անցկացնելու նախագիծը, եթե դրա տեքստում կատարվի որևէ նոր փոփոխություն: «Այս պատճառով, - իր հեռագրում շարունակում էր Գուլկեիչը, - նա թախանձագին խնդրում է Ձերդ Բարձր Գերազանցությունը՝ նախագիծն ընդունել նրա ներկայիս խմբագրությամբ և չեչտում է, թե բարեփոխումներ մտցնելու գործում հետագա հապաղումն անխուսափելիորեն առաջ է բերելու մյուս մեծ տերությունների տհաճությունը»³:

Չնայած Բ. Դոան վճռական հայտարարությունը, թե վիլայեթական խորհուրդների և պաշտոնյաների հարցերում ինքը այլևս ոչ մի զիջում չի անելու, ուսական դիվանագիտությունը, սակայն շարունակում էր վերջին ջանքերը գործադրել հայկական հարցի նախագծում ավելի նպաստավոր ձևակերպումներ մտցնելու համար:

Արտգործնախարարն իր հեռագրով նաև մտավախություն էր հայտնել Բալկաններից դեպի Հայաստան մուհաջիրների հսկայական հոսքի առթիվ, որը կարող էր արագորեն փոխել նույնիսկ Վանի և Բիթլիսի վիլայեթների ժողովրդագրական պատկերը: Այդ կապակցությամբ Գուլկեիչն իր № 62 հեռագրով հաղորդում էր. «Ձեր այն մտավախությունների առթիվ, որոնք կապված են Հայաստանում վերաբնակեցման միջոցով մահմեդական մեծամասնություն ստեղծելու հնարավորության հետ,

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1914, д. 3465, л. 143-144.

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, л. 44:

Թույլ կտամ իմ կողմից նշել, որ այդ վտանգը կարելի է հեռացնել տեսուչների հրահանգների մեջ, որոնք, ըստ համաձայնությունների, պետք է մշակվեն նրանց մասնակցությունը՝ ուսսական *avant-projet*-ի երկու հոդվածներ «մտցնելու միջոցով»... Առհասարակ, կարելի է հուսալ, որ այդ հրահանգների մեջ մեզ կհաջողվի մտցնել մի շարք կետեր, որոնք ունակ կլինեն զարգացնել ձեռք բերված համաձայնությունը հայերի համար բարենպաստ առումով:

Սպասում եմ Ձեր հրահանգներին հեռագրով¹:

Նույն օրը՝ հունվարի 20-ին (փետրվարի 2-ին), Գուլկեիչն իր երկրորդ (№ 63) գաղտնի հեռագիրն է հղում արտգործնախարարին՝ ծանրանալով միայն Հայաստանում մուհաջիրների վերաբնակեցման և մահմեդականների թվի ավելացման հարցի վրա: Նա համոզված կրկին շեշտում է, որ այդ վտանգը կվերացվի վերատեսուչների միջոցով, որոնք, ըստ պայմանավորվածության, մշակելու են հրահանգներ, որոնց թվում կընդգրկվեն ուսսական *avant projet**-ի երկու հոդվածները, *article 19 – il ne devra pas etre installé de mouhadjires sur le territoire des deux secteurs,- et article 14 – seuls les habitants sédentaires jouiront des droits d’élection et d’eligibilité: «Առհասարակ, կարելի է հուսալ,- շեշտում էր Գուլկեիչը,- որ այս հրահանգների մեջ կհաջողվի մտցնել մի շարք կետեր, որոնք կկարողանան զարգացնել ձեռք բերված համաձայնությունը հայերի համար բարենպաստ իմաստով: Սպասում եմ հեռագրով հրահանգների»²:*

Գուլկեիչի այս վերջին երկու հեռագրերը ցույց են տալիս, որ ուսսական դիվանագիտության մեջ հաստատ համոզմունք կար, որ միգրացիոն նշված գործընթացը կկարգավորեն վերատեսուչները՝ մուհաջիրների հոսքերն ուղղելով դեպի զուտ թուրքաբնակ ու քրդաբնակ վիլայեթներ:

Վերջապես, նույն օրվա՝ հունվարի 20-ի (փետրվարի 2-ի)

ուչ երեկոյան, հետևում է Սազոնովի նոր հեռագիրը (№ 146)*, որին անմիջապես պատասխանում է Գուլկեիչը իր № 64 սույն հեռագրով. «Հայոց պատրիարքը խնդրանքներով դիմում է ինձ արագորեն ամրապնդելու թուրքերի հետ [արդեն ձեռք բերած] համաձայնությունը, որն իր կողմից ընդունվում է որպես, թեպետև իր նախապես առաջադրված ցանկությունների, ոչ լրիվ իրագործում, իբրև դրանց հասնելու առաջին և լուրջ քայլ:

Բոլոր մեծ տերությունների ներկայացուցիչները, ցավոք, անկարեկից են մեր հետագայում կատարվելիք այն պնդումների հանդեպ, որոնք, իրենց տեսակետից, երկրորդական են, քանի որ երեք վիլայեթներում տեղերի մեկ երրորդը, միևնույն է, չի ապահովում դրանից մեծ թիվ:

Այդ պատճառով ես դեռևս չեմ օգտվել Ձերդ բարձր գերազանցության կողմից հարմար առիթով մեր նախնական նախագծին (ընդգծումը մերն է:- Հ. Ս.) մեր կողմից վերադառնալու հնարավորությունից**... Եթե, սակայն, կայսերական կառավար-

* Մեզ չհաջողվեց արխիվներում գտնել արտգործնախարարի նշված հեռագիրը, բայց այդ հեռագրին Գուլկեիչի պատասխանից կարելի է եզրակացնել, թե այնտեղ ինչի մասին է խոսք եղել:

** Սազոնովի սույն հեռագրի տեքստի ընդգծված բառակապակցությունից («մեր նախնական նախագծին») դժվար է կանխատեսել, թե դա Հայաստանի բարենորոգումների ո՞ր համաձայնագրի նախագծին էր վերաբերում. Ա. Մանդելշտամի կազմած ուսսական նախագծի³ (հաղիվ թե), թե՞ ուսս-գերմանական նախագծի վիլայեթական խորհուրդներին վերաբերող հատվածներին: Եթե խոսքը հայերի բոլոր ցանկություններին հարի Մանդելշտամի նախագծի մասին էր, ընթերցողի հիշողության մեջ վերականգնեք դրա բովանդակության հիմնական դրվագները. կազմել հայկական մեկ տարածքային միավոր, տերությունների համաձայնությունը սուլթանի կողմից նշանակել գլխավոր նահանգապետ և նրան օժտել լայն լիազորություններով, հիմնել ներկայացուցչական ժողով՝ օժտված լայն իրավասություններով, որում մահմեդականներին և ոչ մահմեդականներին տրամադրվում էր հավասար թիվով տեղեր, հավասարության նույն սկզբունքի կիրառում բոլոր պաշտոնների բաշխման ժամանակ՝ ներառյալ ոստիկանությունը և ժանդարմերին, ապահովել լեզուների իրավահավասարությունը, վերացնել քրդական հեծելազորը՝ «համիդիե», երկրամասի բոլոր ազգություններին տրամադրել դպրոցական դասավանդման ազատություն և դպրոցական կարիքների համար ինքնահարկման իրավունք, վերադարձնել հայերից ապօրինաբար խլված հողերը:

¹ АВПРИ, ф. «Толмачус», г. 1914, д. 3465, л. 44.

* Նախնական նախագիծ:

² АВПРИ, ф. «Толмачус», г. 1914, д. 3472, л. 73.

րությունը (Բ. Դուռը:- Հ. Ս.) որոշի դադարեցնել բանակցությունները, ապա, անշուշտ, մեզ համար ավելի շահավետ կլինի դա՝ առաջ քաշելով նախնական նախագիծն իր ավելի լայն պահանջներով (ընդգծումը մերն է:- Հ. Ս.), քան գլխավոր խորհուրդների (վիլայեթական խորհուրդների:- Հ. Ս.) կազմի մասին սոսկ մեկ հարցի շուրջ ընթացող տարաձայնությունների առիթով»¹:

Ջարմանալի է, բայց փաստ այդ բախտորոշ պահին Սազոնովի ցուցաբերած անսպասելի արմատական վճռականությունը: Հեռագիրը մի հուզիչ փաստաթուղթ էր այն մասին, թե ոուսական կառավարությունն ինչպիսի հետևողականությամբ էր հետամուտ լինում Հայաստանի բարեկարգման իր ստանձնած պարտավորությունների կատարմանը:

Դրա հետ միասին նշենք, որ Հայաստանի բարենորոգումների հարցի շուրջ ավելի քան մեկ տարի տևած դիվանագիտական պայքարն այն աստիճան էր հոգնեցրել բանակցող կողմերին, որ բոլորը ցանկանում էին որքան հնարավոր է շուտ գալ մի որոշակի համաձայնություն:

ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՌՈՒՍ-ԹՈՒՐԳԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄԸ

Տարակույս չկար, որ եթե Բ. Դուռը որոշեր ընդհատել բանակցությունները, մյուս բոլոր 5 տերությունները պաշտպանելու էին այդ քայլը: Ուստի ոուսական դիվանագիտությունը ստիպված է լինում ընդունել երեք վիլայեթների ընդհանուր խորհուրդներում նրա անդամների համամասնական սկզբունքը՝ միայն պահանջելով, որ վիլայեթի կոմիտեի մեջ փոքրամասնությունը միշտ ունենա մի ներկայացուցիչ: Բ. Դուռը մերժում է այս առաջարկը ևս: Գուլկեիչի հետ հունվարի 23-ին հանդիպման ժամանակ Սայիդ Հալիմը նրան խնդրում է իր անունից թախան-

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1914, д. 3472, л. 73.

ձել Սազոնովին «չպնդել ուրիշ կետերի վրա», քանի որ որևէ նոր առաջարկություն ընդունելու համար ինքն «անզոր է համոզելու կարիներտի անդամներին»:

Նույն օրը Սազոնովին ուղարկած հեռագրով Գուլկեիչը տեղեկացնում է, որ հանդիպման ժամանակ մեծ վեցիրն «ընդգծեց Թուրքիայի մեզ հետ հաշտ ապրելու ցանկությունը և խնդրեց գնահատել նրա արած այն զիջումները, որոնք ծանր են թուրքական ինքնասիրության համար»²:

Ռուսական կառավարությունը որոշում է բավարարվել թուրքական կողմի արած զիջումներով և ձեռքից բաց չթողնել բարենպաստ պահը: Պետերբուրգը վերջնականապես համոզվել էր, որ բանակցությունների հետագա ձգձգումը միայն վնաս կրերի գործին հատկապես երկու հանգամանքով. 1) Իթիթհադի ներսում սրվել էր իշխանության համար պայքարը, և բացառված չէր, որ նրա ռազմաշունչ, ամենածայրահեղ գերմանոֆիլ թևը՝ էնվերի գլխավորությամբ, անցներ պետության գլուխ և ընդհանրապես մի կողմ նետեր համաձայնագրի նախագիծը, 2) Այլևս անիմաստ էր ակնկալել, թե դաշնակիցներ Անգլիան և Ֆրանսիան հետագայում կձգտեն համաձայնագրի տեքստում հայերի օգտին որևէ փոփոխություն կատարել, 3) Ուստի հասել է ժամը թուրքերին պարտադրելու բարենորոգումների նախագիծը³:

4. Պոլսում ֆրանսիական գործերի հավատարմատարն իր վերադասին հաղորդում էր. «Դուան և ոուսական դեսպանություն միջև տեղի ունեցող բանակցությունները, երևում է, հաջողվելու վրա են»⁴: Հունվարի 25-ին Սազոնովը հեռագրում է Գուլկեիչին. «Դուք լիազորված եք ստորագրելու համաձայնագիրը»⁴:

Դեռ համաձայնագիրը ստորագրելուց առաջ բանակցող

¹ «Բարենորոգումները Հայաստանում», էջ 100:

² ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 21, թ. 7:

³ «Հայաստանը միջազգային դիվանագիտության ...», էջ 338:

⁴ «Բարենորոգումները Հայաստանում», էջ 101:

կողմերի միջև պայմանավորվածություն էր ձեռք բերվել, որ 1) բարենորոգումների ծրագրի տեքստը հրատարակվելու է ընդհանուր վերատեսուչների նշանակմանը վերաբերող կայսերական իրադրության հետ, 2) Բ. Դուռը պետություններին անմիջապես հաղորդելու է համաձայնագրի ստորագրման մասին:

1914 թ. հունվարի 26-ին (փետրվարի 8-ին) Կ. Պոլսում ռուսական կայսերական հավատարմատար Կոնստանդին Գուլկևիչը և Օսմանյան կայսրություն մեծ վեզիր ու արտաքին գործերի նախարար Սայիդ Հալիմ փաշան ստորագրում են հայկական բարենորոգումների համաձայնագիրը և այն վավերացում իրենց կնիքներով¹: Նույն օրը նրանք համաձայնագրի բնագիրը (Փրանսերեն)² որպես պաշտոնական վավերագիր, հանձնեցին պետությունների՝ Կ. Պոլսի ներկայացուցիչներին, որոնք նույնպես իրենց ստորագրությունները դրեցին փաստաթղթի տակ³:

Համաձայնագիրը ստորագրելուց ժամեր անց Գուլկևիչը հետևյալ հեռագիրն է հղում արտգործնախարար Ս. Սազոնովին. «Մեծ վեզիրը և ես այսօր ստորագրեցինք հայկական բարենորոգումների առթիվ կայացած մեր համաձայնությունը, որի բնագիրն ուղարկում եմ վաղը: Սայիդ Հալիմը հույս հայտնեց, որ կնքված պայմանը կնպաստի երկու պետությունների հարաբերությունների բարելավմանը, և խնդրեց հայտնել իր խորին երախտիքն այն խաղաղասիրական վերաբերմունքի համար, որ ցույց տվեց Ձերդ բարձր գերազանցությունը»²:

Ռուսաստանի արտգործնախարար Սազոնովը հունվարի

¹ Տե՛ս «Сборник договоров России с другими государствами. 1856-1917», М., 1952, էջ 421-424:

² 1914 թ. հունվարի 26-ի (փետրվարի 8-ի) ռուս-թուրքական լրիվ տեքստն առաջին անգամ պաշտոնապես տպագրվել է «Оранжевая книга»-ում, ապա «Новый государственный строй Армении» վերնագրով զետեղվել է «Дипломатический архив»-ի հատոր VIII-ում (Петроград, книгоиздательство «Освобождение», 1915)՝ «Будущее устройство Армении по официальным дипломатическим документам Оранжевой книги, Трактующей реформы Армении» վերտառությունում, էջ 75-79:

³ «Բարենորոգումները Հայաստանում», էջ 101:

28-ին Կ. Պոլսում հավատարմատար Կոնստանդին Գուլկևիչին հեռագրում էր. «Ձեր հունվարի 26-ի հեռագիրը ստացված է: Մենք բավականություն ենք ընդունեցինք կայացած համաձայնություն լուրը և կցանկանայինք, որ այդ համաձայնությունը ծառայեր որպես հիմք մեր և Թուրքիայի բարեկամական հարաբերությունների զարգացման համար:

Այդ մասին կարող եք հայտնել մեծ վեզիրին»¹:

Ինչո՞ւ այդ պահին թուրքական կառավարությունը հանկարծ որոշեց Ռուսաստանի հետ ստորագրել Հայաստանի բարենորոգումների ծրագիրը: Տվյալ դեպքում դրան դրդել էր երկու հիմնական պատճառ: Առաջինը Բ. Դուռն ավրա Եվրոպայի, հատկապես Ֆրանսիայի ֆինանսական ճնշումն էր: Փարիզը կտրականապես մերժել էր Թուրքական կառավարությունը նոր փոխառություն տալ, որի հետևանքով վերջինս ընկել էր այնպիսի անելանելի վիճակի մեջ, որ գլուխ ծռելուց բացի՝ ուրիշ ելք չէր տեսնում: Երկրորդ պատճառը էգեյան կղզիների խնդրի շուրջ Հունաստանի ու Թուրքիայի հարաբերությունների կտրուկ լարումն էր, ինչպես նաև՝ արաբական հակաթուրքական շարժումների աշխուժացումը: Այդ երկու խնդիրները թուրքական կառավարությունը ստիպել էին համակերպվել նոր իրողություններին և հանձին Հայկական հարցի՝ չստեղծել ուրիշ նոր թնջուկներ:

Հունվարի 26-ի ակտը մեծ նշանակություն ունեցավ Ռուսաստանի միջազգային հեղինակություն ու դիրքի համար: Փաստաթուղթը ստորագրել էր մեծ վեզիրը, իսկ հակառակ կողմից՝ տերություններից միայն Ռուսաստանի ներկայացուցիչը: Դրանով պաշտոնապես շեշտված էր Ռուսաստանի ղեկավար դերը Հայկական հարցում, և ասես վերահաստատված էր Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը²: Այս հանգամանքը, անչուչտ, չէր կարող ամենաբարերար կերպով չանդրադառնալ Ռուսաստանի միջազգային վարկի վրա, և նրա միապետի անունը չպարուրեր մի նոր հմայքով Մերձավոր Արևելքի քրիս-

¹ АВПРИ, ф. «Политархив», г. 1914, д. 3472, л. 106.

² Տե՛ս В. А. Гурко-Кряжисин, История революции в Турции, Москва, 1923, էջ 77:

տոնյաների սրտերում: Ռուսական դիվանագիտության մեծ ծառայությունների փաստն ընդունել էր նույնիսկ Պետրոգրադում գերմանական դիվանագետներից ֆոն Մուցիուսը¹:

1914 թ. Հունվարի 27-ին Պետերբուրգ Հղած № 7 գաղտնի Հեռագրով Գուլկեիչը հայտնում էր. «Հունվարի 26-ի ակտով ավարտված են Հայաստանում բարեփոխումներ անցկացնելու նախապատրաստական աշխատանքները: ... Առ այսօր Հայաստանի քրիստոնյա դժբախտ բնակչությունը չարունակում է տառապել թուրքական չինովնիկների կամայականությունից ու բռնությունից և քրդերի վայրագություններից, ովքեր անպատիժ ոտնձգություններ են անում երկրամասի խաղաղ բնակիչների կյանքի, պատվի ու գույքի նկատմամբ²: ... Հունվարի 26-ի ակտը մի նոր, ավելի երջանիկ դարաշրջան է նշանավորում հայ ժողովրդի պատմության մեջ... Հայերը միանգամայն գիտակցում են, որ այժմ կատարվել է առաջին քայլը թուրքական լծից իրենց ազատագրման ճանապարհին: Իր ներքին քաղաքական նշանակությամբ Հունվարի 26-ի ակտը այս ազգի համար կարելի է համեմատել 1870 թ. ֆեբրուարի Հետ, որով ստեղծվեց բուլղարական էկզարխատը, և դրանով բուլղար ժողովուրդն ազատագրվեց հունական խնամակալությունից»³:

Կարելի էր նաև հուսալ, որ Հունվարի 26-ի համաձայնագիրը է՛լ ավելի կուժեղացնեի ռուսահայերի համակրանքը ռուսաց կայսերական կառավարության, ռուսական պետականության հանդեպ, կնպաստեր հայ ծայրահեղական կուսակցությունների շարքերից շատերի հեռանալուն: Այդ ամենի հետևանքն այն կլինի, Հունվարի 27-ի հեռագրում նշում էր Կոնստանտին Գուլկեիչը, որ «երբ պատմական ճակատագիրը Ռուսաստանին կրեթի Կոստանդնուպոլիս, մենք կկարողանանք հենվել Արքայաքաղաքի 200.000-անոց հայ բնակչության վրա՝ նույն տարրի դեմ մղվելիք պայքարում»⁴:

¹ Տե՛ս Ստ. Ստեփանյան, *Армения в политике империалистической Германии (конец XIX – начало XX века)*, Ереван, 1975, էջ 91:

² АВПРИ, ֆ. «Политархив», г. 1914, д. 3465, л. 147.

³ Նույն տեղում, թ. 150-ի չրջերես:

⁴ АВПРИ, ֆ. «Политархив», г. 1914, д. 3465, л. 151.

Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Սազոնովի հանձնարարությամբ արդեն Հունվարի 27-ին հայկական ռեֆորմների պաշտոնական ծրագիրն ուղարկվում է Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին, որը փաստաթուղթն անմիջապես փոխանցում է Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ին՝ ֆրանսերենից ռուսերեն կատարած թարգմանությամբ:

1914 թ. Հունվարի 26-ի համաձայնագրով կատարվել էր 1913 թ. Հունվարի 4-ին կազմավորված Ազգային պատվիրակության առջև դրված խնդիրը, ուստի այն դադարեցնում էր իր գործունեությունը: Դրանով փաստորեն վերջ էր դրվում մեծ տերությունների երկարատև մրցակցությանը «Հայկական հարցում», որը սկսվել էր 1878 թվականից՝ Բեռլինի կոնգրեսի օրերից:

Հենց այդ ժամանակ լրացավ Կ. Պոլսի հայոց Ազգային ժողովի վարչության լիազորությունների ժամկետը, ուստի ժողովն ընդունեց նրա ներկայացրած հրաժարականը: Ստեղծվեց նոր վարչություն, որի ղեկավար ընտրվեց դոկտ. Դավթյանը: Այս վարչության առաջին քայլերից մեկը եղավ Ապահովության հանձնաժողովի լուծարումը¹, որն ավելի քան մեկ տարի առաջ ստեղծվել էր Հայաստանի բարենորոգումների գործին նպաստելու համար:

Թերթերը գրում էին, որ համաձայնագրի ստորագրումից անմիջապես հետո Զավիդ բեյը, արդեն վերացած համարելով փոխառություն ստանալու Փարիզի դրած արգելքը, շտապել էր այնտեղ: Քաղաքական մեկնաբանները միաժամանակ համոզված էին, որ եթե թուրքերը կարողանան ֆրանսիական փոխառություն ստանալ, ապա դրանից հետո անպայման նորից կսկսեն իրենց խաղերն ու հոխորտանքները:

¹ Տե՛ս Վահան Փափազեան, *Իմ յուշերը*, Հատ. երկրորդ, էջ 266:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հունվարի 26-ի Համաձայնագրով Հաստատվում էր.

- 1) Արևելյան Անատոլիայում ստեղծվում են երկու սեկտորներ՝ A և B: A սեկտորի մեջ են մտնում էրզրումի, Տրապիզոնի և Սվազի վիլայեթները, B սեկտորի մեջ՝ Վանի, Բիթլիսի, Նարպուտի (Նարբեհդի), Դիարբեքի վիլայեթները:
- 2) Սեկտորներից յուրաքանչյուրի գլուխ նշանակվում է օտարերկրացի ընդհանուր (գլխավոր) վերատեսուչ:
 - ա) Ընդհանուր վերատեսուչներին առաջադրում են մեծ պետությունները, որին նշանակում է Բ. Դուռը*:
 - բ) Ընդհանուր վերատեսուչների իրավունքներն ու պարտականությունները վերջնականապես կճշտվեն նրանց նշանակումից հետո, ըստ որում՝ իրենց անմիջական աջակցությամբ: Վերատեսուչները նշանակվում են 10 տարով: Եթե այդ ժամանակաշրջանի որևէ Հատվածում նրանց պաշտոնը մնա բաց, այդ դեպքում Բ. Դուռը նոր ընդհանուր վերատեսուչի ընտրության հարցում իր հույսը դնում է մեծ պետությունների բարեհաճ աջակցության վրա:
 - գ) Ընդհանուր վերատեսուչին ենթակա են տվյալ սեկտորի վարչությունը, արդարադատությունը, ոստիկանությունը և ժանդարմերիան:
 - դ) Սեկտորների ղինվորական (ռազմական) ուժերը գտնվում են ընդհանուր տեսուչների տնօրինության տակ՝ իրենց իրավասությունների սահմաններում միջոցներ ձեռնարկելու համար:
 - ե) Եթե սեկտորում ստեղծվում է այնպիսի դրություն, որ տեղական ուժերը (ոստիկանություն, ժանդարմե-

* Ըստ որում, Բ. Դուռը իրավունք չունի մերժելու մեծ պետությունների առաջարկած թեկնածություններին, ուստի «նշանակում է»-ն ըստ էության թուրքական ինքնասիրությանը հազուրդ տալու համար էր, ուներ ձեռնարկելու նշանակություն:

րիա) չեն բավականացնում պահպանելու համար կարգը, այդ դեպքում հասարակական անդորրը վերականգնելու նպատակով ընդհանուր վերատեսուչը կարող է կենտրոնական կառավարությունից պահանջել զինվորական ուժեր, որոնք կգործեն իր ցուցումներով՝ համաձայն իրեն վերապահված իրավունքների:

- զ) Ընդհանուր վերատեսուչի իրավունքն է՝ պաշտոնազուրկ անել վարչության անընդունակ կամ անբարո բոլոր կարգի պաշտոնյաներին, դատի տալ նրանց, ովքեր մեղադրվում են պատժակիր ոճրագործություններում:

Արձակված ստորին պաշտոնյաների փոխարեն նա նշանակում է նոր մարդկանց, որոնք կբավարարեն տվյալ պաշտոնին ներկայացվող պահանջները, իսկ բարձր պաշտոնյաներին պաշտոնանկության առաջարկություններ է անում սուլթանի կառավարությունը: Արձակված բոլոր պաշտոնյաների մասին ընդհանուր վերատեսուչը համառոտ, պատճառաբանված հեռագրով անհապաղ հաղորդում է համապատասխան նախարարություններին, այնուհետև մի շաբաթվա ընթացքում յուրաքանչյուր արձակված պաշտոնյայի գործն ուղարկում է նախարարություն՝ տալով պատճառների մասին մանրամասն զեկույց: Այն դեպքերում, երբ անհրաժեշտ է լինում ձեռք առնել շուտափույթ միջոցներ, ընդհանուր վերատեսուչն իրավունք ունի առանց հետաձգելու արձակել դատաստանական անփոփոխ պաշտոնյաներին՝ պայմանով, որ այդ մասին անհապաղ հաղորդի արդարադատության ղեկավարամենտ: Ինչ վերաբերում է սեկտորի կազմում գտնվող նահանգի (վիլայեթ) բարձրագույն ղեկավարին (վալի), ապա ընդհանուր վերատեսուչը նրան չի կարող ազատել պաշտոնից, բայց եթե վալին գործի մի այնպիսի հանցանք, որը պահանջում է դիմել խիստ միջոցների, ընդհանուր վերատեսուչն այդ մասին հեռագրով հաղորդում է ներքին գործերի նախարարին, որն իր հերթին ղեկավարի մասին անհապաղ զեկույցում է նախարարների խորհրդին: Վերջինս պարտավոր է իր որոշումը կայացնել ոչ ուշ, քան ընդհանուր վերատեսուչի

հեռագիրն ստանալուց չորս օրվա ընթացքում՝:

- 3) Հողային վեճերը վճռվում են ընդհանուր վերատեսչի անմիջական վերահսկողությամբ:
- 4) Կենտրոնական իշխանությունների օրենքները, հրովարտակները և կառավարչական հաղորդագրությունները յուրաքանչյուր սեկտորում կհայտարարվեն տեղական լեզուներով: Սա նորույթ էր կայսրության պրակտիկայում:
- 5) Եթե ընդհանուր վերատեսուչը հնարավոր է գտնում՝ յուրաքանչյուր կողմ դատարանում և վարչական հիմնարկություններում իրավունք ունի հանդես գալու իր մայրենի լեզվով: Դատավճիռները կազմվում են թուրքերեն և հնարավորինս թարգմանվում են կողմերի լեզվով: Սա ևս նորույթ էր թուրքական իրականության մեջ:
- 6) Դպրոցները պահվում են ինչպես վիլայեթի ընդհանուր

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1913, д. 3465, л. 149 (об.). (Անդրադառնալով ընդհանուր վերատեսուչների մասին հունվարի 26-ի ակտի նշված դրույթներին՝ հեշտ է նկատել, որ թղթի վրա տրամադրված իրավունքները նրանց դարձնում էին ոչ միայն տվյալ սեկտորի վարչության, դատարանի, ոստիկանության ու ժանդարմերիայի «հսկիչներ», այլ նաև դրա բարձրագույն կառավարիչներ: Ընդհանուր վերատեսուչները իրավասու էին նշանակել ստորադաս բոլոր պաշտոնատար անձանց և Բ. Դուռ մտնել սեկտորների բարձրագույն պաշտոնյաներին նշանակելու առաջարկով. իրենք կարող էին հեռացնել վարչության բոլոր պաշտոնյաներին՝ անկարողության կամ վատ գործելակերպի համար, վալիներից գատ՝ իրենք անգամ կարող էին պաշտոնից հեռացնել անփոփոխելի դատավորներին՝ իրազեկելով այդ մասին Արդարադատության նախարարությանը: Ինչ վերաբերում է վալիներին (գլխավոր նահանգապետներին), ապա ընդհանուր վերատեսուչները, նրանց գործելակերպից դժգոհելու դեպքում, հեռագրի միջոցով պետք է իրազեկեին Բ. Դուռը, ընդամին, նախարարների խորհուրդը պարտավոր էր ամենաուշը չորսօրյա ժամկետում կայացնել որոշում: Ակնհայտ է, որ այդ որոշումը չէր կարող տարբերվել ընդհանուր վերատեսչի կարծիքից: Իսկ եթե Բ. Դուռը ցանկանար արգելակել վերջինիս պաշտոնանկությունը, ապա դա դժվար թե տեղի ունենար, քանի որ, ըստ հունվարի 26-ի ակտի տրամաբանության, վերատեսուչի թափուր տեղը փոխարինելու փորձ անելու պարագայում դա կհանգեցներ տերությունների միջամտությանը):

բյուջեից հատկացվող ծախսերով, այնպես էլ հավատակիցների հանգանակած գումարներով: Կայսերական կառավարությունը որևէ արգելք չպիտի հարուցի նրանց առջև, ովքեր ցանկություն կունենան նպաստելու իրենց ազգային դպրոցների պահպանմանը: Որոշման այդ կետեր խիստ կարևոր էր մեծաթիվ դպրոցներ ունեցող հայության համար: Մինչ այդ կայսրության ոչ թուրքական դպրոցների համար գանձվող տուրքերը սովորաբար ծախսվում էին թուրքական դպրոցների պահպանման վրա: Բացի այդ, Բ. Դուռը պարտավորվում էր չխոչընդոտել համայնքային դպրոցները պահելու ծախսերին դավանակիցների մասնակցությունը: Նշենք, որ 1895 թ. դեկրետում բացակայում էր նման դրույթ:

- 7) Խնդաղ ժամանակ յուրաքանչյուր օսմանահպատակ իր զինվորական պարտականությունը կատարում է այն զինվորական շրջանում, որտեղ նա ապրում է: Բայց Եմենի, Ասսիրի և Նեջադի հեռավոր մասեր ցամաքային գորք ուղարկելիս կայսերական կառավարությունը այն գորքերը կլրացնի կայսրության բոլոր մասերից՝ այնտեղ բնակվող ազգությունների թվաքանակին համապատասխան: Բացի այդ, ծովային գորքեր կընդգրկի կայսրության բոլոր մասերից՝ գումարած նորակոչիկներին: Այս պահանջը նույնպես չկար 1895 թ. դեկրետում:
- 8) Համիդյան զորագնդերը չեն վերացվում, բայց վերածվում են պահեստի հեծելազորի: Նրանց զենքերը կպահվեն զինվորական պահեստարաններում և իրենց բաժանվեն միմիայն զորաժողովի և զինավարժություն ժամանակ: Նրանք ենթարկվում են այն զորաբանակների հրամանատարներին, որոնց շրջանում գտնվում են: Խնդաղ ժամանակ զորագնդերի պետերն ընտրվում են օսմանյան գործող գորքի սպաներից: Այդ զորագնդերի զինվորներն իրենց զինվորական ծառայությունը կատարում են մեկ տարի ժամկետով: Հիշյալ զորագնդերի մեջ մտնելու համար զինվորն իր սեփական միջոցներով պիտի ձեռք բերի զգեստ և ձի՝ դրա կարգ ու սարքով:

Յուրաքանչյուր անձ, որ ապրում է որոշակի զինվորական շրջանում և կրնդունի հիշյալ պահանջները առանց ցեղային և կրոնական խտրության, կարող է զինվորագրվել հիշյալ գնդերում: Զորաժողովի կամ զինավարժության ժամանակ զորագնդերը ենթարկվում են կանոնավոր գորքերի համար սահմանված ընդհանուր կարգապահական կանոններին:

9) Վեց վիլայեթների վարչությունների գլուխ են կանգնում առանձին օրենսդրական ժողովները (էնջումեններ), որոնք կոչվելու են ընդհանուր խորհուրդներ (ժողովներ):

Ա) Վիլայեթների ընդհանուր խորհուրդների իրավասությունը որոշվում է 1913 թ. (1329) մարտի 13-ի օրենքի սկզբունքներին համաձայն:

Ընդհանուր խորհուրդը ժողովվում է տարեկան մեկ անգամ՝ 40 օր տևողությամբ: Եթե այդ ժամկետում անհնար է լինում լուծել օրակարգային բոլոր հարցերը, ապա տեղական նահանգապետի համաձայնությամբ նստաչրջանը կարող է շարունակվել ևս 15 օր:

Բ) Ընդհանուր խորհուրդը կարող է գումարել նա և արտակարգ նիստեր, բայց դրա համար հարկավոր է, որ նրա անդամների 2/3-ի պահանջով նահանգապետին ներկայացվեն դրա համար անհրաժեշտ հիմնավորումներ:

Դ) Ընդհանուր խորհրդի նախագահը նահանգապետն է: Խորհուրդն ունենում է նախագահի օգնական և երկու քարտուղար, որոնք ընտրվում են խորհրդի անդամներից:

Ե) Օրենսդրական նախաձեռնության իրավունքը վերապահվում է ոչ միայն նահանգապետին, այլև խորհրդի բոլոր անդամներին: Տարեկան մեկ անգամ գումարավող ընդհանուր խորհուրդը լսում է նահանգապետի հաշվետվությունն իր գործունեության մասին և քննում է վիլայեթի ելուժուտի հաշիվը:

Զ) Խորհրդին տրվում են նաև այլ իրավունքներ. այն

կարող է կառավարչությունից և այլ վարչություններից պահանջել անհրաժեշտ տվյալներ, տեղական բոլոր պաշտոնյաներից՝ բացատրություններ, փոփոխություններ մտցնել ընդունված որոշումների մեջ՝ հասարակական գործերի կազմակերպման, ժողովրդական կրթության ընդլայնման, սանիտարական ու բուժական հավելյալ միջոցներ հայթայթելու նպատակներով: Այդ բոլորի հետ միասին խորհուրդն իրավունք ունի փոխել տուրքերի կարգը և քննել հարկատվության համակարգը:

է) Ընդհանուր խորհրդի կողմից ընդունված օրենքները պետք է հրատարակվեն տեղական լեզուներով:

Ը) Խորհրդի և նահանգապետի միջև ծագած տարաձայնությունները վճռում է ընդհանուր վերատեսուչը:

Թ) Երկու սեկտորների վիլայեթներում գոյություն ունեցող զանազան կրոնների, ազգությունների և լեզուների իրական համաչափությունը կորոշվի վերջնական ցուցակագրության (մարդահամարի) միջոցով, որը կատարվում է ընդհանուր վերատեսուչների հսկողությամբ ամենակարճ ժամանակամիջոցում՝ ըստ կարելիության ոչ ավելի, քան մեկ տարվա ընթացքում:

Ճ) Մինչ այդ Վանի և Բիթլիսի վիլայեթներում ընդհանուր խորհուրդների (մեջլիսի ումումի) և կոմիտեների անդամներն ընտրվում են հավասար թվով՝ մահմեդականներից և ոչ մահմեդականներից:

Ի) Եթե էրզրումի վիլայեթում վերջնական բնակչության ցուցակագրությունը մեկ տարվա ընթացքում չավարտվի, ընդհանուր խորհուրդների անդամները կընտրվեն նույն հավասարության սկզբունքի հիման վրա, ինչ վերոհիշյալ երկու վիլայեթներում: Իսկ եթե ցուցակագրությունը պարզի, որ քրիստոնյաները նահանգում փոքրամասնություն են, տվյալ սկզբունքը փոփոխության կենթարկվի հօգուտ մուսուլմանների, այսինքն՝ ուժի մեջ կմտնի խորհրդի կազմի

ընտրութեան համամասնական սկզբունքը:

- Լ) Մնացած նահանգների՝ Սվազի, Նարբերդի, Դիարբեքի խորհուրդների կազմը համապատասխանելու է տեղական մուսուլման և հայ բնակչութեան թվին, այսինքն՝ նրանց անդամները հենց սկզբից ընտրվելու են համամասնական սկզբունքով: Մահմեդական ընտրողների թիվը մինչև ցուցակագրութեան վերջնայլը որոշվում է այն ընտրական ցուցակներով, որոնք հիմք են ծառայել վերջին ընտրութեանների համար, իսկ ոչ մահմեդական անդամների թիվը որոշվում է համաձայն համապատասխան համայնքների ներկայացրած ցուցակների, որոնք պիտի համարվեն պաշտոնական և փոփոխութեանների չենթարկվող:

Սակայն, եթե զանազան գործնական դժվարութեանների պատճառով հիշյալ ժամանակավոր կարգը նպատակահարմար չլինի, այն դեպքում ընդհանուր վերատեսուչներին իրավունք է տրվում երեք վիճակներում՝ Սվազ, Նարբերդ և Դիարբեքի, առաջարկել ընդհանուր ժողովների տեղերի դասավորման համար նոր համաչափութիւն, որն ավելի համապատասխաներ ժամանակի պահանջներին և վերոհիշյալ վիճակների կարիքներին¹:

- 10) Վերակազմավորվում է վարչական մարմինների աշխատանքը:

Ա) Վարչական գործերը նահանգներում վարում են նահանգային կոմիտեները, որոնք ընտրվում են ընդհանուր խորհուրդների նստաշրջաններում:

Յուրաքանչյուր նահանգային կոմիտե բաղկացած է չորս հոգուց:

Բ) Կոմիտեի խնդիրն է՝ պատրաստել անհրաժեշտ օրինագծեր, հաստատել ելումտից հաշիվները, հավաքել անհրաժեշտ նյութեր ընդհանուր խորհուրդների նստաշրջանների համար:

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1914, д. 3465, л. 150^а.

Գ) Վարչական մարմիններում աշխատում են մահմեդականներ ու ոչ մահմեդականներ: Եթե պաշտոնների բաշխման պարագայում 1895 թ. դեկտեմբեր 1-ին համաչափութեան սկզբունքից, ապա հունվարի 26-ի ակտով մահմեդականների և ոչ մահմեդականների միջև սահմանվում էր հավասարութեան սկզբունքը: Այն նահանգներում, որտեղ մուսուլմանների և հայերի թիվը հավասար է կամ մոտավորապես հավասար է, կոմիտեները կազմվում են երկու հայից և երկու մուսուլմանից: Այն նահանգներում, որտեղ մուսուլմանները մեծամասնութիւն են, իսկ հայերը՝ փոքրամասնութիւն, վերջիններին իրավունքները պաշտպանելու համար կոմիտեի մեջ մտցվում է գոնե մեկ քրիստոնյա:

- 11) Մահմեդականների և ոչ մահմեդականների միջև պաշտոնների բաշխման այդ սկզբունքը հաստատվում է նաև երկու սեկտորների ոստիկանութիւնում ու ժանդարմերիայում¹:

Սա էր բովանդակութիւնը հունվարի 26-ի համաձայնագրի, որը, ինչ խոսք, մի մեծ քայլ առաջ էր Հայաստանում բարեփոխումներ կատարելու մասին 1895 թ. հոկտեմբերի 8 (20)-ի սուլթանական դեկրետի համեմատ, որը մնացել էր մեռյալ տառ: Համաձայնագիրը, անշուշտ, մեծապես ձեռնտու էր Բ. Դոանը: Չէ՞ որ տերութիւնները Թուրքիային տվել էին բոլոր գոհացումները, որպեսզի չվիրավորվի նրա կառավարութեան արժանապատվութիւնը: Այդ գոհացումներից հիմնականը երկուսն էին.

1) Ռուսական կողմը հրաժարվել էր հայկական բոլոր վիճակները մի նահանգի մեջ առնելու մտքից և համաձայնել էր դրանք խմբել երկու հատվածների մեջ, ինչպես ուզում էր Բ. Դոանը, 2) Բարենորոգումների ծրագրից դուրս էր թողնվել եվրոպական հատուկ պաշտոնյաների կողմից գործադրվելիք վերահսկման (կոնտրոլ) պահանջը, որը հայերի բոլոր ցանկութիւնների հիմքն

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1914, д. 3465, л. 150^а.

էր: Ռուս-հայկական կողմի այդ երկու գլխավոր պահանջները դուրս թողնելուց բացի Բ. Դուռը բավարարություն ստացավ նաև ուրիշ կետերի վերաբերյալ, որոնց ինքն առանձնահատուկ կարևորություն էր տալիս: Չնայած այդ ամենին, գրում էր Պողոս Նուբարը, «մենք միայն կարող ենք ուրախանալ, որ դիւանագիտութիւնը, բոլորի շահերը նկատի առնելով, կարողացաւ մի ելք գտնել, որ չ'վտանգի բարենորոգումների ո'չ գործադրութիւնը եւ ո'չ էլ արդիւնաւորութիւնը»¹: Մնում էր դրանք լրիվ իրագործել, որը և հնարավոր կլիներ, եթե տերությունները ներդաշնակորեն և համերաշխության ոգով ապահովէին համաձայնագրի հաջողությունը: «Իմ ներքին համոզումս է, - շարունակում էր Պողոս փաշան, - որ Դուռը, նոյնքան շահագրգռուած է որքան եւ հայերը, [ուստի] եռանդով կ'գործադրի այն: Որովհետեւ ոչ ոք չի կարող կասկածել, որ անկեղծ, լրիւ եւ անվերապահ բարենորոգումների գործադրութիւնով միայն կ'վերջանայ Հայկական հարցը: Իրօք, նրանց գործադրութիւնը ապահովութեան եւ արդարութեան վերականգնումն է, պիտի շահագրգռեն բնական հարստութիւններ եւ տնտեսական զարգացումը պիտի ապահովուի, այս բոլորը գործունէութիւնների եւ բնական ոյժերի ամբողջութիւնն է, որոնք դրում են Կայսրութեան ծառայութեան տակ, մի խօսքով սա Թուրքիայի վերականգնումն է, որի համար հայերը, իբրեւ հաւատարիմ հպատակներ եւ լաւ հայրենասէրներ պիտի աշխատեն իրենց ամբողջ գիտակցութեամբ եւ իրենց բոլոր ուժերով»²:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայ հասարակության մի մասը 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը համարում էր ոչ խոստումնալից, և այդ հոռետեսությունը գուրկ չէր հիմքից: Փաստաթղթի խորագնին քննությունը հանգում ենք այն համոզման, որ դրա հովվածների մեծ մասի գործադրումը հենց սկզբից դատապարտված

¹ «Արարատ», № 3, մարտ, 1914, էջ 228:

² Նույն տեղում, էջ 228-229:

էր անհաջողություն: Այդ բանը տեսանելի է հասարակ աչքով:

Ըստ բարեփոխումների ծրագրի՝ հայկական նահանգներում կառավարումը դրվում էր օտարերկրացիների հսկողության տակ, մի բան, որ առաջարկել էին մեծ տերությունները: Ուրիշ խոսքով՝ այդ նահանգների համար փաստապես ստեղծվում էր մի դրություն, որը նման էր Լիբանանի կարգավիճակին, բայց այն առավելություններ, որ հունվարի 26-ի համաձայնագրի համաձայն՝ դրանց կառավարիչները լինելու էին օտարերկրացիք, այն-ինչ Լիբանանի ընդհանուր նահանգապետը թուրքահպատակ էր: Այդ համաձայնագրով հայաբնակ նահանգների համար սահմանված իրավական կարգը, Հայաստանի բարենորոգումների մասին 1895 թ. հոկտեմբերին հրատարակված սուլթանական հրովարտակի համեմատ, անշուշտ, առաջնութաց քայլ էր:

Իսկ այժմ տեսնենք, թե այդ քայլն իսկապե՞ս իրական էր, իսկապե՞ս հնարավոր էր հունվարի 26-ի վավերաթուղթը մարմնավորել կյանքում:

Սկսենք նախ նրանից, որ հունվարի 26-ի վավերագիրը հայերին չէր տալիս այն համեմատաբար լայն իրավունքները, ինչ առաջարկում էր ռուսական նախածրագիրը: Այստեղից էլ ածանցվում էին նրա էական և երկրորդական բոլոր թերությունները:

Թուրքերն ու գերմանացիները հասել էին այն բանին, որ կասկածի տակ էր դրվում «Հայաստան» տերմինի ընկալումը որպես հայ ժողովրդի հայրենիք: Հայոց հազարամյակների մայր երկիրը շատերի համար մնալու էր զուտ աշխարհագրական անուն:

Հայաստանի բարենորոգումների ծրագրի արմատական թերությունը վերաբերում է հենց դրա գործադրության գլխավոր դեմքերին՝ ընդհանուր վերատեսուչներին:

Հայկական յոթ նահանգները, ըստ համաձայնագրի, նախկինի պես ունենալու էին ընդհանուր վարչություններ: Երկու սեկտորների մեջ մտնող նահանգների միջև կապը պետք է իրականացնեին միայն երկու մարդ՝ նշված ընդհանուր վերատեսուչները:

Բայց եվրոպայից եկած քաղաքակիրթ երկու անձինք արդյոք ի վիճակի կլինեի՞ն կատարելու ծրագրով իրենց վրա դրված

հսկայածավալ խնդիրները, այն էլ Թուրքիայի նման բռնապետական մի երկրում, որտեղ վարչական ապարատն ու ուժային կառույցները մինչև ուղնուծուծը կաշառակեր ու անբարո արարածներ էին: Խիստ կասկածելի էր, որ նրանք միայնակ կարողանային առանձին նահանգների գործունեությունն ուղղել մի ընդհանուր նպատակի:

Ծրագրում ոչ մի խոսք չկա եվրոպական վերահսկողություն մասին. այն փոխարինված է ընդհանուր վերատեսուչների կողմից իբր իրականացվելիք վերահսկողությամբ: Այսինքն՝ մեծ պետություններն այլևս չէին անհանգստացնելու Բ. Դոանը, նրանից չէին պահանջելու որևէ հաշվետվություն Հայաստանում բարեփոխումներ չկատարելու դեպքում:

Դժվար է ըմբռնել, թե ինչ է նշանակում բարեփոխումների ծրագրում տեղ գտած ձևակերպումը, որի համաձայն՝ վերատեսուչները «անմիջական մասնակցություն» պիտի ունենային հայերի և մուսուլմանների միջև ծագած հողային տարաձայնությունների հարթմանն ուղղված ջանքերում: Թուրքահայաստանում հողային հարցերը ծագում էին ամեն օր, տարեկան՝ հազարավորները, և երկու վերատեսուչները, որոնք եթե նույնիսկ լինեին արտակարգ գործունյա մարդիկ, ֆիզիկապես անկարող էին լինելու գոնե հեռավոր մասնակցություն ունենալու դրանց տասներորդական մասի քննության ու վճիռներ կայացնելուն:

Փաստաթղթում չլուծված հարցերից էր անհրաժեշտության դեպքում զինվորական իշխանությունը, այսինքն՝ թուրքական զորքերի հրամանատարությունը, ընդհանուր վերատեսուչներին հանձնելու հանգամանքը, որի մասին այնտեղ ակնարկվում էր: Բայց անհնար էր երևակայել, որ երիտթուրքերը կհամաձայնեին գոնե առանձին անհրաժեշտության դեպքերում ընդհանուր վերատեսուչներին հանձնել թուրք զորամասերի հրամանատարությունը Ռուսաստանի սահմանին մոտ գավառներում: Ակնհայտ է, որ հայկական երկու սեկտորների սահմաններում գտնվող թուրք զորքերի վրա ընդհանուր վերատեսուչների հրամանատարական իրավունքների մասին ծրագրում տեղ գտած ակնարկը ոչ այլ ինչ էր, եթե ոչ թյուրիմացություն:

Այնուհետև, անհասկանալի է, թե վերատեսուչները ինչ մե-

թողների լծակների գործադրմամբ կարող էին նահանգապետներին հաշտեցնել նահանգային ընդհանուր խորհուրդների հետ, մի պահանջ, որ տեղ է գտել փաստաթղթում:

Հունվարի 26-ի համաձայնագրով չէր նախատեսվում հետամնաց, կաշառակերություն թաթախված օսմանյան դատաիրավական համակարգի հեղաբեկում, մաքրում, բարեկարգում: Այնտեղ այդ հարցերը զանց էին առնված, եթե չհաշվենք այն, որ դատարաններում կողմերին թույլատրվում էր արտահայտվել մայրենի լեզվով: Բայց թե ինչպե՞ս էր կարգավորվելու դատարանական գործը, ի՞նչ տեսակի դատարաններ էին լինելու, ինչպե՞ս էին նշանակվելու դատավորները և այլն. այդ ամենի մասին ծրագրում ոչ մի խոսք չկա: Այս պայմաններում ինչպե՞ս պիտի իրականացվեր ընդհանուր վերատեսուչների վերահսկողությունն այդ քրեականացված համակարգի վրա: Դժվար է երևակայել, թե նրանք ինչպես պետք է վերափոխեին այդ համակարգը և այն դնեին օրինականության հիմքերի վրա:

Եթե ընդհանուր վերատեսուչը իրավասու չէր նահանգապետ նշանակելու, ապա նա, ծրագրի համաձայն, նշանակում էր մնացած վարչական պաշտոնյաներին: Բայց ո՞ւմ ներկայացմամբ էր կատարվելու այդ նշանակումը՝ այդ մասին փաստաթղթում ոչ մի խոսք չի ասված, բայց ենթադրելի է, որ՝ նահանգապետի: Հետևապես, վարչական պաշտոնյաները լիակատար կախում պիտի ունենային նահանգապետից, անմիջականորեն ղեկավարվեին նրա ցուցումներով:

Մահմեդականների և ոչ մահմեդականների միջև վարչական մարմիններում, ոստիկանությունում ու ժանդարմերիայում, ինչպես և մնացած բնագավառներում, պաշտոնների դասավորման հարցը ամենակարևորներից մեկն էր: Հիշեցնենք, որ 1895 թ. հրովարտակը դասավորման հարցում ղեկավարվում էր համամասնական սկզբունքով: Ոստիկանության և ժանդարմերիայի պաշտոնների վերաբերմամբ հունվարի 26-ի վավերագիրը մահմեդականների և ոչ մահմեդականների միջև հաստատում էր հավասարության սկզբունքն այն չափով, թե քանի ազատ պաշտոններ կբացվեին, ինչպես նաև այն դեպքում, եթե ընդհանուր վերատեսուչները հարմար կգտնեին այդ սկզբունքը: Այդպիսի

մոտեցումը վնաս չէր ներկայացնի քրիստոնյա ազգաբնակչու-
թյան համար, եթե, իհարկե, այն կյանքի կոչվեր: Բայց հարցն
այն է, որ 1895-ի հրովարտակի համամասնություն պահանջը
մնացել էր թղթի վրա, ուստի չկար որևէ երաշխիք, որ նույն
բախտին չէր արժանանալու հունվարի 26-ի համաձայնագրում
արձանագրված հավասարության սկզբունքը գոնե Բիթլիսի և
Վանի նահանգներում:

Բարենորոգումների ծրագրում բաց էր թողնված ընդհանուր
վերատեսուչների և թուրք կառավարություն հարաբերություն-
ների հարցը: Հայտնի չէր՝ Բ. Դուռը իրավունք պիտի ունենա՞ր
պաշտոնից հեռացնելու անընդունակ, գործը ձախողած վերա-
տեսուչին և նրան փոխարինելու ուրիշով, թե՞ հեռացման և նշա-
նակման համար պահանջվելու էր մեծ պետությունների համա-
ձայնությունը:

Խնդրահարույց էր այն, թե պետությունների պարտադիր
երաշխավորությունում նշանակված ընդհանուր վերատեսուչները
լինելու են արդյոք թուրքիայի պաշտոնյաներ, թե՞ հանդես են
գալու միայն որպես Հայաստանի բարենորոգումների ընթացքի
վրա միջազգային հսկողություն իրականացնողներ: Եթե Բ.
Դուռը հաջողվեր վերատեսուչներին դարձնել օսմանյան պաշ-
տոնյաներ, այն ժամանակ բարենորոգումների ամենալավ ծրա-
գիրն անգամ առ ոչինչ կլիներ:

Այս ամենին ավելացնենք և այն, որ ապագա «բարեկարգ-
ված» Հայաստանի երկու բարձրագույն անձերի՝ ընդհանուր վե-
րատեսուչների ինստիտուտը դեռ որոշ չէր: Թե ինչպիսիք կլի-
նեին նրանց լիազորությունների սահմանները դեռ պիտի պարզ-
վեր հետագայում, ինչպես ասված է ծրագրում՝ Կ. Պոլսում մեծ
պետությունների ղեսպանների առանձին խորհրդակցություն-
ների ժամանակ (ղեսպանաժողովներում):

Ուրեմն ի՞նչ էր մնում ընդհանուր վերատեսուչից՝ սոսկ մի
անուն: Իսկ ի՞նչ էր անելու նա: Այդ հարցի ճշգրիտ պատասխա-
նը տվել է Ալ. Մյասնիկյանը (Մարտունի). «Միայն ոռճիկ է
ստանալու»¹:

Նահանգի (վիլայեթ) գլուխ կանգնած նահանգապետի
(վալի) դերը ծրագրում ինչպես հարկն է, ընդգծված չէ, բայց
նրա տողերի միջից անմիջապես հատնում է այդ պաշտոնյայի
հուժկու կերպարանքը:

Զուր չէ, որ «Յուսաբեր» (Կահիրե) թերթն անմիջապես
նկատել էր. «Կը մնայ ճշդել սա շատ կարևոր խնդիրը թէ ինչ-
պէս պիտի կարգադրին ընդհանուր-քննիչներուն եւ վիլայեթ-
ներու կուսակալներուն միջեւ ծագելիք վէճերը: Թուրք պետա-
կան շրջաններու մէջ անկարելի կը նկատեն այսպիսի կնճիղներ
վճռելու իրաւասութիւնը ոչ-օսմանեան իշխանութեան մը տալ
առանց պետութեան անկախութիւնը վտանգելու»¹:

Ըստ ծրագրի, նահանգներում վարչական ողջ մեխանիզմը,
ինչպես նախկինում, կենտրոնացված էր լինելու նահանգապետ-
ների ձեռքում: Սրանք ոչ մի կախվածություն չպիտի ունենային
բարեփոխվելիք Հայաստանի իրավական մեծությունների՝ երկու
սեկտորների ընդհանուր վերատեսուչներից: Նահանգապետները
սովորականի պես իրենց պաշտոններին նշանակվելու էին իշ-
խանությունների կողմից, հետևապես լիովին պաշտպանված
էին լինելու Իթթիհատի կոմիտեի երաշխավորությամբ և Բ.
Դուռն համաձայնությամբ: Եվ եթե այս պարագայում սեկտոր-
ների վարչությունների կարևոր ներկայացուցիչները շարունա-
կելու էին մնալ նահանգապետները, այլ ոչ թե ընդհանուր վերա-
տեսուչները, ապա անորոշ ու մթին էր մնում, թե վերջիններս
ինչպես կարող էին վարչական վերահսկողություն սահմանել
սեկտորների շրջանակներում:

Անցնենք ծրագրի **օրենսդրությունը** վերաբերող մասին:

Ըստ փաստաթղթի՝ Հայաստանի երկու սեկտորների
(չրջանների) յուրաքանչյուր նահանգ ունենալու էր օրենսդրա-
կան մարմին, որը ծրագրի լեզվով կոչվում էր ընդհանուր (կամ
գլխավոր) խորհուրդ (կամ ժողով):

Ինչպես արդեն փաստաթղթից տեղեկացել է ընթերցողը,
ընդհանուր խորհուրդը ունենալու էր մի շարք կարևորագույն

¹ «Մշակ», № 28, 7 փետրվարի 1914 թ.:

¹ «Յուսաբեր», № 182, 3 (16) հունվարի 1914 թ.:

իրավունքներ և լիազորություններ: Քայց այդ իրավունքների ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ դրանք ամենից առաջ ցուցադրական էին, հետևապես՝ անիրական:

Վճուճված էր, որ ընդհանուր խորհրդի՝ ենթադրյալ այդ օրենսդրական մարմնի նախագահը ընտրվելու է ոչ թե նրա անդամներից, այլ նշանակվելու է ամենագոր նահանգապետը, իսկ ընդհանուր վերատեսուչը գործնականում ոչ մի ազդեցություն չէր ունենալու «օրենսդրական» կոչվող այդ մարմնի վրա: Լինելով խորհրդի նախագահ՝ նահանգապետն ուղղություն էր տալու նրա գործունեությանը, ազդելու էր նրա կողմից ընդունվելիք որոշումների վրա՝ ըստ ցանկության փոխելով դրանց բովանդակությունը: Ավելին, նա իրավունք ուներ հաստատելու կամ մերժելու խորհրդի որոշումները, իսկ դա նշանակում էր, որ նա ընդհանրապես կարող էր անորոշ ժամանակով դադարեցնել խորհրդակցական մարմնի աշխատանքները: Բնութագրական է, որ ընդհանուր խորհուրդը չպետք է ունենար հանձնախմբեր (հանձնաժողովներ), այլ ունենալու էր միայն չորս հոգուց կազմված կոմիտե, որը պետք է նախապատրաստեր խորհրդի տարեկան 40-օրյա նստաշրջանը: Խորհուրդը կարող էր երկարացնել նստաշրջանը միայն նահանգապետի թույլտվությամբ: Խորհրդի ոչ սովորական (արտահերթ) նիստերի գումարումը նույնպես կախված էր նահանգապետից: Վերջապես, սա ունենալու էր օրենսդրական նախաձեռնություն իրավունք:

Ինչպես տեսնում ենք, նահանգապետի վրա ազդեցության որևէ լծակ չունենալով՝ ընդհանուր խորհուրդը կոչված էր օժանդակելու նրան: Դա նշանակում էր, որ այդ մարմինը տեղացիների կյանքում անհամեմատ ավելի փոքր դեր պիտի ունենար, քան, ասենք, զեմստվոն Ռուսաստանում: Քանի որ այն լինելու էր ձևական, ծառայելու էր իբրև ժողովրդավարության քաղաքական բեմադարդարանք (decorum) ու չվեյցարական կանտոնների օրենսդրական ժողովների ծաղրանկարի նման մի բան, ուստի ավելորդ էր ակնկալել, թե սա կարող է օրենսդրություն ստեղծել:

Ընդհանուր խորհուրդների կողմից հաստատված ու կյանքի կոչվելիք միջոցառումները, ինչպես և նահանգներին հատկաց-

ված գումարները ծախսելու կարգը գտնվելու էին թուրք պաշտոնյաների ձեռքում: Սրանցից հաշվետվություններ ու բացատրություններ պահանջելու խորհրդին տրված իրավունքը ձևական էր և հեշտությամբ կարելի էր լիովին անտեսել:

Վերջապես, ուշադրության արժանի է խորհուրդների կազմը: Նախորոշված էին այդ խորհուրդների կազմի սոսկ ազգային փոխհարաբերությունները, բայց հայտնի չէ, թե ընտրական ինչ կարգով էին ձևավորվելու դրանք: Ծրագրի համաձայն՝ երկու նահանգների խորհուրդներում (Վան, Բիթլիս) հայերը կազմելու էին ճիշտ կեսը, թեև նրանք բացահայտ մեծամասնություն էին այդ նահանգներում: Մեկ նահանգում՝ էրզրումում, նույնպես կեսը՝ մինչև նոր ցուցակագրությունը (մարդահամարը): Սերաստիայի, Սարբերդի և Տրապիզոնի նահանգներում, անկասկած, մեծամասնություն էին կազմում մահմեդականները: Ինչ վերաբերում էր Դիարբեքիի նահանգին, ապա այստեղ քրիստոնյաները թեև մեծամասնություն էին, բայց իշխանությունների համար դժվար չէր կեղծել տվյալները և մեծամասնությունը ներկայացնել փոքրամասնություն:

Թուրքական կառավարությունը, ինչպես միշտ է եղել, հիմա էլ վիճակագրությանն այնպիսի ուղղություն կտար, որ քրիստոնյաներն ամեն տեղ փոքրամասնություն կկազմեին: Քանի որ բոլոր նահանգների (վիլայեթների) ընդհանուր խորհուրդների նախագահները լինելու էին նահանգապետները, ուստի նշված երկու նահանգների (վիլայեթների) խորհուրդներում նույնպես, որոնցում հայերը կազմելու էին դրանց անդամների կեսը, միևնույնն է, գերակշռություն էին ստանալու մուսուլմանները:

Այսպիսով, ըստ բարեփոխումների ծրագրի, Հայաստանի երկու սեկտորների նահանգապետները լինելու էին ընդհանուր վերատեսուչներից կատարյալ անկախ, իսկ ընդհանուր նահանգային խորհուրդները ծառայելու էին նրանց:

Քաղաքակիրթ երկրներում նահանգապետը ենթակա է կենտրոնական կառավարությանը և ղեկավարվում է պետության օրենսդրությամբ: Թեև Թուրքիայում նահանգապետը ենթակա էր կենտրոնական իշխանությանը, բայց իրականում մի ինքնանկախ իշխան էր, տեղական փոքր թագավոր: Նա նաև

օրենքն էր և օրենսդրությունը, էլ ուր մնաց, թե թուրքական կառավարություն կոկորդում մնացած մի տարածքում, որի անունը Հայաստան էր, թուրք, քուրդ կամ չերքեզ նահանգապետները լինեին օրենքներ կերտող: Աչքի փուշ դարձած Հայությունն ակամամբ նրանք հիմա պիտի առաջ տանեին ավելի սանձարձակ, ավելի վայրագ գործունեություն:

Ծրագրի հեղինակները հավանաբար նաև վերոնշյալ հանգամանքներն էին նկատի ունեցել, որ առաջ էին քաշել այսպես կոչված գավառային (փաստաթղթում անվանված է՝ նահանգային) կոմիտեներ ստեղծելու պահանջը:

Նահանգային կոմիտե անվամբ վարչական մարմինը պետք է ստեղծվեր յուրաքանչյուր նահանգային ընդհանուր խորհրդին կից, որը, ինչպես ասվեց, բաղկացած էր լինելու չորս հոգուց և ընտրվելու էր խորհրդի անդամների կողմից:

Նահանգային կոմիտեները պիտի հանդես գային որպես ընդհանուր խորհուրդների օժանդակիչ մարմիններ, հետևապես լինելու էին նահանգապետներին սպասարկող օգնականներ, ավելի ճիշտ՝ նրանց փոքրիկ դիվաններ:

Այդ ամենին հավելենք մի հանգամանք ևս: Բանն այն է, որ բարենորոգումները վերաբերում էին միայն Հայաստանին, նրա վեց վիլայեթներին: Ինչպես Հայտնի է, Հայաստանում ապրում էր թուրքահայերի կեսից ոչ ավելին: Ուրեմն Հայաստանի ինքնավարությունը չպիտի տարածվեր Հայ ազգի մյուս կեսի վրա, որը ցրված էր պետություն ամբողջ տարածքի վրա: Ի՞նչ կարգավիճակում պիտի մնային Կ. Պոլսում ու Մարմարայի եզերքում ապրող գրեթե 350000 հայերը, ի՞նչ միջոցներ պետք է ունենային նրանք՝ պաշտպանելու իրենց ազգային իրավունքները: Չէ՞ որ ոչ ոք չէր կարող նրանց խորհուրդ տալ տեղափոխվել Հայաստան, առաջվա պես նրանց ճակատագիրն ամբողջովին պիտի գտնվեր օսմանյան պառլամենտի մեծամասնության և ընդհանրապես թուրքական իշխանությունների ձեռքում, որոնց համար հայերի մասնավոր-ազգային ձգտումներն ու շահերը ոչ հասկանալի էին և ոչ էլ ընդունելի նրանց համար:

Հայաստանի բարենորոգումները, ուրեմն, նրանից դուրս

ապրող հայերին ոչինչ չէին տալու¹:

Այսպիսին էր բարեկարգվելիք Հայաստանի ծրագրի իրական արժեքը: Պատահական չէ, որ փաստաթուղթը Հայկական հասարակության մեջ արժանացավ իրարամերժ գնահատականների:

ՏԱՐԱԲՆՈՒՑԹ ԶԳԱՑՈՒՄՆԵՐ ՀԱՅՈՑ ՄԵՋ

Հունվարի 26-ի համաձայնագիրը միանշանակ չընդունվեց Հայոց մեջ: Եթե Ազգային պատվիրակության և Հայ եկեղեցու գնահատականը անվերապահ դրական էր, ապա հասարակության վերաբերմունքը՝ խիստ տարբեր: Այսինքն՝ Հայկական հասարակության մեջ միաժամանակ առկա էին լավատեսությունն ու հոռետեսությունը:

Առաջին լավատեսն ինքը՝ Պողոս Նուբար փաշան էր:

Ռուսական հեռագրական գործակալության թղթակցին տված հարցազրույցի ընթացքում Պողոս Նուբարը, պատասխանելով նրա այն հարցին, թե՞ «Կարելի՞ է արդյոք հարցնել Ձեզ, թե արդյոք Դուք հավատո՞ւմ եք այն բանին, որ Թուրքիան կ'իրականացնի հենց նորերս խոստացած բարենորոգումները», ասել էր. «Ես հիմք չունեմ կասկածելու, որ Բ. Դուռը կկատարի իր խոստումը, որովհետև բարենորոգումների ծրագիրը վերջնական խմբագրությամբ ստորագրվել է օսմանյան կառավարության և մեծ պետությունների Կ. Պոլսի ղեսպանների կողմից: Բացի այդ, Թուրքիան չի կարող մոռանալ, որ բալկանյան պատերազմը և նրա եվրոպական գավառների կորուստը առաջացան նրա՝ Մակեդոնիայում բարենորոգումներ չմտցնելուց: Թուրքիան հասկացել է, որ իր կայսրության ամբողջությունն ապահովելու համար՝ բարենորոգումներ մտցնելն իր սեփական շահն է: Մեծ տերությունները, իրենց կողմից, Հայտնեցին, որ այդպես է, իսկապես, և իրենց քաղաքականությունը»:

¹ Այդ մասին դեռ տարիներ առաջ գրել էր «Ազատամարտը» (տե՛ս № 16, 31 սեպտեմբերի – 13 հոկտեմբերի 1911 թ.):

«Հարց. – Բայց ի՞նչ գրավական կա, որ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը, որ քանի անգամ խախտվեց, վերջապես պետք է կատարվի:

Պատասխան. – Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվում էր բարենորոգումներ մտցնել իր գավառներում եվրոպական պետությունների հսկողությունում: Սակայն Թուրքիան այդպիսի վերահսկողությունը գտավ ստորացուցիչ և հրաժարվեց համաձայնություն տալուց: Բարեբախտաբար դիվանագիտությունը կարողացավ գտնել մի բանաձև՝ Բ. Դուան բժախնդրությունը բավարարություն տվող: Այժմ այդ վերահսկողությունը պետք է կատարվի ոչ թե ուղիղ ճանապարհով՝ մեծ պետությունների առանձին պատվիրակների միջոցով, այլ Թուրքիան ինքը պետք է ընտրի երկու գլխավոր վերատեսուչ չեզոք պետությունների հպատակներից, թեկնածուների այն ցուցակից, որ կառաջադրվի նրան պետությունների կողմից: Այդ երկու ընդարձակ լիազորություններով օժտված վերատեսուչների վրա պետք է դրվի հայկական գավառներում բարենորոգումներ մտցնելու միսիան: Այդպիսի ճանապարհով խնայվեց Թուրքիայի ինքնասիրությունը, որովհետև երկու վերատեսուչն էլ նշանակվելու են նրա կողմից և համարվելու են օսմանյան պաշտոնյաներ:

Ինչ վերաբերում է պետություններին, նրանք բարենորոգումներ մտցնելու մասին գրավական կստանան այն բանում, որ վերատեսուչներն ընտրվելու են առաջարկվող թեկնածուներից և ստանալու են միանգամայն ընդարձակ լիազորություններ:

Հարց.- Իսկ իրենք՝ հայերը, կբավարարվե՞ն արդյոք հարցի այդ նոր վճռով: Որովհետև ես առիթ եմ ունեցել հայկական երկու միտինգում լինելու, որ տեղի ունեցան Կահիրեում և Ալեքսանդրիայում, և ես հասկացա, որ այստեղ քարոզվող միջոցները փոքր-ինչ տարբերվում են նրանցից, որ յուրացրել է դիվանագիտությունը:

Պատասխան:- Անկասկած և մեր մեջ, ինչպես և ուրիշ ժողովուրդների մեջ, կան խանդավառվող և ուտոպիստ մարդիկ, սակայն կարող եմ ձեզ հավատացնել, որ թուրքահայերը, նրանք, որոնց դատը [ինձ] վիճակվեց իմ պաշտպանություն տակ առնել,

պահանջում են միայն բարենորոգումներ, որ ապահովվեց իրենց կյանքը և արդարությունը: Նրանց ստացած ստատուսը մի քանի թերություններ է պարունակում, սակայն նա սահման է դնում ներկա անարխիական դրությունը և համապատասխանում է հայերի համեստ պահանջներին և դրանով էլ բավարարում է նրանց: Ես ամեն կողմից ստացել եմ այդ մասին հավաստիացումներ և միաբերան երախտագիտություն ասպացույցներ»¹:

Վերջում արտահայտելով իր երախտագիտությունը ուսական կառավարությունը՝ Նուբար փաշան հավաստիացնում էր, որ հայ ժողովրդի բացարձակ մեծամասնությունը շնորհակալական խոր զգացումներով է տոգորված դեպի Ռուսաստանը, նրա կառավարությունը, որը տառապյալ թուրքահայությունը աջակից լինելու մտահոգությամբ ամբողջ մի տարի տևած դիվանագիտական ծանր պայքարի գնով կարողացել էր ձեռք բերել հունվարի 26-ի համաձայնագիրը: Ռուսիայի միջամտությունը ոչ միայն օգնեց հայերին, այլև նպաստեց հեռացնելու եվրոպական խաղաղությունը սպառնացող վտանգները:

«Կուզեի հաղորդել նույնպես, - ասում էր Պողոս Նուբար փաշան, - որ կայսր Նիկոլայ II-ի անունը խոր դրոշմված կմնա հայերի սրտում, որոնք ապրում են աշխարհի բոլոր պետություններում, նույնպես և Ռուսաստանում, և որոնք շնորհակալ են հունվարի 26-ի համաձայնագրի համար, որը Անատոլիայի մեր եղբայրներին տալիս է ապրելու իրավունք»²:

Գոհունակության անխառն զգացում էր տիրում էջմիածնում: Ամենայն հայոց կաթողիկոսը բազմաթիվ ուղերձներ ուղղույնի հեռագրեր էր ստանում Ռուսաստանից, Թուրքիայից, Պարսկաստանից, եվրոպական երկրներից, Ամերիկայից:

Կաթողիկոսին ջերմորեն շնորհավորեց Կովկասի փոխարքա կոմս Իլարիոն Իվանովիչ Վորոնցով-Դաչկովը: 1914 թ. մարտի 16 նամակով փոխարքան հայտնում էր իր ուրախությունը կա-

¹ «Մշակ», № 59, 18 փետրվարի 1914 թ.:

² Նույն տեղում:

տարվածի կապակցությունը և թուրքահայ ժողովրդին մաղթում բարօրություն և հանգիստ կյանք¹:

Ձեռք բերած համաձայնության առթիվ Պողոս Նուբարը Փարիզից հետևյալ հեռագիրն ուղղեց էջմիածին՝ Կաթողիկոս Գևորգ V-ին. «Բաղդավոր եմ մատուցանել Ձեր Սրբութեան իմ ամենայնազալից շնորհավորությունները վասն երջանիկ ավարտման համաձայնութեան ի մասին հայկական ռեֆորմների: Նորին Մեծություն Ցարի կառավարութեան եռանդուն գործունեութեան և Ձեր Սրբութեան իմաստուն հեռատեսութեան ու բարձր ղեկավարութեան ենք պարտական, որ Ասիական թուրքիայի մեր եղբայրները կարողանան այսուհետև ապրել ապահովութեան և արդարութեան մի ռեժիմի ներքոյ»:

Համաձայնագրի ստորագրման երկրորդ օրը՝ 1914 թ. հունվարի 27-ին, Կ. Պոլսի հայոց պատրիարք Զավեն սրբազանը Հայկական հարցի վերաբերյալ գրություն ուղարկեց էջմիածին՝ Վեհափառ հայրապետ Գևորգ V-ին հաղորդելով կարևոր տեղեկություններ, միաժամանակ շեշտելով այն պատմական դերը, որ Կաթողիկոսը կատարել է հայկական հարցը առաջ տանելու գործում: Պատրիարքը գրում էր. «Ազգային մեր դատը հասած է իր առաջին հանգրվանը: Առաջին և սրբազան պարտք կը համարենք մեզ, յանուն մեր և ժողովներու*, խորին երախտագիտութեան պարտքը հատուցանել Ձեր Ս. Օծութեան, որ թյուրքահայ տառապած Ձեր հոտի աղերսները ի նկատի առիք և ոչինչ խնայեցիք անոնց վիճակին բարվոքման: Ձեր Վեհափառութեան ջանքերը, բարեբաղդ եմ ըսելու ամուլ չմնացին, և այսօր պիտի ավետեմ, որ հայկական պահանջներու հիմնական մասերու շուրջ վերջնականապես գոյացավ համաձայնություն Բ. Դոնէն և ռուս կառավարութեան միջև»²:

Հետևում են Կաթողիկոսին ուղղված ուրիշ շնորհակալական

¹ ՀԱԱ, ֆ. 1262 (113), ց. 3, գ. 1172, թ. 26:

² «Մշակ», № 27, 6 փետրվարի 1914 թ.:

* Կ. Պոլսի պատրիարքության քաղաքական և կրոնական ժողովները:

³ ՀԱԱ, ֆ. 1262 (113), ց. 3, գ. 1178, թ. 2:

հեռագրեր: Ազգային պատվիրակության անդամ Գևորգ արք. Ութույցանը Մանչեստրից գրում էր. «Ձեր Սրբութեան անունն արդարև անմահ պիտի մնայ ի չարս Մեծանուն Հայրապետաց»¹: Իսկ Պատվիրակության անդամներից Հարություն Մոստիշյանը Լոնդոնից Վեհին հղած հեռագրում նշում էր, թե բարենորոգումների համաձայնագիրը ձեռք է բերվել շնորհիվ «Ձեր Վեհափառութեան նշանակած ուղղութեան ու գծած սահմանին: Թուրքիոյ հայկական նահանգներու Հայոց վիճակին բարւոքման համար Ձեր Հայրապետական բարձր Սրբութեան ի հանդէս բերած ձեռներէցութիւնը ամենափայլուն դրուագներէն մին պիտի լինի Հայ ազգային տարեգրութեանց եւ ներկայ ու ապագայ ամբողջ Հայութիւնն Ձեր Ս. Օծութեան շնորհապարտ պիտի մնայ յաւէտ առ այն»²:

Իսկապես անուրանալի էր Գևորգ V կաթողիկոսի դերը, որը կարողացավ հաջող ընտրություն կատարել հանձին Պողոս Նուբար փաշայի՝ իբրև տվյալ ժամանակում հայոց ազգային դատի պաշտպանության համար ամենաձեռնհաս և հմուտ անձի: Մի ամբողջ տարի Պողոս Նուբարը տքնեց, գործեց ուժերի գերագույն լարումով, չխնայեց իր ժամանակն ու հանգիստը, ինչպես նաև սեփական նյութական միջոցները ազգային դատի պաշտպանության համար: Այդ ամեն գոհողությունների շնորհիվ էր, որ կարողացավ ձեռք բերել շոշափելի արդյունք:

Պողոս Նուբարի՝ էջմիածին հղած հեռագրին հետևեց Գևորգ V-ի հունվարի 29-ի պատասխան հեռագիրը նրան՝ իր գործը հաջողությամբ պսակելու համար. «Paris, 12, Avenue du Trocadero, Իմ շնորհակալությունս Ձերդ վսեմափայլութեան Ձեր եռանդուն գործունեութեան համար Տաճկաստանում բարենորոգումներ մտցնելու առթիվ: Բախտաւոր եմ, որ մեր եղբայրների գործը յաջողութեամբ է առաջ ընթանում: Հայցում եմ Աստուծոյ օրհնութիւնը Ձեր եւ Ձեր ընտանեաց համար:

Գէորգ Կաթողիկոս Ամենայն հայոց»³:

¹ «Արարատ», № 3, մարտ, 1914, էջ 218:

² Նույն տեղում:

³ «Արարատ», № 2, փետրվար, 1914, էջ 121:

Գևորգ V-ը նաև 1914 թ. փետրվարի 20-ին հռչակում է երախտընկալ օրհնություն «Կոնդակ յանուն Պողոս փաշայ Նուբարի»: Բարձր գնահատելով Ազգային պատվիրակության ղեկավարի կատարած անձնվեր ու կորովի գործը և արտահայտելով իր ջերմ համակրանքն ու կատարյալ գոհունակությունը, ինչպես և Մայր Աթոռի երախտագիտական զգացումները՝ Կաթողիկոսը շնորհում էր. «Արդարև Դո՛ւք, արժանաւոր ժառանգ մեծահամբաւ հօր, ազգօգուտ եւ մարդասէր գործունէութեամբ Ձերով անմահացուցիք զգրուատելի անուն Ձեր եւ թոռիք զյիշատակ բարի եւ անեղծանելի յազգային պատմութեան մերում... Ուստի եւ Մենք՝ Ծայրագոյն պատրիարք եւ Կաթողիկոս համայն Հայոց, այսու Հայրապետական Կոնդակաւ Մերով յայտնենք Վսեմափայլութեան Ձերում զկատարեալ գոհունակութիւն եւ զսրտագին շնորհակալութիւն Մեր, սփռելով լիովի օրհնութիւնս ի վերայ Ձեր, ազնուաշուք գերդաստանիդ եւ սիրասուն զաւակաց Ձերոց»¹:

Հետևում է Նուբար փաշայի փետրվարի 21-ի պատասխան հեռագիրը Փարիզից. «Բախտաւոր եմ մատուցանել Ձերդ Սրբութեան ակնածայի շնորհաւորութիւններ Հայաստանի բարենորոգումների համար բարեյաջող համաձայնութեան գալու առթիւ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՌՈՒՍԱՅ ԿԱՅՍԵՐ կառավարութեան եռանդուն գործունէութեան եւ Ձեր իմաստուն հեռատեսութեան, բարձր ցուցումների շնորհիւ: Մեր Ասիական Թուրքիայի եղբայրներն այսուհետեւ հնարաւորութիւն կ'ունենան ապրելու արդարադատ եւ ապահով վարչութեան ներքոյ»: Ապա իր և իր գլխավորած պատվիրակության գործն ավարտած համարելով՝ նա շնորհակալություն է հայտնում Կաթողիկոսին՝ «ցոյց տրուած վստահութեան եւ մեծ պատուոյն համար»²:

Հայկական մամուլի բազմաթիվ հրապարակումների հեղինակներ Նուբար փաշային անվանում էին հայոց պատմության բացառիկ դեմքերից մեկը, որն իր դիվանագիտական տաղանդով

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 68, թ. 1:

² Նույն տեղում, գ. 47, թ. 17:

արեց ավելին, քան կարող էին անել ազգային իշխանությունները և կուսակցությունները միասին վերցրած:

Որքան էլ անսպասելի էր, Պողոս Նուբարին գովեստի շուրջ խոսքեր էր ուղղում Դաշնակցությունը: Դա բացառիկ դեպքերից մեկն էր, որ կուսակցությունը դրական խոսք էր ասում իր շարքերից դուրս գտնվող ոչ դաշնակցական որևէ գործչի հասցեին:

«Դրօշակը» գրում էր. «Բարեբախտաբար Պողոս Նուբարը յայտնեց [իրեն] մի խոշոր ու տաղանդաւոր գործիչ և մեն-մենակ արեց աւելին, քան ամբողջ Հայ բուրժուազիան: Մէկ ու կէս տարւան իր անդուլ, հայրենասէր գործունէութեամբ նա գրաւեց մի էջ Հայ նորագոյն պատմութեան մէջ: Տեղը եւ ժամանակը չէ ի յայտ բերելու այդ գործունէութեան մանրամասները, յիշատակելու այն խոչըրը, որ Նուպար հարթեց եւրոպական մի քանի դահլիճներում՝ իր կարող ու համոզիչ տրամաբանութեամբ՝ հայկական խնդրի կանոնաւոր ընթացքը ապահովելու համար: [Թեև] դեռ հեռու ենք, անշուշտ այդ ընթացքը կատարելապէս ապահովելուց...»:

Դաշնակցությունը հայտարարում էր, որ ինքն այլևս տարբերություն չի դնում, թե հայկական հասարակության մեջ որ քաղաքական ուժն է ազգաչեն գործ կատարում, որ իր համար գլխավորը հարազատ ժողովրդին օգտակար լինելն է: «Մենք պատրաստ ենք գոհունակութեամբ եւ նոյնիսկ խանդաւառութեամբ արձանագրել ու դրատել մանաւանդ այն գործերն ու դէմքերը, - գրում էր «Դրօշակը», - որոնք հրապարակ են գալիս մեր շարքերից դուրս եւ դրում են ի սպաս մեր բազմաչարչար ժողովրդի: Այդ կատեգորիային է պատկանում Պողոս Նուպարի անձնաւորութիւնը, որ չենք կարող չ'ողջունել, իբրև մի երեսոյթ մեր աղքատիկ իրականութեան մէջ, թէպէտ եւ տարածութիւնը մեծ է նրա եւ մեր հայեացքների միջև: Թո՛ղ լինին մեզ հակառակ, թող պայքարեն շիտակօրէն մեր գաղափարների ու տակտիկի դէմ, փո՛ղ չէ. որքան շատ լինին նրանք, այնքան լաւ, որովհետեւ իրօք յուսահատական է մարդկանց սովը, զարհու-

¹ «Դրօշակ», № 1, հունվար, 1914, էջ 3:

րելի է կարող, ձեռնհաս գործիչների պակասությունը մեր հայրենի բուրժուազիայի մէջ... Հակառակորդ մեր քաղաքական ու ընկերային գաղափարներով՝ մեզ միշտ յամենայն դէպս պիտի կապէ նրանց հետ շիտակ, անկեղծ հայրենասիրությունը, ազնիւ ու անձնէր աշխատանքը յօգուտ հարազատ ժողովրդի բարօրութեան եւ ընդհանուր գիտակցությունը ազգային տարրական շահերի ու իրաւունքների»¹:

Պողոս Նուբարի կատարած գործը բարձր էր գնահատվում նաև Եվրոպայում: «Genève» (Շվեյցարիա) թերթում 1914 թ. փետրվարի 17-ին «F.V» ստորագրությամբ հրատարակված հոդվածի հեղինակը գրում էր. «Ոչինչ էլի արվի, եթե չլինեն նրա երկարատև և անհամար բանակցությունները եվրոպական պետությունների կառավարությունների հետ»:

«L'homme Libre» թերթի 1914 թ. փետրվարի 15-ի համարում տպագրված իր հոդվածում Ֆրանսիայի նախկին նախարար և հայտնի հասարակական գործիչ Ժորժ Կլեմանսոն գրում էր, որ ռուս-թուրքական համաձայնագիրը ձեռք բերվեց շնորհիվ Պողոս Նուբարի «ձկուն ու հարատևող մի գեղեցիկ խառնվածքի», որը դեպի իրեն տրամադրեց եվրոպական կարիներտների համակրանքը: Որպես Ազգային պատվիրակության ղեկավար՝ նա ոչ մի օր էլ անցկացնում առանց ջանքեր թափելու իր ժողովրդի արդարացի դատի համար:

Կովկասահայ մամուլը Գևորգ V կաթողիկոսին առաջարկում էր հարմար պահի հայ ազգի երախտագիտական զգացումները ներկայացնել Նորին Կայսերական Մեծությունը, Ռուսաստանի արտաքին գործերի նախարարին, ինչպես և ռուսական այն բոլոր դիվանագետներին, որոնք զբաղվել են հայկական հարցով, նաև Կովկասի փոխարքային, որը մեծ բարյացակամությամբ էր վերաբերվել թուրքահայ ժողովրդի ձգտումներին, մասնավորապես Պետերբուրգ հղած իր գեկուցագրում շեշտել էր, որ թուրքահայ ժողովրդի տառապանքներն ամօքելը չափազանց կարևոր և խիստ անհրաժեշտ է Ռուսաստանի համար:

¹ «Դրօշակ», № 1, հունվար, 1914, էջ 4:

Եվ Կաթողիկոսը նախապատրաստվեց հարմար և պատշաճ եղանակով հայ ժողովրդի ու եկեղեցու երախտագիտությունն արտահայտել կայսերական կառավարությունը մարդասիրական ջանքերի համար:

Ամենից առաջ Գևորգ V վեհափառը Կովկասի փոխարքայի միջոցով նախ երախտագիտական ուղերձ է հղում կայսր Նիկոլայ II-ին: Կ. Պոլսի ռուսաց դեսպանատան միջոցով ռուսաց ցարին ուղերձ է հղում նաև թուրքահայոց պատրիարքը:

Հունվարի 26-ի համաձայնագրի առթիվ Ամենայն հայոց Գևորգ V կաթողիկոսը հեռագրով ջերմագին տողեր էր հղում ռուսաց արտգործնախարար Սերգեյ Գմիտրիևիչ Սազոնովին: Նա գրում էր.

«Տաճկահայոց կյանքի այս պատմական օրերին, երբ Ձերդ Բարձր Գերագանցություն հաստատակամ եւ բարձր մարդասեր քաղաքականություն հնորհիվ հիմք է դրվում իմ հօտի հոգեկան ոյժերի խաղաղ ու քաղաքակրթական զարգացմանն այնտեղ, ուր մինչեւ այժմ թագաւորում էր քրիստոնեայ բնակչութեան հետեւողական ոչնչացման սիստեմը: Երբ Ազատարար Կայսրի մեծ գործը ամբողջ մի ժողովրդի բարիքի եւ յառաջադիմութեան համար սկսում է փոխակերպուել կենդանի իրականութեան, ժողովուրդ, որը դարերի ընթացքում տարել է անընդհատ հայաժանքներ իր հնագույն քրիստոնէական կրոնին համատարիմ մնալու եւ դեպի մեծ Ռուսաստան ձգտելու համար, երբ իմ սիրեցեալ միապետ Նիկոլայ Բ. թագավոր կայսեր նորին վեհապետական կամքի համաձայն հայ ժողովուրդը նորից կոչվում է պատմական ասպարեզ, ինչպէս միակ տարր, ընդունակ իրականացնելու Ասիական Թուրքիայում եւրոպական հոգեւոր եւ նիւթական մշակոյթի սկզբունքները - այս պատմական օրերին իմ սրբազան պարտքն եմ համարում արտայայտել Ձերդ Բարձր Գերագանցություն իմ եւ ամբողջ հայ ժողովրդի անկեղծ շնորհակալութեան զգացմունքը»:

Արտակարգ ջերմագին զգացումով Գևորգ V-ը 1914 թ.

¹ АВПРИ, ф. «Политархив», г. 1914, д. 3474, л. 15 (об.).-16.

ապրիլի 16-ին ընդարձակ նամակ է հղում Թիֆլիս, Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին՝ արտահայտելով իր և ողջ հայ ժողովրդի երախտագիտական զգացումները նրա նկատմամբ: «Իմ ամենաառաջին պարտականությունն եմ համարում արտահայտել իմ ջերմ երախտագիտությունը Ձեզ՝ հայ ժողովրդի օգտին Ձեր բոլոր արածների համար Ձեր Կովկաս գալու օրից սկսած ամբողջ ժամանակ: Դուք, Ձերը Պայծառափայլութիւն, ներկայացաք հայ ժողովրդի իսկական ձգտումների բացատրողը, վերահաստատեցիք նորա բարի անունը կայսերական կառավարութեան մոտ»¹: Ապա՝ «բարերար միջոցներով Ռուսաստանի հայերի խաղաղ զարգացման արգելքները հեռացնելով, ընդգծում էր կաթողիկոսը, - Դուք Ձեր հեղինակավոր խոսքով մեծապես նպաստեցիք նոյնպես և Հայոց հարցի Տաճկաստանում յաջող լուծելուն, որվհետև առանց Ձեր միջոցով վերահաստատուած բարեացակամ քաղաքականութեան, չէր կարելի յուսալ Ռուսաստանի այն ուժեղ միջամտութեան տաճկահայոց գործում, առանց որի անկարելի էր հասնել այդքան բարերար արդիւնքների»²:

Համաձայնագրի ստեղծման ուղղությամբ կատարած աշխատանքի հիմնական ծանրությունն ընկած էր եղել Կ. Պոլսում ռուսաց ղեսպան Միխայիլ Նիկոլայևիչ Գիրսի, ղեսպանության առաջին թարգման Անդրե Մանդելշտամի և Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Դմիտրիևիչ Սազոնովի վրա: Նրանց բարձր էին գնահատում ռուսաց կառավարությունը, հայ և ռուս քաղաքական ու հասարակական գործիչները: Բայց հատկապես անգնահատելի էր ղեսպան Գիրսի խաղացած դերը, որը ստիպված էր եղել մաքառել բազում դժվարությունների դեմ: Մի կողմից նա ուժերի ներածին չափ կատարել էր հայերի ցանկությունը և նրանց համար ձեռք բերել լայն բարենորոգումներ, մյուս կողմից ջանք չէր խնայել՝ հաղթահարելու դիմադրությունը թուրք կառավարության, որն ամեն ինչ անում էր՝ ի չիք

¹ ՀԱԱ, ֆ. 1262 (113), ց. 3, գ. 1172, թ. 26:

² Նույն տեղում:

դարձնելու բարենորոգումների ծրագրի էական մասերը: Ռուսական արտգործնախարարության պաշտոնական փաստաթղթում կարդում ենք. «Բ. Դուան հետ համաձայնություն կայացնելու բոլոր հիմնական աշխատանքներն ընկել էին Կոստանդնուպոլսում Ռուսաստանի ներկայացուցչի վրա, որի հմտությունն ու ավյունը բավականին հայտնի են...»¹:

Ինչպես հայկական բարենորոգումների նախնական նախագծի պատրաստման, այնպես էլ Կ. Պոլսի հայոց պատրիարքության հետ համերաշխ հարաբերություններ մշակելու ուղղությամբ անգնահատելի էր եղել Կ. Պոլսի ռուսաց ղեսպանության առաջին թարգման (դրագոման), պետական խորհրդական Անդրե Մանդելշտամի դերակատարությունը²:

Կաթողիկոսը Կովկասի փոխարքայության միջոցով իր հավատացյալների ու ամբողջ հայ ժողովրդի անունից շնորհակալական ջերմ ուղերձներ է հղում վերը նշված ռուս ղիվանագետներին: Սազոնովի և Գիրսի անունով երախտապարտության գրություններ է հղում նաև Կ. Պոլսի հայոց պատրիարքը^{*}:

Ռուսական ղիվանագետների և մյուս գործիչների նկատմամբ հայերի երախտագիտական բուռն զգացումների արտահայտություններին հետևում էին ոչ միայն Թուրքիայում, այլև եվրոպական մայրաքաղաքներում:

Այսպես, Կ. Պոլսում ֆրանսիական գործերի հավատարմատարը 1914 թ. փետրվարի 25-ին արտգործնախարար Դումերգին ուղարկած պաշտոնագրի մեջ նշում էր, որ հայ գործիչները «բարձրագույն հայտարարում են իրենց երախտագիտությունը

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1913, д. 3465, л. 151 (об.).

² Տե՛ս նույն տեղում:

* Նկատի ունենալով բարենորոգումների իրականացման ծանրությունը՝ ռուսական կառավարությունը անհրաժեշտ համարեց վարել ավելի նուրբ քաղաքականություն և նախատեսեց Գիրսի փոխարեն Կ. Պոլսում ղեսպան նշանակել Իզվոլսկուն (տե՛ս «Մշակ», № 21, 30 հունվարի 1914 թ.): Օրեր անց՝ 1914 թ. փետրվարին, Կոկովցից հետո Ռուսաստանի վարչապետ դարձավ Ի. Գորենիկինը:

Ռուսաստանի հանդեպ, որին այժմ նրանք համարում են իրենց ազգի գլխավոր հովանավորը»¹:

Ձնայած համաձայնագրի արդյունավետության մասին հայկական հասարակության մեջ եղած մեծ կասկածներին և թերահավատությունը, այնուամենայնիվ այն ընդհանուր առմամբ շատերի կողմից նշանակալի քայլ համարվեց՝ որպես հայկական հարցի վերջնական լուծման ճանապարհի կարևոր մի հանգրվան: Հատկապես հայ մտավորականներից շատերն էին բավարարված ձեռք բերած ոչ մեծ հաջողությամբ: Վահան Փափագյանը վերհիշել է. «Ցնծութիւնը ընդհանուր էր: Ամենքս հաւատացած էինք որ վերածնունդի նոր շրջան մը կը բացուէր: Ձեռք բերուած բարենորոգումները առաջին հանգրուանը կը համարէինք՝ հասնելու ապագայ աւելի լայն ու ազատ զարգացման»²: Մարդիկ համոզված էին, որ «բարենորոգումներն այս անգամ այլևս լուրջ են, ու հայրենի հողին վրայ պիտի ծաղկի նոր կեանք մը»³:

Իր բարեկամներից մեկին (հավանաբար՝ Արչակ Չոպանյանին*) ուղղած նամակում, ռուս-թուրքական համաձայնագիրը մեծ իրադարձություն համարելով⁴, Գրիգոր Զոհրապը գրում էր. «Վեց ամսէ ի վեր այսօր առաջին անգամ լինելով, ուրախ եմ»⁵:

Ավելին, ռուսահայ գործիչների առավել լավատես մասը բարենորոգումների ծրագիրն ընկալեց իբրև հրաշքի նման մի բան:

Հայտնի տնտեսագետ Ռուբեն Բերբերյանը գրում էր. «Հրա՞շք: Ինչո՞ւ չէ: Մարդկային պատմութիւնը իր յառաջընթաց ճանապարհին աւելի շատ ենթարկուել է քաղաքական անակնկալ իրադարձությունների հետեւանքներին, այլ խոսքով՝ հրաշքների, քան թէ բնականոն եւ սպասուած ու նախատե-

¹ «Հայաստանը միջազգային դիվանագիտության ...», էջ 363:

² Վահան Փափագյան, Իմ յուշերը, հատ. երկրորդ, էջ 272:

³ «Միտք», № 6 (26), 15 փետրվարի 1914 թ.:

* Նամակից չի երևում, թե ում էր հասցեագրված:

⁴ ԳԱԹ, Գրիգոր Զոհրապի ֆոնդ, թղթապ. 2178^ա, թթ. 1-6:

⁵ Նույն տեղում, թ. 6:

սուած արդիւնքի: Բաւական է, որ վերյիշենք վերջին տասնեւհինգ տարիների պատմական դէպքերը և անսպասելի հետեւանքները, որպեսզի ասենք թէ՛ «ինչ որ նախատեսուած էր, չիրագործուեց. ինչ որ համարում էր անկարելի, իրագործուեց»¹:

Նույնպիսի կարծիք էր հայտնում Ավ. Խահակյանը Բեռլինից Ամերիկա՝ Ս. Վրացյանին հղած նամակում. «Ես քեզ չափ հոռետես չեմ նայում մտցվելիք ռեֆորմների վրա: Ինձ թվում է, թե որքան փոքր ծավալի [լինեն] ռեֆորմները՝ այնքան ավելի հեշտ իրականանալի կլինեն: Եվ ի՞նչ օգուտ մեծ ծրագրերից՝ միայն թղթի վրա: Սթափ պիտի մտածել. ավտոնոմիան առայժմ անկարելի է: Մի քիչ հետո, մի 10 տարի, մենք ազգ կազմելու վրա ենք: Ապագա ունենք, և գծված է ուղին: Գնանք սրտով և եռանդով: Դու էլ լավ կանես, որ երկիր դառնաս. ձանձրալի է ոչ միայն Ամերիկան, այլև Եվրոպան: Գնա Վան, Կարին, ես էլ գալիս եմ ...»²:

Նույն Ս. Վրացյանին Բարսեղ Շահպաղը գրում էր, թե «ինձի պատմեցին, թէ Սեբաստիոյ մէջ մէկ երկու հոգի լսելով, որ Պողոս փաշան հեռագրեր է, թէ լուծուեցաւ վերջացաւ հայկ. հարցը, գացեր, ծախեր են իրենց ատրճանակը, ասելով որ ալ պէտք չկայ»³:

Առանձին դեպքերում ոգևորությունը հասնում էր ծայրահեղությունների:

Այսպես, եթե հնչակյան ղեկավարությունը հայկական բարենորոգումների ծրագիրը համարում էր թերի ու անհեռանկար, բայց կուսակցության առանձին տպագիր օրգաններ ու կուսակցականներ չէին բաժանում ղեկավարության հոռետեսությունը և ղրսևորում էին ծայրահեղ խանդավառություն:

Թավրիզում հրատարակվող հնչակյան «Միտք» թերթի առաջնորդող հոդվածում ցնծություն էր.

«Հայկական ռեֆորմներ ...

¹ «Հայրենիք», № 6 (210), ապրիլ, 1940, էջ 62:

² Սիմոն Վրացեան, Հին թղթեր նոր պատմութեան համար, էջ 347:

³ «Վէմ», № 1, հունվար-ապրիլ, 1935, էջ 93:

Յնորքն իրականացված ...

Մենք հասանք մեր Ավետյաց երկիրը:

Շատ անգամ խոստացված ռեֆորմների անպայման գործադրման առթիվ մեր փայլուն հույսերը վերջացել են դառն հիասթափություններով և ծանրագույն տագնապներով: Հուսանք այս անգամ այլևս չենք հանդիպի սովորական հուսախաբությունը: Հուսանք և բարեմաղթենք ...»:

Այդ ցնծալից տրամադրությունների մթնոլորտում դեռևս 1914 թ. փետրվարի 17-ին եկեղեցական թեմերի առաջնորդներին ուղղված չրջաբերականում Ձավեն պատրիարքն առաջարկում էր անցկացնել Թուրքիայի հայ բնակչության ճշգրիտ մարդահամար, կազմել հայերից խլած հողերի և զավթած անշարժ գույքի ստույգ ցուցակներ, մանրամասն ուսումնասիրել և պատրիարքարան ներկայացնել ցուցակն այն անձանց, որոնք ունակ կլինեն ստանձնելու համապատասխան պաշտոններ հայկական վիլայեթների վարչական, դատական ու ոստիկանական բնագավառներում¹:

Հունվարի 26-ի համաձայնագրին արձագանքեցին հայ մամուլի համարյա բոլոր օրգանները: Դրանցից մի քանիսը՝ «Մշակ», «Արևելք», «Հորիզոն», «Բյուզանդիոն», որոնք ամբողջ 1913 թ. լայնորեն լուսաբանել էին հայկական պատվիրակության և պետությունների դիվանագիտական ծառայությունների գործունեությունը, այժմ ամփոփում էին իրենց հրապարակումները, կատարում համաձայնագրի քննական վերլուծություն, ընթերցողներին ցույց տալիս փաստաթղթի արժանիքներն ու թերությունները:

Բայց ոչ բոլոր հայերն էին ոգեչնչված:

Արշակ Չոպանյանին հղած նամակներից մեկում Գրիգոր Չոհրապը ներքին տագնապով գրում էր. ««Ստացածնիս» որոշ ժամանակամիջոցի մը համար է միայն, և անիկա մեր մշտնջենական ճակատագիրը չի ճշտեր. խաղաղ զարգացումի *étape* մը ապահովեցինք, ոչ ավելի ոչ պակաս»²:

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 3, թ. 24:

² «Արևմտահայ գրողների նամականի: Գրական ժառանգություն», գիրք VI, պրակ I, Երևան, 1972, էջ 51:

Թուրքահայության հիմնական զանգվածները, ելնելով անցյալ տասնամյակների դառը փորձից, հոռետես էին, հավատ չէին տածում բարենորոգումների ծրագրի գործադրության նկատմամբ:

Հաշվի առնելով անցյալի դառը փորձությունները, հատկապես Թուրքական դիվանագիտության անափ խորամանկությունները՝ «Դրոշակը» գտնում էր, որ պետք չէ անհոգ մնալ, թուլացնել զգոնությունը, քանզի ստացված արդյունքը ամենրոպե կարող է վտանգի տակ հայտնվել:

«Ի՞նչ չափով և որքա՞ն ժամանակով կը գործադրվին ու՜՜ ֆորմները, ի՞նչ է սպասում Հայաստանի մէջ սահմանաժողովեան երկու վայրերին, ի՞նչ ծրագրերն են որոճում ուս ու գերման դիւանագէտները, ի՞նչ կը լինի առաջիկայ գարնանը, ի՞նչ նոր աղէտ կը պայթի Թուրքիոյ գլխին, - ո՞վ կարող է գուշակել: Առանց երկար տանջելու մեր ուղեղները ապարդիւն պրօզնոզներով ու մարգարէութիւններով կատարե՞նք մեր պարտականութիւնը, մնանք ամէն վայրկեան գործի հրապարակի վրայ եւ որ ամենից անհրաժեշտն է՝ սիրտ ու թե՛ւ տանք երկրի ժողովրդին, տա՛նք նրան միջոց, հնարավորութիւն ինքզինքը պաշտպանելու եւ այդպիսով առաջն առնենք այն լքումի ու յուսահատութեան, որի անխուսափելի հետեւանքն է կործանարար, հայրենասպան գաղթը...»¹:

Ս. Վրացյանին ուղղված վերը նշված նամակում Շահբազը շեշտում էր, թե «Ոչ ոք չի հաւատար այս բարենորոգումներուն ..., ամեն մարդ սկեպտիկ է»²:

Ավելին, հայկական բարենորոգումների ծրագրին ծանոթանալով, շատերը նույնիսկ հանգում էին համոզման, որ այն չի կարող բալասան լինել հայոց վերքերին: Մի բան է ծրագիր կազմել թղթի վրա, բոլորովին այլ բան՝ այն իրագործել: Նրանք մտածում էին, թե հայ ազգի համար գուցե վերադասելի էր Համիդի ժամանակները, երբ համենայնդեպս հայերի մեծամասնությունն իրապես ուներ նշանակալի մշակութային ինքնավարություն՝

¹ «Դրոշակ», № 1, Հունվար, 1914, էջ 4:

² «Վէմ», № 1, Հունվար-ապրիլ, 1935, էջ 93:

հայկական դպրոցներ, ազգային լեզվի գործածությունն դատարաններում և այլն:

Չնայած սկզբում ազատական «Մշակը» ջերմորեն ողջունեց հունվարի 26-ի համաձայնագիրը, թուրքահայերին դիմելով՝ գրեց, թե «Զեր սիրած Հայրենիքի, ձեր վաթանի արևն է ծագում: Բավ է՝ որքան տանջվեցիք, որքան արյուն թափեցիք, այժմ դեպի խաղաղ, հանգիստ ստեղծագործական աշխատանք»: Բայց նրա ոգևորությունը կարճատև եղավ: Երկու ամիս անց թերթի խմբագիր Հ. Առաքելյանը, վերլուծելով թուրքահայաստանի վիճակը, նշում էր, որ նրա գլխին շարունակում է կախված մնալ մեծ վտանգի սպառնալիքը¹: Իր մի ուրիշ համարում թերթը տպագրել էր էրզրումից ստացված իր թղթակցի հոդվածը, ուր արդեն այսպիսի տողեր կային. «Հայ ժողովուրդը չի հավատում ոչ հայկական ինքնավարության ցնորքին, և ոչ էլ եվրոպական կոնտրոլի միջոցով երկիրը բարեկարգելու հույսերին ... Հայ ազգաբնակչությունը ունի մի ուսուցիչ հույս. դա ռուսական գրավումն է»²: Բազմաթիվ ուրիշ հոդվածներում թերթը շեշտում էր, որ բարենորոգումների համաձայնագիրը ըստ էության քաղաքական որևէ խնդիր չի առաջադրում՝ ամեն ինչ հանգեցնելով միայն թուրքահայերի ֆիզիկական գոյության մասին խոսակցությունների և նրանց սեփականության ամենատարրական իրավունքների պաշտպանությունը:

Ամեն մարդ քաջ գիտեր, թե առաջին անգամ չէ, որ թուրքիան Եվրոպայի ճնշման տակ ստիպված ընդունել էր Հայաստանի բարենորոգումների համար ծրագիր: Բայց բանն այն է, որ անցյալում հանդիսավորապես կնքված դաշնագրերը թուրք պետական մարդիկ ամեն անգամ մեկնում էին իրենց ցանկացած ձևով: Իրենց գործողություններով նրանք ոչ թե վերջ էին դնում դժվարություններին, այլ նորերն էին սկսում: Ընդունելով եվրոպական երկրների առաջադրած պայմանները, Բ. Դուռը հաջորդ ընթացքին սկսում էր մտքում որոճալ դրանց գործադրումը

¹ «Մշակ», № 33, 13 փետրվարի 1914 թ.:

² Նույն տեղում, № 77, 13 ապրիլի 1914 թ.:

ձգձգելու տարբեր հնարքներ՝ դուռ բացելու համար նորանոր սակարկությունների առջև: Ի վերջո, երբ պատեհ առիթը ներկայանում էր, ապա չէր վարանում ձեռքի մի շարժումով պատռել և ջնջել դրանք, որոնք ստեղծված էին երկար ամիսների հոգեմաշ բանակցությունների ու թափած ջանքերի շնորհիվ:

Վանից «Մշակին» գրում էին. «Բարենորոգումների հարցը վերջացած լինելու լուրը մեզ այնչափ էլ չէ խանդավառում, ինչպես 1895 թ. հոկտեմբերին, երբ այդպիսի մի լուր որպես ավետիս հաղորդվեց մեզ, շատ ավելի մեծ ուրախություն առաջ բերելով այն ժամանակ. բայց դրանց անմիջապես հաջորդեցին կոտորածներ, արյուն ու ավեր: Թուրքիան նույնիսկ այժմ էլ պատրաստ է կրկնելու այդ վայրենի ակտը, եթե հյուսիսային դրացու սպառնալիքը իբրև կոչմար նրա գլխի վրա կախված չլինի: Ուրեմն պարզ է, որ մենք ո՛չ միայն խանդավառված չենք, այլև մինչև իսկ թերահավատ ենք: ... Միայն գործադրությունն ենք սպասում, որից հետո միայն կարող ենք համոզվել բարենորոգումների լրջությունը»¹:

Իսկ ինչ երաշխիք կար, որ բարենորոգումները կիրառվեին. ահա այն գլխավոր կետը, որ ինչպես տասնամյակներ առաջ, նույնպես և այդ օրերին մնում էր բաց ու չլուծված: Չկար որևէ երաշխիք, ուստի հայերը չէին հաշտվում այն իրողության հետ, որ կոնտրոլի հարցը դուրս է մնացել հունվարի 26-ի համաձայնագրից: Երաշխիքների հարցում չահագրգիռ պետությունների միջև նոր համաձայնություն չէր կայացել, քանի որ նրանք առանձին-առանձին իրենց շահերից էին մոտեցնել համաձայնագրին: Ահա գորղյան հանգույցը, որը քանդել չէր կարող տերություններից ոչ մեկը:

Շվեյցարական վերը նշված թերթում (“Genève”, 17.II) գետեղված հոդվածի հեղինակը գրում էր. «Ես ի ներքուստ կասկածում եմ բարենորոգումների գործադրման և նրա վերջնական ճակատագրի հետևանքների նկատմամբ: Ես ցանկանում եմ ինքս ինձ համոզել, որ դրանք չեն մնա միայն թղթի վրա, ինչպես բո-

¹ «Մշակ», № 28, 7 փետրվարի 1914 թ.:

լոր նախկինները: Պետք է, որ հայոց բարեկամները ցնորքներ ստեղծեն: Ընդունված ծրագրի գործադրումը, հավանորեն, կհանդիպի մեծ դժվարությունների»: Ապա՝ «Այդ նախագիծը կազմուել է թերի եւ վտանգաւոր ձեւակերպումներով, ամբողջ գործն օժտուած է պակասութեամբ՝ քանի որ Եւրոպան հետապնդում է արեւելքում աւելի շուտ դիտաւորեալ քայքայման, քան վերակազմութեան կամ բարվոքման»:

Օրենքները չեն կարող փոխել բարքերը, եթե օրենքների կատարումը չի վերահսկվում:

“L’homme Libre” թերթի հիշյալ հոդվածում ժորժ Կլեմանսոն համոզված նշում էր, որ Բ. Դուռը Հայաստանում չի կատարելու ոչ մի բարենորոգում և դրա համար հաշիվ չի տալու որևէ մեկին, իսկ պետությունները, չունենալով վերահսկելու միջոցներ, չեն էլ հարցնելու, թե նա ինչու չի կատարում ստանձնած պարտավորությունները¹:

«Եթէ ամեն մի երկրի դիւանագիտական շրջանների համար պարկեշտութիւնը հարաբերական իմաստ ունի, ապա այն բոլորովին անիմաստ է Թուրքիոյ մեջ»², - գրում էր Բոստոնի «Ազգ»-ը: Այդ էր պատճառը, որ հայոց պատրիարքարանում խորհում էին վերահսկողության սեփական մարմին ստեղծելու մասին, որը այս կամ այն չափով կարողանար վերահսկել բարենորոգումների ընթացքը: Բայց դա, անհրազործելի լինելով, մնաց որպես հիմքից զուրկ ցանկություն:

Մարքսիստները ևս գտնում էին, որ հունվարի 26-ի համաձայնագիրը հաղիվ թե որևէ դրական դեր խաղա:

“Путь правды” պարբերականը այդ մասին գրում էր. «Պրոլետարիատը բազմիցս իր բողոքն է արտահայտել Թուրքիայի գաղանջությունների դեմ: Առաջավոր բանվորները գիտակցում են, որ Թուրքահայերի դրությունը անհրաժեշտ է փոխել Թուրքիայի հին կարգերի լիակատար վերափոխման ճանապարհով: Մարքսիստները, այդուհանդերձ, հայտարարում են, որ Թուրքահա-

յաստանի բախտի որոշման գլխավոր դերը կարող է և պետք է պատկանի իրենց՝ Թուրքահայերին»:

Բարենորոգումների ծրագրին անդրադարձ էր կատարել տաղանդավոր գրականագետ և իրավաբան, հետագայում ակադեմիկոս Բաբույանը Մյանսիկյանը (Մարտունի): Ծրագրի շուրջ տերությունների դիվանագետների բանակցությունները սկսելուց ի վեր Ալ. Մյանսիկյանը հանդես էր եկել Հայկական հարցին առնչվող մի շարք հրապարակումներով («Ազգային հարցի առթիվ», «Ռուս լիբերալը հայկական հարցի մասին», «Հայկական հարցի գործնականը» և այլն)², որոնցում ներկայացնում էր ընդհանրապես ազգային հարցի և մասնավորապես Հայկական հարցի լուծման իր տեսլականը՝ ելնելով սոցիալ-դեմոկրատիայի ըմբռնումներից: Եվ ահա այժմ՝ հունվարի 26-ի համաձայնագրից հետո, նա խոր իմացություններով ուսումնասիրում ու իրավագիտություն տեսանկյունով ամենայն մանրամասնությամբ քննության է առնում այն և իր ուսումնասիրության արդյունքը տպագրում «Մշակի» 1914 թ. № 28-ում՝ «Հայկական ռեֆորմների նախագիծը» վերտառությամբ³:

Մյանսիկյանին ամենից առաջ հետաքրքրում էր համաձայնագրի իրավաբանական կողմը: Նա նշում էր, որ այնտեղ նկատի է առնված սոսկ վարչական, մասնավորապես օրենսդրական բարենորոգությունը, և բոլորովին անտեսված է դատաստանական բարենորոգության հարցը՝ բացառությամբ այն, որ կողմերին թույլատրվում է դատարաններում արտահայտվել մայրենի լեզվով: Հայաստանում ամենակարևորը հողային հարցն է, բայց համաձայնագրում լիովին անտեսված են դրա լուծման ուղիներն ու միջոցները: Եվրոպացի երկու գեներալ-ինսպեկտորները (ընդհանուր վերատեսուչները) ի վիճակի չեն լինելու որևէ արմատական խնդիր լուծելու իրենց ղեկավարության տակ գտնվող

¹ “Правда” (1912-1917 гг.) и «Социал-демократ» (1908-1917 гг.) о Закавказье (сборник), составитель Г. А. Исаакян, 1968, стр. 177-178.

² Տե՛ս Ալեքսանդր Մյանսիկյան, Երկեր հինգ հատորով, հատ. I, էջ 125-199, 230-234, 238-240:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 240-247:

¹ Տե՛ս «Վոլկասի լրաբեր», № 8, 15 հունվարի (28 փետրվարի) 1914 թ.:

² «Ազգ», № 32, 28 հունվարի 1914 թ.:

չրջաններում, քանի որ այդ չրջաններում ընդգրկված վիլայեթներին նահանգապետները միանգամայն անկախ են լինելու վերատեսուչներից: Նահանգապետը, գրում էր Մյասնիկյանը, միանգամայն ինքնուրույն է, ուրեմն նա, ինչպես ասում են՝ «Свой мараг է լինելու՝ նշանակված Բ. Դուան կողմից, ուստի և ենթարկվող միմիայն վերջինիս»: Նահանգապետը ղեկավարելու է նաև վիլայեթի օրենսդրական մարմինը և, բնականաբար, նրա աշխատանքներին ուղղություն է տալու իր ցանկություն համեմատ: Այլ խոսքով՝ նա մնալու է որպես մի ինքնիշխան պաշտոնյա, «տեղական փոքրիկ թագավոր»՝ սանձարձակ ու վայրագ:

Հոգվածի վերջում հունվարի 26-ի համաձայնագիրը համեմատելով Պողոս Նուբար փաշայի հոր՝ եգիպտական նախարար Նուբար փաշայի կողմից Թուրքահայաստանի բարեփոխումների՝ ժամանակին կազմած ծրագրի հետ՝ Ալ. Մյասնիկյանը գերազանցությունը տալիս է վերջինիս՝ հատկապես նկատի առնելով կայսրության մեջ հարկային սիստեմի արմատական վերափոխման նրա առաջարկը:

Լավատեսներից և հոռետեսներից զատ հայ իրականության մեջ քիչ չէին նրանք, որոնք խիստ զգուշավոր էին հունվարի 26-ի համաձայնագիր-ծրագիրը գնահատելիս:

1914 թ. մարտին Հովհաննես Թումանյանը գրում էր. «Արդյոք մի որևէ ձևով վճովե՞ց հայկական հարցը: Արդյոք վերացա՞վ տաճկահայոց ամբողջ կյանքի ու մեր հոգու վրից է՞դ կարմիր մղձավանջը, և կարո՞ղ ենք այսուհետև հանգիստ սրտով նվիրվել կուլտուրական աշխատանքի ու ավելի լայն խնդիրների:

Ո՞վ գիտի:

Չնայելով հայոց կաթողիկոսի ու նրա ներկայացուցիչ Նուբար փաշայի շնորհավորական հեռագիրներին՝ հայ ժողովուրդն ամեն տեղ էս հարցի դեմը խորին լուռություն է պահպանում, ծանր ու իմաստուն մի լուռություն, իսկ երիտասարդ թուրքերը Ռուսաստանի սահմանի վրա գորահանդեսներ են սարքում»¹:

¹ Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր յոթներորդ, Քննադատություն և հրապարակախոսություն, 1913-1922, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 137:

Նման անձինք չէին տարակուսում, որ երկար բանակցություններից ու անդուլ ջանքերից հետո ձեռք բերված բարենորոգումների ծրագիրը փափագածից շատ հեռու է, բայցեայնպես գտնում էին, որ իր պակասություններով ու անկատարություններով հանդերձ, այն պարունակում է կարևոր զիջումներ՝ արված թուրքաց կառավարության կողմից: Ըստ նրանց՝ բարենորոգումների ծրագիրը վերջին հաշվով ընդամենը գործի սկիզբն է, որը կարող է արդյունք տալ, եթե տերությունները լինեն հետևողական: Այնժամ երկրի արևելյան նահանգներում հավանաբար կլինի իրական առաջադիմություն, իսկ Հայաստանի բազմաչափ հայությունը միգուցե կունենա ամենատարրական բանը՝ ապրելու ապահովությունը:

Այո՛, բարենորոգումների համաձայնագիր-ծրագիրը շատ հեռու էր հայերի փափագածից, բայց ի՞նչ կարող էին անել նրանք: Եթե մերժեին, ինչպես նրանցից ոմանք առաջարկում էին, ապա կարող էին ամեն ինչ վտանգել: Նրանք պետք է հիշեին, որ օսմանյան կառավարությունն իր հեռատեսությունով ու դիվանագիտական հմտությամբ մեծապես կօգտվեր դրանից, և, անկասկած, արդյունքն այն կլիներ, որ ջուրը կնետվեին ուսական դիվանագիտության և Պողոս Նուբար փաշայի ամիսներ տևած ջանքերը:

Ահա թե ինչու այդ հարցի առթիվ Զավեն պատրիարքի հրապարակած կոնդակը հունիսի 30-ին ընթերցվեց Կ. Պոլսի հայկական բոլոր եկեղեցիներում: Դիմելով թուրքահայության խավերին, առաջնորդարաններին և կուսակցություններին՝ նա կոչ էր անում վերջ տալ բարենորոգումների ծրագրի շուրջ ստեղծված անհամաձայնություններին և միասնական ուժերով ձեռնամուխ լինել դրա իրականացմանը¹:

¹ Տե՛ս «Բիւզանդիոն», 2 հուլիսի 1914 թ.:

**ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ
ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ**

Ամենից առաջ արժեքավոր ու օգտակար էին համաձայնագրին տրված գնահատականներն այն գործիչների, որոնք անմիջականորեն ներգրավված էին եղել բանակցային գործընթացում:

1914 թ. փետրվարի 22-ին արտգործնախարար **Ս. Գ. Սազոնովը**, տեսակցություն ընդունելով հայ նշանավոր քաղաքական գործիչներից մեկին*, վերջինիս ասել էր. «Ինձ չատ է ուրախացնում, որ հայ հասարակությունը բարյացակամորեն է վերաբերվում բարեփոխումներին և գնահատում է դրանք, թեպետ և գտնում է շոշափելի թերություններ: Բարեփոխումներն առաջին քայլն են հայերի դրությունը բարելավելու ճանապարհին, իսկ հետագան կախված է ինչպես ուսական կառավարությունից, այնպես էլ հենց իրենցից՝ հայերից: Բարեփոխումների այս գնահատականը հայ հասարակության կողմից ցույց է տալիս, որ հայերը քաղաքականապես հասունացել են, և որ նրանց հետ հեշտ է վարել լուրջ ժողովրդական և պետական գործը: Ի հեճուկս մեր (Ռուսաստանի:– Հ. Ս.) ծայրահեղ ձախ ընդդիմություն, հայ գործիչները հասկացել են, որ անհնարին է միանգամից ստեղծել ու իրագործել լուրջ բարեփոխումներ: Սա առավել ևս ճշմարիտ է, որովհետև այս միջազգային բնույթի ձեռարկումի ընթացքում (նկատի ունենալով հայաստանի բարենորոգումների համար պայքարում Ռուսական դիվանագիտության խաղացած վճռական դերը:– Հ. Ս.) Ռուսաստանը հանդիպեց թուրքիայի և, հատկապես, Գերմանիայի համառ դիմադրությանը: Հայերի և Ռուսաստանի շահերի համընկնումն ու վստահությունը միմյանց նկատմամբ դրսևորվեց լիակատար չափով»¹:

Կատարված հսկայածավալ աշխատանքից գոհ էր **Կ. Պոլսի** ռուսաց դեսպան **Մ. Գիրսը**: Նա գտնում էր, որ հայերը ճիշտ են

* Արխիվային փաստաթղթում նշում չկա հայ գործչի ով լինելու մասին:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 65, թ. 1 և շրջ.:

վարվել՝ պատշաճը մատուցելով բարեփոխումներին և այնտեղ տեսնելով իրենց համար արժեքավոր տարրեր: Պետք է մոռանալ, որ բարեփոխումները ձեռք են բերվել արտակարգ աշխատանքով, և որ ներկայիս քաղաքական իրադրությունը պարագայում սրանից ավելիին հասնելը բացարձակապես հնարավոր չէր: Հետագայում ևս Ռուսական կառավարությունը գործելու է նախկին ուղղությամբ և պաշտպանելու է հայերի շահերը: 1914 թվականի հունվարի 26-ի բարեփոխումներն առաջին փուլն են: Գիրսն այն կարծիքին էր, որ հարկ է՝ հայերը նախ և առաջ գործեն առանց լրագրային ու ցանկացած այլ կարգի աղմուկի (հանրահավաքներ, դասախոսություններ և այլն), քանի որ նախաձեռնվելիք քայլերի յուրաքանչյուր հրապարակում գործի ամենասկզբից ևեթ կգրգռի թուրքերին և կհարուցի նրանց ու գերմանացիների հակազդեցությունը: Այդ դեպքում Կոստանդնուպոլսում ուսական դիվանագիտության համար կստեղծվեն արհեստական արգելքներ, և զգալի չափով կզժվարանա նրա աշխատանքը:

Բացի այդ, ինչպես ուսները, այնպես էլ հայերը պարտավոր են գործել համերաշխորեն, հանուն գործի, տուրք չտան կուսակցական և նեղ անձնական պառակտիչ հավակնություններին: Դա խիստ անհրաժեշտ էր, քանզի այն տառացիորեն ծվատում էր ընդամենը 1913 թ. ձեռք բերված Կոստանդնուպոլսի հայ հասարակության միաբանությունը: «Հայ քաղաքական գործիչների համերաշխությունը ներկայումս անվերապահ պայման է հայկական հարցի հաջողության գործում»¹,– հիշեցնում էր Գիրսը:

Համաձայնագիրը ստորագրելու մասին Պետերբուրգ հեռագիր հղելուց հետո **Կոնստանտին Գուլկեկչը Կ. Պոլսից** ընդարձակ նամակ է ուղարկում Սերգեյ Սազոնովին, որտեղ տալիս է հայկական հարցի համառոտ պատմությունը, հանգամանորեն ներկայացնում Հայաստանի բարենորոգումների ծրագրի ստեղծման ընթացքում պետությունների մղած դիվանագիտական պայքարի հանգրվանները, այն մեծ դժվարությունները, որոնց հաղթա-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 65, թ. 1:

Հարման Համար Ռուսաստանը գործադրել էր ընդարձակածա-
վալ ջանքեր: Նամակում ուսում դիվանագետը մասնավորապես
այսպես նույն էր Գերմանիայի խաղաղացած խիստ բացասական
դերակատարությունը Հայկական Հարցում ընդհանրապես, Հա-
յաստանի բարենորոգումների ծրագրի շուրջ տարված բանակ-
ցությունների ընթացքում՝ մասնավորապես: Անդրադառնալով
Թուրքիայի շահերի պաշտպանությունն ուղղությամբ Ենի-Քեոյի
Հանձնաժողովում աչքի ընկած գերմանական ներկայացուցչի՝
Հայերի շահերի դեմ ծավալած անբարեգութ գործունեությունը,
միաժամանակ նրանց բարեկամ ներկայանալու վերջինիս
փորձերին՝ Գուլկեիչը շեշտում էր.

«... Եթե երբևիցե Ենի-Քեոյի Հանձնաժողովի արձանագրու-
թյունները լույս ընծայվեին*, Հայերն ակնհայտ կերպով կձանո-
թանային գերմանացիների իսկական զգացմունքներին, որոնք
աշխատել են միաժամանակ գրավել Հայերին իրենց շողոքորթող
խոստումներով»¹:

Նամակում Կ. Գուլկեիչը այսպես էր արժևորում կատարած

* Ռուս դիվանագետի այս ցանկությունը կատարվեց ոչ թե անորոշ «եր-
բեկից» ժամանակում, այլ ընդամենը մեկ տարի հետո՝ 1915 թ., երբ Ռուսաս-
տանն Անտանտի իր դաշնակիցների՝ Անգլիայի ու Ֆրանսիայի հետ ընդգրկված
էր Համաշխարհային արյունալի պատերազմ էր մղում ընդդեմ գերմանա-թուր-
քական զինակցության: Պատերազմում ռուսահայերի լիակատար աջակցու-
թյունը ստանալը ցարական կառավարությունը Համարում էր իր կարևոր
խնդիրներից մեկը, որի լուծմանը կոչված էր ծառայելու նաև Հայաստանում
բարենորոգումներ կատարելու ուղղությամբ մղված պայքարի ժամանակա-
շրջանին վերաբերող դիվանագիտական փաստաթղթերի հատուկ ժողովածուի
հրատարակումը Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության կողմից
(Տե՛ս՝ «Сборник дипломатических документов. Реформы в Армении. 26 ноября 1912
года – 10 мая 1914 года», Петроград, Государственная типография, 1915): Ժողո-
վածուն՝ բաղկացած 177 էջից, ընդգրկում է 159 փաստաթուղթ, որոնք բացա-
ռիկ կարևորություն ունեն խնդրո առարկա պրոբլեմն ուսումնասիրողների հա-
մար: Նշված վավերաթղթերը Հայերեն թարգմանությամբ ղեկավարել են «Հա-
յաստան» հրատարակչության կողմից 1977 թ. լույս ընծայած «Հայաստանը
միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականու-
թյան փաստաթղթերում (1828–1923)» ժողովածուի մեջ:

¹ «Բարենորոգումները Հայաստանում», էջ 106:

գործը. «... 1914 թ. հունվարի 26-ի վավերագիրը պետք է համա-
րել Հայ ազգի պատմության ավելի բախտավոր դարաշրջանի
սկիզբ: Ներքին քաղաքագիտական տեսակետից այդ վավերագի-
րը Հայ ազգի համար ունի նույն նշանակությունը, ինչ 1870 թ.
Փիրմանը բուլղարների համար: Հիշյալ Փիրմանը հիմնեց բուլ-
ղարական էկզարխատը և այդ ձևով ազատեց բուլղարական
ազգը հունական խնամակալությունից: Հայերը չեն կարող
չգիտակցել, որ հիշյալ օրից արված է առաջին քայլը ազատելու
նրանց թուրքական բռնությունից»¹:

Գուլկեիչը գտնում էր, որ փաստաթղթի կարևորությունը
չէր սահմանափակվում Հայության շահերի շրջանակով: Նա
գրում էր. «1914 թ. հունվարի 26-ի վավերագիրն ունի մեծ նշա-
նակություն Ռուսաստանի միջազգային դրություն համար: Վա-
վերագիրը կնքված է Մեծ վեցերի և Ռուսաստանի ներկայա-
ցուցչի կողմից: Նրանով Թուրքիան պարտավորվում է Ռուսաս-
տանի առաջ դիմել մեծ պետություններին մի հուշագրով, որի
բովանդակությունը ճշտիվ որոշված է: Այդպիսով ընդգծված է
պաշտոնապես Ռուսաստանի ղեկավար դերը Հայկական բարե-
նորոգումների հարցում, թերևս հաստատվում է Սան-Ստեֆա-
նոյի դաշնագրի 16-րդ հոդվածը: Այդ հանգամանքն, իհարկե, չի
կարող չունենալ ամենանպաստավոր հետևանք Ռուսաստանի
միջազգային հեղինակության համար, և Մերձավոր Արևելքի
քրիստոնյա ազգաբնակչության սիրտը կլցնի նոր երախտագի-
տություններով ղեկի ռուսական միապետը»²:

Հայաստանի բարենորոգումների հարցի շուրջ ընթացող
բանակցությունների ողջ ընթացքին ուշադիր և ոչ առանց
ապրումների հետևել էր Կ. Պոլսի ռուսական դեսպանատան
դրագոման Անդրե Մանդելչտամը: Ուստի միանգամայն բնական
է եղել նրա ցանկությունը, որ տերությունների դիվանագետների
կողմից բարենորոգումների նախագծում արվող առաջարկու-
թյունները որքան հնարավոր է մոտ լինեն իր կազմած առաջին
նախագծի ձևակերպումներին:

¹ «Բարենորոգումները Հայաստանում», էջ 111:

² Նույն տեղում:

Համաձայնագիրը Ռուսաստանի Համար մեծ կարևորություն ունեցող փաստաթուղթ Համարելով՝ Ա. Մանդելշտամը գրում էր, որ «նրանով Դուռը պաշտոնապես ընդունում է Ռուսաստանի Հովանավորությունը տաճկահայերի վրա, այսինքն՝ Բեռլինի վեհաժողովի դաշնություն 61-րդ հոդվածից նորից գալիս ենք Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածին»¹:

Ռուսական դիվանագիտությունն ընդհանուր առմամբ գոհ էր հունվարի 26-ի համաձայնագիրը գլուխ բերելու համար իր աշխատանքից, իսկ Պետերբուրգի կառավարական շրջաններում փաստաթուղթը համարում էին պետության արտաքին քաղաքականությունն իր նշանակալի հաղթանակ: Արտգործնախարարությունը գտնում էր, որ մի շարք բարեմասնություններից բացի՝ համաձայնագիրը նաև ներառում է Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի և նույնիսկ Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածի տրամադրություններից որոշ չափաբաժիններ:

Պետերբուրգում ոգևորված էին նաև այն պատճառով, որ հաղթանակ համարվող այդ համաձայնագրին օրեր առաջ նախորդել էր մեկ ուրիշը. նախօրյակին Կոստանդնուպոլսում ստորագրվել էր թուրք-պարսկական մի համաձայնագիր, որի մեջ իր արտահայտությունն էր գտել թուրք և պարսիկ սահմանագծի մասին ռուս-անգլիական տեսակետը, համաձայն որի՝ ընդունվում էր այն սահմանագիծը, որ գոյություն ուներ 1905 թ. առաջ. այսինքն՝ մինչև թուրքական ոտնձգությունները պարսկական տարածքների նկատմամբ: Գերմանիան չեզոք դիրք զբաղեցրեց, որովհետև ոչ ինքը և ոչ էլ առավել ևս թուրքերը տակավին պետք եղածին չափ պատրաստ չէին պատերազմի: Այդ պայմանագրերը, որոնք ռուսական կողմը համարում էր երկու մեծ հաղթանակներ, դրական նշանակությունից զատ նաև խիստ բացասական հետևանքներ ունեցան այն իմաստով, որ Գերմանիային դրդեցին արագացնելու իր ռազմական պատրաստությունները²: Ջզացվում էր լայնածավալ նոր պատերազմի հեքը,

և չնայած թուրքիան դրան ավելի քիչ էր պատրաստ, քան իր հզոր դաշնակիցը, բայց հունվարի 26-ի պայմանագրից հետո նա արդեն լրիվ հակված էր գալիք պատերազմի ժամանակ կանգնելու Գերմանիայի կողքին: Ա. Մանդելշտամը նկատում էր, որ այն ժամանակ, երբ թուրքերը ստորագրում էին պայմանագիրը, այդ նույն ժամանակ նրանք գավառներում ուժեղացնում էին հակաքրիստոնեական քարոզները, հայերի և մյուս ոչ մահմեդական տարրերի դեմ էին ուղղում Բալկաններից պոկված մուհաջիրների կատաղի վրեժխնդրությունը³:

Ի տարբերություն Ռուսաստանի՝ Եվրոպայում համաձայնագրին տրված գնահատականները տարբեր էին:

Համաձայնության երկրների՝ Ֆրանսիայի ու Անգլիայի կառավարությունների վերաբերմունքը դրական էր, քանի որ, նրանց կարծիքով, Հնարավոր էր դարձել կանխել համաեվրոպական պատերազմի բռնկումը: Բայց թերթերը միանգամայն տարբեր, շատ դեպքերում տրամագծորեն հակառակ էին գնահատում փաստաթուղթը: Ֆրանսիական և անգլիական մամուլի առանձին օրգաններ վախ էին արտահայտում, թե հասարակական կարծիքի ճնշման տակ Ռուսաստանը կարող է Հայաստանի հարցում արմատական նոր քայլերի դիմել, նույնիսկ հանդես գալ բարենորոգումների ծրագրի վերաբնություն պահանջով:

Եռյակ դաշնության երկրներում վերաբերմունքն այլ էր:

Գերմանիայի կառավարական շրջանները հիացած չէին, իսկ երկրի առավել ազդեցիկ քաղաքական ուժերը վավերագիրը դիտում էին որպես Հայաստանում ռուսական ազդեցություն աննախադեպ ուժեղացման վկայություն: Դա միանգամայն օրինաչափ էր, քանզի Հայկական հարցի առթիվ գերմանական կառավարությունը ռուսական կողմի հետ բանակցությունների մեջ էր մտել երկու նպատակով. 1) Երբ ներկայանա հարմար առիթ, Բ. Դոանն անմիջապես հիշեցնել, որ իր ակտիվ միջամտության շնորհիվ է հնարավոր դարձել զսպել ավելի լայն բարենորոգումներ պահանջող Ռուսաստանին և փաստաթղթում

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1914, д. 3479, л. 28.

² Տե՛ս Անդրէ Մանդելշտամ, Օսմանեան կայսրութեան ճակատագիրը: Առաջին մաս, երիտասարդ թուրքերը պատերազմէն առաջ, թարգմ. Միքայել Շամտաչճեան, Կ. Պոլիս, 1919, էջ 122:

³ Անդրէ Մանդելշտամ, Օսմանեան կայսրութեան ճակատագիրը, էջ 123:

մուծել Թուրքիայի համար անվտանգ ձևակերպումներ, այնքան որ դեպի իրեն գրավի հայերի համակրանքը, 2) Ասվածի վկայությունն է Գուլկևիչի հետևյալ խոսքերը. «Բանակցությունների ողջ ընթացքում Գերմանիայի վերաբերմունքը զրսևորվում էր կեղծավորությունը, իսկ հայերին նրա պաշտպանությունը կրում էր լուկ երևակայական բնույթ: Կրկին ապացուցվեց, որ գերմանական դիվանագետները Թուրքերի հավատարիմ խորհրդակիցներն են»¹:

Գերմանական հայասերները և երկրի մտավորականության ուրիշ ներկայացուցիչներ ողջունում էին Հայաստանի բարենորոգումների հաջող ընթացքը և ընդունած ծրագիրը:

«Մշակը» 1914 թ. № 15-ում «Голос Москвы» թերթից արտատպել էր Պատու Ռոհրբախի մի ելույթի տեքստը: Գերմանացի քաղաքագետն ասել էր, որ «Հայաստանն այժմ, ավելի քան երբևիցե, տրամադրված է ուսասեր կեցվածքով: Պատճառը շատ պարզ է. հայերը համոզվել են, որ չեն կարող ուրիշ այլ կողմից որևէ օգնություն սպասել: Երիտասարդ Թուրքերը չեն էլ մտածում թաքցնել իրենց իսկական դիտավորությունը, որի ամբողջ էությունը Աբդուլ Համիդի հայտնի խոսքերն են՝ «Հայաստանը պետք է հայազրկել»²:

Եռյակ զինակցություն մյուս երկու անդամները՝ Ավստրո-Հունգարիան և Իտալիան, համարյա անտարբեր էին Հայաստանի բարենորոգումների ծրագրի ընդունման փաստի հանդեպ:

Կարծես թե Թուրքական կառավարությունը նույնպես բավարարված էր, քանի որ փաստաթուղթը իրական ուժ չունեցող սպառնալու երկրի տարածքային ամբողջականությունը:

1914 թ. հունվարի 28-ին ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը հայոց Ջավեն պատրիարքի հետ հանդիպման ժամանակ նրան հայտնում է իր «խնդակցությունը» հայկական բարենորոգումների բարեհաջող լուծման առթիվ և հայտարարում, որ «այսուհետև հայ և Թուրք ժողովուրդները սերտորեն

¹ «Сборник дипломатических документов», с. 174.

² Տե՛ս «Մշակ», № 15, 23 հունվարի 1914 թ.:

պիտի փարվեն երկրի բարգավաճման գործին»¹:

Ինչ վերաբերում է ուսական ու եվրոպական մամուլին, ապա այն ևս հիմնականում դրական էր գնահատում ուս-Թուրքական համաձայնությունը:

Ռուսական մամուլի տարբեր ուղղություն օրգանները ողջունում էին հայկական բարենորոգումների ծրագիրը կյանքի կոչելու գործում իրենց երկրի դիվանագիտության թափած ջանքերը և վերջնական արդյունքը:

«Новое Время» թերթը, ողջունելով գերմանական կառավարության հետ ուսական դիվանագիտության ձեռք բերած հաջողությունը, գրում էր. «Հայկական բարենորոգումների մասին համաձայնությունը մի կոմպրոմիս է ոչ այնքան ուսական և Թուրքական հայացքների, որքան պետերբուրգյան և բեռլինյան արևելյան քաղաքականությունների միջև: ...Բարենորոգումների սահմանափակ տարբերակ լինելով՝ համենայն դեպս այն ակնհայտ առաջադիմություն է»²:

Բայց քիչ չէին այն պարբերականները, որոնք խիստ դժգոհ էին փաստաթղթում տեղ գտած անորոշ ձևակերպումներից և այն բանից, որ ուսական դիվանագիտությունը չկարողացավ մինչև վերջ պաշտպանել բարենորոգումների ծրագրի իր ներկայացրած տարբերակը (Մանդելշտամի ծրագիրը) և չարդարացված դիջումների գնաց Թուրքերին:

Եվրոպական մամուլը նույնպես փաստաթղթին գնահատականներ էր տալիս տարբեր մոտեցումներով: Հատկապես ավստրիական մամուլում նկատելի էր մի անհանգստություն: Լրագրերից մի քանիսը տազնապում էին, որ Ռուսաստանը քաղաքական ու ռազմական նախապատրաստական միջոցներ կձեռնարկի արդեն 1914 թ. գարնանը Հայաստանը գրավելու համար: Առանձին պարբերականներ հաղորդում էին, որ իբր, Մոսկվայում և Փարիզում Նուբար փաշայի գլխավորությամբ հաստատվել են ուս-հայկական կոմիտեներ, որոնք այդ նպա-

¹ «Դայլայիկ» (Կ. Պոլիս), 10 (197), 29 (11) հունվարի 1914 թ.:

² «Новое Время», № 13662, 24 марта 1914 г.

տակով հաճախակի բանակցում են Ռուսաստանի վարչապետ Վ. Ն. Կոկովցևի հետ: Շրջանառվում էր նաև այն լուրը, թե Հայաստանը գրավելուց հետո ռուսական կառավարությունը մտադիր է Նուբար փաշային կարգել այդ երկրի կառավարիչ¹:

Ինչ վերաբերում է թուրքական մամուլին, ապա նրա էջերում հազվադեպ կարելի էր գտնել հավանություն արտահայտություններ:

Աջակողմյան «Թասվիրի էվբիարը» ամենաբուռն կերպով դատապարտում էր ռուսների հետ Բ. Դուան պայմանադրությունը՝ այն որակելով որպես տերությունների «անարդարացի միջամտություն թուրքիայի ներքին գործերին»: Թերթը կայսրության համար ստորացուցիչ էր համարում պաշտոններում մուսուլմանների և քրիստոնյաների կես առ կես հարաբերությունը հավաքագրման սկզբունքի ընդունումը Բ. Դուան կողմից: Ավելի չափավոր տարրերը թեև «Փեյամի» թերթի միջոցով երկյուղ էին հայտնում օտարազգի վերատեսուչներին տրված «չափից ավելի մեծ» իրավունքների համար, բայց ընդհանուր առմամբ համաձայնագիրը դրական էին գնահատում՝ գտնելով, որ այն մեծապես կնպաստի տերությունների հետ թուրքիայի հարաբերությունների բարելավմանը: Վավերագիրը դրական էր գնահատում նույնիսկ «Թանինը»²:

¹ Տե՛ս «Դայլայլիկ» (Կ. Պոլիս), № 10 (197), 29 (11) հունվարի 1914 թ.:

² Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության ...», էջ 363-364:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՅՈԹԵՐՈՐԴ

ՀԱՅՈՑ ՀՈՒՅՍԵՐԻ ԿԱՐՃԱՏԵՎ ԲՈՆԿՈՒՄՆ ՈՒ ՄԱՐՈՒՄԸ

ՇԱՐՈՒՆԱՎՈՒՄ ԷԻՆ ՎԵՐԱՏԵՍՈՒՉՆԵՐԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԸ

Արդեն ռուս-թուրքական 1914 թ. հունվարի 26-ի համաձայնագիրն ստորագրելու օրն իսկ մեծ վեզիր Սայիդ Հալիմը դիմում է միայն ավստրիական ու իտալական դեսպաններին և խնդրում Հայաստանի երկու սեկտորների ամեն մի ընդհանուր վերատեսչի պաշտոնի համար առաջարկեն երկուական թեկնածու: Այդ քայլով Բ. Դուռը ձգտում էր երկրում տպավորություն ստեղծել, թե պետությունների կողմից թուրք կառավարությանն արվելիք առաջարկները պարտադրողական բնույթի չեն, նաև ցույց տալ, որ թեկնածուների ընտրությունը կատարում է Բ. Դուռը:

Հենց սկզբից ծագեց այն հարցը, թե վերատեսուչների թեկնածուությունները տերությունների կառավարությունները պետք է առաջադրեն առանձին-առանձի՞ն, թե՞ միասնաբար: Դա առաջին տարաձայնությունն էր համաձայնագիրը ստորագրելուց հետո:

Քանի որ Ավստրո-Հունգարիան և Իտալիան եռյակ դաշինքի անդամներ էին, ուստի երկու ռազմաքաղաքական խմբավորումների միջև հավասարակշռություն պահպանելու համար մեծ վեզիրը հունվարի 29-ին դիմում է նաև ֆրանսիական կառավարությանը՝ խնդրելով յուրաքանչյուր սեկտորի համար առաջադրել վերատեսուչի տեղի երկու թեկնածուի անուն¹:

¹ «Բարենորոգումներ Հայաստանում», էջ 353:

Իմանալով այդ մասին՝ Սազոնովը հունվարի 30-ի № 255 հեռագրով հրահանգում է Փարիզում, Լոնդոնում, Բեռլինում, Վիեննայում և Հոտմում ռուսական ղեսպաններին՝ հայտնել տեղի կառավարություններին, որ Բ. Դուռը յուրաքանչյուր մեծ պետությունից պահանջում է առանձին-առանձին և խնդրել թեկնածուներ տալ վերատեսուչների պաշտոնների համար, մի բան, որ անընդունելի է ռուսական կողմի համար: «Մենք կարծում ենք, թե մեծ պետությունները համապատասխան թեկնածուներ պիտի որոշեն միասին»¹: Այսպիսով, ռուսական դիվանագիտությունը հենց սկզբից ըմբռնեց թուրքերի շտապողականության իմաստը:

Վերատեսուչների փնտրտուքների ընթացքում փետրվարի առաջին տասնօրյակում տեղի ունեցավ գաղտնի հեռագրերի ինտենսիվ փոխանակում պետությունների դիվանագիտական ծառայությունների միջև, մանավանդ որ Բ. Դուռը լայնածավալ աշխատանքներ էր սկսել, որպեսզի վերատեսուչներ հաստատվեն իր ընտրած մարդիկ:

Փետրվարի 1 (14)-ին № 11 գաղտնի հեռագրով Հաագայում ռուսական ղեսպանորդ Սվեչինը Ս. Սազոնովին հաղորդում էր. «Այսօր Նուբար փաշայի հետ ես այցելեցի արտգործնախարար Լոուդոնին, որը շատ գոհ եղավ ընդունելությունից և նրան բացատրություններ տալուց»: Գլխավոր վերատեսուչների լիազորություններին մոտիկից ծանոթանալուց և ներքին գործերի, Ռազմական և գաղութների նախարարների հետ պայմանավորվելուց հետո Լոուդոնը հաստատել էր թեկնածուներ առաջարկելու իր ցանկությունը՝ միայն նրանց անձնական որակների ու փորձի հանդեպ լիակատար վստահություն պարագայում: Հանդիպման ժամանակ նախանշվել էին հոլանդական Օստ-Հնդկաստանի նախկին գլխավոր նահանգապետ, գեներալ-համահարզ Վան Գեյտցի և նախորդ կաբինետի նախկին ռազմական նախարար Քոլեյնի թեկնածությունները: «Երկուսն էլ վայելում են գերազանց համբավ,- ասել էր Լոուդոնը:- Առաջինը բնակ-

¹ «Բարենորոգումներ Հայաստանում», էջ 353:

վում է Ամստերդամում և անմիջապես կարձագանքի իմ հարցմանը, երկրորդը Օստ-Հնդկաստանից վերադարձի ճանապարհին է, և միջոցներ են ձեռնարկվելու եզրպտոսով անցնելիս Նուբարի հետ նրա հանդիպման համար»²:

Փետրվարի 2-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը դիմում է ռուսական կառավարությանը և խնդրում վերատեսուչների թեկնածուներ չընտրել Բելգիայում կամ Շվեյցարիայում՝ միաժամանակ տեղեկացնելով, որ այդ երկրներից վերատեսուչներ նշանակելու հարցով մեծ շահագրգռություն է հանդես բերում Բ. Դուռը: Պատրիարքարանը նախընտրում էր այդ պաշտոնյաներին որոնել Հոլանդիայում կամ Սկանդինավյան երկրներում, որոնց ֆինանսատնտեսական շահագրգռություններն ու հետաքրքրությունները փոքր էին թուրքիայում: Ռուսական կողմն իր լիակատար համաձայնությունն է հայտնում պատրիարքարանի տեսակետին: Ուղղի շուրջ սկսվում են պաշտոնական աշխույժ բանակցություններ պետությունների կառավարությունների, պատրիարքարանի ու Կ. Պոլսի ղեսպանների միջև³: Պատրիարքարանից գատ գործին միջամտեց նաև ՀՅ դաշնակցությունը, որն այդ նպատակով Սկանդինավիա ուղարկեց Գարո Փաստրմաճյանին:

Փետրվարի 4-ին Լոնդոնում ռուսական ղեսպան Բենկենդորֆը Սազոնովին հեռագրում է, որ Անգլիայի արտգործնախարար էրուարդ Գրեյը իրեն հայտնել է, որ միանում է ռուսական առաջարկին³:

Նույն օրը Փարիզում ռուսական ղեսպան Իզվոլսկին հեռագրում է Սազոնովին, որ Փրանսիական կառավարությունն ամենահարմարը համարում է երկու սեկտորների համար նորվեգացիներին և Քրիստիանիայում հավատարմագրված իր ղեսպանորդին հանձնարարել է գտնել համապատասխան թեկնածուներ: «Թույլ կտամ ինձ արտահայտվել,- նշում էր ղեսպանը,- որ, ի խուսափումն Ֆրանսիայի հետ տարաձայնությունների, ցանկալի

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1914, д. 3473, л. 11.

² Տե՛ս Վահան Փափազեան, Իմ յուշերը, հատոր երկրորդ, էջ 270:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 354:

է՝ տերութիւններին որևիցե առաջարկով դիմելուց առաջ, նախօրոք ընդհանուր լեզու գտնել Ֆրանսիայի կառավարութեան հետ թեկնածուների հարցով»¹:

Կոստանդնուպոլսում գործերի հավատարմատար Ն. Կ. Գուլկելիչը փետրվարի 5 (18)-ին Ս. Սազոնովին հաղորդում էր, որ հայոց պատրիարքը իր լիազորյալի միջոցով հայտնել է, որ ինքն անհանգստացած է բարեփոխումների ճակատագրով, որոնց սկիզբն այնքան հաջողութեամբ դրել է ռուսական դիվանագիտութիւնը: Նա հավատարմատարին տեղեկացրել էր, որ թուրքերն ամեն ինչ անում են, որպեսզի դանդաղի տեսուչների նշանակումը՝ հույս ունենալով, որ նրանց ընտրութեան հարցում առաջ կգան լուրջ տարաձայնութիւններ պետութիւնների դիվանագետների միջև, որոնք, բացառված չէ, որ վերածվեն լուրջ հակասութիւնների ու առճակատումների՝ անկանխատեսելի հետևանքներով²:

Տվյալ պահին վերատեսուչների ընտրութեամբ Ռուսաստանից հետո ամենից շատ շահագրգռված էր Ֆրանսիական կողմը, որն ամեն կերպ ձգտում էր հրապարակ բերել իրեն առավել ձեռնտու թեկնածուների: Փետրվարի 7-ին Սազոնովը Փարիզի ռուսական դեսպան Իզվոլսկուն հեռագրում է. «Նուբարի բանակցութիւններից, հավանաբար, պարզվում է, որ միակ հարմար թեկնածուներ են բելգիացիներ գեներալ Դեգիզը ու գնդապետ Հանրին և հոլանդացիներ գեներալ Վան Գեյտցը ու Կոլլեյներ: Ուստի, հույս ունենք, որ Ֆրանսիայի կառավարութիւնն առարկութիւններ չի հարուցի, քանզի դա, անշուշտ, կձգձգեր ամբողջ հարցը և կարող էր նպաստել որևէ այլ տերութեան անցանկալի թեկնածուների առաջադրմանը:

Հաճեցե՛ք այս իմաստով պարզաբանումներ անել և շտապ հեռագրել»³:

Բայց սպասածին («Ֆրանսիայի կառավարութիւնն առար-

կութիւններ չի հարուցի») հակառակ՝ Փարիզը կտրականապես դեմ արտահայտվեց նշված թեկնածուներին: Իզվոլսկին փետրվարի 17-ին Սազոնովին հեռագրում էր, որ Ֆրանսիայի արտգործնախարար Գաստոն Դումերգի հետ հանդիպման ընթացքում վերջինս իրեն ասել է, թե Նուբարի համաձայնութեամբ միանգամայն ցանկալի է հաշվի նստել Բ. Դոան ինքնասիրութեան հետ, հետևապես նպատակահարմար է նրան ներկայացնել չորս կամ հինգ թեկնածուների ցուցակ՝ ազատ ընտրութեան համար¹: Այդ ընտրութիւնն ազատ կլիներ միայն առաջին հայացքից, քանի որ տերութիւնները միշտ կարող էին Բ. Դոանը պնդել այն երկուսի համար, որոնց իրենք կնախընտրեին: Այս իմաստով Ֆրանսիան պատրաստ էր ամբողջովին պաշտպանել Ռուսաստանի առաջադրած թեկնածուներին: Համենայն դեպս հասկանալի է, որ այդ ցուցակը պետք է ամփոփեր բոլոր տերութիւնների և առանձնապես Ռուսաստանի համար ընդունելի անուններ, վերջինիս՝ այս գործում հետապնդած հատուկ շահերի պատճառով: Ֆրանսիայի կառավարութիւնը կարծում էր, որ այդ ցուցակը նախ պետք է կազմվի Եռադաշնութեան տերութիւնների հետ մասնավոր համաձայնութեան հիման վրա, որից հետո Ռուսաստանն այդ անունները կհայտնեի նաև մյուս տերութիւններին: Վերջիններիս համար ցանկալի անձանց անուններով լրացնելուց հետո ցուցակը պետք է ներկայացվեր Բ. Դոանը՝ անշուշտ այն պայմանով, որ այնտեղ նշված անուններն առաջվա պես ընդունելի լինեն բոլոր տերութիւնների համար: Ֆրանսիայի կառավարութիւնը հույս ուներ, որ եթե առաջադրվելիք թեկնածութիւնները թուրքական կառավարութեան համար լինեն ընդունելի, ապա նրանք առարկութիւնների չէին հանդիպի նաև տերութիւնների կողմից:

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1914, д. 3473, л. 13.

² Նույն տեղում, л. 14:

³ Նույն տեղում, л. 18.

¹ АВПРИ, ф. “Политархив”, г. 1914, д. 3473, л. 28.

ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱՅԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԵԳԻՊՏՈՍ

Դեռևս 1914 թ. Հունվարի 13 (26)-ին, այսինքն՝ համաձայնագրի ստորագրումից 13 օր առաջ, Պողոս Նուբարը կաթողիկոսին գրում էր. «...Իմ պաշտօնս լրացած ըլլալով, պիտի կրնամ այլևս Եգիպտոս վերադառնալ, ուր կը կանչին իմ անձնական գործերս, որոնք շատ տուժեցին իմ երկար բացակայութիւնէս եւ զորոնք չեմ կրնար աւելի երկարօրէն ձգել երեսի վրայ: Կը յուսամ մեկնել 26 Յունվարին, այսինքն 8 Փետրվար»¹: Նա այդպիսի որոշում էր ընդունել, քանի որ շարունակվող բանակցութիւններում միայն մեկ հարց է մնացել լուծելու, որը վերաբերում էր համամասնութեանը, հետևապես իր առաքելութիւնն ավարտված է: Բայց մի քանի օր անց նա փոխում է մտադրութիւնը՝ սպասելով իրադարձութիւնների հետագա զարգացմանը: Եվ երբ Կ. Պոլսից Փարիզ հեռագիր է ստացվում համաձայնագիրը ստորագրելու մասին, Պողոս Նուբարն անմիջապես որոշում է ուղևորվել տուն²:

1914 թ. փետրվարի 17-ին կաթողիկոսին ուղարկած նամակում Պողոս Նուբարը հետգրութեամբ նշում էր. «Պատիւ ունիմ ներփակելու Պատուիրակութեանս վերջին ժողովին, այսինքն փակման ատենագրութեան պատճէնը: Կը ներփակիմ նաեւ դանազան լրագիրներու կտրոններ, ինչպէս նաեւ «Թայմզ» լրագրի ուղղած նամակս՝ որ հրատարակած է, եւ որ ցոյց կուտայ համաձայնութեան վերջացած ըլլալը եւ կը մատնանչէ այն բարեպատեհ հետեւանքները, որ իրաւամբ կակնկալիք ձեռք բերած բարենորոգումներու ամբողջական եւ արդար կիրարկումէն»³:

Նախքան մեկնելը՝ փետրվարի 18-ին, Փարիզի հայ գործիչները քաղաքի «Աստորիա» հյուրանոցի ճաշասրահներից մեկում Նուբար փառայի պատվին կազմակերպում են ողջերթի ճաշկերույթ: Արտասանվում են բազմաթիվ շնորհակալական ճառեր՝ ուղղված հայոց պատմութեան բացառիկ դեմքերից մեկին:

¹ Տե՛ս «Մշակ», № 73, 6 ապրիլի 1914 թ.:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 17 (չրջ.):

³ Նույն տեղում:

Հասնելով Եգիպտոսի ափերը՝ նա սովորականի պես ոչ թե իջավ Ալեքսանդրիա՝ այնտեղից Կահիրե գնալու համար, այլ փոխեց իր երթուղին և Կահիրե ուղղվեց Պորտ-Սայիդի ճամփով: Նուբարն այդպես արեց խույս տալու համար ժողովրդական ցույցերից՝ հայկական դատի համար վնասակար նկատելով Եգիպտոսի նման իսլամաբնակ երկրում քրիստոնյա հայ գործչի փառաբանումը: Մարտի 3-ին նա Կահիրեում էր:

Բայց որքան էլ Պողոս Նուբարը խուսափեց աղմուկից ու հավաքներից, տեղի հայերը նրան ցույց տվեցին խանդավառ ընդունելություն¹: Միջազգային մամուլը նրա մասին գրում էր ցնծությամբ: Եվրոպական թերթերից շատերը տպագրում էին Նուբար փառայի լուսանկարը, ձոնում հույժ ներբողալից խմբագրականներ «Մեծ եգիպտացուն»։ Եգիպտոսի խղիվը նրան բարի գալուստ մաղթեց և ընդունեց մեծ պատիվներով:

Այստեղ էլ՝ Կահիրեում, Պողոս Նուբարն ստանում է կաթողիկոսի մարտի 14-ին հրապարակած № 329 հատուկ կոնդակը, որով արժանավայել գնահատվել էր նրա կատարած մեծ գործը:

էջմիածնի հայրապետական դիվանը Պողոս Նուբարին իր հերթին ուղարկում է հետևյալ հեռագիրը. «Հայրապետական Դիւանն այսօր ուղարկեց, առանձին թիթեղեայ խողովակի մէջ ծրարած Ձեր Վսեմութեան անունով Նորին Սրբութեան Ազգին Վեհափառ Հայրապետի օրհնութեան կոնդակները № 258 և № 329, Ձեզ՝ որպէս նախագահի՝ Հայկական պատգամաւորութեան և Եգիպտոսի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Վարչութեան:

Նորին Վեհափառութեան կարգադրութեամբ Դիւանն խնդրում է Ձեզ, եթէ հնարաւոր է բարեհաճել ուղարկել Ձեր Մեծադիր լուսանկար պատկերը Ս. էջմիածնի Մայր Մատենադարանի դահլիճում ունենալու համար ի յիշատակ Ձեր Վսեմութեան անկեղծ, եռանդուն և անձնուէր աշխատանքի յօգուտ Տաճկահայաստանի բարենորոգութեանց մեծ գործի»²:

¹ Տե՛ս «Կովկասի լրագր», № 38, 22 փետրվարի 1914 թ.:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 28:

Ինչպես Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, այնպես էլ Հայկական հարցով զբաղված ոուս դիվանագետները դժգոհություններ ընդունեցին Նուբար փառալուսի Եգիպտոս վերադառնալու լուրը: Մարդիկ գտնում էին, որ Փարիզից նրա հեռանալը վաղաժամ է, որովհետև դեռ շատ բան ուներ անելու Եվրոպայում՝ հատկապես ընդհանուր վերատեսուչների ընտրության, իրենց պարտականությունների կատարմանը նրանց նպատակամղելու ուղղությամբ:

Կահիրե վերադառնալուց հետո Պողոս Նուբար փառալուսի իր առանձնատանն ընդունում է Պետերբուրգի հեռագրական գործակալության թղթակցին՝ վերջինիս խնդրանքով:

Թղթակցիցը հարցնում է, թե հայերը որքան են պարտական Ռուսաստանին, որի ջանքերով է ընդունվել Հայաստանի բարենորոգումների ծրագիրը: Պողոս Նուբարը պատասխանում է.

«Ես բախտավոր եմ հաղորդելու Ձեզ, որ հայերը, առանց բացառության, երախտապարտ են ոուսական կայսերական կառավարության, որը մեծահոգությամբ պաշտպան հանդիսացավ նրանց դատին, և այն հաջողության համար, որին մենք նորերս հասանք: Առանց Ռուսաստանի մենք գրեթե ոչինչ չէինք ստանա: Մենք բազմիցս կրկնել ենք և չենք դադարի կրկնելուց, որ մենք հաջողություն ունեցանք նախ և առաջ չնորհիվ Ռուսաստանի մեծահոգի օգնության, հոֆմեյստեր Սազոնովի քաղաքագիտական հմտության ու եռանդի և Կ. Պոլսի ոուսական դեսպան պ. Գիրսի»¹:

Ապա հետևում են հետևյալ հարց ու պատասխանները.

«- Ինձ թվում է, սակայն, որ Ռուսաստանը Ձեզ համար շատ օգտակար է եղել նաև Բեռլինում:

- Ճշմարիտ է: Ինձ հայտնի է, որ հոֆմեյստեր Սազոնովը Փարիզից [Ռուսաստան] վերադառնալու ժամանակ հատուկ կանգ առավ Բեռլինում, որ հայկական հարցի մասին խոսակցի գերմանական կանցլերի հետ, և պետական այդ երկու անձինք կարողանան համաձայնության գալ, ինչպես հետո այդ մասին հայտնեց Սազոնովը Պետերբուրգ վերադառնալով:

¹ «Մշակ», № 59, 18 մարտի 1914 թ.:

- Բայց Ձեր հաղորդածների մեջ, որ տպված է “Le Porges” թերթում, Դուք ավելացրել եք, որ այդ քայլերը Ռուսաստանը արել է ի նկատի ունենալով իր անմիջական շահագրգռությունն այդ գործի մեջ, որ բխում է Թուրքաց Հայաստանի՝ Կովկասի երկու միլիոն հայ ազգաբնակչությանը հարևան լինելուց:

- Անկասկած, դա պատճառներից մեկն էր, որ դրդեց Ռուսաստանին դեպի եռանդուն միջամտություն, որովհետև նա, իհարկե, չէր կամենա, որ սպանությունները, թալանները և հուզմունքները շարունակվեն իր սահմանի մոտերքը: Բայց Ռուսաստանի միջամտությունը մեր օգտին՝ պայմանավորվում է նույնպես նրա ունեցած մեծ համակրությամբ դեպի բոլոր հայերը, և այդ առիթով պետք է հայտնեմ, որ բոլոր ոուսահայերը բախտավոր են ապրելու Նորին կայսերական մեծության փոխարքա կոմս Վորոնցով-Դաշկովի կառավարչության ներքո, որը Ռուսիայի հայկական շրջանները կառավարում է այնպիսի ազատամտությամբ և տակտով, որով դեպի իրեն է գրավել ընդհանուրի սերն ու հարգանքը»¹:

Հայ ղեկավար շրջաններն այժմ կարևորագույն նշանակություն էին տալիս այն հարցին, թե ով կարող է քիչ թե շատ հաջողությամբ փոխարինել Նուբար փառալուսին: Կ. Պոլսի պատրիարքը նախապատվությունը տալիս է Հակոբ Զավրիյանի (Զավրիև) թեկնածությանը, նրան աջակից նշանակելով Հ. Մոստիչյանին:

ՎԵՐԱՏԵՍՈՒՉՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Պողոս Նուբարի Եգիպտոս մեկնելուց հետո տերությունների դիվանագետները, մշտապես իրար հետ կապ պահելով, շարունակում էին վերատեսուչների փնտրտուքները:

Փետրվարի 23-ին (մարտի 8-ին) դեսպան Գիրսը Կոստանդնուպոլսից հեռագրում էր Պետերբուրգ՝ հայտնելով, որ մեծ վեզիրն իրեն շատ է խնդրել գլխավոր վերատեսուչների թեկնա-

¹ «Մշակ», № 59, 18 մարտի 1914 թ.:

ծունների ցուցակը ներկայացնել մեկ շաբաթից կամ տասն օրից ոչ ուշ, քանի որ մեկ ամիս հետո տեղի է ունենալու օսմանյան խորհրդարանի բացումը, որին հարկավոր է փաստի առաջ կանգնեցնել, որպեսզի նրանց ընտրությունն ապամանները փոխելու հնարավորություն չտրվի: «Ծայրահեղ դեպքում մեծ վեզիրը կարող է խորհրդարանի գումարումը հետաձգել ևս երկու շաբաթով, բայց, իր կարծիքով, ոչ ավելի»¹:

Թուրքական կառավարությունն ղեկավարի այս «փափկա-նկատությունը» բացատրվում է նրանով, որ ուսուսական և եվրոպական մամուլի օրգաններում գնալով հաճախ էին հայտնվում հոգվածներ, որոնց հեղինակներն իրենց կառավարություններից պահանջում էին չենթարկվել թուրքական կողմի պարբերաբար կրկնվող քմահաճույքներին և վերատեսուչներին նշանակել առանց հաշվի առնելու նրա ցանկությունը:

Գլխավոր վերատեսուչների ընտրությունը սպասածից ավելի բարձր էր ու պահանջում էր տևական ջանքեր:

Ռուսական դիվանագիտությունը Զավեն պատրիարքի խնդրանքով սկսեց թեկնածուներ փնտրել Հոլանդիայում: Նա խորհուրդ էր տվել աչքի տակ առնել այդ երկրացիներ Լուիս Վեստենենկին և Դուրմանին:

Հաագայում ուսուսական դեսպան Սվեչինը 1914 թ. փետրվարի 26-ին Ս. Սագոնովին հեռագրում էր, որ ինքը Հայաստանում գլխավոր վերատեսուչների հարցով մասնավոր խորհրդակցություններ է ունեցել Նիդերլանդների արտաքին գործոց նախարար Լոուդոնի հետ, որը բանակցություններ է վարել տարբեր անձանց հետ, ովքեր կարող են հարմար թեկնածուներ լինել այդ պաշտոնի համար: «Ինչպես ես ենթադրում էի ամենասկզբից և այդ մասին նախազգուշացրել էի Նուբար փաշային, - նշում էր Սվեչինը, - վերատեսուչների թեկնածուների ընտրությունը բավականին երկար ժամանակ է պահանջելու»²:

Դեսպանը նախարարին հիշեցնում էր, որ «ռազմական և

գաղութների նախարարների համաձայնությունները արտգործնախարար Լոուդոնի կողմից սկզբնապես ձեռնարկված քայլերը՝ Օստ-Հնդկական նախկին գլխավոր նահանգապետ Վան Գեյտցին և նախկին ռազմական նախարար Քոլեյնիին համոզելու համար, չհասան իրենց նպատակին: Դա, համենայն դեպս, վկայում էր Նիդերլանդական կառավարությունն ցանկության մասին՝ հնարավորինս դրական պատասխանելու տերությունների և, նախ և առաջ, Ռուսաստանի կողմից Հոլանդիային ցուցաբերվող վստահությունը»¹:

Սվեչինը միաժամանակ խոստովանում էր, որ ինքն անձամբ ի սկզբանե խիստ նվազ հույս ուներ, թե իրենց հայրենիքին ծառայելու ընթացքում այդքան բացառիկ դիրքի հասած գեներալ Վան Գեյտցը կամ քաղաքական փայլուն ապագայի հավակնող Քոլեյնը կհամաձայնեն ծառայության անցնել Թուրքիայում: Բայց, նկատում էր նա, դրական է, որ այժմ բանակցությունները մտել են ավելի գործնական փուլ, երբ Հոլանդական կողմը սկսել է թեկնածուներ որոնել նվազ բարձր դիրք ունեցող մարդկանց շրջանում, որոնք, սակայն, իրենց նախկին գաղութային գործունեության ընթացքում խնամակալություն ու մշտական հսկողություն իրականացնելիս ձեռք են բերել վարչարարական-վերատեսչական անհրաժեշտ փորձ ու բարձր վարք: Շարունակելով իր միտքը՝ դեսպանը գտնում էր, որ ինքը համոզված է, որ եվրոպացի վերատեսուչների դրությունը Հայաստանում կունենա հիշյալ ռեզիդենտների հետ որոշ զուգադրություններ, բայց և դրանցից որոշակիորեն տարբեր, քանի որ թուրք վալիները կչարունակեն հարաբերվել Բ. Դուան հետ և նրանցից ստանալ հրահանգներ, որոնց դիմակայելու տալու համար հարկ կլինի կոստանդնուպոլսում դեսպանների մշտական ներգործությունը՝ գլխավոր վերատեսուչների կարգադրությունների հանգույն²:

Սվեչինը հաղորդում էր նաև, որ նույնիսկ այդ կարգի թեկնածուներից՝ ռեզիդենտներից ու նրանց օգնականներից, եր-

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1914, д. 3473, л. 35.

² Նույն տեղում:

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1914, д. 3473, л. 89 (об.).

² Նույն տեղում, л. 90:

կուսը նույնպես հրաժարվել են իրենց հրամցված առաջարկից: Ուրիշները չեն տիրապետում ֆրանսերենին բավարար չափով, մի բան, որ կարող է խիստ դժվարացնել իրենց գործունեությունը տեղում և հարաբերությունները Բ. Դոան հետ: «Հենց որ կորոչվեն տեղի կառավարություն կարծիքով՝ այժմ նկատի առնված թեկնածուներից առավել արժանիները, մի բան, որ, հուսով եմ, տեղի կունենա առաջիկա օրերին, - հաղորդում էր Սվեչինը, - այնժամ պարոն Լոուդենի մոտ ես կհանդիպեմ նրանց և կջանամ նրանցից յուրաքանչյուրին հնարավորինս ճիշտ պատկերացում տալ Թուրքիայում նրանց սպասող գործունեություն ընդլայնելու պայմանների մասին, որոնց մասին նախարարն իսկ, իր սեփական խոսքերով, ունի ընդամենը բավականին աղոտ պատկերացում: Դրանից հետո ես ի վիճակի կլինեմ հեռագրով Ձեզ հաղորդել նրանց անուններն ու իմ տպավորությունը նախանշված դերի համար իրենց ավել կամ պակաս հավանական պիտանելիություն մասին»¹:

Վերատեսուչների թեկնածուների ընտրության հարցում գերմանական դիվանագիտությունն առանձնապես շահագրգռություն հանդես էր բերում և համաձայնություն էր տալիս ռուսական կողմի համարյա բոլոր առաջարկներին: Ավելին, 1914 թ. մարտի 5-ի թվով Կ. Պոլսից Կահիրե ուղարկած թղթակցությունը, որը տպագրվել է «էքո էփրեսին» թերթում, տեղեկացնում էր, որ Պոլսի գերմանական դեսպան Հանս Վանգենհայմը օսմանյան կառավարությանը խորհուրդ է տվել՝ երկու վերատեսուչների նման եվրոպացի մի վերատեսուչ էլ նշանակվի Կիլիկիայում՝ այնտեղ նույնպես կիրարկելու բարենորոգումների ծրագիրը:

Հաշվի առնելով, որ Հայաստանի բարենորոգումների հարցը բարձրացնելու նախաձեռնողը եղել է Ռուսաստանը, պետությունների կառավարությունները նպատակահարմար են գտնում, որ հենց նա էլ պետք է կազմի ընդհանուր վերատեսուչների վերջնական ցուցակը:

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1914, д. 3473, л. 90.

Մարտի 10-ին Կ. Պոլսի ֆրանսիական և անգլիական դեսպաններն ընդունում են ընդհանուր վերատեսուչների ռուսական ցուցակը, որում կային հինգ թեկնածուներ՝ բելգիացիներ՝ Դեգիս և Հենրի, հոլանդացիներ՝ Վեստենենկ և Դուրման, նորվեգացի՝ Հոֆ²: Դրան՝ հաղորդած երկու շաբաթների ընթացքում նրանց համաձայնությունը միացան նաև եռյակ դաշնություն պետությունների դեսպանները³:

Մեծ պետությունների՝ Կ. Պոլսի բոլոր դեսպանների կողմից լիազորված ավստրո-հունգարական դեսպան մարկիզ Յ. Պալավիչինին 5 թեկնածուներից կազմված ռուսական ցուցակը մարտի 24-ին ներկայացնում է Բ. Դոանը³: Երկար քննարկումներից հետո թուրքական կառավարությունը ապրիլի 2 (15)-ին Հայաստանի երկու սեկտորների համար ընտրում է հոլանդացի Լուիս Վեստենենկի և նորվեգացի Նիկոլաս Հոֆի թեկնածուները: Նույն օրը դեսպան Գիրսը հեռագրում է Սազոնովին. «Բ. Դոան կողմից ընտրված վերատեսուչներ Վեստենենկը և նորվեգացի Հոֆն արդեն հրավիրվել են ժամանել Կոստանդնուպոլիս»⁴:

Լուիս Վեստենենկը երկար ժամանակ եղել էր հոլանդական Հնդկաստանի գորահրամանատար, ապա վարել էր փոխկառավարչի պաշտոնը: Տիրապետում էր գերմաներենին, անգլերենին, ֆրանսերենին, նաև մալայերենին և առհասարակ լավ տեղեկացված էր արևելքի գործերից:

Հոֆը Նորվեգիայում վարել էր քաղաքային քննչի և իրավագետ-խորհրդականի պաշտոնները, հայտնի էր որպես լավ օրենսգետ, իսկ բանակում հասել էր զնդապետի աստիճանի: Այդ ամենով հանդերձ՝ նա անփորձ էր վարչական բարձր պաշտոնի համար:

Հոֆն ու Վեստենենկը նկատելիորեն տարբերվում էին իրենց քաղաքական կողմնորոշումներում: Առաջինը հակված էր գերմանական մշակույթը ու նիստուկացր: Երկրորդի քաղաքական

¹ Տե՛ս «Բարենորոգումները Հայաստանում», էջ 113:

² Նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 114 (ընդհանուր առմամբ շրջանավել էին 10 թեկնածուների անուններ):

⁴ АВПРИ, ф. "Политархив", г. 1914, д. 3474, л. 10.

համակրանքը Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմն էր:

Հայաստանի բարենորոգումների ծրագրով նախատեսված միջոցառումներից առաջինը՝ ընդհանուր վերատեսուչների ընտրությունը, թշնամանքով ընդունվեց քուրդ ավագանու և նորաթուխ քուրդ մտավորականների կողմից: Սրանք այն եզրակացությունն էին հանգել, թե երիտթուրքական կառավարությունը, չդիմանալով Եվրոպայի ճնշմանը, մահմեդական համերաչխություն գաղափարը զոհաբերում է քրիստոնյա հայերի նպատակներին՝ նրանց հանձնելով Քուրդիստանը (նկատի ունենին Թուրքահայաստանը):

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՔՐԴԵՐԻ ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ԽԺԴԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՃՈՒՄԸ ՀԱԿԱՌՈՒՐՔԱԿԱՆ ԱՊՍԱՄՐՈՒԹՅԱՆ

Մեծ պետությունների կողմից Հայկական նահանգների բարենորոգումների ծրագրի ստեղծումը խորացրեց քրդական ինքնավարության գաղափարը: Ուսյալ երիտքրդերը պնդում էին, որ եթե լինի Հայաստան, իսկ Քուրդիստան՝ ոչ, հայերն իրենց վրա բեյություն կանեն: «Որպեսզի դա չլինի, մենք էլ Քուրդիստան կպահանջենք»¹, – ասում էին նրանք:

Մինչ տերությունների ուժանցող ճնշման տակ Բ. Դուռը, վերջապես, հաշտվել էր ուս-թուրքական հունվարի 26-ի համաձայնագիրը կյանքի կոչելու մտքին, նույն այդ ժամանակ քրդերը նորանոր միջոցների էին դիմում այն ի չիք դարձնելու համար:

Ամեն անգամ, երբ եվրոպական մեծ պետություններն առաջ էին մղում Հայաստանում մտցվելիք բարենորոգումների որևէ ծրագիր, թուրքաց նենգամիտ կառավարությունը հայտարարում էր. «Մենք անկեղծորեն ցանկանում ենք բարենորոգումներ մտցնել, բայց մուսուլման ժողովուրդը, հատկապես քրդերը,

¹ «Մշակ», № 83, 20 ապրիլի 1914 թ.:

սաստիկ հուզվում են և պատրաստ են ապստամբելու»:

Արդյոք այժմ գործադրվելու էր Հայկական նոր բարենորոգումների ծրագիրը, թե՞ այն ենթարկվելու էր նախորդների բախտին և մոռացություն էր տրվելու:

Դեռ եվրոպական դիվանագիտությունը չէր կարողացել լուծել ընդհանուր վերատեսուչների թեկնածուների ընտրության հարցը, երբ Հայաստանի հատկապես լեռնային անկյուններից սկսեցին լսվել տագնապալի տեղեկություններ:

«Քրդերի հնարավոր ապստամբությունը կանխելու» պատճառաբանությամբ երիտթուրքերն սկսեցին բարենորոգումների ծրագրի գործադրությունը խափանելուն ուղղված կոնկրետ քայլեր անել: Իթիհազադի ղեկավարությամբ թուրքական կառավարող շրջանները Հայկական նահանգների բարենորոգման «չատ առաջ գնացած» ծրագրին հակադրեցին Բիթլիսի վիլայեթում ծագած ապստամբությունը, որը տևեց 1913 թ. վերջերից մինչև 1914 թ. մայիսը: Կոստանդնուպոլսի թուրքական թերթերը, հայերին դիմելով, գրում էին, թե քրդերի «ինքնաբերաբար» բռնկված ապստամբությունն ուղղված է «ձեր անհիմն պահանջների դեմ»: Եվ դա այն դեպքում, երբ ընդամենը չաբաթներ առաջ Բ. Դուռը առերես համաձայնություն էր տվել այդ ծրագրին, ուր պաշտպանված էին թուրքերի ինքնասիրությունն ու սուլթանի վեհապետական իրավունքները:

Երիտթուրքերը գրգռում էին քրդերին՝ ասելով, թե Հայկական ծրագրի գործադրությունն ամենից առաջ ուղղված է նրանց դեմ, և, որպես դրա ցայտուն օրինակներից մեկը, նշում էին ծրագրում տեղ գտած քուրդ հեծելազորերի մասին դրույթը. դրանք, ինչպես վերը նշվել է, պիտի վերածվեին պահեստի զնդերի, որոնց կառավարությունը զենքի պիտի կանչեր, երբ անհրաժեշտություն ներկայանար: Հեծելազորերի մնալ-չմնալը քրդերի համար ապրել-չապրելու հարց էր. քուրդն իրեն չէր պատկերացնում առանց զենքի, առանց մենաչնորհյալ ավագություն, որը կատարում էր պետական հովանավորության ներքո:

Օրենքով արգելված էր զենք կրելը, բայց այն տարածվում էր միայն հայերի վրա: «Դրօշակը» գրում էր. «Կառավարու-

Թիւնը բաց աչք կը գոցեք քրդերու զինման»։ Կարնո գյուղերից մեկում «Թուրքերու կողմէն սահնակ մը լեցուն զենք կը տարւի օրը ցերեկով»։ Հայերն առաջնորդարանի միջոցով կարողացել էին բռնել տալ այդ զենքերը, որոնք պիտի ուղղվեին իրենց դեմ, բայց դրանից ոչինչ չէր ստացվել, քանի որ ժամեր անց դրանք արդեն Թուրք ու քուրդ գյուղացիների ձեռքին էին¹։

Հայկական բարենորոգումների հարցը մեկընդմիջտ թաղելու համար եռանդագին պատրաստություններ էր տեսնում հատկապես Վասպուրականի և Բիթլիսի նահանգների քրդությունը*։

Ահուղողի օրեր էին ապրում Վասպուրականի հայերը. սևումուժ ուժերի կողմից հասարակության տականքների մեջ ներխուժած հայակերություն թույնը երևան էր բերում չարագուշակ գալիքի վտանգավոր ախտանիշներ, որոնք ամեն անգամ ի հայտ էին գալիս կոտորածների հենց նախօրյակին և ազդանշան ծառայում գաղանային բնազդները սանձազերծելու ու հագեցնելու։

Հայկական բարձրավանդակի Բիթլիսի (Բաղեշի) նահանգը քրդերով ամենախիտ բնակեցվածն էր։ Հենց այդ շրջանում էին բուն դրել ամենակատաղի աշիրեթապետները և կիսանկախ քրդական ցեղերը։ Քրդական շարժման նշանավոր պարագուլաներից մեկը՝ Բեդրիսան բեկի շառավիղ Հուսեին փաշան, Բիթլիսի նահանգում գրեթե անկախ ինքնակալ էր, և իշխանությունները չէին հանդգնում ինչ-որ չափով սահմանափակել նրա իրավունքները։

Նիզամի արյունարբու շեյխ Սեիդ Ալին, որը գավառի ավելի քան 200 հայերի սպանությունների հեղինակն էր, դեռ 1913 թ. դեկտեմբերին մտադրվել էր դիմել նոր, է՛լ ավելի լայնածավալ ոճիրների։

¹ Տե՛ս «Գրոշակ», № 1, հունվար, 1914, էջ 5-7։

* Ջալիլ Զալիլը իր «Բիթլիսի 1914 թ. քրդական ապստամբությունը հայ մամուլի գնահատմամբ» հոդվածում (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», № 4, 1985, էջ 126-134) այն տեսակետն էր հայտնում, որ քրդական ավատապետական ու կրոնական վերնախավերը իբր նպատակ չեն ունեցել վիժեցնելու Հայաստանի բարենորոգումների ծրագիրը։

Սեիդ Ալիի մտադրությունն իրականացնելու համար անհրաժեշտ էր քրդերին նախապես համոզել ու նախապատրաստել։ Այդ խնդիրը իր վրա վերցրեց Սեիդ Ալիի հեռավոր ազգական և նրա տնային ուսուցիչ Հերունի մուլլա Սելիմը։

1914 թ. հունվարի սկզբներից Սելիմը սկսում է շրջել Նիզամի մեկ ու գավառին կից քրդաբնակ ուրիշ տարածքներում ու եռանդուն պրոպագանդ մղել հայերի դեմ, միաժամանակ քննադատել կառավարությունը՝ «Քուրդիստանը գյաուրներին ծախելու» համար։

Մուլլա Սելիմի հակահայկական քարոզները խորը տպավորություն էին թողնում խավար քուրդ բնակչության վրա, որի շրջանում նա գնալով ձեռք էր բերում մեծ ժողովրդականություն։

Մուլլա Սելիմի եռանդուն քարոզչության հետևանքով Բիթլիսի և Վանի աշիրեթներում սկսվեց խուլ ընդվզում։ Ամենուրեք տեղի էին ունենում ժողովներ, որոնց մասնակցում էին ոչ միայն տեղի շեյխերն ու բեյերը, այլև զինված քրդերի բազմաթիվ խմբեր։

Ռազմաշունչ տրամադրությունները, որոնք բորբոքվում էին ամբողջ ձմեռվա ընթացքում, առանձնապես սուր կերպարանք ստացան 1914 թ. փետրվարի վերջերին։ Միայն այդ ժամանակ Նիզամի գայմագամը (գավառապետը) վերջապես վճռեց կալանավորել մուլլա Սելիմին՝ որպես շարժման գլխավոր տեսաբաններ չնչոզի։

Փետրվարի 20-ին գայմագամը 50 ժանդարմներով մտավ այն գյուղը, ուր գտնվում էր Սելիմը։ Նրան ձերբակալում են՝ Բիթլիս ուղարկելու համար։

Փետրվարի 23-ին գայմագամի գլխավորած վաշտը Արզվի գյուղի մոտ հարձակման է ենթարկվում զինված 100-ի չափ քրդերի կողմից։ Գայմագամը և մի սպա փախչելով կարողանում են ազատվել, մի քանի ժանդարմ վիրավորվում են, մնացածները ցած են դնում զենքերը և անձնատուր լինում։ Մուլլա Սելիմն ազատության մեջ էր։

Նույն օրը շեյխ Սեիդ Ալին շրջակա աշիրեթներին հրահանգ ուղարկեց՝ պատրաստ լինել Բիթլիսի վրա արշավելու համար։

Փետրվարի 24-ին քրդերի զինված խմբերն սկսեցին ժամանել այն գյուղը, ուր ապրում էր շեյխը:

Փետրվարի 26-ին Բիթլիսում սկսվում է իրարանցում, փակվում են խանութները, հայ բնակչությունը ապաստան էր որոնում առաջնորդարանում և եկեղեցիներում: Ռուսաց հյուպատոս Շիրկովը այդ ամենին վերաբերվում էր անտարբեր սառնասրտությամբ և հրաժարվում էր ապաստան տալ հայերին հյուպատոսարանում:

Բիթլիսի հայոց առաջնորդ Սուրեն ծ. վարդապետ Գալեմյանը մի քանի անգամ դիմում է վալի Մազհար բեյին՝ պարզելու, թե նա ինչ միջոցներ է մտածում ձեռնարկել քաղաքը պաշտպանելու համար: Գլուխը կորցրած նահանգապետը որոշակի պատասխան չի տալիս, բայց տրտնջում է, թե տեղական զորքը ուժեղացնելու մասին կառավարությունն ուղղած իր բոլոր հեռագրերը մնում են անպատասխան: Հետո առաջնորդին աղերսում է՝ քաղաքի բնակչությանը հանգստացնելու համար ազդել հայ առևտրականների վրա, որպեսզի նրանք բացեն խանութները:

Փետրվարի 27-ին քաղաքի դրությունը ավելի անհանգիստ է դառնում: Վալիի հրամանով 100 ժանդարմից, 120 զինվորից ու 40 ոստիկանից կազմվում է մի զինված խումբ, որի մեկ երրորդը քրդեր էին: Իսկ վերջիններիս ցեղակիցների չըջանում գնալով աճում էր հուզումը: Ամենուրեք լսվում էին հայերին կոտորելու սպառնալիքներ:

Փետրվարի 28-ին հայոց առաջնորդը կրկին գալիս է նահանգապետի մոտ: Վերջինս ասում է, թե ինքն էլ չգիտի, թե ինչ անի: Առաջվա նման Պոլսից ոչ մի պատասխան չէր գալիս: Ռուսական հյուպատոսարանի դռները շարունակում էին փակ մնալ:

Երեկոյան անսպասելի կերպով քաղաք է գալիս շեյխ Սեիդ Ալին՝ մոլլա Սելիմի ուղեկցությամբ: Բիթլիսի իրենց ցեղակիցներին հրահանգավորելուց հետո՝ մարտի 2-ին, նրանք մեկնում են քաղաքից: Պարզ էր, որ քուրդ առաջնորդները գնում էին՝ խոչոր ուժերով հետ գալու համար:

Մարտի 3-ի առավոտյան լուր ստացվեց Բիթլիսին քրդական ավազակախմբերի մոտենալու մասին: Հայոց առաջնորդը դիմեց

վալիին՝ խնդրելով զենք տալ ինքնապաշտպանություն համար: Պատասխանի փոխարեն հրաման արձակվեց խուզարկություն կատարել հենց հայերի տներում: Վերցնում էին նույնիսկ որսորդական հրացաններն ու դաշույնները: Նույնը կատարվում էր Մուշում:

Ամենքը միաբերան ասում էին, թե հենց որ գետերի ջրերն իջնեն, ու բացվեն ճանապարհները, սկսվելու են մեծ իրարանցումներ, և արյունը հոսելու է գետի պես:

Մարտի 5-ին Բիթլիսում տեղեկություն ստացվեց, որ երկու շաբաթ հետո Սեիդ Ալին հարձակման է անցնելու քաղաքի վրա:

Երկու շաբաթը չէր լրացել, երբ տեղի ունեցան բիթլիսյան հայտնի անցքերը:

Մարտի առաջին տասնօրյակի վերջին հարավից եկած վաճառականներն ու ճանապարհորդները միաձայն հաստատում էին, որ Խիզանում վերջին նախապատրաստություններն են ընթանում առաջիկա երկու-երեք օրերին Բիթլիսի վրա հարձակում սկսելու համար:

Քաղաքի հայ բնակչությունը, որը մինչ այդ խաղաղորեն սպասում էր, թե երբ է սկսվելու բարենորոգումների ծրագրի գործադրումը, այժմ կանգնել էր լինել-չլինելու հրամայականի առջև: Ահ ու սարսափի մատնված հայերը պատսպարվեցին իրենց տներում: Շուկան կրկին փակվեց. հայի ո՛չ մի խանութ չէր բացվում:

Հայոց առաջնորդ Սուրեն վարդապետը շարունակում էր հարցապնդումները նահանգապետին՝ իմանալու, թե նա անվտանգության ինչ երաշխիքներ կարող է տալ հայերին, բայց որևէ սփոփիչ պատասխան չէր ստանում: Վալին ընդամենը խոստովանում է, որ Բ. Դուռը շարունակում է բոլորովին անուշադրության մատնել իր խնդրանքները: Կառավարությունից վալիին միաժամանակ նախատել էին, թե նա զուր տեղը խուճապի է մատնվում և արհեստականորեն առաջ է բերում իրարանցում:

Մեծ վտանգը հայերի գլխին էլ ավելի ծանրացավ, երբ Կ. Պոլսից ստացած հրահանգի համաձայն՝ Բիթլիսի թուրք իշխանություններն սկսեցին զինաթափ անել նրանց, իսկ քրդերն այդ

նույն ժամանակ լրացուցիչ զենք էին ստանում: Քաղաք թափանցած մոլլա Սելիմը, շեյխ Շահաբեդդինը և նրանց գործակալները քարոզում էին սրբազան պատերազմ քրիստոնյաների դեմ:

Քրդերն ասում էին. «Մենք իսլամ ենք, միայն ու միայն ճանաչելու ենք Մուհամմեդին և շարունակելու ենք ենթարկվել շարիաթի օրենքներին: Երբեք Եվրոպա- մեվրոպա չենք ճանաչելու, չենք ընդունելու կոնտրոլ-մոնտրոլ: Երդվում ենք և արյան գնով պիտի իրագործենք մեր երդումը»: Իսկ թուրքերը քրդերին ասում էին. «Դրանք լաֆ (խոսքեր: - Յ. Ս.) են. ի՞նչ կոնտրոլ-մոնտրոլ»¹:

Քուրդ տարրը միշտ աշխատել էր արգելք լինել հայկական բարենորոգումների իրագործումը: 1895-ին նա այդ գաղափարը մերժեց՝ հայերին ջարդելով ու թալանելով, իսկ այժմ մերժում էր նույնը կրկնելու սպառնալիքով: Եվ եթե սպառնալիքները դեռ իրականություն չէին դարձել, դրանում թե՛ քրդերը և թե՛ հայերը պարտական էին քաղաքական երերուն, ոչ հստակ պայմաններին. Բ. Դուռն այժմ չէր կարողանում քրդերի միջոցով կազմակերպել հայերի բացահայտ, լայնածավալ ջարդեր:

Այս ամենին կառավարությունը լուռ ակննատես էր: Դա վկայում էր, որ նա դիտավորյալ ձեռնպահ է մնում կտրուկ միջոցներ ձեռնարկելուց: Աստիճանաբար պարզ էր դառնում, որ հայերի դեմ ուղղված խժոժությունները Իթիթհադի հերթական դիվային ստեղծագործությունն են: Այն նրա համար մի նոր առիթ կամ պատրվակ պիտի դառնար՝ ձգձգելու, հետաձգելու կամ իսպառ վերացնելու հայկական բարենորոգումների ծրագրի իրականացումը:

Մարտի 13-ին շեյխ Սելիմ Ալին իր 1000 զինյալներով Խիզանից արչավանք սկսեց Բիթլիսի վրա: Ճանապարհին նրան միանում էին քրդերի նորանոր զինված խմբեր, որի հետևանքով շեյխի գործի թիվը աճեց՝ հասնելով 3000 հոգու: Առաջխաղացման ընթացքում հրոսակազորքը կորուստներ էր պատճառում հայ

¹ «Մշակ», № 65, 26 մարտի 1914 թ.:

բնակչությունը: Թալանվեցին Կուլթիկ գյուղը, Խիզանի Ս. Խաչ վանքը: Բիթլիսի մատույցներում քուրդ հրոսակները գրավեցին, թալանեցին, ապա ավերեցին Խնդրակատարի հայկական վանքը: Զորքը, որի թիվը արդեն հասել էր չուրջ 5000 զինյալի, անմիջապես չմտավ քաղաք, այլ չըջապատեց այն: Պատճառն այն էր, որ վերջապես Բիթլիս էր մտել բավականին լավ զինված թուրք գորամաս: Այդ պահին էր, որ Սուրեն վարդապետի խնդրանքով և Բիթլիսի կուսակալի հրամանով հայերին բաժանվեց մոտ 150 հրացան՝ ինքնապաշտպանություն նպատակով:

Մինչ Սելիմ Ալիի հրամանատարություն տակ գտնվող հրոսակազորքը քաղաք մտնելու հրամանի էր սպասում, քրդերը հայերի կոտորածներ սարքեցին Հայաստանի կենտրոնական մասերում՝ Մուշի ու Վանի շրջակա գյուղերում, Դերսիմում, Դիարբեքիրի մերձակա բնակավայրերում¹: Տարոնում և էրզրումի վիլայեթում նույնպես քրդերի մի մասը բացահայտորեն ոտքի էր ելել հայերի դեմ: Աշիրեթներում տեղի ունեցող խորհրդակցություններում ցեղապետները վճռում էին իրենց ենթակաների անելիքները: Հայկական շատ գյուղեր չըջապատված էին հրոսակներով: Նշված բոլոր վայրերի հայկական շրջաններից հայ բնակչության մի մասը սկսել էր գաղթել:

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանն ամեն օր ստանում էր հեռագրեր հայ բնակչության սարսափելի դրություն մասին: Դրանք Ջավեն պատրիարքը ներկայացնում էր ներքին գործերի նախարար Թալեաթին, որը, ըստ սովորականի, նրան հանգստացնում էր, թե արդեն գործեր են ուղարկված հուզումի վայրերը:

Դեպքերի ընթացքից խիստ մտահոգ էին էջմիածնում: Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ը հեռագրերով Թուրքիայի հայոց պատրիարք Ջավեն Եղիայանից և Բիթլիսի առաջնորդ Սուրեն վարդապետից պահանջում էր պարբերաբար զեկուցազրեր ուղարկել իրեն և ստացած տեղեկությունները կովկասյան

¹ «Մշակ», № 66, 27 մարտի 1914 թ.:

իշխանությունների միջոցով փոխանցում էր ուսաց արտգործ- նախարարություն:

Ասիական Թուրքիայում կարծես սկսվում էր մի նոր լայնա- տարած հրդեհ, որը հանգցնելու համար անհրաժեշտ էր դրսի միջամտությունը:

Ռուսաց կառավարությունը ճնշում գործադրեց Բ. Դոան վրա, որպեսզի նա արագ հակադարձի հայերի դեմ քուրդ ցեղա- պետների ավազակային հարձակումներին, բայց իշխանու- թյունները չէին արձագանքում¹:

Ա. Ջիվիլեգովը “Русскія Вѣдомосты” թերթում տպագրած հոդվածում գրում էր, որ բարենորոգումների գործի հապաղումն ու ձգձգումը կարող են կործանարար լինել հայկական նա- հանգների հայերի համար, ուստի հարցը պետք է վճռել մինչև 1914 թ. գարնանամուտը, որովհետև օրերս տեղի ունեցած քրդական համագումարի որոշման համաձայն՝ 1914 թ. ապրիլ ամսին սպասվում են մեծ ցույցեր ընդդեմ բարենորոգումների, և բացառված չէ, որ այդ ցույցերը վերջանան կոտորածով:

Ոգեչնչված իրենց ցեղակիցների հաջողություններով՝ Բիթ- լիսի ժանդարմերիայում ծառայող քրդերը անցան քաղաքը չըջապատած Սեիդ Ալիի գործի կողմը և իրենց զենքն ուղղեցին ընդդեմ թուրքերի: Այսպիսով՝ իթթիհաղականների հրահրած շարժումն ի վերջո չըջվեց նրա կազմակերպիչների դեմ: Սեիդ Ալին, մոլլա Սելիմը, չեյխ Շահաբեղդինը կարողացան սկսված շարժմանը տալ ազգային-ազատագրական պայքարի բնույթ*:

¹ Այդ մասին մանրամասն տե՛ս «Արարատ», № 4, ապրիլ, 1914, էջ 325-326:

² Ա. Ջիվիլեգովի նշված հոդվածի արտատիպը տե՛ս «Արարատ», № 2, փետրվար, 1914, էջ 123:

* 1914 թ. քրդական ապստամբության մասին Հայաստանի արխիվներում պահպանվում են բավական հետաքրքիր տեղեկություններ: Ժամանակի հայ- կական մամուլը լայնորեն լուսարանում էր ապստամբությունը և դրա հետ կապված իրադարձությունները: Առավել մանրամասն տե՛ս «Հորիզոն» (Թիֆ- լիս) թերթի 1914 թ. 66-96 համարները:

Թուրք կառավարություններու սիրելի զաւակները, այն գայլերը, որոնց բերանը անոնք սովորութիւն ունէին Հայոց միսը նետելու, այսինքն քիւրտերը, վայրկեանը եկած կարծեցին աւազակու- թենէն ապստամբութեան անցնելու համար: Կառավարութիւնը պարտաւորուեցաւ զինուորական արչաւանքներ կազմակերպել, կարգ մը ցեղախումբեր հնազանդութեան պարտաւորելու, եւ ի միջի այլոց, անոնց ձեռքէն Պիթլիս քաղաքը առնելու համար»¹:

Քաղաքական համոզմունքները, բնականաբար, իրականաց- ման պահանջ էին զգում, և ուսյալ երիտասարդ քրդերը տեսա- կանից անցան գործնականի: Բիթլիսի հակապետական ապստամբական շարժումը դարձավ հենց այդ ձգտումների ազ- դանշանը:

Ռուսաստանը, չահագրգռված լինելով Հայկական հարցով, նաև հետաքրքրություն սկսել էր զբաղվել քրդական խնդրով և հետամուտ լինել դրա զարգացման ընթացքին: Այդ հե- տաքրքրությունը բորբոքվում էր հատկապես այն հանգաման- քով, որ Պարսկաստանի արևմտյան մասը, ուր գլխավորապես ապրում էին քրդեր, գտնվում էր Ռուսաստանի քաղաքական ու տնտեսական ազդեցությունների: Պետերբուրգում մտածում էին, որ եթե վրա հասնի Թուրքիայի բաժանման պահը, քրդա- կան հարցը կարող է մեծ նշանակություն ստանալ Ռուսաստանի համար:

Այս անգամ արդեն թուրքական կառավարությունը ձեռք առավ կտրուկ միջոցներ հակապետական շարժումը սաղմնային վիճակում խեղդելու համար, բայց դա նրան չհաջողվեց: Հակա- թուրքական շարժումն արագորեն տարածվեց Հայաստանի քրդաբնակ տարածքներում՝ Վանից Բիթլիս, Բիթլիսից մինչև Մոսուլ ու Դիարբեքիր: Խիզանը դարձավ ապստամբության կենտրոն:

Քրդերի հակաթուրքական շարժման գլուխ կանգնեցին Բե- դիրխաններ նշանավոր ցեղի առաջնորդները, Խիզանի համբա-

¹ Անտրէ Մանտեղլթամ, Օսմանեան կայսրութեան ճակատագիրը: Առաջին մաս. երիտասարդ թուրքերը պատերազմէն առաջ, Կ. Պոլիս, 1919, էջ 92:

վավոր չեյլա Զալալեղդինի եղբորորդի Շահաբեղդինը, մոլլա Սելիմը, Նիզանի, Մամրտանքի ու Կարկառի չեյլա-ավագակները, զանազան խալաֆներ և ուրիշ քուրդ կրոնապետներ ու աղաներ, որոնք ահագին կարողություն էին դիզել Հայերին կողոպտելով:

Մոլլա Սելիմն իր ելույթներում ատելություն էր քարոզում դեպի երիտթուրքերը՝ բարենորոգումների հարցում հայերին զիջումներ արած լինելու համար: Միաժամանակ նա հայտարարում էր, որ քրդերի ատելությունը կանհետանա, եթե կառավարությունը պատռի «բարենորոգումների թուղթը»:

Ապստամբություն ղեկավարներից չեյլա Բարզանը և շարժման այլ պարագլուխներ Բ. Դուռ ուղարկած մի հեռագրում գրում էին, որ եվրոպացիների թելադրանքով կառավարության կողմից ընդունած բարենորոգումները դժբախտություններ են բերելու քրդերին, և որ նրանք զենքը վայր չեն դնելու, մինչև որ իրենց չտրվեն նույն իրավունքները, ինչպիսիք տրվելու են հայերին:

Բարենորոգումների դեմ քրդերի զայրույթի գլխավոր պատճառն այն էր, որ եթե դրանք իրագործվեին, իրենք այլևս հային չէին կարող կողոպտել, յուրացնել նրա աշխատանքի արդյունքները, որը մի քանի դար շարունակ միջոց է պահպանելու իրենց գոյությունը: Նրանք նախ վախ ունեին, որ Հայաստանում բարենորոգումներ ներմուծելուց հետո կառաջանային հափշտակածները տերերին վերադարձնելու խնդիրներ:

Ի պատասխան չեյլա Բարզանի և նրա զինակիցների՝ Բ. Դուռ ուղարկած հեռագրի՝ կառավարությունը հայտնեց, որ այժմ, նկատի ունենալով դրություն ղժվարությունը՝ ժամանակը չէ վեճեր հարուցելու մահմեդականների միջև՝ միաժամանակ խոստանալով ընդառաջ գնալ քրդերի ցանկություններին, եթե քուրդ պատգամավորները այդ հարցը բարձրացնեն պառլամենտում:

Կառավարությունը վերջապես որոշեց դիմել վճռական գործողությունների: Այդօրինակ կտրուկ վճռի ընդունումը բացատրվում էր ոչ միայն Ռուսաստանի պահանջով, այլև Կ. Պոլսի գերմանական դեսպանի հայտարարությամբ, թե Գերմանիան չահագրգռված է Բիթլիսի վիլայեթի լիակատար հանգստությունը:

Ի կատարումն ընդունված վճռի՝ միայն թուրքերից կազմված մի մեծաթիվ զորամաս, մոտենալով քաղաքին, հարձակում գործեց քրդական ուժերի վրա: Հարձակումը ձախողվեց. քրդերին հաջողվեց ոչ միայն հետ մղել հակառակորդի զրոհները, այլև խլել նրա թնդանոթներն ու գնդացիները:

Այդ հաղթանակն էլ ավելի ոգեշնչեց քրդերին. մեծացավ նրանց հավատն իրենց ուժերի նկատմամբ: Կառավարության զորքերի և քրդերի միջև կատաղի կռիվներ ծավալվեցին Բայազետից մի քանի վերստ հեռավորության վրա, Մուշի շրջակայքում և Դիարբեքրի մոտերքը:

Բիթլիսի մոտ տարած հաղթանակից հետո մոլլա Սելիմը հայտնաբերեց Զավեն սրբազանին նամակով հավաստիացրեց, թե քրդերը ձեռք չեն տալու հայերին, և որ իրենց ապստամբությունը բացառապես ուղղված է երիտթուրքերի դեմ:

Դրանից հետո քաղաքում տարածվեց մի անստորագիր թուռցիկ, որով հայերին կոչ էր արվում միանալ սկսված քրդական շարժմանը՝ դրա դիմաց նրանց խոստանալով լիակատար ապահովություն: Ավելին, շարժման ղեկավարների՝ ազգային ինքնագիտակցության հասած մի փոքր մասի մեջ նկատվեց թուրքական պետության դեմ հայերի հետ համատեղ զինված պատերազմ սկսելու և հաղթանակից հետո հայ-քրդական միացյալ անկախ պետություն կազմելու ձգտում:

Հույս ունենալով, թե հայերը կմիանան իրենց, քրդերը խոստանում էին «հայից խլած մեկ հասկի դիմաց մեկ ոչխար տալ»: Բայց հայերը չեզոքություն հայտարարեցին: Այդ քայլը ձեռնտու էր քրդերին, որովհետև դրանով ապահովվում էր իրենց թիկունքը: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ «Բիւզանդիոն» թերթը գրում էր. «... Քուրդ ապստամբները հայերու հանդեպ շատ բարեկամորեն վերաբերվեցան, հանդիպակած հայ գյուղացուն նշանավոր վնաս մը չտվին...»¹:

Իհարկե, ստեղծված վիճակում քրդերի հետ համերաշխությունը ավելի ցանկալի բան չկար: Բայց դա հնարավոր էր: Չէ՞ որ երկու դրացի ազգերի միջև ընկած էր մի վիթխարի անդունդ,

¹ «Բիւզանդիոն», 22 ապրիլի (5 մայիսի) 1913 թ.:

որը թուրք կառավարությունը ներչնչումով բացել էին հենց իրենք՝ քրդերը: Հայերը ոչ մի վստահություն չունեին նրանց նկատմամբ:

Թուրքահայաստանի հայ ժողովրդի ողբերգական վիճակ ստեղծողները եղել են թուրքական իշխանություններն ու քուրդ վերնախավը: Նույնիսկ դժվար է ասել, թե ովքեր են ավելի շատ պատասխանատու թուրքահայության անլուր, անմարդկային հալածանքների և ի վերջո նրա ողջակիզման համար՝ թուրքերը, թե՞ քրդերը: Չէ՞ որ հենց վերջիններս են իրենց գազանություններով առաջ բերել Հայկական հարցը, որը դիվանագիտական ձևակերպում էր ստացել տերությունների 1878 թ. Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածում և այսպես կոչված «միջազգայնացվել»: Հենց նշված հոդվածով է, որ քրիստոնյա հայությունը և մահմեդական քրդությունը եվրոպայի կողմից ըստ էության պաշտոնապես հայտարարվեցին թշնամի կողմեր: Հոդվածը, որը շրջանցում էր թուրքական իշխանություններին որևէ գնահատական տալը, շատ ձեռնտու եղավ վերջիններիս համար, որոնք, ամեն կերպ քաջալերելով մահմեդական քրդերի ավազակային հակումները, նրանց ուղղեցին թուրքահայ ժողովրդի դեմ: Բեռլինի կոնգրեսին հաջորդած ավելի քան երեք տասնամյակները եղան թուրքերի ու քրդերի կողմից հայության անլուր հալածանքների, նրա ունեցվածքի թալանի, անհատական և խմբային սպանությունների, նաև զանգվածային կոտորածների տարիներ՝ հարյուրհազարավոր անմեղ զոհերով:

Թուրքերի ու քրդերի ձեռքով էր, որ Առաջին համաշխարհային պատերազմում հայ ժողովուրդը ենթարկվեց ցեղասպանության՝ զրկվելով հազարամյակների իր հայրենիքից: Ցեղասպանությունը իրականացրել են ոչ միայն թուրք և քուրդ վերնախավերը, այլև երկու ժողովուրդները՝ մեծից փոքրը, տգետն ու կրթվածը: Բացառությունները եղել են հազվադեպ:

Թուրքն արել էր ամեն ինչ, որպեսզի քրդերի հետ հայերի մերձեցումը երբեք իրականություն չգտնա: Դարեր շարունակ քուրդը հալածել, հարստահարել էր հային, թուրք իշխանությունների ձեռքին կույր գործիք լինելով՝ խորտակել էր անթիվ-անհամար անմեղ կյանքեր: Նույնիսկ այդ ամենից հետո հայը

կարող էր իր մեջ ուժ գտնել և հաշտության ձեռք մեկնել քրդին: Տվյալ ժամանակ համերաշխության և միաբանության համար իրական կամուրջ կարող էր ծառայել հայերից խլված հողերի, շարժական և անշարժ գույքի գոնե մի մասի հոժարակամ վերադարձն իրենց տերերին, որը, իհարկե, անհուսալի բան էր:

Ուստի միանգամայն իրավացի էր Բիթլիսի հայոց առաջնորդ Սուրեն վարդապետը, երբ վճռականորեն սահմանագատվեց ոմանց գլխում ծագած հայերի համար այդ պահին շատ վտանգավոր գաղափարից: Նա հայտարարեց, որ հայերը կտրակա-նապես մերժում են կառավարության դեմ ուղղված որևէ բռնի գործողություն:

Հայերը վերապահ վերաբերմունք ունեին նաև «Ինքնակամ Քուրդիստանի» ինքնավարության գաղափարի նկատմամբ, քանի որ այդ հարցը բարձրացվում էր այն ժամանակ, երբ պիտի ձեռնարկվեր հայկական բարենորոգումների իրագործումը: Այլ խոսքով՝ քուրդը խոյահարում էր տառապանքով ձեռք բերված առայժմ թղթի վրա գտնվող «նվաճումը»:

Հայերն իրենց հարց էին տալիս. եթե Հայաստանում իրագործվեին բարենորոգումներ, մի՞թե դրանք օգուտ չեն բերի նաև իրենց՝ քրդերին, և մի՞թե ավելի չեն նպաստի նրանց ազգային ձգտումների զարգացմանը:

Ապստամբական փորձեր անելով և քաղաքական իրավունքների պահանջ դնելով՝ քրդերն ուղղակիորեն կազմալուծում էին հազիվ ձեռք բերած բարենորոգումների գործադրությունը հայկական վեց վիլայեթներում և Տրապիզոնի վիլայեթում: Ի՞նչ բարենորոգումների մասին կարող է խոսք լինել որևէ երկրում, ուր տիրում է ապստամբություն, խռովություն, անկարգություն: Տվյալ պահին ապստամբել և առաջ քաշել «Ինքնավար Քուրդիստանի» պահանջը նշանակում էր թուրք կառավարության հացին յուղ քսել, որը փնտրում էր ամեն պատրվակ՝ հետաձգելու կամ ընդհանրապես չկիրարկելու բարենորոգումների ծրագիրը Հայաստանում:

Դրանից գատ, կենցաղում և նկարագրով ունենալով շատ նմանություններ՝ հայերը և քրդերը իրարից շատ հեռու էին մշակութային զարգացման մակարդակով, խիստ տարբեր՝

լեզվով ու կրոնով, պատմական անցյալով, ավանդույթներով ու աշխարհայացքով:

Ահա այդ ամենը Հայերին ստիպում էր խիստ զգուշավոր լինել դեպի քրդական շարժումը: Զգուշավոր էին նաև արտասահմանյան լրագրերը, իսկ նրանց մի մասը շարժումը համարում էր հետադիմական՝ իր բովանդակությամբ և նպատակներով:

Հայոց առաջնորդի հայտարարությունից երկու-երեք օր հետո՝ մարտի 23-ին, Բիթլիսի բերդապահ զորքը, որը համալրվել էր այլ տեղերից եկած կանոնավոր զորամասերով, հարձակման անցավ և կարողացավ հետ մղել Բիթլիսի չուրջը կուտակված շեյխ Սեիդ Ալիի քրդական ուժերին: Շարժման պարագլուխներից մոլլա Սելիմը չկարողացավ նահանջել և իր մերձավոր զինակիցների հետ ապաստանեց Բիթլիսի ոռոսաց հյուպատոսարանում, որի բակում մինչ այդ խոնավել էին մի քանի հարյուր քրդեր: Սրանց բոլորին հյուպատոսարանի տարածք թույլատրել էր մտնել հյուպատոս Շիրկովը, որը վալիից պահանջել էր դադարեցնել քրդերի հետապնդումը՝ դրա դիմաց խոստանալով՝ նրանց համոզել հեռանալ քաղաքից:

Մեծ վեզիրը ոռոսաց դեսպան Գիրսից պահանջեց թուրք կառավարությանը հանձնել Բիթլիսի քրդական ապստամբության պարագլուխ մոլլա Սելիմին և նրա ընկերներին: Կարճատև արձակուրդից վերադարձած ոռոսաց դեսպանն առարկեց՝ ասելով, թե քրդերի շարժումը քաղաքական բնույթ ունի, հետևաբար հյուպատոսարանում ապաստանածները չեն կարող հանձնվել: Բայց դիվանագիտական կազուսից խուսափելու համար, և որպեսզի Բ. Գուռը չմտածի, թե քրդական ապստամբության մեջ Ռուսաստանը հետապնդում է հեռուն գնացող նպատակներ, Պետերբուրգից եկած կարգադրության համաձայն՝ հյուպատոս Շիրկովն ազատվեց պաշտոնից:

Մոլլա Սելիմը ոռոսական հյուպատոսարանից մի քանի նամակ ուղարկեց Կ. Պոլսի հայոց պատրիարքին, որոնցով նա հայտնում էր իր խոր ատելությունը երիտթուրքերի և նրանց կառավարության նկատմամբ¹:

Բայց Բիթլիսի հայերը հավատ չէին տածում դեպի քուրդ դեկավարների հանդեպ: Ոչ առանց հիմքի նրանք տազնապով էին հետևում ծավալվող իրադարձություններին: Հայերը համոզված էին, որ թուրք-քրդական կոիվների քավությունն նոխազը լինելու են իրենք, քանի որ տեղի ունեցող կատակերգությունն գլխավոր հեղինակը Կ. Պոլսի կառավարությունն է, որը հայերի կոտորածների դեպքում միշտ կանգնած էր քրդերի թիկունքում: Որքան էլ թուրք զորքը կոիվներ մղեր մոլլա Սելիմի ավազակախմբերի դեմ, և որքան էր սա շարունակեր մնալ ոռուսաց հյուպատոսարանում, ոչ ոք չէր կարող հայերի խելքին նստել՝ ապացուցելու համար, թե մահմեդական քոչվոր քուրդ ցեղերի շարժմանն ուղղություն տվողը Իթիհհադի կառավարությունը չէ: Նրանք նաև դույզն անգամ հավատ չէին ընծայում այն նամակներին, որոնցում մոլլա Սելիմը ատելություն էր հայտնում երիտթուրքերի նկատմամբ:

Քրդական շարժման և հայերի վրա դրա հետևանքների մասին նույնանման կարծիքներ էր հայտնում ոռուսական մամուլը: «Новое Время» թերթը գրում էր. «Մենք հրաժարվում ենք հավատալ, թե լուրջ է այն կոիվը, որպիսին, իբր, տեղի է ունենում քրդերի և երիտթուրքական զորքերի միջև: Վերջիվերջո տուժելու են հայերը»: Եթե այդպես է, գտնում էր հողվածագիրը, ապա բարենորոգումների ծրագիրը ջուրն է ընկնում Բ. Գուռն մեղքով: Այդ դեպքում Ռուսաստանն ի լուր ամենքի պետք է հայտարարի, որ ինքը Հայաստանը միակողմանի վերցնում է իր պաշտպանության տակ:

Բիթլիսի քրդական ապստամբության առնչությամբ Ամենայն հայոց կաթողիկոսը Կովկասի փոխարքային 1914 թ. ապրիլի 16-ին հղած նամակում գրում էր. «Առանց վրդովմունքի չեմ նայում Տաճկաստանի քրդական վերջին շարժման վրայ, որովհետեւ իւրաքանչիւր խոռովութիւն այս երկրում, հաստատուած սովորութեան համաձայն փլուում է հայերի գլխներին: Ես խորապէս յոյս ունեմ, որ Ռուսաստանի կայսերական կառավարութիւնը

¹ Տե՛ս «Новое Время», № 13662, 24 марта 1914 г.

¹ «Новое Время», № 13662, 24 марта 1914 г.

ուժեղ ձեռքով կ'կանգնեցնի Տաճկա-Հայաստանում հնարաւոր արհւնհեղուծիւնը և չի մերժի օգնելու հայերին պաշտպանելու իւր կյանքը, պատին ու գոյքը»¹:

Անդրադառնալով նույն խնդրին՝ «Մշակը» նշում էր. «Եվրոպական պետութիւնները, գլխավորապէս Ռուսաստանը և Գերմանիան, պետք է համոզվեն, որ թուրքերը հոժարակամ բարենորոգումներ չեն մտցնի, ուստի պետք է ստիպեն նրանց այդ բանն անելու կամ պետք է անմիջականորեն իրենց ձեռքը վերցնեն դրանց գործադրութիւնը»²: Իսկ եթէ քրդերի շարժումն անմիջապէս չգսպվի, եթէ վերսկսվեն հայկական ջարդերը, ապա, թերթի հոդվածագրի կարծիքով, բարոյական և հրամայողական պարտականութիւնն ընկնում է Ռուսաստանի վրա, որը ռեֆորմների թելադրիչը և նախաձեռնողը եղավ, գրավելով թուրքաց հայաստանը, ապահովեց հայ ժողովրդի գոյութիւնը³:

Շարժումը զսպելու համար Բիթլիսը չունեն բավականաչափ զինվորական ուժեր, ուստի տարբեր վայրերից, հատկապէս Վանից, այնտեղ ուղարկվեցին նոր զորամասեր՝ մի քանի թնդանոթներով: Միաժամանակ, Բ. Դուռը Բիթլիսի նահանգապետի պաշտոնից ազատեց Մազհար բեյին և նրա փոխարեն նշանակեց Թահսին բեյին, որին տրվեցին լայն լիազորութիւններ:

Սկսվեցին ձերբակալութիւններ ու հարցաքննութիւններ, քաղաքային բանտ նետվեցին քրդական ապստամբութեան մի շարք ղեկավարներ ու ակտիվ մասնակիցներ: Հնարավոր խոտվութիւններն արագ զսպելու համար Բիթլիսում հայտարարվեց ռազմական դրութիւն:

Այդ միջոցառումներից հետո կառավարական միացյալ զորքը հարձակման անցավ: Քրդական ուժերը կարճատև անկանոն դիմադրութիւնից հետո, բռնեցին նահանջի ճանապարհը՝ թողնելով 70 սպանված⁴, բազմաթիվ վիրավորներ և մեծաթիվ գերիներ: Իսկ կառավարական զորքի կորուստները կազմել էին 12

¹ ՀԱԱ, ֆ. 1262, ց. 3, գ. 1172, թ. 27:

² «Մշակ», № 65, 26 մարտի 1914 թ.:

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս «Աւետարեւ», № 17, 25 ապրիլի 1914 թ.:

սպանված զինվոր, այդ թվում՝ 8 թուրք և 4 հայ¹: Երիտթուրք զորքը սկսեց հետապնդել ապստամբութեան պարագլուխներին բուն Խիզանում: Վերջիններս, ցրելով իրենց հրոսակախմբերը, ժամանակավորապէս թաքնվեցին զավառի լեռնային մասերում: Ապստամբութեան պարտութիւնից հետո կախաղան հանվեցին 13 քուրդ չեյխ ու ցեղապետ, ինչպէս և «համիդի» իռեգուլյար հեծելազորի երեք հարյուրապետ: Դրանց թվում էին Սեիդ Ալին, նրա որդի Սյուլհեդդինը², չեյխ Շահաբեդդինը, Մահմեդ Շիրինը, մոլլա Մուհեդդինը, հաջի Հայրոն, Ալի աղան³:

Քրդերի շարժումը բոլոր նախադրյալներն ուներ տարածվելու նաև Մուշի կողմերում, ինչպէս և Վանի նահանգի արևմտյան գավառներում, բայց Բիթլիսում կրած պարտութիւնը կանգնեցրեց շարժման հետագա ծավալումը:

Չնայած ապստամբութիւնն արագորեն պարտվեց, բայց ակնհայտ դարձավ, որ թուրքիայի առջև կանգնած կնճոռոտ հարցերի թվին ավելացել է ևս մեկը՝ քրդականը:

Քրդական հակակառավարական ապստամբութիւնը ճնշելուց հետո թուրք մամուլը բազմակողմանիորեն վերլուծում, քննութեան էր առնում քրդական շարժման պատճառներն ու ընթացքը, միաժամանակ դրվատում հայերի բացասական դիրքը շարժման նկատմամբ:

Կ. Պոլսի «ժամանակ» թերթը թարգմանաբար արտատպել էր թուրքական «Փեյեսամի» թերթի խմբագրականը Բիթլիսի անցքերի մասին, ուր ասված էր.

«Բիթլիսի դէպքերը իրապէս մարդու սիրտը արյունոտեցին: Օսմանցիների ամէնամեծ սխալը իրենց միջազգային դիրքը չըմբռնելը և միշտ գիտցած-չգիտցած թշնամիներու ձեռք զործիք ըլլալն է: Գոհունակութեան արժանի է, որ Բ. Դուռը անմիջապէս հարկ եղած միջոցներուն դիմած է, բայց մեր կարծիքով այդ հիվանդութիւնը ավելի հիմէն դարմանելու է: Այս աղետներուն

¹ Տե՛ս «Աւետարեւ», № 17, 25 ապրիլի 1914 թ.:

² Տե՛ս Վ. Ա. Բայրուրոյան, Հայ-քրդական հարաբերութիւնները Օսմանյան կայսրութիւնում, Երևան, 1989, էջ 312:

³ Տե՛ս «Բիւզանդիոն», 9 հոկտեմբերի 1914 թ.:

պատճառը մեկ կողմէ տգիտութիւնն է և միւս կողմէ տնտեսական պայմանները: Այս երկու փորձանքները իրարու վրայ բարդելուն պէս՝ հասարակութեան մեջ ոչ իմացականութիւն և խղճահարուստութիւն և ոչ ալ կրօնի, հայրենիքի նման բարձր գգացումներ կ'անան:

Այս դեպքերը չըջապատող մոայլութեան մէջ եթէ լոյս մը կայ, այդ ալ այս անգամ մեր հայ հայրենակիցներուն՝ երկրին լուսավոր տարրերուն հետ մէկտէղ՝ կառավարութեան կողմը բռնելն է: Ահավասիկ այս յաջողութիւնը միմիայն արդարութեան և սահմանադրութեան արդյունք է: Այժմ իր հայրենիքը սիրող ամէն օսմանցի մաղթելու է, որ Նուպար փաշային կողմէ անգամ անցեալները չափազանց գովեստի արժանացած բարենորոգումներու ծրագիրն օր առաջ գործադրուի, վերջ դնելու համար այլևս այսպիսի շարժումներու»¹:

Բայց ապստամբութիւնից հետո նման հայանպատ հրապարակումները հազվագեպ էին: Թվում էր, թե քրդական ապստամբութեան հայերի չմասնակցելը վերջիններիս հանդեպ ինչ-որ չափով դեպի դրականը կ'փոխի թուրքերի վերաբերմունքը: Բայց այդպես չեղավ: Հայերին նոր հարվածներ հասցնելը նրանց համար խնդիր չէր:

1913 թ. վերջերին թղթարարական հայ նախարարը 1914 թ. համար նոր դրոշմանիչներ պատվիրելուց առաջ նրանցից մեկի վրա թուլատրել էր պատկերել նաև հայերեն տառեր: Ազգայնական մամուլում դա առաջ էր բերել զայրույթի իսկական փոթորիկ: Թերթերի էջերում տպագրվում էր հայկական տառեր կրող այդ դրոշմանիչը, որին ուղեկցվում էին համապատասխան հակահայկական «լուսաբանություններ»: Համալսարաններից ու պետական դպրոցներից մինչև թուրք հասարակության ներքնախավերը քննարկում էին այդ «չլաված ու չտեսնված» բանը: «Ո՞վ կարող է հաշտվել այսքան խայտառակության հետ... նախարարին պետք է անմիջապես ենթարկել ամենածանր պատասխանատվության»², - լսվում էր ամեն կողմից:

¹ «Ժամանակ», 24 մարտի 1914 թ.:

² «Աշխատանք» (վան), № 16, 15 փետրվարի 1914 թ.:

Թուրք երիտասարդների մի այլ խումբ, անհանդուրժողական նույն ոգուց մղված, ամիսներ ի վեր օրը ցերեկով հարձակումներ էր գործում մայրաքաղաքի քրիստոնեական գերեզմանատների վրա, ջարդում տապանաքարերը կամ մուրճերով վերացնում դրանց վրայի գրերը (որովհետև թուրքերեն չէին): Թուրքերի մի քանի խմբեր մտնում էին կինոգահլիճներ, պատռոտում վարագույրները, ջարդում սարքավորումները, կովամարտեր սարքում ահաբեկ հանդիսատեսների առջև, պահանջում կինոնկարների բացատրությունները գրել միայն թուրքերեն: Եվ այդ ամենը տեղի էր ունենում ոստիկանության աչքի առաջ:

Մեծապես խստացվեց գրաքննությունը Հայաստանի նահանգներում: Առաջիններից մեկն արգելվեց Ավետիս Ահարոնյանի «Ազատության ճանապարհին» գիրքը, որից հետո՝ հայ գրողների բոլոր հայրենասիրական գործերը: Փաստորեն, վերահաստատվում էր արդուլհամիդյան ժամանակների ոեժիմը, և երևան էր գալիս ցենզորը՝ իր անսահմանափակ լիազորություններով¹:

1914 թ. մարտ ամսից սկսած՝ գնալով ավելի ուժեղացան Բ. Դոան և ընդհանրապես տարբեր մակարդակների թուրք պաշտոնյաների ճնշումները հայ ազգային իշխանությունների, հայ բնակչության նկատմամբ:

Ուրիշում փոխմյուզիր Մեհմեդ էֆենդին սպանվել էր անհայտ մարդկանց ձեռքով, որին հետևել էին անլուր խստություններ ու անթիվ ձերբակալություններ Ուրիշում և Սասունում: Էրզրումի Քեոփրի-քեոյում գտնվել էր մի ոստիկանի դիակ, և ահա դարձյալ՝ անմեղ հայերի նկատմամբ բռնություններ, ձերբակալություններ, ծեծ ու ջարդ²:

Թվում էր, թե քաղաքական ազատությունների համեմատ մամուլի ազատությունը դեռ խեղդված չէր: Բայց ավերիչ ձեռքը դրան էլ հասավ. անհրաժեշտ էր լուցնել հայկական մամուլի բողոքի ձայնը:

¹ Տե՛ս «Դրօշակ», № 1, հունվար, 1914, էջ 6-7:

² Տե՛ս «Աշխատանք» (վան), № 24 (170), 12 ապրիլի 1914:

Հայկական մամուլի օրգաններից առաջինը 1913 թ. հունվարի 26-ի համաձայնագրից հետո զոհ գնաց Դաշնակցության Կարինի օրգան «Յառաջը»: Բ. Դուան հրահանգով ապրիլի սկզբին ղաղաբեցվեց թերթի տպագրությունը՝ «վնասակար հրատարակություն» պատճառաբանությամբ: Դա նախանշան էր, որ նույն մեղադրանքով շուտով փակվելու են հայկական մամուլի «վնասակար» նորանոր օրգաններ:

«Յառաջը»-ի փակման առթիվ «Աշխատանքը» գրում էր. «Երբե՛ք հայերու ձայնը չպիտի լռե՛ս եւ երբե՛ք հայերու բողոքները չպիտի խեղդուին բռնի միջոցներով, ինչպէս որ անոնք չլռեցին համիտեան սարսափներու ներքեւ: Ընդհակառակը, իւրաքանչիւր հարուած որ կուգայ խախտելու սահմանադրական ազատութիւնները՝ իւրաքանչիւր բռունցք որ կը բարձրանայ հայ ազգի իրաւունքներուն եւ զանոնք պաշտպանող մամուլին դէմ, աւելի ու աւելի կը զօրացնէ արդարութեան եւ իրաւունքի համոզումը հայերու մէջ: Եթէ Պոլսոյ հայ մամուլը լռեցնեն, Կարինինը պիտի պօռայ, եթէ Կարնոյ «Յառաջը» փակեն, Վանի «Աշխատանքը» պիտի բողոքէ եւ եթէ մամուլի ազատութիւնը վտարեն այս երկիրներէն դուրս՝ ազատ խօսքը օտար հորիզոններէն պիտի պօռայ, պիտի քննադատէ, պիտի երեւան հանէ մեր պետական ախտաւոր կազմի մերկապարանոց պատկերը եւ այն անհաշիւ բռնութիւնները որոնք կը գործուին յանուն օրէնքի եւ պետական իրաւունքի»¹:

Թուրք ազգայնականների «ազգասիրական գործը» դրանով չէր վերջանում: Ամենուրեք հնչում էր «Տնտեսական գերազանցությունն առնել քրիստոնյաներից» կոչը: Ինչո՞ւ թուրքերն իրենց դրամը քրիստոնյաներին պիտի տան... Եվ ահա սկսվեց «տնտեսական զարթնումի» կոչերի արձագանքը՝ «Բոյկոտ հույն և հայ առևտրականների դեմ»: Այս առիթով շուկաները, խանութները, փողոցները ողողվում էին խլամուխի և թրքության գաղափարներով լեցուն թռուցիկներով, որոնց հրահրումով մայրաքաղաքում և այլուր ջարդվում էին քրիստոնյաների խա-

¹ «Աշխատանք», № 24 (170), 12 ապրիլի 1914 թ.:

նութների դռներն ու պատուհանները, իսկ թուրք առևտրականներն ու խանութպաններն ընդլայնում էին իրենց գործը: Այս բոյկոտի և սարսափի մթնոլորտը թուրք թեթերից մեկն անվանել էր «Վերածննդի փայլուն ապացույց»¹:

**ԹՈՒՐԲԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ՀԵՐԹԱԿԱՆ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:
ՀԱՅ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՐԱՇՆԱԿԱՆ
ՇԱՐԺՄԱՆ ՎԱՆՃԱՆԸ**

Իր տեղում խոսվել էր այն մասին, որ 1913 թ. սկզբներից մեկնարկել էին թուրքական պառլամենտի պատգամավորական ժողովի հերթական ընտրությունները, որոնք Իթիհադի կոմիտեի որոշման համաձայն՝ տեղի էին ունենում ոչ թե մի որոշակի օրում, այլ ամբողջ 1913 թ. ընթացքում և 1914 թ. առաջին չորս ամիսներին:

Ի տարբերություն նախորդ պառլամենտական ընտրությունների՝ այս անգամ նախընտրական գործընթացն ընթանում էր համեմատաբար հանգիստ:

Հայոց պարագայում դրան նպաստում էր այն հանգամանքը, որ 1913 թ. հունիսի սկզբից նրանք սկսել էին համերաշխական շարժում, որի նպատակներից մեկը պատգամավորական ժողովի ընտրություններում ազգային մի բլոկով հանդես գալն էր:

Դեռևս 1913 թ. հոկտեմբերին հայոց պատրիարքարանը հանդես եկավ կառավարությանն ուղղված հատուկ թագրերով՝ պահանջելով հաշվի առնել կայսրությունում ապրող ավելի քան երկու միլիոն հայերի թիվը և պառլամենտում նրանց տալ 20 տեղ, ինչպես նաև թույլ տալ, որ հայ ընտրելիների ցուցակը կազմի հայոց պատրիարքարանը:

«Հայոց պատրիարքարանը,- գրում էր «Բյուզանդիոնը»,- թագրերը մը ներկայացուցած է կառավարութեան, որով երկու

¹ Տե՛ս «Աշխատանք», № 16, 15 փետրվարի 1914 թ.:

բան կպահանջեմ, այսինքն ընտրելի հայ երեսփոխաններուն թիվը համեմատական ըլլա հայ ժողովուրդին թիվէն եւ այդ երեսփոխանները հայոց կողմէ ընտրվին...»¹:

Պատրիարքարանի այս թագրիրը շատ աղմուկ հանեց: Երիտթուրքերը հայոց պատրիարքարանի պահանջը «քաղաքական կուսակցութիւնների գոյութեան դարում» նախ համարեցին անհեթեթ, որից հետո «սահմաններ չճանաչող հայեր» պիտակով հանդես եկան իթթիհադական մամուլը և ղեկավար գործիչները: Վերջիններս համաձայն չէին 20-21 աթոռ տալու հայերին, ինչպես նաև թույլ տալու, որ հայ ընտրելիների ցուցակը կազմեր հայոց պատրիարքարանը: Իթթիհադական նշանավոր գործիչ Հուսեին Զահիդը «Թանինում» գրում էր.

«Հայոց պատրիարքարանի այս բաղձանքը եթե իրագործվի, երեսփոխան ժողովի խմբակցութիւնները պիտի փոխվեն ազգայնական խմբակցութեանց եւ այն ատեն իրարու պիտի բաղխին ոչ թե մտքերը, այլ ազգերը: Հայ երեսփոխանի մը արտայայտած միտքն ու խօսքերը, ընդհանուր հայ ազգին խօսքերը պիտի ըլլան. որեւէ կողմէ հայ երեսփոխանի դեմ հարձակում մը պիտի վերագրվի ընդհանուր ազգին եւ հավաքական զգացմունքներն անկարելի վիճակի պիտի հասնին...»²:

Թուրքահայութեան ընդհանուր թիվը հաշվելով 1600000՝ ըստ այդմ երիտթուրքերը պառլամենտում հայերին հասնող պատգամավորների թիվը հաշվում են 16: Բայց այդ թիվն էլ նրանք հայերի համար համարում են շոայլութուն և նրանց նախատեսում են 10 պատգամավորական տեղ:

1913 թ. նոյեմբերին իթթիհադական կառավարությունը արդարադատության նախարարության միջոցով հետ ուղարկեց ընտրությունների պահանջի մասին հայոց պատրիարքարանի թագրիրը այնպիսի վրդովեցուցիչ և վիրավորական եղանակով, որի նախադեպը չէր եղել պատրիարքարանի և կառավարության հարաբերություններում: Թագրիրին կից գրությունը կա-

ռավարությունը սպառնացել էր այլևս չպատասխանել պատրիարքարանի թագրիրներին: «Կառավարութեան այդ ընթացքը նախատինք մըն է ուղղուած ամբողջ հայ ազգի հասցէին, անոր քաղաքակրթական ճիգերուն ու անոր արդար ու յառաջադեմ պահանջներուն»¹, - գրում էր ՀՅ դաշնակցութեան Վանի օրգան «Աշխատանք» թերթը:

Մյուս կողմից, թուրք մամուլը, ի դեմս «Թանին», «Թասֆիրի էֆքեար» և «Թերջիմանի հագրգաթ» իթթիհադական շովինիստական օրգանների, անշուշտ քաջալերված հայ ազգի հանդեպ կառավարության բռնած արհամարհական դիրքից, հայութեան և հայ ազգի հանդեպ գործածում էին այնպիսի նախատական և սպառնալից լեզու, որ ի հայտ էին բերում թուրքական հրապարակագրության ախտավոր վիճակը, և եթե նույնը փորձեր անել հայկական մամուլը, կդատապարտվեր մշտական լուծության:

Մնալով անտարբեր թուրք հակահայ մամուլի գրգռիչ ու ամբողջավար հողվածների հանդեպ՝ կառավարությունը հայկական թերթերին միաժամանակ արգելում էր՝ «ճշմարտության հակառակ» հողվածներ և նյութեր հրապարակել բարենորոգումների խնդիրների շուրջ, չխոսել հայկական պահանջների մասին: Եվ այս ակնհայտ աչառություն շնորհիվ թուրքական մամուլը դարձել էր աներևակայելի սանձարձակ: Դրանով էր բացատրվում, որ բազմաթիվ թուրքեր սպառնալի ու հայհոյախառն նամակներ էին հղում պոլսահայ թերթերին: «Ազատամարտ» թերթի խմբագիրների հասցեներով ուղարկված նամակների հեղինակները, օրինակ՝ պահանջում էին որևէ խոսք չտպագրել բարենորոգումների մասին՝ հակառակ պարագայում խոստանալով ավերել տպարանը և ջարդուփչուր անել խմբագրատունը:

Դաշնակցության Վանի օրգան «Աշխատանք» գրում էր. «Հայ ազգը հաստատապէս որոշած է ապրիլ ու չնահաջել իր պահանջներէն՝ ոչ մերժումներու եւ ոչ ալ ջարդե ու կոտորածի սարսափներուն առջեւ եւ ապրիլ ուրիշներու հետ հաւասար իրաւունքներով եւ հաւասար պարտականութիւններով... Մենք

¹ «Բիւզանդիոն», № 5193, 8 (21) նոյեմբերի 1913 թ.:

² Հուսեին Զահիդի այդ հողվածի մասին տե՛ս նույն տեղում:

¹ Տե՛ս «Աշխատանք», № 5, 30 նոյեմբերի 1913 թ.:

կը յայտարարենք ի լուր աշխարհի թե ունինք պահանջներ այս երկրի շահերուն ու փրկութեան ի նպաստ եւ չպիտի դադրինք զանոնք հետապնդելէ ոչ մեկ բռնութեան, ոչ մեկ ջարդի եւ ոչ մեկ կոտորածի առջեւ, որովհետեւ համոզուած ենք, թէ կը կատարենք քաղաքակրթական գործ մը այս բարբարոս ու խաւար երկրամասի մէջ»¹:

Հայկական բոլոր չորս քաղաքական ուժերը պայմանավորվել էին, որ չեն մասնակցելու պառլամենտի ընտրություններին, եթե մերժված մնան Հայ պատգամավորական տեղեր ունենալու Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի նվազագույն առաջարկները:

Ինչպես ասվեց, 20 պատգամավոր ունենալու Հայոց պատրիարքարանի պահանջն Իթիֆհադի կողմից մերժելուց և 16 տեղ տալու նրա խոստումից հետո հայկական կուսակցությունները համաձայնություն չէին եկել, որ եթե այդ խոստումը վերածվի որոշման, ապա իրենք չպիտի մասնակցեն ընտրություններին, այսինքն՝ իրենց շարքերից չեն ներկայացվելու թեկնածուներ: Միաժամանակ, ներքին հակասությունները բորբոքելուց խուսափելու համար նրանք համաձայնություն չէին հայտնել, որ ընտրություններին մասնակցելու է միայն պատրիարքարանը, և ինքն էլ առաջադրելու է պատգամավորական թեկնածուներ: Բացի այդ կուսակցությունները պատրիարքարանին հավաքաբար առաջարկել էին հաստատուն մնալ Իթիֆհադի կողմից խոստացած 16 տեղի վրա՝ նրանցից 12-ին անպայման ազգային ցանկով ընտրելու պայմանով: Դրանից բացի, կուսակցությունները պահանջել էին, որ ազգային ցուցակ ընդգրկված բոլոր թեկնածուները ստորագրություն տային, որ եթե Իթիֆհադը չկատարի իր խոստումը և 16 թիվն իջեցնի, ապա ընտրվելուց հետո չպիտի գնան խորհրդարան:

Կուսակցությունները Ազգային ժողովի Քաղաքական ժողովին առաջարկել էին՝ նրա անկողմնակալությանը չվնասելու համար իր անդամներից ոչ մեկի թեկնածությունը չդնի քվեարկության: Կուսակցությունների անդամներին նույնպես խիստ

զգուշացվել էր անհատապես չառաջադրել իրենց թեկնածությունը, այլապես պիտի համարվեին իրենց կուսակցությունից արտաքսված:

Կուսակցական թերթերը, Կ. Պոլսից ու զավառներից սկսած մինչև Ամերիկա և արտասահմանյան այլ գաղութներ, ամենաբուռն ոգով պաշտպանեցին այս որոշումները¹:

1913 թ. դեկտեմբերի կեսերին Իթիֆհադի կոմիտեն Հայոց պատրիարքին առաջարկեց շարունակել բանակցությունները պառլամենտում Հայ պատգամավորների թվի շուրջ:

Թուրքերի ու Հայերի լարված փոխհարաբերություններում նկատված որոշ մեղմացման պայմաններում Հայոց պատրիարքը վերսկսեց իր կանոնավոր կապերը կառավարություն հետ և շարունակեց բանակցել Իթիֆհադի կոմիտեի հետ:

Երկու կողմերը կնքում են համաձայնագիր, որի հիման վրա առաջիկա պառլամենտում Հայերը պետք է ներկայացվեն 16 պատգամավորով, որոնցից երկուական պատգամավոր ընտրվելու էին Կ. Պոլսից, Վանից, էրզրումից և Բիթլիսից, իսկ մնացած 4 տեղի համար պատգամավորներ էին ընտրվելու տարբեր տեղերից:

Բայց պառլամենտում 16 տեղ ունենալու Բ. Դոան և Հայոց պատրիարքարանի միջև ձեռք բերված համաձայնությունը հանդիպեց Հայ կուսակցությունների խիստ դժգոհությանը: Նրանք գտնում էին, որ պատրիարքարանը կառավարությունից պետք է պահանջի պատգամավորական առնվազն 20 տեղ: Բայց կառավարությունն այս անգամ էլ մերժեց պատրիարքարանի ներկայացրած այդ պահանջը, որի պատճառով վերջինս խզեց իր հարաբերությունները նրա հետ, իսկ ժողովրդի բոլոր խավերը որոշեցին բոյկոտել պառլամենտական ընտրությունները²: Քանի որ հունվարի 26-ի համաձայնագրից հետո Հայություն մեջ մեծ հույս էր արթնացել, ուստի բարեպատեհ զուգադիպությունը Հայ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները, իրենց

¹ «Աշխատանք», № 5, 30 նոյեմբերի 1913 թ.:

¹ Տե՛ս «Պահակ», № 13, 14 մայիսի 1914 թ.:

² Տե՛ս «Նժուք», № 6, 8 փետրվարի 1914 թ.:

հերթին նիստ գումարելով, քննարկեցին օսմանյան երրորդ պատվամենտական ընտրությունների խնդիրը և քվեարկություններ ընդունեցին հետևյալ որոշումները.

Ա) Թուրքիայի հայոց ընդհանուր թվին համապատասխան 20 հայ պատգամավորական աթոռներ ունենալ օսմանյան պառլամենտում, Բ) Հայ պատգամավորների թեկնածուները ներկայացնել հայոց կողմից, Գ) Հայերն իրենք պետք է մատնանչեն այն տեղերը, ուր հայ պատգամավորներ պիտի ընտրվեն, Դ) Կառավարությունը պետք է խոստանա, որ խորհրդարանին է ներկայացնելու ազգային պատգամավորների ընտրության կարգի օրինագիծ, Ե) Բ. Դուռը պետք է անմիջապես հրահանգ ուղարկի՝ հետաձգելու ընտրություններն այն հայաբնակ վայրերում, ուր ընտրվելու են հայ պատգամավորներ, Ձ) Այս ամենը և ուրիշ նմանօրինակ պահանջներ իրագործելու համար Ազգային կենտրոնական վարչության կողմից նշանակված ընտրական հանձնաժողովը սրբազան պատրիարքի գլխավորությունում անմիջապես պետք է բանակցություններ սկսի կառավարության հետ՝:

Հայ քաղաքական կուսակցությունների համատեղ ընդունված այս որոշումները հանձնվեցին Ջավեն պատրիարքին, որը դրանք գտավ համապատասխան ազգային վարչության որդեգրած՝ ընտրությունների բոյկոտից հրաժարվելու ուղղությանը, ուստի և պատրիարքարանի գործավար Գամեր էֆ. Շիրինյանի միջոցով ներքին գործոց նախարար Թալեաթ բեյից խնդրեց ժամադրություն՝ պառլամենտական ընտրությունների առթիվ ընդհատված բանակցությունները վերսկսելու համար: Հանդիպումը նշանակվեց հունվարի 28-ին:

Նշանակված օրը Թալեաթ բեյն ընդունեց պատրիարքին: Սիրալիը ընդունելության ժամանակ նա հավանություն տվեց իրեն ներկայացրած բոլոր պահանջներին և խոստացավ նույնությամբ գործադրել դրանք:

Հատկապես դժվար լուծելի էր հայ պատգամավորների ընտ-

րություն տարածքների հարցը, քանի որ հայաչափ վայրերի մեծ մասում (Ամասիա, Տիգրանակերտ, Հալեպ և այլն) հայերի կողմից ընտրությունները բոյկոտելու պատճառով տեղի էին ունեցել քվեարկություններ և ընտրվել էին թուրքեր, քրդեր ու արաբներ: Ջնայած դրան՝ Թալեաթը խոստացավ ելք գտնել՝ հայ թեկնածուների ընտրությունները կազմակերպել ուրիշ վայրերում և ամբողջացնել պատրիարքարանի պահանջած 20 տեղը:

Պատրիարքը շնորհակալություն հայտնեց Թալեաթին՝ ներկայացրված բոլոր պահանջներն ընդունելու համար, իսկ վերջինս, դրանից գոհ, կրկին շեշտեց, թե ամեն ինչ կարվի, որ «մեր հայ եղբայրները հուսախաբ չլինեն»¹:

Վերադառնալով Թալեաթի մոտից՝ Ջավեն պատրիարքն անմիջապես հրավիրեց ընտրական հանձնաժողովի նիստ, ուր համբարձում Պոյաճյանին, Հարություն Շահրիկյանին և Տիրան Երկանյանին հանձնարարվեց բանակցություններ վարել Իթիթի-հադի կոմիտեի հետ և նրան ներկայացնել ազգի թեկնածուների ու ընտրավայրերի ցուցակները:

Իթիթի-հադի հետ բանակցությունների ընթացքում համաձայնություն ձեռք բերվեց կազմակերպել 20 հայ պատգամավորների ընտրությունները հետևյալ վայրերում՝ Կ. Պոլսից՝ 2 հոգի, Կարինից (էրզրում)՝ 2, Վանից՝ 2 և 1-ական Բաղեչից (Բիթլիս), Մուշից, Խարբերդից, Սեբաստիայից, Ջնյունիայից (Իզմիր), Նիկոմեդիայից, Սիսից, Կեսարիայից, Շապին-Գարահիսարից, Ռոզոթոյից և Տրապիզոնից: Մյուս հայ պատգամավորները ևս այդ նույն տեղերից պիտի ընտրվեին որոշ տեխնիկական հարցեր լուծելուց հետո:

Բայց ընդամենը օրեր անց Թալեաթը հրաժարվեց իր խոստումից և 16 պատգամավորական տեղը միանգամայն բավարար համարեց հայերի համար, միաժամանակ առաջարկեց որքան հնարավոր է շուտ ներկայացնել պատգամավորական թեկնածուների ցուցակը:

Հենց այդ ժամանակ էր, որ հայոց մեջ 1913 թ. ամռանը

¹ «Դայալլիկ», (Կ. Պոլիս), № 10 (197), 29 (11) հունվարի 1914 թ.:

¹ «Դայալլիկ», (Կ. Պոլիս), № 10 (197), 29 (11) հունվարի 1914 թ.:

սկսված միջկուսակցական համերաշխական շարժումը ճեղքվածք տվեց: Դարձյալ գլուխ բարձրացրեց հայկական ավանդական անհամերաշխությունը: Հայկական չորս կուսակցությունների ժամանակավոր մերձեցումը բխվեց պառլամենտական ընտրությունների փորձաքարին: Օրեր անց նույն կուսակցությունների ներկայացուցիչները, որոնք ստորագրել էին վերոհիշյալ որոշումների տակ, աթոռափառքից և պառլամենտի անդամներին հասանելիք գումարներից հրապուրված, մոռացան ամեն բան, նույնիսկ պատիվ ու արժանապատվություն:

Օսմանյան պառլամենտական ընտրությունների շուրջ ծագած խնդիրը երևան հանեց հայ քաղաքական կուսակցությունների անչահախնդրության ու բարոյականության արժանիքը, նրանց պայքարի դիմադրողականության աստիճանը: Որքան կշահեր ազգը, եթե հայ կուսակցությունները շարունակեին ամրապնդել սկիզբ առած համերաշխական շարժումը, այլ ոչ թե այն խեղդեին դեռ բարուրում:

Միջկուսակցական համերաշխական ժողովի որոշումն առաջինը խախտեցին դաշնակցականները: Այդ ժողովի դաշնակցական երկու ներկայացուցիչներից մեկը՝ Ակնունին (Ուաչատուր Մալումյան), հայտարարեց, թե սխալ է կուսակցությունների չմասնակցելը պառլամենտական ընտրություններին, և պատգամավորի համար առաջարկեց իր թեկնածությունը: Համերաշխական ժողովի մյուս դաշնակցական անդամը՝ Ատոմը (Հարություն Շահրիկյան), որը սկզբում բուռն հակադարձեց Ակնունուն, ի վերջո տեղի տվեց:

Ռամկավարների ներկայացուցիչ Քելեկյանը, որը նույնպես սկզբում անպատվություն անվանեց Դաշնակցության այդ նշանավոր դեմքերի կատարած քայլը, երկու օր անց իր կուսակցության անունից հայտարարեց, թե հարկավոր է «նախկին բոլոր որոշումները մէկդի նետել», և որ իր կուսակցության կողմից ինքը նույնպես առաջադրվելու է պառլամենտի պատգամավորական ժողովի թեկնածու¹:

¹ Տե՛ս «Պահակ», (Բոստոն), № 13, 14 մայիսի 1914 թ.:

Միջկուսակցական համերաշխական ժողովի երկու ներկայացուցիչներն էլ, իրենց հերթին, որոնք «զգուսանք կը յայտնեին թեկնածու տալու տեսակէտին դէմ», վերջին պահին պաշտպանեցին դաշնակցականների և ռամկավարների տեսակետը, միաժամանակ հայտարարեցին, որ եթե Դաշնակցությունը թեկնածու չտար, իրենք նույնպես չէին տա, բայց այժմ, երբ նա որոշել է թեկնածու տալ, ուստի «ի սեր համերաշխութեան՝ թեկնածու կտան»¹:

Եվ սկսվեց 16 տեղի համար ընտրելիների ցուցակների կազմումը առանձին-առանձին: Հայոց պատրիարքարանն էլ իր հերթին կազմեց ընտրությունների իր «ազգային ցուցակը»:

Նրանք բոլորը վերադարձան նախորդ տարիների հակոտնյա դիրքերին: Նախկինում նույնպես պոլսահայերն ու սրանց հետևող գավառահայերը չափից ավելի զբաղվում էին պատգամավորական աթոռների խնդրով և երկար ձգձգվող սաղիմական վեճերով, քան ազգային ցավերով: Պատգամավոր դառնալու պատճառներից մեկը, եթե ոչ հիմնականը, ինչպես նշվեց, ոսկիների (բարձր վարձատրության) փայլն էր:

Պառլամենտական աթոռներին ձգտող հայ գործիչների մեծ մասը տարիներ շարունակ այնպես էլ չկարողացավ ըմբռնել, որ իրենց զբաղեցնելով պառլամենտական աթոռների հրապուրով՝ դրանով իսկ կառավարությունը թուրքահայերի ուշադրությունը չեղում էր Հայաստանի կենսական հարցերից:

«Հորիզոն» թերթն իր 1914 թ. № 15-ում ճիշտ էր նկատում. «Որքան կոյր պետք է լինել չտարբերելու միմեանցից մի հիմնական հարց, ինչպիսիք է Հայկական ռեֆորմները եւ մի տասներորդական հարց, ինչպիսիք են պարլամենտում մէկ պատգամատր աւելի կամ պակաս ունենալու հարցը»:

Տեսնելով հայկական քաղաքական դաշտի խոտոր վիճակը՝ երիտթուրքերն անցնում են գործի: Հայոց պատրիարքարանի կոնակին նրանք Դաշնակցությանը հիշեցնում են իրենց անցյալ դաշինքը և առաջարկում են այն նորոգել ու հասցնել ընտրական

¹ Տե՛ս «Պահակ», (Բոստոն), № 13, 14 մայիսի 1914 թ.:

բլոկի: Դաշնակցությունն ընդառաջում է Իթթիհազին և պատ-
րիարքարանի առաջարկած ընտրելիների ցուցակի դեմ առա-
ջարկում Դաշնակ-Իթթիհազ բլոկի ընտրելիների ցուցակ: Եվ դա
այն դեպքում, երբ դաշնակցությունը պաշտոնապես խզված էր
Իթթիհազից: Նկատի առնելով այն հանգամանքը, որ Դաշնակ-
ցությունը դեռևս ոչ բոլոր վիլայեթներ էր մուտք գործել, ինչպես
նաև այն, որ Իթթիհազ կուսակցության մեջ մտնում էին նաև
հայ անդամներ, ուստի երիտթուրքերի ղեկավարությունը Դաշ-
նակցությանը տվեց միայն 7 տեղ՝ մնացածը վերապահելով
Իթթիհազի անդամ հայերին:

Քանի որ պառլամենտի լեզուն թուրքերենն էր, և որովհետև
դաշնակցականները թուրքերենին լավ տիրապետող մարդ չու-
նեին, ուստի իրենց տրված 7 տեղերից մեկը հարկադրված զի-
ջում են Գրիգոր Զոհրապին: Մնացած 6 տեղի վրա ընտրվում են
Վարդգես Սերենկյուլյանը և Գարեգին Փաստրմաճյանը (էրզ-
րումի վիլայեթից), Գեղամ Տեր-Կարապետյանը (Մուշից), Վա-
հան Փափազյանն ու Օննիկ Դերձակյանը (Վոսմյան, Վանից),
Նալբանդյանը (Սեբաստիայից):

Մնացած 9 աթոռների համար պայքար է սկսվում Հնչակի և
Սահմանադրական ուսուցիչների միջև, բայց սրանք համա-
ձայնություն են գալիս՝ միանալ Պատրիարքարանի կազմած
ցուցակին, որի դեմ պայքարում էր Դաշնակցությունը: Եռակողմ
այդ ցուցակից պառլամենտի անդամներ են ընտրվում Հնչակյան
Համբարձում Բոյաճյանը (Մեծն Մուրատ) և Սանասարյան
դպրոցի նախկին տեսուչ Մաղաթյանը, Հայ Իթթիհազականնե-
րից ընտրվում են Պետրոս Հալաճյանը, Ստեփան Զրաջյանը, Հ.
Խոլաքյանը, Օննիկ Իհսանը, Հարություն Պոչկեզենյանը, Տիգրան
Պարսամյանը և դոկտ. Նազարեթ Տաղավարյանը:

Հայկական գործող կուսակցություններից միայն Վերա-
կազմյալ Հնչակյան կուսակցությունը կարողացավ պահպանել
իր նկարագիրը և խիստ քննադատություն տակ առավ մյուս
հայկական կուսակցությունների անվայել պահվածքը:

«Քանի մը աթոռի եւ ղեղին ոսկիներով (նկատի ունի թուր-
քական պատգամավորական ժողովի անդամների աշխատա-
վճարը:– Հ. Ս.), հեռապատկերէն շլացած քաղաքական երեք

կուսակցութեանց մարդիկը... սկսան ամոթալի և իրարահալած
պայքարը»¹, – գրում էր վերակազմյալների «Պահակ» (Բոստոն)
թերթը: Արդյունքն այն եղավ, որ աթոռներն իրար ձեռքից
խլելու համար կուսակցություններն սկսեցին միմյանց հանդեպ
պատրաստել նորանոր սաղրանքներ ու դավադրություններ²:

Վերակազմյալ Հնչակյան կուսակցության կենտրոնական
վարչությունը հրատարակեց «Սայթաքում» վերնագրով մի
գրքույկ (Բոստոն, 1914 թ.), որում խոսք էր բացված «Համե-
րաշխական շարժման» անկման գլխավոր պատճառների մասին,
որը, իր նշանակությամբ անկարևոր լինելով, այնուամենայնիվ
կարողացել էր դեպի ելման կետ շրջել սկսված գործընթացը:

Կատարվածն այնքան տգեղ էր, որ նույնիսկ ազգային կու-
սակցությունների մամուլի օրգանները այպանում էին իրենց ղե-
կավարների այդ անընդունելի արարքը, որը հասցրել էր համե-
րաշխական շարժման տապալմանը: Նույնիսկ Դաշնակցության
պաշտոնաթերթ «Դրօշակը» կատարվածը համարում էր «ամո-
թալի» ու «ազգավեր»: Թերթը գրում էր. «Վրդովեցուցիչ է,
անհանդուրժելի է, որ ինքը զինքնին «ազգային կամք», «ազ-
գային խղճատանք» հռչակող վարիչ մարմինները համերաշխու-
թեան այնքան բեղմնաւոր, այնքան պատկառանք ներչնչող
զաղափարը այսքան անխղճօրէն իրենց գձուձ, անպատիւ
նպատակներին ծառայեցնեն: Զղւելի է մտածել, որ վարիչ
մարմինների մութ շահատակութիւնների, ստոր ինտրիգների
չնորհիւ այսօր պարլամենտական անփառունակ աթոռների
պայքարը գայ մթազնելու ազգային դատի շուրջը դեռ երէկ
երկիւղածօրէն հսկումն կատարող ազգային յստակ, ազնիւ
զգաստութիւնը: Արտասուելի է մտածել, որ գեղածիծաղ Բօսֆօրի
ափերին ձեմող ազգայինձիների համար ազգային համերաշխու-
թիւն նշանակում է պարլամենտական աթոռին կապած յիսուն
ոսկի ամսականների բաշխումը ըստ քմաց եւ ըստ կամաց մի
մոլորւած պատրիարքի:

¹ «Պահակ» (Բոստոն), № 14, 21 մայիսի, № 15, 28 մայիսի 1914 թ.:

² Տե՛ս նույն տեղում:

Ո՞ւր մնաց համերաշխութիւնը»¹:

Այսպիսով, անփառունակ վախճան ունեցավ հայ ազգային կուսակցութիւնների ամբողջ պատմութեան ընթացքում միասնաբար գործելու միակ փորձը: Այն եղավ նաև վերջինը:

1914 թ. մայիսի 1-ին՝ 21 ամսվա երկար դադարից հետո, վերջապես բացվեց օսմանյան III խորհրդարանը:

Ընդունված կարգի համաձայն՝ արքայազն իշխանների ու գահաժառանգի հետ սուլթանը հանդիսավոր թափորով եկավ պառլամենտ և արտասանեց գահակալական ճառ:

Սուլթանի ճառն իր բովանդակությամբ առանձնապես աչքի չընկավ, առաջ չբաշխեց որևէ նոր գաղափար կամ միտք: Բայց դրա փոխարեն պակաս չէր ինքնագոհ գովերգութիւնը. «ամեն ինչ արեցինք բանակը գորացնելու համար, կազմեցինք զինվորական դատարան, հերոսաբար հետ վերցրինք էդիրենն (Ադրիանուպոլիս), երկիրը բաժանեցինք հսկողութեան 6 շրջանների» և այլն: Սուլթանը, սակայն, ոչ մի խոսք չասաց Հայաստանի բարենորոգումների ընթացքի մասին²:

Նորհրդարանի բացման օրը հայերից ընտրված պատգամավորներից ներկա էր 12 հոգի՝ Զոհրապը, Հալաճյանը, Գեղամ Տեր-Կարապետյանը, Տիգրան Պարսամյանը, Պոչկեղենյանը, Օննիկ Իսսանը, Հակոբ Նուրաբյանը, Ս. Զրաճյանը, Թումայանը, Նալբանդյանը, Վարդգեսը, Մաղաթյանը³:

Մի քանի ընտրական օկրուգներում հայ պատգամավորների ընտրություններ դեռ տեղի չէին ունեցել:

Օսմանյան երրորդ խորհրդարանի բացումից մի քանի օր հետո՝ մայիսի 9-ին, Հայոց ազգային ժողովը գումարեց 1914-1915 թթ. նստաշրջանի առաջին նիստը:

Զավեն պատրիարքի բացման ճառից հետո ժողովը ձեռնարկեց դիվանի ընտրությունը:

Դաշնակցական-ազատական բլոկն ամեն ինչ անում էր, որ դիվանի ղեկավար ընտրվի Հրանտ Ասատուրը, բայց ժողովի մե-

ծամասնութեան ձայներով ընտրվեց Գաբրիել Նորատունկյանը: Ավելին, դիվանի կազմում չընտրվեց ոչ մի դաշնակցական:

Ազգային ժողովի դիվանի նոր կազմում ընտրվել էին՝ Աատենապետ՝ Գաբրիել Նորատունկյան (Կենտրոն), Բատենապետ՝ Հայկ Նոճասարյան (սահմ. ուսմկ.), Գատենապետ՝ Համբարձում Պոյաճյան (հնչակ.), Աատենադպիր՝ Հակոբ Ավետիսյան (հնչակ.), Բատենադպիր՝ Արամ Անտոնյան (սահմ. ուսմկ.), Գատենադպիր՝ Գևորգ Սիմքեչյան (սահմ. ուսմկ.):

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՆԻԿՈԼԱՅ II ՑԱՐԻՆ

Հայաստանի բարենորոգումների ուս-թուրքական համաձայնագիրը երկու երկրների մերձեցման համար ստեղծել էր բարենպաստ մթնոլորտ: Համաձայնագրի ստորագրումից անմիջապես հետո մեծ վեղիր Սայիդ Հալիմը, Գուլկեիչին դիմելով, ասել էր, որ վավերագիրը «կնպաստի երկու պետությունների հարաբերությունների բարելավմանը»¹:

“Русское Слово” թերթի թղթակցի հետ ունեցած զրույցի ընթացքում Թալեաթ բեյը նշել էր, թե հայկական բարենորոգումների հարցի հաջող լուծումը հոգ է ստեղծել, որ Թուրքիան մերձենա Ռուսաստանին, և որ միևնույն կարծիքին են նաև մեծ վեղիրը և էնվեր փաշան²:

Այդ միտումը ողջունում էին թուրքահայերը, նրանց քաղաքական կազմակերպություններն ու պարբերականները: Այսպես, Կ. Պոլսում հրատարակվող հնչակյան «Դայլայիկ» թերթը գրում էր. «Մենք առաջին ծափահարողը պիտի ըլլանք ուս և թուրք մերձեցման: Ուստի և ի սրտէ կմաղթենք, որ մերձեցման նախաքայլերն առաջնորդեն ղեպի իրարհասկացողութիւն, ղեպի փոխադարձ գործակցութիւն»³:

¹ «Դրօշակ», № 2-3 (238), փետրվար-մարտ, 1914, էջ 27:

² Տե՛ս «Դայլայիկ», № 10 (197), 29 (11) հունվարի 1914 թ.:

³ Տե՛ս «Հորիզոն», № 101, 13 մայիսի 1914 թ.:

¹ «Բարենորոգումները Հայաստանում», էջ 101:

² Հոդվածի հայերեն թարգմանությունը տե՛ս «Մշակ», № 35, 18 փետրվարի 1914 թ.:

³ «Դայլայիկ» (Կ. Պոլիս), № 29, 16 մարտի 1914 թ.:

Ուսում-թուրքական հարաբերություններում նկատվող մերձեցումն իր հերթին նպաստում էր հայ-թուրքական լարված հարաբերությունների մեղմացմանը:

Դեռ փետրվարի 7-ին Կ. Պոլսում ֆրանսիական գործերի հավատարմատարը իր արտգործնախարար Դումերգին հղած հեռագրում նշել էր. «Թուրքերի և հայերի լարված հարաբերություններում նկատվում է իսկական թուլացում»¹:

1914 թ. ապրիլի սկզբներին Կ. Պոլսից հեռագրերը լուր էին բերել Թիֆլիս, որ նախարարներ Թալեաթ բեյը և էնվեր փաշան մտադիր են Պետերբուրգ գնալ: Մամուլը ենթադրություններ էր անում, թե ակնհայտ է, որ Գերմանիան, ենթարկվելով Ռուսաստանի ճնշմանը, լքել է իր դաշնակցին և ընդունել հայկական բարենորոգումների ծրագիրը: Թուրք թերթերը հիշեցնում էին, որ վճռական պահերին իր դաշնակիցներին լքելու Գերմանիայի սովորությունը նոր բան չէ: Միաժամանակ ռուսական և եվրոպական լրագրերը նշում էին, որ բացառված չեն Թուրքիայի կտրուկ շրջադարձը և միանալը Եռյակ համաձայնությանը, մանավանդ որ թուրքաց ղեկավար շրջաններում այն կարծիքն է ստեղծվել, թե հայկական հարցի լուծմամբ այլևս վերացել են լուրջ տարաձայնությունները Թուրքիայի և Ռուսաստանի միջև²:

Ըստ հնավանդ սովորության, երբ ռուսական արքունիքը Պետերբուրգից գալիս էր Լիվադիա ամառանոց՝ հանգստանալու, թուրքաց սուլթանն այնտեղ էր ուղարկում մի պատվիրակություն՝ ցարի գալուստը ողջունելու համար:

1914 թ. գարնանը ցարական ընտանիքն արդեն մոտ երկու ամիս անցկացրել էր Լիվադիայում, երբ թուրքական սուլթանը այնտեղ ուղարկեց հերթական, բայց ոչ սովորական, այլ արտակարգ պատվիրակություն, որի կազմում էին Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը, զինվորական նախկին նախարար, սուլթանի առաջին գեներալ-ադյուտանտ Իզզեթ փաշան, ներքին գործերի նախարարություն ղեկնապետ Հասան

¹ «Հայաստանը միջազգային դիվանագիտություն...», էջ 364:

² «Դայալայիկ», № 29, 16 մարտի 1914 թ.:

Ֆեհմի բեյը, գլխավոր շտաբի փոխգնդապետ Շյուքրի բեյը, թարգման էսադ բեյը և Ալի բեյը: Պատվիրակությունը «էրթողրուլ» զբոսանավով Կ. Պոլսից Ղրիմ մեկնեց ապրիլի 26-ին՝ այնտեղ հանգստացող ռուսաց թագավոր-կայսր Նիկոլայ II-ին հանդիպելու համար: Լիվադիայում նա մնալու էր երկու օր:

Ապրիլի 27-ին «էրթողրուլ» նավը խարխալ գցեց Յալթայի նավամատուցում: Ռուսական իշխանությունների ներկայացուցիչները պատվո պահակախմբով դիմավորեցին թուրքական պատվիրակությունը, որը տեղավորվեց Յալթայի հյուրանոցում: Կայսրի անունից պատվիրակությանը ողջունելու համար Լիվադիայից Յալթա եկավ Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով-Դաչկովը: Թուրքիայի պատվիրակության Ղրիմ այցի առթիվ այնտեղ եկան նաև Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Սազոնովը և Կ. Պոլսում ռուսաց դեսպան Միխայիլ Գիրսը:

Թուրքական մամուլն առանձին նշանակություն էր տալիս այդ այցին: Թերթերը նկատում էին, որ այս պատվիրակությունը նման չէ նախկիններին, սա ավելի պատկառելի է, քանի որ գլխավորում է Թալեաթ բեյը:

Բալկանյան պատերազմից առաջացած փոփոխությունները և՛ Թուրքիային, և՛ Ռուսաստանին ստիպում էին իրենց արտաքին քաղաքականությունը հարմարեցնել նոր իրողություններին: Ակներև էր, որ նախկին քաղաքականությունը որքան վնասակար էր Թուրքիային, նույնքան անօգուտ՝ Ռուսաստանին: Երկու երկրներն ունեին ընդհանուր շահեր, որոնք կարող էին հաստատուն հող ստեղծել միջպետական հարաբերությունների ապագա զարգացման համար:

Ապրիլի 28-ի առավոտյան Թալեաթ բեյին առաջնորդեցին Լիվադիայի մեծ պալատի այն սենյակը, ուր գտնվում էր թագավոր-կայսրը: Թալեաթի հետ ունկնդրությունը վերջանալուց հետո Նիկոլայ II-ը նույն պալատում հանդիսավոր ընդունեց պատվիրակությունը:

Այնուհետև տեղի ունեցավ ճաշկերույթ: Կայսրի աջ կողմում նստել էր Թալեաթ բեյը, ձախ կողմում՝ Իզզեթ փաշան: Սեղանի շուրջ նստած էին թուրքական պատվիրակության մյուս անդամները, Ռուսաստանի արտգործնախարար հոֆմեյստեր Սազոնո-

վր, Կ. Պոլսում պաշտոնավարող ոուսաց դեսպան Հոֆմեյստեր Գիրսը, Բաղդադի գեներալ-հյուպատոսը, գեն. Դումբաձեն, Տավրիկյան (Ղրիմի) նահանգապետը և այլ պաշտոնական անձինք: Ճաշի ժամանակ կայսրը բաժակ բարձրացրեց սուլթան Մահմեդ V-ի երջանկության և օսմանյան պետության բարգաձայնման համար¹:

Ի պատասխան թուրք պատվիրակների շնորհավորանքների՝ Նիկոլայ II կայսրն ասաց, թե ուրախ է հյուրընկալելու թուրք արտակարգ դեսպանությունը: Այնուհետև շեշտեց, թե ինքն ինչպես դեպի սուլթանը, նույնպես և թուրք ժողովուրդը տածում է բարեկամական զգացումներ ու անկեղծորեն ցանկանում նրանց հաջողությունն ու զարգացումը: Կայսրն ավելացրեց, թե թուրքական կառավարությունից ինքը որևէ ակնկալիք չունի, բացի մեկ բանից, այն է՝ որ նա իր սեփական տան մեջ տեր լինի և իր պետության մեջ իր իշխանությունն ուրիշների ձեռքը չտա. դա էլ ավելի գերազանց կնպաստի Ռուսաստանի և օսմանյան պետության միջև բարիդրացիական հարաբերություններին²:

Կայսրի այս ակնարկը վերաբերում էր նրան, թե Ռուսաստանում ինչպիսի մեծ դժգոհություն էին առաջ բերել թուրքական կառավարության կողմից Լիման ֆոն Սանդերսի գլխավորական պատվիրակությանը տված արտակարգ արտոնությունները:

Սազոնովը վկայում է, որ թուրքերի հետ զրույց վարելը դյուրին չէր: Թալեաթն ու Իզզեթը մեծ ուշադրությամբ լսում էին ոուսական կողմի ասածները, բայց որևէ կարծիք չէին հայտնում՝ պատճառաբանելով, թե իրենք բոլորովին անտեղյակ են արտաքին քաղաքական խնդիրներից, որոնք, իբր, միանձնյա վարում էր վարչապետ Սայիդ Հալիմը: Մինչդեռ վերջինս որևէ դեր չունեի կառավարության մեջ, ուր ամեն ինչ որոշում էին Թալեաթը, Էնվերը և Ջեմալը³:

Այնուհետև խոսակցությունը դառնում է Հայկական հարցին:

¹ Տե՛ս «Մշակ», № 92, 1 մայիսի 1914 թ.:

² Տե՛ս Ս. Դ. Տազոնով, Воспоминания, Париж, 1927, էջ 160:

³ Տե՛ս նույն տեղում:

Մ. Գիրսը շատ լավ էր ճանաչում Թալեաթին և հենց սկզբից արտգործնախարարին զգուշացրեց, որ նրա ոչ մի խոսքին չպետք է հավատ ընծայել: Վերհիշելով այդ պահը՝ Սազոնովն իր հուշերում գրում էր, որ չփվելով Թալեաթի հետ՝ համոզվել էր, որ նրան «առանց չափազանցության կարելի է անվանել համաշխարհային պատմության գերագույն ոճրագործներից մեկը...»¹, որի բարի կամ չար կամքից էր կախված հայկական բարենորոգումների բախտը:

Սազոնովը թուրքերին ասում է, որ իր կառավարությունը մեծ կարևորություն է տալիս Հայաստանի բարենորոգումներին, որոնք կարող են թեթևացնել Ռուսաստանին սահմանակից նահանգների բազմաքանակ հայ բնակչության դրությունը: Այս հարցին անդրադառնալիս Թալեաթը շատ զուսպ էր և զգույշ: Եվ դա հասկանալի էր, քանզի հայկական նահանգների բարենորոգումների ձեռնարկը պատկանում էր Պետերբուրգին, մի բան, որ չափազանց անխորժ էր Բ. Դոան համար: Նույնիսկ այստեղ՝ Ղրիմում, Թալեաթը չէր թաքցնում իր հակակրանքը հայերի հանդեպ²:

Համոզվելով, որ նույնիսկ իրենց քաղաքավարական այցի ընթացքում ոուսական կողմը մտահոգ է թուրքիայի հայերի ճակատագրով, Թալեաթի և պատվիրակության մյուս անդամների մեջ ավելի խորացավ հայերի՝ որպես ոուսների բազկակիցների նկատմամբ ատելությունը: Զուր չէ, որ անդրադառնալով թուրքերի Ղրիմ այցելության արդյունքներին՝ Երևանում հրատարակվող «Նոսք» թերթը գրում էր. «Ուշագրա՞ւ չէ միթե, որ Պոլիսը փոխեց իր վերաբերմունքը դեպի հայկական այսպես կոչված բարենորոգումները Ղրիմ այցելությունից հետո»³:

Թալեաթ փաշայի գլխավորած թուրքական պատվիրակության այցը Լիվադիա, նրա հանդիպումները կայսրի և բարձրաստիճան պաշտոնյաների հետ բացառիկ երևույթ էին ոուս-թուրք հարաբերությունների վերջին տարիների պատմության մեջ:

¹ Ս. Դ. Տազոնով, Воспоминания, стр. 158-159:

² Նույն տեղում, էջ 162-163:

³ «Նոսք» (Երևան), № 20, 17 մայիսի 1914 թ.:

Այցի նպատակն էր՝ չոչափել Ռուսաստանի հետ հնարավոր դաշինք ստեղծելու ուսական կողմի տրամադրվածությունը: Ընդունելությունների ժամանակ ծավալված գրույցների ընթացքում երկու երկրների միջև ջերմ բարեկամություն հաստատելու ցանկությունների պակաս չէր զգացվում:

Համաշխարհային պատերազմի նախօրյակին միջազգային արենայում ստեղծվել էր ուժերի այնպիսի դասավորություն, որ Թուրքիան կարող էր դառնալ Ռուսաստանի դաշնակիցը:

Բանը, սակայն, այն էր, որ երիտթուրքական կոմիտեում և կառավարությունում միասնական կարծիք չկար պատմական այդ վճռորոշ պահին դեպի այս կամ այն մեծ տերությունը երկրի կողմնորոշման մասին: Երիտթուրք կառավարության անդամների տեսակետները երկփեղկված էին. նրանց մի մասը Թալեաթի հետ հակված էր դեպի Ռուսաստանը, իսկ մյուս մասը՝ Գերմանիայում զինվորական կրթություն ստացած և գերմանական պետական կարգերը երկրպագող էնվերի գլխավորությունը Թուրքիայի տեղը տեսնում էր Գերմանիայի գլխավորած եռյակ դաշինքի մեջ:

Թալեաթ բեյի դեկավարած պատվիրակության այցը Լիվադիա կոչված էր նպաստելու Բ. Դոան անդամների և Թուրք հասարակական կարծիքի կողմնորոշմանը դեպի Ռուսաստան:

Այդ տեսակետից բնորոշ էր, որ Ղրիմում գտնվելու վերջին օրվա հանդիպումներից մեկի ժամանակ Թալեաթը խորամանկաբար Սազոնովի ականջին չչնջացել էր. «Ես ցանկանում եմ ձեզ լուրջ առաջարկություն անել. արդյոք ուսական կառավարությունը չի՞ ուզում դաշինք կնքել Թուրքիայի հետ»: Անակնկալի եկած և զարմացած Սազոնովը Թալեաթին հարցնում է, թե ինչո՞ւ նա նման կարևորագույն հարցը առաջ է քաշում հենց հիմա՝ պատվիրակության մեկնումի վերջին պահին: Թալեաթը պատասխանում է, որ, իրհարկե, արդեն ուշ է այդ հարցը քննարկման դնել, և որ ինքը պարզապես ուզում էր իմանալ ուսական կողմի կարծիքը:

Բ. Դոան երկու թևերի միջև եղած կարծիքների տարբերությունը, սակայն, այնքան մեծ չէր, որ առաջ բերեր խոր հակասություններ և հանգեցներ կառավարական ճգնաժամի: Երիտ-

թուրք կաբինետը միասնական ու միակամ էր երկրի ներքին ու արտաքին քաղաքականությունը վերաբերող բոլոր հիմնական հարցերում: Կառավարությունը համակամ ու վճռական էր նաև հայկական բարենորոգումների ծրագիրը տապալելու խնդրում:

Պատահական չէ, որ դեպի մեծ տերությունները Թուրքիայի կողմնորոշման հարցում, ի վերջո, հաղթանակեց էնվերի գլխավորած պրոգերմանական թևը: Նրա գլխավորած ոճրախումբը անցավ ավստրոգերմանական իմպերիալիզմի ազդեցություն տակ¹:

Ապրիլի 29-ին Սազոնովը “Россия” հյուրանոցում պաշտոնական նախաճաշ տվեց ի պատիվ Թուրք պատվիրակության, որին ներկա էին Գիրսը, Թուրքաց զբոսանավի սպաները, տեղական վարչության անձինք²:

Նույն օրը ուսաց բարձրագույն պալատի կողմից պատվիրակությանը ընդունելություն տրվեց կայսերական «Շտանդարտ» զբոսանավի վրա: Հրավիրվածներին ողջունեց Նիկոլայ II-ի ֆլագ ադյուտանտ գեներալ-ադմիրալ Նիկոլայ:

Ապրիլի 30-ին Թուրքական զբոսանավը բարձրացրեց խարխալը և ուղղություն վերցրեց դեպի Կ. Պոլիս:

Բալկանյան պատերազմների ավարտից հետո Օսմանյան կայսրության եվրոպական մասում խաղաղություն էր, ճնշված էր քրդական ապստամբությունը, արևելյան նահանգներում հարաբերական հանգիստ էր, վերջապես տեսանելի էր ուս-թուրքական հարաբերությունների կարգավորումը: Այս բարենպաստ դրությունը հնարավորություն էր ստեղծել Հայաստանի բարենորոգումների համաձայնագրի պայմանավորվածությունները կյանքի կոչելու համար:

¹ Տե՛ս *А. Мельник, Турция, ее историческое прошлое и настоящее, Москва-Ленинград, 1929, էջ 38:*

² Տե՛ս «Մշակ», № 92, 1 մայիսի 1914 թ.:

ԱՊԱԳԱՅԻ ՎԱՌ ՀՈՒՑՍԵՐՈՎ ԼԻ

Եզիպտոս վերադառնալուց հետո Պողոս Նուբարը փետրվարի երկրորդ կեսին և դրան հաջորդած երեք ամիսներին զբաղված էր սեփական գործերով, որոնք մեծապես տուժել էին չուրջ 20 ամիս տևած դիվանագիտական լարված աշխատանքի ընթացքում: Դա էլ էր նշանակում, իհարկե, որ նա հեռացել էր ազգային գործերից: Իր հաջողված առաքելությունն նշանակություն խոր ըմբռնումով նա հիմա նոր ծրագրեր էր մշակում Թուրքիայի հայկական նահանգներում իր անելիքների շուրջ:

Մեծ տերությունների համատեղ գործակցության շնորհիվ արդեն ընդունվել էր հայերի երազած բարենորոգումների ծրագիրը: Թվում էր, թե դրվել է սկիզբը նրանց նոր կյանքի, որը նաև ենթադրում էր արմատական հեղաշրջման սկիզբ Թուրքահայաստանի տնտեսություն, լուսավորության, մշակույթի զարգացման համար: Ուստի ժողովրդի թե ոռոսահայ և թե Թուրքահայ մասերում կազմվում էին միջոցառումների զանազան ծրագրեր:

Մայր աթոռի տպագիր օրգանը՝ «Արարատ» հանդեսը, գրում էր.

«Հասել է պատմական կարևոր ժամը, երբ ոռոսահայն և տաճկահայը միացած պէտք է աշխատեն Տաճկահայաստանում զարկ տալու ազգային կուլտուրային, բացել ամէն տեղ դպրոցներ և այլ լուսոյ տաճարներ, դիմել միջոցների կանոնաւորելու հողային հարցը և նպաստելու ամենամեծ չափով գիւղատնտեսութեան զարգացման, նոյնպէս և վաճառականութեան ու արդիւնաբերութեան ծաղկման: Մեծ ջանք պէտք է գործ դնել գաղթականութեան առաջն առնել և ընդհակառակն պէտք է դիմել միջոցների և հետու երկիրներ գաղթած տաճկահայերին բերել Երկիր և հրաւիրել ամէնքին ձեռք ձեռքի տուած գործել ու նպաստել Երկրի տնտեսութեան ու լուսաւորութեան սուրբ գործին»¹: Ապա. «Հայերս ամէն կերպ պէտք է ցոյց տանք ոչ միայն Ռուսաստանին, այլ և ամբողջ Եւրոպային, որ մենք ներկայումս

քաղաքականապէս հասունացած մի ազգ ենք, ազգ, որ ընդունակ է ապրել իւր ինքնուրոյն կեանքով, ընդունակ է զարգացնել իւր կուլտուրան»¹:

Թուրքահայությունն ըմբռնելու էր երջանիկ պահեր: «Ամէնքս ձեռք-ձեռքի տանք ինչ կուսակցութեան ալ պատկանինք,- կոչ էր անում Բոստոնում հրատարակվող «Ազգ» թերթը,- ... Ժամանակի մը համար մենք մոռանանք մեր յուրաքանչիւրին առանձնայատուկ յարանուանութիւնները Ս. Դ. Հնչակեան, Դաշնակցական, թե Սահմ. ուսմկավար: ... Թող մեզմէ իւրաքանչիւրը բաժին մը հանե իր խելքէն, իր մասնագիտութենէն՝ մեր դրախտավայր հայրենիքը աւերակներէն հանելու: ... Քաղաքակիրթ աշխարհին առջև պիտի կրնանք պարծիլ թէ արդարև մենք ալ Ազգ ըլլալու արժանի ցեղ մըն ենք... Այս ցեղը որուն ո՛չ խելքը եւ ո՛չ կորովը կը պակսի, տասը տարուան ընթացքին մէջ ինքզինքը պիտի գտնէ եւ քաղաքական Ազգի մը պէս զօրաւոր պիտի զգայ ինքզինքը»²:

1914 թ. փետրվարի 17-ին Թուրքահայոց պատրիարք Զավեն սրբազանը եկեղեցական բոլոր թեմերի առաջնորդներին ուղղված շրջաբերականով առաջարկեց Թուրքահայաստանի բոլոր վիլայեթներում անցկացնել հայ բնակչության մարդահամար, ցուցակագրել այն բոլոր հայերին, որոնք կարող կլինեն վարելու վարժական, դատական ու ոստիկանական պաշտոններ:

Ազգային ժողովում արտասանած ճառում Զավեն պատրիարքը համոզմունք էր հայտնել, որ հայ ժողովրդի խաղաղ կյանքի և առաջընթացի համար արդեն բացված են նոր հորիզոններ, և նա պարտավոր է լիուլի օգտագործել ստեղծված հնարավորությունները³:

Հայոց վեհափառ Հայրապետը, իր 1914 թ. փետրվարի 20-ի կոնդակով հայկական հարցի առաջխաղացմանը մեծ նպաստ բերելու համար օրհնելով Պողոս Փաշային, միաժամանակ ցանկություն էր հայտնել, որ նա այսուհետև նույնպես մնա իր ներ-

¹ «Արարատ», № 4, ապրիլ, 1914, էջ 329:

¹ «Արարատ», № 4, ապրիլ, 1914, էջ 329:

² «Ազգ», № 36, 26 փետրվարի 1914 թ.:

³ «Բիւզանդիոն», 10 մայիսի, 1914 թ.:

կայացուցիչը այս անգամ հայկական նահանգներում՝ «ազգօգուտ և զմարդասէր գործունէութիւն շարունակել վասն կատարեալ յաջողութեան և իրագործման բարենորոգութեանց հայաբնակ գաւառաց Տաճկաստանի»¹: Պողոս Նուբար փաշան մեծ պատրաստակամութեամբ հանձն է առնում կատարելու Կաթողիկոսի կամքը և առաջին հերթին Հայաստանի ժողովրդի կարիքներին է ծառայեցնում Կահիրե քաղաքում 1906 թ. իր կողմից հիմնադրված Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) հնարավորութունները:

Պողոս Նուբարը կազմում է մի մեծ ծրագիր, որն ընդգրկում էր ազգի համար կենսական երեք հիմնական խնդիրներ՝ տնտեսական ձեռնարկների իրականացում, դպրոցական կրթութեան ընդլայնում և արտագաղթի դեմն առնելու միջոցների ստեղծում:

Երեք մասից բաղկացած հսկայական այդ ծրագիրը կյանքի կոչելու համար անհրաժեշտ էին դրամական մեծ միջոցներ, որոնց մի մասը միայն կարող էր տրամադրել ՀԲԸ Միութեանը:

Տարաբախտ հայրենակիցներին տնտեսական ողբալի կացութիւնից դուրս բերելուն խոչընդոտում էին երկրում ապահով ռեժիմի և տարրական արդարութեան բացակայութեանը: Պողոս Նուբարը գտնում էր, որ առաջին հերթին հայկական նահանգներում պետք է ստեղծել կոոպերատիվներ (*coopératives*), սինդիկատներ (*syndicats*) և հողագործական վարկերի դրամատներ (*caisses de crédit agricoles*): ՀԲԸ Միութեանը, ասում էր նա, հատկապես սկզբնական շրջանում պետք է կարողանա հայ գյուղացիներին օգնել՝ անվճար տրամադրելով հող, եզ, սերմացու և երկրագործական գործիքներ²: Գյուղատնտեսութեան արագ վերելքի համար հսկայական դեր կարող էին խաղալ երկրագործական բանկերը: Բայց երկրում օրենքներ չկային այդպիսիք բացելու թույլտվութեան մասին*:

¹ «Արարատ», № 7, Հուլիս, 1914, էջ 507:

² ՀԱԱ, ֆ. 297, ց. 1, գ. 216, թթ. 5-10:

* Թուրքիայում գործում էր միայն մեկ երկրագործական պետական բանկ, որն ավելի շատ քրիստոնյաներին հողագրկելու գործիք էր:

Հայաստանի տնտեսական առաջադիմութեանը մեծագույն խոչընդոտ էր հայրենաթողութեանը: Հայ գյուղացիների գաղթը գոնե մեղմելու համար Պ. Նուբարը մտածում էր նրանցից բռնագրավված, գրավի տակ դրված ու վաճառքի հանված հողերը հետ գնել և վճարման դյուրութեւններով վաճառել նախկին տերերին:

Ամենայն հայոց Գևորգ V կաթողիկոսը ապրիլի 26-ի կոնդակով Կ. Պոլսի Զավեն հայոց պատրիարքին պարտավորեցնում էր ձեռք առնել հնարավոր բոլոր միջոցները՝ դադարեցնելու շարունակվող աղետաբեր արտագաղթը Հայաստանից, միաժամանակ եռանդուն աշխատանք սկսել լայնածավալ ներգաղթ կազմակերպելու համար²:

Թուրքահայաստանից արտագաղթը կանխելու խնդրով մեծապես չահագրգռված էր ուսական կողմը: «Հայերը,- ասում էր դեսպան Գիրսը,- պետք է եռանդուն պայքարեն արտագաղթի դեմ և միջոցներ հայթայթեն մեր օգնութեամբ ներգաղթ կազմակերպելու համար»³:

Նուբարն առաջին հրատապ խնդիրը համարում էր հայկական նահանգներում գյուղատնտեսութեան վերելքի ապահովումը: «Հողագործութիւնը նոր թոխք մը պիտի առնէ,- հայտարարում էր նա,- եթե գիւղացիները, մասաւանդ սկիզբները, անհրաժեշտ խրախուսանքները գտնեն»:

Երկրորդ կարևորագույն անելիքը, ասում էր Նուբարը, Միութեան գործունեութեան ընդարձակումն է դպրոցական ձեռնարկներում, որի նպատակը պետք է լիներ ինչպես հայկական նահանգներում եղած դպրոցների ընդլայնումն ու ուսման որակի բարձրացումը, այնպես էլ նորանոր ուսումնական հաստատութեանների ստեղծումը՝ առավելութեւնը տալով գյուղական վայրերին:

Իբրև գործելու ուղղութեւններ Նուբարն այս երեք օրինակներն էր հիշատակում, բայց կասկած չկա, նշում էր նա, որ «տա-

¹ «Արարատ», № 7, Հուլիս, 1914, էջ 508:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 70, թ. 5, 7:

³ Նույն տեղում, գ. 65, թ. 1:

կախին ուրիշ ձեռնարկներ ալ կան, որոնց հանդեպ Միութիւնը նոյնքան օգտակարութեամբ պիտի կրնայ գործել»¹: Նման ձեռնարկների անհրաժեշտութիւնը բացահայտելու համար Պ. Նուբարն առաջարկում էր, որ Միութիւնը հայկական նահանգներում ունենա իր մշտական ներկայացուցիչները, որոնք տեղերում կարողանան տեսնել հայ բնակչութեան կարիքները և դրանց մասին տեղյակ պահեն Կենտրոնական վարչութեանը՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու համար²:

Մայիսի 10-ին Կահիրե քաղաքում մեծ հանդիսութիւններով տոնվեց ՀԲԸ Միութեան 8-րդ տարեդարձը:

Ելույթով հանդես գալով տարեդարձի հանդիսավոր նիստում՝ Պողոս Նուբարը կրկին անդրադարձավ հայկական նահանգների հայ զանգվածներին աղքատութեան ճիրաններից դուրս բերելու և նրանց շրջանում կրթութիւն ու լուսավորութիւն լայնորեն տարածելու խնդիրներին:

Բայց որքան էլ Բարեգործականի ցանկութիւնները մեծ լինեին, նրա հնարավորութիւնները չէին ների Թուրքահայաստանում տնտեսական լայնածավալ գործունեութիւն իրականացնելու համար: Ուստի նա ասում էր, թե «անցեալին օրինակը մեզի բաւական ապացուցած է որ մեր բարեկամները երբէք չեն զլացած ամէն անգամ մեր ասիաբնակ հայրենակիցներուն օգնութեան ձեռք կարկառելու...»³: Տարակույս չկա, համոզված էր նա, որ հետայսու նույնպէս մեծ եռանդով ուստահայ եղբայրներն իրենց օգնութիւնը կհասցնեն թուրքահայ նահանգներին:

Եվ մարդկանց հայացքը դարձյալ ուղղվեց Ռուսաստանի և ուստահայոց կողմը: Պ. Նուբարը Ամենայն հայոց կաթողիկոսին խնդրում է ուստահայոց դրամական և այլ կարգի աջակցութիւն: «Մեր բոլոր ջանքերը պէտք է ձգտին այդ իղեալն իրականացնելու, - գրում էր նա Գևորգ V-ին, - այս նպատակին համար ոչ ոք պիտի չզլանա մեզի իր աջակցութիւնը: Ատոր համար կը բավէ

¹ «Արարատ», № 7, Հուլիս, 1914, էջ 511:

² Տե՛ս նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 517:

որ Ձեր Վեհափառութիւնը բարեհաճի բարձրացնել իր ձայնը ի նպաստ մեր ազգօգուտ ծրագիրներուն. այդ հայրական ձայնը պիտի շարժէ բոլոր սիրտերը և ոչ ոք պիտի վարանի այլևս մեզի ընծայելու իր օգնութիւնը»¹:

Ապրիլի 26-ին հրատարակած կոնդակով Կաթողիկոսը ուստահայ հանրութեանը կրկին կոչ էր անում բոլոր միջոցները ձեռնարկել և լայնամասշտաբ օգնութիւն ցույց տալ թուրքահայ ժողովրդին, նպաստել հայաստանի տնտեսութեան արագ տեմպերով զարգացմանը:

Ռուսաստանից և ուստահայերից Կաթողիկոսի սպասումները հիմնադուրկ չէին: Ռուս պաշտոնական անձինք, հատկապէս հայկական բարենորոգումների խնդրում մեծ դերակատարութիւն ունեցած ուստի ղեկավարները հունվարի 26-ի համաձայնագիրը ստորագրելուց հետո հաճախ էին անդրադառնում հայաստանի զարգացման հեռանկարներին և այն դերին, որ այդ գործում կարող էին խաղալ Ռուսաստանը և հատկապէս ուստական կապիտալը:

Հայ նշանավոր գործիչներից մեկի հետ ունեցած հանդիպման ժամանակ դեսպան Գիրսն ասել էր. «Հայերն այժմ պետք է ապացուցեն ոչ միայն Ռուսաստանին, այլ նաև ամբողջ Եվրոպային, որ իրենք ներկայացնում են քաղաքականապէս հասուն մի ազգ՝ մի ազգ, որն ի վիճակի է ապրել ինքնուրույն կերպով, զարգացնել իր մշակույթը, որն ի վիճակի է տարածել եվրոպական մշակույթը Ասիայում: ... Թուրքահայաստանի ճակատագիրը կախված է ոչ միայն Ռուսաստանից, այլ նույնքան նաև իրենցից՝ հայերից, հատկապէս՝ ուստահայերից, ովքեր ունեն ավելի շատ նյութական միջոցներ և շոշափելի մտավորականութիւն: Ռուսահայերն ու թուրքահայերը պետք է միահամուռ ջանքերով առաջ մղեն տնտեսութիւնը, ձեռնարկեն իրենցից կախված բոլոր միջոցները հայաստանում հատկապէս գյուղատնտեսական գործը բարձրացնելու համար, պետք է կարգավորեն հողային հարցը ու նպաստեն առևտրի ու արդյունաբե-

¹ «Արարատ», № 7, Հուլիս, 1914, էջ 511:

րուծյան զարգացմանը ... Պետք է առաջ քաշվեն հայկական հայրենասիրական գործին ընդունակ հայեր, որոնք ունակ են և՛ զոհաբերել և՛ աշխատել հանուն հայասիրական նպատակների:

... Այժմ նշանակալի պահ է հայուծյան պատմության մեջ»¹:

Անդրադառնալով Թուրքահայաստանի տնտեսական վերելքի գործում Ռուսաստանի խաղալիք դերին՝ Գիրսը շեշտել էր. «Առհասարակ Ռուսաստանն անշեղորեն և հետևողականորեն բարեփոխումներ է անցկացնելու Հայաստանում, բայց հայերը չպետք է առաջին քայլից հետո պահանջեն, որ անմիջապես արվի երկրորդը»:

Անսալով Պողոս Նուբարի ձայնին և քաջ գիտակցելով, որ առանց Ռուսաստանի օգնության անչափ դժվար է լինելու հնարավորինս կարճ ժամանակաշրջանում բարեշրջել Հայաստանի տնտեսական կյանքը, Գևորգ V Ամենայն հայոց կաթողիկոսը 1914 թ. ապրիլի 16-ին հետևյալ դիմումն է հղում Սերգեյ Սազոնովին. «Տաճկահայաստանում հայոց հարցի զարգացման պատմական ընթացքը, ինչպես հայտնի է Ձերդ Բարձր Գերազանցութեան, ժողովրդի հարիւր հազարաւոր թանկագին կեանքերի գնով սովորեցրել է հայ ժողովրդին գնահատել օսմանեան կառավարութեան բազմաթիւ խոստումների նշանակութիւնը՝ ստեղծելու մարդկային գոյութեան տանելի պայմաններ այն իրական երաշխիքներով, որոնք կարող կ'լինեն պարտաւորելու նրան իրական կատարման մինչև այժմ յայտարարուած բարենորոգումների: Զարգացման նոյն պատմական ընթացքն է, որ նախասահմանում է այդ երաշխիքները հայ ժողովրդի համար, որ աղօթքով իւր հայացքն ուղղում է դէպի ռուս մեծ պետութիւնը, Արևելքում քրիստոնեաների վաղեմի հովանաւորողին:

Այժմ, երբ Ձերդ Բարձր Գերազանցութեան իմաստուն ղեկավարութեան ներքոյ ռուսաց քաղաքականութիւնը յանձն է առել գործնական նախաձեռնութեան Տաճկահայաստանում բարենորոգութիւններ մշակելու և իրականացնելու մէջ, իմ հոտը, ես համոզուած եմ, կարող է հանգիստ սկսել իւր հոգեկան-կուլտուրա-

կան ոյժերի վերականգնումը, որոնք քայքայուել էին դարաւոր հալածանքներով և հաւատով նայել իւր ապագային, չվախենալով սովորական արգելքներից, որոնք կարող են յարուցանել օսմանեան կառուարութեան կողմից Ձերդ Բարձր Գերազանցութեան յաջորդ ձեռնարկութիւնների առաջ, մշակուած բարենորոգութեանց հիմքերի ամրապնդման և Տաճկահայաստանի կեանքում անշեղ իրականացման գործում:

Հենց այս խոր հաւատը դէպի Ձերդ Բարձր Գերազանցութեան բարեացակամութեանը, որ ցոյց է տուել դէպի հայերը և նրանց օրինական ձգտումները բարեհաճ վերաբերմունքի այնքան անգնահատելի ապացոյցներ է տալիս ինձ և իմ ժողովուրդին յոյս նոյն տեսակ զորեղ պաշտպանութեան Ձերդ Բարձր Գերազանցութեան կողմից նաև առաջիկայում գեներալ-ինսպեկտորների (ընդհանուր վերատեսուչների) հրահանգը մշակելիս, որոնք Ձերդ Բարձր Գերազանցութեան ծրագրով պետք է իրագործեն կեանքում սոյն տարուայ յունւարի 26-ի Բարենորոգութեանց սկզբունքները:

Վերառաքելով առ ամենաբարձրեալն ջերմ աղօթքներ Ձերդ Բարձր Գերազանցութեան առողջութեան և երկարակեցության համար և օրհնելով Ձեր աշխատանքներն ի բարօրութիւն մեծ Ռուսաստանի, պատիւ ունեմ մնալու Ձերդ Բարձր Գերազանցութեան երախտաւոր»¹:

Ռուսաց պետության կողմից ֆինանսատնտեսական սպասվելիք աջակցութիւնը համակարգելու և ռուսահայոց նվիրատվութիւնները գլուխ բերելու համար Նուբար փաշան պատվիրակ է կարգում դոկտ. Ն. Տաղավարյանին, որը պատրաստվում է անմիջապես ուղևորվել Կովկաս:

ՀԲԸ Միության ատենապետ Պողոս Նուբարը ապրիլի 30-ին հանդես եկավ հայտարարությամբ Միության առաջիկա ծրագրերի մասին²: Նա համոզմունք էր հայտնում, թե ստեղծված նոր կացության պայմաններում հայերի խոռվահույզ և խղճալի վի-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 65, թ. 1 և շրջ.:

² Նույն տեղում:

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1914, д. 3474, л. 17: (Սույն փաստաթղթին կցված է դրա հայերեն տարբերակը):

² Տե՛ս «Արարատ», № 7, հուլիս, 1914, էջ 511-514:

ճակին «պիտի յաջորդե ապահովութեան և ներքին հանդարտութեան թուական մը», թե գեղծումներն ու անարդարությունները վերջ պիտի գտնեն և «Հայերը պիտի կրնան խաղաղութեամբ աշխատիլ և իրենց աշխատանքին պտուղն վայելել... Մեր հայրենակիցները բոլոր օսմանցիներուն հետ համերաշխաբար պիտի աշխատին բնահարուստութեանց զարգացումին և երկրին բարգաւաճումին...»¹:

Այս նոր պայմաններում, հայտարարում էր Նուբար փաշան, ՀԲԸ Միությունը պարտավոր է բարեփոխել իր գործունեությունն եղանակները՝ առաջադրված նոր խնդիրներին զուգընթաց:

Նուբարը հույս էր հայտնում, որ ոռոսական կառավարությունն աջակից է լինելու ՀԲԸ Միության նախաձեռնություններին, մանավանդ որ այդ օրերին դեսպան Գիրսը կարծիք էր հայտնել, թե Թուրքահայաստանի հայ բնակչության տնտեսական և մշակութային մակարդակը բարձրացնելու համար հրամայական անհրաժեշտություն է լուսավորական հիմնարկների լայն ցանցի ստեղծումը²:

Ս. Էջմիածնում, Թիֆլիսում, Մոսկվայում և այլուր ոռոսահայությունը լարված ուշադրությամբ հետևում էր իրադարձությունների զարգացմանը և պատրաստվում էր իր Թուրքահայ եղբայրներին ցույց տալ լայնածավալ աջակցություն:

Ապրիլի 26-ի կոնդակով Ամենայն հայոց Գևորգ V կաթողիկոսը ոռոսահայ հանրությունը կոչ էր անում բոլոր միջոցները ձեռնարկել՝ նպաստելու Հայաստանի տնտեսության ու մշակույթի արագ տեմպերով զարգացմանը:

Մայիսի 9-ին Ազգային ժողովում արտասանած ճառում Զավեն պատրիարքը, շեշտելով, որ հայ ժողովրդի խաղաղ կյանքի և առաջընթացի համար բացված են նոր հորիզոնները³, միաժամանակ համոզմունք էր հայտնում, որ ոռոսահայությունը և ոռոսական պետությունը նրան մենակ չեն թողնելու իր հոգսերի մեջ:

¹ Տե՛ս «Արարատ», № 7, հուլիս, 1914, էջ 512:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 65, թ. 1-ի շրջ.:

³ Տե՛ս «Բիւզանդիոն», 10 մայիսի 1914 թ.:

Արձագանքելով կաթողիկոսի կոնդակին և պատրիարքի շրջաբերականին՝ Կովկասի և գաղութների հայության հասարակական կազմակերպություններն ու գործիչները, հայկական մամուլի օրգանները աշխուժորեն քննարկում էին Թուրքահայաստանի ժողովրդի տնտեսական-մշակութային և բարոյական-մտավոր վերածնության համար միջոցներ ձեռնարկելու հարցը՝ գտնելով, որ այն պետք է դառնա հայ մտավորական դասի և դեկավար շրջանների ամենօրյա հոգածության առարկան: Հայկական շրջանները առաջ էին քաշում միջոցառումների կոնկրետ ծրագրեր՝ Արևմտահայաստանում կիրառելու նպատակով:

Հայկական բարենորոգումների ծրագրի գործադրմամբ Հայաստանի ժողովուրդը տեսականորեն պիտի որ վայելեր կյանքի, ինչքի և պատվի ապահովություն: Բայց այդքանը բավական չէր: Ժողովրդին իր հողի վրա պահելու համար անհրաժեշտ էր տնտեսական զարգացում:

Քանի որ Հայաստանում դեռ չկային բազմաթիվ աշխատատեղերով ժամանակակից գործարաններ հիմնելու կարելություններ, ուստի նախատեսվում էր գյուղերում հիմնել առայժմ տեղական հումքի՝ կաշվի ու բրդի մշակման, պանրի պատրաստման, գինու, օղու, չրի համեստ արտադրություններ, մի բան, որ դրամական մեծ ծախսեր չէր պահանջում:

Կովկասահայ թերթերը գրում էին, որ Նուբար փաշան՝ որպես նշանավոր ֆինանսիստ ու տնտեսագետ, առաջին հերթին մտածում է Թուրքահայաստանի տնտեսական և հողային խնդիրները լուծելու մասին, ապա ոռոսահայ կապիտալիստների և ֆինանսիստների վրա պարտականություն է ընկնում աջակցել նրան՝ մտահղացած ձեռնարկներն իրականացնելու համար:

Հունվարի 26-ի համաձայնագիրը գործունեություն լայն ասպարեզ էր բացում արևելահայ բուրժուազիայի համար, որի մոտ ծնվեցին բազմազան և բազմաբնույթ ծրագրեր, որոնց թվում առաջինը Թուրքահայաստանում մի խոշոր բանկ հիմնելու ծրագիրն էր: «Արարատ» հանդեսը գրում էր. «Որքան խելացի միտք և ճիշտ չափազանց կարևոր ձեռնարկություն: Ոչ մի կասկած չէ կարող լինել՝ որ կանոնաւոր հիմունքների վրայ ստեղծվելիք հայկական խոշոր դրամատունը կը լինի այն մեծ

առանցքը՝ որի շուրջը ամենամեծ յաջողութեամբ կը զարգանայ և կ'ընթանայ Տաճկա-Հայաստանի և՛ տնտեսութիւնը, և՛ լուսաւորութիւնը, և՛ քաղաքակրթութիւնը»¹: Համոզմունք էր Հայտնվում, որ թուրքահայ և ուսահայ դրամատերերը հանդես են գալու բանկային գործի բազմաթիվ նախաձեռնություններով, ժամանակի ընթացքում բացելու են զանազան գործառույթներով բանկեր:

Թուրքահայաստանում, օրինակ՝ ուսական ազրարային (երկրագործական, գյուղացիական, հողային) բանկի բացումը շատ կարևոր էր համարում արտգործնախարար Ս. Սազոնովը, բայց իր մոտ այդ հարցով եկած հայ գործչին նա ասել էր, թե արժեթղթեր թողարկող կամ հողային բանկ հիմնելու վերաբերյալ ինքն առայժմ որոշակի բան ասել չի կարող, քանի որ «դա հատուկ հարց է և դրա համար պետք է դիմել համապատասխան հիմնարկությանը՝ վարկային գրասենյակին»²: Ապա նախարարը խորհուրդ էր տվել այդ խնդրով խորհրդակցել Ռուս-Ասիական բանկի ղեկավարներից մեկի՝ Ալեքսեյ Իվանովիչ Պուտիլովի հետ: Նա նաև հուշել էր, որ ուսահայերը պետք է ջանքեր գործադրեն՝ այդ հարցը Պետական դումայում բարձրացնելու, ցանկալի է՝ կազմել պատգամավորների, Մակլակովի և այլոց միջոցով: Վերջում նախարարն ասել էր, թե ինքը միշտ պատրաստ է օգտակար լինել Հայաստանում կատարվելիք ձեռնարկումներին³:

Անդրադառնալով Թուրքահայաստանում բանկային գործի զարգացման խնդրին՝ դեսպան Գիրսն ասել էր. «Ուստ ցանկալի է Հայաստանում բանկերի հիմնումը, բայց չմոռանանք նշել, որ ոչ մի ձուլման ի վիճակի չէ դրամագլուխներ ներս քաշել այստեղ. ուստ առևտրականները դժվարանում են սկսել բանկային գործը անգամ Կոստանդնուպոլսում, Զմյուռնիայում և Սալոնիկում: Ռուսաստանն ամեն կերպ պաշտպանելու է Թուրքահայաստա-

¹ «Արարատ», № 4, ապրիլ, 1914, էջ 370:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 65, թ. 2:

³ Նույն տեղում:

նում ուսահայերին պատկանող բանկային հիմնարկությունները, դրանք համարելու է ուսական ազգային բանկեր, թույլ չի տալու, որ այդ բանկերը ենթարկվեն պատահականությունների: Այս առումով երկու կարծիք լինել չի կարող»:

Կասկած չունենալով, որ բանկեր հիմնելու հարցում Հայերը գտնելու են իր երկրի իշխանությունների լիակատար աջակցությունը, Գիրսը խոստանում էր Փարիզից Կոստանդնուպոլիս վերադառնալուց հետո հավաքել տալ բանկային գործունեությունը վերաբերող բոլոր օրենսդրությունները և դրանք հանձնել Կ. Պոլսի պատրիարքարանին: Նա ասում էր, որ թուրքահայերը չպետք է մոռանան, որ իրենք կոչված են աշխատելու օսմանյան կայսրությունում, հետևապես պետք է լավ իմանան թուրքական օրենքները: Այս առումով իր ազգակիցներին խիստ օգտակար կարող է լինել Զոհրապը»¹:

Թուրքահայաստանում բանկեր բացելու հեռանկարի առնչությամբ մարտի 7-ին իր տեսակետն էր արտահայտել նաև արտգործնախարարի տեղակալ իշխան Տրուբեցկոյը, որը հաստատ համոզմունք էր Հայտնել, որ ուսական կառավարությունը կաջակցի և լայն արտոնություններ կտա ուսահայ փողատերերին Թուրքահայաստանում բանկեր բացելու համար²:

Հիրավի, թուրքահայությունը շատ կարևոր էր ունենալ հայկական երկրագործական բանկ, որը կարող լիներ նպաստելու թուրք վաշխառու դրամատերերի ճիրաններից Հայ գյուղացիներին ազատելուն: Այդպիսին է, ինչպես նշեցինք վերը, օսմանյան տխրահուշակ պետական Երկրագործական դրամատունը, որ հիմնվել էր Աբդուլ Համիդի օրոք: Հայ գյուղացիները, ստիպված էին այնտեղից մեծ տոկոսներով պարտքեր վերցնել, բայց չկարողանալով դրանք ժամկետին փակել՝ գրկվում էին գրավ դրած իրենց դաշտերից, այգիներից, անասուններից: Ապրուստի միջոցներից գրկվելով՝ նրանք հարազատ վայրերից հեռանում էին օտար երկրներ: Ուստի հայկական երկրագործական դրամատու-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 65, թ. 2:

² Նույն տեղում, թ. 3:

նը փրկութիւն կլինեն թուրքահայ գյուղացու համար, նրա օժանդակութեամբ աստիճանաբար կբարելավվեն գյուղական համայնքների տնտեսական դրութիւնը: Առանց հայ գյուղացիների չկար հայութիւն, ուստի գյուղական համայնքների ուժեղացումն ազգի պահպանման հիմնական նպատակն էր դառնում: Անհրաժեշտ էր, որ Ռուսաստանը ճնշում գործադրեր թուրքական կառավարութեան վրա, որպեսզի թուրքահայաստանում երկրագործական բանկ հիմնելու թույլատրութիւն ստանային:

Բայց երկրագործական բանկի հիմնումը կապված էր մեծ դժվարութիւնների հետ: Թուրքերը հազիվ թե համաձայնեին դրան:

Ռուս դիվանագետները հաստատ համոզված էին, որ նախատեսվող բոլոր ծրագրերը կարող են կյանքի կոչվել միայն այն դեպքում, եթե հայութիւնը հանդես բերի ներքին կայունութիւն և համերաշխութիւն, համախմբվի համազգային խնդիրների շուրջ: Իշխան Տրուբեցկոյն ասում էր, որ հայերը չհամաձայնեցված, երբեմն նույնիսկ միմյանց հակասող գործողութիւններին են դիմում, որն անթույլատրելի է: Նա շեշտում էր, որ ռուսական կառավարութիւնը կաջակցի, անգամ խիստ շահավետ արտոնութիւններ կտա կապիտալ ունեցող հայերին, եթե նրանք դրսևորեն միակամ վարքագիծ հայ ժողովրդի համազգային շահերի հարցում: «Միայն ողջ հայ հասարակութեան համազգային կամքի և միացյալ վարքագծի դրսևորման պայմաններում է հնարավոր համակրանք գտնել ռուսական կառավարութեան մոտ»¹, - շեշտում էր իշխան Տրուբեցկոյը:

Թուրքահայութեանը տնտեսական կոնկրետ օգնութիւն հասցնելու պատրաստակամութիւն առաջինը հայտնեց Ալեքսանդր Մանթաչյանը: 1914 թ. փետրվարի սկզբներին Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի միջոցով նա դիմեց Պետերբուրգ և կառավարութեանը խնդրեց թույլատրել իր միջոցներով թուրքահայաստանում բացել բանկ: Շուտով ստացվեց դրական

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 65, թ. 3-ի շրջ.:

պատասխան, ինչպես նաև խոստում, որ կառավարութիւնն ամեն կերպ հովանավորելու է այդ բանկի գործունեութիւնը¹:

Թուրքահայաստանում բանկեր հիմնելու պատրաստակամութիւն հայտնեցին նաև Պողոս Նուբար փաշան և եգիպտահայ մի ուրիշ մեծահարուստ²:

Տնտեսական կարևոր ձեռնարկ պիտի լիներ Թիֆլիսում հայերին պատկանող բանկերից երկուսի մասնաճյուղերի բացումը Հայաստանի զանազան գավառներում:

Մասնավոր բանկեր ստեղծելու ծրագրերից բացի՝ միտք հղացավ ազգային դրամահավաքի միջոցով թուրքահայաստանում ստեղծել նաև ակցիոներական բանկ՝ «Ազգային բանկ» կամ «Հայկական բանկ» անունով՝ երեք միլիոն ռուբլի դրամազրկով: Այդ գաղափարը պաշտպանեցին Մոսկվայի, Պետերբուրգի և Թիֆլիսի մի խումբ մեծահարուստներ³:

«Ազգային բանկ» ստեղծելու նպատակով Գրիգոր Զոհրապի բնակարանում տեղի ունեցավ ընդլայնված խորհրդակցութիւն, որին մասնակցում էին Օտոմանյան առևտրական բանկի կառավարիչ Սուքրիասյանը, ֆրանսահայ իրավախորհրդատու Արտաշես Յուրմուսը, Կ. Պոլսի Ապահովագրական ընկերութեան նախագահ Կայսերյանը, խոշոր առևտրական Արմեն Կարապոզյանը, IV Պետական դումայի պատգամավոր Միքայել Պապաջանյանը և ուրիշներ: Բազմակողմանի քննարկելով հարցը՝ խորհրդակցութիւնը հավանութիւն տվեց թուրքահայաստանում Ազգային բանկ ստեղծելու մտադրութեանը⁴: Առաջարկվում էր նաև մի հատուկ առևտրական բանկ հիմնել Ռուսաստանում, որի մասնաճյուղերը պետք է տեղակայվեին Թուրքահայաստանի վեց վիլայեթներում ու Կիլիկիայում: Միայն Կ. Պոլսի հայերը խոստացան այդ նպատակին տրամադրել մեկ միլիոն ռուբլի⁵:

Իհարկե, թուրքահայաստանն այն տեղը չէր, որ շահույթներ

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 70, թ. 2:

² Նույն տեղում, թ. 2-5:

³ Նույն տեղում, գ. 64, թթ. 1-2:

⁴ Նույն տեղում, գ. 65, թթ. 38-40:

⁵ Նույն տեղում, թ. 40:

ապահովել կովկասահայ ու թուրքահայ դրամատերերին, բայց սրանց մի մասը հայրենասիրական մղումներով պատրաստ էր սկզբնական շրջանում հրաժարվել շահույթից:

Ռուսական կառավարությունն արտակարգ ուշադրություն է հետևում էր թուրքահայաստանում տնտեսական բարեփոխումներ կատարելու ոռուսահայ մեծահարուստների պատրաստակամությունը և աշխատում էր ամեն կերպ աջակցել նրանց նախաձեռնություններին¹: Միաժամանակ ցանկություն էր հայտնել ոռուս մասնագետներով և ոռուսական ֆինանսավորմամբ ուսումնական մասնագիտական հաստատություններ բացել Հայաստանի բոլոր նահանգներում, ինչպես նաև Ռուսաստանի համալսարաններում տեղեր հատկացնել թուրքահայ երիտասարդների ուսուցման համար²: Նա նաև հրահանգ էր տվել թուրքահայաստանի հայկական վեց նահանգներում ավելացնել ոռուսական դիվանագետների թիվը:

Հայաստանում բանկ հիմնելու հարցը բազմակողմանի քննության էր առնվել Մոսկվայի հայկական կոմիտեի նիստում, և նրա մասնակիցները եկել էին այն եզրակացության, որ այն պետք է լինի առևտրական՝ օժտված նաև գյուղատնտեսական և տրանսպորտային գործառույթներով: Հատկապես տրանսպորտային գործառույթ ունենալը կհեշտացնեի ու կընդլայնեի ապրանքաշրջանությունը Ռուսաստանի և թուրքիայի միջև: Ռուսական կառավարության աջակցությամբ բանկը կարող էր կոնցեսիաներ վերցնել և Հայաստանում ձևավորել բաժնետիրական ընկերություններ:

Համագումարն ընտրել էր Կովկասի հայ կապիտալիստների ու բանկերի ղեկավարության՝ 20 հոգուց բաղկացած հանձնախումբ, որն իր առաջին իսկ նիստում լիովին հնարավոր համարեց թուրքահայաստանում առևտրաարդյունաբերական բանկի հիմնումը՝ գյուղատնտեսական գործունեության համար կարճաժամկետ (մինչև 12 տարի), հիմնական կապիտալի 1/3-ի չափով

հատկացումներ տրամադրելը: Միաժամանակ համագումարը ցանկություն էր հայտնել, որ բանկի գործառույթներից ստացված եկամտի 40%-ն օգտագործվի Հայաստանի բնակչության լուսավորչական կարիքների համար: Հանձնախումբը նաև գտավ, որ նման բանկ բացելու համար 3000000 ռուբլին լիովին բավարար է:

1914 թ. մայիսի 3-ից 6-ը թիֆլիսում տեղի ունեցավ Ազգային համագումարը՝ մասնակցությամբ ավելի քան 60 պատգամավորների: Դիտորդի իրավունքով համագումար էին եկել Մոսկվայի հայերին ներկայացնող Վ. Թոթոնյանցը, Ա. Զիվելեզովը և Մ. Բունիաթյանը: Համագումարը բոլոր չորս նիստերում քննության առավ ոռուսահայության շրջանում անցկացվելիք դրամահավաքի միջոցով թուրքահայաստանին աջակցելու հարցը: Պատգամավորներից մի քանիսը, համակրանքով վերաբերվելով այնտեղ բանկային համակարգ ստեղծելու խնդրին, միաժամանակ գտնում էր, որ «այժմ մեր ուժերից վեր է լուծել այդ ծանրագույն խնդիրը», և այն պետք է թողնել ապագային³:

Բայց ելույթ ունեցողների բացարձակ մեծամասնությունը (Գ. Չալխուչյան, Մ. Բերբերյան, Վ. Տեր-Չաքարյան, Ա. Զիվելեզյան, Ա. Ալեքսանյան, Վ. Տոտոնյան, Ս. Աֆրիկյան, Ա. Սարուխանյան, Ն. Աղբալյան և այլք) հանդես եկան առաջարկությամբ՝ ոչինչ չխնայել թուրքահայաստանի համար²:

Ի վերջո որոշում ընդունվեց առայժմ թուրքահայաստանում հիմնել միայն մի ակցիոներական «Հայկական բանկ»՝ մեխորատիվ ու ազրարային ֆունկցիաներով և երեք միլիոն ռուբլի դրամագլխով, հետագայում այդ գումարը հասցնելով հինգ միլիոն ռուբլու: Բանկի խնդիրներից մեկը պետք է լինեի Հայաստանում հայ-ռուսական առևտրի զարգացումը³: Համագումարը նաև անդրադարձավ «բոլոր երկրներից» թուրքահայ գաղթականների հայրենիք վերադարձի գործը կազմակերպելու, թուրքահա-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, թթ. 40-ի շրջ.:

² Նույն տեղում, թ. 130:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 70, թ. 3-ի շրջ.:

² Նույն տեղում, թ. 4:

³ Նույն տեղում, թ. 6:

յաստանում գյուղատնտեսական գոնե մեկ դպրոց չտալ բացելու խնդիրներին¹: 4. Պոլսի հայոց պատրիարքարանը հավանություն տվեց նախաձեռնությունը: Ազգային իշխանություններն անմիջապես կոնսուլտացիաներ սկսեցին հայ, ռուս և եվրոպացի ֆինանսիստների հետ:

Քանի որ հենց համագումարում Բաքվի հայերի ներկայացուցիչները պատրաստակամություն էին հայտնել բանկի ստեղծմանն անմիջապես տրամադրել 1000000 ռուբլի, ուստի մնում էր, որ այդ նպատակի համար մեկական միլիոն ռուբլի հավաքեն Մոսկվայի և Սանկտ Պետերբուրգի հայերը:

Թիֆլիսի համագումարը քննարկվող հարցի մասին կայացրեց հետևյալ որոշումը. 1) Թուրքահայաստանում բանկ հիմնելը համարել խիստ հրատապ, բայց դրա իրականացումը հետաձգել մինչև գործնական պայմանների առկայությունը՝ հիմնադիր կապիտալի ձևավորումը և դրա հետ կապված հարցերի պարզաբանումը: 2) Առևտրական բանկի ստեղծումը ճանաչել որպես քաղաքական ու տնտեսական անհետաձգելի խնդիր, 3) Բանկի կանոնադրության վերջնական մշակումը ռուսական կառավարության կողմից և վերջինիս աջակցությամբ, նաև թուրքական կառավարության կողմից դրա հաստատման գործը դնել Մոսկվայի և Պետերբուրգի հայկական կոմիտեների վրա:

Թիֆլիսի համագումարից հետո հաջորդ օրը բանկի հարցով հրավիրվեց խորհրդակցություն՝ առևտրային և բանկային գործի ակնավոր ներկայացուցիչների մասնակցությամբ: Լսելով Բունիաթյանի զեկուցումը՝ ներկաները պատրաստակամություն հայտնեցին նյութական ու բարոյական աջակցություն ցուցաբերել նախատեսվող գործի իրականացմանը: Ընդ որում, կարծիքներ եղան, որ բանկի 2-3 միլիոն հիմնադիր կապիտալը բավական չէ, հետևապես հարկ է այն հասցնել 5 միլիոնի²:

Հարցին ամենայն մանրամասնությամբ անդրադարձավ Պետերբուրգի հայկական խմբակի Բյուրոյի մայիսի 24-ին տեղի ունեցած նիստը:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 70, թ. 3, 4:

² ПЗПАК, том I, сmp. 49-50.

Բյուրոյի նախագահ Մ. Ի. Պապաջանովը նիստը բացելուց հետո խոսքը տրամադրեց նրա անդամներից Ա. Սարուխանյանին, որը հատուկ զեկուցում էր պատրաստել Հայաստանում բանկային գործի զարգացման հեռանկարների մասին: Զեկուցման շուրջ առաջ եկան տարաձայնություններ: Ոմանք գտնում էին, որ այն պետք է լինի սովորական բանկ՝ գյուղատնտեսական ուղղվածությամբ և կարճաժամկետ վարկավորումներով, ուրիշները ճիշտ էին համարում ազրարային բանկի հիմնումը Թիֆլիսում, որը բաժանմունքներ կունենար ոչ միայն Հայաստանում, այլև Թուրքիայի մյուս մասերում: Կոստանդնուպոլիս գնացած և վերադարձած Մ. Պապաջանովը հաղորդեց, որ այնտեղի հայկական շրջանակները ավելի շատ հակված են առևտրական բանկ ստեղծելու կողմը՝ օժտված գյուղատնտեսական գործառույթների իրավունքով¹:

Բյուրոյի նիստին մասնակցում էր և ելույթ ունեցավ Մոսկվայի հայկական կոմիտեի նախագահ Մ. Ա. Բունիաթյանը: Նա հաղորդում արեց այդ նույն հարցի վերաբերյալ իրենց կոմիտեում տարվող աշխատանքների մասին՝ սկսելով նրանից, որ Հայաստան բարեփոխումների ներմուծումով ռուսահայ կապիտալի համար գործունեության նոր, շատ մեծ ասպարեզ է բացվում: Յոթ վիլայեթներից բաղկացած Հայաստանը, ասում էր նա, վիթխարի մի երկիր է՝ 4.5 միլիոն բնակչությամբ, 20 քաղաքներով, ստորերկրյա հարուստ հանածոներով: Եվ բանկն այստեղ մեծ աշխատանք ունի անելու: Բացի այդ, հայերը ցրված են ամբողջ Փոքր Ասիայով մեկ, հետևապես բանկի գործունեությունը պետք է տարածվի նաև նրանց վրա:

Հ. Զավրիևը, որը հենց նոր էր վերադարձել արտասահմանից, նիստի մասնակիցների հետ կիսեց այն տպավորությունը, որ նա այնտեղ ստացել էր որոշ շրջանակներում ունեցած զրույցների ժամանակ: Նա տեղեկացրեց, որ այդ հարցով առանձնապես մեծ հետաքրքրություն է ցուցաբերում Ռուսաստանի արտգործնախարարության պատասխանատու աշխա-

¹ ПЗПАК, том II, сmp. 46.

տակից Ռաֆայելիչը, որի հետ ինքը հանդիպել է Փարիզում՝ տեղի ուսաց դեսպան Իզվոլսկու խորհրդով: Ռուսական պաշտոնյան պնդել էր, թե բոլոր տեսակետներից նախընտրելի է ձեռք բերել Թուրքիայում արդեն գործող բանկերից մեկը, քան բազմաթիվ արգելքներ հաղթահարելով, բացել նորը: Ընդ որում, նա կարծիք էր հայտնել, թե հայերին շատ ավելի ձեռնտու կլինեք, եթե նրանք մոտավորապես 6 միլիոն ուրբով ձեռք բերեն հրեաներին պատկանող Սալոնիկի բանկը՝ դրանում ընդգրկելով ոչ միայն հայկական, այլև ուսական և ֆրանսիական կապիտալներ: Անդրադառնալով այդպիսի բանկ ունենալու առավելություններին՝ նա նաև շեշտել էր, որ մահմեդականների և քրիստոնյաների միջև հարաբերությունների սրացման ժամանակ բանկը, բնականաբար, ուժեղ աջակցություն կստանա ուսական և ֆրանսիական կառավարություններից¹:

Շուտով պարզվել էր, որ Ռաֆայելիչը Ռուս-ասիական բանկի Փարիզի բաժանմունքի կառավարիչն է, իսկ Սալոնիկի բանկի բաժնետոմսերի զգալի մասը պատկանում էր Ռուս-ասիական բանկին: Երկու բանկերն էլ, այսպիսով, գտնվում էին ֆրանսիական և ուսական հրեաների ձեռքում: Ուստի, ասում էր Զավրիևը, Ռաֆայելիչի առաջարկության ընդունումը կնշանակեր հայերի ձեռնարկած գործը հանձնել հրեաների տնօրինությանը, որոնք, իրենց ձեռքում ունենալով բաժնետոմսերի մեծ մասը, առանց հայերի հետ հաշվի նստելու, բանկը կծառայեցնեին իրենց շահերին:

Հանգամանորեն քննարկելով Հ. Զավրիևի հաղորդումը՝ ՊՀԽ Բյուրոն բյուրեղացրեց Հայաստանում առևտրական բանկի, իսկ հետագայում նաև ուրիշ գործառույթներ ունեցող բանկերի մասին իր տեսակետը, այն է՝ հայկական բանկը պետք է գործի հայկական հողերի սահմաններում, հայերի ձեռքում պետք է մնան այդ բանկերի ղեկավարման լծակները՝ Երկրում սեփական քաղաքականություն իրականացնելու, նրա բնակչության տնտեսական և մշակութային վիճակը բարձրացնելու համար:

Բյուրոն ուսական և ֆրանսիական կապիտալների ներգրավումը Թուրքահայաստանի բանկերում համարեց ցանկալի, եթե դրանք չզերազանցեն հայկական ավանդների չափը: Դրա հետ միասին որպես բանկային գործում ուղենիշ ընդունվեց այն հիմնադրույթը, որ Հայաստանից դուրս բանկ ունենալն ազգային տեսակետից բոլորովին անընդունելի է, նույնիսկ եթե դրանք մեծ եկամուտներ բերեն:

Բյուրոն կարծիք հայտնեց, որ հայկական առևտրական բանկի վարչությունն նստավայրը պետք է լինի կայսրության բորսայական և ֆինանսական կենտրոն Պետերբուրգը: Նիստի մասնակիցները ցանկություն հայտնեցին, որ բանկը ղեկավարի Պ. Ղուկասովը: Բյուրոն նաև ընտրեց մի հանձնախումբ՝ Մ. Պապաջանով, Պ. Ղուկասով, Մ. Աճեմով, Ա. Սարուխանյան կազմով՝ Մոսկվայի հայկական կոմիտեի հետ մշակելու բանկի կանոնադրությունը²:

Ռուսական կապիտալի համար շահեկան էր Հայաստանում տեղական խաղաղության հաստատումը: Բայց այնտեղ տնտեսական-առևտրական լայն գործունեություն ծավալելու համար դա դեռ բավարար չէր: Անհրաժեշտ էր, որ այնտեղ նաև ստեղծվեր եթե ոչ քաղաքական, ապա գոնե վարչական ու քաղաքացիական-իրավական կայուն կարգ ու կանոն:

Թուրքական շուկայում ուսական առևտրի դրույթունը փայլուն չէր՝ գլխավորապես քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով: Չնայած դրան՝ տարեցտարի ավելանում էր նաև Ռուսաստանից Թուրքիա արտածվող ապրանքների քանակը: 1905-1910 թթ. ընթացքում ուսական արտահանման չափը Թուրքիա ավելացել էր գրեթե կրկնակի³:

Դեպի Թուրքիա ապրանքներ արտահանելու ծավալներով մեծ պետություններից առաջին տեղը 1910 թ. բռնել էր Անգլիան՝ 26 տոկոս, այնուհետև գալիս էին Ավստրիան՝ 16 տոկոս, Ֆրանսիան՝ 13 տոկոս, Իտալիան՝ 8 տոկոս: Այնուհետև հաջորդում էր Ռուսաստանը, որ նույնիսկ Գերմանիայից առաջ էր³:

¹ ПЗПАК, том II, стр. 48.

¹ ПЗПАК, том II, стр. 53.

² Տե՛ս «Մշակ», № 63, 22 մարտի 1914 թ.:

³ Նույն տեղում:

Եթե թուրքական կայսրություն՝ ուսական ապրանքների արտածման համեմատաբար փոքր բաժինը չէր համապատասխանում նրա ունեցած մեծ հնարավորություններին, ապա հաշվի առնելով ցամաքային հարմար ճանապարհներով ապրանքներ տեղափոխելու հարմարությունները՝ կարող ենք ասել, որ թվերն ավելի մխիթարական էին ուսական կողմի համար:

Մինչև 1900 թ. ընդհանրապես ուսական ապրանքներ չէին արտածվում Վան, Բիթլիս և Հայաստանի ուրիշ քաղաքներ, բացի, թերևս, էրզրումից, ուր Կովկասից գլխավորապես հասնում էր նավթ: Էրզրումի վիլայեթ, բացի Ռուսաստանից, ծովով ապրանքներ էին հասնում նաև Եվրոպայից, որոնք բեռնաթափվում էին Տրապիզոնի նավահանգստում, ապա սայլերով ու գրաստներով տեղափոխվում էրզրում: Տրապիզոնից էրզրում գրեթե 270 վերստ ճանապարհը տրանսպորտի այդ միջոցներն անցնում էին 10-15 օրում: Պարսկաստանի համար նախատեսված բավական խոշոր չափերի տրանզիտային ապրանքները նույնպես ուղտերի քարավաններով անցնում էին Տրապիզոն-էրզրում ճանապարհով: Չնայած այս ուղին երկար էր, բայց հարմար: Գլխավոր թերությունն այն էր, որ ձմռանը երթևեկությունն այս ուղով բոլորովին խափանվում էր:

1900 թվականից սկսած՝ ուսական մի շարք կարևոր ապրանքներ, առաջին հերթին շաքարը, թուրքահայաստանում սկսեցին նորանոր շուկաներ գրավել: 1911 թ. տվյալներով Վանի վիլայեթ է ներմուծվել 1,144 հազար ուրլու ապրանք, որի 30 տոկոսը բաժին է ընկել Ռուսաստանին: Նույն թվականին Անդրկովկասի վրայով Հայաստան է արտահանվել՝ 22,4 հազար փութ հաց, 76 հազար փութ շաքար, 200,5 հազար փութ անտառանյութ, 73,9 հազար փութ մետաղ, 34,8 հազար փութ ածուխ, 181,1 հազար փութ նավթ¹:

Թվերը ցույց են տալիս, որ Ռուսաստանի համար թուրքահայաստանը կարող էր լինել խոշոր հնարավորություններով շուկա, որը գնալով մեծ չափերով կրնդայնվեր՝ ի հաշիվ բնակ-

չությունն աշխատասիրություն ու քաղաքակրթվածության աստիճանի, ինչպես և երկրի բնական անսպառ հարստությունների: Այդ շուկան կարող էր և պետք է կապվեր Ռուսաստանի տնտեսական զարգացման ընթացքին: Պարզ է, որ խոսքը «հավատակից» ժողովրդին օգնելու սենտիմենտալության մասին չէր, այլ մի շատ իրական, շոշափելի ու չահեկան բաների:

Ռուսաստանից թուրքիայի արևելյան նահանգներ ապրանքներ տեղափոխվում էին գլխավորապես Երևանի նահանգի Իզդիր ավանի վրայով: Այդ ճանապարհը խճուղի չէր, անբարեկարգ էր, իսկ գարնանը՝ գրեթե աներթևեկելի: Այնուհետև տրակտը գնում էր դեպի Վան՝ դարձյալ լեռնային խիստ անհարմար ճանապարհով, որը ձմռանն անանցանելի էր, գարնանը՝ դժվարանցանելի:

Հետևաբար ամենակարևոր խնդիրներից մեկը դառնում էր խճուղային գոնե մեկ բարեկարգ ճանապարհի կառուցումն Իզդիրից մինչև Բիթլիս կամ Վան:

1914 թ. առաջին ամիսներին հույս էր արթնացել, որ թուրքիայում երկաթուղիներ կառուցելու հարցում Ռուսաստանը հրաժարվում է կրավորական վիճակից: Դրա առաջին ապացույցն այն էր, որ սկսվել էր կառուցվել Սարիղամիշից մինչև թուրքական սահմանը ձգվող երկաթգիծ:

Բայց այդ կարճ ուղու կառուցումը չէր կարող ապահովել Անդրկովկասի ուսական տիրույթների անվտանգության ապահովման չնչին մասն իսկ, ինչպես և չէր կարող հակակշիռ լինել Հայաստանում երկաթուղային լայն ցանց կառուցելու գերմանացիների ծրագրին: Հաշվի առնելով այդ հանգամանքները՝ Ռուսաստանը, վերջապես, ստիպված էր միջոցներ ձեռնարկել՝ հենց սկզբնական շրջանում կասեցնելու ծայր տվող գերմանական հավակնությունները: Ուրիշ կերպ լինել չէր կարող, քանի որ մինչ այդ Ռուսաստանը չէր կարողացել մշակութային ու տնտեսական ներկայություն ապահովել թուրքահայաստանում, ինչպես դա արդեն արել էր Գերմանիան: Ուրեմն՝ այնտեղ մտնելու միակ միջոցը մնացել էր երկաթուղին:

Այդ տեսակետից կարևոր էր այն, որ Ռուսաստանը թուրքական կառավարության հետ համաձայնություն էր ձեռք բերել

¹ Տե՛ս «Մշակ», № 63, 22 մարտի 1914 թ.:

Հայաստանում երկաթուղիներ կառուցելու կոնցեսիայի վերաբերյալ 1900 թ. ռուս-թուրքական պայմանագիրը վերանայելու մասին: Ըստ այդ համաձայնություն՝ Ռուսաստանը ստանում էր նոր կոնցեսիա ֆրանսիական կապիտալի մասնակցությունը հայկական նահանգներով երկաթուղիների լայն ցանց կառուցելու համար, որը պիտի ձգվեր Կարս-էրզրում-երզնկա-Վան-Բիթլիս գծով:

Թուրքահայաստանի էրզրումի ու Սվազի նահանգների համար առավել մեծ նշանակություն կարող էր ունենալ Կարսից էրզրում կամ Վան երկաթգծի կառուցումը: Ժամանակին Ռուսաստանն իրավունք էր ստացել երկաթգիծ անցկացնել Կարսից էրզրում, բայց դա ինչ-ինչ պատճառներով այդպես էլ մնացել էր անիրագործելի: Շատերը հույս ունեին, որ Ռուսաստանը, վերջապես, կձեռնարկի այդ գործը և այն էլ՝ չուտ: Հայերը համոզված էին, որ երկաթուղին կարող է հիմնովին փոխել Թուրքահայաստանի առևտրական հրապարակը, ներմուծվող ապրանքների տեսականին ու գները, առևտրի ձևերը: Այդպիսով, ռուսական արդյունաբերությունը կգտներ մի շահավետ շուկա: Ռուսական որակյալ ապրանքները հրապարակից դուրս կմղեին եվրոպական շատ ապրանքների և տիրապետող կղաղնային շուկայում: Թուրքահայաստանը ռուսական ապրանքների հաստատուն վայր դարձնելու համար պահանջվում էր եռանդուն ջանքերի գործադրում ինչպես ռուսների, այնպես էլ թուրքահայերի կողմից:

Բայց հայերի զգացմունքային ոգորումները դեմ էին առնում ռուսական կողմի սառը հաշվարկներին: Պետերբուրգում գտնում էին, որ առայժմ անհնար է ձեռնամուխ լինել Թուրքահայաստանում երկաթուղիների կառուցման, մինչև որ չսկսվի և չավարտվի Լեոնանցքային խճուղային ճանապարհի կառուցումը, այլապես հայկական երկաթուղին կձառայի թուրքերի ռազմավարական նպատակներին. պատերազմի դեպքում Ռուսաստանի սահմաններից ներս մտնելը «նույնքան հեշտ կղաղնա, որքան մեզ համար հարևան սենյակ մտնելը»:

Կովկասի և Թուրքահայաստանի միջև խճուղային ճանապարհներ և հատկապես երկաթուղիներ կառուցելու գլխավոր և

զնահատելի բարիքներից մեկը, ոմանց կարծիքով, լինելու էր այն մխիթարական երևույթը, որ կնպաստեր հայ ժողովրդի երկու խոշոր հատվածների սերտ մերձեցմանը: Այդ գործընթացը հայոց սահմանի երկու կողմերում աստիճանաբար կստեղծեր կուլտուրական-տնտեսական, ապա նաև՝ քաղաքական ամուր կապեր:

Հայերը նաև ակնկալում էին, որ այդ ամենի շնորհիվ հիմնովին փոխվելու են նաև Հայաստանի բնակիչների բարքերն ու սովորությունները: Ավելին, առավել զգացական մտածողություն անձինք հակվում էին այն մտքին, որ երկաթուղու գործարկումից շատ չանցած՝ աստիճանական զարգացումով կիրականանա հայ ժողովրդի բացարձակ մեծամասնությունը ցանկությունը՝ Թուրքահայաստանի նահանգների խաղաղ միացումը մեծ Ռուսաստանին:

Ենթադրվում էր, որ շուտով բարենպաստ պայմաններ կստեղծվեն նաև թուրքահայերի և ռուսահայերի անհատական ու խմբային փոխայցելությունների (տուրիզմի) համար: Դրան հրաժեշտությունը կարևոր էր թուրքահայ ուսուցիչների, մտավորական դասի տարբեր ներկայացուցիչների, առևտրականների համար: Նույնքան օգտակար կարող էր լինել ռուսահայ զանազան խավի մարդկանց Թուրքահայաստան այցելելը: Հատկապես կարևոր նշանակություն կունենար պատմաբանները, աշխարհագետները, բանահավաքները, երկրաբանների այցելությունը՝ երկրի աշխարհագրության, բնակչության կենցաղի, սովորույթների, ինչպես նաև օգտակար հանածոների, ջրային ռեսուրսների, գյուղատնտեսության մեջ ազդեցիկական առաջավոր մեթոդներ կիրառելու հնարավորությունների և այլնի ուսումնասիրության համար:

Այդ տեսակետից արդեն առկա էին լավ օրինակներ: Այսպես՝ երկարատև ճանապարհորդություն կատարելով Թուրքահայաստանում՝ Ա-Դօ-ն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) տեսածն ու լսածը շարադրել էր «Վանի, Բիթլիսի եւ էրզրումի վիլայեթները: Ուսումնասիրությունն մի փորձ այդ երկրի աշխարհագրական, վիճակագրական, իրաւական եւ տնտեսական դրութեան» վերտառությունը գրքում (Երևան, 1912) և ռուսահայությունը հա-

դորդակից դարձրել սահմանի այն կողմ գտնվող Հայաստանին ու հայութեան կյանքին:

Բոլորը համոզված էին, որ շուտով կարելի կլինի Կովկասի գավառներից ամեն տարի հազարավոր հայեր ուղարկել Վանի Վարազա և Ս. Կարապետ վանքերը, իսկ Թուրքահայաստանի զանազան մասերից հայերի բազմամարդ խմբեր կարող կլինեին այցելել Արևելահայաստանի սուրբ վայրեր՝ հայութեան հոգևոր կենտրոն էջմիածին, Անիի ավերակներ, կանգուն կամ խոնարհված վանքեր՝ Խորվիրապ, Տաթև, Փանձասար ... :

Ջանգվածային այցելությունները Հայաստան աշխարհի սուրբ վայրեր կուժեղացնեին ժողովրդի երկու մայր հատվածների շփումները, մասնավորապես Թուրքահայերի մեջ կարթնանար հին օրերի եռանդը, կխորանային և կնորոգվեին ազգային-կրոնական զգացմունքները:

Հայկական թերթերում առաջարկներ էին արվում եվրոպական և ամերիկյան գյուղական բնակավայրերի օրինակով Թուրքահայաստանում սկսել տիպային գյուղերի (ավանների) կառուցումը: Այդպիսի ծրագիր իրականացնելու համար, ինչ խոսք, հսկայական գումարներ էին պետք: Հավատ կար, որ դրանք կարելի կլինի հայթայթել՝ դիմելով աշխարհի բոլոր հայտնի հայ դրամատերերին, ինչպես նաև կազմակերպել համազգային դրամահավաք:

Գոյացած դրամագլխով ամենից առաջ պետք էր ձեռք բերվեին էժան վաճառվող ազարակներ, ինչպես նաև՝ մշակման համար քիչ պիտանի պետական հողեր, որոնք օրենքով տրվում էին ցածր գներով: Այդ հողերի վրա նախատեսվում էր կառուցել առաջին 50-60 փոքր գյուղերը՝ կանաչապատ, լայն փողոցներով ու կանոնավոր տիպային տներով՝ յուրաքանչյուր ընտանիքին մշակելու համար հատկացնելով հավասար չափով հողաբաժիններ: Այդ գյուղերում բնակվելու առաջնահերթությունը պետք է տրվեին հայրենիք վերադարձող գաղթականներին և հարևան գյուղերի՝ ապրուստի միջոցներից զրկվածներին: Նրանք իրենց հնարավորությունների չափով կատարեին հայ ցեղի վերածնունդը: Հայ գործիչները համոզված էին, քանի որ մի կողմից Գերմանիան, մյուս կողմից Ռուսաստանը ձգտում են Հայաստան

նի տարածքում ստեղծել երկաթուղիների լայն ցանց, բացել աշխատանոցներ, հետևապես՝ աշխատատեղեր, ուստի տիպային գյուղերում հաստատված հայերի, այդ թվում հայրենադարձների համար կբացվի աշխատանքի լայն ասպարեզ:

Ապագա գյուղերի պլանավորմանը և կառուցմանը նախատեսվում էր մասնակից դարձնել Կալիֆորնիայի Ֆրեզնո քաղաքում և նահանգի ուրիշ փոքր քաղաքներում ու գյուղերում հաստատված հայ գաղթականներին, որոնք տիպային տնաշինությունների փորձը կարող էին բերել հայրենիք: Միաժամանակ նրանց կարելի էր հորդորել մնալ երկրում, վայելել բարենորոգումների ծրագրով ընձեռված հնարավորությունները՝ դրանով իսկ նպաստելով Հայաստանի վերաշինությանն ու տնտեսական և մշակութային վերելքին:

1914 թ. մարտից սկսած՝ Փրանսիայի հայ համայնքում նույնպես այդ ուղղությամբ նախապատրաստական աշխատանքներ էին տարվում: Այստեղ հատկապես տրամադիր էին համապատասխան մասնագետներ ուղարկել Հայաստան՝ գիտություն նորագույն նվաճումները Տիգրանակերտի, Բաղեչի և Վանի վիլայեթների գյուղատնտեսության մեջ ներդնելու համար:

Անշուշտ, եթե տիպային գյուղերի կառուցումը լայն ծավալներ ստանար և ընդգրկեր Թուրքահայաստանի բազմաթիվ գավառներ, ապա դրանց շինարարությունում աշխատելու կգային նաև շատ կովկասահայեր, և դրա շնորհիվ նոր բարենպաստ հնարավորություն կստեղծվեր հայության երկու հատվածների մերձեցման համար:

ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՕՐԱՆՆԴԻՐՆԵՐ

Անցած ճանապարհին հազարամյակներ գլորած հայ ժողովուրդը 20-րդ դար էր հասել բաժան-բաժան մասերով, որոնք գտնվում էին միմյանցից խիստ տարբեր տնտեսական և մշակութային մակարդակներ ունեցող պետություններում:

Հայոց մեջ կար երկու գլխավոր հատված՝ Թուրքահայություն և ռուսահայություն, որոնցից յուրաքանչյուրն իր ազգային ինքնություն պահպանման համար գործադրում էր բոլոր ճիգերը:

Նույնը չէր կարելի ասել հայոց ազգային մարմնից անջատված և անջատվող մասերի համար, որոնք հանգրվանել էին աշխարհի մոտ ու հեռու բազմաթիվ երկրներում՝ կանգնելով ձուլման վտանգի առջև:

Բարենորոգումների ծրագրի ընդունումից հետո ներազգային կյանքում ծագել էին կենսական նշանակություն ունեցող և լուծման սպասող բազմաթիվ հարցեր. հայություն երկու մեծ հատվածները ինչպիսի՞ փոխհարաբերություն մեջ են գտնվում այժմ, և ինչպե՞ս է լինելու վաղը, ի՞նչն է նրանց միացնում կամ բաժանում, արդյոք կա՞ հնարավորություն գլուխ բերելու նրանց հոգևոր-մշակութային միասնականացումը, և եթե կա, ապա ինչպե՞ս և ի՞նչ միջոցներով հասնել դրան:

Հանրահայտ է, որ ազգը միասնական կարող է լինել այն դեպքում միայն, եթե նրա ամբողջականությունը կազմող տարրերն ունենում են նույն նկարագիրն ու բարքերը, սովորույթները, դաստիարակություն ու կրթության միակերպությունը:

Սակայն հայ ժողովուրդը դժբախտություն ուներ գտնվելու կուլտուրական զարգացման խիստ տարբեր մակարդակներ ունեցող տերությունների տիրապետության տակ, որոնք միմյանց նկատմամբ հարատև թշնամի էին: Հայաստանին տիրացած այդ պետությունների վարած մեծապետական քաղաքականություն հետևանքով հայոց հայրենիքի տարբեր մասերը հայ ժողովրդի քաղաքական կյանքի համար դարձել էին առանձին-առանձին, մեկուսացած միջավայրեր: Անթափանց պետական սահմաններով երկու հատվածների բաժանված, զրկված քաղաքական կյանքի ընդհանրությունից և էթնիկ միասնությունից՝ հայերը ձեռք էին բերել իրարից խիստ տարբեր խառնվածքներ ու բարքեր:

Թեև Թուրքահայաստանի և Կովկասի հայերն ապրում էին կողք կողքի, բայց միմյանց թշնամի երկու պետությունների. Հայաստանի մարմնով գծած սահմանը նրանց բաժանել էր ամուր պատնեշով, դարձրել երկու տարբեր արժեհամակարգերի կրողներ:

Ֆիզիկապես զատված՝ նրանք խորթացել էին իրարից, ձեռք բերել տարբեր սովորույթներ ու հոգեկերտվածք, հարմարվել

կրթության ու դաստիարակության տարբեր համակարգերի: Երկու կողմի հայերը դեռ ունեին որոշ ընդհանրություններ՝ ժառանգականորեն փոխանցված մի քանի ավանդույթներ, դավանական արարողությունների նույնություն, ազգային-քաղաքական երեք կուսակցությունների շարքերում համատեղ ներգրավվածություն և այլն, բայց դրանք անբավարար էին ազգային միասնականության համար:

Կովկաս կատարած ճամփորդությունից Կ. Պոլիս վերադարձած բժ. Վոսանյանը Ամերիկայում (Բոստոն) գտնվող Ս. Վրացյանին 1914 թ. մարտի 16 (29)-ին գրում էր. «Ամէն տեղ գտայ ընդունելութիւն, և այդ ընդունելութեան մէջ չափեցի մշակութային բարձրութիւնը տաճկահայերու և կովկասահայերու միջեւ: Կովկասցիք նկարագրով, մարդկային եւ ընկերային զգացումներով բարձր են անբաղդատելիօրէն: Համեմատութեան եզրս հասարակ ժողովուրդը չէ - ամէն տեղ նոյնն է հայը: Սօսքս միջին կրթութեամբու մասին է՝ քաղքենիներու: Տարբերութիւնը ահագին է օրինակ՝ կարնեցու եւ այլքսանդրապօլցու միջեւ, թեեւ երկուքն ալ նոյն ցեղին (Բարձր Հայքի) եւ բարբառին կը պատկանին, շատերը հեռու ազգակցութեամբ եւ խնամութեամբ կապուած իրարու՝ սահմանին երկու կողմը»¹:

Հայության իրարից հեռացած երկու հատվածների քաղքենիական միջավայրում սովորական բան էր դարձել միմյանց չհասկանալը, նույնիսկ հեգնելն ու ծաղրելը:

Հնչակյան Ս. Սապահ-Գյուլյանը մի առիթով վերհիշել է Մինաս Չերազի հետ իր հանդիպումներից մեկի մասին:

«Հազիւ իրարու մօտեցած-չմօտեցած՝ կէս զայրացած, կէս հեզնական կերպով հարցրեց.

- «Ախպար, դուք մեզ ի՞նչ կ'ըսեք»:

- Ի՞նչ առթիւ, զարմացմամբ հարցրի:

- «Կ'ուզեմ ըսել թէ դուք՝ Ռուսահայերդ ի՞նչ կ'ըսէք մեզ՝ Տաճկահայերուս»:

- Դուք ինձնից աւելի լաւ գիտէք. Պրն. Չերազ, դուք աւելի՛ հին գործիչ էք:

¹ «Վեմ», № 1, հունվար-ապրիլ, 1935, էջ 96:

- «Ախպար, դուք մեզ ինչո՞ւ կ'ըսէք հոսո՞ս»:

- Կարծեմ, հոսո՞ս պատուանունը չի գործածուում բոլոր Տաճկահայերի համար, այլ միայն Պոլսեցիների. թէև վերջերս Ռուսահայերն էլ իրարու յաճախ հոսո՞ս են ասում»¹:

Ոմանք առաջարկում էին հայության երկու հատվածներում բացատրական աշխատանքներ սկսել և ազգակիցներին հորդորել թե՛ բանավոր խոսակցության ժամանակ և թե՛ գրավոր խոսքում չօգտագործել ուսասհայ և թուրքահայ բառերը, որոնց գործածությունը նվաստացնում է ազգը, կրկին ու կրկին հիշեցնում նրա անագորույն վիճակը՝ որպես հետևանք սեփական պետականություն չունենալուն:

Իր «Քաղաքապետի մը յիշատակները» հուշագրության մեջ Ալեքսանդր Սատիսյանը նշում էր, որ Կովկասում հայ ժողովուրդը, մասնավորապես նրա կրթյալ տարրերը՝ մտավորականությունն ու կուսակցական գործիչները, ապրում էին իմացական երկու սկզբունքներով. ոմանք՝ որպես Ռուսաստանի քաղաքացիներ, կապված էին ուսական մշակույթին, ուսու մտավորականությունը, բայց չէին հեռացել իրենց ազգային ինքնությունից ու մշակույթից, իսկ կրթյալ տարրերի մյուս մասն ապրում էր զուտ ազգային իդեալներով:

Հավագույն տարիքում, երբ կազմավորվում է մարդու հոգեկան աշխարհը, երբ դրվում են քաղաքական աշխարհայացքի առաջին հիմքերը, հազարավոր հայ երիտասարդներ, սովորելով ուսական քաղաքների համալսարաններում և ճարտարագիտական դպրոցներում, ոչ միայն ստանում էին հարուստ գիտելիքներ, այլև շփվում էին ուս լուսավոր անհատակությունների հետ, խորապես կրում ուսական հզոր մշակույթի բարերար ազդեցությունը:

Թեև ուսական կառավարությունը առաջ էր բերում որոշ սահմանափակումներ կրթական և մշակույթի բնագավառներում, իսկ երբեմն էլ գործադրում էր բռնություններ (ինչպես օրինակ՝ հայ եկեղեցուն պատկանող դպրոցների փակումը Կով-

կասի փոխարքա իշխան Գոլիցինի օրոք), բայց, այնուամենայնիվ, ուսական տիրապետության պայմաններում կայսրության բոլոր ազգային փոքրամասնությունները, այդ թվում նաև հայերը, տարեցտարի արձանագրում էին կրթամշակութային առաջընթաց:

Վիճակն ուրիշ էր Թուրքիայի հայ մտավորականության և կուսակցական գործիչների պարագայում: Նրանք իրենց կրթությունը ստանում էին հայկական կամ ֆրանսիական դպրոցներում, ուստի հետևում էին հայկական կամ եվրոպական մշակույթին: Թուրքական մշակույթ գոյություն չունեի, հետևապես հայ մտավորականությունը կտրված էր թուրքական կյանքից: Այդ հանգամանքը լրացուցիչ պատրվակ էր թուրքական իշխանությունների համար՝ հարկ եղած դեպքում բարոյական, տնտեսական և ֆիզիկական բռնություններ գործադրելու հայկական դպրոցների և մշակութային հաստատությունների վրա:

Բայց, գրում էր Սատիսյանը, «Ոչ մեկ համեմատություն կարելի է ընել թուրք եւ ուս բռնություններու միջեւ: Ռուս կառավարությունը կանգնած էր միայն հայ ժողովուրդի ազգային մշակույթի ճամբաներուն վրայ եւ կ'արգիլէր անոր բնական զարգացումը, մինչդեռ թուրքերը կը սպառնային հայ ժողովուրդի ֆիզիքական գոյութեան: Բաւական է մատնանշել այն փաստը, որ ոչ մէկ ուսասհայ կը ցանկար ապրիլ թրքական իշխանութեան տակ, իսկ իւրաքանչիւր տաճկահայ կը ձգտէր դէպի Ռուսաստան եւ կը գտնէր այնտեղ աշխատանքի խաղաղ պայմանները: Արդար լինելու համար պէտք է ըսենք, թէ ուսական բարձր մշակույթը, լեզուն, ուս կնոջ հմայքը կը տարածէին ուսական ազդեցութիւնը հայ քաղքենի եւ մտաւորական դասերուն մէջ, հանգամանք մը, որ կը վախցնէր մեր տաճկահայ եղբայրները, որոնք այդ երեւոյթին մէջ կը տեսնէին ապազգայնացման լուրջ նշաններ: Դեռ 1914 թուին թրքահայ յայտնի գրագէտ Զոհրապը ինձ իր վախը յայտնեց այդ առթիւ»¹:

¹ Ս. Սապահ-Գիլեան, Պատասխանատուները, Բ տպագրութիւն, Պեյրութ, 1974, էջ 216:

¹ «Հայրենիք», № 11 (119), սեպտեմբեր, 1932, էջ 118-119:

Ազգային մարմինը ձևավորող անհատներին սերտորեն կապող միջոցներից գլխավորը լեզուն է:

Այդ օրերին, թուրքահայության լեզվի վտանգված լինելու պայմաններում, խիստ այժմեական էր դարձել Ռաչատուր Աբովյանի պատգամը. «ամեն ազգի պահողը լեզուն է և հավատքը»:

Ժողովուրդն ի վիճակի չէր հակադրվելու այդ կացությանը, սեփական ուժերով քանդելու իր մասերն անջրպետած կապանքները:

Գարեբի թավալքում նրա միասնական ազգային լեզուն նույնպես երկճեղքվել ու երկատվել էր՝ ծնունդ տալով արևելահայերենին ու արևմտահայերենին՝ բառամթերքի իրենց չափաբաժիններով, բառիմաստների նկատելի դանազանություններ, գրելաոճով, ավելին՝ երկու տարբեր քերականություններ:

Բարբախտաբար հայ ժողովուրդը պատմականորեն օժտված էր մի հզոր առանձնահատկությամբ, որը նույնիսկ քաղաքական ամենամեծ վերիվայրումների՝ բաժանումների ու անջատումների պայմաններում իսկ ունակ էր պահպանելու իր ցեղային ամբողջական ինքնությունը. դա նրա ազգային մշակույթն էր, հոգևոր կյանքը, որը չէր ենթարկվում օտար, իր համար խորթ ուժերի թելադրանքին: Հենց այդ առանձնահատկության շնորհիվ է, որ հայության տարբեր հատվածները ժամանակի հոլովույթի մեջ միշտ ձգտել են մերձեցման՝ չրջանցելով իրենց միջև կանգնած պատնեշները:

Իր տարբեր հատվածների մշակութային մերձեցման համար հայությունն ուներ մի հզոր միջոց՝ լեզուն, որը նրա ուրույն հոգեբանության, մտածողության կերպի, ազգային առանձնահատկությունների արտահայտությունն է: Ռուսաստանի, Թուրքիայի, Պարսկաստանի, Եգիպտոսի հայերն ապրում էին իրարից աշխարհագրորեն բաժան, քաղաքական տարբեր միջավայրերում, բայց նրանց ազգային լեզուն՝ որպես ոչ քաղաքական գործոն, շարունակում էր գոյատևել նաև ժողովրդի մարմնի մասերը իրարից բաժանած սահմանագծերից ներս:

Չնայած այդ ամենին՝ ազգային լեզուն, որքան էլ ուներ հզոր դիմադրողականություն, հանգամանքների ճնշման տակ աստիճանաբար նահանջում էր, կորցնում դարերով պահպանած յու-

րահատկությունները, ողողամաշվում ու նվազում էր առարկայական պարագանների ազդեցության տակ:

Հենց դրա հետևանքով էր, որ 19-րդ դարի 30-40-ական թվականներից սկսած՝ տեղի ունեցավ հայ ազգի երկու խոշոր հատվածների գրական գործընթացների անջատում: Դեռ մինչև նշված դարի կեսերը հայկական միջավայրում տիրում էր գրական լեզվի միասնություն (միջին հայերեն), որի հիմքը գրաբարն էր: Հաղարամյակների այդ լեզուն մեկ էր ամենուր՝ էջմիածնում թե՛ Թիֆլիսում, Նոր Նախիջևանում թե՛ Մոսկվայում, Կ. Պոլսում թե՛ Նոր Զուղայում, Վենետիկում թե՛ Կալկաթայում: Ամենուր հայ գրչի մարդկանց համար նույն լեզուն էր՝ իր բառապաշարով և միասնական քերականությամբ:

Գրաբար գրական լեզվից դատ, գոյություն ուներ հայ ժողովրդական գործածական լեզուն, որը համարյա միատեսակ էր թե՛ Վանի, Մուշի կամ էրզրումի և թե՛ Արարատյան դաշտի, Սյունիքի կամ Արցախի հայության համար:

Եկան նոր ժամանակներ, երբ գրավոր գրական լեզուն պիտի տեղի տար ժողովրդական լեզվին՝ աշխարհաբարին:

Ժողովրդական լեզվի և գրաբարի կողմնակիցների վեճը, որ երկար պատմություն ուներ, լուծվեց հօգուտ աշխարհաբարի: Գրական աշխարհաբարը մատչելի դարձավ ժողովրդին:

Հսկա մղիչ ուժ հանդիսանալով հայ գրականության հետագա զարգացման համար՝ աշխարհաբարը մյուս կողմից գրական միջնորմներ ստեղծեց հայության երկու հատվածների լեզուների միջև:

Ինչո՞ւ այդպես եղավ: Կարծիքները տարբեր են, նույնիսկ հակասական: Այստեղ կներկայացնենք ժամանակի հիմնական տեսակետները:

Հայերի գրական նոր լեզուն պետք է աշխարհ գար բուն հայրենիքում՝ հիմք ունենալով ժողովրդի խոսակցական լեզուն, նրա բարբառների հարուստ գանձարանը: Ըստ որում՝ պետք է ստեղծվեր մեկ միասնական գրական լեզու, այլ ոչ թե երկուսը, ինչպես տեղի ունեցավ: Այդ երկու լեզուները ստեղծվեցին ոչ թե բուն հայ ժողովրդի մեջ, այլ նրանից հեռու՝ հայ գաղթավայրերում: Ավելին, դրանք դարբնվեցին առանձին անհատների նա-

խաձեռնութեամբ ու ջանքերով, այն էլ ոչ թե բնաշրջան ճանապարհով, այլ հապճեպ, հեղափոխականութեամբ: Թուրքահայ գրական լեզուն հրապարակ եկավ ու զարգացավ Կ. Պոլսի հայերի խոսակցական լեզվի արհեստական նմանակմամբ, նրա կանտոններով ու ոգով, իսկ ուսանող լեզուն ավարտուն տեսքի բերվեց այն հայերենի հիմքով, որ գործածվում էր Մոսկվայի Լազարյան ձեռնարանում, որը, իր հերթին, անցել էր հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի ստեղծագործական քուրայով: Այլ խոսքով՝ բուն ժողովուրդն ըստ էության ոչ առաջին և ոչ էլ երկրորդ դեպքում մասնակից չդարձավ երկու գրական հայերենների ստեղծմանը:

Ժամանակի ընթացքում հայոց երկու գրական լեզուները գնալով ավելի ու ավելի հեռացան իրարից: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ ուսանող գրական լեզուն կրում էր ուսանող լեզվի ուժգին ազդեցությունը, որն արտահայտվում էր այդ լեզվից բազմաթիվ բառերի ու տերմինների, քերականական ձևերի փոխառումով: Ռուսաց լեզվի միջոցով ուսանող գրական լեզվի մեջ էին թափանցում նաև շատ բառեր ու տերմիններ եվրոպական լեզուներից:

Ինչ վերաբերում է թուրքահայոց գրական լեզվին, ապա այն անմիջականորեն կրում էր եվրոպական լեզուների և ամենից առաջ ֆրանսերենի ազդեցությունը:

Այդպիսով, հայոց երկու կենտրոնախույս լեզուները, կտրված ժողովրդական հենարանից, գնացին տարբեր ուղղություններով, որի արդյունքը եղավ ոչ միայն միմյանց հանդեպ անտարբերությունը, այլև ինչ-որ տեղ՝ անհանդուրժողականությունը: Փոխադարձ խորթացման հետևանքով պոլսահայր ուսանող լեզուն համարում էր անտանելի կոպիտ, իսկ ուսանողը պոլսահայ (թուրքահայ) լեզվի բառերն արտասանում էր արհամարհական ժպիտը դեմքին:

Եվ դա կատարվում էր նույն ազգին, նույն մշակույթին, նույն կրոնին պատկանող հավաքականության մեջ՝ ուղղված համազգային շահերի դեմ: Բանը հասել էր նրան, որ պոլսահայ լրագրերը խուսափում էին իրենց էջերում տեղ տալ ուսանող թերթերի հաղորդումներին, իսկ եթե դա հազվադեպ արվում էր, ապա

անպայման արևելահայ հոդվածներից ու նյութերից հղումներ անելիս դրանք, որպես կանոն, թարգմանում էին պոլսահայերենի, ինչպես կթարգմանեին, ասենք, ֆրանսերենից կամ թուրքերենից¹:

Սակայն հակառակ Կ. Պոլսի լրագրերի մաքրամոլության՝ ինքը՝ թուրքահայ ժողովուրդը, հատկապես հայկական նահանգներում մեծ հակում ուներ յուրացնելու ուսանող լեզուն, և դա նրան հաջողվում էր: Նկատված էր, որ թուրքահայը, գալով Կովկաս և այնտեղ մնալով մեկ-երկու տարի, յուրացնում էր տեղացի հայերի լեզուն ու խոսելաոճը և ի վերջո թողնելով արևմտահայ աշխարհաբարը՝ խոսում է արևելահայ աշխարհաբարով, մինչդեռ երբ ուսանող մտավորականը գալիս էր Պոլիս կամ հայկական որևէ նահանգ ու այդտեղ մնում երկար ժամանակ, միևնույնն է, չէր խոսում թուրքահայոց լեզվով, ավելին՝ չէր գործածում որևէ թուրքահայ բառ:

Արդյո՞ք հնարավոր էր դարեր հետո նորից վերստեղծել ժողովրդի միասնական լեզու: Այս հարցին դրական պատասխան տվողներն այն ժամանակ չնչին փոքրամասնություն էին կազմում, իսկ հակառակ տեսակետ ունեցողները հայոց միասնական լեզվի վերականգնման հնարավորությունը մեկնաբանում էին այսպես. լեզուն ժառանգություն է նախնիներից և կերտվել է ոչ թե մի օրից մյուսը, այլ դարերի ընթացքում, աստիճանաբար, դանդաղ, այսինքն՝ ոչ հեղափոխական ճանապարհով: Ընդհանրապես, լեզուները միաձուլելու բոլոր փորձերն անցյալում պարպա ջանքեր են եղել, անարդյունք և անօգուտ: Անհնար է դրանք միավորել արհեստականորեն: Նույնը վերաբերում է հայ ժողովրդի երկու հատվածների լեզուներին:

Անդրադառնալով ընդհանուր հայկազյան լեզվի ստեղծման հնարավորության հարցին՝ Արչակ Չոպանյանը գրում էր. «Գեղեցիկ ցանկություն՝ բայց անիրագործելի: Երկուքը պիտի մնան, եւ իրենց ուրոյն ճամբուն մէջ զարգանան հետզհետէ: Ինչ որ կա-րելի է, այն է որ երկու կողմի գրագէտները՝ իրարու գործն աւելի

¹ Հայոց երկու լեզուների առաջացման ու ձևավորման մասին տե՛ս «Հորիզոն», № 53, 13 մարտի, № 54, 14 մարտի 1912 թ.:

մօտանց ճանչնալով փոխադարձաբար մէկ բարբառը միւսէն ստանայ այն ասութիւնները, բառերը, ձեւերը որոնց համարժէքը իւրաքանչիւրը չունի իր մէջ. կարող են նաեւ օգտուիլ իրարու յաջող ջանքերէն դէպ ի նրբացում, երանգաւորում: Ատոր համար մասնաւորապէս անհրաժեշտ է որ երկու կողմի գրագէտները շատ աւելի կանոնաւոր, տեւական ու մօտիկ յարաբերութեան մէջ ըլլան իրարու հետ: Յանկալի է որ երկու կողմէն գրագէտները միշտ իրարու հետ փոխանակեն իրենց գործերը»¹:

Այս տեսակետի պաշտպաններն ասում էին նաև, որ բաղձալի նպատակին հասնելու համար նախ պետք է երեսով շրջվել դեպի միջնադարը, իր ողջ ծավալով բարձրացնել ժամանակի հայութեան հասարակաց և մատենագիտական լեզուն՝ գրաբարը, որի հարուստ հենքի վրա են ի վերջո սերվել արևելահայ և արևմտահայ գրական լեզուները: Բայց արդյո՞ք դա հնարավոր է ազգի քաղաքական կյանքի 20-րդ դարի սկզբի ծայրահեղ աննպաստ պայմաններում, հարց էին տալիս նրանք և եզրահանգում՝ ոչ միայն հնարավոր չէ, այլև աննպատակահարմար է:

Թուրքիայում ապրող հայերի ընտանեկան լեզուն առատ էր թուրքերեն բառերով ու ոճական դարձվածքներով, իսկ Հայաստանի առանձին վայրերում, բացի թուրքերենից, նաև տասնյակ քրդերեն բառերով:

19-րդ դարի երկրորդ կեսին ինչպես թուրքահայ, այնպես էլ ռուսահայ լեզուներում տեղի էին ունեցել դրական զգալի փոփոխություններ:

1850-ական թվականներից սկսած՝ թուրքահայ մտավորականությունը պատմական դեր էր ստանձնել: Նրա թափած ջանքերով զարգացման նոր աստիճանի բարձրացավ հայոց դպրոցական-կրթական գործը, որի շնորհիվ դարի երկրորդ կեսին հնարավոր դարձավ մասնավորապէս Կ. Պոլսի և Իզմիրի հայութեան լեզվի մեջ իսկական հեղաշրջում կատարել՝ այնտեղից դուրս մղելով հայերի ականջին խորթ այլազգի բառերը՝ թուրքերենի համատարած ազդեցությունից ազատագրելով ազգային լեզուն:

¹ «Անահիտ», № 11-12, մարտ-ապրիլ, 1909-1910, էջ 249:

Դպրոցներում մաքուր հայեցի լեզվով մատաղ սերնդի կրթութեան ազդեցությունն իրեն ուշացնել չտվեց: Դպրոցական հայ սերունդը տներում արդեն խոսում էր հայերեն, որը, բնականաբար, փոխանցում էր ընտանիքի մյուս անդամներին:

Ինչ վերաբերում էր ռուսահայերին, նրանք ավելի քիչ էին հոգ տանում ազգային լեզուն անաղարտ պահելու մասին:

Հանրահայտ ճշմարտություն է, որ ռուսաց լեզուն և մշակույթը բարերար ազդեցություն էին գործում կայսրության այլազգի ժողովուրդների հոգևոր-մշակութային զարգացման վրա: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միավորելուց հետո այստեղի հայությունը նույնպես ընդգրկվեց համառուսաստանյան առաջադեմ հասարակական-քաղաքական կյանքի մեջ՝ կրելով ռուսական մշակույթի բարերար ազդեցությունը:

Այդ դրական երևույթին զուգահեռ, հատկապես 19-րդ դարի 80-ական թվականներից սկսած, ցարիզմը որդեգրել և վարում էր կայսրության այլազգիների ոչ բռնի ձուլման քաղաքականություն՝ որպես հիմնական գործիք օգտագործելով ռուսաց լեզուն: Վեիկոուսական մեծապետականության դրսևորման գլխավոր միջոցներից մեկը դարձավ կայսրության այլազգի տարածքներում ռուսական դպրոցների ցանցի ստեղծումը և աստիճանաբար ընդլայնումը, որը, բնականաբար, խոչընդոտում էր ազգային կրթության ու դաստիարակության գործը: Այլազգի, այդ թվում հայ, մատաղ սերունդը աստիճանաբար հեռանում էր իր ազգային արմատներից:

Հայոց արևելյան և արևմտյան հատվածների աշխարհաբարը, նրանց ուղղագրությունն ու քերականությունը բավական խոշոր տարբերություններ ունեին: Դա կարծես քիչ էր, ռուսահայերը ուղղագրության խնդրում երկփեղկված էին: Ռուսահայ շատ գրողներ ու թերթեր որդեգրել էին իրարից միանգամայն տարբեր կանոններ:

Ռուսահայ և թուրքահայ գատված լեզուների մերձեցման ճանապարհին կային տարաբնույթ ուրիշ արգելքներ ևս: Դրանցից էին, օրինակ՝ ժողովրդի երկու հատվածներում գոյություն ունեցող տեղական գավառաբարբառների խիստ տարբերությունները:

Մեկ դարից ավելի հայ մտավորականությունը զբաղված էր բարբառների տարբերությունը վերացնելու հնարավորությունների հարցով: Այդ ամբողջ ժամանակներում հայկական մամուլը շատ ջանք էր թափել բարբառների միջև կապ հաստատելու և դրանք իրար մերձեցնելու խնդրով: Եվ ահա այժմ՝ 1914 թվականին, չլուծված այդ հարցը կրկին դարձել էր բանասերների, լեզվաբանների, գրողների սեռուս հետաքրքրություն առարկան, թեև նրանցից ոչ ոք այդպես էլ չէր կարողանում դարման գտնել բարբառների խառնիճաղանջը մեղմելու համար*:

Բայց կային գործնական խնդիրներ, որոնց լուծման ուղղություն մը կարելի էր որոշ դրական արդյունքների հասնել: Դրանցից էին օրինակ՝ հնչյունաբանություն և, մասնավորապես, տառադարձություն խնդիրները, որոնք անթույլատրելիության հասնող բազմազանություն էին առաջ բերում թե՛ բանավոր և թե՛ գրավոր խոսքում (օրինակ՝ Փարիզ, Բարիզ, Պարիզ և այլն): Առայժմ հնարավորություն կար և՛ ուսաստացի, և՛ թուրքահայոց դպրոցներին, մամուլի օրգաններին, և՛ գրահրատարակչություններին ստիպել միատեսակ հնչեցնել և տպագրել շատ բառեր, հատկապես աշխարհագրական անուններ:

Թեև վիճակը, ցավոք, հուսադրող չէր, բայց, այնուամենայնիվ, կար սփոփանք: Շատերը համոզված էին, որ թուրքահայաստանը ևս ի վերջո միանալու է ուսական կայսրությանը, և այդ ճանապարհով ամբողջանանալու է Հայաստանը: Այդ ժամանակ հայոց երկու հատվածների լեզուների աստիճանաբար մերձեցման պայմաններ կստեղծվեին:

Ս. Վրացյանին գրած վերոհիշյալ նամակում կովկասում ճամփորդած Ա. Վոսաճյանը գրում էր. «Անհաճոյ մասը տպաւորութիւններուս - այն արագ ապագայնացումն է մտաւորական շարքերու, որ խորապէս կը վիրաւորէ ամէն զգայուն հայ: Մեր ընկերներու՝ Վարանդեանի եւ ուրիշներու երեխաներն

* Հայոց պետականության վերականգնման պայմաններում գիտական հիմքերի վրա դրվեցին աշխարհաբարի երկու ճյուղերի փոխընդման և մերձեցման խնդիրները:

անգամ ուսերէն կը խօսին իրենց դաշնակցական մայրերու ներկայութեանը ...!»:»:

Ինչ վերաբերում է կովկասի գյուղական հայ համայնքներում գործածվող ժողովրդական լեզվին, ապա այն հայերենի, թուրքերենի, պարսկերենի և ուսերենի խառնուրդ էր:

Ընդհանուր եզրակացությունն այն էր, որ ազգային երկու լեզուների արագ մերձեցումը հնարավոր կլինի միայն այն ժամանակ, եթե քաղաքական պայմանները նպաստավոր լինեն, այսինքն՝ եթե հայ ժողովուրդն ունենա իր ազգային պետականությունը:

Եթե լեզվական ու մշակութային միասնականություն հասնելը երկարատև ժամանակաշրջանի խնդիր էր, ապա հայության երկու հատվածների միջև մի շարք բնագավառներում ներդաշնակություն ստեղծելը կարճատև ուղղաճակով էր:

Հայ ազգային իշխանությունների, մտավորականության գլխավոր մտահոգություններից մեկը ազգային կրթական համակարգի արմատական վերակառուցումն էր, դպրոցական գործը կարգի բերելը, Ռուսաստանի թե թուրքիայի Հայաբնակ քաղաքներում ու գյուղերում ազգային դպրոցների լայն ցանցի ստեղծումը: Հայ դպրոցը ազգային ներքին կյանքի բովանդակության առանցքն էր:

Բայց նախքան համազգային մասշտաբով օրինակելի կրթական գործին զարկ տալը պետք էր արմատապես բարելավել ազգի երկու հատվածների ուսումնական գործընթացը:

Ազգի երկու հատվածներում դպրոցական գործն անմխիթար վիճակում էր: Թեև թե՛ ուսաստացիության և թե՛ թուրքահայության կրթական մակարդակը անհամեմատ բարձր էր հարևան ժողովուրդների, բայց այն մեծապես հետ էր մնում ուսականից, առավել ևս՝ եվրոպականից: Դրա վկայությունն էին հատկապես աշակերտության փոքրաթիվությունը ու առաջադիմության պակասը, դպրոցների բարեկարգության անբավարար մակար-

¹ «Վեճ», № 1, հունվար-ապրիլ, 1935, էջ 96:

դակը և նյութական անապահովությունը*։ Այդ վիճակը չէր բավարարում ոչ միայն հայկական ազգային-կրոնական իշխանություններին, այլև ռուսական պաշտոնական շրջաններին։ «Ռուսահայերն ու թուրքահայերը, շեշտում էր դեսպան Գիրսը, պետք է միահամուռ ջանքերով առաջ մղեն ազգային մշակույթի զարգացման գործը, արմատավորելով դպրոցներ ու լուսավորական հիմնարկներ...»¹։

Ազգի երկու հատվածներում դպրոցական գործի բարելավմանը մեծապես կարող էին նպաստել մանկավարժների փոխադարձ այցելությունները, որոնք հնարավորություն կտային ոչ միայն նորամուծություններ ու փորձի փոխանակումներ կատարել, այլև կնպաստեին երկու կողմերի ուսուցչական կոլեկտիվների ու աշակերտների մերձեցմանը, հետևապես գոնե մի քայլ կլինեք ազգի երկու հատվածների մերձեցման ճանապարհին։

Անցյալում՝ Աբդուլ Համիդի ժամանակներում, ռուսահայ վարժարաններում կրթված ու դաստիարակված սահմանափակ թվով անձեր գալիս էին հիմնականում Կ. Պոլիս և Իզմիր, ինչպես նաև Թուրքահայաստան և միանում տեղի կրթական գործին։

* 1908 թ. վերակազմված Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը (ԿՀԲԸ), կամենալով ի մոտո ծանոթանալ կովկասահայի գրագիտության մակարդակին և հայ եկեղեցական-ծխական դպրոցների գործունեությանը, հավաքել էր տեղեկություններ, որոնցից երևում էր, որ կային ամբողջ հայաբնակ շրջաններ, ուր 20-25 հայկական գյուղերից հազիվ 2-3-ում կա ծխական դպրոց, իսկ 40-50 հայաբնակ գյուղերից միայն 5-6-ում կային ծխական մեկդասյա դպրոցներ, այն էլ՝ ոչ բարեկարգ վիճակում։ Ընդհանուր պատկերն այն էր, որ Կովկասի հայերի շրջանում գրագիտությունը շատ անմխիթար վիճակում էր։ Գրագետների թիվը տոկոսի վերածելով՝ երևում էր, որ արական սեռի հազիվ 4-5%-ն է գրագետ, իսկ իգական սեռի՝ 2-3%-ը։ Ահա սա էր կովկասահայի գրագիտության իրական պատկերը։ Այդ ժամանակվանից հինգ տարի հետո՝ 1913 թ., պատկերը առանձնապես չէր փոխվել (ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 614, թթ. 8-9)։ Միասնական գրական լեզու ստեղծելու գործում կրթության բարեփոխության հարցերը լայնորեն քննարկվում էին հայ գրերի գյուտի հորեյանական օրերին, ցույց էր տրվում ազգային կրթության ողբալի վիճակը հայության տարբեր հատվածներում։

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 65, թ. 1։

Լինում էին դեպքեր, երբ թուրքահայ միջավայրում կրթություն ստացած և զարգացած անձինք, թեև աննշան թվով, գործում էին Կովկասի հայկական դպրոցներում։

Պարզ էր, որ այդպիսի սահմանափակ շփումները չէին կարող քիչ թե շատ դրական նշանակություն ունենալ երկու կողմերի դպրոցական գործի զարգացման համար։

1908 թ. օսմանյան հեղափոխությունից հետո նույնպես զգալի թվով կովկասահայ ուսուցիչներ անցան Կ. Պոլիս և սկսեցին աշխատել այնտեղի հայկական վարժարաններում, բայց արդյունքները հուսադրող չէին, քանի որ ծանոթ չլինելով թուրքահայոց կյանքի պայմաններին ու պահանջներին՝ նրանք, չնչին բացառություններով, չկարողացան հարմարվել միջավայրին, իսկ մատուցած գիտելիքները, լինելով անհամապատասխան տեղի պայմաններին, առաջ էր բերում արդարացի դժգոհություններ։

Դա պատահական չէր, քանզի ռուսահայերի կրթական հաստատություններում կիրառվող մեթոդները ռուսական էին, որոնք, իրենց հերթին, փոխառված էին գերմանական կրթական սիստեմից՝ ծանր, լուրջ ու պաղարյուն։

Ինչ վերաբերում է դպրոցներին, նշենք, որ դրանք հիմնականում գտնվում էին ֆրանսիական կրթական սիստեմի ազդեցության տակ՝ ավելի ազատամիտ, թեթև ու մատչելի։ 19-րդ դարի վերջերից փորձեր արվեցին Կ. Պոլիսի հայկական դպրոցների վրա տարածել կրթության չվեյցարական մոդելը, որը հար և նման էր գերմանականին, բայց դա չհաջողվեց, քանի որ թուրքահայերը շարունակում էին ամենաջերմ զգացմունքներ տածել Ֆրանսիայի հանդեպ, խանդավառվել նրա մարդասիրական և ազատասիրական գաղափարներով։

Այժմ ավելի կենսական էր դառնում հայության երկու հատվածների դպրոցական համակարգերի մոտեցումը։ Այդ նպատակով բազմաթիվ առաջարկներ էին արվում. մեծ թվով ուսուցիչներ ու կրթության մշակներ գնային Հայաստան՝ այնտեղ տեղականորեն աշխատելու համար, միաժամանակ՝ թուրքահայ ուսուցիչներ գային Կովկաս և աշխատեին տեղի հայկական դպրոցներում։ Բայց գալիքում հազիվ թե հնարավոր լինեք

ակնկալել դրական արդյունքներ: Միամտություն էր մտածել, թե թուրք կառավարությունը կարտոներ թուրքահայ ուսուցիչների մեծաթիվ խմբերի ելքը թուրքիայի սահմաններից դուրս և կովկասահայ մեծաթիվ ուսուցիչների ընդունումը: Նույնպիսի վերաբերմունք, անշուշտ, պիտի դրսևորեին նաև ռուսական իշխանությունները:

Ուրեմն անհրաժեշտ էր փնտրել նոր ուղիներ: Կովկասահայ շատ գործիչներ կարծում էին, որ ուսուցիչներ պետք է ուղարկել ոչ թե հիմնականում Կ. Պոլսի և այլ քաղաքների հայկական դպրոցներ, այլ ժողովրդական ներքին խավերի մեջ, որպեսզի կարողանան ներգործել նրանց ընդհանուր զարգացման վրա, միաժամանակ դասավանդեն ծխական դպրոցներում: Նրանք համոզված էին, որ փոքր տարիքի երեխաներին ավելի հեշտ կլինի հաղորդակից դարձնել ռուսահայ ուսուցման մեթոդներն ու նրանց նախապատրաստել ուսումը շարունակելու ռուսական հայտնի կրթական հաստատություններում՝ էջմիածնի Գևորգյան ձեմարանում, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, Երևանի ուսուցչական սեմինարիայում, նույնիսկ Մոսկվայի Լազարյան ձեմարանում:

Հայության երկու հատվածների երիտասարդների չփման տեսակետից ավելի նպաստավոր էին աշխարհիկ ուսումնական հաստատությունների պայմանները: Ինչ վերաբերում էր Գևորգյան ձեմարանին, ապա այստեղ թուրքահայ ուսանողները, ապրելով էջմիածնի վանքի շրջափակում, քիչ առիթներ էին ունենում չփվելու ռուսահայոց բարքերին և հայրենիք էին վերադառնում համարյա անտեղյակ կովկասահայ կյանքից:

Մյուս կողմից, ռուսահայ դպրոցներում սովորող թուրքահայ երիտասարդների բացարձակ մեծամասնությունը կրթությունը լրացնելուց հետո ոչ թե վերադառնում էր իր ծննդավայրը, այլ գործելու ասպարեզ էր գտնում Թիֆլիսում, Բաքվում, Երևանում, Հյուսիսային Կովկասում, Ղրիմում և այլուր:

Ինչպես տեսնում ենք, հայության երկու հատվածներում առկա կրթության միակերպության ձգտումը հանդիպում էր բազմաթիվ խոչընդոտների ու արգելքների, որոնց վերացման հեռանկարը չէր երևում:

Այդ էր պատճառը, որ երկու կողմերի շատ հայ գործիչներ կրթության միակերպության հասնելու հիմնական միջոցը համարում էին ոչ թե ուսուցիչների, ուսանողների և աշակերտների փոխանակումը, դպրոցական ծրագրերի նույնացումը:

Ինչպես թուրքիայի, այնպես էլ Ռուսաստանի հայ կրթական հաստատությունները հիմնականում գտնվում էին հայոց ազգային հոգևոր իշխանությունների անմիջական հսկողության տակ, և այդ հանգամանքը մեծապես կարող էր հեշտացնել դպրոցական ծրագրերի նույնացումը: Միայն անհրաժեշտ էր դասավանդվող առարկաների ուսումնական ծրագրեր ստեղծելու համար քայլեր ձեռնարկել փոխադարձ համաձայնություններ մանկավարժական խառը հանձնախմբեր կազմելու համար:

Հայկական բարենորոգումների իրագործման առնչությամբ առաջ էր գալիս թուրքահայաստանում դպրոցական ցանցը արագ ընդլայնելու պահանջը:

1914 թ. ապրիլի 26-ին Գևորգ V Սուրենյանց կաթողիկոսը հայ ազգային իշխանություններին, կուսակցություններին ու անհատ անձանց հատուկ կոնդակով կոչ արեց ջանք ու եռանդ չխնայել թուրքահայության շրջանում կրթական գործն արմատապես բարելավելու համար: Նա առաջարկում էր նորանոր տարրական և միջնակարգ դպրոցներ բացելուն զուգընթաց կարևորել երկրագործական և առևտրական ուսումնարաններ հիմնելը¹:

Կաթողիկոսի կոչին անմիջապես արձագանքեց Պողոս Նուբարը: Ըստ որում, նա և նրա գլխավորած ՀԲԸ միությունը չեչտըղնում էին բարձրորակ երկրագործական և արհեստագործական բազմաթիվ վարժարաններ բացելու վրա: Բարեգործականներին պատկանող 41 վարժարանների թիվը նախատեսվում էր շատ կարճ ժամկետում կրկնապատկել:

1913 թ. մայիսի 3-6-ը Թիֆլիսում Ազգային բյուրոյի հրավիրած երկրորդ համագումարը քննության առավ թուրքահայաստանում դպրոցական ցանցի ընդլայնման հարցերը: Ելույթ

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 70, թթ. 2-4:

ունեցողները գտնում էին, որ «համագումարը պետք է դրական որոշում տա այդ խնդրին, քանի որ մեր որոշումը կունենա նաև բարոյական մեծ նշանակություն»¹: Նկատի առնելով Երկրի անմիջական կարիքները՝ նրանք ճիշտ էին համարում այնտեղ առաջին հերթին հոգ տանել գյուղատնտեսական կրթությունը զարգացնելու մասին:

Արձագանքելով կաթողիկոսի՝ ապրիլի 26-ի կոնդակին՝ համագումարը ուսաստանյ ազգային բոլոր իշխանություններին կոչ արեց ջանք ու եռանդ չխնայել համազգային այդ կարևորագույն գործն առաջ մղելու համար²:

Մամուլը բարձրաձայնում էր, որ վրա է հասել ժամանակը, երբ բոլոր հայ ազգային կուսակցությունները պետք է միանան Թուրքահայաստանի վերանորոգման մի ընդհանուր ծրագրի շուրջ, որպեսզի հնարավոր լինի պատրաստել բարոյականի իմաստասիրական ըմբռնումով տոգորված ապագա սերունդ, և այդ նպատակով հարկավոր է հիմնապես բարեփոխել հայկական նահանգների կրթական վիճակը:

«Ազգ» թերթը գրում էր, որ ներկայումս կրթական ոլորտի ամենակարևոր խնդիրը ձեռնհաս ուսուցչական մարմիններ ունենալն է, հետևապես «մեր առաջին գործունեությունը ըլլալու է հայ ցեղը դաստիարակելու ունակ ուսուցիչներ պատրաստել, որոնց չնորհիվ բարոյականի մաքուր եւ ընդհանուր շունչ մը ներարկուի ցեղին մատաղ սերունդին»³: Նրանք նաև կոչված էին լինելու Հայաստանում հաստատել վարժապետանոցներ, որոնցում պիտի պատրաստվեին գյուղական դպրոցների ուսուցիչներ:

Ազգային իշխանությունների և կուսակցությունների երկրորդ կրթական խնդիրը պետք է լիներ համալսարանական կրթություն ստանալու համար ամենաընդունակ և երիտասարդներին ճամփել Եվրոպա և Ամերիկա, որոնք պարտավոր պետք է

¹ ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 216, թթ. 5-8:

² Նույն տեղում, թ. 4:

³ «Ազգ» (Բոստոն), № 36, 25 փետրվարի 1914 թ.:

լինեին ուսումնառությունը վերջացնելուց հետո անմիջապես վերադառնալ հայրենիք՝ իրենց ստացած գիտելիքները և բարոյականության լույսը փոխանցելու հայ նոր սերնդին:

Այսպիսով, մի կողմից վարժապետանոցներում, մյուս կողմից արևմտյան երկրներում կրթություն ստացած հայորդիներն ունակ կլինեին ամբողջովին բարեփոխելու Թուրքահայությունը և ավետելու ազգային վերածննդի արշալույսը:

Խոսքն այն մասին էր, որ հայությունը պետք է ունենար իր բարձրակարգ մտավորականությունը, որը մշակում է ազգային-հասարակական իդեալներ, արթուն ու գիտակից պահպան է կանգնում իր ազգի իրավունքներին, արթնացնում է նրա քնած գանգվածներին:

Թուրքահայաստանի հայ դպրոցների շատ փոքր մասը մինչ այդ բացվել և գործում էր ուսաստանյ մեծահարուստների նվիրատվությունների և կովկասահայ բարեգործական հաստատությունների կազմակերպած հանգանակությունների միջոցով: Դրա վառ օրինակներից մեկը Կարինի Սանասարյան հայտնի դպրոցն էր, որը նշանակալի դեր էր կատարում Թուրքահայոց կյանքում:

Ինչ վերաբերում է Ռուսահայաստանին, ապա այն Թուրքիայի հայերից աջակցություն ստանալու որևէ ակնկալիք չունեի, քանի որ նրանց հիմնական գանգվածները տնտեսապես լիակատար քայքայվածություն եղրին էին, բացի այդ՝ Թուրքահայության շրջանում այդպիսի ավանդույթ չէր ստեղծվել:

Կ. Պոլսի և ծովեզրյա ուրիշ վաճառաչաճ քաղաքների հարուստ հայերը հազիվ կարողանում էին հոգալ տեղի ազգային դպրոցների կարիքները, բայց ի վիճակի չէին բավարար չափով ձեռք մեկնելու Թուրքահայաստանի կրթական գործին: Իսկ գավառն իր միջոցներով գրեթե ոչինչ չէր կարող անել դպրոցական գործի զարգացման համար:

Հայ բարեգործական ընդհանուր միությունը և Միացյալը շատ լավ կազմակերպված մարմիններ էին, բայց նրանք նույնպես այնքան միջոցներ չունեին, որ կարողանային արմատական բեկում մտցնել Հայաստանի կրթական գործում: Բացի այդ, սովյալ ժամանակում այդ երկու բարեգործական կազմակերպու-

թյունները, ինչպես ասվեց, ուզում էին իրենց գումարները հիմնականում ուղղել երկրում տնտեսական ձեռնարկների իրականացմանը:

Ուրեմն, մնում էր հուսալ, որ օգնություն կգա դրսից:

Արտասահմանի այս կամ այն գաղթավայրում դեպքից դեպք էին կազմակերպվում հանգանակություններ: ԱՄՆ-ում լույս տեսնող ՀՅԴ «Հայրենիք», ՄԴ Հնչակյան «Երիտասարդ Հայաստան», վերակազմյալ Հնչակյանների «Զայն Հայրենյաց» թերթերն իրենց էջերում ամերիկահայությունը պարբերաբար կոչեր էին հղում դրամական օգնություն հասցնել Երկրին՝ այնտեղ դպրոցներ բացելու համար, բայց արդյունքը սպասածից շատ համեստ էր լինում: Գաղթական հայերի բացարձակ մեծամասնությունը, մի կերպ պահպանելով իր գոյությունը, հազիվ կարողանում է որոշ օգնություն հասցնել Հայրենիքում մնացած հարազատներին:

Շատերը հույս ունեին, որ, այնուամենայնիվ, Հայաստանին աջակից կլինեն ունևոր հայերը: Եվ իրոք, երկրում ստացվում էին որոշ գումարներ՝ հիմնականում կտակների տեսքով:

Այսպես, 1914 թ. մարտի 2-ին Նյու Յորքի դատարանը վավերացրել էր հանգուցյալ Սարգիս Թելֆեյանի կտակը, որով նա 100.000 դոլար էր թողել իր ժողովրդին: Կտակի համաձայն՝ այդ գումարը պետք է հատկացվեր Նարբերդի քոլեջին, Կեսարիայի ամերիկյան հիվանդանոցին, Պարտիզակի, Աղաբազարի, Պրուսայի վարժարաններին և հայկական այլ հաստատությունները¹:

Բայց հայ հանրային հաստատությունների համար գաղթավայրերից ստացված գումարները չնչին էին ծով կարիքների դիմաց: Եվ մարդկանց հայացքը դարձյալ ուղղվում էր դեպի Կովկաս: Նրանք չէին սխալվում:

Բարենորոգումների ծրագրի ընդունումը մեծ ոգևորություն էր առաջ բերել ռուսահայ կապիտալիստների մի մասի մոտ, որոնք պատրաստ էին իրենց իշխանավայել նվիրատվություններով նպաստ բերելու թուրքահայության հոգևոր վերածննդի,

մասնավորապես նրա մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության կազմակերպման գործին:

Թիֆլիսահայ գործիչներից ոմանք քաղաքի հայ դրամատերերին կոչ էին անում առաջինը Փինանսապես օգնել Կ. Պոլսի ծանր վիճակում գտնվող Ազգային կենտրոնական վարժարանին, որը համարվում էր «Թուրքիո հայոց մեծագույն կրթարանը»: Այն ներսես Վարժապետյան պատրիարքի կողմից հիմնվել էր Հայաստանի դպրոցներին ուսուցիչներ պատրաստելու համար, բայց այժմ միջոցներ չունենալու պատճառով կանգնել էր փակվելու վտանգի առջև: «Ինչ գնով ուզում է լինի՝ Կենտրոնականը պետք է հարատևի» - այս էր օրվա կարգախոսներից մեկը:

Ամենայն հայոց կաթողիկոսի հովանավորության տակ գործող դպրոցական ֆոնդը համալրվեց մեծ թվով կամավոր մուծումներով, որոնց զգալի մասն անանուն էր: 1914 թ. փետրվարի սկզբներից մինչև մայիսի վերջը Ս. էջմիածնի սինոդում ստացվել էր 142.646 ռուբլի, ինչպես նաև 94.600 ռուբլու արժեթղթեր, որոնք փոխանցվել էին Թիֆլիսի նպաստամատույց հանձնաժողովին: Հայոց կաթողիկոսը կարգադրել էր հավաքված միջոցները 1914/1915 ուսումնական տարում գործադրել բացառապես թուրքահայաստանի չքավոր եկեղեցական-ծխական դպրոցների պահպանության և նորերի բացման համար այնպիսի գյուղերում, որոնց հայ համայնքները դուրկ էին նյութական միջոցներից և անկարող էին իրենց ուժերով պահպանել դպրոցները¹:

Մյուս կողմից՝ Պետերբուրգի հայ եկեղեցական խորհուրդը էջմիածնի դպրոցական դրամագլխին էր տրամադրել 10.000 ռուբլի, որի մեծ մասը հատկացվել էր Կարնո Սանասարյանին, Վանի Կենտրոնականին, Մուշի և Բիթլիսի ուսումնական խորհուրդներին²:

Կովկասահայ բազմաթիվ ականավոր առանձին անհատներ մտածում էին, թե ինչով կարող են անձնապես օգտակար լինել տառապյալ հայրենիքին: Կոմիտասը ոգևորված ծրագրել էր

¹ Տե՛ս «Դայլայիկ», № 26, 9 մարտի 1914 թ.:

¹ ՀԱԱ, ֆ. 399, ց. 1, գ. 1073, թթ. 10-11 և շրջ.:

² Տե՛ս «Աւետաբեր», № 21, 23 մայիսի 1913 թ., նաև՝ տե՛ս «Մշակ», № 94, 3 մայիսի 1914 թ.:

երաժշտական դպրոց բացել Թուրքահայաստանի կենտրոններին մեկուսացնելու, Զարիֆյանը փորձում էր հայկական թատրոն բացել Վանում, հայ մարզիկները պատրաստվում էին վերականգնել Նավասարդյան խաղերը երկրում և այլն¹: Ուրիշները խիստ կարևոր էին համարում այնտեղ մի բարձրագույն դպրոցի ստեղծումը: Իսկ դա հնարավոր կլիներ միայն ռուսահայերի դրամական նվիրատվություններով:

Ռուսական կառավարությունը 1913 թ. որոշել էր Վրաստանի գլխավոր քաղաք Թիֆլիսում 1914 թ. Անդրկովկասի համար հիմնել մի բարձրագույն դպրոց՝ պոլիտեխնիկում: Թեև թիֆլիսահայ գործիչները դեմ չէին դրան, ավելին՝ ամեն կերպ նպաստում էին այդ ծրագրի իրականացմանը, բայց դա չէր լուծում Երևանյան և Ելիզավետպոլյան նահանգների հայ երիտասարդների բարձրագույն կրթություն ստանալու պահանջը: Ուստի հայերն ուզում էին ունենալ իրենց ազգային աշխարհիկ եթե ոչ բարձրագույն, ապա գոնե բարձրակարգ կրթական հաստատությունը:

Քաջ գիտակցելով, որ ռուսական կառավարությունը հազիվ թե նորից ֆինանսական միջոցներ հատկացնի այս անգամ Շուշում կամ Երևանում անդրկովկասյան երկրորդ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն բացելու համար, հայերը փափագում էին կազմակերպել ժողովրդական հանգանակություն և հավաքած գումարներով ստեղծել իրենց ազգային բարձրակարգ դպրոցը: Ըստ որում, հայ գործիչների բացարձակ մեծամասնությունն այդ պահին միակամ էր. այն պետք է հիմնել Թուրքահայաստանում՝ Տարոն աշխարհում, ուր շատ դարեր շարունակ գործել էին բազմաթիվ դպրոցներ, ապրել ու ստեղծագործել էին հայ մշակույթի շատ նշանավոր դեմքեր:

Իսկ ինչպիսի՞ն պետք է լիներ այդ ուսումնական հաստատությունը:

Ոմանք նույնիսկ գտնում էին, որ Թուրքահայաստանում բացվելիք հայկական կրթական դպրոցի համար կարող է օրի-

¹ Տե՛ս «Վեմ», № 1, հունվար-ապրիլ, 1935, էջ 33:

նակ ծառայել Մոսկվայի Լազարյան ճեմարանը^{*}: Իսկ դա չատերին անհնար էր թվում: Մնունդ առնելով 19-րդ դարի սկզբին՝ այդ բարձրագույն ուսումնական հաստատությունը լուսատու Ջահ էր եղել մահմեդական լծից ազատագրված կովկասահայության համար, մեկ դար շարունակ անգնահատելի դեր կատարել ողջ ռուսահայության ազգային-մշակութային կյանքում: Նպատակադրված լինելով վերակրթել ազգը և նրան տանել եվրոպական մշակույթի ուղիով՝ Լազարյան ճեմարանը կրթություն էր տվել հայագիտության, հայ գրականության, դպրոցական գործի, մանկավարժության ասպարեզի տասնյակ բարձրակարգ մտավորական ուժերի՝ Մկրտիչ Համբարձումյան, Քերովբե Պատկանյան, Գամառ-Քաթիպա, Սմբատ Շահազիզ, Եղյան և Շանչյան, Մանդինյան ու Բահաթրյան, էլի ուրիշ շատ նշանավոր դեմքեր: Լազարյան ճեմարանը իր որակյալ կրթությամբ, լայն ընդգրկումով ու նշանակությամբ չէր կարող նախօրինակ լինել նոր կազմակերպվելիք Թուրքահայոց բարձր դպրոցի համար, քանի որ նրա նշանաձողը չափազանց բարձր էր: Բացի այդ, ճեմարանը գործել էր առաջավոր քրիստոնեական մի երկրում, ինչ-

^{*} Այդ ժամանակ Լազարյան ճեմարանը հասել էր իր հարյուրամյակի չեմին և շարունակում էր արգասաբեր գործունեությունը, ուսում էր տալիս հայ պատանիներին ու երիտասարդներին, նրանց առջև բացում համալսարանական ուղին: Ճեմարանի 100-ամյակը մեծ շուքով տոնելու համար Մոսկվայում ստեղծվել էր Հոբեյանական հանձնաժողով՝ Ստեփան Մամիկոնյանի գլխավորությամբ: 1913 թ. մայիսի 26-ին հանձնաժողովը Մոսկվայից հատուկ պատվիրակություն է ուղարկում Ս. Էջմիածին, որը, հունիսի 1-ին ներկայանալով Վեհափառ Գևորգ V-ին, նրան մատուցում է հանձնաժողովի դիմումը, ուր ասված էր, որ 1914 թ. մայիսի 10-ին լրանում է հայոց անդրանիկ կանոնավոր դպրոցի՝ Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի 100-ամյակը, որը նույն թվականի դեկտեմբերի 9-ին լայնորեն տոնվելու է Մոսկվայում: Հոբեյանական հանձնաժողովը Վեհափառին խնդրում էր իր հայրապետական հովանավորության տակ վերցնել Լազարյան ճեմարանի հարյուրամյակի տոնախմբության գործը: Թեև ակոխելով իր գոյության երկրորդ հարյուրամյակը՝ Լազարյան ճեմարանը պատրաստ էր կրկնակի եռանդով շարունակելու իր մեծ առաքելությունը, բայց դա նրան չհաջողվեց՝ քաղաքական իրադարձություններն աննպաստ դարգանալու պատճառով:

պիսին Ռուսաստանն էր, որը հովանավորել էր ռուսահայության տնտեսական ու մշակութային առաջընթացը, իսկ Թուրքահայաստանում ստեղծվելիք բարձր դպրոցը պիտի գործեր խիստ անբարենպաստ պայմաններում՝ Թուրքական իշխանությունների ամենօրյա դաժան վերահսկողության և մուսուլման բնակչության թշնամական հայացքի տակ: Ուստի այդ կրթական հաստատությունն իր առջև պետք է դնել շատ համեստ նպատակներ՝ հիմնականում պատրաստել մանկավարժներ հայկական դպրոցների համար և գյուղատնտեսության մասնագետներ՝ հայ գյուղը բարձրացնելու համար:

Բայց այդ պահին ժողովրդական հանգանակության կարիք չգզացվեց: Էջմիածնում վերհիշեցին Ավետիս Ղուկասյանի կտակի մասին:

Շուշեցի վաճառական Ավետիս Բալացի Ղուկասյանը (1837-1902)¹ Կովկասի թե Թուրքիայի հայության մշակութային կարիքները հոգալու գերազանց օրինակ էր տվել: Բազում բարեմասնություններով օժտված այդ մեծահարուստ մարդը հայ երիտասարդ սերնդի կրթության գործի համար տարիներ շարունակ հատկացրել էր մեծ գումարներ: Մահվանից քիչ առաջ նա թողել էր կտակ², որով իր կարողության մեծագույն մասը նվիրել էր Թուրքական լծի տակ տառապող իր ազգի մտավոր կարիքները հոգալուն³:

Ավետիս Ղուկասյանի գլխավոր փափագն է եղել, որ իր փողերով առաջին հերթին Թուրքահայաստանի հայերի համար հիմնվի մի երկրորդական կրթարան՝ «Ղուկասյան ճեմարան» անունով, և այդ նպատակով կտակել էր կես միլիոն ռուբլի: Դրանից զատ նա Վանի Երեմյան վարժարանի շենքն ու հարակից տարածքներն ընդարձակելու համար հատկացրել էր 60 հազար ռուբլի⁴:

¹ Տե՛ս «Լուսա», № 6, 1902 թ.

² Տե՛ս «Մշակ», № 120, 4 հունիսի 1914 թ.:

³ Տե՛ս «Լուսա», № 6, 1902 թ.

⁴ Տե՛ս Համբարձում Երամեան, Յուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Բ, էջ 225:

Կտակած գումարը դրվել էր Էջմիածնի կաթողիկոսարանի և Թուրքահայոց պատրիարքարանի տրամադրության տակ:

Թուրքահայ գործիչներից ոմանք, այդ թվում Արշակ Չոպանյանը Փարիզից, գտնում էին, որ Ավետիս Ղուկասյանի կտակը տվյալ պայմաններում բացարձակապես անկարելի է իրականացնել:

Նրանք նշում էին, որ միայն դրամը, մանավանդ եթե այն մեծաքանակ է, ինչպես Ավետիս Ղուկասյանի կտակի դեպքում, դեռ բավարար չէ Հայաստանում հիմնելու երկրորդական վարժարան, և որ դրա համար նախ անհրաժեշտ է սովորելու համար պատրաստ հայ ուսանողների որոշակի թիվ, ինչպես և բարձրորակ դասախոսական կազմ:

Քանի որ դրանցից ոչ մեկը չկար Հայաստանում, ուստի Ա. Չոպանյանը գտնում էր, որ Ավետիս Ղուկասյանի կտակով առայժմ միայն երկու բան կարելի է անել. 1) Կտակած գումարի տոկոսները առաջիկա 10 տարում հատկացնել Կ. Պոլսի Ազգային կենտրոնական վարժարանին՝ այն դարձնելով գորեղ ու բարեկարգ տիպար կրթարան, ուր թե Հայաստանի և թե Կ. Պոլսի ամենաուշիմ պատանիներին տալ լավագույն հայկական կրթություն: 2) Այդ նույն տոկոսներով նրանցից առավել շնորհալիներին ուղարկել Եվրոպա՝ կրթությունը շարունակելու բարձրագույն ուսումնական հաստատություններում: Հայրենիք վերադարձած ահա այդ լավ պատրաստված ուժերով հնարավոր կլինի ունենալ դասախոսական բարձրորակ կազմ, որը կարող կլինի Հայաստանի քաղաքներից մեկում լրջորեն իրագործել Ղուկասյանի կրթարանի ծրագիրը:

Դրա համար, ասում էր Չոպանյանը, կպահանջվի առնվազն 10 տարի: Այդ ժամանակամիջոցում Կենտրոնականն արդեն վերականգնված ու զորացած կլինի, գտած իր նախկին դիրքն ու վարկը և, այնուհետև, առանց պետք ունենալու Ղուկասյանի գումարի տոկոսին, կարող է ինքնուրույն, իր միջոցներով մնալ իր բարձրության վրա: Դրանից հետո միայն Ղուկասյանի կտակած դրամով կարելի կլինի հիմնել համալսարան Կ. Պոլսում կամ հայկական նահանգներից մեկում:

Ավետիս Ղուկասյանի կտակակատարներից ժառանգու-

Թյունն ընդունելու համար Ամենայն հայոց կաթողիկոսի հրամանագրով նշանակվում է հատուկ հանձնախումբ՝ հանձնիս Թիֆլիսի թեմակալ առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի, սինոդի անդամ Մատթեոս եպիսկոպոսի և երզվյալ հավատարմատար Սամսոն Հարությունյանի¹:

Կտակի հաշվետես Մկրտիչ Էսքյուզյանը Ավետիս Ղուկասյանի ժառանգությունն ընդունող այս հանձնախմբին է ներկայացնում կտակակատարների տված բոլոր հաշիվները՝ սկսած բարերարի մահվան թվից մինչև 1914 թ. ապրիլի 15-ը: Հիմնական կտակակատարը Մնացական Սունունցն էր, որը ապրիլի 26-ին Թիֆլիս եկած էջմիածնի ներկայացուցիչ, սինոդի անդամ Մատթեոս եպիսկոպոսին է հանձնում երկու բաղադրիչներից կազմված կես միլիոն ռուբլի արժողությամբ կարողության օգտագործման երաշխավորությունը. 1) 400.000 ռուբլի դրամ, որի մեջ էին՝ 50.000 ռուբլու մուրհակներ, 5.000 ռուբլի գնահատված կահ-կարասի և 3.000 ռուբլի գնահատված ակնեղեն-ոսկեղեն, 2) 150.000 ռուբլի գնահատված մի մեծ տուն և այգի Թիֆլիսի Միքայելյան փողոցի վրա, ինչպես նաև 1000 սաժեն հողատարածք²:

Թուրքահայաստանի կրթական գործի աջակցությունն էին լծվել ռուսահայ թերթերը, բազմաթիվ բարեգործներ, հասարակական ու կրոնական գործիչներ:

Ավետիս Ղուկասյանի կտակից բացի՝ Հնարավորություն կար դպրոցական գործի մեջ ներգրավել դրամական ուրիշ միջոցներ ևս:

¹ Տե՛ս «Մշակ», № 94, 3 մայիսի 1914 թ.:

² Տե՛ս «Մշակ», № 90, 29 ապրիլի 1914 թ.: Ծուտով վրա հասավ Առաջին աշխարհամարտը, ապա՝ Հայոց ցեղասպանությունը: Հայության համար այլևս չկար ո՛չ Վանը, ո՛չ Երամյան վարժարանը, իսկ Թիֆլիսում պահպանված կտակագիրը՝ փողի ֆիզիկական զանգվածի հետ փչացան բուլղերիցան հեղափոխությունից հետո ցարական ռուբլու անկումով: Նոր իշխանությունները բռնազրավեցին նաև Ավետիս Ղուկասյանի՝ էջմիածնին կտակած կահ-կարասիքն, ակնեղեն-ոսկեղենը, նրա Թիֆլիսի մեծ տունը, այգին ու հողատարածքները: Փչացան նաև բազմաթիվ բարերարների կտակած ուրիշ ազգային գույքեր:

Այսպես, Նոր Նախիջևանից Գրիգոր Չալխուչյանը Գևորգ V կաթողիկոսին գրում էր, որ այնտեղի հայտնի միլիոնատեր, հանգուցյալ Հովհան Հովնանյանի Մոսկվայում բնակվող դուստրը՝ տիկին Վարվառե Քանանյանը, որը երկու միլիոնից ավելի կարողություն ունի, կարող է իր մահկանացուն կնքել առանց կտակագիր թողնելու: Նա Վեհապետին խնդրում էր հանձնարարել Մոսկվայում գտնվող Բագրատ սրբազանին անձամբ այցելել տիկնոջը և հորդորել, որ նա որոշակի գումար կտակի դպրոցական ֆոնդին՝ հայտնելով նաև, որ այդ գումարով նրա անվամբ դպրոցներ կբացվեն նաև Թուրքահայաստանում: «Ըստ իս կարելի էր յաջողութեան սպասել»,- եզրահանգում էր Չալխուչյանը:

Ամենայն հավանականությամբ Բագրատ սրբազանը, կատարելով կաթողիկոսի հանձնարարականը, եղել էր Քանանյանի մոտ, որի արդյունքում հայրենասեր տիկինը մեծ նվիրատվություն էր արել Թուրքահայաստանին (չուրջ կես միլիոն ռուբլի կանխիկ դրամագույլս), որի մի մասը պետք է հատկացվեր Մուշ քաղաքում գյուղատնտեսական միջնակարգ դպրոց բացելուն²:

Հայկական նոր դպրոցներ բացելու համար Բաքվի հայտնի վաճառականներից Ենովք Գալստյան-Բուդաղյանցը 1913 թ. կտակել էր մեծ գումարներ, որոնք էջմիածնի որոշմամբ պետք է ուղղվեին Թուրքահայաստան:

Թիֆլիսաբնակ չուչեցի Միրզաջան Սաչատրյանը 1907 թ. իր ողջ կարողությունը կտակել էր Ս. էջմիածնին՝ Ռուսաստանում և արտասահմանում սովորող հայ ուսանողներին թոշակ հատկացնելու համար: Կտակի մի մասը էջմիածինը հատկացրեց Թուրքահայ ուսանողներին՝ Եվրոպայում կրթություն ստանալու համար:

Ռուսահայ ազգանվեր մեծահարուստների կողմից Թուրքիայի տառապյալ հայությանն աջակից լինելու օրինակները բազմաթիվ էին: Բայց մեծահարուստներից ոչ բոլորն էին փողի քսա-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1007, թ. 97 և շրջ.:

² Տե՛ս «Հայրենիք», № 12, դեկտեմբեր, 1965, էջ 2-3:

կը բացում թուրքահայոց առջև: Այդ օրերի կովկասահայ մամուլը պախարակում, այպանում էր այն փողատերերին, ովքեր զլանում էին օգնություն ձեռք մեկնել սահմանից այն կողմ գտնվող Հայաստանի արյունակից եղբայրներին ու քույրերին: Դեռ ժամանակին ձաղկելով մեծահարուստ ժլատ հայի անվայելուչ կեցվածքը՝ Ռաֆայել Պատկանյանն այս խոսքերով էր դիմում նրան.

Դուն խելոք, հաշվով վաճառական ես,
Միւլք, փող ու ապրանք, կ'ասեն, շատ ունես,
Բայց թէ փողէդ շահ չունի Հայաստան,
Թքել ենք քու ալ, փողիդ ալ վրան:

Այդ էր պատճառը, որ էջմիածնի դպրոցական ֆոնդի կողմից հատկապես Հայաստանի նահանգների դպրոցներին հատկացվելիք բաժնի մեծացման համար առաջարկներ էին արվում հանգանակություն կատարել նաև կովկասահայ միջին դասի շրջանում, այսինքն՝ հայություն այն շերտերից, որոնք ի վիճակի էին որոշ գումար հատկացնել թուրքահայ դպրոցին:

Ռուսահայերի խոստացած առատաձեռն նվիրատվությունները և դրանց լայնորեն լուսաբանումը հատկապես Կ. Պոլսի հայ մամուլի էջերում մեծ ոգևորություն էին առաջացրել թուրքահայոց մեջ, միաժամանակ առաջ բերել երախտագիտության խոր զգացումներ: Պոլսահայ թերթերը ցավով նշում էին, որ երբ ռուսահայությունը տասնամյակներ շարունակ տնտեսականֆինանսական օգնություն էր ցուցաբերում թուրքահայերին, այդ նույն ժամանակ վերջիններս կովկասահայության տնտեսական շատ ծանր պայմանների ժամանակ նույնիսկ ինչ-որ չափով օգնություն չէին հասցնում նրանց: Կովկասահայերը, իհարկե, երբեք չեն անդրադարձել այդ հարցին՝ քաջ գիտակցելով, թե թուրքահայ հոծ զանգվածներն ինչպիսի ծանրագույն տնտեսական կացության մեջ են օսմանյան բռնապետության տակ:

Ռուսահայության նկատմամբ թուրքահայության երախտագիտական զգացումների արտահայտություններից մեկը Կովկասում Պողոս Նուբարի գլխավորած ՀԲԸ միությունից մասնաճյուղեր

բացելու ծրագիրն էր: Այդ մասնաճյուղերի գործառույթներից մեկը պիտի լիներ այնտեղ աշխատող 60-70 հազարի հասնող թուրքահայերի շրջանում հանգանակություն կազմակերպելը՝ թեթևացնելու ռուսահայության հոգսը:

1914 թ. հունիսի 20-ի թվով Պողոս Նուբարի երաշխավորություններ Դ. Թագավորյանի և Համբ. Առաքելյանի ստորագրությամբ նամակ է հղվում փոխարքա Վորոնցով-Գաշկովին, որով խնդրում էին թույլատրել Կովկասի մի շարք վայրերում բացել Հայ բարեգործականի մասնաճյուղեր (отделения)¹: Հունիսի 21-ին փոխարքան հեռագրում է Կ. Պոլսի ռուսական դեսպանություն՝ իմանալու համար, թե արդյո՞ք «Միությունը» քաղաքական նպատակներ չի հետապնդում և զուտ մարդասիրական գործունեություն է նվիրված²: Հուլիսի 1-ին դեսպանությունից փոխարքային հայտնում են, որ ՀԲԸ Միությունը զբաղվում է զուտ բարեսիրական գործունեությամբ և որ ունենալով նյութական մեծ միջոցներ թուրքիայում և այլուր՝ ստեղծել է մի շարք լուսավորական-բարեգործական կազմակերպություններ, միաժամանակ նպաստում է հայության մեջ կուսակցական առձակատումների մեղմացմանը³:

Դեսպանության դրական պատասխանից հետո Թիֆլիսում սկսվեցին նախապատրաստական աշխատանքներ՝ Կովկասի տարբեր վայրերում ՀԲԸ միության մասնաճյուղեր բացելու համար:

Իսկ ինչպե՞ս պետք է իրականացվեր դպրոցների կառավարումը: Ռուսական կայսրությունում այն ինչպես եղել էր, այնպես էլ շարունակվելու էր, և դա ընդհանուր առմամբ ձեռնտու էր ռուսահայությանը: Թուրքիայում հայկական դպրոցների կառավարման հարցը անորոշ էր:

Ենթադրվում էր, որ Հայաստանի բարեկարգման գործին զուգահեռ կրթությունն ամբողջովին պիտի հանձնվի տեղի ժողովրդին՝ անկախ ազգային ու կրոնական պատկանելության:

¹ ՀԱԱ, ֆ. 1262, ց. 3, գ. 1470, թ. 1 և շրջ.:

² Նույն տեղում, թ. 2:

³ Նույն տեղում, թ. 3:

Իսկ դա կնշանակեր, որ ընդհանուր հիմունքներով իրականացվելու էր դպրոցները ազգային դարձնելու պահանջը: Կմնար ընդամենը ընդարձակել կրթության ոլորտը, ստեղծել ու ամրապնդել իրավական պարզ ու հաստատուն հարաբերություններ, ճանաչել ազգային դպրոցները որպես պետական, հետևապես՝ համապետական կրթական գումարներից նրանց ևս բաժին հանել: Դա վերաբերում էր ոչ միայն Հայ, այլև բոլոր քրիստոնյա և մահմեդական տարրերին:

Այսպիսով, կրթական գործը պետք է հանձնվեր ազգային ինքնավարություններին, որոնք ունենալու էին իրենց տեղական և կենտրոնական կրթական մարմինները, իսկ դպրոցների իսկական տերերը պիտի լինեին գավառային ժողովները: Կենտրոնական կրթական մարմինները կատարելու էին ընդհանուր հսկողի դեր. հետևելու էին, որ գործադրվեն գոյություն ունեցող ծրագրերը, հոգալու էին ուսուցիչների և դպրոցական գործիչների որակավորման բարձրացումը, կրթության ընդհանուր բարեկարգումը, զբաղվելու էին ազգային դպրոցների վիճակագրության, մանկավարժական գրականության պատրաստման և հրատարակման հարցերով, կապ էին պահպանելու պետական կրթական վարչության հետ և այլն:

Անխուսափելիորեն ծագում էր մի ուրիշ հարց. իսկ ո՞րն էր լինելու օսմանյան պետության դերը կրթության ոլորտում: Չէ՞ որ ոչ մի պետություն չի հրաժարվի նրանում մասնակցությունից:

Շատերի կարծիքով, պետությունը միայն պիտի կատարեր ընդհանուր հսկողի, խրախուսողի և օժանդակողի դեր, նրա ձեռքում պիտի գտնվեր բարձրագույն կրթությունը միայն: Նա որևէ ազդեցություն չէր ունենալու ազգային տարրական և միջնակարգ դպրոցների վրա: Կրթական նախարարության և հատուկ պաշտոնյաների միջոցով պետությունը պետք է հսկեր ընդհանուր օրենքների և ընդունված ծրագրերի կատարումը, որ դպրոցը չզառնար անհատական և խմբային քմահաճույքների ու խարդավանքների օջախ: Իր գործառույթները կատարելու համար կրթական նախարարությունը ունենալու էր շրջանային տեսուչներ, որոնց առջև բաց պետք է լինեին բոլոր տարրական

և միջնակարգ դպրոցները, բայց նրանք իրավունք չէին ունենալու որևէ կարգադրություն անելու: Այլ խոսքով՝ նրանք լինելու էին միայն պետության աչքն ու ականջը:

Ազատ ազգերի ազատ կրթություն ազատ պետության մեջ, այս էր Հայ մտավորականության և Հայկական ազգային իշխանությունների երազանքը:

Առանց բարձր ու հիմնավոր կրթություն տվող ազգային դպրոցի չէր կարող ստեղծվել ազգային գեղարվեստական գրականություն:

Գրականությունը (բանավոր թե գրավոր) որևէ մի ազգի հոգեկան կյանքի արտացոլումն է: Նա կոչված է արձագանքելու ժողովրդի ամենօրյա ուրախություններին ու ցավերին: Ցանկացած գրականություն նաև ազգային լեզվի ստեղծագործական կարողության գրսևորումն է:

Ա. Չոպանյանի բնորոշմամբ գրականությունը Հայության երկու մասերի հոգեկան միավորման ամենահզոր միջոցն է, ազգի «գերագույն ուժը»: «Գրականութիւնը, գեղարուեստը՝ ազգի մը ամենաթանկագին գանձը, մեծութեան ու փառքի աղբիւրը, եւ նոյն իսկ կեանքի հիմունքը, ինքնապահպանութեան ամէնէն ապահով միջոցն են: Կարելի է ըսել թէ ազգ մը իսկապէս գոյութիւն ունի այն ատեն միայն երբ երեւան կը բերէ ինքնայատուկ գեղարուեստ մը, գրականութիւն մը: ... Հայ ազգը, եթէ հակառակ այնքան մեծաղղորդ աղէտներու՝ դարերէ ի վեր ինքզինքը պահպաներ է իբրեւ ուրոյն անդամ մը մարդկային ընտանիքին մէջ, ատիկա կրցեր է ընել գլխաւորապէս շնորհիւ իր գրականութեան»¹:

19-րդ դարի մի քանի տասնամյակներում Հայ գրականությունը բուռն զարգացում էր ապրում թե՛ ռուսահայության և թե՛ թուրքահայության մեջ: Դա նաև մի ժամանակաշրջան էր, երբ ռուսահայ և թուրքահայ գրչի մարդիկ հաստատել էին փոխադարձ աշխույժ կապեր: Չոպանյանը նկատում էր, որ «Ատենով, Նազարեանցի, Նալբանդեանցի, Ոսկանեանի եւ Սվա-

¹ «Անահիտ», № 11-12, մարտ-ապրիլ, 1909-1910, էջ 241:

ճեանի օրերուն, աւելի մօտութիւն կար երկու կողմի գրական գործիչներուն միջեւ. ուսասհայ Տ. Գաբրիէլ ք. Պատկանեանը իր դիւցազներգութիւնները թրքահայ Մամուրեանին Արեւելեան Մամուլին մէջ կը հրատարակէր, եւ Մամուրեան, ինչպէս եւ յետոյ Պարոնեան՝ կ'աշխատակցէր ուսասհայ հանդէսներու. Հիւսիսափայլը կը հետեւէր Պոլսոյ ազատական մամուլին ջանքերուն. նոյնպէս եւ Մեղուն՝ Հիւսիսափայլին կ'աջակցէր, անոր գործունէութիւնը կը ճանչցնէր թրքահայոց, փոխադարձ հետաքրքրութեան, սիրոյ, յարգանքի յարաբերութիւններ կային երկու հատուածներու մտաւոր դեկավարներուն միջեւ»¹:

Ահա այդ հարաբերութիւններն էին, որ պետք է նույն ոգով պահպանվեին և տևական դառնային: Բայց ցավոք, այդպես չեղավ:

Արդուհանգիստի բռնապետութեան անողոք հարվածների տակ 19-րդ դարի 80-90-ական թվականներին և դրանից հետո թուրքահայ մտավորականությունն ի վիճակի չէր մտնելից հետևելու ուսասհայոց գրական շարժմանը, ծանոթանալու նրա նշանավոր ներկայացուցիչների գոնե որոշ ստեղծագործություններին:

Ինչ վերաբերում է ուսասհայ մտավորականությանը, ապա ուսական իշխանությունները նրա առջև որևէ արգելք չէին ստեղծում հաղորդակցվելու թուրքահայ գրականության և նրա ներկայացուցիչների հետ:

19-րդ դարի երկրորդ կեսը, հատկապես նրա 80-90-ական թվականները արևելահայ (ընդհանրապես ուսասհայ) գեղարվեստական գրականության զարգացման համար խիստ նպաստավոր եղան: Հրապարակ էին գալիս արձակ ու չափածո ստեղծագործությունների մեծ վարպետներ, գրականությունը գնալով դառնում էր ժողովրդի նորանոր զանգվածների սեփականությունը: Այն մի կողմից հանդես էր գալիս որպես հասարակական իդճերի արտահայտիչ, մյուս կողմից նպաստում էր այդ նույն հասարակության կրթական մակարդակի ու գրական ճաշակի բարձրացմանը:

¹ «Անահիտ», № 11-12, մարտ-ապրիլ, 1909-1910, էջ 247:

Որքան էլ կենսունակ ու օրեցօր զարգացող, հզոր ու իմաստալից էր արևելահայ գրականությունը, այն, սակայն, չստացավ համազգային նշանակություն, որովհետև թուրքահայությունը, չնչին բացառություններով, անտեղյակ էր նրանից:

Միանգամայն տարբեր միջավայրերում գտնվող ազգի գրականության երկու մասերը, բնականաբար, ժամանակի հոլովոյթում խորթանում և հեռանում էին իրարից: Դրա պատճառը արտաքին և ներքին խոչընդոտներն էին: Արտաքին պատճառներից ամենաաղետաբերը համիդյան ռեժիմն էր, որը հետզհետե ամրապնդեց պատնեշը հայության երկու հատվածների միջև: Արգելվեց ուսասհայոց թերթերի և գրականության մուտքը Թուրքիա, որևէ թուրքահայ գրող, առանց ինքն իրեն վտանգելու, չէր կարող աշխատակցել ուսասհայ մամուլին: Ներքին խոչընդոտ եղավ իրար չճանաչելը, որի արդյունքում երկու կողմերի գրողներից ոմանք, կանխակալ կարծիքներով սողորված, արհամարհական կամ հեգնական վերաբերմունք էին դրսևորում միմյանց նկատմամբ:

Այդ ամենից ավելի շատ տուժում էր թուրքահայ գրականությունը: Չնչին բացառություններով այն անծանոթ էր մնում ուսասհայ հասարակությանը: Այդ հանգամանքը որևէ ուրիշ բացատրություն չունեւր, բացի նրանից, որ, որքան էլ ցավալի է, ուսասհայության մեջ չարունակում էր ավանդական արհամարհական վերաբերմունքը թուրքահայերի լեզվի, հետևապես նաև նրանց գրականության նկատմամբ: Ռուսահայ գրողներից չատերի համար թուրքահայ գրականությունը մեծ մասամբ պճնված էր ձևամոլ, գաղափարազուրկ ֆրագաբանություններով: Այդ էր պատճառը, որ բացառությամբ Հակոբ Պարոնյանի որոշ ստեղծագործությունների, թուրքահայ մյուս գրողների գրական արտադրանքը անծանոթ էր մնում ուսասհայության լայն շրջաններին: Հետևապես օրախնդիր էր ուսասհայ ընթերցողներին թուրքահայ մտավորական և գրական շարժման նորոյթներին մասնակից դարձնելը: Իսկ դրա համար անհրաժեշտ էր ստեղծել ու հրատարակել թուրքահայ գրականությանը նվիրված լուրջ ուսումնասիրություններ, ուսասհայ մամուլի էջերում ունենալ այդ գրականությունն ընթերցողներին ներկայաց-

նող հատուկ բաժիններ: Կարևոր էր նաև գրական խնդիրները բանավիճային քննություն ղնել ուսասան և թուրքասան մամուլում: Այդ դեպքում միայն հնարավոր կլիներ իրական հաղորդակցություն ստեղծել հայ գրականության երկու ճյուղերի միջև:

Հատուկ կշտամբանքի էր արժանի թե՛ ուսասան և թե՛ թուրքասան գրաքննադատների գործունեությունը: Գրական ստեղծագործությունների նրանց քննարկումներում և վերլուծություններում մեծապես պակասում էին զգացմունքայնությունը, նույն ազգին պատկանելու խոր ըմբռնումը: Կարծես խոսքը ոչ թե հայ, այլ օտար գրվածքների մասին էր: Չոպանյանը ցավով էր նշում, որ «ուսասանք ու թուրքասանք շատ աւելի ծանօթութիւն ունին ուսասանց, Փրանսասանց, գերմանասանց կամ իտալասանց քան իրարու գրականութեան մասին: Եւ ասիկա ողբալի բան մըն է: Արդէն փոքրաթիւ ազգ մըն ենք, այս անջատումը աւելի եւս կը տկարացնէ մեզ: Ոչ միայն երկու հասարակութիւնները անծանօթ են իրարու մտաւոր գործունէութեան, այլ նոյն իսկ գրագէտները՝ քիչ բացառութեամբ: Երկու կողմի գլխաւոր գրողներէն շատ քիչեր են որ իրենց գործերը կը փոխանակեն իրարու հետ: Քննադատութիւնը, երկու կողմէն ալ, շատ յաճախ անհոգ է քոյր հատուածին մէջ լոյս տեսնող բոլոր կարեւոր նորութեանց մասին տեղեկութիւն տալու հասարակութեան»¹:

Ճշմարիտ է, որ ուսասան գրականությունը կորովի էր իր ձգտումներով, բեղուն էր գաղափարներով, աուլեցուն էր հայ կյանքի ճշմարիտ արտասանություններով: Այդ ամենին, ինչ խոսք, շատ պետք ուներ թուրքասան գրականությունը: Վերջինս շատ քիչ տեղ էր հատկացնում ժողովրդական կյանքին, ոամիկ մարդու հոգսերին ու ցավերին, նրա անվերջանալի ողբերգություններին (բացառություններ էին, թերևս, բանաստեղծներ Սիամանթոն, Ռուբեն Սևակը և Վարուժանը): Բայց թուրքասան գրականությունն էլ իր ուրույն յուրահատկություններն ուներ: Նա ուսասան գրականությանը գերազանցում էր իր հյութեղ

արվեստով և նուրբ ճաշակով: Դրա գլխավոր պատճառներից մեկը (եթե ոչ գլխավորը) այն էր, որ թուրքասան աշխարհաբարն ավելի հղկված էր ու գեղեցիկ և այդ տեսակետից ակնհայտ առավելություններ ուներ ուսասան աշխարհաբարի նկատմամբ:

1908–1914 թթ. պոլսասան գրական կյանքի վերելքի տարիներ էին: Մեծարենց և Եղիա Տեմիրճիպաչյան, Գրիգոր Զոհրապ, Ատոմ Յարճանյան (Սիամանթո), Դանիել Վերուժան, Հրանտ Նազարյանց... Կ. Պոլսում հայ գրականությունն ապրում էր իր ոսկեդարը:

Եթե ուսասան արձակը աչքի էր ընկնում երկարաշունչ վեպերով, ապա թուրքասաններն ունեին անզուգական նորավեպեր: Նրանց գրականությունն ուներ կատարելության հասած քնարական սքանչելի ստեղծագործություններ՝ կերտված զգայուն և արվեստապաշտ բանաստեղծների կողմից: Իսկ թուրքասան գրականագետներից շատերի փոքրիկ ուսումնասիրությունները գոհարարժեք արարումներ էին:

Թուրքասան մամուլի օրգանները բողոքում էին, որ անարդար է, երբ ուսասան գրական ժողովածուներում և ընթերցարաններում ընդգրկվում են բացառապես ուսասան հեղինակների գրվածքներ, մինչդեռ թուրքասանները և տեղ են տալիս ուսասան հեղինակների բազմաթիվ գործերի՝ շատ հաճախ դրանց լեզուն վերածելով թուրքասան աշխարհաբարի:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո վիճակը կարծես փոխվում էր դեպի լավը: Ուրախառիթ էր, որ երկու կողմերում այլևս գիտակցում էին բարոյական անջատումի վնասաբեր ու ցավալի հանգամանքը, որը գերազանցապես արդյունք էր հայոց ֆիզիկական բաժանվածության: Ռուսասան մտավորականներն արդեն ուշադիր հետևում էին թուրքասան գրականության զարգացման ընթացքին, արևելահայության մեջ պրոպագանդում թուրքասան արձակագիրների ու բանաստեղծների լավագույն ստեղծագործությունները: Հրատարակչություններն առանձին գրքերով տպագրում էին դրանցից լավագույնները, իսկ հաճախակի կազմակերպվող գրական միջոցառումների ընթացքում կատարվում էին լուրջ վերլուծություններ: Այդ տեսակետից կա-

¹ «Անասիտ», № 11–12, մարտ–ապրիլ, 1909–1910, էջ 247:

րևոր դեր էին ստանձնել նոր հրապարակ եկած «Նավասարդ», «Մեհյան» և ուրիշ հանդեսներ, որոնք նպատակ էին դրել հայոց գրականություն ներմուծել համաշխարհային գրականության առաջավոր միտումները:

Նույնն անելու ցանկություն էր առաջ եկել թուրքահայ մտավորական շրջաններում: Դրա վկայություններին մեկը Պոլսում նոր հաստատված «Արծիվ» հրատարակչական տան կողմից ուսասհայ գրողների գրվածքների հրատարակումն էր:

Նկատելով այդ դրական միտումները՝ շատերը համոզված էին, որ թեպետ հայ ազգը նյութապես թույլ է ու բարոյապես հոգնած, բայց հոգեպես մնացել է ուժեղ և կյանքով լեցուն, նրա մեջ վառ է մնացել ստեղծագործ ոգին: Իհարկե, դա իրողություն էր, սակայն միաժամանակ մնում էր որպես լուր հնարավորություն և նախադրյալ: Ռուսահայ և թուրքահայ գրականությունների փոխհարաբերություններում դեռ առկա էին բազում խուժեր, որոնց վերացումն օրախնդիր էր:

Բարենորոգումների հունվարի 26-ի համաձայնագրից հետո հայ գրականության ընդհանրական շահը պահանջում էր մի կողմ թողնել նախկին նեղմիտ ու տարամերժ ըմբռնումները, խորապես գիտակցել, որ ազգային երկու գրականությունները հայ ժողովրդի անգին հարստություններն են, որոնց հավասարապես պետք է փայփայել: Հայկական ազգային իշխանությունների, եկեղեցու, հասարակական ու քաղաքական կազմակերպությունների առաջիկա խնդիրը պետք է լիներ աշխատանքներ տանել գրականության երկու երակների հետագա մերձեցման համար, և այդ նպատակով հայերի բնօրրանում ու գաղութներում սկսել ինչպես թուրքահայ, այնպես էլ ուսասհայ գրական ստեղծագործությունների լայն տարածումը, նաև գործնական քայլեր անել, որ երկու հատվածների գրական գործիչները հաճախակի հանդիպեն և համատեղ քննարկեն հայ գրականության հետագա զարգացման ծրագիր: Այդ ամենի համար նպաստավոր պայմաններ կարծես առկա էին: Հետևապես, նկատում էր Ա. Չոպանյանը, անհրաժեշտ է, որ այս «փոխադարձ մերձեցման շարժումը տարածենք ու զորացնենք: Հայ գրականությունը, նույն իսկ հայ ազգային ընդհանուր կեանքը, մեծապես պիտի շահին,

ընդլայնին, ուժովնան ատով: Երկու գրականություններէն ոչ մին լիակատար է եւ միւսէն գերազանց. երկուքն ալ կէսեր են, եւ իրենց ուրոյն առաւելութեանց հետ ունին իրենց յատուկ պակասները. երկուքը միասին կը կազմեն հայ ժամանակակից գրականութեան ամբողջութիւնը»¹:

Հայ գրական արժեքների տարածման գործում մեծ դեր կարող էր խաղալ Հայաստանի երկու հատվածներում գրադարանների լայն ցանցի ստեղծումը: 1908 թ. հետո հիմնականում հայ ազգային կուսակցությունների ջանքերով թուրքահայաստանի գավառների մեծ մասում բացվել էին ակումբներ, որոնցում կային նաև գրադարաններ, ուր հավաքվում էին ոչ միայն թուրքահայ, այլև ուսասհայ հեղինակների ստեղծագործությունները, և նոր սերունդը հաղորդակցվում էր դրանց: Իհարկե, գրադարանները կարող էին ավելի օգտակար լինել, եթե հեռու մնային քաղաքական նպատակահարմարությունները ընտրված գրքերով: Իսկ հիմա՝ Հայաստանում բարենորոգումներ կատարելու ծրագիր ունենալուց հետո, կովկասահայ մամուլը բարձրացնում էր թուրքահայաստանի նահանգային բոլոր կենտրոններում և մեծ բնակավայրերում Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի ենթակայությամբ նոր գրադարաններ բացելու հարցը, որոնց պահպանության ծախսերը պիտի հոգար էջմիածնի կաթողիկոսարանում ստեղծվելիք հատուկ ֆոնդը, իսկ գյուղերում ենթադրվում էր ունենալ հանրային փոքր գրադարաններ եկեղեցիներին կամ դպրոցներին կից: Միաժամանակ առաջարկվում էր ուսասհայության շրջանում կազմակերպել կամավոր գրահավաք՝ գրքերը թուրքահայաստան ուղարկելու համար:

Մարդկության մշակութային խոշոր երևույթներից մեկը թատրոնն է՝ իր բովանդակ կրթիչ արժեքներով: Դեռ հնագույն ժամանակներում հայերն ունեցել են կազմակերպված թատրոն, որը մեծ դեր է խաղացել նրանց կյանքում դարեր շարունակ: Հայ թատրոնն օրինակ էր հանդիսացել հարևան ազգերի թատերական արվեստի զարգացման համար: Բազմաթիվ մեծանուն հայ

¹ «Անահիտ», № 11-12, մարտ-ապրիլ, 1909-1910, էջ 247:

Թատերական գործիչներ կային ուսում-թուրքական սահմանի երկու կողմերում. որոնցից ոմանց անունը բարձր էր հնչում ոչ միայն Հայրենիքում, այլև նրա սահմաններից հեռու:

Երիտթուրքական հեղաշրջմանը հաջորդած երկու-երեք տարիներին աշխուժացել էին ուսասհայ թատերական գործիչների այցելությունները Թուրքիա: Այստեղ էին գալիս տարբեր թատերախմբեր հատկապես Թիֆլիսից, որոնք ներկայացումներ էին տալիս արևելահայ գրական լեզվով և կովկասահայ բարբառներով: Թուրքահայերի շրջանում հատկապես ընդունելություն էին գտնում Գաբրիել Սունդուկյանի և Շիրվանզադեի պիեսների բեմադրությունները:

Բարենորոգումների ծրագիրը հաջողությամբ իրագործելուց հետո թատերական արվեստը կարող էր մեծ դեր խաղալ հայերի համազգային հոգեբանության վերածննդի գործում: Ուստի ուսասհայ թատերական գործիչներն օր առաջ ձգտում էին իրենց նպաստը բերել թուրքահայությանը:

1914 թ. առաջին կեսին օսմանյան մայրաքաղաքի բեմերում հանդես եկան Վրույրի, ապա տիկին Մայսուրյան-Ջարիֆյան-Հարությունյան խմբերը: Բերայի, Օրթագյուղի, Սկյուտարի և Գատրգյուղի բեմերում նրանք ներկայացնում էին ուսասհայ հեղինակային կամ թարգմանած խաղեր: Ներկայացումների միջոցով թուրքահայերը ծանոթանում էին արևելահայության կյանքին, բարքերին ու սովորույթներին, համակրական զգացումներով տոգորվում սահմանի մյուս կողմում գտնվող իրենց ազգակիցների նկատմամբ:

Իսկ թուրքահայ թատերախմբեր հազվադեպ էին այցելում արևելահայերին, որովհետև երիտթուրք բռնակալությունը հասցրել էր 1912-1914 թթ. փաստորեն քայքայել նաև հայ թատրոնը, թեև առանձին նշանավոր դերասաններ շարունակում էին շրջագայություններ կատարել Կովկաս և Ռուսաստան: Ռուսահայ հասարակությունը ամենուրեք խանդավառ ընդունելություն էր ցուցաբերել նրանց:

Ժողովրդի մտավոր-կրթական մակարդակի բարձրացման, նրան աշխարհի հետ հաղորդակից դարձնելու անփոխարինելի միջոց էր մամուլը:

Հայկական մամուլը, որտեղ էլ այն լիներ, պետք է աշխատեր իր ընթերցողներին տեղեկություններ հաղորդել Կովկասից, Թուրքիայից, հեռավոր գաղթավայրերից, հաղորդակից անել Հայ կյանքի ընթացքին՝ մտավոր, տնտեսական, քաղաքական, մշակութային: Նա նաև խնդիր պետք է ունենար նրանց ծանոթացնելու համաշխարհային քաղաքակրթության նվաճումներին:

Ովքեր մանրամասն ուսումնասիրել են ժամանակի ուսասհայ և թուրքահայ մամուլը, անշուշտ համոզված կլինեն, որ թե՛ հրատարակած նյութերի բովանդակության, թեմաների բազմազանության, հասարակական, քաղաքական երևույթները վերլուծելու լրջությամբ և թե՛ ոճական, գրական վարպետության առումով արևելահայ մամուլը գերազանցում էր արևմտահայկականին: Այդ իրողությունը արձանագրել են նաև թուրքահայ մտավորականության ներկայացուցիչները:

Ընդհանրապես խիստ տարօրինակ էր, որ թուրքահայերը և նրանց հասարակական ու քաղաքական կազմակերպությունները, նաև ազգային ու կրոնական հաստատությունները չափազանց քիչ էին հետաքրքրվում ուսասհայության կյանքով, և դա իր ցայտուն արտահայտությունն էր գտնում մամուլի էջերում, մինչդեռ Բուլղարիայի, Ռումինիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների, անգամ Բրազիլիայի հայերի մասին հաճախ տպագրում էին ծավալուն հոդվածներ:

Թուրքահայ թերթերի էջերում հազվադեպ կարելի էր հանդիպել ուսասհայ գրողների ստեղծագործությունների, իսկ Կ. Պոլսի հրատարակչությունները զարմանալիորեն անուշադրության էին մատնում ուսասհայ գրականության նույնիսկ ցայտուն արտահայտությունները, բայց փոխարենը թե՛ այդ թերթերը և թե՛ հրատարակչությունները մեկը մյուսի հետևից թարգմանաբար հրատարակում էին գերազանցապես ֆրանսիական վեպը, գերմանական ու անգլիական բանաստեղծությունը:

Այնքան քիչ էր թուրքահայի հետաքրքրությունը դեպի ուսասհայոց վիճակը, որ թուրքահայ մամուլի նույնիսկ ամենախոշոր օրգանները չէին հաճում գտնե մի հատուկ թղթակից պահել Թիֆլիսում, որն աշխարհի երկրորդ հայաշատ քաղաքը և մոտ

երկու միլիոն ուսահայ ժողովրդի մտավոր-մշակութային կենտրոնն էր:

Մինչդեռ ուսահայ թերթերը իրենց ընթերցողներին թուրքահայ կյանքին իրազեկելու համար հատուկ թղթակիցներ էին պահում ոչ միայն Կ. Պոլսում, այլև Կարինում, Վանում, Մուշում և Թուրքիայի ուրիշ քաղաքներում:

Ռուսահայ թերթերի էջերը լեցուն էին ամենամանրամասն տեղեկություններով թե պոլսահայ և թե ընդհանրապես թուրքահայ կյանքի վերաբերյալ նյութերով: Եվ ոչ միայն հայկական հարցի մասին լուրերը, որոնք այսպես թե այնպես հրատապ այժմեություն ունեին, այլև տաճկահայոց ընթացիկ կյանքին վերաբերող ամեն կարգի տեղեկություններ, ինչպես, օրինակ՝ Տրապիզոնի դպրոցական գործը կամ Մշո դաշտի հացի բերքը և այլն:

Ռուսահայ թերթերը ժամանակին արձագանքում էին թուրքահայ գրողների ստեղծագործություններին, արժևորում ու պրոպագանդում դրանք, աչքաթող չէին անում գրական արժեք ներկայացնող ոչ մի նոր գործ՝ տպագրելով գրախոսականներ:

Անդրադառնալով թուրքահայերի և ուսահայերի փոխհարաբերությունների հարցին՝ ՀՅ դաշնակցություն «Հորիզոն»-ը սրտնեղված այսպիսի օրինակ էր բերում:

«Երեւանի նահանգում, ուր վեց հարյուր հազարից ավելի հայ է բնակվում, մի քանի շաբաթ առաջ տեղի ունեցաւ մի անօրինակ աղէտ՝ երկու օրուա ընթացքում ցրտահար եղաւ այդ նահանգի բուսականութիւնը՝ միլիոնների վնաս պատճառելով ազգաբնակչութեանը և տասնեակ հազարաւոր հայ մարդկանց համար տնտեսական ծանր կացութիւն ստեղծելով: Այս աղէտի հանդէպ թուրքահայերն իրենց մամուլով և ազգային հասարակական օրգաններու այնպիսի մի լուրթիւն պահպանեցին, կարծեք խոսքը արինակից ժողովրդին չէ վերաբերում, այլ ինչ-որ նեգրական ցեղի, որի անունն է միայն տաճկահայերին յայտնի: Միայն Միացեալ ընկերութիւնը Ամենայն հայոց կաթողիկոսին մի պատոնական ցաւակցութիւն յայտնելու չափ հետաքրքրութիւն ցոյց տուեց դեպի այդ աղէտը»¹:

¹ «Հորիզոն», № 132, 20 հունիսի 1914 թ.:

Այնուհետև հողվածագիրը արդեն հպարտությամբ շարունակում է. «Իսկ տաճկահայ ժողովրդին կամ նրա որեւէ հատուածին պատահած ամէն մի դժբախտութիւն անմիջապէս խփում է՝ ուսահայերու ջղերին: Բաւական է, որ Ռոզոսթոյում ավազակները մի քանի հայ թալանեն կամ Սասունում հացի պակասութիւն զգացուի, որպէսզի ջղայնութեան հասնելու չափ մտահոգութեամբ բռնուինք»:

Որքան էլ տարօրինակ է ու ցավալի, հարկ է արձանագրել, որ թուրքահայ մամուլի կողմից ուսահայ կյանքի նկատմամբ ցուցաբերած անտարբերություն, իսկ առանձին պարբերականների կողմից ուսահայերին ծուռ հայելու մեջ ներկայացնելու պատճառով սրանց նկատմամբ թուրքահայություն մի մասի մեջ առաջ էր եկել հակակրօնք:

Այսպես, «Սուրհանդակի» (Թիֆլիս) Կ. Պոլսի թղթակիցն իր թերթին գրում էր.

«Պետք է ասեմ, որ մենք՝ կովկասցիքս, առհասարակ վատ համբավ ենք հանել Թուրքիայի մեր ազգակիցների մոտ. կովկասցի ասելով նրանք հեղափոխական են հասկանում, իսկ հեղափոխական լինելով, մենք նրանց երկրում եղած հայկական կոտորածների հեղինակներ և առաջնորդներ ենք համարվում:

Չգիտեմ, թե առհասարակ կովկասցի հայերը ինչու այդպիսի կարծիք են կազմել տվել իրենց մասին, երբ նրանք տասնյակ տարիների ընթացքում չեն գլացել օգնություն ձեռք կարկառել Համիդի Համիդիական ռեժիմի տակ ճնշվող իրենց եղբայրակիցներին՝ թե՛ նյութապես և թե՛ գործնականապես, սակայն փաստը փաստ է մնում, որ նրանց կարծիքով մենք ենք եղել իրենց թշվառութեանց պատճառը ...»²:

Չոպանյանն անթույլատրելի էր համարում այդ երևույթը: Նա ուսահայ մտավորականներին կոչ էր անում ավելի հաճախ աշխատակցել թուրքահայ մամուլին, իսկ վերջինիս խմբագիրներին հորդորում էր մշտապես ուշադրություն կենտրոնում պա-

¹ «Հորիզոն», № 132, 20 հունիսի 1914 թ.:

² «Սուրհանդակ», № 104, 14 մայիսի 1910 թ.:

հել ոուսահայության կյանքն՝ իր բազմազան դրսևորումներով: «Հոն ու հոս,- գրում էր նա,- մամուլը պետք է լայն բաժին մը յատկացնե՛ միւս հատուածին ազգային, ընկերական ու մտաւորական կեանքին, վերարտադրէ քոյր մամուլին մէջ երեւցած ամէնէն գեղեցիկ գրական նորութիւնները, կանոնաւորապէս տեղեկութիւն տայ՝ միւս կողմի ուշագրաւ հրատարակութեանց մասին. ամէն անգամ որ սահմանէն ասդին կամ անդին հայ տաղանդի յայտնութիւն մը տեղի կ'ունենայ, ըլլայ գրական, գեղարվեստական, գիտական կամ հանրային գործունէութեան մէջ, պէտք է արեւելեան ինչպէս արեւմտեան մամուլը հաւասար եռանդով ու մանրամասնութեամբ արձանագրէ իբր «ներքին լուր մը», իբրեւ հայ կեանքի կարեւոր եղելութիւն մը, յետէ հայու համար աւելի կարեւոր քան դրացի Յոյնին կամ Վրացիին վերաբերեալ իրողութիւններ»¹:

Այսպիսով, թե՛ ոուսահայ, թե՛ թուրքահայ գործիչներից շատերը, որոնք կասկածանքով էին վերաբերվում թուրքահայաստանի վերածննդի հնարավորությանը, բայց համոզված էին, որ գոնե մշակույթի բնագավառում անխուսափելի է ազգային կրթության ու մշակույթի ակնհայտ վերելք:

Հովհաննես Թումանյանը, որը հիմնավոր կասկածներ ուներ հայ ժողովրդի համար հունվարի 26-ի համաձայնագրի վերաբերյալ՝ նրա քաղաքական նշանակության առումով, այնուամենայնիվ գտնում էր, որ այն կարող է որոշ դրական դեր կատարել ժողովրդի հոգևոր-մշակութային կյանքում: «Լսենք ու պաշտպանենք» վերտառությամբ հոգվածում նա գրում էր. «Այո՛, գուցե վերջը չի հայկական հարցի, բայց վերջի սկիզբն է: Դրա համար էլ խորհրդավոր է և էն համատարած խլրտումը, որ նկատվում է մեր կուլտուրական կյանքում՝ դպրոցի, գրականության, գիտության ուսումնասիրության ու բանասիրության ասպարեզներում: Սա էլ սկիզբն է մի նոր վերածնության, որի համար մենք բավականաչափ ուժեր ու տրամադրություն ունենք արդեն»:

¹ «Անահիտ», № 11-12, մարտ-ապրիլ, 1909-1910, էջ 249:

Հինը ենթարկվում է վերագնահատության, առաջադրվում են նոր, ավելի լուրջ պահանջներ, և ամենամեծ պահանջը՝ պարզ հասկանալ...

Պարզ հասկանալ մեր երկիրը, մեր ժողովուրդը, մեր գրականությունը, մեր պատմությունը ու մեր պատմական հիշատակարանները: Մինչև այժմ նրանք խոսել են մեր սրտի հետ, և մենք սիրել ենք զգացմունքով, անխտիր, հախուռն, առանց հասկանալու, թե ինչ ենք սիրում և ինչու. այժմ գալիս է ժամանակը նրանց էությունը ներհմուտ լինելու, նրանց լեզուն ու միտքը հասկանալու, և էդ նպատակի համար են և՛ Գրական ընկերություն, և՛ Ազգագրական ընկերություն, և՛ Պատմական ընկերություն, և՛ Երաժշտական ընկերություն, և ուրիշ նման ընկերություններն ու մասնավոր ձեռնհաս անհատների ջանքերը»¹:

Հայ և ոուս ժողովուրդների բարեկամության մեծ ջատագով Հովհ. Թումանյանը գտնում էր, որ հայկական բարենորոգումների ծրագրի ուժով հայ ժողովրդի երկու հատվածների հոգեկան միասնությունը կարող է մարմին առնել այն դեպքում միայն, եթե ոուսական պետությունը շարունակի հետևողական ջանքերը՝ բարելավելու թուրքահայության քաղաքական, իրավական ու մշակութային դրությունը:

Իսկ Վահան Տերյանը 1914 թ. ապրիլի 30-ին Թիֆլիսում կարդացած իր «Հայ գրականության գալիք օրը» հրապարակային դասախոսության ընթացքում ասում էր. «... Ռուսիայի ապագան ինձ համար աներկբայելի է: Եվ կապելով իմ լավագույն հույսերը ոուս առաջավոր դեմոկրատիայի հույսերի և իմ բաղձանքները նրա բաղձանքների հետ, ես չեմ տարակուսում, որ չեմ հիասթափվելու»²:

¹ Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր յոթերորդ, էջ 138:

² Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 292:

**ՎԵՐԱՏԵՍՈՒՉՆԵՐԸ ԹՈՒՐ-ՔԱԿԱՆ
ՆԱՐԴԱՎԱՆՔՆԵՐԻ ՄԵՋ**

1915 թ. ապրիլի 15-ին Հոլանդացի Վեստենենկը և նորվեգացի Հոֆը Բ. Դուան կողմից պաշտոնապես 10 տարի ժամկետով նշանակվում են ընդհանուր վերատեսուչներ (*inspecteur général*)* Թուրքիայի յոթ վիլայեթներում: Այդ կառավարիչները Հանդես էին գալու իբրև թուրքական պաշտոնյաներ:

Նորանշանակ ընդհանուր վերատեսուչները 1914 թ. ապրիլի կեսերին Հանդիպում են Փարիզում: Արմեն Գարոն իր Հուշերում պատմում է, որ իր կուսակցության՝ ՀՅ դաշնակցության ղեկավարության Հանձնարարությունը ինքը բժ. Հակոբ Զավրիյանի (Զավրիև) հետ մեկնել է Եվրոպա, Հանդիպել վերաքննիչներին¹: Ավ. Իսահակյանը Բեուլինից Ս. Վրացյանին գրում էր, թե ինքը ողջունում է նրանց այդ քայլը: «Զավրիևը այստեղ էր, գնաց Փարիզ ինսպեկտորներին տեսնելու... Ափսոս, որ Սիմոնը** մեռավ, գոնե աչքերով տեսներ այս մեծ քայլը, որ քեզ համար փոքր է թվում»¹: Սրանց հետ ունեցած գրույցների ընթացքում պատրիարքարանի պատվիրակները զարմացել էին իրենց անելիքների մասին նրանց բացարձակ անտեղյակությունից: Ուստի ստիպված էին փորձել ամենայն մանրամասնությամբ վերատեսուչներին հաղորդակից դարձնել իրենց առաքելությունը: Թուրքահայ իրականության մասին նախնական ծանոթություն ստանալուց հետո Հոֆն ու Վեստենենկը մի քանի օր հետո ձեպ-

* Մամուլում և գրականության մեջ օգտագործված է նաև «ընդհանուր տեսուչներ», «ընդհանուր կառավարիչներ», «ընդհանուր քննիչներ», «եվրոպացի կառավարիչներ», «եվրոպացի տեսուչներ», «գեներալ-նահանգապետներ», «գեներալ-տեսուչներ», «ընդհանուր վերահսկիչներ» անվանումները:

¹ Տե՛ս «Ժամանակ» (Կ. Պոլիս), 22 ապրիլի 1914 թ.:

** Նուրբ ՀՅ դաշնակցության հիմնադիր, երրորդության երկրորդ ավագ անդամ Սիմոն Զավարյանի մասին է, որը, ինչպես արդեն նշվել է գրքի նախորդ էջերում, վախճանվել էր Կ. Պոլսում 1913 թ. Հոկտեմբերի 14 (27) -ին՝ 50 տարին դեռ չբոլորած:

¹ Սիմոն Վրացեան, Հին թղթեր նոր պատմութեան համար, էջ 348:

ընթաց գնացքով մեկնում են Կ. Պոլիս: Տեղ են հասնում ապրիլի 22-ի (մայիսի 5-ի) առավոտյան: Նույն գնացքում էին նաև Զավրիյանը և Արմեն Գարոն¹:

Սիրքեջում ընդհանուր վերատեսուչներին դիմավորում են Բ. Դուան թարգմանիչներից էսադ բեյը, Կ. Պոլսում Հոլանդական և գերմանական դեսպանատների պաշտոնատարներ, մի շարք եվրոպացի սպաներ: Նորվեգական կառավարություն անունից Գերմանիայի դեսպանատունն ուղարկել էր մի ներկայացուցիչ, որովհետև Նորվեգիան Կ. Պոլսում դեսպանություն չուներ. այդ երկրի շահերը Կ. Պոլսում ներկայացնում էր գերմանական դեսպանությունը²:

Պոլիս ժամանելով՝ հիշյալ պաշտոնատարներին առաջնորդում են Բերա-պալաս՝ Հանգստանալու:

Հայաստանի նահանգների վերատեսուչներին բարի գալուստ մաղթելու համար Հայոց ազգային ժողովի կրոնական ժողովի ատենադպիր Սմբատ ծ. վարդապետ Գազալյանը և քաղաքական ժողովի երկու ատենապետները՝ դոկտ. Դավթյանը և Քեթիկյան էֆենդին, այցելում են Բերա-պալաս և քառորդ ժամի չափ տեսակցում նրանց: Պատրիարքարանի պատվիրակությունը սիրալիք ընդունվելու լիցիան է արժանանում վերատեսուչների կողմից, որոնք խոստանում են մոտակա օրերին անձամբ գնալ պատրիարքարան և տեսակցել պատրիարքին³:

Ապրիլի 22-ի լույս 23-ի գիշերը ի պատիվ նրանց ճաշկերույթ են տալիս գերման և Հոլանդացի դեսպանները, իսկ 23-ի առավոտյան նույն դեսպանների ուղեկցությամբ ընդունվում Բ. Դուան կողմից: Հետագա օրերին նրանց ճաշկերույթ պիտի տային Թալեաթ բեյը, ինչպես և մեծ պետությունների մյուս դեսպանները, իսկ շաբաթվա ընթացքում նախատեսված էր ընդունելություն սուլթանի մոտ⁴:

Հոֆի և Վեստենենկի ժամանումը խանդավառություն էր

¹ Տե՛ս «Բյուզանդիոն», 23 ապրիլի 1914 թ.:

² Տե՛ս «Ժամանակ» (Կ. Պոլիս), 22 ապրիլի 1914 թ.:

³ «Աւետարեք», № 19, 9 մայիսի, 1914 թ.:

⁴ Տե՛ս «Հայրենիք», № 12, Հոկտեմբեր, 1924, էջ 121:

առաջացրել հայկական շրջաններում, որը հիշեցնում էր 1908 թ. երիտթուրքական հեղափոխության հաղթանակից հետո հայերի ոգևորությունը: Հայկական թերթերը լի էին ցնծալից հոգվածներով:

«Աւետարեբը» ոգևորված էր. «Մենք կ'ողջունենք այս պաշտոնեաների ժամանումը իբր քայլ մը դէպի ի բաղձացեալ վախճանը: Կ'ենթադրենք թէ Եւրոպա կատարեալ անկեղծութեամբ փափաքեցաւ իր միջնորդութիւնը եւ օժանդակութիւնը դնել ի սպաս Օսմանեան կայսրութեան՝ արեւելեան սահմանները բարեկարգելու եւ զօրացնելու գործին մէջ: Կ'ենթադրենք թէ մեր արդի դահլիճը գործին կը ձեռնարկէ՝ ըմբռնած ըլլալով թէ կայսրութեան շահը և ապահովութիւնը կը պահանջեն օրուան դէպքերուն համեմատ վերակազմել և հիմնովին բարեկարգել այն ընդարձակ երկրամասերը, որոնց վերեւ կը ծածանի տակաւին կարմիր ու ձերմակ դրօշը դժբաղդ պատերազմէ մը ետքը...»¹: Իսկ «Ազատամարտ» թերթում լույս տեսած Վոսմյանի հոգվածաշարում եվրոպացի կառավարիչներն անվանված էին «Հայաստանի երկու մարդպաններ»: Ուրիշ հայեր նույնիսկ հայացնում էին նրանց անունները. Հոֆին անվանում էին Հովյան, Վեստենենկին՝ Ոստանիկյան²:

Ընդհանուր վերատեսուչ Վեստենենկի համար նախատեսված էր այն երկրամասը (Հյուսիսային տեսչական շրջան կամ սեկտոր), որում ընդգրկված էին Սեբաստիա, Տրապիզոն և էրզրում (Կարին) նահանգները, իսկ այն երկրամասը (հարավային), որի վերատեսուչը Հոֆն էր, ներառում էր Վանի, Բաղեշի (Բիթլիս), Ուարբերդի և Տիգրանակերտի նահանգները: Վեստենենկի նստավայրը պետք է լիներ Հյուսիսային հատվածի կենտրոն էրզրում քաղաքը, իսկ Հոֆինը՝ հարավային հատվածի կենտրոն Վանը:

Պատրիարքարանում և ընդհանրապես Կ. Պոլսի հայկական քաղաքական շրջաններում սկսվեց մեծ եռուզեռ՝ անմիջական մասնակից լինելու երկու երկրամասերի բարենորոգումների

գործին: Այդ ուղղությունը մեծ ակտիվություն էր հանդես բերում հատկապես Գաշնակցությունը, որն առանձին կարևորություն էր տալիս առաջին երկրամասի հայության վիճակի կտրուկ փոփոխությանը: Ուստի պատահական չէր, որ նա պաշտոնների (հատկապես խորհրդականների) առաջադրեց մի շարք գործուն անհատների, որոնց թվում էր, օրինակ՝ Հոֆի խորհրդական նշանակված Արմեն Գարոն: «Ոգևորությունն այնքան մեծ և վարակիչ էր, - վերհիշել է Վ. Փափազյանը, - որ Զօհրապն իսկ ցանկութիւն յայտնեց ընկերանալ քննիչներուն: Ի նկատի առնուեցան եւ թեկնածուներ վարչական, ելեւտակական եւ դատական հայ բարձր պաշտօններու համար: Ծրջաբերական հրահանգ դրկուեցաւ ամէն կողմ՝ պատրաստելու ցանկեր բոլոր տեսակի հայ մասնագէտներու և պաշտօնեաներու:

Բարենորոգումներու գործադրութիւնը սկսած էր...»¹:

Բայց դեռ այդ օրերին առանձին գործիչներ կասկածներ ունեին, թե թուրքական կառավարությունը տանելի պայմաններ կստեղծի եվրոպացի այդ պաշտոնյաների արդյունավետ աշխատանքի համար: Նրանք չեշտում էին, որ ձեռնարկը կարող է հաջողությամբ պսակվել այն ժամանակ միայն, եթե, հակառակ ամեն տեսակի ներքին ու արտաքին, բնական ու արհեստական դժվարությունների, տերություններն ու օսմանյան կառավարությունը կչարունակեն աջակցել միմյանց: Օտար պաշտոնյաները, որքան էլ կարող, արդարակորով ու հաստատամիտ լինեին, իրենց դժվարին գործի մեջ հաջողություն կգտնեին ճիշտ այն չափով, որքանով նրանք քաջալերանքի ու օժանդակության կարժանանային թուրքական կառավարության կողմից, որտեղ նրանք ծառայության էին անցնում:

Թիֆլիսից եվրոպա մեկնելու ճանապարհին հենց այդ ժամանակ Կ. Պոլսում կանգ առած Ալեքսանդր Ուատիսյանը հանդիպել էր տեղի հայ գործիչներից մի քանիսի հետ: Իր հուշերում նա հետագայում պատմել է. «Հայկական վիլայեթներու համար նշանակուած եւրոպական տեսուչները Պոլիս էին հասած արդէն

¹ «Աւետարեբ», № 19, 9 մայիսի, 1914 թ.:

² «Ազատամարտ», 21 մայիսի, 1914 թ.:

¹ Վահան Փափազյան, Իմ յուշերը, հատոր երկրորդ, էջ 277:

եւ կը պատրաստուէին անցնիլ իրենց պարտականութիւններուն: Խաժակը եւ Զոհրապը առանձնապէս ոգեւորուած չէին անոնց գալուստով: Անոնք կ'ըսէին, թէ թուրք կառավարութիւնը միշտ կարող է միջոցներ ստեղծել՝ կասեցնելու համար օտար տեսուչներու գործունէութիւնը»¹:

Շուտով Պոլսում նույնպէս պարզ դարձավ, որ Եվրոպայից եկած երկու պաշտոնյաները շատ ազոտ պատկերացում ունեն թուրքիայի մասին, իսկ թուրքահայաստանի, Հայկական հարցի, նույնիսկ հունվարի 26-ի համաձայնագրի մասին՝ միայն կցկտուր տեղեկություններ: Փարիզում Հակոբ Զավրիեի ու Արմեն Գարոյի հաղորդած փաստերն ու կատարած նկարագրությունները նրանց համար չէին դարձել հաստատուն գիտելիքներ²:

Ծրագրված էր, որ վերատեսուչների պաշտոնական ընդունելություններից հետո մեծ տերությունների Կ. Պոլսի ղեսպանները նրանց մասնակցությամբ կազմելու էին աշխատանքային հրահանգ, որից հետո նրանք այդ հրահանգով մեկնելու էին իրենց պաշտոնատեղիները:

Որքան մոտենում էր Հայկական բարենորոգումների ծրագրի իրագործման ժամկետը, այնքան թուրք ղեկավար շրջանները ավելի ու ավելի նյարդային էին դառնում:

Ասենք, որ թուրքերը երբեք էլ հավատացած չեն եղել, որ 1914 թ. հունվարի 26-ին «իրենց գլխին փաթաթած» համաձայնությունը երբևիցե թղթից գործի է վերածվելու: Եվ իրավունք ունեին այդպէս կարծելու. քանի՛-քանի՛ այդպիսի համաձայնություններ ու ծրագրեր էին հրապարակ եկել թուրքահայերի վերաբերյալ և այնպէս էլ մնացել էին որպէս մեռած տառ:

Դրա վառ վկայությունն է թուրքերի նյարդային այն բանակոխիչը, որ ընթանում երիտթուրքերի «Թանին» թերթի և ՀՅԴ մամուլի էջերում:

Դաշնակցական նշանավոր գործիչ Ա. Վոսանյանը տարբեր պարբերականներում ղետեղել էր մի շարք հոդվածներ, որոն-

ցում վերլուծել ու պարզաբանել էր հայկական բարենորոգումների վերջին ծրագիրը:

Վոսանյանը կանգ էր առել հատկապէս վերատեսուչների անելիքների վրա, ինչպէս նաև շեշտել ծրագրի այն պահանջը, որի համաձայն՝ հայկական երկու նահանգներում պետական պաշտոնյաների կեսը պետք է բաղկացած լինեին հայեր, իսկ մյուսներում՝ համամասնորեն:

Դաշնակցությունից գործչի շեշտադրումները հունից հանել էին «Թանինի» խմբագրությունը:

Թուրք թերթը գրում էր. «Բավական չէ մեզ ստիպել են ընդունել հայերին և մուսուլմաններին հավասար թվով պաշտոններ տալու սկզբունքը, դեռ ցանկանում են այն իրագործել»:

Հատուկ խմբագրականով «Թանինն» առաջ քաշեց և ընդգծեց պետական ընդհանուր տեսակետը: Թերթը գրում էր, որ նորմալ իրավական պետություն մեջ պաշտոնյաների ընտրության խնդրում չեն ղեկավարվում ազգային կամ դավանական սկզբունքներով, այլ հաշվի են առնվում մարդկանց ունակությունները: Եվ եթե դա այդպէս է, ի՞նչ հարկ կա հատուկ բարձրացնել հայ պաշտոնյաների թվի հարցը, երբ հայերն օրենքի առջև հավասար են կայսրության մյուս հպատակներին: Անկախ ազգային ու կրոնական պատկանելիությունից՝ ընդունակ ու կարող օսմանյան հպատակներից որևէ մեկի առջև փակ չէ ճանապարհը ինչպէս դեպի քաղաքացիական, այնպէս էլ զինվորական ու ոստիկանական պաշտոնները:

Բայց չէ՞ որ իրավական պետությունը և թուրքիան համեմատության եզրեր չունեն, դրանք միանգամայն տարբեր բաներ են, պատասխանել էր Վոսանյանը:

Եթե հայկական և ռուսական կողմերը ձեռնարկել էին թուրքահայաստանի առաջընթացի ու զարգացման բազմազան ծրագրեր, ապա թուրքական կառավարությունը տարբեր միջոցների էր դիմում՝ խափանելու հունվարի 26-ի համաձայնագրի գործադրումը:

1914 թ. մայիսի սկզբներից Բ. Դուռն անցավ կոնկրետ գործողությունների՝ նորանոր պատրվակներով ձգձգելով բարենորոգումների գործադրությունը:

¹ «Հայրենիք», № 11 (119), սեպտեմբեր, 1932, էջ 122:

² Տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», № 12 (552), նոյեմբեր-դեկտեմբեր, 1988:

Դեռևս 1914 թ. փետրվարին Կ. Պոլսի հայոց պատրիարքի հանձնարարությունները իրավաբանների և այլոց մասնակցությամբ ստեղծվել էր հանձնախումբ, որն անմիջապես ձեռնամուխ էր եղել հունվարի 26-ի համաձայնագրի հիման վրա 35 հոդված պարունակող հրահանգների մի նախագծի կազման աշխատանքներին, որով պիտի առաջնորդվեին ընդհանուր վերատեսուչները: Նախագիծը կանոնակարգելու էր նրանց իրավունքներն ու պարտականությունները: Բայց այդ փաստաթուղթն այդպես էլ պատրիարքարանի պատերից դուրս չէկավ, քանի որ ինչպես վերատեսուչները, այնպես էլ թուրքական կառավարությունն ավելորդ համարեցին անգամ այն քննարկել¹:

Կառավարությունը հայտարարեց, թե հունվարի 26-ին ստորագրած բարենորոգումների ծրագիրը ընթացք չի ստանա, մինչև որ ընդհանուր վերատեսուչների հետ չմշակվի հատուկ կանոնագիր, որում ճշտված կլինեն այն գործածություն մեջ դնելու սկզբունքներն ու մեթոդները, և կհստակեցվեն վերատեսուչների լիազորությունները:

Բ. Դուռը որոշել էր նաև պառլամենտի քննությունը և վավերացմանը դնել ինչպես բարենորոգումների արդեն ընդունված ծրագիրը, այնպես էլ ստեղծվելիք կանոնադրությունը:

Դա միանգամայն նոր առաջարկ էր, որ չէր ծագել ինչպես Մանդելչտամի, այնպես էլ բարենորոգումների ծրագրի վերջնական տարբերակի շուրջ վիճաբանությունների ընթացքում:

«Մշակի» թղթակիցը Կ. Պոլսից հաղորդում էր. «Երիտասարդ թուրքերու հանդգնությունը մեզի համար աղետալի համեմատություններ կ'ստանայ: ... Կառավարությունը որոշած է Հայաստանի բարենորոգմանց ծրագիրը Օսմ [անեան] խորհրդարանին վավերացման ենթարկել: Անիկա լուրջ վտանգ մըն է բարենորոգմանց գործադրութեան դեմ և խրտուիլակ մը՝ կարգ մը զիջումներ ձեռք բերելու սա առարկութեամբ, թե [թուրք] ազգին արժանապատվութեան դեմ տրամադրություններ բուռն առարկութեանց կրնային հանդիպիլ և գործը խանգարէք: ... Արդեն

¹ Տե՛ս «Ազատամարտ», 21 մայիսի, 1914 թ.:

խակ անհամաձայնություն զոյություն ունի [ընդհանուր] վերատեսուչներուն և Բ. Դուռն միջև»¹:

Թուրքական կառավարության դիմակայության գլխավոր սլաքն ուղղվեց հենց ընդհանուր վերատեսուչների դեմ: Հենց սկզբից Բ. Դուռը հայտարարեց, որ վերատեսուչները պետք է բնակվեն ոչ թե տեղերում, այլ Կ. Պոլսում՝ իրենց ողջ իշխանությունը վստահելով արտասահմանյան խորհրդականներին, որոնք կբնակվեն սեկտորների կենտրոններում՝ Վանում և էրզրումում²: Այդ հայտարարությունից անմիջապես հետո բոլոր մակարդակների տեղական իշխանությունները Իթիհադի կառավարությունից հրահանգ ստացան լայն քարոզչություն սկսել մուսուլման բնակչության մեջ, նրան ոտքի հանել՝ ընդհանուր վերատեսուչների իրավունքները սահմանափակելու և դրանք նվազագույնի հասցնելու պահանջով: Շուտով ծայր առան թշնամական ցույցերը Հայաստանի բոլոր նահանգներում: Միաժամանակ, կառավարության հանձնարարությամբ արտգործնախարարությունը շտապ կազմում է «Հրահանգներ ընդհանուր վերատեսուչների իրավասության և ձեռնհասության մասին»³ կետից բաղկացած մի փաստաթուղթ, որում սահմանված էին իթիհադական կառավարության կողմից վերատեսուչներին տված իրավունքները, գծված էին այն սահմանները, որոնց չըջանակներում միայն նրանք կարող էին իրականացնել իրենց «գործունեությունը»³: «Հրահանգները» կազմել էր շատ սահմանափակ թվով իրավաբանների մի խումբ՝ Բ. Դուռն իրավագետ, ծագումով լեհ կոմս Օստրորոգի գլխավորությամբ⁴:

¹ «Մշակ», № 111, 24 մայիսի 1914 թ.:

² АВПРИ, ф. "Политархив", г. 1913, д. 3465, л. 31.

³ Տե՛ս «Արարատ», № 8, օգոստոս, 1914, էջ 697-706: Հրահանգ-կանոնագիրը, որը կազմվել էր ֆրանսերեն, առաջինը թարգմանաբար տպագրեց «Հորիզոն» թերթը (տե՛ս «Հորիզոն», № 150 և № 151, 1914):

⁴ Յան Վան դեր Դյուսեն, Հայկական օրագիր (հետայսու՝ «Վեստենենկի օրագիր»), էջ 68-69: Հավելնք, որ Պետերբուրգի հայկական խմբակի արձանագրություններում սխալմամբ նշված է, թե «Հրահանգների» տեքստը մշակվել է Գլխավոր վերատեսուչների կողմից՝ Կ. Պոլսի Հոլանդիայի դեսպանորդի հետ միասին (Տե՛ս ПЗПАК, том II, стр. 35):

Պոլսի հայոց պաշտոնական շրջանները սրան համարում էին հայերի մոլի թշնամի՝ «Plus ture que les Turcs» («Ավելի թուրք, քան թուրքերը»): Փաստաթուղթը թվագրված էր «1914 թ. մայիսի 10»:

Որո՞ւք էին այն հիմնական փոփոխությունները, որ «Հրահանգի» ուժով կատարվում էին ոռու-թուրքական համաձայնագրի մեջ:

Ա) Հրահանգների 5-րդ հոդվածով նախատեսվում էր, որ վերատեսուչները համապատասխան օրինագծեր կարող են կազմել ու կիրառել միայն «նահանգապետների ու նահանգում տեղակայված գորաբանակների հրամանատարների կարծիքն ստանալուց հետո»¹:

Բ) Հունվարի 26-ի համաձայնագրով ընդհանուր վերատեսուչներին իրավունք էր տրված պաշտոնանկ անել իրենց պաշտոններին չհամապատասխանող նահանգի բոլոր մակարդակների պաշտոնյաներին՝ բացի բարձրաստիճան պաշտոնյայից՝ նահանգապետից: Բայց այժմ, մայիսի 10-ի հրահանգի համաձայն, նա չէր կարող ազատել նաև մութասերիֆներին, գայմագամներին, դեթերդարներին, մեքթուրջիներին, հանրային կրթության, երկրագործության, կալվածային վարչության, ոստիկանության, մարդահամարի, առողջապահության, քաղաքական գործերի վերատեսուչներին, հանրային աշխատանքների գլխավոր ինժեներին, վիլայեթի թարգմանին, սանջակի վերատեսուչին, նույնիսկ երկրորդական դպրոցների տեսուչներին և ուսուցիչներին (հոդված 10)²:

Գ) «Հրահանգների» 12-րդ հոդվածով հաստատագրվում էր «Քաղաքացիական, դատական, ժանդարմերիայի, հանրային աշխատանքների և երկրագործության պատասխանատուների ուղղակի կախումն իրենց պատկանած ղեկարտամենտներից»³: Պաշտոնյաների պարտականությունների կատարման մասին եղած քննությունների տեղեկագրերի պատճենները ընդհանուր

¹ «Արարատ», № 8, օգոստոս, 1914, էջ 698-699:

² Տե՛ս նույն տեղում, էջ 701-702:

³ Տե՛ս նույն տեղում:

քննիչները պարտավոր էին ներկայացնել համապատասխան նախարարություններին¹:

Դ) «Հրահանգներով» նախատեսվում էր, որ «ֆինանսական քննիչներն անմիջական կախում ունեն ֆինանսների մինիստր-թյունից», հետևաբար ընդհանուր վերատեսուչներն անելիք չունեին այդ բնագավառում:

Նույն սկզբունքով ընդհանուր վերատեսուչների ազդեցության ոլորտից դուրս էին բերվում դատական համակարգի բոլոր աշխատողները (հոդվածներ 14, 15, 16)²:

Ե) Հունվարի 26-ի ծրագրում տեղ գտած գինակոչությունը և համիդիե հեծելազորի կազմությանը վերաբերող բոլոր հոդվածները դուրս էին ձգված հրահանգ-կանոնագրից: Այդ արվել էր այն նպատակով, որ ընդհանուր վերատեսուչները բոլորովին հեռու լինեին պետական կյանքի այդ կարևորագույն հատվածի վրա հսկելու հնարավորությունից:

Զ) Համաձայնագրի այն հոդվածը, ըստ որի՝ բնակչության ցուցակագրումը (մարդահամարը) պետք է իրականացնել «հնարավորինս շուտ, մի տարուց ոչ ուշ», փոխարինվել էր անորոշ ձևակերպումով՝ «հնարավոր կարճ ժամանակամիջոցում» և այլն:

Է) Կառավարությունն իր հարվածն ուղղել էր նաև բարենորոգումների ծրագրի այն հոդվածի դեմ, ըստ որի՝ վերատեսուչները նշանակվում են 10 տարով, մեծ պետությունների կողմից և Կ. Պոլսի համաձայնությամբ: Հիմա հրահանգ-կանոնագրի մեջ մտցվել էր մի հոդված, որով վերատեսուչների հետ կնքված պայմանագիրը հաշվի չառնելով՝ Բ. Դուռը կարող էր նրանց պաշտոնանկ անել, երբ ցանկանար: Վերատեսուչները կորցնում էին իրենց ազատությունը և վերածվում սովորական թուրք չինովնիկների և դառնում սոսկ խամաճիկներ:

Ը) Կառավարությունը մերժում էր Վանի ու Բիթլիսի նահանգներում ընտրվելիք պաշտոնեություն կես առ կեսի

¹ Տե՛ս «Արարատ», էջ 702-703:

² Նույն տեղում, № 8, օգոստոս, 1914, էջ 703-704:

սկզբունքը և վճռականորեն պաշտպանում էր համամասնականը:

Փաստաթղթի թվագրման օրն իսկ Վեստենենկն ու Հոֆը հրավիրվեցին Բ. Դուռ: Մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան նրանց ներկայացրեց «Հրահանգները» և առաջարկեց ծանոթանալ ու ստորագրել:

Նույն օրը՝ մայիսի 10-ին, դեսպան Գիրսը հեռագրով հաղորդում է Պետերբուրգ. «Այսօր Վեստենենկը և Հոֆը նախաստորագրեցին Թալեաթի հետ իրենց պայմանագրերն ու լրացուցիչ հրահանգները: Վաղը տեղի է ունենալու այդ ակտերի ստորագրումը իրենց և Մեծ Վեզիրի կողմից: Նրանք մեկնելու են Եվրոպա երկուշաբթի օրը և վերադառնալու են Կոստանդնուպոլիս նոր տոմարով Հուլիսի 1-ին՝ անմիջապես Հայաստան մեկնելու համար»¹:

Ծանոթանալով ընդհանուր վերատեսուչների իրավասության և ձեռնհասության մասին փաստաթղթին՝ Հոֆն ու Վեստենենկը գլուխ չհանեցին դրա բովանդակությունից: Այդպես էլ պետք է լիներ, քանի որ նրանք միանգամայն անծանոթ էին Հայկական հարցին, չէին հասցրել մինչև վերջ ըմբռնել իրենց դերն ու կոնկրետ անելիքները միջազգային հնչեղություն ձեռք բերած խնդրի լուծման մեջ:

Այդ անտեղյակությունն էր պատճառը, որ նրանք իրենց ստորագրությունները անմիջապես դրեցին Բ. Դուռն մատուցած «Հրահանգի» տակ:

Հրահանգը ստորագրելով՝ Վեստենենկը և Հոֆը դրանով վերածվում էին թուրքական սովորական աստիճանավորների: Հենց նրանք էին, որ, իբր, պիտի տնօրինեին թուրքական բռնապետական լծի տակ հեծող հայության ճակատագիրը:

Միայն մայիսի 14-ին պոլսահայ թերթերը տպագրեցին հաղորդում այն մասին, որ մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշայի և Հոֆի ու Վեստենենկի միջև Բ. Դուռն տեղի է ունեցել հանդիպում, որի ընթացքում քննարկվել է վերջիններիս պաշտոնավարության պայմանների հարցը:

Թուրքերն այնպիսի մթնոլորտ էին ստեղծել վերատեսուչների համար, որ սրանք արդեն սարսափում էին հանդիպել հայերին:

Գիրսն իր մոտ էր հրավիրել գլխավոր վերատեսուչներին՝ նրանց հետ հրահանգների մասին խոսակցություն ունենալու:

Հաջորդ օրն այդ ժամանակ Պոլսում գտնվող Հ. Զավրիևը հանդիպել էր դեսպանին՝ իմանալու վերատեսուչների հետ նրա խոսակցության արդյունքների մասին: Գիրսն ասել էր. «Երեկ ճաշից հետո ես զրուցեցի նրանցից յուրաքանչյուրի հետ առանձին-առանձին մեկ ժամից ավելի: Ես իսկապես ստացա նույն տպավորությունը, ինչ որ Դուք: Նրանց մոտ ինչ-որ վախվորածություն կար և անկարողություն՝ տարանջատելու սահմանը՝ որպես Թուրքիայի չինովնիկների և որպես Եվրոպայի վերատեսուչների միջև»¹:

Ռուսական կողմին առանձնապես չէին հետաքրքրում Հրահանգը և դրանում թուրքերի կատարած փոփոխությունները: Վերատեսուչների հետ մայիսի 7-ին ունեցած հանդիպման ժամանակ Գիրսը նրանց ասել էր. «Դուքտո՞ր Զավրիևն ինձ հաղորդել է Հրահանգի վերաբերյալ հայերի անհանգստությունների և ձեր այն կասկածների ու տարակուսանքների մասին, որոնք ձեզ մոտ ցանկություն էին առաջացրել վերադառնալու ձեր երկրները: Ես չեմ կիսում ձեր անհանգստությունը: Տերությունները չեն մասնակցում Հրահանգի և [Բ. Դուռն հետ ձեր] պայմանագրի մշակմանը: Դա ձեր և Թուրքիայի մասնավոր գործն է: Ինձ և տերությունների համար գոյություն ունի միայն մի բան՝ Ռուսաստանի և Թուրքիայի միջև ս. թ. 26 I (8. II)-ին ստորագրված պայմանագրի տեքստը:... Այն ամենը, ինչ պակասեցվել է Ձեր հրահանգից, ինձ չի անհանգստացնում, քանի որ բոլոր պահանջները ես հիմնելու եմ պայմանագրի վրա: Ավելին, այն ինչ գրված է այնտեղ, ես [նորից] չեմ պահանջելու և նույնը խորհուրդ եմ տալիս անել ձեզ, բայց ես թույլ չեմ տա պայմանագրում արձանագրված կետերի ոտնահարում»²:

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1914, д. 3474, л. 26.

¹ ПЗПАК, том II, стр. 41.

² Նույն տեղում:

Այնուհետև ղեսպանն ավելացրել էր, որ պարագրաֆների ձևակերպումը չափազանց կոնկրետ արտահայտություններով ավելի շատ վնաս կրերի, քան օգուտ: Ավելի լավ է ձևակերպումները ինքն ընդհանրական, քանի որ այդ ղեպքում դրանք ավելի լայնորեն մեկնաբանելու հնարավորություն կառաջանա՝ իրավունքների ընդլայնման իմաստով, իսկ կոնկրետ ձևակերպումների ղեպքում կստացվի ճիշտ հակառակը¹:

Բ. Դուան ելուզակային բացահայտ քայլերը չհանդիպեցին տերությունների հակազդեցությունը: Գործին չխառնվեց նաև Կ. Պոլսի ուսական ղեսպանությունը՝ բավարարվելով միայն Բ. Դուանը բողոքի վերջնագիր ներկայացնելով²: Մանավանդ ուսական կողմի այդ անսպասելի չեզոք կեցվածքը համարձակություն հաղորդեց թուրքական կողմին: Եվ դա այն ղեպքում, երբ երիտթուրքերը Վեստենենկին և Հոֆին նույնիսկ զրկել էին իրենց հայեցողությամբ օգնականներ ընտրելու իրավունքից: Կառավարությունն ինքն էր նրանց օգնականներ նշանակում: Օրինակ՝ Հոֆն իր հետ Վան էր տանելու 11 օգնական, որոնցից 5-ը թուրքեր էին, և բոլորն էլ կատաղի ազգայնամոլներ էին, իսկ նրանցից Ալի Սուադ բեյը հայերի հողերի վրա բալկանյան մուհաջիրներին վերաբնակեցնելու գործի ղեկավարներից էր: Մյուս օգնականներից 3-ը հայեր էին, որոնցից երկուսը երիտթուրքական իշխանությունների հլու-հպատակ դարձոներ էին: Մնացած 3 օգնականները նորվեգացիներ էին՝ Նորվեգիայի արտգործնախարարությունից աշխատակից Լուվինա Պլերը, իրավաբան Օլաֆ Դալը և այդ երկրի բանակի սպա Ռանկվարտ Դրաֆերը: Դաշնակցականները ջանքեր գործադրեցին ընդհանուր տեսուչների օգնականների կազմում ունենալ իրենց ներկայացուցչը, բայց դա չհաջողվեց: Նրանց առաջադրած Գարեգին Փաստրմաճյանի թեկնածությունը երիտթուրքերը հասկացնել տվեցին, թե «նա շատ է խելացի, իսկ մենք չենք ուզում ունենալ նման պաշտոնյաներ»³:

¹ ПЗПАК, том II, стр. 42-43.

² АВПРИ, ф. "Политархив", г. 1914, д. 3474, л. 30.

³ «Բանբեր Հայաստանի արխիվների», № 3 (85), 1989, էջ 27:

Մայիսի 10-ի «Հրահանգով» ընդհանուր տեսուչները, փաստորեն, դարձան Բ. Դուան ենթականեր: Մայիսի 16-ին հրատարակած կայսերական իրազեկով Վեստենենկին և Հոֆին շնորհվեց թուրքական բեյի տիտղոս, հետևապես նաև կրելու էին ֆես¹: Նրանք ըստ էության դառնում էին Թուրքիայի ներքին գործերի նախարարի ենթականեր. ավելին՝ եվրոպացի այդ պաշտոնյաները, ինչպես ասվեց, փաստորեն վերածվում էին թուրքական իշխանությունների կողմից վարձատրվող վարձկանների: Առանց մեծ տերությունների կառավարությունների համաձայնությունը ստանալու թուրքական կառավարությունը կարող էր ոչ միայն նրանց տուգանել կես տարվա աշխատավարձի չափով, այլև հեռացնել պաշտոնից²:

“Речь” թերթը 1914 թ. № 164 և № 165 համարներում լույս էր ընծայել Պ. Միլյուկովի հոդվածը հայկական բարենորոգումների առջև ծառայած նոր վտանգի մասին: Հոդվածագիրը նշում էր, թե հոլանդացի Վեստենենկը և նորվեգացի Հոֆը բանակցում են թուրք կառավարության հետ. «...ես կուզեի, որ նրանք չմոռանան, որ իրենք ոչ թե թուրք պաշտոնյաներ են, այլ՝ Եվրոպայի ներկայացուցիչներ: Բայց, ցավոք, նրանք չդիմացան թուրքական կառավարության ճնշմանը, Թալեաթի խարդավանքներին: Նրանց նյարդերը տեղի տվեցին և ստորագրեցին իրենց կամքին փաթաթած հրահանգ - կանոնագիրը որով կրկնվեց այն պատմությունը, որ միշտ կրկնվել է անցյալում, երբ Թուրքիան ձևական գրավոր «զիջումներից» հետո աստիճանաբար ետ էր խլում իր այդ «զիջումները»³:

Միլյուկովը գտնում էր, որ այդպիսի կերպարանափոխումից հետո «հետախուսման մասին է միայն մի բան՝ Եվրոպայի նշանակած վերատեսուչներին դարձնել կամավոր վարձկաններ, որոնց ամեն ռոպե կարելի է արձակել ... Բ. Դուուր նրանց չխնայեց ամենավերջին վիրավորանքը՝ դժբախտաբար հենց իրենց՝ վերատեսուչների համաձայնությամբ»⁴:

¹ Տե՛ս «Բիւզանդիոն», № 535, 16 մայիսի, 1914 թ.:

² Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», № 3 (85), 1989, էջ 179:

³ “Речь”, № 164, 1914 զ.

⁴ Նույն տեղում:

Այնուհետև անդրադառնալով ընդհանուր վերատեսուչներ հրավիրելու և արձակելու մասին կանոնագրի մի քանի կետերին՝ հողվածագիրը շարունակում էր. «Մենք, իհարկե, իրավունք չունենք դիտողություն անելու Եվրոպայի կողմից ընտրված վերատեսուչներին: Պետք է հուսալ, որ նրանք ուժեղ բնավորության և բարձր առաքինությունների տեր մարդիկ են: Բայց ինչպես հասկանալ այդպիսի կանոնագիր կազմելուն նրանց համաձայնություն տալը ... Արդյո՞ք դա ապացույց է, որ նրանց մարդկային թուլությունները չեն դիմացել փորձության»¹:

Միլյուկովը քննադատում էր նաև Կ. Պոլսի ռուսաց դեսպանությանը, որ հրահանգ-կանոնագիրը կազմելու ժամանակ ցուցաբերել էր անտարբերություն ու անփութություն: Նա հարց էր տալիս, թե դեսպանությունը կո՞ղմ է եղել հունվարի 26-ի համաձայնագրից այդքան մեծ շեղումների, թե՞ ուղղակի անտեղյակ է եղել Բ. Դոան և ընդհանուր վերատեսուչների բանակցություններից: «Որքան էլ այս, հավանորեն ինքնակամ, անտեղյակությունը տարօրինակ թվա, ես էլի գերադասում եմ կանոնագրի նկատմամբ արված խայտառակությունը բացատրել հատկապես Կ. Պոլսի [ռուս] դիվանագետների անգիտությամբ, այլ ոչ թե նրանց չար կամեցողությամբ»²:

Հողվածի երկրորդ մասում դարձյալ շեշտելով ռուս դիվանագետների սովորական անփութությունը՝ Միլյուկովը տարօրինակ էր համարում, որ արտգործնախարարությունը հաշվի չի առնում, որ Գերմանիան հայկական հարցում մրցման մեջ է Ռուսաստանի հետ, և եթե նրան հաջողվի չահել հայերի լայն համակրանքը, ապա «մեզ համար չափազանց ծանր կլինեն հետևանքները»: Այնուհետև՝ «Ես համոզված եմ, որ ներկայումս ժամանակավրեպ և անհիմն կլինի Լորանովի քաղաքականության վերադառնալու մասին խոսելը, բայց, ավանդ, ցավով արձանագրում ենք, որ հայկական հարցում երեքուճներ եղան (ընդգծումը մերն է: - Հ. Ս.) Մենք չպետք է զարթնեցնենք տա-

¹ "Речь", № 164, 1914 շ.

² Նույն տեղում:

ռապյալ ժողովրդի տխուր անցյալի հիշողությունները, որոնք, պետք է հուսալ, ընդմիջտ պատմության գիրկն են անցել»¹:

Ստեղծված դրությունից ի՞նչ ելք էր ցույց տալիս Միլյուկովը: Նա կարծում էր, թե ամենից առաջ պետք է գիտակցել սխալը և առանց համառելու աշխատել որքան կարելի է շուտ ուղղել այն: Երկրորդ՝ Ռուսաստանը պետք է հատակ պարզի իր վերաբերմունքը դեպի հրահանգ-կանոնագիրը: Այսինքն՝ եթե ճիշտ է, որ Ռուսաստանը տեղյակ չի եղել և չի մասնակցել այն կազմելու գործընթացին, այդ դեպքում նա կարող է իրավական տեսակետից փաստաթուղթը բանի տեղ չդնել և կազմած ու ստորագրած կողմերին հայտարարել, որ Ռուսաստանն այն չի ընդունում, քանի որ դա ոչ միայն չի համապատասխանում հունվարի 26-ի համաձայնության բովանդակությանը, ոգուն, տառին, այլև լի է հակասություններով ու թերություններով:

Մամուլի քննադատությունները և տարբեր տեղերից հնչող զգուշացումները ռուսական դիվանագիտությանը ստիպեցին մեծ ուշացումով հանդես գալ «Հրահանգներում» Բ. Դոան կողմից կատարված կոպիտ միջամտությունների դեմ:

Անհանգստացած տեղի ունեցածից՝ մայիսի 24-ին Կոստանդնուպոլիս, դեսպան Գիրսին հղած № 1066 գաղտնի հեռագրով փոխարտգործնախարար Ներատովն արտգործնախարար Ս. Սազոնովի անունից ցանկանում էր պարզաբանումներ ստանալ «Հրահանգների» այն կետերի վերաբերյալ, որոնք միակողմանի ենթարկվել էին փոփոխությունների: Հեռագրում ասված էր. 1) «Արդյո՞ք հայկական բարեփոխումների մասին [դեսպանատան] նոտան պաշտոնապես է հանձնվել [Բ. Դոանը]՝ ելնելով հունվարի 26-ի համաձայնագրից, 2) հրահանգների տեքստի մեջ չեն զրավվել նոտայի դրվագները վիլայեթների ժողովրդական լուսավորության բյուջեում ազգությունների մասնակցության մասին, զինվորական ծառայության մասին, համիդիե զնդերի մասին և գլխավոր խորհուրդների իրավասության մասին:

¹ "Речь", № 165, 1914 շ.

² Նույն տեղում:

Արդյոք բավական էք համարում այս հարցերի հիշատակումը ընդամենը նոտայի տեսքով միայն, 3) Հրահանգների տեքստում չի հիշատակված հայկական սեկտորներում մահմեդականների վերաբնակեցման արգելումը և միմիայն նստակյաց բնակիչներին ընտրական իրավունքներ տրամադրելը, ինչի մասին հիշատակվում է Գուլկեիչի № 62 և մեր № 168 հեռագրերում»¹:

Վեստենենկն ու Հոֆը մեծ ուշացումով գլխի ընկան, թե ինչ է կատարվել: Նրանք գնալով համոզվում էին, որ «Հրահանգները», որի տակ ստորագրել են իրենք, ըստ էության իրենց ձեռքից խլել է հունվարի 26-ի համաձայնագրով ունեցած լիազորությունները: Ուստի նրանց հարկ եղավ հանգամանորեն ուսումնասիրել փաստաթուղթը՝ առավել ճիշտ պատկերացում կազմելու համար իրենց իրավունքների և դրանց սահմանափակման օրինականությունների մասին:

Փաստաթուղթը քննելուց հետո Վեստենենկն ու Հոֆը Բ. Դոանը ներկայացրին իրենց հետևյալ հակաառաջարկները. ա) իրենք պետք է ընտրեն իրենց քարտուղարներին, թարգմանիչներին ու այլևայլ ոչ որոշիչ դեր ունեցող ծառայողներին, այլ ոչ թե թուրք կառավարությունը, բ) իրենք պետք է իրավունք ունենան ի հարկին պաշտոնանկ անելու նաև նահանգապետներին (մի պահանջ, որ չկար հունվարի 26-ի համաձայնագրում): Միաժամանակ նրանք բողոքում էին, որ խախտված են համաձայնագրի համարյա բոլոր սկզբունքային պահանջները. հաշվի չի առնվում ազատված պաշտոններում մահմեդականների ու քրիստոնյաների նշանակման համաձայնության պահանջի պահանջանման անհրաժեշտությունը, ոչ մի հայ չի վերցվում պետական ծառայության, ոստիկանության և ժանդարմերիայում նույնպես ազատված տեղերը զբաղեցնում են միայն մահմեդականները, շարունակվում են քրդերի կողմից հայերի հարստահարումները, դատարաններում հայերը ոչ մի դատ չեն չահում և այլն:

Բ. Դոուրը վճռականապես մերժեց ընդհանուր վերատեսուչ-

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1914, д. 3474, л. 30.

ների բողոքներն ու ներկայացրած պահանջները՝ պատճառաբանելով, թե խորհրդարանն անմիջապես կմերժի դրանք:

Միաժամանակ, վերատեսուչների կարծիքների հետ հաշվի նստելու պատրանք ստեղծելու նպատակով կառավարությունը նրանց հետ «բանակցություններ» սկսեց: Արմեն Գարոն վերհիշել է. «Բանակցությունները նոր շարք մը սկսաւ քննիչներուն եւ Պապը Ալիին միջև: Քննիչներն իրենց ձեռքին ունէին օրինակը այն ծրագրին, որը ստորագրած էր տաճիկ կառավարութեան կողմէ: Եւ, իբրեւ եվրոպացի մարդիկ մէկը նորվէկիացի պ-րն Հոֆ, իսկ միւսը հոլանտացի պ-րն Վեստէնէնկ, կը հասկնային, որ իրենց իրաւունքն ու պարտականութիւնն էր այդ ծրագիրը նոյնութեամբ գործադրել: Այս խեղճ եվրոպացիք առաջին անգամ էր, որ շփման մէջ կուգային թուրք մտայնութեան հետ յանձին Թալէաթ փաշային (այն ատէն՝ պէյին) եւ իւր օգնականներուն:

Առաւուտ երեկոյ կը մտնէի Թոքաթլեանի՝ մոտ զիրենք տեսնելու եւ իրենց սիրտ տալու, որ չյուսահատուին Թալէաթի էնթրիքներէն եւ պնդեն իրենց իրաւունքներուն վրայ»¹:

Բ. Դոան հետ վերատեսուչների բանակցությունները, որոնք տևեցին չաբաթներ, որևէ արդյունք չտվեցին: «Ամէն անգամ, որ քննիչները ետ կուգային Թալէաթին մոտէն, ավելի եւ ավելի ընկճուած կ'երեւային,- գրել է Արմեն Գարոն: ... Այս բանակցություններն ընթացքին պ-րն Հոֆը՝ յուսահատուած թուրքերու յամառութենէն եւ վիրաւորուած ..., երեկո մը, վերադառնալով Պապը Ալիէն, ինձ յայտնեց, թէ ինքը որոշեր է յաջորդ օրը վերջնագրի ձևով խոսելու Թալէաթի հետ եւ, եթե վերջինս չհամաձայնի իր պայմաններուն, անմիջապես իր հրաժարականը պիտի տայ»:

Վեստենենկն իր օրագրում նշել է, որ բանակցություններից մեկի ժամանակ Թալեաթին իրեն և Հոֆին համոզում էր, որ իրենք պիտի աշխատեն միայն ու միայն ի նպաստ թուրքիայի: Նա

^{*} Նկատի ունեւ ժամանակին Կ. Պոլսի ամենանշանավոր «Թոքաթլեան» չլուրանոցը:

¹ «Հայրենիք», № 2, դեկտեմբեր, 1922, էջ 42:

ուղղակի ասել էր. «Մեզանում չատ եվրոպացիներ ունենք, որոնք մեզ մատուցել են բազում ծառայություններ և դրա համար մենք երախտապարտ ենք նրանց: Հետևաբար ձեզ էլ հաջողություն ենք մաղթում»¹:

Թալեաթի այս կեղծ մաղթանքի առթիվ Վեստենենկն իր օրագրում հետևյալ մեկնաբանություն էր արել. «Ուրեմն գրավիչ տոնով ասված սույն նախադասությունը նշանակում էր. զգուշացե՛ք, մեզ համար դուք էլ նրանց պես պաշտոնյաներ եք»: Այսինքն, Թալեաթը ցանկացել էր ասել, որ իր համար Վեստենենկն ու Հոֆը նույնպիսի սովորական ծառայողներ են, ինչպես Թուրքիայում աշխատող հազարավոր մյուս եվրոպացիները²:

Թուրքական իշխանությունների հերթական անօրեն գործողությունները մեծ անհանգստություն էին առաջ բերել հայ հասարակության մեջ: Այդ էր պատճառը, որ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը ստիպված հերթական դիմում-բողոքը ներկայացրեց Բ. Դոանը՝ պահանջելով հավատարիմ մնալ հունվարի 26-ի համաձայնագրի տառին ու ոգուն, հատկապես ուշադրություն հրավիրելով համաձայնագրում արձանագրված պաշտոնյաների ազգային կազմի հավասարության սկզբունքի պահպանման անհրաժեշտության վրա: Կարդալով պատրիարքարանի դիմում-բողոքը՝ Թալեաթը ի պատասխան հայտարարել էր. «Մենք այնպես չենք հասկանում հավասարության սկզբունքը, ինչպես հայերն են ցանկանում մեկնաբանել: Դա նշանակում է ընդհանրապես բոլոր օտտոմանների հավասարություն: ... Ինչի՞ց եք դժգոհում: Դուք ցանկանում էիք եվրոպայի օգնությամբ ստանալ բարենորոգումներ... Ահա ձեզ և բարենորոգումներ»³:

Ստեղծված մտահոգիչ նոր պայմաններում հայ հասարակական-քաղաքական շրջաններում տիրեց ընդհանուր հուսախաբություն: Անելանելի թվացող վիճակից դուրս գալը դարձավ օրախնդիր: Հայ քաղաքական ուժերը տարբեր առաջարկներ էին

անում նաև ծայրահեղ աջ և ծայրահեղ ձախ շրջաններից:

Այսպես, բոլորովին կտրված իրականությունից և հաշվի չնստելով «Հնարավորություն» կոչվող հասկացություն հետ՝ հնչակյաններն իրենց դեկավարությունից պահանջում էին անհապաղ կատարել իրենց կուսակցության 1913 թ. սեպտեմբերի 7-րդ պատգամավորական ընդհանուր ժողովի որոշումը, այն է՝ առանց տատանվելու անցնել ընդհատակ և զինված պայքար սկսել Իթիհհադի դեմ՝ եվրոպական կոնտրոլով ինքնավար Հայաստանի պահանջով: Հնչակյան «Երիտասարդ Հայաստան» թերթը գրում էր. «Հայկական հարցը լուծված չէ..., հայ ճնշված ու հարստահարված մասսան՝ պատենչի վրա կանգնած՝ պետք է շարունակի իր ազատագրական պայքարը, մինչև որ իր սիրով փայփայած իղձերի պսակումը եվրոպական կոնտրոլով ինքնավար Հայաստանի ծրագիրը իրականանա...»¹: Ըստ որում, հնչակյան պատգամավորական նշված ժողովը այդ կոնտրոլից դուրս էր թողել Ռուսաստանը²:

Հնչակյանների՝ Հայաստանի ինքնավարության պահանջը զարմանալիորեն զնալով համակիրներ էր ձեռք բերում Դաշնակցության մի մասի մոտ: Այսպես, դոկտ. Ջավրիեը գտնում էր, որ հատկապես «Հրահանգների» հետ կապված պատմությունից հետո թուրքերն առաջ են բերելու հնարավոր բոլոր խոչընդոտները, որպեսզի տապալեն հունվարի 26-ի համաձայնագիրը: Ուստի և, գտնվելով Փարիզում, նա կառավարական տարբեր մակարդակների պաշտոնյաների հետ հանդիպումների ժամանակ շեշտում էր, որ քանի դեռ նշված համաձայնագրից հետո էլ հայերի բախտը կախված է լինելու ամեն կարգի խարդավանքների ընդունակ թուրքական բռնապետությունից, ուստի նրանք հազիվ թե մի լավ օր ունենան հետայսու նույնպես:

Պատրիարքարանի բողոքից մի կարճ ժամանակ ոգի առած Հոֆն ու Վեստենենկը սպառնացին մեկնել իրենց երկրները և Պոլիս վերադառնալ միայն այն դեպքում, եթե կրնդունվեն իրենց

¹ «Վեստենենկի օրագիրը», էջ 67:

² Նույն տեղում:

³⁰ «Բանքեր Հայաստանի արխիվների», № 3 (85), 1989, էջ 67:

¹ «Երիտասարդ Հայաստան», № 36, 9 հուլիսի, 1914 թ.:

² Տե՛ս «Հնչակ», № 1, 1914, էջ 27:

առաջարկները: Բայց սպառնալիքը ոչ մի ազդեցություն չգործեց թուրք իշխանությունների վրա: Արմեն Գարոն վկայում էր, որ «Թալէաթը՝ ռուսական և գերմանական դեսպաններու անտարբերութենէն քաջալերուած ամէն օր աւելի յանդուգն կը դառնար եւ չէր ուզեր որեւէ լուրջ քայլ ընել եւ ընդունուած ծրագրի որեւէ հիմնական կէտը գործադրել»¹:

Գրանից հետո ընդհանուր վերատեսուչները արևելյան ձեպընթացով մեկնեցին Եվրոպա՝ իրենց բնակավայրերը՝ Քրիստիանա (Նորվեգիա) և Լահե (Հոլանդիա), որպեսզի կարգավորեն իրենց ընտանեկան գործերը²: Նրանք պարտավորված էին Կ. Պոլիս վերադառնալ ամենաուշը մինչև մայիսի 23 (հունիսի 5)–ը և այդտեղից անմիջապես մեկնել պաշտոնատեղիներ:

Քրիստիանայում ռուսական դեսպանորդ Արսենը 1914 թ. հունիսի 6–ին Պետերբուրգ հղած հեռագրով հաղորդում էր, որ իրեն այցելել է փոխգնդապետ Հոֆը, որը նոր է վերադարձել Կ. Պոլսից, ուր անցկացրել է շուրջ երեք շաբաթ: Նա ռուս դիվանագետին հայտնել էր, թե ինքը հանդիպումներ է ունեցել մեծ վեզիրի ու ներքին գործերի նախարար Թալեաթի հետ, օսմանյան կառավարության հետ 10 տարվա ժամկետով պայմանագիր է ստորագրել թուրքահայաստանում գլխավոր վերատեսչի պաշտոն վարելու համար: Հոֆը հավելել էր, որ թուրքական կառավարությունում հայկական գավառների համար գլխավոր վերատեսուչներին վերաբերող հրահանգներ մշակելիս ինքը նկատել է նրանց իրավունքները հնարավորինս կրճատելու՝ թուրքական կառավարության ձգտումը: Ընդ որում, այս իմաստով առավել համառություն էր հանդես բերել Բ. Դոան իրավախորհրդատու, լեհ Օստրորոզը, որը, Հոֆի արտահայտություններ, այս հարցում ծայրահեղ թուրքամոլ էր³:

Արսենը նշում էր, որ Հոֆը հատկապես մտահոգված էր այն հարցով, թե երբ և ինչպես պիտի տեղի ունենա «համիրդիե» անկանոն քրդական հեծելազորի ենթադրյալ վերակազմումը:

¹ «Հնչակ», № 1, 1914, էջ 27:

² «Բյուզանդիոն», 14 մայիսի 1914 թ.:

³ АВПРИ, ф. "Политархив", г. 1914, д. 3474, л. 69.

«Նրա կարծիքով այս գնդերի գոյությունը անարխիայի գլխավոր աղբյուրներից մեկն է թուրքահայաստանում և մեծ չարիք՝ հայկական գավառների խաղաղ բնակչության համար»¹:

Հոֆը ենթադրում էր Նորվեգիայից Պոլիս մեկնել հունիսի 9 (22)–ին և իր նոր պաշտոնավայր ժամանել հուլիսի սկզբին: Արսենը տեղեկացնում էր, որ նա իր հետ որպես քարտուղարների Հայաստան է տանելու երեք նորվեգացիների՝ տեղի արտգործնախարարությունից պաշտոնյաներ Պլերին, իրավագետ Դալին և լեյտենանտ Գրաֆերին²: Նորվեգական թերթերի տեղեկություններով Հոֆը մտադիր էր իրեն հատկացված սեկտորի թուրքական ժանդարմերիայում ծառայության մեջ ներգրավել նորվեգացի մի քանի սպաների³:

Հանդիպման վերջում Հոֆը Արսենին ասել էր, թե առանց Ռուսաստանի գործող աջակցություն իր գործունեությունը չի կարող արդյունավետ լինել, և միաժամանակ հույս էր հայտնել, որ իր տեսչությունը վստահված սեկտորի սահմաններում ստանալու է ռուսական հյուպատոսությունների լայն աջակցությունը⁴:

Կարճ ժամկետով հայրենիք վերադարձած Վեստենենկը իր հերթին եղել էր Հոլանդիայի արտգործնախարարությունում և ստացել անհրաժեշտ խորհուրդներ⁵:

Ընտանիքներին հանդիպելուց և անձնական գործերը կարգադրելուց հետո Վեստենենկը և Հոֆը կրկին գալիս են Փարիզ⁵:

¹ АВПРИ, ф. "Политархив", г. 1914, д. 3474, л. 69.

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

⁵ Հասցայում գտնվելու օրերին Վեստենենկի հանդիպումների և թուրքիա վերադառնալու նախապատրաստությունների մասին մենք ուրիշ տեղեկություններ չունենք:

⁵ Տե՛ս «Նուսթ», № 20, 17 մայիսի, 1914 թ.:

ՊՈՂՈՍ ՆՈՒՔԱՐԸ ՆՈՐԻՑ ԳՈՐԾԻ ԳԼՈՒՆ

Ի տարբերություն ձախերի՝ Հայ քաղաքական գործիչների մեծ մասն իր հայացքը կրկին հառեց Եգիպտոսի կողմը՝ դեպի Պողոս Նուբար փաշան: Իմանալով ծագած նորանոր բարդությունների մասին՝ Նուբարը Եգիպտոսից դիմումներ է հղում ռուսական և գերմանական իշխանություններին, բողոքում Բ. Դոան անօրինականությունների դեմ, խնդրում միջամտել գործին և վերականգնել կնքված համաձայնագիրը:

Տեղեկանալով, որ վերատեսուչները Փարիզում են և պատրաստվում են այնտեղից մեկնել իրենց պարտականությունների կատարմանը, Նուբար փաշան որոշում է տեսակցել նրանց հետ և հավատ ներշնչել իրենց ուժերի հանդեպ: Իր հերթին Գևորգ V կաթողիկոսը նոր հատուկ կոնդակով Նուբար փաշային լիազորեց այնտեղ գործի գլուխ անցնել և իր բոլոր հնարավորություններով հետամուտ լինել Բ. Դոան կողմից հունվարի 26-ի համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարմանը¹:

Չստանալով հուսադրող պատասխաններ՝ հունիսի 10-ին Նուբար փաշան կրկին բռնում է Եվրոպայի ձանապարհը: Տեղ հասնելուն պես Փարիզում նա առաջինը հանդիպում է Ֆրանսիայի արտգործնախարար Դոմերգին, որի ընթացքում վերջինս խոստանում է միջամտել գործին, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ հունվարի 26-ի համաձայնագրում տեղ գտած բոլոր դրույթները պահպանելու համար:

Ֆրանսիական դիվանագիտության կողմից համաձայնագիրը պաշտպանելու հավաստիացումներ ստանալուց հետո Նուբարը մեկնում է Հոլանդիա: Այստեղ տեսակցում է կառավարական շրջաններում առավել ազդեցիկ դիրքեր ունեցող իր բարեկամներին, լինում է արտգործնախարարությունում, ընդունվում նախարարի կողմից, ներկայացնում Վեստենենկին և նրա գործըն-

կեր Հոֆին բաժին ընկած մեծ դժվարությունները, միաժամանակ հավաստիացնում, որ կանի ամեն ինչ, որպեսզի իրենց հայրենակիցը ծառայության ընթացքում ստանա հայկական շրջանների մշտական աջակցությունը:

Այստեղ հանդիպելով վերատեսուչներին՝ Նուբար փաշան նրանցից մանրամասն տեղեկություններ է ստանում Կ. Պոլսում Բ. Դոան կողմից ցույց տրված անբարեհաճ վերաբերմունքի մասին: Վեստենենկը նրան պատմում է, թե թուրք իշխանավորներն ինչպես են իրեն և Հոֆին դարձրել Հյու-հնազանդ պաշտոնյաներ, և որ իրենք ոչ մի հնարավորություն չեն ունեցել անարգել կատարելու իրենց պաշտոնական պարտականությունները²: Նա չեչտում է, որ իրենց հետ պայմանագիր կնքելիս Բ. Դոուր պաշտոնապես հայտարարել է, որ իրենք պետք է մոռանան հունվարի 26-ի համաձայնագրի գոյության մասին և անչեղ առաջնորդվեն միայն թուրքական կողմից կազմած «Հրահանգներով», որոնք մշակված են տերությունների ազդեցությունից բացարձակապես անկախ³: Նուբար փաշայի այն հիշեցմանը, թե գլխավոր վերատեսուչները, վերջապես, նաև տերությունների ներկայացուցիչներ են Հայաստանում, Վեստենենկը և հատկապես այդ խոսակցությանը ներկա նրա անձնական քարտուղարը հայտարարում են, որ այսուհետև իրենք Բ. Դոան պաշտոնյաներ են և պարտավոր են միայն առաջնորդվել նրա ցուցումներով: Վերատեսուչը նույնիսկ ասել էր. «Հայերը չպետք է զայրանան, եթե, հենց իրենց շահերի համար, ես ստիպված լինեմ երբեմն գործել հենց իրենց դեմ՝ ելնելով Բ. Դոան տրամադրությունից»³: Դրանով հաստատվում էր, որ վերատեսուչներն արդեն պայմանավորվել են չչեղվել Բ. Դոան կողմից գծած շրջանակներից: Այդ ամենը ցույց էր տալիս, որ վերատեսուչները արդեն կորած էին Հայերի համար:

Համոզված, որ այդ ամենի թիկունքում կանգնած է Գերմա-

¹ Տե՛ս Սամուել Պողոսեան, Պողոս Նուբար փաշա. ազգային գործիչը, Երևան, 2004, էջ 81:

² «Բանբեր Հայաստանի արխիվների», № 3 (85), 1989, էջ 179:

³ Լուիս Կոստան Վեստենենկի օրագիրը, էջ 100 (տողատակ), նաև՝ «Մշակ», № 135, 22 հունիսի, 1914 թ.:

³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, թ. 108:

նիայի դիվանագիտությունը, Պողոս Նուբարը նպատակադրվում է մեկնել այնտեղ և «աշխատել բառնալ խոչընդոտները»¹:

Փարիզից գալով Հոլանդիա և հանդիպումներ ունենալով արտգործնախարարությունում՝ Նուբարը այնտեղից մեկնում է Բեռլին: Ա. Յիմերմանի հետ զրույցի ընթացքում նա բողոքում է թուրքական կառավարության հերթական խարդավանքների դեմ: Գերման դիվանագետը նույնպես նրան տալիս է հուսումնալից խոստումներ, վստահեցնում, որ իրենք չեն ընդունելու հունվարի 26-ի համաձայնագրի այն հոդվածների փոփոխությունները, որ թուրք կառավարությունը կատարել է հրահանգկանոնագրի մեջ, նա խոստանում է Կ. Պոլսի դեսպան Վանգենհայմին հանձնարարել ակտիվ միջամտել գործին, հասնել այն բանին, որ ամբողջ ծավալով վերականգնվեն ընդհանուր վերատեսուչների իրավունքները: Միաժամանակ Յիմերմանը ավելորդ չի համարում ասել, որ գերմանական կառավարությունը հակված է անկեղծորեն օգնելու հայերին, միայն թե Ռուսաստանը մնա իր տեսակետին²:

Հաջորդ հանգրվանը Ռուսաստանի մայրաքաղաք Պետերբուրգն էր, ուր Պողոս Նուբարը Բեռլինից գնացքով ուղևորվել էր: Տեղեկություն ստանալով Պողոս Նուբար փառայի Պետերբուրգ գալու մասին՝ ՊՀՊ Բյուրոն հունիսի 11-ին նիստի հավաքվեց՝ քննարկելու բարձրապատիվ Հյուրի ընդունման հետ կապված հարցերը:

Հունիսի 12-ի կեսօրին Պողոս փառայն ժամանեց Պետերբուրգ: Վարչական կայարան դիմավորելու էին եկել հայկական խմբակի պատվիրակությունը՝ Գ. Տիգրանովը, Ն. Ադոնցը, Ս. Տիգրանյանը, Ա. Սարուխանյանը, Ա. Ասրիբեկովը, Վ. Վարդանովը և այլք: Ողջույնի խոսք ասաց Գ. Տիգրանովը³:

Նույն օրը Պողոս փառայն հանդիպեց իշխան Գ. Ն. Տրուբեցկոյին, որից հետո Մ. Պապաջանովի կողմից հրավիրվեց ճաշի:

Ներկա էին փառային դիմավորած պատվիրակություն անդամները, ինչպես նաև Պետական խորհրդի անդամ Մ. Կովալեսկին, Պետական դումայի պատգամավորներ Պ. Միլյուկովն ու Ի. Եֆրեմովը: Շոչափվեցին հարցեր՝ կապված Թուրքական Հայաստանում բարեփոխումների վերջին զարգացումների հետ, անդրադարձ եղավ թուրքական իշխանությունների կողմից Հոֆի և Վեստենենկի նկատմամբ ծավալած խարդավանքներին, անհրաժեշտ համարվեց շարունակել պայքարը նրանց իրավունքների պաշտպանության համար⁴:

Հունիսի 13-ին Պողոս Նուբարը կրկին հանդիպեց իշխան Տրուբեցկոյի հետ, այնուհետև երկարատև ընդունելություն ունեցավ արտգործնախարար, հոֆմեյստեր Ս. Սագոնովի մոտ⁵:

Երկուսի հետ ունեցած զրույցի ժամանակ Նուբար փառայն ջանում է ապացուցել, որ դրությունը խիստ դժվարացել է այն պատճառով, որ Բ. Դուռն իր բուն է առել երկու գլխավոր վերատեսուչներին: Նա ցավով ընդգծում է, որ վերջիններս «այժմ կատարելապես զրկված են իրենց անկախությունից»⁶:

Երկար տևած ջերմ ընդունելություն ավարտին իշխան Տրուբեցկոյը Նուբարին պաշտոնապես հավաստիացնում է, որ ռուսական կառավարությունը չի չեղվելու հայկական խնդրում որդեգրած դիրքից և պիտի շարունակի պահանջել ռուս-թուրքական համաձայնագրի անվրեպ ու ամբողջական գործադրությունը՝ անտես առնելով թուրք կառավարության հրահանգկանոնագրում մտցված շեղումները⁷:

Հետագայում (1919 թ.) Պողոս Նուբարը, վերհիշելով այդ պահը, ասել է. «Ինձի հայտարարեց (Տրուբեցկոյը: - Հ. Ս.), որ կայսերական կառավարութեան հայոց հանդեպ հետևած քաղաքականութիւնը այլևս Լոպանուսի և Կոլիցիների քաղաքականութիւնը չէր և ես ապահով կրնայի ըլլալ որ ինքը կը նկատէր հայերը կայսրութեան ամենաուղղամիտ և ամենահավատարիմ

¹ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 21, թ. 6:

² Տե՛ս «Վեստենենկի օրագիրը», էջ 100 (տողատակ), նաև՝ «Մշակ», № 135, 22 հունիսի, 1914 թ.:

³ ПЗПАК, том II, сmp. 58.

¹ ПЗПАК, том II, сmp. 58.

² Նույն տեղում

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս «Մշակ», № 135, 22 հունիսի, 1914 թ.:

հպատակներեն մին: Կարծեմ չահեկանութիւնէ զուրկ չէ պիտի ըլլայ յել, այդ օրէն ի վէր պատահած դեպքերուն պատճառաւ, որ պ-րն Սաղոնոսֆ զիս զգուշացուց Գերմանական կառավարութեան խարդախութիւններուն դեմ, որուն հանդէպ մեծ անվստահութիւն մը կը ցուցնէր»¹:

Հայ գործչի հետ Տրուբեցկոյի զրույցից անմիջապէս հետո Սաղոնովը հանձնարարութիւն է տալիս Կ. Պոլսում ուսաց դեսպան Մ. Գիրսին հնարավոր բոլոր միջոցներով արգելք հանդիսանալ համաձայնագիրն աղճատելու Բ. Դոան որեւէ փորձի:

Արտգործնախարարութիւնում Նուբար փաշայի հանդիպման կապակցութեամբ ուսական թերթերը գրում էին, որ ուս դիվանագիտութիւնը պետք է հանդես բերի վճռականութիւն և արգելի հունվարի 26-ի համաձայնագրում որեւէ փոփոխութիւն:

Հունիսի 14-ի երեկոյան ռեստորանում տեղի ունեցավ հանդիսավոր ճաշկերույթ, որ կազմակերպել էին Սանկտ Պետերբուրգի հայերը*: Բարձր հյուրին ողջույնի խոսքով առաջինը դիմեց Գ. Տիգրանովը: Աշխարհի բոլոր մասերում, ասաց նա, ուր գտնվում է գեթ մի հայ, այնտեղ հնչում է Նուբար փաշայի անունը: Այսօր նա հայ ազգի պարծանքն է: «Դուք միացրիք ազգը, մեզ ուժեղացրիք այդ միավորմամբ և եթե Տաճկաստանում մենք մի *quantite negligeeable* էինք, մեզ ատում էին, այժմ համարձակ կարող ենք բացականչել *aderint dum metuant!* Երբ ես նայում եմ Ձեր պայծառ դեմքին, տեսնում եմ մեր ազգի վերածնութեան արչալույսը: Ձեր կրակոտ և խանդուն բնույթը գրավական է, որ այդ արչալույսը կփոխարինվի պարզ ցերեկով և ազգը կանցնի իր հարազատ կուլտուրական աշխատանքին»²:

¹ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 21, թ. 8:

* Այնտեղ ներկա էին Ն. Գ. Աղոնցը, Ա. Բ. Ասրիբեկովը, է. Ի. Բաբայանցը, Գ. Բ. Բողղանյանը, Ս. Գ. Բուդաղովը, Ա. Գ. Բուզուղովը, Ա. Օ. և Յա. Օ. Ղուկասովները, Յա. Ն. Ջավրիկը, Ն. Ն. Քալանթարովը, Ն. Ա. Կորգանովը, Գ. Ի. Լիանոզովը, Տ. Ն. և Մ. Ի. Պապաջանովները, Ն. Ն. Պոպովը, Պոպովյանը, Ա. Ջ. Սարուխանյանը, Ս. Պ. Սերբերյակովը, Տ. Ե. Տեր-Մաթևոսովը, Գ. Ֆ. և Լ. Ֆ. Տիգրանովները, Ա. Ե. Նան-Աղովը, Ի. Մ. և Մ. Գ. Շադինովները, Կ. Ի. Շադինովը, Գ. Նախուտովը:

² ПЗПАК, том II, стр. 59-60.

Ելույթներ ունեցան նաև Ա. Սարուխանյանը, Մ. Պապաջանովը, Ն. Աղոնցը, Պոպովյանը, Ս. Սերբերյակովը:

Պատասխան խոսքում Նուբար փաշան իր շնորհակալութիւնը հայտնեց ներկաներին հյուրընկալութեան համար և նկատեց, որ իրեն վերագրվող արժանիքները չափազանցված են, քանի որ հանձն առնելով Ամենայն հայոց կաթողիկոսի պատվիրանը, այն է՝ թուրքական Հայաստանում մեծ տերութիւնների բարեփոխումների իրականացումը, ինքը իր ուժերի և զաղափարի չափով ձգտել է օգտակար լինել նախանշված նպատակին: Իր գործը զգալիորեն հեշտացրել է հիմնականում այն միասնութիւնը, որ ցուցաբերել են բոլոր երկրների հայերն առանց դասային կամ կուսակցական պատկանելութեան: Եվրոպայում հաստատված բարենպաստ քաղաքական պայմանները է՛լ ավելի նպաստեցին գործի հաջող լուծմանը, ուստի և Հայկական հարցը դարձավ պետութիւնների և բուն Թուրքիայի հետաքրքրութեան առարկա: Օսմանյան կայսրութեան հետ ֆինանսական և տնտեսական շահերով սերտորեն կապված եվրոպական տերութիւնները Բալկանյան պատերազմից հետո սրված Հայկական հարցի մեջ չէին կարող սպառնալիք չտեսնել, ուստի հակված էին վերահսկողութիւն սահմանելու Բ. Դոան վրա՝ հայերի համար գոյութեան նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով: Ռուսաստանի մասնակցութիւնը Հայաստանի բարենորոգումների գործին հզոր խթան հանդիսացավ Թուրքիայի և տերութիւնների միջև համաձայնութեան կայացմանը¹:

Ելույթի վերջում Պողոս Նուբարը մեծ գոհունակութիւն արտահայտեց այն միասնութեան և միահամուռ գործակցութեան համար, որ հայ հասարակութիւնը դրսևորել էր բարենորոգումների հարցի շուրջ տեղի ունեցած բանակցութիւնների ժամանակ:

«Մեր ազգային պատմութեան մեջ, որ բազմաթիւ տխուր էջեր ունի, - ասաց նա, - առաջին անգամ է երևում այս պայծառ իրողութիւնը: Բովանդակ ազգը սերտորեն բոլորվել էր այս

¹ ПЗПАК, том II, стр. 61-62.

հարցի շուրջը և ընդհանուր ուժերով տանում էր ամբողջ գործը նույն ուղղությունում, նույն շարքի մեջ և կատարյալ համերաշխությունում: Ուստի ձեռք բերված նպատակները արդյունքը, որ, անշուշտ, պիտի իրականանա, միայն իմ ջանքերի շնորհիվ չի եղել, այլ ձեռք բերված, որ այստեղ կամ այլ քաղաքներում աշխատել եք որպես մի սիրտ ու մի հոգի, յուրաքանչյուրն որքան և ինչ ձևով կարողացել է»¹:

Պողոս Նուբարի այդ խոսքերը ներկաների ականջը չոյելու համար չէին ասված: Հիրավի, Հայկական հարցի վերաբացման և այն դրական հանգրվանի հասցնելու համար դիվանագիտական ծավալուն պայքարի ողջ ժամանակաշրջանում հայությունը ցուցաբերած սերտ միասնությունը բացառիկ երևույթներից մեկն էր նրա բազմադարյա պատմության մեջ:

Հունիսի 15-ի կեսօրին մասնավոր խորհրդակցություն տեղի ունեցավ Պողոս փաշայի և Թիֆլիսի հայկական բյուրոյի Պետերբուրգի մասնաճյուղի (Պետերբուրգի հայկական խմբակի) անդամների միջև, որից հետո նրանք երեկոյան ժամը 7-ին հյուրին առաջնորդեցին երկաթուղային կայարան: Հայության պատվիրակը մեկնեց՝ շարունակելու իր եռանդուն ջանքերը Եվրոպայի մայրաքաղաքներում: Նա որոշել էր առաջիկա սեպտեմբերին նորից Ռուսաստան գալ, այցելել էջմիածին և իբրև Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ի պատվիրակ՝ նրան ներկայացնել իր գործունեության հաշվետվությունը:

Պողոս Նուբար փաշայի պետերբուրգյան բանակցությունների անմիջական արդյունքը չուշացավ: Հունիսի 19-ին Ռուսական կառավարությունը ծանուցագիր հղեց Բ. Դոանը՝ պահանջելով, որ անփոփոխ պահվեն բարենորոգումների հունվարի 26-ի համաձայնագրի տրամադրությունները:

Բայց եթե Եվրոպան, ի տարբերություն Ռուսաստանի, շարունակեց լռեցյալն դիտել Բ. Դոան խաղերը, ապա կարելի էր համարել, որ բարենորոգումների խնդիրն այս անգամ նույնպես վիժել էր:

¹ «Մշակ», № 135, 22 Հունիսի 1914 թ.:

«ԳԵՐՄԱՆԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ» ՍՏԵՂԾՈՒՄԸ: «MESROP» ՀԱՆԴԵՍԸ

Երբ գերմանական պաշտոնական դիվանագիտությունն աստիճանաբար մի կողմ էր քաշվում Հայկական հարցից և աշխատում էր չմիջամտել թուրքերի՝ Հայաստանի բարենորոգումների գործի տապալմանն ուղղված գործողություններին, այդ նույն ժամանակ Գերմանիայի հայասիրական ուժերը և ընդհանրապես արդարամիտ մարդիկ միջոցներ էին փնտրում՝ նպատակելու Ռուս-թուրքական համաձայնագիրը կյանքի կոչելուն և ընդհանրապես հայ-գերմանական կապերի ամրապնդմանը: Նրանց շրջանում միտք հղացավ համախմբվել և ստեղծել Հայկական հարցի հետագա առաջխաղացմանը նպաստող մի կազմակերպություն:

Այդ նպատակի իրագործումը գերմանացի առաջադեմ գործիչները հրատապ էին համարում նաև այն պատճառով, որ դրանից մի քանի ամիս առաջ՝ 1913 թ. աշնանը, գերմանական կառավարությանն առընթեր Բեռլինում ստեղծել էր «Գերման-թուրքական կոմիտե», որի նպատակն էր աջակցել երիտթուրքական իշխանություններին և ուժեղացնել Գերմանիայի ազդեցությունը տարածումը Թուրքիայում:

Գերմանացի մտավորականներից շատերը համոզված էին, որ Ռուսաստանից հետո Հայաստանի ճակատագրով մտահոգ մեծ պետություններից մյուսը Գերմանիան է, որ չահագրգռված է իր ազդեցությունը տարածելու Մերձավոր Արևելքում, և հենց այդ հանգամանքը հուշում է, որ Գերմանիան պետք է սերտ հարաբերություններ հաստատի Թուրքիայի հայության հետ: Գերմանիայի մտավորականության այդ ներկայացուցիչները ցավում էին, որ գերմանացիների շրջանում շարունակվում է հայերի մասին սխալ լուրեր տարածվել, որի պատճառով այդ ազգի նկատմամբ ստեղծվում է միանգամայն խեղաթուրված պատկերացում, ուստի նոր կազմակերպվելիք մարմինը, որը գերազանցապես հետապնդելու է մշակութային նպատակներ, խնդիր է ունենալու նաև գերմանացիների շրջանում լայն աշխատանք տանելու և նրան հասու դարձնելու ճշմարտությունը հայ ժողովրդի մասին¹:

¹ Տե՛ս Ստեփան Ստեփանյան, Յոհաննես Լեփսիուսը և Հայաստանը, Երևան, 1998, էջ 8:

Հայասեր գերմանացի գործիչների Հայանպաստ լայն աշխատանքներ ծավալելու պատրաստակամությունը, Հայություն մասին նրանց դրականորեն փաստարկված տեսակետները մտափոխում էին նույնիսկ Հայերի Հանդեպ Հակակրանք տաժող գերմանացի գործիչների մի մասին: Ավելին, ավանդաբար թուրքամետ որոշ գործիչներ Հատկապես 1913 թ. երկրորդ կեսին Հակվել էին Հայասերների տեսակետին և գրավոր ու բանավոր ելույթներով սկսել էին նպաստել իրենց երկրում Հայաստանի և Հայ ժողովրդի մասին ճշմարտացի տեղեկությունների տարածմանը: Նման գործիչներից էր, օրինակ՝ Եռնատ Յեկը¹: Այդ ընդհանուր տրամադրություն ազդեցությունը Գերմանիայի կառավարական շրջաններում խմորվում էր այն տեսակետը, որ Հավանաբար ճիշտ կլինի աստիճանաբար հեռանալ ընդգծված թուրքամոլ քաղաքականությունից և Հայկական Հարցում ելժե ոչ չեզոք, գոնե Հավասարակշռված դիրք որդեգրել²:

Մի քանի ամիս պահանջվեց ձևավորելու համար գերմանահայկական կազմակերպությունը: Այդ գործին նվիրվեցին գերմանացի նշանավոր հասարակական-քաղաքական, գիտական և եկեղեցական գործիչներ դոկտ. Յոհաննես Լեփսիուսը (Պոստդամից), պրոֆ. Յո. Մարկվարտը (Բեռլինից), պրոֆ. Ռադե-Մաթթուրգը (Լինցից), դոկտ. Պաուլ Ռորբախը* (Բեռլինի մոտ գտնվող Ֆրիդենսուից), պաստոր Էվալդ Շտիրը (Գեսաուի մոտ գտնվող Ալդենից), դոկտ. Ջեմս Գրինֆիլդը (Բեռլինից), ինչպես

¹ Տե՛ս Աշոտ Հայրունի, Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան, 2002, էջ 200-201 (տողատակ):

² Նույն տեղում, էջ 208:

* Օգտվելով առիթից՝ նշենք, որ Հայ պատմագրության մեջ Պաուլ Ռոհրբախը ներկայացված է բացառապես խիստ բացասական գծերով՝ «Գերմանական իմպերիալիզմի մոլի պաշտպան», «Հայ դատի երդվյալ հակառակորդ» և նմանատիպ այլ որակումներով: Վերջին անաչառ ուսումնասիրությունները, սակայն, փաստում են հակառակը: Պատմաբան Աշոտ Հայրունիին, հենվելով գերմանայեզու գրականության և աղբյուրների վրա, ցույց է տալիս Հայանպաստ հակադասված այն աշխատանքը, որ գերմանացի այդ մեծանուն գործիչը կատարել է տասնամյակներ շարունակ:

նաև Գերմանիայում բնակվող Հայեր՝ երդվյալ Հավատարմատար, իրավաբանություն դոկտ. Դարբինյանը (Շարլոտենբուրգից), բժ. Հայրանյանը, բժ. Մուրադյանը և բժ. Շահբադյանը (Բեռլինից) և ուրիշներ:

Կազմվեց ստեղծվելիք կազմակերպության կոչի նախագիծը, որը պիտի պաշտոնապես ընդունվեր կազմակերպության հիմնադիր նիստում: Չնայած փաստաթուղթը դեռ նախագիծ էր, բայց այն Հանձնվեց մամուլին, որը և տարածեց Հայկական պարբերականներում:

Կոչի նախագծի համաձայն՝ երկու ազգերի միջև ճանապարհ հարթելու, նրանց քաղաքակրթական արժեքները փոխանակելու նպատակով ստեղծվելիք կազմակերպությունը կոչված պիտի լիներ.

- 1) Արդար ու անաչառ գնահատությունը Հայ ժողովրդի մշակութային արժեքները տարածել գերման ժողովրդի, իսկ գերման ժողովրդինը՝ Հայության մեջ,
- 2) Հետամուտ լինել, որպեսզի Հայ ազգի կողմից ընդհանուր քաղաքակրթությանը մատուցած ծառայությունների մասին լայն պրոպագանդ մղվի Գերմանիայում, ինչպես և պրոպագանդ անել գերմանական ազգի կողմից Հայկական քաղաքակրթությանը նպաստող ձգտումների մասին,
- 3) Մշակել անձնական Հարաբերություններ գերմանացիների և Հայերի, մանավանդ Գերմանիայում սովորող Հայ ուսանողների և նրանց տեղացի դասընկերների միջև:

Այդ կարևոր նպատակներին հասնելու համար կոչի հեղինակները նկատի էին առել հետևյալ գործերը. 1) Գերմանական մամուլում ըստ ամենայնի ճշգրիտ տեղեկություններ տալ Հայաստանի դրության մասին, Բ) Երկու լեզուներով հրատարակել մի ամսաթերթ՝ նպատակ ունենալով գերմանացիներին ծանոթացնել Հայկական քաղաքակրթությանը և գերմանական քաղաքակրթության համար նոր ճանապարհներ բացել դեպի Հայաստան, Գ) Գերմաներեն թարգմանել Հայերեն արժեքավոր գրվածքները, Դ) Հայոց լեզվի, քաղաքակրթության և պատմության ուսումնասիրման համար Գերմանիայում հիմնել մի Հայ-

կական գիտական մատենադարան, Ե) Հայոց դպրոցներում գորացնել գերմաներենի ուսուցումը, Զ) Գերմանիայում սովորող հայ ուսանողների համար բացել տեղեկատու մի գրասենյակ և նրա միջոցով Հայաստանի մասին տեղեկություններ տրամադրել գերմանական ընտանիքներին:

Կոչի վերջում կարդում ենք. «Ուղղում ենք բոլոր նրանց, ովքեր համաձայն են մեր վերոհիշյալ առաջարկություններին, ուղարկել իրենց հասցեները պաստոր Շիիրին՝ Ալդեն Դեսաուրի մոտ, որպեսզի այդ համաձայնությունները հիմք հանդիսանան հիմնելու «Գերման-Հայկական ընկերությունը»¹:

Թավրիզում հրատարակվող «Միտք» թերթը այդ առթիվ գրում էր. «Հաստատ ակնկալություն կայ, որ այս անգամ Հայկական հարցի համար եղած նախկին բոլոր բանակցություններից տարբեր կերպով գոհացուցիչ արդիւնք ձեռք կ'ընեն: Կարելի է յուսալ, որ վատթարագոյն չարիքները կվերացուին և Հայ ժողովրդեան հնարաւորութիւն կտրուի քաղաքակրթական և տնտեսական ասպարիզում աւելի հարուստ չափով արծարծել իւր կարողութիւնները, քան մինչև այժմ էր»²:

Այնուհետև նշվում էր, որ Փոքր Ասիայում Գերմանիայի տնտեսական մեծ ձեռնարկումները, որոնք գերազանցապես իրականացվում են հայաբնակ վայրերում, պահանջում են ստեղծել սերտ հարաբերություններ հայերի հետ, որոնք բոլոր տեղերում «տնտեսական ու քաղաքակրթական կյանքի վարիչներն են»³:

Մինչ կոչը հայկական մամուլում չարունակվում էր չըջանալու, Բեռլինում բազմակողմանի աշխատանքներ էին տարվում կազմակերպության ստեղծումն ավարտի հասցնելու համար: Հայթայթվում էին ֆինանսական միջոցներ, առաջ էր տարվում սեփական մամուլի օրգան ունենալու խնդիրը, կատարվում էր կադրերի ընտրություն: Այդ աշխատանքին ներ-

¹ Տե՛ս Աշոտ Հայրունի, Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, էջ 208:

² «Միտք» (Թավրիզ), № 9, 8 մարտի 1914 թ.:

³ Նույն տեղում:

գրավել էին նաև այդ ժամանակ Գերմանիայի մայրաքաղաքում հանգրվանած Ավետիք Իսահակյանին:

1914 թ. ապրիլի 23-ին Ավ. Իսահակյանը Բեռլինից Ամերիկայում գտնվող Սիմոն Վրացյանին գրում էր. «Ես երկու ամսից ավելի է, որ Բեռլին եմ, հայկական և գերմանական կոմիտեի գործերն եմ վարում՝ քարտուղարն եմ: Եվ հրատարակելու ենք ամսաթերթ՝ հայերեն և գերմաներեն բաժիններով: Շուտով կստանան [կոմիտեի] կոչը և ծրագիրը, որ թե թերթումդ՝ հրատարակես և թե մեզ աշխատակցես: Շատ անվանի մարդիկ ունենք մեզ հետ, շատ հայտնի անձեր՝ ամբողջ Գերմանիայում հռչակված և ազդեցիկ: Վստահ կարելի է ասել, որ եթե հայ-գերման ընկերությունը չլիներ, այս ռեֆորմները ջուրն էին ընկել՝: Դա խոստովանում են թե բժ. Զավրիևը և թե [ՀՅԴ] Պոլսի բյուրոն: Մեր բարեկամ գերմանացիք համոզում էին գերման դիպլոմատներին և նրանց վրա ճնշում գործադրում, որ համաձայնվեն ուսններին»¹:

Վերջապես 1914 թ. հունիսի 16-ին Բեռլինում պաշտոնապես բացվեց կազմակերպության անդրանիկ նիստը: Կազմակերպության նախագահ ընտրվեց դոկտ. Լեփսիուսը, նրա փոխանորդ՝ դոկտ. Գրինֆիլդը, գործավար՝ քահանա Շիիրը²: Համախումբը ստացավ «Գերմանա-Հայկական ընկերություն» («Deutsch-Armenischen Gesellschaft») անվանումը և սկսեց իր գործունեությունը: Նիստը պաշտոնապես ընդունեց ամիսներ առաջ հրատարակված կոչի նախագծի տեքստը, որով ազդարարվեց ըն-

¹ Ս. Վրացյանն այդ ժամանակ Ամերիկայում խմբագրում էր ՀՅ դաշնակցության պաշտոնաթերթը:

² Սույն նախադասությունում մեջ անհասկանալի բան կա. եթե նկատի առնենք, որ 1914 թ. հունվարի 26-ի ուս-թուրքական համաձայնագիրը ստորագրվել էր Գերմանա-Հայկական ընկերության ստեղծումից ավելի քան չորս ամիս առաջ: Հավանաբար նամակագիրը նկատի է ունեցել ընդհանրապես գերմանացի հայասերների՝ նախորդ ամիսներին Հայկական հարցի օգտին ծավալած գործունեությունը:

¹ Ս. Վրացյան, Հին թղթեր նոր պատմություն համար, էջ 347:

² Տե՛ս Աշոտ Հայրունի, Հովհաննես Լեփսիուսի առաքելությունը, էջ 209:

կերուխյան ստեղծման մասին: Փաստաթղթի տակ իրենց ստորագրությունները դրեցին վերը նշված և ուրիշ գերմանացի հայասերներ, նաև՝ Ավետիք Իսահակյանը: Կոչը, ինչպես արդեն նշվել է, ազդարարում էր, որ գերմանացի մտավորականությունը պարտավոր է նպաստել Հայաստանի բարենորոգումների ծրագրի իրականացմանը, մշակել հայ և գերմանացի ժողովուրդների հարաբերությունների սերտացմանն ուղղված ծրագիր և ամեն կերպ նպաստել դրա իրականացմանը:

Նիստում քննարկված մյուս հարցերը վերաբերում էին գերման և հայ մշակութային կապերի ամրապնդմանը, երկու ազգերի գործիչների միջև ստեղծվող սերտ հարաբերությունների հետագա զարգացմանը¹:

Արդեն այդ ժամանակ «Ընկերությունը» միավորում էր ավելի քան հարյուր գերմանացի գործիչների, ինչպես նաև Բեռլինում գտնվող մի շարք հայերի՝ Ավետիք Իսահակյան, Մինաս Մուրադյան, Լիպարիտ Նազարյան, Վաղարշ Այրանյան և այլն²:

Անդրադառնալով «Գերմանա-հայկական ընկերության» ստեղծման պատճառներին, Ջեմս Գրինֆիլդը նշել էր, որ պաշտոնական Գերմանիան իր անսասան թուրքասիրությունը անցյալ տասնամյակներին ոչ մի նպաստավոր քայլ չի կատարել հայերի օգտին: Նա ցավով արձանագրում էր նաև, որ Գերմանիայում չեն եղել ազդեցիկ հայասերներ, ինչպես կային Անգլիայում ու Ֆրանսիայում, ուր բազմաթիվ բարձր դիրք ունեցող նշանավոր մարդիկ հայ ազգի ջերմ պաշտպաններ էին: Ահա այդ ամենն է պատճառը, որ դոկտ. Լեփսիուսի բոլորանվեր աջակցությամբ մի խումբ նշանավոր գերմանացի գործիչներ ձեռնամուխ են եղել նշված «Ընկերության» ստեղծմանը՝ իրենց առջև նպատակ դնելով պաշտպան կանգնել Թուրքիայի տառապյալ հայերին, դրանով իսկ համեստ մաս ունենալ Հայաստանի բարենորոգումների ուղղությամբ տարվող աշխատանքներում տեղ գտած խոչընդոտների չեզոքացման գործում: Այդ նպատակով

¹ Տե՛ս Ստեփան Ստեփանյան, Հովհաննես Լեփսիուսը և Հայաստանը, Երևան, 1998, էջ 9:

² Մ. Արզումանյան, Հայաստան, 1914-1917, Երևան, 1969, էջ 560:

ստեղծված «Գերմանա-հայկական ընկերությունը» եռանդուն աշխատանք է տանելու գերմանական կառավարության հետ՝ լիովին փոխելու համար հայերի նկատմամբ նրա միակողմանի բացասական վերաբերմունքը, մանավանդ որ գերման հասարակական կարծիքում նույնպես նշմարվում էին հայերի մասին ճիշտ դատելու նշաններ¹:

Ընկերության հիմնադիրները ոչ առանց հիմքի գտնում էին, որ կլինեն մարդիկ, որոնք այդ ձեռնարկը կդիտեն որպես Գերմանիայի պետական կառույցների կողմից կյանքի կոչված կազմակերպություն, որը ծառայելու է որպես գործիք՝ միակողմանի պաշտպանելու գերմանական քաղաքական շահերը Հայաստանում և խանգարելու է Ռուսաստանի կողմից այնտեղ կիրառվող քաղաքականությունը:

Գերմանահայ ընկերության նպատակների նկատմամբ հնարավոր թյուրիմացությունների, սխալ մեկնությունների առաջն առնելու համար Ջ. Գրինֆիլդն իր և կազմակերպության մյուս հիմնադիրների անունից բարձրաձայնում էր. «Մեր ընկերությունը կուտուրական նպատակներ է հետապնդում: Բայց եթե դա էլ չլիներ, մենք կատարելապես գիտակցում ենք և մեր գերման բարեկամներից ավելի իրազեկները նույնպես մեզ հետ համաձայն են, որ մեր ազգի ապագան սերտորեն կապված է Ռուսաստանի հետ», հետևապես հայերի շահերը պահանջում են, որ այս երկու մեծ պետությունները մշտապես գործակցեն Հայաստանի հարցում: Իսկ «Գերմանա-հայկական ընկերությունը» ռուս-գերմանական հարաբերություններում ոչ թե առիթ է տալու նոր հակասությունների, այլ, ընդհակառակը, «պիտի աշխատի մեղմացնել մեր շահերի համար վնասակար երկպառակությունները, ինչպես դա մինչ այժմ արել է Բեռլինի հայկական կոմիտեն»²:

Գերմանա-հայկական կոմիտեն ունենալու էր ամսաթերթ, որի առաջին համարը նախատեսված էր լույս ընծայել 1914 թ.

¹ Տե՛ս "Mesrop", № 1, Հուլիս, 1914, մաս երկրորդ, էջ 2-4:

² Տե՛ս նույն տեղում, էջ 6-7:

մայիսի վերջերին՝ Հայերեն ու գերմաներեն բաժիններով: Գերմաներեն բաժնի նյութերը լույս էին տեսնելու Բեռլինում, իսկ Հայերեն բաժնինը՝ Կ. Պոլսում կամ Վիեննայում: Ի վերջո Հայերենի տպագրության վայր ընտրվեց Ավստրիայի մայրաքաղաքը, բայց այստեղ միայն մի Հայկական տպարան կար, որի տառերը հնացած էին, բացի այդ՝ տպագրությունը թանկ էր նստում: Մայիսի կեսերից նյութերը պատրաստ էին, բայց քանի որ տպարան չգտնելու պատճառով ամսաթերթի Հայերեն նյութերի տպագրությունը չէր հաջողվում, ուստի հետաձգվում էր դրա տպագրությունը¹:

Հանդեսը պետք է ուղղակի կապ հաստատեր «Ընկերություն» և երկրի Հայասեր մտավորականության միջև, լուրջ ու մշակված հողվածներով գերման հասարակությունը ծանոթացնելու հայ ազգի կյանքի ու հոգևոր արժեքների, նրա ցավերին ու ձգտումներին, իսկ մյուս կողմից Հայ ժողովրդին տեղեկություններ տար արևմտյան մշակույթի նվաճումների, գիտություն ու կրթության ձեռքբերումների մասին, որոնց մեջ Գերմանիան ուներ ակնառու բաժին: Խոր համոզում կար, որ այդ խնդիրը հաջողությամբ կկատարվեր, քանի որ Հանդեսի աշխատանքներին խոստացել էին ակտիվ մասնակցություն բերել բազմաթիվ անվանի գրողներ, որոնք նաև պատրաստակամություն էին հայտնել արտահանել այնտեղ տպագրված նյութերը: «Ընկերություն» ղեկավարները համոզված էին, որ Հանդեսը շատ շուտով գերմանական մամուլի համար դառնալու է Հայկական տեղեկությունների հուսալի աղբյուր և նպաստելու է, որ Հայությունը Գերմանիայում ունենա բազմաթիվ նոր բարեկամներ ու համակիրներ: «Բայց մեզ ոչ պակաս հարկավոր է ձեր ազգակիցների աջակցությունը, չեչտում էր Ջեմս Գրինֆիլդը, և ուզում եմ հավատալ, որ նրանք ըստ ամենայնի գնահատելով մեր ձեռնարկի նշանակությունը, չպիտի հապաղեն մեզ աջակցելու՝ լինի դա իրենց ակտիվ աշխատակցությամբ հանդեսին, թե անդամագրվելով մեր ընկերությունը»²:

¹ Տե՛ս Ս. Վրացեան, Հին թղթեր նոր պատմութեան համար, էջ 348:

² Տե՛ս "Mesrop", № 1, հուլիս, 1914, մաս երկրորդ, էջ 5-6:

1913 թ. հուլիսի 1-ին լույս տեսավ «Գերմանա-Հայկական ընկերություն» պաշտոնական տպագիր օրգանի՝ "Mesrop" («Մեսրոպ») երկամյա և երկլեզու հանդեսի առաջին (և միակ) համարը^{*}: Հանդեսի հիմնադրմանը մասնակից Հայ գործիչների անունից որպես հետգրություն տպագրվել էր հետևյալ համառոտ հաղորդումը (էջ 7). «Մեր օրգանը կնքեցինք «Մեսրոպ» անունով գերմանացի բարեկամների առաջարկութեամբ, որովհետև այդ անունը ծանօթ է իրենց աւելի, քան մեկ ուրիշ Հայկական անուն, ու յետոյ՝ յորելեանի առիթով (նկատի ունեին Հայ գրերի գիտի 1500-ամյակը: Ն. Ս.) ուղեցինք յարգած լինել յիշատակը այն անձի, որ բացեց մեր ժողովուրդի առջև լոյսի ճանապարհը»:

Պարբերականը պայմանականորեն բաղկացած էր երկու մասից՝ յուրաքանչյուրը 32 էջ: Առաջին մասում զետեղված էր գերմանալեզու 3, իսկ երկրորդ մասում՝ հայալեզու հինգ հոդված:

Հանդեսի № 1-ը բացվում է դոկտ. Պաուլ Ռոհրբախի "Die Armenier als politischer und kultureller Faktor im Orient" («Հայերը որպես քաղաքական և կուլտուրական ազդակ Արևելքում») ծավալուն (էջ 1-11) հոդվածով:

Պ. Ռոհրբախն իր հոդվածը սկսում էր հետևյալ հաստատումով. «Հայերը Թուրքիայում... իրենց թվից անհամեմատ ավելի կարևորություն ունեն: Նրանք անկասկած բարոյական, մտավոր և նյութական տեսակետով ամենագործուն տարրն են կազմում բոլոր արևելյան ժողովուրդների մեջ: Նույնիսկ կարելի է ասել, որ իրենց ազգային բնատուր ընդունակություններով գրեթե միակն են այդ միջավայրում: Հայի մեջ թաքնված է մի այնպիսի եռանդ և տոկունություն, որ հակասում է արևելցու նկարագրի մասին ունեցած մեր բոլոր պատկերացումներին»:

Հեղինակը նշում էր, որ Հայաստանն առաջին երկիրն էր, որն իր արքայական ընտանիքի միջոցով, համարյա առանց բռնու-

^{*} Ծնորհակալություն ենք հայտնում պատմաբան Աշոտ Հայրունուն՝ «Մեսրոպ» հանդեսի կրկնօրինակը մեզ տրամադրելու համար. - հեղ.:

Թյան, քրիստոնեությունը ընդունեց պետական կրոն: Անցել են շատ դարեր, բայց հայերը մինչև այժմ կարողացել են պաշտպանել իրենց հավատքը՝ դիմագրավելով ժամանակի ամենադաժան հարվածներին:

Այնուհետև անցնելով ժողովրդի լեզվի նկարագրին՝ Պ. Ռոհրբախը գրում է, որ հարյուրամյակների ընթացքում Մերձավոր և Միջին Արևելքի բազմաթիվ լեզուներ, չդիմանալով արաբերենի և թուրքերենի ճնշմանը, անհետացել են ասպարեզից, բայց հայերն «արևելքի մյուս բոլոր ժողովուրդների համեմատ ցույց են տվել անհամեմատ ավելի զորեղ հոգեկան եռանդ և դիմադրական կարողություն պահպանելու իրենց ձեռք բերած կրոնական և լեզվական արժեքները ավելի, քան արևելքի բոլոր մյուս ժողովուրդները»:

Անդրադառնալով հայերի աշխատասիրության փաստին՝ հոդվածի հեղինակը նշում էր, որ նրանք դարեդար եղել են երկրագործ ու քաղաքաչեն կուլտուրական ժողովուրդ, որի բնակատեղիները առավելապես եղել են հարթավայրերը, քան լեռները: Հայը տոկուն է և սակավապետ, հատկանիշներ, որոնց միանում են արտակարգ սթամփությունն ու եռանդը:

Ռոհրբախն այնուհետև շեշտում էր հայերի բացառիկ շնորհքը առևտրի ասպարեզում՝ նշելով, որ նրանք իրենց ձեռքն են գցել առևտուրը ոչ միայն ողջ Անատոլիայում, այլև դրանով զբաղվում են կայսրության սահմաններից շատ հեռու: Նավճուականապես մերժում էր եվրոպայում տարածված այն թյուր կարծիքը, թե հայերը ճարպիկ ու խաբեբա առևտրականներ են: Ռոհրբախը հոդվածում մեջբերում էր նշանավոր գերմանացի գիտնական-ճանապարհորդ դոկտ. Փոն Ռովենի խոսքերը, որը հայ ժողովրդին ճանաչել էր անձնական փորձով: Վերջինս գրել էր. «Գերմանիայում շատ քիչ համակրանք կա հայերի հանդեպ. միաժամանակ նրանց մասին տարածված են զանազան թյուր գաղափարներ: Այս երևույթի պատճառն այն տեղի դեպքերն են, որոնք տեղի են ունեցել գերմանացի վաճառականների և մի քանի հայ խաբեբաների հետ ծովափնյա քաղաքներում, դեպքեր, որոնք հետագայում վերագրված են ամբողջ ժողովրդին: Բայց նա, ով ապրել է հայերի մեջ, գիտե, որ նրանք մի աշխա-

տասեր, զգաստ և ուշիմ ժողովուրդ են և, անկասկած, կարող է համարվել ամենաընդունակ և առաջադեմ ցեղն ամբողջ Առաջավոր Ասիայում: Թուրքիայում ոչ այնքան սիրված հայերը, շնորհիվ իրենց ունակությունների և մտավոր բարձր հատկությունների, այնուամենայնիվ, կհասնեն ամենաբարձր աստիճանի»:

Ըստ հոդվածագրի՝ հայությունը ժրջանությունը և մշակույթի հանդեպ սերը ամենացայտուն կերպով արտահայտվում է ժողովրդական դպրոցների կազմակերպման ասպարեզում: Հայկական դպրոցներն ավելի բազմաթիվ են և շատ ավելի բարեկարգ, քան Թուրքիայում որևէ ուրիշ ազգի մոտ: Առանձին ուշադրություն կարող է այն, գրում էր նա, որ հայ դպրոցները պահպանվում են ոչ միայն հարուստների, այլև հասարակ խավերի ազատ նվիրատվություններով: Կրթության լավ կազմակերպման շնորհիվ՝ Թուրքիայում ոչ մի տեղ հնարավոր չէ այնքան կիրթ ու պատրաստված ուժեր գտնել, որքան հայերի մեջ: «Հայերի այս առավելությունները չեն կարող չարտահայտվել տնտեսական կյանքում և ով հարկադրված է Թուրքիայում զբաղվել երկաթուղիներով (նկատի ունի երկաթուղիների կառուցումը:– Ն. Ս.) և արդյունաբերությունը, չի կարող մի քայլ անել առանց նրանց»:

Բայց հայը բարիքներ ստեղծող աշխատավոր է միայն, շեշտում էր Ռոհրբախը: Հին ժամանակներից ի վեր նա նաև քաջ զինվորական է: Պատկառելի թվով հայ վարձու զինվորներ ու զորավարներ ծառայել են հարևան երկրների բանակներում: Հուստինիանոս կայսրի հայ զորավարներն էին, որ ընկճեցին օստգոթերի տիրապետությունն Իտալիայում: Նրանց ռազմական ընդունակությունների շնորհիվ էր, որ բյուզանդական գահ բարձրացավ հայկական մի ամբողջ դինաստիա: Արաբական խալիֆների գերակշիռ ուժերի դեմ երկարատև կռիվներում նույնպես հայերը կարողանում էին ժամանակավորապես պահպանել իրենց անկախությունը: Բայց թուրքական դաժան տիրապետության շրջանում ընկճվեց նրանց դիմադրողականությունը, իսկ հետագայում՝ Աբդուլ Համիդի իշխանության տարիներին, իրականացվեց ժողովրդի կատարյալ զինաթափություն,

որը քուրդ և թուրք արյունարբուներին հնարավորություն տվեց գրեթե առանց դիմադրություն կոտորել հարյուրհազարավորների: Երիտթուրքական իշխանության ժամանակ հայերը հնարավորություն ստացան մտնելու զորաբանակների մեջ, և իսկույն նորից դրսևորվեցին նրանց ռազմական ունակությունները: Դրա վկայությունը նրանց ցուցաբերած քաջություններն էին Բալկանյան վերջին պատերազմում:

Հայերի այս բարեմասնությունների մասին հողվածի հեղինակը գերմանացի ընթերցողներին էր ներկայացնում՝ նրանց մեջ այդ ազգի նկատմամբ համակրանք առաջ բերելու համար, նրանց ներչնչելու այն միտքը, որ Թուրքիայում իրականացվելիք իրենց ձեռնարկներում անհրաժեշտ է հենվել հայության վրա:

Պաուլ Ռոհրբախն իր հողվածը եզրափակում էր հետևյալ խոսքերով. «Գերմանիան, որպես Արևելքում մեծ շահագրգռություն ունեցող մի պետություն, պետք է ձգտի իրեն գրավել հայերին, որովհետև երկաթուղիներով ու զինվորական միսիաներով չէ, որ նա պիտի հաջողի իր քաղաքական նպատակներին հասնելու պայքարում: Մենք պարտավոր ենք նույնքան մեծ կարևորություն տալ նաև կուլտուր-բարոյական հարաբերությունների մշակմանը Թուրքիայի բոլոր ազգությունների հետ, բայց ոչ մի ազգ այս ասպարեզում չի կարող մեզ այնքան օգտակար լինել, որքան հայը»:

Հանդեսի առաջին բաժնի երկրորդ ծավալուն հողվածը (էջ 12-26), որը կրում է “Die armenischen Reformen” («Հայկական ռեֆորմները») վերնագիրը, հեղինակել է ղոկտ. Հովհաննես Լեփսիուսը: Հողվածագիրը սկսում էր նրանից, որ մինչև 1877-1878 թթ. ուս-թուրքական պատերազմը հայերը համարվում էին Թուրքիայի ամենահավատարիմ հպատակները, բայց այդ ժամանակից սկսած՝ հանգամանքները լիովին փոխվեցին: Բորբոքելով քրդերի վայրենի բնազդները՝ Աբդուլ Համիդը Հայաստանը դարձրեց արյան դաշտ:

Անցնելով հայկական խնդրի վերջին շրջանին՝ հողվածագիրը անդրադառնում էր Ադանայի կոտորածին և Բալկանյան պատերազմում Թուրքիայի համար անհաջող ելքին, որի հետևանքով վերաբացվեց Հայկական հարցը: Նա հանգամանորեն կանգ էր

առնում Հայկական հարցի լուծման ուղղությամբ տերությունների և առաջին հերթին Ռուսաստանի թափած ջանքերին:

Անդրադառնալով Թուրքիայում ազգային հարաբերությունների վիճակին՝ ղոկտ. Լեփսիուսը գրում էր. «Կառավարությունն է, որ գրգռում է երկրի ազգերին իրար դեմ և պաշտոնյաներն են, որ օգտվում են երկպառակություններից: Մի պետություն, որ միաբան չի իր ներսում, պիտի քայքայվի: Թուրքիայի ամենագլխավոր ձգտումը պիտի լինի տարբեր ազգություններն իրար և իր հետ հաշտեցնելը: Նույնիսկ ամենաուժեղ զինումը որևէ պետության քայքայման առաջն առնել չի կարողանա, եթե նա շարունակի իր կեսից ավելիի հետ վարվել՝ ինչպես թշնամու հետ»¹: Հողվածագիրը շեշտում էր, որ միայն ընդհանուր խաղաղությունը կարող է ապահովել Թուրքիայի ապագան:

Դոկտ. Լեփսիուսը գտնում էր, որ Հայաստանի ռեֆորմները դժվար է այնպես իրագործել, որ համապատասխանեն հայության, Ռուսաստանի և Թուրքիայի շահերին, բայց, բարեբախտաբար, ելքը գտնվեց: «Ռուսաստանի և Գերմանիայի համերաշխ գործակցությունը Անատոլիայի տնտեսական արթնացման խնդրում հայ ազգի առաջադիմության ամենալավ և Թուրքիայի բախտավոր ապագայի միակ երաշխիքն է»²:

Հանդեսի երկրորդ (հայերեն) բաժնում զետեղված է Պաուլ Ռոհրբախի և Հովհաննես Լեփսիուսի վերը նշված գերմանալեզու հողվածների հայերեն համառոտագրությունը, որին հետևում է Ջեմա Գրինֆիլդի «Մեր գործի շուրջը» հողվածը:

Հեղինակը նշում էր, որ Բալկանյան պատերազմից հետո Թուրքիայի իշխանության ծանրագույն նժարը թեքվել է դեպի Ասիա, և այստեղ հենց Հայկական հարցն է «ամենահրամայողական կերպով լուծման սպասում»: Ի տարբերություն Ռոհրբախի և Լեփսիուսի՝ Գրինֆիլդը շատ բարձր էր գնահատում Ռուսաստանի՝ որպես արևելյան քրիստոնյաների ավանդական պաշտպանի դերը բարենորոգումների միջոցով Թուրքա-

¹ Տե՛ս “Mesrop”, № 1, հուլիս, 1914, մաս երկրորդ, էջ 10:

² Նույն տեղում, էջ 11:

Հայաստանում կարգ ու կանոն և օրինականություն հաստատելու գործում: Նա նկատի ուներ ինչպես 1877-1878 թթ., այնպես էլ 1912-1913 թվականներին ուսական դիվանագիտություն ծավալած լայն գործունեությունը՝ գտնելով, որ ուսական բարեհաստիքի ձեռնարկումները միայն մի դեպքում կարող են կատարյալ հաջողություն ունենալ. եթե մյուս մեծ պետությունները նույնպես չհաջողված լինեն բարվոքելու հայերի անտանելի դրությունը¹:

Նույն բաժնում գետեղված գերմանալեզու երրորդ՝ “Die Lieben Sängler” վերնագրով հոդվածի հեղինակը «Գերմանա-հայկական ընկերություն» ակտիվ գործիչներից Ռուբեն Սարգսյանն է²:

Հանդեսի հաջորդ հոդվածը, որը նվիրված է 19-րդ դարում թուրքահայոց թվի հարցին, պատկանում է Լիպարիտ Նազարյանցի գրչին: Հեղինակն իր գրություն մեջ ի մի է բերել նշված դարում հայերի թվի մասին իրեն հայտնի զանազան աղբյուրներից քաղած բազմաբնույթ թվական տվյալներ^{*}:

Հանդեսի քաղաքական նյութերի ցանկը եզրափակում է Ռուբեն Դարբինյանի հեղինակած «Ակնարկներ ժամանակակից Գերմանիոյ վրա» հոդվածը:

Վերջում գետեղված են Ուան Մասեհյանի կողմից անգլերենից կատարած Ռաբինդրանաթ Տագորի մի քանի արձակ ստեղծագործությունները, ինչպես նաև Ավետիք Իսահակյանից երկու և գերմանացի բանաստեղծ Յեզար Ֆլայշլենի մեկ քնարական բանաստեղծությունները:

«Մեսրոպի» խմբագրությունը տպագրություն էր պատրաստել նաև ամսագրի երկրորդ համարը, որը սակայն, լույս չտեսավ վերահաս համաշխարհային պատերազմի պատճառով^{**}:

¹ Տե՛ս “Mesrop”, № 1, հուլիս, 1914, մաս երկրորդ, էջ 33-34:

² Նույն տեղում, էջ 26-32:

^{*} Մենք այստեղ ընթերցողին չենք ներկայացնի Լիպարիտ Նազարյանի ծավալուն հոդվածի բովանդակությունը՝ հաշվի առնելով, որ խնդրին հանգամանորեն անդրադարձել ենք սույն գրքի համապատասխան էջերում:

^{**} Կարծիքներ կային, որ «Մեսրոպ» հանդեսի 2-րդ համարը պատրաստ էր եղել տպագրության, երբ սկսվել էր համաշխարհային պատերազմը: Որոշ հե-

Գերմանացի հայասերները իրենց հրապարակային ելույթներում ու մամուլին հանձնած հոդվածներում շատ հաճախ էին անդրադառնում գերման ճանապարհորդների ու հետազոտողների, գիտնականների ու պոետների՝ Հայաստանին ու Հայերին նվիրված ստեղծագործություններին: Հատկապես բազմիցս վկայակոչում էին գերմանացի ասորագետ Կարլ Ֆրիդրիխ Լեհ-ման-Հաուպտի «Հայաստան-անցյալում և այժմ: Ուղևորություններ և ուսումնասիրություններ» (Բեռլին, 1910 թ.) իրենց տրամադրության տակ եղած աշխատությունը:

Դեռևս 1898-99 թթ. Լեհման-Հաուպտը ճանապարհորդել էր Հայաստանում և հավաքել առատ նյութ: Նա եղել էր Թուրքահայաստանում, Պարսկահայքում և Կովկասյան Հայաստանում: Հայերի համար շահեկան մանրամասնություններով լեցուն երկու գրքից բաղկացած այս աշխատության առաջին հատորը, որը վերնագրված է «Կովկասից Տիգրիս և Տիգրանակերտ», հեղինակը չէր շտապել հրատարակել և միայն տարիներ հետո՝ 1910 թ. տպագրել էր իբրև իր երկերի ժողովածուի առաջին հատոր: Գիրքն արժեքավոր էր հատկապես այն առումով, որ հեղինակը գերմանացի էր, սուլթան Համիդի մտերիմ բարեկամ Վիլհելմ II-ի հպատակներից մեկը: Նա Հայաստանի, հայ ժողովրդի կյանքը նկարագրում էր ամենայն անկողմնակալությամբ: Աշխատության մեջ կարմիր թելի պես ձգվում էր այն հաստատումը, որ տաղանդավոր, բայց դժբախտ մի ազգ դարեր շարունակ տառապում է իր դրացի թուրքերի ու քրդերի բիրտ կամայականություններից, որի վերջը չի երևում:

Աշխատության մեջ Լեհման-Հաուպտը ցույց էր տալիս, թե հայ գյուղացին Թուրքիահայաստանում որքան աշխատասեր, միաժամանակ որքան ժուժկալ է, թե ինչպիսի նվիրվածությամբ է մշակում հողի իր պատառիկը: Նա փաստում էր, որ հայն անսահման սիրում է իր հայրենիքը, կպած է հայրենի հողին և նրան

տաղտոտղներ համոզված էին, որ այդ համարի նյութերը ժամանակին պահ են տրվել Վիեննայի Մխիթարյան միաբանությունը: Մեր խնդրանքով և միաբանության ղեկավարության հանձնարարականով մանրամասն փնտրվել են այդ նյութերը, բայց ապարդյուն:

հավատարիմ է այն աստիճան, որ գերադասում է ենթարկվել իրեն կողոպտող ավարառուների բռնություններին, քան ձգել պապերի երկիրը և հեռանալ:

Մի ամենահին ժողովրդի մասին պատմող այդ գիրքը մեծ հետաքրքրություն էր առաջ բերել գերմանացի ընթերցողների շրջանում, և դրան մեծապես նպաստում էր «Գերմանահայկական ընկերությունը»:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՌՄԱՅՈՒՄ

Հայկական հարցի հեռանկարով խիստ մտահոգված էր ոչ միայն Ռուսաստանի գործադիր իշխանությունը, այլև օրենսդրական մարմինը՝ Պետական դուման:

1913 թ. հունիսի 6-ին Ռուսաստանի Պետական դումայում նշանակալից օր էր: Նրա չորրորդ գումարման 66-րդ նիստում պատգամավորները հանգամանորեն քննարկեցին Հայկական հարցը: Արտասանվեցին փայլուն ճառեր, որոնք առաջ բերեցին ամբողջ Դումայի լիակատար համակրությունը՝ առանց կուսակցական խտրության:

Պետդումայի հունիսի 6-ի նիստը վարում էին Լվովը, Ռոձյանկոն և Վոլկոնսկին:

Իրենց պաթոսով և նոր հարցադրումներով հատկապես առանձնացան նշանավոր քաղաքական գործիչներ Միլյուկովը և Բորրինսկին:

Պետերբուրգից պատգամավոր ընտրված Միլյուկովն իր ճառում նախ ընդարձակ անդրադարձ է կատարում 1877-1878 թթ. պատերազմին, Բեռլինի կոնգրեսում ընդունված դաշնագրին և դրան հաջորդած 35 տարիների ընթացքում հայ ժողովրդի կրած անչափելի արհավիրքներին¹:

Այնուհետև ճառասացը նշում է, որ Հայկական հարցը Ռուսաստանի համար խիստ կարևոր և լրջագույն խնդիր է, որը

¹ Տե՛ս «Стенографический отчетъ. Государственная Дума», էջ 1043-1053:

«մոտ է մեր սրտին»:

Հենց այժմ է վճռվում հայոց հարցի լինել-չլինելը: Այսինքն՝ խոսքը թուրքահայ ժողովրդի գոյատևության մասին է, որը քրիստոնեական օազիս է մուսուլմանական ծովում: «Մենք գիտենք,- նշում էր նա,- որ 200.000 թուրք գաղթականներ (մուհաջիրներ) արդեն պատրաստ են Եվրոպական Թուրքիայից խուժելու Հայաստան»:

Ուրեմն պետք է լինի մեկը, որ զբաղվի Փոքր Ասիայի քրիստոնյա ազգաբնակչության շահերով, և եթե այդ մեկը իրենք չլինենք, գերմանացիներն արդեն իրենց ուշադրությունը դարձրել են հայերի կողմը և առաջարկում են այդ կենսունակ, եռանդուն ժողովրդին իրենց աջակցությունը: Ուրեմն չպետք է ուշանալ և պետք է հիշել, որ ազդեցությունն այդ շրջանում և աջակցությունը հայերին իրենց իրավունքն է և պարտականությունը: Չէ՞ որ միայն Ռուսաստանը կարող է իրականացնել միջազգային կոնտրոլ Հայաստանի վրա: Չուր չէ, որ Անգլիան Հայաստանում տեղի ունեցած սարսափներին և կոտորածին հետո՞ դիմեց Ռուսաստանի աջակցությամբ: Այն ժամանակ Ռուսաստանը պատասխանեց, թե ինքը Հայաստանի համար ինքնավարություն չի ցանկանում՝ երկյուղ կրելով, որ այդ գաղափարով կվարակվեն սահմանից այս կողմի՝ Անդրկովկասի հայերը: Բայց չէ՞ որ այն ժամանակ ավտոնոմիա չէր պահանջվում: Պահանջվում էին նույնպիսի տարրական բաներ, ինչպես այժմ²:

Այնուհետև Միլյուկովն ասում էր, թե ոուս վեհապետները բազմիցս վկայել են հայ ժողովրդի օրինապահությունը: «Ռուսական ցարերը հայ ժողովրդին բազմիցս զնահատել են որպես հասարակական կարգը հարգող ու պահող ժողովուրդ: Մենք ունենք Ալեքսանդր I-ի 1813 թ. սեպտեմբերի 15-ի հավատարմագիրը, որտեղ ասված է, որ հայերը «տարբերվում են խաղաղ հավատարմությամբ և նվիրվածությամբ» և որ նրանք «տազնապալից պայմաններում մնացին ամուր և անհողորդ»:

Մենք

¹ «Стенографический отчетъ. Государственная Дума», էջ 1045:

² Մոսքը 1894-1896 թթ. Թուրքիայում հայկական կոտորածների մասին էր:

² Տե՛ս «Стенографический отчетъ. Государственная Дума», էջ 1048:

ունենք 1827 թ. պարսկական պատերազմից հետո Նիկոլայ I-ի շնորհագիրը արքեպիսկոպոս Ներսեսին, որում արտահայտում էր իր բարեհաճությունը հայ ժողովրդին՝ «նրա դրսևորած ջանասիրության և անկողմնակալ նվիրվածության համար»¹:

Միլլուկովն այնուհետև անդրադառնում էր հայերի մասնակցությանը ռուս-թուրքական պատերազմներին՝ սկսած 1828 թվականից մինչև 1877-1878 թվականները, երբ սկսվում էին հայերի փախուստները Թուրքիայից դեպի Ռուսաստանի սահմանները, որտեղ նրանք փնտրում էին պաշտպանություն այն սարսափներից, որոնց պայմաններում նրանք ապրում էին օսմանյան լծի տակ:

Ճառախոսը նկատում էր, որ թեև հետագայում հայերի, հատկապես հայ մտավորականության չրջանում առաջացավ նաև մի ուրիշ տրամադրություն, որի մասին շատ է խոսվել Երրորդ Պետական դումայում, որտեղ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաչկովը հանգամանորեն ցույց էր տվել դրա պատճառը, այն է՝ Կովկասի նախկին փոխարքա Գոլիցինի հրամանով իրականացրած հայերի հոգևոր և եկեղեցական գույքի զավթում²:

Հերքելով հայերի անջատողականության մասին տարածվող խոսակցությունները՝ Միլլուկովն ասում էր, որ Դաչնակցության դեմ ծավալված հալածանքը ծանրակշիռ պատճառներ չի ունեցել: «Դաչնակցականներին, որոնք կարող էին վտանգավոր լինել միայն Թուրքիայի համար, սխալ քաղաքականությամբ մենք [նրանց] ժամանակավորապես վտանգավոր դարձրինք մեզ համար: Բայց ներկայումս բոլոր հայկական կուսակցությունները միացած են մի տրամադրությամբ, որը չափազանց նպաստավոր է հայկական հարցին մեր անմիջական միջամտության համար: Ես նորերս Կովկասում էի և այնտեղ գտա այնպիսի ձգողականություն դեպի Ռուսաստանը, որի նմանը վաղուց չի եղել...: Գոյություն չունի և չպետք է լինի անվաստահունություն Ռուսաստանի և հայերի միջև»³:

Քանի որ այժմ, շեշտում էր Միլլուկովը, այլևս չկա անվաստահունություն Անգլիայի և Ռուսաստանի, Ռուսաստանի և հայերի միջև, ուստի այսպիսի նպաստավոր հանգամանքներում պետք է օգտվել ժամանակին ծերուկ Գլադստոնի տված ճշգրիտ դեղատոմսով. «1) Չափավորեք ձեր պահանջները և ձգտեք ձեռք բերել միայն հնարավորը, 2) Մի հավատացեք թուրքերի տված խոստումներին, որովհետև դրանք ավելի վնասաբեր են, քան օգտակար, 3) Պետք է դիմել միայն ստիպողական միջոցների, քանի որ Կ. Պոլսում չեն հասկանում «պարտավորություն» բառի իմաստը»: Այդ կանոնները, ասում էր ճառախոսը, իրենց ուժը պահում են նաև այսօր: Դրանք այն են, ինչ այսօր պահանջում են հայերը: Դեպքերը, որոնք տեղի են ունենում այժմ Կ. Պոլսում, ցույց են տալիս, թե այնտեղի այժմյան կառավարող կուսակցությունից ինչ չափով կարելի է սպասել իրական ռեֆորմներ հայերի համար⁴:

Այնուհետև, անդրադառնալով Հայաստանի բարենորոգումների խնդրի դժվարին առաջխաղացմանը, Միլլուկովը դրա գլխավոր պատճառներից մեկը համարում էր թուրքական իշխանությունների կողմից Հայաստանի վարչական կամայական բաժանումները, որպեսզի ամենուրեք մեծամասնություն կազմեն թուրքերը, փոքրամասնություն՝ քրիստոնյաները: «Դրա համար ստեղծվել են աշխարհագրական իսկական անհեթեթություններ՝ ամբողջական նահանգին միացրել են մի կտոր՝ շատ հեռու այդ նահանգից և թուրք բնակչության գերակշռությամբ: Դա պետք է վերափոխել, - ասում էր նա, - այժմյան վիլայեթները պետք է այնպես բաժանվեն, որ նրանց բնակչության զգալի մասը, ծայրահեղ դեպքում 40% -ը, կազմեն հայերը»²:

Ապա շեշտելով, որ այս բոլոր պահանջների առաջին և վերջին խոսքը բարենորոգումների ընթացքի վրա տերությունների վերահսկողությունն է, չնայած Կոստանդնուպոլսում այդ վերահսկողությունը բնութագրվել է որպես «միջամտություն» Թուրքիայի ներքին գործերին:

¹ Տե՛ս «Стенографический отчетъ. Государственная Дума», էջ 1049:

² Տե՛ս նույն տեղում, էջ 1050:

³ Տե՛ս նույն տեղում:

¹ «Стенографический отчетъ. Государственная Дума», стр. 151.

² Նույն տեղում, էջ 151-152:

Միլլուկովն իր ելույթը վերջացնում է հետևյալ խոսքերով. «Պարոններ, այդ «միջամտությունը» պետք է կատարել անհապաղ, որովհետև եթե մենք այժմ կորցնենք պահը, ինչպես կորցրինք 1879* և 1895 թթ., ապա կրկնում եմ և ավարտում նրանով, ինչով սկսեցի՝ մենք հայ ժողովրդի մնացորդներին, որոնք փրկվել են բոլոր սարսափներից ու բռնություններից, կմատնենք վերջնական բնաջնջման և, դրանով իսկ, կգրկվենք մեր բնական աջակցությունից հենց մեր սահմանի մոտ»:

Միլլուկովի ճառի ողջ իմաստն այն էր, որ Ռուսաստանը պետք է ամուր կանգնի Թուրքիայի հայ ժողովրդի թիկունքին և հետևողականորեն առաջ տանի Հայաստանի բարենորոգումների գործը:

Միլլուկովին ամբիոնի մոտ հաջորդում է Բաթումի, Կարսի և Սուխումի շրջաններից պատգամավոր ընտրված սոցիալ-դեմոկրատ (վրաց մենչևիկ) Ա. Չխենկելին, որը ճառը տեսաբանական հայտնի պոստուլատների մի անհաջող շարադրանք էր, որը ոչ մի կապ չունեի Դումայում քննարկման դրված Հայկական հարցի, Թուրքահայաստանում ստեղծված ողբերգական կացության հետ¹:

Վրաց մենչևիկը խիստ քննադատության ենթարկեց Միլլուկովին այն բանի համար, որ նա իր ելույթը «համարյա ամբողջովին» նվիրեց Ռուսաստանի կողմից Թուրքիայի հայերին պաշտպանելու անհրաժեշտությանը: «Նա անընդհատ խոսեց մի կողմի (հայերի:– Հ. Ս.) մասին և մի խոսք անգամ չասաց մյուս կողմի (թուրքերի և քրդերի:– Հ. Ս.) մասին»: Չխենկելին նշում էր, որ Միլլուկովն այդպես է վարվել նաև նախկիններում և, որպես իր ասածի հաստատում, մեջբերում էր 1912 թ. դեկտեմբերին Պետական դումայում նրա արտասանած մի ելույթից, երբ նա կրկին անդրադառնալ էր Թուրքահայաստանի հայության անտանելի վիճակին: Վրաց մենչևիկը Միլլուկովի այդ ելույթը համարում էր «իմպերիալիստական»», քանի որ զուգահեռաբար չէր բարձրացրել նաև Հայաստանի թուրքերի ու քրդերի տնտե-

սական ծանր վիճակի մասին հարցը: Նա Միլլուկովին մեղադրում էր, թե նա, իբր, արհամարհանքով է արտահայտվում քրդերի և ուրիշ մուսուլմանների նկատմամբ: Ինչ վերաբերում է մուհաջիրներին, ասում էր նա, ապա նրանք նախկին ուսահայատակներ են, որոնց իրենց բնակություն վայրերից վռնել են ցարական իշխանությունները:

Արտահայտելով իր ու իր համախոհների տեսակետը՝ Չխենկելին ասում էր, որ Թուրքահայերը բնության կողմից դատապարտված են մուսուլմանների հետ համակերպության, և նրանց կարող են փրկել միայն հայ և մուսուլման զանգվածների քաղաքական ինքնագիտակցության բարձրացումը, նրանց միջև եղբայրական կապերի հաստատումը: Ավելին, նա գտնում էր, որ ինչպես ազգային, այնպես էլ բազմաթիվ այլ դժվարին խնդիրների լուծումը կախված է աշխատավոր պրոլետար դասակարգի համերաշխությունից, որ այդ դասակարգը միայն կարող է լուծել նաև Հայկական հարցը:

Բայց Չխենկելին «մոռանում էր», որ Թուրքահայաստանում չկա զարգացած արդյունաբերություն, հետևաբար այնտեղ գոյություն չունի եվրոպական իմաստով պրոլետարիատ, որը կարողանար հայկական ջարդերի, ալան-թալանի, առևանգումների և այլ բռնությունների առաջն առնել: Դժբախտ Թուրքահային շրջապատում էին ոչ թե կուլտուրական ուսուցիչ կամ վրացին, այլ կրոնամոլ խավար թուրքն ու քուրդը:

Այդ կացության մեջ թշվառ Թուրքահայը մինչև ե՞րբ պիտի սպասի, որ իր հարևանները հասնեն որոշ գիտակցության, և կարելի դառնա ընդհանուր ուժերով ազատագրել ապաբախտ Թուրքահայաստանը: Մինչև Թուրքահայաստանում զարգանար ինդուստրիա, որի հետևանքով առաջ գար հայ, թուրք, քուրդ ընչազուրկ պրոլետար դասակարգ, և այդ ազգերի միջև հաստատվեր համերաշխության գաղափարը, հայկական տարածքների վրա չէր մնա ոչ մի հայ:

Չխենկելու արտահայտած մտքերը պաշտպանում էին համախոհները, հատկապես Դումայի սոցիալ-դեմոկրատական ողջ ֆրակցիան: Բայց Պետական դումայի մեծամասնությունը բոլորովին չգոհացրեց վրացի պատգամավորի ելույթը, որը միայն

* Պետք է լինի 1878 թ.:

¹ См. в «Стенографический отчетъ. Государственная Дума», стр. 1077-1079:

չփոխություն էր ստեղծում մարդկանց մտքերում:

Դու՛նայի ազգայնական ֆրակցիայի անունից հայասիրական մեծ ճառով հանդես եկավ կոմս Բոբրինսկին¹, որը պատգամավոր էր ընտրված Տուլայի նահանգից:

Սա այն քաղաքական գործիչն էր, որը, լինելով Պետական դումայի նախորդ երկու գումարումների պատգամավոր, իր ելույթների ընթացքում բազմիցս հանդես էր եկել հակահայկական սանձարձակ ելույթներով, հարձակումներ գործել հայ քաղաքական բոլոր կուսակցությունների (մասնավորապես ՀՅ դաշնակցության) վրա, ավելին՝ վիրավորական կոպիտ արտահայտություններ էր թույլ տվել հայ ժողովրդի հասցեին, ոռոսահայություններ ընտրուշը որպես կայսրության միասնությունը քայքայող ուժ: Բայց այն բանից հետո, երբ Բալկանյան պատերազմի օրերին Ռուսաստանն իր ձեռքն էր առել Թուրքահայաստանի բարենորոգումների հարցը, հիմա բոլորովին փոխել էր հայության մասին իր հոռի տեսակետներն ու կոչերը, հանդես էր գալիս միայն ու միայն դրական, նույնիսկ հայասիրական շեշտադրումներով և իշխանություններին հորդորում էր բազմապատկել աջակցությունը թուրքահայերին:

Իր ելույթի սկզբում կոմս Բոբրինսկին ամենից առաջ պատգամավորներին հորդորեց սթափվել հումորիստական այն մթնոլորտից ու տրամադրությունից, որ Դումայում ունեցած իր ելույթով ստեղծեց Ձխենկելին: Այնուհետև՝ Միլյուկովի ելույթում արտահայտած մտքերին հավանություն տալուց հետո, ներկայացնում է հայկական հարցի իր ըմբռնումը:

«Այնտեղ, ուր մենք բավականաչափ եռանդ չենք դրսևորում, – ասում էր նա, – այնտեղ իսկույն իրենց քաղաքականությունը հանդես են գալիս ուրիշները: Հայոց հարցը մեզ համար կարևոր է ոչ միայն նրանով, որ այդ ժողովուրդը բռնել է մի տարածք, որը փակում է այն երկաթե օղազտին, որ Գերմանիան այժմ աշխատում է երկարացնել՝ նրանով բռնելով Ռուսաստանի ամբողջ հարավը, մի օղակ, որը սկսվում է Դանուբից, անցնում

¹ Տե՛ս «Стенографический отчетъ. Государственная Дума», стр. 1079-1092:

է Բալկանյան թերակղզով, Բոսֆորով, Փոքր Ասիայով և, վերջապես, փակվում է մի կողմից Հայաստանում, մյուս կողմից՝ Պարսից ծոցում: Մենք պետք է ամեն ջանք գործ դնենք, որպեսզի այդ շրջանակը չսեղմվի: Հայոց հարցը մեզ համար կարևոր է նաև այն պատճառով, որ հայ ժողովուրդը մեզ մոտ է ու հարազատ նաև հավատքի ղողմաններով»: Բոբրինսկին միանգամայն ճիշտ էր համարում Միլյուկովի այն կարծիքը, որ հայկական հարցն այժմ դառնում է գերմանական հարց, որովհետև «եթե մեր դիվանագիտությունն այդ մասին տեղեկություններ չունի, եթե դիվանագիտությունն այդ լրջագույն հայկական հարցի նկատմամբ այդքան անտարբեր է, որքան և հասարակական կարծիքը, ապա Գերմանիան, իսկապես, չի հորանջում... Այնտեղ, որտեղ մենք չենք դրսևորում մեր գործունեությունը, անմիջապես հայտնվում են գերմանացիները, և անում այն, ինչ իրենց պետք է»:

Այնուհետև ճառախոսն իր ուրախությունն էր հայտնում այն կապակցությամբ, որ «այժմ, փա՛ռք Աստծո, հայերի մոտ չկա այն դժգոհությունը, որ գրգռվել էր մասամբ նրանց նկատմամբ վարված սխալ քաղաքականության հետևանքով»: Նա հաստատում էր, որ ինքը մեկն է նրանցից, որոնք ողջունեցին հայերի նկատմամբ Կովկասի փոխարքա նշանակված Վորոնցով-Դաշկովի առաջին իսկ քայլերը, թեև նրա ընդհանուր քաղաքականության հետ շատ բաներում համաձայն չէր:

Բոբրինսկին հիշեցնում էր, որ ովքեր ներկա են եղել Պետական Դումայի երրորդ նստաշրջանին, համոզվել էին, որ զնալով լավանում է ոռուսահայերի վերաբերմունքը ոռուսական իշխանությունների նկատմամբ: Մենք ականատես ենք եղել, թե ինչպես Երկրորդ Դումայում հայ ժողովրդի ներկայացուցիչները, որոնք նստում էին ծայրահեղ ձախակողմյան աթոռներին, ոչ միայն հայկական, այլև ընդհանուր համառուսական հարցերի քննարկման ժամանակ խիստ քննադատություններով էին հանդես գալիս կառավարության դեմ: Բայց երրորդ Պետական Դումայում նրանք բոլորովին փոխվեցին և հանդես էին գալիս չափավոր դիրքերից՝ նույնիսկ պաշտպանելով կառավարության գործողությունները:

Եվ եթե հայութունը, ասում էր նա, քաջ գիտակցում է մեծ Ռուսաստանի նշանակությունը և ցանկանում է քայլել նրա հետ, մենք միշտ նրան ձեռք ենք մեկնելու:

Կոմս Բորբինսկու ճառը առաջ բերեց աղմկալի ծափահարություններ Դումայում: Հայաստանի և Հայ ժողովրդի հանդեպ պատգամավորների համակրանքի արտահայտությունները չէին պակասում հատկապես աջակողմյան ճամբարում: «Մշակը» գրում էր, որ այդ օրը վերջնականապես ամրացան Ռուսաստանի վստահությունը և համակրանքը դեպի հայերը¹:

Վերջում ամբիոն է բարձրանում և ընդարձակ ելույթ է ունենում Բաքվի, էլիզավետպոլի և էրիվանի նահանգներից Պետդումայի պատգամավոր ընտրված Միքայել Պապաջանովը (Պապաջանյան)²:

Դիմելով Պետական Դումայի անդամներին՝ Պապաջանովը հայտարարում է, որ այդտեղ ինքը ներկայացնում է իրենց հայրենիքի սահմաններում ապրող Կովկասի Հայ բնակչության մեծամասնության շահերը, հետևապես իր պարտքն է համարում չչրջանցել այն հարցը, որ այսօր այդպես բուռն քննարկվում է Դումայում, և որը շատ խճճված ու շատ դժվարին Արևելյան խնդրի մի մասն է:

Հայ պատգամավորը շեշտում էր, որ Հայկական հարցն այժմ հերթի է դրված, և դրանով արտասահմանում զբաղվում են շատ լրջորեն, իսկ Ռուսաստանում այն կարծես մատնված է անտարբերության: Եվրոպայում ստեղծված են Հայկական հարցով զբաղվող բազմաթիվ կազմակերպություններ ոչ միայն Ռուսաստանի բարեկամ պետությունների մայրաքաղաքներում, այլև նույնիսկ Գերմանիայում: Կարծես թե Բեռլինը մոռացել է, որ դեռ ոչ շատ առաջ նա ոչ մի բարի խոսք չէր ասում այն ժողովրդի մասին, որով նա այժմ այդպես ջերմեռանդորեն զբաղվում է: Ելույթ ունեցողը համոզմունք էր հայտնում, որ մոտ ապագայում ռուս հասարակությունն ուշադրության կարժանացնի Հայկական հարցը, և դրա զրավականն այն է, որ այդ խնդրով սկսել

են լրջորեն զբաղվել քաղաքական տարբեր ուղղությունների ռուսական մամուլի օրգանները («Новое Время», «Речь», «Биржевые Ведомости» և այլն), որոնք գրեթե ամեն օր Հայկական հարցի մասին իրենց էջերում տեղադրում են հոդվածներ, հեռագրեր և այլ նյութեր:

Շարունակելով իր ելույթը՝ Պապաջանյանն ասում էր, որ մինչև 19-րդ դարի սկիզբը «Հայկական հարց» ասելով հասկանում էին Հայ ժողովրդի շահերին վերաբերող խնդիրների ողջ զանգվածը: Նա հիշեցնում էր, որ Մեծն Պետրոսը ժամանակին հարաբերություններ էր հաստատել Հայ ժողովրդի ներկայացուցիչների, Ղարաբաղի մելիքների հետ: Բայց նրա գործը շարունակվեց բավականին ուշ, երբ գահ բարձրացան Պավել I, Ալեքսանդր I և Նիկոլայ I ցարերը: Խնդիրը նորից էական կարևորություն ձեռք բերեց և դեպի հարավ Ռուսաստանի առաջխաղացումն ավելի գործնական բնույթ ստացավ 19-րդ դարի սկզբին, երբ Ռուսաստանի իշխանությունները անցան Երևանի, Նախիջևանի և Ղարաբաղի խանությունները: Այդ ժամանակ Հայկական հարցի մի մասը լուծում ստացավ: Եվ պետք է ասել, որ Ռուսաստանի սահմաններում երբեք Հայկական հարց չի եղել:

Այն ժամանակից, երբ հայերն անցան Ռուսաստանի հովանավորության տակ, նրանք այստեղ այլ բան չպահանջեցին, բացի իրենց կրոնի դավանության ազատությունը, լեզվի և ազգային մշակույթի պահպանումը:

Բայց, դժբախտաբար, եկավ մի չրջան, երբ հարաբերությունները կառավարության և հայերի միջև այն աստիճան աննորմալ դարձան, որ վերջիններիս սկսեցին համատարած վերագրել Ռուսաստանից անջատվելու անլուրջ մեղադրանք, մի բան, որ իրականությունը բնավ չէր համապատասխանում:

Պապաջանյանը ողջունեց կոմս Բորբինսկու ելույթը, հատկապես նրա այն տեսակետը, որ Հայ իրականության մեջ գործող և ամենաազգայնական համարվող Դաշնակցություն կուսակցությունը վճռականապես դեմ է Անդրկովկասի Հայկական տարածքները Ռուսաստանից անջատելուն: «Ես պետք է միանամ կոմս Բորբինսկու հայտարարությանն այն մասին, թե հայերը չեն որոնում Ռուսաստանից անջատում (Զայներ աջից՝ «Բրա՛-

¹ Տե՛ս «Մշակ», № 126, 11 հունիսի 1913 թ.:

² Տե՛ս «Стенографический отчетъ. Государственная Дума», стр. 1092-1107:

վո»)*: Մենք չենք որոնում արտոնություններ, բայց մենք պահանջում ենք, որ միանգամ ընդմիջտ [ոուս մարդու մոտ] տպավորվի և ամրանա այն միտքը, որ հայերը չունեն անջատողական ձգտումներ, որ նրանք կամենում են ոուս ժողովրդի հետ ապրել ընդհանուր քաղաքացիական կյանքով և երբ անհրաժեշտ լինի՝ իրենց կյանքը տալ Ռուսաստան ընդհանուր հայրենիքի համար (Ծափահարություններ աջից և ձախից, ձայներ՝ «Բրա՛վո»՝ համարյա բոլոր նստարաններից)»:

Պապաջանյանը պաշտպանեց Բորբինսկու տեսակետը, թե հայերի, որպես անջատողականների գոլիցինյան տեսակետն առաջինը վճռականապես հերքել է գրաֆ Վորոնցով-Դաչկովը: Պատահական չէ, ասում էր ելույթ ունեցողը, որ Կովկասի փոխարքան շահել է առանձնահատուկ վստահություն բոլոր հայերի մոտ, արժանացել նրանց խոր հարգանքին:

Պապաջանյանը միաժամանակ չեչտում էր, որ հայերի ավանդական ոուսասիրությունը նախկինում շատ ծանր է նստել իրենց վրա, քանի որ այն մեծացնում էր օսմանյան կառավարության թշնամական վերաբերմունքը թուրքահայության նկատմամբ: Այդ առնչությամբ անդրադառնալով ոուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմին՝ նա ասում էր, որ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով Հայկական հարցը խլվեց Ռուսաստանի ձեռքից և հանձնվեց եվրոպական մեծ պետություններին, դրանով իսկ սկսվեց վեճ-տարաձայնությունների շրջանը, որը չունեցավ ոչ մի դրական հետևանք հայերի համար (Բացականչություններ աջից՝ «Այո՛, միանգամայն ճիշտ է»): Դրա հետևանքը չուտով չուշացավ. Աբդուլ Համիդի կառավարությունը ձեռք առավ ամեն միջոց, որպեսզի «վստանգավոր» հայ տարրի ֆիզիկական բնաջնջմամբ օրակարգից հանի Հայկական հարցը: Նրա ձեռք առած միջոցները համարյա վախճանակետին հասց-

* Հատկանշական է, որ Դումայի հայ պատգամավոր Պապաջանյանի Հայկական հարցին նվիրված ելույթին ամենից առաջ բուռն ոգևորությամբ արձագանքում էին աջակողմյան պատգամավորները, որոնց մեծ մասը հակված էր թուրքահայաստանը ոուսական զորքերի կողմից գրավելու մտքին:

րին այդ հարցը՝ մեծ թվով կրճատելով հայ ազգաբնակչությունը: Թուրքիային հաջողվեց հայկական վիլայեթներում փոխել վիճակը: Հայաստանում վերջնականապես կարգ ու կանոն մտցնելու համար պետք է իրագործվի Բեռլինի դաշնագրի այն կետը, որի համաձայն՝ Թուրքիան պարտավորվում էր հայերին պաշտպանել քրդերից և չերքեզներից: Բայց թուրքաց կառավարությունները՝ սկզբում Աբդուլ Համիդի բռնապետությունը, հետո վերջին ուեթիմը, չապացուցեցին, թե իրենք անկեղծորեն շահագրգռված են միջոցներ ձեռք առնելու խժղժուկություններին վերջ դնելու համար:

Այնուհետև Պապաջանյանն անդրադառնում է Թուրքիայում հայերի թվաքանակի հարցերին, Պետդումայի անդամներին բացատրում է, թե թուրքական կառավարությունն ինչու է կեղծ վիճակագրություն խեղաթյուրում հայության թվաքանակը կայսրության մեջ և հատկապես Թուրքահայաստանում: «Նրա նպատակը մեկն է,- ասում էր նա,- տերություններին ցույց տալ, որ հայությունը, որպես ազգային միավոր, չնչին փոքրամասնություն է չրջապատող ազգությունների ու ցեղերի միջավայրում, հետևապես հայերի հարցով հատուկ զբաղվելու հարկը չկա»:

Այս պայմաններում, ասում էր ելույթ ունեցողը, կառավարության կողմից սանձազերծված քրդերը շարունակում են իրենց այլանդակ ոճրագործությունները հայերի նկատմամբ: Նա նշում էր, որ «վերջին ժամանակներս մամուլում հաճախ են բերվում օրինակներ, որոնք ցույց են տալիս թուրքական իշխանությունների սարսափելի վերաբերմունքը հայ բնակչության հանդեպ, վերաբերմունք, որն այլ կերպ չես անվանի, քան ֆիզիկական բնաջնջում:... Ամենից առաջ մեզ կհարցնեն՝ ի՞նչ ենք ուզում մենք:... Մեր ցանկությունները չափազանց համեստ են: Հակառակ այն ակնարկի, որ այստեղ իրեն թույլ տվեց Պետական Դումայի անդամ Չխենկելին, թե հարցերը պետք է որոշվեն տեղերում, Թուրքիայի հպատակության տակ, ես պետք է ասեմ, որ ոչ ոք չի էլ մտածում բռնի անջատման մասին և ոչ էլ ինչ-որ բան անել ինքնուրույնաբար: Հայերի պահանջները արտակարգ համեստ են: Նրանք միայն ուզում են, որ հաստատվի այնպիսի կարգուկանոն, որը կերաշխավորի հավատքի ազատություն,

չարամիտ ոտնձգություններից իրենց պատվի, կյանքի ու գույքի պաշտպանություն և իրենց ազգային մշակույթի դարգացման ապահովություն: Ահա թե ինչի են հանգում բոլոր ցանկությունները և, այսպիսով, հպատակության փոփոխության մասին, որի առթիվ խոսեց քաղաքացի Ջիսենկելին, խոսք լինել չի կարող»: Ելնելով այդ ամենից՝ Միքայել Պապաջանյանը հայտարարում էր, որ հայ ժողովուրդը Հայկական հարցի լուծումն ակնկալում է միայն Ռուսաստանից: «Ռուսաստանի հայերը, - ասում էր նա, - ցանկացել են, որ Թուրքահայաստանում բարենորոգումների անցկացումն իր վրա վերցնի Ռուսաստանը: Այժմ բոլորի հայացքներն ուղղված են Ռուսաստանին և նրանից են սպասում այդ հարցի լուծումը: Կովկասի հայերիս հայտնի է, որ մեր կառավարությունը զգուշացրել է անկարգություններ թույլ չտալ Թուրքահայաստանում, թուրք-քրդական, իսկ այնտեղի հայ բնակչությանը ջերմորեն ողջունել է ռուսական կառավարության այդ հայտարարությունը: Մենք սպասում ենք կառավարության հետագա քայլերին. բարենորոգումների անցկացման գործում ռուսական կառավարության միջնորդությամբ միայն այդ բարենորոգումները կստանան լուրջ նշանակություն: Սյուպիսով, պարոններ, ավարտելով իմ մեկնաբանությունները՝ ես ասում եմ, որ Ռուսաստանի բոլոր հայերի ցանկությունն այն է, որ բարենորոգումների իրացման գործը իր վրա վերցնի Ռուսաստանը»: (Ծափահարություններ ձախից, կենտրոնից և աջակողմյան աթոռներից):

Ելույթի վերջում Մ. Պապաջանյանը թուրքահայ ժողովրդի համար օգնություն խնդրեց ռուսական կառավարությունից, մի բան, որ չգոհացրեց Դումայի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիային: Իսկ Պետական դումայի մեծամասնությունը և, մանավանդ, աջակողմյանները գոհ մնացին Պապաջանյանի ելույթից: Կոմս Բորերինսկին նույնիսկ տեղից պահանջեց զրավել Հայաստանը*:

* Ընդհանրապես այդ օրերին ռուսական մամուլի էջերում շատ հաճախ կարելի էր հանդիպել հրապարակումների, որոնց հեղինակները բարձրացնում էին Հայաստանը զրավելու կամ այդ մտքից հրաժարվելու հարցերը: Ռուս

Դումայի նույն նիստում, ելույթից բացի, Պապաջանյանը նաև մի քանի հայտարարություններ արեց, որոնք համակրական ողջույնի արժանացան դահլիճի բոլոր թևերից:

Պետական Դումայի այդ նշանավոր նիստը լայնորեն լուսաբանվեց ռուսական և հայկական մամուլի էջերում: Ռուսաստանի և Անդրկովկասի բազմաթիվ վայրերի հայերը շնորհակալական հեռագրեր հղեցին Պյոտր Միլյուկովին և հատկապես կոմս Բորերինսկուն:

աջակողմյանները, որոնք մոտ էին կանգնած պալատական շրջաններին, կառավարությունից պահանջում էին անհապաղ զրավել թուրքահայաստանը և այն միացնել ռուսական կայսրությանը: Նրանք լսել անգամ չէին ուզում, թե թուրքերը երբեք Թուրքահայաստանին կտան ինքնավարություն կամ նման մի բան: Մինչդեռ արտաքին գործերի նախարար Սերգեյ Սազոնովը միանգամայն դեմ էր այդ պահանջին՝ գտնելով, որ որևէ գրավում առանց եվրոպական մեծ պետությունների համաձայնության այլևս անհնարին է: Թուրքահայաստանը միայն պետք է բարեկարգվի, որը, ըստ Սազոնովի, պիտի կատարվի շահագրգռված բոլոր պետությունների փոխադարձ համաձայնությամբ և ոչ ուրիշ կերպ: Նա գտնում էր, որ տվյալ պարագայում ինքը անկարող է ինքնազուրկ գործել, որովհետև, հակառակ պարագայում, կարող է ընկնել անակնկալների մեջ: Հայ գործիչներից շատերը ցավով էին ընդունում այս տեսակետը: Միքայել Պապաջանյանին Կովկասից Ռուսաստանի Պետական դումայի անդամ վերընտրելու կապակցությամբ Արշակ Չոպանյանը նոյեմբերի 12 թվակիր նամակով Փարիզից նրան շնորհավորել էր, ապա անդրադարձել տվյալ պահանջին հայությունը հուզող մի շարք հարցերի: Մասնավորապես նա շատ կարևոր էր համարում, որ Պապաջանյանն ու ռուսահայ մյուս նշանավոր գործիչները ջանքեր գործադրեն, որպեսզի Ռուսաստանի կառավարությունը հակվի Հայաստան գործ մտցնելու գաղափարին: Նա գրում էր. «Թրքահայաստանը ամբողջ այժմ Ռուսիան զալստեանը կսպասե, Ռուսէն կհուսա իր ազատումը: Պէտք է ջանանք որ Ռուսը չուշացնե Թրքահայաստանի մեջ իր մուտքը: Այդ որոշված բան է. օր մը չէ օր մը պիտի կատարվի, եվրոպական տերություններն ալ սկզբէն համակերպած են այդ ծրագրին. արդ, քանի որ անխուսափելի է այդ և թրքական ռեժիմին բաղդատմամբ՝ ռուսական հովանավորությունը անհունապես նախընտրելի է, մենք պէտք է ջանանք որ շուտ կատարվի այդ մուտքը: Այժմ որ սարսափ կտիրե Թրքահայաստանի մեջ և ջարդի երկիւղ կա ամեն օր, ինչո՞ւ Ռուսը գեթ քիչ մը գործ չմտցնե հոն՝ գոնե կոտորածի առաջն առնելու համար»: (Արշակ Չոպանյան, Նամականի, Երևան, 1980, էջ 112):

Ինչպես և սպասելի էր, Դումայի նիստի արդյունքները չէին գոհացրել այն հակահայ տարրերին, մամուլի առանձին օրգանների, որոնք շարունակում էին պղտորել ուսական հասարակական միտքը:

Այսպես՝ իր հակահայ գործունեությունը հայտնի “Голос Кавказа” թերթը 1913 թ. հունիսի 16-ի առաջնորդողում առարկում էր կոմս Բորբինսկու՝ Դումայում արտահայտած այն մտքին, թե հայերին պետք է օգնել, քանի որ նրանք ուսուների դավանակիցներն են: Պարբերականը գրում էր, որ ուսուների նկատմամբ հայերի տածած թշնամությունն ամենաակնառու ապացույցներից մեկն այն է, որ երբ Ռուսաստանը պատերազմում էր Ճապոնիայի դեմ, ուսու ժողովրդի համար այդ ծանր պահին հայերի ամենամուլի հեղափոխական կուսակցությունը՝ Դաշնակցությունը, կայսրության ներքին թշնամիների կողմն էր և ամեն կերպ աշխատում էր դժվարություններ ստեղծել կառավարության համար, բացի այդ՝ հենց այդ ժամանակ նա ահաբեկություն կազմակերպեց ուսու մի քանի պաշտոնյաների նկատմամբ¹:

Դրան ի պատասխան՝ հայկական թերթերում տպագրվեցին մի շարք հոդվածներ, որոնց հեղինակները մատնանշում էին, որ նախ մի կուսակցություն հործողությունները չի կարելի վերագրել ամբողջ ժողովրդին, երկրորդ՝ եթե Դաշնակցությունը կատարել է սխալներ, դրա համար նա արդեն ենթարկվել է հալածանքների, պատիժների, վկան՝ 1912 թ. դատավարությանը, երրորդ՝ Դաշնակցության կողմից մի քանի պաշտոնյաների ահաբեկումը (արդարացի թե ոչ) չի կարելի դիտել որպես ուսու ժողովրդի դեմ կատարված գործողություններ: Վերջապես՝ հայ ժողովրդի ուսամետությունը, նրա անկեղծ ձգտումը դեպի Ռուսաստան դարերով ամրապնդված զգացում է՝ հաստատված անհերքելի փաստերով*:

¹ Տե՛ս “Голос Кавказа”, 16 июня 1913 г.

* Հիրավի, ուսահայ ժողովուրդը չէր մոռացել, ուսական զինված ուժերի խաղաղած դերն իր համար ճակատագրական պահին, չէր մոռացել հանդուրժողականությունը, այն, որ ուսական հզոր մշակույթը խիստ բարերար ազդեցություն է ունեցել իր կյանքի վրա, որ շնորհիվ ուսական քաղաքակրթա-

կ. Պոլիս հասած ընդհանուր վերատեսուչները պատրաստվեցին ճանապարհվել իրենց աշխատավայրերը. Լուիս Կոստան Վեստենենկը՝ Թուրքահայաստանի «Հյուսիսային», իսկ գնդպետ Հոֆը՝ «Հարավային» հատվածներ:

Իսկ վերատեսուչների նստավայրերում՝ էրզրումում և Վանում, հայկական շրջանակները նախապատրաստական բազմաբնույթ աշխատանքներ էին ծավալում նրանց հավուր պատշաճի ընդունելու համար:

Հոֆը ժամանեց Վան քաղաք և այդտեղ մեծ ընդունելություն արժանացավ ինչպես տեղական իշխանությունների, այնպես էլ հատկապես քաղաքի բնակչության կողմից: Հանգիստ առնելուց հետո նա իր ուղեկիցների հետ առաջինը այցելեց Վանի նահանգապետարան, ուր կուսակալը և Հոֆը ողջույնի ճառեր փոխանակեցին: Ապա Հոֆը իր ուղեկիցներով այցելեց հայոց առաջնորդարան: Վանի «Աշխատանք» թերթը իր օգոստոսի 29-ի համարում գրում էր. «Հոֆ պեյ իր հետևորդներով առաջնորդարանում խոնված բազմութեան ծափահարությունները ընդունեց զինքը: Հոն կես ժամուան չափ մնաց: Ազգային] գաւառական ժողովի ատենապետը բարի գալուստի ճառ մը խօսեցաւ և մաղթեց որ Հայաստանի քննիչը իրականացնէ իր վրայ դրուած բարենորոգչական յոյսերը:

Հօֆ պեյ յուզուած կերպով պատասխանեց այս ճառին և իր

կան ազդեցություն՝ հնարավորություն էր ունեցել զարգացնելու իր տնտեսությունը, գրականությունն ու լուսավորությունը: Իհարկե, եղել են պահեր, երբ իրենց խնդիրներն ու պաշտոնը չըմբռնող վարչական անձինք աշխատել են դժգոհություն սերմանել հայ և ուսու տարրերի միջև, ուսական իշխանությունների առջև անհավատարիմ ցույց տալ հայ ժողովրդին, բայց թե՛ Ռուսաստանի գահակալները հայ ազգին ուղղված իրենց բազմաթիվ հրովարտականերով, թե՛ ուսու ազգի լավագույն զավակները շարունակ վկայել են հակառակը՝ ընդգծելով, որ մահմեդական հալածանքներից փրկված ուսահայությունն իր պատմական բախտն անկեղծորեն շարկապել է ուսու մեծ ազգի անսասան գոյություն, նրա անընդհատ վերելքի ու առաջընթացի հետ:

կողմէ խոստացաւ ջանք չխնայել օգտակար ըլլալու համար մեր հայրենիքին»:

Շատ չանցած՝ գնդապետ Հոֆը ձևավորեց իր պաշտոնախումբը, որի անդամների թեկնածուիթյուններն առաջարկել էր տեղի կառավարչութիւնը: Սեկտորի չորս վիլայեթներում նրան տվել էին օգնականներ: Բացի այդ, սեկտորների մասշտաբով ստեղծվեցին վարչութիւններ, որոնցից երկուսը գլխավորում էին հայեր՝ Հ. Պեկյան էֆեօղլը (երկրագործութեան) և Սրապ էֆենդին (հանրօգուտ գործերի): Մյուս վարչութիւնները գլխավորում էին մահմեդականներ: Հայերենից քարտուղար-թարգման էր նշանակվել Մատթեոս էֆենդին, իսկ քրդերենի քարտուղար-թարգման՝ Ադիլ էֆենդին¹:

Շատ չէր անցել, երբ Կ. Պոլսից Վան և էրզրում եկած գաղտնի հրահանգների համաձայն և տեղի թուրքական իշխանութիւնների դրդմամբ գավառներում ծայր առան արհեստականորեն հրահրված դժգոհութիւններ, իսկ որոշ ժամանակ անց թուրք պաշտոնյաներն ուղղակի հայտարարեցին, թե հրաժարվում են ենթարկվել եվրոպացի ընդհանուր վերատեսուչներին²:

Հոֆի ժամանումը Վան մի քանի օրով ձգձգվեց՝ նրա համար նշանակվելիք խորհրդականների ընտրութեան մեջ վերջին պահին փոփոխութիւններ կատարվելու պատճառով: Դեսպան Գիրար հունիսի 30-ին (հուլիսի 13-ին) Պետերբուրգ ուղարկած № 503 հեռագրով հաղորդում էր. «Նրան (Հոֆին; - Հ. Ս.) առաջարկում են չորս թուրքերի, մեկ քրդի, երեք հայերի, որոնցից երկուսը պատրիարքութեան ցուցակից են, և երեք նորվեգացիներ: Վերջին երեքը հետևյալ պաշտոնների են կաբինետի պետ, ժանդարմերիայի սպա, հանրային աշխատանքների տեսչի օգնական»³:

Արտաոոց վերաբերմունքի պայմաններում Հոֆը նոր-նոր էր ծրագրում իր անելիքները, երբ ներքին գործերի նախարարի փոխանորդի պարտականութիւնները կատարող Զահիդ բեյի

ստորագրութեամբ Կ. Պոլսից հեռագիր ստացավ իր ուղեկիցների հետ շտապ վերադառնալ մայրաքաղաք: Հեռագրում նաև նշված էր, որ նա Պոլիս պիտի վերադառնա Բիթլիս-Տիգրանակերտ-Իսկենդերուն գծով, իսկ մյուսները՝ Կարինի ճամփով: Հրահանգված էր նաև, որ վերատեսուչը պետք է իր հետ վերցնի իր թարգմանին՝ Վանի վիլայեթի դատական ատյանի նախագահ Մատթեոս էֆ. էպլիդաթյանին, որը մեծ հեղինակութիւն էր վայելում տեղի պաշտոնեւթյան շրջանում¹:

Իսկ դեռևս Կ. Պոլսում գտնվող Լուիս Կոստան Վեստենենկը նոր էր պատրաստվում մեկնել էրզրում: Նրա ուշացման պատճառն այն էր, որ եվրոպայից Պոլիս վերադառնալուց հետո նա Թալեաթին խնդրել էր իրեն ենթակա սեկտորի կենտրոն էրզրում քաղաքում ապրելու և աշխատանքներ ծավալելու համար տրամադրել այդ քաղաքի երբեմնի հիվանդանոցի մեծ շէնքը և սպասում էր կառույցը կարգի բերելուն, բայց դրա մասին ոչ ոք չէր մտածում²: Պոլիս հասած Հոֆի հետ նա շարունակում էր մնալ անորոշ վիճակում:

Օսմանյան մայրաքաղաքում ընդհանուր վերատեսուչները ենթարկվում էին բացահայտ արհամարհանքի և ստորացման: Թուրք պաշտոնյաները լկտի պահվածքով ցույց էին տալիս, որ նրանք բացարձակապես որևէ նշանակութիւն չունեն իրենց համար:

Վեստենենկն իր օրագրում ականատեսի անաչառ դիտարկումներով ներկայացրել է իր և Հոֆի աննախանձելի վիճակը Կ. Պոլսում, ուր իրենք, փաստորեն, ավելորդ տարր էին:

Օրերից մի օր Թալեաթը Հոֆին հրավիրել էր ճաշի, որի մասին սա դառնութեամբ պատմել էր Վեստենենկին: Վերջինս իր օրագրում վերարտադրել էր նրա պատմածը: Հոֆը «նստած է եղել Թալեաթի աջ կողմում, նրա և հասարակական գործերի նախարարի միջև: Խմել են միայն սոդայաջուր: Թալեաթը համարյա չի խոսել Հոֆի հետ և ամբողջ ընթացքում զբաղված է

¹ Տե՛ս՝ «Աւետարեք», № 33, 15 օգոստոսի, 1914 թ.:

² Տե՛ս՝ Մ. Սերոբեան, Հայկական հարցը եւ անոր փուլերը, էջ 140:

³ АВПРИ, ф. "Политархив", г. 1914, д. 3474, л. 69.

¹ Տե՛ս՝ «Աշխատանք» (Վան), 29 օգոստոսի, 1914 թ.:

² «Վեստենենկի օրագիրը», էջ 117-118:

եղել ուրիշներով: Սոսեյ եւ միայն թուրքերեն, ոչ մի սեղանաճառ կամ նման մի բան չի եղել: Բոլորը սարսափելի անքաղաքավարի են եղել»¹:

Ստորացումների էր ենթարկվում նաև Վեստենենկը: Ուստի նա, չկարողանալով հանդուրժել Իթթիհադի կառավարության հոռի վերաբերմունքը, ձգտում էր հնարավորինս շուտ հեռանալ այդ երկրից, բայց որոշ հանգամանքներ, այդ թվում՝ կիսով չափ կրճատված իր աշխատավարձի ձգձգումների պատճառով, Վեստենենկը ստիպված էր բավական երկար մնալ Կոստանդնուպոլսում: Հոֆի մեկնելուց միայն 52 օր անց նա կարողացավ դուրս պրծնել Օսմանյան մայրաքաղաքից և Բուխարեստ-Վիեննա - Բեռլին գծով հասնել իր երկիր՝ Հոլանդիա²:

Հոֆը հուլիսի 24-ին ուսական նավով մեկնում է Կ. Պոլսից: Ընդհանուր վերատեսչին ճանապարհելու չէր եկել ոչ մի թուրք պաշտոնյա: Հրաժեշտի համար նավահանգստում էին միայն երկու հոգի՝ նրա պաշտոնակից Լեոն և Գարեգին Փաստրմաճյանը³:

Բարենորոգումների ծրագիրն ամբողջովին չեզոքացնելու համար Բ. Դուռը գործում էր միանգամայն անկաշկանդ ու աներկյուղ, ազատորեն ու հանդուգն՝ քաջ գիտակցելով, որ ինքը դրա համար չի ենթարկվելու որևէ պատասխանատվության կամ պատժի: Նրա այդ համոզմունքն ամենից առաջ հիմնված էր անցյալի փորձի վրա:

Հայկական հարցի առնչությամբ եվրոպական մեծերը նախկինում բազմիցս բանավոր թե գրավոր սպառնալիքներ էին հղել Կ. Պոլիս, բայց դրանք որևէ հետևանք չէին ունեցել:

Պոլսի պատրիարք Մատթեոս Իզմիրլյանը, 1894 թ. հանդիպում ունենալով Կ. Պոլսում անգլիական դեսպան Ֆիլիպ Քրրրի հետ, նրան խնդրել էր եռանդուն միջոցների դիմել հայկական նվազագույն խնդիրները կարգավորելու համար: Դեսպանը, որ հայկական բարենորոգումների ջերմ պաշտպանն էր, զրույցի

¹ «Վեստենենկի օրագիրը», էջ 112:

² Նույն տեղում, էջ 151:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 130:

ընթացքում չէր քաշվել ամենախիստ արտահայտություններ անել Բ. Դուռն պաշտոնյաների հասցեին, բայց միաժամանակ դառնալով Իզմիրլյանին՝ ասել էր. «Հայոց հարցի պատճառով չենք կարող պատերազմ հայտարարել Թուրքիային»¹:

Պատկերը կրկնվում էր: Թուրքական կառավարությունը, որ շուրջ մեկ տարի դիվանագիտական կոճիվ էր տալիս եվրոպական վերահսկողությունից խուսափելու համար, հիմա կարծես հասնում էր իր նպատակին:

Թուրքերը լավ տեսնում էին, որ եվրոպական վերահսկողությունը չեզոքացնելու ուղղությամբ իր գործողությունները չեն հանդիպում մեծ պետությունների հակազդեցությանը, որովհետև նրանց միջև չկա լիակատար համերաշխություն հունվարի 26-ի համաձայնագիրը կիրառելու հարցում: Միայն վերջիններս անկեղծ համերաշխությունը հնարավորություն կտար հարկադրել Բ. Դուռնը ձեռնամուխ լինելու ստանձնած պարտավորությունների կատարմանը:

Իհարկե, վիճակը միանգամայն այլ կլիներ, եթե Բ. Դուռն նկատմամբ համաձայնագրի կատարման վերահսկողությունը դրվեր տերություններից միայն մեկի, ասենք՝ Ռուսաստանի վրա:

Վերհիշենք Սան-Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագիրը (19.02.1878 թ.), որը տալիս էր ժողովրդական ապահովության հաստատուն երաշխիքներ, այն է՝ ուսական գորքերը պետք է մնային երկրում այնքան ժամանակ, մինչև որ Հայաստանում իրականանային բոլոր բարենորոգումները:

Այն ժամանակ եվրոպական մեծերը և առաջին հերթին Արևելքում Ռուսաստանի պատմական ախոյան Անգլիան հանդիսավորապես մերժեցին Թուրքիայի հետ ուսական դիվանագիտության կնքած պայմանագիրը՝ պատճառաբանելով, թե այն պետք է փոխարինվի ավելի ընդհանուր, ավելի բազմակողմանի երաշխավորություն ապահովող դաշնագրով:

Արտաքինից գրավիչ և զորավոր թվացող «բազմակողմանի

¹ «Մշակ», № 115, 26 սեպտեմբերի 1907 թ.:

երաշխավորություն» հանձնառությունն իրականում դժոխային խաղ էր, որը հնարված էր հայկական բարենորոգումները տապալելու համար: Սան-Ստեֆանոյի պայմանագրի համաձայն՝ Ռուսաստանի կողմից հայկական բարենորոգումների վրա հստակ վերահսկողություն հաստատելու պարտադրանքը Բեռլինի դաշնագրով (01.07.1878 թ.) փոխարինվեց վեց պետությունների կողմից վերահսկողություն իրականացնելու անկերպարան ու ձևական խոստումներով: Վերացվեց բարենորոգումների հարկադրական ուժը, Բեռլինի դաշնագրի Հայաստանին վերաբերող հոդվածը դարձավ մեռած տառ:

Էդուարդ Բեռնշտայնը իր «Հայկական տանջանքներն ու Եվրոպան» աշխատության մեջ գրել է. «1878-ին Անգլիայի պետական մարդու՝ Դիդրայելիի առաջարկի վրա Եվրոպան հանդես եկավ Սան-Ստեֆանոյի դաշնագրի դեմ: Բեռլինի դաշնագրով Եվրոպան Ռուսաստանի ձեռքից խլեց հայերի վրա հսկելու իրավունքը և դրանով իսկ սրանց զրկեց մի այնպիսի պաշտպանից, որի հետ կարող էին քիչ թե շատ հույսեր կապել: Ռուսական իրական ուժին փոխարինած Եվրոպականը եղավ անպիտան պաշտպան հայերի համար: Որքան էլ հակառակ լինենք ռուսական կառավարությանը, պետք է ընդունենք այս իրողությունը»¹:

Այո, իրողություն է, որ Անգլիայի աջակցությամբ Աբդուլ Համիդը կարողացավ ռուսներին ջախջախել Բեռլինի կոնգրեսի դիվանագիտական պայքարում: Թեպետ նա կորցրեց Բուլղարիան ու մի քանի փոքրասիական գավառներ, բայց նայնպես բարենորոգումների դատարկ խոստումներով հաջողությամբ ազատվեց Հայաստանի և Մակեդոնիայի համար Եվրոպայի այն պահանջներից, որոնք ամենից ավելի վտանգավոր էին նրա համար:

Առևտրական մենարտոնությունների, ընծաների և դիվանագիտական զիջումների միջոցով Թուրքիան միշտ կարողանում էր գտնել մի որևէ պետության բարյացակամությունը, և այդ

¹ Էդուարդ Բեռնշտայն, Հայկական տանջանքները և Եվրոպան, հրատ. «Դրոշակ»-ի խմբագրություն, Ժնև, 1906, էջ 6:

պետությունը կաշաված համաձայնում էր նրա հետ: Երեկ այդ երկիրն Անգլիան էր, այսօր՝ Գերմանիան:

«Մենք Հայաստանի բարենորոգումների հարցը չենք բարձրացնի, մենք կլուենք և կպահպանենք status quo, բայց, խնդրեմ, դուք էլ այնպես արեք, որ ձեզանում գոնե արտաքուստ ամեն ինչ խաղաղ լինի», – այսպես էին Թուրքիայի ականջին չչնջում աշխարհի մեծերը տասնամյակներ առաջ, այսպես էին անում նաև Հիմա՝ 1914-ին:

Եվ Թուրքիան այս անգամ էլ հեշտությամբ մարսում էր իր իսկ պատրաստած ճաշը: Հայկական հարցը կրկին մտել էր փակուղի:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԻԶԲԸ: ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՏԱՊԱԼՈՒՄԸ

Մեծ տերությունների միջև հակասությունների սրումը և այդ հողի վրա սպառազինությունների աննախընթաց մրցավազքը հասել էին ծայրաստիճանի՝ Եվրոպական խաղաղության համար ստեղծելով մեծագույն վտանգ: Վաղը ի՞նչ կարող էր բերել՝ մարդ չգիտեր: Ո՞վ կարող էր գլուխ հանել գալիքի անակնկալներից: Բավական էր մի փոքր առիթ, որ զինավառ բանակները նետվեին կովի ասպարեզ և իրենց հաշիվները պարզեին արյունալի ռազմադաշտերում:

Երբ հայությունը վստահ էր, որ, վերջապես, Հայաստանում ստեղծվելու են կյանքի ու ապրուստի քիչ թե շատ տանելի պայմաններ, հանկարծ անսպասելիորեն պայթեց ընդհանուր եվրոպական պատերազմը:

1914 թ. հունիսի 28-ին մի սերբեի իտասարդ Բոսնիայի մայրաքաղաք Սարաևոյում սպանեց Ավստրիայի Հաբսբուրգյան արքայատոհմի էրցհերցոգ (Թագաժառանգ) Ֆրանց Ֆերդինանդին¹:

¹ Սարաևոյի ճակատագրական դեպքի և նրա շուրջը ստեղծված մթնոլորտի մասին տե՛ս «Հորիզոն» թերթի 1914 թ. 130 և 131 համարները:

Համատեղելով, որ սպանություն մեջ Սերբիայի մատը խառն է, ավստրիական կառավարությունը մի դաժան վերջնագիր ներկայացրեց նրան¹: Չստանալով իր բոլոր պահանջների լիակատար բավարարությունը՝ Հուլիսի 15-ին նա պատերազմ հայտարարեց Սերբիային: Ռուսաստանը սատար կանգնեց սլավոնական այս փոքր երկրին և հայտարարեց, թե բոլոր միջոցներով պաշտպանելու է ռուսներին ցեղակից ժողովրդին: Դրա հետևանքը եղավ այն, որ Ավստրիայի մերձավորագույն դաշնակից Գերմանիան օգոստոսի 1-ին (Հուլիսի 19-ին) պատերազմ հայտարարեց Ռուսաստանին, իսկ երկու օր հետո՝ Ֆրանսիային²: Դրանից մեկ օր անց Գերմանիայի դեմ պատերազմի մեջ մտավ Անգլիան³: Օգոստոսի 6-ին Ավստրո-Հունգարիան վերջնագիր ներկայացրեց Ռուսաստանին և, չսպասելով պատասխանին, նրան հայտարարեց պատերազմ⁴:

Օր օրի ծավալվում էր պետությունների երկու խմբավորումների՝ Անտանտի (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան) և գերմանա-ավստրիական բլոկի (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Թուրքիա), ահեղ գոտեմարտը: Հետագայում Անտանտին միացան Իտալիան, Ռումինիան, Բելգիան, Պորտուգալիան, Ճապոնիան և ԱՄՆ-ը, իսկ Գերմանիայի գլխավորած պետություններին՝ Բուլղարիան:

Կատարվեց այն, ինչին երկար տարիներ ի վեր նյութում ու պատրաստվում էր Գերմանիան: Պատերազմն իմպերիալիստական էր, որի գլխավոր մասնակիցները մոլեգնորեն փորձում էին վերաբաժանել գոյություն ունեցող գաղութային տիրույթները, ձեռք բերել նոր շուկաներ ու այլազան հարստություններ կամ պահպանել ունեցածը:

¹ Генри Басил Лиддел-Гарт, Правда о Первой мировой войне, Москва, Яауза, Экемо, 2009, стр. 29.

² Տե՛ս *проф. Ю. В. Ключников и Андрей В. Сабанин, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, часть II, От империалистической войны до снятия блокады с Советской России, Москва, 1926, էջ 5-6*:

³ Տե՛ս *проф. Лиддел-Гарт, Правда о Первой мировой войне, էջ 40-43*:

⁴ Տե՛ս Յու. Կլուչնիկովի և Ա. Սաբանինի՝ *փաստաթղթերի նշված ժողովածուն, էջ 16*:

Սանձազերծված պատերազմի գինը պետք է լինեին միլիոնավոր մարդկանց սպանող, ամբողջ երկրների արտադրողական ուժերի ավերումը, մշակութային անկրկնելի արժեքների ոչնչացումը:

Բրիտանացի խոշորագույն պատմաբան և ռազմական տեսաբան, Առաջին համաշխարհային պատերազմի վերլուծական փայլուն տեսություն հեղինակ Բեգիլա Հենրի Լիդել-Գարտը իր «Ճշմարտություն Առաջին համաշխարհայինի մասին» աշխատության մեջ նկարագրել է արյունահեղ այն բոլոր կոիվներն ու սարսափները, որոնք խլեցին ավելի քան 10 միլիոն կյանք: Այդ աղետը կործանեց կայսրություններ, այդ թվում՝ ռուսականը, խեղեցեվրոպայի պատմությունը և ողջ մարդկության ճակատագիրը:

Պատերազմը սկսելուց մեկ օր հետո՝ 1914 թ. օգոստոսի 2-ին, Թուրքական կառավարությունը խիստ գաղտնի պայմանագիր ստորագրեց Գերմանիայի հետ, որի համաձայն՝ առաջինը պարտավորություն ստանձնեց պատերազմում հանդես գալ Եոյակ գինակցության կողմում: Իր հերթին գերմանական կառավարությունը Թուրքիային երաշխիքներ էր տալիս պատերազմի հաղթական ավարտից հետո նրան հնարավորություն տալ մեծացնելու իր սահմանները հատկապես Կովկասում և Ռուսաստանի մուսուլմանաբնակ ուրիշ տարածքներում¹:

Օգոստոսի 6-ին երկու երկրների միջև կնքվեց երկրորդ խիստ գաղտնի պայմանագիրը՝ ուղղված Ռուսաստանի դեմ: Այս պայմանագրի 5-րդ հոդվածով Գերմանիան կրկին հանձն էր առնում օգնել օսմանյան կայսրությանը՝ չտկելու իր արևելյան սահմանները²:

Արդեն թիկունքը լիովին ամուր համարելով՝ Բ. Դուռն այլևս ավելորդ էր համարում պահպանել ձևականություն: Անտեղյակ Թուրք-գերմանական բանակցություններից և դրանց արդյունքներից՝ Լուիս Կոստան Վեստենենկը որոշել էր, այնուամենայնիվ, մեկնել իր աշխատավայրը՝ էրզրում, բայց դա նրան չհաջողվեց:

¹ Տե՛ս *проф. Ю. В. Ключников и Андрей В. Сабанин, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, часть II, Москва, 1926, № 10*:

² Տե՛ս նույն տեղում, էջ 17:

Օգոստոսի 8-ին նա Թալեաթից ստանում է նամակ, որում ասված էր. «Ես խնդրում եմ Ձեզ հետաձգել Ձեր մեկնումը, քանի որ համընդհանուր գորահավաքը, որը վերաբերում է նաև պաշտոնյաներին, ինչպես և ներկայիս լուրջ հանգամանքներն, անհնար են դարձնում ընդունված բարեփոխումների իրականացումը»¹: Դրանով իսկ փաստորեն ավարտվում է Վեստենենկի՝ որպես ընդհանուր վերատեսչի, առաքելությունը:

Նույնիսկ պատերազմը սկսելուց օրեր անց Թուրքիան փորձում էր ցույց տալ, որ, իբր, իր համար դեռ չի պարզել, թե ուղղափառապաշտական բյուրեղից որի մեջ է իր տեղը: Այդ մասին վկայում են մի շարք փաստեր, այդ թվում՝ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Սազոնովի 1914 թ. օգոստոսի 12-ի (հուլիսի 30-ի) գաղտնի հեռագիրը՝ ուղղված Կ. Պոլսում ռուսական դեսպան Գիրսին:

Սազոնովը դեսպանին տեղեկացնում էր, որ իր ունեցած տվյալների համաձայն՝ «Թուրքիայի շահերը նրան դրդում են ոչ միայն մերձենալ, այլև դաշինք կնքել Ռուսաստանի հետ»: Այդ դաշինքը պետք է խարսխված լինի հետևյալ սկզբունքների վրա.

1) Թուրքիան չի ձգտում որևէ հողային հավելումների, բայց չի հանդուրժի իր տարածքի որևէ մասի օտարումը, 2) Նա իր բանակը կդնի Ռուսաստանի տրամադրության տակ, եթե սկսված պատերազմում առաջանա այդպիսի անհրաժեշտություն, 3) Փոքր Ասիայում Գերմանիայի երկաթուղային և բոլոր այլ կոնցեսիաների սեփականացումը կհանդիսանար այն վարձահատուցումը, որ ցանկանում է Թուրքիան, 4) Բ. Դոանը պետք է խոստում տրվի, որ Ռուսաստանը՝ պարտավորվում է չօժանդակել ազգայնական հայկական հոսանքներին, որովհետև Թուրքիան երկյուղ է կրում հայկական մարզերի նկատմամբ Ռուսաստանի ըղձանքներից²:

¹ «Վեստենենկի օրագիրը», էջ 10:

^{*} Սազոնովի հեռագրի՝ պետերբուրգյան արխիվում պահպանվող բնօրինակի վրա «Ռուսաստանը» բառից հետո ջնջված է՝ «հրաժարվում է իր պահանջներից հայկական հարցում և ...» (տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության...», էջ 366-ի տողատակը):

² «Հայաստանը միջազգային դիվանագիտության...», էջ 366:

Այս չափազանց հետաքրքիր տեղեկությունն աղբյուրը Պետերբուրգում Թուրքիայի դեսպանությունից հավատարմատար Ֆահրեդդինն էր: Հեռագրի վերջում Սազոնովը Գիրսին նաև իրազեկում էր. «Հնարավորություն չունենալով ստուգելու Ֆահրեդդինի առաջարկությունների լրջության աստիճանը և թե որքանով են անձնական բնույթի, դրանք հաղորդում եմ ձեզ որպես նյութ թուրքերի հետ զրուցելու համար»: Արտգործնախարարը գտնում էր, որ եթե Կ. Պոլիսը պաշտոնապես հավանություն տար վերոնշյալ առաջարկություններին, «ապա մենք մեր կողմից ընդունելի կհամարեինք բոլոր կետերը, բացի հայկական բարենորոգումներից հրաժարվելը (ընդգծումը մերն է: - Հ. Ս.), ընդ որում թուրքերի համար որպես բավականաչափ ապահովում կարող է ծառայել տերիտորիալ անձեռնմխելիության երաշխիքը»¹:

Ինչպես տեսնում ենք, Ռուսաստանը չէր ուզում պատերազմել Թուրքիայի դեմ, իսկ Գերմանիան վերջինիս հետևողականորեն դրդում էր օր առաջ սկսել ռազմական գործողություններ: Խուսափելով պատերազմի երկրորդ ճակատ բացելուց, հանուն Թուրքիայի հետ խաղաղության պահպանման, Ռուսաստանը պատրաստ էր ընդառաջելու նրա ներկայացրած բոլոր պահանջներին՝ բացի հայկական բարենորոգումներից հրաժարվելու նրա պահանջից:

Ինչպես հետո պարզվեց, դա եղել էր թուրքական դիվանագիտության խաղերից մեկը, որի նպատակն էր եղել ռուսական կառավարության ուշադրությունը չեղել Կովկասի ուղղությամբ նրան սպառնացող իրական վտանգից:

Այսպիսով, եթե պատերազմում Եռյակ համաձայնությունը հարելու դեպքում Ռուսաստանը երաշխավորում էր Թուրքիայի տարածքային ամբողջականության պահպանումը, ապա Գերմանիան ավելի հեռուն էր գնում. Թուրքիան Եռյակ գինակցությունը միանալու դեպքում նրան խոստանում էր ոչ միայն ապահովել նրա տարածքի անխախտելիությունը, այլև դրան միացնել Ռուսաստանից խլվելիք ընդարձակածավալ նոր հողեր:

Թուրքիան դեռ չէր մտել պատերազմի մեջ, բայց հայտարարեց գորահավաք: Ձինվորականներով լեցուն գերմանական և

¹ «Հայաստանը միջազգային դիվանագիտության...», էջ 366:

ավատրո-հունգարական զնացքներն ամեն օր ժամանում էին օսմանյան մայրաքաղաք, ուր պարես էր նշանակվել Լիման ֆոն Սանդերսը: Ուրիշ զնացքներից բեռնաթափվում էին թնդանոթներ, տարատեսակ զենքեր ու ռազմամթերք: Ականապատվեցին ու փակվեցին Բոսֆոր և Դարդանել նեղուցների մուտքերը, գերմանացի հրետանաձիգները կանգնած էին Բոսֆորի ծովաբերանում տեղակայված թնդանոթների մոտ: Ֆոն Վանգենհայմը հպարտութամբ ասել էր, թե «Դարդանելում յուրաքանչյուր թնդանոթի հետևում կանգնած է մի գերմանացի հրետանավոր»¹: Իսկ անգլիական նավատորմից հալածված «Գեորգեն» և «Բրեսլաու» գերմանական մարտանավերը, որոնք կարողացել էին ապաստանել Դարդանելի նեղուցում, ֆոն Վանգենհայմի, ֆոն Սանդերսի և էնվեր փաշայի ջանքերով շատ ձեռնտու պայմաններով շտապ վաճառվեցին Թուրքիային, միացվեցին օսմանյան նավատորմին և պատրաստվեցին մտնել Մարմարա ծով: Դրանք վերանվանվեցին և պատերազմի տարիներին գործում էին «Յավուզ սուլթան Սելիմ» և «Մեջիդիե» անուններով:

Շուտով Սանդերսն իր կայսրից հրաման ստացավ. եթե Ռուսաստանի դեմ սկսված պատերազմում Բ. Դուռը չի միանալու Գերմանիային, ապա Թուրքիայում գտնվող գերմանացի բոլոր սպաներին վերադարձնել իրենց երկիրը²: Մյուս կողմից՝ Բեռլինը Բ. Դուռը հավաստիացնում էր, որ եթե Թուրք-գերման դաշինքն իրականանա, ապա Գերմանիան ավելի մեծ ծավալներով կշարունակի օգնել Թուրքական բանակին, իհարկե, որպեսզի սա հնարավորինս շատ կորուստներ պատճառի Ռուսաստանին²:

Միաժամանակ, օգտվելով առիթից, Բ. Դուռը հայտարարեց, թե չեղյալ է համարում տասնամյակներ շարունակ Թուրքիայի համար ծանր բեռ հանդիսացող կապիտուլյացիաների համակարգը: Բոլոր վեց մեծերը, այդ թվում Ռուսաստանը, հաշտվեցին Թուրքական կառավարությունից այդ դեմարշի հետ¹:

Ռուսաստանի համար այս անորոշությունն պայմաններում

¹ Տե՛ս «Վեստենենկի օրագիրը», էջ 139:

^{*} Ինչպես հետագայում պարզվեց, Թուրքական բանակում մի քանի անգամ շատ գերմանացի սպաներ կային, քան կարծում էին Անտանտի դաշինքի երկրների հետախուզությունները:

² Տե՛ս «Վեստենենկի օրագիրը», էջ 131-132:

օգոստոսի 11-ին ընդունելով Վեստենենկին՝ Թալեաթը սատանական ժպիտով նրան ասել էր, որ սկսված եվրոպական պատերազմի պատճառով Հայաստանի բարեփոխումները հնարավոր չէ կիրառել, և որ՝ հենց իրավիճակը թույլ տա, ապա, իբր, դրանք անմիջապես կկիրառվեն²: Միաժամանակ, կառավարությունը հետագա օրերին Թալեաթի դրդմամբ ձգձգում էր վերատեսուչների աշխատավարձի լրիվ վճարումը՝ պատճառաբանելով բյուջեի պակասը: Թալեաթը նրանց խոստանում էր տալ հասանելիքի միայն կեսը՝ մտածելով, որ վրդովմունքի պահին նրանք կարող են ընդհանրապես հրաժարվել աշխատավարձից: Հենց դրան էլ նա սպասում էր: Այն կզիտվեր որպես պաշտոնից հրաժարում, հետևապես՝ Հայաստանի բարենորոգումների հունվարի 26-ի համաձայնագրի վերացում:

Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին 1914 թվականի օգոստոսի 18 (5) թվով հղած նամակով Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ը տազնապով գրել էր, որ Գերմանիայի կողմից գաղտնի քաջալերվող Բ. Դուռն արդեն, փաստորեն, չեղյալ է դարձրել հունվարի 26-ի համաձայնագիրը: Այդ պայմաններում, նշում էր նա, անհրաժեշտ է իրականացնել մի շարք հրատապ միջոցառումներ, «քանի դեռ Թուրքահայաստանը գտնվում է Թուրքիայի սահմանների մեջ»: Օգոստոսի 22 (9)-ին փոխարքան վարչապետ Գորեմիկինին հղում է նամակ՝ կցելով նաև Կաթողիկոսից ստացածը: Նա հաղորդում էր, որ «ամբողջ Հայ բնակչությունն ուղղակի փափագում է, որ պատերազմ լինի Թուրքիայի դեմ»: Նա գտնում էր, որ հայերի իղձերը, որոնք արտահայտված են Կաթողիկոսի նամակում, հանգում են հետևյալ երկու գլխավոր պահանջներին. 1) տվյալ պահի համար՝ Թուրքահայերի կյանքն ու գույքը պահպանելու նպատակով իրականացնել գլխավոր վերատեսուչների շուտափույթ ժամանումն իրենց պաշտոնավայրերը, 2) հետագայի համար՝ եվրոպական պատերազմի ավարտից հետո, բացառապես Ռուսաստանի վերահսկողությամբ և ընդունված ռուսական ծրագրով Թուրքիայում անցկացնել հայկական բարենորոգումներ: «Ինձ անհրաժեշտ է թվում, - եզրափակել էր փոխարքան, - հավաստիացում անել [Կա-

¹ Տե՛ս «Վեստենենկի օրագիրը», էջ 136:

² Տե՛ս նույն տեղում, էջ 136, 148:

[Թողիկոսին] այն մասին, որ եվրոպական պատերազմի ավարտից հետո Ռուսաստանը կիրականացնի Թուրքահայերին վերաբերող իր ծրագիրը, իսկ մինչ այդ թվում է խիստ ցանկալի՝ բավարարել գլխավոր վերատեսուչների մասին հայերի խնդրանքը»¹:

Ստանալով փոխարքայի նամակը՝ վարչապետ Գորեմիկինն այն մակագրում է Սերգեյ Սազոնովին՝ խնդրելով կարծիք ներկայացնել: Օգոստոսի 30 (17)–ին վարչապետին գրած պատասխանի գաղտնի նամակով Սազոնովը նշում է. «Ներկա քաղաքական հանգամանքների և առաջիկայում Թուրքիայի հետ հարաբերությունները խզելու հնարավորության պայմաններում Փոքր Ասիայի հայկական վիլայեթներում բարենորոգումների անցկացումն այժմ թվում է միանգամայն տարածամ և անիրագործելի»²: Նա գտնում էր, որ հուզմունքի և տագնապի մեջ գտնվող Հայությունը պետք է «ավելի հանգամանորեն ծանոթացնել Թուրքիայի նկատմամբ [մեր] կառավարության քաղաքականությունը»: Նշելով այդ երկրի և Ռուսաստանի միջև գնալով ուժեղացող լարվածության փաստը՝ Սազոնովը միաժամանակ գտնում էր, որ դեռևս առկա է դիվանագիտական միջոցներով Թուրքիայի հետ ուղղակի ընդհարմից խուսափելու հնարավորությունը, իսկ եթե այնուամենայնիվ, պատերազմ ծագի, ապա խիստ կարևոր է, որ այն հրահրվի Թուրքիայի կողմից, «այլ ոչ թե մեր այս կամ այն գործողությունների պատճառով»³:

Շատ չանցած՝ պատերազմի արյունալից ասպարեզն ավելի ընդարձակվեց. Թուրքիան ևս մտավ կռվի մեջ:

Գերմանական ծովակալ Սուչոնի հրամանի ներքո գտնվող գերմանա-թուրքական միացյալ նավատորմը 1914 թ. հոկտեմբերի 29–ին ուխտադրուժ հարձակում գործեց Ռուսաստանի սևծովյան նավահանգիստ-քաղաքների՝ Թեոդոսիայի, Սևաստոպոլի, Օդեսայի, Նովորոսիյսկի վրա և մեծ ավերներ պատճառեց: Նշված քաղաքների և ավամերձ ուրիշ բազմաթիվ բնակավայրերի ուժեղահարումը շարունակվեց նաև հաջորդ օրը՝ հոկտեմբերի 30–ին:

Հոկտեմբերի 20–ին (նոյեմբերի 2–ին) Ռուսաստանը ստիպ-

ված պատերազմ հայտարարեց նախահարձակ Թուրքիային: Բացվեց կովկասյան ուղղմանակառնությունը:

Թուրքիան պատերազմի մեջ մտավ մի շարք պատճառներով.

1) Պատմական փորձը նրան թելադրում էր, որ Ռուսաստանը վաղ թե ուշ պիտի տիրանա նեղուցներին, և եթե ինքը այժմ չձեռնարկի կանխարգելիչ քայլեր, ապա Պետերբուրգի այդ ձգտումն իրականություն կդառնա: Նախօրյակին Թալեաթը Վեստենենկին ասել էր, որ մի օր Ռուսաստանը կհայտնվի Կ. Պոլսում, եթե ոչ այս պահին, ապա մի ուրիշ օր: «Երեկ ես խոսեցի ռումինացի մի նախկին պետական գործչի հետ. սա նույնպես կասկածներ հայտնեց, որ Ռուսաստանը մի օր կսրբի բոլոր փոքր պետություններն իր և Կ. Պոլսի արանքում: Ես, իրոք, գիտակցում եմ, որ դա ներկայումս կենսական հարց է մեզ համար»: 2) Կայսրության իշխանական վերնախավում մեծ գերակշռություն էր ստացել էսվերի գլխավորած գերմանոֆիլ հատվածը: 3) Երիտթուրքական կառավարությունը մտածում էր գերմանա-ավստրիական բուրժուազիայի ընթացքի դեպքում հետ բերել Բալկանյան առաջին պատերազմի ժամանակ կորցրածը: 4) Օրախնդիր էր դարձել կայսրության ասիական տարածքների պահպանումը ռուսական հնարավոր ներխուժման վտանգից: Թուրքական իշխանություններն առաջին հերթին նկատի ունեին Հայաստանի վեց լայնածավալ վիլայեթների հետագա պահպանումը իրենց տիրապետության տակ: Հայկական հարցի բարձրացման շնորհիվ 1914 թ. հունվարի 16–ին կնքված ռուս-թուրքական համաձայնագիրը թուրքերը դիտում էին որպես կայսրությանից Հայաստանի վիլայեթների օտարման սկիզբ, դրանց ընդգրկում Ռուսաստանի կողմից մեջ կամ նույնիսկ հայկական առանձին ազգային պետության ստեղծում: Ուստի ամենայն համոզվածությամբ կարելի է հաստատել, որ պատերազմի մեջ Թուրքիայի մտնելու գլխավոր պատճառներից մեկը (եթե ոչ ամենագլխավորը) կայսրությանից Հայաստանի անջատման վտանգի կանխումն էր: 5) Երկրի թուրք բնակչության հասարակական բոլոր շերտերը, պետական կառույցները, գտնվելով համաթուրքականության գաղափարների ուժգին ազդեցություն տակ, երազում էին Կովկասը զավթելուց և

¹ «Վեստենենկի օրագիրը», էջ 136:

¹ «Հայաստանը միջազգային դիվանագիտության...», էջ 367 (տողատակ):

² «Международные отношения в эпоху империализма (МОЭМИ). Документы из царского и временного правительств. 1878-1917 гг.», М.-Л., серия III, т. 6, стр. 183.

³ Նույն տեղում, էջ 184:

Ռուսաստանի պարտությունից հետո նրա տարածքի թուրքալեզու ժողովուրդներից կազմել լայնածավալ ու հզոր կայսրություն՝ անատոլիական թուրքերի գլխավորությունը:

Թուրքիայի մտնելը ընդհանուր պատերազմի մեջ առաջ չբերեց սպասված խանդավառությունը թուրք լայն զանգվածների մեջ, ընդհակառակը՝ մտատանջություն մատնեց ժողովրդին, մանավանդ՝ զինակոչային տարիք ունեցողներին: Ահա թե ինչու կառավարության հրամանով թուրք վարձկան մամուլը հակառուսական վայնասուն բարձրացրեց: Միաժամանակ, Կ. Պոլսում և մյուս մեծ քաղաքներում կազմակերպվում էին բազմահազարանոց թափոռներ ու հանրահավաքներ, որոնց պարտադիր մասնակից էին դառնում թուրք բոլոր արհեստավորները, լեբլեբիջիները*, բեռնակիրներն ու կառապանները, հացթուխներն ու մսավաճառները և այլք, որոնք դժուր-գուռանների աղմուկի տակ շրջում էին թաղերով և «գյաուրների» հասցեին նվաստացուցիչ կոչեր էին հնչեցնում: Մայրաքաղաքի ռուսական դեսպանության և նահանգային կենտրոնների ռուսական հյուպատոսությունների առջև խմբվում էր ամբողջ և վայրենի հիշոցներով այպանում ռուսներին, ռուսական կառավարությանն ու դիվանագետներին:

Բոլոր հայերին հուզում էր այն հարցը, թե թուրքերն ինչպես իրենց կպահեն քրիստոնյաների հանդեպ, եթե այլևս պատասխանատու չեն մեծ տերություններին: Նրանց համար շուտով ամեն ինչ պարզվեց. իշխանությունները սկսել էին ոստիկանությունն ու ժանդարմերիան համալրել նույնիսկ բանտերից արձակված արյունարբու հանցագործներով: Դժվար չէր ենթադրել, թե ինչ կարող էր լինել երկրում¹:

«Դրությունը միանգամից փոխվեց, - գրում էր Լեոն: - Յուսահատական աղաղակներ էին բարձրանում Ասիական Թուրքիայի բոլոր հայաբնակ վայրերից: Սարսափելին կառավարական ճնշումները չէին, որոնք գործադրում էին գէնքի կոչուող բանակի պէտքերը հոգալու համար: Սարսափելին այն էր, որ հայերին նայում էին ինչպես թշնամիների, դաւաճանների, որոնք պատրաստ են մատնել երկիրը դրսի թշնամիներին: Եթէ թերթէք այդ ժամանակվայ «Մշակ» եւ «Հորիզոն» լրագրերը, դուք կը տես-

* Բոված սիսեռ վաճառողներ:

նէք թիւրքաց Հայաստանի բոլոր անկիւններից ստացւած տեղեկութիւնները, որոնք միաբերան նկարագրում են թէ ինչ զարհուրելի գրգռում է ծաւալում հայերի դէմ. ամէն տեղ մի նշանաբան է - կոտորել հայերին: Ամէն ինչ պատրաստ էր մի ընդհանուր կոտորածի համար, մնում էր միայն հրամանը արձակել»²:

Դա հետագա ամեն բարբարոսությունից սկիզբն էր:

Հանրահայտ է, որ մեծամեծ շարժումներն առաջ են բերում մեծամեծ հեղաշրջումներ ու կատակլիզմներ: Սանձազերծած պատերազմը քարուքանդ արեց ազատության մասին հայության բոլոր ակնկալիքներն ու երազները: Բարձր ապագայի նկատմամբ նրա հույսերի ակնթարթն արագորեն մոտենում էր ավարտին: Այն, ինչ Հայաստանի բարենորոգումների ուղղությամբ դիվանագիտական ասպարեզում մեծ ջանքերի գնով ձեռք էր բերվել, շուտով չքանալու էր ինչպես օգոստոսյան երազ:

1914 թ. դեկտեմբերի 3 (16)-ի սուլթանական իրադեով լուծարվեց ընդհանուր վերատեսչի պաշտոնը, որի հիման վրա աշխատանքից արձակվեցին Հոֆն ու Վեստենենկը, իսկ 1915 թ. հունվարի 16-ին Բ. Դուռը ուժը կորցրած համարեց նրանց հետ կնքած պայմանագրերը: Դրանով իսկ ուժը կորցրեց նաև հունվարի 26-ի համաձայնագիրը¹:

Շատերն էին համոզված, որ այլևս Հայաստանի մոտալուստ ապագան բոլորովին այլ է լինելու, որ հասել է ըրպեն, երբ նա պիտի ազատագրվի կամ անհետանա վերջնականապես:

* * *

1905-1914 թթ. ժամանակահատվածն անչափ հարուստ է պատմական խոշոր իրադարձություններով: Մեկ տասնամյակից էլ քիչ ժամանակահատված ընդգրկող այդ տարիներին տեղի ունեցավ երեք մեծ հեղափոխություն՝ ռուսական (1905-1907 թթ.), երիտթուրքական (1908-1909 թթ.), պարսկական (1905-1912 թթ.), որոնց ավերիչ ալիքը տարածվեց նաև մեծ ու փոքր երկրների ու ազգերի վրա: Դրանց գուզահեռ ընթանում էին Իտալա-թուրքական (1905-1912 թթ.) և Բալկանյան (1912-

¹ Տե՛ս Երվանդ Օտյան, Անիծյալ տարիներ: 1914-1919 (անձնական յիշատակներ), Թեհրան: 2010, էջ 29-30:

² Լեո, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատոր Բ, Փարիզ, 1935, էջ 75-76:

1913 թթ.) պատերազմները, որոնք նույնպես իրենց անջնջելի հետքևանքները ունեցան տարածաշրջանի ժողովուրդների կյանքի հետագա ընթացքի վրա:

Աշխարհաքաղաքական այս նշանակալից իրադարձությունները, ինչպես դարեր շարունակ, այս անգամ էլ չըջանցեցին երեք հատվածների բաժանված բազմաչարչար հայ ժողովրդին՝ ռուսահայությունը, թուրքահայությունը, պարսկահայությունը: Իր կամքից անկախ՝ նա հայտնվեց խիստ անբարենպաստ պայմաններում՝ կրելով մարդկային ու նյութական անդառնալի կորուստներ:

Այսպես, Ռուսական հեղափոխությունը ուղեկցեցին հայթաթարական ընդհարումներն ու ստոլոպինյան բռնությունները Անդրկովկասում, թուրքական հեղափոխության առաջին խոշոր հետևանքը հայերի զանգվածային ջարդերն էին Կիլիկիայում, իսկ պարսկական հեղափոխության պատճառով այդ երկրում ծայր առան կոտորածներ, ավերածություններ ու թալան: 1912 թ. սեպտեմբերին սկիզբ առած Բալկանյան պատերազմը առիթ դարձավ եվրոպական տերությունների առջև կրկին բարձրացնելու ավելի քան երեք տասնամյակ չարչրկված Հայկական հարց, և դա կարծես թե հաջողվում էր:

Մեծ տերությունները, հատկապես Ռուսաստանը, 1912-1914 թթ. մեծ ջանքեր գործադրեցին Թուրքահայաստանի յոթ նահանգներում բարենորոգումներ կատարելու և թուրքահայությունը թուրք-քրդական վայրենի հալածանքներից պաշտպանելու համար: Սկիզբ առած բարի գործն անսպասելի բռնկված համաշխարհային պատերազմի պատճառով հակառակ արդյունքը տվեց: Հայ ժողովրդի բարեկամների անկեղծ ճիգերը, ռուսական դիվանագիտության ավելի քան մեկուկես տարի տևած հայապաշտպան հետևողական ջանքերը ցանկալի շարունակություն չունեցան: Երիտթուրքական կառավարությունը, օգտվելով հարմար պահից, որոշեց օրակարգից ընդմիջտ ջնջել Հայկական հարցը՝ կատարելով մարդկային պատմության մեջ եզակի հանցագործություններից մեկը: Հայոց ոստանում ծայր առավ բարբարոսական անգուսպ խրախճանք:

Թուրքն ու քուրդը տեր դարձան հայ ժողովրդի հայրենիքին:

¹ Տե՛ս Հ. Աճառեան, Տաճկահայոց հարցի պատմությունը (սկզբից մինչև 1915 թ.), էջ 78:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ն Ե Ր

V գրքի

**ՕՍՄԱՆՑԱՆ ԿԱՑՄՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ
1906-1907 ԵՎ 1911-1912 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

1906 - 1907 թթ.

1. Ստամբուլ իր արվարձաններով (Բեյքոզ, Շիրի, Գեբզե, Քյուչուկ, Հեքնեջե, Քարթալ)
2. Այդրնի (Իզմիրի) վիլայեթ - 5 սանջակ (Այդրն կամ Իզմիր, Մանիսա, Այդրն-Գյուզելհիսար, Մենթեշե կամ Մուղլա, Դենիզլի)
3. Անկարայի վիլայեթ - 5 սանջակ (Անիսար, Յոզղաթ, Կեսարիա-Կայսերի, Փըրչենիր, Հորում)
4. Ադանայի վիլայեթ - 5 սանջակ (Ադանա, Մերսին, Ջեբելբերքեթ-Փայաս, Կուլան-Սիս, Իչել)
5. Էրզրումի վիլայեթ - 4 սանջակ (Էրզրում, Երզնկա, Բայազետ, Խնուս)
6. Բիթլիսի վիլայեթ - 4 սանջակ (Բիթլիս, Մուշ, Գենջ, Սղերդ)
7. Ջեղայիր-ի բաճր-ի Սեֆիդի վիլայեթ (էգեյան ծովի կղզիները) - 4 սանջակ (Ջեղայիր-ի բաճր-ի Սեֆիդ, Միդիլի-Լեսբոս, Սաքըզ-Քիոս, Լիմնի)
8. Հյուզավենդինգի (Բուրսայի) վիլայեթ - 5 սանջակ (Հյուզավենդինգյար-Բուրսա, Էրթոդրուլ-Բիլեչիկ, Քյութահիս, Աֆյոն-Կարահիսար, Քարեսի-Բայրքեսիր)
9. Դիարբեքիրի վիլայեթ - 3 սանջակ (Դիարբեքիր, Մարզին, Արդանամադեն)
10. Սվազի (Սեբաստիայի) վիլայեթ - 4 սանջակ (Սվազ, Ամասիա, Շապին-Կարահիսար կամ Գարահիսար Շարքի, Թոխաթ-Եվդոկիա)

11. Տրապիզոնի վիլայեթ – 4 սանջակ (Տրապիզոն, Ջաճիկ-Սամսուն, Լազստան-Րիզե, Գյումուշխանե)
12. Կոնիայի վիլայեթ – 5 սանջակ (Կոնիա, Նիդղե, Բուրդուր, Իսփարթա, Անթալիա)
13. Կաստամունքի վիլայեթ – 4 սանջակ (Կաստամունքի, Բոլու, Չանդրի, Սինոպ)
14. Մամուրեթ-ուլ-Ազիզի (Խարբերդի) վիլայեթ – 3 սանջակ (Մամուրեթ-ուլ-Ազիզ, Մալաթիա, Դերսիմ)
15. Բեյրութի վիլայեթ – 5 սանջակ (Բեյրութ, Աքքա, Թրաբլուսչամ-Տրիպոլի, Լազգիյե, Նաբլուս)
16. Բաղդադի վիլայեթ – 3 սանջակ (Բաղդադ, Դիվանիե, Քերբելա)
17. Բասրայի վիլայեթ – 4 սանջակ (Բասրա, Ամարա, Մյուն-թեֆիք, Նաջդ)
18. Հալեպի վիլայեթ – 3 սանջակ (Հալեպ, Մարաշ, Ուրֆա)
19. Սիրիայի (Սուրիայի) վիլայեթ – 4 սանջակ (Սիրիա-Դամասկոս, Համա, Քերք, Հավրան)
20. Թրաբլուսզարբի (Լիբիայի) վիլայեթ – 5 սանջակ (Թրաբլուսզարբի-Տրիպոլի, Հոմս-Հումուս, Ջեբելիզարբի, Ֆիզան, Բենդազի)
21. Մոսուլի վիլայեթ – 3 սանջակ (Մոսուլ, Քիրքուք, Սուլեյմանիա)
22. Վանի վիլայեթ – 2 սանջակ (Վան, Հաքյարի)
23. Շկոդրայի վիլայեթ – 2 սանջակ (Շկոդրա-Իչկոդրա, Դրաչ-Դուրբես)
24. Սալոնիկի (Սելանիքի) վիլայեթ – 3 սանջակ (Սալոնիկ-Սելանիք, Սերեց, Դրամա)
25. Էդիրնեի (Ազրիանուպոլսի) վիլայեթ – 6 սանջակ (Էդիրնե-Ազրիանուպոլսի, Գյումուլջինա, Քրքքիլիսա, Դեղեաղաջ-Ալեքսանդրապոլսի, Թեքիր-Դաղ-Ռոդոսթո, Գելիբոլու)
26. Կոստվոյի (Կոստվայի) վիլայեթ – 5 սանջակ (Կոստվո-Պեչ, Պրիշտինա, Իսեկ, Սենիջե, Պրեզրին-Պրիզրեն)

1. Ստամբուլ (եվրոպական և ասիական արվարձաններով, ինչպես նաև Մարմարայի կղզիներով)
2. Էդիրնեի վիլայեթ – 4 սանջակ, 24 կազա
3. Էրզրումի վիլայեթ – 3 սանջակ, 20 կազա
4. Ադանայի վիլայեթ – 4 սանջակ, 15 կազա
5. Անկարայի վիլայեթ – 4 սանջակ, 21 կազա
6. Այդրնի (Իզմիրի) վիլայեթ – 4 սանջակ, 36 կազա
7. Բիթլիսի վիլայեթ – 4 սանջակ, 17 կազա
8. Բեյրութի վիլայեթ – 5 սանջակ, 20 կազա
9. Հալեպի վիլայեթ – 3 սանջակ, 14 կազա
10. Հյուդավենդինգի (Բուրսայի) վիլայեթ – 2 սանջակ, 11 կազա
11. Դիարբեքիրի վիլայեթ – 4 սանջակ, 15 կազա
12. Սիրիայի վիլայեթ – 4 սանջակ, 24 կազա
13. Սվազի (Սեբաստիայի) վիլայեթ – 4 սանջակ, 26 կազա
14. Տրապիզոնի վիլայեթ – 3 սանջակ, 17 կազա
15. Կաստամունքի վիլայեթ – 3 սանջակ, 14 կազա
16. Կոնիայի վիլայեթ – 3 սանջակ, 19 կազա
17. Մամուրեթ-ուլ-Ազիզի (Խարբերդի) վիլայեթ – 3 սանջակ, 24 կազա
18. Վանի վիլայեթ – 2 սանջակ, 11 կազա

Անկախ սանջակները (թրք. *mustakil sancak*)

1. Էսկիչեհիր – 3 կազա
2. Անթալիա – 8 կազա
3. Ուրֆա – 5 կազա
4. Իչել – 4 կազա
5. Իզմիթ (Նիկոմեդիա) – 7 կազա
6. Բոլու – 9 կազա
7. Ջանիկ (Սամսուն) – 6 կազա

8. Չաթալջա - 3 կազա
9. Ջոր (Դեյլ-էգ-Ջոր) - 3 կազա
10. Քուդա-ի Շերիֆ (Երուսաղեմ) - 4 կազա
11. Աֆյոն-Կարահիսար (Կարահիսարի Սահիբ) - 6 կազա
12. Կարեսի (Բալըքեսիր) - 9 կազա
13. Կալե-ի Սուլթանիե (Չանաքկալե) - 6 կազա
14. Կայսերի (Կեսարիա) - 4 կազա
15. Քյութահիա - 4 կազա
16. Մարաշ - 5 կազա
17. Մենթեշե (Մուղլա) - 6 կազա
18. Նիդղե (Նիգիդա) - 7 կազա

Հավելված N 2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾԸ**

**Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԾ ՆԱԽԱԳԻԾԸ՝
«ՀԻՄՆԱԿԱՆ ՏՐԱՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՆԱՏՈԼԻ
ՀԱՅԱԲՆԱԿ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ»**

Հետևյալ վիլայեթները դուրս են մնացել 1911-12 թթ. վիճակագրությունից.

1. Բաղդայի վիլայեթ - 3 սանջակ
2. Բասրայի վիլայեթ - 4 սանջակ
3. Մոսուլի վիլայեթ - 3 սանջակ

Սամանյան կայսրությունն են ենթարկվել նաև Արաբական թերակղզու որոշ երկրամասեր՝ Հիջազ, Եմեն և այլն:

Աղբ. Ottoman Population. 1830 - 1914. Demographic and social characteristics, by Ketal H. Karpat, Wisconsin, 1985, pp. 170-188:

Հայկական շրջանը կընդգրկէ Արևելեան Անատոլիի վեց վիլայեթները.

- | | |
|------------|----------------|
| 1. Էրզրում | 4. Տիգրանակերտ |
| 2. Վան | 5. Խարբերդ |
| 3. Պիթլիս | 6. Սեբաստիա |

Ի բաց առեալ եղերային այն գաւառները, որոնք Հայաբնակ չեն: **Մանսիթ.** - Հէքեարի՝ Վանի նահանգէն, Սղերտէն Հարաւ՝ Բաղէշէն, Բըշրեկէն Հարաւ՝ Տիգրանակերտէն, Մալաթիայէն Հարաւ՝ Խարբերդէն, Սեբաստիայէն և Շապին-Գարահիսարէն Հիւսիսարևմտեան տարածութեան ամբողջ մասերը:

Յիշեալ շրջանին մէջ անհրաժեշտ է կիրարկել բարեկարգութեան հետեւեալ գլխաւոր հիմերը.

1. Ընդհանուր կառավարիչ. երոպացի, ընտրուած երոպական պետութիւններէ և վաւերացուած Վեհ. Սուլթանին կողմէ:
2. Ընդհանուր կառավարիչը շրջանին գործադիր իշխանութեան պետն է. ինքն է, որ կընտրէ և կ'հրաժարեցնէ վարչական, երևտական և դատական պաշտօնէութեանց պետերը:
3. Շրջանը պիտի ունենայ հետեւեալ վարչական բաժանումները.

- ա. գավառ (մեթիսարըֆ)
- բ. գաւառակ (գայմագամ)
- գ. գիւղախումբ (միւտիր)

Վարչական բաժանումներու ձեռնարկուած միջոցէն պէտք է հիմն ունենալ ժողովուրդներու ազգագրական և տեղագրական առանձնայատուկ պայմանները:

4. Շրջանը պիտի ունենայ շրջանային կեդրոնական ժողով մը՝ ընտրուած և բաղկացած քրիստոնեաներէ և մահմետականներէ հաւասար թիւով: Անոր պաշտօնն է,
 - ա. մշակել վարչական, դատական, ելեմտական և այլ օրինագծեր՝ տեղական առանձնայատուկ պայմաններու պահանջած հիմներուն վրայ.
 - բ. կազմել շրջանի բիւջէն, և,
 - գ. կատարել բաշխումը և գանձումը տուրքերու:
5. Ընդհանուր կառավարիչը իր նախագահութեան տակ կուսնենայ վարչական ժողով մը, կազմուած՝ շրջանային կեդրոնի վարչական այլևայլ ճիւղերու պետերէն, որոնք եթէ եւրոպացի են, անոնց խորհրդականները տեղացի պիտի ըլլան և. փոխադարձաբար: Խորհրդականները նաև, իբրև անդամ, պիտի մասնակցին վարչական ժողովներուն:
6. Կառավարարական բոլոր պաշտօնեաներու նշանակման մէջ, պիտի կիրարկուի հաւասարութեան սկզբունքը՝ քրիստոնեաներու և մահմետականներու վերաբերմամբ:
7. Տեղական միւլիա, ոստիկանութեան և ժանտարմըրի – կազմուած քրիստոնեաներէ և մահմետականներէ հաւասար թիւով ժամանակի մը համար եւրոպացի սպաներու հրամանատարութեան տակ:
8. Դատարաններու հիմնական վերակազմութիւն: Մշտական քաղաքացիական, պատժական, առևտրական, կալուածային և դատավարական օրէնքներու՝ համաձայն տեղական պայմաններու և եւրոպական նորագոյն օրէնքներու ոգիին: Հաշտարար դատարաններ բաւարար քանակութեամբ: Շէրիի դատարանները պիտի զբաղին միմիայն մահմետա-

կաններու զուտ կրօնական խնդիրներով:

9. Հողային հարցին կարգաւորումը: Հայերէն բռնագրաւուած հողերն ու անշարժ կայքերը վերադարձնել նախկին տէրերուն՝ վարչական եղանակով:

Մանօթ. – Մահմետական մուհաճիրներ չզետեղել հայկական շրջաններու մէջ:

10. Պարտադիր և ձրի նախնական կրթութիւն: Կրթական գործին ղեկավարութիւնը թողուլ իւրաքանչիւր ազգի՝ իրեն, իբրև ներքին խնդիր:
11. Ընդունել հայերէն լեզուի գործածութիւնը վարչական և դատական բոլոր հիմնարկութեանց մէջ՝ հայերու համար: Հրատարակել բոլոր օրէնքները նաև տեղական լեզուներով:
12. Բարեկարգական այս հիմներուն գլխաւոր սկզբունքներու համաձայն, ապահովել և բարելաւել վերոյիշեալ շրջանէն դուրս գտնուող հայերուն և, յատկապէս Կիլիկիոյ հայութեան վիճակը:

Բարեկարգութեան սոյն հիմնական տրամադրութիւններու իրականացումը հաւանաբար յանձն կառնեն եւրոպական մեծ պետութիւնները, գործադրութիւնը յանձնելով իրենց մէջէն յարմարագոյն պետութեան մը:

ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 51

**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԹՈՒՐԲԱԿԱՆ ՕՐԻՆԱԳԾԻՑ
ՔԱՂՎԱԾ ԱՅՆ ՀՈԳՎԱԾՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԷԻՆ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԻՆՁԵՎ
ՕՍՄԱՆՑԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ**

Յօդ. 1. – Պաշտօնեաների յարաբերությունները որոշող օրէնքները, վարչական, ֆինանսական, իրաւաբանական, պատերազմական և համայն պետութեան մէջ գործող Շէրիի օրէնքները մնում են իրենց ոյժի մէջ նաև յիշեալ չորս վիլայէթներում:

Յօդ. 2. – Յիշեալ վիլայէթներում նշանակուած են առանձին Յանձնաժողով և Ընդհանուր Վերատեսուչ:

Յօդ. 3. – Յանձնաժողովը բաղկացած է երեք մահմեդականներից, երկու հայերից և մէկ քաղղէացուց: Յանձնաժողովի անդամները ընտրուած են անհրաժեշտ յատկութիւն և ընդունակութիւն ունեցող վստահելի անհատներից: Յանձնաժողովում նախագահուած է Ընդհանուր Վերատեսչի Խորհրդականը:

Յօդ. 4. – Խորհրդականը լինելու է եւրոպացի՝ ծանօթ տեղական սովորութիւնների ու վարչական գործերի հետ և անհրաժեշտ ընդունակութիւնների տէր: Նա մտնում է Օսմանեան Կայսրութեան ծառայութեան մէջ:

Յօդ. 5. – Ընդհանուր Վերատեսչին նշանակուած է Կայսերական կառավարութիւնը վեց տարուայ ժամանակամիջոցով: Նրա պաշտօնը անփոփոխ է, բացառութեամբ այն դէպքերի, որոնք առաջ են բերում պատասխանատուութիւն:

Յօդ. 6. – Յանձնաժողովի անդամները արձակուած են պաշտօններից միմիայն իրենց հակօրինական գործողութիւնների համար, երբ այդ առթիւ կայացել է նախագահի և Յանձնաժողովի անդամների մեծամասնութեան վճիռը:

Յօդ. 7. – Ընդհանուր Վերատեսուչների բոլոր գործողութիւնները կատարուած են համաձայն Յանձնաժողովի վճիռների: Ընդհա-

նուր Վերատեսուչը լիազօրուած է գործադրելու Յանձնաժողովի վճիռները և այդ առթիւ անհրաժեշտ հրահանգներ տալու վալիներին:

Յօդ. 8. – Ընդհանուր Վերատեսուչը լիազօրուած է փոխելու վիլայէթի բոլոր պաշտօնեաներին, բացառութեամբ կրօնական (Շարիաթի) հաստատութեան պաշտօնեաների, որոնց առթիւ նա դիմում է Շէյխ-ուլ Իսլամաթին և Բարձրագոյն Իրադէով նշանակուած անձանց, որոնց առթիւ նա դիմում է, համաձայն Յանձնաժողովի վճիռի, Ներքին գործոց նախարարութեան:

Յօդ. 9. – Ընդհանուր Վերատեսուչները և Յանձնաժողովը կատարում են վերահսկողական ճանապարհորդութիւններ:

Յօդ. 10. – Վերատեսուչը անձամբ, նոյնպէս և Յանձնաժողովի իւրաքանչիւր անդամը կարող են անհրաժեշտ դէպքում, համաձայն Յանձնաժողովի վճիռի, կատարել վերահսկողական ճանապարհորդութիւններ:

Յօդ. 11. – Յանձնաժողովի իրաւասութեան առարկաներն են. Հողային վէճերի վերացումն հայերի և քրդերի մէջ, համաձայն արդարադատութեան:

Խոտվութիւնների վերացումն երկու տարրերի մէջ և լիակատար ներդաշնակութեան սահմանումն նրանց մէջ:

Ապահովացումն իրաւակարգի, լիակատար հաւասարութեան հաստատումն, ժանդարմերիայի բարեփոխումն, ուղիների և ճանապարհների կառուցումն, գիւղատնտեսութեան և արուեստի բարելաւումն, երկրի բնական հարստութիւնների շահաւէտման միջոցների ձեռնարկումն և այլն:

Յօդ. 12. – Վալին, պատերազմական կօմենդանտը, ոստիկանութիւնը և ժանդարմերիան պէտք է կատարեն Ընդհանուր Վերատեսչի հրամանները:

Յօդ. 14. – Մեարիֆ և մենաֆ լրացուցիչ Հարկերը, ինչպէս նաև վիլայէթի եկամուտները, յատկացուած են ժողովրդական լուսաւորութեան, հասարակական աշխատանքների և վիլայէթի գիւղատնտեսութեան պիտոյքներին, համաձայն առանձին բիւզժետի:

Յօդ. 16. – Երբ այս վիլայէթներում իրաւակարգը հաւասար աստիճանի վրայ կգտնուի միւսների հետ համեմատած, այն համե-

մատած, այն ժամանակ ընդհանուր վարչական օրէնքների ոյժը տարածուելու է և այս չորս վիլայէթներում:

Յօդ. 17. – Վերատեսուչը և Յանձնաժողովի անդամները նշանակում են 5 տարով: Նրանց նշանակումը կարող է վերանորոգուել սոյն ժամանակամիջոցը անցնելուց յետոյ: Ընդհանուր Վերատեսչի ռոճիկն է 20.000 պիաստր, յանձնաժողովի անդամներինը – 10.000 և խորհրդականի ... (բաց է թողուած):

«Բարենորոգումները Հայաստանում», էջ 1

**Կ. ՊՈԼՍՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ ԳԻՐՄԻ ՀԵՌԱԳԻՐԸ
ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐ ՍԱԶՈՆՈՎԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՎԻԼԱՅԵԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ Բ. ԴՌԱՆ ԿՈՂՄԻՑ
ՄԻ ԾՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Կ. Պոլիս, 17 դեկտեմբերի 1912 թ.
(Մտերմական նամակ)

Հայկական հարցը շարունակում է սաստիկ զբաղել Թուրքիային: Ինչպէս ես արդէն պատիւ ունեցայ յայտնելու Ձերդ Բարձր Գերագանցութեան սոյն 15 դեկտեմբերի հեռագրով, կառավարութիւնը թեթեակի կերպով մշակեց Հայկական վիլայէթների համար մի ծրագիր և ներկայացրեց նրան մի առանձին յանձնաժողովի քննութեան նախագահութեամբ Մեծ Վէլիրի և կազմուած Արտաքին գործոց, Ժողովրդական լուսաւորութեան, Ֆինանսների և Ներքին գործոց նախարարներից:

Կառավարութեան օրինագծի բնագիրը Պատրիարքարանին չի հաղորդուած: Ներքին գործոց նախարարը միմիայն ընդհանուր կերպով ծանօթացրեց նրա բովանդակութեան հետ խառն խորհրդի երկու անդամներին: Միւս օր (դեկտեմբեր 8-ին) յանձնաժողովում հրաւիրուած էին մի քանի հայ գործիչներ, որոնք Պատրիարքարանում ոչ մի պաշտօնական դիրք չունեն:

Կառավարութեան օրինագիծը, որի համառօտ տեսութիւնը կցւում է այստեղ, յանձնաժողովում յայտնի է իր թերութեամբ ու դրութիւնների անլիակատարութեամբ և պիտի համարուի յետամնաց, համեմատելով նրան 1895 թ. հոկտեմբեր 20-ի Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի նախաձեռնութեամբ մշակուած օրէնքի հետ: Օրինագիծը սահմանում է, ինչպէս նաև 1895 թ. օրէնքը, Հայկական վիլայէթների համար Ընդհանուր Վերատեսչի պաշտօնը, ենթարկելով վալիներին սրան: Բայց եթէ 1895 թ. օրէնքի 32-րդ յօդուածը Բ. Դրանը կից հիմնում է մշտական վերահսկողութեան յանձնաժողով և ճանաչում է ղեսպանների խիստ կարևոր իրաւուն-

քը՝ պահպանել յարաբերությունն այս հիմնարկության հետ, ներկայ օրինագիծը այդպիսի վերահսկիչ յանձնաժողովի մասին լուում է: Դրա փոխարեն նա հաստատում է Ընդհանուր Վերատեսչին կից մի առանձին յանձնաժողով, բաղկացած 3 մահմեդականներից և երեք քրիստոնեաներից. նախագահում է այդ յանձնաժողովում Ընդհանուր Վերատեսչի խորհրդականը, որը երոպացի է և գտնուում է տաճկական ծառայություն մէջ: Նոր օրէնքը նոյնպէս լուում է քրիստոնեաների վարչություն և ինքնավարություն մէջ մասնակցություն ունենալու մասին, որը առանձնապէս շեշտում է 1895 թի օրէնքը: Միւս հարցերի մասին խօսուում է միմիայն ամենաընդհանուր գծերով: Վերջապէս ծրագիրը տարածում է բարենորոգումները ոչ թէ բոլոր հայկական վիլայէթների վրայ, այլ միմիայն չորսի (Սիվասը և էրզրումը դուրս են ձգուած):

Յանձնաժողով հրաւիրուած հայերը պարզեցին կառավարություն օրինագծի լիակատար սնանկությունը: Նրանք մատնացոյց արին, որ անհրաժեշտ է տարածել բարենորոգումները բոլոր վեց վիլայէթների վրայ, ցանկալի է հրաւիրել երոպացիներ դատավարական վերատեսուչների, ոստիկանություն և ժանդարմերիայի սպաների պաշտօնների համար, դատավարություն ժամանակ հաւասարացնել հայ լեզուի գործածումը տաճկականի հետ: Հայերը առաջարկեցին Դոան՝ բարենորոգումների մշակման հարցում ղեկավարուել 1895 թ. օրէնքով, Միւրցչտէգեան ծրագրով և 1880 թ. վիլայէթների օրէնքով: Ընդամին նրանք յայտնեցին, որ անհրաժեշտ է ցրել հայերի անվստահությունը դէպի տաճկական խոստումները: Ի վերջոյ հայերը աւելացրել են, որ իրենց պարտականությունը յանձնաժողովում վերջացրած են համարում և խորհուրդ են տալիս Դոան դիմել Պատրիարքարանին:

Համաձայն իմ ստացած տեղեկությունների այս վերջին ղեկուցումը նրանք արել են Պատրիարքարանի ազդեցություն մը, որը խորապէս վիրաւորուած է՝ թէ ինչու Դուռը դիմում է ոչ լիազօրուած անհատներին:

Յանձնաժողովի վերջին նիստից մի քանի օր անց, ուր մասնակցում էին նաև հայերը, տեղական մամուլում տպուեցին յօդուածներ, որ կառավարություն օրինագիծը փոփոխուելու է հայերին ցանկալի իմաստով: Կառավարությունը, իբր թէ համաձայնուեց վեց վիլայէթներից կազմել երկու վերատեսչություն, որոնցից իւրաքանչիւրը

ունենալու է իր Ընդհանուր Վերատեսուչը: Սրանց կից կազմուում է մի յանձնաժողով, բաղկացած երկու հայերից, երկու տաճիկներից և երկու երոպացիներից: Յանձնաժողովներում նախագահում են Ընդհանուր Վերատեսուչների խորհրդականները - երոպացիք:

Տաճկական կառավարությունն այս ակնյայտնի նպատակը՝ փոխարինել բարենորոգումների երոպական կօնտրօլը տաճկական ծառայություն մէջ հրաւիրուած երոպացիներով, բոլորովին չի բաւարարում, համաձայն իմ տեղեկությունների, Պատրիարքարանին և նրա մերձակայ շրջաններին: Հայերի առաջին և ամենանշանաւոր պահանջն է ստանալ այս կամ այն ձևով ոռուսական կամ միջազգային ապահովացում յիշեալ վայրերի համար, իսկ այն հարցը, թէ ի՞նչ բնոյթ և բովանդակություն են ունենալու ապահովուած բարենորոգումները երկրորդական նշանակություն ունի նրանց համար: Ապահովություն ամենաէական միջոցը համարուում է ոռուսական գրաւումը: Այս ցանկություն իրագործման անհնարաւորություն դէպքում ծրագրուում է վեց վիլայէթների համար Վեհազոյն գործավարի պաշտօնը նշանակմամբ Սուլթանի և համաձայնություն մեծ պետությունների: Այդ Վեհազոյն գործավարը լինելու է անպատճառ օտարերկրացի:

Հայոց Պատրիարքարանի Խառն Խորհուրդը երէկ քննում էր այն հարցը, թէ ի՞նչպէս վերաբերուել դէպի Դոան բանացի ղեկուցումը բարենորոգումների առթիւ: Խորհուրդը վճռեց ուղարկել Դոան՝ հետևեալ թաքրիրը. Պատրիարքարանը գտնուում է, որովհետև Դուռը բարենորոգումների ծրագիրը յայտնեց ոչ թէ իրեն, այլ մասնաւոր անհատներին, ուստի, Պատրիարքարանը հնարաւորություն չունի արտայայտուելու նրա բովանդակություն մասին: Պատրիարքարանի համար նմանապէս մնում է անյայտ, թէ ի՞նչ ձևով է մտադիր Դուռը ապահովել նրանց գործադրումը: Վերջին նախադասություն մը Պատրիարքարանը մատնանշում է երոպական կօնտրօլի անհրաժեշտություն վրայ: Թաքրիրը ուղարկուած է Դոանը 15 ղեկտեմբերի: Եթէ կառավարությունը օրինագիծը բնագիրը հաղորդի Պատրիարքարանին, վերջինս չի հրաժարուի իր կարծիքը յայտնելուց:

(Ստորագր.) Գիրս

«Բարենորոգումները Հայաստանում», էջ 12-13

Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԴՐԱԳՈՄԱՆ ԱՆԴՐԵ ՄԱՆԴԵԼՇՏԱՄԻ ԿԱԶՄԱԾ ՆԱԽԱԳԾԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԶԻ ԱՊԱԳԱ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

I

Հայկական մարզը կազմավորվելու է թուրքական հետևյալ մարզերից, որոնք կմնան Թուրքիայում Ռուսաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի միջև ապագա խաղաղարար պայմանագրով նոր սահմաններ որոշելուց հետո.

1. էրզրումի վիլայեթի՝ Թուրքիայում մնացող մասից,
2. Վանի վիլայեթի՝ Թուրքիայում մնացող մասից,
3. Տրապիզոնի վիլայեթի՝ Թուրքիայում մնացող մասից,
4. Բիթլիսի վիլայեթի՝ Սղերդի հարավային մասից բացի,
5. Խարբերդի վիլայեթից՝ Մալաթիայի հարավային մասից բացի,
6. Դիարբեքիրի վիլայեթից՝ Բիչերիկի հարավային մասից բացի,
7. Սվազի վիլայեթից՝ Սվազի հյուսիսարևմտյան մասից բացի:

II

Մարզը, որը կազմավորված է N

հոդվածում հիշատակված տարածքներից, օգտվում է լիակատար ինքնավարությունից՝ նորին Մեծություն Սուլթանի սյուզերենիտետի ներքո և Ռուսաստանի, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի երաշխավորությամբ:

III

Մարզի Գլխավոր նահանգապետը նշանակվում է նորին Մեծության կողմից 10 տարի ժամկետով՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կառավարությունների համաձայնությամբ և

կարող է փոխարինվել միայն այդ նույն Տերությունների համաձայնությամբ: Նա պետք է լինի քրիստոնյա:

IV

Գլխավոր նահանգապետը Մարզի գործադիր իշխանությունն ղեկավարն է: Նա գործի է նշանակում և հեռացնում վարչակազմի բոլոր ծառայողներին, ինչպես նաև նշանակում է բոլոր դատավորներին՝ հոգևոր դատավորներից (չերի) բացի:

V

Մարզում չպետք է գտնվի որևէ Օսմանյան զորք: Կարգ ու կանոնը ժամանակավոր պահպանելու են ռուսական զորքերը: Առաջացող ծախսերը պետք է հատուցվեն Մարզի կողմից՝ իր և Ռուսաստանի միջև հատուկ համաձայնությամբ:

Սահմանվում են տեղի ոստիկանությունը, ժանդարմերիան և միլիցիան, որոնք անմիջականորեն ենթարկվում են գլխավոր նահանգապետին:

Վերացվում են «Համիդիե» քրդական զորքերը:

VI

Գլխավոր նահանգապետին առընթեր գործում է Վարչական խորհուրդը, որի պարտադիր (մշտական) անդամներն են վարչակազմի առանձին մասերի պետերը և տարբեր կրոնական համայնքների հոգևոր առաջնորդները:

VII

Օսմանյան Խորհրդարանի իրավասությունը չի տարածվում Մարզի վրա, ուր վերջինիս փոխարինում է Մարզային Ժողովի իշխանությամբ: Գլխավոր նահանգապետը գումարում և արձակում է Մարզային Ժողովը:

Մարզային Ժողովի հավանությանն արժանացած բոլոր օրինագծերն ու նախագծերը* ուժի մեջ են մտնում Գլխավոր նահանգապետի հաստատումից հետո:

* Արխիվային փաստաթղթի բառերն անընթեռնելի են:

VIII

Մարզի բացառապես բոլոր վայրերում կրոնական հավատալիքների և դավանանքների տարբերությունը, ում և իցն նկատմամբ, չի կարող առիթ դառնալ քաղաքացիական և քաղաքական իրավունքներից օգտվելուց բացառելու կամ հեռացնելու, հասարակական պաշտոններին և մեծարանքներին չթույլատրելու կամ տարբեր մասնագիտություններով ու արհեստներով զբաղվել չթույլատրելու համար: Բոլոր դավանանքների ազատությունը և կրոնական ծեսերի կատարումը ապահովված են Մարզի ամբողջ բնակչության համար: Այն չի կարող որևէ արգելք հարուցել ո՛չ համայնքների հիերարխիական կառուցվածքին, ո՛չ էլ հոգևոր առաջնորդների հետ իրենց հարաբերություններին:

IX

Մարզի բոլոր բնակիչների համար երաշխավորված է անձնական ազատությունը և բնակարանների ու սեփականության անձեռնմխելիությունը՝ օրենքի սահմաններում:

X

Մարզահամարից հետո Մարզային Ժողովի անդամները և Գավառական Խորհուրդների ընտրովի անդամները ընտրվելու են ընտրությունների այն համակարգի հիման վրա, որը յուրաքանչյուր ազգության համար ապահովում է իր թվաքանակին համապատասխան տեղերի քանակ:

Մինչև մարզահամարը տեղերի մեկ կեսը Մարզային Ժողովում և Խորհուրդներում տրամադրվելու է քրիստոնյաներին, իսկ մյուս կեսը՝ մահմեդականներին:

Միմիայն նստակյաց բնակիչները կօգտվեն ընտրությունների ակտիվ և պասիվ իրավունքներից:

XI

Նահյանները (գավառակները) ղեկավարվելու են մուղիրների և խորհրդականների կողմից, որոնց ընտրելու է բնակչությունը: Խառը բնակչությամբ նահյաններում մուղիրը պատկանելու է այն

էթնիկ խմբին, որը կազմելու է բնակչության մեծամասնությունը, իսկ օգնականը կլինի մյուս խմբից: Փոքրամասնությունը Խորհուրդում ներկայացվելու է իր թվաքանակին համապատասխան:

XII

Հատուկ հանձնաժողովը Գլխավոր Նահանգապետի նախագահությամբ սահմանելու է այն պայմանները, որոնց առկայությամբ, այն հայերը, որոնցից խլվել են հողեր, կվերստանան դրանք կամ էլ կստանան դրանց համարժեքը դրամով կամ հողով:

XIII

Մահմեդական վտարանդիներին (մուհաջիրներին) այսուհետ չի թույլատրվելու անցնել Մարզի սահմաններից ներս:

XIV

Օրենքները, հրամանագրերը և դատական որոշումները կազմվելու են թուրքերեն և հայերեն լեզուներով:

Խնդրագրերը կարող են կազմվել թուրքերենով կամ հայերենով:

Դատարանում վիճաբանությունները կարելի է վարել թուրքերենով, հայերենով կամ քրդերենով:

XV

Բոլոր համայնքները և բոլոր մասնավոր անձինք ունեն Մարզում ամեն կարգի դպրոցներ հիմնելու և դրանք ղեկավարելու իրավունքը:

Այդ մասնավոր դպրոցներում դասավանդումը իրականացվելու է մայրենի լեզվով:

Այդ մասնավոր դպրոցների գերագույն հսկողությունը պատկանում է Գլխավոր Նահանգապետին:

XVI

Շեյխ ուլ Իսլամի իշխանությունը տարածվում է Մարզի վրա: Նա պաշտպանում է մահմեդականների զուտ կրոնական շահերը և հետևում է Շարիաթի օրենքի կատարմանը ինչպես մահ-

մեղականների հոգևոր գործերում, այնպես էլ նրանց անձնական կարգավիճակին վերաբերող հարցերում:

Պահպանվելու են վաքըֆները:

XVII

Մարզը կազմելու է ինքնուրույն մաքսային տարածք:

Մաքսատների, փոստերի ու հեռագրատների և այլոց տուրքերն ու հարկերը, եկամուտները մուծվելու են Մարզի գանձատանը:

XVIII

Արտասահմանյան Տերությունների և Պորտայի միջև կնքված՝ իրենց ուժը չկորցրած առևտրի և ծովագնացության մասին պայմանագրերը և մյուս բոլոր կոնվենցիաներն ու համաձայնագրերը պահպանում են այդ ուժը նաև Մարզում և չեն ենթարկվելու որևէ փոփոխման ոչ մի Տերության վերաբերյալ՝ առանց վերջինիս կողմից դրա համար նախնական համաձայնության:

Մարզում չեն գանձվելու որևէ տեսակի տարանցման մաքսատուրքեր իր տարածքով փոխադրվող ապրանքներից:

Մարզում հպատակները և բոլոր Տերությունների առևտուրը օգտվելու են միևնույն դիրքից:

Արտասահմանցի հպատակների արտոնություններն ու առավելություններն ու նաև հյուպատոսական հովանավորության իրավագործության բոլոր իրավունքները, որոնք սահմանված են կանխադրույթներով և սովորույթներով, մնալու են լիովին ուժի մեջ, մինչև որ փոփոխվեն կողմերի միջև փոխադարձ համաձայնություններ:

XIX

Մարզը Օսմանյան Կառավարությանը վճարելու է ամենամյա հարկ թուրքական լիրայի չափով, որից կատարվում է տոկոսների վճարումը և Թուրքիայի պետական պարտքի այն մասը, որն ընկնում է Մարզի վրա:

Մարզի «Օրգանական Կանոնադրության» նախագիծը մշակվելու է առաջին Ժողովի կողմից՝ վերոանվանյալ հոդվածների հի-

ման վրա: Հովանավոր Տերությունների կողմից դրան հավանություն տալուց անմիջապես հետո այն հաստատվելու է նույն Ժողովի կողմից:

Օրգանական Կանոնադրությունը կարելի է փոփոխել Հովանավոր Տերությունների համաձայնությամբ:

Այդ առաջին Ժողովի անդամներն ընտրվելու են հատուկ ժամանակավոր կանոնների հիման վրա, որոնք Մարզի քրիստոնյա և մահմեդական բնակչության համար ապահովում են հավասար ներկայացուցչություն:

АВПРИ, ф. "Политархив", д. 3478, нл. 7-12

**ՆԱԽԱԳԻԾ ԱՆԱՏՈՒԹՅՈՒՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ՝
ԿԱԶՄՎԱԾ Ա. ՄԱՆԴԵԼՇՏԱՄԻ ԿՈՂՄԻՑ**

Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի Դեսպանների Յիշատակագիր, վերաբերմամբ բարենորոգումների (1895 թ. մարտ-ապրիլ):

Վարչական բարենորոգումների ծրագիր, որ պիտի ներմուծեն Հայկական վիլայեթներում, մշակուած Ֆոանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի Դեսպանների կողմից (1895 թ. մարտ-ապրիլ):

Բարենորոգումների հրովարտակ Հայաստանի համար, տրուած 1895 թ. հոկտեմբեր 20, յայտարարուած Նորին Կայսերական Մեծութեան Սուլթանի կողմից:

Լիբանանին վերաբերեալ արձանագրութիւններ և որոշումներ:

I

1. Վեց վիլայեթներից, - էրզրում, Վան, Բիթլիս, Դիարբէքիր, Խարբերդ, Սիվազ կազմուելու է մի նահանգ, բացառութեամբ որոշ մասերի, որ գտնուում են սահմանաձայրերում, որպիսիք են Հէքքիարին, Սղերտի, Բիչերիկի և Մալաթիայի հարաւային մասը և Սիվազի հիւսիս-արևմտեան մասը:

2. Նահանգը պարունակելու է իր մէջ հետևեալ վարչական բաժանմունքները. 1) Սանջակ, 2) Կազա, 3) Նահիէ.

3. Վարչական բաժանումների սահմանումը կատարուելու է այնպէս, որ նրանց մէջ եղած միատեսակ ազգերը խմբուած լինեն ըստ հնարաւորութեան ի մի:

(Համեմատ. 1895 երեք դեսպ. յիշատակագրի I կէտը: 1895 թ. դեսպ. ծրագրի 7-րդ յօդ.)

II

Հայկական նահանգի Նահանգապետը (Վալի Ումումի) կլինի տաճկահայատակ քրիստոնեայ, կամ առաւելապէս եւրոպացի, նշանակուած Նորին Մեծութեան Սուլթանի կողմից 5 տարուայ ժամանակով՝ համաձայնութեամբ մեծ պետութիւնների:

(Տես Բերլինի դաշնագրի 17-րդ յօդ., 1896 թ. Կրիտի Կանոնադրութեան 1 յօդ., Լիբանանի Արձանագրութիւնները և Կանոնադրութիւնները, 1895 թ. երեք դեսպանների յիշատակագրի 2 և 7 յօդ., նախաբան Հայաստանի բարենորոգումների հրովարտակի, տրուած 1895 թ. հոկտեմբ. 20. - կէտ 1-ին):

III

1. Ընդհանուր Նահանգապետը համարոււմ է նահանգի գործադիր իշխանութեան ներկայացուցիչ: Նա նշանակոււմ է և արձակոււմ է նահանգի բոլոր վարչական պաշտօնեաներին, առանց մի որևիցե բացառութեան: Նմանապէս նա է նշանակոււմ նահանգի բոլոր դատաւորներին:

2. Ոստիկանական և ժանդարմական ոյժերը ենթարկոււմ են Ընդհանուր Նահանգապետի անմիջական իշխանութեան:

3. Համաձայն Ընդհանուր Նահանգապետի պահանջի զինուորական ոյժերը պէտք է տրուեն նրա կարգադրութեան տակ՝ նահանգում կարգ պաշտպանելու համար:

(Տես 1864 թի Լիբանանի Կանոնադրութեան 1 կ., 1880 թ. Եւրոպական Յանձնաժողովի ծրագրի 27, 32 և 44 յօդուածները, 1913 թ. վիլայեթի վարչութեան օրէնքի 20, 25 և 26-րդ յօդ.)

IV

Ընդհանուր Նահանգապետին կից լինելու է Վարչական Խորհուրդ, որն ունենալու է խորհրդակցական բնոյթ, կազմուած.

ա) նահանգի վարչութեան զանազան ղեպարտամենտների կառավարիչներից,

բ) զանազան կրօնական համայնքների ներկայացուցիչներից,

գ) եւրոպական տեխնիքական խորհրդականներից, որ գտնոււմ են Կայսերական կառավարութեան ծառայութեան մէջ, որպէս

ղեկարտամենտների վարչութեան ներկայացուցիչների օգնական, դ) 6 խորհրդականներից (3 մահմեդական և 3 քրիստոնեայ), ընտրուած Նահանգական ժողովից, սրա անդամների կազմից: (Տես 1880 թ. Եւրոպ. Յանձ. ծրագրի 49 յօդ., 1913 թ. վիլայէթների վարչութեան օրէնքի 62 յօդ. 1895 թ. 20 հոկտեմբերի հրովարտակի 6-րդ յօդ.):

V

1. Նահանգական ժողովը կազմուելու է մահմեդականներից և քրիստոնեաներից հաւասար թւով:
2. Նահանգական ժողովի անդամները ընտրուում են գաղտնի քուէարկութեամբ կազաններում այն ընտրողական ժողովների կողմից, որ կազմուում են այս նպատակի համար:
3. Տեղերի քանակը, որ յատկացուելու են նահանգի զանազան մահմեդական և քրիստոնեայ ազգութիւններին, իւրաքանչիւր կազայի համար որոշուելու է առանձին: Այդ քանակը պիտի համեմատական լինի իւրաքանչիւր կազայի բնակչութեան հետ, ինչքան որ դա չէր հակասի այս յօդուածի առաջին պարագրաֆին: (Տես 1861 թ. յունիս 9-ի Լիբանանի Արձանագրութեան և Կանոնադրութեան 2-րդ յօդ., 1895 թ. երեք ղեսպանների 3-րդ յօդ. 5-րդ, 1880 թ. Եւրոպ. Յանձ. ծրագրի 69 յօդ., 1913 թ. օրէնքի 103-րդ յօդուածը):

VI

1. Նահանգական ժողովը ընտրուում է հինգամեայ ժամանակով և գումարուում է տարին մի անգամ երկամսեայ սովորական նիստի համար: Այդ նիստը կարող է երկարել Ընդհանուր Նահանգապետի կողմից:
2. Ժողովը կարող է գումարուել արտակարգ նիստերի համար Ընդհ. Նահանգապետի կողմից նրա սեփական նախաձեռնութեամբ, կամ ժողովի անդամների 2/3-ի պահանջով:
3. Ընդհանուր Նահանգապետը իրաւունք ունի արձակելու Նահանգական ժողովը: Այդ դէպքում ընտրողները պիտի հրաւիրուեն երկու ամսուայ ընթացքում և նոր ժողովը պիտի գումարուի չորս

ամսուայ ժամանակամիջոցում սկսած արձակման հրովարտակի յայտարարման օրից:

4. Ժողովի գումարման և արձակման հրովարտակները հրատարակուում են Նորին Կայսերական Մեծութեան Սուլթանի անունից: (Տես 1881 թ. Եւրոպ. Յանձ. ծրագրի 73-75 յօդ. և 1913 թ. վիլայէթների օրէնքի 111-115 և 125 յօդ.):

VII

1. Նահանգական ժողովը օրէնսդրական է համարուում նահանգի շահերին վերաբերող հարցերում:
2. Նահանգական ժողովի օրէնսդրական և բիւզժէտային իրաւասութիւնը ոչ մի դէպքում պակաս չի լինելու այն իրաւասութիւնից, որ նախատեսուած էր 1880 թ. Եւրոպ. Յանձ. ծրագրի 82-93-րդ յօդուածներից:
3. Ընդունուած օրէնքները ներկայացուում են Նորին Կայսերական Մեծութեան Սուլթանի հաստատմանը: Այս հաստատումը պէտք է տրուի կամ մերժուի երկու ամսուայ ընթացքում: Յիշեալ ժամանակամիջոցը անցնելուց յետոյ, կառավարութեան լուծիւնը կընդունուի որպէս հաստատում: (Տես՝ 1880 Եւրոպ. Յանձ. ծրագրի 82-93 յօդուածները, 1913 թ. վիլայէթների վարչութեան օրէնքի 123, 124, 128-135 յօդուածները):

VIII

1. Սանջակների վարչական խորհրդներում նախագահուում են մութասարիֆները: Խորհուրդները կազմուում են սանջակի վարչութեան զանազան մասերի պետերից, կրօնական համայնքների ներկայացուցիչներից և վեց անդամներից (3 մահմեդական, 3 քրիստոնեայ), որոնք ընտրուում են կազայի վարչական խորհրդներից:
2. Կազաների վարչական խորհրդներում նախագահուում են դայմադամները: Այդ խորհուրդները կազմուած են կազայի վարչութեան զանազան մասերի պետերից, կրօնական համայնքների ներկայացուցիչներից և չորս անդամներից (2 մահմեդական և 2 քրիստոնեայ), որոնք ընտրուում են նահիէի խորհրդներից,
3. Այդ խորհրդների իրաւասութիւնը որոշուում է համաձայն

Եւրոպական Յանձնաժողովի մշակած ծրագրի 115-116 և 139, 140 յօդուածները:

(Տես 1880 թ. Եւրոպ. Յանձն. ծրագրի 114, 115, 116, 138, 139 և 140 յօդուածները, 1895 թ. 20 Հոկտեմբերի Հրովարտակի 6 յօդ. և 1913 թ. օրէնքի 62, 63, 64 և 65 յօդուածները):

IX

1. Իւրաքանչիւր նահիէի (Համայնքի) սահմանները ըստ Հնարաւորութեան կորոշուեն այնպէս, որ մի ազգին պատկանեալ գիւղերը միացուեն մի նահիէում:

2. Իւրաքանչիւր նահիէ կառավարուելու է մուղիրով, որին կից կլինի ժողովրդի կողմից ընտրուած խորհուրդ, կազմուած ոչ պակաս 4-ից և ոչ աւել 8 անդամներից: Այդ խորհուրդը իր կողմից ընտրում է մուղիրին և նրա օգնականին: Մուղիրը պատկանելու է այն ցեղական խմբին, որ կազմում է բնակչութեան մեծամասնութիւնը, իսկ նրա օգնականը – միւս խմբին:

